

ԱՇՈՏ ԿՈՎՃԱՆՆԻՍՅԱՆ

ԴԱՍԳԵՐ

ՀԱՅ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ

Մ Տ Բ Ի

ՊԱՏՄՈՒՆՅԱՆ









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСТОРИИ

---

АШОТ ИОАННИСЯН

ОЧЕРКИ  
ИСТОРИИ  
АРМЯНСКОЙ  
ОСВОБОДИТЕЛЬНОЙ  
МЫСЛИ

Книга вторая

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
Ереван 1959

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

9(47.925)

չ


ԴՐԱԳՆԵՐ  
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ  
Մ Տ Բ Ի  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Գիրք երկրորդ

A 3535

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

Երևան 1959



Տպագրվում է Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների  
և կադեմիայի Խմբագրական-հրատարակչական  
խորհրդի որոշմամբ

Ներկա հատորը ընդգրկում է հայ ազատագրական մարտի պատմության այն շրջանը, որ սկիզբ է առնում Կ. Պոլսի անկումին հաջորդած հայ-արևմտանվթուպական բանավարություններից և ավարտվում Եսրայել Օրիի գործունեությամբ: Գրքի նպատակն է լուսարանել պատմական այն իրողությունները, որոնք XV—XVII դարերի ընթացքում նախապատրաստեցին հայ ազատագրական մարտի շրջադարձը դեպի Ռուսաստան:

Ինչպես «Դրվագների» նախընթաց գրքում՝ այս հատորում ևս հեղինակը ընդգրկում է Հայաստանի ազատագրման խնդրի շուրջը հայ հատարակական տարբեր խավերի, խմբակցությունների ու գործիչների հանդես բերած արամադրությունների, ծրագիրների ու գործողությունների հնաազատությունը՝ աչքի առաջ ունենալով պատմական ընդհանուր շրջադրությունը և հատկապես հայ կյանքում կատարված իրողություններն ու սեղաշարժերը:

Աշխատությունը նախատեսված է ինչպես պատմաբանների ու գրականագետների, այնպես նաև ուսանող երիտասարդության և հարցասեր ընթերցողների լայն շրջանների համար:



I

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ  
ՄՏԻՒ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐԸ  
XV—XVII ԴԱՐԵՐՈՒՄ



# 1. ՀԱՅ-ՍՐԵՎՄՏԱՆԿՐՈՊՈՒԿԱՆ ԲԱՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XV—XVI ԴԱՐԵՐՈՒՄ

Ֆյուրենոյան միությունը և կարողիկ պրոպագանդը XIV—XV դարերում: Պոլսի անկումը և հայ-աբխազական վրացական բանավարությունները: Ուզուն Հասան և Խոթա Միրսի: Անփյան ղզրաշենի սկզբնախոսումը: Թուրք-խրեանական պատերազմները և Աբխազաբանաստանի ծանր կացությունը: Ստեփանոս Սալմաստեջու բանագնացությունը Աբխազիա: Աբխազիայի խոհեղաժողովը և Աբգար Թոխասեցու պատվիրակությունը: Սուլթանաբեյի գործունեությունը: Ագարխա Զուպայեցի: Բեդհանուր զնանասական:

*XIV—XV -դարերի ընթացքում կաթոլիկ միսիոներները թափանցում են Հայաստանի և Անդրկովկասի առևտրական ճանապարհների վրա ընկած վայրերը, կրոնական պրոպագանդին զուգընթաց տանելով նաև քաղաքական աշխատանք:*

Քաղաքական խորքից դուրկ շէր տակավին 1439 թվականին Ֆլորենտիայում ստորագրված հայ-լատին եկեղեցիների «Միություն կոնդակը»: Նշանակալից է, որ հայերի կողմից Ֆլորենտիայի եկեղեցաժողովին մասնակցած պատվիրակության գլուխ նշանակվեց Զենուլայի տիրապետության սահմաններում գտնված Կաֆայի հայ առաջնորդը, որը Սսում նստող հայոց կաթոլիկոսի փոխանորդն էր: Նշանավոր դեր էր կատարում պատվիրակության մեջ նաև Կ. Պոլսի հայ եկեղեցապետ Հովակիմ եպիսկոպոսը: Պատվիրակները այցելում են բյուզանդական Հովհաննես Պալեստրոկ կայսրին, որն օգնություն և պաշտպանություն է խոստանում հայերին, միայն թե զլուխ դա եկեղեցիների միությունը<sup>1</sup>:

Եթե մտաբերենք հանրածանոթ այն փաստը, որ հույները և նրանց կայսրը կառչում էին եկեղեցիների միությունը՝ ոչ թե կրոնա-

<sup>1</sup> «Բազմակեզ», 1940, էջ 142:

կանն պահանջից զրդված, այլ բուրձերի դեմ Արևմուտքի օգնությունը ապահովելու հույսով, — զժվար շի լինի կռահել քաղաքական այն ակնկալությունները, որ ունի Զլւրենտիայում կնքվելիք համաձայնությունից հաջ պատվիրակությունը: Այդ ակնկալությունները վառ պահելու համար Զլւրենտիայում կայացած միությունից հետո Կաֆայի ջննովացի կառավարիչները հրավիրում են Սսի Կոստանդին կաթողիկոսին փոխադրել իր աթոռը Ղրիմ, որ հայերին «ռչինչ պիտի պակսի» և որ հայ ժողովուրդը, անհավատ տերերից պատառազրված, պիտի ապրի հանդիսա ու արժանավայել: Նույն փմաստով նամակ գրեցին ջննովացիները նաև Կիլիկիայի կաթողիկոս Գրիգոր Մուսաբեկյանին, երբ արդեն ամենայն հայոց կաթողիկոսական աթոռը փոխադրվել էր Սսից էջմիածին<sup>1</sup>:

Այնուամենայնիվ եկեղեցիների միությունը դադարաբար ժողովրդականություն չնվաճեց ոչ հայերի, ոչ էլ հույների մոտ: Պոլսի անկումի նախօրերին կային նույնիսկ մարդիկ, որոնք գերադասում էին տեսնել Բոսֆորի ափերին ավելի շուտ սուլթանական փաթիլոց, քան պապական խուչը: Եկեղեցիների միություն խնդրի շուրջը կա Նաղաշի թուղթը Հոսմի պապին, հղված տակավին 1436 թվականին: Եարադրելով հայ եկեղեցու դավանանքը՝ Նաղաշը գրում էր. «Արդ զմիարանութիւնն Քաղկեդոնիկն այն բաժանեաց: Եթէ գՔաղկեդոնիկն բառնայր ի միջոյ և գերից սուրբ ժողովոյն ընդունիր, զոր և ի վերոյ գրեցար, լինի միարանութիւն եկեղեցոյս ամենայն բրիստոսադաւանն ազանց, և մոխրամած զիմաւր հլու հնազանդ լինիմք հրամանաց ձերոց գերադրական իշխանութեանդ: Ապա եթէ գեկամուան հաստատել կամիրք, և գանշարժն ընդ թիւրեւոյն յարամանել, այդ անհնարին է լինել: Զի մերս եկեղեցի ոչ միարանի այդմ գործառնութեան»<sup>2</sup>: Հետաքրքրական է, որ Նաղաշը գրել է այդ թուղթը ոչ թե իր անունից, այլ Կիլիկիայի Կոստանդին կաթողիկոսի և Բումա Մեծուփեցու «հրամանով»<sup>3</sup>:

Մինչ այդ շարունակվում էր թուրքերի Լքսպոնսիան. 1453 թ. նվաճելով Կ. Պոլիսը, թուրքերը մի պահ խզեցին Արեւելքի և Արե-

<sup>1</sup> Տե՛ս «Բաղմավեպ», 1910, էջ 153 և 155:

<sup>2</sup> Գ. Հովսեփյան, Մկրտիչ Նաղաշի թուղթը Զլւրենտիոյ ժողովրդապիւ: Հոգվածը տե՛ս «Արարատ», 1916, էջ 422 և հա.:

<sup>3</sup> Ինչպես պարզվում է Նաղաշի բնագրից, նրա թուղթը գրվել է ոչ թե 1438 թ., ինչպես կարգացել է Հովսեփյանը, այլ 1436 թ.: Տե՛ս «ՃԾ գաւրի հայ ձեռ. հիշատակարաններ», Ա., էջ 464, Լ. Խաչիկյանի ծանոթագրութիւնը:

մատրի տուեառական կապերը: Համահավար ուժերով թուրքերի, զիմազրելու և նրանց ստեղծած խոչընդոտները վերացնելու համար խաչակրութիւնն կազմակերպելու նախաձեռնութիւնն էր ստանձնել տակաւին Նիկողայոս V պապը (1447—1455): Ձեռնարկութիւնն զլիսավոր գտպանակը Վենետիկն էր: Արևելքի հետ խզված աստուրական կապերը վերականգնելու նպատակին ծառայելու էր պապի զլիսավորութեամբ կազմակերպվելիք հակաթուրքական արշավանք, որի հաջողութեանը կախված պիտի լինէր ոչ այնքան նվազանց՝ մատակարարած ուժերից, որքան թուրքերի կողմից վատանդված Առաջավոր Ասիայի քրիստոնէյա և մահմեդական պետութիւններին:

Թուրքիայի հանդէպ թշնամորեն տրամադրված այդ պետութեանների հետ բանակցելու համար Կալիքստոս պապը (1455—1458) Արևելք հղեց մինորիա կրօնավոր կազմակերպութեան հետ: 1459—1460 թվականների ընթացքում վերջինս կապվեց Տրուպիզոնի Գովիթ կայսրի, Արխաղիայի ու Վրաստանի թագավորների՝ Սամցխեի, Գուրիայի ու Սամեղրելուցի տերերի և մահմեդական մի շարք իշխանների հետ: Վերջիններիս թվում հիշվում են Փոքր-Հայքի Բերպի բեկը՝ Իսֆենդիարի որդին, Սինոպիայի տեր Բամայիլ բեկը և Ղարամանիայի (Խարամնի Երկիր) սուլթանը, ինչպես նաև Ակ-Կոնյունլու Ուզուն Հասանը: Վրաց թագավորի առաջնորդութեամբ հակաթուրքական արշավանքին մասնակցելու խոստում էին տվել «սկյութացիները» (հավանորեն՝ Կովկասի լեռնականճերը) և «ազլանցիները» (հավանորեն՝ Արևելյան Անդրկովկասի ազդրեջանցիները): Բացի սրանից, որպես զինակիցներ նշվում են Ghitharum (նաև՝ Ghitharane) և Sassoni կոչված ժողովրդապետութեանները: Խոսքը վերաբերում է երկի Խոյլի և Սասանի Երկրին, ոսկից, որպես դաշնակիցների բանագնացներ, մեկնեցին նվազա երկու պատվիրակներ՝ Հեթամ և Ռարեն անաններով (Haitone et Rubino, ambascadore dell reipubliche de Ghitharane et Sassoni)<sup>2</sup>: Հունգարիայի և Գերմանիայի վրայով ուղևորվելով Հոսմ՝ նույն տարում նրանք հա-

<sup>1</sup> Հիշված են Գիտրդիի և Բագրատի անունները, որոնցից վերջինը տարակուսանքի տեղիք է տալիս: Խոսքը 1466—1478 թթ. իշխած Բագրատ VI-ի մասին է, մինչդեռ նկարագրված բանակցութեանները տեղի են ունեցել նրա գահակալութեանից մի քանի տարի առաջ:

<sup>2</sup> Հմմտ. Վ. Տոմաշևի, Ստուճ, 1894, էջ 44: Հմմտ. նաև Кирион, Культурная роль Иверии в истории Руси, Тифлис, 1910, էջ 73 և հտ.:

սան Ֆրանսիա՝ Կարլոս VII թագավորի և նրա որդի Լուդովիկոսի մոտ<sup>1</sup> :

Կնքված պայմանի համաձայն արշավանքի ընդհանուր ղեկավարությունը հանձնվելու էր Բուրգունդիայի իշխան Ֆիլիպին, Գլխավոր խնդիրը Կ. Պոլսի վերանվաճումն էր: Դրանով պիտի վերջ տրվեր թուրքերի տիրապետությանը և թուրքական հետագա էքսպանսիայի վտանգին: Գործը գլուխ բերելու համար վրաց իշխանները պիտի տային 70 հազար կովոզ, Տրապիզոնի՝ Կայսրը՝ 30 հազար մարդ և 30 զինվորական նավ, Փոքր-Հաջրը՝ 20 հազար մարդ: Անուրոշ է Ուլոն Լասանի և մյուսների մատակարարելիք ուժերի չափը: Կարծում ենք, որ նախազգծված այս արշավանքի հետ էին կապված Առաքել Բաղիշեցու մեկ ծանոթ «Ողբի» ակնկալությունները՝ ֆրանկների օգնությամբ Պոլիսը գրավելու մասին: Բաղիշեցու «Ողբը» կանկրեա փմաստ էր ստանում եռույթի և Սասունի հայերի մեջ Լուդովիկոս Բուլոնացու առաքելության հարուցած արամադրությունների մթնոլորտում:

Մինչև այդ թուրքերը գրավեցին Աթենքը (1458 թ.), Սերբիան (1459 թ.), Բոսնիան (1460 թ.): Պարզվում է, որ առկա ուժերով անհնար է հակադրոհի անցնել: 1461 թվականին սուլթան Մուհամեդ II-ը նվաճում է Տրապիզոնի կայսրությունը: Նույն տարում հայ մի վանքում, «ի գառուս Խաղաեաց ի սուրբ Աննապատս, որ ս. Գէորգ կոչի, որ Պալախորո» (վերջինս գտնվում էր Բարերդի շրջանում) գրված մի հիշատակարանում ասված է, թե «վասն անբարի և գառն ժամանակիս յարում եմք, շէ բնուս կարողութիւն պատմել կամ ընդ գրով արկանել. յարում ժամանակի ցեղին ազգն քրիստոնէից Լրեքալեան թշուառութեամբ՝ սովով և գերութեամբ և հարկապահանջութեամբ և այլ ազգի ազգի վշաօք և անգութեամբ. վա՛յ մեզ և դարձեալ վա՛յ. զի կատարեցաւ մարգարէութիւն հոգելից առն Աստուծոյ սրբոյն Ներսէսի որ վասն քրիստոնէից, թէ յամենայն կողմանց նեղին և փոփոխին տեղտջէ ի տեղիս և հանդիստ ոչ գտանին, և վասն մարգարէմ և շարագոյն գաղանացն ազգին նետողաց: Ահա կատարեցաւ ամենայն. զի ասեմք լեբանց թէ անկերուք ի վերայ մեր, և բլրոց թէ ծածկեցէք զմեզ վասն սասաիկ նեղութեանս և վասն կարի և անբարի ժամանակիս»<sup>2</sup>:

<sup>1</sup> M. Tamarati. Histoire du catholicisme en Georgie. Tiflis, 1902, էջ 59 և հա., 596 և հա.: Бердзенишвили и др., История Грузии, I, էջ 306 և հա.:

<sup>2</sup> Հայկական ՍՍՍՒ Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 166:

Հիշատակարանի անանուն հեղինակը դուր չէր այսքան մտայն պատկերում իրերի վիճակը:

XV դարի երկրորդ կեսում միացյալ Վրաստանի փոխարեն հրապարակի վրա տեսնում ենք ինքնազուխ Կախեթը, Քարթլին, Իմերեթը, Աբխազիան, Գուրիան, Սամեղրեթոն, Սվանեթը և Սամցխե-Սաաթարազոն: Իսկ Հայաստանը շարունակում էր լինել Ակ-Կոյունլու և Կարա-Կոյունլու իշխողների վարած կռիվների թասերարեմ: Թուրքական հարվածների տակ էին Իրանը, Ղրիմը, Լեհաստանը, Հունգարիան, Ավստրիան, Նեապոլը և Վենետիկը:

Հակաթուրքական ճակատ կազմակերպելու համար տեղի ունեցած հեռագա բանակցությունները զնում էին միայն Ուլուն Հասանի և վեճեակիցիների միջև, ըստ որում միջնորդների ղերում հանդես են գալիս Ղարամանիայի և Կիպրոսի (Լուսինյանների պետություն) ներկայացուցիչները: Արդյոք կատաղի իր թշնամուց՝ Ուլուն Հասանից հայերին հեռ պահելու մտայնությունը չէ՞, որ այս պահին Ջրհանջահն այնքան սիրալիր էր Ջարարիա կաթողիկոսի հանդեպ: Եվ նույն նպատակով չէ՞, որ թույլատրվում էր Սմբատ Սեֆեղինյանի թագադրման կատակերգությունը:

Միառժամանակ ներքին այդ պայքարից հաղթող դուրս եկավ Ուլուն Հասանը: 1468 թ. Սիրունքարի անապատում գրված մի հիշատակարան, ուր նշված է Ակ-Կոյունլու և Կարա-Կոյունլու իշխողների վերջին վճռական ճակատամարտը, մեծարում է նրան, որպես բրիտաններից «ազատարարի»: «Ելաւ Թավրիզու խանն, և եկաւ յաշխարհս մեր, — կարգում ենք այդ հիշատակարանում, — և մեծն և փոքրն շահէն սասանեցան, և զփախուսաւ առին, և ողորմածն աստուած յետս դարձուց և ոյժ և զաւրութիւն ետ Հասան բեկին, և... ի սուր սուսերի մատնեց զինքն որդւոք և հեծելով, և զքրիտանէք ազատեց ի գերութենէն»<sup>1</sup>: Ակներև է, որ պարտության մատնելով Ջհանջահի ժառանգին, Ուլուն Հասանը ոչ միայն նվաճեց Կարա-Կոյունլուների տիրույթները, այլև յուրացրեց նրանց քաղաքականությունը: Հայերը պիտի նպաստեին ոչ միայն Ուլուն Հասանի զլխավորած պետության վերամիավորմանը, այլև Թուրքիայի նկատմամբ տարած նրա պայքարին:

Որչափ թուրքերի տիրապետությունն ու նրանց սահմանած մաքսային ուժիմը խոչընդոտ էր ստեղծել Եվրոպայի և Ասիայի միջև տեղի ունեցող կարավանային առևտրի առաջ՝ Ուլուն Հասանի

<sup>1</sup> Ս Ր Վ ա ն ձ ա յ ա ն, Թուրոս Աղբար, 11, էջ 377:

բանակցությաններին խզճի մտք գործակցում էին նաև իրանահայ առևտրականները: Հատկանշական են Ուզուն Հասանի մասին հայ գրիչների տված գրական զնահատականները: Այսպես՝ սրանցից մեկը 1471 թվականին նշում էր. «Հասան բեկս այս երեք տարի է, որ թագաւորեաց ի Պարսս և յԱրեւելս, և ի Միջագետս՝ ի հարաւ, և հիւսիս խաղաղութեամբ կամանն աստուծոյ»<sup>1</sup>:

Հանդավոր իր տարեգրութեան մեջ Մովսէս Արծկեցին նույնիսկ թուլլ է տալիս իրեն այսպիսի մի համեմատութեան.

Նստեալ ի թաղերն Շահաստան  
Ջաշխարհն կամ իւրն ի հունն.  
Երկիր բարբ խաղաղացան  
Որպէս ի մօր գիրկն արգանն<sup>2</sup>:

Հպատակների նկատմամբ Ուզուն Հասանի ունեցած հոգատարութեան մասին տեղեկություններ կան նաև օտար աղբյուրների մեջ. Շերեֆ-Նամեից տեղեկանում ենք հպատակների հարկման նրա հրապարակած «կանոնի» մասին, որ գործադրվում էր Իրաքում, Ֆարսիստանում և Աղբրեջանում անգամ XVI դարում<sup>3</sup>:

1469 թվականին Ակ-Կոյունլու իշխողի կողմից որպես զենային վեհաժողով և Հոսմ մեկնեց հայազգի խոշա Միրաքը<sup>4</sup>: Սրա հայրը Սկանդարի ժամանակ մահմեդականություն ընդունած արծաթագործ և ակնագետ էր: Չհետևելով հոր օրինակին, Միրաքն այնուամենայնիվ կարողացավ հարստութեան տեր դառնալ և պատիվներ ընդունել Թավրիզի արքունիքից՝ թե՛ Սկանդարի, թե՛ Ջհանշահի և թե՛ Ուզուն Հասանի ժամանակ<sup>5</sup>: Թավրիզի հայ համայնքի մեջ նրա ունեցած ազդեցության մասին զաղափար է տալիս 1448 թ. այդ քաղաքում ընդօրինակված մի հիշատակարան. «Կազմեցին սուրբ աւետարանս ի վայելումն խոշա Միրաքին, իւր հարն, կորտորն և իւր կողակցին և զաւակացն... և յամենայն ժողովրդեանս բազարիս, խոճենացն և խաթունացն, և տղացն մեծի և փոքու ասհատարակ ամէն»<sup>6</sup>: Միրաքի մասին կարդում ենք նաև մի այլ տեղ. «Եւ էր խոշայն մեծ ազգիս Հայոց փ զրան արքայիցն տաճկաց: Եւ բազում սղիս ի գերելոյ

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձև. № 6273, էջ 185 ր:

<sup>2</sup> «Մանր ժամանակագրութեաններ», II, էջ 219:

<sup>3</sup> „Chéref-Nâmeh“, par Chéref-ou’ddine. ed. I. B. Charmoy, S. Pétersb’ourg. 1873, t. II, pte. I, էջ 491 և հա.:

<sup>4</sup> Ալիշան, Հայ-Վեհեա. էջ 187 և հա.:

<sup>5</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձև. № 6273, էջ 199 ա. ր:

<sup>6</sup> Հ. Ա. ճ ա ս յ ա ն, Կուցակ հայերեն ձևագրաց Թավրիզի, Վիեննա, 1910, էջ 70 ա:



Վրացաանայ արս և կանայս, ծերս և տղայս զնեալ ոսկով և արծաթով ի յանօրինացն և թափեալ ազատեաց զնոսս՝ զնալ ի տեղիս իրեանց: Եւ արար բազում արգիւնս եկեղեցեաց և վանօրէից»<sup>1</sup>:

1473 թվականին Ուզուն Հասանը ծանր պարտություն կրեց Թուրքիայից: Երան հաջորդած իշխողների ժամանակ Ակ-Կոյունլուների պետությունն ապրում էր ծանր ձգնաժամ: Կենտրոնական իշխանությունը բարձր էր ապիս իր գոյությունը գրեթե միայն երկրի արտադրողական հնարավորությունները սպառելով: Ակ-Կոյունլուների պետությունը մտել էր իր կազմալուծման շրջանը, և Հյուսիսային Ադրբեջանում զուլս էր բարձրացնում հրան թշնամի սեփյան զգլխաշնների մեծ բանակը:

1498 թվականին Քաջբերունչաց գավառի Ասպիտնակ գյուղում գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Ը ձրմբոնային սասնամասոցյ ժամանակի, որ էր օր սահմի փեարար ամսոյ, եզե փորձութիւն և նեղութիւն հայոց ազգիս: Զի արեմարբու և գազանարարու զօրքն իսմայելեան և հեծեալքն Պարսկաստանից շրջեցան ի Հայաստան աշխարհին, նախ ի գաւառն Վասպուրականի ի Վան և յՈստան անթիւ բազմութիւնք հեծելոց որ էր ժՌ (=10 հազար) ընդ իրեանս սմելլով զնորընծայ փատշահն զԱլուանդ և կացին անդ ժն (=15) ար: Ուտելով և ասնելով, ձեծելով և խելելով գրկեցին զսասապեալ ազգս հայոց: Եւ անտի ելեալ ապա եկին ի գաւառս Քաջբերունոյ անհամար ազգ թաթարաց և եկեալ հաստան և ձմեռնացան բազարովն և երկրովն: Եւ ի սաստիկ ցրտասասոցյ եղանակին զմարդ և զանասուն ի տանէն հանէին և ինքեանք մտանէին ի ներքս գրաստօր իրեանց և զկերակուրան, զոր ամբարեալ

<sup>1</sup> Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, Հայոց նոր վիպեր, էջ 322: Ի վերջս չմեծ ախտան հայոց» համարված թոճա Միրաբը գոճ գարձավ կրոնական մոլեհանդության: Իրանի գահակալը, ինչպես նկարագրում է խաբարցի ուղեգիր Բարբարոն, շների կերակուր զարձրեց մարդասպաններին, կոպոպուտի մատնելով նրանց համախոճ թավրիղեցիներին (Հ. Նահոբյան, Ուղեգրություններ, Լ. էջ 213 և հտ.): Բարբարոյի ցուցմունքը հավաստում է նաև խոջա Միրաբի մասին զրված Հայ վիպարանությունը, այն տարբերություններով միայն, որ Միրաբին սպանողին պատժողի գերում հանդես է գալիս ոչ թե տարիներ առաջ մեռած Ուզուն Հասանը, այլ սրան հաջորդած Յազուրը (Շահայոց նոր վիպեր, Ա. էջ 322 և հտ., և Գ. Հոյսեփյան, Սաղարհյանք կամ Պոսոյանք, 111, էջ 122): Ժամանակակից Գրիգոր Արճիշեցիին գրում է Յազուրի մասին. «Սափանեաց ի բրիտանուէր թամբով ձի հեծնուլ զհնչումն ժամոց և զանդակաց, զգնմունս և սպիտակ գոտի սասնոց կապուտի և այլ բազում շարիս արար» (Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 6273, էջ 200 ր):

էին մարդոց և անասնոց, զամենեսեան ըմբռնեցին և առին: Եւ նովաւ ոչ բաւացան. սկսան շարշարել զքրիստոնեայնս վասն խոտի և յարդի, դարոյ և դիմոյ և վասն կերակրոց և ըմպելոց: Այլ և բազում հարկս ձգեցին ի վերա քրիստոնէից, որ և ի գլուխ ԲՌ (= 2000) դահեկան և բազում տանջանաւք շարշարէին զքրիստոնեայնս»<sup>1</sup>:

Ակնհերե է, որ իրենց օրհասն ապրող թուրքմեն վերջին տիրապետողները հայերի նկատմամբ շէին հետևում նշանավոր նախորդների՝ Զհանշահի կամ Ուլուն Հասանի քաղաքականութեանը: Իրենց ճնշումներով ու կեղեքումներով նրանք զժողովուրդուն էին առաջ բերում և՛ հայ ժողովրդական մասսաների, և՛ հայ իշխող տարրերի մեջ:

XV դարի վերջին տասնամյակներում թուրքմեն իշխողների ճնշումներից ու կեղեքումներից նկզված՝ հայ գրիչները գալիք օրերի մասին սկսում են ցուցմունքներ տրոնել զարձյալ տեսլական և գուշակողական երկերի մեջ:

Հատուկ ուշադրութեան արժանի է Ազաթոնի գուշակութեանների ավելի ուշ ժամանակվա խմբագրութեաններից մեկը, ուր նախատեսված են նետողների ներքին պատերազմները ու «ազատարար» Կոստանդինուսի երևումը «ի ընդ թուականիս հայոց Զեմ» (= 1500 թ.)<sup>2</sup>: Ազաթոնի XIII—XV դարերի ձեռագիրների մեջ հաշվի էին առնված ոչ միայն մոնղոլ էլիսանների տիրապետությունը, այլև նրանց պետականության քայքայումը և Զեյայի յայնների ու Զաղաթայանների առաջացումը: Ինչ վերաբերում է Ազաթոնի այն խմբագրությանը, ուր նետողների ռազմական բախումները ու «ազատարար» թագավորի երևում նախատեսում է 1500 թվականի համար, ակնհերե է, որ այստեղ նետողների մասին արված կանխագուշակութեանները վերաբերում են արդեն թուրքմեն ցեղապետների շրջանին:

Վերախմբագրված Ազաթոնի մոտ ուշադրով է «նետողների» դիմագծերի, նրանց կենցաղի և վարչութեան նկարագրութեանը:

«Եւ լինի ազնն այն լայն գիմօք, լայնաձևկատ, նեղաչք, փոքրաքիթ, սրալեզուք և կորովիք: Դիմակ երեսաց նոցա իբրև գվէմս հաստատուն լինին: Եւ ոչ բնակին նոքա ի տուն և ոչ չամբոց ապաւինին... Եւ լինին նոքա արդարադատ, հրամանակատար և միամիտ

<sup>1</sup> Ս. Տեք-Ավետիսյան, Կոր-Ջուղայի հայերեն ձեռ. նկարագրութեան, ձեռ., էջ 261:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ., № 6146, էջ 2:

տեսան իւրեանց: Առցեն զերկիր և մաշեացեն ի սուսեր... և ոչ ուրեք մնա մեծատուն և ոչ թագաւոր և ոչ ազատ, ամենեքեան անգանին ի ծառայութիւն ազգին նեւողաց: Եւ ոչ մնա ամբողջ որ ոչ քակտեացի ի ժամանակս յայնմիկ: Եւ բնկեացեն ի Հարկապահանջութիւն զամենայն աշխարհս և մաշեացի ամենայն երկիր: Ռուի թէ լինի խաղաղութիւն և ոչ լինի ի սաստիկ Հարկապահանջութենէն... Եւ վաճառականք տիրեն աշխարհի. սակաւ մի հանգիստ առնում ևս որ և ոչ այլ մխիթարին. զի բազում լինի Հարկապահանջութիւն, վախիցեն չերկրէ չերկիր և ի տեղւոջէ ի տեղի, ի քաղաքէ ի քաղաք և ոչ լինի ուրեք խաղաղութիւն ըստ բանին սուրբ հայրապետին Ներսէսի...»<sup>1</sup>:

Կարծում ենք, որ այս հաստիածը հարմարվում է թուրքենի ֆեոդալների տիրապետության շրջանին, երբ, ինչպես ասված է, հայկական վերապրող տիրապետությունների մասին խոսելիս՝ «և ոչ ուրեք մնասցէ մարդ ի վերա երկրի, բայց միայն ի ձորն Մանանադոց և ի լերինս Սասնոյ և ի մայրիս Արցխոյ»<sup>2</sup>:

Հավանորեն այստեղ հիշատակվող Մանանադիի և Սասունի շրջանները մտնում էին «Խուլթի և Սասունի հանրապետության» կոչված այն երկրի մեջ, սրի հայ իշխողները, ինչպես վերը նշեցինք, XV դարի կեսերին մասնակցում էին հակաթուրքական կոալիցիոն կազմելու նպատակով տարված բանակցություններին: Իսկ «ի մայրիս Արցխոյ» հավելումը կարծես կանխում է աչքի բնկնող այն դերը, որ հայ ազատագրական շարժումների մեջ կատարելու էին Ղարաբաղի հայ ֆեոդալական մասնա տիրույթները:

Ակ-Կոյունլուների տիրապետությունը XVI դարի սկզբներին տեղի տվեց Աեֆյան գինաստիաչի գլխավորած պետությանը:

Աեֆյան գինաստիաչի նախնիները պատմության ասպարեզ էին իջել Արդարիլում, որպես իսլամի շիա գավառության պատկանող թուրքենի ծագում ունեցող զվրաշ ցեղերի շեյխեր: XIV դարի կեսերին նրանք այդտեղ սմենին ֆեոդալական խոշոր կալվածներ: Սի դար անց նրանք հիմք դրեցին զվրաշների գլխավորած ֆեոդալական ցեղապետությունների միացյալ պետության: Եկարագրելով նրանց վերելքը, հայ գրիչներից մեկը 1488 թ. նշում էր. «Զի էր սահմանք և սովորութիւնք նոցա, որ յամենայն ամի փութային ի կոշն նորա (—Իրանշահի) յամենայն աշխարհէ կարմրագրակ Սօֆիքն և զինուորէին նմա իւրեանց թռչակօքն. և փոխա-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 6146, էջ 1ր և հտ.:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 7 ա:

նակ ասնելոյ ի նմանէ, ինքեանք տային նմա բազում ոսկի և արծաթ և յամենայն պատերազմունս ընդ որ երթայր՝ յօժարութեամբ կուռէին և մեռանէին առաջի նորա»<sup>1</sup>։ Նախապես աչք տնկած միայն Գիւղանի և Շիրվանի մեռաքառաստ երկրների վրա և քանիցս պատերազմելով դրանց ֆեոդալ տիրապետողների դեմ, ի վերջո Սեֆյաններն իրենց զենքով Իրանի իշխողների հետ շափվեցին XVI դարի սկզբին։ Երիտասարդ շահ Իսմայիլ Սեֆեւին, խաթայի անունով նշանավոր նաև սրպես թուրքմենալեզու բանաստեղծ, պարտության մատնելով Ակ-Կոյունլու ցեղի զահակալին, տարածեց զզրաշների իշխանութունը ամբողջ Իրանի վրա։

Ղզրաշների սրով ու թրով հաստատված Սեֆյանների բռնատիրակաճն աճիմը նույնքան ավերիչ եղավ Հայաստանի ու հայ ժողովրդի համար, որքան և նրանց նախորդած թուրքմեն ցեղերի տիրակալութունը։

ժամանակակից գրիչներից մի ուրիշը, Կարապետ Բերկեցին, բնութագրում է 1487—1501 թվականները սրպես «վրդովման» մի շրջան, երբ Ակ-Կոյունլուների թագավորությունը «ի Ժ (10) բաժանեցաւ և Սօֆին (այսինքն զղզրաշների ցեղապետը, որը հիմք դրեց Սեֆյանների դինաստիային) շատ տերք արար և զնաց ի Շամախի և էսո զՇամախի և էսպան զՇրուանշին։ Եւ եղան զահիճ միմեանց և ազգս հայոց անկաւ ի նեղութիւն, զի մին զմիոյ երկիրն թալանէր։ Եւ քուրդն էսո զանատիկ բերդն զՎան և աւերեաց զերկիր Վանա, և ամեն պարտն զիւր տեղաց ամուսանի մարդն աուզանէր և թալանէր և մեր զայն տեսար և փախար և մտար յԱրծկէ»<sup>2</sup>։ Ղզրաշների բռնատիրության սկզբնավորումը հայարեակ գավառներում ծայր ավեց մասսայական գաղթադնացության։ 1505 թվականին Կախեթում գրված մի հիշատակարանում, երկարակեցութուն մտղթելով վրաց Ալեքսանդր թագավորին և նրա սրբի Գիորգի իշխանին, գրիչը նշում է. «Ի ժամանակի, որում զաւրացեալ էր շար և անիրաւ ազգն, որ Շիխի զգալաչ կոչի, որ ելաւ Արտաւիլոյ և էսո թախթն Ռարիգոյ և կոտորեալ և կորոյս զազգն թիրքմանին և էսո զաշխարհս ամենայն և աւերեաց քաղում զաւսոս հայոց և տաճկաց. և թողին (հայքն) զամենայն հայրենական բնակութիւնս և կին Վրաստունս, վերչն ատուծոյ է գիտելի, թէ ինչ կու լինի»<sup>3</sup>։

<sup>1</sup> Հայկական ՍՍԻ Մատենագարան, ձև. № 6273, էջ 353 և հտ.։ Հմմտ. նաև Բ. Սարգսյան, Յուդայի ձեռագրաց Վենետիկի, Բ. էջ 1159։

<sup>2</sup> Հայկական ՍՍԻ Մատենագարան, ձև. № 1501, էջ 389ա, բ։

<sup>3</sup> Նոյն տեղում, ձև. № 3861, էջ 322ա։

Անֆյան շեյխերը առաջացել էին Գիլանի մետաքսին տիրա-  
նալու մենաշնորհը նվաճելու ձանադարհով: Տիրանալով Գիլանին,  
նրանք ձևաբ կարկառուցին Շիրվանի մետաքսին՝ բազմիցս պա-  
տերազմելով Շամախում նստող շիրվանշահների հետ: Այսպես, զես  
1488 թվականին է, որ Արզարիլում իշխող զզրաշների ցեղապետը՝  
շեյխ Անֆին, հարձակում գործեց Շամախու վրա, սրի ածելով  
մարդկանց ու անասուններին<sup>1</sup>:

Մտալ էջերով են նշում հայ ժամանակագիրները մանավանդ  
զզրաշների նվաճումներին հաջորդած պատերազմները՝ հզորու-  
թյան ձգտող Անֆյան Իրանի և իր նվաճումների զազալը մազլցսոյ  
սուլթանական Քուրբիայի միջև:

Պալքարոյ կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր Հայաստանի  
ու Անդրկովկասի սարկացսումն ու կեղերումը զարձնել եկամուտների  
բացասիկ աղբյուր: Շիա և սյուննի դավանությունների մոլեզին մար-  
տերի կերպարանք բնորոնած և մինչև 1639 թվականը տեած կռիվնե-  
րի ընթացքում կողմերից յուրաքանչյուրը կամենում էր իր հակո-  
զումյան տակ ունենալ Առաջավոր Ասիայի սարաակցիական զիր-  
քերը և Հնդկաստանից ու Միջին Ասիայից գեղի լեանաշան նավա-  
հանդիսաները տանող ուղիներն ու առևտրի հանդուցները՝  
Քավրիզը, Երևանը, Էրզրումը և Քոխաթը՝ մի կողմից, և Կասպից  
ու Սև ծովերը միացնող առևտրի և հաղորդակցության զլիավոր  
գծերն ու դրանց վրա դանված կարևոր հանգրվանները՝ Քիֆլիսը,  
Գանջան, Շամախին և Գեղրենարը՝ մյուս կողմից: Անդկլացի ուղե-  
գիր Զևնեկինսոնը բնորոշում էր այս պատերազմները արդևս  
առևտրական ձանադարհների համար տարվող մի կռիվ, և առա-  
ջին հերթին՝ սրպես պալքար Գիլանի մետաքսի համար:

Մեկուկես դարի ընթացքում պարբերաբար կրկնվող բախում-  
ների ընթացքում Առաջավոր Ասիայի պատմության անիվը թավալ-  
վում էր հայ ժողովրդի մեջքով: Իրենց բերած հարվածներով ու  
ավերումներով այս բախումները նվազ դաժան չէին բան սել-  
չուկների և մոնղոլների բուր սրհավիրքները: Աչքի տասջ պիտի  
ունենալ մանավանդ, որ պատերազմող կողմերը հիմա չէին ծա-  
ռալեցնում նեա ու սուր, ինչպես առաջ: XVI դարում և՛ օսման-  
յիները, և՛ զզրաշները բաժնեցնում էին «թափ սու թվանիկ», որով  
մեծ շափեր էին ընդունում պատերազմի հեա կապված ծախսերը,  
նրա պատճառած ավերածություններն ու մարդկային կորուստնե-

<sup>1</sup> Բ. Ս ա ր գ ի ս յ ա ն, Յուցակ ձևազրաց վենեաիկի, Բ, էջ 1160:



րը<sup>1</sup>։ Տիրանալով հրացան ու հրանոթ պատրաստելու եղանակին, իրանցիները սչ միայն դիմադրում էին թուրքական ադրեսիային, այլև հաճախ փոխադրում պատերազմը թշնամու երկիրը։ Հարավային Ադրբեջանը, Հայաստանն ու Անդրկովկասը հանդիսանում էին պատերազմների գլխավոր բեմը և դրանց զավթումը՝ թուրք-իրանական զինաբախումների ամմիջական նպատակը։

1514 թվականին թուրքերը զրավեցին Թավրիզը, կրկնեցին քաղաքի զրավումը, ինչպես ասեսանք, 1535 թ. և երրորդ անգամ 1546 թ.<sup>2</sup>, հարկադրելով Սեֆյաններին Ղազվին փոխադրել իրենց գահանիսար։ 1546 թ. թուրքերը զրավեցին Անդրկովկասի վրայով անցնող առևտրական ճանապարհների ոսղմական բանալին՝ Կարսի բերդը։

Հասկանալի է, որ ոսղմական արհավիրքներից և առևտրի անկումից տուժող հայ առևտրականների համար զրված չէր հիմա Թավրիզը կործանելու հարցը, ինչպես երբեմն, հին ասիայների և գուշակությանների մեջ, այլ այն օսմանցիների յաթաղանից ազատագրելու խնդիրը միայն։

Մի բաղձանք էր այս, որ հատուկ չէր միայն թավրիզարձակ հայերին։ Ճիշտ է, որ պատերազմի արհավիրքներից մեծապես տուժում էին թե՛ Սեֆյանների, թե՛ Օսմանյան պետության հպատակ հայերը. ճնշվում ու հարստահարվում էին նրանք թե՛ Իրանում, թե՛ Թուրքիայում։ Այնուամենայնիվ թուրքերի լուծը ավելի զաժան էր ու շարաղետ։

Նյութական գրկանքներից առավել քրիստոնյա հպատակների համար թուրքական ուժիմը ծանր էր. անծայր ճնշումներից ու կեղևքումներից և մանավանդ ուսյայի մուժեկիք հանրապարտ ու բաղմապիսի տուրքերից զատ, զենքի ուժով նվաճված քրիստոնյաները վճարում էին հատուկ զլխահարկ («ջիզյե» կամ «խարաջ»)։ Որչափ զլխահարկը գանձվում էր զինապարտության փոխարեն՝ Թուրքիայում (ինչպես նաև Իրանում) քրիստոնյա կանայք ու աղջիկները զրանից ազատ էին։ Ինչպես վկայում է XVIII դարի ուղեգիր Դը լա Մոթուեն, աղաները սկսում էին վճարել այդ հարկը, երբ 13—14 տարեկան էին զառնում։

Գլխահարկի ասկայությունը շեշտում էր քրիստոնյա ուսյայի

<sup>1</sup> Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ե ո Ա բ ճ ի շ ե ց ու տարեգրությունը, «Մանր ժամանակագրություններ», 11, էջ 229 և հտ.։

<sup>2</sup> Հմմտ. Ա. ս ա ք ե լ Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 630։

ասորադաս կացութեանը, որ համազոր էր գրեթէ ստրկութեան<sup>1</sup>։ 1464 թ. Սեպուհ լեռան հայ վանքերից մեկում գրված մի հիշատակարանում թուրքերի մասին կարդում ենք. «Այլ և շար դարձան քան զգազան և ծարաւիք են բրիստոնէից արեան... զի խարաճն զ (Ք) ֆլորի արարին և կապուտ արկին ի զլուս բրիստոնէից և զմեռեալն ի քաշ տան տանել. այլ շարիք բազում խոկան և խրոխտան ի վերա բրիստոնէից... Այլ և բազում արհաւիրք եղեն ի մերում ժամանակիս զի առաւ Ստամպուլ քաղաք և ի սուր սուսերի մաշեցաւ։ Բնակիչքն նորա զերի վարեցան, անթիւ տնհամար նշխար սրբոցն առ տաս անարիւնաց կոխան եղև և եկեղեցիք անարիւնաց եղեն բնակութիւն, և այլ բազում արհաւիրք եղեն... և լեա Ժ (10) ամաց կամ պակաս, առաւ Պոնտոս, որ է Տրապիզոն, և այն շափով վնաս ի նոյն գործեցաւ, զի բաժանէին գորգիս և դստերս ի մարց և ի հարց և զեղբայր լեղբարց, և աղխողորմ էր լացն և ազազակն...»<sup>2</sup>։

Քրիստոնեյա մանուկներին ծնողներից խլելու պրակտիկան, այսպես կոչված «մանկաժողովը» կամ «զեշիրմեն», ուսումնական ավարառութեան շէր միայն, այլ խաղաղութեան տարիներին պարբերաբար կիրառվող հարկահանութեան մի տեսակը. հարկերն ու սուրբերը վերցնում էին ոչ միայն պարենով, փողով կամ աշխատանքով, այլև՝ մարդով. բռնութեամբ հափշտակված ազաներին տանում էին Պալիս, իսլամացնում և թրքացնում՝ համարելով ենիչերական կոչված հեռակապիւն բանակները։ Այսպիսի ազալաժողովներ հիշատակվում են 1519, 1531, 1536, 1543, 1547, 1550 և հետագա մի շարք թվականներին<sup>3</sup>։ Բռնի համարման ենթակա էին նաև սուլթանների, փաշաների ու բեյերի հարեմները՝ այսպես կոչված «ազջկաժողովների» միջոցով։ Այսպես՝ 1569 թվականը նշվում է որպես հարեմական պետքերի համար կազմակերպված «ազջրկաժողովի» տարի<sup>4</sup>։ Օրջեկտիվներն զիտած՝ մանկաժողովի և ազջկաժողովի վայրագ պրակտիկան նույնատեղ էր պետութեան համակենտրոնացման պրոցեսին և որպես այդպիսին կարող է թրվալ, թե հանդիսանում էր պատմականորեն պրոգրեսիվ երևույթ։

<sup>1</sup> Հ. Քյուրտյան, Ա. Տը լա Մոթուեի ուղեգրութենէն հայոց մասին (Առանձնատիպ, էջ 13)։

<sup>2</sup> Կարապետ վարդապետ (Տեր-Մկրտչյան), Մահմեդական լուծը և նրա բռնութեան ներքո ծագող հայ վարդապետաբանները, էջ 18 (Արատապութեան 1913 թ. «Արարատից»)։

<sup>3</sup> «Մանր ժամանակագրութեաններ», Կ, էջ 107 և հտ.։

<sup>4</sup> «Գիւման հայոց պատմութեան», X, էջ 47։

Փաստորեն դա մի գործողություն էր, որ խորացնում էր քրիստո-  
նյա և մահմեդական բնակչության միջև եղած խտրությունը և  
ըստ էության սնում կենտրոնացած պետության չլատման ու պա-  
ռակաման տենդենցներ:

Ղուրանը և նրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրու-  
թյունը ամբողջ աշխարհի ժողովուրդների աշխարհագրությունն ու  
ազգագրությունը վեր են ածում երկուսի արտհերթ պարզ ու հեշտ  
բանաձևի: Հավատացյալների և անհավատների: Անհավատը, դա  
«գեալուր» է, դա թշնամի է: Իսլամն անիծում է անհավատների  
ազգը և մուսուլմանների ու անհավատների միջև սակցում՝ ան-  
ընդհատ թշնամանքի գրություն»<sup>1</sup>: Մարգար և էնդեյար Ֆաման խըտ-  
րականության մեջ տեսնում էին հին Արևելյի կործանման պատ-  
ճառներից մեկը: «Երկու կրոնների պատկանած մարդիկ (եզիպ-  
տացիները, հրեաները, բաղդեացիները) չեն կարող ոչ խմել միա-  
տեղ, ոչ սուտ, ոչ էլ միատեղ կատարել ամենասովորական մի  
բան և հազիվ կարող են խոսել իրար հետ: Մարգար մարգուց այս-  
պես բաժանելը հին Արևելյի անկման հիմնական պատճառներից  
մեկն էր»<sup>2</sup>:

Կարելի է համարձակորեն պնդել, որ թուրքերի (թուշպեա նաև  
իրանական զվլբաշների) կիրառած էթնիկական խտրականու-  
թյունը հանդիսացավ նաև Օսմանյան Թուրքիայի (իսկ հետագա-  
յում նաև Սեֆյան Իրանի) բազարական կազմալուծման գլխավոր  
պատճառներից մեկը:

Քրիստոնյաների համար թուրքերի սահմանած դաժան սուր-  
բերից ու պարտավորություններից գատ պիտի աչքի առաջ տանե-  
նանք նաև պատերազմների պատճառած պարհակային աշխա-  
տանքների՝ կոռի պրակտիկան: 1551 թ. մի հիշատակարանում  
սերասապի Մինաս գրիչը նշում է. «Յայս ամի եկեալ վազիր  
փաշայն բազում և անթիս սորօք և գնաց զկալ յարաւելս ի Շահաս-  
տանս (=Թավրիզ): Եւ յսլժ նեղիցին և շարշարեցին գրիստո-  
նեաչան ի հարկապահանջութիւն: Եւ հանին գրազում արհեստա-  
ւորս վասն շինութեան Ղարսայ բերդին և անգի եկեալ գերեցին զձ-  
րեանու զաւան և գրիստոնեաչս բազումս ի սուր և ի գերութիւն  
վարեցին. և ոմանց փախտաւական լեալ ի լերինս և ի քարածերպս  
վիմայն՝ յուսալով ի խնամս մարգասերին աստուծոյ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Կ. Մարքե և Փ. Յիգելե, Сочинения, X, էջ 6:

<sup>2</sup> նույն տեղում, XV, էջ 609:

<sup>3</sup> Հայկական ՍՄԹ Մատենագարան, ձեռ. № 6272, էջ 250:



Միայն նոր նախաձեռնում երկրներում չէ, որ թուրք սատրապները ստրկազրտում կամ ճորտագրում էին գյուղացիներին և արհեստավորներին: Հարկազրտական աշխատանք կազմակերպվում էր նաև պետությունների ներքին նահանգներում: Զարարիա Վարազեցին գրում է. «Եւ տայն ամի բերաւ ջուրն Շամիրամայ ի բաղաքն Վան չորս ամիս բազում աշխատանք երկիր և լազար ի վերա գատելով և ապա բերաւ ջուրն, զի ուի լազար սարակ (=բանոց ձևոր) քաղաքէն զնայ, թող զերկիրս և զայլս ի յօտար յաշխարհ»<sup>1</sup>: Նման աշխատանքի օրինակ տալիս է նաև մի այլ հիշատակարան, որ 1564 թ. մասին կարգում ենք. «Այս ամի շինեցաւ (1556 թ. երկրաշարժից ավերված—Ա. Հ.) պարիսպն Արճիշոյ քաղաքին և շատ նեղութիւն քաշեցին քրիստոնայքն ի պարիսպին շինելն. և կարմիր պիտու (իմա զզլրաշների) ա՛: ու զսգն բռնէր էր զերկիր և զգաւառ»<sup>2</sup>:

Թուրքական էքսպանսիայի գաղթական լծույթին է մատնում տեղագին այս բերդաշինարարությունը: Բերդերը հարկավոր էին օսմանցիներին ոչ միայն զզլրաշների, այլև ժողովրդական մասսաների գիմարությունը ձնշելու համար: XVI դարի՝ Վանում գրված մի հիշատակարանում ցայտուն արտահայտություն է գտել հայ հասարակ մի մարդու՝ Գրիգոր զրչի վերարկրմունքը զեպի թուրքերի բերդաշինարարությունը. «Եւ թվին ՌժԸ (1569) ամին, ի հայրապետութեան տեանն Միքայէլ կաթողիկոսին սուրբ էջմիածնայ և Գրիգորիս կաթողիկոսին Ազթամարայ և ի տեղապահութեան Շամիրամակերտին Վանայ Խօսբով փաթշահին, որ յայսմ ամի սկիզբ արար շինութեանն Վանայ քաղաքի պարսպին, զոր տէր աստուած փրուցեալ կործանեսցէ՛ զայում զվերայ (=ենիշերինների) զլխին. ամէն»<sup>3</sup>: Վանա բերդի մասին գրող Գրիգոր զրչի անպաճուճ այս տողերի և և. Արովյանի երևանա բերդի հոյակապ նկարագրության միջև գաղափարական ազդակցություն կա անշուշտ:

Իհարկե, միայն թուրքահայտակ քրիստոնյաները չէին կատարում պարտազիր այս աշխատանքները: 1566 թվականի Արճեշի պարսպաշինություն մասին մի այլ տեղ կարգում ենք. «Շինեցաւ պարիսպն Արճիշոյ քաղաքի և բազում խառնիճազանճ մարդիկ ժողովեցան ի վերայ: Եւ Վան քաղաքի տէր, որ ասի Հիւսէին փա-

<sup>1</sup> Հայկական ՍՍԻ Մատենադարան, ձև. № 6273, էջ 166:

<sup>2</sup> Նույն տեղում, ձև. № 1024, էջ 222բ:

<sup>3</sup> Նույն տեղում, ձև. № 1618, էջ 93ա:

շայ հուրմ արար ի վերայ քաղում քաղաքաց և զեղօրէից և ժողովեաց քաղում մարդիկ՝ հայ և քուրդ, աաճիկ և ասորի և շինեաց զպարիսպ քաղաքին և տարի և կէս թամամեցին»<sup>1</sup>:

Հպատակներին ստրկացնող կամ հորտացնող օսմանյան բարբարոս սեփմը ավերում էր երկրի արտադրողական ուժերը, քայքայում աշխատավոր մասսաների նյութական բարեկեցությունը: Բնութագրելով թուրք օկուպանտների սուաջացրած քաղաքական և տնտեսական ճգնաժամը՝ 1546 թվականին մի հիշատակագրող գանդաավում էր. «Այլևս սուլթանն օսմանցոց իւր տիրեալ երկրների եղևալ քրիստոնէից մանկունս տայ ժողովել՝ սուալ տանն Սաամբօլ ի դուռն իւր, և թէ զինչ գործ գործեն զօրքն նորայ այն միայն կրողքն և համբերողքն զիտեն և Աստուած: Ոսկի, արծաթն ժամանակիս շատ րանգ է և մուլն ու կայրենիքն աժան. բայց զոր ինչ պետք են կենաց մարդկան՝ կարի շատ սուղուրին է»<sup>2</sup>:

Ոսկու և արծաթի թանկացման, մուլքի ու հայրենիքի էժանացման երևույթը մեզ արդեն ծանոթ է մոնղոլների ժամանակներից, որպես հարատևող պատերազմների, մասսայական հորտագրման, աշխատավորների փախուստյան կամ զաղթագնացության հետևանք:

Բուրբ այս տագնապների ու պատուհասների անմիջական աղբյուրը XV դարում ծայր առած և XVI դարի ընթացքում կարճ ընդմիջումներով հարատևած թուրք-իբրանական պատերազմներն էին:

Նվ իհարկե, միայն թուրք նվաճողները չէ, որ կիրառում էին ավերումների ու հարստահարումների դաժան պրակտիկան:

1531 թվականին Թավրիզի բեկլարբեկ Ուլաման ապստամբեց շահ Թահմալի դեմ: Շահը զորք գումարեց ապստամբի դեմ: Ուլաման ապավինեց Թուրքիա և ամբացավ Վանա բերդում: Թուրքերի հետ միացած 1533 թվականին նա «բազում հեծելով և անթիվ տրապով, թոփով և զարպագանդով 60 հազար թրանդուզով» գտնւպնդված հետ առավ Թավրիզը<sup>3</sup>: Հսկահարձակման անցնելով 1535 թվականին զզլբաշները գրավեցին ու ավերեցին Վանը, սովի և մահացության ենթարկելով քաղաքացիներին ու բերդում պաշտպանություն գտած մարդկանց: «Զի ի ձմեռնային յկամակն եկն,—գրում է այս մասին Մարգարե գրիչը,— և երկիրն ամենաքն

<sup>1</sup> Հայկական ՈՍՈՒ Մատենագարան, ձև. 6273, էջ 264ա, ր:

<sup>2</sup> Նույն տեղում, Մտերյանի արխիվ, թղթ. 199, գ. 379, էջ 71:

<sup>3</sup> «Մանր ժամանակագրություններ», II, էջ 229 և հա.:

թողեալ զտուն և զտեղ և զոռճիկ իւրեանց ի տան և փութանուկի առեալ զկանայս իւրեանց մտան ի բերդն, զի աջնրան սաստկացաւ ահն մինչ զի ոչ կարացին հաց բառնալ ընդ ինքեանս... Իսկ ոռճիկը նոցա ամէն յիւր տեղն մնաց կապած: Իսկ նոցա սուր ի վերա եղեալ՝ զորն զենին և զորն յուղարկեցին ի տունս իւրեանց: Եւ այն սր ոչ ի զենել երեկ և ոչ ի տանուլ՝ վասն սաստիկ ցրտին ձմերան և պարզկտին և որթերն և ձագերն ամեներին ի կապած տեղն սովալլուկ բոռալով և կոռալով մեռանէին: Իսկ կարմիր զլուխն խտարեալ զբերդն նստաւ ի սուրբ Սարգսի պահոցէն մինչև ի Համբարձումն ի մեծ նեղութիւն արկեալ: Իսկ ժողովուրդն այն սակաւ կերակուրն սր տարեալ էին՝ հասաւ: Իսկ շատր ի քրիստոնէից կերան զմիտս ձիոյ և զըզտու և զիշու, և այն աչ բաւեաց, ամենեքեան սովալլուկ եղեալ մեռան՝ որն ի սովոյ և որն ի իւանկէ և որն ի թօփէն, հաւատացեալ և անհաւատ անձինս 16 հազար ընդ այս և ընդ կին, ընդ ծեր և ընդ տղայ՝ ի բերդն և ի բերդէն ի դուրս»<sup>1</sup>:

Իրենց հեծելաշարժութուններով զզբաշները սաի տակ ավելցին զրեթի ամբողջ Վասպուրականը: Հովհաննէս Արճիշեցի ժամանակագիրը այս պահին հայերին հանդիպած արհամիրքն համեմատում էր այն պատուհասների հետ, որ տեսել էին լանկ-թամուրների և այլ շար ասպատակողների օրոք<sup>2</sup>:

Փոքր ինչ հետո իրանական ասպատակութունները կրկնվեցին նաև Արեւելյան Հայաստանում:

1538—1539 թթ. Երբլանը ասպատակում է շահ Թահմազի դեմ: Ապստամբության զլուխն էր կանգնած մեռած շիրվանշահի Ֆարուխ Տասար սրգին՝ Շահբուրք: Ապստամբութունը ճնշեց շահի եղբայրը՝ Ալխազ-Միրզան: Մոտ 600 մարդ սրածվեցին, զրանց թվում նաև Երբլանի ազնվականներից շատերը: Ալխազ-Միրզան տեղ գարձով Երբլանին<sup>3</sup>: Սակայն ստանձնելով Երբլանի վարչութունը 1545—1546 թթ. Ալխազ-Միրզան զենք բորձրացրեց իր իսկ եղբոր՝ շահ Թահմազի դեմ: Հենված տեղական ֆեոդալների ուժին, նա ինքնազուտի հայտարարեց իրեն: Շահի դեմ ասպատակեց նաև Վրաստանը: 1546—1547 թթ. Թահմազը պատժում է եղբոր ըմբոստութունը և Եորագյալի ու Փամբակի վրայով արշավում Վրաստանի վրա: Իր հերթին Ալխազ-Միրզան, փախչելով Իրանից՝ միա-

<sup>1</sup> Բ. Սարգսյան, Մայր ցուցակ, Բ, էջ 1173 և հա.:

<sup>2</sup> Մանր ժամանակագրութուններ, II, էջ 230 և հա.:

<sup>3</sup> „Chèref-Nâmeh“, t. II, partie I, էջ 572:

նում է թուրքերի հետ և մասնակցում Վանա բերդի և Արձեշի գրավմանը:

Ապստամբական շարժումները Անդրկովկասում շարունակվում էին կրկնվել Վրաստանում, Շաքիում և Ղարաբաղում<sup>1</sup>: Քարթլիի թագավոր Լուարսաբը շարժում է իր զորքերը դեպի Գանձակ, Երևան և Շիրվան: Ի պատասխան սրան 1548 թվականին շահը մտնում է Թիֆլիս և Անիի ճանապարհով 1550—1551 թվականներին անցնում է Սամցխե և Բարձր Հայք: Մինչև Լուարսաբի վախճանը (1558 թ.) շահը հինգ անգամ արշավեց Անդրկովկաս, սակայն առանց վճարական հաղթանակի: Ռազմարեմ են դառնում հայկական Լոսին և Ղարաբաղը:

Ի վերջո պայթարից հաղթող զորս եկավ շահ Թահմասը, իրեն ենթարկելով ոչ միայն Շիրվանը, այլև Շաքին, Գանձակը և Ղարաբաղը: Անդրկովկասում նա կազմակերպեց երեք բեկլարբեկություններ: Մեկին ենթարկվելու էր Շիրվանը, մյուսին՝ Ղարաբաղն ու Արևելյան Վրաստանի մի մասը, երրորդին՝ Երևանի և Նախիջևանի խանությունները<sup>2</sup>:

Ռազմական մի վարչաձև էր սա, որի նպատակն էր կանխել Անդրկովկասի ժողովրդական ապստամբությունները և արգելք դնել շիրվանցիների, վրացիների և հայերի ինքնորոշման ձգտումներին: Նույն վարչաձևը օսմանցիները կիրառում էին Արեմոյան Անդրկովկասում:

Մի հիշատակարանում, որ գրվել է Նախավկայի վանքում, կարդում ենք. «Ի թւականիս ԶՂԳ (1544) և ի բռնակալութեան անօրինաց կարմիր պղակի... (որք) աւերէին և քանդէին զամենայն ազգս յամենայն ընչից, ուր և հասանէին արհաւիրք նոցա, աւերէին և քանդէին զամենայն շէնս և զանշէնս, ես առաւել զառառակայ ազգս մեր, զոմանս թաւանէին զոմանս յապրանաց պրկէին և շատրի հաւատէ հանէին և զամանք խայծարէին, սրոյ ճարակ տային և

<sup>1</sup> Աղանյան, Գիվան, X, էջ 30 և հա., 71 և 501: Հմմտ. նաև «Ուղեգրություններ», Ա, էջ 333 և Տաշյան, Յուդայի ձեռագրաց, էջ 871, նաև Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձև. № 7581, էջ, 684: «Chèrei-Namch», t. II, p. 1, էջ 572 ա, 570 և հա.:

<sup>2</sup> Ըստ երևույթին ավելի ուշ Երևանի բեկլարբեկությունը ենթարկվում էր նաև Ղարաբաղը: Այսպես կզրահայնում ենք մի հիշատակարանից, գրված 1575 թ. «Ի Փոսս նահանգ (=Չուխուր-Սադի կամ Երևանի նահանգ), գաւառս Վարընիսյ (Վարանդոյ) ի գաւառսս որ կոչի Շուշայ (sic) (ներկայիս՝ Շոշու) ընդ Հովհանէառ ու Սահիմնոսի...», Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձև. № 4375, էջ 269ա:

մեք վասն հալածանաց ժամանակիս ի բազում տեղիս շրջեցաք. զի ուր և գնացաք տեսար գազգս մեր վիշտս և ի տառապանս...»<sup>1</sup>:

1549 թ. Շաաախի մի հիշատակարանում ստված է. «Ի դառն և ի նեղ ժամանակիս որ հոնդբար (իմա՛ խոնդբար) եկաւ ի վերայ Վանայ, բազում բրիտանեայք ողորմելի զիմար ի գոնէ դսո շրջի(ն) ազիտղորմ: Որ կապի՛ձ գարին ի փափասել ( ) ծախէին: Որ հորատանայ մինչ ի յԱսդրոտոմ ամացի արարին»<sup>2</sup>:

Ինչպէս սովորաբար՝ պատերազմական արհավիրքներին ուղեկցում էին «մահտարածամբ», համաճարակն ու սովամահովյոճնը: Մեզ անհայտ Բարկիս գյուղում գրված հիշատակարանում կարգում ենք. «Ի թվականիս հայոց որ է ԶՂԲ (1549) ամի, սրում եղև մահտարածամ աշխարհիս հայոց և շատ սուն աւերեցաւ և շատ ապրանք ամուէր մնաց, գեհով ոչխար մնաց, շատ գովան խափանուաւ. բանի հայ գասեր առանց եղբար մնաց... եւ մեռան անթիվ ազայք, հենց որ կալոյ ժամանակին աղայ շկայք որ զկաման բշէր»<sup>3</sup>:

Նոր հակազրոհի անցնելով Ռուրիայի գեմ 1551—1553 թթ. շահ Ռահմազի հեծյալները կազմակերպում են ծավալուն ջարդեր ու ավերածություններ: «Քահանայք, երկսկսպոսք և վարդապետք ու աշխարհականաց անթիւ անձինս կոտորեցին»,— գրում է անանուն մի գրիչ<sup>4</sup>: Ժամանակակից մի սրիշը պատմում է. «Ափսեցան զօրք նորա (խոտը դարձյալ իրանշահի մասին է) յերկիրն Վասպուրականի և Տուրքերանոյ. և շխդիմ շինութիւն ի կողմանց Վանայ մինչև յերզնկայ. սուր և տապար ի ձեռին այսր ամոզը ընթացս առեալ՝ հատին գայդեստանեայս ելաթայ և Արծկէս, և կոտորեցին զժառատունկս անտառաց և զփայտս պողարերս և հրձիգ արարին զարատրայս Կարնոյ: Ոչբամ գերկիր Բասենոյ զոր հուրը գատեցին. և ի Բարձր Հայոց մինչև ի Սիս Կիւլիկիոյ հալածեալ զքրիստոնեայս մարդաթափ արարին զերկիրն ի բնակչաց. աչ հայ մնաց և ոչ տաւհիկ, զամենեւինս ի սուր մաշեցին»<sup>5</sup>:

Թագավորի ուժը կայանում էր նրանում,— գրում էր շահ Ռահմազի մասին զեսպան դ՝ Ալեսանդրին,— որ նա ավերակ է գարձ-

<sup>1</sup> Ս. Տ ե ր - Ա. Վ ե ա ի ս յ ա ն, Ջեսագիրք Նախավկայի Վանոց Գարաշամբի ս. Սակփանոսի, որ ի Գողթն: Տե՛ս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմ. ինստիտուտի արխիվ, թ. 65 ար:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 2083, էջ 342բ—343ա:

<sup>3</sup> Նույն տեղում, ձեռ. № 9222, պատասիկ ԺԱ:

<sup>4</sup> Նույն տեղում, ձեռ. № 7584, էջ 664:

<sup>5</sup> Չ ա մ ջ յ ա ն, Պատմութիւն հայոց, III, էջ 314:

նում թուրքական սահմանի վրա վեց օրվան ճանապարհ հեռավորութ-  
յան վրա այս և այն կողմից ընկած բնակավայրերը, քանզում բու-  
չոր ամբողջները, թուրքերին զրկելով ավերված մարդերը հետ դրա-  
վելու շահագրգռությունից և հնարավորությունից»<sup>1</sup>:

\* \* \*

Թուրք-իրանական ճնշումներն ու կեղեքումները հայ ժողովրդի տարրեր խավերի մեջ առաջ էին բերում բուն արաբալեզուներ ու հրահրում ազատագրական բաղձանքներ: Դաժան ներկան առիթ էր սալիս ավազել անյշայը կամ մտահածել ցանկալի ապագային հասնելու հնարների շուրջը:

1547 թվականին իրամահալայ «իշխանները» հատուկ խորհրդա-  
ժողով գումարեցին Սաեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի մոտ:

Տակավին 1543 թվականին, երբ էջմիածնում կաթողիկոսություն էր անում Սալմաստեցու նախորդ Գրիգորը, իսկ ինքը, Սալմաստե-  
ցին, «Արարատյան նահանգի» վիճակավոր էր՝ Հավուց Թառում գրված մի հիշատակարանում զվրաշներին զխավորող շահ Թահ-  
մազի մասին ասվում էր. «Է աւերող հայոց ազգիս և զերող ամե-  
նայն քրիստոնէից և ոչ կարեմք պատմել զբազում շարիքն նորա և  
կամ զրով արկանել, զի բան ինչ ավելի շարիք որ զնրն շտատու-  
ծորդի անուանէ՝ հուղարանդ և Մահթի գաման»<sup>2</sup>: Ինքն իրեն ասա-  
վածորդի, ասածո ծառա և աշխարհամիրկիչ Մահդի ազգարարող  
այս շահի օրոք ճնշումների և հարածանքների էին ենթարկված Արա-  
րատյան դաշտի հայերը: Թուրք-իրանական ավերումները բայրաշ-  
ման են հասցնում նաև էջմիածնի կաթողիկոսությունը: 1548 թվա-  
կանին Գրախաիկ գյուղում գրված մի Մաշտոցի հիշատակարանից  
տեղեկանում ենք, որ այդ ժամանակ «չունայն էր սուրբ արոն էջ-  
միածնի, պարծանս հայոց ազգի, բանդի միապետէր թախին Դա-  
րիպոյ Դահնամ (իմա Թահմազ) փաթշահն (ո)ր հետամուտ և զի  
հետ խոնդրարին»<sup>3</sup>: էջմիածնի գեմ ոտնձգություններ էին  
անում Գանձասարի և Ազիմամարի կաթողիկոսները: «Ջամբուում»  
կարգում ենք, թե շահ Թահմազը Միրաշել կաթողիկոսի անունով  
ուղղամ էր ստորագրել հիշքի 955 թվականին, որով էջմիածնի վրա  
հաստատում էր Ազիմանից և Ազիմամարի կաթողիկոսների գավթած

<sup>1</sup> Հ. Հ ա կ օ ր յ ա ն, Ուղեգրություններ, Ա, էջ 352:

<sup>2</sup> Հայկական ՍՍՍՒ Մատենագորան, ձեռ. № 5614, էջ 352ր:

<sup>3</sup> Նույն տեղում, ձեռ. № 8133, էջ 120ա:

նրա վիճակները<sup>1</sup>։ Հիշքի 955 թվականը կրինի մեր 1548 թվականը։ Այն համադամանքը, որ ուղղամբ արվել էր Սիրաշելի և ոչ Ստեփանոսի անունով, հիմք է տալիս կարծելու, որ այդ տարում վերջինս չէր գտնվում էջմիածնում։ 1550 թ. Արգելանի վանքում գրված մի հիշատակարանից նրա մասին տեղեկանում ենք թե՛ «ի շար զըզըլպաշէ փախեաւ և եմուտ ի Զոսանկն»<sup>2</sup>։ Երբ և ինչու էր կաթողիկոսը փախել էջմիածնից՝ հայտնի չէ։ Պարզ է, որ 1547 թվականին փախուստի վայրում չէր կաթողիկոսը կազմակերպել վերը հիշատակված խորհրդածոցովը։ Բացարկված չէ, որ նրա գահընկեցութեանն ու փախուստը հանդիսացել էր 1547 թվականին էջմիածնում խորհրդածոցով գումարելու հետևանքը։

Խորհրդածոցովը որոշել էր կաթողիկոսի գլխավորութեամբ հատուկ պատվիրակություն ուղարկել Արևմուտք՝ Հայաստանի վիճակի բարեփոխման շուրջը բանակցություններ վարելու համար։ Ո՛վքեր էին խորհրդածոցովին մասնակցած «իշխանները», չգիտեմք ստուգապես։ Սխալ չպիտի լինի ենթադրել, որ խոսքը ոչ միայն հայ մեկիքների, այլև հայ խոջաների ու «գովլաթավորների» մասին կաբող էր լինել։ Արանց մասնակցությունն այդ ժողովին ակնհայտ է թեկուզ այն փաստից, որ պատվիրակությունն սկսելու էր իր գործունեությունը Վենետիկից, քաջ համոզված, որ, ինչպես գրում էին հանրապետությանն ուղղած իրենց աղերսագրի մեջ հայ «իշխանները»,—«թևակա հեղինակութեան առաքելոցն Պետրոսի՝ Հոսոմ քաղաքն է գերիշխան», սակայն Վենետիկն է «բանալի և փականք բովանդակ քրիստոնեութեան»։ Ընդամին աղերսագրի բովանդակությունից ակնհայտ է պտնում նաև այն, որ դրա գրողները քաջ ծանոթ էին Վենետիկին, նրա սահմանադրությանն ու վարչաձևին։ «Եւ մեք խեղճ Հայքս ի մասին Պարսից,—ամփոփում են իրենց զիմումը աղերսագրի հեղինակները,—ի ներքոյ խիստ տառապանաց այլազնից, կու սպասեմք ձեր պաշտն, ինչպես սուրբ նախահարքն սպասէին Փրկչին Քրիստոսի։ Գիտեմք որ ի զգօնութեանէ ակրանց Վենետաց պիտի մեր փրկութիւնն և ազատութիւնն։ Կուղարկեմք մեր պատրիարքն Ստեփանոս, շտա պատճառանաց համար, առ մեծապայծառ տէրութիւն ձեր և մեր կողմանէ յանձնէ զմեզ առ ձեզ, և հետս

<sup>1</sup> «Ջամբու», էջ 210: Հմմտ. Հ. Փ ա փ ա զ յ ա ն, Մատենադարանի պարսկ. հրովարտակները, պրակ 1, էջ 90—91:

<sup>2</sup> Հայկական ՄՍԹ. Մատենադարան, ձեռ. № 4470, էջ 401:

շնորհ ընէք իրեն որ կարենա երթալ և համբուրել զոսա ամենա-  
արբազան պապին»<sup>1</sup> :

Անգլիական առևտրական ընկերութեան ներկայացուցիչ Էդ-  
վարդսը XVI դարի 60-ական թվականներին վկայում է, որ Հալե-  
պում հայերը վենետիկցիներից ընդունում էին կրքսեներ (մահուդի  
թուիր), փոխանակելով զրանք մետաքսի հետ: Հազորդում է նաև,  
որ հայերը հայթաթում են ամեն տեսակի համեմներ և հումուլցիներ,  
որ Զուզան Հալեպ է հասցնում տարեկան 4—5 հարյուր բևս մե-  
տաքս (= 24—30 հազար բաթման), մուծելով զրա գիմաց 800—  
1000 բևս կրքսե և վենետիկյան կերպաս<sup>2</sup>: Միայն մետաքսը և մա-  
հուդը շէր տուր և առի առարկան: Մեծ գեր էին կատարում մանրուք  
սպրանքները և մանավանդ Արևելքից մուծվող զոհարեղենները կամ  
Արևմուտքից բերվող վենետիկյան ժամացույցները, արկղիկները,  
գնդասեղները և արգուզարդի այլ իրերը: Թե որքան խոշոր նշանա-  
կութեան էր ստացել ակնվաճառքը հայ առևտրականների համար՝  
երևում է թեկուզ նրանից, որ XVI—XVII դարերում կազմում էին  
այդ մասին նուշնիսի ձեռագիր հատուկ ձեռնարկներ<sup>3</sup>: Հազորդակցու-  
թեան դժվարութեանները հաղթահարելու, այլև մաքսային ցանկա-  
պատերը աննկատելիորեն ձեղքելու համար էր դարձյալ, որ Եվրո-  
պայից ստան վերադառնալիս հայ առևտրականները բեռների մեջ  
անց էին կացնում մաքսախուշս սպրանքներ՝ հայելիկներ, մատա-  
նիկներ, մանյակներ, մեղապիտներ, զրչահատներ, մկրատներ, զրն-  
դասեղներ և առեղներ, արանք, ինչպես հետագայում նկատում էր  
Տուրներֆորը, զրամից ավելի մեծ գին ունեին նրանց աչքում<sup>4</sup>:

Գրիվանագլխաական առաքելութեան ստանձնելու համար Սալ-  
մատեցիներ սենք որոշ ավյալներ: Ժամանակին նա վիճակավոր էր  
եղել ոչ միայն Արարատյան նահանգում, այլև Նախավկայի վան-  
քում, ուստի և պիտի քաջ ծանոթ լիներ Արարատյան նահանգի, այլև  
Թավրիզի, խոյի, Մակուի, Սալմաստի, Դարաշամրի, Զուզայի, Աս-  
տապատի և Նախիջևանի կացութեանը: Երկար ժամանակ սպրել էր  
Պոլսում, պատանեկական տարիներին եղել Ահատտանում ու Ռու-  
սաստանում: Թերևս նա ծանոթ էր եվրոպական լեզուներին և արև-

<sup>1</sup> Ա լ ի շ ա ն, Հայ-Վեսեա, էջ 329 և հա.:

<sup>2</sup> Հ. Հ ա կ ո Ր Յ ա ն, Ազեզբութեաններ, Ա, էջ 411 և հա.:

<sup>3</sup> Հմմտ. Ա. Ա. Գ ա զ Ր ի ժ ե Յ ի, էջ 586 և հա. և К. П а т к а н о в. Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII в., СПб., 1873. Մանավանդ շատ կան նման ձեռնարկներ ձեռագիր վիճակում:

<sup>4</sup> Tournefort, Pitton, Relation d'un voyage du Levant, Paris, 1719, t. II, lettre XX.



մըտայան պետությունների հարարերություններին: ժամանակակից-  
ների մոտ նա վաշխում էր «բանիբուն» աստվածարանի ու գիտունի  
հոշակի և զրեկ էր հաշիբեն և պարսկերեն «մեկնություններ»<sup>1</sup>: Մանով  
և մեկ<sup>2</sup>

եղուկ և վայ է ինձ, որ ի յայս հասայ  
Մա՛նու չափ մեղար ես ազտեղացայ

սկսվածքով նրա գրած տաղը:

1549 թ. գարնանը հայ պատվիրակները անցան Վենետիկից  
Հոտմ, ուր սիրայիր ընդունելություն գտան: Ոչ միայն քաղաքական  
մտմեմտի պահանջներից, այլև ընդունելության տներես սիրալիրու-  
թյունից հաղթահարված, հայ կաթողիկոսը նույն տարվա օգոստոսի  
21-ին գրավոր հնազանդություն հայանեց Հոտմի եկեղեցուն<sup>3</sup> և կամ  
ինչպես գեկուցում է Արեթինոսը (Arrethinus), կաթողիկոսի հեռ  
բարեկամացած մի խաղաղի, իր և իրեն ենթակա 27 կաթողիկոս-  
ների անունից ընդունեց Ֆլորենսյան եկեղեցածուգովի սրտշամե-  
րը<sup>3</sup>: նույն Արեթինոսը, հաղորդելով կաթողիկոսի հնազանդության  
մասին՝ ավելացնում էր. «Այնուամենայնիվ շատ և ծանրակշիւ  
կրօնական խնդիրներ կային, որոնց նկատմամբ տարակարծիք էինք  
մենք» («plures fuerant et gravia qua de religione inter nos dis-  
seruimus»).

Ինարկե, Սալմաստեցին նրա համար շէր Հոտմ ժամանել, որ-  
պեսզի պարզարաներ խաղաղի զրուցակցին իր և լատին եկեղեցու

<sup>1</sup> Հմմտ. Չոմշյան, Գրածություն հայոց, III, էջ 517:

<sup>2</sup> Raynaldus, Annales ecclesiastici, t. XIV, Anno 1549, § 35:

<sup>3</sup> Stephanus Assemanus, Bibliotheca Medicea Laurentinae et  
Palatinae codicum Mss. Florentiae, 1742, էջ 59 և հա.:

Այիշանք անհավանական է համարում էջմիածնին ենթակա վիճակների  
27 թիվը և ենթադրում, թե Ստեփանոսը «թերես փոխանակ քանեյսթանց  
զրեկ էր քառասուն և յոթն, զի այնչափ արքեպիսկոպոսունս ունել կաթողի-  
կոսին էջմիածնի ծանայց Ուկան՝ յես միայ ես զբարե, սո հեռաքննին եւրո-  
պացիս. մի տս մի զրեկով և անուանս ավտուացն, և ընդ արքեպիսկոպոսոքն  
թուէ հարելը երեսուն և ութ կաթողիկոսունս» (ան՝ս Այիշան, Այրարատ,  
էջ 231): Աչքի տառջ ունենալով, որ Ստեփանոս Սալմաստեցու ժամանակ վի-  
ճակների մեծ մասը խլված էր էջմիածնից—այդ մասին խոսք է լինելու փո-  
քրր ինչ հեռո—կարծում ենք, հարկ չկա Այիշանի տառջարկած ուղղման:  
էջմիածնի վիճակների աննշան թիվը ցույց է տալիս ինքյան քայքայման  
այն աստիճանը, որին հասել էր կաթողիկոսությունը Սալմաստեցու գահա-  
կալություն ժամանակ: Մասամբ զբանով էլ պիտի բացատրել, որ Սալ-  
մաստեցին հարկ տեսավ սղավինել հոտմի օգնություն:

կրոնական տարակարծությունները: Եղած ավյալներից այսքանը միայն կարելի է կոահել, թե էջմիածնից փախած և Իրանի կողմից դահընկեց ճանաչված կաթողիկոսը Հռոմում արդարութեան էր որոնում Իրանի դեմ: Սակայն պապական Եվրոպան և Հռոմը այս պահին հետաքրքրվում էին ոչ այնքան Իրանի, որքան Թուրքիայի դարձերով: Արևթինոսը ասում է, թե ինքը շատ հաճախ հարցնում ու տեղեկություններ էր ստանում կաթողիկոսից պարսիկների և թաթարների (թուրքերի՝ թե Ղրիմի—Ա. Հ.) մոտ տեղի ունեցած անցքերի մասին: Ըստ երևույթին այդ անցքերի շարքն էին դառնում հենց կաթողիկոսի հետ Հռոմի վարած բանակցությունները: «Շատ ծրագիրներ ուներ նա իր մարտն, — հարում է հուլյն անձնավորությունը, — որոնք դուրի չէին լուրջ իմաստից, բայց հանդամանքները խանդարում էին դրանց իրականացմանը: Թո՛ղ օգնե ամենակարող աստվածը»<sup>1</sup>: Այդ «ծրագիրներն» էին անշուշտ, օր առաջնորդել էին Սալմաստեցուն Հռոմ, և ինչպես վկայում է Արևթինոսը, 1550 թվականին տարել էին նրան նաև գերմանական կայսրի՝ Կարլ V-ի մոտ:

Դժբախտարար տեղյակ չենք հայ-գերմանական այդ բանակցությունների ընթացքին: Այնքան ակտուալ «թուրքական վտանգը» հարստորդներն աշխատում էին վանել հաճախ միայն ուրիշներին ուժերով: Այսպես, դեռ 1518 թվականին Մաքսիմիլիան I կայսրի գեսպան Ֆրանցիսկ դե Կոլլան համոզում էր Վատսլ ցարին՝ դադար տալ լեհերի հետ վարած պատերազմին և ուղղել իր զենքը թուրքերի դեմ: Ընդ ամին մասնանշտվում էին այն երկրները, որոնք պիտի ազատագրվեին ցարի զենքով՝ Կոլխիդան, Իրերխան, Ալբանիան, Մեծ Հայաստանը և Ալյուփիան (Ղրիմը), որն այդ ժամանակ Թաթարիստան էր կոչվում<sup>2</sup>:

Շուտով պիտի տեսնենք, թե ինչպես նույն այս գարի երկրորդ կեսում Կարլ V-ի մերձավոր հաշտոցներից մեկը ևս, ըստ երևույթին Ռուդոլֆ II-ը, թուրքերի դեմ ջանացել էր ոսպմի ասպարեզ հանել անդամ անդրկովկասյան ժողովուրդներին, մասնավորապես Քարթլիի Սիմոն Թագավորին:

Ի՞նչ ակնկալություններ ուներ գերմանական կայսրից Սալմաստեցին՝ հայտնի չէ: Կարլ V-ը ամենից քիչ կարող էր որևէ քայլեր

<sup>1</sup> „Magno animo agitabat, non gravibus rationibus“, sed tempora impediabant ejus conatus. Deus omnipotens eum comitetur, նույն տեղում, էջ 60 և հմ.:

<sup>2</sup> А. Сагарели, Сношение России с Кавказом в XVI—XVII столетиях, СПб, 1891, էջ 9 և հմ.:

անել Իրանի դեմ, որի հակաթուրքական պատերազմները ձեռնառե էին եվրոպացիներին, որչափ հարկազրոււմ էին թուրքերին՝ իրենց ուժերի նշանավոր մի մասը զբաղեցնել ասիական թատերաբեմում: Թուրք պարագաներում լյութերականների դեմ պատերազմով զբաղւած Կարլ V-ը շէր կարող միջոցներ հատկացնել Սալմաստեցու «ծրագիրները» իրագործելու համար: Այս չի նշանակում, հարկավ, թե Սալմաստեցին կարական մերժում պիտի ստացած լիներ եվրոպայում: Հաճախ, երբ չկար կանխիկ օժանդակութեամբ՝ եվրոպան շապուտ էր իր խոստումները: Այդքանն էլ երբեմն բավական էր լինում հայ խնդրարկունների պատրաստիքը վառ պահելու համար: Իրրե նմուշ՝ նշենք նույն այս ժամանակ Արեւմուտքում շրջող Կարապետ Բաղիշեցու «Տաղ արաբածոց» պոեմից այն տողերը, որոնք վերաբերում են Հոսոմի պապին և Կարլ V-ին:

Քրտոյ բրիտանեկց, բազարաց մայր բառուզական,  
Չոր Հրսոմ ասն, նրմա է ավոս հայրապետական  
Անդ են բնակեալ գրտոյս և առաքեալին, որ վեմ կոչեցան.  
Անթիւ բահանայր, բազումր սպասատոր Լիկեցական,  
եւ պապն ի նոցա միջին, որ է գլուխ թագաւորական:

Կարլ V-ի մասին նույն տաղասաց Կարապետը գրում էր.

«Ենրբն փըրկէ գրբիտանեալին, ի յագգէ այս մահմետական...»<sup>2</sup>

Ակներև է, որ Կարապետ Բաղիշեցին, ինչպես մի ժամանակ նրա համերկիրացի Առաքել տաղասացը, շնչում էր «Բաշանց թղթի» իդեական միջնուրտում: 1540 թ. ոգեկոչելով Տրդատ Մեծի և նրա նախարարների սովերնները, նա գրում էր.

«Վկայեալ են հայրապետն և ուխտիւք մըխիթարական՝  
Լինի ձեզ ազատութիւն ի յագգէն այն արիական»<sup>3</sup>:

Այս հուսացումը կատարյալ հեղաշրջում էր մտցնում այն հայացքների մեջ, որ ունեցել էր այդ տաղասացը շատ տարիներ առաջ, 1513 թվականին: Նկարագրելով շահ Իսմայիլի սովերումները, նա այդ պահին ապարդյուն էր համարում ներքին ամեն մի դիմադրություն և անհնարին՝ արտաքին ամեն մի միջամտություն: Ահա թե ինչ էր գրում նա շահից սրգոզած.

<sup>1</sup> XV դարի կեսերին գրված մի հիշատակարանում «Ֆրանկաց առաջնորդին» կոչվում է «պապ թագավոր», Սրվան ձ տ յ ա ն, Թորոս Աղբար, II, էջ 379: Ինչպես գիտենք, «թագավորի» կերպարանքով էին պատկերում Հոսոմի պապին նաև Հոսոմի նկատմամբ թշնամորեն տրամադրված «Սասնա ձուկը»:

<sup>2</sup> «Հանդես ամսօրյա», 1937, էջ 330 և հ.ս.:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 330:

Համբաւ շահին տարածեցան՝  
Ի շարս անկիւնս հասան  
Ի չարեմուտս ի Ֆոսանդիտամն՝  
Եւ չարեկրս ի Հրնդուտամն:

Եւ թագաւորք երկրի գողան  
Կան ի չերկիւղ և ի սասան՝  
Ընծայարերք լինին և գան,  
Ձի սպասաման արժանանան:

Ոմանք պատիւ ասեալ գտանան՝  
Եւ օրբօրէ յոյժ մեծանան,  
Ոմանք երկաթ և ի բռնատս եղան՝  
Կան ի կապան և ի գրնդանս:

Հեռանալով Հոսմից, Սալմաստեցիին լիողեց աշնտեղ սրպես իր «ե-  
րեսփոխան ու վարիլ» Պետրոս անսմնով հարեշահույ մի կրօնավորի:  
Սա էր հենց այն մարդը, որ Հոսմում կաղմակերպում էր կաթողիկոս-  
սին տրվող ունկնդրութլուները պապի և «մեծամեծների» կողմից:  
Հավիտենական քաղաքից մեկնելուց առաջ կաթողիկոսը արքեպիս-  
կոսոս ձեռնադրեց նրան<sup>2</sup>:

Արձնով սպասվում են Սալմաստեցու առարկելութլան մասին  
մեզ հասած ստույգ ավյալները:

Չամշչանի ասելով, 1550 թվականին Հոսմից հեռանալուց և  
կաշարին ալցելիլուց հետո, Սալմաստեցիին անցավ Էհհաստան և  
Մոսկվա և հաջորդ տարում վերադարձավ Էջմիածին, որ նա գահա-  
կալում է մի բանի տարի ևս ունենալով կաթողիկոսութլան ստուգին  
պատիվն ու նախագահութլունը<sup>3</sup>:

Ո՞րքան ստույգ է այս: Որչափ, ինչպես տեսանք, Սաեփանոսը  
փախուստ էր ավել Էջմիածնից և, գահընկեց հայտարարվելով,  
1548 թվականին գիջել իր աեղը Միքայել կաթողիկոսին՝ ինքյան  
անհավանական պիտի համարենք Չամշչանի հայտարարը: Կա սա-  
կայն բացատրութլան կարուս մտք մի կես:

Հին ու նոր գաղաղանագրքերում մինչև 1564 և կամ նույնիսկ  
1567 թվականները անընդհատ հիշատակվում է Սաեփանոս կաթո-  
ղիկոսի անունը, սրն իբր կաթողիկոսական իշխանութլան է վարել  
մինչև 1557 թվականը ավտակից ունենալով Միքայել Սերաստա-  
ցոն, իսկ աշնուհետև Միքայել, Բարսեղ և Գրիգոր կաթողիկոսնե-  
րին: Այսպես նաև Սանահնի «Թլտիտիում» գանում Լնք Միքայել

<sup>1</sup> Fr. Macler, Notes de manuscrits arméniens, REA, էջ 97 և 99:

<sup>2</sup> Ա լ ի շ ա ն, հայտարարում, էջ 59<sup>2</sup> և հա.:

<sup>3</sup> Չ ա մ շ շ ա ն, Պատմութիւն հայոց, III, էջ 518:

և Ստեփանոս կաթողիկոսների երեք կոնգակ, սրոնցից մեկը ան-  
 փվական է, իսկ երկուսը՝ գրված 1556 թվականին<sup>1</sup>: Սակաչն դիտե-  
 լու է, որ Սանահնի կոնգակներում Ստեփանոսի անունը հիշվում է  
 Միրայել կաթողիկոսից հետո, երկրորդ անգամ: Այս նշանակում է,  
 որ կոնգակագիր Ստեփանոսը Սալմաստեցին չէ, այլ համանուն մի  
 ուրիշը, Միլայելի արքուակալը, ասել է՝ նրա փոխանորդը: Այսպի-  
 սով, հասկանալի է գտնում նաև այն իրադրությունը, որ, ինչպես  
 պետք է ասենենք, 1562 թ. Սերաստիայում գումարված խորհրդա-  
 ժողովի գիմումը և 1563 թ. Հսոմի պապին էջմիածնից սուղված  
 թուղթը ևս գրված են ոչ թե Սալմաստեցու անունից, որը, պիտի  
 կարծել, մեռած էր արդեն, այլ նրանից հետո գահակալած Միրա-  
 յելի անունից:

Թե իսկապես Սալմաստեցին այդ պահին մեռած էր արդեն,  
 այդ վկայում են լեհահայ տարեգրությունները: Գրանցից մեկը,  
 լուսավորչական մի ժամանակակցի ձեռքով գրված, արձանագրում  
 է. «Թ թվին հայոց ՌԱ. (=1552) հոնվարի 14, Տր. Ստեփանոս կա-  
 թողիկոսն և կն ի Փոսնդատանէն ի Լով քաղաքն վախճանեցաւ»<sup>2</sup>:  
 Մյուսը՝ XVII դարի կաթողիկ անդիկոսով կազմված, բերում է Ստե-  
 փանոսի գերեզմանաքարի լատին արձանագրությունը, որի ավյալ-  
 ների վրա հենված, որպես նրա մահվան տարի՝ նշում է 1551 թվա-  
 կանը<sup>3</sup>: Գերեզմանաքարի վրա կաթողիկոսը պատկերացված է լա-  
 տին և կեղեցու տարազով<sup>4</sup>: Հավանական է, որ տապանաքարը պատ-  
 րաստված լինի ոչ թե XVI, այլ XVII դարերում, երբ լեհահայերը լա-  
 տինազավանաթյուն ընդունեցին և արամագիր էին Լվովում  
 մեռած կաթողիկոսին հրամցնել իրրև կաթողիկազավանի:

Ավելի մանրամասն նկարագրում է Սալմաստեցու վախճանը  
 մի այլ հիշատակարան, գրված Լվովում 1555 թ. «Պարձյալ աղաչեմ  
 աղօթից մի մոսանայք զԳրիգոր Վարապեցի նորարդրոջ քաջ բա-  
 րունապետն և ...դասուցիչն (իւր) զՍտեփանոսն կաթողիկոս Սալ-  
 մաստեցին, որ ի Ռ (1551) թուին հայոց առ Քրիստոս փոխեցաւ  
 չիլով քաղաքին և եղ չաթոս եպիսկոպոսութեան Իլովայ զԳրիգոր  
 վարդապետն»: Նույն հիշատակարանում այս վարդապետի մասին  
 ասված է՝ «ընդ վարդապետին իւր զնացեալ ի Հսոմ ի Պօղոս և ի  
 Պեարոս... և անտի անցանելով զԺով և զցամաք... և եկեալ հասին  
 չիլով»<sup>5</sup>:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 3031, էջ 188—195:

<sup>2</sup> Ա. Լիշան, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 19:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>4</sup> Հանդես ամսօրյա, 1917/18, էջ 147:

<sup>5</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 6273, էջ 253 և հա.:

Դավազանագրքերի մեջ Միքայել կաթողիկոսին աթոռակիցներ ևն նշվում Բարսեղ, Գրիգոր և Ստեփանոս Առընջեցի անոճուով կաթողիկոսը: Հավանորեն Ստեփանոս Առընջեցին է, որ աթոռակցում էր Միքայելին ոչ թե 1567 թվականից, ինչպես նշվում է գավազանագրքերում, այլ ամուլազն 1556 թվականից, երբ գրվում էին Սանահնի կոնդակները: Թե հիրավի Միքայելին 1567 թվականից առաջ աթոռակցողը Ստեփանոս Առընջեցին էր, երևում է նաև Կամենիցի տարեգրությունից, ուր 1562 րվականի ներքև նշված է Ստեփանոս Առընջեցի կաթողիկոսի ժամանումն ու դեգերումը Կամենիցում<sup>1</sup>: Վենետիկյան ձեռագիր տաղարանների մի ցուցակում, որ կազմել է Տիրայր վարդապետը, կա նաև Նիկողոս դպրի 1562 թվականին Կաֆայում գրված մի հիշատակարանը, ուր նշված է.

Կաթողիկոսն մեր բարի  
Տէր Ստեփանոս զարմանալի,  
Որ արմանի արար զմեզ սուրբ մեռանի,  
ևս անարժան ամենայնի  
Մէկ սաղ անոր մը բաշխեցի,  
Մէկ շիշ մը մեռանի  
Շնորհեց ինձի:

Պիտի կարծել, որ 1560 թվականից հետո Առընջեցին դեգերում էր Լեհաստանի և Ղրիմի հայ գաղութներում. այդ պահին փաստապես հեռակա այդ վայրերի վրա էր տարածվում նրա եկեղեցական իշխանությունը: Ստեփանոս Առընջեցու մասին է խոսքը, երբ 1560 թվականին Լվովի մի հիշատակարանում նշվում է «ի կաթողիկոսութեան հա(յ)ոց տեսան Ստեփաննոսին և արքեպիսկոպոսին՝ տէր Գրիգորի Վարազեցոյն»<sup>2</sup>, 1563 թվականին Լվովի մի այլ հիշատակարանում, որպես ժամանակի կաթողիկոս նշված է զարձյալ Ստեփանոս Առընջեցին<sup>3</sup>, Լվովի մի երրորդ հիշատակարանում նա հիշված է նաև 1565 և 1567 թվականներին<sup>4</sup>: Այգաեղ լուսավորչազավան տարեգրողը Առընջեցուն ոչ միայն չի շփոթում Ստեփանոս Սալմաստեցու հետ, այլև նրան հակադրում է այս վերջինին: Մինչդեռ Սալմաստեցու մասին արձանագրում էր, թե «եկն ի Փոսնեղրստանէ ի Լով քաղաքն», Առընջեցու նկատմամբ շեշտում էր թե՛ «եկա

<sup>1</sup> Տե՛ս Ա. Լ. Ի. Զ. ա. ն., Կամենից, էջ 32:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձև. № 549, էջ 58ա:

<sup>3</sup> «Հանդես ամսօրյա», 1936, էջ 509ա:

<sup>4</sup> Տ ա ղ յ ա ն., Յուդակ հայերեն ձև. կայսեր. մատեն. ի Վիեննա, էջ 22բ և 38բ:

ի Կամենից ստոյզ և ճշմարիտ ճանապարհաւ և փառք տալիս աստ-  
ծուն, «ար զմեզ այնպիսի ճշմարիտ քահանայապետին տեսոյն ար-  
ժանացոյց»:

Այսպիսով՝ վստահելի համարելով «Կամենիցի» վկայությունը,  
որը տալիս է մեզ նույնիսկ Սալմաստեցու մահւման օրաքիւլը պիտի  
կարծել, որ 1551 թվականից հետո էջմիածնի Սահփանոս կաթողի-  
կոսի անվան հանդիպելիս հասկանալու է ոչ թե այդ տարում վախ-  
ճանված Սահփանոս Սալմաստեցուն, այլ Միքայել կաթողիկոսի  
աթոռակալ Սահփանոս Աւրնջեցուն: Գովազանադրերի, ինչպես  
նաև Չամչյանի մացրած շիտթությունն առաջացել է նրանից, որ  
Սահփանոս Սալմաստեցու մահից հետո էջմիածնում կաթողիկոս էր  
դարձել Սահփանոս անունով մի ուրիշը<sup>1</sup>:

Սալմաստեցու մահից հետո Արևմուտքի հետ վարվող բանակ-  
ցությունները դադար շառան ընդերկար: Վերսկսված բանակցու-  
թյունների մեջ նկատելի է դառնում արևմտահայ եկեղեցականների  
և մեծատունների նախաձեռնությունը:

Իր վանքի միաբանների հետ Թուրքիայից Շարա երկիրը փա-  
խած մի եպիսկոպոս՝ Նդիա Բերկրեցին, գրում էր. «Զի ի ՌԱ. (1552)  
թուին եկն բարկութեամբ շահ Դահմանն (իմա՝ Թահմալը) և պա-  
շարեաց զծովն բոլոր, զԿասսութրականն և զՌշտունիք, զԲաղէշ և  
զՏարօնն և զԵլաթ և զԲղնունիք և զՔաջրերոմնին և զՏարբերոմնին.  
զԵնուս մինչ ի յԱրզուում, զԱղբակ և զՄահմուտանք... Զբնակութիւն  
տեղոյն այնոցիկ բանդեցին, աւերեցին և հիմնադատակ արարին, որ  
ոչ մնաց քար ի վերայ քարի... Զոմանս անողորմ սրոյ ճարակեցին,

<sup>1</sup> Այս գիտողությունները գրելուց հետո, «Սինն» ամսագրի 1931 թ.,  
էջ 306 և հտ. հանդիպեցինք Արշ. Ալպոյաճյանի վերը պաշտպանած գրույթի հետ  
համընկնող տեսությանը, որ Աւրնջեցու կաթողիկոսության համար հեղի-  
նակն առաջարկում է 1552—1567 կամ 1561—1572 թվականները: Մեր կող-  
մից հնարավոր ենք համարում առաջարկել 1556—1572 թվականները: Հի-  
շատակարաններից մեկում 1572 թ. էջմիածնի կաթողիկոս է սշված Սահ-  
փանոս անունով մեկը, ավելացնելով թե «մականունն Չփլախ կոչի» (Ն. Լա-  
լայան, Յուսակ հայ. ձեռ. Վասոյ., 1, էջ 676): Ենթադրում ենք, որ Չփլաղը  
Աւրնջեցին պիտի եղած լինի: Սխալվում է Ալպոյաճյանը, ենթադրելով, թե  
Սալմաստեցուց հետո Միքայել Սերաստացին չէր «բուռն կաթողիկոսը» այլ  
Աւրնջեցին: Առայժմ հիմնավորված չէ նաև նրա այն պնդումը, թե Աւրնջե-  
ցին ուղիորդել էր Արևմուտք՝ Սալմաստեցու բանակցությունները շարու-  
նակելու համար: Սակայն սրչափ Աւրնջեցին տարիներ շարունակ զեկերում  
էր Լեհաստանում՝ բացարկիված չէ հնարավորությունը, որ նա բանակցու-  
մ էր լեհ արքունիքի հետ հակաթուրքական ճակատ ստեղծելու նպատակով:

զումանս ի ձեռացն, ի քթացն և յականջացն խոռոմքեցին, վասն պահճատական ընջից, և զաշխարհն այն արարին ցիր ու ցան: Եւ մնացեալքն մազապուրծ եղեալ ի գիշերի և ոչ ցերեկի ահիւ և դողովեամբ... դնացեալ փախտապառն ոմն ի Հոռոմաց տունն և ոմն ի Քուրդուտունն, ոմն ի Թուրքաստան և ոմն ի Գուրջստան: Եւ մընաց երկիրն այն խոպանացեալ և անբնակ ի մարդկանէ տարի մի բոլոր»<sup>1</sup>:

Ուշադրավ են արշավանքի արձագանքները Թուրքիայի հայաբնակ այն վայրերում, որոնք ազատ էին մնացել շահ Թահմազի հարվածներից:

«Ի լրանալ հազարամեան թուականիս մերոյ,—գրած էր նույն այս անցքերի մասին ողբասաց Թաղեսս Սերաստացին,—շարժեցաւ ի վերայ աշխարհիս հայոց ազգ զըլլպաշից՝ մանրել և մաշել զմնացարդս արամեանց: Աղետք գործոց վնասու սոցս առաւել են քան զլանկթամուրացն, զորս կարծես շիբ տեսեալ ուրտք ի հողածնեացս: Երջին հանապազ զամն ողջոյն յաւեր քաղաքաց և ի կողոպտա ընչից. զոր տեսանեն աշօք առ ժամայն ի բաց պահանջեն ու անուամբ հարկաց ի յետին տնանկալթին ամին զազգ մեր: Երբ լսեն ի բերանս ուրտք զանուն Քրիստոսի, խոշտանգեն ստույգտանօք և թէ ոչ գատեսցի (զազարեսցի՝—Ս. Հ.) այգպիսին խոստովանիլ զՔրիստոս աստուած ճշմարիտ, զամենայն ինչս նորս ամնուն՝ և զնա սպանանեն: Զթագատր իւրեանց զոր շահն կոչեն՝ ասուել քան զաստուած պաշտեն. այլ սա մեզ Փարսուն եղի, և ասուել քան զԱմենքերիմ և զՆաբուզդոնոսոր՝ ոչ գիւղ եթող, և ոչ քաղաք, զոր ոչ ազարտեաց. էր՝ զի հրով տոշտէր, և էր՝ զի քանդեալ ի հիմն հասուցանէր զչինուածս ամբոցաց և աւանից, ևս ասուել գեկեղեցիս և զվանորայս. սպան և զբազումս յերիցանց և կրօնաւորաց»<sup>2</sup>:

Նույն Սերաստիացից մի այլ հեղինակ, տաղասաց Հովասափր, որն ըստ երևույթին, մեկն էր ազատագրական տեսիլների ջերմեւունդ հավատավորներից, հուզում էր նոր տրամադրություններ: Փառարանելով Արշակունյաց դարաշրջանի գյուցագոմններին, նա պատկերում էր սրանց կերպարը էպիկական ներկերով:

Զի ի սոցայ ժամանակին  
Մուրող մարդ ոչ գտանէին,  
Ամենեբեան ուրախ կային.  
Քաջն պարիսպ իս (= 10) մին:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 6282, էջ 625աբ:

<sup>2</sup> Չ ա մ շ յ ա ն, Պատմութիւն հայոց, 111, էջ 514:



Երբ որ Նեճնոյր չիւր ա՛նկ ձին  
Եւ ձեան անոյր գտուր Երկասյրին,  
Պարբուսկ և բլուրբ Հարթ լինէին  
Յաճէ իշխան բաջ Մուշեխին:

Չորեր կանկուն երկայնութին  
Արոյն տարածէր մէջ Նեճէին,  
Ան՛նար թէ մարդ յտոջին գաչին,  
Զի սպտաւածքն Հերձէին:

Զին Լր սպիտակ ա՛նկաղին,  
Սմայակ նման ուշկասարին,  
Տեսողքն յա՛նն մեռանէին,  
Զի պատառոզ Լր գաղանին՝:

Տաղասացր կասկած չի թողնում, թե հասարակական ինչ խավի  
Լր սպասարկում իր տաղով և գրչությամբ: 1543 թ. նա ավարտում է  
իր քնդօրինակած Հայամավորքի հիշատակարանը, այդ գործի  
պատվիրատուին՝ սերաստացի խոջա Խրղրբին ձոնված այս տողե-  
րով.

Հանց գիտուն մարդ գարմանովի  
չէ տեսալ չոր ժամանակի.  
Որ թէ հազար բան նա խօսի  
հազարէն մէկ բան գալատ շունի.  
Եւ հողեւր մարդ և բարի,  
պարկեշտ կացօր բառ օրինի,  
Եւ քնչաւեա սուտքինի  
տոտաւածեան ի պարզելի:  
Փոքր անձն մարդ է հանդիսի  
խելօքն արագ խմտտիւր լի,  
Հազրճուտոյ և խիտտ արի  
չկարէ մարդ տալ պատասխանի...  
Զինչ բան խօսի կու յարմարի  
տաակախօս և յաչտվխի...  
Հարիւր խօսացն ի յառննի  
մէկանց կուտայ պատասխանի:  
Շտա սամիկ մարդ և չոսի  
կասնն նմա թէ չէ բարի.  
Կամաղաշտիցն յամառի  
և անգիտաց չիմար թուի.  
Իսկ չիմաստնոցըն նա գովի,  
խոճա Խրղրբ մեծարելի<sup>2</sup>:

<sup>1</sup> «Արարատ», 1918, էջ 264—5:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մասենագորան, ձեռ. № 6273, էջ 237:

Խրղըրի մեջ Հովասափը անձնավորում է արեմտահայ միջա-  
վայրում դիրք ստացած խոջանների իդեալական տիպարը: XV—XVI  
դարերից ի վեր այստեղ խոջաները նշվում են որպես ազգեցիկ հայ  
ուսաններ ու տանուտերներ, եկեղեցու և վանքի վերածնորդողներ ու  
նվիրատուներ, գրչագրերի պատվիրատուներ և այլն: Իրենց ձեռքն  
առնելով հանրային գործերի ղեկը՝ հաճախ նրանք մեծարվում են  
որպես «խնամակալք քնդդեմ այլազգեաց»: Հավանորեն նրանց մեջ  
կային այնպիսիները, որոնք իրոք անդրադառնում էին եկեղեցու և  
ժողովրդի նվաստացած վիճակին և երազում նրանց բարվար սպաս-  
դան:

Սերաստիայից դատ Հովասափը թվարկում է Քուրբիայի մյուս:  
քաղաքները, որոնք ավերվել կամ արնաբամ էին եղել իրանական  
արշավանքների պատճառով: Տաղասացը զժգոհ էր ոչ միայն Իրա-  
նից, այլև Քուրբիայից: Նրա գրչին պատկանում է մանկաժողովի  
մասին գրված մի սղբ:

Հակահարձակման անցնելով, Քուրբերը բազմաթիվ բարբարո-  
սություններ էին գործում Երևանում և Նախիջևանում:

Ջրաբերդում գրված մի հիշատակարան, պատմելով Քուրբերի  
հակահարձակման մասին, հաղորդում է. «Այլև գիտութիւն լիցի ձեզ,  
ՌԳ (1554) թիս հայոց շարժեցաւ զօրքն հոստմոց, խօնդբեարն ել-  
եալ յԼսասամբուլայ բազում զօրօք, քանդի ԶԲՃԲ (200 հազար) էր հե-  
ծեալն, թող զձորան և զրեոնակիրս, և եկեալ ի գաշան Այրարա-  
տեան ի Սհաթ (=Երևան) և Նախճուան, ելից և նստաւ ամիս մի  
յաւել, և Շահ-Քահմազ ի յԱղմզան նստաւ և ո՛չ կարաց զզեմ ունիլ,  
այլ զոզութեամբ ելեալ զօրքն, ուր և հասանէին կատարէին և դառնա-  
լին սոքա անտի և նոքա աստի, և մեր էինք երերմանի, և շատ աւերք  
ածաւ աշխարհին այնմիկ խօնդբեարն, և դարձեալ զնաց ի յաշ-  
խարհն իւր, և Աստուծոյ խնամքն պահեաց զմեզ»<sup>1</sup>:

XVII դարի Քուրբ պատմագիր Փեչեխին, խոսելով Քուրբերի պա-  
տերազմական հարուստ ավարի մասին, շնակաճ սրտաբացութեամբ  
հայտարարում էր. «արտարուստ արծաթի նման մարմինն ունեցող  
նորարողորջ սիրական տղաների, նորահարս և վարդանման երես  
ունեցող քնրուշ ու մատղաշ ազջիկների, աննման ու չքնազ, գեղա-  
տեսիլ ու մանկամարդ հարսների թիւին արտահայտելու համար այս  
հորինող գրիչը անզամ անկարող է: Ոչ մի արշավանքում բանակն

<sup>1</sup> Ս մ բ ա տ ե ա ն ց, նկարագիր սուրբ կարապետի վանից Երնջակայ,  
էջ 116:

այս աստիճան հաջողություններ ձեռք չի բերել: Չկար մի վրան, որի մեջ գանձուղ սիրական և սիրուհիների թիվը երեքից պակաս լիներ. հինգից, աստից ավելի ունեցող վրաններն անթիվ էին: Մուշի գաղտուն, Խլաթում և շրջակայքում զզլրաշների ցանած չարագործության սերմերը հասունացան, հնձվեցին ու խառնվելով թույնի հետ, արլան փոխարեն արլուն խմեցին»<sup>1</sup>:

Ուշագրավ է, որ իրանական ջարդարարների դեմ տրտնջացող փոքր ինչ առաջ մեր հիշատակած երկու հեղինակները սերաստացի եկեղեցականներ էին: Իրանական արշավանքի «խրոխտանքին» ենթարկված, բայց տակավին գավթումից ազատ հայաշատ Սերաստախայից էր նաև բարձրագիր այն եկեղեցականը, որ զլխավորեց էջմիածնական կղերի և հայ մեծատուն քաղաքաբնակչության պահանջներին ընդառաջող ազատագրական մի գործ՝ որն ուղղված էր ոչ միայն թուրք, այլև իրանական բռնակալության դեմ:

1562 թվականին, իր հայրենի քաղաքում, Միքայել Սերաստացին, Ստեփանոս Սալամասեցի կաթողիկոսի աթոռակիցն ու հաջորդը, գումարեց մի խորհրդաժողով, որը վճռեց Հայաստանի վիճակը բարլաքելու նպատակով Արևմուտք հեղև մի նոր պատվիրակություն: Կաթողիկոսի փոխարեն Արևմուտք մեկնելու համար առաջ բաշվեց տոհմիկ մի անձնավորություն՝ զպիր Աբգար Թոխատեցին, որը հետագայում հայտնի էր դառնալու նաև որպես հայ նշանավոր ասպարիչներից մեկը:

Իր լույս բնծայած օրացույցում Աբգարը «Թոքատցի Սաֆար Աբգար» անունով է նշում իրեն: Հնարամիտ ու բաճիմաց, գիտություն և ծածկագրերի գիտակ մեկն էր Աբգարը և զուցե հենց դրա համար էլ զպրի կոչում էր ստացել:

Սակայն ոչ եկեղեցական կոչումը, ոչ էլ դրասիրության հանդամանքն էր զլխավոր պատճառը բացառիկ այն լիազորության, որ տրվեց Աբգար Թոխատեցուն Սերաստացի կաթողիկոսի և Սերաստախայի խորհրդաժողովի կողմից: Աբգարը դիրքի տեր մարդ էր և վաշելում էր նույնիսկ արքայական ծագում ունեցողի համբավ: Մաղաքիա Շեհահիրճյան ժամանակագրի ասելով Ռուբինյանների դժով թագավորական ծագում պիտի ունեցած լինի նույնիսկ Աբգարի կիներ<sup>2</sup>: Նրա սրդի Սուլթանշահը մի զրույթյան մեջ, որի մասին խոսք

<sup>1</sup> «Թարիխի Փեշեխ», Հայկական ՍՍՌ Պատմ. ինտիտուտ, թարգմանական քաղվածքներ Ա. Բ. Սաֆրասյանի, էջ 30:

<sup>2</sup> Ա. Լիշան, Յուշիկը հայրենեաց հայոց, Վենետիկ, 1869, էջ 526 և հտ.:

պիտի լինի վարը, հայտնում է, որ իր հայրը սերվում է Աենեքերիմ Արծրունու առհմից, իսկ մի տեղ համարում իր ծնողներին Տրդատ Արշակունու և Գաղիկ Բագրատունու բարունակ... Մի այլ կապակցութեամբ պիտի դիտենք, որ նա շէր հրաժարվում նաև Ռուբինյան լինելու հավակնութեանից... Ուզիդ թե սխալ, այդ չէ կարևորը, ժամանակակիցները բոս երևուցին համոզված էին կամ ուզում էին հավատացած լինել Արգարի բարձր ծագման վերսիաներին, և դա է հենց, որ անձնական մյուս բարեմասնութեաններից անկախ, վճռական դեր պիտի կատարած լինեք նրան փրբե պատվիրակի հրապարակ քաշելու համար:

Աուլմանշահը թվարկում է Արգարի պատվիրակութեան առաջ գրված խնդիրները: «Նախ՝ զի չիշեցուսցէ գառաշին գաշինս և գառաշին երգմունքն», այսինքն՝ վերանորոգել «Դաշանց թուղթը», երկրորդը՝ «զմիտս հոռմացեաց թէ որպիսիք կան ընդ հայս» — հավանորեն բաց է քնկած բայը. խոսքը երևի այն մասին է, թե պատվիրակութեանը պիտի պարզեր հոռմացեցիների (իմա՝ եվրոպացիների) վերաբերմունքը զեպի հայերը կամ՝ զեպի «Դաշանց թղթից» հետևող նբանց պարտավորութեանները հայերի նկատմամբ: Երրորդ՝ «զի յսժարեցու... ի վաարանդեալ հայոցս», նախապատեթյունը ազատված է, սակայն պարզ է, որ խոսքը հայ գաղթականների փնշակը կարգավորելու մասին է: Չորրորդ՝ «Միջնորդ լինել ի ճանապարհորդել հայրապետացն մերոց ի Հոռմ», այսինքն՝ նախապատրաստել հայ եկեղեցականների — առաջին հերթին հավանորեն էջմիածնի և Սսի կաթողիկոսների ուղեորութեանը զեպի Հոռմ<sup>1</sup>:

Հոռմ հասնելուց առաջ Արգարը մտավ Վենեաիկ, ուր զեզերեց մինչև 1564 թվականի աշունը: Ըստ երևուցին, պապին ներկայանալուց առաջ կամենում էր կատարել իր առաքելութեան կարևորագույն մասը՝ ներկայանալ Վենեաիկի դոժին և պարզել հայերի ազատագրման հնարավոր հեռանկարները:

Մինչ այդ, 1564 թվականի մարտի 20-ին Հոռմում ստացվեց Միքայել կաթողիկոսի ծածկագիր մի թուղթը՝ գրված էջմիածնում, 1563 թվականի ապրիլին, որի բովանդակությունը հասցրել է մեկ Ռաջնալզուտի եկեղեցական պատմության մեջ արված լատիներեն թարգմանությունը: Այդտեղ կաթողիկոսը խոսում էր իր և «հայոց աւերանց» անունից: Ակինյանի ենթադրությամբ, խոսքը կարող էր լինել այստեղ հայ մեկիքների մասին: Սակայն ինչո՞ւ հատկապես «մեկիքների», կաթողիկոսը կարող էր խոսել հայ ազգի մեծամեծնե-

<sup>1</sup> Հմմտ. «Հանդես ամսօրյա», 1906, էջ 323:

րի՝ հայ բարձրագիր եկեղեցականները, քաղաքանակ զովաթափոր-  
 քերի ու «իշխանավորների» անունից առհասարակ: Կաթողիկոսի  
 թուղթը հիշեցնում է Արզարի ձևերով պապի անունով հզված  
 երկու գրության, որոնցից մեկով ինքը և յարայինները հպատակու-  
 թյուն էին հայտնել Պետրոսի ամուսին, իսկ մյուսով ինչպես էին  
 պապից՝ հաստատել և նորոգել Սեղբեսարոս պապի և Կոստանդինոս  
 կաջարի Տրդատի և Լուսավորչի հետ կնքած դաշինքը: «Հարկ է, որ  
 լինի մի հոս և մի հովիվ, և աչգպես լինելուց հետո, ժամանակ է,  
 որ կարողանանք ձեր բազումներով ազատվել այս գերութունից»<sup>1</sup>:

Կաթողիկոսի վերջին գրությանը Հոսմում հետաքրքրություն  
 առաջացրեց Արզարի առաքելության և նրա միջոցով ուղարկված  
 թղթերի նկատմամբ: Կաթողիկոսի պատվիրակը հրավիրվեց Հոսմ:  
 Մանութանալով բերված թղթերի բովանդակությանը՝ աչտեղ նրան  
 առաջադրվեց մի հարցադրույթ: Արզարը պատասխանեց զոված  
 հարցերին և ավելի իր մասին ընդարձակ տեղեկանք, որը թարգմա-  
 նաբար բերում է բանասեր Գալեմբյարյանը. «Անունըս Արզար, հա-  
 յազգի, ծնած եմ քաղաք մը, որ կը կոչվի Բորաս. կղերական եմ և  
 զպիր. Հոսմ եկա, վասն զի տասը տարի առաջ սխալ քրած էի գալու  
 և իմ մեծ որդիս բերելու, որպեսզի կաթողիկե վարդապետությունը  
 սորվի, բայց որդիս մեռավ, և այս պատճառով ուշացա այս շափ  
 առնն՝ որպեսզի կարենամ իմ Սուլթան անուն որդիս բերել, որ հի-  
 մա հետա է աչտեղ: Մեր պատրիարքն իմանալով բազմանքս,  
 խնդրեց ինձմե, որ ինքը շատ զոհ պիտի ըլլա՝ եթե իրեն անվամբ  
 Հոսմ գամ, որով կրնամ նաև կատարել իմ սխալ, և աչսպես ալ  
 եղավ»: Իրեն Հոսմ ուղարկող կաթողիկոսի մասին արված հարցու-  
 մին Արզարը պատասխանում է. «Միքայել է անունը, կը նստի էջ-  
 միածին, պարսից իշխանության մեջ և ինձի անձնապես հանձնեց  
 նամակ մը, որ տամ նորին սրբության, և պաշտոն ավով՝ որ հանուն  
 յուր և բովանդակ ազգին, որ իր իշխանության տակ է, մատուցանեմ  
 հպատակություն նորին սրբության, ինձ հանձնեց օրինակն այն  
 արտոնագրին, զոր աված են ս. Սեղբեսարոս և Կոստանդինոս  
 կաջարը մեր Տրդատ թագավորին և ս. Գրիգոր Լուսավորչին, մեր  
 առաջին պատրիարքին, սուքն արտոնադիրը վերստին հաստատելու  
 և նորոգելու համար այն բարեկամությունը, որ նշանակված է ար-  
 տոնագրին մեջ, հոսմեական եկեղեցվո հետ. Պատրիարքը Սերաս-

<sup>1</sup> „Ut fiat unum ovile et unus pastor, quod ut fiat tempore prope est,  
 ut liberamur ab hoc captivitate per manus vestra“, Raynaldus, *սուլյս*  
 տեղում, XV, Anno, 1564, էջ 51:

տիա եկաւ երեք տարի հառաջ, և քաղաքին ս. Աստվածածին եկեղեցւո մեջ խոսակցեցաւ շատ եպիսկոպոսներու, վարդապետներու և ուրիշ պատրիարքի մը հետ, և այսպէս խորհուրդ կազմեցին և հասարակաց միաձայնութեամբ որոշեցին նաև հանում ուրիշ շատերու, որոնք ներկա չէին, ինչպէս կ'հաստատուի իրենց ստորագրութիւններէն, և զիս ուղարկեցին վերահիշյալ նպատակի համար»<sup>1</sup>:

Այս բացատրութեան շարադրանքը: Չունենալով առ այդ որեւէ լիազօրութեամբ՝ Արքարը ներկայացրեց իր անձնակազմը՝ հարեւալ, թե ճիշդն է կ'համարուի պատրիարքն ու բոլոր իմ ազգանքը: 1564 թ. հոկտեմբերի 8 թվակիր այդ թղթում նա որոշ շեղումներ էր կատարում հայազգային եկեղեցու զիրքերից: Համեմատելով պատական եկեղեցին «արևի», իսկ հայկականը «ճրագի» հետ, հասկացնել էր տալիս, որ եթէ Հոսմը ստանձնելու լինի հայերին ազատագրելու պարտավորութեանը, նրանք պատրաստ կ'լինեն բոլոր ամենաչնիք կենսական պայմաններ: Առանց այդ նախապայմանի, ասում էր նա, թե մահմեդական պետութեանը և թե հայ ժողովրդի իսկ զիմադրութեանը անհնարին կարող են դարձնել հոսմեական զավանանքի բնկալումը: Բերենք Արքարի հայտարարութեան այդ կետը համաձայն Չամչյանի թարգմանութեան. «Այս է հաւատք, խստազգայնութիւն, պահք և ազօթք մեր ամենցուն. այլ ի ժամանակի աստ յաւորս տառապանաց և նեղութեանց և անհնարին անձկութեանց հանդէսք մեր նուազեալ են. զի թէ յայտնապէս քարոզեցայր ի յոր այլազնից, ի հոր արկաննն զմեզ. բայց թէ հանեցի Աստուած՝ զի գերծեսցով ի գերութենն, աստի, զոր ինչ և հրաման տաչի՛մ ի գլուխ մեր եղիցի, զի յառաջիկայս ժամանակի ո՛չ գոյ մեր՝ ոչ սուր և ոչ գաւազան իշխանութեան: Եթէ զո՛ք ուղղել կամեցիմք ի մերայոց լանցաւորաց՝ և ստիպել ի զգաստութիւն բմբոստացեալ այնպիսուցն՝ անկանի ի հաւատոց»<sup>2</sup>:

Ըստ երևույթին, Արքարի բացատրութեանները ձեական տարակրթութեաների շնորհիպեցին Հոսմում: Քրիստոսի տեղակալը ունկընդրութեան շնորհեց Արքարին և ցուց տվեց նրան իր բարեհաճութեանը: Հոսմում գտնված հայերին պատր հանձնեց հատուկ մի մատուց նրանց պետերի համար և միաժամանակ կաթողիկ վարժատուն ուղարկելու համար որդեկրեց Արքարի Սուլթանշահ որդուն,

<sup>1</sup> «Հանդէս ամսորյա», 1912, էջ 387:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 388:

<sup>3</sup> Չամչյան, Պատմութեան հայոց, III, էջ 529 և հաւ:

վերանվանելով նրան Մարկ Անտոն: Որոշվեց նաև, որ կաթուղի մի կպիսկոպոսի ուղեկցութեամբ — ալդ կպիսկոպոսին ad hoc շնորհվեց, «Հայոց կարգինալի» արագուս — Արգարը վերագառնա Հայաստան բանակցութեաննորի համար Հոսոմ հրավիրելու կաթուղիութին:

Առկա աղբյուրները լուսում են Վենետիկում և Հոսոմում Արգարի առաքելութեան բազարական ավելի շոշափելի արգյունքների մասին: Սուլթանշահի գրութեան մեջ ասված է միայն, թե պապը ողջունել և համբուրել էր իր հորը սրպես հայ արժայագնի, և ճամփելով նրան կաթուղիութի մտա, սրպես թե ասել էր. «Թ նման է թագաւորացն եկիր առ իս. և այժմ՝ փառատուեալ իբր արժա տաքեմ՝ զրեզ առ պատրիարքն զի բերեցցես զնա առ մեզ»<sup>1</sup>: Եթե, այսպիսով, հայերի դիմումի համաձայն Պիոս պապը ստանձնում էր Աղբարատուի գերը, իր կողմից նա վերագահ էր Միքայել Աերաստացուն կուսավորչի, իսկ Ռոմատուցի արքայազնին Տրդատի գեր: Վենետիկի դոմին էր մնում Կոստանդինուսի սուրը, ասոնց որի բանակցուց հայերի ակասակեալից ոչ միայն թերակատար, այլև իմաստազուրկ պիտի լիներ պապի ձեռնարկած ամբողջ այս բեմադրութեանը:

Արգարի վերագարծը հասպոցե: Ուղեորվեց միայն «Հայոց կարգինալը»: Բայց մահը վրա հասավ սրան կես ճամնապարհին, անկատար թողնելով նրա անելիքը:

Արգարի հասպոցումն ոմեր իր պատճառը: Տեղեկանալով, որ թուրքերն ասել են իր տաքելութեան հոսը, նա ձեռնարկել էր Վենետիկում հայերեն «Սաղմոսի» տպագրութեան<sup>2</sup>, «արպեսզի, ինչպես ակեղեկագրում է Սուլթանշահը, հնարավորութեան ոմենա արգարանալ թուրքերի ասաջ, թե հենց զրա համար էլ մեկնած է եղել Ֆրանկըստան»<sup>3</sup>: Այս վկայութեան ձշտութեանը տպացուցելու էր նաև տպագրված «Սաղմոսի» ձեռագրումը: Գրքի էջերում հեռատես տպագրիչը զեակեղել էր պապին և Վենետիկի դոմին իրեն շնորհված

<sup>1</sup> «Հանդես տմսորյա», 1906, էջ 324:

<sup>2</sup> Սաղմոսի տպագրութեանը սիսվեց 1565 թ. և ավարտվեց 1566 թ.: Գրքի հիշատակարանում ասված է «Կազմեցա... ի թուրքահանի հայոց Ռեֆե (= 1566) մայիս 17 առաքն ուրբաթ ժե մամն առ սոս Մեղիքսեղեկ կպիսկոպոսին ի մայրաքաղաքն ի Վենետիկ քնդ հոփանեա. ս. Մարկոս աւետարանչին ի հայոց հոգևաուն ի Ժամանակ Սիմոնի»<sup>3</sup>: Վերջինս երկի հայոց «վերակացուն» էր: Հայերն ոմենին թտալիայում եկեղեցիներ և անգամ ընդհանուր կրոնապես՝ «կպիսկոպոս Բապիսյ» (Ս. ի շ ա ն, Հայ-Վենետ, էջ 160 և հա.): Կար նաև հայ վաճառակամներին ծառայուց հյուրանոց, որ հայտնի էր «Հայոց տուն» անունով:

<sup>3</sup> «Հանդես տմսորյա», 1906, էջ 323:

ունկնդրութեան նկարը, գրածով ակնատու կերպով պիտի ցուցցար վեր թուրքերին, թե թոխատեցի տպագրիչը ներկայացած է եղել Հոտմի և Վենեախիկի պետերին՝ գրքի տպագրութեան համար արտոնութեան ստանալու նպատակով միայն: Խորամանկութեան ըստ երևուցիին հասավ իր նպատակին: Վերադառնալով Պոլիս՝ Արզարը կալանքի ենթարկվեց. սակայն ինքնարդարացման ապացուցները համոզիչ երևացին, և նա ազատ արձակվեց: 1567 թ. Պոլսում նրան հաջողվեց նուրբիակ հիմնել հայ տպարան և լույս ընծայել մի քանի գիրք: 1569 թ. Արզարը ուղևորվեց Էջմիածին, երեւի զեկուցելու կաթողիկոսի կողմից իրեն արված հանձնարարութեանների կատարման մասին:

Արզարը մեծով 1572 թվականին՝ Անավարտ նրա գործի շարունակող հանդիսացավ մի հայանի շափով Սուլթանշահը: Արզարի հրատարակած Սաղմոսում սա պատկերված էր Պիոս պապի առաջ թարգմանի գիրքում: Սաղմոսի հիշատակարանում նշելով գրքի տպագրողներին, Արզարը հիշատակում է նաև «գրամիա» որպես Սուլթանշահի «բարեխոսութեանը»<sup>2</sup>: 1567 թվականին Պոլսում տպված «Տօնացուցի» հիշատակարանում նշված է, որ գիրքը լույս է տեսնում «արհեստագործութեամբ Արզար զպրին և իր թագապարս Անտանիոս Սուլթանշահ սարկաւազին»: Հավանորեն Սուլթանշահը մասնակցել էր «Տօնացուցի» տպագրութեանը հեռակալից, բանի որ, շարունակելով տոտոմնասութեան գործը, մնացել էր Հոտմում, ուր ավելի ուշ՝ «արքայազն պարսն» կամ «հաւոց իշխան» մակդիրներով մեծարված՝ վարում էր հալ զազութի «վերակացուի» պաշտան: Վերը նշված իր տեղեկագրերում նա դիտում է Հոտմ որպես «տուն տպավիճութեան», «լօձաժանի գալուցն լանօրինաց» երախներից մազապարծ եղած հալ զազթականների համար: 1583 թվականին, հալ տպագրիչ Հովհաննես Տերզնցու և Հոտմի հայ մատուռի ժամարար տեր-Քաղեոսի հետ միասին, ալզ տեղեկագրով նա խնդրում էր երուտաղեմի Անդրեաս պապիարքին ժամանել Հոտմ՝ մասնակցելու համարքիստոնեական խորհրդածոգովի, որը գումարվելու էր «վասն նոր իմն իրի՝ զոր սուրբ փափն կամեացի»<sup>3</sup>: Ուշագրավ է այդ դիմումի ոճը. «Արզ արի՛ Տէր, և մի լամեր, արի՛ Տէր, և մի մտնար իսպառ, արի՛ Տէր, զի ճաշն պատ-

<sup>2</sup> Տե՛ս Ս. Գ. Ս. Մ. Մ. Վ., Պատմութիւն հայոց զազթականութեան և շինութեան եկեղեցոյ նոցա ի Լիվոնոյ բազարի, Վենեախի, 1891, էջ 223:

<sup>3</sup> Տե՛ս Թ. Ե. Կ. Կ., Տառ և տիպ, 1912, էջ 41:

<sup>4</sup> Ա. Ի. Հ. ա. ն., Հայագրատու, էջ 601:



բասա է, արի՞՛ Տէր, զի շահն է բանքարանայ, արի՞՛ Տէր, զի Տէրն խնդրէ, արի՞՛ Տէր, զի ժամանակն է, արի՞՛ Տէր, զի հասեալ է օր, արի՞՛ Տէր, զի վազահաս լիցես, արի՞՛ Տէր, զի բազումք սպասեն, արի՞՛ Տէր, զի հասցես ամենայն փափագանացդ: Եկ Տէր և տես զսուրբ փափն. և՛կ Տէր, և՛կ...»: Գծվար է պատկերացնել սին հուզավառութեան ավելի պայտուն օրինակ, բանն այն, որին Լենխարկովէ էր Արգարի սարկավազ սրգին...:

Այսբան բուռն թախանձանքով թեժացած զիմուճը անշուշտ ելնում էր հուշժ կարեօր համարված քաղաքական շարժառիթներից աւ հեռանկարներից, և անհավանական չէ, որ նման թուղթ Սուլթանշահը ուղարկել էր Հոռոմից նաև հալ եկեղեցու մշուս պետերին և ամենից առաջ՝ էջմիածնի կաթողիկոսին: Վերջին Լենխարկովյանը տեղիք են տալիս ոչ միայն Արգարի նախընթաց գործունեութեան հանգամանքները, այլև Սուլթանշահի՝ բանիցս հիշատակված գրությունը, որը 1582 թվականի հոկտեմբերի 21-ին ուղարկվել էր էջմիածնի Թաղեսու կաթողիկոսին: Պատմելով իր հօր առաքելութեան մասին, նա հազօրգում էր, թե ինքը եւ ուղևորված է եղել Եվրոպա պապի ու կարդինալների կողմից արժանացած մի ընդունելութեան, որ պառշաճ էր Տրդատ Արշակունուց, Գաղիկ Բագրատունուց և Սենեքերիմ Արծրունուց սերված մարդկանց: Հայանում է, որ զրա շնորհիվ ինքն այնքան է առաջացել, որ սուրբ հայրը (խոսքը կարող է լինել այստեղ հակաթուրքական լիգա կազմակերպելու քաղաքականութեամբ հայանի Գրիգոր XIII պապի մասին) բարի գիտափորութեան է հայտ բերել քաղաքներ և ամրոցներ շնորհելու իրեն: Դրա համար անհրաժեշտ է միայն, որ արքայական իր ծագումը հաստատող հատուկ վկայութեան լինի հայոց կաթողիկոսի և եպիսկոպոսների կողմից...

Հարկ չէր լինի հիշատակելու Սուլթանշահի փոքր ինչ անակընկալ այս զիմուճը, եթե վերջինս կապակցութեան շունենար նրան զբաղեցրած քաղաքական առաքելութեան հետ: Սուլթանշահը կամ Մարկ Անառնը (այս վերջին անունն է տալիս նա հիմա ինքն իրեն) կամենում է համոզել կաթողիկոսին, թե չի առաջնորդվում սոսկ անձնականով, չի մոռանում ազգակիցներին և կամենում է օգտվել պապի ողորմածութեանից և իր տունը կացարան դարձնել այնքան մեծ թվով Հոռոմ ապավինող հայերի համար: Կամենում է օգնել նրանց, եկեղեցիներ կառուցել նրանց համար և բարենպատակ այլ գործերով տարածել ամենուրեք հայերի բարի համբավը<sup>1</sup>:

<sup>1</sup> Պիտի կարծել, որ շունենար հայ գաղթականների համար ապաստարան հիմնելու կարիքն այս ժամանակ խոհապես հասունացած էր հոռոմ: Հայ

Այսպիսով, և սա է ամենատեղիանը, իրեն վերջ ի վերջս պիտի հաջողվի գլուխ բերել այն, ինչ որ շէր հաջողել իր հորը՝ հիշեցնել պապին ու նրա կարգինալներին՝ «Բաշանց թուղթը» և սուրբ Սիսնը ազատագրելու նրանց տված վաղեմի խոստումը<sup>1</sup>:

Թե ինչ պատասխան ստացվեց Երուսաղեմի պատրիարքից, հայտնի չէ: Ինչ վերաբերում է էջմիածնի Բաղեսս կաթողիկոսին, սա զեռ մի քանի տարի առաջ էր ժամանած եղել Լվով, Վենետիկ և Հոմ և, ըստ երևույթին, վերադարձել՝ շահանելով շուշափելի արդյունքի<sup>2</sup>: Հիշատակության արժանի է այդ կաթողիկոսի մի նամակ-պատասխանը, սուր Հոմի կարգինալների ուշադրությանն էր հանձնում բուրեհից ճնշված հայերին և փրկություն աղերսում սրանց համար, վերապահելով փր Հոմ մեկնելը այլ առիթի<sup>3</sup>: Այն հանդամանքը, որ 1582 թվականին Սուլթանշահը էջմիածին ուղղած իր գրությունը հասցեագրել էր ոչ թե Գրիգոր կամ Առաքել կաթողիկոսներին, այլ սրանց աթոռակալ Բաղեսսին՝ հիմք է տալիս կարծելու, թե Արգարի սրգին վերջինիս հետ շփման մեջ էր եղել տակալին նրա Հոմ գտնված ժամանակ: Գիտենք այնուամենայնիվ, որ էջմիածին հղված թուղթը ակն շահասով և միայն մեր պարում է, որ հայտնաբերվեց ու հրատարակվեց Մխիթարյանների ձեռքով:

էջմիածնի կաթողիկոսից և Երուսաղեմի պատրիարքից գատ, Արգարի առաքելության հետ հույսեր էր կապում նաև Սսի կաթողիկոսը: Կիլիկիայի համար օգնություն ստանալու նպատակով, Սսի եաշատուր կաթողիկոսը հարաբերության մեջ էր մտել Հոմի հետ տակալին 1575 թվականին: Գրիգոր XIII-ին ուղղած մի թղթում եաշատուրը գրվատում էր պապին այն բանի համար, որ վերանորոգելով Հոմի և Հալատանի հին դաշինքը՝ նա ցանկություն

---

վաճատականների համար Վենետիկում կառուցված «Հայոց տունը» 1579 թվականին վերածվել էր հայ ազրատանոցի սկզբներին ծառայող «խորանի» (իմա մատուռի) և հայ վաճատականները սահմանեցին, թոր իրենց ուղարկության սուրբով պահպանվեն թե՛ այդ խորանը և թե՛ ազրատները» (Ալիշահ, Հայ-Վենետ, էջ 389 և հա.): Բայց թե սրբան բիշ արժեք ունեն Սուլթանշահի մեծախոս խոստումները հայերին օգնելու մասին, կարելի է եզրակացնել նրանից, որ 1583 թվականին հայերը գանդապում էին Հոմի մատուռի ազրատության մասին և օգնություն խնդրում Երուսաղեմի պատրիարքից: Սուլթանշահը տալիս էր մատուռին միայն 120 դրամ եկամուտ: (Ալիշահ, Հայազրատում, էջ 599 և հա.):

<sup>1</sup> «Հանդես ամսօրյա», 1906, էջ 324:

<sup>2</sup> Հմմտ. Ալիշահ, Հայ-Վենետ, էջ 330 և հա.:

<sup>3</sup> «Հանդես ամսօրյա», 1917—18, էջ 173 և հա.:

էր ունեցել օգնական լինել հալոց տառապլայ ազգին: «Մանուցում լիցի վե՛հ իմաստութեան քո,— գրում էր Խաչատուրը.— հոգևոր Տէր, երբ քո Կախկապտան ու վարդապետն առ մեզ նամակաւ եկին, փարատեցաւ սուգն և Խաբուժիւնն ի սրտից մերոց: Որպէս ի ճաղել արեղականն՝ փարատի խաւարն յաշխարհս, այնպէս փարատեցաւ արամութիւնն և իբրև զառարեալ ի ալր քնկալար Կախկապտան, և վարդապետն քո, բայց ոչ իշխեմք խօսել, զի զամենայն ի սուր կտրաշէն: Բագում անգամ խորհուրդ է արարեալ, թէ սուր ի վերայ բրիտանեկից զենք. ով շի զառնա՛ կարեն: Մանիցէ վե՛հ իմաստութիւն քո. ևս ձերացայ, մեր հոգևոր սրբին Ազարիա քարունապետն Աստուծոյ և բեզ յանձն եղիցի»<sup>1</sup>:

1579 թվականին «ի վերակացոյ տնտեսութեան Սուլթանշահ Թուխաթցուն, զոր Զուանկն Մարգանտան կոչեց» և Հովհաննես րահանա Տերզնցու ու սրա Խաչատուր սրբու ջանքերով Հոռմում յույս տեսան երկու գիրք: Գրանցից մեկը յատիներենից հաշերեն թարգմանված Գրիգորյան ասմարն էր, մյուսը՝ հաշերենից յատիներեն թարգմանված «Պաշանց թուղթը»<sup>2</sup>: Հինգ տարի անց, 1584 թվականին, նույն այդ մարդկանց համագործակցութեամբ յույս տեսով հաշերեն թարգմանված «Հալատա հանդանակը», Տրիենախ ժողովի հաստատած զավանտիջան թուղթը: Գրիգոր XIII պապը ուղարկեց Հոռմում ապված հաշերեն այս գրքերի օրինակները Սոս Ազարիա Ջուղայեցի կաթողիկոսին, առաջարկելով քննունել գրանք ի գիտութեան և ի գործադրութեան: Վատիկանի գիվանում պահված է նույն Ազարիայի կողմից Գրիգոր XIII-ին սուղած մի գրութեան, որի մեջ ասված է. «Եմք իբրև զմի այլի տասնց պարսպի և պահսորդի ցրուեալք ասա և անդ. և եմք զեա ոչխար ի մէջ զայլոց և որպէս զգառինք ի մէջ առիւծուց, և ամեներին եմք զերի ի ներքոյ անսպորմ տէրանց, սրք վասն մերոց ամենայն օր տանջեն և շարշարեն զմեզ ազահութեամբ և ոչ կշտանան բնաւ զի տնանկ և ազրատ եմք և ոչ կարեմք շարժել քայլ մի տասնց երկիւղի մեծ «փորձանաց»<sup>2</sup>:

<sup>1</sup> «Մայր ցուցակ... Մատենագարանին Վենետիկի», Բ, էջ 1201 և հտ.:

<sup>2</sup> Ա. Վ. Պալսեան, «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայոց», Վիեննա, 1878, էջ 309: Ժամանակամերձ Գր. Գարեհաղեցիւն Սիգանի Կախկապտի և հալոցի ոմն Ղազար Կախկապտի ձեռքով հերյուրված կեղծիք էր համարում Ազարիայի ստորագրութեանն ու կնիքը կրող այս թուղթը (Գր. Գարանազեցի, նույն տեղում, էջ 378 և հտ.): Օրմանյանը («Աղկապատում», էջ 228) և Կյուլեոսեյանը («Տաթև», Հայեց, 1928, էջ 96 և հտ., և «Միտն», 1929, էջ 149), նույնպէս վիճարկում են այս թղթի վավերականութեանը: Սակայն հետաքրքրականը թղթի վավերականութեանը չէ, այլ

Մի այլ թղթում, գրված 1585 թվականի ապրիլ 10-ին, Ադա-  
րիան Հայաճնում է պապին, թե անհնարին է կիրառել նոր առժարը,  
նախքան այդ կանոն մշտա ազդերը: «Վասն առյամենայն լինէար  
ըմբռնեալ ի յանօրինաց թէ միութիւն արարիք ընդ ֆռանկաց...  
բայց մեր ազգին տուժարեղէն ուղարկեցէք, զի ամենեքեանք  
ուսանիցեմք և մեր լինիցիմք առաջինք եթէ այլք դայցին զհետ  
մեր»<sup>1</sup>: Այս գրութչան տակ, որ պապի ներկայացուցիչ Սիգոնի  
եպիսկոպոսի հասցեով Հոռոմ էր ուղարկվել Այնթափցի Հովհաննես  
եպիսկոպոսի միջոցով, գետեղված են կաթողիկոսի և նրան են-  
թարկված Զելմունի, Հալեպի Սերաստիայի և Ascugiensis կոչված  
ինչ-որ վայրի եպիսկոպոսների, Սսի երեք իշխանների և հալեպցի  
մի քաղանայի ստորագրութչաններն ու կնիքները: «Կգատեցեք մեզ  
այն բոնակալութչանից, որի ներքս տառապում ենք մենք, այն ժա-  
մանակ պատրաստ կլինենք լինել լավ կաթողիկոսեր, այդ դեպքում  
կարող էք սեր դառնալ մեր հոգիներին և մարմիններին», — ամ-  
փոփում էր սանցիներու միտքը պապի ներկայացուցիչ Սիգոնի  
եպիսկոպոսի միջոցով<sup>2</sup>:

Ադարիա կաթողիկոսի պատասխանը ձեակերպում էր քաղա-  
քական օգնութչան աջն պահանջը, որ առաջադրում էին Երբեմն  
հայ եկեղեցականները, երբ, քաղաքական տաղնապալից անհրա-  
ժեշտութչանից մտրակված, հնազանդութչուն էին հայանում Հոռոմի  
պապերին: Հնազանդութեան իրենց թղթերով հայ կաթողիկոսները  
ենթադրում էին Մաճմեկի սրից հայածված հայ եկեղեցու ու ժո-  
ղովրդի համար ապահովել պատական գովազանի եռանդուն մի-  
ջամտութչանը: Սակայն խոստումնատատ պապերը շարունակ հան-  
դես էին գալիս անվճարունակ պարտապանների վիճակում: Հասկա-  
նալի է, որ իրերի այս կացութչան մեջ Վատիկանի զիմանում «ամե-  
նայն խնամքով» պահվող հայ եկեղեցականների «կաթողիկէ» հա-  
վատախացումները եւ, հակառակ Պալճչանների և Գալեմքլարչաննե-  
րի համառ պնդումներին, պիտի զիտվեն, սոսկ որպես արժեքա-  
զուրկ պարտամուրհակներ:

Նրա մեջ ձեակերպված մտայնութչանը, Հոռոմի զերիշխանութչան պայմա-  
նական ճանաչումը թեկուզ և թուզթ կազմող հայ մի «չեպիսկոպոսի» կողմից:  
Կարծում ենք, որ հայ եկեղեցու անկախութչանը պաշտպանած լինելու  
մտահոգութչամբ չպիտի անտեսվի բննարկվող թղթի կարեորութչանը հայ  
ազատագրական մտքի պատմութչան համար:

<sup>1</sup> «Հանդես տնօրոյ», 1914, էջ 10 և հտ.: Հմմտ. Galanus, նույն տե-  
ղում, II մաս, 1, էջ 173 և 397 և Պալճչան, նույն տեղում, էջ 313:

<sup>2</sup> «Relation de l'évêque de Sidon», տե՛ս «Revue de l'Orient chrétien»,  
Paris, 1898, էջ 332:

Մի քանի խոսք Սուլթանշահի վախճանի մասին: 1595 թվա-  
կանին, ղիմելով Հոսմի «Հայոց պաշտպան» Սաքուա Սևերինա կար-  
ղինալին, Ազարիա կաթողիկոսը հայտնում էր, որ իր կողմից փո-  
խանորդ է նշանակում Աբգարի որդի Մարկ Անտոնին և հարակ-  
ցում, թե կամենում է սրան «զամենայն բարութիւն իւր հօրն խաթ-  
րին համար, որ աշխատեցաւ շատ վասն ազգին մերոյ և եթէ ոչ էր  
մեռեալ շատ բան անելոց էր»<sup>1</sup>: Միաժամանակ կաթողիկոսը Հոսմ  
սղարկեց մի ձեռագիր Աստվածաշունչ և խնդրում էր տպագրու-  
թյան հանձնել այն: Բուրը հայ ազգի մեջ, պարզաբանում էր նա,  
հազիվ կարելի է դանել 20 հատ Աստվածաշունչ, սրոնց օրինակը  
չի կարելի գնել նույնիսկ 2—3 հարյուր ֆլորինով: Ազարիան հուսով  
էր, թե Աստվածաշնչի տպագրության գործում օգտակար կարող է  
լինել նման ձեռնարկությունների նշանակությունը հասկացող Աբ-  
գարի որդին<sup>2</sup>:

Այս գրությունը վերջինն էր, ուր ուղղակի հիշատակություն կա  
Աբգարի որդու մասին: Սակայն, թեև Ն. Ալիսյանը արդեն իսկ  
1585 թ. մեռած է նշում Սուլթանշահին<sup>3</sup>, մեռածը Սուլթանշահ  
ամուսն էր, բայց ոչ այդ անունը կրող անձը: Հետագա գրություն-  
ների մեջ Աբգարի որդին հանդես է դալիս Բարդուղիմեոս Աբգար  
քահանա անունով<sup>4</sup>: Տակալին 1592 թվականին հայերի «պրոտեկ-  
տոր» կարղինալ Սևերինի անվան հետ Բարդուղիմեոս Աբգարը հի-  
շատակվում էր որպէս «թարգման»<sup>5</sup>: 1600 թվականին նրան հանդի-  
պում ենք Հոսմի հայ մատուռը սպասարկողի պաշտոնում: Այդ մա-  
սին մի տեղ նա փնքն իսկ գրում է. «Ես տէր Բարդուղիմէոս Աբգարի  
ազգն և աստուածարան քահանայ, մտայ այս մեր ազգին ասն  
հովուապետ և խոստովանահայր, և էր թուրն ՌՌ (1600) հրամանով  
Կղեմենթոս Բ. ս. փափն. լավ է»<sup>6</sup>: Անշուշտ ձեռնադրության ժամա-  
նակ անվանափոխված Սուլթանշահի մասին է դարձյալ խոսքը,  
կրթ 1611 թ. այցելելով պապական մայրաքաղաքը, Սիմեոն Լեհացի  
ուղեգիրը Հոսմի հայ մատուռի և հարակից հիվանդանոցի ու հյու-  
րատան կապակցությամբ գրում էր. «Եւ էր անդ էրէց մի հայի, թո-  
խաթցի Բարդուղիմէոս ամուսն, որ սլըզակուց անդ էր սնել և յ շափ  
հասել. զմեր դիրն ու զլեղուն գիտեր, բայց նոցան (իմա իտալա-

<sup>1</sup> «Հանդես ամսօրյա», 1912, էջ 372:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, 1934, էջ 236:

<sup>4</sup> Նույն տեղում, 1917—18, էջ 154:

<sup>5</sup> Նույն տեղում, 1892, էջ 343:

<sup>6</sup> Ջ ա ը ր Կ ա ն ա լ յ ա ն, Պատմ. հայ գրության, II, էջ 42:

ցիներինը—Ա. Հ.) այլ ավելի. զի նոցա օրենքն կու բռնէր. նոքա օրհնել էին զնա էրէց, և տարին 100 կարմիր սակի թային օլօֆայ (ուճիկ) ուներ. և եկեղեցին և շրիթալն և խցերն ամեն իր ձեռքն էր: Եւ ուներ ժամն, էղիք, վախրֆ աներ... Եւ կայր նմա ժԲ հոգի»<sup>1</sup>: Թե հիրավի թոխասեցի Բարդուղիմէոս Արգար երեցը նույն ինքը Արգարի որդի Սուլթանշահն էր՝ անկարելի է չհամարուիլ, երբ Լեոն Ռուբինյան թագավորի մի պարզեակորի տակ հանդիպում ենք այս տղերին. «Ես աէր Բարդուղիմէոս Արգարացի այս քազաւո՛րին սերմանէ հաստատիմ զոր դրեալ է»<sup>2</sup>:

Որչափ Արգար Ռոխասեցու երկրորդ մի որդի ունենալու մասին ոչինչ հայտնի չէ, պիտի եզրակացնել, որ Բարդուղիմէոսը այլ ոք չէ քան Սուլթանշահ սարկավազը, որ հայոց արքայական ծիրանու փոխարեն քահանայի պարզ սքեմ էր հազել ի վերջո: Ընդունված սովորութեան համաձայն՝ ձեռնադրութեան պահին Սուլթանշահ օտարաձայն անունը պիտի փոխված լիներ՝ ներկա դեպքում վերածվելով Բարդուղիմէոս քրիստոնէական անվան:

Բարդուղիմէոս, կամ ինչպես ինքը կոչում էր իրեն Bartholomeus Abgarus armenus երեցը 1623—1624 թվականին «Հաւաստափիւս ժողովի» համար ունիատորական գրքերի տպագրիչ էր Հռոմում<sup>3</sup>: Այսպես՝ 1623 թվականին Բարդուղիմէոս Արգարը թարգմանեց և տպագրեց 1439 թվականին Ֆլորենտիայում ընդունված «Միութեան կոնգրալը»<sup>4</sup>:

\* \* \*

Ինչպես Արգարի, այնպես և նրա որդու քաղաքական ջանքերը շունեցան դորձնական արդյունք: Այնուամենայնիվ հայր և որդի թոխասեցիների ջանքերը նշանակալից և հատկանշական են հայ ազատագրական մարտի պատմութեան համար:

Ամենից առաջ ուշադրութեամբ արժանի է այն հարցը, թե ո՞ւմ դեմ էին սուղղված նրանց ջանքերը:

Միքայել Սերաստացու մեր նշած ծածկագիրը, գրված էջմիածնում, ասել է Իրանին ենթակա մի վայրում, ենթադրել է ասլիս, որ կաթողիկոսի բանակցութեանները գաղտնի էին ոչ միայն

<sup>1</sup> «Հանդես ամսօրյա», 1934, էջ 517:

<sup>2</sup> Ալիշան, Հայագատում, էջ 537, ծան.:

<sup>3</sup> Գ. Լեոնյան, Հայ գիրքը և տպագրութեան արվեստը, Երևան 1946, էջ 81:

<sup>4</sup> «Բագմազեպ», 1940, էջ 151, ծան. 22:

օսմանցիներէից, այլե՛ զզլբաշներէից: Արգարի զավանութեան թուղթը հաստատում է այս կնիթագրութեանը: «Մեր Հայքս, — կարդում ենք այդ թղթում, — որք ի ստրկութեամբ կմք իշխանութեամբ թուրքաց և պարսից և այլն»<sup>1</sup>: Ահներե է, որ Արգարի պատվիրակութեանը հետամուտ էր նպատակների, որոնք ուղղված էին և՛ Ռուսրիայի, և՛ Երանի գեմ: Դրանով Արգարի առաքելութեանը տարբերանշվում էր Սակփանոս Սալմաստեցու առաքելութեանից, որչափ վերջինս հետամուտ էր միայն իրանահայ շահախնդրութեանների: Արգարի առաքելութեանը ոգեշնչված էր ոչ միայն իրանական, այլև բուրժուական լուծը բորափելու զազափարով:

Ռուսր-իրանական պատերազմների ժամանակ ոչ միայն սրի և հրի զոհ էր դառնում ինքը հայ ժողովուրդը, այլև խաթարվում ճրատ ազգային — եկեղեցական միութեանը: Ազվանից կաթողիկոսութեանը հաճախ խլում էր էջմիածնից նախիջևանի, Գեղարքունիքի, Ղափանի, Աղստաֆայի և Լոռու վիճակները: Ազմարի կաթողիկոսութեանը նույնպես հաճախ տարածում էր իր իշխանութեանը Խոյի և Սարմատսի, Վանի, Ամիգի, Արճեշի, Խլաթի, Մուշի և Բաղեշի վիճակների վրա<sup>2</sup>: Ճիշտ է, 1548 և 1557 թվականներին Միքայել Աերատացին ստացավ շահ Ռահմազից, որոնցով էջմիածնի իրավասության ներքո վերահաստատվում էին Գանձակի, Պարտավի, Աղստաֆայի, Զաղամի, Նախճավանի, Գեղարքունիքի, Ղափանի, Խոյի և Սարմատսի վիճակները<sup>3</sup>: Սակայն նախ դեռ անսրոշ էր Ռուսրիայում գտնված հայ եկեղեցական վիճակների հարցը և սպա՛ շահի ստացմը անզոր էր էջմիածնի եկեղեցական փշխանութեանը իր նախկին սահմաններում վերականգնելու համար:

Ռե որպիսի ճգնաժամ էր սպրում այս պահին կաթողիկոսութեանը, ակնբախ է նրանից, որ XVI դարի երկրորդ կեսից սկսած և մինչև հաջորդ դարի 20-ական թվականները մի կաթողիկոսի փոխարեն էջմիածնի աթոռի վրա միաժամանակ հիշատակվում էին երեք-չորսի անունները: Հիմք կա նույնիսկ կարծելու, որ Միքայելի օրոք սրանք միշտ չէ, որ գործում էին համերաշխ: Այսպես, թերթելով Վասպուրականում գրված հիշատակարանները մեր ուշադրությունը կանգ է առնում այն փաստի առաջ, որ 1559—1567 թվա-

<sup>1</sup> Չամչյան, Պատմութիւն, III, էջ 521:

<sup>2</sup> Սիմէոն կաթողիկոս, Զամբու, Վաղարշապատ, 1875, էջ 20 և 93:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 78 և 210: Հմմտ. նաև Ն. Փափազյան, Մատենագրանի պարսկերեն վավերագրերը, I, էջ 50, 89 և հտ.:

կաննների ընթացքում Աղթամարի կաթողիկոսության սահմաններում ընդհանրական կաթողիկոս էր ոչ թե Միրբայելը, այլ Բարսեղը: 1565 թվականին նշված է, որ վերջինս «յայսմ ամի հաստատեցաւ» (կարդա «վերահաստատվեցավ»), ակնարկ, որ առիթ է տալիս կարծելու, թե տարիների ընթացքում անընդհատ պայքար կար նրա և Միրբայելի միջև և որ Աղթամարի իրավասության սահմաններում մերժվում էր վերջինիս հեղինակությունը<sup>1</sup>: Բարսեղի անունն է հիշատակված նաև Սալմաստի 1562 թ. ընդօրինակված մի հիշատակարանում<sup>2</sup>: Մարդազավնչաց վանքի 1560 թվականի հիշատակարանում<sup>3</sup> արվում են Ստեփանոս (Աօրնշեցի) և Բարսեղ կաթողիկոսների անունները, Արարատյան երկրի Քեզո վանքում գրված հիշատակարանում<sup>4</sup> Գրիգոր կաթողիկոսի անունը<sup>5</sup>: Այս փաստերը վկայում են էջմիածնի իրավասության սահմաններում տիրող բազմիշխանության մասին: «Ի խառնակմանց երկրիս և ի տարազրույթենէ կաթողիկոսացն մերոց՝ համարձակութիւն գաեալ նոցա (խոսքը աղթամարցիների մասին է) երբեմն-երբեմն սան ամէին յ զիճակս սրբոց Աթոռոցս», գրում էր հեռագրչւմ Միմեան կաթողիկոսը<sup>6</sup>: Վերը բերած փաստերից պիտի եզրակացնել, որ միայն Աղթամարը չէր ընդգրկմության ազդուրը: 1560—1565 թվականներին Միրբայելի իշխանությունը խախտված էր նույնիսկ Արեւելյան Հայաստանում: Վասպուրականի 1567 թվականի մի ձեռագրում Միրբայելի անունը հիշատակվում է Բարսեղի մահը նշելու կապակցությամբ միայն. «Ի կաթողիկոսութեան մերս ալը Բարսեղին, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, և ալը Միրբայելին»<sup>6</sup>:

Հիմք կա կարծելու, որ Աղթամարում նստող կաթողիկոսը մի պահ համիշխան էր նույնիսկ էջմիածնում նստող տիրազսը: 1558 թ. Բաղեշում գրված Մաշտոցի հիշատակարանում որպես ստացող երկիցս նշված է «ալը Խաչատուր կաթողիկոս ամենայն

<sup>1</sup> Հմմտ. Հայկական ՍՍՌ Մատենագարան, №№ 5971, 5382, 5765 ձեռագրերի հիշատակարանները, նույնը նաև 1562 թ. Սալմաստում գրված մի հիշատակարանում, նույն տեղում, ձեռ. № 6020: Հմմտ. նաև Փիրղալեմյանի ընդօրինակած հիշատակարանները, նույն տեղում, ձեռ. № 6273, էջ 256, 259, 260 և 263, նաև № 4470, էջ 402բ և հա.:

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. № 6020:

<sup>3</sup> Նույն տեղում, ձեռ. № 6282:

<sup>4</sup> Նույն տեղում, ձեռ. № 1086:

<sup>5</sup> «Ջամբու», էջ 92:

<sup>6</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 4470, էջ 405ա:



հայոց<sup>1</sup>: «Ամենայն հայոց» կաթողիկոս կոչված Խաչատուրը Աղթամարի Խաչատուր Չորիկ վերածայնվածն է անշուշտ: Ավելի ուշ՝ 1574 թ. Աղթամարի Գրիգոր Փոքր կոչված կաթողիկոսը ֆարման էր հանելու սուլթանից՝ Վանի, Արճեշի, Խլաթի, Մաշի, Բաղեշի և Գրարբերբրի թեմերին տիրելու համար<sup>2</sup>: Այսպես, դեռ 1568 թվականին Աղթամարի մի հիշատակարանում կարգում ենք. «Ի հայրապետութեան տեսոն Գրիգորիս կաթողիկոսին (Աղթամարայ), որ և զծովու բոլորն էառ մինչև ի Մուշ»<sup>3</sup>: Սակայն Աղթամարի կաթողիկոսը միակը չէր, որ այս ժամանակ բնդհանրական կաթողիկոսի հավանություններ էր դրսևորում:

Կարծում ենք էջմիածնի ամայացման այս պահին է, որ խըմբազրովեց Նեոի երեման մասին նոր մի տեսիլ՝ վերնազրված «Պատմութիւն վասն ծնընդեան, սնընդեան է շար գործոյն և յառնելոյ Եղիայի և Ենովբայ, վասն զօրանալոյ ֆռանկ ազգին և առնելոյն զմեծն Ստամպոլ և սուրբն յՍրուսաղէմ և վասն փոխման թագաւորացն և վասն կատարածին աշխարհի և վասն պատաստանի ասացեալ սրբոյն Աղաթանէլի, սուրբ և անյաղթ փիլիսոփայի յազազ լսողաց»: Թեևսուր և այս տեսիլը կրում է Աղաթանել «փիլիսոփայի», այսինքն զուցե հենց մեզ նախածանոթ Աղաթանի «սրբացած» անունը, այնուամենայնիվ օճնի նրա զուշակութուններից տարբեր բովանդակութուն: Ֆրանկների ձեռքով Պուլսի զբաղման մասին արված օկնարկը վերաբերում է անշուշտ խաչակրաց շորտորդ արշավանքին, բայց ինքյան «Ստամպոլ» անվանաձևը փոխադրում է մեզ Կ. Պուլսի անկմանը հաջորդած ժամանակները: Ըստ տեսիլքի պարսիկները կուրք են կանդնեցեում՝ էրզրումում, և կուպաշտության հորդորում էջմիածնի կաթողիկոսին<sup>4</sup>: Վերջինս մերժում է առաջարկը: Նրան սպանում են սրով եկեղեցում, իսկ եկեղեցին քանդում և փուլ ածում նրա վրա: Տեսիլքի գաժան այս պատկերը պատկված է «սփոփիլ» մի վերջվածքով, որը բնորոշ է ժողովրդի պատմական ոգբերգության և կղերի համակերպիչ քարոզչության համար: Բնագրում ասված է. «Եւ այս ամենայն նեղութեանց և տառապանացս ոչ դաանին ազգս մեր հայոց: Զի բնա-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ. Մատենագարան, ձեռ. № 1082:

<sup>2</sup> «Ջամբու», էջ 92 և հտ.:

<sup>3</sup> Ե. Լաւրյան, Յուդայի հայերեն ձեռ. Վաստուբախանի, 1, էջ 669:

<sup>4</sup> Իսլամի կրոնը զավանդունքին կուպաշտոնների վիճակում ներկայացնելը համապատասխանում է ժողովրդական մասսաների պատկերացմանը. այս մի երևույթ է, որ հանդիպում ենք նաև Սասնա Շուքրի պատումներում, ուր Բաղդատի խալիֆան հանդես է բերվում որպես կուպաշտ:

ջինջ եղեկոց եմք ի պարսից ազգէն, նախ քան զգալուսս Նեոխն, զի գրեալ է թէ զԽորուսան հայոց պարսից լիցի զի նա է մեր նախնի և վաղուց հետէ թշնամի, և այլք ասեն թէ Լուսաւորիչն է խընդրեալ յԱստուծոյ, որ ազգն մեր մի տեսցէ այն շար ժամանակն»<sup>1</sup>։

Այստեղ տեսիլքի խմբագրողը հայերի կործանումը սպասում է ոչ թե Նեոսից, այլ նրա «կարապետներից», ներկա գեպրում՝ պարսիկներին, Ակներև է, որ խմբագրված կարող է լինել այս տեսիլը XVI դարից ոչ առաջ, շահ Իսմայիլի կամ, ավելի հավանական է, շահ Թահմազի կազմակերպած կոտորածներից հետո<sup>2</sup>։

Արգարի պատվիրակւորչունը այս հանգամանքներում մի փորձ էր՝ հրահրելու հայոց պատմության նախաբեմից հետ բշված հին խնդիրը։ Հարց էր հարուցվում իսլամի դեմ կազմակերպելիք համաբնութադրական արշավանքի միջոցով վերականգնել ոչ միայն հայերի քաղաքական անկախությունը, այլև նրանց համագրային եկեղեցական միությունը։ Ուստի հարկ եղավ վերհիշել «Ռաշանց թուղթը», հուզել փաստապես հայ-հոսթակական անդո դաշինքի «վերանորոգության» խնդիրը։ Չէ՞ որ ստարածն այդ թղթի հավաստիացումով էջմիածնի իրավասությանը պիտի ենթարկված ընդհանր բոլոր մյուս հայազգական եկեղեցիները, իսկ էջմիածնի կաթողիկոսների պատկերացմամբ հայ եկեղեցին այս դարում գա հենց ինքը հայ ազգն է և էջմիածնի եկեղեցական գերիշխանութունը՝ հայ ազգային—քաղաքական գերիշխանութունը։

Սուլթանշահի գրութունը ցույց է տալիս, թե Արգարի ժամանակ որքան տակավին վառ էին «անհավաստների» գեմ ուղղված

<sup>1</sup> Հայկական ՍՍԻ Մատենագարան, ձև. № 3506, թերթ 87ա, բ։

<sup>2</sup> Կա նաև այս գրվածքի ավելի հին վերսիան «Պատմութիւն վասն գալստեան զոգս և մագոգա և գալստեան շար Նեոխն» վերնագրով։ Բիրլիական գոգ և մագոգ ցեղերն այստեղ կատարում են նույն գերը, որպիսին նախընթաց վերսիանում կատարում են պարսիկները։ Ազգթոնի անունը չկա։ Սակայն նշելով էջմիածնի կաթողիկոսի սպանութունը՝ վկայակոչվում է Սահակի տեսիլը, ուսկից ամանցվում սպանության պատմությունը։ Օգտագործված է նաև Ներսեսի բնագրծակված տեսիլը, որից վերցված է այն վերսիան, թե կաթողիկոսի սպանությունից և հայերի բնաջնջումից հետո, «մնացէ սակա յազգէս ի յսոն Վարազայ և ի ձորն Մանանխոյ (sic) որ Սասունք»։ (Հայկական ՍՍԻ Մատենագարան, ձև. № 9100, էջ 343բ—361ա և №614, էջ 98—107)։ Ներսեսի տեսիլքն օգտագործող այս վերսիան կարող էր խըմբագրված լինել հենց XVI դարի երկրորդ կեսում, երբ էջմիածնի կաթողիկոսությունն ապրում էր խոր անկում։

խաչակրաց արշավանքների ակնկալությունները՝ «Դաշանց թղթի» արգումենտներով արամարանոզ հալ բազրենի մեծատոմսների միջավայրում: Պատահական չէ, որ Սիրնի փրկություն համար պահանջ էր զգացվում կապ հաստատել ոչ միայն էջմիածնի կամ Սսի կաթողիկոսների, այլև Երուսաղեմի պատրիարքի հետ:

Սակայն միջնադարյան թագավորներին ու ասպետներին, եկեղեցականներին և առևտրականներին, զեղջուկներին ու ճարտերին ուղեշնչած համարքիստոնեական պատրանքներն անկարող էին արդեն ձողղական ուժ հանդիսանալ նորադարյան նվթուպաշում: Աճում էին եվրոպական երկրների արտադրական ուժերը, զարգանում քաղաքները, արմատ առնում կապիտալիստական հարաբերությունները, կազմավորվում բուրժուական ազդույթունները, սանդժվում նրանց սպասարկող կենտրոնացած ազգային պետությունները: Կապիտալի կուտակման, առևտրի ընդլայնման, ներքին շուկայի զարգացման և ազգային պետությունների աճող հակամարտությունների այս դարաշրջանում չքայցել էին խաչակրաց արշավանքներ կազմակերպելու նախապայմանները: «Բուրժուազիան կատարում է միանդամայն այլ արշավանքներ, քան ժողովուրդների զաղթը և խաչակրական արշավանքները» («Կոմունիստական մանիֆեստ»): Մարել էր այն հայացքը, թե արքայություն ճանապարհը անցնում է Միջերկրականի վրայով, և Թրիստում էր այն միտքը, թե Քրիստոսի զերեզմանի ազատագրումը՝ ասածուն հաճելի լինելու դեպքում՝ կարող է կատարվել նաև առանց խաչակրաց սրերի: Այստեղից հետո չէր այն կարծիքը, թե Քրիստոսն ինքը դեմ չէր թուրքերին, և ասաված, որ արթուն էր առաջ, քնած է հիմա, միջնադար Մահմեդը, ամենակարող ալլահից հովանավորված, ոչ միայն արթուն է, այլև դործում է լիակատար զորությունը<sup>1</sup>: Սկսվել էր պատմության այն շրջանը, երբ «ախրոջ զերեզմանը» և իսլամի լծի տակ տառապող քրիստոնյաներին «ազատելուց» առաջ էլ Արևմուտքի զինված կողոպտիչների հայացքը դամբում էր անդրօվկիանոսյան երկրներում՝ Սմերիկայում, Հնդկաստանում, Հնդկաչինում՝ գաղութներ դրավելու և «հեթանոս» քնիկներին «քաղաքակրթելու» մտահոգության վրա: Այս շրջանում խաչակրաց գաղափարների հապաղած քարոզչությունն իսկ դառնում էր արևելյան քրիստոնյաներին Հռոմի հպատակեցնելու հնարներից մեկը:

Որքան էլ մեծ լինեք թուրքական ազբեսիայի վտանգը արևմտա-

<sup>1</sup> Հմմտ. Գ. Է ի կ ե ո, История и система средневекового мировоззрения. СПб, 1907, էջ 311 և հտ.:

եվրոպական պետությունների համար՝ չկար սրանց մեջ և ոչ . մեկը, որը ձևւթ մեկնած շխներ Պոլսի նվաճողներին և ջանք չգործադրած՝ ուղղելու սրանց աշխարհատիրական մղումները քրիստոնյա այս կամ այն պետության դեմ: Բացառություն չէին կազմում հուլյնիսկ Հռոմի ամենաքրիստոնյա պապերը: Նշենք թեկուզ Ինոկենտիոս IV-ի, Գրիգոր IX-ի, Ինոկենտիոս VIII-ի և Ալեքսանդր VI-ի շեշտված թուրքասիրությունը: Սրանցից ոմանք ենթադրում էին օգտագործել օսմանցիների հզորությունը կայսրություն դեմ կռվելու նպատակով, մյուսները որոնում նրանց օժանդակությունը՝ Վենետիկի դեմ պատերազմելու համար:

Խոսք չի կարող լինել այն մասին, թե սևիական ժողովուրդների ազատությունները ասոսահարող եվրոպական Արեւմուտքը մտահոգված էր ազատություն նվաճելու Իրանում կամ Թուրքիայում սառապող քրիստոնյա աշայի համար կամ գեթ խաղաղություն բերելու սրանց: Եզվրտական ու մարիավելիստական զիպլումատիայի հրահանգներով թեափարված՝ կաթոլիկ եվրոպայում տակավ առ տակավ սկսում էր զլուխ բարձրացնել բացարձակ միապետությունը: Զգտելով «հավատարակչություն» սահմանել ֆեոդալական և բուրժուական դատակարգելի միջև՝ XVI դարում բացարձակ միապետության տեսարաններից ոմանք սուլթանական բունցրի մեջ նշմարում էին համակենտրոնացած իշխանություն իրենց իզեալը:

Իրանի և Թուրքիայի պատերազմները, սրանցից մեծապես սառապում էին Մերձավոր Արևելքի քրիստոնյա հայտակները, վանում էին թուրքերի ուշադրությունը եվրոպական գործերից, ուստի և ձեռնառ էին օսմանցիների ազրեսիայից աուժող արեւմտյան պետություններին: Ահա թե ինչու Կոտեհերեքզի հայանագործած մամուլը, իր սկզբնավորման օրերից իսկ, այնքան ուշադիր էր գեպի այդ պատերազմները: Անգամ Վենետիկը, որ թշնամարար էր արամազրված Թուրքիայի հանդեպ՝ շահագրգռված չէր պաշտպանելու Սեֆյանների քրիստոնյա հպատակներին: Մտահոգուր քրիստոնյաների ազատագրումը չէր, այլ ո. Մարկոսի բազաթի եսակենտրոն շահագրգռությունը, որ թեկադրում էր նրան համաձայնություն կնքել Իրանի հետ՝ թուրքերի դեմ համատեղ պատերազմ վարելու համար: Կ. Պոլսի անկումից հետո Վենետիկը պատերազմել էր Թուրքիայի դեմ մի քանի անգամ՝ 1464—79, 1490—1503, 1538—40 և 1570—73 թվականներին: Իտալական մյուս խոշոր կենտրոնների պես XV դարի կեսերից ի վեր հետզհետե կորցնելով միջազգային առևտրի մեջ սանցած իր իշխող դիրքը՝ այդ պատերազմների միջոցով Վենե-

տիկն ապարդյուն ջանք էր թափում վերականգնելու Մերձավոր Արևելքում կորցրած իր կշիռը և կասեցնելու Միջերկրականի վրայով անդի ունեցող առևտրի ճակատադրական վայրէջքը: Հասկանալի է այն հարցասիրությունը, որ XV—XVI դարերում հանդես էր բերում դոժերի հանրապետությունը Թուրքիայի դեմ պայքարող Իրանի հետ ուղղափառաբանական դաշինք կնքելու հարցի շուրջը: Նույն այդ հարցով հետաքրքրվում էին Ձենոյի, Բարբարոյի և Կոնտարինիի դեսպանությունները XV դարում՝ և Վիշենյո դ' Ալեսանդրի բանակցությունները XVI դարում: Այս խնդրով պաղպղում էին նույնիսկ լեվանայան առևտրի հետ կապված Վենետիկի կրոնավարները: Նույն ուղղությամբ էին գնալու նաև Իրանի և Վենետիկի բանավարությունները XVII դարում<sup>1</sup>: Վենետիկի հետ առևտրական հարաբերությունների մեջ գանվող հայ առևտրական շրջաններում համոզված էին, անշուշտ, թե հայերի պաշտպանությունը վենետիկյան հանրապետությանը շահագրգռող կարևորագույն խնդիրներից մեկն է Արևելքում: Փաստապես, բարի կամք ունենալու դեպքում իսկ Ադրիատիկի թաղուհին անկարող էր սրևէ բան անել իր հայ գործակիցների օգտին:

Նվաճելով Ուլուն Հասամի երկրները՝ XVI դարի սկզբներին շահ Իսմայիլը շարունակեց Թուրքիան զսպելու նպատակով եվրոպացիների և ամենից առաջ թուրքերի անհաշտ թշնամի Վենետիկի հետ դաշինք կնքելու նրա քաղաքականությունը<sup>2</sup>: Ըստ երևույթին այդ պահին ևս օգտագործվում էր հպատակ հայերի և մասնավորապես հայ եկեղեցականների ծառայությունը: 1506 թ. Կ. Պոլսում դատում և գլխատում են էջմիածնի նվիրակներին լրտեսության մեղադրանքով:

Կասամբ եկեալ զԳալիթ ասրան  
Պարոնորդոյն զսան ի տիվան,  
Ասին շաշուտ են միարան,  
Սօֆին զրկել ի Ֆոանկասան՝

Շահ Իսմայիլի արտաքին քաղաքականությունն ըստ ամենայնի ժառանգեց նրա հաջորդը՝ շահ Թահմազ I-ը: Թուրքերի դեմ

<sup>1</sup> Հմմտ. «Ուղեգրություններ», 1, էջ 153 և հտ., Berchet, La Repubblica di Venetia et la Perse, Torino, 1863, էջ 116 և 117:

<sup>2</sup> R. du Mans, Etat de la Perse en 1660, Paris, 1890, էջ 276:

<sup>3</sup> Կ. Կոստանյան, Նոր ժողովածու, Ա, էջ 33: Գեղքի տարեթիվը նշում ենք ըստ Հ. Աճառյանի, Հայոց անձնանունների բառարան, III, էջ 688:

պայքարի ընդհանուր ճակատ հարդարելու նպատակով՝ հատուկ դեսպանութեան միջոցով այդ շահը բանակցութեանն էր վարում վենետիկցիներին, զերմանական կայսր Կարլ V-ի և հունգարական թագաւորի հետ:

1564 թ., այսինքն հենց Արդարի Արեւմուտքում դաճած ժամանակ, թուրք-իրանական պատերազմը դադարեց և կովոզ կողմերը կնքեցին մի հաշտութեան, որը խախտվեց ավելի քան 10 տարի հետո միայն: Թուրքերի դեմ դրոհելու հնարավորութեանները սահմանափակված էին: Կար նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակ վենետիկցիները դաշինք ունեին թուրքերի հետ և լայն արտոնութեաններ էին վաչելում առևտրական երթևեկի համար: Այս ամենից անկախ՝ օվկիանոսային առևտրի մրցակցութունը, Կիպրոսի զբաւումը թուրքերի կողմից 1571 թ., ֆրանսիական, զերմանական և իսպանական ներխուժումները Իտալիայում, իտալական մշուս պետութեանների և մանավանդ պապական իշխանութեան հետ ունեցած դժուրութեանները և վերջապես հանրապետութեան ներսում եղած դժուրութեանները՝ ոչ միայն իջեցնում էին վենետիկի արտաքին՝ քաղաքական կարողութունը, այլև սպառնալիքի տակ դնում նրա անկախութեանը: Ռենեսանսին և ռեֆորմացիային հաջորդած ֆեոդալական ռեակցիայի դարաշրջանն էր այս, երբ անտեսապես գահափիժող, սոցիալապես և քաղաքականապես պառակտված և կուլտուրապես նվազած իտալական քաղաքապետութեանները ավար էին դառնում օտար բանակներին:

Բայց, եթե անցել էր խաշակրաց դարը, տակաւին չէին կարկամել նրա գաղափարական վերապրուկները: XVI—XVII դարերում մերթ ընդ մերթ դեռ լսվում էին Սիսնի փրկութեան հին կանչերը: Փոսլո չէ, որ այս անգամ շահագրգռողը ոչ թե Սիսնի նվաճումն էր, այլ արևելյան քրիստոնեաների սարկացումը կաթոլիկ Հռոմին: Հավատաւիշուս քարոզիչները այդ միջոցով կամենում էին ծածկել նշուժական և բարոյական ահափոր այն դեֆիցիտը, որ ունեցել էր պապականութեանը ռեֆորմացիայի հեռանքով: Հասկանշական են այդ պահին Արևելքի հոմնագրական և մշուս եկեղեցիները, ի թիվս որոնց նաև հայ եկեղեցին, հպատակեցնելու ջանքերը, կղութաների կոտորուած աշխատանքը և կրոնական երանդ ստացած քաղաքացիական ավերիչ պատերազմները Գերմանիայում, Ֆրանսիայում և այլուր:

Ռեֆորմացիայի դեմ պայքարելու նպատակով, XVI դարի 30—40-ական թվականներից ի վեր ժամանակ աս ժամանակ բարձրաց-

վում էր «խորրական վասնդի» հավարը կամ արժարժվում «թուրքական լումայի», այսինքն նոր խաչակրաց արշավանքի օգտին դրամ հանդանակելու շուրջը տարվող պրոպագանդ: Խաչակրաց գաղափարների ժամանակավրեպ պրոպագանդը դառնում էր կաթոլիկ օրդենների և հատկապես եզուիտ բարոզչության շրջուն կարգախոսներից մեկը:

Պատմական շարժումը հանդիսավոր ու համաքայլ շրերթ չէ, այլ՝ հակասություններից առաջացող և հակասություններով բեղմնավոր պայքար: Արգարի, Սուլթանշահի, Տերզնցու և սրանց՝ ժամանակաշրջանին պատկանող հայ եկեղեցական գործիչների մեղքը չէր, այլ նրանց դժբախտությունը, որ փնտրելով Հայաստանի ազատագրման հեռանկարները Արևմուտքում գլուխ բարձրացրած ֆեոդալական ուսակցիայի իրադրության մեջ՝ անխուսափելիորեն ընկնում էին կաթոլիկ պրոպագանդի հին ուսուցանք: Սակայն, դժբախտ այդ հանգամանքը չպիտի արգելի մեզ վեր հանելու նաև շարժման պատմականորեն նոր ու պրոգրեսիվ մոմենտները:

Ահմերե է, որ Արգարը և իր գործակիցները մերձավոր կապեր ունեին ոչ միայն հայ եկեղեցական խավերի, այլև հայ խոջայական վերնաշերտի հետ: 1587 թ. Մարտելում Արգարին և Սուլթանշահին գործակցած Հովհաննես Տերզնցին ձեռնարկում է հայերեն Սաղմոսի նոր հրատարակության: Նույն տարում Տերզնցին ավարտում է «Փարիզ և Վիեննա» տարածված պոեմի թարգմանությունը՝ հայ առևտրականներին հասկանալի աշխարհիկ լեզվով: Տերզնցու որդի եվգոկացի Խաչատուր երեցին է պատկանում սրանից ավելի կարևոր մի դորձ՝ «Յարմարեալ պատմութիւն Վանատիկոյ» վերնագրված չափաժոք գրվածքը, որը հեղինակը ավել է Վենետիկի նկարագրությունը «փոքր ի շատէ... ականատես և ոչ ականջալուր լեալ»: Ժողովրդական կենդանի ու գունեղ լեզվով գրված այդ երկի մեջ նկատելի է հեղինակի սուր աչքը և տեսածը նկարագրելու ճարտարությունը, աշխարհիկ ոգին ու երգիծող միաբը<sup>2</sup>: Ի դեպ է ասել, որ Վե-

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 6151, էջ 145ա:

<sup>2</sup> Արանից մի դար առաջ հրատարակելով այդ գործը, Ալիշանը այն վերադրել է եթովպացի Խաչատուր երեցին, որը որպես թե գրել է այդ նկարագրությունը 1652 թվականին: Տե՛ս «Բագմովեպ», Ե, էջ 172—173 և Ա. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 227: Ալիշանը ձեռքի տակ ունեցել է այդ գործի եղծված մի օրինակը, ուր ինչպես գիտել է տակավին Բ. Սարգիսյանը (տե՛ս «Մայր ցուցակ», Ա, էջ 913), «Եվգոկացի» անունը դարձած է եղել «Եթովպացի»: Հայկական ՍՍՌ Մատենագարանում Խաչատուր Եթովպացու անու-

նետիկից զատ, ինչպես ցույց է տալիս այս գրվածքը, Խաչատուր Եվ-  
փոկացին տեսած է եղել նաև Նեապոլը, Մեսինան, Լիվորնոն, Ֆլո-  
րենտիան, Պալերմոն, Ջենովան, ուսկից անցել էր Ֆրանսիա և  
Սպանիա:

Տերզինցուն օժանդակում էին ջուղացեցի մի շարք վաճառական-  
ներ, ինչպես նաև մեկ նախածանոթ Կարապետ Բաղիշեցին՝ մեկը  
ժամանակի աշխարհ տեսած և քաղաքական մտահորիզոն ունեցող  
հայ գրական գեմքերից<sup>1</sup>։ Ինքյան նշանակալից ևն Արգարի և նրա  
գործակիցների կուլտուրական-գրական ջանքերը: Նրանց ժամանակ  
տպագրական մամուլի և աշխարհարար խոսքի միջոցով ընդարձակ-  
վում էր գրական շուկայի շտապիչը: Լբելով վանքի և եկեղեցու  
մթնախորտը՝ զիրքն ու գրագիտությունը սկսում են ընդգրկել աշխար-  
հիկ ընթերցողին, հասարակության վերին ու միջին խավերը, և  
որոշ նախապայմաններ ստեղծում հայերի հետագա ազգային-կուլ-  
տուրական էվոլյուցիայի համար: Արգարից հետո է միայն, որ  
պատռելով դարպասման տեղային կամ երկրային նեղ շրջանակնե-  
րը, հայ ազատագրական շարժումը երևան է բերում տենդենց՝ ստա-  
նալու համազգային ծավալ: Փուլի չէ, որ այդ շարժումը կտրված էր  
բուն ժողովրդից, և կամ որ դա առկալին համազգային շարժում  
խսկ չէր, այլ սոսկ գրա սկար նախընթացը: Նորորակ երևույթ էր  
այս, այնուամենայնիվ, որը, մեր նշած բոլոր անպատահություննե-  
րից անկախ, ուղի էր հարթում գալիքի առաջ:

---

Նով կա նույն երկի մի օրինակ՝ գրված 1708 թ. (տե՛ս ձեռ. № 6451, էջ 165):  
Մինչդեռ կան նույն երկի 1652 թ. ավելի ասոջ գրված և տարբերակցված-  
ներ ունեցող օրինակներ, որ հնգրիակ է նշված Խաչատուր Եվփոկացին  
կամ Քոխատեցին: (Տե՛ս ձեռ. № 1636, գրված 1614 թ., հմմտ. նաև ձեռ-  
№№ 4618 և 5495, երկուսն էլ գրված 1696 թ.):

<sup>1</sup> Հմմտ. Ա ի չ ա ն, Հայ-Վեճեա, էջ 210:



## 2. ՀԱՅՆԵՐԸ ԵՎ ՇԱՆ-ԱՐԲԻՍՈՐԸ

Անդրկովկասի օսման ժամանակ օկուպացումը: Հայերը և Իրանի հակաբարբախան բանավարությունները: Հայերի մասնակցությունը Քարթլիի Սիմոն րազպարի արևմտակալական բանակցություններին: Շան-Արբասի արշավանքները: Հայերի ու վրացիների զայրավարումը:

Շան-Արբասի ներքին բազմակամությունը: Իրանի շահը և հայ խոչանքները: Մեկիսեպ և Գավիր կարողությունների դիմումները պապին: Նոր-Ջաղան և Հոսմը:

*Մինչդեռ Արևմուտքում գործող հայ գիվանազեաները իրենց նամակներով ու հորդորներով, հանդանակներով ու տամարներով, մատուցներով ու անկեկանոցներով նախապատրաստություններ էին տեսնում «Միոնի փրկության» համար, Իրանում կատարվում էին իրադարձություններ, որոնք նոր արհավիրք էին բերում հայ ժողովրդին:*

Շահ Թահմազի մահից հետո իրանական իշխանության և գահաժառանգության շուրջը երկրի ներսում ծայր առածն արյունահեղ կռիվներ, Սրի ածելով մեռած շահի ժառանգներից մի քանիսին և երկրի մարզերն իրար մեջ բաժանելուց հետո, զզրաշ երևելիները դահ բարձրացրին Անֆյան Սուլթան Մահմեդ Խուզարանդային: Վատուժ ու տկարատես մի մարդ էր դա, պալատականների և քոչվոր ցեղապետների ձեռքին խաղալիք դարձած մի վեհապետ, որին վստահել էին շահ Իսմայիլի գահը հենց իր ասլիկարությունը կեղեքելու համար<sup>1</sup>:

Այս ամենից օգուտ քաղեց օսման ժամանակ Մուրադ III-ը՝ Անդրկովկասը և Հարավային Ադրբեջանը գրավելու համար: Ռազմաքաղաքական հանդուզն մի ծրագիր էր այս, որ իրագործում էին թուրքերը ձգտելով աիրանալ Մոսկովյան պետության բնական սահմանագծերին՝ Սև և Կասպից ծովերի եզրերին: Նվաճողական այդ

<sup>1</sup> Հմմտ. «Cheref-Nâmeh», t. II, partite, I, էջ 616 և հտ.:

ծրագրի իրագործումը Թուրքիայի համար այժմեակա՞ն՝ դարձավ մա-  
նավանդ այն պահին, երբ Մոսկովյան պետութեանը միակցվեցին-  
Կազանի և Աստրախանի խանութեանները և երբ ռուս պետութեան-  
ամուր սաք դրեց Հյուսիսային Կովկասում՝ Թերեքի ղետաբերանին։  
Թուրքերին, և ոչ նվազ շահով նաև իրանցիներին, վրդովեցնում էր  
մանավանդ այն հանգամանքը, որ ընդարձակվող Ռուսաստանի-  
հետ ամտեսական և քաղաքական կապեր էին հաստատում Կովկա-  
սի ժողովուրդները՝ հյուսիսում ադիգեյցիներն ու կարարդացիները՝  
նոզաչներն ու դադստանցիները, հարավում՝ վրացիները, հայերն ու  
ադրբեջանցիները։ Արատել ու ոչնչացնել այդ կապերը, պատժել  
կամ ստրկացնել Կովկասի բնիկներին, ճնշել ու կոտորակել նրանց՝  
այս էր թուրք զավթիչների քաղաքականութունը։ Ուշագրավ է, որ  
թուրքական ռազմարշավին ակտիվորեն մասնակցում էին Թուրքիա-  
յից կախում ոճեցող Ղրիմի խանը և Հյուսիսային Կովկասի նրա-  
վասալները։ Եթե Կովկասյան լեռնաշղթայի հարավում թուրքերը  
ձեռք էին կարկառում Երևանին և Թբիլիսիին, Գանձակին և Շամա-  
խուն, Թավրիզին ու Դերբենդին, Ղրիմի և նրա վասալների միջոցով  
ջանում էին ամրանալ Ալդովի ավերին՝ ու Հյուսիսային Կովկասի  
ապիաստաններին և ամուր սաք դնել Աստրախանում։

Արշավանքների սկզբում իրանցիները և վրացիները ռազմական  
գիմադրութուն ցույց տվին Օսման և Լալա փաշաների բանակներին  
և սենեցան նույնիսկ մասնակի հաջողութուններ։ Հաջորդ տարիների  
ընթացքում իրանցիները և վրացիները մի քանի անգամ փորձեցին  
զուրա քշել Անդրկովկասից թուրքերին։ Սակայն ապարդյուն անցան  
այդ փորձերը։

Թվարկելով թուրք զորքանակների մարշրուտները, 1580 թ.  
Իսրայել Երեցը էպիկական գրքով արձանագրում է. «Երեկ ազգի ազ-  
գի պատուհասն, մահն, սովն, գերութիւն։ Երեկ Օսման փաշէն հոռո-  
մացոց, Գամուրղապն էսու ի աշխարհն Շրվանայ և կոտորեաց զը-  
լրլղաշին բազում խան և սուլտանս և արար փախստական։ Երեկ  
ազգ մի կայր, զայտազ կու ասեն, և գերեաց բազում տեղիս՝ Ղա-  
րապաղն, Խաչեն, Վարանդա մինչև Տիզակ։ Երեկ սարգար (Լալա)  
փաշէն Երևան, արար փախստական Մահմատ խանն, էսու Երևան,  
Մաղկունաց ձորն, Լոս, Եղեկաց ձոր, Շարսուր, Գեղազունի, և շի-  
նեաց բերդ մեջ Երևանայ։ Երեկ քորդն էսու Խոյ, Մալմաստ և Նախշ-  
վան։ Գերեցին և թալանեցին, որի հայր զորդի կանչէր, և մայրն  
զգուտորն։ Հայս եղուկ ազգիս հայոց»<sup>1</sup>։

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 4173, էջ 85ա։

Մի այլ ձեռագրում, որ գրվել է 1586 թ. Կարնո երկրի Սալաձոր գյուղում, կարդում ենք. «Առաջին ամն (1578) ելաւ վազիր մի յարեւմտից երկու հարիւր հազար զօրօք, եկաւ դեմ յարեւելս և շինեց բերդն Կարուց, որ կոչի Ղարս: Ել և զնայ էաւ գտունն Շարվանայ... և մտաւ ի Տամուրզափ, շատ աեղ աւերեաց, շատ աեղ բերդ շինեաց, և ևս այնորիկ դարձաւ զօրօքն եկաւ Ղարս: Յետոյ տաբին զերեցին Արեւանայ (=Նրեանայ) յերկիր վացումն հազար այր ու կին և այլ թիւն ոչ զիտենք մեծին և փոքու, մեռածին և կորածին... Ետոյ ելաւ խանթաթար յերկրէն Քաֆայ, և անցաւ ի շեանն Ալրոդայ (=Էլբրուսայ—Ա. Հ.) և մտաւ երկիրն Շարվանայ, շատ աւեր էած, զերեաց: զազգրս հայկազանց, բակեցին ծառն ապրշումի... Ով եզբարք այս Ը (8) ամս և (5) տարապայ յարեւմտից զօրքն զլխաւորօք եկաւ յարեւելելս Շարըհաստեան (Շահաստան—Իրան—Ա. Հ.), շինեցին Արեւանա բերդն և ցրուեցան ազգս, և նուազեաց ամենայն բարի: Յետոյ ելաւ վազիր մի Գ (4) հարիւր հազար զօրօք զնայ յի Թաշվրէժ, շինեաց բերդ, շատ ազմուռք (sic) եղաւ, յետոյ վազիրն մեռաւ. հենց ջարդ եղաւ Գ (3) աւուրն, որ զարիւն լաշն կու տանէր»<sup>1</sup>:

Մեզ նախածանոթ թուրք պատմագիր Փեչեխն ընդարձակ էջեր է հատկացրել զավթիչների ավերածությունները նկարագրելու համար: Երեւանի առմանը զտոնալով, նա հազօրդում է, թե օսմանյան զորքերը հարձակվում էին քաղաքի վրա գոշելով. «Թող Երեւանի Թոքմար խանը (խոսքն Մահմեդ Թոխամախ խանի մասին է, որի անունը մեր օրերին է հասցրել մեր մայրաքաղաքի հանրածանոթ «Թոխամախան լիճ»-ը—Ա. Հ.), որը կողոպտում է ձիարած աղաներին և բանակի բեռնատարներին՝ աեսնի, թե «ուրբան լավ է կողոպուտը»: «Այսպես ասելով,—հազօրդում է Փեչեխն—նրանք սկսեցին կողոպտել և թալանել Երեւան քաղաքն ու երկիրը: Երա (Երեւանի) բուլտր ոսկեղօծ և գեղեցիկ կառուցված պալատները ավերվեցին և գետնին հավասարվեցին, զեղազարդ, օսկեփայլ կամարներն ու ծածկերը (չարդախներ) խորտակվեցին և 20 հազարից ավելի կանանց ու երեխաների զերի տարան: Դրանից հետո իսլամական բանակը մեծ ավարով և ուրախ՝ կայսերական բանակատեղը հասավ»<sup>2</sup>:

Գերիների ու զոհվածների թիվը ավելի մեծ էր, քան կարելի է եզրակացնել այս առղերից:

XVI դարում գրված մի ձեռագրի պահպանակի վրա ժամանա-

<sup>1</sup> Բ. Ս ա Ր Ղ ի ս յ ա ն, Մայր ցուցակ, Ա, էջ 667:

<sup>2</sup> «Թարիխի Փեչեխի», նույն տեղում, էջ 63 և հտ.:

կակից հիշատակագրողը նշում է. «Ի Բվին Ռիէ (1578) Հոսմէցին սաֆար արաւ ի Սոֆուն (ձեռագրում «ի Սովուն») վրայ և երեֆանա կոմ (60,000) գերի առին հայ ազգ, թող կոտորածն»<sup>1</sup>: Անանուն Սեբաստացու վկայութեան համաձայն 1579 թ. տաճիկները «զՅերևան քաղաք գերեցին 18 զեզով և ցրեցին զկինս, աղայ յամենայն աշխարհ»<sup>2</sup>: Ժամանակակից Բարսեղ Վարագեցին նշում է. «Երևանայ աշխարհի քաղաքն և երկիրն, և ամենայն շուրջազայ զաւառքն և ամենայն աշխարհս քրիստոնէից ի յանօրէն ազգացն պարսից և իսմայելացոց սրբաջինջ եղև»<sup>3</sup>:

Չափական տոգերով ումն Հովհաննես ողբում է Երևանի 1579 թ. անկումը.

Յանկարծ տեսին յեղին՝ հասեալ  
Շուրջ ու բոյր գրազար պատեալ,  
Մեծ և սզափկ զամէն կալեալ,  
Լալոս աշօք գերի տարան.

Ոմանք կալեալ թէ սպանէին,  
Մալ և քուզակ հարցանէին.  
Շատ սր խիզանց նըշան տալին,  
Լալով ողբով գերի տարին:

Վայ տանք երկրին Արարատեան,  
Մայրարաղաքն ի յԵրևան,  
Եւ զեղանուն ամենեքեան,  
Չեան այլազկեաց գերի անկան...<sup>5</sup>:

1579 թ. Նախիջևանի և այլ գավառների հայ գերիների թիվը մի հիշատակարանում նշված է ավելի քան «զքառասուն հազար»<sup>6</sup>:

Նկարագրելով 1584 թվականին երեք հարյուր հազարանոց բանակով Պահրատ փառաշի Երևանի վրա գործած հարձակումը՝ Բասենի Ծառս զյուզում մի գրիչ գանդատովում էր, թե Երևանի բերդը կա-

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՍՍԻ Մատենագարան, ձեռ. № 6272: Այստեղ տրված է նույն թիվը, որ հանդիպեցինք նաև 1586 թ. մեր բերած հիշատակարանում:

<sup>2</sup> «Մանր ժամանակագրութուններ», 1, էջ 172:

<sup>3</sup> «Դիվան հայոց պատմութեան», X, էջ 36:

<sup>4</sup> Կարծում ենք, Դարարազի բարբառում հանդիպող, «յազի» (հին ուղղագրութեամբ՝ «եազի») բառն է այս, որ նշանակում է չար, հափշտակող, զավթող:

<sup>5</sup> Ալիշան, Այբբուստ, էջ 300 և հտ.:

<sup>6</sup> Կարապետ Եսիսկոպոս, {Տեր Մկրտչյան}, Նյութեր հայ մելիքութեան մասին, էջմիածին, 1914, էջ 187:

ուսցելու համար «բազում եկեղեցիք, խաչ և տապանք քակեցին, և քարն ի բերդն տարան, քրիստոնէից ազգս ամէն թալանուեցաւ, որ առաջ քան հասանել փաշային ի քաղաքն Երևան, թաջալ ազգն արձակեց ի վերայ քրիստոնէից ազգիս, որպէս գայլք ի վերայ ոչխարաց՝ քշեցին տարան մինչև Գանձայ ի Կեա իւրեանցն և անդ թալանեցին, բազումս սպանին և բազումս զերեցին: Եւ ես անարժան զծողս անդ թալանած, փախտտական եկի և զրեցի սուրբ Աւետարանս»<sup>1</sup>:

Չեռագիր մի հիշատակարանում, գրված 1584 թ. Կարինում, միայն հենց Երվանդը գրավելու տարում հայ գերիների թիվը հաշված է 72 հազար, իսկ հաջորդ տարում «Արարատյան զավառից» տարվածներինը 60 հազար: «Եւ ելև սով սաստիկ և նուազեցաւ գիւղում(ան)ս: Եւ յեռս եկաւ անիծած ազգն ջիղախ Երևան բերդ շինեցին, եկեղեցիքն քակեցին շատ օծած խաչ ջարդեցին», հարում է գրիչը<sup>2</sup>: Ժամանակակիցները տասնյակ և նույնիսկ հարյուր հազարներով էին հաշվում եգիպտոսում վաճառքի հանված հայ գերիների թիվը<sup>3</sup>: Միայն հենց Ղրիմի սուլթան Մուհամեդ Գիրեյը, խուժելով Գանջա, Բարդա և Ղարաբաղ՝ պիտի որ մոտ 106 հազար մուսուլման ազա և ազջիկ գերեվարած լինի Կաֆա<sup>4</sup>: Հայաստանի և Անդրկովկասի քրիստոնյա և մուսուլման բնակչության աղետալի կացութեան մասին կան նաև այլ վկայություններ: Այսպես, 1590 թվականին Մոսկում գրված մի հիշատակարանում Սարգիս երեցը արձանագրում էր. «Եւ այս Գ(Կ) ամ է որ Շահաստան, որ է Թավրէզ, փ ձեռս տաճկաց է, որ եւս ուսումայ ազգ, հալածեցին զկարմիր զլուխն ի յԱրեւելս: Եւ բազում ոճիրս նոցա սվ կարէ ընդ գրով արկանել, թէ քանի քաղաքս աւերեցին և քանի բերդանման շէնք քակեցին և քանի գերիք հայ և տաճիկ ի Յունաց աշխարհն հատուցին»<sup>5</sup>: Պատերազմի արհավիրքներին սուղեկցում էին սովն ու համաճարակը: Այն, ինչ մտապարծ էր եղած սրածուխունից, գերեվարությունից կամ համաճարակից, գրվեց ծանր հարկերի ու տուգանքների տակ:

Սուլթան Մուրադի ստղծարշավը հատկաճշական էր XVI դարի երկրորդ կեսից իր «լճացման շրջանը» թեակրխած Օսմանյան կայսերապետության համար: Արշունտա իր անցյալի այս տարիներին,

<sup>1</sup> «Էջմիածին», 1950, XI—XII, էջ 87:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 9223, պատասխի 27:

<sup>3</sup> Ա. Լիշան, Հայագաղտում, էջ 599, Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ, Ա, էջ 667, և Ե. Լալայան, Յուդակ ձեռ. վաստ., էջ 9 և հա.:

<sup>4</sup> „Cheref-Námeh“, t II, partie I, էջ 605:

<sup>5</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 5793, էջ 307 ա, բ:

Թուրքիան թեակոխում էր ճգնաժամի այն շրջանը, որ անխուսափելի վաշտեջբի վիճ էր բացում սուլեյմանների ու սելիմների գոռու բռնատիրության առաջ: Թուրք պետության մեջ սկսվող այս շրջադարձը խորաթափանց հայացքով դիտել էր ուռն պետական Նաշշյուկինը տակավին 1592 թ.: «Թուրքիայում հիմա ամեն ինչ փոխվել է, — գեկուցում էր նա իր կառավարությանը, — սուլթանը և փաշաները տարված են միայն ընչաքաղցությամբ. առաջինը հարստացնում է գանձարանը, բայց թե ի՞նչի համար՝ հայտնի չէ. ոսկին թաքցնում է սունդուկներում և ոտձիկ չի վճարում զորքին, որը սոսկալի խառվք բարձրացնելով մոռանում էր արքունիքին, պահանջելով դեփտերգարի կամ գանձարանապետի զուլբը: Պետության մեջ ոչ կարգ կա, ոչ արդարադատություն: Սուլթանը կողոպտում է պաշտոնյաներին, պաշտոնյաները՝ ժողովրդին և ամենաբարձր թալան ու սպանություններ. չկա անվտանգություն ոչ ճանապարհների վրա՝ ուղևորների համար և ոչ էլ առևտրի մեջ՝ վաճառականների համար. երկիրը ամաշայցած է Պարսկաստանի հետ մղած պատերազմի և բռնությունների հետևանքով...»<sup>1</sup>:

Օսմանցիների անշափորեն ուռձացած և հզվացած պետությունը հսկայական ծախսեր պիտի կատարեր արքունիքի, բանակի և փաշայական վարչության պետքերը գահացնելու համար: Գանձարանի թերացումը սպառնում էր ենիչերիների, վարձու սիպահիների և շարքային սակարների բնորոտացումով: Տրտնջացող այս բաղմունքանը գահացնելու գյուլբին միջոցը համարվեց մի կողմից հզատակների ապերասան կեղեքումը, մյուս կողմից՝ հարեան երկրների ավարառումը, նրանց տուգանման, հարկման, բնակիչների մասսայական գերեվարման և վաճառման ճանապարհով:

Հավթելով Անդրկովկասը՝ թուրքերը դնում էին իրենց թաթր երկրի այն հարստությունների վրա, որնայ կարիքն այս ժամանակ ամենից շատ զգում էր միջազգային շուկան: XVII դարի սկզբներին իր ուղեգրության մեջ անգլիացի Քարտրայար վկայում էր, որ միայն հենց Եփրվանից նրանք տարեկան 500, իսկ երբեմն նույնիսկ 1000 ուղաարեւ մեռաքս-հումուլթ էին հանում Հալեպ<sup>2</sup>: 1567, 1574 թթ. և հետագայում արեհյան վաճառականների համար իջեցնելով մարաշին նորմաները՝ Կենեսիկի հանրապետությունը հաջորդ

<sup>1</sup> Н. М. Карамзин, История Государства Российского, СПб, 1824, т. X, էջ 175 և հա.:

<sup>2</sup> John Cartwright, Voyage from Aleppo in Hispahan and back again, տե՛ս „Hakluytus Posthumus or Purchase his Pilgrimes“, vol. VIII, Glasgow, 1905, էջ 501:

1590—1613 թվականների ընթացքում հասցրեց Հալեպ մուծվող մետաքսը 24 հազար բևան<sup>1</sup>, Կարճ մի ժամանակամիջոցում լքնդարձակվեց մասնավորապես Թուրքիայի հայ, հուլն և Դրեա մեծավաճառ խոջանների առևտուրը: Զալալիների ապստամբությունների նախօրեին հայրենի իր քաղաքի մասին Ստեփանոս Թոխասեցին գրում էր.

Վաճառականը, ճանապարհորդը  
Գնալին Շիրվանի և Շամախի,  
Շամ և Հալապ և Յրասամալի  
Պուտսալ և այլ քաղում տեղի:

կամ՝

Շուկայն բարով ի լի,  
Վայ ինձ որ ես տնախ ելի,  
Վաճառականաց էր նա տեղի,  
Ի շորս կողմանց գային յայտնի,  
Մախվեր բռնով ապուրչումնի  
Նւ այլ գինչ որ բռնով լինի<sup>2</sup>:

Սակայն ֆեոդալ ավարատոճների հետ միասեղ ուռճացող մեծատունների հակադիր վիճակումն էին Թուրքիայի հպատակները և սրանց թվում նաև հայազգի աշան: Հինց այս ժամանակներում էլ ամբողջ պետություն մեջ հասունանում էին այն հակասությունները, որոնք XVI դարի նախաշեմքին ծայր տվեցին ջալալիների ապստամբություններին:

Թուրքերը պարզապես կողոպտում էին Շիրվանի, Արեշի, Գանձակի և Վրաստանի սարկություն վիճակի հասած մետաքսարտադրող գեղջուկներին: Զուր շէր գրում այս պահին Ա. Դափրիժեցին նրանց մասին, թե «ծանր հարկապահանջութեամբ և կեղեքմամբ զրկէին և կողոպտէին, և հաւատոց կռուեծութիւն (=խառութիւն) առնին, և այլ բազում տառապանօք շարշարէին, ոչ միայն զազգս Հայոց այլև զազգն Վրաց և զՄահմեդականաց»<sup>3</sup>:

Լանկ-Թամուրի օրերից ի վեր այսքան տնավերություն և ցնցոտիներ, քաղց ու կարիք, մարակ ու հալածանք, դիակ ու արցունք չէին տեսել, հիրավի, Հայաստանի և Անդրկովկասի ժողովուրդները: Նվ հատկանշական է, երբ այս միջոցին գրի առնված անանոճն Սեբաստացու ժամանակագրությունը սկսվում է սիմֆոլիկ մի նկարով: Պատկերված է զալարվող մի օձ, որի մարմնի զանա-

<sup>1</sup> Հմմտ. Ա. Լիշան, Հայ-Վենեսա, էջ 431:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 2672, էջ 101բ և 402բ:

<sup>3</sup> Ա. Դափրիժեցի, նույն տեղում, էջ 15:

զան մասերից դուրս են ցցվում բազմաճիրաճ վիշապի դրոխներ, ամեն մեկը պսակված սուլթանների մեկի անունով, սկսած իշխող ղիմաստիայի հիմնադիր Օսմանից և վերջացած անհուն հեղինակի ժամանակ մտր գահ բարձրացած սուլթան Մուհամեդ III-ով (1595—1603)<sup>1</sup>: Դժվար էր ավելի ցցուն ու զիպուկ պատկերել Օսմանի և նրա հաջորդների պետությունը:

Միայն Անդրկովկասի ժողովուրդները չէ, որ զգում էին նոր ռեժիմի զաժանությունը: Կան Արևմտյան Հայաստանի հայաբնակ վիլայեթներում զրի առնված բազմաթիվ տպագիր և անտիպ հիշատակարաններ, սրտնք վկայում են, որ բռնությունները, հարբատահարումներն ու զրկանքները պակաս չէին նաև այդ վայրերում:

Քրիստոնյա հպատակների նվաստացումով վերակենդանացանում էին հարբանդա խանի օրերը:

Մեծ բռնատրն Խոնդրար անուն  
Գրխուս Կրեա մեզ կրնդովին  
Այն դուզնարայ սակա շորոյն,  
Արժան շարար գճոս յաշէյոյն

զրում էր 1585 թ. Սիմեոն Ապարանցի<sup>2</sup> Ապարանցու ակնարկը վերաբերում է հայերի և հրեաների մասին սուլթան Մուրադի հրամանով սահմանված խտրականությանը: 1580 թ. հայ և հրեա աղամարդկանց արգելվում էր սպիտակ փակեղ կրելը: Սպիտակ փակեղի փոխարեն նրանց հարկադրում էին զնիկ սև զգակ<sup>3</sup>: Մի բանի տարի անց, Սուլթան Մուհամեդի օրոք, հրաման եղավ վերացնել այդ կարգադրությունը: Սակայն նոր հրամանը հանդիպում է մահմեդական տիրող խավերի դիմադրության և զուտ գալիս կաշտակերություն գնով: Հետաքրքրական է, որ մի դեպքում փակեղի վերահաստատումը սեղի շունեցավ «չանմխարամութենէ քրիստոնէից»<sup>3</sup>:

1585 թ. նկարագրելով Ռավրիզի առումը՝ Ապարանցին հավասարապես դժգոհում էր թե՛ օսմանցիներից, թե՛ զզրաշներից.

Քաղմահմուտ Ղրղրյ թանրուն  
Ընդդեմ սրա եղև նրկուն  
Այնպևս փախևաւ ի յօսմանէ,  
Ձինչ յատիւմէ գունդն աղուսուն...

<sup>1</sup> Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», V, էջ 165:

<sup>2</sup> Հմմտ. Ավետիք Տիգրանակերացու ժամանակագրությունը, «Մանր ժամանակագրություններ», VI, էջ 516:

<sup>3</sup> Ն ո ր ա յ ր Պ ո գ ա ր յ ա ն, Մայր ցուցակ ձևագրաց սրբոց Յակոբեանց, III, էջ 50:



Հեղինակն այնուամենայնիվ շուտահաս չէ.

Սառն հալի աստ երգոց երգոյն,  
Քաղցրիկ հինչէ ձայն տատարկուն,  
Մարդիկ միմեանց տան աւետիբ,  
Ասեն եկաւ մեզ նոր դարուն՝:

Ազարանցին պատկանում է այն մարդկանց թվին, որոնք ողբում էին Տրդատի թախտը և երազում Արշակունյաց փառքի վերականգնման մասին. ինքն իսկ գրում է, թե առանց պատվորության չէ վերհիշում հայ թագավորների և գործականների բաջությունները: 1596 թ. Բելլու գյուղում (Վանի մոտ) գրված մի հիշատակաբանում կարգում ենք.

«Ով մանկունք սուրբ եկեղեցւոյ՝ իմացեր թէ ինչպիսի շրջեցաւ աշխարհս. վերին ի ներքին և ներքի ի վերին. էնց գուլում ձգեց մահմեկական թաղութրն ի յաշխարհս, ժԹԹ (12 հազար) տուն հայ և առճիկ ի Գուռճին մասս վասն գուլումին. խարաճն քսան շահի առին. բաթագաթի գրամ, սալամճյաղի, թթթամալի գրամ, ձիու աչեղ կախելու և այլ ազգի պատուհաս ձգեցին ի վերս աշխարհիս... և չեա սորա բարկացաւ աստուած և ձգեց զխաշենց մահն և կոտորեաց զեղեանք և խաշինքն և յօր Ծ (50) և Խ (40) մեռանէր»<sup>2</sup>:

Պիտի կարծել, որ այլեայլ սուրբերի շարքում այս ժամանակ գարկ էր ստացել սողմական կոտորությունը: Արդեն նշել ենք Ջրաբերդի այն հիշատակարանը, որ ասված է, թե արշավանքների ժամանակ օսմանյան հեծչալներին ուղեկցում էին նրանց սպասարկող ճորտերն ու բեանակիրները: Սակայն շմոտանանք նաև օսմանյան բերդաշինությունների հետ կապված տոհարկի աշխատանքները: 1566 թվականին գրված մի հիշատակարանում կարդում ենք, թե՛ «չայսմ ամի շինեցաւ պարիսպն Արճիշոյ քաղաքին, և Վան քաղաքին տէր որ ասի Հիւսէյին փաշայ հուրմ արար ի վերայ բազում քաղաքաց և գիւղօրէից. և ժողովեաց բազում մարդիկ հայ և քուրդ, տաճիկ և ասորի, և շինեաց զպարիսպ քաղաքին՝ ի տարի և կէս թամամեցին»<sup>3</sup>: 1548 թ. գրված մի հիշատակարանում կարդում ենք դարձյալ՝ «չայսմ ամի որ գնաց Վարհատ (=Ֆարհատ)

<sup>1</sup> Սիմեոն վարդ. Ազարանցւոյ վիպասանութիւն, 1870, Վերջոտ, էջ 158 և 160:

<sup>2</sup> Հայկական ՍՍԹ Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 307ա և 5ա.4

<sup>3</sup> Նույն տեղում, ձեռ. № 4470, էջ 406ա:

իհաշան յՅրևան և զբերթ շինեաց և այլ բերդունս»<sup>1</sup>: Մի այլ հիշատակարանից, գրված 1606 թ., աեղեկանում ենք, որ գրավելով Երևանը, օսմանցիները «շինեցին ամուր բերդ և բազում բերդս ի Տփխիս, ի Գաւրի, և ի Թումանիս, և Թավրէզ և ի Գանջայ, ի Շամախի, և այլ տեղիս բազումքս, որ Լխուով Ին (25 բերդ): Տիրեցին բոլոր աշխարհիս ի Կարսայ մինչև ի Դուան Ալանաց, ի Ախալցխայ մինչև ի Թավրէզ Ի (20) ամ»<sup>2</sup>:

Թուրքերի դաժանությունները մոռացնել էին տալիս իրանական տիրապետողներից ճաշակած դառնությունները: Այսպես. Ջաբարիա Սարկավազը արձանագրում է այն հիշողությունները, որ ավանդում էին Թահմազ շահի մասին: Նրա տակով կարավանային առևտրի կայաններում այդ շահը ջրհորներ էր փորում և պանդուկներ կառուցում: Պատմագիրն ընդդժում է շահի իրավարարությունը, դոզերի, ավազակների և պանդուկատների գեմ նրա հանած հալածանքը: Հասկապես շեշավում են նրա օրոք քաղաքներում սկսված շինարարությունները և քաղաքային կենցաղի կարգավորումը: «Նուզդեհայ գամենայն կարգս քաղաքական, դմոթս, վկապիճս, զչամի ու կշիռս և գամենայն արուեստաւորս, զկրպակս, զպանդուկս և արյալ ինչ բաղաքի լինի առևտուր, ի դնել և ի վաճառել և զանուզիղան կորուսանէր մահուամբ: Եւ ոչ որ կարէր թիրել, զի շարամահ առնէին»<sup>3</sup>:

Այս հիշողությունները ճիշտ պատկերացում չեն տալիս շահ Թահմազի ժամանակաշրջանի մասին: Նվթոպացի մի սուլթանիցի. Մինանդուջի գե Ռովիդուջի հաշվով այդ շահի տարեկան եկամուտը, որ սկզբնապես հասնում էր 4—5 միլիոն ոսկու, հետզհետե բարձրացել էր 8 միլիոնի: Սակայն շահի եկամուտը այդ բարձրության վրա չմնաց՝ բանի որ այն ի վերջո 3 միլիոն ոսկուց ավելի չէր, փակ ավելի ուշ, նուղաբանդայի ժամանակ, երբ երկրի մի մասը անցել էր Թուրքերի ձեռքը, շահը 2 միլիոնից ավելի եկամտա չուներ<sup>4</sup>:

Շահ Թահմազի վերջին տարիների վարչական ապարատի վիճակն այնպիսին էր, որ, ինչպես վկայում էր «Շարաֆ-Նամեի» հեղինակը, Ազրբեջանում, Շիրվանում և Առանում (Գանջայում և Ղարաբաղում) մոտ 7—9 տարի չէին կարողանում գանձել պետու-

<sup>1</sup> Ս. Տեր-Ավետիսյան, Նոր-Ջուղայի հայերեն ձեռագրերի նկարագրություն, էջ 293:

<sup>2</sup> Եռյն տեղում, էջ 152: Հմմտ. Ղ. Ալիշան, Այբարատ, էջ 301, ծան.:

<sup>3</sup> Ջաբարիա Սարկավազ, 1, էջ 10 և հաս.:

<sup>4</sup> V. Minor s k v. Tadhkirat al-muluk, a manual of Safavid administration, London, 1943, էջ 178:

Բլան չասանելիք «մալ ու խարաչը»<sup>1</sup>: Շահը նպատակահարմար  
 գտավ բացազրկել անվճարունակ հպատակների հարկերը: Նրան  
 ժամանակամերձ Հովհաննես Ծարեցին պատմում էր, թե ծերունի-  
 ների ասելով շահը 15 տարվա հարկը առ է առևալ ի յերկրէ իւրմէ:  
 Այլ գլխա՞ վաճառականաց և զմաքս որ վասն իւր փ գանձի իւրում  
 ժողովեալ լինէր, երարձ յաշխարհէ տէրութեանն յարոյ՞<sup>2</sup>: Ծարեցու  
 վկայությունը ուղերածի վերացման մասին՝ հավաստում է նաև  
 Իսկանդեր Մունշի պատմիչը իր «Թարիխե Ալամ արայե Աբրասի»  
 աշխատության մեջ: Թվարկելով Թահմազի արած զիջումները՝  
 Մունշին նշում է ճանապարհների դամբալի (ուղեհարկերի) վերա-  
 ցումը. այդ մի տուրք էր, ասում է նա, որ գանձվում էր հարուստ  
 վաճառականներից և երթևեկողներից և յուրաքանչյուր տարի հաս-  
 նում 30 հազար իրաքյան թումանի: Հիջրիի 972 թվականին  
 (=մ. թ. 1564 թ.) այդ հարկը զիջվեց հողուտ վաճառականների և  
 երևելիների, և դամբալիները վերացվեցին երկրից: Շահը թեթևաց-  
 րեց նաև ռայաթի հարկերը—արհեստավորներից ու խաշնարա-  
 ներից գանձվող տուրքերը—հատկապես շիաների մհալներում<sup>3</sup>:  
 Ուղեհարկերի վերացման մասին հաղորդում է նաև Վենետիկի դես-  
 պան դ'Ալիսանդրին<sup>4</sup>: 1571 թվականին գրի առնված փաստալի-  
 իր անդեկազրում, վկայելով Թավրիզի տառարի անկումը՝ նա գրում  
 է. «Քաղաքը վաճառաշահ է, որովհետև այնտեղ են հավաքվում  
 թագավորության բոլոր մասերից սպարանքներն ու կարավաննե-  
 րը, բայց փր առևտուրը շատ վնասված է պատերազմից: Ինչ-  
 պես, օրինակ, անցյալում մետաքսի երկու (հակը) արժեք ավելի  
 քան 400 սեկուին (sequin)=12 ֆրանկ ոսկի) և այժմ արժե  
 միայն 200: Ասպրանքը, որ գալիս է Հորմուզի ճանապարհով,  
 (հիմա) ոչ ոք չի զբաղվում նրանով, որովհետև այն ճանա-  
 պարհով, որ կար Հալեպից, այժմ ոչ մի երթևեկութուն չկա:  
 Տակավին բերում են ցամաքով Կ. Պոլսից և այնտեղից  
 Բուզղանիա (Մուղավիա), ցրվելով Լեհաստանի միջից Դանիա-  
 Շվեդիա և ուրիշ տեղեր, բայց ծախսերն այնքան խոշոր են, որ  
 շահը շատ քիչ է, հակառակ աչքն առնված վասնզի, ինչպես պատ-  
 մեցին ինձ մի քանի հայեր, որոնց ես հանդիպեցի Թավրիզում և

<sup>1</sup> „Cheref-Nâmel“, t. II, partie, I, էջ 642:

<sup>2</sup> Ա. Ա. Ն. ե. յ, Հաւարմունք ի զրոց պատմադրաց, հավելվածներ, էջ 186:

<sup>3</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, պարսիկերեն ձեռագրեր, № 11, էջ 120ա: Այս տեղեկանքը ստացանք իրանագետ Հակոբ Փափազյանից:

<sup>4</sup> «Ուղեգրություններ», 1, 340:



մելիք Հայկազի անուանները և, բացի դրանից, Դիզակի շարս գյուղեր և Ազուլիսի Դաշա կոչված գյուղի «երեք մասը»: «Նւ պատճառ զնալոյ արցա առ շահն այս էր, — շեշտում է նորից պատմագիրը, — զի հաւաստեալ և ստույգ գիտէին, թէ շահն պատրաստեալ է գալ յաշխարհս Հայոց... Նւ է պատճառ զիզակեցուց և գաշտեցուց զընալն՝ ծանր հարկապահանջութիւնն, կեղեքելն և կողոպտելն և կռուճութիւն առնելն և սնխնայ սպանանելն զբրիտանեալան»<sup>1</sup>:

Դավրիժեցու պատմութեան զբրից հանրածանոթ է, թե ինչպիսի խանդավառութեամբ զիմաստութեան Շահ-Աբբասին Զուլայի հայ խոջաներն ու եկեղեցուկանները: Միջազգային առևտրական ուղիների հետ կապված ջուլայեցիների և ազուլիսցիների վարքագիծը հասկանալի կդառնա, եթե նկատի առնենք, որ թուրք սկուպացիայից առաջ Զուլան, Ազուլիսը, ինչպես և նրանց հարևան Մեզրի, Շոտթ, Աստապատ և Լեհրամ գյուղերն ու ավանները իբրև «խաս» էանաչված վայրեր, վայելում էին մի շարք արտոնութեաններ: Մասնավորապես Զուլան շարաշար տուժել էր թուրքերի ժամանակ: 1584 թ. «ի տանուտիրութեան Զուլայոց Մալա Պեարոսին» գրված մի հիշատակարանում ասված է. «Խիստ դառն ժամանակ էր. Զուլայ վախել էր յԱկուլիս»<sup>2</sup>:

Շահ-Աբբասի միջամտությունը խնդրոյ հայ և վրաց ֆեոդալների համար արդշ նշանակություն սններ թերևս այն հանդամանքը, որ նրա կանանցից մեկը վրաց Սիմոն թագավորի ազգիկն էր, կամ որ նրա բանակը զլիսավորում են քրիստոնյաներ ու զեպի քրիստոնյաները լավ արամադրված մարզիկ, ինչպես օրինակ՝ իրանական բանակի զորավար Ալահվերդի խանը<sup>3</sup>: Ներկա զեպում խիստ ուշադրով է սահայն հայ և վրաց քաղաքական ուղիների զուգադիպությունը, և ավելին՝ հայերի և վրացիների համագործակցությունը:

1555 թ. թուրք-իրանական զինազաղարից հետո, Քարթլին, Կախեթը, Շիրվանը, Ղարաբաղը և Արարատյան երկիրը ընկան Իրանի, իսկ Իմերեթը, Սամցխեան, Կարսի և Արդահան-Արդվինի կողմերը՝ Թուրքիայի արապեալության առկ: Նրը ի վերջո թուրքերը սկսեցին ավարի ենթարկել ամբողջ Անդրկովկասը, Իրանի օժանդակության հույսով Քարթլիի Սիմոն թագավորը (1558—1600),

<sup>1</sup> Ա. Մ. Դավրիժեցի, նույն տեղում, էջ 15 և հո.:

<sup>2</sup> Ս. Տեր-Ավետիսյան, նույն տեղում, էջ 190:

<sup>3</sup> „A Chronicle of the Carmelites in Persia“, and the Papal Mission of the XVII and XVIII centuries, London, 1939, vol. I. էջ 73 և 159:

Երևանի Մահամադի Խան Քոխմախի և Գանջալի Իմամ Դուլի խանի հետ միացած, գիճական դիմադրություն ցույց տվեց նրանց<sup>1</sup>։

Այլ կասակցությունը նշելիք փաստերից պարզվում է այն փաստը, որ Անդրկովկասի օկուպացման շրջանում հայերը և ադրբեջանցիները մասսայաբար ապավինում էին Քարթլի կամ Կախեթ, ազատաձուլ համարելով այդ շրջանները թուրք նեղիչների դեմ։ Մասնավորապես վրաց իշխողների կողմից հայ մեծատուններին ցույց տված հովանավորությունն նկատի ունեն հետադաշում Հակոբ Զուղալեցի կաթողիկոսը, երբ, խոսելով Լուարսաբ II թագավորի (1606—1615) մասին, գրում էր, թե «էր սա յառաջ ածող բազում նախնի մեծատանց, որ ի տնանկութեան էին դրաւեալ. մահաւանդ սիրող և խնամող ազգիս Հայոց և որք ընդ իշխանութեամբ նորա էին հովանաւորեալ»<sup>2</sup>։

Հայերը դործոն մասնակցություն էին ցույց տալիս թուրքերի դեմ վրաց թագավորների մղած ազատագրական պատերազմներին։ Հայ իշխող տարրերը կողմնակի գիտողների գերում չէին մնում։ Հաճախ անմիջական շփումներ ունենալով արեմտասկրսպական երկրների կամ սրանց արևելյան ներկայացուցիչների՝ միսիոներներին ու դեսպաններին հետ՝ հայ վաճառականները և երբեմն նաև նրանց կարավաններն ուղեկցող հայ եկեղեցականները ջանում էին ձեռք առնել միջոցներ, սրպեսդի տեսիլների և գուշակությունների խոստացած ֆրանկ «ազատարարները» հայտնվելին Անդրկովկասի քաղաքական նախարեմի վրա։

Այս ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները ցույց էին տալիս նորից ոչ միայն ազատագրական լեզենդի կապը հայկական բանակցությունների հետ, այլև վերջիններիս կապը միսիոներների լեանտյան դործունեության հետ։

1578 թ. Սիմոնն ուղղում է պապին մի նամակ. ուր խոսելով ամբողջ Վրաստանի անտունից, հայտնվում է որպես թուրքիայի և Իրանի հակառակորդ։ Խոսելով Վրաստանի ազատագրման համար թուրքերի դեմ իր մղած ապարդյուն կռիվների մասին՝ նա խնդրում է Հոմի օգնությունը բրիտանյա ժողովուրդներին. «Վրկեցեր նրանց, և թող ասաված դրա փոխարեն ձեզ երկնալին թագավորութուն պարզելի»,— գրում է նա<sup>3</sup>։ Զուգադիպությունը Քաղեսոս կաթո-

<sup>1</sup> „Chérei-Nâmeh“, t. II, part. I, էջ 618 և հա. և 657, և Brosset, Hist. de la Géorgie, t. II, liv. I, էջ 28 և հա. 152, 318, 447 և հա.։

<sup>2</sup> «Կաթվածագրեր», էջ 159։

<sup>3</sup> I amaratı, նույն տեղում, էջ 170։

զիկոսի առաքելության և Քարթլիի Սիմոն թագավորի վարքագծի մեջ ակնբախ է այս փաստից:

Նորերս հրապարակվեց մի վավերագիր, որ ավելի ակներև է դարձնում հայ և վրաց զեկավար շրջանների բազարական գծի դուրսագրությունը նաև Ռադեսոս կաթողիկոսից հետո: 1596 թ. օգոստոսի 14-ին Ռիֆլիսից Սիմոն թագավորն ուղղում է Սպանիայի Ֆելիպ II (1555—1598) թագավորին աշխարհարարով գրած մի թուղթ, որ կարդում ենք. «Այսքան ժամանակ թուրքի հետն ի մէջ նեղութեան կայեաք. այս ժամանակիս կու հայեաք թէ քրիստոնէից ի թագաւորութիւն ի սոր կլանէ և շարժի. հրմի մեծ գոհութիւն և փառք անմահ թագաւորին Յիսուսի Քրիստոսի, որ ետ զսրութիւն և հօր կարողութիւն քին մեծ թագաւորութեան իշխանութեանդ և քոյին սիրելի մաշխոզադ շեղար ինփեռատուրին որ գմեղ մեծարեց և ողարկեց մեզ թուղթ ու զիր սիրոյ միարանութեան, վասն յամենայն հաւատացելոց ի Քրիստոս, որ զայս աշխարհ և թշնամի հաւատոց զթուրք ազգս ի միջոյ վերացելոյ. նայ ես, Սիմէոն խանս Կուրճիստանու, Ալեքսանդր խան Լուանդիսոյ<sup>1</sup>. շահ Աբաս փերսիանին, Երեքանքս միարանեցար, և խորհուրդ և թատալիր արարք, որ մենք ալ հիմակուց ի վեր առաջ գանք և զթուրքին զլուխն կտտրեմք և զսուրբ յերուսաղէմ և զքրիստոնէակոյքն ի թուրքի ձեռաց ազատենք»: Նամակի շարունակութեան մեջ Սիմոնը կրկին շեշտում է, որ դերմանական կայսրն է եզել, «որ առաջն մեզի թուղթ և խաւք ողարկեց. և զմեզ ի սոսից վերա կանդուց վասն քրիստոնէից համար»:

Այնուամենայնիվ նամակագիրը վստահ չէ, թե կայսրը (Ռուդոլֆ II-ի մասին է խոսքը—Ա. Հ.) հաստատ պիտի մնա իր խոսքին և առաջին պատեհ դեպքում՝ Երեսի վրա թողնելով արևելյան գինափիցներին՝ հաշտութեան շի կապի թուրքի հետ: Ուստի դիմում է Ֆիլիպ թագավորին և խնդրում, որ սա «մաշխոզադ շեղարին մէջը լինի և չի թողու, որ շեղարը թուրքի հետն պարզութիւն անէ որ մեզի նեղութիւն չի գա»: Շատ վստահ չէր Սիմոնը նաև Շահ-Աբբասի վրա, որը 1590 թ. խաղաղութեան կնքելով թուրքերի հետ, ռազմական ամբողջ իր ուժն սուղեւ էր ուղարկել դեմ: Ուստի դիմում է Սպանիայի թագավորին այս խոսքերով՝ «Եւ զարձեալ ի փերսիանի թագավորն ապսպրես զիտու որ միարան լինեմք և լավ բան հոգամք վասն քրիստոնէից»:

Հայերենն բնագրի հետ, Սիմոնը հղել էր նաև թղթի հունարեն թարգմանությունը: Վրաց թագավորի խնդրարկուն պիտի տեղ հասց-

<sup>1</sup> Խոսքն, ըստ երևույթին, կախեթի թագավոր Ալեքսանդրի (Լեանի որդու) մասին է:

ներ թուղթը և բերեր պատասխանը: Այս մասին վկայում է գրութչանս վերջվածքը, ուր Սիմոնը խնդրում է Սպանիայի թագավորին՝ պատասխան հղել իրեն նույն թղթատարի միջոցով, «որ ես ուրախանամ և իմ երկիրս»<sup>1</sup>:

Հատկանշական է, որ սպանական թագավորի հետ կապվելու համար Սիմոնը կարիք էր զգացել հայերեն լեզվի միջնորդություն: Այդ անխուսափելի էր, արշափ հաճախ հենց հայ հանձնակատարների միջոցով էին փնտմ բանավարությունները:

Կա մի հիշատակարան, որը պարզում է, թե Սպանիոն այն պահին անձանոթ երկիր չէր հայ ուղեգնացների համար: Սիսիանի Գետաթաղ գյուղից ելած մեկը, Փիրզազա անունով, թողել է 1586 թ. սկսած փր ուղևորությունների մարշրուտը, ուր հերթականությամբ նշում է այցելած երկիրները և թվարկում բազմաթիվ այն քաղաքները, ուր եղել է ինքը: Ուրի տակ տալով Թուրքիան, Ռումանիան, Լեհաստանը, Գերմանիան, Իտալիան, Միջերկրականի կղզիները, Սպանիան, նա ի վերջս հասնում է Անգլիա, ուսկից անցնում է Ֆրանսիա: Հիշատակագրումները ավարտվում են 1607 թ. Փարիզում:

Ի՞նչ հանգամանքների բերումով էր ընկել Փիրզազան հեռավոր այդ երկիրները կամ ի՞նչ նպատակներով էր թափառում նա այդ վայրերում՝ այդ մասին լուծ է նրա հիշատակարանը: Իր մասին Փիրզազան ասում է միայն. «Սա մեզաւոր Փիրզազա Ղլիլիլյաշէն, երկիր Ղապանէն, Որտէն ձորէն (=Որտանա ձորեն) կեղու Գիառայ-թաղէն Պատամեցանք ասրէն, Չաքարէի թուն, Միրզին Հոտոմսիմին սոգա, Իսայուն, Փարուն, Պահալվէն սղրէր, էն տարին որ հայոց թուական էր ՌԼՆ (=1586) որ ես իմ տանէն իլայ գլոխս առայ սուկայկան մուրեցի, օտար աշխարհ եկա»<sup>2</sup>: Չպիտի ենթադրել, թե շատերի պես Փիրզազան առևտրական գործերով էր գլուխ առել հայրենի երկրից՝ Թուրքիայում և Արևմուտքում պատելու համար: Աչքի է ընկնում, ընդհակառակը, որ շշտափելով առևտրականին շահագործող խնդիրներ՝ նա թվարկում էր միայն այցելած երկրների, և զրանց հարեան պետությունների «թագավորություններն» ու

<sup>1</sup> Macler. Pr., Notes de manuscrits arméniens, REA, t. 9 71 և հա.:

<sup>2</sup> Հիշատակարանի բնագիրը գտնվում է Օրոֆորգի Քոզլեյան գրադարանում, օգտվում ենք այդ գրադարանում գտնված հայերեն ձեռագրերի այն ցուցակից, որ կապել է Տիրաչյր վարդապետը (տե՛ս Հալիական ՄԱՍՄատենադարանի արխիվային բաժին, Անհատական արխիվներ, «Օրոֆորգի Քոզլեյան գրատան ցուցակ», ձեռ. № 122-ի ներքո, ուր բերված են հիշատակարանից սրտ ջաղվածները):



«պարտությունները», նշում դրանց բազաքական փոխհարարերությունները, անցողակի հիշատակում այցելած վայրի սրբատեղիներն ու դավանությունները և անվանում այն երկիրները, ուր հայ գաղափներ կան և կամ ուր «հայկական սարն խիստ կուզեն»: Առանձնապես հանգամանորեն թվարկում է նա Խտալիայի և Սպանիայի թագավորությունները ու նրանց իշխանությունների կենտրոնները: Հատկապես հիշատակում է սպանական «մեծ թագավորի»՝ Ֆիլիպ II-ի անունը, ասում է, որ սրա ձեռքի տակ կա 11 թագավորություն և 15 պարտություն և իրեն հպատակ երկրներից ստանում է տարեկան 50 միլիոն սակի եկամուտ, որից 35 միլիոնը վեց ամսյա ճանապարհի հեռավորության վրա դանված «Նոր Հինդիստանից» (=ամերիկյան տիրույթներից): Եւշտում է, որ Ֆիլիպ թագավորը «ազեկ քրիստոնյա» է և «հայկական ազգն խիստ կուզի»:

Այս ամենից հետո անհնարին չէ, որ սիսիանցի այս ուղևորը բազաքական ինչ-որ սպասելիքներ ունեցած լինի Արևմուտքից և կամ որ հենց նա եղած լիներ մեկը Ֆիլիպ թագավորի հայ թղթաբերներից: Եթե աչքի առաջ ունենանք, որ Սպանիա Փիրզազան հասած կարող է լինել իր ուղևորության առաջին տարուց, այսինքն՝ 1586 թ. բավականին հետո և համեմայն դեպս Ֆիլիպի վախճանից, այսինքն 1598 թվականից առաջ, պարզած կլինենք, որ նա ինչ-որ ահնկալություններ էր աածում Սպանիայից մոտավորապես նույն այն ժամանակ, երբ բանակցություններ էին գնում արևմտասիրոպական պետությունների և վրաց թագավորի միջև: Պարզվում է նաև, որ 1588—1607 թվականների ժամանակամիջոցում գեթ մի անգամ նա վերադարձած պիտի լինի հայրենիք և կրկին ուղևորված Նվրոպա: Այս եղրակացնում ենք հիշատակարանի այն տողերից, ուր ասված է, «Պահայ տէր աստուած դժառայս աստուծոյ Փիրզազան, գ(ի)րս գրեցաւ. Հալէբ բաղ. հայոց թվ. ՌԾԱ. (1602). մարտ ամսին Ժն (15)»:

Փիրզազան ուղևորություններ էր կատարում դեպի Արևմուտք մի ժամանակ, երբ Սիմոն թագավորը պաշքար էր մղում թուրքերի դեմ՝ իր երկրի ազատության համար: Եվ ընդամին պաշքարի թատերակներ Վրաստանի հայաբնակ շրջաններն էին՝ Սոմխեթը և Լոռին: 1585 թ. Սիմոնը գրավեց Լոռու բերդը, 1586 թ. առավ Գորու ամրոցը<sup>1</sup>: Նույն այս ժամանակ Կախեթի Ալեքսանդր թագավորը բանակ-

<sup>1</sup> З. Такайшвили, Хроника Эриванского Акафиста. Тифлис, 1901, էջ 17 և հույ շմտ. նաև նույն հեղինակի «Три хроники», էջ 199 և հու.:

ցությանների մեջ էր Մոսկովիայի հետ, որից հովանավորության խոստում էր առել տակավին 1585 թ.: Չենք կարող այնուամենայնիվ զանց առնել հիշատակագրության այս երկտողը. «Ամէն ասք ք(րի)ս(ա)ռնուց հայոց հարկից (=հարկիք, պատիվ) կանեն, Հոսմա ասքէն ս(ւ)ռուէն, վելիանէն (=վերիանէն)<sup>1</sup>, էս Գ (Յ) ասքէն պողչայ (պաշխա=զատ)»: Չե՞ն վկայում արդյոք այս առղերն այն հուսախարության մասին, որ սննեցել էր ի վերջո Փիրզազան իր բանագնացությանների ընթացքում:

Փիրզազան միակ մարդը չէ, որի միջոցով Սիմոն թագավորը կապվել կարող էր Արեւուտաքի հետ:

1593 թ. որպես էջմիածնի նվիրակ Վենետիկ է ժամանում Հակոբ Համզեցի քահանան և ջերմ ընդունելության գտնում բազաքի հայ առևտրականների կողմից: Վենետիկից տեղ Հակոբն անցնում է Հոսմ և վերադարձին տանում իր հետ մի շարք գրություններ Եսէ-Աբբասին, վրաց Ալեքսանդր օւ Սիմոն թագավորներին և վրաց պատրիարքին հասցնելու համար: Գրություններից երկուսը հղել էին Հոսմի պապը և Հոսմի գերմանական գեսպանը: էջմիածնի նվիրակին զրանք հանձնել էր հայոց «պաշտպան» կոչված նույն այն կարգի՞նալ Սանտա-Սեվերինան, որը, ինչպես տեսանք, միջնարդի դեր էր կատարում նաև Սուլթանշահ Թոխտաեցու և Ազարիա Զուլաչեցու բանակցությանների ժամանակ:

Տեղ Հակոբը ոչ միայն ճշտությամբ կատարում է իրեն արված հանձնարարությունները, այլև ստանձնում նամակների պատասխանները նվրոպա հասցնելու հոգնությանը: 1596 թ. նա Եսէ-Աբբասի կողմից գրություն է ստանում վրաց Ալեքսանդր և Սիմոն թագավորներին հասցնելու համար: 1597 թ. նրան նորից հանդիպում ենք Հոսմում: Այս անգամ նա բերել էր իր հետ վրաց թագավորների և վրաց պատրիարքի գրությունները ուղղված Հոսմի պապին և գերմանական կայսրի գեսպանին: Վենետիկի դուքսին նրա աված մի բացատրությունից տեղեկանում ենք, որ ինչպես Եսէ-Աբբասը, նույնպես և վրաց թագավորները խնդրած են եղել պապին—խոսքը կղեմես VIII-ի (1592—1605) մասին է անշուշտ—աղոթել, որ կարենան թշնամու (իմա՝ Թուրքիայի) դեմ դնալ և որ արևելյան բրիտանոնյանների վիճակը թեթևացնելու համար արեմտացիները ևս հազություն տանեն նույն ալգ թշնամու գեմ: Վենետիկի դուքսին տեղ-

<sup>1</sup> Վիսադոց = Իրերացոց — վրաց ազգից. տե՛ս կարապետ Սասնեցի, նույն տեղում, էջ 56:

Հակօրը հազարդամ էր ի դեպ, թե պարսից շահը 26 տարեկան մի երիտասարդ է, ունի 80 հազար ձիավոր, շահշված հրացանավորներին: Սիմոնի մասին տեղեկացնում էր, թե 45 տարեկան է, ունի 25 տարեկան բազ մի որդի, կարող է կազմել 10 հազարանոց հեռակա բանակ, ունի նաև հրացանավորներ: Պարսիկների պես, ասում է նա, վրացիները կրում են ձերմակ զլխապատ, տկանջներին օղեր ունին, կրծքերին մեծկակ խաչ<sup>1</sup>:

Ուշագրավ է, որ Հուսիմ ժամանելիս հաջոց կաթողիկոսի նվիրակը իջեանում էր կարդինալ Սաֆաա—Սեկրինալի մոտ, ինչպես նաև այն, որ նա պաշտպանություն էր դանում Ռուբրիայի հանդեպ թշնամորեն տրամադրված Վենետիկի կողմից: Վրաստանից «զաղտուկ լրակսի առաջնորդություն» անցնում է Վառն ու Հալեպ: Հալեպում ներկայանում է Վենետիկի հյուպատոսին և պաշար ու ստակ ստանում ճանապարհորդությունը շարունակելու համար:

Արդյոք նույն այդ տեր Հակօրի միջոցով չէ՞ր հասել Սիմոն թագավորի հաշագիր նամակը նաև Մադրիդի արքունիքին: Բոլոր պարագաներում Շահ-Աբրաահին և իշխողներին եվրոպական արքունիքի հետ միացնող թևերը հանդուցավորվում էին և՛ էջմիածնի կաթողիկոսարանում, և՛ Հոսիմու՝ նստած հաջոց «պաշտպան» կոչված կարդինալի գրասենյակում:

Շուրջ 20 տարի տեկց Սիմոնի պայքարը թուրքերի դեմ: Դիվանագիտական աջակցությունից զատ, հայերը անշուշտ զենքով ևս գործակցում էին նրան: Այսպես, նույն այս ժամանակ թուրքերին և զազախ ցեղին զենքով դիմադրող Արդությանները կապված էին Սիմոն թագավորի հետ: Նշանավոր էր մանավանդ Գորի բերդի առումը Սիմոնի ձեռքով: Թուրքերը ստիպված եղան ի վերջս մեծ բանակ մայնել Վրաստան՝ ապստամբ թագավորին դերելու ու ոչնչացնելու համար (1600 թ.):

Թուրքիայի դեմ վարած բանակցությունների ընթացքում Առաջավոր Ասիայում հրապարակ է գալիս քաղաքական նոր մի գործոն՝ Անգլիան: Անգլիան էր ձեռնարկված բանակցությունների, ինչպես և սրանց ավարտից առաջ սկսված իրանական արշավանքի հրահրողն ու կազմակերպողը: XVI դարի կեսերից ի վեր նորելուկ ծովակալ այդ պետությունը պայքար էր մղում իրանական բռնաժամարտահանությունների իր մեծաշնորհը դարձնելու համար: Մրցելով այդ ասպարեզում Միջերկրականի վրայով կատարվող վենետիկյան

<sup>1</sup> Ա. 1 է շ ա ն, Հայ-Վենետ, էջ 351 և հտ.:

առևտրի հետ՝ անդլիացիները կամենում էին ոչնչացնել այն խաչընդոսները, որ հարուցում էր իրանական բռնության արտադրությունը և արտահանությունը առաջ թուրքիան: Հակաթուրքական ճակատ ստեղծելու նպատակով 1599 թ. Արևմուտք ուղարկված իրանական դեսպանությունը գլխավորում էր անդլիացի Անտոն Շիրլին: Անտոն և Ռոբերտ Շիրլի եղբայրների խորհուրդներով էր կատարվում իրանական բանակի այն վերակազմությունը, որին ձևոնարկեց շահը՝ նախքան կվերսկավեր փրանս-թուրքական պատերազմը:

Ինչպես մի ժամանակ Ուլուն Հասանն ու առաջին Սեֆեյլիները՝ հիմա փր հերթին Շահ-Արբասն էր դեսպանություն հղում Եվրոպա—Մոսկովիա, Գերմանիա, Իտալիա և հատկապես Հռոմի պապի մոտ—Թուրքիայի դեմ միասնական ճակատ հարդարելու առաջարկով: Ռուս դեսպանական պրիկապի ավագներով պարզվում է, որ շահը իսկապես նման առաջարկ արել էր 1588 և 1599 թվականներին ցարին, գերմանական կայսրին, Վենետիկի հանրապետությանը, Ֆրանսիական և սպանական թագավորներին<sup>1</sup>: Հնարավոր է, որ Իրան ապավինած հայերը և մասնավորապես Շահ-Արբասին սպասարկող հայ առևտրականների ներկայացուցիչները իրազեկ էին այդ բանակցություններին և ըստ կարելուցն նպատում էին գրանց: Թերևս նույն ուղղությամբ նախաձեռնություն հանդես բերողներից մեկն էր եղել տակավին Թաղեսու կաթողիկոսը, որը, ինչպես ասածնք, Հռոմ ուղարկած իր աղերսագրում փրկություն էր հայցում քուրճեթի կողմից ճնշված հայերի համար: Ուշագրավ է, որ այդ բանակցությունների ժամանակ Անտոն Շիրլին հավաստիացնում էր Հռոմի պապին, թե իրանարնակ բոլոր «հերձվածողները» հայերը, վրացիները և այլն կաթողիկ աշխարհի հետ իրենց գաշխնքը ամրապնդելու համար հպատակություն են հայտնելու լատին եկեղեցու պետին<sup>2</sup>: Պողոս V պապին ուղղված մի գրություն մեջ Ռոբերտ Շիրլին հայտնում էր, թե պարսից շահը խնդրում է էջմիածին հղել լատին բարձր եկեղեցականներ՝ հայերի անունից կրոնական հպատակության հավաստիքներ ստորագրելու համար. շահը պատրաստակամ է թեթևացնելու հայերի տուրքերը, եթե նրանք հպատակություն հայանեն պապական եկեղեցուն<sup>3</sup>: Հռոմին հաճելի էին այս

<sup>1</sup> Н. А. Смирнов, Россия и Турция в XVI и XVII вв., М., 1946, էջ 140, 151 և 157, և II, էջ 3; Հիմա, նաև „A. Chronicle of the Carmelites in Persia“, vol. I, էջ 82 և հա. և Du Mans, նույն տեղում, էջ XIV և հա.:

<sup>2</sup> „A. Chronicle of the Carmelites in Persia“, էջ 73 և 78:

<sup>3</sup> նույն տեղում, էջ 118:

խոստումները և առաջարկությունները: Սակայն Հոսոմն այս անգամ ևս անկարող եղավ սեպղ օգնություն գալ Երանին: Սահմանափակվելով միայն այն մասնանշումով, թե գերմանական կայսր Ռուդոլֆը հարձակում է գործում Ռուրբիայի վրա, Կղեմես VIII-ը անկարող եղավ գինական օգնություն խոստանալ Սպանիայի, Վենետիկի, Ֆրանսիայի, Ռուսիանայի, Մարտայի կամ Լեհաստանի կողմից<sup>1</sup>:

Շահ-Աբրաար հարձակում սկսեց նախքան կազարավին իրանական բանակի վերակազմությունն ու եվրոպական բանակցությունները: Նա նպատակահարմար դատվ օգտվել բարեկեղ այն հանգամանքից, որ Ռուրբիայի արևելյան վիլայեթներում գլուխ էր բարձրացրել ջալալիների ապստամբությունը և օր միաժամանակ նույնիսկ սուլթանական մալլաբաղաթում ապստամբել էին Լնիչերիները<sup>2</sup>:

Ջալալիները պարտություն կրեցին Փորը Ասիայում, որից հետո նրանց մի մասը, 15 հազար մարդ, Քալջանդար-օղլու Մուհամմեդ փաշայի ղեկավարությամբ տեղափոխվեց Հալաստան և Հարավային Ադրբեջան: Այստեղ Շահ-Աբրաար ծառայության ընդունեց ջալալիներին, Լնթաղբելով օգտագործել նրանց Ռուրբիայի դեմ<sup>3</sup>: Ռուրբ ժամանակադիր Նայիմիի ասելով՝ Շահ-Աբրաար շարժվեց Ռավրիզ բարդ Դազի խանի դրդումով: Վերջինս Սալմաստի բեյն էր: Փախուստի գիմելով ու ապաստանելով շահի մոտ՝ նա ստացել էր խանի ախաղոս: Նույն ժամանակադրի ասելով, Զուլան գրավող Զրադ-Սուլթանը ջալալի էր: Երևանի գրավմանը (1604 թ.) մասնակից էին երեք հազար հոգի՝ Ռյուլենջի և Գյոթ-Գուլար կոչված ջալալիներից, որոնց մի մասը բրդեր էին<sup>4</sup>: Հավանորեն սրանց ուներ նկատի Առաքել Գավրիժեցին, երբ նշում էր Շահ-Աբրաարի մոտ ապավինած քրդերի մասին<sup>5</sup>:

<sup>1</sup> A Chronicle of the Carmelites in Persia, էջ 84:

<sup>2</sup> Հմմտ. А. Тв е р е г и н о в а, Восстание Кара Язычи и Дели Хасана в Турции, М., 1916, էջ 70:

<sup>3</sup> Н. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв., 1-й том, М., 1907, էջ 282:

<sup>4</sup> Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվ, ձեռագիր բաղվածքներ Նայիմիի ժամանակագրությունից:

<sup>5</sup> Վերջերս պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու կողմից փորձ եղավ նոր լույսի տակ ներկայացնել Շահ-Աբրաարի կազմակերպած արշավների բնույթն ու շարժառիթները: Հեղինակը հենվում է Բահանդեր Մուշեղիի այն հազարգման վրա, թե արդեն իսկ 1603 թ. Հարավային Ադրբեջանն ու Շիրվանը բռնված էին ջալալիների շարժումով և կարծում է, թե ժողովրդի ֆեոդալները և

Գործիք դառնալով ի վերջո ֆեոդալ շարդարարների ձեռքին, ջալալիների շարժումը մեծ ավերածությունների առաջացրեց թե՛ Հայաստանում և թե՛ Անդրկովկասում: Բայց կասկած չկա, որ թուլացնելով և երբեմն նույնիսկ կազմալուծելով Թուրքիայի վարչական և սոցիալական ապարատը՝ ջալալիների շարժումը արագացրեց և դուրացրեց Թուրքիայի անդրկովկասյան տիրակալության լիկվիդացումը: Չլիներ մասսայական այդ շարժումը, Անդրկովկասյան ժողովուրդները դեռ երկար պիտի տառապեին օսմանյան լծի տակ: Տակավին ապստամբությունների սկզբնական շրջանում հայ տարեգրողներից մեկը ոչ միայն նշում էր բացասական այն ներգործությունը, որ սմեկյան երկրի սոցիալ-տնտեսական կացության վրա ջալալիների ընդլիզումները, այլև կարծես գիտակցում էր դրական այն դերը, որ ունենալու էին դրանք օսմանյան աշխարհատիրությունը քայքայելու գործում: «Ռվին Ռե՛տ (1595),—պատմում է անանուն այդ գրիչը,—մեռաւ սուլտան Մուրատ և նստաւ որդի իւր սուլտան Մահամատն (1595—1603—Ա. Ն.), որ է այժմ ի մերում ժամանակի, որ կատաղի և մոլեգին է դարձեր, գրեթե չկա թագաւոր... Դատաստանն բարձեալ է, և ոչ կայ քննութիւն և իրաւունս զրկելոց, զի դարձեր են իրրե ձկումս մեծամեծս որ զիտքումս կլանեն... Թուի թլլցեալ է շափ մեղաց դոցա, զի կարի շիտթեալք են, զմիմեամբք ելանելոյն աշխարհի, և կուտեն զմիմեանս առանց օտար թշնամեաց,

հայ հողերականությունն ու վաճառականությունը» գիմում էին շահին հենց ջալալիների շարժումից ազատելու համար (տե՛ս Ա. Ո. Петрушевич Кн II, Очерки, էջ 326): Ջալալիների երեսից շահին գիմելու մասին որպես ազդու ք հեղինակը նշում է նաև Գավրիմեցու անունը: Սահայն վերջինս, ինչպես տեսանք, շահին արված գիմումին առիտ է տարրեր բացաբություն և ջալալիների տարածումն Անդրկովկասում գնում է ոչ թե արշավանքից առաջ, այլ արշավանքից հետո (Ա. ո. Դավրիմեցի, նույն տեղում, էջ 79 և հա.): Դեպքերին ժամանակակից հայ բոլոր հիշատակարանները համերաշխ են այն կետում, որ ջալալիների տարածումն Անդրկովկասում ոչ թե նախորդել ալ հաջորդել է 1603—1605 թվականների իրանական արշավանքներին: Ինքը Պեարուշեակին նշում է շահի 1590 թ. մի ֆերմանը, ուր թվարկված են իրանական կողմնորոշում ունեցած և մյուսների հետ Երան ապովինած Քշատգի մեկիք Հայկազի ծառայությունները: Ֆերմանը գրվել էր մի ժամանակ, երբ խոսք չէր կարող լինել Անդրկովկասի ջալալիների մասին: Շահ-Արբասը ոչ միայն չէր հալածում, այլև ընդհակառակը, օգտագործում էր ջալալիներին Թուրքիային հարվածելու համար, հանգամանք, որ, ինչպես պիտի տեսնենք, իր մի այլ աշխատության մեջ նշել է նաև ինքը Պեարուշեակին: Այս չէր խանդարում, որ թուրքերի գեմ սկսած սագմական իր գործողությունները Շահ-Արբասն արդարացիներ նրանով, թե օսմանյաններն ի վիճակի չեն հազիմհարելու ջալալիների շարժումը...



Արժևից հանած պիտի լինի 23 հազար մարդ<sup>1</sup>: Այս գործողութունները հետապնդում էին պարզ նպատակ՝ զրկել թշնամուծն երկրի արտադրող ձեռներից և հատկապես երկրագործ բնակչությունից, մյուս կողմից՝ նույն աչք մարդկանցով բազմացնել Իրանի արտադրող ու հարկատու բնակչության քանակը:

Բայց սա շարիքի սկիզբն էր տակավին:

Հաղթահարելով ջալալիների անդրանիկ գրոհը, թուրքերը հակահարձակման անցան իրանական բանակի դեմ, և Շահ-Աբրահը հարկադրված եղավ բռնել նահանջի ուղին:

Բուք էին ցանկ նրան ապավինողները՝ ամպրոպ հնձեցին. Հայաստանի և Անդրկովկասի «փրկիչը» զարձավ աչք երկրների հերթական ավերիչը: Թուրք զորահրամանատար Ջղալ օղլի Սինան փաշայի առաջխաղացումը կասեցնելու համար Շահ-Աբրահը կիրառեց շահ Քահմազի «հրկիզման տակախկածն». նահանջելուց առաջ ամայացնում էր երկիրը, ոչնչացնում պարենի բոլոր պահեստները և բնակչության մեծ մասը քշում Իրանի խորքերը (1605 թ.): Թե ինչ ծավալ ստացավ բռնազաղթը, հայտնվում է այն վայրերի թվարկումից, ուսկից ծագում էին Սպահանի կողմերը քրշվածները՝ Ամիր (Գրարբեքիր), Բաղեշ, Մուշ, Բերկիր, Արճեշ, Վան, Արժև, Երզնկա, Գերջան, Բարերդ, Էրզրում, Սպեր, Բասեն-Կաղզվաձան, Շիրակ, Այրարատ, Այաշկերտ, Մակու, Խոյ, Սպմաստ, Ուրմիա<sup>2</sup>:

Անդրկովկասում մասսայական գաղթահանումի—«մեծ սուրկումի»—ժամանակ գլխավորապես առժեց Արարատյան դաշտի բնակչությունը: Սուրկումի ալիքը բնագրկում էր ամենքին՝ առանց կրոնի և ազգի խտրություն: Ժամանակակից Գրիգոր Կամախեյին (Գարսնապետին) գրում էր. «շահ Ապազն երևի էստ զԵրեան և զամենայն գաւառն մինչև ի Բասեն և զամենայն աշխարհն հրձիգ և սուրակ արար և զամենայն բնակիչն ի ի հալլ ի ի տանիկ՝ միահամուռ սուրկուն արար և տարաւ Սօս քաղաքն, որ է Իսպահան»<sup>3</sup>: Սակայն հիմնականում հայ ժողովրդի պատմության առավել զաժան հորձանուաններից մեկն էր այս սուրկումը: Սուրկումի տարերքը տեղահան էր անում հոծ հայ բնակչությունն ունեցող գավառները և հայերն է, որ մեծապես առժեցին մասսայական տեղահանումից: Լքելով արցունքով թրջված հայրենի հողը, նրանք հազարավոր

<sup>1</sup> Ա. Ա. Գ ա զ թ ի ժ ե յ ի, նույն տեղում, էջ 33:

<sup>2</sup> նույն տեղում: էջ 150 և հա.:

<sup>3</sup> Տ ա շ յ ա ն, Մ ա յ ր յ ու յ ա կ, էջ 109:



գիակներ թողեցին Արարսի ջրերում և երերուն քայլերով շվեցին  
զեպի Իրանի առապարներն ու ճահճուտները:

1605 թ. Ապահանում գրված մի հիշատակությունից տեղեկա-  
նում ենք. «Եւ գոտոզ պարսիկքն արարին մեծ վնաս. զի գամենայն  
ազգո հայոց որ էին յերան, մինչև ի Քարեկ գամենեսեան զերթ  
աարաւ գայր և զկին, ծերս և զազայս: Եւ այնչափ քանդեաց և աւե-  
քեաց, որ զշուն և զկատու այլ սատակեցոյց և զմարդն առաքեաց ի  
Խուժաստան աշխարհն իւերանց. և եղեն այն ամենայն քրիստո-  
նեայն ցիր և ցան մինչև ի Քաշան և յԱսպահան»<sup>1</sup>: Անցրերին ժա-  
մանակակից Գուովեան միւշն հենց սարկուսթյան վաճառվածների  
թիվը հաշվում էր 100 հազար մարդ: Այլ թիվը չափազանց չպիտի  
համարվի, ասում է նա, եթե նկատենք, որ Հայաստանն ունի բազ-  
մաթիվ և բազմամարդ բաղարներ ու գյուղեր: Այսպես, հենց Երե-  
վանի հողում, խոշոր բաղարներից դատ կան մոտ 1500 գյուղավայ-  
րեր, յուրարանչուրը 4—5 հարյուր բնակչությամբ<sup>2</sup>:

Հիշենք նաև Սահիանոս Նախավիպեցու «Ափսոս քեզ հայոց  
խեղճուկ ժողովուրդ»-ը, որ հորդորում էր գաղթողներին չմոռանալ  
Մասիսը, Էջմիածինը, Խորվիրապը, Գեղարզը, անտմեններ՝ սերտորեն  
կապված Արարատյան դաշտի հայ բնակչության հետ: Հետագայում  
սկանառես Ավգուստինոս Բաջեցին նվիրեց սուրկունի նկարագրու-  
թյամբ գտնեզ մի էջ. որը կարծում ենք, հանդիսացել է Առ. Գավրի-  
ժեցու աղբյուրներից մեկը: «Պարսից թագաւորն հեծել առաքեաց,  
Արզրումայ բերանբէն հեա բշեց, սուրկուն արեց, աարա իւր եր-  
կիրն. հեա ամենեցուն մեր աշխարհն էլ բշեցաւ: Եկին հեծելըն  
հրամանաւ թագաւորին, որպէս կայծակն ի յերկնից, մեկի մէկ ժամ  
խաղաղութիւն չի տուին, որ ամենայն մարդ իւր ապրանքն պահել  
էր: Թողինք ասնն ապրանքով լի, հօան ի դաշտին. հայրն որդին  
ուրացաւ, մայրն ի դուտարն ուրացաւ... Դուս արին ամենայն մարդ  
իւր յերկրէն որպէս նահիր և փնքեանք եղեն սրով և նիզակով քշողը-  
խառնեցան մէկ գմէկ, որպէս դառն ի ոշխարն խառնի, լալն ու հա-  
սաչանքն ելաւ մինչև յերկինս: Անօրէնքն յառաջ արին ժողովուրդն  
և ինքեանք յեան բնկան զեղարգեամբ խոցելով... Ամենեքեան էին  
մոյրեալ, որպէս ոշխար որ ոշ լիցի հովիւ: Եկաք հասաք ի դեան,  
որ կոչի Արասոզ. խիստ մեծ, որ մարդ առանց նաւի չի կարիլ անց-

<sup>1</sup> Մ. Վ. Բարխուդարյան, Ազգանից երկիր և զբայեր, Թիֆլիս,  
1893, էջ 168: Հմմտ. նաև «Արարատ», 1888, էջ 293, և. Լալայան, Յուզակ  
ձեւ, Վասպ., 1, 9, էջ 257 և հտ., 523 և հտ. և 812:

<sup>2</sup> Յ. Յ. Նույն տեղում, էջ 467 և հտ.:

նիլ: Ամենայն ժողովուրդն լցին ի մէջն առանց նաւի և առանց տա-  
ւարի, որն որդի ձայնելով, որն մայրն կանչելով... շատոնք ի դեռ  
խեխտեցան...»<sup>1</sup>:

Պիտի կարծել, այնուամենայնիվ, որ Արարատյան դաշտից շա-  
հը չկարողացավ Պարսկաստան քշել տեղի ամբողջ բնակչութիւնը և  
առանց դիմադրութեան չէ, որ կատարւում էր «մեծ սուրկունը»: Ժա-  
մանակակից մի հիշատակարանում, գրված Խոր-Ջուղայում 1609  
թվականին, կարդում ենք Շահ-Արբասի մասին. «սուր հասոյց ի վե-  
րայ Հայաստանեաց, զոր բակեաց և աւերեաց զամենայն տունս և  
բնակչութիւնս. զոր փախեալ և քաբեալ ի յամրոցն և ի ձերպս վի-  
մաց, զոմանս գտեալ կոտորեալ. զոմանս գերի վարեալ և առաքեալ  
ի Շօշ քաղաքն Ասպահան»<sup>2</sup>: Բնակչութեան մի մասը որպէս հալա-  
ծական երամ խուսափում էր երկրի լեռնային գոտիները: Հաղարա-  
վոր գյուղացիներ Գեղարդա և Քոտազարա ձորերի այրերում ու քա-  
րածերպերում ամբացած «սրով և բրով, քարիւ և փայտի» դիմա-  
դրում էին սուրկունի գինված կատարածուններին: Հարկ եղավ, որ  
Ամիրգոսնա խանի զինվորները նետաձգութեամբ և հրաձգութեամբ  
հաղթահարեին բմբոստացած գյուղացիներին<sup>3</sup>:

Ծանր էր հայ ժողովրդի վիճակը նաև Արեւմտյան Հայաստա-  
նում:

Իր ուղեգրութեան մեջ Սիմեոն զպիր Լեհացին նկարագրում է  
Կ. Պոլսի սարկավաճառքի շուկայում—«Յասըր բագարում»—այլա-  
զան ծագում ունեցող բրիտանյա ստրուկների վաճառահանման  
պատկերը. «Որք ծերք են և սպառք՝ հասել են: Իսկ զաղջկունս և  
զմանկունս, զսղայս և զսղվորերես կանայս աէլլալնին աւնեալ ի  
ձեռս զնոսս՝ շուրջ ածէին և ծախէին որպէս զձի և զջորի. և զայլս  
ժողովեալ ի տեղի ինչ կամ ի մօշտանի՝ իբրև զոչխարս ի փարախի:  
Իսկ զնօղքն եկեալ բանային գերեսս և զծօցս կոյս աղջկանց և զա-  
մենայն մարմինս նոցա շօշափէին յատաց մինչև ի զլուխ, զի մի  
բոս, խոց կամ այլ ինչ սպի կամ վէր ունիցին: Եւ նորա լուս և անմը-  
սունչ կային. և զորս հաճէին՝ գնէին. և որոշեալ ի հօրէ, ի մօրէ կամ  
ի բլերց և յեղբարց բաժանեալ տանէին ի տուն»<sup>4</sup>:

Բարբարոսական այսպիսի կենցաղ ունեցող մի երկիր ունեւր  
հարկավ նաև համապատասխան իրավակարգ:

<sup>1</sup> Ք. Պ., Նշխարք մատենագրութեան հայոց, էջ 6:

<sup>2</sup> Տե՛ս Հայրական ՄԱԹ Մատենագորանի արխիւի, Օքսֆորդի Բողկեյան  
գրատան ցուցակ, ձև. № 40:

<sup>3</sup> Ա. Ա. Գ. ա վ բ ի ժ ե յ ի, նույն տեղում, էջ 47 և հա. և «Մանր ժամանա-  
կագրութեաններ», 1, էջ 184:

<sup>4</sup> «Հանդես ամսօրյա», 1932, էջ 475:

Մի շարք գավառներում թուրքերի զերիշխանության տակ հաշատեում էին քուրդ ամիրների ու ցեղապետների ժառանգական տիրույթները: Մնացած գավառներում իշխում էր սուլթանի կողմից նշանակված փաշաների ռազմական և վարչական կենտրոնացած ապարատը: Նկարագրելով երկրի ընդհանուր վիճակը, XVII դարի ժամանակագիր Վարդան Բաղիշեցին գրում էր. «Քանզի են ոմանք ի հնազանդեցսց իշխանաց մեծի թագավորին ամիրաչք ի յերկիրս Մարաց, ի յերկիրս թագաւորութեանս իւրոյ սահմանաց և սահրաթաց, որ են անփոխադրելի տեղակալք, և սեպհական են յիշխանութեան, զի մնան միմչի մահ, և յաշորդեն զնոսա որզիք իւրեանց, սակաչն հարկատու են թագաւորին մեծի: Իսկ ի մայրնքաղաքս ոչ այնպէս, այլ փաշայք մեծամեծք և զօրեղք, առեալ զիշխանութիւն արծաթաւաճառութեամբ, և ահարկու ձևով դան, և դողացուցանեն զամենեւեան, սակաչն փոփոխականք են, զի զկնի 2 (6) և է (7) ամսոյ և կամ ամի միոյ, կամ ավելի կամ պակաս ամիանին ի փառաց և յիշխանութենէ իւրեանց, զի հնազանդ են տէրութեանս իւրեանց, և այնպէս տեկցին մինչև ցայժմ, և այժմ 206 ամ է թագաւորութիւնս նոցա, յորժամ առին զԸստամպօլ»<sup>1</sup>:

Մինչդեռ քուրդ ամիրների տիրապետության հենարան էին հանդիսանում նրանց զինված աշիրաթները, որպես «տեարք ընտանեաց և տանց, և դեօզից և անդաստանաց»<sup>2</sup>, փաշաների իշխանության նեցուկ էր կազմում «ենիշերինների» կամ «ղուլերի» բազմահազար բանակը, որ սնվում և ապրում էր պետության անհաստատ ոռճիկով: «Եւ ունի սա ընդ ձեռամբ իւրով,—գրում է էրզրոմի փաշայի մասին Հակոբ Կարճեցին,—իսպահիք և գյուղօրէից տէրք, ենկիշարին և բերթորէից պահապանք, թագաւորական զուլ և ծառայ, որ տամբք և տեղօք ևս գրեալ կայ զանունս նոցա փ գրունս արքոմի, որ և հանապաղ օլօֆայն և հացն կուտեն, ևս ունի ԼՌ (30. 000) սփի, թող զՔրդաց պարտնայքն, որ առանց գրի և թոշակի են»<sup>3</sup>:

Որչափ այդ ոռճիկը դանձվում էր հպատակների հաշվին՝ զուլերը և ենիշերինները շարիք էին վերջիններիս համար և շարունակ ահալ դողի մեջ էին պահում նրանց: Հաճախ նրանք ըմբոստանում էին նաև իրենց տերերի դեմ՝ սնկելով սուլթանների տիրապետության դեմ XVI—XVII դարերում պարբերաբար բարձրացած «ջալալիների» ապստամբությունները, որոնք, փնչպես տեսանք, հաճախ զլիսավո-

<sup>1</sup> «Մանր ժամանակագրություններ», 11, էջ 393:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 397:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 560:

բում էին նույնիսկ սուլթանի դեմ ըմբոստացող փաշաները: Հասկանշական են այն տողերը, որ գրի էր առնում ժամանակագիր Ավետիքը XVI դարի վերջերին սուլթան Մահմուդի դեմ բարձրացած ջալալիների ահալոր ապստամբության մասին. «Ժառայք և պարոնայքն ամենեքեան ապստամբեցան և զերեսս դարձուցին ի նմանէ. քանզի ինք միայն ոչ էր իշխանաւոր, կամ չորժամ տայր զքաղաք մի փաշայի միոյ կամ պարոնի, յեա ժ (10) աւուր կամ Ի (20), մայրն կամ քոյրն կամ իւր կիներն կամ վեղիրն տայլն ալլոյ փաշայի և առնուին դբազում կարմիր դահեկան. զՏիգրանակերան Համիթ ի Զ (6) ամիսն Թ (9) փաշայի ետուն. կայր զի փաշան գայր, կայր զի փաշայի վէքիլն գայր. նոքա երբ գային գիւէին, զի բանի յեարն փուշ է, նոքա այս սկսանէին կողոպտել և թալանել զքաղաքն և զերկիրն. և ոչ կար մեզ պատմել զժամանակիս գառնութիւնն»<sup>1</sup>:

Երբեմն սուլթանները փորձում էին բաժարարել զուլերի և փաշաների պահանջները քուրդ ամիրաների եկամտաների հաշվին: Նման դեպքերում արշունահեղ բախումներ էին առաջանում վիլայեթների կեղեքման փաշայական և ամիրական սխտեմների միջև, հանդամանք, որից առժում էր թալանի ու կողոպուտի մշտական օբյեկտը՝ հպատակ ժողովուրդը, որ առել է հիմնականում՝ զլուրացիութունը<sup>2</sup>: Սոսկում առաջ բերող գույներով են նկարագրում ժամանակակիցները մանավանդ աննախընթաց այն սովը, որ թուրքիրանական պատերազմի, փաշայական, ամիրական ու խանական սպարառումների ու մասսայական գերեվարումների և վերջապես ջալալիների գործած ասպատակումների «եականքով արծարծվում էին Հայաստանի ինչպես թուրքական, այնպես և իրանական հատվածներում 1605—1610 թվականների ընթացքում»:

Որպես իր ուժերի ազմա-ֆեոդալական կենտրոնացման հետամուտ պետութուն՝ Օսմանյան Թուրքիան անհամեմատ ավելի զորեղ էր, քան Աեֆչան Իրանը: Եթե XVI դարի ընթացքում թուրքական բանակները հաճախ խուժում էին Իրան, տեսպես զավթում ու կեղեքում նրա տառնձին երկրամասերը՝ այդ հնարավոր էր դառնում շնորհիվ այն բանի, որ նվաճողական իր քաղաքականության համար Թուրքիան օգտագործում էր ուղղա-ֆեոդալական կենտրոնացման սկզբունքով զորացած իր բունցրի սրտը առավելութունները: Թուրքիայի սպիտակաձեղ սկզբունքային և նրա պետական կառուցվածքի

<sup>1</sup> «Մանր ժամանակագրություններ», 11, էջ 316 և հա.:

<sup>2</sup> Տե՛ս այս մասին Վ. Բաղիշեցու նկարագրությունը, նույն տեղում, էջ 306 և հա.:

միջև եղած ներքին կապը սկզբից եեթ ակներև էր նույնիսկ Շահ-  
Աբբասի համար: Այստեղից էլ նա անում էր այն հետևությունը, որ  
Իրանի պաշտպանությունը ապահովելու համար անհրաժեշտ է, որ  
այն վերակառուցվի Ռուսբիայի օրինակով:

Բայց թեկուզ հենց թուրքական տիպի ֆեոդալական պետու-  
թյան գառնալու համար Իրանը չաճեր բավականաչափ նախաորվ-  
յալներ: Բոշվորական և ազրաբային մի երկիր էր դա, բայցայնամ  
առեարով և հազորդակցություն կազմալույժ սխառմով, ամայի  
տարածություններով՝ երկրի սրտում և ինքնապատան ցեղա-  
պետներով ու խանություններով՝ ծայրամասներում:

Ֆեոդալական Իրանը էր և կարող էր լինել միաձև քաղաքական  
կենտրոնախույս տիրույթների տկար միավորություն: Նրա մոտիկ  
անցյալի պատմությունը — հիշեք շահ Բահմազի ժամանակները — լի  
էր միջցեղային և միջֆեոդալական կոֆիներով և հակամարտ ու  
իրարամերժ աւժերի բախումներով: Բշխազի բռնարար ձևերը, հեցած  
զենքի հզորություն վրա, միայն երբեմն էր կարողանում զսպել զի-  
մակալոց ցեղերին ու ավատապետներին՝ հակադրելով արտաքին  
թշնամուն պետության տկար ու անկաշուն ամբողջությունը:

XVI դարի սկզբներին, հիմք դնելով Իրանի քաղաքական վերա-  
միավորմանը, շահ Իսմայիլը հենվում էր ազրբեջանական քոչվոր  
ցեղերից հավաքագրված զվրաշ կոչված հեծյալների վրա: «Շիրա»  
դավաճությունը պատկանող և հեռոհեռե ծավալվող մոլեռանդ այդ  
կազմակերպության վրա հեցած՝ շահը մի պահ կարողացավ իր  
ձեռքը հավաքել պետության սանձը և հարձակման անցնել «այտն-  
եի» Ռուսբիայի դեմ:

Բայց միշտ չէ, որ թագակիր կենտրոնի զինական գերազան-  
ցությունը կարող է սանձել կենտրոնախույս ֆեոդալներին ու իշ-  
խել ամբողջ երկրին: XVI դարի ընթացքում սազմական պարտու-  
թյանը կազմալույժ դրուժյան էր հասցնում պետությանը, զրկում  
նրան մերթ այս, մերթ այն երկրամասից, թշնամու ավար դարձնում  
նրա եկամտաբեր մարզերը: Ղզլբաշների բանակը, պետության ար-  
տոնյալ այդ հենարանը, տահմաաիրական հին իր կապերով կամ  
ֆեոդալական նոր իր շահախնդրություններով հաճախ հանդրվան  
էր դառնում ցեղապետական կամ ֆեոդալական սանձարձակ տե-  
ղայնություն:

Որչափ զվրաշ ցեղապետների քաղաքական դերը սրուշվում էր  
ոչ միայն նրանց խաշնատիրական, հուղատիրական կամ վարչատի-  
րական իրավունքներով, այլև նրանց ենթակա «դշունի» քանակով

ու որակով՝ Շահ-Աբրաար փորձեց շլատել ու շեղութեանը զղլրաշ հեծյալների ուղղմական ուժը՝ հակադրելով նրանց պարսկական ծագում ունեցող թաթ գյուղացիներից կազմված հեռակա զորամասեր<sup>1</sup>, կամ ենիչերիների օրինակով կազմակերպված ստրուվների («ղլումներ») ուղղմական զորագնդեր: Մանկուց զինվորական գործի համար սնված ու դաստիարակված այդ կազմերը համարվում էին զլխավորապես զնված, գերված կամ բռնութեամբ թշնամեցրած քրիստոնյա մանուկների հաշվին: Ղոլամների զորագնդերը կազմեցին շահի գվարդիան, Սեֆյանների քիչ թիւ շատ հավատարիմ հենարանը ներքին և արտաքին թշնամիների դեմ: Ղոլամներից վերելած կամ աննշան ծագում ունեցող, էթնիկորեն և սոցիալապես զիմահեղված և «շահիսեան» դարձած մարդկանց էին արվում հաճախ նաև պետական ամենապատասխանատու պաշտոնները: Առաքել Գավրիսեցու բնթերցողները պիտի հիշեն գեղջուկ Լալային, որի մասին ասում էին, թիւ նախապանից նախարար դարձավ շահի կամքով: Հասկանալի է, որ վարից վեր բաշված լալաների կամքը՝ շահի կամքն էր, նրանց հույսը՝ շահի սղորմածութունը: Առատ շնորհարաշխումով շահը դարձնում էր այդպիսիներին իշխանութեան հլու գործիք<sup>2</sup>:

Իր նախորդներից Շահ-Աբրաար ստացել էր ցեղապետութեաններից և խանութեաններից ու սուլթանութեաններից կազմված մի կրկիր: Խանութեաններից յուրաքանչյուրն ուներ 500-ից մինչև 3000 կարմրագլակ («ղլրաշ») ձիավոր, բոլորը միասին՝ շուրջ 60—80 հազար ձիավոր, զինված աղեղներով և հրահարներով (arquebuses): Շահ-Աբրաար կրճատեց զղլրաշ հեծյալների թիվը, հասցրնելով 30 հազարի: Նորակազմ զորամասերի հետ միասին իրանական կավոզների թիվը նա հասցրեց 120 հազարի<sup>3</sup>: Սահմանափակելով ցեղապետների ինքնազլխութեամբ<sup>4</sup>, նա դրանց հարկադրեց «շահի անձնվերների» — «շահի սեանների» — արտացեղային միութեանը, որը նշանավոր դեր խաղաց շահի օգտին ուրբեկների և Հարավային Ադրբեջանի մասը ու խոշոր ապստամբութեանները խեղդելու գործում:

<sup>1</sup> Pedro Della Valle, Reiss Beschreibung in unterschiedlichen Theilen der Welt, Genf, 1674, II, էջ 178 և հա., 181 և հա.:

<sup>2</sup> Chardin, Voyage en Perse, ed. Langles, Paris, 1811, t. II, էջ 179, 225:

<sup>3</sup> «Աղեղաբախներ», Ա., էջ 350, հա. և М. С. Иванов, Очерки истории Ирана, М., 1952, էջ 63:

<sup>4</sup> «L'ambassade de D. Garcias de Silva Figveroa en Perse», Paris, 1667, էջ 102:

Նման դիրք բռնեց նա նաև խանությունների նկատմամբ, ձգտելով վերացնել նրանց իշխանությունն ժառանգականությունը: Վարչական իշխանությունը դառնում էր ժամանակավոր պաշտոնակալություն, և բնորոշ է, որ խանական պաշտոնի համար շահր առաջ էր բաշում աննշան ծագում ունեցող «շահաններին»։ Անֆեվիններից բարերարված օտարազգիների կամ նույնիսկ սարուկների շարքերից առաջացած մարզկանց: Հեռացնելով գավառների կամ մհալների ժառանգական մանր իշխանավորներին՝ նշանակովի պաշտոնատերերը իրենց հերթին աշխատում էին փոխարինել դրանց նոր, իրենց կողմից առաջ քաշված հավատարիմներով: Ստեղծվում էր մի գրություն, որ արոշ հիմք էր տալիս Շարդենին ստեղծելն՝ «Պարսկաստանում, ինչպես և ամբողջ Արևելքում շխազնվականությունը. այդպեզ հարդի է միայն պաշտոնը, դիրքը, արտակարգ ծառայությունը և մանավանդ՝ հարստությունը»<sup>2</sup>: Այս մի սխտեմ էր, որ շխատում ու թուլացնում էր ժառանգական ֆեոդալների դիմադրությունը և ուժ տալիս կենտրոնական իշխանության հեղինակությունը՝ հողային ֆոնդերի ու եկամուտների վերաբաշխման ճանապարհով: Ժառանգական տերերի հաշվին բնդարձակվում էր պետական (զիվանի) և շահական (խաս) հողատիրությունը<sup>3</sup>:

Շահ-Աբբասին շհաջողվեց արմատախիչ անել ժառանգական հողատիրությունն ու վարչատիրությունը: Նա կարողացավ միայն ժառանգական հողատիրության և վարչատիրության մի սխտեմի հանդեպ դարդացնել նոր առաջ քաշված պաշտոնատարության սխտեմը: Առաջին հերթին այս հաջողվեց երկրի կենտրոնական մասերում, ուր իշխող էր մատակցաց բնակչությունը: Իրենց դիրքերի վրա էին մնում նաև ժառանգաբար իշխող ֆեոդալ խաշնատերերից շատերը: Իսկանդեր Մունշին, Շահ-Աբբասի պատմագիրը, բերում է զզբաշ կրեկիճների — ամիրների երկու ցուցակ, որոնց համեմատությունը ցայտուն կերպով նշում է Շահ-Աբբասի քաղաքականության ամոխշական արդյունքները: Ցուցակներից մեկից երևում է, որ ամբողջ Իրանում Շահ-Աբբասից անմիջապես առաջ, 1576 թ., կար զզբաշ ցեղերից առաջացած 114 ամիր՝ ժառանգական խան

<sup>1</sup> Della Valle, II, էջ 25 և 190:

<sup>2</sup> Chardin, նույն տեղում, V, էջ 290:

<sup>3</sup> II. II. Петрушевский. Азербайджан в XVII—XVIII вв., I, էջ 216 և հա. և նույն հեղինակի Очерки, էջ 71 և հա., 78 և հա.: V. Minor-sky, Tadhkirat al-muluk, էջ 13 և հա.:

ու սուլթանն: Մյուս ցուցակը կազմված է Շահ-Աբբասի թագավորության վերջում, 1628 թ. և ցույց է ապիս, որ ամբողջ Իրանում այդ պահին կար 90 ղզլբաշ ամիր, որոնց մեծ մասը պատկանում էր ազրեյեզանական, քրդական և լուր կոչված մանր ցեղերին, իսկ 21-ը ծագում էին առաջ բաշված ղուլամներից — սարուկներից<sup>1</sup>:

Թագի գործակատար զարձնելով տեղական պաշտոնատերերին՝ պետությունը փաստապես չէր վերացնում ֆեոդալական հողատիրությունն ու ֆեոդալիզմը: Շահ-Աբբասի և նրան հաջորդած Անֆեվիների քաղաքականությունը փաստորեն ֆեոդալական համակենտրոնացման քաղաքականություն էր, այն առանձնահատկությամբ, որ որոշ չափով թուլացվում էր հին ցեղապետների և ժողովրդական ֆեոդալների իշխանությունը հօգուտ աննշան ծագում ունեցող և նոր առաջ բաշված ֆեոդալ պաշտոնատիրության: Փոխվում էր հողատերերի անձնակազմը և հողատիրության ձևը, սակայն անխախտ թողնվում աշխատավորների շահագործման ֆեոդալական բնույթը:

Խտանական պաշտոնատերերին իրավունք էր հատկացվում «ուսեկ» իրենց արված հողային կամ գույքային եկամուտների որոշ մասը: Որչափ Անֆեվիներն աշխատում էին վերացնել պաշտոնակալության ժողովրդական սխառեմը՝ հողարաշխումը կամ գույքարաշխումը ևս պիտի ստանար ժամանակավոր (ցմահ կամ մի քանի տարվա) հատկացման («թիսլի») բնույթ: Հողերից կամ գույքերից ստացվող եկամուտների ժամանակավոր գանձույցներ («թիսլզարներ») էին պահում նույն այն ղուլամները, ներքինիներն ու ունեցատերերը, քանի որ մեծ չափերով հենց սրանցից էին առաջ բաշվում պետության բարձր պաշտոնյաները: Այս քաղաքականությունը մեծապես ազդված էր այն միջոցառումներից, որոնք կիրառվում էին Սուլթան Մուրադ III-ի ժամանակ Թուրքիայում, ուր շնորհազրկված ֆեոդալների (թիմարզարների, գախմների և այլ տեսակի ավատատերերի) ձեռքից խլվում էին նրանց կալվածները և բաժանվում աննշան մարդկանց՝ ի վարձատրություն սուլթանին ցույց տված հավատարմության:

Ինչպես շարիաթին հլու մյուս երկրներում, հողային արքունի ֆունդերից գատ, Իրանում ևս շարունակում էր գոյություն, ունենալ թե՛ վակուֆային և թե՛ մուլքադարական հողատիրություն, հողերի գնմանն ու վաճառման, դրավ գնելու, րնձալարերելու կամ կտակա-

<sup>1</sup> И. И. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв. I, էջ 252 և նույն հեղինակի Очерки, էջ 108 և հա.:



գործելու սեփականատիրական իրավունքով: Մուլքազարական այս տիպի հողատիրությունն գոյություն ունիր դեռ խալիֆների և սելջուկների ժամանակ<sup>1</sup>: Մոնղոլները, ինչպես տեսանք, չհեղաշրջեցին տիրապետած երկրների ազրարային կարգերը, այլ միայն սասակացրին գյուղացիների կախումը առանին կամ եկեղոր հողատերերից: Չնայած որ արքունի հողատերերի համեմատությամբ մուլքազարները շունեին հողային խոշոր ֆունդեր, փրկեց շահախնդրություններով նրանք հաճախ հակադրվում էին կենտրոնական իշխանությանը և նպաստում նրա թուլացմանը:

Հողատիրության նշված տեսակները հանդիսանում էին հողերը մշակող գյուղացիության շահագործման վրա: Հողային տուրքը կազմում էր գյուղացու եկամտի  $\frac{1}{3}$ -ից մինչև  $\frac{2}{3}$ -ը, նայած թե հողահատկացումից զատ պետությունը կամ մուլքատերը ի՞նչ մասնակցություն էին ունենում հողերի ոռոգման մեջ, կամ ունեփ՞ն որևէ մասնակցություն գյուղացիներին լծկան կամ սերմացու մատակարարելու գործում: Այս հաշվի մեջ չեն մտնում աջն պարտավորությունները, որոնց հատուցումը տեղի էր ունենում մուլքատիրոջ կամ պետության համար կատարած կտրի կամ նրանց ներկայացուցիչներին կամ «բարաթաերեին» հյուրընկալելու ձևով: Չնայած որ հողատերերի և գյուղացիների այս հարաբերությունները առկան և կաշուն բնույթ ունեին Երանում, գրում է Շարդինը, նրանք այնուամենայնիվ հանդիսանում էին «մշտական անբավականության ու կամայականության ազդյուր. հաճախ նրանք խախտվում էին և երբեք էլ արդարությունը չէր հարգվում»<sup>2</sup>:

«Տաս» կոչված աջն վայրերն ու համայնքները, որոնք մոնղոլների ժամանակներից մնացած «խտսիմջու» տիրապետությունների իրավունքով բացարկվում էին տեղական ֆեոդալների իրավասություններից՝ տեղական ֆեոդալների հանդեպ չուրատեսակ իմունիտետ («մասաֆ») ձևով բերելով ենթարկվում էին շահի կամ նրա մերձավորների անմիջական անօրինությունը: Փաստապես այդ վայրերն ու համայնքները ևս աճենթակա էին կենտրոնից լիազորված և առճկադրերով («բարաթներով») օժտված ազանների, բեկերի, հաբիմների և զարուգանների ճնշումներին ու կեղեքումներին: Գյուղացիների հավելյալ արտադրանքը, նրանց եկամտի  $\frac{1}{5}$ ,  $\frac{1}{6}$  կամ  $\frac{1}{10}$  մասը որպես «մալի-ջահաթ» կամ բահրա (հողային տուրք) գանձե-

<sup>1</sup> А. Ю. Якубовский, Махмуд Газневи, *տե՛ս* «Сборник в честь Фирдуси», Л., 1934, էջ 59 և հա. և Б. П. Залодер, Хорасан и образование государства сельджуков. «Вопросы истории», 1945, № 5—6, էջ 28:

<sup>2</sup> Chardin, *նույն տեղում*, V, էջ 380 և հա.:

լու կամ գյուղացիների գլխին «դիվան» (դատաստան կամ կարգադրությոններ) անելու իրավունքը «խաս» վայրերում ևս հատկացված էր բարաթատերերին: Այսպես, XVII դարի կեսերին Ադուլխսի շրջանի «խաս» գյուղերում ամեն տարի նշանակվում էր նոր «հափիմ». Ադուլխսի այդ գյուղերը համարվում են հափիմի «զավթում», ասել է հափիմին էր հատկացված այդ տարում գյուղերում «դիվան անելու», «մալիջահաթ կիտելու» և այս ծառայությունների դիմաց «կիտած» տուրքերից սրտշ բաժինը յուրացնելու («զավթելու» կամ «ուտելու») իրավունքը<sup>1</sup>: Ժամանակի ընթացքում այս տիպի զավթող-ուտողները զատնում էին մշտնջենական իրավատերեր կամ ժառանգաբար իշխողներ, իրենց իշխանության ներքո ձևոր բերելով նաև մուլքեր և այլ կարվածներ:

Հարկավ քաղաքական իշխանության այս կենտրոնացումը սուներ իր սահմանը: Խաներին նշանակելուց ու պաշտոնազրկելուց գատ<sup>2</sup> շահը միջամտում էր տեղական գործերին, միայն խաների հնարավոր անհամապատասխանությունը սաստելու համար կամ երբ խանության մեջ բռնկում էին խռովությաններ, որոնց խանն իր Տիշոցներով անկարող էր գսպել:

Ժառանգական ֆեոդալներին հասցված հարվածը գործնականապես նպաստում էր միայն նրան, որ հողերի վրա նստած անմիջական արտադրողները սկսում էին շահագործվել Անֆյանների վրստահությանն արժանացած նոր պաշտոնատերերի ձեռքով: Եթե ժառանգական ֆեոդալները շահագրգռված էին վճարունակ վիճակում պահել շահագործվող գյուղացիներին, ժամանակավոր «զավթող»-«ուտողը» գուրկ էր նման շահագրգռություններից: Ծահ-Աբրասի և հաջորդ Անֆյանների պետական համակենտրոնացման քաղաքականությունը դարձավ իրանական գյուղատնտեսության, պետական ֆինանսների և ռազմական ուժի նվազման ու քայքայման պատճառներից մեկը՝ արագացնելով դինաստիայի կործանումը:

Հաճախ բնութագրում են Ծահ-Աբրասի վերակազմված Իրանը, որպես վերամիավորված «սոցալին» «իրանական» պետություն: Պետության «սոցալայնացման» կամ «իրանականացման» որոշ միտում նկատելի էր, կարծես, Ծահ-Աբրասի քաղաքականության մեջ:

<sup>1</sup> Ձ ա ր ա ր ի ա Ա գ ս լ ե ց ի, Օրագրութիւն, Երևան, 1938, էջ 112 և հա.: «Սուտել» տերմինի այս գործածությունը այդ ժամանակ սովորական էր նաև թուրքահայերի մոտ, «Արգրու մ նստող փաշայի կերուածքին», «մինչև ի Բալու», Համիա փաշային կերն» և նման այլ արտահայտություններ տե՛ս Հակոբ Կարնեցու մոտ, «Մանր ժամանակագրություններ», Ա, էջ 559 և հա.:

Բայց ի՞նչ պատկեր ուներ փաստապես Իրանը նրա օրոք: Եթե շան-գիտանանք Իրանի խաչատարդեա էթնիկական կազմը, այն փաստը, որ պետութեան մեջ սկզբնապես պարսիկներից (ֆարսիներից) էլ կարևոր որակ էին կազմում թուրքմենները կամ աղբրեջանցիները կամ եթե հաշվի առնենք նկատելի աճն աղբը, որ գրավում էին պետութեան մեջ փոքրամասնություն կազմող վրացիները, հայերը, Կովկասի լեռնականները, քրդերը, արարները, աֆղանները, ուզբեկները և բազմաթիվ մանր ու խոշոր ցեղերն ու ցեղախմբերը, զովար չէ համոզվել, որ Շահ-Աբրահամի զլխավորած Իրանը լավագույն դեպքում կարող էր լինել միայն զեմքի ուժով միավորված ֆեոդալական բնատիրություն, որին ենթարկված հպատակ ժողովուրդների նշանավոր մասը ձգտում էր նվաճել իր կորցրած անկախությունը:

Իրենք Աեֆյանները ֆարսիներ չէին, այլ աղբրեջանացող թուրքմեններ: Նրանց ոչ-իրանական ծագումը հայտնի էր նաև հայ ժամանակակիցներին: Այսպես՝ հայոց ՌՃՄԳ (1664) թվականին գրված մի ձեռագրում կարդում ենք. «յաշխարհակալութեան տանս հայոց թուրքման փոքր Շահ-Աբրահամ և չիշխանութեան Քալբալի բեկին յաստուածապահ գաւառիս Լոռոյ»<sup>1</sup>: 1675 թվականին Իրանի գահակալին նշող մի հիշատակարանում գարձյալ կարդում ենք. «Ի թագաւորութեան պարսից քուրճմաւագ Շահսլեմանին»<sup>2</sup>: Նրանց զրազրութեանների լեզուն հանդիսանում էր հաճախ աղբրեջաներենը: XVI դարի կեսերին թուրքական ներխուժումը հարկադրեց Աեֆյաններին տեղափոխել իրենց նասոցը աղբրեջանական Քավրիզից՝ պարսից պերիֆերիայում գտնված Ղազվին: Շահ-Աբրահամ օրոք 1597—98 թթ. պետութեան կենտրոնը փոխադրվեց պարսկական էթնոսով շրջապատված Սպահան՝ զզլրաշների տեղաշնական տրամադրություններին հակադրելով պարսիկ կամ պարսկախոս երեկիներին՝ կղերի ու բյուրոկրատիայի ոչ թե «ազգային», այլ ֆեոդալական տենդենցները: Պարսիկներից զատ պետութեան ամենապատասխանատու պաշտոնների համար շահը առաջ էր քաշում երբեմն օտարազգի ծագում ունեցող և մասնավորապես հայ կամ վրացի ծնողներից սերված զոլամներին: XVII դարի հայ աղբրեջանները հաղորդում են իրանական հարեմների համար ոչ միայն վրացի, այլև հայ ազգիկներ քաշելու պրակտիկայի մասին: Հայ զոլամներից էին Աեֆյան Իրանի զլխավոր զորահրամանատարներ

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մտօճնագրան, ձեռ. № 4470, էջ 455:

<sup>2</sup> Ա մ բ ա ռ յ ա ն ց. Նկարագիր ս. կարապետի վանից երնճակայ, էջ 141:

Ղարշիսա խանը և Շիրվանի բեկլարբեկ Յուսուֆ-խանը<sup>1</sup>։ Համանո-  
րեն զուլամներից էր առաջ քաշվել նաև Շահ-Աբբասի ամենանշա-  
նավոր զորավարը, իրանական բանակը վերակազմող Ալահվերդի  
խանը, որի հաջկական ծաղուժը մեկ հայտնի դարձավ վերջերս<sup>2</sup>։

Այս հեռնախորբի վրա ուշադրավ են և բնորոշ Շահ-Աբբասի  
կազմակերպած զաղթավարությունները։ Այդ միջոցով ծայրամա-  
սերի էթնիկական խաչտարզեա կազմը պիտի դառնար պետության  
կենտրոնին հակադրվելու գորեզ արգելքներից մեկը։ Ծայրամասե-  
րից կենտրոնական շրջաններն էին տեղահանվում հայեր, աղբրե-  
ջանցիներ, վրացիներ՝ ժողովուրդներ, որոնք ծագումով, լեզվով,  
կրոնքով, սովորություններով ու ձգտումներով տարբերանշվում էին  
իրանական կենտրոնավայրերի բնակչությունից, որի կողքին պի-  
տի ապրելին հիմա։ Ամեն մեկը այդ ցեղերից ու ժողովուրդներից՝  
սմներ առանձին իր ցածրադաշտերը, այգիները և հարմարանքները։  
Ամուսնությունները դրանց միջև արգելված էին։ Շահի նպատակը  
պետության ազդային կոնսերվացիան էր, այլ բնդհակասակը,  
ազգությունների էթնիկական խտրականության խրախուսումը, նը-  
րանց պառակտումն ու տարանջատումը միմյանցից։ Ղեկավարվե-  
լով «բաժանի՛ր ու աիրի՛ր» փորձված սկզբունքով, նա հակադրում էր  
իրար տարամերժ ժողովուրդները ու զավանությունները՝ ջանալով  
այդ միջոցով վանել իրենից ֆեոդալական ապստամբությունների,  
պայտատական զավադությունների ու սպանությունների այն ուր-  
վականը, որ այնքան անուղորձ էր գանվել իր նախորդներից ոմանց  
նկատմամբ։ Խանությունների հին և նոր բնակիչները կազմելու էին  
իրարամարտ թաշխաներ, որոնցից չտարբանշյուրը մյուսներից  
որոշվելու համար կրելու էր հատուկ դուշն։ Մի բան միայն  
պիտի համատարած և բնդհանուր լիներ բոլորի համար—անմիջա-  
կան արտագրողների կորսրամակ հպատակությունը շահն-շահի  
և նրա մեջ անձնավորված ֆեոդալական արեղնափայլ բուսնցրի  
առաջ։

Այս մի բազարականություն էր, որ մասամբ տարվել էր նաև  
առաջ և որի հետևանքով անբնդհատ փոխվում էր նաև Հայաստանի  
բնակչության պատկերը։

Արդեն իսկ XVI դարում նրանի մարդ էին զաղթեցրվել (այդ  
պահին նրա մեջ մտնում էին Ալաշկերտը և Բալաղեար) ստատաչու,  
արփաուս և բաշաթի զզրաշ ցեղերը։ Բշելով հալերին՝ Շահ-Աբ-

<sup>1</sup> Տե՛ս V. Minors xv. Tadhkirat al-muluk, էջ 17։

<sup>2</sup> A. C. Иванов, նախ տեղում, էջ 61։

բար նրանց տեղ բնակեցնում էր ակ-կոչուելու, զաջար և բարիչ ցեղեր<sup>1</sup>: Գաժանորեն ճնշելով Կախեթի վրաց սպասամբույթյունը՝ շահր վաչրազարար ավերեց այդ երկիրը: Իսկանդեր Մոնղչի պատմիչը հաղորդում է, որ Կախեթում շահր սրի ամեց 60—70 հազար մարդ և 100—130 հազար մարդ բռնի խորբերը: Իրան քշվածների տեղ երկրում բնակեցվեցին Իրանից գաղթեցված թուրքմենները<sup>2</sup>: Առարել Գավրիժեցու շարադրածից պարզվում է, որ վրացիներից գատ Կախեթից Ֆահրապատի «գեջ և գաժան, շրն-չարգել և մզլահոտ» ճահճուամներն էին քշվում բազմամիով հայեր, մահմեդականներ և հրեաներ<sup>3</sup>: Մոնղչի մի վկայությունից տեղեկանում ենք, որ սրանց բռնի գաղթեցումը արդարացվում էր այն պատրվակով, թե դրանք պատկանե-մ են այն մարդկանց թվին, որոնք թուրքական օկուպացման երեսից մասսայաբար փախել ու ապաստան էին գտել Վրաստանում: «Քանի որ,— գրում է Մոնղչին,— խոսվություն օրերին (այսինքն՝ թուրքերի ժամանակ) Շիրվանի և Ղարաբաղի ուսյաթներից շատերը խուսափելով Գուրջխտանի Կախեթից, վերաբնակվել էին այդտեղ, գուգս եկավ բարերեր բարձրագույն հրաման, թե բանի որ այդ մարդիկ (բառացիորեն՝ «այդ համախմբումը») Գուրջխտանի բնիկներից չեն, նրանք բոլորը— հրեաներ, մուսուլմաններ և հայեր— թուշ արտագաղթելով գնան դրախտանման Մազանդարանը<sup>4</sup>: Շահի հրամանով Կախեթում ոչնչացվում են բոլոր թթի ծառերը, ձգակով վերջ տալ վրաց շերամապահությունը, որը կազմում էր երկրի արտաքին առևտրի հիմքը և մասնավորապես ամրացնում վրացիներին՝ Մոսկովյան պետություն հետ ունեցած կապերը: Նույնը արել էին նաև թուրքերը<sup>5</sup>:

Որոշ հիմք կա ենթադրելու, որ շլատողական քաղաքականությունը Շահ-Աբբասի ժամանակ տարվում էր նաև Հայաստանի լեռնային գոտում, սրի բնակչությունը տեղահան չէր եղել «մեծ սուրկունի» ժամանակ և հիմա «վտանդ» կարող էր սպառնալ իրանական բանասիրությունը: 1640 թ. Տաթևի տնապատում «ի թագաւորութիւն արեւարբու պարսից շահ Սաֆի կարմրագլխոյ», ընդօրինակված մի ավետարանի հիշատակարանում պահվել է այս տեղեկանքը. «Արդ յորժամ էր թիվն հայոց ՌՃՀ (1621) վասն մեր

<sup>1</sup> И. П. Петрушевский, Очерки, էջ 141:

<sup>2</sup> V. Minorsky, Tadhkirat al-muluk, էջ 113, և Бердзенишвили, История Грузии, էջ 354:

<sup>3</sup> Ա. Ա. Գավրիժեցի, նույն տեղում, էջ 132 և հա.:

<sup>4</sup> И. П. Петрушевский, Очерки, էջ 253:

<sup>5</sup> Տե՛ս վերը, էջ 68:

ծօվացեալ մեղացն անօրինեալ շարն բազմացաւ, բազում դիւղ և դաւառ գերեցին և կողոպտեցին շար ազգն քրդից և այս սուրբ աւետարանս գերի էր ի ձեռն անօրինաց: Ի վերջո ավետարանը բերում են Մագաձորի (Ջանգեղուրի) Խնձորեակ գյուղը, ուր այն գնում են և նվիրում Տաթևի անապատին<sup>1</sup>: Այս հիշատակությունը հիմք է տալիս կարծելու, թե իրանական կառավարությունը հոգ էր տանում էթնիկական սեպ խցիկելու նաև Ղարաբաղի ու Ջանգեղուրի հաց բնակչության միջև:

Ջլատողական քաղաքականությունը շարունակեցին նաև Շահ-Արբասի հաջորդները: Հայաստանի և Վրաստանի միջև մահմեդական սեպ ստեղծելու համար նրանք այդ պահին իսկ շարունակում էին բնակեցնել Կախեթն ու Լոռին թուրքմեն ցեղերով, խրախուսում լեզգիների պարբերական արշավները և այլն: Տեղական բնակչության ապստամբությունը (1656 թվականիկ) կասեցրեց թուրքմենների մասսայական ներգաղթը և Սևֆյանները հարկադրված եղան ետ կանգնելու այդ քաղաքականությունից՝ գեթ Լոռիի նկատմամբ:

Հետամտելով թշնամանք ու անվստահություն ցածնել տեղական ցեղերի ու ժողովուրդների միջև, իրենց շնորհած ախտղոսներով ու պատիվներով Սևֆյաններն աշխատում էին կաշառել տեղական շրջապատի մի մասին, գործիք դարձնելով սրանց ըմբոստության մեջ կասկածված իրենց ախոյանների դեմ: Այսպես վարվում էին նրանք հաճախ նաև վրաց թագավորների ու ֆեոդալների նկատմամբ:

Նույն քաղաքականությունը վերջին Սևֆյանների օրոք սարվում էր նաև հայ մելիքական տների և նույնիսկ հայ եկեղեցական ֆեոդալների և հայազաված ու կաթոլիկ փրարամարտ եկեղեցական համայնքների վերաբերմամբ: Կենտրոնական իշխանությունը և տեղական խաները պատրաստ էին իրենց հովանու տակ առնել մերթ այս, մերթ այն սլաքարող կողմը, միշտ պառակտված վիճակում պահելով հպատակներին:

Էթնիկական կամ քաղաքական նկատառումներից դատ Շահ-Արբասի կազմակերպած տեղահանումները հետամուտ էին նաև այլ նպատակների: Անդրկովկասից գաղթեցված գյուղացիները, արհեստավորները և առևտրականները պիտի զարկ տային Կենտրոնական Իրանի և առանձնապես Գիլանի և Մագանդարանի շերամապահության, ճանապարհաշինության և անտեսական-շինարարական այլ աշխատանքների կազմակերպությանը: Իր այս ձեռնարկություններով շահը շեր ձգտում հարկավ վերացնելու արտադրության հին,

<sup>1</sup> Հայկական ՍՍՄ Մատենագարան, ձև. № 3720, էջ 265ը:

ֆեոդալական եղանակը կամ հպատակներին կեղեքելու մտնող-թա-  
թարական զիշտաիշ սխտեմը:

Մերձկասպյան երկրներից զատ շահի տշաղրության առար-  
կա էին Հարավային Իրանի պարսկարճակ շրջանները: Շահի հե-  
տամտած խնդիրներից մեկն էր՝ փոխել իրանական արտաքին  
առևտրի ուղղությունը, հաղորդակցության մագիստրալը պոկելով  
թուրքական ճանապարհներից և այն ուղղելով դեպի Պարսից ծոցը:  
Այս միջոցառումը ընդառաջում էր նաև շահի ոսպմա-քաղաքական  
խորհրդատուների՝ անգլիացի Շիրլի եղբայրների նպատակներին  
և գուցե առանց նրանց հաշարկումներին չէ, որ պուխ բերվեց հա-  
յերի բռնադադլը:

Իրանի խորքերը քշված հայ գաղթականները միակերպ վերա-  
բերմունքի շարժանացան: Դրանց մեծ մասը, որ քշվել էր Գիլանի  
և Մազանդարանի ճահճուտները, շուրջ 50.000 ընտանիք, կարճ  
ժամանակամիջոցում բնաջնջվեց: Բազմաթիվ հայ ընտանիքներ, որ  
արհեստներ շիմանալու պատճառով տեղավորվել էին Հարավային  
Իրանում՝ Սպահանի շրջակա գավառներում, շահի հետամտած քա-  
ղաքական նպատակից անկախ, իսլամացավ ու ժամանակի ըն-  
թացքում ենթարկվեց էթնիկական դիմահեղման: Մոտ 10 հազար  
հայ «գերիներ» — տղա և աղջիկ, արվեցին պարսից մեծամեծնե-  
րին՝ «ի ծառայություն»: Ճիշտ է, հայոց կաթողիկոսին և եպիսկո-  
պոսներին իրավունք էր տրված ետ դնելու գերվածներին, բայց  
առիթ կար կասկածելու, թե տրված իրավունքի դորձադրումը լռե-  
լայն արգելված էր<sup>1</sup>:

Քիչ թե շատ նպատավոր վիճակի մեջ գրվեց միայն հայ  
շնակչություն ունեոր, առավելապես խոջայական վերնախավը:  
Այդ կարգի հայերին հասցնելով Սպահան՝ Շահ-Աբբասը շատ ան-  
գամ քշում էր տեղի մահմեդականներին, նրանց տունն ու անդա-  
տանը հանձնում եկվորներին և ամեն դատ ու վեճ վճռում սրանց  
օգտին: Նա թեթևացնում էր տեղահանված հայերի պխահար-  
կը — «խարաջը» — հովանավորում նրանց կրոնն ու ծիսակատարու-  
թյունները<sup>2</sup>: Նոր-Ջուղայում 1609 թ. գրված այն հիշատակարանում,  
սակից մեջբերում արեցինք վերը, ասված է, թե Շահ-Աբբասը սի-  
րաշահում էր Նոր-Ջուղայի բնակիչներին, բայց տեղական մահմե-  
դականությունը թշնամաբար էր վերաբերվում քրիստոնյաներին:

<sup>1</sup> Վերոգրյալ ավյալները բազում ենք «A Chronicle of the Carmelites  
in Persia», նույն տեղում, 1, էջ 99 և հա.:

<sup>2</sup> Ա. ո. Դ ա վ բ ի ժ ե ց ի, նույն տեղում, էջ 65:

Զուգ չէր ասում հիշատակագրողը, թե «անուանեցան զեօղն շաջողայ և ոչ՝ Զուլա»։ Ինքը շահն էր թշնամանքի սերմնացանը։ Վերարնակ հեյ գյուղացիները պիտի զբաղվեին շերամապահութեամբ կամ շալթուկի մշակութեամբ։ Դրանց խոշոր մասը քշվել էր Մազանդարանի, հատկապես Ֆահրաբադի, ճահճուտները։ Քաղքենի տարրերը պիտի խտացնեին Շիրազի և Սպահանի բնակչութիւնը՝ առեւտրով ու մետաքսագործութեամբ զբաղվելու համար։ Պետութեանը հովանավորում է սրանց մասնավոր նախաձեռնութեանը կամ օգտագործում նրանց առեւտրական սնակութիւնները՝ զանձարանին կամ արքունիքին պատկանող մետաքսի վաճառահանման համար<sup>1</sup>։

Իրանի ռազմական և վարչական ապարատի ֆինանսավորման հիմնական աղբյուրը հարկերի ձև ստացած ֆեոդալական սենատն էր, որի մի մասը պետութեան ձեռքն էր անցնում խամ մետաքսի ձեով։ Բոժոժի մեծաքանակ վաճառքից զատ պետական մեծաշնորհ էին կազմում ակնահանքերն ու մետաղահանքերը, զբամահատութեանն ու զբամափոխութեան զործը և այլն։ Իրանական տրանզիտի աշխուժացման միջոցով զանձարանի եկամուտներն ավելացնելու և երկրի ներսում գյուղի ու քաղաքի առեւտրական կապն ամրացնելու նպատակով Շահ-Աբրասար ջանաց ապահովել հագորդակցութեան անվտանգութեանը, կարգի բերեց պետութեան համար եկամտաբեր երկրամասերի — առավելապես Մազանդարանի — ճանապարհները, կամուրջներն ու բարձրանալիքները, կազմակերպեց պետական մանվածագործարաններ, հատկապես հող ամենելով զարդացնել մետաքսագործութեանը։ Վաճառականների առեւտրական ձեռնարկումների կողքին նա զարկ ավելց ֆեոդալների առեւտրական ձեռնարկումներին։

Իրանի վեհապետն ինքն իսկ չէր խորշում առեւորից։ Դեռևս առեւորականներին հովանավորող շահ Թահմազի մասին հայտնի էր, որ զբաղվում է մետաքսի, գահարեղենների և այլ ապրանքների առեւորով<sup>2</sup>։ Ֆիսկալ եկամտաւոր աղբյուր էին ծառայում այդ շահի ժամանակ նաև Թուրքիայի վրայով ներմուծվող թանկարժեք մետաղները, սրանցից արծաթը տալիս էր 20 տոկոս, ոսկին 15—16 տոկոս, պղինձը 18—20 տոկոս շահ, թեկուզ պիտի ասել և այն, որ

<sup>1</sup> Herbert Thomas, Relation du voyage de Perse et des Indes orientales, թարգ. անգլերենից, Paris 1663, էջ 263 և հա. 388 և հա.։ Gouvea, նույն տեղում, էջ 116։ Gabr. Chignon, Relation nouvelle de Levant, Lyon, 1671, էջ 255։

<sup>2</sup> «Առեւորութեանը», Ա, էջ 310։



այս առևտուրը կապված էր մեծ սիսկի և ծախսերի հետ, որչափ մետաղների արտահանումը Ռուբրիայում արգելված էր այդ ժամանակ<sup>1</sup>: Ավելի մեծ շահեր ընդունեցին իրանշահի եկամուտները Շահ-Աբրասի ժամանակ: Բոժոժի մի մասը նա ստանում էր Գիլանից որպես բնատուրք: Մյուս մասը ձեռք էր բերում գյուղացիներից ցածր գներով: Շահին գործվածքներ մատակարարող ճորտերի վիճակումն էր նաև բոժոժ բանեցնող արհեստավորության մեծ մասը<sup>2</sup>: Գանձված հում կամ գործված մետաքսի մեծ մասը արտահանվում էր շահի կողմից սպրանքավորվող առևտրական կորպորացիաների միջնորդությամբ կամ ախիվ բալանսի հիմնարով հանձնվում օտարերկրյա գործակալություններին<sup>3</sup>:

Հատուկ հոգ էր տանում շահը Ապահանի արվարձանում հաստատված հայ առևտրականների մասին: Դրանց նախնիները վաշելում էին իրանշահերի և սրանց եվրոպական կոնտրադենտների հատուկ ուշադրությունը, երբ ղեռ պոկված չէին Արաքսի ափերից՝ 1572 թ. կազմված իր տեղեկագրում վենետիկցի Վինչենցո դ' Ալեսանդրին վկայում է այն լավ ընդունելության մասին, որին արժանացել էին Զուղայի հայ վաճառականական ընկերության անդամները Վենետիկի դուքսի կողմից: Իրենց հերթին Զուղայի վաճառականության ներկայացուցիչները Ղազվինում օժանդակություն էին ցույց տվել իրեն, գեսպան դ' Ալեսանդրին, շահ Ռահմազի սրբուն ներկայանալու և պաշտոնական իրենց թղթերը հանձնելու ժամանակ<sup>4</sup>:

1631 թ. Հովհաննավանքում գրված արժանահավատ մի հիշատակարանում Իրանի կենտրոնում վերաբնակեցված հայերի քանակը հաշված է 10 հազար սուն<sup>5</sup>: Փոխադրելով ջուղայեցիներին Իրանի խորքերը՝ Շահ-Աբրասը իրավունք շնորհեց նրանց հատուկ արվարձան հիմնել մայրաքաղաքին կից, Զանդերուզ գետի ափին Նոր-Զուղա անունով: Նրանց ավազները հարգի էին որպես արքունի վաճառականներ-շահապատկան սպրանքները վաճառող և շահի

<sup>1</sup> «Ուղեգրություններ», էջ 349:

<sup>2</sup> Della Valle, նույն տեղում, II, էջ 74 և Gourea, նույն տեղում, էջ 417:

<sup>3</sup> Նույն տեղում, II, էջ 29 և հա., Gourea, նույն տեղում, էջ 457 և հա.: Tavernier. Les six voyage en Turquie, en Perse et aux Indes, Paris, 1679, էջ 588: Pouillet, Nouvelle relations du Levant, Paris 1668, էջ 267 և հա.:

<sup>4</sup> «Ուղեգրություններ», II, էջ 331 և հա.:

<sup>5</sup> Sbe'u Հայկական ՍՍՌ Մտահնագրան, ձեռ. № 2381, էջ 253ր:

կողմից հովանավորված թաշիր-է խասահ-յն շարֆֆին կոչված խոջաներ: Թն որբան էր բարձրացել այդ հասարակախափի դիրքը, այդ մասին կարելի է եզրակացնել XVII դարի լավատեղյակ մի դիտողի պարզաբանությունից. «Խոջա ասածդ,—գրում է սա,—նշանակում էր հարստություն և առատություն, ոչ միայն դրամի և գանձի, այլև մատուցած ծառայության, առաքինության և մտածելակերպի: Այս պատճառով պարսիկները բարձր իրենց գրողներին և առաքինությունները աչքի ընկած մարդկանց սովորություն չունին խոջա տիտղոսով կոչել»<sup>1</sup>: Եահը ավելից Նոր-Ջուղայի հայ խոջաներին նույն դիրքը սրպխսին Թուրքխյում ոմնեին նրանց ժամանակակից հայ «չելեպիները» Նոր-Ջուղայի բարձրագիր խոջաները, սրպխս Արեմուտրի և Արեւելքի ճանապարհներին ծանոթ մարդիկ, ի սպաս էին դնում էրանին ոչ միայն առևտրական իրենց հարուստ փորձը, այլև ունենալով լայն իրազեկություն՝ օժանդակում պետական գործերին իրենց խորհուրդներով ու գործնական ծառայություններով:

Եահ-Արբասը դեռ 1593 թվականին էր ջուղայեցի խոջա Նազարին ավել հատուկ սպասում՝ «յազազըս ազատութեամբ վարելոյ ի Պարսկաստան զտուրեւոտութիւն իւր»: Պիտի կարծել, որ խոջա Նազարը վաչկւում էր այդ արտոնությունը ոչ թե անձնապես, այլ սրպխս Ջուղայի հայ առևտրական ընկերության գլուխ: Իր ֆերմաններից մեկում Եահ-Արբասը գրում էր նոր-ջուղայեցիների մասին, թե քանի որ նրանք իր իսկ պատճառով լքել են իրենց ծննդավայրը, թողել իրենց տունն ու տեղը, մետաքսի հակերն ու ոսկիները՝ նոր բնակավայրում նրանց վրա շարտի նաչել սրպխս օտարականները<sup>2</sup>: Պատմում են, որ շահը լինում էր նոր-ջուղայեցիների տոնախմբություններին և նրանց մասնակից անում արքայական իր ճաշասեղաններին<sup>3</sup>: Դրվատելով բարձրագիր խոջաներին՝ ժամանակակից Զաքարիա Վաղարշապատցին գրում էր. «Բայց հոշակաւորն յայնժամ և այժմում ի մէջ ջուղայեցեացն Եահիխասենց խոջա Խաչիկի որդիքն էին՝ երեւելիք, փառաւորք, մեծաշուք և մեծահանդէսք, արքայամաջլիս և մուսահիպք (այսինքն՝ հանդիսակիցք և գրուցակիցք—Ա. Հ.) թագաւորին Պարսից համազուպանքն և համափալայքն (այսինքն՝ սեղանակիցքն և բաժակակիցքն—Ա. Հ.) մեծի Եապաղդին և խորհրդակից յամենայն իրազործութիւնս՝ խոջայ Աա-

<sup>1</sup> P. Bedik. Cehil Sutan, 1678, էջ 456:

<sup>2</sup> Տեք. Հոյհանյան, Պատմություն նոր-Ջուղայի, Նոր-Ջուղա, 1880, Ա. էջ 50:

<sup>3</sup> Ա. Մ. Դավրիժեցի, նույն տեղում, էջ 65:

փարն ասեմ և խոճայ նազարն բազմաբախտը<sup>1</sup>: Նույնը վկայում էին նաև եվրոպական հին ուղեգրողները: Ինչ խոսք, որ շահը նման գիրք էր տալիս սոսկ Նոր-Ջուզայի մեծահարուստ խոջաներին՝ նրանց վարկավորելով, խրախուսելով նրանց եկեղեցիների և ապարանքների շինարարությունը, միաժամանակ նրանց ձեռքը տալով արվարձանի վարչությունն ու ներքին գործերի անօրինումը: Խոջա Նազարի սրգին՝ խոջա Սաֆրազը, քալանթարություն պաշտոնում հաջորդելով հորը, ստացել էր ազգակիցների աջքում արտակարգ գիրքայգ մասին մեզ կարող են վկայել նրա գերեզմանաքարի վրա բանդակված այս տողերը.

Ա՛ իմ աննման խոջա, որ էիր Հայոց թագաւոր,  
Անուժա Սարֆրազ կոչի՝ սրնթաց զօրեզ գառաւոր,  
Եկօր, թո ճարտար լեզվէս զարմանար աճէն թագաւոր,  
Շառ իշխան թո աւսուտ փափազ, աճեզառես իշխան փառաւոր:

Ուղեգիրները, ինչպես և մեր ժամանակ իսկ գիտելի հին հուշարձանները, վկայում են, որ Նոր-Ջուզան Սպահանի հեռ միացնող պողոտան ամենազեղեցիկին էր ոչ միայն Իրանի մայրաքաղաքում, այլև ողջ Իրանում: Շահ-Աբրաա I-ի ժամանակ Իրան այցելած սպանական ղեսպանը վկայում է թե՛ «նոր-ջուզայեցիների տները մեծ մասամբ զեղեցիկ են և հոյաշեն, առաստաղներն ու պատերը նկարազարդված ներքուստ»<sup>2</sup>, Շահ-Աբրաա II-ի ժամանակվանից Նոր-Ջուզայում պահպանված հայ խոջայական ապարանքները պարզարող որմնանկարներն ու խոջաների պատվերներով կատարված մանրանկարները և դրանց մեջ հատկապես Դավթիժեցու հիշատակած վարպետ Մինասի վրձինի գործերը պատկանում են Սեֆյան շրջանի հայ-իրանական արվեստի լավագույն նմուշների շարքին:

Ջուզայի խոջաներն արդարացրին շահի հույսերը: Իտալացի ուղեգիր Դեյլա Վալլեն, ղեկերելով այդ ժամանակ Իրանի մայրաքաղաքում, պատմում է, որ երբ Շահ-Աբրաաը մետաքսի արտահանման աճուրդ կազմակերպեց, միայն Նոր-Ջուզայի առևտրականները խիզախեցին ընդունել նրա պայմանը, վճարելով առևտրական թաղավորին մետաքսի յուրաքանչյուր բեռին (=36 բաթմանին) 50 թուման ոսկեգրամ: Զուր չէր գրում Դեյլա Վալլեն, թե ջուզայեցիք պարսից թաղավորի համար այն են, ինչ որ ջենովացիները սպանա-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձև. № 201, էջ 612ր:

<sup>2</sup> Figveroa, նույն տեղում, էջ 285:

կան թագավորի համար, առանց թագավորի նրանք չեն կարող ապրել, ինչպես և թագավորն առանց նրանց<sup>1</sup>։

Հիրավի, արտոնված խոջաներն իրենց երախտապարտ էին համարում արքայական լիառատ հովանավորության համար։ Հայաստանի ավերողը նրանց աչքում դառնում էր նրա վերակառուցողը։ Դավրիժեցին զուր չէր հարկ համարում մանրամասնորեն հերքել Շահ-Աբբասի քրիստոնեասիրության, աշխարհաշինության ու խաղաղասիրության մասին տարածված գրույցները։ Նշում էր մասնավորապես, որ կարճ ժամանակամիջոցում գրեթե ոչնչացան Մազանդարանի և Շիրազի հայ ու վրացի գյուղացիներն ու արհեստավորները, չգիմանալով մերձկասպյան ճահիճների քայքայիչ ներդործությունը կամ միաձուլվելով տեղացիների հետ ու անհետանալով մահ-մեղականության ծովի մեջ<sup>2</sup>։

Նման փաստերը չէին կարող մտահոգություն պատճառել մեծափարթամ այն խոջաներին, սրանց բարեկեցության ու վայելքների, արտոնությունների ու ձեռնարկությունների վրա տարածվում էր Շահ-Աբբասի հոգածու բազուկը։ Խոջայական վերնաշերտի համար ստեղծված բացառիկ գրությունը հասկանալի է դարձնում հայ այդ մեծատունների իրաճասիրական դիրքավորումը։

Կղեմես VIII պապի վերջերս հրատարակված մի գրությունից պարզվում է, որ XVII դարի սկզբին, թուրքերի անդրկովկասյան տիրապետության ժամանակ, Ջուղայի վաճառականության ներշնչումով էջմիածնի Մելիքսիթ կաթողիկոսը, մեզ նախածանոթ Հովհաննես Տերզյուս ձեռքով Հոսոմ հղած իր հպատակության թղթում, անդրադարձած է եղել հայ ժողովրդի բազմադիմի տառապանքներին, այն հանդամանքին, որ այդ ժողովուրդը ընդ կրկաթեղէն լծով անհնարին բռնութեան թուրքաց հարստահարի և ի գտնադոցն կապանս անկեալ հեծէ»<sup>3</sup>։ Գիտե՞ք արդեն, որ ընդառաջելով Շահ-Աբբասին, Կղեմես VIII-ը նույն այդ պահին հետամուտ էր կնքելու համաձայնագրական մի կտալիցիա, որի մեջ մտնելու էին ի միջի այլոց հոսմեական կեսարն ու Մոսկվայի ցարը. ընդամին մոսկովյիներին պապն առաջարկում էր օժանդակություն ցույց տալ իրանցիներին-

<sup>1</sup> Della Valle, նույն տեղում, III, էջ 263:

<sup>2</sup> Ա. Կ. Դավրիժեցի, նույն տեղում, էջ 133 և հ.ա., նույնն են վկայում նաև՝ նույն տեղում, էջ 361. Tavernier, էջ 314 և հ.ա., 119: Olearius, Adam. Oftt beehrte Beschreibung der neuen Orientalischen Reiss, Schleswig 1647, S. 145. Du Mans, նույն տեղում, էջ 182 և հ.ա.:

<sup>3</sup> Հանդես ամսորյառ, 1934, էջ 238:

րին և վրացիներին՝ նրանցից խլված հողերը ևս ստանալու համար: Մելիքսեթ կաթողիկոսի աթոռակից Դավիթ կաթողիկոսի մասին հայանի է ի դեպ, որ 1603 թվականին, Երևանի պաշարման ժամանակ նա դիմում էր հռոմեական կայսրի իրեն այցելած Ֆերկայացուցիչին՝ Տեկտանդերին՝ միջնորդել շահի մոտ հատկապես հայերի օգտին, որպեսզի Իրանի շահը ձեռք չառ նրանց կրոնին, բրիտտոնեական դավանությունն ու «այլոք հնություն ունեցող ազատություններին» («ihren uralten Freyheiten») և որպեսզի նա վերագործնի նրանց այն, «ինչ խլել են նրանցից թուրքերը»<sup>1</sup>: Պիտի կարծել, որ Սուլթանշահի գործակից Տերզնյին հետամուտ էր այս պահին միջնորդություն հարուցելու պատի և եվրոպական պետությունների առաջ՝ հայերի հին ազատությունների ու իրավունքների «վերականգնման օգտին»:

Բոլոր այս դիմումների մեջ հայերի ակնկալությունները վերաբերում էին միայն Թուրքիային: Ճիշտ է, սրտը ակնկալություններ օւնէր Մելիքսեթ կաթողիկոսը նաև Իրանից, սակայն դրանք քաղաքական բնույթ չունէին: Մերկանախի հաշիվների մեջ խճճված և ջուղայեցի մի խումբ խոջաների թեղադրանքներով շարժվող այդ կաթողիկոսը ավելին չէր խնդրում պապից, քան միայն նրա միջնորդությունը սպանական թագավորի առաջ՝ թեթևացնելու Թրմուզ հովանդատում հայ առևտրականներից դանձվող մարսերի շափր: «Զի յանուանի շահաստանի անդ յՈրմուտ (=Հորմուզ),—գրում էր Մելիքսեթը,—որ ի Պարսից ծոցին կայ, յորում յայցոց բրիտտոնեայ վաճառականաց վասն տուրեհառիկ վաճառաց մտիցն և էլիցն ի սակ տասանորդի հայն պահանջին, ի նոցունց Հայցոց նոյն սակ կրկին շափով օրպէս յանհաւատիցն պահանջի, ի մեծ վնաս նոցին և իրաց և համբաւոյ»<sup>2</sup>: Հայոց կաթողիկոսը այսքան էժան էր ծախում Հորմին հայոց եկեղեցու հպատակության մասին իր արած ազդարարությունը:

Մի քանի տարի անց, վերը հիշված Դավիթ կաթողիկոսը, ըստ երևույթին փոքր-ինչ ավելի լայն մտահոգությունների տեր մի մարդ, բան իր աթոռակիցը, դեղերելով Սպահանում, ավարտափնյան կաթողիկ կրոնավորների ներշնչմամբ ու միջնորդությամբ, 1607 մայիսի 13 թվակիր հնազանդության թուղթ է հղում Պողոս IV պապին իր և իր «խղճալի ժողովուրդի ու արհամարհված հազարականության անունից»:

<sup>1</sup> Kakasch, նույն տեղում, էջ 115:

<sup>2</sup> «Հանդես ամսօրյա», 1931, էջ 238:

Այս թղթով կաթողիկոսը խնդրում էր պապի միջնորդությունը, արպեսզի շահը հոգևոր և աշխարհիկ գործերի համար ինքնավարություն շնորհի իրենց՝ վերականգնելով թուրքերի կողմից խլվածը<sup>1</sup>: Այդ գրությունն մեջ ևս խոսքը ոչ թե իրանական, այլ միայն թուրքական լծի մասին էր: Այս, իհարկե, չի նշանակում, թե բռնագաղթի ենթարկված հայերի մեջ չկային մարդիկ, որոնք արանջում էին նաև իրանի գաթանություններից ու երազում... «Ֆրանկների» օգնությամբ ազատագրվել ոչ միայն թուրքական, այլև իրանական լծից: 1608 թվականի Սպահանի մի հիշատակարանում Ստեփանոս քահանան գրում էր. «Արդ ի յետին սառնացեալ ժամանակիս մնացեալ գերի ամենայն հաւատացեալքս Քրիստոսի ի ձեռն պարսից, անզերծանելի. յիշելով զբանն Ներսեաի, որ ասէ, թէ զալ ազգին ֆռանդաց և նորոգումն լիցի եկեղեցեաց քրիստոնէից և ամենայն հաւատացելոց»...<sup>2</sup>: 1608 թվականին Կղեմես VIII-ին գրած նամակում կարմելիտ կրտսնավոր Պոլ Սիմոնը հագորդում էր. «Հայոց պատրիարք, մի շարք արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ և ուրիշները թախանձում են, որ Հռոմի պապը շքի իրենց և շմերժի իր օգնությունը», հիշելով իրենց հին սրբերի մարգարեությունները, որ լատին (sic!) իշխանները պիտի դան իրենց ազատելու մահմեդականների ստրկությունից: Հայանում է ի դեպ նաև, — որ նման սպասումներ ունեին նաև բռնություններից նեղված թուրքերից շատերը<sup>3</sup>:

Նկատենք, սակայն, որ այս արամագրությունը ընդհանրացած չէր Սպահանի մեջ: Այսպես, դեռ 1607 թվականին Սպահանում մի այլ հիշատակագրող, ումն Խաչատուր քահանա, գրում էր ուղղակի հակառակը. «Բայց գոհութիւն Տեառն, — գրում էր այդ քահանան, — որ հանց համարձակ կնւ պաշտեն զՔրիստոս Աստուած այս գերի անկեալ ազգս հայոց, որ յամենայն տեղիս և պայծառապես զարդարեցին ժամկոչ՝ զժամն հանց բարձր գոչէ ձայնիւ որպէս զտաճկաց մոլախն այլ առաւել, և զմեռեալքն թաղեն, խաչլաման և շուրջատով՝ բարձր ձայնիւ շարկան (երգեն) և հանց համարձակութեամբ օրհնեն զշուրն յատուր յայտնութեան փրկչին որպէս ի ժամանակս Լուսաւորչին և Տրդատայ թագաւորին...»<sup>4</sup>:

<sup>1</sup> Gouvea, նույն տեղում, էջ 112:

<sup>2</sup> Conybeare, Catal. of Brit. Mus. Ms., № 24.

<sup>3</sup> „Many of the Turks themselves, on account of the tyranny the will go there: they say so openly...“. „A Chronicle of the Carmelites in Persia“, v. I, էջ 99:

<sup>4</sup> Մ մ ր ա տ յ ա ն, Նկարագիր ս. Կարապետին վանից Երնջակայ և շքր-ջակայից նորա, էջ 182:

Պիտի կարծել, որ առկա կացութիւնից այսքան զահացած տեր  
հաշատուր քահանան արտահայտում էր Նոր-Ջուղա ազգավիճած  
մեծահարուստ հայ խոջաների արամադրութիւնը: Արանք ոչ միայն  
դժգոհ չէին տիրող վիճակից, այլև համամիտ չէին անդամ Պավիթ  
կաթողիկոսի ազերսանքին՝ թուրքերի խլածը եւ դարձնելու մա-  
սին: Զայրացած էին մանավանդ ավզուատինյանների հետ կաթողի-  
կոսի վարած բանակցութիւնների առիթով, քանի որ դրանք կարող  
են վնասել հայերի բարեհուստիւնը համբավին: Նրանցից ոմանք  
պիտի որ նուշնիակ հասկացրած լինեն շահին, թե ճաշաչել չուտի  
գերիշխանութիւնը՝ նշանակում է երես դարձնել Երանից, քանի որ  
այդ քայլի հետևանքը պիտի լիներ միայն Հայաստանի նվաճումը  
բրիտանյա սրէի իշխանի գենթով:

Եթե անգամ ճիշտ չէ այս վկայութիւնը, գեթ ճշմարտանման է:  
Մեծահարուստ խոջաները շատ լավ էին ըմբռնում չուտի գերիշխա-  
նութիւնը և Հայաստանի նվաճման հեռանկարի ներքին կապը: Իրրե  
հավատարիմ հպատակներ, Սպահանի արվարձանի հայ խոջաները  
մերժում էին հայերի կողմից քաղաքական սրէի հարցադրում: Այս  
կետում նրանց արամադրութիւնները համընկնում էին հայ այն  
եկեղեցականների գիրքավորմանը, որոնք համոզված էին, թե բոլոր  
իր դաժանութիւններով հանդերձ, Շահ-Աբբասի բռնատիրութիւնն  
ավելի մեծ բարիք է հայերի համար, քան «Ֆրանկ»-ների ձեռքով  
«ազատագրվելու» խարտիկ մերածը: Այսպէս՝ Գր. Գարանաղցին  
եւ մերկացնում էր եզուիտ քարոզիչների խաղերը և ոչ մի վտահու-  
թիւն չունէր նրանց գայթակղել խոստումների նկատմամբ: Գոհ էր.  
որ հայերն ոմնէին գեթ Շահ-Աբբասի պէս թագավոր, որը խնամար-  
կում է եկեղեցուն, երբ «մեզ մէկ գեղջի աղաշահնի (= ոստիկանի)  
չափ իշխանութիւն ոչ ուրեք երեւէր»<sup>2</sup>:

Հետագայում եւ, ինչպէս պիտի տեսնենք քանիցս, Նոր-Ջուղա-  
յի խոջաները մերձենում էին հայ ազգային-քաղաքական խնդիրնե-  
րին հաճախ միայն Երանի կամ ավելի ճիշտ՝ Սեֆեւիլիների քաղաքա-  
կան շահախնդրութիւնների տեսանկյունից: Գերմանացի ուղեգիր  
Հայնրիխ Պոզերը, 1621 թվականին, այցելելով Նոր-Ջուղա, հայազ-  
գի նշանավոր խոջա-Մուրադի մասին պատմում է, թե՛ նրա կար-  
ծիքով բոլոր կրոնները հավասարաչափ երկյուղածութիւն են ներշնչ-  
ում դէպի աստված, և միայն սրան է հայտնի, թե ո՞րն է կրոններից  
լավագուշնը: Մի բան սակայն պարզ է, հարում էր խոջան, որ աշ-

<sup>1</sup> Gouvea, նույն տեղում, էջ 113:

<sup>2</sup> Գարանաղցի, նույն տեղում, էջ 300 և հ.ա.:

խարհը չի տեսել ավելի առաքինի թագավոր, քան Մահմեդի կրոնը զավանող Շահ-Աբբասը<sup>1</sup>:

Կաթոլիկ կրոնը այս խոջայի համար հանդուրժելի էր այնչափ միայն, որչափ այն հանդուրժելի էր շահնշահի համար: Այսպես լինելուց հետո անսպասելի ոչինչ չկա, երբ 1628 թ. ուրիշ մի խոջա, Նոր-Ջուղայի քալանթար խոջա Նազարը, հնարավորություն էր ստեղծում կապուչինյան կրոնավոր Պացիֆիկի համար ներկայանալ Շահ-Աբբասին՝ Սպահանում միսիա հիմնելու իրավունք ստանալու խնդրով<sup>2</sup>: Հավանորեն, խոջա Նազարի խնդրանքով և նույն այդ Պացիֆիկի միջոցով էր Շահ-Աբբասը իր հերթին դիմել Փրանսիական արքունիքին և Իրանի ու Մարսելի միջև ազատ երթևեկի արտոնություն պահանջել հայ խոջաների համար: Էյուզովիկոս XIII-ի և կարգինալ Ռիշելիտայի աստրագրությամբ 1629 թվականի նոյեմբերի 23-ին այս մասին հատուկ պատենա շնորհվեց հայ խոջաներին<sup>3</sup>: Նույն այդ տարում խոջա Նազարը խնդրում էր հոռմեական Պրոպագանդայի ժողովի միջնորդությունը պապի առաջ, որպեսզի եկեղեցական պետության և արեմտաեվրոպական մշուս պետությունների մեջ հատուկ կայաններ արվեն հայ խոջաներին, միջոց տալով սրամեց արտահանել իրենց ապրանքները առանց մարսավճարումների: Հաջորդ տարում Պրոպագանդայի ժողովը ընդունեց խոջայի խնդիրը եկեղեցական պետության նկատմամբ, սակայն էական այն վերապահումով, որ խնդրված թուլլաավությունը արվի միայն կաթոլիկ կամ կաթոլիկանալ ցանկացող խոջաներին: Ժողովը համաձայն էր նույնօրինակ իրավունքի համար դիմում անել նաև մշուս պետություններին: Իր այս որոշումը Պրոպագանդայի ժողովը սրտաբացորեն պատճառաբանում էր նախ նրանով, որ հայ կաթոլիկ վաճառականների միջնորդությամբ մեծաթիվ հայեր «եվախրչան հերետիկոսությունից» կառաջնորդվեն կաթոլիկ եկեղեցու ծոցը և ապա նրանով, որ հայ վաճառականության միջոցով կարելի կլինի քրիստոնյա երկրներին մատակարարել արևելյան բազմազան ապրանքներ և մաճավանդ՝ մետաքս: Այս նույն խմատով պատասխանեց նոր-ջուղայեցիներին նաև պապը<sup>4</sup>:

<sup>1</sup> Poser H., Leben und Tagesgeschichte, worinen das Tagebuch seiner-Reise von Constandinopel aus durch Bulgarien, Armenien, Persien und Indien, Iena, 1675, էջ 20:

<sup>2</sup> P. Pacifique, Relation du voyage en Perse, Lille, 1632, էջ 123:

<sup>3</sup> Ալիշան, Սխոտան, էջ 156:

<sup>4</sup> «Հանդես ամսօրյա», 1934, էջ 513 և հա.:



Պապական ծուղակի մեջ հեշտ ընկնողներից չէին նոր-ջուղայեցիները: Բարի հարարերությունների մեջ մտնել Հոռոմի հետ՝ այդ կնպաստեր նրանց շահաստացությանը, բայց հպատակվել Հոռոմին՝ կնշանակեր զժողի Իրանի հետ: Երբ 1613 թվականին Մելիքսեթ կաթողիկոսը առանց Նոր-Ջուղայի հաճության, վանեցի Զարարիա վարդապետի միջոցով հպատակության նոր թուղթ ուղարկեց Հոռոմ—զժրախառար հայտնի չէ, ինչպես անգամ ինչ գնով էր վաճառքի հանում նա հնազանդության իր երաշխավորագիրը—խոջա նազարի սագրաներով Շահ-Աբբասը կալանքի ենթարկեց և մահվան սպառնալիքի տակ զրեց խաշազող կաթողիկոսին: Միայն Շահ-Աբբասին Անգրիկովկաս հրավիրող քշտաղցի մելիք Հայկազի ազդեցիկ միջնորդությունը փրկեց նրան ստույգ կործանումից: Ինքը կաթողիկոսն իսկ գրում էր այդ մասին Հոռոմի պապին. «Նրթեալ թշնամիք մեր պատմեցին զամենայն անցս թագաւորին Պարսից, որում ածայ ևս յանդիման սակաւիկ մի և վճարեալ էր վասն իմ. հագիւ ուրեմն զերծայ ի զլխապարան լինելոյ. Ո՛հ յորպիսի ազէտըս վտանգի գտանիմք. վասնզք, որք շնեքեն փնչ վճարել զորոց զրէքդ»<sup>2</sup>: Ավելի լավ բախտի շարժանացով և թղթատար Զարարիա վարդապետը: Կեսարացի Գրիգոր պատրիարքը սրան մասնեց թուրքերի ձեռքը՝ «իբր լրանս պարսից թագաւորին կողմանէ զրկված՝ պատերազմը վերանորոգելու համար»<sup>3</sup>: Բողոքելով կաթողիկոսի կողմից Հոռոմ հզված հպատակության թղթի գեմ, Կեսարացին գրում էր Մելիքսեթին. «Ձինչ կուզես այս ուղորմելի և տառապեալ ազգէս Հայոց. է՛ր շես թողոր զիւրեանս յիւրեանց ազրատութեանն. զի թէպէտ որ ազգս Հայոց մարմնով ծառայ են և ազրատ, այլ քրիստոնէական ուղղափառ հաւատովս ազատ են, հոգով փարթամ և հարուստ օրինօք և պատուիրանօք... Ձի մենք ամենեքեան հաստատոմն կամք ի վերայ ուղղափառ սուրբ հաւատոյս մերոյ. և նդռլեմք և անիծեմք զհաւանօղն Քաղկեդոնի սուտ ժողովոցն և միաբանօղս ընդ Քոանկացն, թէ՛ կաթողիկոս է, թե՛ վարդապետ, թէ՛ էպիսկոպոս, թէ՛ քահանայ, թէ՛ իշխան և թէ՛ ուսմիկ աշխարհական...»<sup>4</sup>:

Եթե սակայն Շահ-Աբբասից հետո Իրանում սկսվեց մի շրջադարձ, որը ի վիճակի պիտի լիներ փոքր-ինչ հուզել անգամ տիրա-

<sup>1</sup> Տե՛ս Գ ա լ ե մ ք յ ա ը յ ա ն, Գ. Վ., Կենսագրություններ, Վիեննա, 1915, Ա, էջ 44 և հտ.:

<sup>2</sup> Շտնդես ամսօրյա», 1934, էջ 250:

<sup>3</sup> Գ ա լ ե մ ք յ ա ը յ ա ն, նույն տեղում, էջ 315:

<sup>4</sup> Գ. Ս ը վ ա ն ձ տ յ ա ն, Թորոս Աղբար, Բ, էջ 288 և հտ.:

սլաշա խոշաներին, այդ տեղի ունեցավ հիմնականում ոչ այն պատճառով, որ ապերասանությունն ու ապիկարությունը մրցության մեջ էին նրա ժառանգների ժամանակ: Շահ-Աբբասի ժառանգները նպաստեցին այդ շրջադարձին ոչ այնքան նրանով, որ մեծ նախորդի մանր հաջորդներ եղան, որքան նրանով, որ հանդիսացան նրա քաղաքականության արատավոր սխտեմի կույր ժառանգորդներ: Շարունակելով Շահ-Աբբասի քաղաքականությունը՝ նրան հաջորդած տկարամիտ Սեֆյաններն իրանը դարձնելու էին անտեսապես քայքայված, միջֆեոդալական ներհակություններով սլառակտված, ներքին ապստամբություններով բռնված և դրսեկ նվաճողների սուքերի տակ հեացող գժրախա մի երկիր:

### 3. ԻՐԱՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՒԹԱՄԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ

Իրանը եվրոպական կիսագաղութ դառնալու նախապահին: «Ենթադրյալն զարք» և հայեր: Հայ առևտրականների տագնապը: Անխնայ իրանի անկումի սկզբնավորումը:

Իրանոսյա հաբեապոստոլները XVI—XVII դարերում: Հայ եկեղեցին և իրանական գլխահարկը: Էքսիպոսի եվրոպացիներն ու մեռածարաշխման պրակտիկան: Արևմտահայերի դիմադրությունը: Հակամարտ խմբավորումներ հայերի մեջ: Հակոբ Զուղայեցի և Նղիազար Այնբապցի: Ֆինանսական տագնապ: Երևմտաֆեոդալիզմը: Նոր դժվարությունների առաջ:

Այլևայլ հակոտնյանների կառչած՝ Շահ-Աբբասը ջանաց զարձնել Իրանը կենտրոնացած և ներքին ու արտաքին իր թշնամիների դեմ պայքարելու ունակ մի պետություն: Բայց այն, ինչ ստացվեց ի վերջո, ներքին ապստամբությունները ճնշելու կամ արտաքին ագրեսիայի դեմ պաշտպանվելու ունակ մի պետություն չէր, այլ իր անկախության համար պայքարելու անզոր, անզանալի անկման դատապարտված ֆեոդալական բռնատիրություն:

XVI դարի վերջերին անգլիացի Շիրլի եղբայրները շահի հրամանով կազմակերպեցին իրանական հեծյալների ու հետևակ թվանկչիների կանոնավոր զորք և թնդանոթածիզ զորամաս: Ռազմական մի նորամտածություն էր այդ, որ 1604 թվականին Երևանի պատերի տակ նպաստեց Իրանի հաջողությանը: Շիրլի եղբայրները, իսկ մի քանի տարի անց Եսա դերմանական կայսրի դեսպան Տեկտանդերը, ձգտում էին ամրացնել Թուրքիայի դեմ Իրանի քաղաքական ուժը: Առաջինները՝ Վենետիկի ձեռքն անցած թուրք-իրանական ցամաքային առևտուրը քայքայելու, վերջինս քաղկեդոնյան ռազմաճակատը Թուրքիայի դեմ ուժեղացնելու հաշվով:

1622 թվականին անգլիական և հոլանդական նավերի օգնությամբ Շահ-Աբբասը խլեց պորտուգալացիներից Հորմուզ կղզին և

հիմք դրեց Բենդեր-Աբբասի նաւահանգստին: Շահի նպատակն էր յեանտյան առևտուրը թեքել թուրքական ճանապարհից դեպի Հնդկական օվկիանոսը և զրանով թուրքերին զրկել կարավանային տրանզիտի եկամուտներէից<sup>1</sup>:

Սա ևս մի գործ էր, որ, ըստ ամենայնի, համընկնում էր անգլիացիներին շահերին: Ջրի շէին առաջարկել նրանք Իրանին իրենց ծառայությունները: Դուրս բշելով պորտուգալացիներին, անգլիացիները ձեռք բերեցին Պարսից ծոցում Ջասկ նավահանգիստը, որը զարձաւ Հարավային Իրանում նրանց ազդեցության հենարանը: Հորմուզը խելելու գործում ցուցց ավաժ օժանդակության համար նրանք ստացան Բենդեր-Աբբասի մարտային եկամուտների կեսը և, բացի այդ՝ Իրանում ազատ առևտուր վարելու իրավունք<sup>2</sup>:

Շահ Թահմազի վարչության վերջում Իրանի պետական մանուֆակտուրաները գտնվում էին տակավին իրենց վերելքի մեջ: Ստրկական աշխատանքի շահագործման վրա կառուցված մանվածագործութունը զիջում էր իր տեղը համարությունների մեջ կազմակերպված ազատ արհեստագործությանը: Մետաքսագործության զարգացմանը նպաստում էր այն հանդամանքը, որ պետական գանձարանը Թահմազի ժամանակ հրաժարվել էր արհեստավորներից և առևտրականներից գանձվող «թամուզ» կոչված տուրքերից<sup>3</sup>: Արհեստագործության և առևտրի համար նպաստավոր այս զրոյթյունը, հիմա պիտի կորցնէր փր նշանակությունը: Թուրքերի դեմ դաշինք առաջարկելով Կղեմես VIII պապին ու կիրոպական կաթոլիկ պետություններին՝ Շահ-Աբբասը պատրաստակամություն էր հայտնում կիրոպական առևտրականների ու քարոզիչների առաջ բացելու Իրանի դժները՝ հատկացնելով նրանց ամեն տեսակի պաշտպանություն, ու շղենկով որոշ խտրություն նրանց ու տեղացիների միջև<sup>4</sup>: Հետագա Անֆելիները բռնեցին մի ուղի, որով բայել էին նաև նրանց օսմանյան թշնամիները: Տեղական

<sup>1</sup> Gouvea, նույն տեղում, էջ 157 և հա., Della Valle, նույն տեղում, II, էջ 224, Herbert, նույն տեղում, էջ 278 և հա., Krusinski, Prodrum ad Tragicam vertentis belli Persici Historiam, Leopoli, 1740, էջ 150:

<sup>2</sup> Herbert, նույն տեղում, էջ 100 և հա., Du Mans, նույն տեղում, ներած. XXVI և հա., էջ 6 և հա.: Որոշ արտոնություններ ստացան նաև հոլանդական նավատերերը. Du Mans, նույն տեղում, ներած., XXXVI և հա.:

<sup>3</sup> И. П. Петрушевский, Очерки, էջ 77 և հա.:

<sup>4</sup> „A. Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 83:

արդյունաբերության և առևտրի պետական պաշտպանության փոխարեն, հասուկ արտոնագրեր (կապիտուլյացիաներ) շնորհելով եվրոպացիներին՝ լայնորեն բացում էին նրանց առաջ իրանական առևտրի դռները:

Այս նշանակում էր վնաս հասցնել տեղական արհեստագործությանը և արդյունաբերությանը և ապրել զլխավորապես փ հաշիվ կեղեքվող և թալանվող գյուղացիության: Շիշտ է, ամբողջական և հոլանդական ընկերությունները պարտավորվելու ստանձնեցին Իրանի պետական մասնագործարաններից տարեկան որոշ քանակությամբ մետաքս փնել, սակայն մեծ շէին այդ պարտավորությունները և բացի այդ Իրանի եվրոպական կոնտրադենտները ջանք էին անում խուսափել զրանց կատարումից: Մանավանդ անդրիացիները հանդես էին գալիս հաճախ որպես Իրանի մենտորներ: Նրանք սկսում էին դիտել Իրանը որպես կիսադազոթային մի երկիր, ուր ազատորեն մուծել կարող էին իրենց ապրանքը և ստանալ հումուլյթ, ամենից առաջ իհարկե ամենատանհրաժեշտ հումուլյթը՝ բոժոժ կամ խամ մետաքս: Իսկ թե ինչ վիճակում էր գտնվում այդ հումուլյթի արտագրումն ու շահարկումը, սրի վրա հանդշում էր մետաքսամանվածքի և մետաքսավաճառքի ամբողջ գործը Իրանում՝ այդ մասին խոստեն վիճարկություններ են տալիս գյուղացիական այն ապստամբությունները, որոնք պարբերաբար բռնկում էին հումուլյթի բռն հայրենիքում՝ Գիլանում: Գիլանի խոշոր ապստամբություններից մեկը խեղդել էր հենց ինքը Շահ-Աբբասը:

1687 թ. Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի դպրատանը «արվեստ վաճառականության» սովորող մանուկների համար գրած իր «Աշխարհաժողով դիրք» կոչված դասագրքի հեղինակ Ռամազի որդի վարպետ Կոստանդը՝ վանական դպրոցի գաստպետը, նշելով լուրաքանչյուր երկրի առուժախի սովորություններն ու զները, ամփոփում է իր տեսությունը այս խոսքերով. «Այսչափ երկիր և այսչափ ապրանք և այսչափ քար ու կշեռք, որ յիշեցինք, ինձ այնպես թվի թէ ամենայն ապրանաց պրիմն, որ է գլուխն, ապրիշումն է և թերան, որ է մէջն, լօնդրեն (=մահուդն) այլ և սըքօնան, որ է ոտնն, լեղակն, ու նաղդինէն ոսկի և արծաթ այ...»<sup>3</sup>, Սակայն փաստ է, որ

<sup>1</sup> Pouillet, նույն տեղում, II, էջ 413 և հտ.: Sanson, Voyage ou Relation de l'étgt present du royaume de Perse, Paris, 1694, էջ 157:

<sup>2</sup> Chardin, նույն տեղում, էջ 162 և հտ.:

<sup>3</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, «Յուրակ ձեռագրաց Բողիյան դրագարանի», ձեռ. № 106: Հմմտ. նաև Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. 8443, էջ 167 և:

«ապրանաց պրիմ» ապրիշոումը սկսել էր արդեն Վիշել իր տեղը երրորդական նշանակություն ունեցած «լոնդրեի»-ն:

Իրանի մետաքսամանվածքը կորաքամակ նահանջում էր անգլիական մահուդի առաջ<sup>1</sup>: XVII դարի կեսերին իրանական գործվածքների արտադրությունն ու արտահանումը ճակատագրորեն դիմում էր դեպի անկում<sup>2</sup>: Տավերնյեի վկայության համաձայն, Իրանում արտադրված թավիշը, Վարբաֆն ու կերպասը մեծ մասով արտահանվում էր Մոսկովիա և Լեհաստան և միայն փոքր մասը՝ Արևմտյան Եվրոպա, ուր ավելի էժան էին նստում այդ տեսակի և որակի մանվածքները: Իրանական մանվածագործությունը հեռուհեռու դիմում է դեպի իր վայրէջքը, թե՛ ծավալով, թե՛ որակով:

Սրանում դժվար չէ համոզվել, համեմատելով ռուսական հավաքածուների մեջ պահված իրանական գործվածքների XVI և XVII դարի նմուշները: XVI դարի իրանական գործվածքների համար բնորոշող դիմանկարային օրնամենտները XVII դարում գրեթե անհետանում են: XVI դարի գործվածքների ուսույիստական, թեթև ու գրայիտը շարժումով լի մանրանկար ուզորները նահանջում էին XVII դարի խոշարանկար, սճավորված, նվազ նրբանկար ու միայն թեթև օրնամենտների առաջ: Իրանական ֆետգալիլովի քարայման և իրանական առևտրի անկման զուգընթաց կապտանում էր ու կոշտանում տեղական գործվածքների վաղեմի նուրբ սճը: Հետագա դարերում լիակատար քայքայման հասավ իրանական և Հեռավոր Արևելքի երբեմնի ծաղկած մանվածագործությունը: Արևմուտքի կապիտալիստական տեխնիկան հեղեղում էր ասիական շուկաները: արևելյան գործվածքների իմիտացիաներով<sup>3</sup>:

Եթե առաջ Հնդկաստանից Իրան ներմուծվող ապրանքների (համեմունների, շաբարի, մետաղի, մահուդեղենի, քաթանեղենի) կամ Իրանից Հնդկաստան արտահանվող ապրանքների (բոժոժի, մետաքսագործվածքի, խալիների, սաֆյանի) համար Իրանի առևտրականները պիտի վճարեին պորտուգալցի նավատերերին, հիմա նույն վճարումները պիտի անեին անգլիացիներին ու Դոլանգացի-

<sup>1</sup> Հատկապես արտասահմանյան գործվածքների սպառումը Իրանում նյութի մասին հիմա. Du Mans, նույն տեղում, էջ 180 և հա.: նաև էջ 102 և հա., 185 և հա.: Struys, Jean, Les voyages en Moscovie, en Tartarie, en Perse, aux Indes etc. (թարգմ. հօրանդերենից), Amsterdam, 1681, էջ 307:

<sup>2</sup> Tavernier, նույն տեղում, 1, էջ 656, Sanson, նույն տեղում, էջ 161, Du Mans, նույն տեղում, էջ 186 և հա.:

<sup>3</sup> Հիմա. Н. Н. Соболев, Очерки по истории украшения тканей, М.—Л., 1934, էջ 152:

ներին: Այն փաստը, որ ի պատասխան, այս ամենի, Իրանը հրա-  
ժարվում էր բաժանել անգլիացիներին հետ Բենդեր-Արբասի մար-  
տային մուտքը, չէր կարող այլևս կասեցնել Իրանի անտեսական  
վայրեջքը: Տնտեսական վայրէջքին զուգընթաց՝ Իրանը կորցնում էր  
նաև իր քաղաքական դիրքը, բռնելով գաղութարար պետությունների  
անտեսական մրցության և քաղաքական հակամարտությունների  
մարզերից մեկը գառնալու ուղին: Ակնբախտեն սկսվում էր իրա-  
նական ֆեոդալիզմի անկման այն շրջանը, որ հետագա մի քանի  
դարերի ընթացքում այդ երկիրը ասպարեկ էր դարձնելու ոչ թե տե-  
ղական, այլ արտասահմանյան կապիտալի տիրապետություն<sup>1</sup>:

Այս ամենը չէր կարող շանդրագառնալ նաև իրանահայ  
առևտրի վիճակին: XVII դարի վերջերին իրանահայ առևտուրը  
ապրում էր ակներև իր քայքայումը: Իրանահայ առևտրականների  
զգալի մասն այդ պահին արդեն փոխադրել էր իր գործունեությունը  
Իրանից Հնդկաստան:

Նկատելի էր գառնում նաև նրանց արտագաղթը դեպի Աստանա  
ծովափնյա կամ ծովամերձ քաղաքները, մասնավորապես դեպի  
Պոլիս, Ջմյունաթիա և Հալեպ, ուր նրանք առաջ էս մրցության էին

<sup>1</sup> Ներկա էջերում կանգ ենք առնում Իրանի անտեսական և քաղաքա-  
կան անկման ընթացիկ պատճառներին վրա, դանց առնելով Իրանի  
(ինչպես նաև Թուրքիայի) անկումը պայմանավորող բնական և սոցիալա-  
տիկական գործոնները, ինչպիսիններից մեկն էր. առևտրի համաշխարհային  
ուղիների փոփոխությունը: Վեր հանելով այս վերջին գործոնի նշանակու-  
թյունը, գրականություն մեջ փորձել են գրանով իսկ բացատրել ինչպես  
Իրանի (և Թուրքիայի), այնպես նաև Հայաստանի անկումը: Այսպես տակա-  
վին Ի. Շոպենն էր գրում, թե «Հավանորեն, Բարեհուսու չրվանդանի բացա-  
հայտումը և հնդկական առևտուրը դեպի ծովային ուղիները շրջվելը ավելի  
մեծ նշանակություն են ունեցել Հայկական թագավորություն անկման հա-  
մար, քան մասնակցականների բոլոր նվաճումներն ու գիշատիչ հարևանների  
ազերիչ արշավները: Այդ իրադրությունից հետո հայ կապիտալիստները, իրենց  
կարողությունը հայրենիքում շրջանառության մեջ գնելու հնարավորությու-  
նից զրկված, պետք է, որ անհրաժեշտաբար տեղափոխվեին Կ. Պոլիս, Պաքս-  
կաստան, Հնդկաստան և Ալեքսանդրիա. իսկ նրանց հեռացումով Հայաստանի  
առևտուրը ևս կորցրեց իր նախկին կարևորությունը» (И. Шопен, Историко-  
ческий памятник состояния Армянской Области в эпоху ее присоеди-  
нения к России, СПб, 1852, էջ 870):

Չմխախտվ պատմական հարակա սրկէ գործոնի նշանակությունը,  
համոզված ենք, սակայն, որ չի կարելի այն ազատուկ դարձնել պատմական  
ընթացիկ երևույթները բացատրելու համար, ինչպես այդ արել է իր շատ  
արժեքավոր գրքում Իվան Շոպենը:

դարս գալիս տեղական հայ առևտրականների հետ: Ի դեպ, այդ մրցության վաղ արտահայտություններից են գունեղ այն էջերը, որ հատկացնում է Գր. Դարանաղցին ջուղայեցիներին սեպտեմբեր համար: Շարժակեղծ իրենց շուն դեպի Արևմուտք, XVII դարի 60—70-ական թվականներին արևմտահայ առևտրականների հետքերով իրանահայ խաջաները ևս նստակեցություն էին ձևաքերում ի վերջո նաև Վենետիկում, Լիվոռնոյում, Մարսելում, Ամստերդամում, Լեհաստանում և այլ վայրերում: Այս հողի վրա նշանակալից է մի կողմից հայ ազգաբնակիչ մամուլի գործունեությունը Եվրոպայում, մյուս կողմից՝ կաթոլիկ քարոզչության ազդեցությունը հայ գաղութներում: Սրա հետ լծորդված էին նաև հայերի մասսայական գավառափոխությունը Լեհաստանում, ինչպես նաև Մխիթարյան միաբանության սկզբնավորությունը: Այս վայրերում հանդիպում ենք նաև առևտրի սուղիները մաշող հայ մարդկանց, որոնք, կապված Թրիլիսիի և Շամախու, Բավրիզի և Սուլթանյեի, Հալեպի և Պոլսի, Վենետիկի և Մարսելի հետ, արամազրված կամ հարկազրված էին ֆրանկների աշխարհապետության և կաթոլիկ եկեղեցապետության վերահսկողությանը ևնթարկելու հայ հասարակական-քաղաքական կյանքի իշխող գործոնները և այդ թվում նաև՝ հայ եկեղեցին: Եվ դարձյալ արևմտակարգական միախոնեղների քարոզչությունն սու բանավարությունները որոշ արձագանք էին զրտնում առևտրական հանգույցների և միջազգային ապրանքաշրջանառության հետ գոյված հայ քաղաքարևակչության այն վերնախավերում, ուր սոցիալական հանգրվան ուներ հայ ազատագրական լեզվեզրը: Հայ տեսիլների ու գուշակությունների մեջ արտահայտված ազատագրական տկնկալությունները նախորոշում էին քաղաքարևակ այդ խավերի գավառարանական դիրքը և մեծապես անդրադառնում նրանց քաղաքական վարքագծին արտասահմանում:

Բայց նշանակալից էին նաև Իրանի անտեսական կյանքում կատարվող պրոցեսների քաղաքական հետևանքները: Առևտրական եկամուտների ազդեցությունը հետզհետե ցամաքելու պատճառով պետությունը սկսում է զգալ զրամի քրոնիկական պակաս<sup>4</sup>, Այս մեկն էր այն պատճառներից, որոնք հարկազրեցին շահ Բամայիի և Շահ-Աբբասի ռազմական պետությանը մտածել տեսական խա-

<sup>4</sup> Chignon, նույն տեղում, էջ 75 և հա., Thevenot, Jean de, Suite du du voyage en Levant, Paris, 1674, էջ 16, Chardin, նույն տեղում, III, էջ 192 և հա., VI, էջ 161:



զաղության մասին: Ավելի լավ վիճակում չէր ջալալիների հարվածներից տկարացած և ազմական ճակատներում պարտութունների ուղին բռնած Մուհամեդ և Սուլեյման սուլթանների կայսերապետութունը:

XVI դարի վերջին տասնամյակից սկսած ջալալիների ապրտամբութունները մեծ ուժով բռնկվում էին Արևելյան Անատոլիայի և Փոքր Ասիայի մերթ այս, մերթ այն վայրերում՝ ցնցելով ամբողջ երկիրը և կաթվածահար վիճակի մասնակից պետության քաղաքական և ազմական տկար ապարատը: Մի քանի տասնամյակների առողութուն ունեցած այդ ապտամբութունները բավարար չափով ռուսմասիրված չեն, սակայն կասկած չկա, որ ջալալիների ապտամբութուններն են հենց, որ փշրեցին օսմանյան կայսրության մեջքը և վճռական դեր կատարեցին XVII դարի վերջերից ակնհայտ դարձած նրա թուլացման մեջ:

Հաճախ Թուրքիայի թուլացման պատճառը համարում են 1683 թ. Վիեննայի պարսպի տակ նրա կրած պարտութունը: Մինչդեռ փաստապես այդ պարտութունը Թուրքիայի թուլացման հետևվանք էր, բայց ոչ պատճառը: Մարբուր մատնանշում էր, որ Թուրքիան քաջքայման պրոցես է ապրում տակավին 1683 թվականին և որ «Օսմանյան հզորության և մեծության անկման ժամանակաշրջանն սկսվել էր դրանից ավելի առաջ»<sup>1</sup>: Օսմանյան իմպերիայի անկման սկիզբը պիտի որոնենք ջալալիների ապտամբութուններից նրա կրած հարվածների մեջ:

Հայաստանից դեպի Իրանի խորքերը կազմակերպված բռնագաղթի բացասական հետևանքները շատ շուտով ակներև դարձան Շահ-Աբրահաի համար: Մարդաթափ դավառներում գաղթից հետո անհնարին դարձավ որևէ դիմադրութուն ջալալիների հարձակումների կամ նրանց հետապնդող և դեպի Կասպից ծովերը առաջ շարժվող թուրք կանոնավոր զորքերի դեմ: Այս է պատճառը, որ Անդրկովկասի ուղությամբ վերսկսելով փր հակահարձակումները Շահ-Աբրահաը նպտատակահարմար տեսով հայրենիք վերադարձնել գաղթականների մի մասը: Այսպես՝ Գեղարքոնյաց երկրի մելիք Շահնազարի որդի մելիք Յավրու անունով արված հրամանագրում շահը նշում էր, թե՛ «որովհետև զգերիսն դառալին ծովակին Գեղամայ բաշխեալ եմք, ապա ուրեմն պարտ է առ որս և գտանիցին՝ թէ առ երևելի նախարարս, առ յատկացեալ արդուց պաշտօնեայս իմ կամ առանձնական ծառայս նախարարաց և կամ տոհասարակ յաղթական

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, X, 1261:

զօրականս, չպահել առ ինքեանս զգերիսն Գեօքշայի, այլ յանձնել զնոսս հատկացելոյն յազգային փրեանց Մելիք Սարուն Գեօքշայի. զորս հասուսցէ առ իւրաքանչիւր տեառն, զհրամանաւ իմով շանցանել ընդդիմութեամբ և պատճառել զպատիժ...»<sup>1</sup>:

Այդ նուէն ժամանակ Երևանի Ամիրզոմնա խանը միջոցներ ձեռք առավ վերադարձնելու գաղթածներին և էրզրումի, Վանի կամ Մուշի կողմից բերված գերիներով վերաբնակեցնելու մեծ գաղթի տարում իր իսկ ձեռքով ամայացած Արարատյան գաշտը: Նորոգվում էին ավերված ճանապարհներն ու կամուրջները, հանվում ջրանցքներ ու քահրիղներ, մշակվում այգիներն ու ցանքագաշակերը, մասնակի կերպով վերացնում ներքին մարտերը և այլն<sup>2</sup>:

Խանի նպատակը ժողովրդի բարօրությունը շէր, այլ գաղթի հեռեանքով խախտված ֆիսիկալ եկամուտների կարգավորումը: Ժամանակակից անհայտ հիշատակագրողը նկարագրել է զաժան այն միջոցառումները, որոնց օգնությամբ Ամիրզոմնա խանը վերաբնակեցնում էր Արարատյան գաշտը: Նկարագրելով 1608 թվականին Վանա ծովի շրջանում այդ խանի ձեռքով կազմակերպված ջարդերն ու ավերածությունները՝ ժամանակակից գրիչը հարում է. «Այն որ ոմնէր սպարաճն զեղեցկաշէն և բարձրաբերձ ցանկաւ բնակիլ յախոռս անասնոց. այն որ տնէր սեղան հացալից և էր սասնջական հիւրոց և օտարաց՝ այժմ զեղերեալ սպաս, այլոց սեղանիշրանց, այն որ բազում մերկոց ծածկոյթ էր և զգեստ՝ եղեալ մերկ արեակէլ և ցրտասառոց: Այս ամենի պատճառ եղև մեղրն մեր և թագաւոր պարսից և ելուզակրն (իմա ջալալիքն—Ա. Հ.) տաճկաց, այլ և անարէն իշխանն Շարաֆ, որ է սզգաւ մար՝ տէր Ճըզիրայու, որ սրով և հրով աւարտութեամբ սւերեաց զՔրդըստան և զբրիստանեայս արար ընչաթափ և սովալլուկ: Արդ ի յայս բազմավրդով սասանութեան դառն և զժուար և անբարի ժամանակիս եղև զբաւ Աստուածաշունչ հին և նոր կտակարանիս»<sup>3</sup>: Հիշատակագրողի գասակարգային տեսանկյանը ակնհայտ է: Այնուամենայնիվ կասկած չի թողնում նկարագրածի փաստական կողմը: Արարատյան գաշտը «շենացնելու» համար հարկ եղավ նախապես ավերել ու

<sup>1</sup> Ս մ ր ա տ յ ա ն, Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գավառի, էջ 787 և հա.:

<sup>2</sup> Ձ ա ր ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, նույն տեղում, I, էջ 45 և հա., 56, 71, և II, էջ 12, 39 և 135:

<sup>3</sup> Հայկական ՍՄԻ Մատենագարան, ձեռ. № 519, էջ 78ր—79ա:

Քալանել Վասպուրականը: Լավ շէին խոսում խանի մասին նույն-  
իսկ վերանորոգվող վայրերի հիշատակարանները: «Կոնդակ» կոչ-  
ված մի վավերագրի վերջում, ուր արված է Սաղմոսավանքի պատ-  
մությունը, Մինաս գրիչը 1623 թ. նշում է. «Ի բռնակալութեան տե-  
ղոյս Ամիրիօնայ խանի, յորում յոյժ վտանդին տառապեալ ազգս  
մեր ի ներքոյ ծանր լծոյ սորին: Բայց և խնամոց աստուծոյ մար-  
դասիրութիւն գեեալ վարդապետն մեր Մովսէս յոյժ պատուեցաւ  
յաջս բռնաորիս. զի ի կամս ապաստան արար զսա: Որ և գայս  
համարձակութիւն գեեալ վարդապետս նորոգէր զեկեղեցիս և ուղ-  
ղէր զխանգարեալ կարգս նորա»<sup>1</sup>:

Թուրքահայատակ հայերի շարաշար կեղեքումը իրանական օկու-  
պանաների ձեռքով տեղի էին ունենում նաև Ամիրգունա խանից  
հետո: Մի հիշատակարանում պատմվում է Վանա երկրի զբաղվումը  
Ռոստոմ խանի ձեռքով. «Բազումք գերեցին զՎանայ երկիրն, զգե-  
ղօրայքն և զվանօրայքն գամէն քակեցին և քանդեցին. զԱյգեատան  
զամէն կոտորեցին և զգերեղմանատուն հայոց ՌՃՂ (1190) նազմ  
զարկին և յամանց լուայ թէ ԿՌ (60 հազար) է և բերին հասուցին  
զնազմն ի տակ պարսպին: Եւ ազգ հայոց, օր ի մէջ քաղաքին էին,  
բազում տանջանայ մէջ էին, զիշերն դբազան (= պարիսպն) պա-  
հել տային և ցերեկն զխանդակն (խրամատն) փորէին... Քաղցած  
և ծարավ, մերկ և բորիկ կային ամենեքեան ի ձեռն իմայելացոց  
վասն հաւատոր»<sup>2</sup>:

Նկարագրելով այն ավերածությունները, որ տեղի էին ունենում  
Հայաստանի թե՛ թուրքական և թե՛ իրանական հատվածներում  
թուրք-իրանական անընդհատ զինարախոտմների հետևանքով՝ Հա-  
կոբ Կարնեցին գրում էր. «Զի այսմ կողմին (այսինքն Թուրքիայի—  
Ա. Հ.) բերթորէից պահապանքն... ամենայն աւուր և ամենայն տա-  
րի, բազում զօրօք ասպատակէին ևս զնայեալ երկիրն Երևանայ,  
Հօռու, Զօրսայ և Փամպկայձօրու առհասարակ ասպատակէին,  
մանկոճաս գերի վարէին և զծերան սրոյ ճարակէին և զտեղիսն  
հրով կիզուին նոյնպէս և Պարսիկքն քան զսոսայն անողորմքն շար  
և բարբարոսք են, ատելիք Աստուծոյ և մարդկանն, ամենայն կող-  
մանց ելանէին զաղտապողի ասպատակեալ քանդէին և աւերէին  
առհասարակ՝ Կարսայ և Անի երկիրն, ևս Վանա ծովափն ընդ ամե-  
նայն, և մինչև ի դաշան Մշու, Խնուսու և Ալաշկերտու, Դիաւնու  
և Խամուրայ (Բագրևանդի կողմերը—Ա. Հ.), Բաթնոցա (Ապահու-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մտտեխնոլոգիան, ձեռ. № 8061:

<sup>2</sup> Ե. Լալայան, Յուցակ հայերեն ձեռ. Վասպուրականի, էջ 41 և հտ.:

նյաց կողմերը — Ա. Շ.) և Պայազեանու երկիրս ամէն էրէին և աւերէին, զկին և զաղայս զերի ածէին և զծերսն ի սուր սուսերի մաշեցուցանէին, զի այնպէս անապատ արարին այս սահրաթ երկրներս, որ Արզրումայ հետ մինչև էրէվան միայն բերդորայքն ի շէն մնացին»<sup>1</sup>:

Տեաւոր և ծավալուն այս ասպատակումներից ու ավերումներից հետո, ինքյան հասկանալի են զրաւան այն դնահատականները, որ տալիս էին ժամանակակիցները Քուրքիայի և Իրանի միջև 1638 թվականին սահմանված տեաւոր խաղաղության մասին: «Եւ արար խաղաղութիւն սուլթան Մուրատն, — գրում է Հակոբ Կարնեցին, — ընդ Ղզըլպաշին ուխտ և զաշին եղին, սր էրէվան Ղզըլպաշին լինի և Պաղտատ Օսմանցուն, այլ միմիանց թուր չըքաշեն, վաճառականք և շինականք աներկուզ դայցեն և գնացեն. հոսք սոցա և նոցայ այժմ խառնին ընդ միմիանս... Եւ այսպէս, որ ազատեցաւ ազգս Հայոց ի երկուց կողմանց, զի այն կողմի բնակիչք երկրին ամենայնք Հայք էին և են և յայս կողմս ամենայն Հայոց ազգէն էին, Յոյնք և Տաճիկ բազում, զի Մուստաֆայ վէլիրն այն... խաղացայց ընդ միմիանս և բարի անուն ժառանգեաց»<sup>2</sup>:

Քուրքիայի հետ կնքված խաղաղությունը գրեթէ մի ամբողջ դար անխախտ մնաց ռազմական հզորության բարձունքներից իջնող Քուրքիայի և Իրանի կողմից:

Անշուշտ, տեաւոր պատերազմներին հաջորդած խաղաղությունը մի պահ ունեցավ բարերար հեաւանքներ: Չնայած պատմական այն գործոճների տակաւոյնացան, որոնք անխուսափելի էին դարձնում Իրանի անկումը՝ տեաւոր խաղաղությունը ոչ միայն գանդաղեցնում էր անկման պրոցեսը, այլև մասնավոր բարեկեցության տեսք տալիս Եահ-Արբասի հիմնած պետությանը:

Վերահաստատված խաղաղությունը նպաստավոր էր մանաւանդ իրանահայ խոշոր առևտրականների համար, որչափ, չնայած օվկիանոսային մրցության, հայ խաջանների առևտուրը շարունակում էր մեծ չափով լծորդված լինել երթևեկելի դարձած թուրքական ճանապարհների հետ: Թե որքան մեծ ծավալ ստացավ թուրք-իրանական առևտրական ճանապարհի վրա ընկած քաղաքների առևտուրը, կարելի է եզրակացնել դարձյալ Կարնեցու՝ իր հայրենի քաղաքի մասին ասած տեղեկութունից. «Եւ ի վաճառականացն, — գրում է նա, — ի Դ (4) կողմանց ազգէն Հայոց անթիւ կան նստեալ տարին բոլոր բովանդակ ի գնել և ի ծախել՝ ի փառչայ և ապրշում,

<sup>1</sup> «Մանր ժամանակագրություններ». 11, էջ 535 և հ.ա.:

<sup>2</sup> Նույն տեղում:

ցեղ ու ցեղ դումաշ և դանաուզ շուխույ, կաաւելզէն և քթան անթիւ և բազում ջաւլահիր քար, ալմաս և եայղուլն, լալ և դմրուլն, սամուր և վարշաղ և ամենայն մազեղէն ի բոլոր տարին յայտնի գնեն և վաճառեն, զի այժմ քաղաքս այս յոյժ բանտար է նման Սաամպօլայ, որ տարին ժ (10) կամ ԻՌ (20 000) բեռն մտանէ և կելանէ, ՃՌ (100,000) դուաւշ մտանէ քսակն փաշային, թող զիւր թէմին սարերուն Քրդայ կելուին. այս ամենաճն դալօղ և դնացօղաց լինի որք են վաճառականք»<sup>1</sup>:

Ճիշտ է, ցամաքագնաց կարավանները շէին դադարել փրանա-թուրքական պատերազմի ժամանակ: Բայց այդ կարավանները այնքան դանդաղ էին շարժվում պատերազմող վայրերով անցնելիս և այնքան շատ մաքսերով բեռնավորվում, որ, ինչպես շափազանցութեամբ զեկուցում էր Վենետիկից Դամբալում, «նա, տվ մի անգամ անցել էր այդ ճանապարհով, դժվարութեամբ կճոժարեր կրկնել Երկրորդ անգամ»<sup>2</sup>: Այնուամենայնիվ իրանահայ մեծավաճառ առևտրականների համար նպաստավոր հանգամանք էր, որ անգլո-հոլանդական մրցութեանը դիմադրելու համար Վենետիկի հանրապետութեանը տակալին 1615 թ. ստիպված եղավ վերացնել Ռուրբիայի վրայով Իրանից մետաքս արտահանողներից դանձվող մաքսերը<sup>3</sup>: Մեր հիշատակած վարպետ Կոստանդր դարավերջին հազորդում էր թե՛ «ինչ ապրանք օր Վանատիկը կու մտի դումրուկ շունի գերած նազարաթին խալճն և ինչ ապրանք օր Վանատիկէն դուրս կեւնի Ճ-ին (100-ին) ժ (10) դումրուկ կտան ամենայն խալճով»<sup>4</sup>:

XVII դարի առաջին կեսում Վենետիկի հետ հայ առևտրականների ունեցած կապերի ամրացումը եկամտի հարուստ աղբյուր էր մանավանդ իրանական գանձարանի համար, որչափ ոսկու վալյուտան Իրան էր մտնում զլիսավորապես հենց վենետիկյան դուկատներով<sup>5</sup>:

Հատկանշական է, որ եթե XVII դարի հայ խոշորագույն պատմագիրը, — Առաքել Դավրիժեցին, — գրում էր այդ դարի առաջին քսանհինգամյակի պատմութեանը, որպես հայոց աշխարհի և էջմիածնի ավերման պատմութեան, դարի երկրորդ քսանհինգամ-

<sup>1</sup> «Մանր ժամանակագրութեան եր», II, էջ 568 և հտ.:

<sup>2</sup> Berchet, նույն տեղում, էջ 70:

<sup>3</sup> նույն տեղում, էջ 67:

<sup>4</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձև. № 8143, էջ 165բ:

<sup>5</sup> de Du Mans, նույն տեղում, էջ 33 և Chardin, նույն տեղում, V, էջ 432:

յակի անցքերը նա շարադրում էր որպես հայոց աշխարհի և էջմիածնի նորոգման պատմություն:

Հետագա հայ պատմիչներին շատերը դրվատում են հատկապես Շահ-Աբբաս II-ի (1642—1666) և շահ Սուլեյմանի (1667—1694) ժամանակաշրջանը: «Յաւուրս սորա,— գրում էր Շահ-Աբբաս II-ի մասին Գանձասարի Եսայի կաթողիկոսը,— շինեցան ամենայն աւերակ գեօղբ և քաղաքք, և երկիր աշխարհիս հայոց և պարսից, զի կարի քրիստոնէասէր և աշխարհաշէն էր. որոյ աղապաւ հաստատեցան յամենայն տեղիս եկեղեցիք, վանօրայք, և անապատք. մանաւանդ սուրբ աթոռն էջմիածին և սուրբ Գանձասարայ յԱղուանս, առ սրբազան հայրապետին Փիլիպոսաւ, և Պետրոս կաթողիկոսին Աղուանից»<sup>1</sup>: «Որ և յաւուրս սորա,— գրում էր նույն պատմիչը Սուլեյման շահի ժամանակների մասին,— առաւել խաղաղութիւն եղև աշխարհի և շինութիւն աւերակաց, և բազմամարդութիւն երկրի, տւղութիւն և իրաւունք դատաւորաց, շափաւորութիւն հարկապահանջութեանց, և բարեկարգութիւն ամենայն գործոց և արարողութեանց»<sup>2</sup>: Պատմագրի այս էջերն ունեն, հարկավ, միայն հարաբերական իմաստ: Խաղաղության դարը դրվատվում էր նախընթաց և հաջորդ շրջանների դաժանությունների ու կեղեքումների համեմատությամբ միայն:

Եսայի կաթողիկոսի վկայությունը նկատի ունի անտեսական և կոլտուրական այն վերելքը, որ վերահաստատված խաղաղության շրջանում ապրում էին Երևանի, Ղարաբաղի և Նախիջևանի խանությունների մէջ մանուկ հայաբնակ քաղաքներն ու գյուղերը: Վեր հանելով Նաջաֆ-ղուլի խանի ժամանակ դարամիջին ստեղծված համեմատական բարեկեցությունը, Ջարարիա Սարկավազը գրում էր. «Արդարև բարեկի է երկիրն Արարատեան՝ ծառովք և տնկովք, պաղովք և սերմանեօք, ծաղկովք և բուսովք, լերամբք և դաշտիւք, գետովք և աղբերօք, այգեստանեօք և բուրաստանօք, թոչնովք և շորքստանեօք, էրէխք և որսովք, և ամենայն բարութեամբ լի և սուսա»<sup>3</sup>:

Նախիջևանի և Գողթանի գավառները XVІI դարի երկրորդ և երրորդ քառորդներում սնվում էին ոչ միայն ապրանքային գյուղատնտեսությամբ, այլև արհեստագործության և սրանդիտային

<sup>1</sup> Ե ս ա յ ի կ ա թ ո ղ ի կ ո ս, Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից դիպելուց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839, էջ 15:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 16:

<sup>3</sup> Ջ ա բ ա ռ ի ա Ս ա ռ կ ա վ ա գ, նույն տեղում, V, էջ 39:

առևտրի հաշվին: Այսպես, Ղազանչի գյուղը նշանավոր էր պղնձագործութեամբ: Ըստ Տավերնյեի՝ Աստապատը հայտնի էր որդան կարմիրի արտահանութեամբ, ըստ Շիլլինգերի՝ Նախիջևանում ծաղկում էր մետաքսագործությունը: Օրդուրագը հռչակված էր զենքի ու զարբաֆի արտադրությամբ: Շոռոթը, Գաղը, Աստապատը, Նախիջևանը, Օրդուրագը և մի քանի ուրիշ վայրեր ունեին քարվանսարաններ ու մայրաճանհներ: Ագուլխի և Դաշտի առևտրականները կապված էին մետաքսարտադրության և մետաքսամշակման կենտրոնների՝ Գիլանի, Մազանդարանի և Թավրիզի հետ: Վենետիկում և Թոսկանայում պահվել են բազմաթիվ արձանագրություններ ու արխիվային թղթեր, որոնք վկայում են, թե այդտեղ ելումուտ են ունեցել Ագուլխի, Դաշտի, Շոռոթի և Գաղի, Դասաակի և Ջահուկի, Մեղրու և Մանլիի առևտրականները: Հայտնի է, վերջապես, խոշոր այն դերը, որ XVII դարում կատարում էին Ագուլխից ու Վանանդից դուրս եկած ձեռնարկողները Ամստերդամի հայ գրատպության մարզում:

XVII դարի հայ և օտար աղբյուրները նշում են Օրդուրագ և Նախիջևան քաղաքների և Աստապատ, Շոռոթ, Մեղրի և Ագուլխ ավանների բազմամարդությունը: Իրենց կալվածներով, շինարարական և կուլտուրական գործունեությամբ այս կողմերում հայտնի էին Թովմա առաքելո, Երնջակի, Աստապատի և Շոռոթի վանքերը: Այդ վանքերում դրված ու ծաղկանկարված ձեռագրերը, ինչպես և դրանց մերձակա վայրերում հանդիպող խաչքարերն ու շինարարական արձանագրությունները վկայում են նվիրատու առևտրաձեռնների հասարակական աչքի ընկնող ազդեցության մասին: Այս վայրերի անտեսական — կուլտուրական վերելքի և ամենից առաջ տեղական վաճառականության հասարակական դերի մասին գաղափար է տալիս մասնավորապես Զաքարիա Ագուլիցու ստուգապատմում ու փաստառուտ «Օրագրությունը»: Նշենք նաև, որ այս նույն ժամանակ Շոռոթում հանդես եկավ Նաղաշ Հովնաթանը, որը շարունակելով հայ գրականության նախընթաց դարերից ժառանգած ստեղծագործական պրոգրեսիվ տրադիցիաները, երգում էր բնություն ու սեր և կամ հորինում խրախճանքի զվարթ տաղեր: Հովնաթանը մեծակ չէր, նրա պատանեկությունը համբնկնում էր մի ժամանակաշրջանի, երբ կարճատև վերելք էր ապրում հայ ճարտարապետությունը, գրչությունն ու գեղարվեստական գրականությունը, դրսևորելով վարպետության ձիրք ու շնորհք և անդրադարձնելով կենսահաստիչ արամագրություններ:

XVII դարի կեսերին անհայտ մի հեղինակ հետաքրքիր էջեր է նվիրել նախիջեան գավառի և մասնավորապես Աղուլիս «մայրաքաղաքի» գովքին, Իրականության կոշտ բովանդակությունը վարագուրող սճով նա վեր է հանում «երևելի» այդ գավառի բնակիչների ու քրա առևտրականների «լիությունն ու փարթամությունը»: Հյուսիսային սահմանների անտաշ ու բազմաերույթ լեռները, գրում է հեղինակը, պաշտպանում են Աղուլիսի շրջանի բուսականությանը ձյունաբեր հողմերից, մինչդեռ հարավից նրա ցանքսերը ու տունկերը բաց են գարնանային հովերի առաջ: Ամեն ինչ ձևնուտ է բնակչության պետքերը հողալու համար և նպատավոր «առ ի շինելոյ, անկելոյ, սերմանելոյ և վարդիւնս ժողովելոյ»: «Ամենունակ է բարութեամբ գաւառս այս, այսինչն ցորենոյ, ձիթոյ և այլոց արմատաց», ասում է հեղինակը: «Երկիր լեռնային և գաւառս այս է արօտադիր, և երկիր դաշտային՝ հարթայատակ և վարդարուն բուսօք և անկօք»: Յանքսերը ուղղվում են և՛ առատ անձրևներով և՛ բազմաթիվ վտակներով, քանզի «յորդառատ է վտակօք և յանտառօք և խիտ է անկօք գաւառս այս»: Հեծնելով Պեղատոս նժույզը, հեղինակը գրվատում է գավառում սկսված խաղաղությունը: «Զի անառիկ զղեկօք անդորրացեալ և խաղաղացեալ կայ»: Այս շի նշանակում, թե գավառի բնակչությունը ազատ էր ներքին ճնշումներից ու հալածանքներից: Հարյուրներով ու բյուրերով են Վահան Գողթնեցուն հաջորդած նահատակները, ասում է հեղինակը: Սրանց արյունով է սնվել երկիրը ներկա իր բարօրությանը հասնելու համար. «զի հեղմամբ արեամբ նահատակաց և բազմութեամբ վկայից պատըսպարեալ, պահպանեալ և նախախնամեալ կայ գաւառս այս: Ծորոց և նահատակութեամբն ստուգաբանի Ասատգատ, այսինչն թէ աստապետեցին թշնամիք խաշելոյն զկիտուածս աստեղաց և արկին յերկրի զխթաւալ գաստուածակիր մարմին սրբոցն...»<sup>1</sup>

Հատուկ էջեր է նվիրում հեղինակը Աղուլիսի գովքին: «Աղուլիս» քաղաքանունը ստուգաբանում է «արդիլիս» բառով, որ ունի արդելահան կամ անձեռնմխելի, (заповедный) բառի նշանակությունը: Հավանորեն նկատի է առնված այն հանգամանքը, որ իբրև «խաս» բնակավայր, Աղուլիսը արտոնված, «անշրակաված» էր տեղական իշխանությունների միջամտությունից և սրպես «բացատիկ» ու «բնախր» կամ «անձեռնմխելի» վայր, կնխակա անմիջական կենտրոնական կառավարության, Հեղինակի մոտ «խաս» տեր-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Թատենագրան, ձև. № 1760, էջ 314ր-316ր



մինը արտահայտում է, ըստ երևույթին, հայերեն «արգիլված» բառով, որ նրա մոտ փոխարեարար ստանում է «ընտիր» կամ «բացառիկ» բառի իմաստ: Հեղինակի տված ստուգաբանության մեջ կա նաև հատուկ իմաստ: «Արգիլված» է Ադուլիսը, քանի որ ականավոր ու երեկի է այդ «մայրաքաղաքը», շատ քաղաքների մեջ: «Արգիլված» է նա վայելելով հավատակից ազգակիցների և բրիտոնյա ժողովուրդների սերն ու հովանավորությունը: «Արգիլված» է նա եռահատված շինություններով և եռահարկի ապարանքներով («չերիս հատուած շինուածս և յեռայարկեան ապարանսն»), որ վայելում են ապրողները, հաճույք պոմ տեսնողները: «Արգիլված» է նա բաղմարուխ աղբյուրներով և բարեհամ պտուղներով, խիտ անտառներով, մշտասաղարթ կանաչությունը և ծաղկածավալ բուրաստաններով, որոնք ուրախացնում են տեսնողներին՝ դարնանը: Վերջապես՝ «արգիլված» է նա, որչափ դրավիչ է նրա բնությունը և դուրեկան և որչափ նրա կաշառող հարստությունը («ամամոնայս մատուցանող») զինավափ է անում բանասարկուներին, թյուրում նրանց կամքն ու միտքը, անարի ու անհաստատ դարձնելով նրանց<sup>1</sup>:

Բացառիկ արժեք տեսնն անհայտ հեղինակի էջերը: Չնայած հոևտորական իր ոճին, այս գրվածքը ժամանակի խոստուն վկայաթղթերից մեկն է: Թեպետև կրոնական բանուկ շրջանակների մեջ առնված, ակնբախ է, այնուամենայնիվ, նրա աշխարհիկ ոգին ու լավատեսությունը: Գրվածքի մեջ արտահայտված է Ադուլիսի վաճառականության և նրա հետ կապված հասարակական խավերի գլուրթ արամադրությունը: Դժբախտաբար, հեղինակը չի նկատում ժողովրդական մասսաների այն աշխատանքը, առանց որի անհնարին կլինեին իշխող հասարակաշերտերի վայելած այն բարիքները, որ թվարկում է հաճույքով: Այսպես, նա նկարագրում է Նախիջևանը և Գոյթան Երկիրը, որպես բնության կողմից առատորեն պարգևատրված դրախտ: Մինչդեռ, ինչ կասկած, որ շարքաշ աշխատանքի միջոցով է միայն, որ այդ երկրում սկսում էր խլրտալ կյանքը, սնելով մարդկանց բարեկեցությունը: Բնությունը զրկել էր նրանց էական մի բարիքից՝ ջրից: Նեղ կիրճերի միջով վազում էին դարնանային օրերին հորդահոս՝ ամառն անհետացող գետակներ: Դառն քրտինքով է միայն, որ գյուղացիները ջրանցքներ էին փորում՝ ամառվա տապին ջուր մատակարարելով խաղողի ու թթի ծառերին և արհեստական ոռոգմամբ ստեղծում ապրանքային գյուղատնտեսության

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, 1760, էջ 317ա—318ա:

այդեղործութեան, գինեղործութեան և շերամապահութեան օտդիս-  
ներ:

«Նաղաղութեան դարը» բարենպաստ դեր էր կատարում փնչակա  
տեղական շուկայի, այնպես նաև արտաքին շուկաների հետ կապ-  
ված մեծահարուստ խոջաների համար: Միայն Արաքսի հովտի կամ  
Արարատյան դաշտի հայ քաղաքներում կամ քաղաքատիպ վայրե-  
րում չէ, որ այս ժամանակաշրջանում նկատելի էր դառնում հայ ար-  
հեստավորների ու առևտրականների գործունեության աշխուժացու-  
մը: XVII դարի կեսերին նույն երևույթը նկատում ենք նաև Իրանի  
և Թուրքիայի այլ հայաբնակ վայրերում: Ինչպես ցույց են տալիս  
Հայաստանի Պատմական թանգարանի հավաքածուները, այդ նույն  
ժամանակ է սկսում նկատելի դառնալ հայ սոկերչությունների վերելքը, որ  
արտահայտվում է և մեկ հասած հին սոկերչական իրերի բազմա-  
զանությունը, և դրանց արվեստի զարգացմամբ: Դիտում են, որ  
հայ սոկերչության նշանավոր օջախներ կային այդ ժամանակ Վա-  
նում, Թավրիզում և Սպահանում<sup>1</sup>: Կարծում ենք նույնը կարելի է  
ասել նաև հայ մանվածագործության մասին, որի նմուշները մեզ  
հասել են այդ ժամանակաշրջանի ձևազարդ բազմերանդ կաավի  
ու մետաքս աստասների ու դրանց վրա գտած հետաքրքրական  
նախշերի ձևով:

Միակողմանի կլինեք կարծել, թե իրանահայ խոջաները սոսկ  
արանդիապետ գործառնություններ կատարող առևտրականներ էին:  
Քիչ չալիտի եղած լինի տեղական շուկաները սպասարկող այն խո-  
ջաների թիվը, որոնք անմիջականորեն կապված էին գյուղի և քաղա-  
քի մանր արտադրողների հետ և միջնորդի գեր էին կատարում նրանց  
և տեղական ու մասամբ նաև արտասահմանյան շուկաների միջև:  
Սակայն գյուղացիները կամ արհեստավորները շատ հաճախ անմի-  
ջակա կապված էին ոչ թե առևտրական արանդիապետ գրադված խո-  
ջաների, այլ Իրանի ֆեոդալական պետության հետ, որին նրանք  
մտատակարարում էին իրենց արտադրանքը (այդ թվում նաև խամ  
մետաքսը, մանվածքները և անաջնագործական կամ մանվածագոր-  
ծական այլ ապրանքները) որպես հարկատուներ: Իրանահայ մեծա-  
հարուստ խոջաները ասպարեկ էին գալիս պետության գործակալնե-  
րի գերում որպես գյուղացիներից և արհեստավորներից իրեն հարկ  
գանձված համույթների ու մանվածքների արտահանողներ, այլ  
խոսքով որպես ֆեոդալական սենատ իրացնող միջնորդ առևտրա-  
կաններ:

<sup>1</sup> Վ. Արբանյան, Արհեստները Հայաստանում, էջ 129, 137 և 155:

Մինչև XVII դարի վերջերը իրանահայ առևտրականների նշանավոր մասը շարունակում էր դեռ կապված մնալ արքունի կամ խանական ապրանքապահեստների հետ, լինել իրանական ֆեոդալների «դուլուզում»: Որպես այդպիսիք նրանք վաճառքի էին հանում «շահլուզ» մետաքս:

Հետաքրքիր են այդ տեսակետից այն տողերը, որ գտնում ենք Ջաբարիա Ագուլեցու «դավթարում» 1670 թվականի ներքո. Ագուլեցանի վեզիր Միրզա Իբրահիմը հարկադրում է Ագուլիսի և Դաշտի առևտրականներին վաճառքի համար բնդունել 60 լիդր՝ լիդրը 8000 դիանի արժևք ունեցող, «շահլուզ» (=արքունի) վատորակ մետաքս, լիդրը 12 հազարի հաշվով<sup>1</sup>: Ագուլեցիք ծախսի տակ ընկնելով գնում են վեզիրի մոտ, հրաժարվում իրենց վզին փաթաթվող ապրանքից. բայց իզուր. «Մին 20 թուման էլ խարջեցին. — դրում է Ջաբարիան. — գնացին վեզիրն, էլավ ոչ, թէ բերողի դուրուզ, թէ խորակ էլավ: Այս 60 լիդր ապրիշումս և 20 թուման խարջն ագուլեցիք ու զաշտեցիք զարուզ արին, վեր կալան: Դաշտեցոց ըռասագ ապրիշումն և խարջ զարուզ արին, տարան ագուլեցոցն: Ագուլեցիք վեր կալան ապրիշումն ծախեցին 8 հազար դիան»<sup>2</sup>: Ինչպես պարզաբանում է Ջաբարիան՝ այս վաճառքը 20 թումանի վրնաս բերեց ագուլեցոց և զաշտեցոց: Նվազ ծանր շէր առևտրականների համար նաև, նրանց կախումը նորատիպ խաներից, որոնք առևտրական գործակալների միջոցով աշխատում էին իրենց ձեռներում կենտրոնացնել ոչ միայն ֆեոդալական բնատուրքից կամ բերքով մուծված հարկերից ստացվող շահույթների առյուծի բաժինը, այլև՝ դյուզաստանական ավելցուկների գնումն ու վաճառահանումը: Դրանցից զատ, նրանք արտահանում էին իրենց հաշվին գյուղացիներից գնած բոժոժը: Խաղաղության զարի բերած հարաբերական բարեկեցությունը շէր կարող վերացնել քայքայիչ այն ազդեցությունը, որ արդեն իսկ այդ պահին ոճնենում էր իրանական առևտրի և արդյունարերություն համար արտասահմանյան կապիտալը: Եվրոպական ապրանքների ներմուծումը հարվածում էր տեղական արհեստագործությունը: Իրանական կերպասների տեղը դրավում է անգլիական մա՛նուզը, անգամ «ֆուանդի» ատլասն:

<sup>1</sup> «Շահլուզ» անունն էր կրում նաև շահին հասնող արդյունավճար ունետան: Այդ իմաստով «շահլուզ» մետաքսը կարող էր եղած լինել այն բնահարկը, որ «կիավում» էր գյուղացիներից, որպես արքունի հարկ (բահրա):

<sup>2</sup> Ջ ա բ ար ի ա Ա գ ու լ ե ջ ի, ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 89:

ու զարքաֆները: Որչափ նվազում էր մետաքսի մանուֆակտուրան և ներքին շուկայում իշխող դիրքերը անցնում եվրոպացիներին, հալ առևտրականներին բաժին էր մնում գլխավորապես տարանջիկ առևտուրը: Հայերի ձեռքին կենտրոնացող առևտուրը դառնում է գլխավոր այն խողովակը, որ Բենդեր-Աբբասի վրայով միացնում էր միմյանց թուրքական և հնդկական նավահանգիստները: «Պարսկաստանը.— գրում էր շուրջ երկու տասնամյակ Իրանում ապրած և կուլերիստական սքեմաներով մտածող ֆրանսիացի լավատեղյակ մի միսիոներ,— նման է մի քարվանսարայի, որն ունի երկու դուռ. դրանցից մեկը դանվում է թուրքական սահմանի վրա, սակից ներմուծվում է Արևմուտքից հոսող արծաթը... Մյուս ելքի դուռը՝ Բենդեր-Աբբասին կամ Գոմրունն է Պարսից ծոցում, սակից ճանապարհ է բացվում դեպի Հնդկաստան՝ Սուրաթ՝ արծաթի համաշխարհային այդ շահմարանը... Պարսկաստանի հարբստությունը այլ ինչ չէ, քան այն խոնավությունը, որ թողնում է խողովակի մեջ հոսած ջուրը»<sup>1</sup>: Այս վկայությունը համընկնում է ուրիշ մի ֆրանսիացու, Մարքսի և Էնդելսի նամակադրությունն մեջ գրված Ֆրանսուա Բերնյեի տվյալներին, որոնք համանման ձևով են բնութագրում ապրանքաշարժ մետաղի համաշխարհային մարշրուտը: Ինչպես դիտում է այդ հեղինակը, Ամերիկայից Եվրոպա մրտնող սակու մի մասն անցնում է Թուրքիա՝ այդտեղից ստացվող ապրանքների դիմաց. մյուս մասն ուղարկվում Իրան մետաքսի դիմաց. իր հերթին՝ Թուրքիան կարիք ունի Եմենից ստացվող սուրճի, ինչպես նաև Եմենը, Իրանը և Թուրքիան՝ կարիք ունեն հնդկական ապրանքների, որանց դիմաց ստիպված են կարմիր ծովի և Պարսից ծոցի վրայով Հնդկաստան ուղևորել իրենց ձեռն ընկած ոսկու նշանավոր մասը<sup>2</sup>:

Այս տեղեկությունները հավաստվում են նաև այլ տվյալներով: 1715—1718 թվականներին ուսու դեսպան Վոլինսկին ամբողջ Պարսկաստանում ամենից եկամտաբեր էր համարում Երևանի և Թավրիզի խանությունները. «Այդ նահանգները.— գրում է նա.— զուրկ չեն հացից և առևտրական փոքր եկամուտ չեն տալիս Իրանին, քանի որ թուրքական մեծ կարավանները (ամեն մեկը հարյուր ուղևորից բաղկացած) առևտրի համար այդտեղ են դա-

<sup>1</sup> Du Mans, նույն տեղում, էջ 103 և հետ:

<sup>2</sup> Հմտ. Бернье Франсуа, История последних политических событий и переворотов в государстве Великого Могола, М.—Л., 1936, էջ 183:

լիս և այլ ապրանքներից առավել արժաթ բերում իրենց հետ. Թուրքիայի վաճառականների այդ արժաթը տալիս ևն վարպետներին (զատաֆներին)՝ պարսկական դրամներ վերձուղելու համար և այդ փողով գնում Պարսկաստանում ամեն տեսակի ապրանքներ և առավելապես՝ խամ մետաքս»<sup>1</sup>:

Հասկանալի է, որ XVII դարի երկրորդ կեսերին նվազում էր անգամ Նոր-Ջուղայի մեծահարուստ խոջաների կարողությունը: 1670-ական թվականներին Շարղենը գիտում էր, որ եթե շահ Սեֆիի ժամանակ Նոր-Ջուղայում կային երկու-երեք միլիոնի տեր հաչեր, հիմա այլ է դրությունը, թեպետ դեռ կան մի միլիոնից ավել դրամ ունեցող բնաանիքներ<sup>2</sup>: Հայ խոջաները սկսում են պոկ դալ պետական կամ արքունի ապրանքապահեստներից: Պետական կամ արքունի առևտուրը սկսում է անձեռնառու գառնալ խոջաների համար, և նրանք գերադասում են խուսափել դրամից: XVII դարի վերջին տասնամյակներում նրանց առևտուրը դիմում էր գեպի անկում, հանգամանք, որ անխուսափելի սլիսի լիներ, եթե միաժամանակ հաշվի առնենք նաև քաղաքական և վարչական կեղեքումներն ու ճնշումները, որոնց այդ պահին ենթարկվում էին իրանահայ առևտրականները, մասնավորապես գավառներում: XVII դարի իրանական անառությունը մասին ևս լիովին արդարանում է այն դրույթը, որ ձեակերպել է էնգելսը թուրքական և ընդհանրապես «արևելյան» բռնակալության ենթակա երկրների մասին: «Թուրքական, ինչպես և արևելյան ամեն մի ուրիշ տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական իրավակարգի հետ: Հավելյալ արժեքի ստացումը ոչնչով ապահովված չէ սատրապների և փաշաների գիշատիչ ձեարկերում: Չկա բուրժուական շահույթի հիմնական պայմանը — վաճառականի անձի ու նրա սեփականությունյան ապահովությունը»<sup>3</sup>: Իրանի գիշատիչ սարդարներն ու խաները կատարում էին նույն դերը, սրպիսին Թուրքիայում կատարում էին ժողովրդի հաշվին ապրող փաշաներն ու բեյերը:

Խանությունների միջև չկար անտեսական սերտ կապ: Իրանը արտճված էր բարձրաթիվ մաքսային շրջանների, որոնցից չուրաքանչյուրը հաճախ ուներ տեղական իր հարկերը, դրամներն ու շափերը: Արանով մեծապես դանդաղեցվում էր արտադրական ուժերի գարգացումը և սահմանափակվում առևտրի ծավալման հնարավորությունները: Զաքարիա Սարկավազը պատմում է Երևանի

<sup>1</sup> ЦГАДА, ф. Сношения России с Персией, 1715—1718, էջ 590ա:

<sup>2</sup> Chardin, VIII, էջ 106:

<sup>3</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, XVI, ч. II, էջ 22:

Մահամադ-դուլի խանի ժամանակ (50-ական թթ.) տեղի ունեցած հարկերի և մաքսերի աճի մասին, որից առանձնապես տուժում էին առևտրականներն ու գյուղացիները: «Վասնզի ծանրացոյց զհարկին,— գրում է պատմիչը,— և հաստատեաց զմաքսն ճանապարհաց, և զոր ինչ վաճառիւր ծանրագնի թէ ցորեան և թէ այլ ինչ: Այլ և յամենայն ամի առաքէր քննիչս արտորէից գրել, և զհնգորդն ամ յամէ յաւելուին: Նայնպէս զթուօղն խաշանց, զշափօղս այգեաց, և զգլխագիրս. և այսպէս ի ներքոյ հարկի եգ զամենայն... Եւ եզի թշնամի և հակառակ ազդիս մեր»<sup>1</sup>: Պատահական չէ, որ Ագուլիսի բնակիչները մեծ պատգամավորություն հղեցին Ռավրիզ՝ դանդաժելու այս խանի մասին<sup>2</sup>:

Եթե այսքան անկայտն էր նույնիսկ Իրանի հումուլթները վաճառահանող մեծ խոշաների բարեկեցությունը, ավելի քան անհասկանալի սխալ լիներ հումուլթ արտադրող գյուղացիների կամ գրանք մշակող արհեստավորների վիճակը: Հումուլթների ընդարձակվող արտահանութունը սաստկացնում էր գյուղացիների շահագործումը: Ընկնում էին տեղական արհեստները և մանավանդ տեղական մանվածագործության որակը: Զուգահեռաբար նվազում էր լավորակ արտադրանքի պահանջը: XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբներին ապրած հայ տաղասաց Նաղաշ Հովնաթանը արանջում էր.

Կա փեշաբարին գլխին է վայրն,  
 Հերկեզ չին ջոկում վասն ու լուրն,  
 Թէ Հնդաստանաց մաւն ու զաւրն,  
 Թի Դարաշամբի խաշար ստաւան...  
 Բարակ մանողն՝ այգին վաճառեց,  
 Եւ հաստ մանողն տուն ու տեղ ճարեց,  
 Մազ մանողներուն ճրագն վաւուց,  
 Զերգապ գործողին սիրան պատառուեց<sup>3</sup>:

Մի այլ տեղ Հովնաթանը գրում է.

Փիլոնացու յուստ կու ճարէր,  
 Եղմուրլուխներ կարէր, կարէր,  
 Նորքատացու շկա, կացէր,  
 Եւ փունջի բեռներ բացէր:  
 Եւ շի ճարվիլ գլխի գօտիբ,  
 Աստապատու ալաճէն մօտիկ...<sup>4</sup>:

<sup>1</sup> Ջ ա ր ար ի ա Ս ա ր կ ար վ ա գ, նույն տեղում, 11. էջ 44 և հա.:

<sup>2</sup> նույն տեղում:

<sup>3</sup> Ն ա դ ա շ Հ ո վ ն ա թ ա ն, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 79 և հա.:

<sup>4</sup> նույն տեղում, էջ 121:

Իրանի անտեսական ուժի հետ ընկնում էր նաև նրա սաղմահան կարողությունը: Շահ-Աբրահայի հետո ևս զոլամների գվարդիան շարունակում էր լինել Սեֆյանների զլխավոր նեցուկը<sup>1</sup>: Բայց որչափ այդ երկրում պատերազմը զինվորական դատարարական միակ գպրոցն էր՝ խաղաղության ժամանակ մոռացության էր արվում զինվորական արհեստը<sup>2</sup>: Զինվորների որակն ընկնում էր նաև սուղ վարձատրության հետևանքով: Ռոճիկ ստանալու համար սպաներն ու զինվորները հատկացազրերը («բարաթները») ձեռներին, կամ նրանց փոխարեն հաճախ էժան գնով այդ հատկացազրերը ձեռք բերած շարաշահողները կամ հարկահանները (եվրոպական հեղինակները սրանց նշում են «ինտենդանտ» տերմինով. խոսքը հավանորեն «Ֆահսիլյարները» կամ «զարուզաների» մասին է) մեկնում են գավառները և պետական տուրքերի հաշվին գանձում իրենց ստանալիքը<sup>3</sup>: Հարկավ, ոսճիկ ստացողներին էժան չէր նստում բարդ այս գործողությունը, մանավանդ որ ֆինանսական հսկիչները (միրաբիղները) ձրի չէին օժանդակում նրանց<sup>4</sup>: Ռոճիկի ուսու նորմի նվազումը զինվորական հին սովորույթների և պահանջների հարատևման պայմաններում բարոյալքիչ ներդրածություն էր ունենում զինվորականների վրա և անդրադառնում նրանց սաղմական սրակին<sup>5</sup>:

Ռազմական ուժի անկումը անխուսափելի էր դառնում նաև մի այլ պատճառով: Խաների և նրանց տեղակալների համար մարզերի հատկացազրերը դառնում են մասնավոր եկամտի աղբյուր. զրանք կատարում են մոտավորապես նույն գերը, ինչ կատարում էին մասաչիների բարաթները էլխամենների ժամանակ: Կենտրոնից նրանք անընդհատ բարաթներ էին գուրս գրում, մինչդեռ փաստապես այն զինվորները, որոնց անուանները նշված էին զրանց մեջ կամ արձակված էին գործից, կամ վաղուց մեռած<sup>6</sup>: Այսպիսով՝

<sup>1</sup> Chardin, նույն տեղում, V, էջ 228 և 230:

<sup>2</sup> նույն տեղում, V, էջ 314 և հտ., 325 և հտ.:

<sup>3</sup> նույն տեղում, V, էջ 322, 407 և հտ., 422 և հտ., 427 և հտ., Kämpferus Engelbertus, Amoenitatum exoticum, Lemgoviae, 1712 էջ 74, Ձ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, նույն տեղում, I, էջ 37:

<sup>4</sup> Chardin, նույն տեղում, V, էջ 325 և հտ.:

<sup>5</sup> Chinon, նույն տեղում, էջ 72 և հտ., Du Mans, նույն տեղում, էջ 154, 179 և հտ.: Chardin, V, էջ 316 և հտ., 325 և հտ., 427 և հտ.:

<sup>6</sup> Du Mans, նույն տեղում, էջ 151 և հտ., Sanson, նույն տեղում-էջ 155 և հտ., Pournafort, Pitton de, Relation d'un voyage du Levant, Paris, 1718, II էջ 112:

ուսումնական իրական քանակը միանգամայն անհամապատասխան էր նրանց անվանական քանակին<sup>1</sup>։ Հնայած պետությունն ուղղման հատկացումները մնում էին նույն մակարդակին, դումարները մտնում էին մասնավոր շարաշահույնների գրպանները։

Յուրաքանչյուր խան ուներ իր տեղակալը («չանիշին»), նշանակված կենտրոնից նրա գործողությունները հսկելու համար։ Իրենց հերթին խաները պարտավոր էին հսկել տեղակալների գործողությունները։ Բայց հաճախ փոխադարձ հսկողությունը վեր էր ածվում «հսկողների» շահախնդիր մտերմություն։ Փոխադարձ հսկողության տեղ՝ պաշտոնակալները գերադասում էին վերահսկել և բամել ստորագրվածների ու հպատակների գրպանները<sup>2</sup>։ Ժամանակակից դիտողներն արձանագրում են մանավանդ հպատակների կարիքները դոհացնելու կոչված դատական օրդանների յուրացումները<sup>3</sup>։

Պաշտոնների այս կարգի շարաշահումները ծայր էին առնում հաճախ պաշտոնակալության անկայունությունից։ Շաաերի գլխին կախված էր մի ճակատագիր, որ կոչվում էր մեծավորի քրմայք։ Ուստի անհրաժեշտ էր լիազոր շահագործել բախաի բերմունքը — պաշտոնակալության սահմանափակ ժամանակամիջոցը — որեւէ չափով մեղմացնելու համար այն աղետը, որ դարան մտած սպասում էր հերթական իր գահերին<sup>4</sup>։

Դիտում են, որ խաների ժառանգական պաշտոնակալությունը հարստանում էր այնտեղ, ուր ուժեղ էին քաջխորությունն ու քոչվոր ցեղերը և, ընդհակառակը, թույլ էր այնտեղ, ուր գերիշխում էր ճշտատակյաց անասությունը<sup>5</sup>։ Առաջին տիպի մարդերի թվին պատկանում էին Գանջաչի (Ղարարաղի) բեկլարբեկությունը, երկրորդի թվին՝ Շիրվանի և Չուխուր-Սաաղի (Երևանի) բեկլարբեկությունը։ XVI դարի 400-ական թվականներից Գանջաչում իշխում էր Զիյադլու ալմաղից առաջացած խաների սերունդը, որ հարստանում էր այս-

<sup>1</sup> Chardin, նույն տեղում, IV, էջ 314 և հա., 325 և հա.։

<sup>2</sup> նույն տեղում, էջ 250, 253 և հա., 200 և հա., 387 և հա.։ Sanson, նույն տեղում, էջ 147 և հա., Kaempferus, նույն տեղում, էջ 25։

<sup>3</sup> Chinon, նույն տեղում, էջ 79 և հա., Thevenot, նույն տեղում, էջ 172. Chardin, նույն տեղում, V, էջ 264 և հա.։

<sup>4</sup> Հմմտ. Chardin, նույն տեղում, V, էջ 237։

<sup>5</sup> Н. П. Петрушевский. Очерки. էջ 126։



տեղ մինչև սուսական արքայազնության սկզբնավորումը<sup>1</sup>։ XVI դարում Երևանի մարզում բեկլարբեկություն և կալվածներ էին ստանում զզլբաշներին պատկանող սուլթանյու ցեղի ներկայացուցիչները<sup>2</sup>։ XVII դարում, ընդհակառակը, այստեղ չկարողացավ հաստատել անգամ Շահ-Աբրահամ անվանի գործարար Ամիրբեկյան խանի սերունդը և մարզի հողերի մեծ մասը հանդիսանում էր արքունիքի («գիվանի») սեփականություն<sup>3</sup>։

Զաքարիա Սարկավազի տվյալներից երևում է, որ XVII դարի երկրորդ կեսի ընթացքում Երևանի բեկլարբեկություն մեջ (որ սովորաբար նաև խանություն, էր կոչվում) իրար հերթափոխեցին 13 խան և ամեն անգամ պաշտոնընկեցություն կարգով։ Այլանդակ կամայականությունների էր հասնելու պաշտոնափոխության և բազմիշխանության սխառմը մանավանդ պարավերջին՝ շահ Սուլթան Հուսեյնի ժամանակ (1694—1722)<sup>4</sup>։ Անիյաները կարիք ունեին հյու ծառաների և այդ կարիքը ենթադրում էին գոհացնել հաճախակի պաշտոնադրվածների միջոցով։ Այդ նպատակահարմար էր մանավանդ Ֆինանսական ճգնաժամը թուլացնելու տեսակետից։ Նյութապես ուռճացած պաշտոնակալների հեռացման հետ հաճախ կապակցվում էր նրանց գույքի բռնագրավումը։ Հավատարմության երաշխիքներից մեկը, ինչպես տեսանք, Շահ-Աբրահամ ժամանակ համարվում էր պաշտոնյաների նկուն ծագումը։ Այդ հայացքը արող էր նաև հետագայում։ Գերմանական արևելագետ Օլեարիուսը, որ այցելել էր Երան XVII դարի 30-ական թվականներին, թվարկում էր ժամանակի իրանական բարձր պաշտոնակալներին և ընդ սմին նրանց ծագումը։ Պարզվում է, որ գրեթե բացառապես նորարույս մարդիկ էին դրանք, վարից բարձրացած, հաճախ մոլի սենեկապաներ, իսլամացած քրիստոնյաներ<sup>5</sup>։ Այն, ինչ նշում է այս հեղինակը ժամանակակցության սինխրոնիկ կամ հորիզոնական գրծով, հավաստում են XVII դարի մյուս հեղինակները՝ հայտնաբերողներից զիախրոնիկ կամ սելդահայաց գծով։

Նշենք, որ Քարթլիի և Կախեթի Ռոստոմ թագավորի (1632—1658) ժամանակներից ի վեր, վրաց թագակիրների համար, որոնց իրանցիները տիպոսավորում էին որպես «վալիներ», պարսապիր

<sup>1</sup> Նույն հեղինակի հոդվ. «Сборник статей по истории Азербайджана», 1, էջ 250։ Հմմտ. Հայկական ՍՍՌ Մտանադարան, ձեռ. № 713, էջ 137ր և հա.։

<sup>2</sup> Н. П. Петрушевский, Очерки, էջ 121։

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 121, 125, 141։

<sup>4</sup> Հմմտ. Ասալի կաթ., նույն տեղում, էջ 21 և հա.։

<sup>5</sup> Olearius, նույն տեղում, էջ 448 և հա.։

էր դառնում իսլամի դավանամբը, մի պահանջ, որի պատճառով մինչև Սեֆյանների անկման շրջանը Վրաստանն ժմեցեալ մուսուլմանացած թագավորների և ֆեոդալ իշխանավորների մի ամբողջ շարք: Այս մի սխտեմ էր, որ յուրատեսակ կատարելագործման էր հասնելու դարձյալ աֆիոնի գոլորշիներից մտալիս թմրութեան մեջ սուզված շահ Սուլթան-Հուսեյինի ժամանակ: Պետական բարձրագոյն խորհուրդը նույնացովն անբիւնի սինկլիտի հետ Ուր կարելի էր, հիրափի, գտնել ավելի հալատարիմ պետական ծերակուլա, քան հարեմային հսկիչների այս սճմակը: Գրանց մեջ անձնավորված էր ֆեոդալների ժառանգականութեան սեւալ բացասումը: Շահը համարվում էր զրանց իշխանութեան միակ աղբյուրը, ինչպես և զրանց ստացվածքի միակ ժառանգը: Մի անգամ որ պետութեան գերագոյն օրգանը այդքան մտերիմ կապ էր հաստատել արքունի ննչատրահների հետ, մնում էր միայն մի քայլ, որպէսզի սրանց բնակչուհիները ևս, տիրելու հաճույքով համակված, իրենց ձեռքն առնեին իշխանութեան սանձերը<sup>1</sup>: Գծվար չէ կոահել, թե ինչ սուզութեամբ պիտի զգալ տար իրեն շահ Սուլթան-Հուսեյինի օրոք քաղաքական լիշխանութեան իրավունք հափշտակած հարեմտհիների պետական արվեստը: Առաջին անգամը չէ—հիշեմք թեկուզ թուրք հարեմների խաթուններին—որ հարեմի բնույշ տիրուհիները դառնում էին բռնակալութեան մտլի զահիճներ, հնց որ, պատմութեան քմահաճ կամքով, զրանց ձեռքն էր բնկնում բարոյալքված միտակտի գայիտներ:

Որչափ Իրանի ներքին ապրանքաշրջանառութեանը խիստ սահմանափակ էր և պաշտոնատարները վարձատրվում էին նատուրալ եղանակով (թիւղների ու բարախների հատկացման ձևով) փողի «ճզնաժամը» կրում էր քրտնիկական բնույթ: «Փողեքն բնկնում են իրանշահի զանձատներն ու անհետ կորչում, առես թե բնկան անդունդի մեջ, ուսկից չկա սրեէ վերագարձ»,—զրում էր Շարդենը<sup>2</sup>:

Ոմանք փողի շրջանառութեան նվազումը բացատրում էին փո-

<sup>1</sup> Հմմտ. Chardin, *Նույն տեղում*, V, էջ 240, Chinon, *Նույն տեղում*, էջ 33, 61 և հտ., Sanson, *Նույն տեղում*, էջ 111, հտ., Krusinski, *Նույն տեղում*, էջ 32 և հտ., le Brun Cornelle, *Voyage par la Moscovic, en Perse et aux Indes orientales*, Amsterdam, 1718 էջ 111:

<sup>2</sup> Chardin, *Voyages*, t. I, էջ 135:

դատերերի ընդհանուր անապահովությամբ: Տակավին XVII դարի սկզբներին եվրոպական միսիոներներից մեկը գրում էր, թե 200 հազար սկուզի (էկլյու) տարեկան եկամուտ ունեցողը, հազիվ 2 հազար է ծախսում<sup>1</sup>:

Իր ամբողջ ուժով ֆինանսական ճգնաժամը ծանրանում էր մանավանդ հարկատու մասսայի վրա: Այդ ակներև է գեթ այն փաստներից, որ ընձեռում է մեկ Արևելյան Հայաստանում գանձվող հարկերի ու տուրքերի ուսումնասիրությունը:

Հետաքրքրական ավյալներ այս մասին գտնում ենք տակավին XVI դարի նշանավոր ուղեգիր դ՝Ալեքսանդրիի մոտ: Ըստ նրա հազարգածի, թագավորի ամբողջ եկամուտը հասնում էր երեք միլիոն սակու: Շահը ստանում է երկրի արտադրանքի 1/6-ը, որպես բահ-բա և, բացի այդ, վերցնում հատուկ կալվածական հարկ՝ որպես մուլք: Սովորական արտը բռնում էր 10 արշին, որի համար վճարում էին 1/2 դուկատ, 1000 արշինի համար վերցնում էին 66 սակի (ավելի քան 4 վենետիկյան սեկոլին): Տներրից վերցնում էին վարձի 5 տոկոսը: Քրիստոնյաները վճարում էին 5—8 դուկատ զլխահարկ՝ բոս բնակավայրի կամ կարողության: Քառասուն ոչխարի համար վերցնում էին 15 բիսափ (=վենետիկյան երեք դուկատ)<sup>2</sup>: Այս «ոչխարի քողավ» կոչված այն տուրքն է երևի, որի մասին Դավրիժեցին պահած ունի բնորոշ մի լեզենդ<sup>3</sup>:

Ի վիճակի չենք ճշտելու դ՝Ալեքսանդրիի ավյալները: Պարզ է համեմատյալ գեպս, որ, չնայած որոշ դեր այդ ժամանակ խաղում էին նաև դրամական հարկերը, այնուամենայնիվ պետությունն եկամուտների հիմնական տեսակը կազմում էր բնահարկը: XVII դարի Իրանում ևս, գերիշխող էր հողային սեփականության բնատուրքային ձևը, որը, ինչպես նկատում էր «Կապիտալի» հեղինակը, ասիական երկրների նկատմամբ կազմում էր միաժամանակ նաև պետական հարկերի գլխավոր տարրը: Գերազանցորեն հարկերի ձև ընդունած հողային սեփականության այդ ձևն էր հենց կազմում ինչպես Թուրքիայի, այնպես նաև Իրանի դուրբյունն ապահովող «խորհրդարավսր միջոցներից մեկը»:

Հիրավի, և՛ այստեղ, և՛ այնտեղ իշխում էր միևնույն գրությունը, արտադրությունն ունյն հին, լճացած եղանակը: Գյուղում թագավորող հարստահարության ֆեոդալական սիստեմը և քաղաք-

<sup>1</sup> „A Chronicle of the Carmelites in Persia“, նույն տեղում, էջ 159:

<sup>2</sup> «Ուղեգրություններ», Ա, էջ 349 և հտ.:

<sup>3</sup> Հմմտ. Ա. Ռ. Դավրիժեցի, նույն տեղում, էջ 171 և հտ.:

ներում տակ համբարային կազմակերպությունները ծայր անսղ պարզ ապրանքատնտեսություն պայմաններում միջոց էին տալիս վաշխառուներին և առևտրականներին՝ իրենց ձեռքը հավաքելու անմիջական արտադրողների հավելյալ արդյունքի զգալի բաժինը՝ զոհացնելով թե՛ իրենց և թե՛ ֆեոդալների անկշտում ախորժակը։

Ավելի ևս պիտի զարգանային վերջին երևույթները XVII դարի հարկային պրակտիկայում։ Ինչպես տեսանք, երկրի հողային ամբողջ ֆոնդը կենտրոնացած էր պետություն կամ մասնավոր ճուղքատերերի, սրանց թվում նաև վախուժատերերի, ձեռներում։ Գյուղացիները գրեթե զուրկ էին հողային սեփականությունից։ Նրանք կապալով ստանում ու մշակում էին դիվանի կամ մասնավոր ճուղքատերերի հողերը, սրանց դիմաց հողի իրավատերերին վճարելու էին հատուկ կապալավարձ (մալ և ջիհաթ կամ բա՞րա)։

Կապալավարձից պիտի տարբերել բազմազան այն հարկերն ու տուրքերը, որ պետությանը վճարում էին հպատակները, և սրանց թվում նաև հպատակ գյուղացիները, մեծ մասով բնահարկի կամ բնատուրքի ձևով։

Խիստ բազմազան էին հարկման օբյեկտները։ Ամիրգոմնախանի ժամանակ հարկահան Ասլան-բեկը Քանարեսում արքունի դիվանի անունից հարկման համար մարդկանցից պատ գրանցում էր կովերին, ձիերին, ջորիներին, էշերին, սլխարներին, և բացի այդ հաշվի առնում ջրագացները, ձիթհանրները, բրնձաղացները, սրհեստանոցները, այգիները և պարանոցները<sup>1</sup>։ Մի ուրիշը հարկելու համար աչքաչափով սրտշում էր հարկելի ցորենի, խոտերի շեղջի (ապ. «սեղջի») — Ա. Հ. և խաշինքի քանակը<sup>2</sup>։ Ինչպես պիտի տեսնենք, հարկման օբյեկտները և բնույթը հիմնականում նույնն էին նաև հետագայում։

Հարկերի և տուրքերի մեծ մասը գանձվում էր բնական բերքերով։ Բնահարկի գանձման մասին կարևոր մի վկայություն ենք գտնում Զարարիա Սարկավազի պատմության գրքում։ Հայանվում է, որ XVII դարի կեսերին Արարատյան դաշտից «թեթևագին» արժեքով Թավրիզի կողմերն էին արտահանվում՝ բրինձ, բամբակ, յուղ, պանիր, ճրագու, ձևթ, կաշի, մորթի և այլն<sup>3</sup>։ Ակնհերև է, որ սրտնտեսական նախադրյալը հանդիսանում էր տեխնիկական բույսերի արտադրության և կաթնամթերքի մշակման ֆեոդալական արդյունավետը սենտան կամ «մուլքը»։ Ընդ սմին, պիտի կարծել,

<sup>1</sup> Զարարիա Սարկավազ, նույն տեղում, I, էջ 67։

<sup>2</sup> Նույն տեղում, I, էջ 68։

<sup>3</sup> Նույն տեղում, II, էջ 51։

որ Արարատյան դաշտի այս շրջաններից արտահանվող «վեթև-  
 գին» մթերումների զիմաց մտածվում էին նախիջևանի, Մախուի,  
 Խավրիզի կամ Կարսի շրջանների նույն եղանակով հավարված հա-  
 ցարույսերը և ամենից ատաճ՝ ցորենը: Այս նշան էր, ի դեպ, որ  
 պատերազմին հաջորդած խաղաղ ժամանակաշրջանում առժամա-  
 պես ամրացել էին իրանական Ադրբեջանի և Արարատյան դաշտի  
 առևտրական կապերը, և ընդարձակվել նշված վայրերի շուկան՝  
 սաստկացնելով գյուղացիների ֆեոդալական կեղեքումը: Ի դեպ  
 70-ական թվականների տեղական շուկայի մասին նյութեր է մա-  
 տակարարում դարձյալ Զարարիա Աղուլեցին, Աղուլիսի և Երևանի  
 նկատմամբ նշելով զինու, յուզի, ցորենի, գարու, մսի, ալյուրի  
 և բրինձի գների խոշոր տարուբերումները<sup>1</sup>:

Սակայն գոյություն ունեւր ինչպես աշխատավճար հարկ (որ  
 հայտնի էր կոռ կամ բեգար անունով), այնպես նաև «ջիզիա» կամ  
 «խարաջ» անունով հայտնի դրամական գլխահարկը: Որչափ զի-  
 տական դրականություն մեջ բավականաչափ լուսարանված են  
 հարկերի և տուրքերի առաջին տեսակները, նպատակահարմար  
 ենք համարում կանգ առնել այստեղ հարկերի և տուրքերի վերջին  
 տեսակների վրա, որոնցից մեկը շեշտում է աշխատավորների ճոր-  
 տացին վիճակը, մյուսը՝ նրանց ազդային անիրավահավասա-  
 րությունը:

Սովորաբար մասսայական կոռը (կամ «բեգարը») ընկնում էր  
 ձմռան ամիսների վրա: «Կոռվորը ձմեռը թոփ կենին» վկայում է  
 հայկական ասացվածքը: Կոռվորների մտքիլիզացումը կապված էր  
 ջրանցքների ու քահրիզների, ճանապարհների ու բերդերի շինու-  
 թյան և պետական («խանական») փոխադրությունների ու ռազմա-  
 կան գործողությունների հետ: Գոտվեան նշում է, որ 1604 թ.  
 Երևանի պաշարման ժամանակ միայն հենց խրամառներ փորելու  
 վրա բանեցնում էին 12 հազարից ավելի հայեր՝ շրջակա գյուղա-  
 ցիներից, Բերդից տեղացուց կրակը գլխավորապես սրանց էլ հենց  
 հնձում էր<sup>2</sup>: Պահանջ լինելու դեպքում համաքարների ավազը կոտի  
 էր հղում քարտաշ-որմնադիրներին, հյուաններին և օւրիջներին՝  
 «իրանշահի համար» պարտադիր աշխատանքներ կատարելու հա-  
 մար: Այս արհեստավորները շատ ավելի էին ծանրաբեռնված, քան  
 նրանք, ովքեր միայն դրամատուրք պիտի վճարեին<sup>3</sup>: Կոտի պար-

<sup>1</sup> Զ ա ր ար ի ա Ա ղ ու լ ե ց ի, նույն տեղում, էջ 72, 73, 79, 106,  
 136, 146 և 147:

<sup>2</sup> Gouvea, նույն տեղում, էջ 350 և հտ.:

<sup>3</sup> Chardin, V, նույն տեղում, 405:

տալփորված համայնքները երբեմն փողով մարդ էին վարձում իրենց տեղ բանեցնելու համար: Սրա օրինակը տալիս է Զաքարիա Ագուլեցին՝ Երևանի բերդի կառուցման մասին պատմելիս: XVII դարի սուսլին քառորդում զգալի էր դարձել Երևանի մարդում կոռուի աճը (ըստ երևույթին, պատերազմական դրսեթյան, պետական շինարարությունների և մեծ արտագաղթից հետո շտապանց նկատելի դարձած աշխատող ձեռքի պակասության պատճառով): Ինչպես հաղորդում է Զաքարիա Սարկավազը, այդ ժամանակ կոռուի համար հավաքագրում էին հուլյնիակ ձերերիմ ու մանուկներին: Նույն դարի 70-ական թվականների վերաբերմամբ՝ արժեքավոր նյութեր է մատակարարում Զաքարիա Ագուլեցին՝ 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ Երևանի փրկած բերդի վերակառուցման կապակցությամբ: Ըստ Շարգենի և Տավիրնյեի, կոռուի ձեռով էր վճարում պետական հարկերը արհեստավորության մեծ մասը:

Կոռվար գյուղացիների շահագործումը տեղի ուներ նաև մուլքադարների կազմից: Այնուամենայնիվ ինչպես Երանոս, այնպես նաև Հայաստանի գաշտային մարդերում մուլքադարական խոշոր տնտեսությունների մեջ երկրագործությունը, մասնավորապես շտապանի, բամբակի և մյուս տեսակի անխնիկական բույսերի աճեցման և այգեգործության համար կոռը ոչ միայն աննպատակ էր, այլև անձեռնառու: Նման հողերի համար պահանջվում էր սուղման և մշակման հոգատարություն: Մուլքադարների համար ավելի եկամտաբեր էր հողերի կապալտավությունը և սենառայի բնավճարույթին դաժնումը: Կոռվորների կամ վարձու մշակիների աշխատանքով խոշոր տնտեսություններ ունենում էին միայն մեծ վանքերը, սակայն վանքերի մասին հիշենք նաև Էնգելյուսի այն գիտությունը, թե դրանք «ամուրիության վրա հանդուգ հասարակական աննորմալ օրգանիզմներ էին. վանական տնտեսությունները կարող էին բացառիկ արդյունք տալ, բայց հենց այդ պատճառով էլ պետք է որ իրենք մնային բացառիկ վիճակում»<sup>1</sup>:

Բնութագրելով արևելյան ֆեոդալիզմի պետական բազմաբանությունը՝ Մարքսը և Էնգելսը նշում էին, որ կառավարություններն Արևելքում ունեն երեք վարչություն. 1. ֆինանսական՝ սեփական բնակչությանը կազմակերպող, 2. սուղմական՝ սեփական և օտար եր-

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс. Избранные произведения. М., 1948, II, էջ 289:

կրքները կողոպտելը և Յ. Հասարակական աշխատանքի վարչու-  
թյուն՝ վերարտադրություն մասին ունենալիք հոգատարությունը<sup>1</sup>:

XVI—XVII դարերի իրանական պետությունը լիովին արզա-  
րացնում է այդ բնութագրությունը: Հասարակական աշխատանք-  
ների վարչությունը մեծ չափով սպասարկում էր նաև ռազմական  
կարիքներին, ասել է՝ դարձյալ հայրենի և օտար երկրները կողոպ-  
տելու արհեստին:

1638 թ. ծայր ստած խաղաղությունը շրջանում սկսում է բն-  
դարմանել ոչ միայն Հասարակական աշխատանքների, այլև ռազ-  
մական փորձերի վարչությունը: Գլխավորապես դործում էր միայն  
հպատակներին կողոպտելով դրազված ֆինանսական վարչություն-  
ներ: Վերջինիս կեղևումները պիտի զգալի լինեին մանավանդ անմի-  
ջական արտադրողների—գյուղացիության և արհեստավորության  
համար, որոնց կացությունը, ժամանակի բոլոր ազդյուններից  
զատելով, մասխարացած էր մանավանդ դարավերջի տատնամյակ-  
ներում:

Պետականորեն կազմակերպված «ներքին» կողոպտուի պատ-  
կերը ջայտուն կզառնա, եթե կանգ առնենք «խարաջ», «խարջ» կամ  
«ոսկի» կոչված այն դրամատուրքի վրա, որ պարտադիր էր ոչ-մու-  
սուլման հպատակների («գիմմիների») համար որպես «լլաախարկ»:

Ինչպես մուսուլմանական մյուս երկրներում, Իրանում ևս խա-  
րաջը սկզբնապես ընդգրկում էր հողային տուրքը («խարաջի մու-  
վազաֆե»), ինչպես նաև հողային եկամուտներից վերցվող տուր-  
քը («խարաջի մուկասսեմե»)՝:

Հետագայում «խարաջ» էր կոչվում արաբների ժամանակներից  
ի վեր ոչ մուսուլմանական հպատակներից դանձվող այն գլխա-  
հարկը, որ հայտնի էր նաև «ջիզյա» անունով: Այդ մի տուրք էր, որ  
զանձվում էր երկրի նվաճման ու նրա օտարազավան չափահաս  
արև հպատակներին սարկադրման ռազմական հնօրյա իրավունքի  
հիման վրա: Հետագա գլխահարկը օտարազավանների նկատմամբ  
ռազմական այդ իրավունքի կիրառման մեղմացած ձևն էր, որ հա-  
րատեց մինչև Նազիր շահի օրերը: Այնուամենայնիվ հարատևում

<sup>1</sup> К. Марке и Ф. Энгельс. Сочинения, XXI, էջ 494:

<sup>2</sup> Chardin, *Նուշն տեղում*, V, էջ 399, VI, էջ 131 և հա.: Du Mans, *Նուշն տեղում*, էջ 16:

<sup>3</sup> Kremen, *Kulturgeschichte der Orients unter den Chalifen*, I, էջ 276 և հա., А. Ю. Якубовский, *Иран на грани VIII—IX вв.* („Труды пер-  
вой сессии арабистов“), Ленинград, 1937, էջ 11, 28 և հա.:

էին նաև օտարադավան հպատակները ստրկագրման մշուս ինստի-  
տուտի մնացուկները: Իրաճնում և Քուրքիայում այդ ինստիտուտի  
մնացուկներից էին աղջակաժողովի և աղայաժողովի երբեմնակի  
գործադրվող պրակտիկան: Այսպես, նույնիսկ 1811 թ. պարսից գա-  
հաժառանգ Աբրաս Միրզան Նախիջևանի գավառից պահանջեց 500  
«ղուլ». «ամենն փախստական եղեն, — գրում է ժամանակակից մի  
հիշատակագրող, — և ոչ կարեցին գերժամիլ ի ձեռանէ նորա, բմ-  
բընեհալ բերին ամենն: Եւ մեր Հին Ջուղայու հինգ մարդ ուղեցին:  
Որքան ջահիլ կային բարու բըշամներն թրաշեցին և մորուս թո-  
ղեցին և գարձյալ 50 թուման բարշվաթ աւեցին անջախ որ բըր-  
ձան»<sup>1</sup>:

Իր ուղեգրութեան աճն մասում, ուր նկարագրված է Վրաս-  
տանը, Տուրնբֆորը հայերի և վրացիների գլխահարկը մարդագլուխ  
6 արասի է նշում<sup>2</sup>: Իրանի մշուս մասերում գլխահարկի նորմը ավե-  
լի բարձր էր: Այսպես, Տուրնբֆորից կես դար առաջ, անանուն մի  
հեղինակի վկայութեամբ, գլխահարկի տարեկան նորմը Իրաճնում  
9 արասի էր (ֆրանսիական կուրսով՝ 7 լիվր. 4 սոլիդ.)<sup>3</sup>:

ԴՅու-Մանը հայերից և հրեաներից գանձվող գլխահարկի նոր-  
մը մարդագլուխ մի միթիկալ (բաս Մինորսկիի = 469 գրամ) սակի  
է նշում<sup>4</sup>: ԴՅու-Մանից բոսորդ գար առաջ Իրան այցելած Օլիարիու-  
սը գլխահարկի նորմը հաշվում էր երկու սոյխսթալեր: Նրա ասե-  
լով գլխահարկ վճարող հայերի թիվը 100 հազար հոգուց ավել  
չէր<sup>5</sup>:

Տակավին 1666 թ. Աղսլիսի գլխահարկը կապարով վերցրին  
մարդագլուխ 2500 զիանով (=  $\frac{1}{3}$  թուման կամ 12 արասի, 2 շա-

<sup>1</sup> Հայկական ՄՍԹ Մատենագարան, ձև. № 2263, էջ 177ր.: Հիշատա-  
կագրողի պատմածը հիշեցնում է մեզ Անգրեսա երեցի մասին Դավրիժեցու  
պատմած Աղսլիսի բնորոշ դեպքը (տե՛ս Ա. Ա. Դավրիժեցի, նույն տե-  
ղում, էջ 357):

<sup>2</sup> Tournefort, II, էջ 131:

<sup>3</sup> Du Mans, նույն տեղում, Appendice, XLV, էջ 346: Դասուցերը  
հաշվում է իրանահայ գլխահարկի նորմը գերմանական երկու սոյխսթալեր,  
Dapper, Olfert, Asia, oder ausführliche Beschreibung des Reiches  
des Grossen Mogols, nebst einer vollkommenen Vorstellung des Königreich  
Persiens etc., Nürnberg, 1781 (թարգմ. իսրանդերենից), էջ 106:

<sup>4</sup> Du Mans, նույն տեղում, էջ 46, նմա. Minor-sky, Tadhkirat  
al-muluk, էջ 18:

<sup>5</sup> նույն տեղում, էջ 179:



հի)՝: Բնարկե այս գեպրում գլխահարկի նորմը ցածր պիտի եղած լիներ, բան այն, ինչ գանձվելու էր հարկատուներից: Թուրքիայի և Հնդկաստանի օրինակով կիրառելով տարրերի կապալավարձման այս սխեմանը՝ Աեֆյանները նպաստում էին առևտրավաշխատավան կապիտալի գործունեությունը, սաստկացնելով հարկատու գյուղացիների և արհեստավորների պարանոցին շորած պաշտանակալների և վարկատուների շահատակությունները: Միայն գլխահարկը չէ, որի գանձումը կատարվում էր կապալի միջոցով, կապալի միջոցով էին գանձվում նաևախ նաև մյուս տարրերը: Խոշոր կապալառուների գերում Ազուլեցին նշում է Երևանի խանին, Թավրիզի վեզիրին, Ազուլիսի ազալին: Խոշոր կապալատուները գործարքներ էին կնքում մտնրերի հետ. գերջիններիս գերում հանդես էին գալիս օրինակ, նաև Ազուլիսի մելիքներից սմանք: Կապալառուներին օգնություն էին գալիս հարկահան գարուզաներն ու խոշոր կապալառուների նորարները, որոնց պարենավորումը մանում էր զարձյալ հարկման «վերագիր ծախսերի» մեջ:

XVIII դարում Արրահամ Կրեաացին նշում է իրանական գլխահարկի հից նորմը — մարդագլուխ երեք և կես դուսուշ (15 դուսուշը = իրանական մի թումանի): Մինչև Կրեաացու օրերը գլխահարկի նորմը գրանից բարձր էր<sup>1</sup>:

Այսպիսով, կասկած չի մնում, որ XVII դարի ընթացքում գլխահարկի նորմը աճում էր: Միսիոներ Դյու-Մանի համաձայն «հարկատուներից սմանք հարկագրվեցին մուրացկանի պարկուսել»<sup>2</sup>: Նախիջևանի հայ կաթուղիկ համայնքների միձակի մասին խոսելով՝ հայազգի միսիոներ Պեաիկը նույն այս ժամանակաշրջանի մասին հաղորդում է փաստեր, որոնք բնորոշ են ժամանակի իրանական հարկատուների կացություն համար առհասարակ: «Պետական հարկերն ու մասնավոր պարտքերը վճարելու համար, — գրում էր Պեաիկը, — հավատացյալների գաշտերն ու խաղողի այգիները գրավ էին գրվում հերձվածողների (իմա՝ լուսավորչազավանների) կամ անհավատների (իմա՝ մահմեդականների) մոտ: Կրոնավոր հայերն իսկ հարկագրված էին լինում ուրիշ մշակների հետ հավասար վարձագրով աշխատել գաշտերում ու այգիներում, որպեսզի չլքեն իրենց եկեղեցական պաշտոնը կամ չզրկվեն կյանքից»<sup>3</sup>:

<sup>1</sup> Չարբրիա Ազուլեցի, նույն տեղում, էջ 68 և 70:

<sup>2</sup> Տե՛ս Արրահամ Կրեաացի, նույն տեղում, էջ 65:

<sup>3</sup> Du Mans, նույն տեղում, էջ 46:

<sup>4</sup> Bedik, նույն տեղում, էջ 378:

Այս վկայութիւննից ակնեւրե է, որ հարկահանութեան պրակտիկան հարկատուներին ենթարկում էր նաև վաշխառվական կապիտալի կեղեքումներին, հասցնելով գյուղացիների մի մասին աշխատաւարձով բանող գյուղատնտեսական մշակների գրութեան:

Սեֆյանների տիրապետութեան ժամանակաշրջանի իրանագիր վավերագրերը հետազոտող Հ. Փափազյանի կարծիքով XVII դարում «հայ ռայաթներից գանձվող գլխահարկը և տարիների ընթացքում նրա վրա բարդվող վերագիր գումարներն ու տոկոսները («թաֆալութ» և «ֆար»), բավական խոշոր գումար էին կազմում և նշանակալից տեղ էին գրավում պետութեան ֆինանսների մեջ: Շատ հաճախ որոշ գյուղերից ստացվող գլխահարկը կազմում էր նույն գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարի կեսից ավելին»<sup>1</sup>: Որպես մի հարկ, որ հավասար չափով տարածվում էր ամենքի՝ և՛ աղքատի և՛ հարուստի վրա՝ խարաջն ըստ էութեան նպատակում էր հասարակական անհավասարության խորացմանը, հարկման այդ սիստեմից մեծապես տուժում էին չքավոր վճարողները:

Անվճարունակ քրիստոնյաները հաճախ ենթարկվում էին ծանր ռեպրեսիաների: Ով ի վիճակի չէր գլխահարկ մուծել, պիտի մահմեկականանար: Հակոբ Զուլայեցի կաթողիկոսը գրում էր, թե «Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրա պարսից պաշտօնյանների կողմից գրվում են ահա օտարտախ հարկեր և մեզ, որ շենք կարողանում մեր չքավորութեան և ազրատութեան պատճառով հատուցել այդ հարկերը, քշում են դեպի բանտ, չարշարում են, տանջում և վերջապես, որ մահմեկականների նպատակների հետինն է ու գլխավորը՝ իրանց գաղանթներն են հարկագրում բնդունել»<sup>2</sup>: Նույն բանը վկայում է XVII դարի կեսերին Իրանում ճանապարհորդած եզուրա Ալեքսանդրը զր Ռոդոսը. «Պարսիկները, — գրում է նա, — շատ են նեղում քրիստոնյաներին՝ թե՛ անձնապես, թե՛ տուրքերով: Անվճարունակ հարկատուներին գանակոծում են՝ մահվան դուռը հասցնելով կամ թե, հալածաժոխ անելով նրանց՝ մի բան որ հաճախ է պատահում»<sup>3</sup>:

<sup>1</sup> Հ. Փափազյան, *Սեֆյան Իրանի ասիմիլյատորական բազմակուսութեան հարցի շարքը* (Տե՛ս «Բանբեր Մատենագարանի», Երևան, 1956, գիրք 3, էջ 87):

<sup>2</sup> «Արարատ», 1915, էջ 775 և հա.:

<sup>3</sup> Voyage et Mission du P. Alexander de Rhodes, compagnie de Jesus, Paris, 1851, ոգտվում ենք բանասեր Հ. Բերբերյանի կողմից մեզ տրամադրված հայերեն բաղձածրից):

Հավատափոխությունը գաժան մի միջոցառում էր, որ նպատակ ունէր ճշտագահության հարկադրել հարկատուներին և, որ ավելի նշանակալից է՝ անթերի հարկադանձման գործիք դարձնել կեկեղեցու հեղինակությունն ու բարոզական մեքենան: Եթէ հավատանք օտար աղբյուրներին՝ հայ կեկեղեցու ներկայացուցիչները ջանք էին գործ դնում նույնիսկ օղնության գալ անվճարունակ ծխականներին: Հարկահանության ժամանակ, վկայում են այդ աղբյուրները, բարձրագիր հայ կեկեղեցականները մուծում էին սրանց ապառիկները<sup>1</sup>: Ի՞նչ միջոցներից էր հոգում կղերն այդ ծախսերը: Նույն աղբյուրները այդ հարցին պատասխանում են — կեկեղեցական տուրքերից: Հայ աղբյուրները միջոց են տալիս ստուգելու անհավանական թվացող այս տեղեկանքը: Ինչպէս տեսանք՝ Մեյքսել կաթողիկոսը հարկահան ստախկանի մոտ կատարում էր ուղղակի հարկադրիչ գավազանի դեր: Կան ավյալներ, որոնք ցույց են տալիս, որ ոչ թե կեկեղեցին էր հանդես գալիս ժողովրդի տուրքերը վճարելու համար, այլ, ընդհակառակը, ժողովուրդն է, որի շփնթին բարդվում էր նաև կեկեղեցու «պարտքերը» ծածկելու հոգսը:

Ինչպէս հնկերում, այնպէս և այդ ժամանակ վանական հոգերի շահագործումը հանդիսանում էր էջմիածնական եկամուտների ձշտական և կարևոր աղբյուրը: Էջմիածնի վանքն ունէր այդ պահին երկու տասնյակից ոչ պակաս գյուղեր<sup>2</sup>: Կաթողիկոսական աթոռի եկամտի աղբյուր են կազմում «վախմ»-երի (վակուֆների) կարգով ստացված խանութները, քարվաճառարանները ձիթհանքները, դինդերը ջրաղացները արհեստանոցների և առևտրի ու շուկայի հետ կապված նման այլ տեսակի ձեռնարկությունները: Այս ամենից դատա XVI—XVII դարերում էջմիածնի վանքն ունէր նաև կկամտի այլ աղբյուրներ: Հատուկ եկամուտներ էր ստանում վանքը «աջ»-երի և մատուցների ցուցահանումներից, մատսայական ուխտակություններից, կարավանային ուղևորներից և դիպվածական նվիրատվություններից: Առանձին տեղ էին գրավում կեկեղեցական տուրքերը:

<sup>1</sup> Du Mans, նույն տեղում, Appendice, էջ 316, Tavernier, նույն տեղում, էջ 29 և հտ., Tournefort, նույն տեղում, II, էջ 166, Lettres édiifiantes et curieuses concernant l'Asie, l'Afrique etc., Paris, 1780, III, էջ 39:

<sup>2</sup> Հմմտ. Ս. Պողոսյան, Եկեղեցական հոգաբարությունը Երևանի խանությունում 17—18 դդ., Երևանի համալսարանի «Գիտ. աշխատություններ», հատ. XIII, էջ 231 և հտ.:

Հաժմանորեն էջմիածնի «աթոռահասի» մասին է խոսքը, երբ օտար հեղինակները գրում են, թե Հաժմահաս ծխականը կաթողիկոսին ամեն տարի տալիս է իրանական մի մահմուդի<sup>1</sup>: Ասա Տավերնյեի, մահմուդին հավասար էր ֆրանսիական 4—5 սոլի, ըստ Շարդենի—9 սոլի<sup>2</sup>: Նույն ազդյութների համաձայն, ընտրվել էին ծխականներ, որոնք անկարող էին վճարել այդ գումարը. քնդհակառակը կային նաև այնպիսիները, որոնք 2—4 էկյու (էկյուան = 0,15 թուման) էին տալիս: Ոմանց ասելով այս եղանակով կաթողիկոսը գանձում էր 600 հազար էկյուի շափ մի գումար (Տավերնյե, Դյուլֆան, Տուրնըֆար), մյուսները մի բանի տասնամյակ այս հեղինակներից ուշ, երկու հարյուր հազար էկյուից բարձր չէին համարում այդ եկամտի քնդհանուր գումարը<sup>3</sup>:

Հասուկ ուշադրության արժանի են եկեղեցական այն սուրբերը, որ գտնաձվում էին անմիջապես էջմիածնական նվիրակների ձեռքով: Եկամտի մի ազդյութ էր այս, որի մասին գրում էր ասկավին XV գարում Հայաստանում ճամբորդած բավարացի Շիլտերգերը: Մեռած բաշխելու իրավունքի համար, հազորդում էր նա, հայաց կաթողիկոսը խոշոր հարկ է վճարում մեծ Սուլթանին<sup>4</sup>: Պիտի կարծել, որ մեռածբաշխության իրավունքի համար պետության հատկացվելիք հարկը կաթողիկոսները վճարում էին նաև հեռագայում, և երեկ այդ հարկն է հենց, որ XVII գարում մեկը մյուսին կրկնող ուղեգրողները համարում են անվճարունակ ծխականների փոխարեն մուծելիք սուրբ: Այս բացատրության օգտին կարող ենք մասնանշել նաև Հակոբ Զուղայեցու վկայությունը: «Ի բնւ ամենայն ազգ Հայոց՝ ուր և իցէ,—Իրանի շահին ուղղած այս խոսքերը պատմագիրը գնում է Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի բերանը,—Թէ յաշխարհին Սամանցոց, Թէ ի Ֆոսանկաց, Թէ Հնդկաց, Թէ Մսուկոփաց, և ուր և գտանի յազգին Հայոց, ամենեքեան հնազանդին էջմիածնի՝ որ է ի ներքոյ անբութեան քում. և ըստ օրինաց մերոց հարկս տան բնակչաց էջմիածնին, և նորա զարբունական հարկն տան»<sup>5</sup>:

Նվիրականների միջոցով էջմիածինը գանձում էր «աթոռա-

<sup>1</sup> *Հմտ.* Tavernier-ի, Du Mans-ի և Tournaiort-ի վերջ նշված էջերը:

<sup>2</sup> Chardin, *Նույն անգում.* IV, էջ 180:

<sup>3</sup> *Lettres edifiantes*, III, էջ 39:

<sup>4</sup> «Հանդես գրակ. և պատմ.», գիրք 3, էջ 158:

<sup>5</sup> *Ջ ա ր ա ր ի ա Ս ա ր կ ա զ ա գ.* Նույն անգում, II, էջ 81:

հաս», «քառասնից», «հիշատակ», «խոսամունք», «հոգեբաժին», «աշահամբույր», «մատաղ», «գավազանապտուղ», «փոքրավորեր», «ժամուց», «պաշտոնեից» և նման տեսակի այլ իր հասույթները:

«Կամավոր» համարված այս հասույթները երբեմն ստացվում էին առևտրական հիմունքներով: XV դարում Կիրակոս Վերաբեցի կաթողիկոսը արգելքի առկ էր դնում մեռոնի վաճառահաման պրակտիկան, որ գործադրում էին Սսի նվիրակները: «Մի սք իշխեսցէ յայսմ հետէ աստուածավաճառութիւն առնել, այսինքն զմեռոնն կամ զքահանայութիւնն վաճառել»<sup>1</sup>: Բայց՝ սպարդյուն: Սսեցիներն հոսի արագիցիան շահարկում էին նաև էջմիածնեցիները: Հավատացյալների ջերմեռանդ «նվիրաբերութեան» հետ լծորդված էր նվիրակների մեռոնավաճառքի ֆունկցիան, էջմիածնի մենաշնորհ կազմող «սրբալույս» սպրանքի՝ մեռոնի մատակարարումը<sup>2</sup>: XVIII դարի մի ձեռագրում Գանձասարի ավտոին ենթակա երկրներում մեռոնի համար սահմանված էր նույնիսկ սրտշ սակագին, «զի պարտիք, — գրում է Պարտայու երկրի ժողովրդին Գանձասարի կաթողիկոսը, — որ զմիոյ տարոյ նւիրակն, սր է զլուխն երկու շահի և այրին մէկ շահի լիովին ժողովել և յանձնել հոգեոք արգելիդ մերոյ» (այսինքն նվիրակին — Ա. Հ.)<sup>3</sup>:

Օգտվելով այդ մենաշնորհից և առիթ բռնելով էջմիածնի վրա ծանրացած պարտքերը՝ նվիրակները հարկադրաբար բարձրացնում էին մեռոնի գինը: Երեմիա Քեոմյուրճյանը հիշատակում է «միականի» Խգնասիոս նվիրակին, որը «կրկին շափով ծախեր զմեռոնն յոյժ ամիրաուլթեամբ»<sup>4</sup>: Սկեզեցականների հետ մեռոնաշարաշահման գործում մրցում էին աշխարհականները: «Նուիրակք սմանք, —

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 4669, էջ 203ր:

<sup>2</sup> Շեռնի միութիւնն Հայոց Լեհաստանի բնդ եկեղեցւոյն Հոովմայ», Տրա. Կ. Նոյանի, Պետերբուրգ, 1881, էջ 6, 44, 144 և հա. «Շողակաթ», Ա, էջ 57 և 59, հոգվ. Մ. Վ. Ն շ ա ն յ ա ն ի, Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քեոմյուրճյանի, Յ Շ Ճ Ի Կ. նույն տեղում, էջ 356, «Գիվան հայոց պատմութեան», Գ. էջ 797 և հա., 807 և հա., Մ. Գ. Թ ա գ ի ա դ յ ա ն, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալիթա, 1817, 1, էջ 240 և հա., «Մանր ժամանակագրութեաններ», 1, էջ 218, 223: Նվիրակութեան մասին հարուստ նյութեր են պարունակում XVIII դարի էջմիածնի կաթողիկոսների մեծ մասով գեռ անտիպ վիճակում գտնվող զրադրութեանները: Իբրև նմուշ մատնանշում ենք Հայկական ՍՍՌ Մատենագարանի № 9120 նորերս ձեռք բերված նամակագրութեանների մատյանը:

<sup>3</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 3452:

<sup>4</sup> Գ ա լ ե մ ք յ ա Ր յ ա ն, նույն տեղում, էջ 73:

գրում է Քեոմյուրճյանը, — էմբրով պէրաթի սուրէթով պոռնիկք և բողարածք աշխարհականք յաշխարհականաց ապականեցին խան-զարեցին զկարգ սուրբ եկեղեցական ի Թրակիա և ի Մակեդոնիա և յեզր Տանափս գետոյ և ի Փոքր յԱսիա»<sup>1</sup>։ Հաճախ նրանք գրպանում էին «նվիրակված» գումարները կամ ծախսում անձնական պետքերի վրա։ Ժողովրդի վրա պարտականություն էր դրվում հոգալ նվիրակներին և նրանց ուղեկիցների կարիքների կամ նրանց ձիերի կերակրման մասին։ «Անիրաւութեամբ հափշտակեն զգառս և զոշխարս, իւզ և մեղր, և զայլ ամենայն ուտելիս և ըմպելիս», — կարգում ենք ժամանակակից մի գրվածքում. կղերի և ժողովրդի բողոքները ապարդյուն էին անցնում. շատերին սպասում էր նվիրակների լեզապատառ նզովքը կամ նրանց դործակիցների նյութած պատիժը՝ Թուրք կաշառված պաշտոնյաների ձեռքով<sup>2</sup>։

Թուրքահայ գավառը արանջում էր նվիրակների դեմ։ Մասամբ հենց այս հողի վրա էր բորբոքվում Ալթամարի և Էջմիածնի կաթողիկոսութայնների հակամարտը։ Տակաւիին Մելիքսեթ կաթողիկոսի ժամանակ բողոքի հանրագիրը հզվեց Էջմիածին, ուր նվիրակների մասին ասված էր. «զայն ևս գիտեմք թէ սոքա ինչ կու հասուցանեն ի յԱթոռն. զի վասն աղահութեան, իւրեանց շրջին և ոչ վասն աթոռոյն. զի զոր ինչ ժողովեն ի հանդերձս երևելիս տան... զի հեթանոսարար պաճուճեն զինքեանս, ո՛չ քրիստոնէաբար։ Նոյնպէս և պալարակապ երիվարօք, իբրև զբռնատր և այս վասն պրծղութեան իւրեանց, և կամ ի կերակուրս և ի յրմբելիս ծախեն զժողովեալն իւրեանց, զկնի հոմանեաց և գործակցաց իւրեանց պէսպէս անառակութեամբ։ Եւ այս վասն որովայնի իւրեանց։ Եւ կամ ի սօգանս տան աշխարհաց և այս վասն շար գործոց իւրեանց։ Եւ կամ կաշառս տան բռնաւորաց և այս վասն հակառակաէր բարուց իւրեանց. ահա աշխարհն տաղտկացեալ է ի սոցանէ և տունս Թորգոմայ ձանձրացեալ է զարշահտութենէ վարաց սոցայ»<sup>3</sup>։

Նվիրակների ժամանումը գուցեմ էր նրանց աչցելած վայրերի համար։ Այսպես, 1655 թվականին Կաֆա քաղաքի պատմիչը գրում է. «տարին զմեզ նեղացուցել է. քաղաքն եկան մէկ հայրապետ

<sup>1</sup> Գ ա լ և մ ք յ ա ր յ ա ն, ն ո յ ն տ ե դ ու մ, էջ 75:

<sup>2</sup> Տ ե ր - շ ո վ հ ա ն ն և ս յ ա ն, ժամանակագրական պատմություն սոսրուսագեմի, էջ 354, և հտ., 381 և հտ.: Հմմտ. նաև Ձ ա մ շ յ ա ն, ն ու յ ն տ ե դ ու մ, III, էջ 692, և հտ.:

<sup>3</sup> Հայկական ՍՍԻ Մատենադարան, ձեռ. № 1363, էջ 220ր:

(իմա՝ նվիրակ — Ա. Հ.) և հինգ վարդապետ, փրկարար աստուած փրկէ և ազատէ»<sup>1</sup>։

Դարամիջին Թուրքիայում հասունանում էր էջմիածնի եկեղեցական գերիշխանութունը սահմանափակելու կամ այդ գերիշխանությունից իսպառ ազատվելու միտքը<sup>2</sup>։ Նվիրակների գեմ կուսակված դժգոհություններն օգտագործեցին թուրքահայ մեծատառնները, որոնք եկեղեցական մուտքերը ինքնահրաման տնօրինելու նպատակով հաճախ իրենց գործիք էին դարձնում Պոլսի և Երուսաղեմի պատրիարքություններն ու Սսի կաթողիկոսությունը։ Ոմանք աշխարհիկ վիճակով վարում էին անգամ պատրիարքական սեղակալի պաշտոն։ Հացագործների համքարության պես Սարգիսը, եկեղեցական սքեմ հագնելով, նույնիսկ բազմեց Կ. Պոլսի պատրիարքական աթոռին։ Մի ուրիշը՝ տեր-Կրպո՝ մեծատուններին հաճոյացող ստահակ ու անպիտան մի քահանա, կաշառքով խաբարխությամբ և անցուկ այլ միջոցներով առաջացած, հինգ անգամ պատրիարքական աթոռ կալւ։ Կային նաև առևտրական և սեղանավորական գործերով զբաղված հայ բանասարկուներ, որոնք թուրք պաշտոնատերերին հասկացնել էին տալիս, թե էջմիածնի նվիրակները մեծ քանակությամբ կանխիկ դրամ են հանում երկրից՝ արդելք դառնալով օսմանյան խարաջի վճարմանը։ էջմիածնի միջոցով, հարում էին նրանք, թուրքահայերը փաստորեն դանվում են իրանական հպատակների վիճակում և օսմանյան դրամով զինում իրանցիներին Թուրքիայի գեմ<sup>3</sup>։ Նվիրակներին զրպարտում էին նույնիսկ Իրանի օգտին Թուրքիայում լրտեսությամբ զբաղվելու մեջ։ Մտաբերենք, որ Պոլսում նվիրակները տակավին XVI դարում լրտեսության մեջ էին մեղադրվում շարարար։ Թուրքերը խիստ ու մանրախույզ հարցաքննության էին ենթարկում նրանց։ Նվիրակները ջանում էին հավատացնել, թե քաղաքական շահագրգռություններից և դիտավորություններից հետո՝ իրենք առևտրականներ

<sup>1</sup> «Մանր ժամանակագրություններ», Կ, էջ 226։

<sup>2</sup> Ա. Ա. Դ ա վ բ ի ժ ե յ ի, նույն տեղում, էջ 242 և հա., Չ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա ղ, նույն տեղում, Լ, էջ 27 և հա., 72 և հա., «Թուղթ Սսո Սիմեոն կաթ. առ Փիլիպոսս ու էջմ. կաթ.», Վարդաբազապատ, 1904, էջ 78 և հա., «Շոգակաթ», Ա, էջ 61, «Ջամբո», էջ 93 և հա.։

<sup>3</sup> «Ջամբո», էջ 93 և 95, Չ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա ղ, նույն տեղում, Լ, էջ 27, Տ ե ր Հ ո վ հ ա ն ն ե ո յ ա ն, նույն տեղում, էջ 365, 681 և հա., Հ. Գ. Մ ր մ ք ր յ ա ն, Հին օրեր և այդ օրերուն հայ մեծատունները, Վենեաիկ, 1901, էջ 14 և հա. հմմտ. Chardain, նույն տեղում, Լ, էջ 243։

են ստակ. «Սա,—ասում էր զրանցից մեկը,—իւզավաճառ եմ, ով ոք զնէ յինէն իւզ՝ զրամով զնէ և ով ոք ոչ զնէ՝ ոչ տա զրամ»։ Ինքյան հատկանշական է նույնիսկ այս ինքնապաշտպանությունը։

XVII դարի կեսերին ըստըբավորները բազմիցս դիմում էին սուլթանին՝ նվիրակներին պետության սահմաններից վտարելու խնդրով։ Մուհամեդ IV սուլթանը հրաման արձակեց՝ վերջ տալ նվիրակներին շարաշահումներին և արգելել մեռոնի բաշխումը նրանց, ովքեր չեն ներկայացնի զրա համար սուլթանական ֆերման<sup>2</sup>։ Բայց այս սահմանափակումն էլ չէր օգնում։ Մի քանի ժամանակ անց՝ հայերը խնդրում էին պարտադիր սակագին նշանակել մեռոնի համար և ամօրինել, սր միայն «ազն հաճութեամբ» մեռոն մուծվի ու ամբողջատ գնահատվի վաճառպետի կողմից՝ «սրպէս այլ կարասիք, սր մտանէին ի սահմանէն պարսից»<sup>3</sup>։

Նման ազմուկների պահին կաշառք խոթելով տեղական փաշայի բուռը՝ Աղթամարի Մարտիրոս կաթողիկոսը ստանում է հատուկ ֆերման, որի համաձայն Վանի, Բերկրիի, Արճեշի, Խլաթի, Բաղեշի, Մուշի, Խաշարի և Սմիդի վիճակները պիտի դուրս գային էջմիածնի իրավասությունից. այսուհետև Աղթամարի վանքն է, որ պիտի «ուտեր» այդ վայրերի նվիրակային արդյունքը<sup>4</sup>։

Ճարպկոսին օգավեց հանդամանքներից մանավանդ Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնթապցին։ 1661 թ. սա հիմնեց Երուսաղեմում մի կեկեղեցի «էջմիածին» անունով, զբստորելով սիմբոլիկ այդ ընթացքով հեռամիտ իր գիտավորությունը։ Առատ ընծայաբերությունների օժանդակությամբ Եղիազարն առաջ վ մղում թուրքահայ թեմերը էջմիածնից պոկելու ծրագիր, և 1564 թ. հատուկ հրովարտակով հաստատվում թուրքահայ անկախ և ընդհանրական կաթողիկոսի ինքնահնար պաշտոնի մեջ։ Սա հրատարակեց կեկեղեցական սահմանադրության մի նախագիծ, որով կամենում էր վերջ զնել էջմիածնի գերիշխանությունը և ընդհանրական կաթողիկոսություն անել հիմք զնել երկու իրավահավասար կաթողիկոսությունների։ Փուլք չէ, որ Երուսաղեմի վրա զրա համար պիտի ծանրանար տարեկան 15 հազար ստակ տուրք։ Ի վարձատրություն՝ սուլթանի հրամանով Եղիազարը պիտի վայելեր մեռոնօրհնեքի և ձրի մեռոնարաշխման իրավունք, արգելելով նվիրակների մուտքը

<sup>1</sup> Ջ ա թ ա թ ի ա Ս ա ը կ ա վ ա գ, Նույն տեղում, 11, էջ 28:

<sup>2</sup> Տ ե ը - չ ո վ հ ա ն ն և ս յ ա ն, Աստ. եղ., Նույն տեղում, էջ 355:

<sup>3</sup> Ն ո յ ն տեղում, էջ 389:

<sup>4</sup> Մ ի մ ե ո ն կ ա թ., Ջ ա մ բ ո, էջ 93 հտ., 238:



Ռուբրիա<sup>1</sup>, Երուսաղեմի կաթողիկոսության և պատրիարքությունների կրկնակի պաշտոնի համար հրովարտական դնելով Քյոփրուլու Ահմեդ փաշայից՝ Եղիազարը օրհնության կոնդակներ էր ուղղում ամենուր՝ խոստանալով ձրի մեռոն: Մերթ ընդ մերթ փորձում էր նույնիսկ հաշտության լեզու գտնել հայոց եկեղեցու բուն իրավատիրոջ՝ «շարածեր» Հակոբ Զուղայեցու հետ: Խոստանում էր էջմիածնին զիջել մեռոն օրհնեքի իրավունքը, եթե միայն Երուսաղեմն ու էջմիածինը ճանաչվեն համազոր կաթողիկոսություններ: «Երուսաղեմի կաթողիկոսը, — գրում էր Եղիազարը, — չի կրճար Սուրբ Տունը շինել՝ առանց հնազանդելու էջմիածնի կաթողիկոսի, ու այս վերջինս ալ չի կրճար Հունաց (Թուրքահայոց) իշխել՝ առանց հնազանդելու Երուսաղեմի կաթողիկոսին»<sup>2</sup>: Սակայն Եղիազարի «հաշտարար» առաջարկությունները<sup>3</sup> զլուխ դալու բաներ չէին:

Շուրջ քսան տարի տևեց Եղիազարի ինքնամեծար ու պառակափչ դիմադրությունը: Թուրքահայ ժողովուրդը արսհվել էր երկու բանակի: Եվրոպական մի ժամանակագրի ասելով՝ XVII դարում Պոլսում կային մոտ 40 հազար «բնիկ» և մոտ 50 հազար «եկվոր» հայեր<sup>4</sup>: Ըստ երեուլթին, բնիկ և եկվոր այս հայերի հակամարտից էլ սկիզբ էր առել հենց պաշարի այն տենդը, որով բռնվել էր նաև գավառը. «Կեսք ի կողմն էջմիածնի էին, — պատմում է չհրապարակված աղբյուրներ օգտագործող Չամչյանը. — մանաւանդ նոքա, որք եկեալ էին ի քաղաք ամբողջ շաշխարհէ Մեծին Հայոց և Պարսից որք և կոչէին արևելցիք, և կեսք մանաւանդ թէ յուրովք ի կողմն Եղիազարու, և սոքա բնակք քաղաքին. ժողովեալ անդր ի սահմանաց Փոքոն Հայոց և Հռոմստանու, և կոչէին հռոմցիք: Սկսան ապա այս երկու դասք մաքառիլ ընդ միմեանս, և անդոսնել զիրեարս, սոքա վնոսա, արևելցի և յսկսբեան կոչելով, և նոքա զսոսա՝ հռոմցի և եղիազարեան ձայնելով»<sup>5</sup>: Բանակցելով Բ. Դրան հետ պաշարող կողմերը փոփոխակի հաջողությամբ կաշառում էին թուրք պաշտոնյաներին, սրանց օժանդակությամբ կառավարական

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 363 և հա., Չամչյան, նույն տեղում, 111, էջ 697, 699 և հա., Չամբարիա Սարկավադ, նույն տեղում, 111, էջ 72, «Ջամբու», էջ 239, «Արարատ», 1915, էջ 201 և հա.:

<sup>2</sup> Տ. Սավալանյան, Պատմություն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1931, էջ 620: Հմմտ. նաև «Սիոն», 1940, էջ 153 և հա.:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 611 և հա.:

<sup>4</sup> Հ. Գ. Մամբրյան, նույն տեղում, էջ 18:

<sup>5</sup> Չամչյան, նույն տեղում, 111, էջ 700 և հա.:

մի հրամանը ջնջել տալով, դրան հետևող մի այլ հրամանի զորու-  
թյամբ: Նույն պայքարը տեղի ունիլ նաև գավառներում: Արծարծ-  
ված հակամարտին արձագանքում էր անգամ ժամանակի գրակա-  
նությունը: Մի տաղի մեջ կարդում ենք.

Պատրիարզներն չիրար անցան,  
Վեց բիւր եղև պարսքն ի լման,  
Վէճն և կոխին բազմացան,  
Այ սուրբ աթոռ հայիք սանի.  
Պ.ն անիրաւ նուիրակնին  
Թուրքի ռախատով ձի կու հեծնին,  
Շարժմունքն ամեն քան դամանցին,  
Այ սուրբ մեռոն հայիք սանի...  
Ռայիս 'ւ իշխանը ոմանը լաւ շեն,  
Ձկաշաւքն արմաղան (=նէր) կոշեն,  
Չի արեւիկն բոհտան ասեն (=գրպարտեն).  
Այ հարամ հօռ հայիք սանի:

Տեղացիների և եկվորների պայքար կար զեռ գարամիջին: 1653 թվականին, դեկտեմբերի 4. Պոլսում, էջմիածնի Փիլիպոս կաթողիկոսը մի պահ կողմերի հաշտություն կայացրեց: «Գոյ երկպառակութիւն ի մէջ նոցա,—գրում է կաթողիկոսին ուղեկցող Առաքել Շոտթեցի վարդապետը,—զի ոմանը ներսեցի և ոմանք դրսեցի անուանէին և այսմ անուանակոչութեանց բազում վնաս ծնանիր, քանզի զմիմեանս մտանէին և աւերս ուժգինս ամէին ի վերայ իրերաց և սա (իմա Փիլիպոսը) այնքան միաբանս արար, մինչ զի մի հատ և մի հովիւ եղեն»<sup>1</sup>: Փիլիպոսին հաջորդած Հակոբ Զուղաչեցու ժամանակ ոչ միայն չպագարեց պայքարը, այլև դնալով սաստկացավ:

Իրար դեմ պայքարող կաթողիկոսների ու պատրիարքների, սեղանավորների և խոջանների հակամարտը ոտի վրա էր դնում պայքարող կողմերից հրահրված իրանահայ և թուրքահայ մասսաներին անգամ: Հակոբ Զուղաչեցու կողմն էր, ըստ երևույթին, Պոսի և գավառի հասարակ ժողովուրդը, հավաքված Բըլթըլյան կոչված վանեցի «Բըլթըլ» (=թըլվատ) ոմն Աստվածատուր երեցի—խմբակցութեան շուրջը: Չամչյանի դիտողությունն այն մասին, թե Մարտիրոս Կաֆայեցի պատրիարքը «իոխանակ շահելու զսիրտս մեծամեծաց միաբանեաց ընդ իւր զարս աննշան և խռովարարս, այսինքն զԲըլթըլեան և զնմանքս նոցա, յայնկոյս յինքն և զայնո-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձև. № 7705, էջ 69ա—70բ:

<sup>2</sup> Բ. Ս ա ռ գ ի ս յ ա ն, Մայր ցուցակ, Ա, էջ 172:

սիկ որք Զահուկեանք կոչին»<sup>1</sup>. կարևոր է այդ խմբակցությունների՝ սոցիալական նկարագիրը պարզելու համար: Պիտի կարծել, սակայն, որ «աննշան» ժողովուրդը դորժիք էր ծառայում նաև «խոտվաբարներին», պառակտման բուն հեղինակների ձեռքին, որչափ երկու կողմից էլ հիմնականում բախվում էին հայ մեծատունները՝ սեղանավորների և առևտրականների երկփեղկված ներկայացուցիչները:

Հոռոմցիների ետևը կանգնած էին մեծ վեզիր Ահմեդ Քյոփըրյուլյու փաշայի սեղանավոր Ապրո Չելեպին և Կիլիկիայի ու Պոլսի մեծամեծներն ու բնիկ առևտրականները<sup>2</sup>: «Թէ հազար դիր գրէի ամենայն յերկիր,—հայտնում էր 1666 թ. Եղիազարին Ապրո Չելեպին,— Ակօք շկաթուղիկոսին յիշութիւնն շէի կանար պատմել. Աստուած այլ իր խելաց կօրա է իրեն տվեր: Երբ տեսայ՝ յան օրէն ի վեր գոհութիւն կու տամ անպակաս, որ վքեղ ոճիմ քովս մեր: Գրէ՛ էջմիածին, որ ուրիշն զնեն. մենք էլ գրեցանք հաւասարով»<sup>3</sup>: Հորդորներով և սպառնալիքով Եղիազարն աշխատում էր իր կողմը գրավել անգամ արևմտահայ մանր առևտրականներին: Այդ մասին է ակնարկում Հակոբ կաթողիկոսի՝ նրան դրած մի թուղթը. «Բայց դու ոչ թէ երևելի քաղաքաց, և կամ երևելի ազգիս դօվլաթատրացն, աննշան արանց և փոքր զասապոցն ևս ես գրեալ՝ թէ մի ընդունէր զնոսա, օրհնութիւն և անէծք նոցա իբրև առասպելս համարեսչիք, և կամ թէ ոք ընդդիմանայ հրամանի իմոյ, թաղաւորական բուն իշխանութեամբս... շարաշար կտտանօք տանջեմ և վատնեմ զինչս չսողաց իմոց»<sup>4</sup>: Սակայն «աննշան մարդկանց» և «փոքր զասապոցն» շրջանում նեցուկ ուղնելով հանդերձ՝ Եղիազարը փաստապես հանդիսանում է արևմտահայ «երևելի» եկեղեցականների ու սեղանավորների, փողատերերի ու ապրանքատերերի հանձնակատարը: Ծռանդուն այս կղերապետի մեծագույն դորժերն էին Հոպպեի նավամատուցի մոտ կառուցած վաճառատները, բնակարաններն ու մեծ «խանը» (իջևանը)<sup>5</sup>:

Արևելցիների ետև կանգնած էին Իրանում և Թուրքիայի ծովափնյա քաղաքներում առևտրով զբաղված «եկվորները», զլուխ ունենալով Միդզա և Խոսրով «երևելի և մեծանուն» սեղանավորներին,

<sup>1</sup> Մ. Ձ ա մ չ յ ա ն, III, էջ 702, հմտ. նաև էջ 676 և հտ., 693 և հտ. և 705:

<sup>2</sup> Հմտ. նույն տեղում, III, էջ 714:

<sup>3</sup> «Միոն», 1940, էջ 315:

<sup>4</sup> Նույն տեղում, 1934, էջ 125:

<sup>5</sup> Ս ա վ ա լ ա ն յ ա ն ց, նույն տեղում, I, էջ 639:

Հակոբ կաթողիկոսի վարկատուներին: Վերջիններից էլ հատկապես ծագում էր նրանց կուսակիցների «Ջահուկյան» երկիմաստ մակդիրը<sup>1</sup>, շեշտելով թերևս ոչ միայն նրանց լատինացած ծննդավայրը, այլ գուցե նաև նրանց լատինադավան «անուղղամտությունը», քանի որ, ինչպես գիտենք, «ջահուկյան» կոչումն տներ նաև այդ նշանակությունը: Պոլսեցիներին հասցեագրված իր մի դիմումի մեջ Եղիազարը հարցնում էր. «Որո՞վ ելից և եկից, հինգ վեց հարիւր դուրուշ կարէ զիս հասուցանել. ես շո՞քիմ յաջ և յահեակ Մասիսն և Արագած, Խոսրով և Իմիրդաչ, որ յորոց լերանց հնչիցեն հուզմո՞ճք նոխաւ շնչաբերեալ խօսիցիմ»<sup>2</sup>:

Արևելցիները հենվում էին հավանորեն ժողովրդական այն մասսաների վրա, որոնք ջալալիների ապստամբությունների ժամանակներից ի վեր ապավինել էին Թուրքիայի ծովահայաց քաղաքները, հանդիպելով գաղութահայ ազգակիցների և առանձնապես պոլսահայ բնիկների անբարյացակամությանը. «քանզի այս Արևելյան Հայքն որ տեղս լցվան, բազում տեր և խառնակութիւն եղև ի մէջ քաղաքիս և բոլոր Հոռոմցտանն», — գրում է 1656 թ. Երևմիա Չելեպին<sup>3</sup>:

Վերը հիշատակեցինք Բըլթըլյաններին: Անհանգիստ, «խռովարար», մի խմբակիցություն էր այդ, որ մեծ դեր էր կատարում մասնավորապես Պոլսի պատրիարքարանի շուրջը բարձրացած ազմուկների ժամանակ, հակառակ սերաստացի կամ տիվրիկցի մեծահարուստ այն գավառներին, որոնք թեքված էին «հոռոմցիների» կողմը: Սրանց կոիվներին մասնակցություն էին բերում նաև Հովհաննես Մուղնեցի, Սարգիս Թեքիրգաղցի, Ղազար Սերաստացի և էջմիածնի նախնական դումարներ զավթած Հովհաննես Բյուլթյունջի պատրիարքները, հարելով կողմերից մերթ մեկին, մերթ մյուսին:

Ամուր նեցուկ հանդիսացավ էջմիածնական կուսակցությանը Պոլսի պատրիարք Մարտիրոս Կաֆայեցին, որը աչք ունենալով Երուսաղեմի պատրիարքական աթոռին, ամպրոպ ու կայծակ էր տեղում պառակտիչ Եղիազարի ղլխին: Նա կարողացավ նույնիսկ մի երկու անգամ հրաման գնել Երուսաղեմի պատրիարքության համար և, վար իջեցնելով Եղիազարին, կարճ ժամանակով բազմիչ նրա գահին:

<sup>1</sup> Ջ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, ն ո յ ն տ ե գ ու մ, Ա, էջ 72:

<sup>2</sup> «Միոն», 1940, էջ 318:

<sup>3</sup> Ե ր և մ ի ա Չ և լ և ս ի Թ և ո մ յ ու ր ճ յ ա ն, Ս ր ա գ ր ու թ իւ ն, Ե ր ու ս ա ղ և մ, 1939, էջ 155:

Էջմիածնի վեբիլին հաջողից կաշառքի ուժով ստանալ սու-  
թանական ֆերման և հետ խլել Աղթամարի կաթողիկոսի զավթած  
վիճակները<sup>1</sup>: Հեշտ շէր, սակայն, կոտրել Եղիազարի և յուրայինների  
կամակորուժյունը: Եթե Հակոբի համար աշխատում էին Էջմիածնի  
արեմտահայ կուսակիցները, նրա օգտին ջանադիր եղան Հակոբի  
էջմիածնական հակառակորդները, զուլս ունենալով կաթողիկոսի  
տեղակալին՝ իր արագախոսութեան պատճառով «Կարկուտ» կցա-  
նուն ստացած երեանցի Օնոփրիոս վարդապետին:

Նորերս հրապարակվեցին մի շարք նամակներ, որոնք առատ  
լույս են սփռում Հակոբ Զուլայեցու դեմ էջմիածնի վանական-  
միաբանության ներսում զուլս բարձրացրած այս խլրտումների  
վրա: Զուլայեցու հալածանքներից նեղված՝ 1665 թվականին  
ապավինելով Երուսաղեմ՝ Օնոփրիոսն ուղղում է Եղիազարին ըն-  
դարձակ մի գրություն, ուր նրան խնդրում է «գատավոր լինել» Զու-  
լայեցու և բողոքավոր վանականների միջև: Հաղորդում է, որ 1664  
թվականի հոկտեմբերին, երբ Երուսաղեմ գնալու պատրվակով  
Թուրքիա անցնելու համար Հակոբ կաթողիկոսը մեկնել էր Էջմիած-  
նից Վրաստան—Երևան քաղաքում տեղի էր ունեցել բողոքա-  
վորների «մեծահամդես ժողով», որին մասնակցել էին Պոլսի նախ-  
կին պատրիարք Հովհաննես Մուղնեցին, կաթողիկոսի աթուռակալ  
Միքայել վարդապետը (Շամբեցին), մեծ Առաքել վարդապետը,  
Սաեփանոս Լեհային (Իւլովցին), Սաեփանոս եպ. Գեղարդեցին,  
Տաթևի վիճակից հանված Մխիթար վարդապետը և մի շարք ուրիշ-  
ներ, ընդամենը 27 մարդ, որոնց մի մասը հավանորեն դարձյալ  
պաշտոններից հեռացված եկեղեցականներ: Արանք բոլորը որպես  
թե «հանդերձ աշակերտօք և վիճակօք իւրեանց, քահանայիւք և առ-  
ձեռին՝ իւրեանց իշխեցեալ համայն ժողովրդեան հավանութեամբն  
համահաւարեալք ի միասին», իրենց կողմից «բանիւ թղթով» վեբիլ  
են ընարում Կարկուտ Օնոփրիոսին և «ղեկապանութենի օրինօք» հը-  
ղում նրան Եղիազարի մոտ հրավիրելով նրան ժամանել Թախատ,  
էրզրում կամ ուր որ ինքը կամենա՝ կազմակերպելու վերոհիշյալ  
դատը: Հակոբին ի շարս այլ մեղադրանքների կամենում էին պա-  
տասխանատվության կանչել նաև այն բանի համար, որ իբր նա  
խախտում է մեռոնօրհնեքի կանոնները, նվիրակներին դարձնում է  
մեռոնի կապալառուներ և «նոքօք վամենայն աշխարհ ձանձրացու-  
ցանէ վասն հարկին», վանքի արդյունքները հավաքելու համար:

<sup>1</sup> Ս ի մ ե ո ն կ ա թ ., Զամբու, էջ 93 և հա. և 238:

Նշանակում է գոհճիկներին և աշխարհականներին և «զլափլիղու-  
թենէ Գոցին և տոմս իւրեանց ամբարեկոցն անփոյժ առնէ»: Կային  
վերջապես ասողներ, թե նա շոալլորին վատնել է էջմիածնի եկա-  
մուտները, և արդեն 1500 թումանի է հասցրել վանքի պարտադու-  
մարը և այլն<sup>1</sup>:

Հակոբ-Յզիազարյան քսանամյա կատաղի այս կռիվներին մի-  
ջամտում էին նույնիսկ օտարազգիները, թուրք վաշխառուները կես  
գնով ձեռք էին բերում կաշառող կողմերի պարտամուրհակները՝  
ջանալով շահավետ կերպով հնչուն դրամի վերածել դրանց մեջ  
նշված գումարները: Ժամանակակիցները պարզ տեսնում էին, որ  
եկեղեցու հարատևող պառակտվածությունը սանձարձակ կեղև-  
քումների առիթ էր ընձեռում մի կողմից թուրք և իրանական սատ-  
րապներին ու պաշտոնյաներին, մյուս կողմից արևմտահայ և արևե-  
լահայ իշխող խմբակցություններին: «Այլ թափեցաք յընչից և աղ-  
քատացաք,—գրում էր Ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին,—զի  
գնաց աւելի քան զերկու հազար զուռուշ սող դրամ, փաշին, խանին,  
չայուշին, հազար զուռուշ կարդացողքս և հազար զուռուշ քաղաքին:  
Յետո եկն ամր ի Կ. Պոլսէ, կրկին հաստատեալ ի վերայ էջմիած-  
նին»<sup>2</sup>: Նույնն է գրում նաև Ժամանակագիր Արիստակես վարդա-  
պետը. «Թափեցաք յինչից ի գանձուց և յայլ կարևոր պիտոյից աղ-  
քատացաք աջնքան գանձս տալով տաճկաց նախարարացն և քա-  
ղաքապետաց դաւառապետաց երկու հազար սպիտակ դրամս և մի  
նուագս տալով զլիսաւորի, որ փաշա կոչի, հազար դրամ ևս ի միւս  
ճուղի ամիր անուանեալ զլիսաւորին տուեալ. բացի յայլ ևս թան-  
կագին ընծայից և ծանրագին պարգևաց արտաքին և ներքին միջ-  
նորդ և բարեխօս անձանց գործատէրաց»<sup>3</sup>: Սակայն ավելի մեծ շա-  
փեր էին ընդունել էջմիածնի կաթողիկոսի շուրջը վիստացող վաշ-  
խառուների և կաշառառուների կեղևքումները:

1664—1679 թվականների ընթացքում Հակոբ Զուղայեցին մի  
քանի անգամ կարողացավ «վերականգնել» էջմիածնի իրավունք-  
ները և նույնքան անգամ նաև Յզիազար Այնթապցուն հաջողվեց  
«հաստատվել» թուրքահայ ընդհանրական կաթողիկոսության և  
Երուսաղեմի պատրիարքության պաշտոնների մեջ: Պոլսի պատ-  
րիարքության պես, էջմիածնի կաթողիկոսությունը ևս սպառնում էր

<sup>1</sup> «Սխոն», 1933, էջ 151 և հտ.:

<sup>2</sup> «Մանր Ժամանակագրություններ», 11, էջ 363:

<sup>3</sup> Հայկական ՍՍԽ Մատենագարան, ձեռ. № 3881, էջ 47:

աճուրդի դրվել կաշառքով: «Զիմ աղաղակ և լացս այս է,—գրում էր Հակոբ կաթողիկոսը,—զի մի լիցի իբրև Ստամպուլու պատրիարկութիւնն. քանիցս անարժանք ևս պատրաստեալք՝ թէ մեր ևս առնումք սուրբ եկեղեցւոյ զառաջնութիւնն... Զի շարն սատանայ ի անկարգ սեւազլխիցն չէ հեռանալ և օսմանցիք իւրեանց դռննն դրամ արւողիճ և խոստանողին յետ շնն դարձուցանել»<sup>1</sup>: «Ահա ձեզ ամենեցուն յայտնի եղև,—գրում էր կաթողիկոսը Պոլսից 1671 թվականին լիհահայերին,—թի որքան վիշտ նեղութիւն յամենայն զիմաց պատեաց զմեզ, վասն ի միշոյ բառնալոյ զաճնկարգութիւն Նլիպազարին, և զպարտ վճարելոյ. եօթն տարի է, որ ի սուրբ աթոռոյս հեռացեալ՝ օր ըստ օրէ հաշիմք և մաշիմք ի տառապանս, և ոչ կարեմք աստի ևլանել, զի մի կաշառք, տերեւցին զուզկեալն մեր, այլ սիրով շահեսցուք զնոսս»<sup>2</sup>: «Ոմանք կաթողիկոսի վճարելիք գումարը հաշվում էին 800 հազար լիրա,— գրում է Շարդենը:— Գիտեմ, որ միայն հենց Պոլսում նա 500 հազար լիրայի պարտք վերցրեց, նախ հայերից և ապա 80 հազար թուրքերից, և հիմնովին սնանկացաւ»<sup>3</sup>: Շարդենի վերջին տեղեկանքը հաստատում է նաև զըլիակրոան, որի ասելով կաթողիկոսն «ի հաշիվ Նոր-Ջուզայի» վերցրել էր Պոլսի սուլթանական մաքսատնից 80 հազար զուռուշ պարտք<sup>4</sup>: Հայ աղբյուրների տվյալները հակասական են. ըստ Չամչանի՝ կաթողիկոսը տված պիտի լինի թուրք պաշտոնյաներին 30 քսակ արծաթ<sup>5</sup> (ոսկու կուրսով մի քսակ = 50 թումանի = 200 ուրլու):

Զեռագիր իր տարեգրության մեջ 1665—1672 թթ. ընթացքում Երուսաղեմի և էջմիածնի վրա կուտակված պարտքը Հակոբ Կարնեցին հաշվում է շուրջ 200 քիտա<sup>6</sup>, որ կանխ մտտավորապես 10,000 թուման կամ 40,000 ուրլուի: Զաքարիա Աղուլեցին, 1665 թ. հաշվում էր կաթողիկոսի կատարած ծախսերը 200—300 հազար մարշիլ (ոսկու կուրսով՝ 120—180 հազար ուրլուի): 1672 թ. նույն հեղինա-

<sup>1</sup> Նորայր Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց հակորյանց, Երուսաղեմ, 1953, II, էջ 155:

<sup>2</sup> Ալիշան, Կամենից, էջ 264:

<sup>3</sup> Chardin, նույն տեղում, II, էջ 247:

<sup>4</sup> De la Croix, Etat present des nation et eglises Jreque, Arméniene et Maronite en Turquie, Paris, 1715, էջ 167 և հտ.:

<sup>5</sup> Չամչյան, նույն տեղում, I, էջ 714:

<sup>6</sup> Հայկական ՍՍՌ Մտեղնագրարան, ձեռ. № 8184, էջ 10բ:

կի ասելով, կաթողիկոսի վրա մնացել էր տակավին 8000 թուման պարտք (= ոսկու կուրսով 32 հազար ուրբու)<sup>1</sup>: Եթե հավատանք Շարդենին, 1673 թվականին կաթողիկոսը հայտարարել էր իրանական արքունիքին, թե ինքը Թուրքիայում 70 հազար լիրայից ավել պարտք չոճի, և որ գլխավորն է՝ իր պարտատերերը իրանահայ դրամատերերն են, որոնք հիմա հեռ են պահանջում վարկերը<sup>2</sup>: Սակայն, եթե Իրանում կաթողիկոսը շահագրգռված էր իջեցնելու սուլթանի հպատակներին վճարելիքը, ունենալով հակադարձ շահագրգռություն՝ թուրք լիազորները հայտնում էին, թե նա պարտ է իրենց հպատակներին 300 հազար լիրա<sup>3</sup>: Եթե նկատի առնենք, որ XVI դարում 45 ֆրանս. լիրան հավասար էր մեկ թումանի, դուրս կգա, որ 1673 թ. կաթողիկոսը Թուրքիայում արած իր պարտքը հաշվում էր 1777 թուման կամ 7108 ոսկի ուրբի, մինչդեռ Թուրքիայում այդ գումարը բազմապատկում էին ավելի քան շորս ամսամբ: Բ. Դուռը, Պոլսի գալմադամն ու էրզրումի փաշան նամակով գիմում են Երևանի խանին՝ բավարարելու այդ պահանջները: Խանը միջամտում է. «Եւ ինքն ժողովեաց զամենայն փարթամ և մեծատան մարդիկ, — գրում է նրա մասին Զաքարիա սարկավազը, — էառ ի նոցանէ: 300 թուման և պատճառ եղ թէ աթոռին պարտն տամք, և յետո ձեզ հատուցեն էջմիածնի նստողքն»<sup>4</sup>:

Պարտքերի մեջ պարանոցաթաղ՝ կաթողիկոսը ստիպված եղավ շրջաբերական գրություններով հանդանակություն սկսել: Այս միջոցը դրական արդյունք չտվեց, և հիմա կաթողիկոսի շուրջը խոշոր անբավականություն առաջացավ իրանահայերի մեջ: Աթոռակալ Միրայել վարդապետին և խոջա Շմավոնին — Երևանի գառաֆխանայի պետին, Զաքարիա Աղուլեցի ժամանակագրի եղբորը — գրած մի թղթում, «ի սիրտ և ի հոգի վշտացեալ» պաշտպանվելով իր գեմ եղած արտոճներից, կաթողիկոսը գրում էր. «Մի՞թէ միայն իմ փառացս էր այս ցաւս որ դուք այդպէս նայիք: Մեր այսքան վիշտս ձեզ ոչինչ է թվում... Այսքան պարտուց միջի գուլով յամենայն կողմանէ տարակուսեալ կամք. Հնդրստան բնկեր շունիմք և Խոանդստան ապրշում»<sup>5</sup>: Մի այլ գրության մեջ, ուղղված էջմիածնի միաբան-

<sup>1</sup> Զ ա ք ա ր ի ա Ա զ ու լ է ց ի, ն ու յ ն տեղում, էջ 66:

<sup>2</sup> Chardin, II, էջ 147 և IX, էջ 104:

<sup>3</sup> ն ու յ ն տեղում:

<sup>4</sup> Զ ա ք ա ր ի ա Ա ա ր կ ա վ ա գ, ն ու յ ն տեղում, II, էջ 78:

<sup>5</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարանի արխիվ, Բղիճապտանակ № 243, վազերագիր № 233:



ներին, կաթողիկոսը արանջում էր, թե սրանք նայում են իր գրություններին, ինչպես «նալքանդը ուղտին»։ «Կորստեան որդին (իմա՝ Նղիազարը) ծակեծակ է փախչում. դեռ հաջմունքը ի բերանն է թէ մէկ օր կեանք լինի իմ արեկելցիք Զօպան Քեօփրուսէն շանցուցանեմ (երևի պիտի լիներ՝ «կանցուցանեմ»)»—Ա. Հ.)<sup>1</sup>։

Նոր-ջուղայեցիներին 1676 թվականին հղած մի կոնդակում, հիշեցնելով, որ վանքի շինարարական գործերի ֆինանսավորումը հիմա այնպես գյուրին չէ, ինչպես առաջները՝ Մովսես կաթողիկոսի ժամանակ (1629—1634), կաթողիկոսը գրում էր. «Այն ժամանակն եկեղեցեաց նորոգումն էր, միմեանց ձեռնաուր էին, իմն բոյն խիստ չկայր, ամէնքն ի բարեձևութիւն կու ձգտէին։ Իսկ այժմս իմն քոնն է շատացեր և կոխն բազմացեալ, մէկն քաղցած է մեռնում, և մէկն փարթամութեամբ հղփացեալ է կռւում»<sup>2</sup>։

Կաթողիկոսի հարգորներն անսպառ էին, սակայն ժողովուրդը հրաժարվում էր պարտահատուց լինել նրա փոխարեն, իսկ պարտատերերը շարունակում էին չորքել նրա բկին։ Շարդենը նկարագրում է այն բողոքը, որ բարձրացրին Երևանի խանի միջամտութեան դեմ հայ եկեղեցականներն ու աշխարհականները՝ Վրաստանում և Շիրվանում<sup>3</sup>։ Զաքարիա Ազուլեցին նկարագրում է ընդհանուր այն աղմուկը, որ 1672 թ. բարձրացել էր նույն առիթով Գողթանում։

1672 թվականի դեկտեմբերին Նախավկայի վանքն էին ժամանել կաթողիկոսը և նրա թուրք և իրանցի պարտապահանջները՝ շահի և խանի հրամաններով գողթանցիներից 1000 թուման բռնագանձելու համար։ Չնայած գործադրված բռնություններին, հաղիվ կարողացան Ազուլիայից, Դաշտից և Թովմայի վանքից 350 թուման դուրս քաշել։ Մերժելով կաթողիկոսի պահանջը՝ գողթանցիներն ասում էին, թե նրա պարտքերը պիտի վճարեն ոչ Իրանի, այլ Թուրքիայի հայերը, քանի որ Պրանք են էջմիածնի տապնապի հեղինակները։ 200—300 թումանի պահանջ էին անում կաթողիկոսից միայն հենց դեպքերը նկարագրող Զաքարիա Ազուլեցին և սրա եղբայր Շամվոնի ժառանգները։ Ի վերջո գողթանցի լուսավորչադավան պարտատերերը հարկադրեցին կաթողիկոսին՝ վաճառքի հանել ան-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագրարանի արխիվ, թղթապանակ № 243, վավերագիր № 234։

<sup>2</sup> Նույն տեղում, վավերագիր № 347։

<sup>3</sup> Chardin, նույն տեղում, II, էջ 248։

գամ վանքի արծաթե խաչերն ու անոթները<sup>1</sup>: Այսքան անողոր էին-  
 փողի խնդրում բարեպաշտ խոջաները — սրանց թվում նույնիսկ  
 մեղապարտ իր հոգու փրկութեան համար հոր-Վիրապի եկեղեցի-  
 ների բազմաթիվ վերանորոգութեանը մասնակցած խոջա Շմավոնի-  
 ժառանգները<sup>2</sup> կամ հենց ինքը նրա եղբայրը, Զաքարիա Ագուլեցի  
 ժամանակագրողը, բարեհոգի այն խոջան, որ կտակելու էր հայ ժո-  
 ղովրդի «իմացող» սերունդներին նշանավոր իր «դավթարը»<sup>3</sup> XVII  
 դարի հայ աշխարհիկ լեզվի և պատմագրութեան մեծարժեք հու-  
 շարձաններից մեկը:

Խանի դեմ գանգառվելու համար Հակոբ կաթողիկոսը սուղոր-  
 վեց Սպահան՝ սակայն խանը կես ճանապարհից հետ դարձրեց  
 նրան և արգելափակեց Երևանի Անանիա առաքելու վանքում:

Օգտագործելով Երևանի լեզվի Սեֆի-դուլի խանի և Հակոբ կա-  
 թողիկոսի պատվոթղթեր, իրանահայ վամականները, գավառատե-  
 րերն ու տանուտերերը Զուլպչեցու ապարդյուն ժողովարարութուն-  
 ներից հուսախաբված, ընդառաջում են պարտատեր խոջաներին  
 ու գահընկեց հայտարարում նրան, կաթողիկոսութեան կանչելով  
 նրա առաջին հակառակորդին, մեր հիշատակած Կարկուտ Օնո-  
 փրիոսին<sup>2</sup>:

1673 թվականի գարնանը, փախուստի դիմելով Երևանից,  
 Հակոբը ապավինեց Սպահան: «Դարձեալ խանն էլ տեսալ, — գրում  
 է Զաքարիա Ագուլեցին, — որ կաթողիկոսն փախաւ, խանն հակա-  
 ոակ ընկաւ կաթողիկոսին: Խանն շահին արդ արեց՝ թէ այս փոզս  
 սիթամով (= զոտով) առի, շահն հրաման տայ որ ալլի փոզն փո-  
 ղատէրն դարձուցանեն: Ետն հրաման կուտայ: Դարձեալ թվին  
 1674 ապրիլի 10-ում խանիցն մարդ գա [Ագուլիս] թէ՛ դիրն բե-  
 րէք, ձեր փոզն առէք: Վարդապեան, մելիք, մարդ գնաց, այսպէս  
 տվին. որ միայն Ագուլաց 148 թուման առէլ ին, 98 թուման կէս  
 դուս եկավ: Թէ գրով, թէ այնպիս, այս դուս եկաւ: Ամէն մարդ իւր  
 տվածին գորայ ըլատաթ (= հաշվահարդար) վեր առին, խարջն  
 դուս ընդաւ, մին թումանին 6300 դրան ձեռն եկաւ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Զ ա ք ա ռ ի ա Ա գ ու լ է ց ի, նույն տեղում, էջ 110 և 139:

<sup>2</sup> Վիճական տարեգիրք, էջ 187 և հա.:

<sup>3</sup> Զ ա ք ա ռ ի ա Ս ար կ ա վ ա գ, նույն տեղում, 11, էջ 76 և հա., 85  
 և հա., Զ ա ք ա ռ ի ա Ա գ ու լ է ց ի, նույն տեղում, էջ 118 և 120, Շ ի ա Ե-  
 ժ ի Ն, նույն տեղում, 11, էջ 248, 295 և հա., 350 և հա., 1X, էջ 99 և հա.:

<sup>4</sup> Զ ա ք ա ռ ի ա Ա գ ու լ է ց ի, նույն տեղում, էջ 111:

Ագուլեցի վաշխառուներից պակաս չէին նեղում Ջուղայեցուն Պուլտամ զեգերտղ նրա ջահկեցի կուսակիցներն ու վարկատուները: Ժամանակի առաջավոր մարդկանցից մեկը, արևմտահայ նշանավոր մատենագիր և գործիչ Երեմիա Քեոմյուրճյանը նշաւակում է կաթողիկոսի այդ վարկատուներին, նրան բարեկամ համարված Միրզա, Խոսրով, Աստուածատուր և Պնեաթ ջահկեցի խոջաներին, որոնց սաղբանքով նա՝

Բռնի աստ բերեալ, միշտ դաւաճանեալ,  
դատ՝ և ի դուռ մատնեալ  
Ջհամարս պահանջեալ, տոկոսս յարբարդեալ  
զպարտքս բազումս խուզեալ  
Յեցին ևս զօրացեալ, զոսկերսն միշտ ծրծեալ,  
մինչ յուզեզն հասեալ<sup>1</sup>:

Քեոմյուրճյանը նշում է Ջուղայեցուն կուսակից ջահկեցի, ագուլեցի, կաղզվանցի և աիվրիկցի շատերի անունները, որոնք բանտ ընկան, հարկադրանքով տաճկացան կամ մահով վճարեցին իրենց պարտքերը<sup>2</sup>:

Նշաւակելով եկեղեցական պետերի և նրանց գործակալների՝ անվիրակների զոշաքաղությունները, Քեոմյուրճյանը հեղնորեն գրում է. «Մեք կոյր, մեք խուլ, մեք համր մինչև ցայսօր անարժան և նաւլայեղ առ ի տեսանել և ի լսել և փ խօսել. մեք մուֆլիս (= աղքատացած, սնանկացած) նոքա խօճէքի, մեք ուամիկ և ուամկածիմ և պարսուաէր. նոքա բառացի հարուստ և ազնուորդի և շահարար շինարար»<sup>3</sup>: «Ոմանք, — գրում է նույն Քեոմյուրճյանը, — յաւուրս յայտորիկ մտին ի մէջ երկուց կաթողիկոսացն իբր զի խաղաղացուցեն և զի շէր անկեղծարար, այլ փառամոլութեամբ և տգիտարար և ևս զանուն իւրեանց զերիվերոյ բարձրացուցանել կամէին, եթէ զերագոյն ցուցեալքն ոչ կարացին զհունս խոռովութեանց գտանել, մեք մեղէն զըրցուք ասելով: Պոսոսպրախտ բանիւք և սնտոխասպաս պարծանօք զմեծաբանութիւնս խօսէին ուր և երթային, և յայլ աշխարհ գրեալ ծանուցանէին: Եւ ահա այսօրիկ են ազգիս հայոց փրբու արժանիս չիշատակի՝ արարք և խելք հանճարոյ և ի գիտութիւն յոտից մինչև

<sup>1</sup> «Հանդես ամսօրյա», 1933, էջ 594:

<sup>2</sup> Գ ա լ ե մ ք յ ա ր յ ա ն, նույն տեղում, էջ 70:

<sup>3</sup> Հակոբակ Գալեմբյարյանի հնթադրութեան՝ այսուկ հեղնանքը հատկապես Հակոբ Ջուղայեցու մասին չէ, այլ Մարտիրոս Կաֆայեցու. սա ակններև է Հ. Թ ո ռ ո ս յ ա ն ի Վարք Մխիթար Արքայի, Վենետիկ, 1901, էջ 28: և հա.գրքից, ուր տրված է Քեոմյուրճյանի լիակատար տեքստը:

ցգլուխ)<sup>1</sup>։ Դատապարտում էր Քեոմյուրճյանը մանավանդ ժողովրդի արյունը ծծելով ուռճացած Ապրտ Չելեպիին, ընդգծում նրա նենգամտությունն ու ամբարտալանությունը, «Քանզի եօթն շարիք ծրարեալ էին ի սիրտ նորա և դարանակալ էր աղքատաց և տնանկաց և պարզամտաց՝ ձգել յորոգայթ փւր խոնարհեցուցանել ընդ լծով ձեռին իրոյ, որպէս և զքեզ արար»,— գրում էր նա 1676 թվականին Եղիազար Այնթապցուն<sup>2</sup>։ Արժեքավոր վկայություն, որ ցույց է տալիս Եղիազարի կախումը Ապրոտից։ «Նա առաւել քոյդ օրինակաւ տիրել ի վերայ տնանկաց, տառապեցուցանել յորսանս իւր յամբարտաւանիլն և յանդոսնիլն իւրում»,— գրում էր նա։ Միլիոնատեր այս սղրուկի մահը Քեոմյուրճյանը համարում էր «ապստամբելոյն Աստուծոյ բարձունն ի միջոյ և վաղափուլ կործանումն ամբարտակիլն»<sup>3</sup>։

Սղգի և եկեղեցու համար ստեղծված կացությունից Քեոմյուրճյանը ելք չէր որանում պայքարող կողմերից որևէ մեկի հաղթության մեջ<sup>4</sup>։ Չէր կամենում նա նաև այդ ժամանակ համոզես եկած մի երրորդ խմբակցության, բախվող հոսանքների արանքում խուսանավող Սարգիս Թոխատեցի վարդապետի խմբակցության հաղթութունը. «Կաթողիկ և հերձուածող ֆռէնկ և հայ աղճատանօք»— այս բառերով է բնորոշում նա այդ խմբակցության մարդկանց։ «Թող որ աղճատին ի լեզուս այլազգեաց. և կատարածն ո՞վ գիտէ թէ ո՞ւր նկատելոց և դադելոց, որոյ նղև առիթ Սարգիս ոմն Թոխատեցի. մեք զմեր ցան ունէաք, և այդ զսկիզբն երկանց կասկածեալ, շուարեալ, մնացաք. մէկն օրհնեց, մէկն անիծեց, մէկն այլ եկաւ հաւատէն հանեց»։ Քեոմյուրճյանը չէր առաջնորդվում տարամերժության զգացմունքով, այլ կամենում էր սոսկ նշավակել հայ գործիչներից ոմանց օտարահաճությունը. «Ոմանցդ սիրելեաց յայտնի է,— գրում է նա,— որ զժամանակս կենաց մերոց ընդ այլազգիս տրամաբանութեամբ անցուցեալ եմ մինչև ցայսօր. ըստ մարդկութեանս ասեմ, զի ոչ ևս քննեմ զդաւանունքս նտրա այսօր. այլ գրեմ թէ զինչ է եկեղեցոյ մերում պակասութիւն և եկեղեցականաց և կարգաւորաց մերոց և հայրապետացն»<sup>5</sup>։

<sup>1</sup> Գ ա լ ե մ ք յ ա ր յ ա ն, նույն տեղում, էջ 76:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 74:

<sup>3</sup> Երեմիա Քեոմյուրճյան, Օրագրութիւն, էջ 410:

<sup>4</sup> Հմմտ. Չ տ մ չ յ ա ն, նույն տեղում, III, էջ 700 և հտ.:

<sup>5</sup> Գ ա լ ե մ ք յ ա ր յ ա ն, նույն տեղում, էջ 77:

Լինելով գիտություն և գրչի մարդ՝ Քևոմյուրճյանը մի պահ գրքի և դպրոցի մեջ սրտնեց տգիտության մեջ թավալող ազգի և եկեղեցու փրկությունը: Արգար Ռոխատեցուց հետո, երկրորդ մարզն էր նա, որ հիմնեց Պոլսում տպարան, որը սակայն երկար գոյություն չունեցավ և շնշանավորվեց կարևոր գործերով: Ավելի լավ բախտ չունեցան նաև նրա դպրոցական ջանքերը: Իր «Ստամպուլի պատմություն» մեջ՝ դանց ամենավ թուրք մեղրեսենների նկարագրությունը՝ նա գրում է տխրությունք.

Մեզ ոչ մեղրեսեր պիտոյ՝  
բանդի մերս որ խախանեցան,  
Յու է գայլոց գիտել՝  
անգլուխ ազգ մեր և անիշխան՝:

Վերջին խոսքերը հուշում են մեզ, թե ինչի՞ մեջ էր նշմարում Քևոմյուրճյանը հայերի դժբախտության արմատը, և մենք գեռ առի՞վ պիտի ունենանք տեսնելու, թե սակեղծված գրությունից ուր էր փրկության խարխախ ձգում XVII դարի արևմտահայ խոհուն այս գրություն ու հրատարակախոսը:

Մի պահ նպատակովոր կացություն ստեղծվեց կաթողիկոսի համար: Սպահանի արքունիքում արդեն հասել էր Նրեանի՝ չափազանց ուռճացած լեզվի Սեֆի-զուլի խանին՝ պատուհասելու ժամը: Նման պարագաներում հարկ չէր լինում մտահոգվելու բավարար պատճառաբանության խնդրով: Նրան պարզապես ամբաստանեցին Ռուբրիային վաճառվելու մեջ, և գահընկեց հայ կաթողիկոսը միացրեց տկար իր ձայնը լեզվի ժամիշխանի դեմ բարձրացած բողոքների ժխտրին, 1674 թ. հուլիսին շահի հրամանով խանը, ձերբակալված ու շղթայակապ, բանտ նետվեց: Նրա պաշտոնը տալով համաձայն մի ուրիշին՝ Ռըզա խանի որդի Սեֆի խանին, ըստ սովորականին՝ հարբունիս դրավիկեց շնորհազրկված խանի դիզած հարստությունը<sup>2</sup>: Իրերի նոր դասավորությունից օգտվելով, 1676 թվականի սկզբներին կաթողիկոսը կարողացավ վերականգնել իր իրավունքները: Դաժան դատաստան տեսավ էջմիածնի հոգևոր տերը մանավանդ Կարկուտ Օնոփրիոսի գլխին: Ածիլելով սրա մորուքը և ըստ երևույ-

<sup>1</sup> Քևոմյուրճյան, Ստամպուլի պատմություն, Վենետիկ, 1913, էջ 114:

<sup>2</sup> Ջաբարիա Սարկավադ, նույն տեղում, II, էջ 78 և հտ., Ջաբարիա Ադուլեցի, նույն տեղում, էջ 100 և հտ., Bedik, նույն տեղում, էջ 217 և հտ., 220 և հտ., Chardin, նույն տեղում, IX, էջ 102:

Սին նաև շարաշար խոշտանդելով, Օնոփրիոսին Սևանի կղզին հղեցին ապաշխարհելու: Օնոփրիոսը փշուժ է հոգին՝ հազիվ տեղ հասած<sup>1</sup>:

Բայց սրանով չարիքը բնավ վերացած չէր: Ջուղայեցու հին ու նոր պարտքերը բազմաթիվ հակառակորդներ էին ստեղծել նրա դեմ: Բոլոր պարագաներում կաթողիկոսը կարող էր հիմա ասել, հիրավի, թե «սուրբ տանը» պարանոցաթաղ է պարտքերի մեջ: Չմոռանանք, որ «սուրբ տան» պարտքերի հարաբարգման մասին հոգացել էր նաև Օնոփրիոսը՝ հաստատման ազգամ ստանալիս<sup>2</sup>: Գրովյունը բարդացնում էր մանավանդ Երևանի խառնությունը տաղնապալից վիճակը: Այստեղ և՛ մուսուլմանները, և՛ քրիստոնյաները հավասարապես հուզված էին այն ավազակությունների ու թալանների կապակցությունը, որոնք խրախույս էին ստանում նոր խանի անդործությունից, անգամ այն դեպքերում, երբ ինքը չէր եղել դրանց նյութողը<sup>3</sup>: Երբ խանի նախորդները նման դեպքերում ավելի «համբերատար» էին, նրանք հանդուրժում էին միայն այն ավազակներին, որոնք հավելյալ մուսք էին խոստանում նրանց դամարսակին:

Այսպիսով, փութանցիկ իր հաջողություններից հետո Հակոբ կաթողիկոսը դարձյալ հանգիստ չունեի ոչ «հավատացյալ» յուրալիներին, ոչ էլ «անհավատ» օտարներին երեսից:

Սակայն վհատող մարդ չէր Հակոբը, ինչպես երբեմն նրա նախորդները, առկա դրությունից նա ևս հարկադրված եղավ ելք որոնել արտաքին բանավարությունների ուղիներում:

<sup>1</sup> Ջ ա ր ա ի ա Ա զ ու լ ե ց ի, նույն տեղում, էջ 128:

<sup>2</sup> Ջ ա ր ա ի ա Ս ա ր կ ա վ ա գ, նույն տեղում, 11, էջ 55 և հտ.:

<sup>3</sup> նույն տեղում, 11, էջ 85 և հտ., 89 և հտ., «Արարատ», 1888, էջ 183 և Brosset, Raporties etc., էջ 66 և հտ.:

#### 4. ՀԱՅՍՏԱՆԻ ԱԶՍԱԳՐՄԱՆ ՀԱՐՅՐ 1660—1670-Ա.ԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հակոբ Զուղայեցու վերանորոգչական ջանքերը: Առաքել Բորիկի առաքելաբյուրը: Հարարերություններ ֆրանսիական միաթոններեի հետ: Հայկական լեզուները Լիոնի բուսայում: Հայեր և Լուդովիկոս XIV-ը:

Պետրոս Պետիկր և իր գիրքը: Հայաստանի ազատագրման հարցը Հարսուր-ջյան հազաճականության տեսադաշտում: Պիտեոպի և Պետիկի առաքելությունը Արևմուտքում:

Նախընթաց դրվագում ծանրանալով Հակոբ Զուղայեցու գործունեության վրա, իջանք անհրաժեշտ մանրամասնությունների, որչափ XVII դարի կեսերին նրա անվան շուրջն էր հանդուցավորվում փրանսիաց և թուրքահայ ժողովրդի հասարակական-քաղաքական այն տաղնապը, որից, ինչպես պիտի տեսնենք, ծայր առան XVII դարի վերջին տասնամյակներում Հայաստանի ազատագրման խնդրի շուրջը սկսված բանավարությունները:

Էջմիածնի նվիրակության խնդրի շուրջը ծավալված պայքարի մեջ ցայտուն արտահայտություն էին գտնում ամենայն հայաց կաթողիկոսության նվիրապետական հավակնությունները, բախվում են մի կողմից հայ հասարակության վերնախավերի ու ներքնախավերի, մյուս կողմից իրանական և թուրքական իշխող շրջանների ներհակ շահախնդրությունները, որոնց արանքում տեսապես օրորվելուց հետո, էջմիածնի կաթողիկոսը հարկադրված եղավ էլք որոնել մի երրորդ կողմի՝ եվրոպական պետությունների՝ միջամտության մեջ: Ակիլը առան բանավարություններ, որոնք կարևոր նշանակություն էին ստանալու հայ ազատագրական շարժման հետադա ընթացքի մեջ:

Ժամանակակիցները խոր ակնածանք ունեն Ջուզայեցու նը-  
կամամբ: Գրիշնեթից մեկը նրան հանձնարարում է որպես «այր  
սուրբ և բնտիր, որ սչ գոյ նման իւրն»<sup>1</sup>:

Խոսելով նրան նախորդած փելիպոս Ադրակեցի կաթողիկոսի  
մասին, Ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին հաղորդում է. «Չեւնա-  
զրեաց սա տելի քան զչորս հարիւր եպիսկոպոս և վարդապետ,  
որոնց ամենեցուն վերակացու և զլուխ Յակոբ վարդապետ Ջուզա-  
յեցին էր»<sup>2</sup>:

1663 թ. Բաղիշեցին գրում է. «Ի մերում ժամանակիս կրրկին լու-  
սաւորիչք եղէն ամենայն հայոց, զի ի ժամանակս սոցա աշօք մերովք  
տեսանեմք զսուրբ էջմիածինն անթիւ վարդապետք և արեղայք և  
խարազանազղեստք կրօնաւորք ավելի քան Ծ (500)»<sup>3</sup>: Հակոբ Ջու-  
զայեցու մասին Բաղիշեցին գործ է ածում «անհաղթ փիլիսոփայ» և  
«մարբումիտ վարդապետ» հասկանշումները. հարելով ի վերջս թե՛  
«որչափ քաղաքաց ասաջնորդք այժմ՝ աշակերտք սորա են՝ Յակոբ  
կաթողիկոսին»<sup>4</sup>: Այս վկայութիւնները կարևոր են որչափ Բաղիշե-  
ցին այն հեղինակն է հենց, որ արժանահավատ տեղեկութիւններ  
է հաղորդում XV—XVII դարերի հայ վանական դպրոցների ու նը-  
րանց նշանավոր դասապետների մասին: Ժամանակի վարդապետ-  
ներից մեկը, Ստեփանոս Լեհացին, հաղորդում է, որ էջմիածնի  
վանքում այդ պահին կային շատերը, որոնք «ի հրահանգս իմաս-  
տութեան կրթիւն զանձիմս իւրեանց». կային դրանց մեջ «երեւելիք  
վարդապետք քաջաբանք, բանաստեղծք աստուածային գրոց, քաջ  
գիտօնք և հմուտք», որոնց թվում նաև հիշում է ի դեպ նաև Առա-  
քել Դավրիժեցուն՝ «քաջ բարունի և փիլասոսմ, որ զժամանակա-  
գրութիւնս հայրապետաց և թագաւորաց զեղեցկայարմար բանիւք  
գրոշմեաց»<sup>5</sup>: Վանական լուսավորութիւն մի շարժում էր այս, որ  
սկիզբ առնելով Մովսէս Տաթևացու ջանքերով, զարգացման բարձ-  
րակետին հասավ Ջուզայեցու օրոք և հանդամանորեն նկարագրը-  
ված է Լեհացու գրվատած Դավրիժեցու գրքում:

Լուսավորական այս ջանքերի նպատակն էր հակազդել դա-  
սալքման ու բարոյալքման այն պրոցեսին, որ ծավալված էր վա-

<sup>1</sup> Բարգէն կաթողիկոս (Կյուլեեսեւրյան), Յուզայ ձեռագրաց  
վարմեր Վանուց Անկիւտիոյ Անթիլիաս, 1956, էջ 218:

<sup>2</sup> «Դիվան հայոց պատմութեան», X, էջ 52:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 49 և 52:

<sup>5</sup> «Յուզայ ձեռագրաց Օբսֆորդի Բողեւյան գրատան», ձեռ. № 19:



նական միջավայրում XV—XVI դարերում: Եթե Մեխլուն անողոր  
իր սրով կամենում էր ոչնչացնել վանական կեղեքողներին, Մով-  
սես Տաթևացին, ընդհակառակը, ջանում էր նորոգել վանական  
կյանքը և ստեղծել եկեղեցականների կարգեր, որոնք կարող լինեին  
ապահովել վանական կարգերի վերականգնումը: Գյուղերի վարե-  
լահողների, այգիների և այլ տեսակի գույքերի ու արտադրամիջոց-  
ների մասնավոր հատկացումների կամ գնումների միջոցով Տա-  
թևացին և նրա աշակերտները մտահոգված էին վերականգնել  
վանքերի տնտեսությունը ու վերականգնել նրանց միաբանություն-  
ները: Վանքերն ազատվում են պետությունը կամ մասնավորներին  
վճարելիք հնգորդներից ու տասնորդներից և սպրում «առանց աշ-  
խատանաց»՝ իրենց կալվածները մշակող գյուղացիների տասա-  
նորդներով<sup>1</sup>:

Թվում է թե հենց այս ժամանակ և վանական կարգերի վերա-  
հաստատման այս մտայնությունը էին ուղեշնչված ձեռագրերում  
հանդիպող այս տողերը.

Անիծած է՝  
Տղին բանն,  
Տկին թանն,  
Իշուն բէրանն,  
Կնկան ախանն,  
Արեղայի գօսանն,  
Էրկց պեղրկանն,  
Թուրբին բարեկամն,  
Վանից աշխարհականն<sup>2</sup>:

Անապատականները խրախուսում էին «արտաքին գիտություն-  
ների» և «ազատական արհեստների» ուսումնասիրությունն ու տարա-  
ծումը: Սակայն ինչպես որ նոր կառուցվող եկեղեցու շենքը ծովիբա-  
զործելու համար օգտագործվում էին հնի քարերն ու քանդակները,  
այնպես նաև յուրացվում էին իմացություն աշխարհիկ աղբյուրները,  
հին գիտություն և գրականություն դանձերը, ոչ թե նոր, աշխարհիկ  
գիտություն և գրականություն ստեղծելու, այլ եկեղեցական խամ-  
բած գիտությունն ու գրականությունը վերականգնման անհրաժեշտ  
Վանական լուսավորություն տարածողները բաղմացնում էին Դավիթ

<sup>1</sup> Ձ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, ն ո յ ն ա ի ղ ու մ, [I], 34 և հ.ա., հ.մ.ո.  
նաև էջ 62:

<sup>2</sup> Հայկական ՄՍՌ Մատենադարան, ձեռ. № 2163, էջ 369ա, հ.մ.տ. նաև  
369բ:

Անհաղթի, Որոտնեցու և Տաթևացու զրվածքները, հրապարակ հանում Սիմեոն Զուղաշեցու իմաստասիրական ձեռնարկները, մոռացութեան դրկից հանում Պրովլի և Դիոնիսիոս Արևոպագացու գրքերը, «Հնգեաց գիրքը» և նման ուրիշները: Այս ամենով ընդարձակվում էր վանական լուսավորութեան շրջանը, արիստոտելյան կիսամատերիալիզմը, պլատոնական իդեալիզմը և նեոպլատոնական միստիցիզմը ծառայեցվում հայ եկեղեցու դավանաբանական գիրքերի պաշտպանութեան, մոնոֆիզիտայան ընդհանուր հայացքների յուրացման կամ դրանց ուրույն վերամշակութեան համար:

Զուղաշեցիին աշակերտակ էր խաչատուր Կեսարացոյն, որի մասին գրում են, թե «Սա յօրինեաց զհամալսարանս՝ յսրում ուսուցանէր և մարդէր զհամբախագոյնսն ի դիտութիւնս հնոց և նորոց կտակարանաց, և զամենայն արհեստս ազատականս և գերբնազանցականս: Ուստի շահ է մեզ կոշել սմա հայր հասարակաց և պատճառ կրկին լուսաւորութեան ազգիս Արամեան և սկիզբ հեղինակ սրբոյ տանս մերոյ շինութեան և բարեկարգութեան՝ որ ի Նոր-Ջուղայ և արմատ անմահութեան, վայելչութեան և պայծառութեան՝ ազգիս մերոյ»<sup>1</sup>: Կեսարացին բարեկարգեց Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքը և հիմք դրեց դրա հշտանավոր գրադարանին ու դպրոցին, ուր սկսեց և ծավալեց ուսուցողական իր գործունեությունը ժամանակի հայ բեղմնավոր իմաստասերներից մեկը՝ Սիմեոն Զուղաշեցին, շատ տարածված արամբարանութեան ձեռնարկի, քերականութեան և մի շարք այլ գործերի հեղինակը:

Նույն վանքում փորձ արվեց լծարդել հայ եկեղեցական լուսափորութեան աշխատանքը տպագրական մամուլի գործունեության հետ: Իր լույս ընծայած «Սագմոսի» հիշատակարանում խաչատուր Կեսարացին պատմում է, որ լուսավորական աշխատանքը տպագրական գործի հետ միացնելու գաղափարը հայերի մեջ հղացած է եղել արդեն Մովսես Տաթևացին: «Յամենայն սեղիս դասատուն և դպրոցս կարգեաց և լուսաւորեաց զազգս հայոց,—գրում էր Կեսարացին Մովսեսի մասին,—և յարածամ ցանկալր տպագրութիւնս, զի յասատութենէ գրոց ամենեքեան զիրաւ վարձեցին. սակայն շեղի ձեռնահաս զի փոխեցաւ աստի յանանց կեանման»: Տաթևացու մտադրութեանները սկսում են լաջնորեն իրագործվել Փիլիպոս Աղբակեցու ժամանակ. 1634 թ. զրված մի հիշատակարանից տեղեկանում

<sup>1</sup> Խ ա չ ա տ ու ը ր Զ ու ղ ա շ Ե ց Ի, Պատմութիւնն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 116:

ննք, որ սրա կաթողիկոսության սկզբին էջմիածնում կար «հարիւր սպասաւորս զրոց՝ վարժասէրս և հանճարատենչս, ի կերթս հրահանգից զաստիարակեալք և տեսոն վիճակեալք»<sup>1</sup>: Ն. Զուղայի Ամենափրկիչ վանքում 1636 թ. սկսում է գործել խաչատուր Կեսարացու հիմնած տպարանը, որ առաջինն էր ոչ միայն Իրանում, այլև ամբողջ Արևելքում: 1636—42 թթ. ընթացքում այդ տպարանից զուրս են դալիս հայերեն Սաղմոս, Ժամագիրք, Խորհրդատեար, Հարանց վարք և Աստվածաշունչ: Խիստ անբավարար էր վանական այդ տպարանի սարքավորումը: Ե՛վ տպագրական մեքենան, և՛ տառերը, և՛ թուղթը, և՛ մուրը պատրաստում էին իրենք՝ վանքի տպագրիչները: Սաղմոսի հիշատակարանում Կեսարացին հաղորդում է. «տարի մի է և հինգ ամիս, որ զցայգ և զցերեկ անզաղար աշխատիմք հանդերձ միարան ուխտիւս. զի ոչ և մք տեսեալ ի վանապետէ և ոչ ոմնիմք ուսուցիչ, բայց միայն զհոգին սուրբ... և են ձեռնառ և օժանդակ զործոյս հոգևոր որդեակէքն իմ վարդապետ Յակոբճանն և աէր Յովհաննէս քահանայն և աէր Միքայէլն և Յովսէփն»: Ուշագրավ հանգամանք է, որ տեխնիկականից զատ, տպարանը հանդիպում էր նաև հասարակական խոչընդոտներին: Ուղեկրող Տավերնյէն հաղորդում է, որ Նոր-Զուղայի տպագրությունը խիստ «սպրդնած» էր, քանի որ չէին կարողանում լավ մուր պատրաստել և, բացի այդ, հայերեն գրատպությունը բուռն հուզմունք էր առաջացրել իր դեմ, որչափ սպառնում էր զրկել հացից բազմաթիվ այն մարդկանց, որոնց տպրուստի աղբյուրը գրչության արվեստն էր<sup>2</sup>:

Կեսարացին տակավին 1639 թվականին էր սուղարկել իր աշակերտներից մեկին, Հովհաննես Զուղայեցի վարդապետին, եվրոպա՝ տպագրական գործն ուսումնասիրելու և տպարանի տեխնիկական թերությունները դարմանելու համար: Հովհաննեսը յուրացրեց տպագրական արվեստի հասումները և 1643 թ. Լիվոռնոյում, «յսրում տպարանի» լույս ընծայեց տեխնիկորեն օրինակելի Սաղմոսը: Վերադառնալով Զուղա՝ իր պատրաստած բազմաթիվ տառերով՝ նա տպագրեց «Պարզատոմար Աղարիայի» (1647 թ.) և նույնիսկ ձեռնարկեց Աստվածաշնչի տպագրությանը, և սակայն գործը կանգ առավ, հանդիպելով դարձյալ Տավերնյէի նշած հասարակական բուռն դիմադրության:

<sup>1</sup> Հայկական ՄՍՍԻ Մատենադարան, ձեռ. № 3480, էջ 262բ:

<sup>2</sup> Tavernier, նույն տեղում, 1, զլ. XIII:

Այդ դիմագրությունն է, որ հասկանալի է դարձնում մեզ, թե ինչու աեզում տալարան հիմնելու և կատարելագործելու փոխարեն՝ Կեսարացու երկրորդ մի աշակերտը, Հակոբ Զուղաչեցին, բազմերով կաթողիկոսական աթոռին, 1656 թվականին ուղարկեց իր քարտուղար և ծաղկող Մատթեոս Ծարեցուն Իտալիա ոչ թե տպագրական արվեստին ծանոթանալու կամ այդ արվեստի մեջ կատարելագործվելու, այլ դադութահայ վաճառականների օժանդակութեամբ հենց այդտեղ, Իտալիայում, հայ գրատպութեան գործը կազմակերպելու համար: Կաթողիկ կղերն արգելք է լինում հայազավան գրքերի տպագրութեանը, և էջմիածնից ժամանած տպագրիչը հարկադրված ապավինում է բողոքական Հոլանդիան՝ Ամստերդամ, ուր նրա ձևարով սկսվում է հայ գրատպութեան ծավալուն մի աշխատանք: Ծարեցուն հաջորդում են ուրիշները և դրանց մեջ ամենից բեղմնավորը, ելած դարձյալ Կեսարացու դպրոցից՝ Հակոբ Զուղաչեցուն աննդակից և սրա կողմից Արեմուտք հղված Ոսկան Երեանցին:

Կեսարացու մահից հետո վանական-լուսավորական այս շարժման «վերակացու և զլուխ» կանգնած Հակոբ Զուղաչեցին ժամանակակիցների կողմից վայելում էր հայ եկեղեցու վարդապետներից ոմանց հասակացվող այն մեծ հեղինակութունը, որը տեսական-աստվածաբանական խնդիրների լուսարանութեան մարդում ավանդվում էր սերնդից սերունդ: Պաշտոն ունենալով երաշխավորելու եկեղեցու դավանաբանական անվթարութունն՝ սրանցից ոմանք եկեղեցական նպատակադրումներից անկախ, անուղղակիորեն նպաստելու էին հայերի գրական-կուլտուրական զարգացմանը և անգամ նրանց հասարակական-քաղաքական առաջխաղացմանը: Նշենք Սարկավազի, Գոշի, Նչեցու, Երզնկացու, Որտանեցու, Տաթևացու անունները: XVII դարի հիշատակարաններից մի քանիսում «խարազանազաց կաթողիկոս» կոչված Հակոբ Զուղաչեցին հիշվում էր սրպես անապատական շարժման բնգերքից ելած այն «մեծ վարդապետներից» մեկը, որնուց գործունեությունը եկեղեցաշինարարական և վանատնտեսական ձեռնարկումներից գտա նշանավորված է խաչատուր Կեսարացու սկսած կրթական և կուլտուրական ձեռնարկումները շարունակելու կամ բնդարձակելու ջանքերով:

Հիշատակենք Զուղաչեցուն գաղափարամերձ և գործակից Թոմա Վանանդեցու լատինագիր մի ուղերձը, ուր, խոսելով իր մասին, հեղինակը ակամա բացահայտում է նաև համախոհների նպատակը: «Եմ պատանեկությունից սկսած, — գրում է Վանանդեցին, — ես միտք եմ ունեցել իմ թեմում մի լատինահայկական դպրոց հիմնել:

Այս նպատակով Պարսկաստանից Եվրոպա բերել ավի իմ ազգական հրեք պատանի (խոսքը Ղուկաս, Միրաչեկ և Մատթեոս Վանանդեցիների մասին է — Ա. Հ.), սրպեսզի նրանցից երկուսը բնտիր ուսումով և բարքով կրթվին, իսկ մյուսը տպագրական արվեստին հմտանա: Տպարանն անհրաժեշտ էր իմ ծրագրած դպրոցին՝ զրբեր հասցնելու համար... Այս երիտասարդները եկան և լիովին իրականացրին իմ սպասածը: Այժմ մնում է կրթել մե՛ր այն թշվառ Բրիտոնյաներին, որոնք գտնվում են խավարի մեջ և ապրում են բռնակալական լծի տակ: Այս նպատակի համար պետք է որ իմ հայրենիքում այդպիսի մի դպրոց բացվի և տպարանս էլ այնտեղ փոխադրվի...»<sup>1</sup>:

Եվրոպայում տպած իրենց կրոնական, զրբերով Հակոբ Զուղայեցու գործակիցները մասամբ հոգ էին տանում Պատմական հոգևոր կազմակերպության պատրաստման կամ ընդառաջում հայ եկեղեցու զրական կուլտուրական պետքերին: Վանքի դպրոցական, զրական և տպագրական ծրագիրների իրագործմանը նպաստելու դիտավորությամբ էջմիածնում հիմք դրվեց նշանակալից մի գործի՝ վանական մատենադարանի կազմակերպմանը, 1668 թ. էջմիածնում գրված մի հիշատակարանում, թվարկելով Հակոբի գործերը, Մովսես Բանասերը ավելացնում է՝ «ընդ որս և մատենից գումարութիւնք ի մի, ոչ սակաւ և նոցին խոկացօղք և ի նոյնս պարսպօղք յտղմակ հանճարք»<sup>2</sup>:

Զուղայեցու կուլտուր-շինարարական գործունեության մեջ միաժամանակ երևան են գալիս XVII դարում նրան նախորդած ու հաջորդած կաթողիկոսների ջանքերը, մասնավորապես այս ժամանակ հայ կյանքում առևարական կապիտալի աշխուժացած դերը: Պիտի դիտենք, որ այս շրջանում ևս խստորոշ սահմանադիժ չկար խոշոր խոջաների և խոջար մուլքադարներին միջև: Խոջաները զբաղվում էին ապրանքավաճառքի բազմաթիվ տեսակներով և այս թվում նաև փողի առևտրով, այլ խոսքով՝ վաշխառությամբ: Նրանք վարկ էին մատակարարում հոգատերերին և ի վերջո տիրանում անվճարունակ վարկառուների հողերին: Սիմեոն կաթողիկոսի «Ջամբըռ»-ում հանդիպում ենք XVII դարում ապրած հայ խոշոր փողատերերի ու առևտրականների մի ամբողջ պատկերասրահ, մարդկանց,

<sup>1</sup> Ս ա ր ւ ւ խ ան, Բեղլիա և Հայաստան, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1935, էջ 122:

<sup>2</sup> Հայկական ՍՍՍՒ Մատենադարան, ձև. Ա՛ 981, էջ 502տ:

որոնք հանդիսանում էին նաև խոշոր հողատեր-կալվածատերեր և իրենք այդպիսիք՝ մրցում էին «առանց աշխատանաց» (ավելի ճիշտ կլիներ ասել՝ տերիշի աշխատանքի հաշվին) ապրող վանքերի հետ: Խոշոր փողատերերն ու ապրանքատերերը հաճախ ներդնում էին իրենց միջոցները ամշարժ գույքեր և մուքատու գյուղեր գնելու: Հակոբ Զուղայեցին մուքատու մի շարք գյուղեր գնեց այլևայլ հայ խոջաներից: Մուքատու գյուղերից զատ հայ խոջաներն ունեին այգիներ, ջրաղացներ, դինդեր, տներ, անասնահոտեր և ամբողջ գյուղեր: Այսպես՝ Նորք, Նորագեղ, Եղվարդ, Ամիրի գյուղ և Յայջի գյուղերը ամբողջովյամբ կամ մասամբ պատկանում էին երեվանցի խոջա Աեթին ու նրա ժառանգներին, Ղարադոլունբու գյուղը պատկանում էր խոջա Սուբխասին և այլն<sup>1</sup>: Իրենց հերթին Երևանի խանության խոշորագույն ֆեոդալներն ու էջմիածնի վանական անտեսությունը մխրձված էին առևտրական ու փողային խոշոր գործարքների մեջ: Հայկական միջնաշխարհում ապրանքայնացող վանական և աշխարհիկ հայ մուքատերերի և մուքատիրացող վանական և աշխարհիկ հայ առևտրականների մեջ Զուղայեցու ժամանակ կար տշ միայն անտեսական, այլև քաղաքական ու կուլտուրական ակտիվ գոյակցություն:

Պիտի կարծել, որ մեր նշած խոջաները իրենց մուլքերը կապալով տալիս էին համայնքներին. հետապույսում նրանք իրենց մուլքերը վաճառում էին էջմիածնի վանքին: Սակայն կային նաև այլ ախպի խոջաներ, որոնք իրենց մուլքը շահագործում էին մշակների ձեռքով: Այսպես, Զարարիա Ա. գուլեցին իրեն պատկանած այգիների մասին գրում է, թե «անգութք ամեն նոր ամսեցի, նոր շինեցի, շատ շարշարանք քաշեցի այս այքուս վերայ Ե (5) տարի, որ մինչի ԲՌ (2000) մշակ բանացրի»<sup>2</sup>:

Միայն մուքատիրության հիմքերի վրա չէ, որ բնդհանրություն էր առաջանում եկեղեցու և խոջաների միջև: Առևտրական բուրժուազիան հաճախ ասպարեղ էր գալիս որպես եկեղեցու նվիրատու ու վարկատու, որպես նրա շինարարական և կուլտուրական ձեռնարկությունների մեկեկնաս: Իր հերթին, վանական-եկեղեցական արևատեսությունները գրադված էին իրենց հողերի ու կալվածքների, կրպակների, տների, ջրաղացների, դինդերի և այլ կարգի այլ գույ-

<sup>1</sup> Տե՛ս «Ջամբու», էջ 121 և 127: Հմմտ. նաև Ա. Պոգոսյան, նույն տեղում, էջ 131 և հտ. և 149 և հտ.:

<sup>2</sup> Զարարիա Ա. գուլեցի, նույն տեղում, էջ 117 և հտ.:

քերի ու ձեռնարկների «աշխարհային» գործերով, Վանքը հանդես էր գալիս ոչ միայն սրպես կալվածատիրական ձեռնարկների կազմակերպող, այլև սրպես գրանց արտագրանքի վաճառահանող: Վանք և շուկա, ուխտագնացություն և կարավանագնացություն սերտ շաղկապված են միմյանց: Եկեղեցին սուղվում էր շուկայի նյութական հոգսերի մեջ, շուկան կարիք էր զգում եկեղեցու «հոգեփոր» սպասարկման: Պատահական չէ, որ XVII դարի վանական գիտություն և ուսումնասիրության մեջ տեղ էր արվում «արտաքին գիտությունների» աշխարհային, գործնական, սուեռական պետքերին ծառայող ձեռագրերի բազմացմանը: Ոսկանի, Վանանդեցու և սրանց գործակիցների հրատարակած գրքերը զգալի չափով ընդառաջում էին հայ վաճառականության պահանջներին, գրագետ վաճառականներին կամ հատուկացող վաճառականական կազմերին նրանք մտավարարում էին ընթերցանության նյութ, գործնական գիտելիքներ, գալուցական ձեռնարկներ և այլն: Իրենց հերթին աչքի են ընկնում ջուղայեցի խոջաների պատվիրած ձեռագրերը՝ նրանց մագաղաթի առատությունը, կազմերին գամված արծաթաբանդակները, որդանկարմիրով, լաջվարդով ու սսկով դեղահանված նրանց կենդանանկարներն ու ծաղկանկարները, ինչպես նաև սրանց գույնների «աշխարհային» պայծառությունն ու շքեղությունը, մասնավորապես ծաղկանկարների ու կենդանանկարների պարզ ու բնական գծագրությունը: Վերհիշենք նաև խոջաների մասնակցությունը գրատպության ու տպագիր հայ գրքի տարածման գործում:

Հատուկ ուշադրություն արժանի է սակայն Զուղայեցու և գործակիցների ծավալած աշխատանքի ԲաղաՄակաև տեղեկնյը: Հայաստանի պատմության և աշխարհագրության նվիրած գրքերի և սրանց թվում Դավրիժեցու պատմության կամ ավելի ուշ Խորենացու գրքի ու «Համատարած աշխարհացոյցի» պես գործի տպագրության նպատակն էր կրթիկ և դաստիարակիկ հայրենատիրական ոգով հայ այն երիտասարդներին ու ընթերցողներին, որոնք, ինչպես ասում էր Թալմա Վանանդեցին, «գտնվում են խավարի մեջ և ապրում են բռնակալական լծի տակ»: Մի հայտնի չափով տպագիր գիրքը պիտի զինեի ընթերցողին մտավոր այն միջոցներով, որոնք անհրաժեշտ էին նրանց գիտակցությունը կաշկանդող խավարը ցրելու և նրանց ազատությունը ճնշող բռնակալության լուծք խորտակելու համար:

Հայ ժողովրդին կաշկանդող բռնակալության դեմ վկայու-

թյուններ կան նաև այս ժամանակաշրջանի գրական ստեղծագործությունների մեջ: Արդեն առիթ հղավ նշելու Քեոմյուրճյանի երկերում հանդիպող արտունջները: Նույն կարգի արտունջներ հանդիպում ենք նաև Հակոբ կաթողիկոսին գործակցող Մարտիրոս Կաֆայեցու և սրան ժամանակակից այլ եկեղեցականների գրական գործերում<sup>1</sup>: Շատերը չէին սահմանափակվում սոսկ քաղաքական ոլորտացույթյուններով: Ինչպես առաջներում՝ Որոտնեցու և Տաթևվացու ժամանակ, հիմա ևս հայադավան եկեղեցու առաջավոր մարդիկ ձգտում էին տիրանալ գիտություն և ուսուցման զինքերին՝ եկեղեցու և ազգի հարատևությունը ապահովելու նպատակով: Դրժբախտությունն այն էր, սակայն, որ քաղաքական իրենց ազատություն բաղձանքներն իրագործելու մտաչնությունը Զուլպայեցին և իր գործակիցները դեռ շարունակում էին ակնկալել այդ ազատությունը նույն այն Հոռմից, որը հայ եկեղեցու հոգևոր անկախությունից հրաժարվելը գիտում էր որպես հայերին արած ձրի խոտամների կատարման առաջին ու հիմնական պայմանը:

Արդեն իսկ հատկանշական է Թովմա Վանանդեցու ուղերձի այն կետը, ուր նա խոսում էր «լատինահայ գալրոց» հիմնելու մտադրության մասին: Անհավանական չէ, որ նման արամագրություններ պիտի տեսնեցած լինեիր նաև Ոսկանին և Վանանդեցուն՝ Արեմուռք հողը Զուլպայեցին: Նման արամագրությունների առկայություն էր երեխ, որ մտաչելի և դյուրահազարգ էին դարձնում նրան երեանում և Սպահանում զեզերող այն միտիոններների համար, որոնք հայ եկեղեցին նեղ կացությունից ազատելու պատրվակով նշում էին նրա առաջ հայերի ազատագրման հին այն ուղին, որ առաջնորդել էր նրանց զեպի Հոռմ:

Զուլպայեցու վանական-կրթական գործունեության բնոհանուր ուղեղիժը մասամբ դրսևորում է այն շարժառիթները, որոնք հարկադրում էին նրան իր կաթողիկոսության առաջին իսկ քաղերից շրվման մեջ մանել կաթողիկե Նվրոպայի հետ: Ըստ երևույթին առաջին հերթին ապագրական գործի համար էր հենց, որ Զուլպայեցին շվարանեց մի քանի անդամ Հոռմ հղել հայ եկեղեցու համառոտ խոտամանությունիցան թղթերը: Նման թղթեր հղվեցին, ինչպես տեսանք, զեռ 1661 թվականին, Այերսանդր VII պապի (1655—1667) ժամանակ, միտիոներ Պիրոմալիի կամ Առաքել Ետտթեցի («Ֆորիկ» կոչված) վարդապետի և հավանորեն նաև 1664 թվականին Հոռմից

<sup>1</sup> Հմմտ. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Գրիմելի, Երևան, 1958 էջ 33 և հ.ս., 42 և հ.ս.:



Յրան ժամանած նեապոլիտանցի բարոզիչ Պիսկոպի (Piscopus) միջոցով: Նույնը արեց Ջուզպեցին և ավելի ուշ, կղեմես պապի (1667—1669) և Նախիջևանի ունիտոյներին գլխավորած, Մառթեոս Հովանիսեցի (Avanicensis) արքեպիսկոպոսի ժամանակ, այլև 1671 թվականին Ֆրանսիայի պալատական զեապան զը-Նյուանթելի միջոցով<sup>1</sup>:

Միայն ապագրական գործի նկատմամբ եղած շահագրգռությունը չէ, որ հարկադրում էր Ջուզպեցուն շփման մեջ մտնել Արևմուտքի հետ: Դիվաններում պահված վավերագրերից պարզվում է, որ արդեն իսկ վերը նշված Առաքել Բորիկին էր Վենետիկի հանրապետության առաջ գնում քաղաքական խնդիրներ: Զուր չէր Հակոբ կաթողիկոսին հղած իր պատասխանի մեջ Ալեքսանդր VII պապը հայ ժողովրդի մասին գրում կարեկցարար թե՛ Հոռմի եկեղեցուն ևնթարկվելու գեպրում աստված ամեն ինչ կանի նրա տառապանքներին վերջ դնելու համար<sup>2</sup>:

Խոսելով Բորիկի մասին, Սահիանոս Ռոշքա ժամանակագիրը բնութագրում է նրան որպես «այր սրբակրօն, անխնչ, և հուշակավոր ի քարտզութեան»: Բորիկ մականունը արվել էր նրան «վասն առընչութեան», քանի որ փր ստացածը բաշխում էր աղքատներին, վատտակելով «անարծաթ վարդապետ»-ի հուշակ<sup>3</sup>: Եպիսկոպոս ձեռնադրված որպես Ֆահրաբատի առաջնորդ՝ 1659 թ. Ջուզպեցու կողմից ուղարկվել էր Հոռմ, որպես թե՛ պապին հպատակություն հայտնելու համար: Սակայն պարզվում է նաև Բորիկի առաքելության քաղաքական աստուար: 1662 թ. հունիսի 10-ին Վենետիկի գործին ուղղած իր գրություն մեջ նա հայտնում էր, թե իր միտքը չուսավորվել է իսկական հավատի նկատմամբ, բայց կամենալով հայտնել Հոռմի պապին իր դավանանքը՝ կարիք է զգում նաև գործնապես ապացուցել իր անկեղծությունը: Ինքը մերձավոր կապեր ունի պարսից արքունիքի հետ և խնդրում է օգտագործել այդ հանգամանքը և իր միջոցով բանակցություններ սկսել Իրանի հետ՝ Թուրքիայի դեմ դաշինք կնքելու համար: Վստահ է այս ձեռնարկության հաջող ելքի մասին, քանի որ գիտե պարսից շահի բարեհաճ վերաբերմունքը դեպի այդ դաշինքը: Համաձայնություն գեպրում խնդրում էր իրեն արվելիք անցաթղթի մեջ հատուկ հանձնարարու-

<sup>1</sup> Հմմտ. Bedik, նույն տեղում, էջ 353, և Reponse generale au nouvelle livre de M. Claude, Paris. 1671, էջ 284 և հտ., Գ ա լ ե մ ք յ ա-բ յ ա ն, նույն տեղում, էջ 280 և հտ.:

<sup>2</sup> „A. Chronicle of the Carmelites in Persia“, I, էջ 380 և հտ.:

<sup>3</sup> Գ ա լ ե մ ք յ ա բ յ ա ն, նույն տեղում, էջ 280:

թյուն անել շահին: Խնդրում է նաև, որ շահին մատուցելու համար վեց ոսկի ապարանջան տրվի իրեն: Դրանով պիտի կարողանա ցույց տալ, թե փոքր իրոք ղեկավար է նշանակված վենետիկյան դոժի կողմից: Եթե հարկ տեսնվի, փրեն կարող է տրվել նաև «ավելի գաղտնի հանձնարարություններ ունեցող» որևէ ուղեկից Թուրքիայի վրայով Իրան անցնելու համար<sup>1</sup>:

Վենետիկի սենատի անունից շահի հասցեով տրվում են իրոք Բոբիկի խնդրած հանձնարարականն ու նվերները: «Նրա (Բոբիկի) բերանից, — ասվում է շահին ուղղած գրություն մեջ, — դուք կիմանաք այն, ինչ ամենից պարզորեն կարող էիք լսել մեր սրտերից...»<sup>2</sup>:

Զգիտենք ստուգապես, ոմե՞ք արդյոք Առաքել Բոբիկը Հակոբ կաթողիկոսի կողմից հատուկ հանձնարարություններ Վենետիկին նման ծառայություններ առաջարկելու համար: Վենետիկում Բոբիկը հայտարարում էր, թե ինքը հանդիսանում է կաթողիկոսից հետո հաշ կեղեցու երկրորդ հեղինակավոր անձնավորությունը: Մյուս կողմից՝ բոլոր պարագաներում բացարկված չէ, որ Բոկոսն զիմանազեաի վարքագիծը համապատասխանում էր Զուլաչեցու արամադրություններին: Ինչպես պիտի տեսնենք հետագայում, Հակոբի կողմից Բոբիկը մի երկրորդ անգամ էս ուղարկվեց Հոտմ, ըստ որում ոչ սոսկ «վասն ընդհանուր միարանություն հայոց ազգին», այլ դարձեալ՝ ազգային-քաղաքական հանձնարարությունը:

Վենետիկի հաշերեն ձեռագրերի ցուցակում նշվում է Հակոբ կաթողիկոսի մի զիմումը (հիշատակված է նաև զիմումի ֆրանսերեն բնագիրը): Պարզվում է, որ 1671 թ. սպրիլի 2-ին Հակոբը բազմաթիվ ստորագրություններով ու եպիսկոպոսների կնիքներով ամբաստնված մի թուղթ էր հղել եվրոպա՝ բրիտանոսպասկ թագավորի (հավանորեն Լուգովիկոս XIV-ի) անունով: Գրությունը սկզբում էր «Անկարդ և ցանկապատաս» եզրագրի նշավակումով<sup>3</sup>: Պիտի կարծել, որ կաթողիկոսի զիմումը առնչություն ուներ նույն տարում Պոլսի ֆրանսիական ղեկավարի միջոցով Հոտմ հղված այն թղթի հետ, որի մասին հիշատակեցինք արդեն: Ըստ երևույթին դավանաբանական հարցերն այս ղեկավարում էս լծորդվում էին քաղաքականի հետ:

1671 թ. ֆրանսիացիների հետ Զուլաչեցու Պոլսում ստեղծած կապերն ու հարաբերությունները շարունակվեցին Սպահանում, ուր

<sup>1</sup> Berchet, նույն տեղում, էջ 230:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>3</sup> St'a F. Սարգիսյան, Մայր ցուցակ, Բ, էջ 1195 և հա.:

1673—74 թվականներին ղեզերում էր կաթողիկոսը<sup>1</sup>։ Այստեղ մի-սիոններնեը ֆրանսիական առևտրական ընկերության ներկայացուցիչների միջոցով հասկացնել ավին նրան, որ եթե պապը միջնորդի հայերին հովանավորելու մասին, Լուդովիկոս XIV թագավորը կրն-դառաջի դրան։ Բայց դրա համար հարկ կլինի, որ հայոց կաթողի-կոսը ոչ թե սոսկ դավանության թղթեր հղի Հոտմ, այլ պարզապես ընդունի հոռմեական եկեղեցու դավանանքը և, որ ամենից կարևո-րն է, ենթարկվի հոռմեական աթոսի գերիշխամությանը<sup>2</sup>։

Այս տեղեկանքով գեռ շի պարզվում քաղաքական գոռնավորում ստացած բանակցություններ նախաձեռնողների ամբողջ ծրագիրը։ Թվում է, սակայն, շննր սխալվի, եթե վերագրենք բանակցություն-ների նախաձեռնությունը Սպահանում հաստատված կապուչիննե-րին զլխավորող Ռաֆայել Դյու-Ման կրոնավորին։ Հայաստանի ազատագրման հարցի լծորդումը ֆրանսիական ընկերության ներ-կայացուցիչների հեռ կարող է միայն ամբացնել այս ենթադրու-թյունը։ 1670 թվականի օգոստոսի 20-ին Սպահանից Կուրերին — Լուդովիկոս XIV-ի ամենագոր մինիստրին — աղարկված մի գրու-թյան մեջ, որ զլխավորապես գառնում է ֆրանս-իրանական առևտրի շարքը, պատեր Դյու-Մանը խոսք է բացում Հայաստանի ազատագրման և դրա հեռ կապված լեղենդի մասին։ Հայերի արդի տառապանքները, գրում է նա, ժամանակին նախատեսել են նրանց պատրիարքները, ս. Ներսեսը և ս. Գրիգորը, «որպես աստուածային մի պատիժ նրանց խաղամարար ողու և հոռմեական եկեղեցուց հերձ-վելու համար»։ Բայց, հարում է պատերը, նույն մարգարեացողները նախատեսել են նաև նրանց վերկուրությունը «ֆրանսիական (sic) մի թագավորի ձեռքով», «թո՛ղ որ, — այսպես է ավարտվում այս գրու-թյունը, — ներկայիս գահակալող մեծ թագավորը կամ նրա հաջորդ-աներից որեէ մեկը՝ լինի այն իսկ անձը, որին ս. Ներսեսի մարգա-րություն համաձայն վերապահված է Ասիայի աշխարհիկ և հոգևոր վերանորոգումը»<sup>3</sup>։

Ազատագրական լեղենդի այս վերսիայի եկեղեցական-գա-վանաբանական տեղեկեցը ակնբախ է։ Անհնարին չէ, որ այդ պա-հին շատերն այդպես էլ պատմում էին լեղենդը։ Բուր «ֆրանկնե-րի» մեջ Լուդովիկոս XIV-ն էր հենց այն թագավորը, որի հուշակը

<sup>1</sup> Տե՛ս Չաբարիա Սարկավադ, նույն տեղում, III, էջ 80 և Չաբարիա Աղուլիցի, նույն տեղում, էջ 113 և 120։

<sup>2</sup> Chardin, նույն տեղում, III, էջ 115 և հա.։

<sup>3</sup> Du Mans, նույն տեղում, Appendice, XXVIII։

հիրավի տարածված էր նաև Մերձավոր Արևելքում: Այդ մասին հոգում էին մանավանդ նրա միսիոներները, որոնք միախառնելով հավասարափյուն «պրոպագանդի լույսը» Արև-թագավորի քաղաքական ճառագայթների հետ, մոլեղին ջանք էին անում թափանցելու լեանոյան առևտրականների «մութ» հողհատակը: Ուր դնելով արտված շավիղների վրա՝ նրանք ևս հասկացնել էին տալիս, թե հարելով Հռոմի հիկեղեցոմս, հայերը կարող կլինեն հույս դնել Լուդովիկոսի թևարկության վրա: Եթե ցարդ արևը բարձրանում է արևելքից, այնուհետև արևմուտքից է կենելու նա: Հայերի մեջ այս պատրանքը սփռի ծագեր, կենելով մանավանդ Լուդովիկոսի Ռուբիայի հետ այդ ժամանակ ունեցած բախումներից:

Գյուլ-Մանը և ուրիշները հարկ չունեին անստույգ գալիքին վերապահելու իրենց խոստումների իրականացումը, ինչպես նրանք խոհեմաբար ամուսն էին կուրերին գրած նամակում՝ ակնարկելով Լուդովիկոսին կամ նրա «հաջորդներից որեէ մեկին»: Հայ մարդկանց հետ շփվելիս նրանք շահարկում էին անմիջաբար նախիջևանի համայնքների խրախուսիչ օրինակը:

Ընդառաջելով եվրոպացիների միջնորդությանը, տակավին Շահ-Իսմայիլն էր մի շարք արտոնություններ շնորհել այդ գավառի հայ կաթոլիկներին<sup>1</sup>: Որչափ շահնշահերի հերթափոխության ժամանակ նախորդների շնորհումները կորցնում էին իրենց ուժը և կարիք ունեին վերանորոգման, պապի կամ սպանական և ֆրանսիական թագավորների միջնորդությամբ Շահ-Աբբասի ժամանակ վերահաստատվեցին հին արտոնությունները. նախիջևանի հայ-կաթոլիկ համայնքների մեծ մասը «խաս» հայտարարվեց՝ սակ է իմունիտետի իրավունք ստացավ տեղական հարկահանների հանդեպ<sup>2</sup>: Հաջորդ Սեֆյանների ժամանակ ֆրանսիական միսիոներները ջանք էին գործադրում վերականգնել այս արտոնությունները: Այդ մասին մեզ են հասել Լուդովիկոս XI V-ի ու Շահ Սուլեյմանի միջև փոխանակված նամակները<sup>3</sup>: Լուդովիկոսին դիմումներ էին ուղղում անմիջորեն նաև հայ-կաթոլիկ համայնքների պետերը, հայցելով իրենց հոտի համար նրա միջնորդությունը<sup>4</sup>:

<sup>1</sup> Bedik, նույն տեղում, էջ 365 և հո.:

<sup>2</sup> Della Valle, նույն տեղում, III, էջ 33, Bedik, նույն տեղում, էջ 365, Ալիշահ, Սիսական, էջ 394 և հո.:

<sup>3</sup> Du Mans, նույն տեղում, Appendice XXXVII և XLV, և Flauriau, նույն տեղում, էջ 219 և հո.:

<sup>4</sup> Du Mans, նույն տեղում, „Journal Asiattque“, 1837, III, էջ 119, Bedik, նույն տեղում, էջ 378 և հո., Lettre edifiantes etc. (Lettre

Ուշադրով է, որ տակավին Շահ-Աբբաս I-ի ժամանակ Նախիջևանի հայ-կաթոլիկների համար արտոնություններ ստանալու նպատակով Արևմուտք ուղևորվելով՝ Ավգուստինոս Բաջենցը Իրան վերադարձավ քաղաքական հատուկ մի հանձնարարությամբ: 1619 թվականին նա ներկայացրեց Շահ-Աբբասին Հոսմի պապի, ֆրանկ արքունիքների (սրանց թվում հատկապես սպանական թագավորի ու Մադրիդի անգլիական դեսպան Ծիրլիի) միջնորդությունները Նախիջևանի հայ համայնքների օգտին: Բացի այդ՝ իրանական արքունիքին նա հաղորդեց ինչ-որ «մեծ-ազդի հուսատառ» վեղարակիր մի ֆռանկի» բերանացի խնդիրը շահի և արևմտակաթոպական պետությունների հետ Թուրքիայի դեմ պինակցություն կնքելու մասին<sup>1</sup>:

Քաղաքական նման ծրագիրներ առաջ էին դալիս նաև Բաջենցից հետո: Մեր ձեռքը հասել է 1665 թ. մայիսի 20-ին երևանում գրված երկու թուղթ, որոնք լույս են ախոտմ այդ կարգի ծրագիրների վրա: Դը-Լալեն և զը-Լա Բուլաժ զը-Գուզը, այդ գրությունների հեղինակները, առևտրական գործակալներ էին, ուղարկված Իրան՝ ֆրանսիական առևտրական ընկերություն կազմակերպելու համար: Գործը գլուխ բերելու համար ֆրանսիական գործակալներին անհրաժեշտ էր հայ առևտրականների բարյացակամությունը, «Երեվանի հայերի մասին, — գրում են նրանք, — այստեղ ուղղակի տեղեկագրում են, թե քաղաքում, ինչպես և բերդում կան սրոշ քանակությամբ հայեր, նման նրանց, որոնց տեսել ենք Թուրքիայում օսմանյան լծի տակ հեալիս. օրեցօր նրանք սպասում են իրենց շարքաշ վիճակի վերջը միայն Լուզովիկոսից, քանի որ լսել են նրա մեծություն և ուժի հուշակը: Թագավորի գործերը հավատ ևն ներշնչում նրանց, թե արդեն հասել է իրենց մարդարությունների իրականացման ժամանակը: Նրանք իրենց ազատության, իրենց եկեղեցու և հավատքի վերանորոգիչ են անվանում ֆրանսիական թագավորին և համոզված են, թե չկա աշխարհում այնպիսի հեռավոր մի երկիր, որի վրա նա ի վիճակի չլիներ տարածել իր գեներալ ուժն այնպես, ինչպես սր տարածում է իր անվան փայլը: Այս մի ցանկություն է, — ավելացնում են տեղեկագրողները, — որին մենք

de Picard<sup>1</sup>, էջ 33 և հտ., Բ. Պ., Նշխարք մասենագրության հայոց, էջ 25 և հտ., Ալի 2 ա ն, Սիսական, էջ 398 և հտ., նաև մեր հոգվածը Մատթեոս Հովանիսեցու առաքելության մասին, «Արարատ», 1915, էջ 61 և հտ.:

<sup>1</sup> Տե՛ս Ալի 2 ա ն, Սիսական, էջ 394:

ևս միանում ենք ամբողջ հոգով»<sup>1</sup>։ Հինգ տարի անց, ինչպես տեսանք, նույն այս ցանկությունը արտահայտում էր մի այլ ֆրանսիացի՝ միսիոներ Գյուլ-Մանը և դարձյալ նույն այս «մարգարեսությունների» կապակցությամբ։

Հարկավ, չպիտի անդիտանանք, որ ֆրանսիացի այս «հայասերները» եկեղեցու կամ շուկայի հոգևոր հետախույզներ էին և որ նրանց համար հայկական լեզուները առնվազն նույնչափ ստրկահաճություն ազբյուր էին իրենց պատրոնի առաջ, որչափ և շահախնդիր հարցասիրության առարկա հանդեպ հայերի<sup>2</sup>։

Շատ ակնբախ է, որ ֆրանսիական կոմիսարները հայկական լեզուների մասին ոչ միայն իրենց թագավորին ևն հաղորդում, այլև Լիոնի իրենց վարչությունը<sup>3</sup>։ Լիոնը՝ մետաքսե ժապավենների հայրենիքը, այն քաղաքն էր հենց, որը կլանում էր Ֆրանսիա ներմուծվող մետաքսահումուլթի մեծ մասը։ Այդպես էր գլխավորապես արտադրվում նրբահյուս այն մետաքսը, որի մասին խտտաբարո պուրիտանները տրանջում էին, թե կանանց հագցնելու պատրվակի տակ այդ գործվածքը փաստորեն մերկացնում է նրանց։

Ուշադրավ է նաև, որ Լուդովիկոս թագավորի կոմիսարները, հայ քաղաքական ակնկալությունները նշելիս, նկատի չունեին բոլոր հայերին, այլ հատկապես միայն երեանցիներին և այն էլ սրանց մի որոշ մասին («quantite d' Armèniens»)։ Նկատի ունեին այն խավերը, որոնց արամադրությունը ամենից շատ էր հետաքրքրում նրանց, ասել է՝ քաղաքի վաճառականությանը։ Եթե ոչ հայերի ազատագրման հեռանկարը, դեթ այն հիմնավորող ազատագրական լեզուները Երևանում պիտի որ խոր արմատներ ունեցած լիներ հենց հասարակական այդ խավի ազդեցությամբ ևնթարկված ժողովրդախավերի վրա Ի դեպ, չէ՞ր վկայում նույնը այն ժողովրդականությունը, որ վայելում էր Երևանում գանված Կոզեռնի դերեզմանը, որ հետագայում «կոզեռի» գերեզման էր դարձել։ Արդյոք չէ՞ր վերագրվում այդ գերեզմանը ազատագրական նշանավոր տեսիլներից մեկի կարծեցյալ հեղինակին՝ Հովհաննես Կոզեռնին։

Կարկուտ Սնտրիստի վերը նշված ամբաստանագրում Հակոբ Զուլալյեյին մեղադրվում էր ի միջի այլոց այն բանում, որ իբր Երու-

<sup>1</sup> Du Mans, նույն տեղում, Appendice, XXII.

<sup>2</sup> Ֆրանսիական կաղաչիչներ և ֆրանսիական առևտրականների մերձավոր առնչության մասին հմտ. հատկապես Chardin, նույն տեղում, I, էջ 151:

<sup>3</sup> Du Mans, նույն տեղում, Appendice, XXIII.

սաղեմ զնալու պատրվակով նա զազատագողի խորհուրդ է ոմնեցած եղև փախցնել Հոփոսիմյան և Գայանյան սրբերի նշխարները: «Պանիլ յերկիրն ֆռանկաց և այնու առնուլ բազում զանձ ի նոցանէ և զալ օծել զոմն բազաւոր Հայոց ընդդէմ իշխանութեան պարսից»: Նույն այդ ամբաստանադրում նշված է ի դեպ նաև այն մեղադրանքը, թե Հակոբը հպատակութեան թուղթ է տւարկել Հռոմի պապին՝ անցնելով հայանապես քաղկեդոնական «աղանդի» կողմը<sup>1</sup>: Կաթողիկոսի հետագա գործունեութունը, ինչպես պիտի տեսնենք, ապացուցում է, որ նրա դեմ հանված այդ մեղադրանքը զուրկ չէ որոշ ճշմարտանմանութիւնից: Դժվար է միայն համոզուել, թե արդեն իսկ 50—60-ական յիսնամյակներին էր հասունացել նրա մեջ ոչ միայն Ռուբէիայի, այլև Իրանի դեմ կողմնորոշվելու տրամադրութիւնը: Բոլոր պարագաներում անհավանական չէ, որ նրա քաղաքական առաջադրութիւնները մի հայանի շափով կարող են կապված լինել հենց Երեանի քաղաքաբնակչութեան այն հատվածի հետ, որի դեմ սաքի էր ելել Օնոփրիոսի զխաւիրած եկեղեցականների ժողովը:

Պիտի նկատենք, սակայն, որ ֆրանսիական քաղաքագետներին գերազանցորեն զբաղեցնել կարող էր ոչ թե իրանահայերի, այլ թուրքահայերի դիրքավորումը:

Երևանում արժարժված այդ պայքարը շաղկապվում է քաղաքական մի առաքելութեան հետ, որին հետո Փարիզում նույն այդ ժամանակ հետամուտ էր «Հաջի Մուրադ» (Chazi Murat), կամ, որ միևնույն է՝ մահախի Մուրադ անունով մի հայազգի: 1666 թվականին, Կանդիայի պատերազմի ժամանակ, միանալով Ալեքսանդրիայի հույն պատրիարքի փոխանորդ Պալեստոզին, մահախի Մուրադը մեկնել էր Փարիզ՝ համոզելու ֆրանսիական թագավորին՝ փ պաշտպանութեան արեւելյան քրիստոնեութեան պատերազմի դուրս գալ Ռուբէիայի դեմ. իր հերթին հույն պատրիարքի փոխանորդը վստահեցնում էր, որ հայերն ու հույները պատրաստ են ապստամբութեան և որ նրանց կմիանան թուրքահպատակ մյուս քրիստոնեյաները, օժանդակութիւն զանելով մոսկովիցիների և լեհերի կողմից<sup>2</sup>: Այլ աղբյուրներից պարզվում է, որ այստեղ իտքը բաղիշեցի մահախի Շահմուրադի մասին է, որը մինչև 1683 թվականը գեղերելով Փարիզում, հակաթուրքական իր ընթացքը հայտնի էր

<sup>1</sup> «Միտն», 1933, էջ 151 և հո. 1

<sup>2</sup> «Revue des Etudes Arméniens», II, էջ 85 և հո. 1

դարձրել Թուրքիային և իր հետեից այրել հայրենիք վերագառնալու բալսր կամուրջները<sup>1</sup>։

Մեզ է հասել մահաեսի Շահմուրազի ուամկորեն շարադրված մի գրվածքը, ուր նա աալիս է իր աչցելած Վերսալի ուշագրավ նկարագրութլոմը։ Այդ գործից իսկ ալնհայտ է հեղինակի քաղաքական կողմնորոշումը։ Խոսելով Լուզովիկոս XIV-ի մասին հեղինակը նըրան համարում է աշխարհի յոթ նշանավոր թագավորներից մեկը. «Քան զըսպաննիօլն, քան զեիրատօրն փօրրն աչա է, ապա ուժով և մալօվ (= հարուստ), կավարար զինուոր է, զորա պարա(պար) շկա ի թագաւորաց մէջն։ Միթէ աէր հաստատուն պահեսցէ զթագաւորութիւն սոցա միճչև ի միւս անգամ դալուսան ամեն»։ Երկարակեցութլուն մաղթելով Լուզովիկոսին՝ մահաեսի Շահմուրազը հարում է. «Ժ փառս աստուծոյ և ի պարծանս ամենայն քրիստոնէից և ի ցընծութիւն տառապեալ ազգիս հայոց»<sup>2</sup>։

Չպիտի թվա սակայն, թե միայն Ֆրանսիական աչդ թագավորի հետ էր կապում մահաեսի Շահմուրազը «տառապչալ հաց ազգի» և «ամենայն քրիստոնէից» փրկութլունը։ Ներկայիս պարզված պիտի համարել, որ վերը նշված Պալեոլոզի և մահաեսի Շահմուրազի առաքելութլյան նկատմամբ գրական շահագրգռութլոմ էր հանդես բերում նախ և առաջ Վենեսիկի հանրապետութլունը, որը Փարիզի և Հոմի իր դեսպանութլոմների միջոցով ձգտում էր Թուրքիայի դեմ մղվող պատերազմին հաղորդել համաքրիստոնէական խաշակրութլյան կերպարանը։ Կաթոլիկ Արեւմուտքից զատ ծրագրւում էր ներգրավել նաև Արեւելքի քրիստոնչա երկրներն ու ժողովուրդները։ Մոսկվայի ցարից զատ ենթագրվում էր մասնակցութլյան կանչել Վրաստանի և Եթովպիայի թագավորներին, Մուղավիայի և Վալարիայի իշխաններին։ Արշավանքի կուսակիցների շարքում հիշատակվում են Աղեքսանդրիայի, Անտիօքի և Երուսաղեմի հուլն պատրիարքարանները և հավանորեն նաև Կիլիկիայի հայոց կաթողիկոսարանը։ Արշավանքի կազմակերպողները կամենում էին Թուրքիայում իշխող խալիֆի տեղը բազմեցնել քրիստոնչա մի սուլթան՝ «Հայր Օստուման» անունով հրասպարակ քաշված մութ անձ-

<sup>1</sup> Ա. Ա. Ալպոյան, «Ճանապարհորդութլուն ի Հաղաշխտան ժե գարուս», Գոհիրէ, 1916, էջ 52 և հա., էջ 58։

<sup>2</sup> Հայկական ՄՍՌ Մատենադարան, ձև. ԱՅ 4618, էջ 175ա։ Հմմտ. նաև Հ. Օրբելու հրատարակած նվազ կատարյալ օրինակը՝ «Описание Версаля в армянской змичи 1683 г.», Изв. россійск. Акад. Мат. культуры, I, Петербург, 1921, էջ 395։



նավորությունն, որի մասին պատմում էին թե՛ դա սուլթան Մուրադ IV-ի եղբայրն է, որը մանուկ հասակում դերի է ընկել Մալտաչի վանքերից մեկը և սնվել ու աճել սրպես մուկոտանդ կաթոլիկ... Գործիք դառնալով պապական զիվանագիտության ձեռքում, «Հայր Օտտոմանը» մտերիմ կապեր սններ Վենետիկի և Հռոմի հետ և Կանդիայի պատերազմի վերջին տարիներին Ալեքսանդրիայի պատրիարքական փոխանորդի ու մահաեսի Շահմուրադի հետ միաժամանակ մասնակցում էր Փարիզում տեղի ունեցող բանակցություններին<sup>1</sup>։

Նկատենք ի դեպ, որ Հռոմին սպասարկող նույն այս «Հայր Օտտոմանը» նախապես փորձ էր կատարել Բուրբոնայի դեմ պատերազմի հանել նաև Մոսկովյան պետությունը և այդ նպատակով ապարդյուն բանակցություններ վարել Ռուսաստանում<sup>2</sup>։

Կուրբերին ազդած իր մի նամակում «համարքիստոնեական» խաչակրությունն նախապատրաստմանը մասնակցած Հաջի Մուրադին կամ, որ միևնույն է՝ վերը նշված բաղիշեկյի մահաեսի Շահմուրադին Ալեքսանդրիայի պատրիարքական փոխանորդը հանձնարարում էր որպես «ամբողջ Բուրբոնյում հանրաժամով մարդ», որին ճանաչում է նույնիսկ ինքը՝ սուլթան Մուրադ IV-ը։ Կամենալով բարձրացնել Կուրբերի աչքում նրա գինը, Պալեստղը հաղորդում էր, որ պատերազմի ժամանակ այդ մարդը բազմաթիվ ֆրանսիացի գերիներ է ազատել Կանդիայում<sup>3</sup>։ Պիտի կարծել, որ մահաեսի Շահմուրադը մասնակցել էր այդ պատերազմին, աչ թե որպես զինվորական, այլ որպես առևտրական, ըստ տեղեկության՝ ֆրանսիական գերիներին նա ազատում էր ոչ թե թրի ծայրով, այլ փողի քսակով։ Պատահական չէ, որ պատերազմի ժամանակ նա կողուպուտի էր լնթարկվել Միջերկրականում վխտացող ծովահենների կողմից։ Առևտրական իր ձեռնարկությունների բերմունքով էլ հենց նա բարեկամացել էր Պալեստղին և նրան ներդրավել զիվանագիտական աշխատանքի մեջ, որպես ապագա հայ-հունական զինված ապստամբության կազմակերպիչներից մեկի<sup>4</sup>։

Ուսումնասիրողները հնարավոր են համարել դիտել մահաեսի Շահմուրադին որպես «հայ ժողովրդի», կամ հայ և հույն «ծողու-

<sup>1</sup> Ա. Ն. Ա. յ. Ա. Ն. Ն., Հայ-հունական ապստամբական շարժման մի էջ կանդիայի պատերազմի շրջանից, XVII դար (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադ. «Տեղեկագիր», 1954, № 3, էջ 87 և հ.ա.)։

<sup>2</sup> Konling, La question orientale et le slavisme transdanubienne, telle que se la représentait le tsar Michel Feodorovitch. Q. M. N. 1878. Վիայնա 1878-ը առնում են «Լույս Փարիզի» լրագրից, 1938, № 61։

<sup>3</sup> Ա. Ն. Ա. յ. Ա. Ն. Ն., նույն տեղում, էջ 95։

<sup>4</sup> Նույն տեղում։

վուրդները» ազատագրական տեղաշարժների իրագործման շուրջը հաստատված «եղբայրական, անկեղծ համերաշխություն» դարբնողներից մեկին: Արդարությունը պահանջում է դիտել, որ նշված բաճակցությունների մեջ ժողովուրդները նպատակ չէին, այլ միջոց: Հարկավ հաշվի էին առնվում թուրքական դաժան լծի դեմ հպատակների սրտերում կուտակված դառնությունները և այդ լծից ազատագրվելու համար նրանց փայվայած երազները: Մակայն ժողովուրդների ազատագրման իդեալին չէ, որ ծառայում էին այս բանակցությունները, այլ արևմտասկզբապահան իշխող դասերի շահերն ու բազմաթիվ արտահայտող պետությունների ու եկեղեցու գործնական նպատակադրումներին: Մասնավորապես հայ իշխող վերնախավերի հետ մահախի Շահմուրադի սննցած կապերի մասին որոշ գաղափար է տալիս հենց վերը հիշատակված նրա հսկերեն գրվածքը: Այդպես նշված են մի շարք հայ մարդկանց անուններ, որոնց հետ նա այցի էր դնացել Վերսալի ապարանքը և հանդիպում ունեցել արքայական տան ներկայացուցիչների հետ: Կարդանք գրվածի տողերը. «Թվին հայոց ՌՃԼԲ (=1683) ի փետրվարի ամսոյ Բ առուքն ևս՝ Բաղիշեցի մղղխի Շահմուրատս, զնացի ի Թագաւորանիսա քաղաքն Վերսալիայ: Տեսա զթուրքաշի Յովանէս վարդապետն, սիսիանցի Զաքարիա վարդապետն և հալեպցի Ղազարոսի որդի Զուզեփն, արզրումցի Յովհաննէսի որդի Գրիգորն և զաղանշեցի (այլ օրինակ՝ խաղանշիլարցի) Մուրադն, Ռսկան վարդապետի քվեր որդի Սողոմոնն: Նաև տեսաք Յրանկախու թագաւորն, զկինն, զորդին և զեղբայրն, զեղբոր զհարսն, զվեղիքն...»<sup>1</sup> Հավանական է կարծել, որ մահախի Շահմուրադի հայացքները համապատասխանում էին մասամբ հենց այստեղ նշված արևելահայ և արևմտահայ եկեղեցականների ու աշխարհականների տրամադրություններին: 1669 թ. հետո գրված մի հիշատակարանում նրա գործունեությունը կապվում էր հատկապես բերված տողերի մեջ նշվող Պուլսի նախկին պատրիարք Հովհաննես Թյուրքումաճի հետ, որի մասին ասվում է, թե «եղև զլուխ ազգին ֆրանկաց և եկն քի վերայ թուրքին»<sup>2</sup>: Թյուրքումաճին ճամադարհորդել էր Կհաստանում և Յրանսիայում և ապա հետաքրքրական ուղևորություններ կատարել Նիովպիայում՝ հասնելով Նեղոսի ափունքին, կյանքի վերջին հանգրվան գտնելով Տրապիզոնում: Հավանական համարելով

<sup>1</sup> Հայկական ՄՍՌ Մատենագարան, ձև. № 4618, էջ 173ա: Հմմտ. ձև. № 6273, էջ 503 և հտ.:

<sup>2</sup> «Դիվան հայոց պատմութեան», X, էջ 103:

Նրա ուղեգնացությոճանների բնույթը՝ մեծավաստակ պատմարան Ա. Ալպոյաճյանը կարծում է, թե մասնավորապես եթովպիայի նրա առաքելութունը «կապ ունի թուրքերի դեմ մղած պայքարին և թուրքին վրա դնալու նախապատրաստություն մըն էր, եթե ոչ ճշմարիտ արշավ մը, որ իրազործելու շեմ կարծեր թե ասիթ ոճնեցած ըլլա այս արկածախնդիր եկեղեցականը, որ գործնականապես եթե այս տեսակ ձեռնարկ մը կատարած ըլլար, իր կյանքի վերջին տարիները Տրապիզոն անցնելու պիտի շահարձակեր»<sup>1</sup>: Ըստ երևւութին մահտեսի Եահմուրազի և Թյությոճաճի առաքելութունները կապ ունին խաչակրական այն նախազմումների հետ, ուր շահարկվում էին նաև հայերի ազատագրական տրամադրությունները, Թուրքիայում արեւմտանկյուպական պետություններին շահագրգռող խնդիրները լուծելու համար:

Մերձավոր Արևելքի նկատմամբ այս ժամանակ արծարծվում էին մասնավորապես Յրանսիայի դադութային ծրագիրները: Մինչև 1634 թվականը Իրանի մետաքսը Մերձավոր Արևելքի նավահանգիստներից հայերը բերում էին Մարսել, ուսկից այն թափանցում էր Հոլանդիա և Անգլիա: Երբ 1634 թվականին ֆրանսիական կառավարությունը 16 ֆրանկից 112 ֆրանկի հասցրեց մետաքսի հակից վերցվող մաքսը, Մարսելը հայերի համար կորցրեց իր հրապույրը և նրանք սկսեցին կապ հաստատել ամբիջապես Հոլանդիայի և Անգլիայի հետ<sup>2</sup>: Մրցության ելնելով Հոլանդիայի, Անգլիայի և Արևելքում փշխող մյուս պետությոճանների դեմ՝ 1664 թ. Կոլբերը վերանտրոգեց Ռիշելյոյի օրոք հիմնված և հետագայում նվազած արևելա-հնդկական և արևմտա-հնդկական առևտրական ընկերությունները, 1699 թ. Յրանսիան նույնիսկ վեց ռազմանավ ուղարկեց Հնդկաստան, որով նախատակ ուներ ամրակայելու առևտրական ընկերությունների դործունեությունը: Կոլբերն այս պահին դադութային ակտիվ քաղաքականություն էր մշակում Թուրքիայի և անգամ Իրանի նկատմամբ: Գտնվեցին մարտիկ, որոնք հասկացրին Լուդովիկոսի կառավարությանը, թե նման մի ձեռնարկությոճան կարող է հաջողություն ունենալ ցամաքային առևտրի գծով՝ փորձված հայ խաչանների օժանդակության և օգնության պայմանով միայն<sup>3</sup>: Այս միտքը մեռելածին մի մանուկ էր

<sup>1</sup> Ա. Ալպոյաճյան, նույն տեղում, էջ 112:

<sup>2</sup> SE' n Fr. Macler-ի հոդվածը՝ REA, II, էջ 40:

<sup>3</sup> Pouillet, նույն տեղում, I, էջ 131 և հտ., Du Mans, նույն տեղում, Appendice, XLV.

ինքյան: Հայ խոջաները շէին կարող օժանդակել ֆրանսիացիներին՝ առանց վնաս հասցնելու իրենց առևտրին<sup>1</sup>: Չնայած դրան, նույն միտքը հետադաշում ևս առաջ էր քաշվում հաճախ. ֆրանսիական միսիոներնները շէին հրաժարվում այն հուշարց, թե հայ խոջաները վերջիվերջո ի սպաս պիտի դնեն Լուդովիկոսին եթե ոչ իրենց մեղապարտ հոգիները, գեթ իրենց բազմաթիւ գլուխները: Ինքը Կուբերը բաժանում էր այդ հուշարը, այսպէս՝ կամենալով սիրաշահել հայ ձեռնարկողներին՝ նա իր խնամքի տակ էր առնում Ֆրանսիայում հայկական տպագրութեան սկզբնավորման գործը: Թե որքան անմիջական էր մանրակրկիտ այդ սեղանմենատատորի հարցասիրութեամբ հայ գրատպութեան գործում, երևում է թեկուզ այս փաստից. Ոսկան Երեանցին գանգատվելով, որ հայրենիքից բերած իր գրամագլուխը հատել է արդեն և հուշար Մարսելի հայ վաճառական Մեկրոն Նազարի մոտ շահվող իր 500 թալերի վրա է միայն՝ դիմում է մինիստրին և խնդրում նրանից՝ ստանալ և հզել իրեն այդ դոմարը<sup>2</sup>: Պիտի համոզված լինել, որ Կուբերը անհետանք չէր թողնի այդ դիմումը: Rouillé-ին գրած իր մի նամակում ինքն իսկ նշում էր հայկական տպագրութեան նշանակութեամբ Ֆրանսիայի առևտրական ակտիվ հաշվեկշռի տեսակետից: Մատնանշում էր, որ Ֆրանսիայում տպվող հայ գրքերը (հայ տպարանի տարեկան արտադրանքը հասնում էր այդ պահին 20 հազար էքզոփ) մեծ շրջանառութեան ունեն Մերձավոր Արևելքում: Ուստի, ասում է նա, հայ գրատպութեան մասին պիտի հոգ տանել ոչ միայն Մարսել քաղաքի շահատուցութեան տեսակետից, որ տպվում են հայ գրքերը, այլև այն նկատառումով, որ հայկական տպագրութեամբ կարող է գեպի այդ քաղաքը ներգրավել նաև այն հայերին, որոնք օգտակար կարող են լինել առևտրական ուրիշ ձեռնարկութեանների համար<sup>3</sup>: Կուբերի սպասումները շեն արդարանում ըստ երևույթին, և մտնալանդ կաթուղի եկեղեցին է, որ պիտի հիասթափված լիներ նրա սպասումներից: Ոսկանի ընկեր Սողոմոն Լևոնյանի դեմ սկսվեց հալածանք, որի պատճառով նույնիսկ բռնագրավվել էին նրա հրա-

<sup>1</sup> Հմտ. „Extrait de voyage Petit de la Croix, publié par M. Langlé dans la suite du Relation de Dourry Effiendy, Paris, 1810, էջ 147 և հա.՝

<sup>2</sup> Ոսկանի նամակը տպված է Correspondance administrative sous le regne de Louis XIV, Paris, 1855, IV, էջ 53:

<sup>3</sup> Տե՛ս Macleir Fr., Mosaïque orientales, Paris, 1907, էջ 62:

տարակած գրքերը և 20 տարվա ընթացքում կորստի մատնվել 3000 կտոր գիրք<sup>1</sup>։

Չքանսիական կրոնավորները արանջալու առիթ ունենին նաև Իրանում։ 1673 թվականին, երբ կապուչին պատերները հավատացած էին, թե բավական մոտեցել են հայերի նկատմամբ ունեցած իրենց դիտավորութունների իրագործմանը, ամենից առաջ հենց նրանց դավանակից եղբայրները, ավգուստինյանները և կարմեզյաններն էին (առաջինները գլխավորապես սպանացիներ, վերջինները բացառապես իտալացիներ), որ թուղթ ուղարկեցին Հոմ ացյ մասին, թե սրանց միաբանողական ծրագիրների մեջ շին կարող նըշմարել այլ բան, քան «աշխարհային մոտիվներ»։ Նոր-Ջուղայի խոջաները երկյուղի մեջ էին, թե իրազեկ գառնալով Հակոբ կաթողիկոսի բանակցություններին իրանական պետությունը կարող է հետքի վրա ընկնել և բանակցությունների համար վրիժառու լինել հայերից<sup>2</sup>։ Նման խնդիրներում Ջուղայի խոջաները շարունակում էին ցուցարեքել իրենց հնավանդ վերատուհն կամ բացասական վերաբերմունքը։

Նույն վերաբերմունքը կար մեծ չափով նաև կղերի շարքերում։ Ուշագրավ է այն, ինչ հաղորդում են ֆրանսիական աղբյուրները կղերական բախվող հոսանքների մասին։ «Մեզ ի նպաստ արամազրված բարձրադիր (հայ) եկեղեցականները, քահանաները ու եպիսկոպոսները, — տեղեկանում ենք այդ աղբյուրներից, — ցույց են տալիս մեզ այն, ինչ գրված է իրենց գրքերում առհին ձևագրերում այդ մարգարեությունների և մի քանի գուշակությունների մասին, որոնք ժամանակի ընթացքում կատարվել են արդեն։ Մյուսները, ընդհակառակը, թաքցնում են այդ գրքերն ու ձևագրերը, երկյուղ կրելով, թե ճանապարհից շեղված ժողովուրդը, աչք բացելով իրենց հերձվածի վրա, կգնա նորից գեպի ճշմարիտ եկեղեցու լույսը»<sup>3</sup>։ Չնույնպիսի աեսիլները, մարգարեություններն ու կանխագուշակությունները վերջիններս թաքցնում էին, ըստ երևվույթի, հայ այն մարդկանցից, որոնք, ինչպես հաղորդում էր միսիոներ Դյու-Մանը, համուլված էին, թե ֆրանսիական թագավորը պիտի հայտնվի մի օր և «խորտակի բռնավորների տիրակալությունը, հաստատի հայերի վերամիավորումը հոռմեական եկեղե-

<sup>1</sup> Macler Fr., *Mosaique orientales*, Paris, 1907, էջ 65։

<sup>2</sup> Chardin, *Նույն տեղում*, II, էջ 146 և հա.։

<sup>3</sup> Du Mans, *Նույն տեղում*, Appendicé, XXXVIII.

ջուն, վերականգնի վաղեմի անմեղությունն ու բարքերի պարզությունը, վերանորոգի կրոնական ջերմեռանդությունն ու բարեպաշտությունը»<sup>1</sup>։

Լուդովիկոս XIV-ը կամ նրա հաջորդներից որեւէ մեկը հայերի վաղեմի անմեղության ու պարզության վերանորոգողների դերում։ Ամառացին զիշերվա այս երազը ոչնչով պակաս չէ ազատագրական լեզնդի մյուս պատրանքներից և ուշադրավ է, որ մի պահ Հակոբ Զուղայեցին իսկ, տուրք վճարելով քաղաքական պարզամտության, տարվեց սին այն մտայնությամբ, թե «Ֆրանկների» օգնությամբ հնարավոր է «վաղեմի անմեղությունն ու բարքերի պարզությունը» վերականգնել, եթե ոչ Վատիկանում կամ Վերսայում, գեթ երբեմնի դրախտավայր Հայաստանում։

Կապուչինյան միսիոներներինց զատ, Սպահանում, կամ, ավելի ճիշտ, Նոր-Զուղայում, ուր, Երևանի խանից փախուստ տալով, դեղերում էր կաթողիկոսը, կար անգամ հայ եկեղեցականների մի հոսանք, որը կարող էր ծռած լինել նրա միտքն այն ուղղությամբ, թե Հոսմից պիտի ակնկալի պառակտված եկեղեցու փրկությունը մասեկեղեցու հետ միատեղված ազգը։ Անհավանական չէ, որ նույն այդ ուղղությամբ ազգած կարող էին լինել նրան նաև կաթողիկոսի իրանահայ պարտատերերը։ Այս պարագաներում ամսպասելի չէ Շարդենի հաղորդած տեղեկանքն այն մասին, թե միսիոներներին հետ կարողիկոսի վարած բանակցությունները հաճեցին այն բանին, որ նա հատուկ մի պատվիրակություն ուղարկեց Հոսմ<sup>2</sup>։

Ոչինչ հայտնի չէ Շարդենի ակնարկած «առաքելություն» հետևանքի մասին։ Բոլոր պարագաներում իրողությունն այն է, որ ստեղծված կացությունը շարունակում էր սպառնական մնալ, և կաթողիկոսը ստիպված եղավ շարունակել զիվանագիտական բա-

<sup>1</sup> Du Mans, նույն տեղում, Appendice, XXXVIII.

<sup>2</sup> Chardin, նույն տեղում, III, էջ 146 և հտ.։ Գոյություն ունի Զուղայեցու մի գրությունը, որը զույգ կազմած է Շարդենի ակնարկած այդ «առաքելություն» հետ։ Վենետիկի Միսիթարյան Մատենագարանի ցուցակում նշված է Զուղայեցու մի ազերսագիրը ուղղված Կղեմես պապին, որն ավարտվում է այս խոսքերով. «Գրեցաւ սիրոյ և սոգաչանոց նամակս յամի ծննդեանն Յիսուսի Քրիստոսի ՌՌՀէ (1675) և ըստ հայոց ՌՃԻԿ ի յամսեանն ղեկտեմքերի մէջ, Բ. Ս ա ը զ ի ս յ ա ն, «Մայր ցուցակ», Բ, էջ 1234։

Նահցույթյունները: Այդ մասին են վկայում այն գրությունները, որոնք Արևմուտք հասցեագրվեցին նրա կողմից 1676 թվականին՝ էջմփածնից Եվրոպա ուղևորված իտալացի մխիթներ Ֆրանցիսկոս Պիսկոպի և սրան գործակցող հայ-կաթոլիկ Պետրոս Պետիկի ձեռքով: Այդ գրությունները վերաբերում են Զուղայեցու՝ արևմտակալ-բուսական պետությունների հետ ունեցած հարաբերությունների նոր մի շրջանին, որին և հարկ է ծանոթանալ հիմա:

Դոմինիկյան կրոնավոր Ֆրանցիսկոս Պիսկոպը, երկրորդ անգամ լինելով, 1673 թ. ժամանել էր Հոտմից Իրան, այս անգամ որպես Նախիջևանի գավառի հայ-կաթոլիկ համայնքների և եպիսկոպոսարանի վերահսկիչ և պապական աթոռի «ընդհանրական փրքար»: Հաջորդ տարում Նախիջևանի գավառի արքեպիսկոպոս Մատթեոսն ուղևորվեց Ղազվին՝ շահի արքունիքը: Պիսկոպը մնաց գավառում որպես փոխանորդ: Մի տարի անց, Եվրոպայից վերադարձած Ազարիա Զահկեցի և Անտոն Ապրակունիսեցի մխիթներին հետ Պիսկոպը ևս մեկնեց Ղազվին՝ Եվրոպայից շահի հասցեով ստացված թղթերը մատուցելու և իրեն արված ցուցումները կատարելու համար: 1675 թ. սեպտեմբերին Պիսկոպը ստանձնեց շահի կողմից պապին և գերմանական կայսրին հասցեագրված պատասխանները անդ հասցնելու հանձնարարությունը:

Մեզ հասել է Պիսկոպի հայերեն մի գրությունը՝ գրված Աբարաներ քաղաքում, 1676 թվականի փետրվարի 13-ին, ուր նա իրեն կոչում է «աստուածաբանութեան վարդապետ, վիքար ջններալ տեսուչ և կոմիսար փոխանորդ եպիսկոպոսի, Տափրակ առաքելական ի Հայաստանոյ Պրոֆինցի ի կարգէն քարտուղաց»: Այս գրությունից հայտնվում է, որ Նախիջևանի գավառի աշխարհային հոգսերը թեթևացնելու համար Իրանի շահի առաջ միջնորդելուց դատ, նա պաշտոն է ունեցած եղել պապի անունից ներումն քաշխելու Նախիջևանի գավառի կաթոլիկներին՝ սեղանակապտություն (== եկեղեցի կողոպտելու), ազգապղծության (== չհաս պսակի) և վաշխառվության համար նրանց վրա կուտակված նզովք ու բանադրանքից<sup>1</sup> Պապական եկեղեցու բարքերն ու մորալը բավականաչափ բնորոշում են հենց Նախիջևանի կաթոլիկ համայնքների կողոպտիչներին երկնային պատուհասներից փրկադործելու համար Պիսկոպին արված այս կարգի լրագորությունները...

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 2037, էջ 187բ

Միառժամանակ Նախիջևանում դեգերելուց հետո, վերը նշված Պետիկի հետ Պիսկոպը այս անգամ մեկնում է Երևան: Հանդիպումներ ունենալով Հակոբ Զուլալյեցու հետ, Պիսկոպը ստանում է կաթողիկոսից միաբանողական թուղթ և հատուկ զիմումներ պապի և կայսրի անունով: 1676 թվականին Պիսկոպը և Պետիկը Ռուսաստանի վրայով մեկնում են Արևմուտք:

Այս տեղեկությունները քաղում ենք լատիներեն լեզվով Պետիկի լույս ընծայած և մեր կողմից արդեն քանիցս վկայակոչված սովոր պրքից, որ լույս է տեսել «Cehil Sutan» վերնագրով Վիեննայում, 1678 թվականին:

Հիմնականում ակղապրական մի գրվածք է դա, ուր նկարագրվում էր Սպահանի «Ձըհեկ Սըթուն» կոչված քառասունասյուն հռչակովոր ապարանքը, կցելով թուղթիկ ակնարկներ առ դիտողություններ պարսից անցյալի և մանավանդ նրանց ներկայի՝ կրոնի, սովորույթների, կենցաղի, հարեան ժողովուրդների և հարակից այլ իմացարժան բաների մասին: Ներկա գեպքում հատկապես հետաքրքրական են գրքի այն հատվածները, որոնք վերաբերում են իրանահայերին, մասնավորապես Նախիջևանի հայ-կաթողիկ համայնքներին, և մանավանդ այն էջերը, ուր հեղինակը գրում է իր կամ իր ու Պիսկոպի առաքելության մասին:

Ինչպես հայտնվում է գրքից, Պետրոս Պետիկի, գրքի հեղինակի, նախնիքը ծագում են Անիի հայ ազնվական մի ընտանիքից, որը հավակնում էր սերված լինելու հին հայ թագավորական տոհմից՝ Արշակունիներից<sup>1</sup>: Հեղինակի պապը, Հակոբ աղա Պետիկը, Շահ-Աբրահամի կողմից Բաղդադի պաշարման ժամանակ գերված, ազատություն ստանալով արժանանում է սուլթան Մուրադ IV-ի շնորհին՝ հասնում զինվորական բարձր գիւրբի և ի վերջո, որպես հարկերի կապալառու մեծ հարստություն զիջելով, Հայկում կառուցում իր համար ընդհանուր վարմանը շարժած ապարանք՝ մարմարյա սրահով, ալլե եկեղեցիներ՝ հայերի, հույների և մաջոնիսների համար: Սուլթան Իբրահիմի օրոք նա նահատակվում է իրրե «բրիստանություն ախոյան» և նրա հարստությունը գրավվում հարբունիս: Նրա սրգին՝ Մուրադ Պետիկը, հեղինակի հայրը, Հալեպից խուսափում է Սպահան, ուր բարձր գիւրբի տեր էր նրա հորեղբայրը, Ասովածապով Պետիկը կամ, ինչպես ըստ ազգամական վերակոչել էին սրան պարսիկները՝ խոջա «Աբեղիկը»: Վերջինիս մեր հեղինակը նույնացնում է իտալացի ուղեգիր Դեյլա Վալլեյի մոտ հիշատակված Նոր-Ջու-

<sup>1</sup> Bedik, նույն տեղում, էջ 457:



դաշի նշանավոր մեծատուն խոջա Ասավածատուրի կամ խոջա Ավետիքի հետ՝:

Անապապուց է և բռնաձիգ հեղինակի հետու նախնիների անեցիտությունն ու Արշակունի ծագումը: Ինչ վերաբերում է հալեպցի նախնիների մասին պատմված մանրամասնություններին, անհնարին չէ, որ դրանք ունենան սրոշ հիմք. Պետիկը կարող էր ազգակցություն ունեցած լինել սուլթան Մաւրապի օրոք Հալեպում գլխաաված աչլուսա ևս հայտնի խոջա Պետիկ շեկեպիի հետ, որի գլխապատույա վերելքն ու սրենթաց անկումը կարող էր հետք թողած լինել մեր հեղինակի մանկություն հիշողությունների մեջ<sup>2</sup>:

Հոր փախուստից հետո Պետիկը, մոր խնամքին մնացած մի երեխա, ճողորում է սուլթանական հալածանքից: Հալեպի միսիոններները ուղարկում են նրան Հոռոմ, ուր նա մանում է Ուրբանոս պապի հիմնած Պրոպագանդի գործըր: 1669 թ. նա ավարտում է աչգ դպրոցը և մեկնում Իրան, ուղեկցելով Նախիջևանի արքեպիսկոպոս Մատթեոս Հովանիսեցուն, երբ վերջինս, Կղեմես IX պապից լիազորված և Լուզովիկոս XIV-ի Թոսկանաշի մեծ դքսի և վենետիկյան սենատի հատուկ հանձնարարականներով հղվում էր Սպահան՝ Նախիջևանի կաթոլիկների օգտին արտոնություններ հայցելու<sup>3</sup>: Աչգ բանակցությունների շնորհիվ կաթոլիկ համայնքները «խաս» հայտարարվեցին նորից, կամ, ինչպես բացատրում է Պետիկը՝ ճանաչվեցին «ենթակա հատկապես և անմիջապես շահին, ազատ մասնավոր սրեկ իշխանի իրավասությունից»<sup>4</sup>:

Սակայն աչգ չէր նրա բուն առաքելությունը: Նախիջևանի խոջա-դիրը առիթ էր, բայց ոչ նպատակ: Մատթեոսի բերած թղթերի մեջ վենետիկի և ըստ երևույթին նաև պապի կողմից առաջարկություն էր արվում Իրանի կառավարությունը՝ գաշինք կնքել Թուրքիայի դեմ<sup>5</sup>: Այս ախներև է այն զեկուցագրից, որ 1670 թ. օգոստոսի

<sup>1</sup> Bedik, նույն տեղում, էջ 458:

<sup>2</sup> Պետիկ շեկեպիի և նրա ազգատոհմի մասին տե՛ս Ա ի մ ե ո ն դ պ ի ր Լ և հ ա ց ու ռ Վեղկերությունը», «Հանդես տմսորյա», 1934, էջ 86 և հա. և ն. Ա կ ի ն յ ա ն ի «Հայ կյանքը Հալեպի մեջ 1605—1685 թթ.» հոդվածը, «Հանդես տմսորյա», 1933, էջ 317 և հա.: Ի գեպ՝ Ա կ ի ն յ ա ն ր մ եր հեղինակի գրքին ծանոթ չէ և նրա ազգեցություն խնդիրը հալեպցի Պետիկների հետ չի շոշափում բնով:

<sup>3</sup> Հմմտ. «Բանասեր», 1899, էջ 258 և հա., Բ. Պ., Նշխարք մասնագրություն հայոց, էջ 25, 439 և հա. և մեր «Նյութեր հայ ունիտորական պատմագրությունից» հոդվածը, «Արարատ», 1915, էջ 64 և հա.:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 385:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 439 և հա., և Berchet, նույն տեղում, վավերագիր № 54—59:

10-ին Մատթեոս Հովանիսեցին հզեց Վենետիկի սենատին: Պարզվում է, որ զեկուցողն ուղարկված է եղել Իրան՝ ներգրավելու իրանշահին թուրք-վենետիկյան պատերազմի մեջ, որը սակայն ավարտվեց 1669 թ. վենետիկցիների կապիտուլյացիայով՝ նախքան Իրան կհասնեի Մատթեոսը: Նույնը երևում է նաև Վենետիկի սենատին շահ Սուլեյմանի հղած պատասխան-համակից, Շահը պատրաստակամություն էր հայտնում ընդառաջելու հանրապետությանը, եթե վերջինս մտադրվում ունենա վերսկսել պատերազմը<sup>1</sup>:

Ինչպես Վենետիկի սենատին, այնպես նաև եվրոպական մյուս պետություններին ուղղված պատասխանը տեղ հասցնելու համար հարկ եղավ Մատթեոս արքեպիսկոպոսի հանձնարարություններով 1670 թ. Իրանից Արևմուտք հղելու վերը հիշատակված Ազարիա Ջուլաչեցի և Անտոն Ապրակունիսեցի հայ գոմինիկյաններին, որոնցից առաջինը իտալական վավերագրերում նշվում է Մարիադի-Սան-Ջովաննի, երկրորդը՝ Անտոնիո դի-Սան-Նազարո անուններով:

Արևմուտք ուղևորվելու համար 1673 թվականի հունվարին դոմինիկյան այս սուրհանդակները հասան Մոսկվա: Մոսկվայի դեսպանական պրեկադլին տված իրենց բացատրության մեջ նրանք հավաստում էին այն իրողությունը, որ ժամանած են եղել Իրան՝ պապի, ֆրանսիական թագավորի, Վենետիկյան հանրապետության և թուսկանական դուքսի՝ շահին հասցեագրված գրություններով: Այդ գրությունների մեջ եվրոպական այդ իշխանավորների կողմից դաշինքի հրավեր էր արվել Իրանին՝ Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու մասին: Սուրհանդակները վերագրամուտ էին հիմա՝ ունենալով իրենց հեռ իրանշահի ընդառաջող գրությունները, ուղղված պապին, գերմանական կայսրին, սպանական և ֆրանսիական թագավորներին, Վենետիկի հանրապետությանն ու թուսկանական դուքսին<sup>2</sup>: Հասնելով Վենետիկ՝ դոմինիկյան կրտսավորները առաջարկում էին սենատին՝ հատուկ լիազորություններով Իրան հղել դիվանագիտական փորձառություն ունեցող մի մարդու: Պարոսից արքունիքի հեռ բանակցություններ վարելու համար, ասում էին նրանք, ոչ Նախիջևանի եպիսկոպոսը և ոչ էլ տեղացիներից սրեկ մի ուրիշը, ինչքան էլ դիտուն լինեն զրանք՝ անկարող են անել այն, ինչ կարող է անել եվրոպայի ընթացիկ կացությանն ու պահանջներին ծանոթ և

<sup>1</sup> Հմտ. «Թանասեր», 1899, էջ 234 և հտ.:

<sup>2</sup> «Армяно-русские отношения в XVII в.», I, էջ 96 և հտ.:

համապատասխան ցուցումներով գոտեպնդված մի անձնավորու-  
թյուն. միայն այնպիսին կարող է ընդունել տալ շահին: քրիստոնյա  
աշխարհի համար օգտարևը վճիռներ<sup>1</sup>: Հիրավի, երբ Վենետիկը, Հոս-  
մը, Ֆլորենտիան և Փարիզն այցելելուց հետո իրանշահին՝ բերած  
պատասխաններով դոմինիկյան կրոնավորները վերադարձան հայ-  
րենիք, փնջպես տեսանք, Ղազվին ուղևորվելու համար Նախիջևանից  
նրանց միացավ պատեր Պիսկոպոս: Սրան է, որ տեղում գործակցելու  
էր այսուհետև Պետիկը, Հոսմի և Վենետիկի կողմից Պիսկոպոսին էին  
հանձնարարված այն բանակցությունները, որոնք նրանից առաջ  
վարել էին Իրան ուղարկված Անտոնիոս դի Ֆրանզոզիի գեսպանու-  
թյունը<sup>2</sup>, Հակոբ Զուղայեցու կողմից հղված Առաքել Բոբիկը և  
Նախիջևանի հայ կաթողիկոսների առաջնորդ Մատթեոս Հովանի-  
սեցին:

Սպահանում կառավարական շրջանների հետ շփման մեջ մը-  
տած հայազգի Պետիկը ևս հող էր պատրաստում հակաթուրքական  
դաշինքի համար: Սակայն նրան զբաղեցնում էր նաև մի այլ խնդիր—  
հայ միջավայրում կաթողիկոսական պրոպագանդ ծավալելու խնդիրը:  
Հրապարակված զրից ակնհերև է դառնում նրա մոտ շփումը մեզ նա-  
խածոնոթ Բաֆայել դյու-Մանի հետ: Սրա պես նա ևս հետամուտ էր  
հայերի մեջ կրոնական պրոպագանդ ծավալելու գործին, թեպետև  
ունեի վերջինից տարբեր քաղաքական կողմնորոշում:

Պետիկը կատարում էր այդ գործը ծրագրված շրջահայեցու-  
թյամբ, ջանալով շահել ամենից առաջ Նոր-Զուղայի հայ եկեղեցու-  
կան և աշխարհական գլխապետների համակրանքը: Այսպես, երբ 70-  
ական թվականների սկզբներին Լուդովիկոս XIV-ը Կ. Պոլսի դես-  
պան զը-Նյուանթելի միջոցով կամենում էր տեղեկանալ հայերի  
դավանական հայացքների մասին՝ նա հանդես է դալիս հայերին  
բարյացակամի դերում: Այս մասին տեղեկանում ենք 1681 թ. դեկ-  
տեմբերի 1-ին Լուդովիկոս XIV-ին ուղղված մի գրությունից, որ  
Նոր-Զուղայի հայ ղեկավարները ետ մղելով «չարափառության»  
մեղադրանքը՝ շարադրում են իրենց դավանանքը: Հիշատակելով զը-  
Նյուանթելի հարցապնդման մասին՝ ջուղայեցի հայ եպիսկոպոս-  
ները գրում են. — «Գրեաց և սա (— զը-Նյուանթելի) (առ) բարմա-  
հանճար պատրի Բաֆայելն (իմա՝ Դյու-Մանը), որ ի կարգէ կափառ-  
չինաց, գիտել ճշմարտապէս զմեր կարծիս և զմտածութիւնս վասն

<sup>1</sup> „ Армяно-русские отношения в XVII в. », I, էջ 236 և հտ. :

<sup>2</sup> Berchet, նույն տեղում, էջ 218:

այնպիսեաց առարկութեանց: Իսկ նա ի ձեռն փառաւոր իշխանին մերոյ քէլանթար Աղափիրուն, միջնորդութեամբ սիրելոյն մերոյ Պետրոսին (իմա՞ Պետրիկին) լաթինական ուսմամբ կարի վարժեցելոյ, եցոյց մեզ գրեալան: Վասն որոյ հարկ եղև մեզ գրել առ ձեր մեծափառութիւնդ. ղանընդունելութիւնս մեր»: Այս գրությունը ստորագրել են Սպահանի առաջնորդ Դավիթ, Հակոբ Զուղայեցու «հաջորդ» Իսահակ և Ամենափրկիչ վանքի վանահայր Ստեփանոս արքեպիսկոպոսները: Գրութեան մյուս էջի վրա կարդում ենք. «Ես Յիսուսի Քրիստոսի և հրամանուց մեծութեան ծառայ Աղափիրս քալանթար Սպահանի Զուղոյ և ամենայն քննխուղութեամբ իմով ընդունիմք և հետեւիմք, որպէս գրեալս կա եպիսկոպոսաց մերոց. խընդրեմք հրամանաց մեծութենէն մեզ շահմարել որպէս զուր ամբաստանեալ եմք»: Հետեւում են Նոր-Զուղայի վտրդապետների, քահանաների և քեղիսուղաների նուէնիմաստ հավաստիացումներն աւստորագրությունները<sup>1</sup>:

Սակայն պրոպագանդայի դժով Պետրիկի ամենանշանավոր դործը Հակոբ Զուղայեցու դավանարանական «դարձն» էր: Իր գրքում նա վեր է հանում այն հանգամանքը, թե այդ ուղղութեամբ ութ տարվա ընթացքում թափած իր նախանձահուշկ աշխատանքն ավարտեց, հասնելով ծերունի կաթողիկոսի «դարձի» ծիսակատարութեանը<sup>2</sup>: Թե որքան մեծ կարեւորութեան էր արվում այդ դործին, երևում է այն փաստից, որ 1673 թվականին՝ Կղեմես X պապը Հայաստան էր հղել պատեր Պիսկոպին, նրան հանձնարարելով «ամենայն ուշադիր խնամքով զննել Հայաստանի հերձվածող Հակոբ պատրիարքի տրամադրութեանը, աչքի առաջ առնելով, որ Հռոմի եկեղեցու ծոցը մտնելու նրա բարի արամադրութեան մասին դիտվել են ոչ թեթև նշաններ»<sup>3</sup>:

Պետրիկը մանրամասնորեն նկարագրում է Հակոբի «դարձը» ծիսակատարութեանը, որը, իր ասելով, տեղի էր ունեցել 1676 թվականի ապրիլի 2-ին, էջմիածնում՝ խոներամ աղթավորների ներկայութեամբ իջման սեղանի առաջ, պատեր Պիսկոպի հանդիսապետութեամբ, լատին կրոնավոր պատեր Ռայմոնդոյի և «թարգման» Պետրիկի աւրնթերութեամբ: Հրաժարվելով հայ եկեղեցու «հերձվա-

<sup>1</sup> Հայկական ՄՍՌ Մատենադարան, Գրեղին Հովսեփյանի արխիվ, Բյթապ. № 91, վալ. № 6, Ա, էջ 27 և հտ.:

<sup>2</sup> B e d i k, նույն տեղում, էջ 353:

<sup>3</sup> Raguagli del viaggio fatto da Padri dell Ordini di Predicatori, Napoli, 1695, էջ 256:

ծից», գրում է Պետիկը, կաթողիկոսը պաշտոնական թուղթ ուղարկեց պրոպագանդայի նախագահ և հոգարարձու կարդինալ Ալֆրիբիին, ինչպես նաև Կղեմես X պապին ու կաթողիկ աշխարհի մի շարք իշխանների հասցեններով: Իր գրովյունների մեջ նա նշում էր Պիսկոպի և Պետիկի անունները, որպես իր հավատախոստովանության, իր խոհերի ու ներկա իր կացության ակնաստես ու ճշմարտապատում վկանների<sup>1</sup>:

Հեղինակի այս հաղորդումը հավաստելու կամ հերքելու համար դժբախտաբար չկան կողմնակի սովյալներ: Չբացասելով կաթողիկոսի հետ տենցած դադափարական կամ քաղաքական կոնտակտի մեջ մանկու հնարավորություն՝ հարցականի տակ ենք թողնում դրա դրսևորման աջն մանրամասնությունները, որ նկարագրում է այստեղ հեղինակը:

Հետաքրքրականը ծիսական արարողություններն ու դավանաբանական հավաստիացումները շեն, այլ աջն մանրամասնությունները, որ հաղորդում է գրքի հեղինակը, այդ ամենի մախապատրաստող իրագրության կամ այդ ամենի հետ լծորդվող սպասումների մասին:

Մուսլ գույներով է նկարագրում Պետիկը Հայաստանի կացությունը: Այդ երկիրը, գրում է նա, տառապում է ոչ միայն օտարների լծատանջությունից, այլև հարազատների կեղևքովներից:

Միսիոներական նախապաշարումների աշքանոցը կաշկանդում է նաև մեր հեղինակի տեսողությունը: Նա ևս համոզված է, թե հայերի դժբախտության աղբյուրն այն է, որ տրոհված են մի քանի կաթողիկոսությունների և սր սրանք բոլորն էլ միապես պառակտված են «մայր եկեղեցուց», «կաթողիկե» Հռոմից, որի թևարկության

<sup>1</sup> „Sicut et ipsomet Clementem X, aliosque quosdam principes Catholicos litteras, inserens me Patrumque Piscopum tamquam suae mentis astatusque praesentis et professionis exacte oculos testes“ (նույն տեղում): Պիսկոպի մահից հետո. Նեպոլում լույս տեսած Raguagli del viaggio գրքի հավելվածի բաժնում „L'11011 spe li zione del P. Francesco Piscopo in Armenia e Perso“ խորագրի ներքո. գրի են առնված հակոր Ջուզզեցու գարձի մասին ամփոփված նույն տեղեկությունները, սակայն ինչպես նշված է գրքի 349 էջում, գրանք ամբողջովին քաղված են Պետիկի տեղեկագրից: Պիսկոպի առաքելությանը նվիրված այդ հրատարակությունից հայտնի է դառնում ուշագրավ այն փաստը, որ նա հանձնարարություն է սենցած եղել մեկնելու կրկին Արևելք, այս անգամ վրաց կաթողիկոսին շքարձի բերելու՝ նպատակով, սակայն վերահաս մահը նրան հնարավորություն չի տվել իրագործելու արված հանձնարարությունը:

տակ արեմայան ժողովուրդներն առատորեն վաչկու։<sup>1</sup> Են իրենց երկրրների մատակարարած կաթն ու մեղրը...<sup>1</sup>։

Այս կապակցութեամբ Պետիկը մասնավորում է իր խոսքը Հակոբ Զուղայեցու մասին։ Գրեթե 80-ամյա մեծ ու արժանահարգ այս կաթողիկոսը, — գրում է նա, — երեսնամյա երիտասարդի կայառուութեամբ հավատացած է, թե ապրելու է մինչև այն օրը, երբ ինքը Բրիտանիական խաչի առաջնորդությամբ նկատված կովի մեջ հաղորդյուն կտանի մահմեդականների վրա։ Ընդամիջ կաթողիկոսը մեծապես հաշվի է առնում յուրայինների փառաբանությունն ու փանակական մեծությունը և միաժամանակ ապավինում «համեական» բազկի զորավիգութեանն ու օգնութեամբ՝ համաձայն ս. Ներսեսի մարգարեութեան. այս ակնկալութեամբ էլ սրբացած իր նախորդների պես նա ևս կամենում է միավորված տեսնել հայ եկեղեցին հոռմեակաճ եկեղեցու հետ<sup>2</sup>։

Այս տողերի մեջ բացահայտվում է Պետիկի և Պրահուտի առաքելութեան խնդիրներից մեկը. ժամանելով 1677 թ. Վիեննա, նրանք ներկայացան գերմանական կայսր Լեոպոլդ 1-ին՝ հանձնելու նրան Հակոբ Զուղայեցու ուղղած թուղթը և արժարժելու նրա առաջ կաթողիկոսի բաղձանքները։ Վերջին նպատակով Պետիկը լույս քնծայեց նաև կայսրին նվիրված իր գիրքը, որ ներկայացնում է Հայաստանի վիճակն ու ակնկալությունները և ավարտում իր խոսքը Հարսուրդյան տանը ձոնված քնդարձակ ներբողյանով. այս ամենը, կարծում էր նա, պիտի ջերմացներ Հարսուրդյան վեհապետի

<sup>1</sup> Familiaris autem ipsis divisionis, et scissurae objeceram persaepta non esse aliam causam nisi divisionem et scissuram cum Ecclesia universali, qua temerari resistunt Romano Pontifici unde et cum suis quotidiano experimento aflagantur, atque ab infidelibus arduo jugo torqueantur... Praeterquam quod diris vexentur modis per tyranidem infidelium, a pastoribus suis ecclesiasticis, discolis utcunque et sana doctrina carentibus magis patriuntur tributorum exactiones; quas tamen obsequio maximo tolerent, iisque cum veneratione deferunt ad exemplum pluribus fidelibus Europae, quibus non ut illes, terra, lacte et melle manus lavet\* (Եդիկ նույն տեղում, էջ 356)։

<sup>2</sup> „Est coeteroquin Patriarcha hic „infernissimus Machometanis, sentens se mortem non habiturum, donec bello sub crucis Christi inito triumphum faciat adversum eos; confidens de robore et multitudine fortissimae gentis suae, solumque sperans auxiliatrices manus, seu assistentiam benevolam Romanorum, juxta Prophetiam Antecessoris sui Nerses: sic quae velle se renovare amicitiam, quam pii sanctique Antecessores Armeni benevolentissima unitate cum Romanis habuere“ (նույն տեղում, էջ 352)։

սիրտը՝ Հայաստանի ազատութեան գործն իր ձեռքն անհետ  
համար...

Թե խսկապես կաթողիկոսի գրութեան մեջ խոսքը Հայաստանի  
ազատութեան մասին էր, այդ ակներև է Պետիկի գրքից, ուր քաղ-  
վածքներ են բերված այդ գրութեանից: Այդպէս ասված է, թէ կայսրի  
վրա է «անհավատների տանջանքներից ազատվելու մեր հույսը»<sup>1</sup>:

Ակներև է, որ Պետիկը հանձնարարութեան ունեւ հայտնելու  
Վիեննայում հայերի «ազատվելու հնարի» մասին կաթողիկոսի  
անձնական բաղձանքները և առ այդ զեկուցելու կայսրին նրա սըր-  
տի «բաղանքները»: «Նա (Պետիկը), — այսպէս է գրում կա-  
թողիկոսը կայսրին, — երկար տարիների ընթացքում եղել է իմ  
զրուցակիցը և իր սեփական աշխարհով տեսել և իմացել մեր սրբա-  
տութեանը: Նա գերազանց գովքի արժանի գործունեութեան է ունե-  
ցել անհավատների մեջ և, նշանակում է, ի վիճակի է բացահայ-  
տելու ձեր մեծութեան առաջ մեր գաղանքը»<sup>2</sup>:

Արդյոք շունեի<sup>3</sup>ն Պիսկոպը և Պետիկը գրավոր հանձնարարու-  
թեաններ ուրիշ հայ իշխանավորներից — մասնավորապէս հայ մե-  
լիքներից, որոնց նրանք համոզիպած կարող էին լինել — այդ մա-  
սին տշինչ չի ասում մեզ այս պիտքը: Տեղեկանում ենք միայն, որ  
Պիսկոպի հետ միասին, երկիցս ունկնդրված լինելով Լեոպոլդ  
կայսրի կողմից, Պետիկը նրան համառոտակի զեկուցել է կաթողի-  
կոսի, հայ ժողովրդի և Երանի բովանդակ քրիստոնեութեան տառա-  
պանքների և ավատրիական տնից նրանց տնեցած ակնկալութեաննե-  
րի մասին<sup>3</sup>: Սակայն ըստ Պետիկի, Ջուզպեցիին հիմնականում հա-  
յերին, և ինչպէս սլոտի տեսնեմք, նաև Երանում սպորդ մշուս  
քրիստոնեաներին էր վերապահում Հայաստանի ազատագրման  
խնդրի լուծումը. գրաից մեկնված բազուկը կամ գրաից ստանալիք

<sup>1</sup> „Vos enim etis nostra laus atque gloria, et per vos gloriamur in-  
ter infidelibus gentes, et oculi nostri sperunt in vobis et inventiatur mo-  
dus liberandi nos as aerumnis nostris“ (Նույն տեղում, էջ 406):

<sup>2</sup> Qui per multos annos nobis cum conversatus, et per propriis ocu-  
lis suis quidditatem nostram vidit et scivit et cum eximia laude floruit in-  
ter infideles, qui igitur omnia nostra ariana patefaciet Majestati vestrae  
(Նույն տեղում, էջ 354):

Մեզ չհաջողւեց հայտ բերել Ջուզպեցու գրութեան բնագիրը: 1912  
թվականին, ի պատասխան մեր հարցման, Վիեննայի պետական գրիտնի գի-  
րեկցիայից գրավոր տեղեկանք ստացանք այն մասին, թէ այդպիսի գրու-  
թեան ավատրիական Hof-Haus und Staatsarchiv-ում չի գտնված:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 446:

«բարյացակամ զորավիգությո՞նք» օժանդակ դեր պիտի կատարեր միայն: Այլ կապակցութեամբ Պետիկի դրքից տեղեկանում ենք, թե ինչպես էին պատկերացնում իրենց հայ «ժողովուրդը» կամ հայ «իշխանները» բաղձալի «ազատութեան հնարը»: Գրքի հեղինակը պատմում է այն մասին, որ «հայ իշխաններն ու պաշտոնատերերը» հույս ունեին բարեփոխել իրենց վիճակը «մահմեդականներին» դեմ «զալտնի հարաբերությունների մեջ մտնելով» իրենց հարևան մյուս քրիստոնյա ժողովուրդներին հետ, ըստ սրում ակնարկը մի շարք իշխանությունների արոհված վրացիների մասին է, անշուշտ՝ «Գանդատվում են և ինձ էլ ցավով գանդատվել են,— ավելացնում է Պետիկը,— որ հարևան քրիստոնյա իշխանների մեջ չկա մեկը, որի հովանավորությամբ և օգնությամբ նրանք կարող լինեին վշրել իրենց սարկովյան շղթաները: Գիշեր-ցերեկ այս մասին է հայերի հոգսը, որի համար թող ստաված օգնի նրանց: Հայերը, ասում է Պետիկը, շարունակում են համառել իրենց հերձվածի վրա (ըստ երևույթին մեր հեղինակը գիտակցում է պարզ, որ Զուղայեցու «հավատախոստովանությունն» ինքյան դեռ վերջ չէր դնում հայերի սարսափելի «հերձվածին»), բայց և այնպես՝ հակադրվելով անօրեններին՝ նրանք պարծենում են քրիստոնյա իշխանների հզորութեամբ<sup>1</sup>:

Պարզ է, որ քաղաքական ճնշող լծի դեմ արամադրված և հայ ու վրաց ժողովուրդների ապստամբության հեռանկարով ոգեշնչված՝ Զուղայեցի կաթողիկոսը, «բարյացակամ զորավիգությո՞նք» էր սրտնում քրիստոնյա մեծ պետությունների կողմից, տարված այն պատրանքով, թե հեռու չէ օրը, երբ զորացող խաչը հաղթանակ է տանելու նահանջող մահիկի վրա: Այստեղ նորից ուժի մեջ էր մտնում հայ ազատագրական շարժման մեջ հարատևող այն հայացքը, թե քրիստոնյա եվրոպան և նրա հոգևոր պետը—Հոմի պապը—պիտի առաջնորդեն ու նպաստեն մահմեդական լծի տակ տառա-

<sup>1</sup> Sicut et hoc in Regno plurimi Armeni, qui principatibus et officiis fruuntur: speranturque multum emolenti ex occulta correspondentia harum dictarum christianarum nationum contra Machometani perfidiani. Conqueruntur autem. sicut et mihi condolenti conquesti sunt, carere se brachio potentioris enjuscum christiani sibi vicini, cujus patronio et auxiliatrice manu rampere possent vincula durissimae servitutis. Die porro noctuque non efficiunt excogitare media infinem suumquae Deus ter optimus iisdem pro sua gloria largiatur. Coeterum acerrissima dogmata sua Christiana licet in Schismata constituti, observant glorianturque de potentissimis Christianis Principibus contra infideles\* (նույն տեղում, էջ 341 և հտ.):



պող արևելյան քրիստոնյաների ազատմանը: Զուգայեցու կողմից Պետիկին և Պիսկոպին արված հանձնարարությունը հին այս հայեցակետի կրկնությունն է միայն:

Ինչպես նախընթաց բանավարությունների ժամանակ, Պետիկի պատկերացմամբ հայ ազատագրական շարժման սուր ծայրը ուղղված էր Թուրքիայի դեմ: Ճիշտ է, կաթոլիկ պրոպագանդի զաղափարախոս Պետիկի համար Իրանը ևս «անհավատների» երկիր էր: Նա մատնանշում է քրիստոնյա հպատակների ճնշված ու հարստահարված վիճակն Իրանում և հաճախ հակադրում հայ ազատագրական շարժումը «մահմեդականության» առհասարակ: Բայց վերհիշենք նախ մեր հեղինակի ինքնակենսագրությունը, ուր, փնչպես տեսանք, իշխում է Թուրքիան նշավակելու տենդենցը: Այս մտարերենք այն, որ նա Իրան է ժամանել՝ հանձնարարություն ունենալով պայքարի իրանա-վենետիկյան ճակատ հարդարելու Թուրքիայի դեմ: Ճիշտ է, ինչպես գիտեցինք, այդ հանձնարարության իրագործումը ձախողեց: Մատթեոս Հովանիսեցին և Պետրոս Պետիկը Իրան հասան 1668 թվականին, թուրք-վենետիկյան պատերազմի ժամանակ, իսկ մի տարի անց, 1669 թվականին, պատերազմն ավարտված էր արդեն: Կանդիայի պարտությունը վերջ էր դնում Ֆրանսիայի օգնությունը Կրետեի համար մղված պատերազմներին: Վենետիկը հարկադրված եղավ հաշտություն կնքել թուրքերի հետ: Վենետիկի և Ֆրանսիայի հանդեպ Իրանի կառավարությունը—ինչպես երևում է բանակցությունների ընթացքից—գտնվում էր հուսախաբ ակնկալողի վիճակում<sup>1</sup>:

Բայց պարտված Վենետիկի և նրա դաշնակցի՝ Ֆրանսիայի փոխարեն հակաթուրքական պայքարի նախաձեռնությունն անցնում էր Ավստրիային և սրա ղեկավարությունը կազմակերպվող արևելաեվրոպական կոալիցիային, որի մեջ Վենետիկը երկրորդական տեղ էր դրավում: Արևելաեվրոպական կոալիցիան, որի ղլխավոր դերակատարներն էին Ավստրիան, Լեհաստանը և փոքր-ինչ հետո նաև Մոսկովյան պետությունը, շահագրգռված էր համախմբելու Թուրքիայի դեմ Արևելքի մանր ժողովուրդներին, սրանց թվում նաև հայերին ու վրացիներին:

Նոր իրագրությունը պիտի անդրադառնար, հարկավ, ինչպես

<sup>1</sup> Հմմտ. Berchet, նույն անգում, վավերագրեր №№ 54—59 և Bedik, նույն անգում, էջ 439 և հա.:

Իրանի քաղաքականությունը, այնպես և այս բանավարությունը, որի առաջադրած խնդիրները Պիսկոպը և Պետիկը չէին անջատում Իրանի քաղաքականության խնդիրներից: Նախքան կփամաներն էջմիածին, 1675 թվականին, Ղազվիճում նրանք Իրանի կառավարությունից հանձնարարություններ բնօրինեցին Վիեննա և Հռոմ հասցնելու համար: Իրանի արտաքին քաղաքականությունը զեկավարող Շեյխ Ալի խանը, որի մասին արտակարգ մեծարանքով է խոսում մեր հեղինակը<sup>1</sup>, նրանց պատվիրեց Իրանի բարեկամության հավաստիքը հաղորդել գերմանական կայսրին և նրա հետ զաշնակցած քրիստոնյա իշխաններին: «Մեր խնդիրն է, — ասել էր իրանական այդ վարչապետը, — ամբայնևլ բարեկամության զաշինք Հռոմի ձեր քահանայապետի, հռոմեական կայսրի և քրիստոնյա մյուս իշխանների հետ՝ միշտ վառ պահելով ընդածին, շեշոված և հարատև ատելությունը հանդեպ Թուրքիայի»<sup>2</sup>:

Հասնելով Վիեննա՝ Պիսկոպը և Պետիկը վարչապետի հավաստիացումը հաղորդեցին Լեոպոլդ կայսրին<sup>3</sup>: Մասնավորապես ընդարձակ իր տեղեկագրով Պետիկը ցանկանում էր ծանոթացնել Լեոպոլդ կայսրին Իրանի անցյալին և ներկային, ընդգծելով հասկապես զարավոր այն թշնամանքը, որ տածում էր այդ երկիրը դեպի Թուրքիան<sup>4</sup>: Նրա տպագրած զրբի խնդիրներից մեկն էր՝ զարդ տալ Սեֆյանների և Հարսուրդների բարեկամությանը և ուղղել սրբանց համասեղ հարվածները բնօրհանուր թշնամո՞ւ՝ Թուրքիայի դեմ: Ետզիտակելով հայերի ազատագրումը հռոմեական կայսրի զեկավարությամբ կազմակերպելիք հակաթուրքական պատերազմի հետ, Պետիկը ևս հարկ համարեց մասնանշել Ներսես Պարթևին վերագրած մարդարենությունները «թուրք» արշավանքների և զրանց հաջորդելիք պատերազմների մասին, որի ընթացքում Հայաստանը պիտի ազատագրվի «հռոմեացիների» կամ, ինչպես մեկնարածում էր Պետիկը, հռոմեական կայսրի տիպոս կրող Լեոպոլդի ձեռքով, վերականգնելով Կոստանդին Մեծի սահմանած կարգերն ու ուղղափառությունը<sup>5</sup>: Հեղինակը արտահայտում էր իր համոզումը, որ Թուրքիայի գոյությունը զազանիքը նրա ուժի մեջ չէ, ոչ էլ թուր-

<sup>1</sup> Հմմտ. Bedik, նույն տեղում, էջ 219 և հա.:

<sup>2</sup> Bedik, նույն տեղում, էջ 110 և հա.:

<sup>3</sup> նույն տեղում, էջ 111:

<sup>4</sup> նույն տեղում, էջ 138 և հա.:

<sup>5</sup> նույն տեղում, էջ 351:

քերի խելքի կամ հեռատեսութեան մեջ, այլ միայն հակառակորդների և առաջին հերթին քրիստոնյա նվիրակների անհամերաշխութեան մեջ: Չորս չէ, ավելացնում է նա, որ թուրքերը մշտական մի ազոթք ունեն միայն, այն, որ աստված համերաշխութեուն շատ զյավուրենքին<sup>1</sup>:

Ոչինչ հայտնի չէ Պետիկի և Պրսկոպի Վիեննայում վարած բանակցութեանների հետևանքների մասին: Տպագրված գրքից հայտնվում է միայն, կայսերական ունկնդրութեանից հետո անհրաժեշտ գտնվեց, որ Պետիկը մնա Վիեննայում, իսկ Պրսկոպն սուլտանի շնորհով, ուր սակայն շատ շուտով, 1678 թվականին, մահանում է: Պարզվում է և այն, որ Իրանից ժամանած միսիոներներով հետաքրքրվել էր ավստրիական զորահրամանատար Մոնտեկուլուչին, որի խորհրդով էլ հենց գրի էր առնվել Պետիկի գիրքը: Մերձավոր-արևելյան լեզուների, հնութեանների և ընթացիկ կյանքի ու քաղաքականության մասին հիմնավոր ու բազմակողմանի իրագեկութեուն հանդես բերած դրա հեղինակին շնորհվեց կայսերական ասպետի տիտղոս: Հեղինակի անձնական արժանիքներից առավել կայսերական այդ ժեստը վկայում էր, որ նրա գրքում հուզված հարցերը Վիեննայի արքունիքի ու ռազմակայանի համար մեծ այժմեականութեուն ունեին: Բոլոր նշաններից դատելով՝ Վիեննայի արևուելիքի համար այժմեական խնդիրը ոչ քե այն օգնությունն էր, որ սպասում էին անդրկովկասյան Բրիտոնյաները արևելակովկասյան կոալիցիայից, այլ այն աստատմությունը, որով անդրկովկասյան Բրիտոնյաները կարող էին օգնած լինել արևելակովկասյան կոալիցիային՝ Վիեննային սպառնացող Թուրքիայի դեմ պաշտպանվելու համար...

Ծանոթանալով Պետիկի գրքին, դժվար չէ համոզվել, որ քաղաքական և իդեական իր բովանդակությամբ, ընդհանուր առմամբ դա արժանահավատ մի փաստագրութեուն է և կարևոր մի աղբյուր 1675—1678 թվականների հայ ազատագրական մտքի պատմության տեսակետից նշանակալից իրադարձութեանների լուսարանութեան համար: Այդ տարիներից սկսած և մինչև Կարլովիցի դաշնագրութեունը նախապատրաստող տարիները, 1697—1698 թվականները, այսինքն՝ մինչև Իսթայեկ Օրիի քաղաքական բեմելը, հայկական շարժումն ու հայկական բանավարութեունները մեծ շահով պատում էին քաղաքական այն գաղափարների շուրջը, որոնք

<sup>1</sup> Bedik, նույն տեղում, էջ 341:

շարադրված են Պետիկի գրքում: Մի ժամանակամիջոց է այդ, երբ Հայաստանն ու Վրաստանը անմիջորեն մտնում էին Քուրբիայի դեմ պատերազմող եվրոպական կոալիցիայի շահախնդրութեան սլոբոտի մեջ:

Արժարժեղով Հայաստանի ազատագրման հարցը, Պետիկը անդրադառնում է նաև հայ ազատագրական լեգենդին: Պատմակա- նորեն օրինաչափ հանդամանք է, որ նա շաղկապում է լեգենդի մեջ արտահայտված քաղաքական բաղձանքը Ավստրիայի դիտավորած կոալիցիայի հաղթութեան հետ: 1683—1684 թթ. կազմակերպված կոալիցիայի մեջ մտնում էին Ավստրիան, Լեհաստանը, Վենետիկն ու պապը: 1686 թ. նրա մեջ մտավ նաև Ռուսաստանը: Այսպիսով, այդ կոալիցիայի մեջ, որից հայերը սպասում էին հիմա իրենց ազատությունը, իբրև ղեկավար և վեոող ուժ, Ավստրիայից գատ մտնում էին նաև սլավոնական երկու պետություն՝ Լեհաստանն ու Ռուսաստանը: Մասնավորապես ուշագրավ է, որ հայկական շարժման գաղափարախոսությունը այդ պահին ևս դրվատում և շեշտում էր հայ և վրաց ժողովուրդների զինակցության գաղափա- րը, դրա մեջ որոնելով Հայաստանի և Վրաստանի ազատագրման առաջին և անմիջական երաշխիք:

Հատկանշական է, հարկավ, որ Պետիկի գրքում ժողովրդական այդ շարժման զեկավարութեանը վերապահվում էր հայ և վրաց «իշխաններին», Հայաստանի և Վրաստանի ֆեոդալներին: Բայց սխալ կլիներ այդ պատճառով Պետիկի կամ նրա հետ կապված Հա- կոբ Զուղայեցու գաղափարախոսութեանը վերադրել բացառապես հայ և վրաց ֆեոդալական միջավայրին: Նվազ հատկանշական շեմ Պետիկին ոգեշնչող այլ կարգի ազգականները: Ծնված Հալեպում, ըստ երևույթին երբեմն ունեւոր հայ քաղքեանիների ընտանիքում, դաս- տիարակված կաթոլիկ Հռոմում, միսիոներական դործունեութեան ծավալելով Սպահանում և իրանահայ առևտրական կապիտալի- ուրբտում գտնված Նախիջևանի հայ գյուղերում, Պետիկը պատկա- նում է հայ ազատագրական շարժման այն ախոյանների շարքին, որոնք անդրադարձնում էին ունիատրների հետ կապված հայ Բաղ- Բենի վերնախավերի արամագրութեանները: Իր գրքում նա շեշտում է շարունակ սերտ իր բարեկամութեանը իրանահայ մեծահարուստ առևտրականների՝ Սրեանում իր դործունեութեամբ նշանավոր «պա- րոն Ազարիա Ավադի (իմա՝ Ավադյանի) և Վենետիկում մեծ գիրք

և ազդեցութեան ունեցող Գրիգոր-Գերեքի (իմա՝ Գերարի կամ Գերարայանի) հետ<sup>1</sup>,

Ի վերջո, Պետիկի գրքում ուշադրութեան արժանի են հայկական գուշակութեաններ վկայակոչող և հայերի ապագան կարգավորելու հարցով մտահոգված հեղինակի ինքնահանձնարարումները բարձր իր ծագման մասին: Գրքի անվանաթերթի վրա իսկ հեղինակը նշում է ազնվական իր տիտղոսը — «պարսկահայ ազնվական» — *Nobilis Pers—Armenus*», ակնարկելով հեռավոր իր նախնիների ծագումը և նրանց կապը Անիի Բագրատունիների և սրանց «ճախորդների»՝ հայ Արշակունի թագավորների հետ: Ըստ երևույթին պատահական չէին հեղինակի այս ինքնահանձնարարումները: Այդ անհրաժեշտ էր նախ նրա բանավարձություններին կրճուռայթ տալու համար: Հնարավոր էր նաև, որ կաթոլիկ միսիոներներն ավելորդ չէին համարել ունենալ իրենց տրամադրութեան տակ վերականգնելիք հայկական գահին արժանի թեկնածու և անհավանական չէ, որ նույն նկատառումով էլ այդ թեկնածուն Վիեննայի արքունիքից առժամապես ստանում էր նաև կայսերական ասպետի կոչում...

---

<sup>1</sup> Bedik, նույն անգում, էջ 238, 386 և հտ., 128: Գերեքին մենք գեո առիթ կուենենանք անդրադառնալու: Ինչ վերաբերում է Աղարիա Ավագին՝ գա նույն անձնավորությունն է, որի մասին հիշատակում է իր ուղեգրութեան մեջ Շարգենը: Վերանում, — գրում է Շարգենը, — ես իջեանեցի իմ հայ բարեկամներից մեկի, Աղարիայի տանը: Նա պատկանում է այն մարդկանց թվին, որոնք խիստ հալածանք էին կրել իրենց կաթոլիկ զավանսների և կապուչինյանների հաստատումը Երևանում ապահովելու համար (C h a r d i n, II, էջ 238): Պետիկի գրքից պարզվում է, որ Աղարիա Ավագը նույն այն Չելեպի Աղարիան է, որ ժամանակին օժանդակություն էր ցույց տվել Գարրիել Շինոն բարողչին՝ կաթոլիկ եկեղեցի հիմնելու Երևանում (Ալիշան, Այրարատ, էջ 315 և հտ.): Պետիկը ճանաչում էր Աղարիային գեո Պրոպագանդայի գլխավոր, ուր նրանք սովորել էին միասին: Այլուստ հայտնի է, որ Աղարիա Ավագը դրամական մեծ վնասներ է կրել 1667 թ. «չնկելով Երևանի հայ կաթոլիկ արքեպիսկոպոս Առաքելին կառուցելու Երևանում լատինազավան համայնքի համար եկեղեցի, որ խափանվեց հայազավանների կողմից, նյութ զառնալով շահ Սուլեյմանին 1669—1672 թթ. ուղղված չորս բողոքներին: Հիմա. «A Chronic le of the Carmelites in Persia». I, էջ 402 և հտ.:

5. 1677 թ. ԷՋՄԻՍՏՆԻ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎՐ  
ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆՐ

Քաղաքական նյութամբ Անդրկովասում: Ֆարալի բեկի խափուրջուներ: Գուրգին խանի ու Աշխլի ապստամբությունը և հայ պատվիրակների խորհրդաժողովը: Հակոբ Զուղայեցու «փախուստի» բովանդակներ: Զուղայեցին Վրաստանում: Հայկական պատվիրակության ուղևորությունը Կ. Պոլիս: Զուղայեցու մանր: Քեամյուրեցանի «նկար»:

Հազիվ էին Պետիկն ու Պիսկոպը մեկնել Իրանից, երբ երկրում սրված անտեսական ճգնաժամը վերաճեց քաղաքական ճգնաժամի, հանդերձվ մասսայական հուզումների ու ապստամբությունների: Անդրկովկասում է, որ բացվեց Սեֆյանների անկման գրամայի վարագույրը:

1676 թվականին իր մի հիշատակարանում Զարարիա Սարկավազը գրում էր. «Այս և և Ը (38) ամ է զի հաշտութիւն է քի մէջ երկուց մեծամեծ թագաւորացն պարսից և տաճկաց վասն այնորիկ բազմացեալ և յուսցեալ են ազգն Պարսից ուսելոյ և ըմպելոյ պարսպեալ. վասն որոյ միշտ կեղեքէն և կեղեվեն ողորմելի կեանս քրիստոնէից»: Հիշատակագրության ժամանակ Երևանում իշխող վրացի Սեֆի-ղուլի խանի մասին Զարարիան գիտում է. «սա տմարգութիւն ցուցեալ և ոչ սք երկնչէր ի սմանէ, այլ ամենեկին ըստ իւրեանց կամացն կային: Եւ բազմացան զողք և աւազակք և ոչ սք կարէր զնալ ճանապարհ զի կողոպտէին: Եթէ սք զանգատէր նմա՝ նա ոչ առնէր դատաստան. և այսպես կայաք ամէնքն չերկիւղի և ի ստամբման, բազմացոյց և հարկապահանջութիւն ի վերայ ամենայն ումեք: Եւ մեք վայ և աղաղակ կարգամք ակն տնենալով ողորմութեան Աստուծոյ...»<sup>1</sup>: «Զալումների» դեմ տրամադրում էին մանաւանդ քաղաքի

<sup>1</sup> Հայկական ՍՍԻ Մատենագարան, ձև. № 1404, էջ 605բ, 606ա

հայ առևտրականները): Զաքարիայի նկարագրած իրադրությունը պիտի ավելացնել նաև հարկերի աճող ծանրությունը: 1677 թվականին Հայրապետ երեսի՝ Կեղտոխում գրած հիշատակարանում կարդում ենք. «Ի դառն ժամանակի և բազմութիւն այլազգի հարկապահանջութիւն խիստ: Թէ քաղաք, թէ վանք և թէ անապատ, թէ գետոյ ամէնեքեան ոչ զիտէին, թէ հարկս որչափ տացեն և ազատին ի ձեռաց անօրինաց»<sup>2</sup>:

Սեֆի-դուլի խանի և նրան շրջապատող ազալարների դեմ ուժեղահատկացումների կապակցություններ կուտակված գծող հույժերունները 1677 թվականին ծայր տվին խանական «նոքարների» ապստամբություն<sup>3</sup>, որին ժամանակակիցները «լորտախառնների» ապստամբության անունն են ավել, անուն, որ տարօրինակորեն համընկնում է ֆրանսերեն «սանկյուլտաներ»-ի հետ: Խանական նոքարները մտնում էին իշխող դասակարգի վարի շերտի մեջ և հանդիսանում զինված այն ուժը, որի վրա հենվում էր խանական իշխանությունը: Իրենց ծառայությունն դիմաց նրանք ոչ միայն ազատ էին տուրքերից, այլև սպրում էին ի հաշիվ գյուղացիներից պոկվող տուրքերի ու «զիշքիրահինների»: Խանի և նոքարների զբտությունը ֆեոդալական տիրող սեփիմի ներսում առաջացած ճեղքվածքի հայտարարներից մեկն էր Խոտվությունը, որին զխտվորում էր Ֆաթալի բեկ անունով մեկը, տեղի ավելց արյունահեղ քնդհարումների խանին թեր և դեմ զորախմբերի մեջ՝ սաստիկ զցելով տեղական իշխանության առանց այդ էլ վարկաբեկված հեղինակությունը: «Քանզի էլն (= ժողովուրդը) երկու կողմն էր ճղված, ոմն Ֆաթալի բեկի, տմն խանի», գրում է այդ մասին Ագուլեցին<sup>4</sup>: Դրությունն այնքան էր լրջացել, որ նոքարները կալանքի տակ գրին Սեֆի-դուլի խանին և կառավարությունը հարկադրված կղավ Նախիջևանից զորք մացնել, խեղդել խոտվությունը և ի վերջս պաշտոնազուրկ անել նաև խանին<sup>5</sup>: Առանձին նշանակություն կստանա Երևանի դարավաշտների շարժումը, եթե մանավանդ կռահենք, որ ապստամբած նոքարներն ու նրանց զեկավարը ազրբեջանցիներ էին ծագումով և որ հավանորեն իրանական վարչության հետ նրանց

<sup>1</sup> Զ ա ք ա Ր ի ա Ս ո թ կ ա վ ա գ, նույն տեղում, 11, էջ 89 և հա.:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 335, էջ 261ա:

<sup>3</sup> «Նոքարների» մասին հմտա՝ Ա. Բ. Բ ա հ ա մ Կ ր ե տ ա ց ի, նույն տեղում, էջ 62 և 72:

<sup>4</sup> Զ ա ք ա Ր ի ա Ա գ ու լ ե ց ի, նույն տեղում, էջ 135 և հա.:

<sup>5</sup> Ե ու յ ն տեղում:

ունեցած ընդհարումը զուրկ չէր նաև ազդային-քաղաքական երանգից: Խ. Աբովյանը դիտում էր այն հակամարտը, որ գոյություն ունեւր Երևանի խանության հայ և ազրբէջանական «երկ» (տեղական) բնակչութեան և իրանական զրսեկ իշխանավորների միջև: Իրենց տնտեսական կացութեամբ երևանաբնակ ազրբէջանցիների հոծ մեծամասնութեանը կապված էր առևտրի ու աշխատութեան հետ և ունեւր իրանական իշխողների կողմից խրախուսված «զալումներին» հակադարձ շահեր: Հայերի պես նրանք ևս նաչում էին զլլբաշների վրա որպէս իրենց երկիրը կողոպտող և իրենց ազատութեանը ճնշող զավթիչների վրա:

Ուստի պատահական չէ, որ Երևանի զարափաշաներին հարած ազրբէջանցի բնակչութեանը պաշտպանում էր հայերին և պախարակում խանի անիրավութեանները ասելով. «Սա (այսինքն՝ խանը) ասէ, յաւուրս անձրեկ քրիստոնիայք մի կլցեն արտաքս. մեք ահա զրացի եմք քրիստոնէից և խանն ի խուն կամք քնդ նոսա. առևտուր ի միասին լինի, և շահս բազումս ունիմք ի նոցանէ և սա կամի զրկել զմեզ ի շահից մերոց: Եւ զի, ասէ, յազօթարանս քրիստոնէից մուսըրման մի մացէ. արդ զամենայն ցաւազարս մեր եկեղեցիքն բժշկեն. աչ և տեղի զրօտանաց մերոց եկեղեցիքն են. զմեռեալս թարց հրամանաց իմոց ասէ, սչ թաղել, ապա ուրեմն հարկս կամի առնուլ ի մեռելոց: Եւ զոզս ոչ պատժէ, այլ առնու տուգանս և թողու. և նոքս դարձեալ առնեն զգողութիւն»<sup>1</sup>:

Այնուամենայնիվ Երևանի խոտովութեանները շատացան լաջն ծավալ: Երևի զրան մասամբ պատճառ էր այն հանգամանքը, որ Սեֆի-զուլի խանին հաջորդած Զալ խանը ժողովրդին «հանգստացնելու» համար սկսեց պաշքարել բնակիչներին կողոպտող «զալումների» դեմ: 1679 թվականի մի հիշատակարանում նա նշվում է որպէս «էզիլ (=արդարադատ) և հալածիչ, և քերթիչ աւաղակաց. փեարվարի ժե (=15-ին) եկալ Երևան, մինչև ապրիլի ամիսն Գ (3) մարդ զխառել երիտ»<sup>2</sup>:

Ավելի զորեզ և տեսական շարժում էր սկսված այդ պահին վրաստանում:

1676 թ. սկստեմբերին իրանական զորժակալները վերջ են տալիս շահի արքունիքն սուլտրված Քարթլիի շահ Նավազ խանի (վրացական նոմենկլատուրայով՝ Վախթանգ V թաղավորի) կյան-

<sup>1</sup> Ձ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, նույն տեղում, 11, էջ 90:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենագրարն, ձև. № 6103, էջ 24տ:



քին: Սրան հաջորդում է նրա որդին՝ շահ Նավազ II-ը, ավելի հայտնի Քարթլիի թագավոր Գիորգի XI և իրանական Գուրգին խան անուններով: Քարթլիի նոր այդ իշխողը թշնամորեն արամադրված դեպի իրանական տիրապետությունը և վրեժխնդրության զրգացմունքով լի Սեֆյանների հանդեպ, զազանապես ապստամբություն է նյութում շահնշահի դեմ: Իրազեկ գտնալով դրան, շահը գահազուրկ է հայտարարում Գուրգին խանին: Վերջինիս դեմ գուրս եկան նաև վրաց ֆեոդալներից ժամանր: Ճնշելով սրանց դիմադրությունը, Գուրգին խանը բացահայտորեն ոտքի ելավ նրանց հավանավորող շահի դեմ: Այս պայքարի մեջ նրան վինակցում էր իր եղբայր Արշիլը: Վերջինս 1664—1675 թվականներին թագավորում էր Կախեթում: 1676 թ. շահի կողմից գահընկեց հռչակված Արշիլը ապավինեց Իմերեթ, զլխավորեց թուրքերի դեմ բարձրացած ապստամբությունն ու խեց Քաթալիսը, որը սակայն երկար շմնաց նրա ձեռքում: Ապստամբ եղբայրների դեմ պատերազմի ելավ շահի կողմից Քարթլիում վալի նշանակված Հերակ I թագավորը, որը մուսուլմանական նոմենկլատուրայով Նազար-Ալի խան անուն էր կրում: 1676 թվականին սրան օգնելու եկան Իրանի պատժիչ զորամասերը: Չհանդուրժելով Նազար-Ալի խանի վայրագություններն ու փրանական էկզեկուցիան՝ վրաց թավազների զգալի մասն անցավ Գուրգին խանի կողմը<sup>1</sup>:

Նշանակալից անցքեր էին սրանք, որոնք վերաճում էին քաղաքացիական ներքին կռիվների կամ փրանական կենտրոնի դեմ բարձրացած բացահայտ ապստամբության:

Զաքարիա Սարկավազը, որը Գուրգին խանի (ըստ Զաքարիայի՝ «Գօրկի խանի») զլխավորած և մոտ քսան տարի տևած այս ապստամբության սկիզբը սխալաբար դնում է ավելի ուշ՝ շահ Սուլթան Հյուսեյնի ժամանակները, նկարագրելով վրացիների դեմ ձեռնարկված փրանական արշավանքները, պատմում է. «Ճև ժողովեցան բազում զօրք ի բազում տեղեաց, յՍրևանայ, ի Նախշուանայ, ի Գանճայու, ի Թիֆլիզոյ և յայլ տեղեաց, և գնացին ի վերայ նորա (Գօրկի խանի). և նա թագուցեալ կայր ի մէջ մայրեացն: Յորժամ գնացին պարսիկքն ի վերա նոցա (վրաց), նոքա մտանէին ի մայրին, և ի դիշերի անկանէին ի վերայ զօրացն, կոտորէին զնոսա, և

<sup>1</sup> Brosset, Hist. de la Géorgie, II, Livre, էջ 81 և հո., 89, 93 և հո. Զաքարիա Սարկավազ, նույն տեղում, II, էջ 98 և հո., Krusinski, Nachrichten, էջ 62:

աւար առնէին զինչսն. և յորժամ յառնէին տաճիկքն (իմա՝ պարսիկ մահմեդականները—Ա. Հ.), նոքա մտանէին ի մայրին: Վրացիքն հմուտ էին վայրացն, և նոքա ոչ Ո՛չ թէ միանգամ և երկիցս ևզև այս, այլ բազում անգամ»<sup>1</sup>:

Պաշարելով Իրանի դեմ, Արշիլը, Գուրգին խանը և նրանց եղբորդի Վախթանգը անհրաժեշտ էին դանձում սահմանափակել վրաց թավաղների իրավունքները, կարգավորել երկրի արդարադատությունը, բարոյութիւնը նրա տնտեսական վիճակը: Միաժամանակ նրանք ձգտում էին միացնել Քարթլին և Կախեթը պետական ընդհանուր հարկի տակ և ընդհանուր ճակատ կազմել Ռուրքիայի գերիշխանութան ենթարկված Արևմտյան Վրաստանի մարզերի հետ: Հավասարապես պաշարելով և՛ Իրանի, և՛ Ռուրքիայի դեմ, նրանք օժանդակութուն էին սրտնում քրիստոնյա պետութիւնների կողմից<sup>2</sup>, Հետագայում նշելիք բոլոր փաստերից հայտնվում է այն փրուկութունը, որ այդ քայլն անելուց առաջ նրանք համատեղ զործողութիւնների եզրեր էին սրտնում իրենց անմիջական հարևանների հայերի հետ:

Ինչպես վկայում էր Պետիկը, իրանցիները «անսանձ և խռովութիւնների արամազիր» ժողովուրդ էին համարում ոչ միայն վրացիներին, այլև հայերին<sup>3</sup>, Վերը նկարագրված բախումների ժամանակ արդյոք չպիտի՞ հայերը ևս դիմէին ազդու միջոցների իրանական ռեժիմի դեմ կուտակված իրենց զժողովութիւններին զործնական ընթացք տալու համար:

Հայ մելիքների ստորագրութիւնը կրող 1699 թվականին գրված թղթում ասված է, որ 70-ական թվականների վերջերին Հակոբ Զուղայեցին մտադրութիւն էր ունեցել անցնել Եվրոպա՝ պապից, կայսրից և քրիստոնյա մյուս պետութիւններից անձամբ հովանավորութիւն (les graces) հայցելու համար: Իրանական իշխանութան կողմից նրա այդ մտադրութիւնը հանդիպում է արգելքի, որին ի պատասխան կաթողիկոսը գումարում է էջմիածնում մի խորհրդաժողով, սր սրտում է բնդունվում զաղաճի պատվիրակութիւնն ուղարկել Եվրոպա և օգնութիւն խնդրել հայերի համար ստեղծված ծանր դրութիւնից դուրս գալու համար: Այս բանը զլուխ բերելու հա-

<sup>1</sup> Ջ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, նույն տեղում, II, էջ 100:

<sup>2</sup> Бердзенишвили և այլք, նույն տեղում, I, էջ 379:

<sup>3</sup> „Armenorum et Georgianorum dicunt indocilem atque in rebelliones procrivem“, նույն տեղում, էջ 387 և հա.:

մար խորհրդաժողովը, որին մասնակցել էին վեց հոգի երկրի առաջնակարգ հայ իշխաններից ու մելիքներից («six des premiers princes et principaux du pays»), և բացի այդ, վեց արքեպիսկոպոս, ընտրում է մի պատվիրակություն, որի մեջ մտնում են կաթողիկոսը, երեք արքեպիսկոպոս և երեք մելիք<sup>1</sup>: Օրի 1701 թ. բացատրության համաձայն՝ էջմիածնի այդ ժողովին կաթողիկոսի գլխավորությամբ պիտի մասնակցած լինեն 12 հոգի՝ Երևանի և ուրիշ քաղաքների հայ իշխաններից<sup>2</sup>:

Այս հաղորդումներից պիտի կոտակել, որ խորհրդաժողովին մասնակցում էին հայ կյանքում իշխող երեք հասարակախավների՝ «Արևելյան Հայաստանի բարձրագիր կղերի, քաղբենի մեծամեծներրի (իմա՝ մեծահարուստ խոջաների) և գավառատերերի (իմա՝ մելիքների) ներկայացուցիչները: Հատկանշական է մտնալանդ, որ այդ վկայություն մեջ առաջին հերթին հիշվում են Երևան քաղաքի հայ մեծամեծների («старшины») անունները, հանդամանք, որ միանգամայն համապատասխանում է սկիզբից այն մասնակցությունները, որ յունկնում էին ազատագրական շարժման մեջ երևանցիները XVII դարի 60—70-ական թվականներին:

Թեպետև էջմիածնի խորհրդաժողովի մասին մեզ հասած տեղեկությունները զրի են առնված անցքերից ավելի քան 20 տարի հետո, կան մի շարք սովյաղներ, որոնք հիմք են առլիս կարծելու, որ դրանք այնուամենայնիվ զուրկ չեն հիմքից:

Զաքարիա Սարկավազը պատմում է, որ վերագառնալով Ղազվինից, «կաթողիկոսն ձանձրացաւ ի բազում պարտատուացն, վասն որոյ առանց դիտենալոյ խանին ելեալ գնաց Տփլիս քաղաք վրաց... Եւ կացեալ անդէն աւուրս ինչ... Եւ ապա ելեալ գնաց ի ծովեզր և նստեալ ի նաւ և գնաց ի Բիւղոնդիայ»<sup>3</sup>: Այս մտախնունենք նաև ավելի պարզ ու ստույգ վկայություն՝ դեպքերն անմիջորեն արձանագրող Զաքարիա Ազուլեցու օրագրությունը. «Թվին ՌՃԻԶ (1677) յունիսի մէկ Յերեւան [Յակոբ կաթողիկոսն]... (յ)անիցն փախաւ գնաց Վրացսուն»<sup>4</sup>, Երկու տարի անց, ՌՃԻԸ (1679) թվի վերջերին, նույն Ազուլեցին լրացնում է այս տեղեկանքը. «Յակոբ կաթողիկոսն այս երկու ամ է, որ էջմիածնայ Սեֆի-զուլի խա-

<sup>1</sup> Эзов, նույն տեղում, № 5, էջ 11 և հա.

<sup>2</sup> «Армянский патриарх, а с ним 12 человек старшины их армянской. Реванские же жители, также и из иных разных городов армянских», նույն տեղում, № 44:

<sup>3</sup> Զ ա զ ա Ր ի ա Ս ա Ր կ ա վ ա զ, նույն տեղում, II, էջ 91:

<sup>4</sup> Զ ա զ ա Ր ի ա Ա զ Ո Ւ Լ Ե Յ ի, նույն տեղում, էջ 128:

նի ձեռացն փախաւ, դնաց Վրացառոմ, Վրացառան վերա փնաց Խորմացառուն»<sup>1</sup>: Այս վկայութիւնները ճշտում են և ամբողջացնում Ջաքարիա Սարկաւազի գրածը: Պարզվում է կաթողիկոսի փախուստի ստույգ ժամանակը, այդ տեղի էր ունեցել 1677 թ. հունիսին: Ապա նրա արտասահման մեկնելու ժամանակը, այդ տեղի էր ունեցել 1679 թ. վերջում<sup>2</sup>:

Կաթողիկոսի փախուստի մասին ժամանակակից վկաների հաղորդածը ստիպում է ուղղել ավելի քան 20 տարի հետո մեկիքների թղթերում քանիցս կրկնված և հետագայում արմատացած մի սխալ: Մեկիքների ասելով, էջմիածնի խորհրդաժողովը տեղի էր ունեցել կաթողիկոսի ներկայութեամբ, 1678 թվականին: Բայց որչափ կաթողիկոսը մեկնել էր Վրաստան 1677 թվականին, նա չէր կարող խորհրդաժողով հրավիրել էջմիածնում (կամ Երևանում) 1678 թվականին<sup>3</sup>: Դժվար է նաև ընդունել, թե խորհրդաժողովը կարող էր հրավիրված լինել 1677 թվականից առաջ, ասենք 1675—1676 թվականների արանքում, այդ դեպքում որևէ ակնարկութուն կունենայինք 1670-ական թվականների կեսերին էջմիածնում տեղի ունեցած անցքերի նկարագրող և 1676 թվականին էջմիածնից Արևմուտք սուղևորված Պետիկի գրքում: Բոլոր պարագաներում էջմիածնի խորհրդաժողովի գումարման համար պիտի շտկելի համարենք 1678 թվականը և հավանական նկատենք 1677 թվականը, հիմք ընդունելով դեպքերին համընթաց տարեկրութուն կազմող Ջաքարիա Ագուլեցուն, որի մոտ ժամանակագրական սխալներ չկան գրեթե, ուստի և նրա նշումների արժանահավատութեանն ապավինած պիտի ճշտվեն անցքերից տարիներ կամ տասնյակ տարիներ հետո մյուս հեղինակների արձանագրած իրողութունների ու դեպքերի կատարման թվականները:

<sup>1</sup> Ջ ա ջ ա Ր ի ա Ա գ ու լ ե ջ ի, նույն տեղում, էջ 143:

<sup>2</sup> Ագուլեցու ժամանակարանական նշումը չի կարող արդյունք լինել ամսարական հաշիվների շփոթման: Ժամանակագրողը հայկական տարին սկսում էր հունվարի 1-ից (և ոչ օգոստոսի 11-ից) և ավարտում գեղականների 31-ին, հայկականի և համաքրիստոնեականի միջև գնելով 551 տարվա տարբերութուն:

<sup>3</sup> Որ 1678 թ. Հախոր կաթողիկոսը դանձում էր Վրաստանում, երևում է մեր ձեռքը հասած մի վախրմնամայճյ, գրված հայոց ՌՃԻԷ (1678) թվականին Վի յերկիրն Վրացառանու և գեօղն Շուլավերս, որով մի այդի է հատկացվում էջմիածնի աթոռին Վի ձեռն ճուղգայցի Յակովր կաթողիկոսին», տե՛ս Սիմոն կաթ., Ջամբու, էջ 208:

Առաջին հայացքից մեր առաջարկած ուղղումը կարծես հակասում է «Ջամբուռ» հանդիպող մի տեղեկանքի, որից ստացվում է այն տավարությունը, թե Զուղայեցիին էջմիածնում 1677 թվականի օգոստոսի 25-ին—այսինքն իր «փախուստից» հետո—պիտի հանդիպում ունեցած լինի Աղվանից Սիմեոն և Երեմիա կաթողիկոսաների հետ և հաշտեցրած նրանց<sup>1</sup>։ Այս տեղեկանքը հիմնվում է Աղվանից Սիմեոն կաթողիկոսի այդ պահին տված մի ձեռագրերի վրա. այդ ձեռագրերով նա հավաստում էր, որ ինքը թուղթ է ավել Հակոբ Զուղայեցուն առ այն, թե իր մահից հետո իր ժառանգները զրկվելու են կաթողիկոսանալու իրավունքից, հօդուտ Երեմիայի, և ավելացնում, որ այս հայտարարությունը մնալու է ուժի մեջ անգամ «եթէ իմ հայոց երկիր գնալն նմա (այսինքն՝ Հակոբ կաթողիկոսին—Ա. Հ.) վախճանիլ պատահի կամ յօտար երկիր՝ ոչ լինի ձեռքնահաս»։ Սակայն հայտ բերելով Մատենադարանի արխիվում և քննելով ձեռագրերի բնագիրը՝ համոզվեցինք, որ դրա մեջ ոչ մի ակնարկ չկա այն մասին, թե հաշտությունը կայացել էր էջմիածնում կամ որ ձեռագրերը զրկվելու պահին Զուղայեցիին ներկա էր էջմիածնում<sup>2</sup>։ Ընդհակառակը, թղթի բնագրից հայտնվում է, որ Սիմեոնը հանդիպել էր Հակոբի հետ նախքան էջմիածին ժամանելը։ Ըստ երևույթին, այդ հանդիպումը նա տունեցած է եղել էջմիածնի կաթողիկոսի հետ միայն վերջինիս էջմիածնից փախչելուց հետո. հավանաբար հանդիպումը կայացել էր Վրաստանում, ուր Հակոբը պատրաստություն էր տեսնում մեկնելու «օտար երկիր»։ Այլ խոսքով՝ Սիմեոն կաթողիկոսի ձեռագրերի բովանդակությունը ոչ մի կերպ չի ժխտում Հակոբի փախուստի մասին Զարբրիա Աղուկեցու նշած ժամանակակետի ճշտությունը։ Այդ ակնհերե է նաև նրանից, որ Սիմեոնի ձեռագրերը վավերացնում էր ոչ թե էջմիածնից բացակայող Հակոբը, որի մասին վավերագրում խոսվում է փոքր երրորդ դեմքով, այլ էջմիածնի միաբանությունը։ Սիմեոնի ձեռագրերը հնարավորություն է տալիս նույնիսկ ենթադրելու, թե իր էջմիածնից հեռանալուց հետո հանդիպում ունենալով Աղվանից դժաված կաթողիկոսների հետ Հակոբը նպատակ էր հետամտել ոչ միայն հաշտեցնել նրանց, այլև փախչելու համաձայնություն դալու նրանց հետ մեկիքների թղթում հիշատակված և էջմիածնի

<sup>1</sup> Սիմեոն կաթողիկոս, Զամբու, էջ 80։

<sup>2</sup> Հմմտ. Հայկական ՍՍՌ Մատենադարանի արխիվային բաժին, թղթապանակ 240—241, վավերագիր № 1։

խորհրդագծողովում ընդունված որոշումների շուրջը: Եղյանի հրապարակած վավերագրերը հիմք են տալիս եզրակացնելու, թե Հումբի պապի հետ Հակոբը ընդգրկված է եղել բանակցելու ոչ միայն էջմիածնի, այլև «Ղափանի պատրիարքություն» անունից: Այս փաստը իր հերթին գալիս է հավաստելու վերը նշված այն տեղեկությունը, թե Արևմուտք ուղևորվելուց առաջ Հակոբը հանդիպում էր ունեցել Աղվանից կաթողիկոսների հետ, սրովհետև, ինչպես պիտի տեսնենք հետագայում, «Ղափանի պատրիարքություն» տերմինը կարող էր գործածվել միայն Ղարաբաղում գտնված Աղվանից կաթողիկոսության նկատմամբ:

Զաքարիա Մարկավազի ասելով, կաթողիկոսը մնաց Քրիլիսիում դրամ ժողովելու և իր պարտքերը հատուցելու նպատակով: Սակայն հազիվ թե միայն այդ էր նրա Վրաստանում գեղերելու պատճառը: Ուշադրության արժանի է այն, որ մեր հիշատակած պատմիչները վկայում են կաթողիկոսի «փախուստը» Երևանի խանից և «գաղտնի» Վրաստան մեկնելու համոզմանքը: Այդ հիմք է տալիս ենթադրելու, թե կաթողիկոսի գաղտնի փախուստը և Վրաստանում գեղերելը պիտի որ ունեցած լինի ավելի ծանրակշիռ պատճառ: Եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակամիջոցում Վրաստանը գտնվում էր Իրանի դեմ ապստամբած երկրի վիճակում, հիմք կունենանք եզրակացնելու, թե Վրաստանում գեղերելու համար Հակոբը և նրա ուղեկիցները պիտի ունեցած լինեին ծանրակշիռ պատճառ: Հիրավի, կաթողիկոսի և նրա պատվիրակության մասին հայտնի դարձած կցկտուր տեղեկություններն ու փաստերը ենթադրել են տալիս, թե այդ ժամանակամիջոցում նրանք բանակցում էին Վրաստանում նախապատրաստվող ապստամբության ղեկավարների հետ կամ ուղղակի հենց համադրածակցում նրանց:

Վրաց թագավորների հետ Զուղայեցին բարեկամական շփման մեջ էր շատ վաղուց: Կաթողիկոսանալուց անմիջապես հետո նա այցելել էր իր գահակալությունը շնորհավորած վրաց Ռոստոմ խանին (Շահնավազ խանի հորը և Գուրգին խանի պապին), որի մասին գրում էր թե՛ «էր սա յտոաջ ամօղ բաղում նախնի մեծատանց, որ ի սնանկութեան էին գրաւեալ. մանուսանդ սիրօղ և խնամօղ աղղիս Հայոց և որք ընդ իշխանութեամբ նորա էին հովաճաւորեալ. այլև տչ ոք էր ի մէջ պարսից թագաւորին իշխանացն և պետանցն մեծ քան զԼուստտամ խանն»<sup>1</sup>: Այս այցելության առիթով

<sup>1</sup> «Կալվածագրեր», պրակ 1, էջ 159:

Ռուստոմ խանը նվիրեց կաթողիկոսին նրա խնդրած Նախնդուս գյուղը<sup>1</sup>: Ավելի ուշ Կախեթի Ռեյմուբուզ խանը և նրա որդի Հերակլը (Նազար-Ալի խանը) նրան նվիրեցին Ռասմալուր գյուղը, «ամենայն բնակչօքն, ամենայն այգեատանօքն, ջրօքն և ամենայն պարագայիւք ի ծառայութիւն սրբոյ Աթոռոյն»<sup>2</sup>: Հակոբը բարեկամական ընդունելություն ցույց ավելց Ծահնավազ խանին (Գուրգին խանի հորը), երբ նա 1676 թվականին Ադուլիսի վրայով մեկնում էր շահի մոտ<sup>3</sup>:

Ավելի կարևոր են կաթողիկոսի և վրաց թագավորների քաղաքական կապերը: Որ Հակոբ Զուղայեցին ու նրա ետևը կանգնած հայ «իշխաններն» ու մեկիքները հարևան մյուս քրիստոնյա ժողովուրդների կամ ավելի ճիշտ կլինեք ասել՝ ժողովուրդների իշխող վերնախավերի հետ «զազոտնի» կապեր էին որոնում «անօրեններին» դեմ համառակ դործելու համար, այդ մասին մեզ հայտնի է արդեն Պետիկի ուղղակի վկայությունից: Վրաց ապստամբությունը և էջմիածնի խորհրդածուղովի ընդունած տրոշումներն ու խորհրդածուղովից հետո կաթողիկոսի գաղտնի փախուստը դեպի Վրաստան հուշում են այն միտքը, թե արդեն հասունացած էր այդ համադործակցությունը կնքելու ժամանակը: Այն հանգամանքը, որ Զուղայեցին և նրա պալատիկները պատվիրակները Վրաստանի վրայով նպատակ ունեին ի վերջո անցնել Եվրոպա՝ բնավ չի հակասում այս ենթադրությունը: Նույն այդ պահին վրաց ապստամբները ևս պաշտպանություն թիկունք էին որոնում Եվրոպայում: Հիրավի, խիստ աչքի են ընկնում ոչ միայն հայ կաթողիկոսի, այլև նրա վրաց բարեկամների արևմտակալուսակաճ բանավարությունները: Ե՛վ Ծահնավազը, և՛ նրա որդիները՝ Գուրգին խանը, Աբշիլը և սրան հաջորդած Վախթանգ VI-ը, պատկանում են վրաց այն գահակալների թվին, որոնք հովանավորում էին միախոներներին և քաղաքական ակնկա-

<sup>1</sup> «Կալվածագրեր», սրբակ Ն, էջ 18 և հտ: 1657 թ. մի հիշատակարանում կաթողիկոսի այցելություն կապակցությունը կարգում ենք. «Երևա խողազութին էր ժամանակս, թագաւորութիւն Առևտուս խանին էր, առաջնորդութիւն էջմիածնայ Յակոբայ, որ երեկ Վրաստուն թրպլիս քաղաքն և ամիս եկաց, եպիսկոպոսունին ամենեքեան յինքեան ունէր, շէն կենայ քաղաք. դարձաւ ուրախութեամբ ամոռն ի բ» (Հայկական ՍՍՌ Պատմ. թանգարան, ձեռն. № 207): «Իստի կարծել, որ թրխիսում հակոբին և իր ուղեկիցներին դահունակություն էին պատճառել ոչ միայն վրաց թագավորի նվերները, այլև հայ մոքալաքների աջահամբույրները:

<sup>2</sup> Ս ի մ ե ո ն կ ա թ., Զամբու, էջ 207:

<sup>3</sup> Զ ա ք ա ր ի ա Ա գ ու լ ե ց ի, նույն տեղում, էջ 129:

լուծյուններով կապվում Վատիկանի ու կաթողիկ արքունիքների, մասնավորապես Ֆլորենտիայի և Փարիզի հետ<sup>1</sup>։

Պետիկի ասելով՝ Զուղայեցու ժամանակ Հռոմին հպատակվելու կողմը հակված էր նաև վրաց կաթողիկոսը։ Այդ մասին կատալիսների միջոցով սա իմաց էր արել նաև Պիսկոպոսին ու Պետիկին, ցավ հայտնելով, որ իր մտադրության իրագործմանը իբր թե խանդարել է իր հղբոր սրբու (ըստ երևույթին Գուրգին խանի մասին է խոսքը—Ա. Հ.) Իրանի դեմ բարձրացրած ապստամբությունը։ Սակայն խոստացել էր իրագործել այդ մտադրությունը, երբ Պիսկոպը և Պետիկը, իրենց առաքելությունը Եվրոպայում ավարտած, վերադառնան Անգրիոլիսա։ Տեղեկանում ենք նաև, որ Հակոբ Զուղայեցին նույն կապուչինյան կրոնավորի միջոցով հաղորդած է եղել վրաց կաթողիկոսին, պապին և զերմածնական կայսրին գրելիք թղթերի մասին. այս կապակցությամբ Պետիկը նշում է, որ ինքը վստահ է, թե հայ և վրաց կաթողիկոսների այս թղթակցությունը «հանգելու է ոչ միայն Բաղաբախան, այլև կրոնական միության համար հրավիրելիք մի խորհրդածոդովի», որից և մեր հեղինակը սպասում է մեծ հոճած, եթե միայն այս ձևնարկը շատ աջակիցներ գտներ<sup>2</sup>։

Մեր ընդգծած սուղերը պարզաբանում են նաև Հակոբ կաթողիկոսի պատվիրակության վրաստանում ղեկերելու նպատակներից մեկը։ Հավանական է, որ 1677 թվականին էջմիածնում կայացած գաղտնի խորհրդածոդովից հետո Զուղայեցին և յուրայինները միաժամանակ զբաղված էին նաև հռոմեական եկեղեցու և եվրոպական պետությունների հետ հայ-վրացական համագործակցության ուղեգիծ մշակելու խնդրով։ Պիտի ենթադրել, որ Զուղայեցին շարունակում էր իր ուղևորությունը դեպի Արևմուտք. ոչ միայն խրախուսված վրաց արքունիքից, այլև գոտեպնդված սրտ հանձնարարություններով ու լիազորություններով։ Այս ենթադրությունը կարելի է հիմնավոր համարել, եթե աչքի առաջ ունենանք Պֆալցի կուրֆյուրստի՝ 1698 թվականի մայիսի 3-ին Գուրգին խանին ուղղած նամակը, ուր ուղղակի ասված է, թե Հակոբ կաթողիկոսի պատվիրակությունն ուղևորվել էր Եվրոպա՝ հղված լինելով իր՝ Գուրգին

<sup>1</sup> Tamarati, նույն տեղում, էջ 85 և հա., 575, 588 և 608։

<sup>2</sup> „Viget ab hinc et hodie (ut nullus dubito) optima hoc inter Patriarchos correspondentia, nedum quo ad Politica, sed ad Religionis unitatem concilian tam. Multa per hoc sperari messis potest, modo sint sperariorum etiam plures“, նույն տեղում, էջ 310։



խանի, հայոց պատրիարքների և Մեծ Հայաստանի իշխանների կողմից<sup>1</sup>:

Կաթոլիկ աղբյուրները վկայում են մասնավորապես, որ Գուրգին խանը պատանեկան հասակից իսկ շափաղանց մոտ էր կանգնած միսիոներներին և հարարերություն էր պահպանում նրանց հետ նաև իր դահակալությունից հետո: Պահվել է 1687 թ. Ինոկենտիոս X պապին (1670—1689) ուղղած նրա մի թուղթը, որով նա համերաշխություն էր հայանում Հռոմին: «Ներկայիս,—գրված է այդտեղ,—մեր թագավորության հետ մենք խոնարհվում ենք ձեր առաջ: Վրաց ամբողջ բանակի հետ սկանչալուր պատրաստ ենք ձեր հրամանին. կանենք ամենը, ինչ կհրամայեք մեզ ձեր մաղթածքի և օրհնության միջոցով»<sup>2</sup>: 1688 թվականին Արշիլը եղուխանների միջոցով խոստանում է միանալ Հռոմի եկեղեցուն և հատուկ պատվիրակություն ուղարկել պապի մոտ<sup>3</sup>: Այս ամենը հասկանալի կդառնա, եթե հաշվի առնենք, որ այդ պահին Գուրգին խանն ու Արշիլը վերջին ճիգերն էին թափում՝ դեմ կենալու իրենց վրա հարձակվող իրանցիներին ու Նազար-Ալի խանի զորքերին և պատրաստ էին նեղ դրությունից դուրս գալու համար ընկնել սատանայի գիրկն անգամ: 1695 թվականին Նեապոլում լույս տեսավ Ֆր. Պիսկոպի Հայաստանում և Պարսկաստանում կատարած ուղևորության նկարագրությունը, ուր, ինչպես գիտեցինք, շարադրվում էր նաև Պիսկոպի և Պեպիկի առաքելության պատմությունը: Ըստ երևույթին այդ պահին դեռ այժմեական էր Արևելքի քրիստոնյաներին հակաթուրքական կռաւիցիայի աղղեցության տակ առնելու այն խնդիրը, որ հուզվում էր այդ առաքելության ժամանակ: Պատահական չէ նաև, որ կալսերական հրամանագրով նույն այդ 1695 թվականին կոմսություն արհեստ շնորհվեց Վենետիկում դրամադուլսի շահարկող հայ կաթոլիկ միլիոնատեր Մարգար Շեհրիմանյանցին<sup>4</sup>: 1695—1698 թվականներին վրացիները պայքարում էին Թուրքիայի դեմ, կապված լինելով Թուրքիայի հետ պատերազմող ավստրիական կռաւիցիային ոչ միայն քաղաքականապես, այլև կաղմասկերողչորեն: 1704 թվականին Լեոպոլդ կայսրին դրած մի նամակում Արշիլը հայանում էր, որ ստիպված է վերջ տալ պայքարին և փախչել Ռուսաստան, քանի որ Կարլովիցի խաղաղությունից հետո վրացիներն անկա-

<sup>1</sup> ЭЗОВ, Կուլյն տեղում, վավերագիր № 1:

<sup>2</sup> Tamarati, Կուլյն տեղում, էջ 575:

<sup>3</sup> Կուլյն տեղում, էջ 588:

<sup>4</sup> Ալիշան, Եկամենից, էջ 115:

րող են մեծնակ շարունակել պատերազմը<sup>1</sup>։ Անդրադառնալով Վրաստանի ծանր դրուժյանը՝ Արշիլը նույն այդ նամակում գրում էր կայսրին. «Մենք տառապում ենք ոչ թե մեր, այլ մեր նախնիների մեղքերի պատճառով։ Եթե նրանք դաշինք ունենային ձերդ մեծության հետ, անօրիններն հրեք այնքան դերազանց ուժ չէին ունենա մեր կրկրում»։

Հայտնի են վերջապես Սուլխան Սարա Օրբելյանի միջոցով Լուդովիկոս Թագավորի հովանավորությունը ստանալու հուսով Վախթանգ VI-ի հետագա բանակցությունները։

Հակոբ Զուլալացին շարունակում էր քաղաքական ակնկալությունների և բանավարությունների այն ուղին, որ իրենից առաջ բռնել էին XV—XVI դարերի հայ քաղաքական գործիչները։ Ինչպես երբեմն նրա նախորդները, այնպես և հիմա ինքը, Զուլալացին, մտահոգված էր Հայաստանի քաղաքական վիճակով։ Ինչպես երբեմն առաջ, այնպես նաև հիմա բանավարություններն ընդգրկում էին ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի ազատագրման խընդիրները։

1670-ական թվականների ընթացքում ինչպես հայ, այնպես նաև վրաց ազատագրական շարժումները, սրվում էին թե՛ Քուրքիայի և թե՛ Իրանի գեմ։ Էջմիածնի խորհրդածույլից անմիջապես հետո Հակոբն անցավ Վրաստան ու կապվեց և՛ Քուրքիայի, և՛ Իրանի գեմ կավի ելած վրաց ղեկավարների հետ։ Սակեզված էր մի դրություն, որից ելնելու համար և՛ վրաց ղեկավարները, և՛ նրանց գործակցող Հակոբը չէին կարող հույսեր կապել միայն թուրքերի գեմ գործող արևմտակալության պետությունների հետ։

1915 թվականին հրատարակել ենք Հակոբ կաթողիկոսի ուսուարքունիքին ուղղված լատինագիր մի գիմումը։ Դիմումը թվական շունի, բայց, ամկասկած, դա հայ-ուսու քաղաքական հարաբերությունների հանգուցավորման հնագույն փաստաթղթերից մեկն է։ Կաթողիկոսական հայերեն կարմրաղեղ կնիքը կրող այդ գիմումի վրա, որի բնագիրը ներկայիս պահվում է Մոսկվայի Հին Վավերագրերի Պետական Կենտրոնական Արխիվի (ЦГАДА) գործերի մեջ՝ զժբախտաբար նշված չեն գրություն թվականը կամ վայրը։ Սակայն վավերագրի բովանդակությունը հիմք է տալիս կարծելու, որ այն պիտի կաղմված լինի այն տարում, երբ, վերջին անգամ վերադառնալով Քուրքիայից, Հակոբ կաթողիկոսը ոչ միայն ականատես

<sup>1</sup> ЭЗОВ, նույն տեղում, փավերագիր № 127։

եղա՞վ Երևանի խանի կեղերումներին, այլև անձամբ փակ ենթարկ-վեց նրա տունձգություններին: Ինչպես տեսանք, խուսափելով խանական բանտից, կաթողիկոսը ղեկերում էր Ապահանում և բախում էր ոչ միայն իրանական կառավարության, այլև կաթողիկ միաբաներների ու եվրոպական դիվանագետների դռները: Դիմումի մեջ նա նշում է նյութական և բարոյական այն գրկանքները, որոնց ենթարկվում էին Իրանի հայերը և աղբրում ցարին՝ միջնորդություն հարուցել շահի առաջ՝ հոգուտ հայերի: «Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրա պարսից պաշտոնյաների կողմից գրվում են ահա օտարտի հարկեր,— գրում էր Հակոբը,— և մեզ, որ շենք կարողանում մեր շքավորության և աղքատության պատճառով հատուցանել այդ հարկերը, բշտում են դեպի բանտ, շարշարում են, տանջում և վերջապես, որ մահամեղականների հետապնդած նպատակների հետինն ու զլխավորն է, հարկադրում են ընդունել իրենց դավանանքը: Եթե այդչափ հալածանքները մեզ գրկեին միայն հարստությունից ու աշխարհային ստացվածքներից, շարիրը փոքր կլիներ, և ես լռության կոռչի այն, բայց, երբ օր օրի վրա մեր ի Քրիստոս սնվող դավախներին տեսնում եմ հեռացած (մայրական) սախնքներից, խաբված դեռահասներին (հարազատ) եկեղեցուց հեռանալիս, իսկ շափահասներին ու խեղահասներին՝ բռնությամբ մղված դեպի փրկումի՞ն դեմքնից դավանանքը, այդ մեծ կորուստը ասկալու անկարող՝ ահա, արցունքներ թափելով Տիրոջ պատկերի առաջ, մոտենում եմ նաև Ձերդ Մեծությանը, Ռուսաց թագավորությանը, մեջ Աստուծո տեղապահ կայսրիդ, բարեհաճ օգնություն խնդրելու թշվառության մեջ ճնշվածներիս համար և աղաչելու, որ երբ Ձերդ ամենազոր մեծությունը պարսիկների մոտ դեսպաններ ուղարկելու լինի՝ նրանց հրամայե մի քանի խոսք ասել ի պաշտպանություն մեր ստացվածքի, այլև... դորձ դնել համապատասխան աղղիցություն: Ռուս իշխանությունը մեծ նշանակություն ունի պարսիկների աչքում, ուստի և դուցե (սրանք) առաջիկայում հավակնություն շունենան այնքան տանջելու նրանց, ովքեր ի Քրիստոս-Աստվածն ունեցած ընդհանուր (իմա՝ համաքրիստոնեական) հավատի շնորհիվ, կարող կլինեն դեպի Ձեզ ուղղել իրենց հայացքը»<sup>1</sup>:

Կաթողիկոսի այս գրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ ինչպես վրաց իշխանները, այնպես հիմա նաև արևմտասկյու-

<sup>1</sup> Տե՛ս մեր հոդվածը՝ «Հակոբ Զուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին», Աբաբաթ, 1915, էջ 775 և հա.: Թարգմանությունը տալիս ենք գրական մշակումով:

պական պետութիւնների հետ բանակցող հայերը աչքաթող չէին  
ունում այն հանգամանքը, որ Կրանական ճնշումների դեմ իրենք  
կարող են օժանդակութիւն սպասել նաև Ռուսաստանից:

Այս ենթադրութիւնը հավաստելու համար պետք է վկայակո-  
չենք տարիներ հետո, 1701 թվականին, Իսրայել Օրիի Մոսկվայում  
արած մի հայտարարութիւնը, ուր նա ուղղակի ասում էր, թե Հա-  
յաստանի բախար վճռելու համար էջմիածնի խորհրդածուղովը որո-  
շած է եղել դիմել Մոսկվա: Օրիի այդ հայտարարութեան մեջ խոսք  
կա նույնիսկ այն մասին, թե էջմիածնի խորհրդածուղովի անունից  
բանակցելու հղված պատվիրակների առաջ խնդիր է դրված եղել  
Հայաստանի բախար վճռելու համար դիմել Նախ և առաջ ուս ցա-  
րին և միայն մերժում ստանալու դեպքում ապավինել արևմտյան  
պետութիւնների միջամտութեանը:

Գծբախտաբար էջմիածնի պատվիրակութեան ձեռնարկած ուղե-  
վորութեան ընթացքը հարկադրում է դալ այն եզրակացութեան, որ  
Օրիի հայտարարութեանն արվում էր իրողութիւնները հետին թվով  
«շտկելու» մտայնութեամբ և այն չի կարելի ընկալել որպես տա-  
ռացի ճշմարտութիւն: Ին՝ Պետիկի և մյուսների վկայութիւնները,  
թե՛ Հակոբ կաթողիկոսի գլխավորած պատվիրակութեան և թե՛, Ինչ-  
պես պիտի տեսնենք, հենց իրա, Օրիի, գործունեութեան սկզբնա-  
շրջանը կասկած չեն թողնում, որ էջմիածնի խորհրդածուղովը որո-  
շած է եղել հայ ժողովրդի և մասնավորապես նաև իրանահայ ժո-  
ղովրդի հուշերը կապել ոչ թե բացառապես կամ առաջին հերթին  
Ռուսաստանի, այլ Մերձավոր Արևելքում քաղաքական նպատակ-  
ներ հետամտող եվրոպական պետութիւնների, և սրանց քվում նաև  
Ռուսաստանի հետ:

Եթե Մոսկվա ուղևորվելու փոխարեն Հակոբը բռնեց Արևմուտ-  
քի ուղին, այդ պիտի բացատրել նրանով, որ էջմիածնի պատվի-  
րակների գործունեութիւնը մեկուսացած չէր:

Ինչպես տեսանք, Հակոբը և յուրայինները քաղաքական կոն-  
տակտ ունեին Իրանի և Ռուրքիայի դեմ պայքարի ելած վրաց ար-  
քունիքների հետ: Ըստ երևույթին վրացիների և հայերի կողմից  
Ռուսաստանի հետ բանակցութեաններ վարելու մտահոգութիւնը  
ստանձնել էին նման գործի համար առավել մեծ կապեր ու փորձ-  
ունեցած վրաց թագավորները, մինչդեռ, ընդհակառակը, հայերի և  
վրացիների անտնից Հսոմի և եվրոպական պետութիւնների հետ

<sup>1</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, վավերագիր № 14:

բանակցություններ վարելու գործը իրենց վրա պիտի առնեն և չմիաժխի պատվիրակները. նման առաքելության համար նրանք ունենին վաղածանոթ սղիներ և բազմաթիվ նախընթացներ ու դուրսեցուցուցներ: Պատմական մի շարք այլ փաստեր, սրանց պիտի անդրադառնանք շուտով, կասկած չեն թողնում, որ XVII դարի վերջին տասնամյակներում հայ և վրաց գործիչների միջև դիվանագիտական աշխատանքի այդպիսի բաժանում իրոր եղել է:

Որքա՞ն տեկց Հակոբի ղեկերումը Վրաստանում: Վերը բերած վկայութայններից չի կարելի ճիշտ համարել Ջաքարիա Սարկավազի տեղեկութունն այն մասին, թե Հակոբը մնացել է Վրաստանում միայն մի քանի օր: Հակոբի Թուրքիա մեկնելու հանդամանքները Ջաքարիա Ագուլեցին ամփոփում է 1679 թվականի վերջերի՝ Այս կարող էր հիմք ծառայել ընդունելու, թե կաթողիկոսը Վրաստանում ղեկերած է եղել մոտ երկու ու կես տարի—1677 թ. հուլիսից մինչև 1679 թվականի դեկտեմբերը—եթե ստիպված չլինենք հաշվի առնել նորահայտ այլ փաստեր:

Վերջերս հրատարակվեցին Հակոբի մի շարք նամակները, որոնք պարզում են, որ նա գտնվում էր Կ. Պոլսում արդեն իսկ 1679 թ. հունվարին: Այս իջնելով, ըստ երևույթին, Տրապիզոնում, Կ. Պոլիս ուղևորվելուց առաջ Հակոբը նախապես անցել է Թուրքիայի հայաբնակ գավառները: 1680 թ. հուլիսի 2-ին նամակով գիմելով Եղիազար Այնթապցուն, Հակոբը հաղորդում էր նրան, որ պարտքերի հաշիվները փակելու համար ստիպված է եղել Կ. Պոլիս ժամանելուց առաջ հանդանակություններ անել էրզրումում, Երզնկայում, Համիդում, Սերաստիայում և Թոխատում: Սակայն տակավին Համիդում գտնված ժամանակ իր սլարտատերերը և սրանց մեջ հատկապես մեզ նախածանոթ ջահեկցի Խոսրովը լուր են հասցնում մեծ վեղիրին, թե հայոց կաթողիկոսը մտադրութուն ունի Համիդից ուղղակի անցնել Հալեպ «և անտի այլուր փախչել կամի»: «Վասն որոյ,—հարում է Հակոբը,—հարկիւ մեզ վերայ իզար էմրով մուպաշիր ուղարկեցին և բերին առա (Կ. Պոլիս), յորում և խափանումն եղև օգնութեանն, որ լինելոց էր քաղաքացն»<sup>2</sup>: Նույն նամակից տեղեկանում ենք, որ հասնելով Կ. Պոլիս, Հակոբը երեք անգամ փորձ է արել ժողով («սինհսողոս») գումարել Խոսրովի հաշիվները գոցելու նպատակով, բայց միշտ ապարդյուն:

<sup>1</sup> Նորայր Պողոսեան, նույն տեղում, 11, էջ 157 և 159:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 162 և հո.:

1678 թվականին Հռոմի եկեղեցապետության մեջ լուր տարած-  
վեց, թե Հայաստանի «առաջին պատրիարքը» բազմաթիվ «միտրո-  
պոլիտաների» ուղեկցությամբ դալիս է Հռոմ՝ հպատակություն հայտ-  
նելու պապին:

Անցան ամիսներ: Կտրը չճշտվեց: Եղան նույնիսկ պնդողներ,  
թե հայ եկեղեցին նույնքան հեռու է պապականից, որքան՝ Հայաս-  
տանը Հռոմից<sup>1</sup>:

Միայն 1679 թվականի դեկտեմբերին էր, որ սպասված պատվի-  
րակները երևացին Կ. Պոլսում: Բայց նրանք շարժանակեցին Հռոմ  
տանող ճանապարհը: Պարզվեց, որ վտանգավոր կլիներ բանակեցել  
արևմտյան պետությունների և հատկապես պապական եկեղեցու  
հետ, ոմնենալով թիկոմքում ազգային երկփեղկված իրականու-  
թյունը և մասնավորապես Եղիազարի գլխավորած ընդդիմությունը:  
Ուտի Կ. Պոլսից Արևմուտք ուղևորվելուց առաջ կաթողիկոսն սև իր  
ուղեկիցները Երևմիա Քեոմյուրճյանի խորհրդով սրտեցին հանդի-  
սում ունենալ և համաձայնության դալ Եղիազարի հետ<sup>2</sup>:

Արդյոք այն պատճառով, որ Եղիազարը ձգձգում էր հանդի-  
սումն ու շժամանեց Պոլիս<sup>3</sup>, թե այն, որ «անհավատները» խոչընդոտ  
եղան Հակոբի մտադրություններին<sup>4</sup>, պատվիրակների ուղևորու-  
թյունը դեպի Հռոմ խափանվեց:

Կան տեղեկություններ, թե վլացական ապստամբությունից  
հետո Հայաստանում սկսված իրանական հալածանքները հարկա-  
դրել էին, որ պատվիրակության աշխարհիկ անդամները շտապ տուն  
վերադառնան Կ. Պոլսից<sup>5</sup>:

Բանակցությունները նախապատրաստելու համար 1679 թվա-  
կանին Հակոբը կրկին անգամ Հռոմ էր ուղարկել Նախիջևանի  
առաջնորդ Առաքել Բոբիկ վարդապետին: Պիտի կարծել, որ Բոբիկը

<sup>1</sup> Հմմտ. M. le Chevalier Ricaut, Histoire de l'Etat present de l'Eglise Greque et de l'Eglise Armenienne, Middelbourg, 1692, էջ 422 442:

<sup>2</sup> Չ ա մ չ յ ա ն, նույն տեղում, III, էջ 718 և 1901 թ. «Ընդարձակ տա-  
րեցույց Ազգային հիփանդանոցի», Կ. Պոլիս, էջ 109 և հտ., Ն. Պ ս զ ա ր յ ա ն,  
նույն տեղում, II, էջ 162:

<sup>3</sup> Չ ա մ չ յ ա ն, նույն տեղում:

<sup>4</sup> P. Th. Ch. F. (Leuriau), Estat present de l'Armenie, Paris, 1694,  
էջ 241 և հտ., և Յ 3 0 Յ, նույն տեղում, վավերագիր Ա.Ա 2, 5, 6 և 12:

<sup>5</sup> Յ 3 0 Յ, նույն տեղում, վավերագիր Ա.Ա 6 և 7:

Ճեկն էր այն եկեղեցականներից, որոնք 1677 թ. նշված էին էջ-  
միածնի խորհրդածողովի կողմից Հռոմում բանակցելու համար: Նա  
մահացավ Հռոմում, նախքան կատարել էր վերջին իր առաքելությունը:  
Հռոմի նրա տապանաքարի վրա ակնարկություն կա այն պայթա-  
րի մասին, որ մզկէ էին նրա դեմ Հակոբի եկեղեցական և բաղաբախան  
վարքադէի հակառակորդները. «Ձվիշտ և զհալածանս կրեաց բա-  
զումս, — կարգում ենք այդանդ, — գուով ամաց Կէ (=67), լի ար-  
դեամբ և աշխատանօք. հանդեաւ ի Բրիստոսն աւուր 2 (6) օգոս-  
տոսի ՌՌԶ (=1680) և Հայոց ՌՃԻԹ (=1129)»<sup>1</sup>:

Ինքը՝ ծերունի կաթողիկոսը, մեռավ Պոլսում Բորիկից մի քանի  
օր առաջ, 1680 թ. օգոստոսի մեկին<sup>2</sup>:

Կաթողիկ հեղինակների ասելով՝ պապին ներկայացնելու հա-  
մար Հակոբը մահից առաջ հնազանդության թուղթ պիտի հանձնած  
լինի հռոմեական աթոռի Կ. Պոլսի ներկայացուցչին:

Կաթողիկ ոգով կազմված մի ժողովածու, գրած 1700 թ., ունի  
«Դավանութիւն Տէր Յակոբայ Սրբազանի Կաթողիկոսին Հայոց»  
վերնագրով այդ թղթի պատճենը: Դավանության այս թղթում  
«առաջի պատվական մեծարգո եպիսկոպոսի Կալաթիոյ որ է ի կար-  
գէն սրբոյն Յրանչիսկոսի Տէր Գասպար Գասպանինի վերատեսուչ  
սուրբ աթոռոյ Չերիկոյ և ի կարգին Յիսուսեան Տէր Յրանցեա Սի-  
ճիլի», Հակոբը հայտարարում է, թե ինքը ընդունում է եկեղեցական  
չորս տիեզերական ժողովների որոշումները և հպատակվում է Հռոմի  
պապին: «Ի ժամու մահվան իմոյ, — ասված է այդ գրության մեջ, —  
.. հաւատամ և զնոյն ինքն սուրբ եկեղեցին Հռօմայ, ունիլ լի և զկ-  
րագոյն և կատարեալ իշխանութիւն և պետութիւն ի վերայ ընդհա-  
նուր կաթողիկէ եկեղեցւոյ»: Հայտարարությունը թվարկված է  
1680 թ. օգոստոսի 1-ից, այսինքն՝ Հակոբի մահվան օրվանից<sup>3</sup>:

Օրմանյանը մճռականապես առարկում է այդ թղթի վավերա-  
կանությունը դեմ: Կասկածելի է թվում այդ թուղթը նաև մեզ: Սակայն  
թեր կամ դեմ կարծիք հավաստելու համար առայժմ չկան ստույգ  
ավյալներ<sup>4</sup>:

<sup>1</sup> Գ ա լ ե մ ք յ ա ր յ ա ն, նույն տեղում, էջ 281 և հտ.:

<sup>2</sup> Ե ր ե մ ի ա Չ ե լ ի պ ի Ք ե ո մ յ ու ր ճ յ ա ն, Ստամբուլի պատմու-  
թիւն, ծանոթ. էջ 601 և հտ.:

<sup>3</sup> Հայկական ՍՍԹ Մտանագորան, ձև. № 1653, էջ 481—485:

<sup>4</sup> Հմմտ. Չ ա մ չ յ ա ն, նույն տեղում, Fleuriau, նույն տեղում,  
Ս. լ ի շ ա ն, Սիսական, էջ 351 և հտ., Ա. լ. Պ ա լ ճ յ ա ն, Պատմութիւն կաթո-  
ղիկէ վարդապետութեան ի հայս, Վիեննա, 1878, էջ 163, Օ ր մ ա ն յ ա ն,

Բոլոր պարագաներում կաթողիկոսի մահով և հարակից հանդամանքների բերումով անկատար մնացին 1677 թ. էջմիածնի խորհրդաժողովի որոշումները: Գրանով արժեքազրկվում էր նաև «կաթողիկէ» կամ «հերձվածող» կրօնավորներին այնքան հուզած Հոռմին «հնազանդվելու» կամ «չհնազանդվելու» խնդիրը: Այս դեպքում ևս վերհիշենք հիմնականը. հայ-հոռմեական եկեղեցիների փոխհարաբերության խնդիրը կարող էր ստանալ գրական կամ բացասական լուծում միայն հայերի քաղաքական ինքնորոշման հարցի լուծման հետ կապակցված:

Այնուամենայնիվ Հակոբի մահից հետո իսկ հայ կյանքում երկար ժամանակ շարունակվում էին էջմիածնի խորհրդաժողովի շուրջն արժարժված թեր և գեմ կարծիքների բախումները:

Այսպես, Աղեքսանդր Զուղալցեցի կաթողիկոսը հավանորեն արտահայտում էր էջմիածնի խորհրդաժողովին գեմքնթաց կղերի և խոջայության որոշ հոսանքի կարծիքը, երբ 1703 թվականին գրած մի կոնդակում Հակոբի մասին ասում էր. «Ասող կենաց իմոց, թէ քանի ներհակք՝ հակառակք յարեան ընդդէմ սորա, և քանի սճիրք գործեցան ի ժամանակս սորա՝ յարեելս, և յարեմուտս, ի հարաւ, ի հիւսիս, և ի միջերկրեանս՝ աչ լինի ընդ գրով արկանել և յամենայն ժամանակս կենաց իւրոց ի կապանս ի բանտի, ի կալանս, մանաւանդ թէ ի փախուստ և փ հալածանս յերկրէ յերկիր և յաշխարհէ յաշխարհ: Եւ այսպէս նեղութեամբ վճարեաց զկեանս իւր յՆստամբօլ քաղաքի՝ կարօտ սուրբ աթոռոյս և հայրենի զերեզմանաց»<sup>1</sup>:

Բայց Հակոբի գլխավորած գործն ուներ նաև համակիրներ: Ուխտասանդի դարձնելով «հոգևոր ախրոջ» զերեզմանը՝ Կ. Պոլսում զեզերող հայ «գաղափայտները» խոսում էին նրա վրա իջած «լույսի» մասին: Ի վերջս գրվատական խոսքեր էր ասում նրա մասին անգամ ժամանակի պոլսահայ մտավորականության ամենից ակնառու ներկայացուցիչը՝ Երեմիա Քեոմձուրճյանը:

Այս գործչին տեսանք հայ հակամարտ հոռմեացիները քննադատողի դերում: Սակայն նա ի վիճակի չգտնվեց արդատավորելու

Ազգագրատու մ, II, էջ 2615: Վարք հիշատակվելիք իր «Ողբի» մեջ Երեմիա Քեոմձուրճյանը նշում է Հակոբի կորած մի ձեռագիրը, որ արձանագրված է եղել նրա ժամանակի պատմությունը՝ «Զպատմութիւնս գրեցեր, յիշատակ մեզ թողեր, զգանդապ աշխարհի ծանուցեր և այլն»: Այս ազգյուրը չի հասել մեզ կամ ասկավին հայանված չէ:

<sup>1</sup> «Ազգասէր», կալիպթա, 1819, էջ 93 և հ.ա.:



քննադատական իր հայացքները նոր որևէ ծրագրով, նախապծել հայ ազատագրական շարժման համար նոր մի ճանապարհ, մատնանշելով հայ ժողովրդին նրա երազած Ավետաշայ երկրի ապահով ուղին: Առայժմ Քեոմյուրճյանը ևս ոտք էր դնում խարուսիկ այն արահետի վրա, որով իրենից առաջ ապարդյուն քայլել էին բազմաթիվ ուրիշները:

Ձեռագրերից մեկում հայտ բերինք Քեոմյուրճյանի ցարդ անձանոթ էջերը, որ պատրաստում ենք հրատարակութան մի այլ աշխատութան մեջ: Այդ էջերը պարզում են, թե պատմական ինչ իրադարձությունների ապավորութան տակ էր գործում այս պահին գրողը: Քեոմյուրճյանն անդրադառնում է այն պարտություններին, որ կրում էր Թուրքիան եվրոպական բանակների և նավատորմի չհարվածներից: «Օսմանցիք, — գրում է նա, — որ զԱնատոլի և զՌումելի, Պոնտոս ծով ու մինչ յԵգիպտոս տիրէին իշխեալ զամս իբրև ԴՃ (400) միշտ գերելով և կոտորելով և տիրելով վիճակաց, արդ զամս Գ (3) է աստանօր, զի ինքեանք հալածեցան, կոտորեցան, գերեցան ու կողոպտեցան և վէնէժացիք և նէմցէք զբազում յաղթութիւն արարեալ ի ծով և ի ցամաք՝ առին զվիճակս օսմանցոց երկրի, որք ընդ սահմանօք փրեանց՝ մեծաւ յաջողութեամբ: Ընդ որս ամենայն թագաւորութիւնք աշխարհի զարմանան, մանաւանդ թէ և ինքեանք սբանչանան, կարծելով թէ օգնողն իւրեանց Մեհմեան է, կարապետ Նեոինն: Որոց ոչ միայն զօրք և զօրազուլսք իսպառ ջնջեցան, այլև մեծամեծ փաշայք և պէկլերպէկիք ի սուր և սով գերութեամբ մաշեցան ու կարծի թէ յեաին թշուառութիւնն սոցա նշանք են զարմանալի տկարութեանց սոցա և վառիլն յաջողութեամբ և քաջութեամբ քրիստոնէից, զորոց պատմութիւնս գրեալ իսկ եմք ժամանակիս ականատեսութեամբ: Բայց աստ յիշեցուցանեմ զհարկատուացս նեղութիւն, քան զյառաջն առաւել, որսէս թէ նման շան կատաղելոյ: Յաղեցելոց ի ճոխութիւնս և ի հարստութիւնս իւրեանց յաւելուին դոռողութեամբ և անիրաւութեամբ և զբազարտութեամբ ազահտութեան ախտից: Իսկ յորժամ տկարացան՝ որպէս զքաղցեալ շոճնս և զգայլ առաւելան խորամանկութեամբ և զրկելով ի դարանի և յայտնի, յանապատս, և ի շէնս, և ի ճանապարհի: Փրկագործն Քրիստոս, որ ազատեաց զմեզ ի դժխոց և ի Բելիարայ բռնութենէ, ազատեացէ զհաւատացեալս իւր յերևելի թշնամեաց մերոց նենգութեանցն մահմետական սնոտի ազգաց թերօրինականաց դարշելեաց»:

Այս տողերի մեջ Քեոմյուրճյանը հայտնվում է որպէս թուրք

բոնատիրութեան գատաւարտող և ռայայի ազատագրման ջերմ ախոյան: Ակնհերև է, որ նրա ակնկալութեանները շաղկապվում էին Թուրքիայի կրած պարտութեանների հետ: Նրա մյուս գրվածքներում հանդիպում ենք մի շարք էջեր՝ ուղղված եվրոպական պետութեաններին, որոնցից փրկութեան էր սպասում հայ ժողովրդի համար:

Էջմիածնի խորհրդաժողովից քիչ հետո, 1679 թ., նա գրեց Լեհաստանի թագավոր Յան Սուբեսկուն ուղղված ներբող, ուր մեծարում էր այդ թագավորին՝ որպես քրիստոնյա ժողովուրդներին

Սիրող, խրնամող, գատախարակող  
Հայր և դատաւոր, տէր և թագաւոր...  
Ապստամբողաց թշնամեաց յաղթող...  
նղեոնագործից սաստօղ և տանջօղ,  
Դատօղ և սպանօղ, արգար թագաւոր...  
Քաւիչ և սգատիչ, փրկիչ թագաւոր<sup>1</sup>:

Այլևլի ուշ՝ 1687 թ. Քեոմյուրճյանը գրեց «Ուղերձ համառօտ առ Լուդովիկոս ԺԴ թագաւոր Գաղիոյ, ի պատեհառիթ գահակալութեան նորին... ի դեսպանութեան Պ. Փետրօ Ժէրարդէնի, որ բնակէր քի Ղալաթիա»: Այդ ուղերձը, ինչպես և 1682 թ. Քեոմյուրճյանի «Պատարանք իւրոյ ժամանակին» քերթվածքը անտիպ են ցարդ և մեզ ծանոթ միայն վերնագրերով: Բայց շինք սխալվի, եթե պնդենք, որ նշանավոր գրողն իր կյանքի այդ ժամանակաշրջանում դիմուղղվում էր դեպի Հակոբ Զուգաչեցու բոնած ճանապարհը: Հիրավի, տակավին այդ կաթողիկոսի մահվան առիթով գրած իր «Ողբի» մեջ, անգունելով նրա հակառակորդներին, Քեոմյուրճյանը բեւեռում էր ազգի միտքը աւետիլներով սայարկված հին հուսակայանի վրա:

Երգս սրբոց արժան,  
Երգս կախանական սղորմ սղբական,  
Ազգիս Արամեան, տանս Թորդոմական, ցեղիս Արևիան,  
Ողբս մովսիսական, ըստ Ֆիլիսօֆիան, սրբոյ Խորենեան,  
Ողբս Կողեանեան սրբոյ Յոհանեան.  
Աւազ ևզկական,  
Անձր ներսիտեան,  
Յեղին Պաշլուեան լուսաւորչական.

<sup>1</sup> Երեմիա Քեոմյուրճյան, Օրագրութիւն, Երուսաղէմ, 1939, էջ 326 և հաւ.

Ըստ Սահակայ տեսիան,  
 Մարգարէութեան հոգովն ազգական.  
 Իսկոյն լրացան  
 Բանին զոր խօսեցան և կատարեցան,  
 Երկուց գաւազանն,  
 Բագատրականն, հայրապետական:  
 Ազգին Արշակեան  
 Պայծառ Խաղբն բարձան և նուաստացան,  
 Սրբոյ Գրիգորեան  
 Լուսաւորչական աղօտեալ շիջան:  
 Օտար ազգը յարեան  
 Ի մեզ բռնացան, մեր ծառայական.  
 Աշխարհ մեր առան,  
 Զվաստակա մեր կերան մեզ ակն յանդիման:  
 Բարի ազօթիւր Սուրբ հայրապետիս  
 Տէր այց արա տառապեալ ազգիս,  
 Ազաշեմբ, լուր Տէր՛ս:

Քեով՛ջուրճյանի «Ողբը» ազգարարում է այն խոհերը, որոնք կապվում էին Հակոբ Զուղայեցու ամուսակ ակնկալությունների հետ: Այն ընթացք էր տալիս այն հուշերին, որոնցով գերեզման էին իջեցնում մեռած կաթողիկոսին նրա գլխավորած քաղաքական ձեռնարկի կուսակիցները:

Զուղայեցու մահը վերջ էր տալիս այդ ձեռնարկին: Պուսում մնացած նրա ուղեկիցները ցաքուցրիվ էին լինում, չհասնելով ոչ մի արդյունքի:

Ճանապարհը դեպի Եվրոպա շարունակում էր միայն դրանցից՝ մեկը՝ Իսրայել Օրին:

1 «Հանդես ամսօրյա», 1933, էջ 589 և հա.



II

ՏՐՈՐԱԿԱԾ ՈՒՂԻՆԵՐՈՎ



## 1. ՆՍԻՄՏՎՅԱԼՆԵՐ ԻՐՐՅԵՆԷՆ, ՕՐԻԻ ՄԱՍԻՆ

Օրիին վերաբերող նյութերի բնույթը և դրանց նկատագրության ուղին: Օրիի ծննդավայրը: Ղափանը XVII դարում: Իրանական պատժարշավը: Օրիի նախնիները: Նախնակա՞ն դատաբա՞ռակություն: «Տոհմալին արաղիցիաներ»: Կոնստանդանուփը Իրանում: ժառանգական մեկիփոքյան բնաջնջումը Սյունիքում: Օրիի հայրը Հակոբ Ջուղայեցու գլխավորած պատվիրակության անդամ: Օրիի ուղևորությունն Արևմուտք:

*Մոտ քսան տարի Արևմտյան Եվրոպայում զեզերելուց հետո՝ 1699 թվականին Իսթրալե Օրին վերադարձավ հայրենիք: Իր հետ նա բերել էր վրաց Գուրգին խամին (Գիսրգի XI թագավորին), հայ եկեղեցու պետերին ու Հայաստանի մեկիքներին հասցեագրված գրություններ: Դրանց մեջ գերմանական իշխաններից մեկը, Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմը, պատրաստակամություն էր հայտնում օգնության դալ Հայաստանի ազատագրման գործին: Կուրֆյուրստը տեղեկացնում էր, որ այդ գլուխ բերելու գործում հայերին ընդառաջելու են Հոսմի պապը, գերմանական կայսրն ու սրա զինակիցները: Անհրաժեշտ է միայն, որ հայ ժողովրդի զեկավարները Օրիի միջոցով հավաստեն ու ճշտեն իրենց զիրքը:*

*Կուրֆյուրստի գրությունները, Հայաստանից ստացված դրանց պատասխանները և Օրիի դրանց մասին տված պարզարձանությունները հիմնական այն վավերագրերն են, որոնք մի շարք տեղեկություններ են պարունակում ինչպես նրա անձնավորության, այնպես նաև Հայաստանի ազատագրման շուրջը Արևմուտքում վարած նրա բանակցությունների մասին:*

*Երբ հազիվ մի երկու տարի դրանից հետո Օրին մեկնեց Ռուսաստան և նույն խնդրի շուրջը բանակցություններ սկսեց ցարական կառավարության հետ, ուսև և եվրոպական արխիվներում կուտակվեցին մի շարք նոր վավերագրեր, սևր նոր տեղեկություն-*

ներ են հանդիսւում ինչպէս նրա կյանքի և գործունեութեան նախընթաց էտապի, այնպէս նաև նրա քաղաքական նոր ծրագրի մասին:

Եւ, ի վերջոյ, երբ 1707 թվականին Օրին Ռուսաստանից ուղևորվեց Իրան, ուր բանակցությունների մեջ պիտի մտներ շահի կառավարութեան հետ, նրա անվան ու դիտարկությունների շուրջը խմորվեցին թեր ու դեմ հայացքներ՝ մերթ աննպաստ, մերթ նպաստավոր լույսի տակ դնելով նրա ամբողջ կյանքն ու գործունեութունը:

Օրին անձնավորութեան, նրա ուղևորությունների, Արևմուտքում, Ռուսաստանում և Իրանում նրա հետամտած նպատակների ու վարած բանակցությունների մասին մինչև այժմ հայտնաբերված վավերագրերը համախմբված ու հրատարակված են Կ. Յվյանի (Г. А. Эзов-и) Сношения Петра Великого с армянским народом» վերնագրով 1898 թվականին Պետերբուրգում լույս ընծայած հայտնի ժողովածուի մեջ: Լրացուցիչ մի քանի վավերագրեր կցված են 1914 թվականին Մյունխենում տպված մեր «Israel Ory und die armenische Befreiungsidee» և 1921 թվականին էջմիածնում լույս տեսած մեր «Հայ-ուսա օրինատացիայի ծագման խնդիրը» աշխատություններին:

Նշված վավերագրերից մի քանիսը տարբեր ժամանակներում ու վայրերում, քաղաքական տարբեր հանդամանքներում ու դիվանագիտական տարբեր նպատակներով կազմված գրություններ են, որոնց մեջ հաճախ հենց Օրին ինքն է հանդիսանում դրանց մեջ արձանագրված վկայությունների սկզբնաղբյուրը: Ուշի-ուշով քննելով այդ վկայությունները՝ սկսած կանոց ևնք առնում այն իրողութեան առաջ, որ դրանց մեջ միևնույն նյութի շարադրանքը երբեմն տրված է փրարից խոտորոզ կամ միմյանց հակասող խմբադրություններով: Իր անցյալին ու հետամտած նպատակներին Օրին անդրադառնում էր տարբեր հանդամանքներում. և միշտ չէ, որ անհրաժեշտ կամ նպատակահարմար էր համարում արձանագրել անվերապահ ճշմարտություններ: Երբեմն նա հարկ էր համարում պարուրել իր անձն ու գործը սոսկ ճշմարտանման հայտարարությունների շամանդաղով, և վարմանալի չէ, եթե նման դեպքերում Օրին դիվանագիտական առատաբանությունը, նրա հավաստիացումների արժանահավատութեան հետ հայտնվում է հակառակ հարաբերութեան մեջ:

Պարզ է, որ եթե չենք կամենում պատմական իրողությունների անախորժութունը փոխարինել ռոմանտիկական վիպասանութեան հոգեպարար պատրանքով, պետք է որ միշտ քննաբար օգտա-



գործենք Օրիի անվան հետ կապված վավերագրերը: Բարերախտաբար, եթե ոչ միշտ, դեթ հաճախ հնարավոր է ճշտել Օրիի վկայությունները՝ ելնելով անառարկելի փաստերից կամ կողմնակի վավերագրերի կամ անձանց՝ նրա մասին ընձեռած ցուցմունքների ուշադիր քննարկումներից: Բոլոր պարագաներում ազդյունների պատմա-բանասիրական վերլուծման ճանապարհով պիտի ջանանք հավաստել Հայաստանի ազատագրման շուրջը Օրիի արժարժած դադափարները և լուսարանել նրա կյանքի ու գործունեության մի շարք հակասական ու մութ հանգամանքները, որոնք հաճախ, և անգամ մեր օրերին, տարակուսանքների ու թերմտանքների առիթներ են տվել նրա մասին զրոյ հեղինակներին: Ի մոտո ղիտելով, դժվար չէ նկատել, որ հաճախ դրանց առաջացման պատճառը միայն Օրին չէ, այլև նրա մասին զրոյ ու դատող հեղինակները, ավելի ճիշտ՝ վերջիններիս թերի իրազեկությունը հաջ ժողովրդի և մասնավորապես հայ ազատագրական մտքի պատմության այն հարցերին ու ազդյուններին, որոնք հանդուցավորվում են Օրիի անվան շուրջը: Ակներևաբար Օրիի գործունեությունը, հակառակ առերևույթս պարզ ու զբաղեցուցիչ իր սյուժետին, չի պատկանում պատմաղիտական հեշտ այն թեմաների շարքին, որոնց մասին բավական է կարգալ հինգ զիրք, վեցերորդը շարագրելու համար: Միայն հարցերի հանրակողմանի հետազոտության և բաղմամբիվ ցարուցրիվ ազդյունների պատմա-քննական լուսաբանության ճանապարհով կարող է հնարավոր դառնալ ոչ միայն Օրիի գործունեության, նրա կյանքի ու հայացքների քիչ թե շատ արժանահավատ վերապատկերումը, այլև նրա վաստակի պատմագիտական լիարժեք գնահատականը:

Հետագա գրվազներում պիտի փորձենք ցուցահանել եթե ոչ Օրիի կենսագրության բոլոր մանրամասնությունները, դեթ նրան ողեշնչած իդեաների պատմական մթնոլորտը, նրա հետապնդած նպատակները ու դրանց հետ կապված նրա գործունեությունը: Օրիի քաղաքական ուղեգծի տ. դադափարարանության պատմա-քննական լուսաբանության միջոցով պիտի որոնենք օրյակտիվ այն շարհանիշները, որոնց օգնությամբ պիտի ջանանք առ նաև նրա անձի տ. գործունեության ընդհանուր գնահատականը:



Պարզենք նախ, թե ո՞վ էր Օրին և ի՞նչ առնչություն ուներ նա նախընթաց գրվազում քննարկված իրագարծությունների հետ:

Օրբի տված բայատարույթյունների համաձայն, Նշա հայրը, մե-  
լիք Իսրայելը, էջմիածնի խորհրդաժողովին մասնակցած և Զու-  
ղայեցու հետ արտասահման մեկնելու համար ընտրված պատվի-  
րակներից մեկն էր: Ստիպված լինելով տուն վերադառնալ Կ. Պոլ-  
սից, մեկիք Իսրայելը Զուղայեցու տրամադրության տակ էր թողել  
քառամյա իր սրբուն՝ Օրբին, որը վերահիշյալ պատվիրակությա-  
նը ուղեկցել էր Հայաստանից Վրաստան և այդտեղից՝ սուլթաննե-  
րի մայրաքաղաքը<sup>1</sup>:

Եթե այս և այլ տվյալներից դժվար չէ որոշել Օրբի ծննդյան  
մոտավոր ժամանակը՝ 1659 թվականը, դուրսին չէ պարզել նրա  
ստույգ ծննդավայրը: Պֆալցի կուրֆյուրստի մի գրության մեջ  
Օրբի բերնից առնելով, նրա ծննդավայր է նշված «Մեծ Հայաստա-  
նի Նախիջևանի խանությունը»<sup>2</sup>: Լիովին համապատասխանում է  
սրան, երբ եզուփա Կրուշինսկին, որը անձնապես ծանոթացել էր  
Օրբի հետ և տեղեկություններ հավաքել նրա անձի և դործունեու-  
թյան մասին՝ «զավանցի» է նշում նրան: Բայց սխալված կլինեինք,  
եթե, կննդով Կրուշինսկու ինքյան արժեքավոր վկայությու-  
նից, Օրբի ծննդավայրը սրանելու լինեինք ներկայիս Ղափանի  
շրջանում:

«Ղափան» տեղանունը Օրբի ժամանակ և մասնավորապես  
Օրբի թղթերում դուրժ էր ածվում տարբեր առումներով: Այդ ան-  
վան տակ հասկացվում էր Մեծ Սյունիքը<sup>3</sup> կամ զուցի նույնիսկ  
սրա մի մհալը<sup>4</sup>: Սակայն Ղափան անունը երբեմն ուներ նաև լայն  
իմաստ՝ ընդգրկելով Մեծ և Փոքր Սյունիքը, ասել է՝ Կուր և Արաքս  
գետահովիտների մեջ ընկած ամբողջ այն լեռնաշխարհը, որ Ալի-  
շանը նշում է «Ղարարադ» տեղանունով<sup>5</sup>: Այսպես, Օրբի թղթերում  
Գանձասարի կաթողիկոսությունը քանիցս գետեղված է Ղափա-  
նում<sup>6</sup>: Մի անգ Գանձակ (Գանջա) քաղաքն, իսկ նա դնում է Ղա-  
փանի սահմաններում<sup>7</sup>:

<sup>1</sup> ՅՅՕՅ, նույն տեղում, № 1, 5, 6 և 11:

<sup>2</sup> «Oriundus ex provincia Naschivan Majoris Armeniae», նույն տե-  
ղում, № 1:

<sup>3</sup> ՅՅՕՅ, նույն տեղում, № 9, էջ 35:

<sup>4</sup> Նույն տեղում, № 9, էջ 35:

<sup>5</sup> Նահանգն Գարարադ.— գրում է Ալիշանը,— ի հիւսիսոյ կողմանէ  
ունի գճանձակ, յելից (յարեհլից) գիււրք, ի հարաւոյ գերասխ, ի մտից (յա-  
րեմտից) զՀայկական Նահանգն յՕրտուկասոյց յՍոթա», Գ. Ալիշան, Տե-  
ղագրութիւն Հայոց Մեծայ, էջ 86:

<sup>6</sup> ՅՅՕՅ, նույն տեղում, № 1 և № 5:

<sup>7</sup> Նույն տեղում, № 9:

XVII—XVIII դարերում Ղափանի և Ղարաբաղի սահմանները համընկնում էին երբեմն: Այսպես, Չամչյանը գրում էր, թե «աշխարհն Սիւնեաց և Արցախոյ, որոց սահմանը Ղափանու աշխարհ կոչեն յոմանց»<sup>1</sup>: Այսպես լինելով, հասկանալի է, երբ նրուսազեմի պատրիարք Գրիգոր Պարոնաբերը, որն ըստ ոմանց ծնվել էր Գանձասարու երկրում, իսկ ըստ այլ տեղեկության՝ Գանձակում, XVII դարի հիշատակարաններից մեկում նշվում է նաև Գրիգոր Ղափանցի անունով<sup>2</sup>: Ակներե է, որ ներկա գեղքում Գանձակի կամ Գանձասարի երկրների սահմանները համընկնում էին Ղափանի սահմաններին:

XVII դարում Գանջալի խանությունը Գանջա քաղաքով հանդերձ մտնում էր Ղարաբաղի բեկլարբեկության մեջ: Այսպես, Առ. Դավրիժեցիքն գրում է՝ «յերկիրն Ղարաբաղ ի քաղաքն Գանջայ»<sup>3</sup>: Չկա՞ ոչ մի տվյալ, որը ցույց տար, թե XVII դարում Ղափանը վարչականորեն մտնում էր Ղարաբաղի բեկլարբեկության մեջ: Անցողակի կերպով Ղափանին տիրացավ միայն XVIII դարի երկրորդ կեսում ապրած Ղարաբաղի Իբրահիմ խանը: -

Օրիի թղթում «Ղափան» տեղանվան լայն իմաստավորումը առաջացել էր դուցե նրանից, որ նրա ժամանակ Ղարաբաղի (ներսառյալ նաև Գանջալի) շրջանում արտադրված մետաքսը արտահանվում էր օտարերկրյա շուկաները գլխավորապես հենց Ղափանի վրայով տեղափանցիների՝ ձեռքով. այս իմաստով Ղարաբաղը մտնում էր վերջիններիս անտեսական ազդեցության շրջանի մեջ: Թե հիրավի Ղափանի միջով էր անցնում XVII—XVIII դարերում Անդրկովկասի հաղորդակցության ճանապարհներից մեկը, այդ ախներե է պատմական ավելուրներից: Բնորոշ է այդ տեսակետից Կրետացի Աբրահամ կաթողիկոսի ուղևորությունը Մուղանից էջմիածին, վրաց Շահնավազ խանի ուղևորությունը Թբիլիսիից Սպահան կամ Գերմանոս կաթիկոսի ուղևորությունը Ադոլիսից Մոսկվա. բոլոր այս ուղևորների մարշրուտն անց-

<sup>1</sup> Չամչյան, III, էջ 788:

<sup>2</sup> Հմմտ. Սյունք մեյան Արտավազյան արքեպ., Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Նրուսազեմի, I, էջ 104, 121 և 140: Ստուգապես հայտնի է, որ Գրիգոր Պարոնաբերը ծնվել էր Գանձակի խանության մեջ մտած Վաքանդա գավառի Սպիտակաշեն գյուղում: Տե՛ս Նորայր եպ. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, III, էջ 200:

<sup>3</sup> Առ. Դավրիժեցի, նույն տեղում, էջ 114:

նում էր Ղարաղաղի և Ղարաբաղի միջև ընկած «Ղափանի երկրի» վրայում<sup>1</sup>։

Անշուշտ Նախիջևանից և Գորիսից դեպի Աղղամ և Բարգասանցնող հաղորդակցություն և առևտրի բանակ մի ճանապարհն էր դա, որ մինչև հիմա իսկ չի կորցրել իր նշանակությունը։ Այն հանգամանքը, որ փաստորեն այդ ճանապարհն անցնում էր ոչ թե բուն Ղափանի, այլ Սիսիանի վրայում, ցույց է տալիս դարձյալ, որ Ղափան անունը հին աղբյուրներում դործ էր ածվում լայն իմաստով, ընդգրկելով նաև Սիսիանը։ Այնուամենայնիվ բուն Ղափանը ևս կենդանի կապ ունենր հաղորդակցության այդ ճանապարհի հետ։ Բավական է մտաբերել Ղափանի պղինձը կամ Բարդուշատի բրինձը, որոնց արտահանությունը խոշոր դեր էր կատարում «ղափանցիների» առևտրի մեջ։

1724 թվականին տեր-Անտոնը, տեր-Պետրոսը և քյոխվա Չալարին իրենց ղեկուցադրերում տարբերանշեղով Ղարաբաղը Ղափանից, ղետկողում էին Ղափանը Ղարաբաղի և Երևանի միջև հաշվելով վերջինս առաջին երկուսից երեք օրվա հեռավորության վրա։ Հայերի թիվը, ասում էին նրանք, Ղափանում ավելի շատ է, քան Ղարաբաղում։ Ղափանցիները, նշում էին նրանք, մեծ մասով (sic) զբաղվում են վաճառականությամբ, մինչդեռ Ղարաբաղում զրեթե բոլոր (sic) հայերը զբաղված են մետաքսագործությամբ<sup>2</sup>։ Ղափան տեղանունը այստեղ ևս գործ էր ածվում բավականաչափ ընդարձակ իմաստով, ընդգրկելով առևտրականների մեծ կոնտիգենտ ունեցող Նախիջևանի խանություն և այն շրջանները, որոնք կապված էին թուրք-իրանական տրանզիտային ճանապարհների և լեանայան առևտրի խոշոր հանգույցների հետ։ Սյոմնյաց լեռնատանից դատ այդ շրջանների մեջ մտնում էին Նախիջևանի խանություն և այնպիսի դյուսըր ու ավաններ, ինչպես Աստապատը, Օրդուբադը, Ագուլիսը, Դաշար, Ագարակը, Վանանդը, Մեղրին, Երընջակը, Շոռթթը, Ծաֆկերտը, Ղաղանչին, Յընան, Կալերը, Բիսար և այլն։ Նախիջևանի դավառում կաթալիկ պրոպագանդի կենտրոն հանդիսացավ Ջահուկը, որի վաճառականները XVII դարում այնքան խոշոր դեր էին խաղում պոլսահայ միջավայրում արժարծված տարածայնությունների ժամանակ։ XVII—XVIII դարերում

<sup>1</sup> Հմմտ. Ա. ր. ր. 5 և 6 Կ. ր. և 5 ց. ի, Գառութիւն, էջ 42, 73 և հա., և Զ. ր. ր. ի. և Ա. ց. և 1 և ց. ի, նույն տեղում, էջ 129 և հա.։

<sup>2</sup> Ծ Յ Օ Վ, նույն տեղում, № 368։

խաշոր առևտրականների օրրան էր հանդիսանում ըստ երևույթին նաև կաթողիկե և ուղղափառները. այդ մասին ևն վկայում այն շիրիմաբարերը, որ սլահվել են այդ ժամանակներից Հալեպում<sup>1</sup>: Արաքսով եզերված այս վայրերը, ընդգրկելով նաև Վաչոց ձորը, երբեմն մտնում էին Սյունյաց եպիսկոպոսության մեջ, որի կենտրոնը XVII դարում Տաթևի վանքն էր:

Տեր-Անտոնի և ընկերների ղեկուցադրերից տեղեկացանք այն մասին, որ ղափանցիները մեծ մասամբ զբաղվում էին առևտրով, մինչդեռ ղարաբաղցիները՝ բացառապես մետաքսագործություններ: Սա անշուշտ շափաղանցություն է. XVII—XVIII դարերում և՛ Ղարաբաղը, և՛ Ղափանը հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ: Ծիշա է միայն այն, որ Ղարաբաղում և Գանձակի խանության մեջ առհասարակ մասնավոր նշանակություն ունեին առևտրի ու արհեստագործության հետ կապված շերամապահությունն ու մետաքսագործությունը, ինչպես նաև այն, որ ղափանցիները բավական ուժեղ կերպով ներգրավված էին տրանզիտային առևտրի մեջ: Պիտի կարծել նաև, որ եթե ոչ մետաքսագործություն, դեթ շերամապահություն կար նաև Ղափանում, մասնավորապես Մեղրիի շրջանում: Մեր օրերում իսկ Զանգեզուրը Հայաստանի այն շրջանն է, ուր հարգի է շերամապահությունը:

Հայտնված է նաև կարծիք, թե XVII դարում Ղափանի և Նախիջևանի մեջ մտնող վայրերի առևտրականներին տալիս էին նաև «ջուղայեցիներ» անունը<sup>2</sup>: Ժամանակին Հլև-Ջուղան մտնում էր Արաքսի հովտում գտնված առևտրական գյուղերի ու ավանների շարքը և որոշ իրավունքով այդ վայրերից ելած առևտրականները օտարների մոտ կարող էին կապած լինել այդ վայրերի հետ ոչ միայն իրենց ձեռնարկումների հռչակը, այլև իրենց ծննդավայրի անունը: Երևի այս հիմունքով էլ Ալիշանը դրում է թե՛ Վենետիկի դիվանի XVI—XVIII դարերի թղթերի մեջ 500 ծանոթագրված հայ անուններից մոտ կեսը ջուղայեցի կամ սյունեցիներ ևն. սրանց կեսը հատկապես հին կամ նոր-ջուղայեցիներ, 50 ղափանցի, 70

<sup>1</sup> Սյուրմեյան Արտավազ, Պատմություն Հալեպի արաբյան դերեղմանատանաց և արձանագիր հայերեն տաղանաքարերու, Հալեպ, 1935, էջ 26, 33, 37, 44, 45:

<sup>2</sup> С. В. Тер-Аветисян. Город Джуга, Тифлис, 1937, էջ 1, հմտ. նաև Ա. Սարուխանի հոդվածը, «Հանդես ամսօրյա», 1926, էջ 308:

մարդ էլ Այսմույաց նահանգի (իմա՝ Ղարաբաղի) այլևայլ գյուղերից<sup>1</sup>։ Այնուամենայնիվ և՛ տեղադրականորեն, և՛ տնտեսական իր կապերով ու նշանակությունը շուղայեցիությունը չէր նույնանում թրվարիված գյուղերի և ավանների հետ, և մեզ ծանոթ չէ հին տրեւ աղբյուր, որից ակներև լիներ, թե դեթ XVII—XVIII դարերում «ջուղայեցիներ» ասելով նկատի էին առնում ոչ թե Սպահանի նշանավոր արվարձանի խոջաներին, այլև այն առևտրականներին, որոնց «ղափանցիներ» անունն էին տալիս։

Այսպես, երբ XVIII դարի սկզբին Շրոդերը (= Սկրոդերը) խոսում էր հայ բարբառների մասին, իրարից տարբերում էր «ջուղայեքներ», «ղափանցեքներ», «լոկեքներ» և «հոռմըքեքներ» (իմա՝ արևմտահայ բարբառները)<sup>2</sup>։

«Ղափան» տեղանունն առավել հաճախ ընդգրկում էր հին կապանի (կամ Այսմույաց և Բաղաց) թագավորությունն սահմանները, վկայելով պատմական արագիցիայի համառությունը<sup>3</sup>։

«Երկիրն Ղափանա» կամ «երկիրն Որոտնա» տերմինները XVII դարի բազմաթիվ հիշատակարաններում ընդգրկում էին սոսկ այսօրվա Զանգեզուրի սահմանները։ Հատկանշական է, օրինակ, երբ «Ղափանի երկրի» Տաշտուն գյուղում գրված մի հիշատակարանում կարդում ենք. «ՌՃԺԸ (1669) թվիս պատուհաս մարախ եկեալ մինչ ՌՃԻ (1671) թիվ և յառաջն և յետն չիմացեալ բազում երկիրներ ապականեաց և սովալըլով արար Թիլիղոյ մինչև Շահաստան (Թավրիզ)։ Եւ բազում աւերութիւն եղև Բարկուշար, Ղափանըստան, Հիգարի, Դիլաղ, Վարանդայ, Խաչին, Չարաբերդ (իմա՝ Զրաբերդ)<sup>4</sup>։

Առաքել պատմագիրը թվարկում է «յաշխարհն Արարատու, ի դաւառն Սիսակայ, և յաշխարհն Ղափանու, ի քաղաքն Նախշուան, և ի դիւղօրայս նորա<sup>5</sup>։ Այս կապակցության մեջ Ղափանը հանդիպադրված է որպես այնպիսի մի «աշխարհք», ինչպիսին էր Արարատյան աշխարհը։

XVII դարի 70-ական թվականներին Ոսկան Երևանցին Տաթևի վանքը դնում է Ղափանի նահանգի (provincia) սահմաններ

<sup>1</sup> Ա. Լիշան, Հայ-Վենետ, էջ 498։

<sup>2</sup> Schroederus, Thesaurus linguae Armeniacae, Amsterdami, 1710. էջ 355։

<sup>3</sup> Հմմտ. Թ. Հակոբյան, Չորք կամ Կապան, Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ, 1950, № 4, էջ 61 և հտ.։

<sup>4</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձև. № 319, էջ 220ա։

<sup>5</sup> Ա. Կ. Դավրիժեցի, նույն տեղում, էջ 353։

քում<sup>1</sup>: Նույնը անում էր նաև Զաքարիա Ազուլեցին, Ղափանի սահմաններում հաշվելով Հալիձորի, Շնհերի և Տաթևի անապատները:

1674 թվականի մի ձևագրում Ղափանում են նշվում Սիսիանի կոր և Շնաթազ գյուղերը. «Գիրքս զրեցաւ տեղն ի Ղափան նաև չերկիրն Որոտան, զեղն որ կոչի կոր... Սա չիշատակ վարդապետի՝ անուամբ մեծի Զաքարիայի, որ է յերկրէս Որոտանեցի, զեղաւ գուով Շնաթազեցի»<sup>2</sup>:

Հին հիշատակարաններում «Ազվերձ» կամ «Ըզվերձ» գյուղը տեղագրված է Ղափանում<sup>3</sup>: Եթե նկատենք, որ Ազվերձը կամ Ըզվերձը Սիսիանի մհալում գտնված Դարաբասն է, ահներև կգառնա դարձյալ, որ Ղափան տեղանունը հներում ուներ նաև լայն նշանակութուն: Բայց միայն Սիսիանը չէ, որ մանում էր «Ղափանի» մեջ: Մարգաղավնյաց վանքում 1652 թվականին ձայնագրված մի շարահանի հիշատակարանում Զաղաձորի (= Զանգեզուրի) մհալում գտնված Գորիսը և ինքը Զաղաձորը նշվում են Ղափանա երկրի մեջ. «Արդ զրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ մեղապարտ Մովսէս սուտանուն երիցոյ, որ եմք բնական յ յերկրէն Ղափանայ ի միւս երկրէն Զաղաձորոյ ի զեղջէն Գորիսոյ»<sup>4</sup>: Նույնը հաստատում է Օբսիորդի Բողլեյան գրադարանի ձեռագրերից մեկը, ուր նշված է. «Ես Սարգիս զրիշս եմ ի յերկրէն Ղափանայ ի զեղջէն Գորիսոյ, որ ազգմանէ չարին փախեալ եկար բնակեցար ի զեօղս Բարկիս (= ի երկիրն Գեղամայ) և աստ զրեցար գտուրբ աւետարանս ի թվիս Հայոց ՌՃՁ (= 1657)»<sup>5</sup>:

Հալեպի մի տապանագրում Ղափանում է նշված «Քրդատան» գյուղը (sic), որն ըստ երևույթին շփոթված է Ղարաբաղի և Զանգեզուրի միջև ընկած Քրդատան գավառակի հետ<sup>6</sup>: 1678 թվականի մի այլ տապանագրում Ղափանի երկրում է գետեղված Վանք գյուղը<sup>7</sup>, որը պիտի որոնեւ ներկայիս Մեղրիի մոտերքում: Տաթևի

<sup>1</sup> Histoire critique de la creance et des coutumes des nations du Levant. Publiée par de Moui. Franc-fort, 1684, p. 297.

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 2097, էջ 291ա:

<sup>3</sup> Եր. Լ ա տ ա յ ա ն, Յուլյակ ձեռագրաց Վասպուրականի, էջ 556:

<sup>4</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 1626, էջ ա և բ:

<sup>5</sup> Յուլյակ ձեռագրաց Օբսիորդի Բողլեյան գրատան, ձեռ. № 53:

<sup>6</sup> Ս յ ու ը մ է յ ա ն Արտատաղդ, նույն տեղում, էջ 31:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 29:

1705 թվականի մի արձանագրության մեջ կարդում ենք՝ «Ես խումարի որդի խոճա Անտոն ի յերկրէն Ղափանու ի զեղջէն Տաշտունու» տողերը<sup>1</sup>: Տաշտուն գյուղը գտնվում է հին Արևիքի (ներկայիս՝ Մեղրիի) շրջանում<sup>2</sup>: Նույն դարում Ղափանում էին զեակողմ ներկայիս Մեղրիի շրջանը մտնող Լիճք գյուղը<sup>3</sup>: Ղափանցի էին համարում իրենց Մեղրիի մհալի Սկզաստան գյուղից ծագող Շահումյանների գերդաստանի անդամները, որոնք XVIII դարի սկզբներից հիշատակվում են Վենետիկի դիվանական դրագրությունների մեջ<sup>4</sup>: Նշանակում է՝ Մեղրիի շրջանը XVIII դարի սկզբներում նույնպես մտնում էր Ղափանի երկրի մեջ: Սկրտզերի 1710 թվականին լույս տեսած «Արամյան լեզվի գանձ»-ում «ղափանցի» տերմինը լատիներեն թարգմանված է «սյունեցի» (siunensis), որով դարձյալ գրանցվում է Ղափան տեղանվան լայնիմաստ բովանդակութունը<sup>5</sup>: Լայն իմաստով է անվանված Ղափանը նաև Դավիթ Բեկի XVIII դարում գրված ընդարձակ պատմության մեջ, ուր այն նշվում է որպես «աշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի խափան»<sup>6</sup>:

Ի վերջո մի փաստ էս Հայոց ՌՁԹ (1640) թվականի մի ձևագրում Ղազար գրիչը Տաթևի վանքն ու առաջնորդությունը (= վիճակը) զեակողմ է Ղափանի երկրում: Ձեռագիրը գրված է «յերկիրն Որոտան ի զեակոս Շենհեր»<sup>7</sup>: Պարզ է, որ Տաթևի ընդարձակ վիճակի «երկրները» մտնում էին ամբողջովին Ղափանի կամ, որ միևնույնն է՝ «Որոտան երկրի» սահմանների մեջ: Այդ իսկ պատճառով էջմիածնի կաթողիկոսական դիվանի XVIII դարում կազմած մի ցուցակում Նախիջևանի և Ղափանի սահմաններից դուրս են մնում ոչ միայն Գանձասարի կաթողիկոսության վիճակները, այլև Սևանի և Հայրավանքի, Մաքինյաց վանքի և Խոթավանքի թեմերը: Այդ ցուցակում սահմանադատված են Նախիջևանի և Ղափանի թեմերը: Առաջինի՝ Նախիջևանի մեջ մտնում են Նախիջևան քաղաքը, Ասապատը, Շահկերտը, Ծոռոթը, Ղազանչին, Գաղը, Սորաշինիկը, Երթամհմուղը, Քուլթափը, Ածուղը (= Օծուղը), Ագուլիսը, Դաշարը, Յզնան, Ծամրը, Արարքը, Զաղացտեղը, Ազատակը, Նղեգ-

<sup>1</sup> «Արարատ», 1918, էջ 236:

<sup>2</sup> Ա. Լիշան, Սիոսկան, էջ 299:

<sup>3</sup> ՏԵՆ «Գիվան հայոց պատմութեան», III, էջ 468:

<sup>4</sup> Ա. Լիշան, Սիոսկան, էջ 301 և 528:

<sup>5</sup> Schroederus, նույն տեղում, էջ 356:

<sup>6</sup> ՏԵՆ «Լ՛նաիր պատմութիւն Դաւիթ-Բէգին», Վաղարշապատ, 1871, էջ 52:

<sup>7</sup> Հայկական ՍՍԽ Մտտեհագարան, ձև. № 4470, էջ 442:



նաձորը, Վայոց ձորը և Օրորուլարը: Երկրորդի՝ Ղափանի մեջ մըտնում են Մեղրին, Գունեն, Կաքավաբերդը, Բաղաբերդը, Չավինդուրը, Բարգուշատը, Սիսիանը, Քաշախաղը, Ղարադաղը, Աջանանը, Կեղուածորը, Գուլաբերդը, Շիվանածորը և Մուղանձուղը<sup>1</sup>:

Պիտի դիտել, որ եկեղեցական լիճակների սահմաններն ու անունները կայուն չէին: Տաթևի վանքի պաղատուցակներում նըշված են վանքին ենթակա այս գավառները՝ Գեղուածոր, Բաղաբերդ, Կաքավաբերդ, Մացրա, Աջանան, Գուլաբերդ, Մաղանջուղ, Զանգեղուր, Քաշախաղ, Չավինդուր, Ղարադաղ, Վերին Զոր, Սիսիան, Բարգուշատ:

«Ղափան» տեղանվան առաձգականությունը նշույ այս փաստերից հետո անսպասելի շարիտի թվա, երբ, խոսելով Օրիի մասին,

<sup>1</sup> Հայկական ՍՍԻ Մասենադարան, ձև. 9120, էջ 3ա:

Այստեղ ազիլորդ չէ պարզարանել մի թյուրիմացություն: Խոսելով Աեֆյան Իրանի մասին Ի. Պետրուշևսկին գրում է. «Կապիտան Հայաստանի մեծ մասը մտնում էր Երևանի, կամ Չուխուր-Սաղի մարզի (գիլայիթի) մեջ: Հայաստանի մնացած մասը (Շարուր, Գարալոյաղ և Զանգեղուր) և հյուսիսային Ագրբեջանի Կուր և Արաքս գետերի մեջ գտնված մասը (Առանը) կազմում էր Ղարաբաղի և Գանջախի մարզը» (Петрушевский, Очерки, էջ 117): Ուսկից է պրոֆ. Պետրուշևսկին սակ է Հայաստանի մնացած մասին» վերաբերող տեղեկուծյունները, հայանի չէ: Բոլոր պարագաներում գրանք հակասում են հեղինակի իսկ այլուր հաղորդած կարծիքներին և կարիք ունեն ճշման: Այսպես, նույն հեղինակը մի տեղ ճիշտ գրում է, թե «XVII դարի երկրորդ կեսում Նախիջևանը մտնում էր Չուխուր Սաղի գիլայիթի մեջ» (էջ 142): Իսկ մի այլ տեղ նա ասում է, թե շահ թահմազը որպես նպատակ հատկացրեց բրդական թմրուլ (Գուսթախի) ցեղին պատկանող սուլթան Ալիբեկին շտաբեկան մի գումար Նախիջևանից կախում ունեցող վայրերի՝ Ալգիսի ձորի (=Նախճավանի երկրի Ագուլիսի շրջանի) և Շարուրի մալիջահաթից (էջ 195): Հակառակ Պետրուշևսկու փակագծած բացատրության, Ալգիսի ձորը ոչ թե Ագուլիսի շրջանն էր, այլ Եղեգիսի ձորը, նախկին Գարալոյաղը: Ընդամին Շարուր-Գարալոյաղը Նախիջևանի (բայց ոչ Ղարաբաղի) խանության մեջ էին ոչ միայն թահմազի ժամանակ, այլև ազելի ուշ՝ XVII դարում: XVII դարում Աեֆյան Իրանի մեջ մտնող Հայաստանի վարչական բաժանումները նշելիս օգտակար է աչքի առաջ ունենալ «Թագկիրամ ռւլ-մուլյուր» մատյանում հաղորդած տեղեկությունները: Ըստ հեղինակավոր այդ ազգյուրի XVII դարում Չուխուր Սաղի (=Երևանի) բեկլարբեկության մեջ մտնում էին Նախիջևանի թուամանը, Մակուր, Զարգիբլիբ, Մաղարակի, Բայաղետի բերդը (=չին Բայաղետը) և Մուղաղ բերդը, Ղարաբաղի (Գանջախի կամ Կախեթի) բեկլարբեկության մեջ մտնում էին Զագամը, Բարգան, Ակաբաղը (Ագոտաֆան), Զիվանջիբը, Բարգուշատը, Ղարա-Աղաջը և Լոտի-Փամբակը (տե՛ս V. Minorsky, Tadhkirat al-muluk, էջ 101 և հա.):

մրա մի այլ ժամանակակիցը, Եղիա Մուշեղյանը «սիսիանցի» է նշում նրան<sup>1</sup>։

Հավանորեն Սիսիանն է հենց XVII դարի մեծ Ղափանի կամ Նախիջևանի խանության այն մհալը, ուր պիտի որոնենք Օրիի ծննդավայրը։ Բուն Ղափանը, կամ, ինչպես այն նշվում էր իրանական աղբյուրների մեջ՝ «Ղափանաթը» շէր ենթարկվում Երևանի բեկլարբեկության մեջ մտած Նախիջևանի խանությանը, այլ, հակառակ սպասածի, անմիջորեն ենթակա էր Թավրիզի բեկլարբեկությանը<sup>2</sup>։

Հնարավոր է, որ Մուշեղյանի հաղորդածը պարունակում է իր մեջ նույնիսկ ավելի նեղ մի իմաստ։ «Սիսիանցի» հատկացուցիչը կարող էր նշանակել ոչ միայն Սիսիանի մհալից, այլև այդ մհալի Սիսիան գյուղից, որը ժամանակին հանդիսացել էր Սյունյաց մելիքների և յուզբաշինների նստավայրերից մեկը։ Հետագայում այդ գյուղի «չօրավարը» (երևի այդտեղ նստող յուզբաշին) մասնակցում էր Դավիթ Բեկի կռիվներին, արամադրելով 500 մարտիկ<sup>3</sup>։

Մուշեղյանի վկայությունը համապատասխանում է Օրիի իսկ ցուցմունքին։ Մի տեղ Օրին ինքն իսկ ասում է, թե փր հարադատների բնակավայրը գտնվում է Անկեղակոթից մի քանի ժամվա հեռավորության վրա։ Օրիի պատմածով՝ մեկնելով Անկեղակոթից՝ նույն օրը կարելի էր հասնել իր հայրենի սոմնը<sup>4</sup>։ Նշված հեռավորությունը համապատասխանում է երկու գյուղերի (Անկեղակոթի և Սիսիանի) միջև ընկած տարածությանը։

Որչափ ծանրանում ենք Օրիի ծննդավայրի վրա՝ անհրաժեշտ է ետ մղել այդ մասին հայտնված սխալ կարծիքներից մի երկուսը։

Ելնելով այն փաստից, որ Օրիի թղթերում քանիցս հիշվում է նրա նախնիների Պոռշյան ծագումը, փորձ է արվել այդ հիման վրա նշել նրա ծննդավայրը Պոռշյան վաղեմի տիրույթների սահմաններում, Վայոց ձորի Մարտիրոս կամ Բաշքենդ գյուղերում<sup>5</sup>, կամ Զահուկ գավառի Շահպոնք բերդում<sup>6</sup>։

<sup>1</sup> Հայկական ՍՍՏՄ տատենագարան, Ն. Ո ս կ յ ա ն, Եղիա Աստուածատրյան Մուշեղյանի և իր գրական արտադրությունը, Վիեննա, 1927, էջ 18 և հտ.։

<sup>2</sup> Minorsky. Taškirat al-muluk, և Ս. П. Петрушевский, Очерки, էջ 133 և հտ.։

<sup>3</sup> «Լ'նտիր պատմութիւն Դաւիթ Բէղիւն», էջ 78։

<sup>4</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 11, էջ 52 և հտ.։

<sup>5</sup> Տե՛ս Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Խաղրակյանք կամ Պոռշյանք, 1, էջ 259 և 274։

<sup>6</sup> Տե՛ս Լ, և ո, Խոջայական կապիտայ, 1, էջ 177։

Սյունյաց մելիքների անունից 1699 թվականին գրված թղթերից երկուստեմ նշված են զրաճից երեսուն տարի առաջ Օրիի նահատակված աշղախաններից երեքի՝ Մարտիրոսի, Աղաջանի և Ղաթախանի տնունները:

Հնախուզական իր շրջագայությունների ժամանակ Գ. Հովսեփյանը Վալոյց ձորի Օծոպա վանքի մոտ հանգիպել է երկու շիրիմաքար, որոնցից մեկի վրա կարդացել է՝ «Մարտիրոս», մյուսի վրա՝ «պարոն Աղաջան» անունները: Որչափ այդ վայրերը մտնում էին Պոռշյան տիրույթների մեջ՝ Հովսեփյանը հնարավոր է համարել եղբակացներու, թե այդ շիրիմաքարերի տակ նմջում են հենց Օրիի մերձավոր նախնիները: Սակայն չկա որևէ փաստ, թե մինչև XVII դարը Վալոյց ձորում շարունակվում էր Պոռշյանների սերունդը: Այդ չի երևում, որ շիրիմաքարի Մարտիրոսը կամ Աղաջանը Պոռշյաններ էին, կամ մելիքներ ու նահատակներ: Կամ որ այդ մարդիկ մահացել էին, ինչպես ասվում է Օրիի անմիջական նախնիների մասին՝ XVII դարի 60—80-ական թվականներին: Մելիք Մարտիրոսի մասին Օրիի թղթերում ասված է, թե նահատակվելուց հետո, «քրիստոնյաները սրբերի շարքը դասեցին նրան»<sup>1</sup>, այսինքն՝ սրբատեղի դարձրին նրա գերեզմանը: Հովսեփյանի նկարագրությունից չի երևում նաև, թե Մարտիրոսի անուն կրող շիրիմաքարը որևէ հետք ունի նման պաշտամունքի: Այս ամենից զատ դժվար է որևէ առումով «ճշմարտանման» համարել, թե Օրիի նախնիներից էին Հովսեփյանի մասնանշած անձնավորությունները և կամ որ նրա ծննդավայրը պիտի եղած լինի Վալոյց ձորում՝ Պոռշյանների Սղկունք (ըստ Հովսեփյանի՝ Բաշքենդ) ավանը կամ նրան մերձակա Մարտիրոս գյուղը, ուր փբթ թե մելիքություն կարող էին արած լինել շիրիմաքարերի վրա նշված անհայտ անձնավորությունները:

Ներկա դեպքում դեռ մի կողմ ենք դնում այն հարցը, թե որքան արժանահավատ է Օրիի Պոռշյան ծագման վերսիսն: Մինչդեռ Հովսեփյանը լռելյայն ելնում է հենց շապացուցված այդ դրույթից և դրա վրա հիմնված Օրիի ծննդավայր ևնթադրում XV դարում Պոռշյանների նստոց հիշատակվող Սղկունքը (Բաշքենդը) կամ նրանից ոչ հեռու գտնված Մարտիրոս գյուղը: Եթե անգամ ընդունենք, որ Օրիի ընտանիքում իրոք ավանդության է պահված եղել իր Պոռշյան ծագման մասին՝ այդ դեռ չի նշանակում, թե նա

<sup>1</sup> Յ 3 0 B. նույն տեղում, № 5, էջ 131

կամ նրա մերձավոր նախնիները պետք է ծնված լինեին Պոռշյան-  
ների երբեմնի արրուլթ հանդիսացած Վայոց ձորում: Ազնվական  
ծագում ունեցած ընտանիքներում նման ավանդությունները հա-  
ճախ ոմնենում են բազմադարյան հնութուն և հարատևում են,  
չնայած որ դրանց վերջին շառավիղները վաղուց արդեն լքել էին  
իրենց հեռավոր նախնիների բնակավայրերը:

Ավելի հիմնավոր չէ Օրիի ծննդավայրը Պոռշյաններին պատ-  
կանած Շահպոնքում տեղադրելու ենթադրությունը, որ արել է Լեոն:  
Մի ժամանակ Լեոն արամադիր էր Ղափան փոխադրել փնչ-  
պես Օրիի գլխավորած շարժման օրրանը, այնպես նաև նրա  
ծննդավայրը<sup>1</sup>: Բայց ի վերջո նա առաջ քաշեց այն տեսակետը, թե  
XVII դարում Շահպոնքը հայ ունիտորների գլխավոր կենտրոննե-  
րից մեկն էր և ամենայն հավանականությամբ Օրին, որպես մեկը  
այդ ունիտորներից, կարող էր հենց այդ վայրում էլ ձեռք բերած  
լինել դավանաբանական նրբաճյուղների այն իրազեկությունը, որ  
ակներև է նրա թղթերից: Ըստ այդ ենթադրության՝ դավանաբանա-  
կան իր պատրաստության և սնիտորների հետ ունեցած իր կապե-  
րի շնորհիվ էլ հենց նա մտել էր Հակոբ կաթողիկոսի պատվիրա-  
կության մեջ՝ Պոլսից Հոռոմ մեկնելու համար:

Եթե, այսպիսով, քսանամյա մի պատանի սկզբից ևեթ հանդես  
էր բերվում որպես Շահպոնքում ուսած ու մարդված մի ունիտոր,  
պետք էր ենթադրել, թե լատինադավան էր նաև Օրիի հայրը, որը  
տարիներ առաջ նրան այդ դպրոցն էր ուղարկել: Սակայն Օրիի  
թղթերի տվյալները չեն հաստատում այդ ենթադրությունը: Օրիի  
հայրը Հոռոմ պիտի մեկնեիր կաթողիկոսի հետ որպես էջմիածնի  
խորհրդաժողովից ընտրված պատվիրակ՝ Հոռոմի պապին հայա-  
դավան ազգի կողմից հպատակություն հայտնելու և աջատուության  
հնար որոնելու համար:

Մյուս կողմից Օրիի հայրն ու մերձավոր նախնիները հիշվում  
են որպես մեկնաբան իշխանություն ունեցած մարդիկ: Եղև՛լ  
են առհասարակ հայ մեկնաբան երբեմն Պոռշյաններին պատկանած  
Շահպոնքի կալվածքներում, և եթե եղել են՝ պատկանո՞ւմ էին նը-  
րանք Պոռշյան տոհմին, հայտնի չէ: Ինքյան իսկ անհավանական  
է, որ XVII դարում հազիվ միայն 40 տուն հայ-կաթողիկ և մոտ  
100 տուն մահմեդական բնակչություն ունեցած Շահպոնքը<sup>2</sup>,

<sup>1</sup> Տե՛ս Լեո, Սահմանավեճեր, Թիֆլիս, 1919, էջ 155 և հտ.:

<sup>2</sup> Bedik, Cehil Sutun, նույն տեղում, էջ 382 և հտ.:

այսինքն՝ գրեթե մահամեղակա՛ն մի դյուզ, եղած լինելը Օրիի անվա-  
ծի հարազատների մղած պայքարի հանդրմանը և ի վերջո նույ-  
նիսկ մասնակցած էջմփածնի ստեղծամարդ խորհրդաժողովին:

Այն հանգամանքը, որ առնական իր տարիքում, շուրջ երկու  
տասնամյակ Արևմտյան Եվրոպայում ապրելուց ու շրջելուց հետո,  
Օրին հիրավի հրապարակ եկավ որպես կյանքի հարուստ փորձով  
հղկված և եվրոպական լեզուներ բանեցնող մի անձնավորութուն,  
որ երբեմն հանդես էր իջնում նաև որպես պատրաստաբան մի կա-  
թոլիկ, դեռ իրավունք չի տալիս համարել այդ ամենը Մահպոտի  
ունիտարների մոտ ստացած կրթության հետևանք:

Հիմք չկա առհասարակ պնդելու, թե Օրին ստացել էր քիչ թե  
շատ կանոնավոր կրթութուն: Ծանոթանալով նրա անվան հետ  
կապված գրագրութուններին, չի կարելի պնդել, թե նա քիչ թե  
շատ գրագետ ու վարժ ձևերով էր բանեցնում գրչափեսուրը: Հե-  
տադոտելով նրա անվան հետ կապված գրագրութունները՝ դժվար  
չէ համոզվել, որ նրա ստորագրութունները կրող թղթերի բնագիր-  
անքը գրում էին նրա քարտուղարները: Նրա անունից գրված կամ նրա  
թելադրանքով կազմված օտարալեզու թղթերի տակ նրա քարտու-  
ղարների գրչով էլ հենց գրվում էր «Israel Or» ստորագրութունը:  
Վավերացման համար այդ թղթերի տակ Օրին երբեմն հազիվ միայն  
չանգոտում էր «Իզրէլ Օրի» հայտատա իր անունը:

Ըստ երևույթին, ոչ ծննդավայրում և ոչ էլ այլուր Օրին չէր  
ստացել հիմնավոր ուսում: Նիստուկացի կիրթ այն ձևերը, խորհե-  
լու ու տրամաբանելու այն տեսակությունները, որոնք հնարավոր-  
թյուն ավելցին նրան մուտք ունենալու քաղաքական գործունեութան  
տիրուր, մշակվել էին հետագայում՝ եվրոպական իր թափառումնե-  
րի տարիներին, գործնական կյանքի զարոցում ձևեր բերված տե-  
վական ու բազմապիսի փորձի հետևանքով:

Մինաս վարդապետը, Օրիի գործակիցը, իր մի նամակում  
պատվիրում էր նրան. «այն, որ առանձին բան է, դու միտ ածելով  
իմ գրին օրինակովն քո ձեռքովն ինձ գրէ, որ ես իմանամ թէ ինչ  
պետք է մեր բանին»<sup>1</sup>: Նույն վարդապետը գրում էր դարձյալ՝ «Թէ  
ինչ առանձին խոսք ունես... միտք կնկելով ինձ գրես...»<sup>2</sup>: «Միտք  
ենկելով գրելու» կամ «միտ ածելով» ընդօրինակելու կամ ծածկա-

<sup>1</sup> Տե՛ս մեր «Հայ-ուս օրինաացիայի ծագումը», էջմփածին, 1921,  
էջ 31 և հտ. և հավելված, № 3, էջ VIII:

<sup>2</sup> Նույն տեղում, հավելված, № 3, էջ X:

գրելու այս հրահանգները ցույց են տալիս, թե որքան անվարժ էր Օրին անգամ հայերեն գրագիտություն արվեստի մեջ:

Եթե անգամ Շահպոնքում կամ Նախիջևանի հայ-կաթոլիկական որևէ այլ համայնքում ծնված լիներ Օրին, այնուամենայնիվ միջոց չպիտի ունեցած լիներ կանոնավոր դպրոցական կրթություն ստանալու այդտեղ: Հայտնի չէ որևէ հիշատակություն, թե այդ պահին Շահպոնքում կամ Նախիջևանի գավառի որևէ այլ վայրում ունիտորները եվրոպական լեզուներ ուսուցանող դպրոց էին պահում՝ հայերի մեջ օտար լեզուներ կամ դավանաբանական դիտելիքներ տարածելու համար: 1670-ական թվականներին Նախիջևանի գավառի ուսումնական քարոզիչներն ու կառավարիչները երբեմն աստվածաբանական կրթություն էին ստացած լինում Նեապոլում, Բենեվենտում, Ֆլորենտիայում կամ Հռոմում<sup>1</sup>: Սրան համապատասխանում է Օրիի այն վկայությունը, թե 1699 թվականին իր նախաձեռնությամբ Անգեղակոթում կայացած խորհրդակցությանը մասնակցող մեկիքներից մեկը հասկանում էր եվրոպական լեզուներ, որ սովորել էր Իտալիայում<sup>2</sup>: Օրիի պատանեկության տարիներին ապրած լինելով Նախիջևանի գավառի հայ-կաթոլիկ համայնքների մեջ, Պետրոս Պետիկը գրում էր թե՛ «Հայերեն լեզուն ավելի հարգի էր այդտեղ, քան թուրքերենը կամ պարսկերենը. այդ պատճառով կաթոլիկ գրքերը ևս կարդում են միայն իրենց բարբառով (իմա՝ հայերեն): Ուստի նաև ձեռք ընկած լատիներեն և իտալերեն գրքերը հասկանում են միայն այն կրոնավորները, որոնք սովորել են եվրոպական երկրներում: Անհավատների բարբարոսության պատճառով այստեղ չի ծաղկում որևէ այլ լեզվի ուսուցում»<sup>3</sup>, Պետիկը գրում էր նաև, թե պետք է հոգ տանել, որ «Հայաստանի մայրաքաղաք Երևանում հիմնվի որևէ վարժատուն կամ դիմնագիտն՝ էթիկա և պոլիտիկա ուսուցանելու համար»<sup>4</sup>: Քանի որ այդտեղ է գտնվում կաթոլիկոսի աթոռանիստը, հարում է նա, զուր չի լինի արդյունք սպասել այդ ձեռնարկությունից: Նշում է, որ այս ուղղությամբ երևանցի իր բարեկամ Ալարիա Ավագի գործ դրած ջանքերն ապարդյուն են անցել, հանդիպելով հերձվածողների (իմա՝ հայագավանների) և անհավատների դիմադրությունն ու հա-

<sup>1</sup> Տե՛ս մեր հոդվածը, «Արարատ», 1915, էջ 66 և հտ.: Հմմտ. նաև «Армяно-русская отношения в XVII в.», I, էջ 96:

<sup>2</sup> Հմմտ. ЭЗОВ, նույն տեղում, № 11, էջ 55:

<sup>3</sup> Bedik, նույն տեղում, էջ 334:

<sup>4</sup> „Procuranda tandem et esset in civitate Armeniae Metropoli domus quondam seu gymnasium Ethica ac Politicae.

լածանքին՝ շնայած որ զրա համար շահի կողմից նրան օժանդակող առկամ է արված կղել: Պետիկը հույս ուներ անձամբ ձեռնարկել այդ դործին, հենց որ իր առաքելությունը Եվրոպայում ավարտելուց հետո Հայաստան վերադառնար<sup>1</sup>:



Օրիի ծննդավայրի մասին: մեր նշած ենթադրությանների մեկնակետը նրա Պուռչյան ծագման մասին եղած տեղեկանքն է: Որքա՞ն կայուն է այդ մեկնակետը:

Խաչիֆաթի դեմ գրոհած մոնղոլ բանակում իր սիրազործություններով հուշակ ստացած Վաչոյ ձորի Պուռ Խաղրակյան իշխանը, Բաղդադի և Մուֆարզինի պարիսպները խորտակող Հուլաղուխանի հայ զորավարն ու բանագնացը և Գեղարդի հոյաշեն վանքի պատրոնը, միջնադարյան Հայաստանի մեծարված անուններից մեկն էր: Ի վերջո նրա կտրակ սրի հետ էր կապվում նույնիսկ կայծակնաթավ Հավլունի թրի մասին պատմվող հայ ժողովրդական խորհմաստ առասպելը:

Անհնարին չէ ինքյան, որ Օրիի նախնիները որևէ անշուքյան ունեցած լինեին Պուռչի վերջին այն բարոնակների հետ, որոնցից մի քանիսները, հավակնությամբ թե իրավացիորեն, այդ չէ կարեվորը, հայտնվում էին անգամ XIX դարում: Էականը հարկավ հայ ազատագրական շարժման ղեկավարներից մեկի՝ Օրիի, Պուռչյան ծագման փաստական կողմը չէ, այլ այդ մտաին մեզ հասած վերսիայի քաղաքական-գաղափարաբանական կողմը:

Հայ ազատագրական շարժումների անցյալում բավականաչափ առիթներ ունեցանք զիտելու քաղաքական այն երանգը, որը ստանում էին համախառն ժողովրդական այս կարգի դիմորոշումները: Կարելի է համարձակ պնդել, որ միջին դարերի հայ ազատագրական շարժման աշխարհիկ ղեկավարները արքայական կամ իշխանական ծագում չունենալու դեպքում խակ պիտի դեթ վերագրեին իրենց այդպիսի ծագում, եթե կամենում էին ընդառաջել հետևորդների ակնկալություններին կամ եթե պիտի լիազոր կողմ ճանաչվեին եվրոպական պետությունների հետ բանակցելու համար: Օրիի դործունեությունը լուսարանելու տեսակետից առավել կարևոր է շեշտել նրա գլխավորած շարժման հատկանշական այս

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 386 և հա.:

հանդամանքը, քան Պուռջյան տոհմի այն «տրադիցիաները», որոնց առկայությունը հետազոտողներից ոմանք բավական են կարծել նրա «նկարագիրն ու գործունեությունը» լիովին բացատրած լինելու համար<sup>1</sup>։ Օրիի նկարագիրն ու գործունեությունն քննարկելու համար, այս կարգի հեղինակներն իրենց ուշադրությունը առաջին հերթին բեռնել են հենց «սերունդից սերունդ անցած» և Օրիի կողմից «ժառանգած» Պուռջյան տոհմի քրիստոնեական բարեպաշտության կամ իսլամ տիրապետողների նկատմամբ նրանց տաժաժ թշնամանքի հոգեբանական ներգործության վրա:

Կարծում ենք անտեղի և անպարզաբան աշխատանք կլինեք, եթե հայ ազատագրական մարքի պատմությունն ուսումնասիրելիս Օրիի ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական միջավայրըն ու իրենական միջնուլորտը լուսաբանելու փոխարեն զբաղվեինք նրան վերագրված ծագման կամ նրա ժառանգած տոհմային նման «տրադիցիաների» հետազոտությամբ:

Եթե կային հիրավի առնվազին տրադիցիաներ, որոնք պիտի հաշվի առնվեն ներկա գեպոստ, ապա հազիվ թե դրանք նույնքան հին էին, որքան Պուռջյան բարեպաշտ տոհմը: Ճիշտ է, որ նկարագրելով մուսուլման տիրապետողների այն դաժանությունները, որոնց զոհ գնացին Օրիի մերձավոր նախնիները, նրա թղթերի մեջ հանդիպում ենք մատնանշում այն մասին, թե անհավասանները ճշնշում ու հալածում էին վերջիններիս կրոնը<sup>2</sup>։ Սակայն աղբյուրները չեն սահմանափակվում սոսկ բնդհանուր տեղիներով, և մեզ ևս առիթ չեն տալիս շատանալու այդպիսիներով:

Հետապնդումները, որոնց ենթարկվում էին Օրիի նախնիները, համընկնում էին այն ճնշումների ու հարստահարումների հետ, որոնք սաստկացած էին XVII դարի Իրանում: Պարզ է կարծես, որ ինչքան ավելի շատ էր աճում իրանական հարկահանների ճնշումը քրիստոնյա հպատակների նկատմամբ, նույնքան ավելի քիչ պիտի շահագրգռված լինեին ձեռնամուխ լինելու նրանց պավանանքին: Չէ՞ որ այլապես վերացված կլինեին նրանցից հնշուն սովով գլխահարկ դանձելու իրավական հիմքը:

Ինտեկնախոս պապին գրած իր հայտնի նամակում տակավին էջմիածնի Փիլիպոս կաթողիկոսն էր զարմանք հայտնում այն առիթով, սր հավաաքի տեսակետից քրիստոնյա եկեղեցին իրեն ավելի

<sup>1</sup> Հմմտ. Յ Յ Օ Յ, Ն ու յն տեղում: Введение. էջ LXXXV:

<sup>2</sup> Ն ու յն տեղում, № 5:



ազատ է զգում բարբարոս Իրանում և Թուրքիայում, քան պապին ենթակա քրիստոնյա Եվրոպայում, «զի մեր, — գրում էր Փիլիպոսը, — թէպէտ նեղութիւն ինչ հարկապահանջութեան կամ նախատինս կրիցեմք յայլազգեաց, — աստի, սակայն ի կողմանէ հաւատոյ կամ եկեղեցոյ սակս ոչ երբէք տեսեալ եմք հակառակութիւն ինչ կամ կրեալ վիշտ. այլ ամենայն համարձակութեամբ պաշտեմք զհաւատ մեր, և յայտնութեամբ կատարեմք զամենայն խորհուրդ եկեղեցոյ և զկարգաւորութիւն աղօթից փառաւորեալ յաչս սղայարարոյ ազգաց»<sup>1</sup>:

Ճիշտ է, որ այս տողերը գրվելուց հետո և՛ Թուրքիայում, և՛ Իրանում շատանում էին կրօնական հալածանքի դեպքերը, սակայն այդ ժամանակ ևս կրօնական հալածանքները չէին ստանում մասսայական բնույթ, կամ ի մոտո քննելով, հայտնվում են սոսկ որպէս հպատակների սաստկացող կեղեքման միջոցներից մեկը: Հալածանքի նման դեպքերը սովորաբար լծորդվում էին պետական պաշտոնյաների կողմից կիրառված շահամուլ զրպարտանքի հետ: Աղբյուրների մեջ ստեպ հանդիպում ենք այսպիսի արտունջների. «Նեղեն զազգս հայոց բուխտան ասելով (զրպարտելով) և սուտ վկայ կացուցանելով», — ինչպէս գրում է 1551 թվականի մի հիշատակագրող<sup>2</sup>: Կամ «միշտ և հաճապազ սուտ և դուր ասելով կողոպտան և շարշարելով շարշարեն զմեզ անխնայաբար», ինչպէս ասված է 1596 թվականի մի հիշատակարանում<sup>3</sup>: Նույն այս հիշատակարանում, որ գրվել է Վանում, Խաչատուր քահանայի ձեռքով, մեծարված են քաղաքի տանուտերը, պարոնաց պարոն մահանսի խոջա Արամը և «պարոն եղբայրքն իւր» Աստուածատուրը և խոջա Ախիշանը և «պարոն որդիքն իւր», խոջա Ամիրաղեն և խոջա Զիրաքը, որոնք ձեռնարկեցին աիրամոր անունով, «զեղեցկաշէն, խտրանաձև և դմբեթահարկ» եկեղեցին և ժամատունը ի հիմանց շուրջ ու բոլոր նորոգելու: Թուրք իշխանությունները չեն արգելում եկեղեցաշինությունը, որ հանդիսանում էր նրանց համար լրացուցիչ եկամտի աղբյուր: Խոջա Աստմն ու յուրայինները բաց են անում իրենց քաակի բերանը «ոչ խնայելով ի մարմնաւոր և յապականացու ինչսն և ըստացուածսն, այլ ի միոյ տեղն՝ զհարիւրն և զհարար բաշխէին...: Ոչ խնայեցին... ոչ յոսկի և ոչ յարծաթ և ոչ յայլ

<sup>1</sup> «Պիլիան հայոց պատմութեան», X, էջ 100 և հտ.:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 5967, էջ 211:

<sup>3</sup> Նույն տեղում, ձեռ. № 4681, էջ 528ա:

ինչ... և այնով կուրացուցանէին զաչս աւագոց և թուլացուցանէին զսիրտ բռնաւորաց», — գրում է հիշատակագրող տեր Խաչատուրը<sup>1</sup>:

Նման գրութիւնն իշխում էր Ռուրթիայում նաև հետագայում: Վանեցի անանուն տարեգիրը 1705 թվականի ներքո պատմում է այն ահաբեկումը, որ սանդիկ էր Բաղեշում և Վանում հայերից կրոնադարձութիւնն պահանջող «չարազուլուխ» մի մուլա: Այս անգամ ևս վտանգը վերացնում է մեջտեղից հայ մեծատուններից մեկի, «իշխանաց իշխան պարոն խոջա Ախիջան Ղարսասաֆարի» միջամըտութիւնը: Վերջինիս շնորհիվ գործը հասնում է Վանի դատաւորին, որը ատյան է հրավիրում մուլեանդ մուլացին. ի վերջո սա դուրս է գալիս գիվանից «բաղում անարգանքով» ու «ամօթալի դիմոք»: Գործ տեսնողը իշխողների կրոնական հանդուրժամտութիւնը չէր, այլ «իշխանաց իշխան» դարձած խոջայի դրամաքսակը: «Աւելի քան 4 էճ (700) զուրուշ իարճ եղև թև դատաւորին կաշառ և թէ աղայից և ուլամայից փաշքաշ, որ ամենեքեան եղևն ի կողմն խոջայ Սաֆարին և ապա թէ շար(ն) այն բարձաւ ի մէնջ և ի Բաղիշոյ», — գրում է անանուն տարեգրողը<sup>2</sup>:

Կեղեքման նույն այս սխտեմը երբեմն կիրառւում էր նաև Իրանում: Սակայն Օրիի մանկութիւնն ու պատանեկութիւնն տարիներից այստեղ ևս չեն հասել տեղեկանքներ քրիստոնյաների դեմ հանված մասսայական հալածանքի մասին:

Քրիստոնյա ամեն հպատակ, որը որևէ պատճառով ընդունել էր իսլամի կրոնը՝ կարող էր վերագանալ հայրերի գալանութիւնն, եթև պարտաւորւում էր զլիսահարկ վճարել<sup>3</sup>, Շահ-Աբբաս I-ի մասին Արեւմուտքում պատմում էին նույնիսկ, թև իբր նա պատրաստակամութիւն էր հայտնել պապին՝ քրիստոնեութիւնն ընդունելու<sup>4</sup>: Հարկավ այսքան հեռու չէր զնացել իրանշահի «քրիստոնեասիրութիւնը»: Բայց և այնպևս հայ ժամանակագրողները պատմում էին, թև շահը մասնակցում էր հայերի եկեղեցական մեծ տոնակատարութիւններին, փութ չէ, որ այս ավելի շուտ հետաքրքիր ժամանց էր նրա համար, քան կրոնական հանդուրժամտութիւնն

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ. Մատենագարան, ձև. № 1681, էջ 528բ:

<sup>2</sup> «Մանր ժամանակագրութիւններ», 1, էջ 964:

<sup>3</sup> Ձ ա ք ա թ ա Ս ա թ կ ա վ ա ղ, նույն տեղում, 1, էջ 32, Տ ե թ - չ ո վ - հ ա ն յ ա ն, Պատմ. Նոր-Ձուղայի, Նոր-Ձուղա, 1880, 1, էջ 68, ծան. և 11, էջ 117 և հտ. և «Ձամբո», էջ 216 և հտ.:

<sup>4</sup> ՀՃՄտ. L'entrée solennelle facite a Rome aux Ambassadeurs du Roy de Perse\*, Paris, 1601, էջ 12:

նշան: Հարկավ Իրանի կրօնական հանդուրժամտությունը ևս անմասն չէր նյութական շահախնդրությունից: Օլեարիուսի պատմելով՝ Շամախում ջրօրհնեքի հանդեսը թույլատրելու և հանդեսին ներկա գտնվելու համար հայերը տարեկան հազար թալեր էին վճարում<sup>1</sup>, 1671 թվականին գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Թաղաւորութիւն քստաւանայ շահի Սլիմանին... Զուղայու առաջնորդութիւն Դաւիթ վարդապետին և Փոքր Ծիլ Մանուկին արդայ քստաւանոսի և քալանթարութիւն խօջայ (Աղ)այիիրին և տանուէրութիւն էրաիկ Ծատուրին. և կեղեցիքուն խալճ որ ձղեցին էս(որ) ժամանակով եղև, թվին ՌՃի (1671)-ուն: Արամ ամսի Ի (20)-ունն թասիլ(դա)ր արեկ Զուլու մէջն, էս փողիս յետ(ևին)<sup>2</sup>: Այս նշանակում է, թե Զուղայի եկեղեցիներն իսկ երբեմն գրվում էին տուրքերի տակ, հետևաբար և սահմանափակվում նրանց մինչ այդ վաչկած ազատությունը:

Դուրեք չէր սխալվում Տուրնբֆորը, երբ նշում էր, թե շահը հարդում էր հայերի կրօնը՝ որպես եվրոպացիների հետ տնտեսալիք առևտրական հաղորդակցությունը դյուրացնող հանգամանք<sup>3</sup>: Հայտնի է, որ Շահ-Աբբասը մտածում էր Ապահան փոխադրել անդամ էջմիածնի «արքութուններն» ու անդամ մայր տաճարի քարերը, որպեսզի դրանով իսկ կապել կարողանա դադթած առևտրականներին իրենց նոր բնակավայրի հետ<sup>4</sup>:

Մանր Աեֆյաններն այս մարդում ևս քայլում էին իրենց խոշոր նախորդի արահետով: Հնությունների պահպանության կոմիտեի հաշվառումներից պարզվում է, որ Սովետական Հայաստանի տերիտորիայի սահմաններում XV—XVI դարերում կառուցված և վերանորոգված մի երկու վանքի ու եկեղեցու դիմաց՝ 1611—1710 թվականների ընթացքում կառուցվել կամ վերանորոգվել են 30 վանք ու եկեղեցի, այդ թվում հենց Մեծ Սյունիքի սահմաններում 18 վանք ու եկեղեցի: Ընդամին պիտի աչքի առաջ ունենանք, որ հաշվառումը ընդգրկում է սոսկ նշանավոր վանքերն ու եկեղեցիները:

1660 թվականին գրված մի հիշատակարանում Շահ-Աբբաս II-ի մասին ասված է թե՛ «սիրէ դաղդս քրիստոնէից մինչ զի ընդ

<sup>1</sup> Olearius, նույն տեղում, IV, էջ 19:

<sup>2</sup> Անտոնյան միաբ. № 125 ձեռագիր, էջ 248ա, օգտվում ենք բանասեր Տիրայրի քաղվածից (ձեռ.):

<sup>3</sup> Tournefort, նույն տեղում, II, էջ 158:

<sup>4</sup> Հմմտ. Մ. Ե. Սմբատյան, նկարագրություն Երնջական վանք, Տփլիս, 1900, էջ 181 և հտ., հմմտ. նաև Ա. ա. ք. Ե. Ի. Գ. Ի. Ժ. Ե. Ի. նույն տեղում, էջ 198 և հտ.:

իւր նստուցանէ զշուղացիքն (SİC) նման հաւոյն իւրոյ»<sup>1</sup>: Նման մի-  
ցուցմունք գտնում ենք նաև Զաքարիա Սարկավագի մտտ. «Եւ էր  
սիրող քրիստոնէից... Այլ և զնայր ի սունս քրիստոնէից՝ և ի հար-  
սանիս՝ և ի պատիւս, և ոչ խտրէր: Այլ էր ուղղադատ և իրաւարար:  
Եւ այսպէս եկաց նա ի կենդանութեան իւրում»<sup>2</sup>: «Քրիստոնէասէր»  
այս թագաւորի մասին Իրանում ասլոզ կիրոպացիները պատմում  
էին, թե մահւման անկողնում մկրտվել է Ռահմայիլ Գյու-Մանի ձեռ-  
քով և նման այլ բարեպաշտ առասպելներ: Իրանշահերի կրոնա-  
կան քաղաքականութիւնը և մանավանդ միախոններներին ցույց  
տված նրանց հովանավորութիւնը առիթ է տվել Իրանի կրոնական  
հանդուրժամտութիւնը վերագրել այն հեքիաթին, թե Սեֆյանները,  
մեծ մասամբ ծնված վրացուհիներէից՝ որպէս թե «մայրական կաթի-  
հետ հակում են ներծծել զեպի սուրբ ավետարանը»<sup>3</sup>:

Հարկաւ այն հանդամանքը, որ միախոնները հաճախ են  
ընդդժում վրանական դահակալների հանդուրժամտութիւնը, դեռ  
շատ բան չի ասում իրերի ստույգ կացութեան մասին, որչափ պա-  
պական նեղմիտ կրոնավորներին չէ, որ պիտի խոսք վերապահվի  
այն մասին, թե ուր է սկիզբ առնում, ուր դադար առնում իշխողների  
հանդուրժամտութիւնը: Այս տեսակետից պատահական չէ գուցե,  
որ սովորաբար պապական կրոնավորները Իրանի հանդուրժա-  
մըտութիւնը համեմատում են ոչ թե Եվրոպայի, այլ... Թուրքիայի  
հետ:

Կարող է թվալ, թե իսլամական պետութեանների հանդուրժա-  
մըտութիւնը հակասում էր Իմամ-Ջաֆարի անունով հայտնի այն  
օրենքը, որի համաձայն՝ մարգարէի կրոնն ընդունող քրիստոնէա-  
ները ժառանգութեան հարցում նախապատուութիւն էին ձեռք բե-  
րում ազգակից հավակնորդների հանդեպ: Հիրավի նման օրենքի  
առկայութիւնը ի վիճակի էր բարոյալքում առաջացնելու հավատ-  
քով տկարների մեջ, և ընչասեր կրոնադուրժներին հանդեպ հաճախ  
աճողոր էին նրանց քրիստոնէա ազգակիցները: Մեծ պիտի լինիր  
չայթակղութիւնը մանավանդ ունեոր ընտանիքներում: Հայանի է,  
որ XVII դարում հարուստ խոջաների իսլամացող ժառանգները  
իրավազուրկ էին անում կրոնական ուղղամտութեամբ անդրդվելի  
ազգակիցներին<sup>4</sup>:

<sup>1</sup> Հայկական ՍՍԻ Մատենադարան, ձեռ. № 754, թ. 406բ:

<sup>2</sup> Զ ա զ ա Ր ի ա Ս ա Ր կ ա վ ա գ, նույն տեղում, 11, էջ 34:

<sup>3</sup> Krusinski, նույն տեղում, էջ 51:

<sup>4</sup> Ա. Ա. Դ ա վ Ր ի մ ե ց ի, նույն տեղում, էջ 67 և հտ., Զ ա զ ա Ր ի ա  
Ս. Կ ու լ ե ց ի, նույն տեղում, էջ 145 և հտ.: Շահ-Արքաս 1-ը նման մի օրենք

Սակայն Իմամ-Ջաֆարի օրենքը Սեֆյանների մտահղացումը չէր, այլ VIII-ից XVIII դարը հասած կանոնական մի վերապրուկ, որ երբեմն քրիստոնյա բնակչության նյութական հարստահարման գործիք էր դառնում: Պաշտպանվելով այդ օրենքի դեմ՝ ընչավետ կտակոզները իրենց ունեցվածքը ձեռակա փոխանցում էին վստահելի որևէ մահմեդականի կամ իրենց ծառաներից մեկին և սրա ձեռքով նույն ունեցվածքը փոխադրում քրիստոնյա ժառանգներին: Ժամանակակիցների վկայությամբ, նման հնարները կեղեքումների աղբյուր էին դառնում դատական մարմինների համար<sup>1</sup>: Բայց այս կարգի կեղեքումները համապատասխանում էին Սեֆյանների հարստահարչական նկարագրին, առիթ շտալով անվերապահորեն անհանդուրժամիա համարելու նրանց կրոնական քաղաքականությունը: Չմոռանանք, որ Սուլեյման և Սուլթան Հուսեյին շահերի հրամանագրերով քանիցս կախակայվեց Իմամ-Ջաֆարի անհանդուրժամիտ օրենքն անգամ<sup>2</sup>:

Իրանում ևս կեղեքման աղբյուր էր դառնում քրիստոնյաների վրա բարդվող զրպարտությունը: Այսպես, մի ձեռագրում կարդում ենք. «Թվին ՌՃԺԵ (1666) Ալիզուլի խանն (իմա՝ Իրանի վարչապետը) հայոց աղգէս վատ ասաց շահ Սուլեյմանին և թագաւորն կամէր կոտորել զհայոց աղգս և որ էին ի Ջուղայ: Բայց Ալիզուլի խանն կրկին ինքն բարեխօս անկաւ Շահն բաշխեց նմա զղաթլամ առնելն և էառ ճառիմա 4000 թուման, որ կանէ 80 քիսա»<sup>3</sup>:

Հարկավ իրանական հանդուրժամությունն ոմնէր քաղաքական և սոցիալական իր որոշ սահմանները: Երբեմն համբերատարություն օգին լքում էր անգամ «իրանական նաթանին»՝ Շահ-Ար-

հրատարակել էր նույնիսկ կաթոլիկությունն ընդունող հայերի օգտին, իրավունք վերադառնելով սրանց ժառանգել հայազգական ազգակիցների գույքը՝ Այդ օրենքը հրապարակվել էր եվրոպական պետությունների ճնշման տակ: 1667 թվականին շահ Սուլեյմանին ուղղած իր նամակում Լուդովիկոս XIV-ը պահանջում էր հրամայել, որպեսզի կաթոլիկությունից հրաժարված իրանահպատակները վերադառնան իրենց կեղեքու գիրքը: Համառելու պարտում նրանք գրկվելու էին ազգակիցների ստացվածքը ժառանգելու արտոնությունից (Du Mans, նույն տեղում, Appendice, XXXVII, էջ 321 և հա.):

<sup>1</sup> Chignon, նույն տեղում, էջ 293 և հա., Pouillet, նույն տեղում, II, էջ 283, հա. և Tavernier, նույն տեղում, էջ 510 և հա., Thevenot, նույն տեղում, էջ 201, Du Mans, նույն տեղում, էջ 48, Chardin, նույն տեղում, VI, էջ 131 և հա., Sanson, նույն տեղում, էջ 199 և հա., հմմտ., նաև Տեր-ձոֆյանյան, նույն տեղում, I, էջ 209, ծան. 13:

<sup>2</sup> «Ջամբու», էջ 216, 221, 223 և 226:

<sup>3</sup> Հայկական ՍՍԻ Մատենագարան, ձեռ. № 8233, էջ 121:

բաս առաջինին: Ֆրանսիացի մի հեղինակ, Պուլյե, «կրոնքով երկսեռ» կոչեց այդ շահին: Ավելի ճիշտ կլիներ այդ տեսլ շահի քաղաքականության մասին, որչափ Երա կրոնն իսկ այլ բան չէր, քան վատասերված քաղաքականություն, նույն չափով հիմնված պաշտոնակալների կրոնական միախոհության, որքան և հպատակների կրոնական տարախոհության վրա: Ընդհանուր առումով համբերատար դեպի քրիստոնյա հպատակների կրոնը՝ Շահ-Աբբասը և Էրա հաջորդները հաճախ անհամբերատար էին քրիստոնյա ֆեոդալների ու պետությանը հենարան նկատված զուլամների նկատմամբ<sup>1</sup>:

Հայտնի է, թե կրոնական ինչպիսի հալածանքներ էին հանում Սեֆյանները վրաց իշխող դասի դեմ: Վրաց իրանահպատակ թագակիրները պարտադիր կերպով պիտի դավանեին արքայից արքայի կրոնը, որպեսզի հարևան մուսուլման պետությունները հիմք չունենան մեղադրելու իրանշահին, թե նա մահմեդական հողերը տալիս է քրիստոնյա ֆեոդալների ձեռքը<sup>2</sup>: Կրոնադարձությունը ուղղակի շաղկապվում էր ֆեոդալական շնորհարաշխություն հետ: Օրիի մի թղթում ևս, շահի մասին ասվում է՝ «եթե մեզանից և եթե վրացոց մեծամեծացս բազումս հնարիուք մոլորեցուց և ես մեծություն»<sup>3</sup>:

Կրոնական հալածանքի ենթակա էին մանավանդ բնաշխարհի հայ գյուղատերերը: Այսպիսիների թվին էին պատկանում նաև Խարայեղ Օրիի անմիջական նախնիները: Օրիի թղթերում շարունակ խոսվում է հայ «իշխանների» և «մելիքների» մասին, ըստ որում «իշխան» տերմինը թարգմանված է «prime principal», իսկ «մելիքը»՝ primog կամ «старшина» բառերով<sup>4</sup>: Ընտրովի կամ նշանակովի տանուտերերից<sup>5</sup> պիտի սարքերել Օրիից անմիջապես առաջ Այունիքում իշխած այն մելիքներին, որոնք ժառանգական իշխանություն ունեին: Պիտի կարծել, որ սրանցից ոմանք տիրում էին ոչ թե մի գյուղի, այլ մի քանի գյուղերի վրա: Վարչական կամ դա-

<sup>1</sup> Մահմեդականացած զուլամներն էին հենց, որ հաճախ զառնում էին իրենց նախկին կրոնի հալածիչներ: Առ. Գալբրիթեցի, նույն տեղում, էջ 31, 53 և հտ.:

<sup>2</sup> «Переписка грузинских царей с российскими государями», նույն տեղում, էջ 101:

<sup>3</sup> Эз о в, նույն տեղում, № 98:

<sup>4</sup> Հմմտ. նույն տեղում, №№ 3, 5, 6, 8 և այլն:

<sup>5</sup> Հմմտ. В. Г., Стагистическое описание Нахичеванской провинции, 1833, էջ 31, 53 և հտ.:

տական պաշտոնից դատ նրանք ունեին կալվածատիրական իրավունքներ: Գուցե «մեկիք» տերմինն իսկ այդ ժամանակ համընկնում էր «մալիք» («մուլքատեր» կամ «գյուղատեր») տերմինի հետ<sup>1</sup>: Իբրև իրանական իշխանություն անաշ պատասխանատու անձնավորությունների, նրանք զբաղվում էին նաև գյուղի վրա դրված հարկերի և այլ պարտավորությունների բաշխումով: Անշուշտ, այս գործառնությունը ևս հանդիսանում էր նրանց համար եկամտի հատուկ աղբյուր: Սիսիանի մեկիքները վարչականորեն ևնթարկվում էին համապատասխան մհալի կամ դավառի մահմեդական պետին, որը հիշվում է «սուլթան», «աղա» կամ «հարիմ» անուններով: 1704 թվականին զափանցի մի ասևարական իր ծննդավայր Սիսիանի Գեոաթազ գյուղի ևկեղեցուն նվիրած Ավետարանի սկզբում հարկ էր համարում նշել ոչ միայն Տաթևի Հովասափ վարդապետի, այլև իշխող դավառապետի անունը. «Ըն ի գաւառի իշխողի Իբրահիմ աղեն, որ էր վերակացու գաւառին մերոյ»<sup>2</sup>, Սիսիանի մհալը կամ դավառը, իր հերթին, ևնթարկվում էր Նախիջևանի խանին<sup>3</sup>:

Օն որքան անմիջական էր Իրանի իշխանությունը Սիսիանում, զրա օրինակը գտնում ենք նաև 1706 թվականին Բոնակոթի մի հիշատակարանում, զրված «ի աէրութեան գյուղաքաղաքիս աղայ Սատազ պէկին և իշխանութեան հայոց մեկիք Ամիր խանին, ի հայրութեանն աթոռոյս Թաթէի (Տաթևի) Յովասափ վարդապետի»<sup>4</sup>:

Հավանական է կարծել, որ այստեղ նշված Սատազ-բեկի տիրությունը տարածվում էր ոչ թե ամբողջ Սիսիանի, այլ միայն Բոնակոթ «գյուղաքաղաքի» վրա, որն այս պահին գտնվում էր նրա «զավթում»: Ինչ վերաբերում է մեկիք Ամիրխանին, սա երեկ Բոնակոթի և դուցե նաև զրա հետ կապված այլ գյուղերի հայոց մեկիքն էր:

Սյունյաց մեկիքներից ոմանք XVI—XVII դարերում ունեին ժառանգական իշխանություն և նույնիսկ նշանավորվել են իրենց դիրքով ու գործերով: Հիշենք Սիսիանից հարեան Քշտաղի մեկիք-

<sup>1</sup> И. П. Петрушевский, Очерки, էջ 231 և հտ.: Մեկիքների ժառանգական իրավունքների մասին բնոհանրապես հմմտ. կարգապետ Կոչ, Նյուսթեր հայ մեկիրության մասին, Բ, էջ 104 և հտ. և Լ, ե ո, Խոջայական կապիտալ, էջ 154, 157 և հտ.:

<sup>2</sup> Հայկական ՍՍԻ Մատենագարան, ձեռ. № 360, էջ 20բ:

<sup>3</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 45 և Ս մ բ ա յ ա ն, նկարագիր Երնջակի, էջ 177 և 208:

<sup>4</sup> Հ. Թ ո ի չ յ ա ն, Յուցակ ձեռագրաց Խաչիկ վարդ. Գաղյանի, Լ, էջ 38:

ների օրինակը: Քշտազի մեկիք Հայկազին դիտենք տակավին 1590—91 թվականներին տրված ֆերմանից: XVII դարի սկզբներին Վայոց ձորում գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Զվլերջին ստացող սուրբ աւետարանիս՝ զՊարոն Հայկազ ազէն, որդի ազատաց ազատածնի, ստացաւ սուրբ աւետարանս յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղաց, հարն Պարոն Հախնազարին, պապին պարոն Հայկազին, և մար իւրոյ»<sup>1</sup>: Հիշատակարանից ակներև է, որ նրա նախնիները «պարոնների» դիրք ունեին: Կա հիշատակություն, որ մեկիք Հայկազի եղբայրներից մեկը վրադվում էր առևտրով. այդ մասին է վկայում վերջինիս «խոջա Սաֆար» անունը<sup>2</sup>: Ինքը, պարոն Հայկազը, հանդես է դալիս նաև որպես լուսավորական նպատակների հետամուտ անապատական շարժման հովանավորողներից մեկը<sup>3</sup>:

Միսիանի մի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌևԳ (=1584) ի յերկիրս Որոտան, քի դուռս... որքոյ Միմասայ ի գուղս որ կոչի Իրիցաթումբ, ի երկրիս մեկիքութեան Ալիխան բէկին. ի հայրապետութեան Տաթևու առաքիլոցն պարոն աէր Ռհանին և լուսարարութեան աէր Ռվաննիաին. ի շինիս առաջնորդութեան Աւանին, որ է որդի Պապին»<sup>4</sup>: Պիտի կարծել, որ

<sup>1</sup> Ե. Լալայան, Յուդայի ձեռագրոց վաստակարանի, Կ, էջ 524: Վերը բերված տողերից անմիջապես հետո Լալայանի խմբագրած բնագրում կարդում ենք. «Եւ թողեալ զգանձս ոսկի և արծաթս, զագաս և զձիս և զջորիս, զթօփս և զթուանկս, անհամար սպրանքս, փախստական զնացեալ զՍտամպուլ: Եւ դարձեալ զարագն Պարսից եկեալ Նախիջևանս. այնդ նըստեալ Գամիս, և անտի գնացեալ Գանձոյ բաղաբն և զպերան պատեալ և զարկեալ և պատասեալ զպերան»: Այս տողերը չեն հանդափորվում նախընթացների հետ և սխալ պատկերացում կարող են տալ մեկիք Հայկազի գերբի և կատարած գերի մասին: Մատենադարանի № 5303 ձեռագրի մեջ (թերթ 394.—395) գտանք Լալայանի ձեռքի սակ եղած հիշատակարանի բնագիրը, որից պարզվեց թյուրիմացությունը: Հիշատակարանի այդ տողերը վերաբերում են ոչ թե պարոն Հայկազին, այլ մի արիշ անձի, որը 1606 թվականին, Գանձայի պաշարման նախօրեին փախել էր Ստամբուլ: Այդ անձին վերաբերող էջի և Հայկազի մասին պատմող նախընթաց էջի արանքից ընկած է մի բանի թերթ: Սրան սպացույց է ծառայում այն, որ ձեռագրի հին թերթահամարները չեն համապատասխանում այժմյան թերթահամարներին: Հին թերթահամարով վերահիշյալ էջերից առաջինը ունի 381, վերջինը՝ 395. էջահամարը:

<sup>2</sup> Ալիշան, Միտական, էջ 248:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 9254, էջ 372ա, բ:



Միսիանի մճալում իշխած այս Ալիխան բեկը ևս հայրց մեկի էր: Իրտենք, որ այդ ժամանակ ժառանգական իշխանություն ունեին նույնիսկ Տաթևի վանահայրերը, որոնցից մեկն էր, ըստ երևույթին, Օրբեկյանների շառավիղ հանդիսացած Օհան պարոնսերը:

Իշխանական ծագում ունեին երեւի նաև XVII դարի սկզբների սպարած «մեծ Շապանը» և Տաթևի վանքում նույն դարի երկրորդ կեսում առաջնորդություն անող Հովհաննես Շապանօղլի կոչված վարդապետը, որի մասին ժամանակակից մի հիշատակարանում կարդում ենք, թե՝

էր նա որդի մեծ Շապանի,  
Իշխանաշուք և մեծազգի  
Եսիսկոպոս Սիւնկաց եղևալ  
Ի Երկոտասանից նահանգի  
Որ էր յաթոսն Ստաթէի  
Հոչակալոր մենաստանի:

Հավանորեն Օրբի նախնիները նվազ սղոցիկ ու անվանի էին, քան Քշտաղի պարոն Հայկազն ու նրա ժառանգները: Ժամանակակից արձանագրություններն ու գրավոր հիշատակարանները ոչ մի ցոլցմունք չեն տալիս նրանց մասին: Այնուամենայնիվ Օրբի թղթերից պիտի եզրակացնենք, որ մինչև XVII դարի կեսերը նրանք պայքարում էին իրենց ժառանգական իրավունքների, կալվածների և կրոնի համար:

Դրույթյաճը սկսում է փոխվել այն վայրկյանից, երբ Իրանում սկսում են լայն ծավալ ստանալ նշանակովի սատրապների ոտըն-ծըղությունները: Ստրկական կախման մեջ լինելով իրանշահից ու նրա վեզիրներից, Երևանի և Նախիջևանի խաները սատրապրյալների նկատմամբ ունեին նույն վերաբերմունքը, որպիսին պետական կենտրոնն ուներ իրենց նկատմամբ: Քաղաքների բնակալությունը պաշտոնատերերի կամայականության հակադարձ կողմն է միայն: Եթե պետական կենտրոնը ժառանգական խաներին դարձնում էր նշանակովի պաշտոնակալներ, ապա այս վերջինները գրկում էին իրենց Լեթակա գավառատերերին ու գյուղատերերին նրանց ժառանգական իշխանության հատկանիշներից — ամեն տեսակի «տոհմային տրադիցիաներից» — ձգտելով նրանց փոխարինել ստրկահաճ կրոնադրուժներով ու իշխողների հրամաններին հլու վերակացուններով:

<sup>1</sup> Հայկական ՍՍԻ Մատենագրարն, ձև. № 955Ե, Էջ 5ա?

Բնորոշ է Տավերնյեի մի վկայությունը: «Երևանում, — ասում է ուղեգիրը, — կամ բնիկ մի շարք հին հայ ընտանիքներ, բայց նրանք վատ վերաբերմունքի են հանդիպում խաների կողմից, որոնք կենտրոնից հեռու անում են, ինչ ուզում են»<sup>1</sup>: Անգամ եվրոպական միսիոներներն էին հայազգի այս ընտանիքներին իրանական պետության համար վտանգավոր ապստամբներ համարում<sup>2</sup>: Տոհմիկ այդ երևանցիները պատկանում էին գուցե հայազգի այն «իշխանների» թվին, որոնք մասնակցել էին Հակոբ Զուլալյացու դամարած խորհրդածուղովին և կարևոր դեր կատարել միսիոներների հետ նրա վարած բանակցությունների ժամանակ:

Նույն «վատ վերաբերմունքին» խանական իշխանության կողմից ենթարկվում էին նաև հայ ժառանգական գյուղատերերը՝ մեկիքները: Չնայած իրենց իրավունքների սահմանափակության՝ հայ գյուղացիների մեջ մեկիքները վաշելում էին որոշ հեղինակություն: Այս է հենց պատճառը, երբ հաճախ «տոհմացին տրադիցիայի» ոտնահարումը հանդիպում էր ոչ միայն շահադրդոված հայ իշխանավորների, այլ երբեմն նույնիսկ նրանց հեղինակությանը ենթարկված գյուղացիության դիմադրությանը:

Ինչպես մահմեդական, այնպես և քրիստոնյա ֆեոդալների «տոհմացին տրադիցիայի» դեմ ձեռնարկված իրանական հետապրնդումները ծայր էին առնում ոչ թե կրոնական, այլ քաղաքական մոլեռանդությունից կամ հաճախ նույնիսկ հարստահարչական մղումներից: Աղբյուրների մեջ բացակայում են մատնանշումներ այն մասին, թե, ասեմք, Երևանի կամ Նախիջևանի այս կամ այն խանը ձգտում է իսլամացնել հայ գյուղացիներին: Հարկավ բացառություն էին կազմում մահմեդականացած զոլամները կամ իշխողների հարեմի համար քաշված աղջիկները: Խաները չէին կարող մտածել քրիստոնյա հպատակների մասսայական իսլամացման մասին, թեկուզ այն պատճառով, որ զրանով կամոյին հրաժարված կլինեին զլխահարկի այն մասից, որ բաժին էր ընկնում իրենց<sup>3</sup>:

Հազվադեպ չեն աղբյուրների վկայությունները իրանական ֆեոդալների «քրիստոնեասիրության» մասին: Այսպես, նույնիսկ Երևանի Անֆի-ղուլի խանի մասին կարգում ենք մի հիշատակարա-

<sup>1</sup> Tavernier, նույն տեղում, էջ 39:

<sup>2</sup> Հմմտ. Chignon, նույն տեղում, էջ 250:

<sup>3</sup> Հմմտ. Sanson, նույն տեղում, էջ 199 և հո.:

նում, թե «սա յոյժ սիրէ զքրիստոնեայս և զպաշտօնեայս և կեղեցոյ»։ Նույն հիշատակարանում բարեմաղթություններ ենք գտնում նաև Նախիջևանի խանի մասին. «նաև Նախիջևանու փշխեցօղ Ալիզուլի խանին՝ զոր և հայցեմք ամենունակ արարչէն անսպլաք պահեսցէ զազգս քրիստոնէից»<sup>1</sup>։ Բանն այն է, սակայն, որ Նախիջևանի այդ խանը, ինչպես հետագայում տրամաջում էր Օրին, իր (Օրիի) «ընտանիքի», ինչպես նաև քրիստոնյա ուրիշ տիրապետողներէ ընտանյաց թշնամին է, որոնց ոչնչացնում է»<sup>2</sup>։ «Մեր ազնիվ իշխաններից շատերին նա խորտակել կամ սպանել է առանց դատաքննության, միանգամայն կամայականորեն», — ասում է Օրին<sup>3</sup>։

Զպիտի կարծել, որ բոլոր հայ տանուտերերն ու մելիքներն էին հանդիսանում իրանական փշխանության բնական հակառակորդները։ Քիչ չէին նրանց մեջ մարդիկ, որոնք համակերպվել էին պիրող կարգերին և խաղում էին պետական մեքենայի մանր սլառատակների դեր։ Զաքարիա Սարկավադի պատմածներից հայտնի են Քանաքեռի տանուտեր Աղաջանի, Շահկերտի տանուտեր Մալխազի, Նդվարդի տանուտեր Սահակի արարքները։ Քիչ չպիտի եղած լինի նաև տիրող կարգերին համակերպված մելիքների թիվը։ Գյուղացիների աչքում անվերսպահ բարձր չպիտի եղած լինի նրանցից ոմանց վարկը նաև Սյունիքում։ Այդ է ազդանշում այն փաստը, որ Օրիից փոքր-ինչ հետո Սյունիքում արժարժված Դավիթ Բեկի շարժումը դիմադրության էր հանդիպում տեղական մի շարք մելիքների կողմից։ Կային նույնիսկ թլպատված հայեր, որոնք դառնում էին հայ ազատագրական շարժման կատաղի հակառակորդներ։

Այսպես, XVII դարում Ազուլիսում աղայությո՞ւն և հաքիմություն էր անում Մուսաբեկենց մուսուլմանական տոհմը, որ հայ ծագում ուներ։ Կա ավանդություն, թե մուսուլմանացած Մուսաբեկենք խանական դիրքի հասան Շամախում ու Երևանում և մեծ սլընաս էին հասցնում հայ ազատագրական շարժմանը<sup>4</sup>։

Սակայն, որպես կանոն, հայ մելիքները ցույց էին տալիս խաներին բուն դիմադրություն և ենթարկվում դաժան հալածանքի։

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձև. № 754: 1668 թ. մի հիշատակարանում այս Ալիզուլին նշված է որպես քանդակաուղ տոհմին պատկանող Նախիջևանի խան. տե՛ս Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձև. № 3817, էջ 330ա։

<sup>2</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 9, էջ 17։

<sup>3</sup> Նույն տեղում, № 13, էջ 31։

<sup>4</sup> Ր ա Ք Ք ի, Սամսայի մելիքությունները, էջ 30 և հա.։

երեք տասնյակ տարիների ընթացքում, զեկուցում են 1699 թվականի Մխիթանի հայ մեկիքները, Նախիջևանի խանը դեղով կամ սրով ոչնչացրել է Օրբի տոհմին պատկանող մեկիքներից մի քանիսին, որոնց թվում նաև նրա հորը: «Մենք ինքներս,— գրում են նրանք,— ահանատես ենք եղել, նրա (Օրբի) շատ ազնիվ տոհմից երեք հոգու նահատակմանը հանուն կրոնի: Առաջինը՝ մեկիք Մարաիրոսը անհավատներից մի կալվածք վերցնելու և քրիստոնյա տիրոջը հանձնելու համար ենթարկվեց քարկոծման ու հրկիզման, որից հետո, համաձայն երկրի սովորության, «դասվեց սրբերի շարքը»: Երկրորդը՝ մեկիք Աղաջանն էր, որը սրակոտոր արվեց իր ապարանքում: Այլ հրապարակորե՞ն գլխատվեց մի երրորդը, Ղարախան անունով... Ի վերջո փորձեցին նույն եղանակով և նույն պատճառով մահացնել մեկիք Իսրայելին, պարոն Օրբի հորը: Բայց չհասնելով դաժան այդ նպատակին, նրան թունավորեցին, կատաղած լինելով շատ նշանավոր այս տան դեմ, ըստ կարելիության այնպես, որ կենդանի չմնա դրա մեջ ոչ մեկը, որն իր խելքով, տաղանդով ու վարքագծով ի վիճակի կարող էր լինել նպաստելու աճ կրոնքին, որին զարմանալիորեն կառչած են»<sup>1</sup>:

Նախիջևանի այդ ժամանակվա խաների դաժանությունն ո՞նեք նկատի ժամանակակից հայ մի հիշատակարանի հեղինակ, որը գրում է, թե՛ «ի թվին ՌՃԽԶ (1697) օգոստոսի մէկն Նախճևանա խանն փոխվեց, թախսիր եղև Մահմատ Ռըզա խանն և որդին նորայ Մուրթուզա Ղուլին էառ զանդին հօրն, և եկն ի սոյն աւուրս եմուտ ի Նախճևան: Խնդրեմք յամենակալէն յԱստուծոյ տացէ սմա իրաւունս և արդարութիւն, զազգս քրիստոնէից պահել առանց հեծեծանաց, զերս խիստ են բռնացեալ շար մարդիքն: Ռվին ՌՃԾԸ (1709) Մարթուզալի (Sic) խանն պեկլարպեկի արարին, ողորկեցին Աստապատ և որդի Սեֆի զուլի խանն կարգեցին մեր երկրիս. Աստուած զիւր հանճարս տացէ ամէն»<sup>2</sup>:

Երբեմն կատաղի այս պայքարը մղվում էր կրոնական դրոշի տակ, բայց հիմնականում խաների կրոնական անհանդուրժամությունը ուղղված էր մեկիքական տների դեմ, սրվելով քաղաքական և հաճախ նաև դրա հետ կապված նրանց մուլքադարսական փրավունքների դեմ: Կրոնական մուլեռանդությունը միայն սանձարձակ

<sup>1</sup> Ծ 3 0 B, նույն տեղում, № 6, էջ 13:

<sup>2</sup> Հայկական ՍՍԻ Մասնադարան, ձեռ. № 5180, էջ 535բ:

բնույթ էր հաղորդում մեկիքներին իրաւազրկելու կամ անճիտելու համար իրանական իշխողների մղած պայքարին:

Այն հանգամանքը, որ մեկիք Իսրայելից հետո Սիսիանի մեկիքների շարքում Օրին շի Գշում իրեն արյունակից մեկիքներից որեէ մեկի անունը, հիմք է տալիս կարծելու, թե XVII դարի վերջերին նրա տոհմի նկատմամբ իրանական սատրապները հասել էին արդե՛ն հետապնդված նպատակին. նրա տոհմի մեջ մեկիքների ժառանգական իշխանութունը վերացել էր արդեն: Ըստ երկվույթին նշանավոր էր այդ տոհմը ոչ միայն իր իշխանության համար վարած պայքարով, այլև փր ունեցվածքով: Այդպես արամադրում է մեզ կարծելու Օրիի և նրա Վարդան եղբոր մի խոսակցութունը, որ նշված է մեզ հասած թղթերում: Մի այլ կապակցությամբ Օրին հաղորդում էր, թե քսանվեց տարուց ի վեր հայրենիքում երեսի վրա է ձղել իր կալվածքը, որի եկամուտները հիմա ենթադրում է գանձել<sup>1</sup>:

Մահմեդական իշխողների հարվածների տակ էին ոչ միայն հայ մեկիքների փրավունքները, այլ երբեմն նույնիսկ հայ վանական հոգատիրութունն ու կալվածատիրութունը: Այսպես, Երնջակի վանական կալվածները հափշտակել էին Նախիջևանի խաները և հարկ եղավ, որ վանքը դրամով ետ դնել փրեն պատկանածը: 1656 թվականից մեզ հասած արձանագրության մեջ Եսայի և Ղազար վարդապետները հաղորդում են, թե այդ տարում «գնեալ յանիրաւացի տիրապետողաց երկրիս Նախիջևանայ, յանձնեցաք վանիցս ի տիրապետութիւն յաւիտեան զկալուածս, որ յառաջն ևս էր վանիցս, որոնց արեւելեան սահմանն էր դետն Երնջակայ և գիւղն Ապարաններն, հիւսիսայինն՝ վանուց քարահանքն, արեւմեանն՝ Կորիաձորն իւր սարովն՝ մինչև ձորագլուխն, իսկ հարաւայինն՝ Վանաց քարն և անտի դետովն ցԱպարաններն»<sup>2</sup>:

Պատկերը լրացնելու համար հիշենք, որ նույն դարի կեսերին Սիսիանի և Զագեձորի (=Զանգեզուր) մհալներում ապահով չէին նաև հայ առևտրականներն ու գյուղացիները: Այսպես, վերը նշված Մարգաղավնյաց վանքում 1652 թվականին գրված մի հիշատակարանի գրիչը պատմում է. «Խօճայ մի եկեալ ի մեր գեօղն վասն զապրիշում աւնելոյ և սատանայ բնակեալ ի սիրտ խօճային ոչ կա-

<sup>1</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 11, էջ 52 և №:№ 44, 120:

<sup>2</sup> Ս մ բ ա տ յ ա ն ց Մ., Նկարագիր ս. Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, էջ 101:

մեցաւ մնալն ի Գորիսն, այլ ելեալ գնաց գէպի յերկիրն Դիզակայ և առաջնորդ ելեալ նմա մարդ մի այլ Դիզակա ի ճամապարհին ըմբռնեալ եղէն յաւազակաց և առեալ ի նոցանէ բազում սակի և արծաթ, զոր ունէին յինքեանս ի (գաւ)ակին և զիւրեանք սպանեալ եղևն յաւազակացն և թաքուցեալ: Եւ շատ շրջեալ ընտանեաց իւրեանց և այլոց ոչ կարեցին յիմանալ զտեղին: Եւ ի նոցին պատճառի եկեալ զիմեցին ի վերայ մեր և ասացին հայք և տաճիկք. կթէ ի յայսմ գեղջէ է գնացեալ խօճաչն. և ի յահէ: նոցին փախըստեա եղեալ գնացաք յայլ երկիր: Եւ յետամնացս գեղին զոմն ի գեօղն թալանեցին և զոմն ի ճանապարհին»<sup>1</sup>:

Այս ամենից հետո, հասկանալի է, որ XVII դարի 70-ական թվականներին Սիսիանի մելիքները պատճառ կարող էին ունենալ միանալու իրանական տիրապետութեան գեմ Անդրկովկասում ծայր առած շարժմանը: Անսպասելի չէ նաև, որ նրանց ներկայացուցիչները մասնակցութեան ունեցած լինեին էջմիածնի խորհրդաժողովին: Օրիի թղթերից տեղեկանում ենք, որ Հայաստանի սպասույթն նպատակով բանակցելու համար այդ խորհրդաժողովում ընտրված պատվիրակներից երկուսը «զափանցի» մելիքներից էին հենց:

Թե իսկապես Օրիի հայրը եղել էր մեկն այն պատվիրակներից, որոնք 1677—79 թվականներին գեղերել էին Վրաստանում կապ հաստատելով նախապարաստվող ապստամբութեան ղեկավարների հետ, այդ համոզիչ պիտի համարենք աչքի առաջ ունենալով Օրիի Մոսկվայում աված մի բացատրութեանը: Այդտեղ նա վկայակալում է վրաց ապստամբութեան ղեկավարներից մեկին՝ Արշիլ թագավորին, որն այդ պահին գտնվում էր Մոսկվայում և ի վիճակի էր հավաստելու նրա հաղորդածները: Արձանագրելով Օրիի խոսքերը՝ Մոսկվայում գեսպանական պրիկազի քարտուղարը գրում էր. «Եվ ինքը Իսրայելը (այսինքն՝ Իսրայել Օրին) հուշս ունի, որ և Արշիլ թագավորին հայտնի է հայերի վաղեմի այդ դիտավորութեան մասին, թե ինչպես գեւ իրա, Իսրայելի, հայրը 23 տարի առաջ նույն գործի համար ռզարկված է եղել, և Ֆարգրադից (= Կ. Պոլսից) պատերազմի պատճառով վերադարձած, ինչպես նաև (նրան հայտնի պիտի լինի) իրա, Իսրայելի, ընտանիքի մասին: Եվ կամենում է ինքը, Իսրայելը, տեսակցվել Արշիլի հետ, եթե այդ կամենա բոյարին Ֆեոդոր Ալեքսեևիչը (պետական կանցլեր

<sup>1</sup> Հայկա՛հ՛ն՝ ՍՍԻՒ Մատենագարան, ձև. № 1626, էջ 406ա և բ:

Գոլովինը)»<sup>1</sup>: Այս վկայակոչումից հետո դժվար է կասկածել, թե Օրին էջմիածնում ընտրված մեկիք Իսրայելի որդին էր իսկապես: Հնարավոր է անգամ, որ Արշիլ թագավորը նույնիսկ անսել էր Օրինը, երբ նա հոր հետ միասին ժամանել էր Վրաստան՝ Արևմուտք մեկնելու համար:

Այս ավյալների իրականություն համարատասխանելու օգտին կովան կարող է ծառայել մանավանդ Ազվանից Եսայի կաթողիկոսի կողմից Պետրոս Մեծին ուղղված արժանահավասար մի գրությունը, որի մեջ Օրինն սրակված է սրպես «մեծագլխի» և «մեկիքլատա»<sup>2</sup>: Այդ գրությունը արժեքավոր ու հետաքրքրական է մանավանդ նրանով, որ բացի Ազվանից կաթողիկոսի, նրա թեմակալների և դարաբաղչի ու դաճակեցի իշխաններից ոմանց ստորագրություններից, ունի նաև Օրինի մի համերկրացու, ըստ երևույթին, ժամանակին Եվրոպայում առևտրով զբաղված ազգեցիկ մի դափաճացու՝ մանկեցի Օվանեսի որդի Ռոմասի խառլերեն մակագրությունն ու ստորագրությունը:

Օրինի թղթերի մեջ ասված է նաև, որ առհարկի իր վերագործից հետո, մեկիք Իսրայելը ընդհանուրի հաճությամբ փր լիսպորությունները փոխանցել էր որդուն՝ Իսրայել Օրինին: Ինչպես տեղեկացնում են մեկիքների անունից ներկայացված այդ թղթերը և ինչպես երևում է Օրինի անձնական հայտարարություններից, միայն հենց այս վերջինս է, որ, Հակոբ կաթողիկոսի առաքելությունը ձախողվելուց հետո, խիզախել էր շարունակել ճանապարհը դեպի Եվրոպա, նպատակ դնելով փրեն՝ ավարտի հասցնել էջմիածնի խորհրդածողովի սկսած գործը:

<sup>1</sup> Յ 3 0 Ե, նույն տեղում, № 42, էջ 81:

<sup>2</sup> Տե՛ս մեր «Հայ-սուրբիկենասցիայի ծագման խնդիրը», հավելված № 14:

<sup>3</sup> Յ 3 0 Ե, նույն տեղում, № 6 և 7:

## 2. ՕՐԻՆ ԵՎ 1677 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՐ

Հակասական տեղեկություններ Հակոբ Զուղայեցու զլլավորած պատվիրակության մասին: Օրիի ինքնակենսագրական ավյալները: Մի քանի ճշտումներ: Օրիի դեղերումը վեճեցիկում (1680—1683): Օրին Ֆրանսիայում (1683—1695): «Օրի» անվան սաուզարանությունը: Օրին Հոնոսյան Պֆալցում: Հայաստանի ազատագրման հարցի այժմեացման «բարեպատեն առիթ»: Հին առաքելության վերանորոգումը: Առեչություններ Բոսկանյան արժույթի հետ: Բանակցություններ վիճեցալում: Օրին և Եզուիտները: Օրիի կրոնական դավանանքը: Կուրֆյուրստի գրությունները հայ և վրաց իշխաններին:

*Նախընթաց դիտողություններից հետո փորձենք հիմա վերականգնել Օրիի թափառումների հավանական ընթացքը, հասցնելով մեր հետաքննությունը մինչև այն կետը, ուսկից պատմական կողմնակի վկայությունները լիարժեք ու վստահելի նյութեր են հայթայթում նրա գործածելության օբյեկտիվ լուսաբանության համար:*

1680 թվականին լքելով Կ. Պոլիսը, Օրին, ինչպես պատմում է ինքը, ժամանել է Վենետիկ և երեք ամիս այդտեղ գեղերելուց հետո մեկնել Ֆրանսիա: Այստեղ մնացել է վեց տարի՝ չվերել տեղից-տեղ, ծանոթացել երկրին և հաջորդ տարին Ֆրանսիական թագավորի մոտ ուճիկով ծառայության մտնել՝ երեք տարի իբրև հետևակի լեյտենանտ, մնացած երեք տարին իբրև հեծելազորի կապիտան: Տարիներ էին այդ, երբ Ֆրանսիական թագավորը՝ Լուդովիկոս XIV-ը, պտտերազմում էր դերմանական կայսրության և կլբոսպական մի քանի այլ պետությունների հետ: Ֆիլիպսբուրգի տակ (ըստ երևույթին նկատի պիտի ոճեննալ այդ բերդի 1688 թվականի սեպտեմբերին սկսված պաշարումը Վտրանի կողմից) սկըզբում ինքը կամավոր է եղել Ֆրանսիական զոմարտակում: Հետո եղել է ճաև Նամյուրում, երբ անգլիացիները պաշարել էին այդ քաղաքը: Այստեղ գերված՝ ի վերջո ազատվում է և անցաթուղթ



ստանում անգլիական թագավորից: Այնուհետև ժամանում է Հունստյան Պֆալց, ուր շորս տարի սպասարկում է Հովհան Վիլհելմ կուրֆյուրստին՝ որպես քաղաքային կոմիսար Հայդելբերգում, Ֆրանկենթալում և Մանհայմում (ուսերեն բնագրում՝ Mannheim, որ կարելի է հասկանալ դուցե նաև Նյունխեյն), և Մենն (°) քաղաքներում<sup>1</sup>:

Բերված տեղեկությունները քաղում ենք Օրիի 1701 թվականին Մոսկվայում արված բացատրություններից: Երկու տարի առաջ կուրֆյուրստին նա պատմում էր իր անցյալը փոքր-փնչ այլ լուսաբանությունից: Այդտեղ նա ասում էր, որ ինքը ժամանած է եղել Ֆրանսիա՝ հայերի դրություն մասին Լուդովիկոս XIV-ին ղեկուցելու համար: Վերջինս, ասում էր Օրին, ուշադրություն չդարձրեց իրեն: Տեղի լեզվին ու սովորություններին անծանոթ՝ երկար ժամանակ ստիպված թափառել է երկրում: Ի վերջս, կողմնակի մարդիկ իրեն խորհուրդ են տվել զբաղվելու առևտրով: Հետևելով այդ խորհուրդներին՝ սկսել է գնել ու վաճառել «մեծամեծների ճաշակին համապատասխանող» պերճանքի իրեր, հնարավորություն ստացել շփվելու սպաների, ղինվորականների և բազմազան այլ դիրքի տեք մարդկանց հետ: Ոմանք խոսում էին կռիլ, մյուսները քաղաքականության, ուրիշները այլ բաների մասին: Ինքը ամեն ինչի ակառն է՝ կախել հետաքրքրությունից, ջանալով հիշողության մեջ բեռնել այն, ինչ լավ է համարել և մի կողմ ձգել այն, ինչ չի հավանել: Պատերազմ հայտարարվելուց հետո առիթ չի բաց թողել ներկա գտնվելու բոլոր սլաշարումներին և նույնիսկ մասնակցելու ֆրանսիացիների ձեռնարկած վեց արշավի<sup>2</sup>: Մասնակցել է նույնիսկ Բուրբոնների դահաժառանգի ղլխավորած արշավին՝ «որպես կամավոր»<sup>3</sup>: Ընդամին դարձյալ մի նպատակով՝ մի անգամ ևս խոսել թագավորի հետ, որպեսզի հոժարի Հայաստան ուղարկել որևէ մեկին՝ իր ասածների ստուգությունը համոզվելու համար<sup>4</sup>:

Քննենք նախ Օրիի ինքնակենսագրության այս խմբագրությունը: Դրա իշխող տեղեկեցը ակներև է: Օրին կամենում էր հավաստիացնել, թե մեկնելով արտասահման՝ ոճնեցած է եղել մի նպատակ միայն՝ ներկայանալ Լուդովիկոսին և շահագրգռել նրան հայերի ճակատագրով: Այստեղ նա կամենում է այնպես ներկայաց-

<sup>1</sup> Յ 3 Օ Յ, նույն տեղում, № 41:

<sup>2</sup> Տե՛ս մեր «Israel Ory», Anhang, № 4.

<sup>3</sup> Յ 3 Օ Յ, նույն տեղում, № 111:

<sup>4</sup> Նույն տեղում, № 6:

Տեղ աստանդակահան իր կյանքը, որ իրր սարիներ շարունակ մի միտք է միայն մաշել իր ուղեղը՝ համակել «արև-արբայի» սիրալը Հայաստանի ազատագրման ցանկությունը:

Ո՞րքան արժանահավատ է այդ հավաստիացումը:

Նշենք այն փաստը, որ 70-ական թվականների սկզբներին ստացած լինելով Ռուսրփայում առևտրական մի շարք արտոնություններ՝ Ֆրանսիան գուրս եկավ այն պետությունների շարքից, որոնք ի վիճակի կարող էին լինել ռազմական ճակատ կազմելու Ռուսրփայի դեմ: Կապիտուլյացիաների հիման վրա ներդրաված չեանալյան առևտրի մեջ՝ Ֆրանսիան, ինչպես, ի դեպ, նաև Անգլիան ու Հոլանդիան ոչինչ չա՛հ չէին կարող սպասել Ռուսրփայի հետ քախվելուց: Գժավելով Ռուսրփայի հետ՝ այդ պետությունները ֆարող էին միայն զրկվել ձեռնառու առևտրի համար այդ երկրում ձեռք բերած իրենց առավելություններից<sup>1</sup>:

Կարող է առարկություն լինել, թե Ռուսրփայի հանդեպ բարյացակամ Ֆրանսիան կարող էր անբարյացակամ լինել հանդեպ նրա «գարավոր թշնամու»՝ Իրանի: Բայց շմոռանանք, որ այդ պահին արևմտյան բախումների մեջ մխրճված Օսմանյան պետությունը ֆենտրոնացրել էր բոլոր իր ուշադրությունը Բաղկանների վրա՝ Ավստրիայի պլսավորած կոալիցիայի դեմ:

1677—1680 թվականներին և այնուհետև գրեթե մինչև դարավերջը Հայաստանի ազատագրման հարցի արժարժման դլսավոր ֆայանր կաթոլիկ Ֆրանսիան չէր այլևս, այլ կաթոլիկ Ավստրիան: Այդ միտանդամայն ակներև է մեկ նախածանոթ Պետիկի և Պիսկոպի ստանձնած առաքելությունից: Եվ որչափ մասամբ հենց վերջիններիս առաքելությունն էր հարթել Հսկոր Զուղայեցու ճանապարհը դեպի Հոմ, կարելի է ենթադրել անվրեպ, որ ի վերջո էջմիածնում քնարված պատվիրակների ուղին ևս հասցնելու էր նրանց ոչ թե Փարիզ, այլ՝ ալստրիական կոալիցիայի մեջ մտնող երկրները: Հայտնի է, որ Վիեննան էր մամավանդ ձգողական այն կենտրոնը, որի շուրջը գամնում էր այդ պահին «Ռուսրփական վտանգը» մերկացած սրով վանելու ծրագիրների մեծ մասը: Այլ խնդիր է, հարկավ, թե որքան էին Ռուսրփայով զրաղված եվրոպական պետություններն քի վիճակի օգնության գալու հայ պատվիրակությանը, որը ապավինելով Հոմի միջնորդությունը, գաշինք էր որոնում ոչ միայն Ռուսրփայի, այլև Իրանի դեմ:

<sup>1</sup> II А. Смирнов, Россия и Турция, նույն տեղում, էջ 14:

Այս շէր խանդարում, իհարկե, որ Ֆրանսիայում եւս գտնվեին խաչակրաց արշավանքի ուշացած պատգամախոսներ: Այսպէս, կաթուղինյան մի քարոզիչ, խալապի Միքել Ֆերուրը, երկար տարիներ Ռուրբիայում միսիոներութեամբ անելուց հետո, 1675 թվականին Փարիզում հրատարակեց մի գիրք, որը կոչ էր անում «արև-արբային» իր ձեռքն առնել Ռուրբիայի բաժանման և քրիստոնյա ժողովուրդների «ազատագրման» սրբազան գործը: Այդ կապակցութեամբ նա ևս կանգ էր առնում ոչ միայն հայերի, այլև նրանց ազատագրական «մարգարեութեաններ» մաս<sup>1</sup>: Ռուրբերը, զրում էր նա, ունին մարգարեութուն, թե մի պահ իրենք նվաճելու են Հոմը, բայց ի վերջո ֆրանսիական թագավորը բշխու է նրանց Խտալիայից, զբավելու է Պոլիսը և ջարդելով Դամասկոսի տակ արարների ու թուրքերի միացյալ բանակները՝ մարգարեի իշխանութեան տեղ հաստատելու է Մեսիայի իշխանութունը: Ռուրբերը հավատում են այդ մարգարեութեանը, ասում է մեր հեղինակը, իսկ հայերի հայրապետը՝ սուրբ Ներսէսը, սրան ավելացրել է, թե ֆրանսիական թագավորն առաջանալու է մինչև Ռավրիզ և հաղթական իր զորքերով մտնելու Երուսաղեմ՝ փրկչի գերեզմանի դուռը ոսկով ու ազամանդով զարդարելու համար: Հայերը լիափափագ ակնկալութեամբ հաղորդում են միմյանց Ներսէսի մարգարեութեանը, իսկ նրանց մեծերից նույնանուն մի ուրիշը—ակնարկը թերևս Շնորհալու մասին է,— վերածել է այդ մարգարեութեանը նույնիսկ շափածո տողերի<sup>2</sup>: Մի քանի տարի անց, նույն հեղինակը հրապարակեց մի այլ գիրք, որ արժարժում էր նոր խաչակրութեան իր գաղափարները, հավատացած, թե ոչ միայն Ռուրբիայի ազատագրված քրիստոնյաները, այլ թուրքերն իրենք իսկ համախմբվելու են կաթոլիկ եկեղեցու գմբեթի տակ<sup>3</sup>:

ժամանակավրեպ կոչեր էին սրանք, որոնք որևէ արձագանք չգտան Ֆրանսիայի ընթացիկ քաղաքականության մեջ: Մտարերևներնք նաև, որ ժամանակավրեպ քաղաքագետներ այդ պահին կային նաև հայերի մեջ: Արդեն առիթ ունեցանք հանդիպելու Փարիզում հայ այն գործիչներին, որոնք անտեսելով ֆրանսիական քաղաքականության թուրքասիրական դիմաշրջումը, շարունակում էին Լուդովիկոս XIV-ի հետ կապել հայերի ակնկալութեանները: Նկատի

<sup>1</sup> Michel Febure, *Estat present de la Turquie*, Paris, 1675, էջ 407 և հտ.:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 267 և 408:

<sup>3</sup> Michel Febure, *Teatre de la Turquie*, Paris, 1682, էջ 139:

սաննք 1683 թվականին բազիշեցի մահտեսի Շահմուրադին և նրա հետ մեկտեղ վերսալլի արքունիքն այցելած ուրիշներին: Հանդիպեցինք սրանց հետ նույնիսկ Օրիի համերկրացիներից երկուսի՝ սիսիանցի Զարարիա վարդապետի և զազանշեցի Մուրադի անուններին, մարդկանց, որոնք այս ժամանակ նույնպես ինչ-որ սպասելիքներ ունեին Լուզովիկոսից:

Մեզ զբաղեցնող հարցի պարզարանության տեսակետից ուշադրավ է սակայն, որ Օրիի անունը բացակայում է մահտեսի Շահմուրադի հիշատակած մարդկանց շարքում, ինչպես և իր հերթին Օրին ևս չի հիշատակում ոչ մահտեսի Շահմուրադի, ոչ էլ նրա ընկերակիցների անունները, հակառակ, որ դեղերած պիտի լիներ Ֆրանսիայում հենց նրանց այդտեղ եղած ժամանակ:

Օրիի ձեռքում չկար հեղինակավոր որևէ հանձնարարական, որն ի վիճակի լիներ վստահություն ներշնչել դեպի նրա անձնավորությունը կամ կշիռ հաղորդել նրա դիմումներին: Ինքն իսկ ասում էր, թե շուներ սրևէ «ձեռագիր և կնքված գրություն»<sup>1</sup>: Իր ձեռքին կար, ինչպես ասում է, մի անցաթուղթ («проезжий лист») միայն, որի տակ գրված էր ինչ-որ կախկոպոսի ստորագրություն<sup>2</sup>: Դժվար է պատկերացնել, սակայն, թե ստանձնելով էջմիածնի խորհրդածոցովի սրոշումների կատարումը՝ Օրին կարող էր չիմանալ, որ անհնար պիտի լիներ սրևէ դիմում անել կամ որևէ բանակցություն վարել Ֆրանսիայի թագավորի հետ, շտանալով սուկական անցաթղթից ավելի ծանրակշիռ հանձնարարական:

Բայց, անկախ դրանից, կարո՞ղ էին Արևմուտք դիմող հայ մեծամեծները, որոնք հարկ էին տեսել պետությունների առաջ իրենց սիրտը բացելու համար լիազորել ազգի կաթողիկոսին և այլ ազգեցիկ մարդկանց, նույն խնդիրը վստահել ի վերջո քսանամյա անփորձ մի պատանու: Կարո՞ղ ենք ենթադրել, թե անփորձ այդ պատանին քաղաքական այդքան դժվար առաքելությամբ մեկնում էր Կ. Պոլսից Արևմուտք, ապավինելով սոսկ, ինչպես ասված է մի տեղ՝ «ասածու» օգնությունը<sup>3</sup>:

Կամենալով զրահվել այն փաստի դեմ, որ եվրոպական արքունիքներում կարող էր լսելի դառնալ իր ձայնը միայն հարկ եղած լիազորություններ ունենալու դեպքում՝ Օրին հարկադրված էր լի-

<sup>1</sup> Յ 3 0 B, 1 թ յն տեղում, № 44:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, № 6, էջ 17:

նում հետադաշում համապատասխան լույսի տակ դնել իր գլխով ասնցածը: Եթե 1701 թվականին Մոսկվայում որպես պֆալցյան բանբեր ճա կարող էր միանգամայն լուռվյան տալ երբեմնի իր բռն վթաղմունքը և հանձնարարել իրեն որպես զինվորական և դիվանագիտական լավագույն համարված զարոյի սան, այդպես չէր կարող վարվել նա 1698—1699 թվականներին Ղյուսեկդորֆում, ուր այդ պահին տներ սոսկ քաղաքային մատակարարի (Stadtskommissar-ի) պաշտոն և ուր, ըստ երևույթին, կային մարդիկ, որոնք դեթ մասամբ ծանոթ էին նրա անցյալին: Նման համամանքներում նա ստիպված էր ներկայացնել իրեն որպես համագամանքների զոհ կամ որպես մեկը, որի առկա զբաղմունքը պիտի արդարացվեր անցյալում հետապնդված վսեմ նպատակի ձախողմամբ:

Թե հիբավի հարկ կա այս կետում գոռուլթյամբ կշռագատել ոչ միայն Օրիի, այլև հայ մեղիքների ստորագրությամբ նրա մասին մեկ հասած վկայությունները՝ ակնբախ է վերջիններիս մեջ աչքի ընկնող հակասություններից: 1699 թվականին ցարին հասցեագրված իրենց գրության մեջ մեղիքները հայտնում են, որ իբր Պֆալցի կուրֆյուրսալը գրած է եղել իրենց, թե «բարձրացուցէք զպարոն Իսրայէլ Օսին որ տեսեալ և ուսեալ է զպատերազմն ի միջի մերում ընդդէմ պատերազմողաց, որ մեք տեսաք և իմացաք ճշմարիտ զիւր քաջութիւնն ի բանակի մերում, հաւատացէք իւրն որ ժամ (10 տարի) է, որ մեր կռուումն վարժեալ, պարոն Իսրայէլն կարող է Աստուծով, որ զձեր զամենայն փափաքն ի տեղն կատարել, ճշմարիտ իմացէք ի մերոյ իշխանութենէն»:

Դժբախտաբար Օրիի թղթերի մեջ չենք գտնում այստեղ վկայակոչված գրության բնագիրը կամ գրեթե դրա պատճենը: Սակայն ունենք այն գրությունը, որ մեղիքներին գրած թղթի հետ միաժամանակ կուրֆյուրստոն ուղարկած է եղել Վրաստանի Գիորգի «մեծ էշխանին»՝ Գուրգին խանին. այդտեղ նա միայն գրվատում է Օրիի բարի համբավը, հայրենիքի և քրիստոնեության (այսինքն՝ Հայաստանի և կաթողիկ եկեղեցու — Ա. Հ.) համար նրա հանդես բերած եռանդը՝ առանց որևէ բան ասելու նրա զինվորական տասնամյա ուսումնառության, պատերազմական ծառայությունների կամ քաջագործության մասին<sup>2</sup>: Հազիվ թե կուրֆյուրստի կողմից

<sup>1</sup> Յ 3 0 B, նույն տեղում, № 6, էջ 18:

<sup>2</sup> Նույն տեղում, № 1:

մեկիքներին ուղղած գրություն մեջ կարող էր ասված լինել ավելին: Հիրավի, մեկիքների կողմից իրեն, կուրֆյուրստին ուղղած պատասխանից երևում է, որ նա իր նամակում չավապես հանձնարարած է եղել միայն Օրիի բարի կամքը, նրա հավատարմությունն ու ջերմևանդությունը, նրա ձեռնարկումների իմաստուն ընթացքը, բայց ոչինչ չէր ասել նրա տասնամյա Վինլորական ծառայության կամ պատերազմական սխրագործությունների մասին: Եվ դեռ ավելին: Իրենց պատասխանի մեջ շեշտելով Օրիի Պուշյան ծագումը, մեկիքները կամենում էին նույնիսկ բացատրել, թե ինչպես է, որ տասնեկին տարվա ընթացքում Եվրոպայում բազմաթիվ շարչարանք, վիշտ ու տաճառք կրելուց հետո նա ազնվականի բարձր դիրքից իջած է եղել մինչև առևտրականի նկուն վիճակը («après avoir pratiqué en pendant tout ce temps — là beaucoup de peins, de chagrins et de souffrances, et jusques-mesme estre abligé aux derniers bassesses»)¹:

Ըստ երևույթին մեկիքների թղթում արված նման բացատրությունները փորձում էին հաղթահարել այն նախապաշարումները, որ առևտրով զբաղվողների նկատմամբ իշխում էր արևմտակարգ պական արտոնված դասի ներկայացուցիչների մոտ:

Այսուամենայնիվ, կուրֆյուրստի առաջ ևս Օրին թանձր մշուշի մեջ էր ծրարում իր անցյալը: Պատմում էր, թե, շարժանանալով ֆրանսիական թագավորի ուշադրությանը՝ ինքը երկար տարիներ ապարդյուն թափառել է Ֆրանսիայում և «ծանոթացել» այդ երկրին: Դժվար է հասկանալ, թե ինչո՞ւ պիտի այդքան երկար անդործ մի օտարական ղեկերեր Ֆրանսիայում կամ ի՞նչ նպատակ կարող էր ունեցած լինել նրա համար այդ երկրին «ծանոթանալը»: Գուցե՞ մի այլ վայրում էր թափառել նա՞ ունենալով սրոշ գործ ու նպատակ, որոնց մասին լուր էր խոհեմարար: Հիրավի դյուրին չէր հայանել, թե նախապես ինքը հածել էր այլ վայրերում կամ «ծանոթացել» այլ վայրերի, եթե վերջիվերջո Ֆրանսիայում էր հայտնվել ու գործել որպես առևտրական: Պիտի կուհեկ գուցե, որ հենց այդ պատճառով ոչինչ չէր ասում տեսակետ փենետիկում գեղերած լինելու մասին, ինչպես հետագայում պատմում էր Մոսկվայում, ուր առևտրական իր անցյալն արդարացնելու հարկադրանքի տակ չէր գտնվում այլևս: Հիրավի, հենց փենետիկը չի՞ եղել արդյոք այն վայրը, ուր Օրին մնացել էր ավելի երկար, քան այդ անհրաժեշտ

¹ Յ 3 0 B, նույն տեղում, № 5:

կլիններ, եթե իսկապես նպատակ էր ունեցել ներկայանալու ֆրանսիական թագավորին և խոսք բանալու նրա առաջ Հայաստանի ազատագրման մասին:

Այդ ենթադրությունն ընդունելու անհրաժեշտությունն ակնհայտ է կզառնա, եթե փորձենք ճշտել զբաղեցնող ժամանակամիջոցում Օրբի կատարած ուղևորությունների ստույգ տարեկցուցը:

Ըստ Եզլամի՝ Նամյուր բերդը անգլիացիներին անձնատուր լինելու մասին խոսելիս Օրբն իբր թե նկատի էր ունեցել այդ բերդի 1692 թվականին տեղի ունեցած անկումը<sup>1</sup>: Այս Եզլամյան պատմությունը սխալ է, անշուշտ: 1692 թվականին Նամյուրը հանձնվել է ոչ թե անգլիացիներին, այլ՝ ֆրանսիացիներին, մինչդեռ Օրբն ակնարկում է հենց Նամյուրում պաշարված ֆրանսիացիներին կապիտուլյացիան, որ տեղի էր ունեցել ավելի ուշ՝ 1695 թվականի օգոստոսի 26-ին, երբ բերդն ընկավ Վիլհելմ Օրանցի անգլիական թագավորի ձեռքը: Այդ ժամանակներից էր ելնում 1699 թվականին Օրբն, երբ ֆրանսիացիորեն շորս տարի էր հաշվում իր ծառայության ժամանակամիջոցը Պֆալցում: Օրբի գեղերումը Ֆրանսիայում, ուր նա գտնված պիտի լինի 1683 թվականից մինչև 1695 թվականը, տեղ էր 12 տարի: Նույն այս հաշվին էլ հենց համապատասխանում է նրա թղթերում նշված այն ցուցմունքը, թե առաջին և վերջին նամակը, որ ուղարկել էր հարազատներին արտասահմանից, գրված է եղել 1684 թվականին, Փարիզում<sup>2</sup>: Հարց է առաջանում, որտեղ էր գտնվել նա 1680—1683 թվականներին:

Հնարավոր է, որ այն թղթում, որ նշված է, թե մեկնելով Կ. Պոլսից՝ մնացել է Վենետիկում երեք ամիս, սպրդել է մի սխալ: Թերևս ոչ թե երեք ամիս, այլ երեք տարի էր գեղերել նա ս. Մարկոսի քաղաքում՝ Վենետիկում: Օրբին ժամանակակից կողմնակի միակ անձնավորությունը, որ կենսագրական բավականին մանրամասն տեղեկություններ է հաղորդում նրա մասին, Լյուդիս Կրուշինսկին, նշում է, թե Օրբն գործել է որպես զորքի մատակարար ոչ միայն Գերմանիայում և Ֆրանսիայում, այլև Իտալիայում<sup>3</sup>: Ճիշտ է, Կրուշինսկու շարադրանքը երբևմն սղձատում է Օրբի կենսապատկերը, աճյունամենայնիվ, փնչպես պիտի ցույց տանք հետագայում, նրա հաղորդածների ավագը հաճախ պարունակում է

<sup>1</sup> ЭЗОВ, նույն տեղում, № 44, ծան. 22:

<sup>2</sup> Հմմտ. նույն տեղում, № 11, հմմտ. № 5:

<sup>3</sup> Krusinski, նույն տեղում, էջ 71:

նաև ճշմարտության մարդարիաներ: Բոլոր պարագաներում շնչ կարող զանց առնել այդ հեղինակի տեղեկամբը Իտալիայում ունեցած նրա առևտրական զբաղմունքի մասին: Ուշագրավ է ընդամին, որ, նույն այդ հեղինակի վկայությամբ՝ գերմաներենից, ֆրանսերենից և մասամբ նաև լատիներենից զատ Օրին իմացած պիտի լինի նաև իտալերեն<sup>1</sup>: Այդ պարագան հավաստվում է նաև նրանով, որ իր թղթերից մի քանիսը Օրին թելագրել է իտալերեն<sup>2</sup>, Ո՞րտեղից կարող էր նա այդչափ յուրացրած լինել այդ լեզուն, եթե ոչ հենց Իտալիայում: Խոսելով Օրինի գրություններից մեկի լեզվի մասին, Եվյանը մատնանշում է դրա վենետիկյան գավառայնությունը<sup>3</sup>: Եվյանի կամ նրա լեզվաբան խորհրդատուների գիտողությունը խիստ արժեքավոր է: Դրանով ամրապնդվում է մեր ենթադրությունը Օրինի՝ Վենետիկում ավելի երկար ժամանակով դեգերած լինելու մասին:

Օրինի եռամյա դեգերումը Վենետիկում ոչ միայն հնարավոր է, այլև հավանական: Իրանում տիրող ռեակցիան, որի հարվածներն այնքան զգալի էին Օրինի ծննդավայրում և որից այնքան տուժել էր հայրական նրա տոմբը, դաժան այն հալածանքը, որ, փնչպես տեսանք, հաջորդել էր հայ-վրացական համերաշխ դործողություններին և հավանորեն նաև հարազատների ու մերձավորների հորդորն ու խորհուրդը, Զուլայեցու առաքելությունը վիժելուց հետո, կարող էին Վենետիկ ժամանած Օրինին հարկադրած լինել փորձել իր բախար առևտրի մարդում, ուր բարեկեցություն էին հասել նրա համերկրացիներից շատերը: Չկար գասային որևէ նախապաշարում, որ կարողանար արգելք հանդիսանալ մեղիքների տոհմին պատկանած երիտասարդին հրաժարվելու նման զբաղմունքից: XVII դարի Իրանում խոշորագույն իշխանավորներն իսկ մխրձվում էին առևտրական գործերի մեջ: Առևտրական գործերին մասնակցող Սեֆյաններն ու նրանց ենթակա ֆեոդալները տալիս են դրա ակնառու օրինակը<sup>4</sup>: Առևտրի հարգը բարձրաճում էր այն շափով, որչափով իջնում էր կալվածատերերի իշխանության հեղինակությունը: Վաճառականի կայուն հարստությունը սկսում է ավելի գնահատվել, քան մեղիքների անփառունակ պաշտոնատիրությունը:

<sup>1</sup> Տե՛ս մեր «Israel Ory», Anhang, № 17.

<sup>2</sup> Э 3 0 В, նույն տեղում, №№ 92, 113, հմտ. № 165:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 254, ծան.:

<sup>4</sup> Chardin, նույն տեղում, IV, էջ 157 և հտ.:



Եթե ընդունենք, որ Օրիի միտքն ևս աշխատել էր այդ ուղղու-  
թյամբ, հավանական է, որ Վենետիկը եղած լինի այն վայրը, ուր  
Օրին կարող էր սկսած լինել իր առևտրական գործունեությունը:  
Հագոնների հուշակավոր քաղաքն անծանոթ չէր դափան-  
ցիներին, և հենց XVII դարի երկրորդ կեսից է, որ Վենետիկում  
սկսում էր ծաղկել դափանցիների առևտուրը<sup>1</sup>:

Բոլոր ավյալներից սև կշռադատումներից ելնելով, պիտի  
կարծել, որ քաղաքական շարժառիթը շէր դարձյալ, այլ առևտրա-  
կան դորժը, որ 1683 թվականին բերել էր Օրիին Ֆրանսիա, ուր նա,  
ինչպես ինքն իսկ հայտնում է կուրփյուրստին, նախապես զբաղվել  
է պերճանքի առևտրով, որպես բանակի մատակարար<sup>2</sup> և, ի վերջո,  
կամավոր մասնակցություն տնեցել ֆրանս-անգլիական պատե-  
րազմին:

Օրիի հետագա գործունեության բնույթից ելնելով, ակնհերև է,  
որ Ֆրանսիայում նրա անցկացրած տարիները մասնավոր միջոց  
էին սվել նրան յուրացնելու քաղաքական և ռազմական բավակա-  
նաչափ գիտելիք, այն «exercitia bellica et politica»-ն, որով նա  
հետագայում, ոչ առանց հիմքի, հպարտ էր հաճախ: Նույն այդ  
տարիներին նա գործնականապես յուրացրած պիտի լիներ և՛  
ֆրանսերեն լեզու, և՛ ֆրանսիական տարազ<sup>3</sup>, և՛ ի վերջո նաև հայ-  
կական լսելիքի համար օտարաձայն «Խսրայել Օռի» կամ «Խսրայել  
Օրի» այն անոմը, որով նա հայտնի պիտի դառնար հետագայում:

Հիրավի, այդ անունն իսկ կրում էր իր վրա Օրիի ղեկերումնե-  
րի ճանաչելի հետքը: Ենթադրվում է, որ այդ անվան մեջ «Խսրայել-  
ը» նրա հայրանոմն է, իսկ «Օրին» նրա անձնանունը, գոյացած

<sup>1</sup> Ա. ի շ ա ն, Հայ-Վենետ, էջ 496 և հա.:

<sup>2</sup> 1703 թ. հուլիսի 23-ին սուս կանցյիւր Գուլովինին ուղղած գերմանե-  
րեն նամակում Օրին հաղորդում էր, թե չկամենալով իր հետ Մոսկվա ժա-  
մանած մտրդկանց անգործության մասնել, նրանց զբաղեցնում է ցարի սե-  
զանի համար կոնֆետներ և քաղցրեղեններ պատրաստելու գործով, ինչպես  
որ այդ ընդունված է Ֆրանսիայում: Հույս ունի, որ ցարը, ինչպես նաև  
կանցլերը չեն մերժի ընդունել իրենց այդ խոնարհ նվերը (տե՛ս Յ 3 0 Յ,  
նույն տեղում, № 106): Թվում է, որ ներկա գեղջում Օրին կամենում էր  
բանի տեղ անցկացնել մի գործ, որը նրան ծանոթ էր դեռ Ֆրանսիայից:

<sup>3</sup> Մոսկվայում դեսպանական պրիկադի թղթերում մնացել է Օրիի անձ-  
նական իրեղենները ընդարձակ ցուցակը, ուր թվարկված են նրա եվրոպա-  
կան հագուստ-կապուստի բոլոր պարագաները՝ ներառյալ կեղծամը, որ պիտի  
կրած լիներ նա, նախ՝ որպես պֆալցյան բանագնաց և ավա՞ որպես պապա-  
կան դեսպան Իրանում:

«Եսվրի» (նոր սուղապրուֆյամբ՝ Յսվրի) տարածված անունից, որի «Jauri» տառադարձությունը ֆրանսիական արտասանության մեջ վերածվել է «Ory»-ի<sup>1</sup>:

Քվում է, թե ճիշտ է այս դիտողությունը, բայց՝ վատ հիմնավորված: «Jauri»-ն ֆրանսերեն արտասանությանը կտար ոչ թե «Օրի», այլ՝ «Ճորի»: Անդամ էթե ելնելու լինենք ոչ թե «Jauri», այլ «Jauri» տառադարձությունից, կստանայինք ոչ թե «Օրի», այլ «Խորի»: Սակայն Օրիի ֆրանսերեն թելադրած թղթերի մեջ հանդիպում ենք նաև «Javri» և E'avri<sup>2</sup> տառադարձություններին, որոնցից արդեն միանգամայն անհնարին պիտի լինի ստանալ «Օրի» կամ «Ory» անունը:

Սակայն վերը նշած ստուգարանությունը համոզիչ կդառնա, եթե դիտենք, որ «Եսվրի» անունը XVII դարի հայ ձեռագրերում հանդիպում է նաև «Ավրի» ձևով<sup>3</sup>: Այսպես, հենց Օրիի թղթերում հանդիպող «Եսվրի որդի Աղաջանը» ուսերեն թարգմանված է «Агаджан Аври»<sup>4</sup>: «Ավրի»-ն «Եսվրի» անվան ձևերից մեկն է, որչափ հին հայերենում բառասկզբի «եա»-ն դորձածակամ չէր (օրինակ՝ «Աղուր» փոխանակ Եաղուրի, Աղգուլ՝ փոխանակ Եաղգուլի, Արաղիղ՝ փոխանակ Եարաղիղի, Աշխի՝ փոխանակ Եախշիի, Արամիշ՝ փոխանակ Եարամիշի և այլն)<sup>5</sup>: Այդ «Ավրի»-ն է դարձյալ, որ ֆրանսերեն տառադարձությանը դառնում է «Auri» կամ «Aury» և կարգացվում կամ զրվում որպես «Օրի» կամ «Ory»:

Թե իսկապես Իսրայելի որդի Եսվրին կամ «Ավրին» Ֆրանսիայում էր դարձել «Խսրայել Օրի»՝ դրանում հեշտ է համոզվել. եթե նկատենք, որ Օրին ստորագրում էր իր անունը միայն «Օոի» ձևով, մասներով հին ֆրանսերենի «ո» հնչյունի արտասանության հետքը: Չպիտի, ի դեպ, տարօրինակ թվա, որ Իսրայել Օրի անվան մեջ հայրանունը անձնանունից առաջ է զրված. նույն այդ ձևով Օրիի թղղ-

<sup>1</sup> «Հորիզոն», 1912, № 38, Մխիթարի (=րմ. Բ. Օհանյանի) հոդվածը:

<sup>2</sup> Յ Յ Օ Ս, նույն տեղում, №№ 2, 3, 5:

<sup>3</sup> Մ. Ա մ բ ա յ ա ն, Տեղեկագիր Գեղարքունեաց ծովազարդ զաւսուին, վաղարշապատ, 1895, էջ 788 և 809 և Հայկական ՍՍԻՄ Մատենադարանի № 519 ձեռագիրը, ուր (էջ 76բ) պատմված են Գեղարքունյաց «Ավրի բեկի» տաճիկների գեմ գործած քաջությունները:

<sup>4</sup> Յ Յ Օ Ս, նույն տեղում, № 14:

<sup>5</sup> Տե՛ս Ա ճ ա ո յ ա ն, Անձնանունների բառարան, I, էջ 268 և հտ. II, էջ 89 և հտ. I, էջ 93, և Ե. I, ա լ ա յ ա ն, Յուլյակի հայ ձեռագրաց վաստղ., I, էջ 215 և հտ. II, էջ 256:

թերում հանդիպող «Յավրի որդի Աղաջանը» թարգմանված ու տա-  
սադարձված է ֆրանսերենում «Jauri Agadjan» ձևով<sup>1</sup>:

Թուրք դիտողությունները բերում են այն եզրակացության, որ  
այ վեներաբիլում, ոչ Ֆրանսիայում Օրին չէր հետապնդել քաղաքա-  
կան որևէ նպատակ: Այլ խոսքով՝ 1680 թվականին Հայաստանի  
ազատագրման գաղափարը չէր ուղենիշ այն աստղը, որ առաջնոր-  
դել էր նրան Կ. Պոլսից Արևմուտք:

Երկար տարիներ Արևմուտքում դեղերելուց հետո է միայն, որ  
Օրին հայանվեց նորից Հայաստանի ազատագրման հարցի շուրջը  
վերաբորբոքված շահախնդրությունների հորձանուտում: «Կուրֆյու-  
րըստի մոտ ծառայելիս, — պատմում է Օրին, 1701 թվականին Ռու-  
սաստանում, — մի խոսակցության ժամանակ ես նրան հաղորդեցի  
հայերի ցանկությունները՝ անհավասաններից ազատվելու մասին»<sup>2</sup>:  
Կուրֆյուրստին ուղղված իրենց գրության մեջ ես հավաստելով  
նույնը, հայ մեկիքները գրում են դարձյալ թե՛ ասածու ողորմա-  
ծությունն է, որ առիթ է ավել (a donné l'occasion) ծանոթություն  
ձևը բերելու պֆալցյան տան հետ և հաղորդելու կուրֆյուրստին  
իրենց շարակրությունների ու բաղձանքների մասին<sup>3</sup>:

Կիսկատար լույս է սփռում Հայաստանի ազատագրման  
խնդրի վերհանման հանդամանքների մասին ինքը կուրֆյուրստը:  
Իր թղթերից մեկում նա գրում էր ուղղակի, թե աստվածային հա-  
տուկ նախախնամությունը կամեցավ, որ «ղրամական իր հաշիվ-  
ների համար մեզ մոտ ունկնդրություն ստացած լինելով» («in pe-  
culiari eum in finem exorata audientia»), Իսրայել Օրին գար Դյու-  
սելդորֆի արքունիքը և նկարագրեր Հայաստանի ողբալի կացու-  
թյունը<sup>4</sup>: Թե դրամական ի՞նչ հաշիվ էր այդ, որ առիթ էր ծառայել  
Օրինի հանդիպմանը կուրֆյուրստի հետ, կարելի է տեսնել մեր  
հրապարակած նրա մի դիմումից<sup>5</sup>: Ավելորդ է ասել, թե որքան  
անհամոզիչ է, երբ թվարկելով Պֆալցի կուրֆյուրստի քաղաքական  
և խնամիական կապերը Թուրքիայի դեմ պատերազմական գործո-

<sup>1</sup> Յ Յ Օ В, նույն տեղում, № 7:

<sup>2</sup> նույն տեղում, № 44:

<sup>3</sup> նույն տեղում, № 5, էջ 12:

<sup>4</sup> նույն տեղում, № 11:

<sup>5</sup> Տե՛ս մեր «Israel Огь», Anhang, № 1.

դուրբյունների մեջ մտած եվրոպական արքունիքների հետ, Եղյանը ուզում է հավաստիացնել, թե Օրին խոհեմություն և հեռատեսություն էր ունեցել գործոճանության վայր ընտրել Պֆալցը, որպեսզի գրավել կարողանա նրան, կուրֆյուրստին իր նպատակների համար<sup>1</sup>։ Որ քաղաքական նկատառումները չէին հասցրել Օրինն նաև Հռենոսյան Պֆալցի արքունիքը, ահմերև է թեկուզ հենց նրանից, որ արդեն իսկ երեք տարի էր անցել նրա Պֆալց ժամանումից, երբ նա ճախարհամության տնօրինությամբ» կուրֆյուրստի առաջ առիթ ունեցավ խոսք բացելու հայկական գործերի մասին։

Բայց եթե Հռենոսյան Պֆալցում դիպվածաբար վերհանվեց Հայաստանի ազատագրման հարցը, դիպվածական չէր տ'չ Օրին հետաքրքրությունը դեպի այդ հարցը և ո'չ էլ նման մի հարցի շահարկումը կուրֆյուրստի արքունիքում։

Օրինի թղթերից պարզվում է, թե ինչպես ինքը, օգտվելով առիթից՝ ջանք էր թափել ապացուցելու կուրֆյուրստին Հայաստանը նվաճելու և իրեն՝ կուրֆյուրստին Հայաստանի թագավոր դարձնելու դյուրությունը։ Աշխատել էր համոզել կուրֆյուրստին, թե որքան կարևոր էր ունենալ թշնամի Թուրքիայի թիկունքում անկախություն նվաճած քրիստոնյա Հայաստան ու Վրաստան, դարձնել այդ երկրները Թուրքիայի դեմ պատերազմող եվրոպական պետությունների քաղաքական ու ռազմական կայան։ Հավանորեն այդ ժամանակ էլ նշած պիտի լինի նաև հայ (գուցե և վրաց) ժողովրդին կաթոլիկ եկեղեցու դիրքը մղելու «աստվածահաճ» գործի կարևորությունը։

Հիրավի։ Նույն այդ պահին տեղի տնեցող թուրք-եվրոպական պատերազմի ընթացքում իրանական քրիստոնյաներին հովանավորելու խնդիրը կարի այժմեություն էր ստացել սուլթանի դեմ կռվող եվրոպական պետությունների համար։ 1685 թվականին Աերաստիան Բնապ միսիսները Իրանի շահին ներկայացնում էր պապի, գերմանական կայսրի, թոսկանական դքսի ու լեհ թագավորի դրությունները, ուր նորից արվում էր ընդհանուր թշնամու դեմ ղիմակցելու առաջարկ։ 1692 թվականին Հոռմից Նախիջևան է ժամանում գավառի եպիսկոպոսը՝ զոտեպնդված ոչ միայն պապի, այլև հակաթուրքական կոալիցիայի մեջ մտնող Վենետիկի հանձնարարականներով<sup>2</sup>։ Կային նաև հայեր, որոնք հետևում էին թուրք-

<sup>1</sup> Э 3 0 В, նույն, տեղում, Введение, LXXVIII.

<sup>2</sup> Ա. 1 ի 2 ա ն, Սխական, էջ 400:

եվրոպական պատերազմի ընթացքին և ազատութեան երաշխիք որոնում հակաթուրքական կոալիցիայի հաղթանակի մեջ: Այսպես, Բելգրադի առման կապակցութեամբ հայ մի հիշատակարանում կարդում ենք. «Ի սոյն ամի յորժամ հայոց թվականն էր ՌՃԼԸ (=1689)... ազգի ֆռանկաց զօրացեալ ի Քրիստոսէ առին զԲէլլըղաթ քաղաքն ի տաճկաց և բարձրացաւ եղջիւր խաշին Քրիստոսի»<sup>1</sup>: Կամ՝ «Դարձեալ ի թվին ՈՃՆԳ (=1694) զօրացան Վէնէտիկ քաղաքին քրիստոնէից զօրքն, և եկեալ 300 նաւօք և մեծաւ պատերազմաւ առնն զՍաղըսի կղզին, որ էր զարմանալի կղզի. և բռնութեամբ առին ի թուրքաց և բազում գերիս արարին, որ ոմանց ասի 30 հազար տղայ և աղջիկ տարան. և այնչափ զօրացան մինչի ընդ հարկաւ արարին զամենայն կղզին. նա և Իզմիրու ևս 40 քէսա խառաճ առին փ թագաւորական հարկացն, այսինքն ի դօմրտվէն»<sup>2</sup>: Պիտի կարծեւ, որ մեծ պիտի եղած լիներ մանավաճնդ նման տրամադրութիւն ռանցողների խանդավառութիւնը 1697 թվականին Տիսա գետի ափին եվզենիոս Սավոյացու տարած հաղթութեան համբավի կապակցութեամբ:

Նույն այդ պահին հրահրվում էր նաև հայ և լատին եկեղեցիների միացման խնդիրը: Այդ մասին ճառող Դաւանոսի Հռոմում լույս տեսած հայերեն և լատիներեն երկհատոր ֆոլիանոսը մի երկրորդ անգամ հրատարակվեց 1690 թվականին: Ավելի վաղ, 1686 թվականին նույն այդ գրքի լատիներենը առանձին տպվել էր նաև Քյոնոսում՝ «Historia Armeniae» վերնագրով: Եթե ոչ անձամբ Պֆալցի կուրֆյուրստին, այդ գիրքը ծանոթ պիտի լիներ նրա կաթոլիկ շրջապատին, հատկապես արքունիքում ամենաազդեցիկ եզոբիտ Պոտիեին (Potier), կուրֆյուրստի խոստովանահորը, որի հետ հետագայում մոտիկ շփման մեջ էր գտնվելու Օրֆն<sup>3</sup>: Հայտնի է, որ Հովհան Վիլհելմ կուրֆյուրստը դաստիարակութիւն էր ստացել եզոբիտների ձեռքի տակ: Նրան բնութագրում են որպես դուրամատույց ու ազդեցութեան ենթարկվող մի անձնավորութեան, որն ամբողջ իր կյանքում շարունակում էր լինել եզոբիտ իր ուսուցիչներին ուշիմ սանը: Եզոբիտ խորհրդատուները մեծ ազդեցութիւն ունեին նաև կուրֆյուրստի արարանքում հատկապես հենց այն ժամանակ, երբ նա հանդիպեց Օրֆին: 1697—1705 թվականներն էին այդ, մի ժամանակամիջոց, որ բնութագրվում է Պֆալցի պատ-

<sup>1</sup> Հ. Ա. ճ ա ո յ ա ն, Յուզակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, էջ 116բ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 115բ:

<sup>3</sup> Յ 3 0 B, նույն տեղում, №№ 3, 9 (§§ 3, 11) և № 44:

մության մեջ որպէս «եզուխտական սեպկայի» և «եկեղեցական տեռորիզմի» շրջան<sup>1</sup>։

Դյուսելդորֆի եզուխտները հատկապէս հետաքրքրվում էին Օրիի անձնավորութեամբ ու նրա հարուցած քաղաքական հարցով։ Դժվար է, փհարկէ, հավատալ, թէ եզուխտ կրօնավորմանի սիրտը ջերմանում էր հատկապէս հենց Հայաստանի ազատագրման համար։ XVII դարում եզուխտների ղեներալ Կառաֆան հիշեցնում էր իր օրգենին «աշխարհաքաղաքացիական» հին պատգամը—«ոչ թէ որևէ մի երկիր, այլ ամեն մի երկիր է մեր հայրենիքը»։ Նրան հաջորդած ղեներալ Գոսվին Նիկիկելը խայտառակ անկում էր համարում, եթէ որևէ եզուխտ հանդգնի «Սուրբ Երկրում վերհիշել Եփրատսը»... Եթէ եզուխտները «տիրամորն» անգամ պատկերում էին քրիստոնէացված Դիանայի կերպարանքով, հերետիկոսներ որսալու համար տալով նրա ձեռքը աղեղ ու նեա՝ կարելի է գլխի ընկնել, թէ ինչի՞ մասին էին իրոք մտածում նրանք, օժանդակութեան խոստանալով հայրենաբաղձ հայ գործչին Հուսի պապի, գերմանական կայսրի, Պֆալցի կուրֆյուրստի և սրանց զաշնակիցների միջոցներով Հայաստանում անկախութեան վերականգնելու գործում։

Հավանորեն «հերձվածող» Հայաստանի նկատմամբ Պֆալցի կուրֆյուրստը ևս շատ հեռու չէր եզուխտ իր խորհրդատուների ըմբռնումներից կամ նրանց հետապնդած քաղաքական շահախնդրութեաններից։

Զդիտենք, թէ ո՞ր չափով էր տարված նա Հայաստանի թագով պսակվելու բաղձանքով։ Օրին համենայն դեպս շատ լավ էր հասկանում, եթէ ոչ անձնապէս կուրֆյուրստ Հովհանն Վիլհելմի, գեթ նրա արքունիքի մտաճնութեանը։ Արեշատութեան՝ գինաստիայի համար, փառքի որս՝ սյուզերենի համար, առատ ավար՝ ազնվականութեան և զորքի համար, բարեպաշտ ծխականներ՝ կղերի համար, այս էր կուրֆյուրստի շուրջը վխտացող ազնվականների ու եկեղեցականների ամենօրյա պաղատանքը դիառատ տիրամորից։ Կուրֆյուրստի համար հարցասիրութեան առարկա կարող էր լինել եթէ ոչ հայկական հեռափալ թագը, գեթ եկեղեցիների միավորման և «դարձի» եկած արևելյան «հերձյալների» հետ ուղմաքաղաքական դաշինք կնքելու հեռանկարը։ Երևի սրանով էլ հենց

<sup>1</sup> Ludwig Häusser, Geschichte der Rheinischen, Pfalz, Heidelberg, 1845, II, էջ 786 և հետո։

պիտի բացատրել ուշագիտ այն բնօրինակութիւնը, որին արժանացաւ Օրին Հովհան Վիլհելմի արքունիքում:

Կուրֆյուրսախի և նրա մուկաանդ շրջապատի աշխույժ հետաքրքրութիւնն էր ըստ երևույթին, որ վերաբորրոքեց Օրին մեջ հայ ժողովրդի ազատագրման մասին ունեցած այն հուշերն ու տենչերը, որոնք պատանեկութեան տարիներէից անթելված էին նրա հոգեհատակում: Նրա հետագա գործունեութիւնը գալիս էր ապացուցելու, որ, կորցրած լինելով իրական ամեն մի կապ հայրենի երկրում արժարժված քաղաքական շարժման հետ, արժուն և խուզարկու էրա միաբը օտարութեան մեջ իրոք հառած է եղել աշխարհի հարաժտութիւն իրազրութեաններին, ժողովուրդների քաղաքական կյանքին, եվրոպական բանակների տեղաշարժներին և հասկապես այն խնդիրներին, որոնք 1680 թվականից ի վեր և մինչև 1698 թվականը արժարժվում էին Արևմուտքում Բալկաններում տեղի ունեցող պատերազմական գործուղութիւններին կամ զիջանագիտական բանավարութեաններին գողգրքից: Իրրե զինվորական մատակարար՝ տարիներ շարունակ նա կապված էր ռազմական ու պետական օրգանների հետ: Շատ առիթներ էր ունեցել զիտելու Արևմուտքի պետական ու ռազմական մեքենան և խմորվելու քաղաքական սպասի մեջ գործող եղուիտ կրոնավորների միջավայրում: Այս ամենը միջոցներ էր տալիս նրան հաճախակի անդրազանալու Արևմուտքի միջամտութեան հետ կապված հայ ազատագրական այն ակնկալութեաններին, որոնցով իր պատանեկութեան տարիներին տարված էին Ղափանի մելիքներն ու սրանց թիւում նաև իր հայրը:

Դրանորելով Պֆալցյան արքունիքի հարցասիրութեամբ զեպի հայերի քաղաքական ակնկալութեանները, Օրին հալատտիացրեց կուրֆյուրսախին, որ հայրենի երկրի ազատագրման տրամադրութեաններն ու բողձանքներն ավելի ուժեղ են իր մեջ, քան առևտրական այն գործերը, որոնք իրեն շղթաչած են եղել եվրոպական բանակներին կամ արքունիքների հետ: Չի կարող կասկած լինել այն մասին, որ հիմնական այս կետում նա անկեղծ էր միանգամայն: Այդ մասին է վկայում հետագա նրա ամբողջ գործունեութեանը, այն եռանդը, որ արժարժեց նա արևմտյան և ուսական արքունիքների հետ բանակցելիս, այն զրկանքներն ու զոհարերութեանները, որ ստանձնեց նա կամովին, բերանացի իր հալատտիացումները գործով ապացուցելու համար:

Նվ իրոք: 1698 թվականին կուրֆյուրստի հետ ունեցած բախտորոշ հանդիպումից անմիջապես հետո. Օրին մի կողմ է թողնում իր առևտրական գործերը և ստանձնում մի առաքելութուն, որը մտովին վերադարձնում էր նրան զեպի 1677 թվականի էջմիածնի խորհրդաժողովի խնդիրները: Նոր ստանձնած քաղաքական այդ առաքելութունը նա հիմա լծորդում է տարիներ առաջ նախադժված ազատագրական խնդիրների հետ և հետագա բանավարությունների ընթացքում իրեն հատուկ պատրաստարանությունք կամբջում այն խնդրահանձնարարումներով, որոնց քննարկման վրա ծանրացանք արդեն:



Քի իսկապես Հակոբ Զուղայեցու զլիավորած հին առաքելութունն է, որ բարեպաանհ առիթից օգտվելով, իր վրա էր առնում հիմա Օրին, երևում է այն թղթից, ար 1698 թվականի մայիսին հասցեագրում էր Պֆալցի կուրֆյուրստը վրաց ասպտամբուլյան զեկավար Գուրգին խանի—իմա՝ Գիորգի XI թագավորի—անունով: Ողջունելով սրան, որպես «Մեծ Հայաստանի» մեջ մանող վրաստանի և հայ-քրիստոնյաների «առաջին իշխանի» — տիտղոս, որի մեջ դժվար չէ զգալ վաղուց ի վեր մարած «հայոց և վրաց թագավորության» դադարակալան շորշուր — կուրֆյուրստը հաղորդում էր նրան պատեհ այն առիթի մասին, որ միջոց էր տվել Օրինն նկարագրելու իրեն — կուրֆյուրստին — Հայաստանի տառապանքները և հաղորդելու այն պատվիրակության մասին, որը վրաց «մեծ իշխանի», «Ուշքիլիսեի (= էջմիածնի) և «Ղափանի» (= Աղվանից կամ Գանձասարի) պատրիարքությունների ու «Մեծ Հայաստանի» իշխանների անունից ժամանակին պիտի ներկայանար Հուսի քահանայապետին՝ խնդրելու եվրոպական պետությունների միջամտությունը և դաշինք ստեղծելու Եվրոպայի և Հայաստանի քրիստոնեություն միջև:

Այս պրությունից պարզվում է, որ զեկուցելով Հուսի ուղարկված պատվիրակության մասին՝ Օրին հաղորդած է եղել կուրֆյուրստին, թե չնայած որ «Մեծ Հայաստանում» քրիստոնյաները «անօրենների» համեմատությունք կազմում են մեծամասնություն ու «անօրենները» չունեն այդ երկրում ամուր ռազմականներ, կամ որ քրիստոնյաներին չի պակասում ո՛չ ռազմական ոգի, ո՛չ էլ կուլուր բազուկներ՝ երկիրը շարունակում է տառապել «անօ-



բենները» դաժան լծի տակ: Հարկավոր է միայն, որ քրիստոնյա եվրոպան տրամադրի իրանական և թուրքական լծի տակ հեծող քրիստոնյաներին ռազմական մի փոքր օգնություն և ամենից առաջ սուլարկի զինվորական գործին տեղյակ առաջնորդներ, որպեսզի նրանք ի վիճակի լինեն թաթափելու քաղաքական սարկու-թյան կրկնակի այդ լուծը: Իր կողմից պատրաստակամություն հայտնելով «հանուն քրիստոնեական բարեպաշտության և մարդասիրության» անել տառապող Հայաստանի համար ինչ հնարավոր է՝ կուրֆյուրստը խնդրում էր Գուրգին խանին՝ հավաստել Օրիի հաղորդածը և նրա միջոցով տրամադրել իրեն ավելի մանրամասն տեղեկանք, որպեսզի ինքը խնամիրական և արենակցական մերձավորությամբ իր հետ կապված «ամենազոր միապետի» — գերմանական կայսրի — հետ կարողանա ամել ինչ կարող է բարի այդ գործին ընդառաջելու համար<sup>1</sup>:

Մեկիքների անունից կուրֆյուրստին գրված պատասխանի թղթից երևում է, որ համապատասխան բովանդակությամբ նամակներ էր ուղարկել կուրֆյուրստը նաև էջմիածնի և Աղվանից կաթողիկոսների, ինչպես նաև իրենց՝ մեկիքների անունով<sup>2</sup>:

Այս ամենից իրոք ակներև է դառնում, որ Օրին կուրֆյուրստի առաջ հուզած է եղել հարցեր, որոնք պիտի զրվեին եվրոպայում Հալոր Զուլայեցու պատվիրակության միջոցով և որ ինքը, Օրին, կուրֆյուրստի առաջ արժարժել էր «Մեծ Հայաստանի» ազատագրման այն ծրագիրը, որ մշակած են եղել հայ և վրաց ղեկավարները XVII դարի 70-ական թվականների վերջերին: Նույնն են, հիրավի, գործի նախաձեռնողները՝ Վրաստանի թագավորը, էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսները և հայ մեկիքները: Նույնն են, գեթ մասամբ, շարժման եվրոպական հովանավորողներն ու զորավիգները՝ Հոտմի քահանայապետն ու «անօրենների» դեմ պայքարող եվրոպական պետությունների զինակցությունը — «ամենազոր միապետ» կոչված գերմանական կայսրը և նրա դաշնակիցները:

Այդ դաշնակիցներից Օրինի հովանավորողների մեջ կուրֆյուրստից զատ անմիջորեն հիշատակվում է Թոսկանայի մեծ իշխանը, որ ներկա դեպքում կարող էր լինել Կոլմաս III Մեդիչին (1670—1725): Հայ առևտրականներն ու դաղթականները վաղուց էին կապված թոսկանական քաղաքների, մասնավորապես Ֆլորեն-

<sup>1</sup> Յ 3 0 B, նույն տեղում, № 1:

<sup>2</sup> Նույն տեղում, № 5:



քարեկամների շարքում: Ուրիշ մի «աղվանցի» Մատթևոս Օղլան-քելիշյան, 1698 թվականին Կողմաս III-ի օրոք կառուցեց Լիվոսնոյում մեծածախս մի եկեղեցի, որի մասին խոսք պիտի լինի հետո:

Արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ Թոսկանայի մեծ դուքսը, Կողմաս III-ը, վանական ոգով դաստիարակված մի կաթոլիկ, հետաքրքրվում էր նաև Հայաստան և Վրաստան հզվույ միսիոներների գործերով: Տեսանք նաև, որ Թոսկանան մեկն էր այն պետություններից, որոնց հանձնարարականներով 1669 թվականին Մատթևոս Հովանիսեցին և Պետրոս Պետիկը մեկնեցին Իրան՝ բանակցելու հակաթուրքական կոալիցիայի և Նախիջևանի կաթոլիկ հայերի համար: Թոսկանայի և Թուրքիայի միջև եղած հակամարտությունը հայերին ծանոթ էր ղեռ առաջ: Այսպես, XVII դարի սկզբներին իր «Ուղեգրություն» մեջ Սիմեոն Լեհացին Թոսկանայի իրեն ժամանակակից դուքսի մասին գրում էր. «Եւ զի սա յոյժ մեծարի և քաջ է, զորաւոր և յաղթող և յաշողած ի պատերազմի և ելանէ ի վերայ ծովու եօթն դատրդով միայն, բայց մեծամեծօք. և այնպէս հնարաւորք են, որ բազում անգամ մինչև ի Պօղոզհիստար և մերձ Ստամպոլայ կղզիքը մտանեն, աւար հարկանեն և զերեւոյ տանեն: Այլ և ի վերայ ծովու զորս և գտանեն թուրքաց նաւ, գնաւս բնկղմէին, գինչս առնուին, զմարդիկն զերթի վարէին, զորս ի սուր ձգէին, զորս ի սուր մաշէին. այլ և ծովեզերաց գիւղս և քաղաք քանդէին. և վա՛յ և եղուք ածէին այլազգաց, բայց զքրիստոնեայս անվնաս արձակէին, զի ջոյժ տեղեակք են մարտի ծովու բան ցամարի»<sup>1</sup>: Երբ 1673 թվականին Ապահանից և Նախիջևանից բերած թղթերով Արևմուտք հղվեցին Ազարիա Ջահկեցի և Անտոն Ապրակունիսեցի հայ դամբնակցանքերը իրանշահի և ֆրանկացած հայերի հանձնարարությունները կատարելու համար, ժամանեցին նաև Ֆլորենտիա: Հավանական է, որ ժամանակին Թոսկանայի դուքսի մոտ էր ունկնդրություն ունեցել նաև մեզ ծանոթ Հովհաննես Թյությունճին: Հայտնի է գեթ, որ 1680 թվականի սեպտեմբերին Թյությունճին ժամանել էր Լիվոսնո, որից հետո հարկ էր համարել իր հիշատակագրություն մեջ մտղթել մեծ դուքսին երկար ու պայծառ կյանք «ի պարծանս ամենայն քրիստոնէից և ի զթութիւնս տառապեալ Հայոց ազգին պանդխտելոց»<sup>2</sup>:

<sup>1</sup> «Հանդես տնօրէյա», 1934, էջ 67:

<sup>2</sup> Ա. Ալլոպոյաճյան, նույն տեղում, էջ 11:

Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմը, գերմանական կայսր Լեոպոլդ I-ը, սպանական Կարլոս II-ը և Պորտուգալիայի Պեարոս II թագավորները Կողմաս III-ի փեսաներն էին: Խնամհա-  
կան այս կապերի մասին հարկ էր տեսել նշելու նույնիսկ Պֆալցի  
կուրֆյուրստը՝ Գուրզին խանին ուղղած իր գրության մեջ: Փոքր-  
ինչ հետո, 1699 թվականին, Օրին արձանագրում էր ուղղակի, թե  
Րոսկաճայի մեծ դուքսն իրեն անձնապես խոստացել է աջակցել  
Հայաստանի ազատագրմանը, մի գործի, որ, Օրիի հավաստիա-  
ցումով, այնքան շահավետ է լինելու թե՛ Հռոմի եկեղեցուն, թե՛ մեծ  
դուքսի փեսային՝ Պֆալցի կուրֆյուրստին<sup>1</sup>: Բե մինչ այդ ե՛րբ կամ  
ս՛ր էր ներկայացել Օրին այդ դքսին, պարզ չէ: Հավանորեն առե-  
տըրական գործերի բերումով կամ գուցե կուրֆյուրստի հանձնա-  
րարականով, նա հանդիպել էր Ֆյորենաիա, 1698 թվականին, երբ  
պատրաստութուն էր տեսնում մեկնել հայրենիք հետագա իր  
բանակցություններին պաշտոնական բնույթ տալու համար լիազո-  
րագրեր ստանալու:

Հայաստան մեկնելուց առաջ Օրին խնդրել էր կուրֆյուրստին՝  
փրեն ուղեկից տալ արքունի սպաներից մեկին, որպեսզի վերջինս  
պիտեր Հայաստանի կացությունն ու հավաստեր կուրֆյուրստի  
առաջ իր հաղորդումները: Քանի որ թուրք-եվրոպական պատե-  
րազմը անկարելի էր դարձնում գերմանական սպայի ընկերակցու-  
թյունը<sup>2</sup>, մնաց, որ Օրին մեծակ ձեռնարկեր ուղևորությունը:

Գոտեպնդված կուրֆյուրստի նամակներով՝ 1698 թվականի  
օգոստոսին Օրին ժամանեց Վիեննա: Այստեղ մա հատուկ հուշա-  
գիր անրկայացրեց Լեոպոլդ կայսրին, որով հովանավորութուն էր  
հայցում հայերի համար և խնդրում հուսադրող գրություն՝ Հայաս-  
տանի իշխանների հասցեով: Կայսրի անունից Օրին հայաճեցին,  
թե անհնարին է բավարարել նրա խնդիրքը: Նախ՝ քանի որ կայսրը  
պաշտոնական որևէ դիմում չէր ստացել հայ իշխաններից և սպա  
այն նկատառումով, որ Օրիի հայցած գրությունը կարող էր ընկնել  
թուրքերի ձեռքը, որոնց հետ այդ պահին խաղաղության բանակ-  
ցություններ էին գնում. նման մի անպատեհություն, արտունջի  
տեղիք տալով թուրքերին, կվնասեր բանակցություններին: Օրին  
հասկացրին նաև, թե հինգ-վեց ամիս (բնագրում գրված է «տարի»  
սա անշուշտ գրչի վրիպում է—Ս. Հ.) առաջ կայսրը հանձնարարա-

<sup>1</sup> Յ 3 0 Բ, նույն տեղում, № 9, § 3:

<sup>2</sup> Նույն տեղում, № 120:

կան կտար իրեն, բայց հիմա, երբ զազարել են պատերազմական գործադուլթյունները և խաղաղության բանակցություններ են դնում, այդ անհնարին է արդեն<sup>1</sup>:

Այս հայտարարությունը ինքյան Օրին պիտի հանդեպներ այն եզրակացության, թե առկա պայմաններում անպատեհ մի դործ է իր ձեռնարկածը. կնքված պինդագործը և վերահաս խաղաղությունը սպառնում էին ավերել եվրոպական հովանավորողների վրա դրած իր հույսերը: Եվ դեռ ավելին: Ո՛չ Հռոմի պապը, ո՛չ Հռոմեական կաթոլիկ Կարլովիցի դաշնադրությունից առաջ իսկ արամադրություն շոնեկին որեէ նպատակով արշավանք ձեռնարկել Իրանի դեմ: Ընդհակառակը: Նրանք մի ժամանակ բռնակցություններ էին վարում Իրանի հետ՝ նպատակ դնելով ներդրավել նրա ռազմական ուժերը Թուրքիայի դեմ<sup>2</sup>:

Բայց, ինչպես պիտի տեսնենք, Օրին դյուրությամբ հուսարեկվողներին չէր: Բացի այդ, Վիեննայում կային մարզիկ, որոնք կարող էին հուսադրած ու խրախուսած լինել նրան: Եթե Պիալցի կուրֆյուրստի մոտ իրեն նպաստում է պատեր Պոտին, կայսերական արքունիքում Օրին գործերի մասին «զեկուցում և աշխատում է» պատեր Վոլֆը: Հայկական գործերի մասին եզուլիտ այս պատերներին հետ, շեշտում էր Օրին, «ամեն ինչ համաձայնեցված է»<sup>3</sup>: Բացի այդ, իր հուշագիրը Վիեննայում Օրին ներկայացրել էր արքունիքին գերազուր պատեր Մենեգատի միջոցով, որին երևի նա հանձնարարված էր նույն Պոտինի կամ Վոլֆի կողմից:

Կար նաև եկեղեցական մի այլ անձնավորություն, որի հետ շփման մեջ էր գտնվել Օրին Վիեննայում: Դա հայազգի մի կրոնավոր էր, կապլան Ներսես Երևանցին: Ուրբանյան դպրոցի սաներից էր սա և Նիկոլ Թորոսովիչ արքեպիսկոպոսի ձեռնադրածներից: Վիեննայի արքունիքը շնորհապարտ էր այդ կապլանին, պատվանք և եկեղեցու մատուցած նրա ծառայությունների համար: Թուրքիայի դեմ մղված պատերազմի ժամանակ Ներսեսը մկրտել էր 1200 թուրք գերի, թարգմանել հայագիր բաղամթիվ դրադրություններ և նպատակել 1686 թվականի Բուգապեշտի գրավմանը: Դրա համար պարտնության տիտղոս էր շնորհվել նրան, և նա նշանակվել էր կայսերական պալատերեց, իսկ հետագայում ստացել արքունի կանոնիկոսի աստիճան<sup>4</sup>, Կապլան Ներսեսը ծանոթ էր

<sup>1</sup> Յ 30 Յ, նույն տեղում, № 31, էջ 45 և հա.:

<sup>2</sup> «A chronicle of the Carmelites in Persia», I, էջ 404 և հա.:

<sup>3</sup> Յ 30 Յ, նույն տեղում, № 44:

<sup>4</sup> Ա. Լիշան, կամենից, էջ 145, «Հուշարձան», Վիեննա, 1912, էջ 316 և հա.:

եվրոպահայ գաղութներին: Այսպես, Ամստերդամի հայ տպարանասերերը նրան են դիմում «ազգի» խնդիրներով—և նրա միջոցով հասցնում կայսերական արքունիքին իրենց աղերսանքները<sup>1</sup>: Մելիքների ստորագրությունը կրող 1699 թվականի թղթերից մեկը լիակատար հիմք է տալիս ասելու, թե հայազգի այդ կապլանը կամ, ինչպես կոչում են նրան մելիքները՝ «Ներսես կաթսկոպոսը» իրազեկ էր նաև հայերի ազատագրման գաղտնի մտադրություններին<sup>2</sup>: Անհավանական չէ, օր ժամանակին Վիեննայում նա եղած լինի Պետրիկ մերձավորներից ու համախոհներից մեկը, իսկ հիմարազաքական կենդանի օղակ էր հանդիսանում նաև Օրիի և Վիեննայի արքունիքի միջև<sup>3</sup>:

Հայ քաղաքական բանակցությունների պատմության ընդհանուր ընթացքի տեսակետից բնորոշ է և ուշագրավ այն փաստը, որ Օրին ևս ասպարեզ իջավ արպես կաթսկոպոսյան հարած հայ: Երկարատև նրա դեգերումները կաթսկոպոսի աշխարհում և լեզվանի եղութաների հետ սունեցած նրա շփումները զգալի հետքեր էին թողել նրա հայացքների, նրա կոնսպիրատիվ գործելակերպի և նույնիսկ բանավարության նրա մեթոդների վրա: Դժվար է ենթադրել, թե կալվինիստ, լութերական կամ հայադավան «հերձվածողների» դեմ կուրֆյուրստին ուղղված նրա թղթերի մեջ հանդիպող սուր հարձակումները<sup>4</sup> կարող էին սոսկ զիջանադիտական զիմայլակներ եղած լինել: Հայկական շարժման տրագիցիոն նախադրյալներն ու հանգամանքները, կաթսկոպոսի շրջապատի տեական և անմիջական ազդեցությունը, քաղաքական հետադա կապերն ու շփումները կարող էին իրոք նրան դարձրած լինել ոչ միայն հավատալիս հոռմեադավան, այլև հարկադրել նրան ոտք դնել քաղաքա-

<sup>1</sup> Հմմտ. «Նուշարձան», էջ 315 և համ. նաև Daschjan, Catal. der armenischen Handschriften der K. K. Norbibliothek zu Wien, Wien, 1891, էջ 12:

<sup>2</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 2:

<sup>3</sup> Վիեննայի արքունիքի համար Ներսեսը թարգմանել էր հայազգի Գարբիել ժամանակագրի Պուտայից ուղարկած ինչ-որ թղթեր: Հիշատակելով այս փաստը, Տաշյանը զիտում է, որ այդ (այսինքն՝ Ներսեսի ծածկագրած թղթերը) կան ցայսօր Ալստրեական Դիվանին մեջ, զորոնք ուրիշ առիթով կոստաներ» (Ղ. Տ ա շ յ ա ն, Յուրակ հայերեն ձեռագրաց Գայսերական Մատենադարանին ի Վիեննա, էջ 34): Որքան գիտենք, Տաշյանի խոստումն անկատար է մնացել: Ներսեսի ծածկագրերը կարող են նոր լույս սփռել նրա և զույց նաև Օրիի գործունեության վրա: Պիտի կարծել, որ միևնույն ժամանակները կհատարեն Տաշյանի կողմից ծրագրված այդ աշխատանքը:

<sup>4</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 2, 5, 9, 31, 35 և 11, էջ 51:

կան մի շաւղի վրա, որի համար հայ միջավայրում հոգ. էր պատրաստել կաթողիկ պրոպագանդը: Եզուիտ Կրուշինսկին, Օրիի հետ ծանոթացած լատինադիր այն հեղինակը, որը սկզբնապես նրա նկատմամբ ներշնչված էր անվստահութեամբ, բոլոր պարագաներում առարկում էր նրանց, ուլքեր, աչքի առաջ ունենալով նրա քաղաքական հետադադիմադարձը Արևմուտքից դեպի Խուսաստան, ժխտում էին նրա անկեղծ կաթողիկոսները: Այնուհանդերձ մենք դեռ պիտի առիթ ունենանք համոզվելու, որ, մնալով կաթողիկ, հետագայում Օրին բախվեց մոլեռանդ այն ունիտորների ու եզոփանների հետ, որոնք շահարկում էին ազատագրական շարժումը հայ ժողովրդի պարանոցին պապական Հռոմի հանդեպ սարկամառոյթյան անուր նրատացնելու նպատակով:

Թե ո՞ր չափով էր Օրին կտրված Հայաստանի և վրաստանի ընթացիկ կյանքից Պֆալցում բանակցութեաններ սկսելու պահին, ակներև է այն գրութեաններից, որոնք նրա ձեռքն էր ավել կուրֆյուրստը Հայաստան տանելու համար: Գրութեանները ուղղված էին այնպիսի հասցեներով, որոնք անկարող էին դարձնում հանձնումը: Աղվանից կամ Գանձասարի Փիլիպոս կաթողիկոսը, որին, մեղիքների ասելով, ուղղված էր գրութեաններից մեկը, անդոջ դեմք է: Օրիի ժամանակ այդ աճուճով կաթողիկոս չէր եղել ու չկար ոչ Գանձասարում, ոչ այլուր: Ինչ վերաբերում է էջմիածնի եղիազար կաթողիկոսին, որին ուղղված էր կուրֆյուրստի մյուս գրութեանը, կուրֆյուրստի նամակը գրվելու պահին նրա մահից անցած էր արդեն յոթ տարի, հայրենիքից կտրված՝ Օրին անտեղյակ էր մնացել այդ փաստին և չէր լսել տակավին նրա հաջորդի՝ Նահապետ կաթողիկոսի աճուճը:

Ոչ միայն պատմական, այլև կենդանի մարդ էր վրաց «մեծ իշխան» Գիորգին՝ Գուրգին խանը, որին հասցեագրված էր կուրֆյուրստի երրորդ նամակը: Սակայն արդեն 1696 թվականին, վրաց ապստամբութեանը ճնշվելուց հետո, նա հնազանդել էր իրանշահին, ընդունել մահմեդականութուն և մեկնել Սպահան<sup>1</sup>, ուր մայրաքաղաքի զորահրամանատարի պաշտոն էր վարում, հավատարիմ ծառայութեամբ կտրելով ամեն մի կապ խոտվալից իր անցյալի հետ:

Ակներև է, որ ոչ միայն նամակագիր կուրֆյուրստի, այլև նամակատար Օրիի քաղաքական տարեցույցը ըստ ամենայնի ետ էր

<sup>1</sup> Brosset, Hist. de la Georgie II, part. I, livras., էջ 95 և հա.:

մնացել Հայաստանի և Անդրկովկասի կենդանի արդիականությունից:

Այնուամենայնիվ Օրին պիտի գոհ լիներ իրեն վիճակված բախտից: Երկար տարիներից հետո նրա համար ստեղծվել էր առիթ՝ այցելելու հայրենի երկիրը, շվեդան մեջ մտնելու այն իրականության հետ, որի պատմության նոր ուղենիշն էր դառնալու նա առաջիկայում: «Նախախնամությանը» նա նույնքան էր շնորհասլարտ, որքան և առժամանակյա իր հովանավորողը՝ Պֆալցի կուրֆյուրստը: Զուր չէր գուցե Օրին համեմատում իրեն Կոլոմբոսի հետ: Նորձ աշխարհում ոսկու և արծաթի հանքեր գտնելու համար, գրում էր Օրին կուրֆյուրստին, մեծ հայտնագործողը ապարդյուն կերպով նավ էր խնդրում ֆրանսիական թագավորից, մինչև որ, ի վերջո, աստծու ողորմությունը առաջնորդեց նրան սպանական թագավորի արքունիքը, ուր հայտնվեցին հասկացող մարդիկ, որոնք նրա հետամտած նպատակն իրագործելու համար տրամադրեցին պահանջված միջոցները<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս մեր «Israel Ory», Anhang, № 4



### 3. ԱՆԿԵՂԱԿՈՐԻ ԼԻԱԶՈՐԱԳՐԵՐԸ

Օրի վերադարձը հայրենիք: Երկրի քաղաքական ընդհանուր վիճակը այդ պահին: Եկեղեցական գործեր: Ազատագրական լեզենդի առձուգանքներ: Իրանական պատժաբազարը և Սյունիքը: Անկեղակորի խորհրդածողովը: Մեյիքների գրուբյունը պապին: Նրանց պատասխանը կուրֆյուրստին: Յարին դիմելու անհրաժեշտությունը: Վրաց գործերը: Մինաս վարդապետի ընկերակցությունը: Անկեղակորի լիագորագրերը: Գանձասարում ունեցած հանդիպման վերսխան: Օրի զեկուցումը կատարած առաքելության մասին: Նրա քրքրի գրության և քաղցմանության հանգամանքներն ու վավերականության հարցը:

*Հաղթահարելով պատերազմական դրությունն ընդհանուր բազմաբարդված դժվարությունները, Օրին անցավ Հոկտոբերի և Արաբսի միջև ընկած բոլոր տարածությունները և 1699 թվականի ապրիլի սկզբներին ուր դրեց հայրենի երկիրը: Ոսկու և արծաթի կույտեր չգտավ նա այդտեղ: Ոսկու և արծաթի քսակները վաղուց էին պարավել այդ երկրում: Ռուս զենսկան Վոլինսկու վկայությամբ՝ շահ Սուլթան Հուսեյինի ժամանակ իրանական գանձասարի եկամուտը տարեկան 15 միլիոն ուրլուց իջել էր 6 միլիոնի՝ Հոգեվարքի վերջին իր դալարումների մեջ Սեֆյանների պետությունը քամում էր ծայրամարզերի վերջին ռեսուրսները և զործադրում դրանք որպես վերջին դարման փր վախճանը հետաձգելու համար: Մեծ էր դրամի կարիքը. պետք էր հողալ պետական վարչություն և զինքի, արքունիքի, նրա հարեմի ու վարձակների, ասաղագեանների ու հասցկատակների բոլոր ծախսերը:*

*Մոլլանների ու ներքինիների դրածո նազիրներն ու խաները վերջին ծայրին էին հասցրել հարկահանություն մեքենայի ճնշումը՝ մանավանդ Հայաստանում: XVII դարի 60—70-ական թվականներին քրիստոնյաներից վերցվող ճնշուն դրամը ֆրանսիացի մի ժա-*

<sup>1</sup> В. И. Лыцков, *норжн սեղում*, էջ 166:

մանակակցի հաշվով հասնում էր 6—7 լիվրի, ապա 80-ական թվականներին այդ նորմով վճարում էին միայն այն հարկատուները, որոնց տարիքը քսանից անց չէր. հասակավորները վճարելու էին կրկնակի — 16 լիվր<sup>1</sup>: Իրանահայերի կացության վատթարացման մասին արանջում են նաև հայ աղբյուրները: Այսպես, դեռ 1684 թվականին Գրիգոր Երևանցու ձեռքով նորագավթում գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Ի թագաւորութեան պարսից շահ Սուլեյմանա, յորոյ արարս նեղի աղգս քրիստոնեականաց, խիստ ծառայութեամբ և հարկաց ծանրութեամբ, որպես երբեմն ի հնումն Իսրայէլ»<sup>2</sup>: Հաջորդ 1685 թվականի Հոռոմոսի մի արձանագրության մեջ կարդում ենք, թե այդ տարում «աղգս հայոց յոյժ էին շքաւորեալք և իշխանութիւն տաճկաց վաւրացեալք»<sup>3</sup>: 1689 թրվականին նորագավթում գրված հիշատակարանում Սուքիաս Գառնեցին նշում է, որ «նեղ ու դժուար» այս ժամանակամիջոցին «կարի պակասեալ և շքաւորեալ էր երկիրս ամենայն ընչից և արծաթոյ...»<sup>4</sup>:

Փոքր-փնջ հետո բարձրանալու էր ոչ միայն քրիստոնեյաների գլխահարկը, այլև կրկնապատկվելու էին նրանց եկամտային տուրքերը<sup>5</sup>: 1699 թվականին—Օրիի Հայաստան ժամանած տարում—ձեռնարկվեց աշխարհադիր, որի ժամանակ տասնևհինգ տարին լրացած բոլոր անձինք պիտի ներկայանային գրանցման: Թերացողներին սպառնում էր անողոք մահապատիժ: Այս ձեռնարկության նպատակը պարզվեց շուտով: Մտցվելու էին նոր տուրքեր և բարձրացվելու հենքի շափերը: Զարարիա Սարկավազը, որին անժանոթ չէին նախկին մարդահամարների խստությունները, այս մարդահամարի դաժանություններն ու գրա հետևանքներն ունեւր աչքի առաջ, երբ ավարտելով փր ժամանակագրությո՞ւնը, գրում էր. «Ի սպառել ժամանակիս և փ վերջին դարուս ի ճուսատանալ աղգիս Հայոց, և ի զօրանալ աղգին Պարսից... նեղիմք և տառապիմք աղգի աղգի կեղեքամար և պէսպէսաւ առմամբ...»<sup>6</sup>:

<sup>1</sup> Sanson, նույն տեղում, էջ 97 և հտ.:

<sup>2</sup> Հայկական ՍՍԻ Մատենադարան, ձեռագիր № 135, էջ 319ր և 320ա:

<sup>3</sup> Վիժական տարեգիր, էջ 196:

<sup>4</sup> Հայկական ՍՍԻ Մատենադարան, ձեռ. № 1512, էջ 553ր:

<sup>5</sup> Ե ո ա յ ի կ ա թ ո ղ ի կ ո ս, նույն տեղում, էջ 17 և հտ.:

<sup>6</sup> նույն տեղում, II, էջ 142 և հտ.: Հմմտ. նաև Brosset. Rapports sur un voyage archéologique, էջ 66 և հտ., այլև «Արարատ», 1888, էջ 183, Զարարիա Սարկավազի հիշատակարանը:

Պետրոս Մեծի գեսպան Վոյնսկին այս տարիներին Իրանում թագավորող Սուլթան Հուսեյին շահի մասին գրում էր. «Այստեղի գլուխը հիմա աջնպիսի մեկն է, որը ոչ միայն չի իշխում իր հպատակներին, այլև ինքն իսկ հպատակ է իր հպատակներին. կարծում եմ, որ այսպիսի մի ավանակ հաղիվ կարելի է գտնել ոչ միայն թագակիր անձանց, այլ հասարակ մահկանացուների մեջ անգամ. ուստի ինքն իսկ չի կամենում խառնվել որևէ գործի, ամեն ինչ ձգելով իր փոխանորդի, էհթմագոսվլեթի վրա, որ անասունից էլ անասուն է»<sup>1</sup>:

Նման համեմատություններով էին հասկանալի իրանի արքայից արքային նույնիսկ մուսուլման ուլեմները, որոնք հաճախ երկրի փաստական կառավարողներն էին այդ պահին: Սուլթան Հուսեյին շահի ժամանակ Խորասանում կարված գրամներն ունեին այսպիսի արձանագրություն. «Դրամ իմամ Ռիդեյի զոնապահ շան՝ Մահ-Սուլթան Հուսեյինի»...<sup>2</sup>:

Այս ինքնահանձնարարականով արքայից արքան կարծես կամեցել էր ճշակ իրեն վայելող տիպոսը:

Սեֆյան հարստության ապիկար ու ծայրահեղորեն կրոնամոլ այս դահակալի օրոք Իրանի եկամտաները պետական գանձարկղի փոխարեն անցնում էին արքունիքին սպասարկող նախարարների, ուլեմների, ներքինիների կամ զրանց հետ կապված խաների ձեռքը: Այս ամենից մեծապես տուժում էին պետական մանր ծառայողները և մանավանդ բանակը: Գյուղական հարկերի ու տուրքերի հաշվին ռոճիկ ստանալու համար պաշտոնյաներին ու զինվորականներին արվող «բարաթները» դառնում էին մեծամեծ շարարկումների աղբյուր: Պաշտոնյաներն ու զինվորականները ստացած բարաթները էժան գներով վաճառում էին զրամատեր շարաշահողներին, որոնք հետո սկսում էին դաժանարար «սաղացներ» զրանք, բարաթներում նշված գումարները գյուղացիների մեջբերից հանելով: Բարաթատերերի երեսից հաճախ գյուղացիները փախչում էին իրենց բնակավայրերից, լքում իրենց արտն ու հանդը, դուռ բացելով ոչ միայն գյուղատնտեսության, այլև երկրի անտեսական և պետական ամբողջ սխտեմի քայքայման առաջ<sup>3</sup>: Սեֆյանների

<sup>1</sup> С. М. Соловьев, *Нолын тегում*, X\III, էջ 665:

<sup>2</sup> М. Ф. Ахундов, *Избранные философские произведения*, Баку, 1953, էջ 79:

<sup>3</sup> Հայկական ՍՍՌ Մատենագրարն, ձեռ. № 9648, էջ 48 և 50:

մայրամուտին կրկնվում էր նույն երևույթը, որ նշել ենք, մոնղոլ էլիտանների վայրէջքը նկարագրելիս:

Ավելի լավ չէր խանութջոնների վիճակը: Եթե մինչ այդ խաները պաշտոնազրկվում էին քաղաքական նկատառումով, հիմա նրանց տեղահան էին անում ֆինանսական նկատառումով: Հայտնի է, որ մեռած իրանշահների հրովարտակներն ու կալվածագրերը նրանց հաջորդների օրոք զրկվում էին իրավական ուժից: Պահանջվում էր, որ նոր իշխողի կողմից կրկնավավերացվեին նախորդի շնորհումներն ու պաշտոնաբաշխումները: Գահակալողների համար եկամտի առատ աղբյուր էր այս, պաշտոնակալների ու հպատակների համար՝ ծախսերի ու կաշառատվությունների նոր առիթ: Արքունի եկամտառների կարևոր աղբյուր էին մանավանդ դրամական այն «նվերները», որ տալիս էին շահին նորատունկ խաները: Եկամտառների այդ աղբյուրը լիառատ կեղեքելու համար էր հենց, որ այս ժամանակ գլխապտույտ արագության հասավ խաների հերթափոխությունը: Խանական պաշտոնները աճուրդի էին հանվում պարզապես: Փուլթ չէ, որ այդ տեղի էր ունենում ոչ միայն արքունու գանձարանի, այլև արքունիքին տևր դարձած բարձրադիր ներքինի օգան: Ներկա դեպքում դժվար է նույնիսկ սահման քաշել սրանց լայն գրպանների և արքունի գանձարկղի միջև: Վերջինիս բանալիները հաճախ հենց գտնվում էին ներքինիների գրպաններում, ինչպես և ընդհակառակը, ներքինիների մահից հետո նրանց ձգած գանձը գտնում էր արքունիքի ժառանգություն:

Պաշտոնների միանվազ դնումով չէին գոցվում խաների և արքունիքի հաշիվները: Պաշտոնամուտի վճարումից դատ, «բարերարված» խաները, ժամանելով Սպահան, ամեն անգամ պիտի դրսևորեին իրենց երախտագիտության շարք շնորհապարտության զրնգուն հավաստիքով: Պարտադիր ու պարբերաբար կրկնվող քաղաքավարություն էր այս, որով ներածվում էր խաների վերահաստատումը ամեն տարեակզբին<sup>1</sup>:

Իրենց այս ծախսերը նշանակովի խաներն անկարող պիտի լինեին հողալ, եթե ստորագրվածների հետ չվարվեին այնպես, ինչպես իրենց հետ վարվում էին արքունի մեծավորները: Լսելով

<sup>1</sup> Kaempfer, նույն տեղում, էջ 25 և հտ., Krusinski, նույն տեղում, էջ 31 և հտ., Hanway, Jonas, Zuverlässige Beschreibung seiner Reise von London durch Russland und Persien von 1742 bis 1760, (Թարգմ. անգլերենից), Hamburg und Leipzig, 1754, I, էջ 25:

նոր խանի ժամանման մասին՝ անդախան պաշտոնյաները պիտի հոգային դերածածկելու նրա նշանակումի հետ կապված ծախսերը: Այս նշանակում է, թե փառահեղ ընդունելությամբ ու ծանրագին նվերներով նրանք պիտի աճապարեին զենել խանի բարեհաճությունը: Հայ աղբյուրները հիշում են այն նվերներն ու կաշառքները, որոնք անընդհատ տալիս էին մասնավորապես հայ կաթողիկոսներն ու մելիքները ինչպես Սպահանի արքունիքին, այնպես և անդախան խաներին, որպես պաշտոնակալության վարձագին: Նույն եզանակով արժեցնում էին իրենց իրավունքները նաև երկրի մյուս մյուլթադարներն ու պաշտոնատերերը: Ռուս գեսպան Վոյինսկու հավարած ավլարների համաձայն՝ Իրանի ժողովուրդը «ժանրարեւնված և ժանր հարկերով և մեծ տուրքեր է վճարում, որից ավելի շատ հագնում է կառավարիչների ընչաքաղցությունը, քան պետությանը, որին վերջիններս տալիս են միայն տերերը, իսկ պտուղն իրենց պահում»<sup>1</sup>: Ըստ Կրուչինսկու՝ խաների ստացած միանվագ նվերների նորմը հասնում էր 3—4 հազար թումանի կամ 60—80 հազար թալերի, գումարը որը կրկնակի չափերով հանվելու էր հպատակների մեջբից: Վերջին հաշվով սրան անգրադառնալու էր նաև դրամակուրսի պարբերական անկումը, որչափ հին խաների կարած պղծընծադրամի արժեքը նոր խաների օրոք հավասարվում էր սոսկ պարունակած մեառալի արժեքին<sup>2</sup>:

Հարկ չկա ասելու, որ խանական եկամուտները չէին սահմանափակվում «արտակարգ» այս կեղեքումներով: Նրանց եկամուտների աղբյուրը հիմնականում պետական հարկերի ձև ստացած հողային ռենտան էր, որի տասանորդը հասնելու էր խանին<sup>3</sup>: XVII դարի 70-ական թվականներին Շարդենը հաշվում էր Նրեանի խանության կանոնավոր այդ աղբյուրներից ստացած եկամուտը 506 հազար էքյու (հաշվելով թումանը 15 էքյու կամ 45 լիվր)։ «անկանտն» կեղեքումներից, նվերներից և արտակարգ այլ աղբյուրներից խանը ստանում էր ևս 200 հազար էքյու<sup>4</sup>: Նույն ժամանակամիջոցի համար Պետիկը ևս գրում էր, թե տարեկան նվերներից զատ, խանը պարտավոր էր տալ իրանշահին խանության եկամուտների մի երրորդը, մյուս երրորդը հատկացնելով զորքին, փակ մնացորդը, որ

<sup>1</sup> ЦГАДА, фонд Сношения России с Персией, 1715—1718, էջ 578 ա:

<sup>2</sup> Krusinski, նույն անգում, էջ 36:

<sup>3</sup> Chardin, նույն անգում, V, էջ 408 և հա., Sanson, նույն անգում, էջ 97 և հա.:

<sup>4</sup> Chardin, նույն անգում, II, էջ 97:

կազմում էր մոտավորապես 50 հազար թուման (հաշվելով թումանի կուրսը եվրոպական 60 իմպերիալ), մնում էր իր ծախսերի համար<sup>1</sup>։ Տուրնըֆորթը, որ ճանապարհորդում էր Անգրկովկասում 1700 թվականին և որը Երևանի խանի եկամուտը հաշվում էր 900—1000 լիվր, կարևոր տեղ էր տալիս մանավանդ «արտակարգ» այն եկամտամեկերին, որոնց զգալի մասը կազմում էին վարչական և ռազմական ծախսերի հաշվին կատարվող յուրացումները<sup>2</sup>։ Պիտի Լենթադերել, որ այս կարգի եկամուտները, ինչպես և մասնավոր առևտրից ստացվող շահույթները մեծ մասով մնում էին խանի գրպանում։

Թե ինչ շահերի էին հասնում այս շարաշահումները՝ այդ մասին զաղափար է տալիս Չաքարիա Ադուլեցին։ Ուղղա խանի որդի Սեֆի-ղուլի խանի անկումից հետո հաջրոնխա դրավված խանական ապրանքները, պատմում է Ադուլեցին, բարձեցին 400 ուղափ վրա։ Չարավաստակ այդ հարստությունը, «թէ ոսկի, թէ արծաթ, թէ պղինձ, թէ խալի, թէ շադր, թէ ձի, թէ ուղտ, թէ լավ, թէ վատ, թէ նաղա, թէ վէճ», զնահատվում էր 30 հազար թուման<sup>3</sup>։ Ադուլեցու այս վկայությունը համընկնում է Պեախիկի պատմածին, որի համաձայն, խանը թողեց 4 հազարից ավելի ձի, 3 հազարից ավելի ուղտ, 800 ուղտարեւո կայք (pecunia), թանկարժեք զենքեր, ոսկե և արծաթե անոթներ, մեծագին քարեղեններ և այլն<sup>4</sup>։ Եվ դեռ նկատեցեք, որ թալանչի այս խանը վաչկերում էր «արդարամիտ» մարդու, «նուրբ քաղաքագետի», «արվեստի ու դիտության սիրահարի» համբավ և համարվում նվազ շարաշահող, քան ուրիշները։

Ինչ խոսք, որ յուրացնելով վարչական և ռազմական ծախսերի համար հատկացված գումարների նշանավոր մասը, խանական վարչությունը հարկադրում էր իրեն ևնթակա պաշտոնյաներին, դիմադրողներին ու նորարներին՝ իրենց պետքերը հոգալ բնակչությունը կողոպտելու ճանապարհով։ Անապահով վիճակը պատճառ էր լինում, որ նրանք պատուհաս դառնային բնակչության, և առավելապես դյուղացիության, զլխին, այսինքն՝ անպատիժ կերպով խլելին սրանց մալն ու ինչքը, կողոպտելին նրանց այդին ու արար։

Կրուչինսկու վկայությամբ, հայերին առանձնապես ճնշում էին դատական տուգանքները, որոնք միանպամախ անհամաչափ էին թև՝ հանցագործների վճարունակության, թև՝ նրանց մեղանշումների ծանրության հետ<sup>5</sup>։

<sup>1</sup> Bedik, նույն տեղում, էջ 257։

<sup>2</sup> Tournefort, նույն տեղում, 11, էջ 142։

<sup>3</sup> Չ ա զ ա Ր ի ա Ա դ ու լ ե յ ի, նույն տեղում, էջ 132։

<sup>4</sup> Bedik, նույն տեղում, էջ 226։

<sup>5</sup> Krusinski, նույն տեղում, էջ 44 և հա.։

Կալին նաև հարստահարության ուրիշ միջոցներ: Որպես օրինակ կարելի է բերել 1699-ական թվականների կեսերին Երևանում իշխած Ֆարդալի խանին: Սա հավաքել էր խանությունից 500 հազ աղջիկ, որպես թե Սպահանի հարեմի համար: Փաստորեն Սպահանի համար չէր թափել նա իր հուանդը: Այդ ակներև է թեկուզ հենց նրանից, որ աղջիկ քաշելիս բնավ աչքի առաջ չէր ունեցվում զոհի արտաքինը. փարթամ ու զեզանի աղջիկների շարքին որսում էին նաև վախճաններին ու անզեղներին: Խանի բուն նպատակն էր դնել ծնողներին իրենց աղջիկներին ետ գնելու հարկադրանքի տակ: Խաների համար եկամտի սովորական մի աղբյուր էր այդ. «Ղանորայքն ամենայն երկրի դաին զուան շահից... ի ծնողաց նոցա առնուին զզինն և արձակէին զաղջկուան»<sup>1</sup>: Հասկանալի է, որ հետզհետե ճանապարհով կարող էին փրկվել միայն քիչ թե շատ ունեւոր ծնողների աղջիկները: Կեղեքման այլ դեպք նույն հեղինակը պատմում է նաև Երևանի Մուրթուզա-զուլի խանի մասին: Վերջինս շահի անունից արգելքի տակ է դրնում գինեգործությունը: Նրա պաշտոնյաները կնքում են գինու կարասներն ու ամանները. անգամ լեռնային շրջաններում, ուր խոսք չէր կարող լինել գինեգործության մասին՝ «կնքեցին զպուտկունս մաճնի և թանի»: Արհավիրքը փսնելու համար գավառապետներն ու տանուտերերը ստիպված էին մուրհակներ տալ խանին, մինչև որ գյուղացիներից գրամ կժողվեին ու կհազդեցնեին նրա ախորժակը<sup>2</sup>:

Օրիի թղթերից հայտնվում է, որ իրենց կաշվի վրա այդ կեղերումները զգում էին նաև Այսոնյաց մեկիքները<sup>3</sup>: «Անհավատները» նրանց բռնավորել էին ծանր ատուրերով<sup>4</sup>: Ավելի ճիշտ կլիներ ասել, թե կեղերումները քաչքայում և ուժասպառ էին անում նրանց իրավասության տակ դաճված գյուղացիներին: Իրանական հարկահանների և համադրողների պրակտիկան սպառնում էր նորաճոր պարտավորություններով ծանրաբեռնել ոչ միայն հայ գյուղացիների շնչաքանակը, այլև նրանց ինվենտարն ու եկամուտը: Դժվար չէր նախատեսնել ավելի չափ ներգործությունը, որ ունենալու էր այդ ամենը գյուղական տնտեսությունների վրա, գժվարացնելով նրանց պարտավորությունների կատարումը իրենց անմիջական:

<sup>1</sup> Ձ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, ն ու յ ն տ եղ ու մ, 11, էջ 139:

<sup>2</sup> Ն ու յ ն տ եղ ու մ, 11, էջ 134:

<sup>3</sup> Հ մ մ ո. Յ Յ Օ Ե, ն ու յ ն տ եղ ու մ, № 6:

<sup>4</sup> Ն ու յ ն տ եղ ու մ, № 37:

մուքատերերի ու իշխողների հանդեպ: Չմտանանք նաև դարերով արմատացած պրակտիկան, քեղխուզաները բարդում էին սեռական «թովջին» բացառապես շունեոր դյուզացիների պարանոցին. «զի շար սովորութիւնս ունէին, որ զրեան իւրեանց ի վերայ ալքատաց շրջէին»,—գրում էր XVIII դարում հայ բարձրագիր մի եկեղեցական<sup>1</sup>:

Պաշտոնատեր անձանց սոճնդությունների, հարստահարումների ու շարաշահումների հանդեպ հայ ժողովրդական մասսաները հանդես չէին գալիս սոսկ հյու-հյուատակների դեքում: Անիրավությունների ու կամաչականությունների, բանությունների ու չորացումների դեմ ճարանք հաճախ լսելի էին դարձնում իրենց բողոքը:

Ժողովրդական մասսաների արասնչը անընդհատ երևան է գալիս ձեռագրերին կցվող հիշատակարաններում և երբեմն հետքեր թողնում նաև պատմագրական ծավալուն երկերի մեջ: Հեռաբրբրական է դարձյալ Զաքարիա Աղուլեցու «Օրագրությունը»: Զարարիան արձանագրում է մի շարք դեպքեր, որոնք ցույց են տալիս աղուլեցիների պաշարք իրանական պաշտոնատերերին դործիք դարձող մելիքների դեմ: Կալվածատերերի («աղաների») ու հարկահան սասիկանների («գարգաների») դեմ նրանք դաժնապես են անում երևանի խանին: Անուշադրության մատնված՝ աղուլեցիները դիմում են Սպահան՝ շահի սուաջ բողոք հայտնում ոչ միայն իրենց ազգյի կամ դարդաչի, այլև երևանի խանի դեմ: Գժրախտաբար, չողորնները հաճախ շուտ էին բերվում բողոքավորների դեմ և առիթ դառնում նորանոր կեղեքումների<sup>2</sup>:

Այս ամենից դատ, պիտի հաշվի առնել եկեղեցական վարչության պարտերն ու ծախսերը, սրանք ևս վերջին հաշվով քնկնում էին դյուզացիների վրա: Պետական վարչության օրինակով փրանսական իշխանությունները առուծախի առարկա էին դարձրել նաև եկեղեցական բարձր պաշտոնները: Այսպես, մեծամեծ կաշառքով է, որ Գանձասարի երեմիա կաթնոցիկոսը Գանձակի և Բարդաչի խաներից զնեց նրանց հայ հյուատակների նկատմամբ իր բանեցնելիք եկեղեցական գավազանի իրավունքը: Սակայն Բարդաչի և Գանձակի հայ առաջնորդները չկամեցան հյուատակվել նրան: 1674 թ. Բարդաչի Սիմեոն եպիսկոպոսը կարողացավ,— հավանաբան դարձյալ կաշառքի ուժով,— հակաթոռ կաթնոցիկոս օժվել Նրից Մանկունքում: Հակոբ Զուղայեցին, ինչպես տեսանք, հաշտեցրեց

<sup>1</sup> Ա. ր. կ ա թ ո ղ ի կ ո ս Կ ր ե տ ա յ ի, Պատմագրութիւն, էջ 26:

<sup>2</sup> Զ ա զ ա ր ի ա Ա գ ու լ ե յ ի, նույն տեղում, էջ 43, 126, 153:



հոգևոր դավազանակոխի բռնված աստույաններին: Խնդիրը չփակվեց  
 դրանով: Կողմերից յուրաքանչյուրը, կաշառելով էջմիածնի կաթո-  
 ղիկոսներին, տեղական խաներին և Սպահանի մեծամեծներին՝ ձրգ-  
 տում էր ժառանգական դարձնել իր իշխանությունը: 1699 թվակա-  
 նին էջմիածնի հրամանով Երևմտյան ասիականից կաթողիկոս է  
 օժտւում իր եղբորորդի Եսայուն<sup>1</sup>: Երևմտյան մեռնում է 1700 թվակա-  
 նին: Նրա տեղը գրավելու համար 300 թուման ծախսելով՝ 1701  
 թվականին Եսային կաթողիկոսության սաղամ է ստանում  
 շահից: 1702 թվականին մահանում է Սիմեոն կաթողիկոսը, հա-  
 խապես խախտելով իր ստորագրությունը և իրեն հաջորդ ձևնա-  
 դրելով Ներսես եղբորորդուն: Այսպիսով, Երևմտյան և Սիմեոնի  
 պայքարը փոխանցվում է նրանց ժառանգներին՝ Եսայուն և Ներ-  
 սեսին, մեծամեծ պարտքերի տակ ձգելով նրանց և վերջին հաշվով  
 ծանրանալով նրանց պարտքերը վճարող «հոգևոր հոտի» վրա<sup>2</sup>:

Նման երևույթներ գիտում ենք նաև էջմիածնի կաթողիկոսու-  
 թյան մեջ:

Տակավին Հակոբ Զուղայեցու մահից առաջ էր պայքար ըս-  
 կըսվել կաթողիկոսական աթոռի համար: Արդևն յոթնասնամյան  
 թվականների սկզբին էր Զուղայեցին իրեն հաջորդ նշել Մակուեցի  
 Իսահակ վարդապետին, Ռափրիկի առաջնորդին: Հիբավի, գեռև  
 1671 թվականից Իսահակը թղթերի տակ ստորագրում էր «յաջորդ  
 Յակոբայ կաթողիկոսի ամենայն Հայոց և աթոռակալ սրբոյ առա-  
 բելոյն Ռազէոսի»: Հակոբի մահից հետո էջմիածնի վանականները  
 կաթողիկոս են ձևնապարտում Իսահակին և օրհնության գիր ուղար-  
 կում Կ. Պոլիս<sup>3</sup>: Այնուամենայնիվ Իսահակ Մակուեցին շտիրացաւ  
 կաթողիկոսական աթոռին: Նրա թեկնածությանը դեմ էր տակավին  
 Հակոբից անմիջապես առաջ վախճանված շամբեցի Միքայել վար-  
 դապետը՝ Հակոբի տեղակալը: Եզուխո մի ժամանակակից հաղոր-  
 դում է, թե իբր Ռափրիկի արքեպիսկոպոս Իսահակը, Արդար մա-  
 կանունով, նշանավորագուցնն էր այն վարդապետներից, որոնք  
 հայաճնապես կաթողիկե հավատքն են դավանում և ոմներ շաա  
 աշակերտներ, նույն սգով ներշնչված: Վախ կար, առում է նույն

<sup>1</sup> Ջ ա մ ր ու. էջ 81, հ մ մ ա. էջ 58:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 4331, Վ ա հ ա ն Օ ձ ն ե ց ու  
 Պատմութիւն նոր քաղաքական և եկեղեցական Հայաստանի աշխարհի, էջ  
 18 ր, 21 ա, 27, այլև Ջ ա լ ա լ յ ա ն ի Ճանապարհորդութիւն ի մեծն Հա-  
 յաստան, Կ, էջ 481:

<sup>3</sup> Տաճար, 1912, էջ 369, Հանգես ամսօրյա, 1912, էջ 577 և հա.:

հեղինակը, թե նրա կաթողիկոսանալու դեպքում էջմիածնի գեմ կա-  
 ըող է նորոգվել Եղիազար Այնթապցու հին պալատը: Որպես թե ին-  
 քը՝ Խոսհակը ևս գիտակցում էր այդ: Ուստի և որոշեց տեղի  
 տալ Եղիազարին, որը և մեկ տարի անց կաթողիկոս ընտրվեց<sup>1</sup>:  
 Եղուիտ հեղինակի վկայությունը հավաստում է նրա հայ դավանա-  
 կիցը՝ Ստեփանոս Դաշտեցին: Թվարկելով հայ և լատին եկեղեցա-  
 կանների վերամիավորման կուսակիցներին, 1714—15 թվական-  
 ներին, Դաշտեցին նրանց մասին շոտյում է մեծարական տողեր:  
 «Տեր Իսահակ Մակուեցի մեծ և տիեզերալոյս վարդապետ կոչեց-  
 չալն Արդար, ըստ վարուց և ըստ կենցաղավարութեան, զարդա-  
 բեալ բնական և գերբնական զիտութեամբ և պայծառացեալ ի մեջ  
 բոլոր ազգիս և մանաւանդ յոլորտս տիեզերաց, որ ի պատճառ  
 սիրոյ և միաբանութեան որ ընդ տիեզերածաւալ եկեղեցին Քրիս-  
 տոսի կրեաց զբազում վիշտս, և մանաւանդ թէ զրկեալ եղև ի կա-  
 թողիկոսական աստիճանէ՝ զոր սեփականեալ էր սմա՝ ի տէր Յա-  
 կոբայ սրբազան կաթողիկոսէն Զուլֆայեցույ: Տէր Սարգիս վար-  
 դապետ համաքատակ առաքելոյն Պօղոսի և աշակերտ նորին Սա-  
 հակայ Արդարոյ, զոր և սա ևս ոչ պակաս էարբ՝ քան զվարդապե-  
 տըն իւր: Տէր Ներսէս անարծաթ վարդապետ կոչեցեալ Բորիկ, վար-  
 դապետ էջմարտութեան՝ համարուեստ առաքելոցն և համաշաւիղ  
 սրբոց վարդապետացն մերոց նախնեաց՝ որպէս և ի վերոյ անուա-  
 նեցեալն, զոր և սա ևս կրեաց զբազում աշխատանս՝ սակս աւե-  
 ռարանական վարդապետութեան յազգէս՝ մանաւանդ թէ ի վար-  
 դապետաց և ի միաբանիցն Ամենափրկիչ վանացն Նորոյ Զու-  
 ղայոց»<sup>2</sup>:

Հայ եկեղեցական վարչություն մեջ եղած խմբավորումներն  
 ու պառակտումները քրոնիկական երևույթ էին և դժվար է հավա-  
 տալ կաթողիկ հեղինակներին, թե պալատի ենթահողը սոսկ դավա-  
 նաբանական տարածայնությունն էր: Այնուամենայնիվ բերված  
 վկայությունները կարևոր են այն տեսակետից, որ XVII դարի վեր-  
 ջերի համար արձանագրում են հայ եկեղեցու ներսում իրարամերժ  
 խմբավորումների առկայության փաստը: Թվում է, թե միայն եկե-  
 ղեցու պառակաման երկյուղից չէ, որ Զուլայեցու մահից հետո նրա  
 զխավորած խմբակցությունը տեղի տվեց Եղիազարին<sup>3</sup>: Կար նաև  
 ակներև այն փաստը, որ 1677 թվականի իր «փախուստից» հետո  
 Հակոբը վարկաբեկված էր իրանական կառավարության աչքում:

<sup>1</sup> F|lea iautl, նույն տեղում, էջ 369:

<sup>2</sup> Հուլիական ՄԽԹ Թոսնուպարան, ձեռ. № 8111, էջ 213 ա:

<sup>3</sup> Համա. այս մասին նաև Զամբու, էջ 239 և հո.:

Իրանական կառավարությունը չպիտի հանդուրժեր նաև, որ կաթո-  
ղիկոսական աթոռը գրավելը քաղաքականապես անբարեհույս այդ  
անձի կուտակիցներից մեկը:

Ժամանելով Էջմիածին, Եղիազարը պիտի հոգար նոր պաշ-  
տոնի հաստատման հետ կապված ընծայարկությունների ծախ-  
սը<sup>1</sup>, որի համար քսա ոմանց պահանջվում էր 20 հազար թալերի (չուրջ  
1000 թումանի) հասնող մի գումար<sup>2</sup>: Բացի այդ, նա պիտի մտածեր  
վանքում կուտակված մուրհակների վճարման մասին: Ժամանակա-  
կից պատմագրի ասելով, նորընտիր կաթողիկոսը հրաժարվեց վանքի  
պարտքերից<sup>3</sup>: Դժվար է, այնուամենայնիվ, հավատալ, թե միախույ-  
մանի ազդարարությունը կարող էին մարվել հիմն մուրհակները.  
գեթ Օրիի թղթերում հանդիպում ենք անդեկանք այն մասին, թե Ղա-  
փանի մեկլիքները 2000 քսակ արծաթ են վճարել Հակոբ Զու-  
ղայեցու և նույնչափ նաև Եղիազարի պարտքերի դիմաց<sup>4</sup>:

1689 թվականի մի հիշատակարանում Սուքիաս Գառնեցի քա-  
հանան գրում էր, թե Եղիազարը վարում էր Էջմիածնի գործերը  
«բուռն իշխանութեամբ» և որ իբր «ի գալն նորա զըրդումն եղև հա-  
մայն արևելեանս, որ և ահարկու եղևն ազգն մահմեդականի...»<sup>5</sup>:  
Նույն քահանան գրում է դարձյալ. «Եթէ ի տեսնն է ոչ էր հաստա-  
տեալ զսրբազան հայրապետս այս ի պահոյս, կոխան ստից լինէար  
տոհմս (յ)արեղական վասն անիրաւ և աներկիալ բռնակալութեան  
պարսից, քանզի ոչինչ և իբրև զվոշի ոտաց համարէին ազգս բրիս-  
տոնէից. միթէ ինքն տէրն ազատեսցէ ի ձեռաց ամբարտաւան ազ-  
գէս յայսմանէ»<sup>6</sup>:

Այս վկայությունների մեջ կա սրտը ճշմարտություն: Թուրքերի  
դեմ արծարծված կլրոսլական դրոհի այս տարիներին, երբ հան-  
դիստ շէր նաև Վրաստանը և մահմեդական իշխանավորները սրտ  
երկյուղ ունեին նաև վրացիներին համախոհ հայ դավառատերերից՝  
Եղիազարի դիրքը մի հայտնի չափով ամբայած պիտի լիներ իրա-  
նական պետության մեջ:

Կա ժամանակակից մի ցուցմունք այն մասին, թե Հակոբ կա-  
թողիկոսի դեմ պայքարող Եղիազարը ևս համերաշխություն էր

<sup>1</sup> Ձ ա մ չ չ ա ն, Պ ա ս մ ու թ իւ ռ, 111, էջ 719 և հ.ս.:

<sup>2</sup> Tournieort, նույն տեղում, էջ 134:

<sup>3</sup> Ձ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա զ, նույն տեղում, 11, էջ 167:

<sup>4</sup> Յ Յ Օ Բ, նույն տեղում, № 2:

<sup>5</sup> Հ ա յ կ ա կ ա ն Մ Ս Թ Մ ա տ Ե ն ա զ ա ր ա ն, ձեռագիր № 1513, էջ 559 ր:

<sup>6</sup> Ն ու յ ն տ Ե ղ ու մ, էջ 557 ր:

որոնում Հռոմի հետ: Նկատի ունենք Բաստիլի բերդում արդեւա-  
փակված Ավետիք պատրիարքի գրած ինքնակենսագրութիւնը:  
Ըստ այդմ, Նդիազարը իբր թէ գեւ Երուսաղեմից էր հատուի պատ-  
վիրակութիւնն հղել պապի մօտ, իսկ 1682 թվականին Զմյուռնիա-  
յում յոթ եպիսկոպոսների հետ անձամբ իսկ պատրաստովում էր  
մեկնել Հռոմ, երբ ժամանեցին եկեղեցական հրավիրակները՝ նրան  
էջմիածին տանելու համար<sup>1</sup>: Սակայն Բաստիլյան ցերեքների  
հակողութեան տակ խոշտանգվող պատրիարքից կորզված այդ  
ցուցմունքը վխտում է այդ ծակող ստերով: Անարժանահատիտ  
մանրամասնութիւններ է պարունակում առհարկի կաթոլիկացած  
հայ պատրիարքի ծնապատում գրութիւնը մանաւանդ Երևողարի  
մասին: Այսպէս, ծիծաղելի է, երբ կարգում եւ այն մասին, թի  
իբր իրեն, Ավետիքին, ձեռնադրելիս Նդիազարը պատվիրած է եղել  
«պատարագի բաժակի մէջ քիչ մը ջուր խառնել ի ծածուկ» և եղու-  
իտ ոստիկաններին ընդառաջող նման այլ հեթաբանք: Պատահա-  
կան չէ, որ եզուիս Վիլլոտը լեզուն փոխած հայ այս հոգևորականին  
ևս դասում էր «ուղղափառ» հայ եկեղեցապետների շարքում<sup>2</sup>:

Օրիի թղթերում պահվել է մեկիքների ստորագրութիւնը կրօյ  
մի վկայութիւնն, որի համաձայն իրանական և տաճկական պարտ-  
քերի երեսից իբր թէ Նդիազար կաթոլիկոսի ժամանակ ևս տեղի է  
ունեցել նոր մի խորհրդածողով, ուր որոշում էր ընդունվել դարձ-  
յալ օգնութիւնն հայցել Հռոմից: Որպէս թէ ինքը Նդիազարն իսկ  
հասած է եղել էրրում, բայց հանդիպելով թուրքերի հարուցած  
խոշրնդոտներին՝ ստիպված եւ է դարձել ճանապարհից<sup>3</sup>: Կողմնա-  
կի ավյալները չեն հավաստում այս վկայութիւնը: Ծիշտ է, որ մի  
պահ Նդիազարը ևս սիրաշահում էր Երևանում բուն գրած ֆրան-  
սիական եզուիտներին, իրավունք տալով նրանց անգամ կրօնական  
արարողութիւններ կատարել հայ եկեղեցիներում: Եթէ համա-  
տանք եզուիտներին, նա որպէս թէ նույնիսկ մեծարանքի առարկա  
էր դարձրել իրենցից ստացած և էջմիածնի տաճարի դոնաճակա-  
տին զեռեղած Լուդովիկոս XIV-ի պատկերը: Այնուամենայնիվ,  
անգամ եզուիտները Նդիազարի Հռոմ ուղևորվելու մասին չդիտեն  
ոչինչ: Ավելին, նրանց տակով՝ Նդիազարը խուսափեց «վերջին»

<sup>1</sup> «Արարատ», 1874, կր. 74 և հա. Մ ի ն ա ա շ ա մ ղ կ ց ու օրադրու-  
թիւնից ստույգ գիտենք, որ Նդիազարը Զմյուռնիաում գտնվել է ոչ թէ  
1682, այլ 1681 թվականի հունիս—սեպտեմբեր ամիսներին:

<sup>2</sup> Villote, Dictionarium rovim latino-armenorum, Romae, էջ 756:

<sup>3</sup> ЭЗОВ, նույն տեղում. № 2:

բայլից՝ Հոռոմին միանալու գործաշուկայունից<sup>1</sup>: Հա՛վաստերով, որ մի ժամանակ Եղիազարը մտադրություն էր ունեցել Հոռոմ մեկնելու, շատին եպիսկոպոս Ֆրանսուա Պիկերը 1683 թվականին ստիպված էր հազորդել, թե այդ մտադրությունը նա թողել է հիմա, իսկ նույն տարում Ինտիկենաիոս XI պապը Սուլեյման շահին սուղաճ իր թրդ-թում գանգատվում է նույնիսկ, թե Եղիազարը հալածում է Հոռոմին միանալու օգտին արամադրված հայերին<sup>2</sup>:

Սկզբնապես միսիոներներին սիրաշահելու վարբույժ էր բըս-նել նաև Եղիազարի հաջորդը՝ Նահապետ Եղեսացին (1691—1705): Բայց, ի վերջո, նա ևս հրաժարվեց հպատակության թողլով ուղարկել Հոռոմ<sup>3</sup>: Երերուն նրա վարբույժը չգոհացրեց ոչ հայադավաններին և ոչ կաթոլիկներին:

Նահապետի դեմ ելած դժգոհությունները, ըստ երևույթին, ծայր էին ասնում նախ և առաջ այն փաստից, որ նա բազմել էր կաթոլիկոսական դահը ոչ թե «ազգի ընտրութեամբ», այլ իր նախորդի թողած կտակի գորությամբ:

Ժամանակի եկեղեցական բարքերի ու ըմբռնումների համար շատ բնորոշ է այն նամակը, որ գրում էր Նահապետը պոլսեցի խոջաններին, որոնք նրա փոխարեն կամենում էին էջմիածնի աթոռին բազմած աեսնել Մինաս Համդեցուն. «Ա՛յ տիրելիք, գուր զՆահապետին զլան և զվատն ինչէ՞ն իմացաք: Ես թէ իմ աղայիս (իմա՛ Եղիազարի — Ա. Հ.) հետն ևմ եղեր, հանապազ նորա հետն ևմ եկեր ու գնացեր, գուր է՞ր իմ կաթոլիկոսութիւնն շուղէք. քանց ո՞վ պակաս ևմ: Այս քսան երեսոմն տարի է, որ Եղիազարին զուլուղ եմ արեր այս աուրս համար... Այս էր փոխն, որ գող ու բող Մարկոսի պիսակոս աշակերտն (իմա՛ Մինաս Համդեցուն — Ա. Հ.) քանց Եղիազարին աւելի ուղէք. այս է որ մին փոքր դժուար է գալիս ինձ, թէ չէ՛ ձեր սօրվաթէն ևս քան զԵղիազարն այլ մեծ ևմ, քան զՅակոբն այլ: Ես բերդն առեր ևմ ու նստեր, ով խօսք ունի՞ գայ խօսի... Օամանցիք Գ(3) և Գ(4) թագաւոր դրին, ո՞ր քաղաքի, ո՞ր աշխարհի հարցան... Այլ և զարմանք է, որ ձեր ընտրած կաթոլիկոսքն ոչ գիտէք, թէ հայո՛ւ աղայ ևն, թէ թուրքի, ոչ զնոցա տունն գիտէք, ոչ զսօջըն... Մեք Սրապիտն կաթոլիկոսի թոռն ևմք, մեր ազգն հանապազ կաթոլիկոս, վարդապետ ու եպիսկոպոս ու քա-

<sup>1</sup> Lettres édiffiantes, III, էջ 433 և 437:

<sup>2</sup> A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 453 և հտ.:

<sup>3</sup> Lettres édiffiantes, III, էջ 438 և հտ.:

հանայ է եղեր... Ես կորիւն առիւծս եմ, Եղիազարին տեղն եմ. տեսնունք Մարկոսի պիտակո՞տն և ուժով, թէ՛ Եղիազարի տալանն: Ա՛յ խօճայք, դուք պիմ լաւն ու վատն ինչէ՞ն իմացաք, որ կու գրէք՝ թէ Նահապետ կաթողիկոսն շենք ուզեր, հպայ այդ շալ Մինասն կուղէք. լաւ է, ուղարկեցէք պայ, ձեր հաթերն համար մին կաթողիկոս շինեմ որ աշխարհ ամենայն հագ անէ»<sup>1</sup>:

Հոգևոր իր «աղայի» կտակի ուժով լուսավորչի ժառանգութեանը տիրացած մեծամուլ այս կաթողիկոսին Պոլսի խոջաներից միւլազ հակառակ շէին նաև Նոր-Ջուղայի խոջաները:

Նոր-Ջուղայի առաջնորդները սկզբից ևեթ անհամաձայն էին Նահապետի կաթողիկոսութեանը: Սպահանի կարմելիտներից մեկը 1694 թվականին հաղորդում էր, թե Նոր-Ջուղայի առաջնորդ Ստեփանոս վարդապետը արգելում է նրա անվան հիշատակումը<sup>2</sup>: Նոր-Ջուղայում գրած փր հիշատակարանում Հարություն քահանան հաղորդում է. «ՌՇԽԻ (1693) ի յուլիսի ԺԵ (15) Նահապետ կաթողիկոսն Մեսրոպ եպիսկոպոսովն սուրբ մեռոն [է] ողորկում Ջուղայ: Նւիրակն գալիս է Երևան (Նոր-Ջուղայի թաղերից մեկի անունն է այս — Ա. Հ.) նստում: Ջուղայու առաջնորդ Ստեփանոս վարդապետը մարդ է ուղորկում, դուրս է անում, որ նվիրակն դնում է քաղաքումն (իմա՝ Սպահանումն — Ա. Հ.) և նստում»<sup>3</sup>:

Նահապետի շուրջը բորբոքված այս սլաշքարը բացահայտում է եկեղեցականների պառակաման պատճառներից մեկը՝ եկեղեցու վարչությունը ֆեոդալական տիրույթ դարձրած «հոգևոր տերերի» և եկեղեցու ղեկը «ազդրնաիր» (իմա՝ խոջանների կողմից ընտրված) կաթողիկոսներին վերապահող դավաթափորների ներհակությունը:

Սակայն առաջացած դժգոհությունները ոճանին նաև այլ պատճառներ:

Ըստ սովորության, ամեն նոր տարի կաթողիկոսը ծանրագին նվերներ պիտի հղեր շահին: Օրիի թղթերում հանդիպող տեղեկանքի համաձայն, տարեկան այդ տուրքը մեր հաշվով հասնում էր քսան հազար ուրլում<sup>4</sup>: Բացի այդ, կաթողիկոսն ամեն տարի պիտի մատակարարեր արքունի պետքերի համար նաև սահմանված քանակով մում<sup>5</sup>: Նահապետը ձեռնարկել էր մի շարք կառուցումների,

<sup>1</sup> Նորայր Պոպարյան, *Նուշն տեղում*, 11, էջ 168 և հտ.:

<sup>2</sup> A C ronicle of the Carmelites in Persia, I, էջ 45-4:

<sup>3</sup> Հայկական ՄՄՌ Մատենագարան, ձեռագիր № 7930, էջ 818:

<sup>4</sup> Յ 3 0 8, *Նուշն տեղում*, № 97:

<sup>5</sup> Tournelort, *Նուշն տեղում*, 11, էջ 134:

օրոնց համար կարիք եղավ «անհամար դրամածախութեան»<sup>1</sup>: Միշտ չէ, որ հաշտուլում էր զլուսի բերել նման գործերը նվիրատու-նների միջոցներով և կաթողիկոսը հարկադրված էր մորհակներ ստա-րադրել կամ պարտքեր վճարելու համար վաճառքի հանել և կեղե-ցական սպասները<sup>2</sup>: Շատ մեծ չէր զուցի շափազանցումը, երբ տե-ղեկանում ենք, թե նրա օրոք վանքը 150 հազար լավերի (այսինքն՝ 9—10 հազար իտմանի) պարտքի տակ էր ընկել<sup>3</sup>: Տեսանք, որ իրենց պարտքերը ծածկելու համար կաթողիկոսները դիմում էին նվիրակութեան: Սակայն Այնթապու գործակիցը շատ լավ էր հաս-կանում, թե որքան վտանգավոր է նվիրակութեան ինստիտուտի շարարկումը: Ուստի շահարկեց եկամտի մի ալլ աղբյուր՝ սիմոնա-կանությունը, հին մի միջոց, որ լիովին համերաշխում էր պե-տական վարչութեան մեջ արմատացած պաշտոնավաճառումների նոր սիստեմին: Եպիսկոպոսները, ըստ կանոնի, պիտի ընտրվեին համայնքների կողմից<sup>4</sup>, սակայն ընտրվածները պիտի հաստատ-ման կոնդակ դնեին կաթողիկոսից, ճիշտ այնպես, ինչպես նարն-տիք կաթողիկոսները հաստատման սաղամ էին գնում շահից կամ նվիրատվություններով քաղցրացնում երևանի խաների քիմքը<sup>5</sup>: Օրիի թղթերում իսկ կարդում ենք այն մասին, թե հայ եպիսկոպոս-ները գավազան են խլում իրարից փողի գորութեամբ<sup>6</sup>:

Հաճախ վիճակավորները, խուսափելով վերադիր ծախսերից, իշխանություն էին գրավում առանց կաթողիկոսի հաճութեան: «Լեմենայն առաջնորդք ըստ կամաց իւրեանց առնէին, — դանդառ-վում է պատմագիրը, — և կաթողիկոսացն ոչինչ լինէ փոյթ զի ին-քեանք զոր ինչ իւրեանց աշխարհին (իմա՝ Թուրքիայում—Ա. Հ.) վարեալ էին, զնոյն և սոսա (իմա՝ Իրանում—Ա. Հ.) առնէին»<sup>7</sup>: Եղիազարը և Նահապետը սաստում էին զանցատուներին փաշայա-կան մեթոդներով: Կարի դաժան պիտի եղած լինեին այդ մեթոդնե-րը. «Եթէ որ ոք պակասութիւն ինչ գործէր, — հաղորդում է նույն

<sup>1</sup> Ջամբու, էջ 26:

<sup>2</sup> Յ 3 0 8, նույն տեղում, № 2 և 11:

<sup>3</sup> Եւլյն տեղում, № 11:

<sup>4</sup> Հմմտ Առ. Գ ա վ ը թ ե ց ի, նույն տեղում, էջ 331 և հտ.:

<sup>5</sup> Chardin, նույն տեղում, II, էջ 164, 183, 243, Lettres édifiantes, III, էջ 37, «Արարատ», 1888, էջ 484 և հտ., Տ եր - չ ո վ ն ա ն յ ա ն, նույն տեղում, II, էջ 121:

<sup>6</sup> Յ 3 0 8, նույն տեղում, № 2:

<sup>7</sup> Ջ ա ր ա ր ի ա Ս ա ը կ ա վ ա դ, նույն տեղում, II, էջ 107:

աղբյուրը Նահապետի մասին, — սա կալեալ հրապարակաւ կախէր և գանալից ասնէր, և տուգանէր մարմնաւոր իշխանութեամբ. հարէր զմօրունս և գանգուրն, արկանէր ի բանտ և շղթայէր, և այսպէս ահարկութեամբ կայր ի վերայ ամենայն եկեղեցականաց և քահանայից»<sup>1</sup>: Կալաւեղյակ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը բնութագրում է հեռավոր իր այդ նախորդին, որպէս «այր ճոռոմախոս և փառապերճ, իշխան և ահարկու, յորմէ կասկածէին ամենեքեան»<sup>2</sup>:

Նահապետ կաթողիկոսի դեմ լեռնացած գփոհությունները կարողացան օգտագործել ճարպիկ եղուիտները: «Եւ վասն այս գործոց, — գրում է Զարբարիա Սարկալագը, — վիրաւորեցան ոմանք ի սե գլխոց մերում յաշխարհի, և զրովք միաբանեցան ընդ եպիսկոպոսացն Նախշուանայ և Գողթանայ»: Կաթողիկոսի հակառակորդները Մատթեոս Կարբեցի կոչված «բատրաղէն» (իմա՝ «պատրիսերի գենն տնեցող», կաթողիկազավան — Ս. Հ.) մի վարդապետի ձեռով համախոսական թուղթ են ուղարկում Զուղայի առաջնորդ Ստեփանոսին և նրան էջմիածին հրավիրում կաթողիկոսութեան համար: Կաթողիկ աղբյուրները փոքր-ինչ այլ կերպ են ներկայացնում դեպքերը: Ըստ այսմ՝ մի շարք վարդապետներ, ժողովրդի մեծ մասի հավանութեամբ, գանգատ են հղում շահին Նահապետի դեմ. գանգատը Սարհան հասցրին Ազարիա Աղուեցին և մի վանական (Թերեա վերը նշված «բատրաղէնը»): Թեպետև Ազարիան անձամբ կկամենար կաթողիկոսական աթոռին բազմած տեսնել Խահակ Արզար կոչված վարդապետին, որը լավ էր տրամադրված դեպի Ֆրանկները, այնուամենայնիվ գործ զնելով իր կապերն ու վարպետութեանը, նա 5000 թումանով հրաման ստացավ Ստեփանոսի օգտին: Էջմիածին ժամանելով վերջինս կաթողիկոս ձեռնադրվեց (1696 թվականի նոյեմբերին)<sup>3</sup> նույն այն Մինաս Համդեցու ձեռքով, որի դեմ Նահապետը հղել էր պոլսեցի խոջաներին մեր հիշատակած հեղինակից իր նամակը:

Լուսավորչի աթոռի վրա Ստեփանոսը հազիվ միայն երկու ամիս բազմեց: Իր արդեւարանից նրա ախոյանը կարողացավ խուսափել Թավրիզ, ուր հնարեց մեծամեծների «մահաար ու արդա» և Նոր-Զուղայի քալանթար Ավետիսի միջոցով (վերջինս մուսուլմանացած հայ մի խոջա էր, որ երկու իր աղջիկներին շահի հարեմին հանձնած

<sup>1</sup> Զ ա ռ ար ի ա Ս ա ռ կ ա ղ ա գ, ն ու յ ն տ ե գ ու մ, 11, էջ 136:

<sup>2</sup> Զ ա մ ր ու, ն ու յ ն տ ե գ ու մ, էջ 26:

<sup>3</sup> Զ ա ռ ար ի ա Ս ա ռ կ ա ղ ա գ, ն ու յ ն տ ե գ ու մ, 11, էջ 136:

<sup>4</sup> A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 480 և հտ.:



լինելու համար սե՛ծ ազդեցութեան էր ձեռք բերել Սպահանի արքունիքում) կրկնակի զին վճարելով եւ զնեց Լուսավորչի գահին նըստելու իրավունքը<sup>1</sup>: Ստեփանոսը ստիպված եղավ ոչ միայն վար իջնել գրաված ամրոցից, այլև 1000 թուման տուգանք վճարել: Գահընկեց կաթողիկոսը և իր զինակիցները կալանքի ենթարկվեցին վանքի շրոնատանը: «Են էին համախոհ՝ նորա,— գրում է Ջաբարիան,— Պետրոս վարդապետ Վալոյ-Ջարոյ», որ է ամուսակալ սուրբ Էջմիածնի, Գրիգոր վարդապետ և Մողնոյ վանից, Յովհաննէս վարդապետ և Եղիշտանոց-ձորոյ, որք բնդ նմա եղան ի բանտի ընդարձակ, և ետուն տուգանս նորս՝ և արձակեցան: Իսկ Ստեփանոսն հանին ի թեթև բանտէն, և եղին ի մթին և զարշահոս զնդան, և սահն ի ծնկացն եղին ի կոճեզս՝ որ է սօմբուղ, և ի ներքս թիկանց բար սղորկ, և ի զազրութենէ հոսոյն՝ և յաճմամէ հերացն՝ և ի բազմանալոյ որդանցն վշտացեալ մեռաւ անդէն, և ըստ կտակաց նորին տարեալ ի Խոր-Վերապ՝ և թաղեցին անդ ի թուին ՌՃԽն (—1698) և ի յունվար Դ (4)»<sup>2</sup>:

Վանում գրված մի Ժամանակագրութեան մեջ ասված է. «Գարձեայ ի թվին ՌՃԽն (1696) անկաւ Նահապետն ի կաթողիկոսութենէ ուօրհնեցաւ Ստեփանոսն կաթողիկոս Էջմիածնայ և շատ ակերութիւն եղև սուրբ տանն, և յորժամ մտար ՌՃԽԶ (1697) թին, դարձեալ Նահապետն էստ զտեղին և զՍտեփանոսն եզ ի բանտի և տարի մի ի բանտն մնաց, և ՌՃԽԷ (1698) թվին բազում շարշարանօք սպանին թաղուն ի մէջ բանտին, որ և բազում հրաշս եցոյց այլազգեաց և մերազնեալց»<sup>3</sup>:

Ջաբարիայի վկայութեանը զտրկ չէ միտումնավորութեանից: Այն ներկայացնում է Ստեփանոսին միախոնեքներին գործիք դարձած մարդու դերում: Հետագայում եւ. ասում էին, թե Ստեփանոսի գործն անհաջողութեան մատնվեց Նոր-Ջուղայում՝ «ի պատճառս լինելոյ նորա հակամեա կողմն պապականութեան»<sup>4</sup>: Փաստորեն Ստեփանոսն ավելի հետու էր միախոնեքներին, քան նրա հակառակորդը: Պոլսի եփրեմ պատրիարքին ուղղած թղթում նա մեղադրում

<sup>1</sup> Ջաբարիա Սարկավագ, նույն տեղում, II, էջ 137, Տեր-Հովհաննյան, նույն տեղում, II, էջ 31 և հա., 114 և հա., Սրբանձաջան, Թորոս Աբրար, II, էջ 408 և հա., Lettres édifiantes, II, էջ 44 և հա., ՉՅՕԵ, նույն տեղում, № 2 և Թեոդիկ, Ամենուն տարեցույց, 1926, էջ 616:

<sup>2</sup> Ջաբարիա Սարկավագ, II, էջ 137 և հա.:

<sup>3</sup> Հայկական ՍՍԽ Մատենագարան, ձեռ. № 4618, էջ 99ա:

<sup>4</sup> Տեր-Հովհաննյան, նույն տեղում, II, էջ 33, ծան. 6:

էր Նահապետին հենց ազգը ֆուսնկության փոխելու դիտավորութեան մեջ<sup>1</sup>:

Հայտնի է, որ աակավին 1688—1689 թվականներին Իրանի կառավարութեան օժանդակութեամբ Ստեփանոսին հաջողվել էր որոշ շարժումներ կատարել Սպահանի եզրերի գործունեությունը և եզրիս հեղինակները միշտ էլ անհաշտ լեզու են բանեցնում նրա մասին<sup>2</sup>: Իրանում գործող միսիոներները սրտաղի վկայում են, որ էջմիածնում ծայր առած աթոռակալի ընթացքում իրենք աջակցություն էին ցույց տալիս ոչ թե Ստեփանոսին, այլ Նահապետին<sup>3</sup>:

1698 թվականին Աղեքսանդր վարդապետ Զուղայեցու համար Նոր-Ջուղայում գրված մի գավազանագրքում նույն այս Ստեփանոսի մասին կարդում ենք. «եղև կաթողիկոս ամուլն հաւատոյ և սիւնն եկեղեցւոյ՝ աէր Ստեփաննոս Զուղայեցի համաընթաց սուրբ հարցն, վարուց քաջ և վրէժ խնդրող օրինացն Աստուծոյ և հաստատիչ կարգաց եկեղեցւոյ և հեռեղ հաւատոյ ուղղափառութեան, այր պարկեշտ և բազում վշտաց համբերող, որ կայ յաւուրս մեր և վարէ զիշխանութիւն կաթողիկոսութեան»<sup>4</sup>: Աղեքսանդր Զուղայեցին, հայագավան եկեղեցու մուկուանդ ախոյան, քր հետագայում հաջորդեց Նահապետին, հայ եկեղեցու ուղղափառութեան համար մարտնչող մարդ էր ճանաչում Ստեփանոսին: Նկատելի է, որ ինչպես նշված գավազանագրքում, նույնպես և Նոր-Ջուղայի մի շարք այլ հիշատակարաններում չենք հանդիպում Նահապետի հայրապետութեան եղումը: Արան համերաշխում է նաև, երբ 1699 թվականին Նոր-Ջուղայում Մովսես երեցի գրած ճառերնորի հիշատակարանում կարդում ենք՝ «ի հայրապետութեան վրդովման ժամանակի էր Նահապետ, բայց ոչ իսկապես, այլ բռնութեամբ և շահանութեամբ ժողովոյ Հայաստանոյ»<sup>5</sup>: Նույնիսկ 1703 թվականին մի ժամագրքի հիշատակարանում ոմն տեր Սարգիս նշում է՝ «ի վեհապետութեան հանուրց սևուից տէրն Ստեփաննոսի հանդուցելոյ առ Քրիստոս Աստուած: Որ բազում շարշարանօք և նեղութեամբ ի տան բռնութիւնս ճանաչեալ է»<sup>6</sup>:

<sup>1</sup> Չ ա մ շ յ ա ն, III, էջ 725:

<sup>2</sup> Հ մ մ ա. Տ ե բ - Հ ո վ ն ա ն յ ա ն, նույն տեղում, II, էջ 30 և հա., 264 և հա.:

<sup>3</sup> Տե՛ս A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 480 և հա.:

<sup>4</sup> Հայկական ՍՍԲ Մատենադարան, ձեռ. № 1721, էջ 137բ:

<sup>5</sup> Ս. Տ ե բ - Ա վ ե տ ի ս յ ա ն, Յուլյան հայերեն ձեռագրաց Նոր-Ջուղայի, էջ 667:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 1020, նույն տարում նույնպես վարվում է մի այլ հիշատակարանում Աղաբիս գրիչը նույն տեղում, էջ 1161բ:

Կաթողիկ աղբյուրների վկայությամբ՝ Նահապետի վերահաստատմանը նպաստել էին Քավրիզի կապուչինները, և որպես թե այդ կաթողիկոսը լավագույն գիտավորություններ էր ունեցել Հոսմի նկատմամբ և միայն շահի ու «հերձվածությունների» (իմա՝ հայադավանների) երկյուղից է զգուշացել պապին հպատակվելու քայլից<sup>1</sup>: Մտցնելով նրան Հոսմի տեւանկյունից «ուղղափառ» կաթողիկոսների շարքը, եզուխա վիլլոտը հարում էր նրա մասին. «Ձանա զմիաբանութիւնն ընդ ամոսոյն Հոսմայ, բայց յահէ հերձասիրաց հրաժարեիսլ թուլանայ. թշնամութեամբ կայ ընդ Ստեփաննոսի Զուղայու եպիսկոպոսին, յորմէ վրդովի յախոսայն»<sup>2</sup>: Կաթողիկ ցուցմունքների օգտին վկայում է սոսկ այն, որ Նահապետը երկիցս «սիրոյ թուղթ» էր ուղարկել պապին, 1695 և 1697 թվականներին,—ասել է՝ գահազրկությունից առաջ և հետո,— և պատասխան ստացել պապից 1699 և 1701 թվականներին<sup>3</sup>:

1698 թվականի մայիսի 3-ին թվագրված իր թղթում պապը որակավյուն էր հայանում, որ Նահապետը հաղթահարել է իր գեմ հուզված հոգմերը, հիշեցնելով ընդամին, թե Տերն է, որ հրամայում է հուզմերին<sup>4</sup>: Խաչատուր Արքրուսեցու ձեռքով պապը մեծադին ընծաներ ուղարկեց Նահապետին<sup>5</sup>: Հայադավան աղբյուրները նշում և թվարկում են այդ նվերները: «Ձարմանալի ամոռ մի և պատվական դաւազան մի, և լավ խայիշա մի, որք էին անտեսանելի յաչաց մարդկան և արժէին վեց քիսա փող ավելի և ոչ պակաս»<sup>6</sup>:

Ակններև է, որ Նահապետը մեկն էր այն կաթողիկոսներից, որոնք հարկադրված էին օգտագործել Հոսմի և միսիոներքների ազդեցությունը իրենց գիրքն ամբացնելու համար: Այնուամենայնիվ այսբանը դեռ չէր գահացնում ունիտորներին: Ուշադրավ է, որ Նահապետի հակառակորդները Գողթանի և Նախիջևանի կողմներից էին, այսինքն՝ Հայաստանի այն շրջաններից, որոնք առևարական կամ կրոնական կապեր ունեին կաթողիկ Արևմուտքի հետ: Ժողովարարությունից հոգնած՝ նրանից երես էին ծուռում նաև Ղափանի, մասնավորապես Տաթևի վիճակի հատերը: Պատահական չէ, որ 1702

<sup>1</sup> Lettres édifiantes, III, էջ 61:

<sup>2</sup> Villote, Dictionarium, էջ 756:

<sup>3</sup> St' u A Chronicle of the Carmelites in Persia, էջ 482 և հտ.:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> St' u Չ ա մ չ յ ա ն, III, էջ 724 և հտ. և 727, Թ ո ռ ո ս յ ա ն Հ., Ղարք Մխիթար Աբրաջի, Վենետիկ, 1901, էջ 142:

<sup>6</sup> Գիվան հայոց պատմության, X, էջ 119:

Թվականին իր մի կոնդակում սրանցից նպատակն ինդրելով Նախավկայի վանքի շինության օգտին՝ Նահապետն ազերսում էր շարճամարճել իր դիմումը, ինչպէս արել էին մինչ այդ<sup>1</sup>:

1708 թվականին Աղերսանդր Զուղայեցի կաթողիկոսը, արտահայտելով իր համարազարացիների կարծիքը, նրա կաթողիկոսանայր շարունակում էր համարել «Խարց ազդիս դիտութեան և առաջնորդաց եկեղեցեաց հաւանութեան» և մանավանդ՝ արքայանիստ Սպահանի և Պոլսի հայութեան կամքին հակառակ: «Երեքտասան ամ կացեալ նա յաթոնն՝ բայց խազմ և խոտվութիւն ոչ պակասեցաւ ի ժամանակս սորա, — հարում է Աղերսանդր Զուղայեցին, — այլ յոր աւուր յաւերաւ, և բազում եղև Աթոսոյս և Ազդիս վնաս, զոր վնասուն այնորիկ արգասիքն ահա մեր կրեմք՝ անձամբ հարկատութեամբ»<sup>2</sup>:

Հայագավան եկեղեցականների ներքին երկպառակութեանները այս կամ այն չափով օգտագործում էին կաթողիկոսները, աջակցում պայքարող կողմերից մերթ մեկին, մերթ մյուսին՝ հուսալով հաղթողի միջոցով զուլս բերել եկեղեցիների վերամիավորումը: Սակայն այս կամ այն չափով օգտվելով միսիոներների աջակցութեանից, հողիտն ի վերջո հուսախաբուրեցան էր մատնում «հավաստիւտ» միսիոներներին: Երբեմն միսիոներների հավանած կաթողիկոսական թեկնածուն տիրանում էր Լուսավորչի աթոռին և այս առիթով ընդունում «առարեւական մայրաքաղաքի» սիրալիր նվերները, բայց և դժվարանում խոստովանել Պետրոսի բանալին ժառանգողի անսխալականութեանը: Այսպէս նաև 1699 թվականի մարտի 9-ին Նոր-Զուղալի դոմինիկյան մի ֆրեր վարմանք էր հայտնում, որ շահի հետ քաղաքական բանակցութեաններ վարելու համար Սպահան ժամանած Անկյուրայի արքեպիսկոպոսը — Պետրոս Պաուլուս Պալման — առարելութուն ունի պաշտպանելու Նահապետ կաթողիկոսին: Պարզվում է, որ այդ պահին կաթողիկ միսիոներներն արդեն հիասթափված էին վերջինիս պապասիրութեան նկատմամբ<sup>3</sup>:

1701 թվականին այցելած լինելով Էջմիածին, նշանավոր բուսարան Տուրնրֆորը գրում էր. «Էջմիածնի վանականները ցույց են տալիս Հոռմից ստացած իրենց նվերները, բայց հեղնանքով ժպտում, երբ նրանց հետ խոսում ես եկեղեցիների միավորման մասին:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարանի արխիվ, Թղթապանակ № 243, գլխերագիր № 239:

<sup>2</sup> «Ազգասեր», կալիաթա, 1849, էջ 94:

<sup>3</sup> Տե՛ս A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 492:

Իրենց վարկի և արժաթի ուժով հերձվածող հայերը գահընկեց կանեին Հոսմին ձևոր մեկնող կաթողիկոսին. նրանց առեկուձյունը դեպի լատին եկեղեցին չի հանդուրժում որևէ հաշտութուն: Հերձվածող եկեղեցականները կամենում են բացարձակորեն իշխող լինել իրենց սանը և կաթողիկոսները ստիպված են հպատակվել նրանց, երկուսը կրելով, թե հակառակ դեպքում ժողովուրդը կըմբոստանա իրենց դեմ»<sup>1</sup>:

Ֆրանսիացի ուղեգրողից առաջ նույն դիտողությունը պիտի աներ նաև Ֆրանկոստանից էջմիածին ժամանած մեր ծպտյալ ճանապարհորդը՝ Իսրայել Օրին:

Նախընթաց էջերում չսնացինք բնութագրել XVII դարի վերջերին Իրանում և Իրանահայաստանում ստեղծված ընդհանուր իրադրությունը: Անհրաժեշտ է սակայն ընդգծել, որ երկրում հասունեացող հակասություններն այդ պահին քաղաքական առումով սրվում էին առանձնապես Հայաստանի այն վայրերում, որոնք արձագանքել էին 70-ական թվականների վերջերին Վրաստանում յարձրացած աղստամբական շարժմանը: Գուրգին խանի և Արշիլի աղստամբության հետ կապված կամ գրան հաջորդած պարտիզանական շարժումը ձնշելու համար այդ պահին իրանական կառավարությունը պատժիչ զորամասեր էր մտցնում Անդրկովկասի հայաբնակ այն գավառները, որոնք այս կամ այն չափով ընդառաջել էին վրաց աղստամբությանը:

Կանդ առնելով վրաց և իրանցիների կռիվների վրա՝ Շամահում գործող եղտիա մի բարոցիչ պատմում է, թե այդ քաղաքը պիտի կերակրեր թե՛ մի և թե՛ մյուս բանակը, ուստի տառապում էր երկուստեք, քանի որ կախող կողմերը սնվում էին միայն պատերազմի ավարով: Վրաստանի դեմ գործելու համար իրանական զորամասեր էին կենտրոնացվում նաև Անդրկովկասի մի այլ վայրում՝ Գանջալում: 1681 թվականին Շաքիի Գուլբստան գյուղում դրված մի հիշատակարանում կարդում ենք. «Ի ժամանակին որում նստեալ սարդարն ի քաղաքն Կանջալ և բազում բանակս ժողովեալ ընդ իւր»<sup>3</sup>:

Գանջալում նստած այս սարդարի մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս 1684 թվականին Այունյաց Գեղվաձորի Կից գյուղում

<sup>1</sup> Tournefort, նույն տեղում, III, էջ 139:

<sup>2</sup> Lettres édifiantes; IV, էջ 35 և հմ.:

<sup>3</sup> Հայկական ՍՍԹ Մտտեհնագրան, ձև. Ա՝ 1228, էջ 210ա:

ընդօրինակված Ավետարանի հիշատակարանը, որ կարդում ենք. «Աւարտ սորա ի թագաւորութիւնն Պարսից Շահ Սուլ(ե)մանի և դիտող յերկրիս մերում զՔաղաքս Սուլդանն, որում շարշարանք կտրուսուց յերկիրս, որ ևս Աստուած զերեք պատուհասն: Հաճի Ալի խան սարդար եղև, եկեալ ԽԲՌ (= 42000) հեծելով բնակեցաւ ի քաղաքն Կանջայ և բազում աւերածութիւնն արար ի Հայոց աշխարհիս»<sup>1</sup>:

Նույն 1684 թվականի մի այլ հիշատակարանից տեղեկանում ենք, որ պարսից այս սարդարը գործում էր ոչ միայն վրաց ապրատամբույթյան դեմ, այլև ջանում իր գործադրած զորաշարժումներով կանխել հայերի գինական համագործակցությունը այդ ասպտամբույթյան հետ:

Վրաստանի դեմ տարվող ռազմական գործողությունների ու գրանց հաշորգած ճնշումների հետ էր կապված նաև այն արտունջը, որ լսում ենք Դարաբաղի Մոսավ լեռան փեշերին սկիզբ առնող Թարթառ գետի ափունքների մոտ, Դադեվանքում, 1684 թվականին վարվառև կուլսի գրի առած հիշատակարանից: Այդտեղ կան այս տողերը. «Ի դառն և անբարի ժամանակիս, յորում նեղիմք լանօրէն թռնաւորաց ծանր հարկապահանջութեանց մեծապէս տաժանմամբ մինչ ի յեւս շնչոյ անդերծանելի գրաւորմամբ: Եւ այս վասն բազում մեղաց մերոց, զի աշխարհ ամենայն ի վրդովման և տատանման կան: Ընդ որս և մեք կամք ըստ ծիանաց համայնից ալեկոծութեանց, վարեալ ի մրդիէ անդի խռովութեանց, զի ոչ հայրապետք, ոչ առաջնորդք և ոչ կրօնաւորք և ոչ ռամիկ ժողովրդականք և ոչ լինին երբեք յանդորրութեան և հանդարտութեան սակս զարտուղի դնացիցն և անըմպոն ընթացիցն, զոր ունին հաստատեալ յինքեանս: Վասն որոյ տուժին դիմոսական հարկօք առաւելութեամբ և ոչ սրպէս սահմանեալ և կարգեալ ի յօրէնսգրաց և առաջնորդաց իւրեանց, այլ երկիծուցանելով սասակապէս կեղեքեն զկեանս անխնա, որպէս ըստ օրէնի շար տղրկացն անկուշտ և անհող լինելով»<sup>2</sup>:

Հայկական դավառների «վրդովման և տատանման», ինչպես և նրանց վրա ծանրացած արտակարգ «դիմոսական հարկերի» պատճառը վարվառև գրիչը համարում է հայ պատրիարքների, եկեղեցականների և «ռամիկ» ժողովրդի Իրանի դեմ հայտաբերած «գարտուղի» և «անըմպոն» ընթացքը: Բաց անելով փակագծերը՝ դժվար չէ գլխի ընկնել, որ 1684 թվականին ձևակերպված այս մեղադրանքն ուղղված է հատկապես Հակոբ Զուղայեցու, էջմիածնի խորհրդագաթողովի անդամների, ինչպես և Աղվանից երկրում նրանց

<sup>1</sup> Մ. Վ. Բ ա ռ ի ու գ ա Ր յ ա ն ց, Արցախ, էջ 147:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 2067, էջ 450 և հո.:

գործակցած եկեղեցական և աշխարհիկ հայ ղեկավարների գեմ: Այլ խոսքով՝ 1684 թ. հիշատակարանի գրիչը ամբաստանում էր Էրանի գեմ ոտքի ելած հայ գործիչներին:

Վարվառե կույսի բարձրացրած ամբաստանությունը այժմեական էր այն պատճառով, որ էջմիածնի 1677 թ. խորհրդածողովից նետո ղեկավարը գնալով ստանում էին սպառնալից կերպարանք:

Սուբիտա Գառնեցի քահանայի Նորագավթում 1689 թվականին պրած հիշատակարանում կարգում ենք. «նւ զայսու ժամանակաւ շարժեալ են զօրքն Պարսից խառնիճազանշ բազմութեամբ եկեալ նստեալ կան յերկիրն Աղուանից և կամին գնալ ի վերայ ազգին վրաց: Իսկ ազգն վրաց միաբանեալ են հրեհտային թագաւորին Մօսկովու և նոքա ևս զօրս զումարեալ նստեալ կան ի ստորոտ լեբանցն Եալպուզ (իմա՝ Էլբրուս) կոչեցեալ, որոնց են զլխաւորք որդիք իշխանին վրաց Շահնազար խան և Գօրկի խան կոչեցեալք, ապստամբեալք ի թագաւորէն Պարսից և անդէն ղետեղեալք կան. այլ զկատարածն Աստուծոյ և զիտելն թէ զինչ լինիցի»<sup>1</sup>:

Վրաց ապստամբների մոտ Շահնազար խանի (= Արշլիի) և Գօրկի խանի (= Գուրգին խանի) «եալպուզի» մոտ համախմբվելու մասին այստեղ տրված հիշատակությունը վերաբերում է 1688 թվականին<sup>2</sup>: Վրացական գավառներում այս պահին ստպատակում էին իրանական զորքերը: Դավիթ անոնով վիրահայ մի եկեղեցական 1688 թվականի հուլիսին արձանագրում էր. «Ի դառն և դաժան ժամանակի, յօրում մարտ և վրդովմունք կայր յաշխարհս վրաց և աւերումն և սպանութիւնք բազմաց. ի շարաշար մեղաց մերոց և ի բազմանալոյ անօրէնութեանց, եկին հասին ամենայն շարիք ի վերս մեր ի յազգէն պարսից»<sup>3</sup>:

Վրաց ապստամբություն կապակցությամբ շարունակվում էին նաև հայաբնակ գավառներում գործ դրվող ճնշումները:

Պատժիչ զորքերը գործում էին հայաբնակ գավառներում մի շարք տարիների ընթացքում: Այսպես, 1689 թ. մի հիշատակարանում, գրված Գանջալի մոտ, Գյուլիստան գյուղում, կարգում ենք. «Ի իշխանութեան պարսից Բարտոյ Ապազ-ղուլի խանին ի դառն և դժվար ժամանակի որ պարսիկ ազգն շարժեալ և նեղացուցանէին զԲիստոնէայս»<sup>4</sup>: Սակայն մեր տրամադրություն տակ կա նաև ավել-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 1512, էջ 557ր:

<sup>2</sup> Переписка на иностранных языках грузинских царей с российскими государями, СПб, 1861, էջ 130 և հո.:

<sup>3</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 8505, էջ 163ր:

<sup>4</sup> Նույն տեղում, ձեռ. № 9043, էջ 131ր:

լի կարեւոր մի վկայութեամբ: Մեզ <sup>1</sup> չափակ նրնշակի նորաշէն գյուղում Մովսէս երեցի 1692 թ. գրած շիշատակարանը, ուր չանգամանորեն նկարագրված են իրանական զորախմբերի ընթացիկ դործողութեանները: Բերում ենք այդ վկայութեանը.

Ք նեզ և ի դառն ժամանակիս, որ վասն ծովացեալ մեզաց մերոց մատնեալ կամք ի ձեռս ժանտարարոյ ազգին պարտից, (զի) իբրև գահեզ պազանն տեսեանն Գանիէլի մանրեն և ուտեն և դմնացորդն յոռոսն հարկանեն: Եւ եզև զի ի սոյն ժամանակի շարագոյն զօրազուտի ոմն յեալ ի թագաւորէն, իբրև թէ կամէր զվրաց առնն երթալ: Եւ ժողովեաց անթիւ զօրս ի վերայ իւր զմեծամեծս և փոքունս, որ իբրև գաւազ ծովու և գաստեզս երկնից և եկեալ մինչև հօթն անգամ խարեութեամբ շրջեցաւ յերկիրս Ազուանից, Գանձայու, Գեղարքունու, Սինեաց և Բարգուշատու և մասն ինչ ի Գողթնեաց, ոչ կայ տոնելով ի տեղի ուրեք և ոչ ամենեկն կասկած ունելով ի թագաւորէս և կամ այլոց մեծամեծաց: Եւ բազում սուտ քրիստոնեայք զսուրբ և ճշմարիտ հաւատս Քրիստոսի փոխանակեցին ընդ օրինացն Մահմեդի և միարանեցան ի պարսից. և այնքան վնաս և աւերս գործեցին: Եւ մանաւանդ սրգիք անիծելոյն Վասակայ Սինեցիք, որ բազում սուտ կարգաւորք և օրինազանց աշխարհականք, որք անուամբ միայն են քրիստոնեայք և գործով վասթար բան պայազդիս: Եւ զնացեալ յարեցան ընդ զօրս նորա և առեալ սփոռեցան ընդ ամենայն երկիրս զգաւառս, զգեօզս, զվանք, զանապատ, որք ի յերինս և որք ի դաշտս, ազգ և ազգ ստութեամբ զպատճառս յօդելով, և ոչ մնաց տեղի որ ոչ կոխեցին ռար նոցա: Եւ այնպէս աւեր գարծուցին զերկիրս ամենայն և կողոպտեցին ի ստացուածոց սո չասարակ զամենեւեան, ահարեկ և սրտակոտոր արարին: Վայ և եզուի անձանց մերոց»<sup>1</sup>:

Շիշատակարանի հեղինակը, Մովսէս երեցը, գրում է որպէս անցքերին ժամանակակից և գուցե նույնիսկ ահանատես: Իրանական պատժարշավը նա տեղադրում է Իրանի հայաբնակ գավառներում և դրանք դիտում որպէս ոտզմական տեական գործողութեաներ: Հեղինակի վկայութեանից ևս պիտի հետևենք, որ իրանական «զորագլխի» ասպատակումները սկսվել էին հենց ի պատասխան ակտիվ այն գործակցութեան, որ ցույց էին տվել հայերը վրացական

<sup>1</sup> Շիշատակարանի տեքստը վերականգնում ենք օգտվելով Ա. Լիշան, Սիտական, էջ 18 և Չարբեանայան. Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 611 և նա. բերված քաղվածքներից:



ապստամբությունը: Իր գլխական միջամտությամբ և պատժաբար  
հարկումներով իրանական պետությունը ջանում էր երև ոչ ննջել, գեր  
կանխել հայ ժողովրդական մասսաների ապստամբական շարժումը:

Ի տարբերություն իրանահայ ապստամբական շարժման նկատ-  
մամբ Վարվառե կույսի հայտ բերած բացասական դիրքավորման՝  
մեր վերականգնած Հիշատակարանում Մովսես Երեցի նամակրանքն  
ամբողջովին այդ շարժման կողմն է:

1692 թվականի նրա հիշատակարանում ուշադրով է իրանա-  
կան դորախմբերի այցելած վայրերի թվարկումը: Հիշատակված են  
բացասապես Անգրկովկասի լեռնալին զավառները՝ Զանգեզուրը,  
Ղարաբաղը, իրենց մեջ տանելով նարակից պաշտային շրջանները  
Քանջայից մինչև Գոգխան: Սրանք Իրանի հայաբնակ կամ հայա-  
շատ այն շրջաններն են, որոնք իրենց մեկիբուժյուններով պահպա-  
նել էին վաղեմի հայ բաղաբական իշխանության հետքերը և որոշ  
հիմք կարող էին ունենալ պաշտպանելու կամ ընդդաճնելու իրենց  
իրավունքները: Մյուս կողմից՝ շրջաններ էին դրանք, որոնք շփում-  
ներ ունեին Անգրկովկասի առևտրական նանուլցյների հետ և են-  
թարկված էին դրանց ազդեցությանը:

Հիշատակարանը ներկայացնում է մեզ հայաբնակ լեռնաշ-  
խարհը ներհուստ պատակված վիճակում: Այս մի իրողություն է,  
որը զգացվում է արդեն իսկ Վարվառե կույսի վկայությունից: Բախ-  
վում էին իրանական բռնուցքին թեր ու դեմ խմբավորումներ կամ,  
ինչպես կասեր Զարարիա Աղուլեցի ժամանակագիրը, այստեղ էլ  
«էլն երկու կողմն էր ձևըված»: Ապստամբության կողմը հակ-  
ված շարժումը նանդիպում էր ներքին դիմադրությունների: Պատ-  
ժիշ դորամարտերին ընդառաջում են տեղացիների որոշ նառված-  
ներ՝ աշխարհականներ և եկեղեցականներ: Նույն այդ բանը կա-  
տարվել էր նաև Վրաստանում՝ պարտության մատնելով Գուրգին  
խանի զլխավորած սուլտամբությունը<sup>1</sup>: Բռնադատված կրոնա-  
փոխությունը, սաացվածքների կողպպումն ու փոխանցումները,  
որոնց մասին նշում են ժամանակակից աղբյուրները, արդյունք էին  
ոչ միայն դորքերի պարենավորման պրիմիաիվ սխառմի, այլև  
զավառներում կատարվող բաղաբական և սոցիալական նախամար-  
տությունների:

<sup>1</sup> Մասնանշելով սուլտամբության կրած պարտության պատճառը  
լավատեղյակ ֆրանսիական հետազոտողը, Գուրգին խանի մասին գրում էր  
թե՛ «la plupart des grands du pays que la cour avoit gagnes avant quit-  
té son parti, il avoit abandonné la place, et était venu en personne de-  
mander sa grace au Roi. La Manve-Clairac. «Histoire de Perse depuis le  
commencement de ce siècle». Paris, 17:0, I, էջ 20:

Իրանական պատժարշավի մասին հետաքրքրական տվյալներ ենք գտնում նաև մի հիշատակարանում, որ գրվել է Սյունյաց մեծ Անապատում, Հովասափ Աղվերձցի կրոնավորի գրչով: Հիշատակարանը թվական չունի և զժբախտաբար վնասված է տեղ-տեղ, սակայն գրությունն ժամանակամիջոցը հայտնի է և գրածի միտքը պարզ: Նշելով, որ ձեռագիրը գրի է առել շահ Սուլեյմանի ժամանակ (1667—1694)՝ հիշատակագրողը հարում է՝ որ «բազում լշարիս/ գործեցաւ յաւուրս սորայ, նախ որ |||| աւերեցաւ, որ յամենայն երկիր գա |||| խանէ բանային և բազում աւեր եղև աշխարհ |||| նրկորդ Հաճ(ի) Ալիխանն եկն սարդար, յաշխարհի հայոց՝ որ զշարութիւն նորա ո՛ կարէ պատմել: Շատ տուն և շատ երկիր աւերեցաւ իբրև ի ժամանակս Ռամուրլանկին, ան/մեղ/ ա/րիմն/ և անմեղ արասուր ||||»<sup>1</sup>:

Այստեղ հիշված Հաճի Ալիխանի ռազմական գործողությունների ժամանակը ճշտելու համար ունինք հաստատ մի կովան: 1691 թ. գրված ժամանակագրական իր նոթերի մեջ Հովհաննավանքի Սարգիս վանահայրը նշում է. «ՌՃԻԻ (1680)-ին սարդարն Հաջի Ալիխան անուն ժԱ(11) ամ երեք շրջի»<sup>2</sup>: Սրանով ճշտվում է նախ, որ հայկական գավառներում պարսից սարգարի պատժարշավը սկսվել էր 1680 թվականին, և մինչև նոթերի արձանագրման տարին դեռ չէր դադարել: Նոթերի գրությունից հետո իսկ պատժարշավը շարունակվում էր տակավին:

Հաճի Ալիխանը, անշուշտ, նույն իրանական պատժարշավը ղեկավարող այն «սարդարն» է, որի մասին տեղեկություններ են տալիս 80-ական և 90-ական թվականների հայ հիշատակարանները: Հովասափ գրչի հաղորդածը մասամբ կոնկրետացնում է և բնագծանոր առմամբ հավաստում գրանց բովանդակությունը: Հավանական է դառնում, որ գորախմբերի վայրագություններ սաստկանում էին հենց մեծ Սյունիում: Սյունյաց գավառներում էր ծայրահեղ վայրագության հասնում քաղաքական ռեակցիան. դրա պատճառն այն էր երևի, որ այդտեղ էլ գտնվում էր հայկական շարժման բուն կենտրոնը: Եվ իրոք, մինչև XVIII դարի քսանական թվականների կեսերը մեծ Սյունիքը կամ «Ղափանն» էր հանդիսանում Հայաստանի ազատագրման համար արժարժված կռիվների գլխավոր թատերաբեմն ու մարտական առաջապահիկը:

Բնական է, որ այդ երկիրը լինեք նաև այն վայրը, ուր գլուխ

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 4074, էջ 417ա:

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. № 605, պահպանակի 1ր թերթը:

էին բարձրացնում շարժմանը դեմընքաց առավել կատաղի ներքին ուժերը: Ժողովրդական մասսաների աշխուժացմանը հակադրում էր հալ և օտար իշխողների ունակցիան: Այս մասին են վկայում վերը բերված մեծաբժեք հիշատակարանները:



1699 թվականի ապրիլի 4-ին (հ. տ.) հասնելով էջմիածին, Օրին աննպատակ նկատեց այդտեղ իշխող արամազրուՅյունները «հոռմեական» կողմնորոշման կուսակիցների համար: Նա հասկացավ, որ եթե հայերի ազատագրումը պիտի գլուխ բերվեր ազգի կաթողիկոսի անունով՝ ապարդյուն կլինի խոսք բացել այդ մասին էջմիածնում, ուր կաթողիկոսի անունով համար: Մյուս կողմից, նա պիտի գլխի ընկած լիներ նաև, որ հայերի դավանափոխության մասին Նահապետը չէր կարող խոսք բացել Պֆալցի կուրֆյուրստի հանձնակատարի հետ թեկուզ հենց իրանական կառավարության երկյուղից, որի սպառնալով նա վերահաստատված էր իր աթոռի վրա:

Այս հանդամանքների մեջ Օրին պիտի համոզվեր, որ ինչքան անելիք չունի էջմիածնում և հեռանալով այդ վայրից, առանց տեսակցելու Նահապետի հետ, որի նախորդի հասցնելով նամակ ուներ պայուսակում: Հավանորեն այս էր պատճառը որ աշտանակելով երկվարք, նա շարունակեց ճանապարհը դեպի Ղափան, այն երկիրը, ուրից դուրս էր եկել մոտ քսան տարի առաջ, և ուր, ինչպես պատմում է, վաղուց մեռած էին կարծում իրեն<sup>1</sup>:

Հետաքրքրական մանրամասնություններ է պատմում Օրին կուրֆյուրստին ներկայացրած իր ղեկուցագրում՝ հայրենիքում ունեցած հանդիպումների մասին<sup>2</sup>:

Ղեկուցագրից տեղեկանում ենք զաղանի այն խորհրդակցության մասին, որ հրավիրել էր Օրին հայրենի տունը հասնելուց մի երկու օր անց, Սիսիանի Անկեղակոթ գյուղում: Խորհրդակցությանը հավաքվել էին շրջակա մհալների մեկլիքներից տասը հոգի, որոնց

<sup>1</sup> ЭЗОВ, Կուլին տեղում, № № 2, 5, 6, 11:

<sup>2</sup> Իր այդ ղեկուցագրի մեջ էջմիածնից դեպի Սիսիանի Անկեղակոթ գյուղի և այդտեղից դեպի Դանձատար, Օրին հաշվում է ընդամենը չորս օր՝ ապրիլի 5-ից մինչև 8-ը: Ուսումնասիրողներից ոմանց տարակուսանքի մեջ է ձգել ճանապարհորդության «կախարդական» արագապատկանը (տե՛ս Լ. Ե. Ս., Խոջապական կապիտալ, էջ 190 և հտ.): Սակայն ղեկուցագրում մակագծերի մեջ առնված օրացույցային նշումները եղյանի վրիպած միջարկություններն են ստակ. դանց առնելով գրանք՝ ղեկուցագիրը կներկայանա մեր տառչավելի արժանահավատ կերպարանքով:

թվում շորս հողի բուն Ղափանից: Ժողովից անմիջապես առաջ հարկ եղավ, որ Օրին հաշանցներ մեկը մյուսի հետ գծաված մեկիքներից երկուսին՝ մեկիք Սաֆրազին և մեկիք էմիրբեկին: Սրանցից առաջինը, մեկիք Սաֆրազը, ինչպես հայտնվում է Օրիի պատմածներից, այս կողմերի ամենից հեղինակավոր գեմքն էր: Մյուսը, էմիրբեկը, ամենից քաջարի մարդը:

Ըստ Ե. Լաբոյանի այստեղ հիշատակված մեկիք Սաֆրազը պետք է եղած լինի Սիսիանի դավառում իշխած մեկիք Սաֆրազյանների նախահայր մեկիք Շաֆրազը<sup>1</sup>: Այդ անունով մի մեկիք հանդիպում է մեզ մեկիք Փարսազանյանների կասկածելի վավերականութուն ունեցող սոհմազրության մեջ, որ վերոհիշյալ մեկիք Սաֆրազին ժամոհմակալից է՝ զալիս<sup>2</sup>: 1781 թվականի մի գրչագրում նշվում է՝ «մեկիք Շաֆրազն, որ ի Սիսեան, այլ Հարատարխոս»<sup>3</sup>: Պիտի կարծել, որ վերջինս կրում էր իր նախահոր (հավանորեն իր պապ)՝ մեկիք Շաֆրազի կամ մեկիք Սաֆրազի անունը:

Գալով էմիրբեկին, հարց է առաջանում, արդյոք սա այն մեկիք Ամիրխանը չէ՞, որը նշված է 1706 թվականի Բոնակոթի մեր բերած հիշատակարանում, որպես այդ ժամանակ իշխանութուն անող «հայոց մեկիք»:

Մեկիք Ամիրխանին և նրան հաջորդած մեկիք Նարինին Ե. Լաբոյանը ներկայացնում է որպես Անկեղակոթում նստած մեկիք Շաֆրազի հաջորդներ և սրանց բուլղրին պատկերացնում որպես ամբողջ Սիսիանի վրա տիրող մարդկանց<sup>4</sup>: Սակայն Օրիի թղթերից չի երևում, թե այս ժամանակ ամբողջ Սիսիանը ընկնում էր հայ մի մեկիքի իշխանության տակ: Բուլոս պարագաներում Անկեղակոթի մեկիք Շաֆրազը, որն անշուշտ հենց Օրիի հիշատակած մեկիք Սաֆրազն է, մեկիք էմիրբեկի, կամ, որ միևնույնն է, Բոնակոթում իշխող մեկիք Ամիրխանի նախորդը չէր, այլ նրա ժամանակակիցը և մեկիրական իշխանութուն էր բանեցնում նրանից անկախ:

Եղյանի հրատարակած վավերագրերից մեկում խոսվում է Киштаф-ի էմիրբեկի մասին, ըստ որում Киштаф-ը նշված է որպես Շամախուց միայն 10 մղոն հեռավորության վրա գտնված մի վայր: Դավարանում ենք ենթադրել, որ այս դեպքում Օրին նկատի կարող էր ունենալ Հաքարի գետի հովտում գտնված Քշտաղի մհալը: Օրիի

<sup>1</sup> Տե՛ս Ե. Լաբոյան, Չանդեղուքի գատա, Թիֆլիս, 1898, էջ 17:

<sup>2</sup> Տե՛ս «Բանասեր», Գ, Փարիզ, էջ 381 և հո.:

<sup>3</sup> Տե՛ս Հովսեփյան ՍՍԻ Մատենադարան, ձև. Ա՝ 1720 1188, էջ 318 և Լ. Լ. Ի. 2 ա. Սիսիան, էջ 215:

<sup>4</sup> Տե՛ս «Ազգայրբական հանդես», Գ. դիրք. Ա՝ 1, էջ 117:

ժամանումից փոքր-ինչ առաջ Քշատազում շարունակում էր իշխել մե-  
լիք Հայկազի սերունդը: Սակայն էմիրբեկ անունով մեկին շենք  
հանդիպում այդ սերնդի իշխողների շնվանացանկում: 1681 թվա-  
կանին գրված մի հիշատակարանում կարգում ենք. «Սն մելիք Հախ-  
նազարս որդի պարոն մահգասի Գասբար պեկին որդի պարոն Հայ-  
կազին, ետու նորոպել դսուրս զիրքս, որ կոչի Այսամաուրք, բարի յի-  
շատակի ինձ և ծնողաց իմոց պարոն Գասբար մահգասուն և մօրն  
իմոյ Սօլտան ազին և եղբոր իմոյ պարոն Հայկազին և ամուսնոյն  
իմոյ Մահֆարուն և հարազատ որդոց իմոց պարոն Ելես Բովամին  
(sic!), պարոն Բախտամին, պարոն Աղաձան պեկին, պարոն Պհա-  
թուրին, պարոն Գասբարին: Եւ եղբոր որդոյն իմոյ Զօրապապելին  
որոյ յիշատակն աւրնւթեամբ եզիցի: Եւ ետու յիշատակ Յասմա-  
ուրքս ի դուռն Պայանդուրին սուրբ եկեղեցոյն»<sup>1</sup>: 1693—94 թվա-  
կանին Քշատազի հանածախ գյուղում գրված մի այլ հիշատակարա-  
նում թվարկված են մելիք Հախնազարի թոռները՝ Բախտամ բեկի  
որդի Հավթանդիլը և Աղաջան բեկի որդի Բարխուդարը<sup>2</sup>: Այս արվ-  
յալները մեզ արամադրում են Քշատազի սահմաններից դուրս կար-  
ծել էմիրբեկի տիրույթը:

Էմիրբեկի և Մահբազի համերաշխությունը Օրին խորհրդածո-  
ղովի հաջողութան գլխավոր պայման էր համարում<sup>3</sup>: Դժբախտա-  
բար մեր արամադրութան տակ նյութեր չկան Անկեղակոթում կամ  
Բոնակոթում իշխած մելիքական մյուս տների մասին: Պատմական  
հիշատակումներից երևում է միայն, որ XV դարում Անկեղակոթը  
սղղեցիկ զիրք պիտի ունեցած լինի Սյունիքում: Այսպես, օրինակ  
մի հիշատակարանում նշված է՝ «Ի թվակայութեան ՊՀԷ (1428)  
ի հուշակաւսր գեղս Ինկեղակաթ քնդ հովանեաւ սուրբ Աստուածած-  
նիս ի դանութեան Սկանդար Միսգին և յիշխանութեան Բեշկինին  
(sic) և տանուտիրութեան Ծապանին»<sup>4</sup>: Հետագայի ավյալներից  
տկնաբեր է գրեթե, որ Միսիանը «Ղափանի» ամենահայաչաւս դավա-  
ււրն էր, փակ Անկեղակոթն ու Բոնակոթը նրա ամենախոշոր ավան-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 7436, էջ 357ա:

Իրանագետ Լ. Փափազյանը Հայաստանի Պետարխիվում հանդիպել է  
1691 թվականին կազմված պարսիկերեն մի համարտական. որի տակ պահվել  
են Քշատազի մելիք Հախնազարի որդի Բլիտաի, նույն մելիքի եղբայր Հայկա-  
զի և Ղափանի մելիք Հայկազի անունները (ՀՊԱ, ֆոնդ 59, դործ 1, վավե-  
րագիր 1): Արդյոք վերջինիս որդին չէ՞ր Անկեղակոթի խորհրդածոլորին-  
մասնակցած Հակոբի (Եղիասի) որդի Փելիպոսը (տե՛ս Ծ 30 Յ, նույն տեղում,  
№ 6):

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. № 7840, էջ 338ա:

<sup>3</sup> Ծ 30 Յ, նույն տեղում, № 11:

<sup>4</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 6401, էջ 250բ:

ները: Այդ երևում է Տաթևի վանքի վարը հիշատակելիք պողացուցակներից: Ըստ այդ աղբյուրի զբաղեցնող ժամանակաշրջանում Սյունյաց 14 դավառների մեջ Սիսիանի դավառը Տաթևի համար հավաքում էր տարեկան 11,5 թուման պտղի, մինչդեռ Սիսիանից հետո երկրորդ տեղը բռնող Կաքավաբերդի դավառը՝ 6,2 թուման, Չավրնդուրի դավառը՝ 5,2, Աճանանի դավառը՝ 4,9 և այլն: Սյունյաց 243 գյուղերից ամենից շատ պտղի էին վճարում՝ Բռնակոթը՝ 1,32 թուման և Անկեղակոթը՝ 1,11 թուման: Սրանց հաջորդում են Կաքավաբերդի միջին թաղը 7000 դիան (=դինար), Եղնագոմերը՝ 6700, Գորիսը և Աղվերձը՝ 6600-ական դիան, Բազարչայը, Խանածախը, Լորը և Շնհերը՝ 5500-ական և այլն: Այս թվանշանները վկայում են ոչ միայն գյուղերի բնակչության քանակի, այլև նրանց «վճարունակություն» ծավալի, հետևաբար և նրանց քաղաքական կշռույթի մասին: Անհավանական չէ ենթադրել, որ մեր հիշատակած մեկիքներից մեկի իշխանության կենտրոնը Սիսիանի Անկեղակոթ գյուղն էր, մյուսինը՝ նույն դավառի Բռնակոթ գյուղը: Հասկանալի է, թե ինչու Սիսիանի ամենանշանավոր երկու գյուղերի մեկիքները հանդիսանում էին «Ղափանի» ազդեցիկ ղեկավարները, ինչպես նաև այն, որ սրանց գործակցությունը Օրին համարում էր իր հաջողության պայմաններից մեկը:

Խորհրդաժողովի զբաղմունքի նյութը Պֆալցի կուրֆյուրստի մեկիքներին ուղղված պրոպեգանդային ընթերցումն ու քննարկումն էր:

Ի՞նչ վերաբերմունք ունեցան մեկիքները դեպի այդ գրությունը:

Այդ հարցին պատասխանել, երբ աչքի առաջ ես ունենում խորհրդաժողովի դոմարման վայրկյանին Իրանահայաստանում և մասնավորապես «Ղափանի երկրում» իշխած իրավիճակը: Ազատագրական այն մտայնությունը, որ այնքան հաճախ ղգալ էր տվել իրեն հայ իշխող շրջաններում, շարունակում էր երևան գալ նաև հիմա, XVII դարի աղջամուղջին:

Այսպես, Մակուի Թաղեոս Առաքելո վանքի վանահայր մեր հիշատակած Իսահակ Արղար վարդապետը 1691 թվականին գրած իր հիշատակարանում նշում էր. «Ելին արիական ազգն Ֆռանկաց, որ խմբորսոր կօշխար, որ է կայսր ալաման ազգին թագաւորաց: Եւ եկեալ էաւ զԲուսուում մայրաքաղաք օսմանցոց և անտի լառաշացեալ էաւ զՏիլրվաթ (sic), բոլոր շրջակայ բերդորելիւք և մօտեալ մինչև ի Պուրսա քաղաք դեռ ևս կան այնպէս: Իսկ օսմանցին տկարացեալ և անզօրացեալ ոչ կարէ ընդդէմ կալ, երկուցեալ յամենայնի: Ակն ունիմ յամենաքաղաւորէն Քրիստոսէ, զի քստ ուխտի և

մարգարէութեան հարցն սրբոց ի լուսն եկեալ ազատութիւն լիցի  
Բրիտոնէից: Եւ բան զկարն աւելի հարկապահանջութեամբ նեղին  
զազդն մեր և յոչ կարելն հատուցանել, յուրացութիւն անկանին,  
:արիւրով և այլ աւելորդով, զիւզով և զաւստով»<sup>1</sup>:

Երեք տարի անց, 1694 թվականին, Շատիկո վանքի վանահայր  
Շմաւոնն վարդապետը, անդրադասնալով ընթացիկ անցքերին, գրում  
էր. «Այլև ներողութեամբ Աստուծոյ բռնակալեալ ունէին Հոռոմոց  
տունն (Քուրբան) և երկիրս հայոց մահմեդականք, որ անուն պար-  
սից շահ Սուլեյման կոչի: Որ և պատերազմունք ընդ Օզբեկստանայ  
և ընդ վրաց գոյր: Իսկ Հոռոմոցն ընդ ազգին ֆռանկաց և ընդ կայսե-  
րն ինֆրափորայ, յլով ամս գոյր, զոր տէր Յիսուս... յօգնութիւն  
հասցէ ի քիկունս Բրիտոնէից քաղաւորին: Նաև հարկապահանջու-  
թիւն յլով և ազբաւութիւն ոչ սակաւ տիրեալ գոյր ազգիս»<sup>2</sup>:

Շվեդացի արեւելագետ Բրեննսերը (Եվրոպական առաջին այն  
գիտնականք, որը հասուկ աշխատություն նվիրեց Խորենացուն և  
որը հենց մեզ զբաղեցնող ժամանակ, 1699 թվականին, ճամփորդում  
էր Հայաստանում), անդրադասնալով Հայաստանում ստացած իր  
ապավորություններին, վեր էր հանում իր մի գիտողությունը:  
Հին մի մարդարևության համաձայն, որը վերագրվում է Սահակ  
Պարթևին, — ասում էր նա, — հայերը, որոնք հզոր էին երբեմն և  
ուղղադավան, ժամանակի ընթացքում, մնալով քրիստոնյա սոսկ  
անունով, հուզած լինելով իրենց դեմ ասածու բարկությունը, զրկվե-  
լու են սեփական թագավորությունից և ցարուցրիվ լինելու աշ-  
խարհով մեկ, ինչպես Ենովայի սիրած ժողովուրդը՝ հրեաները:  
Բայց պիտի գա ժամանակ, երբ ասածու բարկությունը պիտի նա-  
հանջի նրա ղեկավարության առաջ: Պիտի հառնի եվրոպական մի քա-  
ղաք, վերականգնելու նրանց քաղաքությունը, ազատի հա-  
յերին իրենց ստուապանքներից և վերադարձնի նրանց իրենց վաղե-  
մի բնակավայրը: Եվրոպական այդ քաղաքին հայերը սպասում  
են հիմա այնպես, ինչպես երեաները Մեսիային<sup>3</sup>:

<sup>1</sup> Հայկական ՍՍԻ Մատենագարան, ձեռ. № 3912, էջ 341ա:

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. № 7472, էջ 299ա:

<sup>3</sup> ... rem autem fideique vim parum curent donec Deum ad justam  
provocarint iram, qui regnum ipsis, victa regia Arsacidarum familia desol-  
ari sinet, eosque peregrinorum hostiumque suorum imperio submittat, et  
per orbem dispergi faciat... Tunc enim excitatum iri a Deo quendam Euro-  
paeum regem qui postliminio regnum regesque ipsis restituat, ut sic salvi  
ab aerumnis in propriis sedibus vivere possint. Hunc Europaeum Regem  
jam exspectant Armeni, ut Judaei Messiam. Brunner, Heinrichus, „Epi-  
tomae commentariorum Moysis Armeni, de origine et regibus armenorum  
et parthorum etc“. Stockholmiae, 1723, էջ 96:

Ուշագրաւ է նաեւ այն տեղեկանքը, որ կցում է սրան Անդրր-կովկասում ճանապարհորդած Բրեննները: «Ընրք ես գտնուում էի Շամա-խում, — գրում է նա, — հայ մի վարդապետի մաս տեսա Հոռոմի պապի մի գրութեանը, նրա պատասխանը հայերի այն դիմումին, որով օգնութեան էին խնդրել (Հոռոմից) մահմեդական լծից ազատ-վելու համար: Պապը խոստանում էր հոգալ այդ մասին, հենց որ խնդրի գան հայերը, և թողնելով իրենց մուրթութեանները, միանան Հոռոմի եկեղեցուն»<sup>1</sup>:

Շվեդ գիտնականի ուրվագծած պատկերը կարելի է համալրել նույն պահին Արնմուտը այցելած հայ մի գրադետի օգնութեամբ:

XVII դարի վերջերին Հոռոմ և Նեապոլ այցելած ոմն Կիրակոս զպիր, խոսելով Հոռոմի պապի մասին՝ հիպերբոլիկ գուշներով է ներկայացնում պապի բազարական հզորութեանը: «Հրամանն նորա անցանէ ի վերա ամենայն ուղղափառ թագաւորաց և ունի անշափ ստացվածս և երկիրս որ ճառել և բավել չկարեմք... — գրում է Կիրակոս զպիրը: — Չորս թագաւորին ի ժամու պատերազմի խրեանց պիտոյանասցէ գանձս՝ առարեն առ փափն և նայ տայ անխնայ որ երթեալ պատերազմին ընդ անմիտոսն: Եւ ինքն բաշխօղն պարզեաց և տվօղն սղորմութեան հաստատ պահեսցէ աթոռն այն: Եւ սղորմի տառապեալ ազգիս հայոցս, որ կամք ի տառապանս, այց արասցէ և սղորմի ազգիս մեր, և վառեսցէ ճրագն հայոց, ամէն»<sup>2</sup>: Կիրակոս զրիչը կարծում էր ըստ երևույթին, թէ հայոց ազգի տան մարած ճրագը պիտի վառվի հենց պապի միջամտութեամբ:

Եվ ահա նույն այդ ժամանակ հայոց աշխարհում հայանվում է Օրին: Նա հուսադրում էր Այունչաց մեղիքներին, նրանց ձեռքը տալիս դարերով երազած փրկութեան երաշխագրեր... Հետո չէ հայերի ազատութեանը: Հոռոմի ամենազոր պապը և նրան ունկնդրող եվրոպական իշխաններն իրենց ձեռքն են առնում մեծ այդ գործի նախաձեռնութեանն ու ղեկավարութեանը: Նրանք պատրաստ են օղնութեան գալ «անօրենների» ձեռքին տառապող «Մեծ Հայաստանին»: Չպիտի արդար թվար թէ Կիրակոս զպիրի ակնարկած «հայոց ճրա-

<sup>1</sup> „Cum Schamchiaae essem, vidi apud Vartabetem Armenorum literas Pontificis Romani, quibus respondeant Armenorum epistulae, qua petiverant ejus opem, et liberationem a iugo Mahometanorum: illam hoc sibi jam curae cordique fore promissit Pontifex, quarum primum respicere vellent, atque relictis, suis erroribus redire ad unionem ecclesiae Romanae...»

<sup>2</sup> Հայկական ՍՍՏԻ Մատենադարան, ձեռագիր ԱՅ 710. Էջ 91ա:



դր» վառելու՝ Հայաստանի թագավորությունը վերականգնելու մեր-  
ձանկարը բարեպաշտ պատրանք չէ լուկ, այլ շոշափելի և իրագոր-  
ծելի մի բան, որի կենսագործումը՝ մասամբ կախված է հենց հայ  
մեկիքների խելամուռվյունից:

Օրիի աշխուժացումները ընդատաջում էին հայ ազատագրա-  
կան լեզունը սնուց միշտ խարուսիկ, բայց և տեսակա ապրումն մտա-  
վիճակին: Անկեղակոթի խորհրդածոցովի անունից Օրիի հրապարակ  
հանած թղթերը դադիս են վկայելու, որ այդ մտավիճակից հետո  
չէին նաև Անկեղակոթում հավաքված մեկիքները: Պֆալցի կուր-  
ֆյուրստի անունից արված առաջարկներին նրանք ցուցաբերեցին  
գրական վերաբերմունք: Հրավիրված ժողովը մշակեց կուրֆյուրստի  
նամակում արված առաջարկների գրական պատասխանը և արեց  
առաջին քայլերը դրանց իրագործման համար:

Ամենից առաջ պիտի լուծվեր շարաբախտ այն խնդիրը, որով  
ներածվում էին հայ-արևմտակերտական նախկին բանավարու-  
թյունները և որը, ինչպես մի ավելորդ անգամ ասում է նաև շվեդ  
դիտնականը, այդ պահին ևս նախապայման էր համարվում հայե-  
րի ազատագրման. պատի հողերը գերիշխանությունը ճանաչելու  
խնդիրը: Անգրանկություն և սոսախանի հին պատմությունն է, որ  
պիտի կրկնվեր անխուսափելիորեն:

Մեկիքների Դյուսելդորֆ հլած պատասխանից երևում է, որ  
Պֆալցի իշխանն իմացրած է եղել նրանց, թե իր ցանկությունն է ոչ  
միայն օգնության գալ Հայաստանի քաղաքական ազատագրմանը,  
այլև նպատակ հայ և կաթոլիկ եկեղեցիների «վերամիավորմանը»<sup>1</sup>:  
Օրիի միջոցով արտա հայված այդ բազմանքը, որն ըստ երևույթին  
նաև Պֆալցի և Վրեննաչի եզուխանների ցանկությունն էր, ընդատա-  
ջում էր Անկեղակոթում խմբված մեկիքների՝ էջմիածնին գեմընթաց  
մտահոսանքին: Որպես «առհմաչին արագիցիաների» արտահայտիչ-  
ներ՝ Սեֆյանների սահմանած ուժիմից դժգոհ՝ մեկիքները արա-  
մագրված էին այն ալլանդակությունների դեմ, որոնք բուն էին գրել  
նաև հայ եկեղեցու գմբեթի տակ: Այս մասին են վկայում գեթ մեկ  
հասած այն թղթերը, որ գանում ենք նրանց անունից Օրիի բերած  
գրություն պատասխանները:

Ինչպես նշեցինք, Իրանի վարչական և ֆինանսական ուժիմին  
համակերպված հայ եկեղեցական կազմակերպությունը սպառնում  
էր վերածվել հողեր սատրապության: Այս մասին արանջում

<sup>1</sup> Յ 3 0 Յ, նույն տեղում, № 5, էջ 14:

են նաև մեկիքների անունից գրված պատասխանները: Եթե եկեղեցականներին հաստատողը կամ նշանակողը լիներ պապը, Հիսուսի երկրավոր լիազորը, ապա է այդ թղթերում, հարկ չէր լինի հաստատման ռազամներ ու ֆերմաներ գնել Գրանց համար. պապի գերիշխանությունը ճանաչումը ամենախելացի միջոցը կլիներ հայ եկեղեցու անկախությունը իրաճական կամ թուրքական ստանձգություններից պաշտպանելու համար: Ընչ վերաբերում է խնդրի գավառաբանական նրբանքներին՝ դրանք շատ մութ պիտի լինեին Ղափանի գյուղատերերի համար և հազիվ թե նույնիսկ կարող էին առանձնապես պատրել նրանց պարզամտությունը: Երանց անունից կազմված գրությունների մեջ չեն էլ շոշափված նման կնճիռներ:

Պետք էր, սակայն, հազվաճարել գործնական մի գծվարություն: Ո՞վ է, որ իրավունք կարող է ունենալ հայերի կամ դեթ նրանց խոշոր սրեկ հատվածի անունից պարտավորիչ հայտարարություն անել սուրբ Պետրոսի վեմին ապավինելու մասին: Հարցը լուծելու համար պայմանները հիմա այլ էին, քան 1677 թվականին: Էջմիածնի կաթողիկոսը ոչ միայն չէր գլխավորում եկեղեցիների վերամիացման շուրջը տարվելիք բանակցությունը, այլև նույնիսկ անբարեհույս նկատվում մեկիքների կողմից նման մի ձևանարկություն համար: Եկեղեցականների կողմից մասնակցություն կարող էր ունենալ Անկեղակոթի խորհրդածուղովին գուցե Տաթևի առաջնորդը: Սակայն այդ մասին ևս խոսք չկա Օրբի թղթերում, և հավանական է, որ հայ եկեղեցու դեմ մեկիքների արտահայտած տրտունջները նշանավոր չափով վերաբերում էին նաև Տաթևի վանքին:

XVII դարում Տաթևի վանքը կալվածատիրական խոշոր կազմակերպություն էր, հողային սեփական կլանող ֆեոդալական հիմնարկ, որ հայ աշխարհիկ տերերի աչքում թերևս միայն նախանձի ու տրտունջների հորդահոս աղբյուր էր: Բոլոր սվլալներից դատելով՝ Տաթևի վանքում արդեն դադարել էր վիճակավորների ժառանգական հաջորդականությունը և ըստ երևույթին դրան մեծապես նպաստել էր Հարանց անսպասում ծայր առած վանական-վերանորոգչական շարժումը: Տեսանք, որ XVII դարում Տաթևի վիճակավորները պաշարում էին վանքի կալվածները մուսուլման հափըշտակողներից ետ խլելու համար Արդյոք նման պայքար չէ՞ին վարում Գրանք նաև ներքին հափշտակողների՝ մեկիքների կամ գյուղական համայնքների դեմ և այս հանգամանքը չէ՞ր մասամբ, որ թշնամանք էր առաջացնում Տաթևի իրավատերերի և Անկեղակո-

Թում խորհրդակցության նստած մելիքների մեջ: Իրված հարցը պարզելու համար, դժբախտաբար, չկան աղբյուրներ:

Բոլոր սարազաններում պիտի գիտենք, որ XVII—XVIII դարերում Տաթևի վանքը չէր կարող հանդրվան դասնալ Ղափանում արծարծվող ազատագրական շարժումների համար: Մեր ձեռքի տակ կան վանքի այդ ժամանակվա եկամտացանկերը<sup>1</sup>, բացառիկ արժեք ունեցող մի աղբյուր, որ զաղափար է տալիս այդ ժամանակաշրջանի Սյունյաց հայաբնակ դավառների և գյուղերի, նրանց համեմատական մեծության և վճարունակության ու հատկապես վանքի և գյուղացիների տնտեսական հարաբերությունների մասին: Այդ աղբյուրից պարզվում է, որ XVII դարի վերջերին Տաթևի վիճակի մեջ մտնող 263 գյուղերից վանքը ստանում էր շուրջ 65 թուման պտղի<sup>2</sup>, որն այդ ժամանակ հիմնականում ընդունել էր փողային տուրքի կերպարանը: Բացառություն կազմում էին Բարգուշատի շրջանի գյուղերը, ուսկից պտղին մուծվում էր բրնձով: Պարզ է սակայն, որ Բարգուշատի բրինձը ծառայում էր ոչ միայն արտադրողների սպառմանը, այլև շուկայի պահանջմունքին:

Վանքը շահագործում էր նաև յուրապատկան գյուղերի արտոբայքը, խոտատեղիներն ու այգիները: 1692 թվականից մեղ են հասել Երևմիս վարդապետի տեղեկանքները «հուլավար» կոչված այն տուրքերի մասին, որ վանական հողերն օգտագործող գյուղերը բերքով կամ կոտով պարտավոր էին վճարել վանքին համապարտ երաշխավորությամբ: Այսպես, օրինակ, Տաթև գյուղը տալիս էր 24 բեռ ցորեն, 4 լիար մեղր, «զլխովին բոլոր գիւղովն» մի օր վար էր անում, 2 օր հունձ, մի օր «ջառ անում», ինչ բանի որ կարիք լիներ, մի օր եղնարածքի պնում, մի օր խոտ հարում: Տանձատափի գյուղացիները 6 բեռ և 5 մարզան (մարզանը = 35—40 կիլոգրամի)

<sup>1</sup> Հայկական ՍՍՄ Մատենադարան, ձեռ. №№ 6404 և 4228, և Մատենադարան՝ Զանազան հեղինակների արխիվ, թղթապանակ № 44, վավ. № 15:

<sup>2</sup> Յուրակներում արված են մերկ թվանշաններ, տոանց դրամանունների նշման: Միայն այնտեղ, որ նշված են մանր գյուղերը ու նրանց այժմ փոքրաբանակ պտղին, հանդիպում ենք «ապտաթի» կամ «շահի» նշումներին: Դժվար չէ գլխի բնկնել, որ մեծաքանակ նշումները կսպառկանում են իրանական գրամների այն սխտեմին, որի նվազագույն միավորը կոչվում էր «գիան» (կամ «գինար»), խոշորագույնը՝ «թուման»: Ըստ որում հայտնի է, որ 5 թումանը հավասար էր 50 արատիի, արատին՝ 200 գիանի, շահին՝ 50 գիանի: Իրանական թումանն այս ժամանակ հավասար էր 15 մառչիլի կամ զուռուշի: Տե՛ս Ա ու կ ա ս Վ ա ն ա ն դ ե ց ի, Գանձ շափոյ, կշոոյ, թւոյ և գրամից, Ամստերդամ, 1699, էջ 26:

ցորեն և 1000 դրան դրամով «հուլավար» պիտի առչին, նրանք մի օր վարելու էին, 3 օր հնձելու, մի օր խոտ հատելու և մի օր «ջատ անելու» վանքի կարիքների համար: Նշվում է միաժամանակ, որ «թագաւորն այս Տանձատափու խարաճն զխոյ վանքիս լուացու են յուել, որ խարաճս տան վանքիս»: Շնհերի գյուղացիները տալու էին 25 բևո ցորեն, 3 թիլանի լիտր մեղր, 6 մարզան հոն և ընկուլզ, սոմը 4 «չիստիլ խեղեփ» և մաղաշար և շիրա՝ ըստ բերքի: Խոտեցիները տալու էին 10 բևո և 3 մարզան ցորեն, 1 թիլանի լիտր մեղր, 5 մարզան հոն և ընկուլզ, մնացածը՝ ինչպես շնհերցիները: Հալիծորցիները՝ 6 բևո 5 մարզան ցորեն, մնացածը՝ մյուսների պես: Քրդերի սրանոցի (՝ ձիթհանքերի) արտագրուլթյան  $\frac{2}{3}$ -ը վանքինն էր,  $\frac{1}{3}$ -ը՝ իրենցը. նրանց բահրան կազմում են 3 բևո ցորեն, 1 թիլանի լիտր մեղր, 1 ոչխար: Բնունիքը՝ 24 բևո ցորեն, կից մուլքը՝ տարեկան 29 ոչխար: Որոշ դեպքերում գյուղացիների պարտավորութլունները նշված են որպես «աասանորդ» կամ «հնգորդ»: Այսպես՝ Մալտաշի մուլքի մասին ասված է, թե «10 են մէկը տան ինչ մաղթայ անիմք ու այլն որպէս վերոյ գրեալն տան անպատճառ»: Ընդհակառակը, Դաստակերտի և Ղարաքիլիսի մուլքի մասին ասված է. «10-նեն 2-ը»: Որոշված էին նաև փոխադրական ծախսերը. «Շնհերու, Խոտու, Հալիծորու բահրեքն մարզանին կէս շարեք քրեհ կուտան. թէ իրեանք բերեն կէս շարէքն մեք շեմք առնուլ»:

Տաթևի վանքը գրադվում էր ոչ միայն հողերի կապալատութլամբ, այլև դրանց կալվածատիրական մշակութլամբ՝ կուլվարների և հավանորեն նաև սեզոնային վարձվորների և վանքում ապրող մենակեցեցիների ու հողագործների ձեռքով: Վերջիններիս մասին որոշ կովան է տալիս մեկ մի հիշատակարան, գրված Տաթևում «ի հայրապետութեան աթոռոյս Մեսրոպ կախկոպոսին և այլ միաբանիցս՝ Մովսէս վարդապետին և բազմաշէկայ կախկոպոսացս և կրօնաւորացս և մենակեցացս և հողագործացս, որ կան աղաւթից ի մէջ սուրբ եկեղեցոյս»<sup>1</sup>: Պահվել են վանքի արտոբերից անունները և դրանց «աամեկութեան» նշումները: Պարզվում է, որ XVII դարի վերջերին վանքը ցանում էր 123 բևո հացահատիկ: Բացի այս առանձին նշված է նաև 15 սոմար, այսինքն՝ 60 հեկտար «տանելութլուն» ունեցող ցանքադաշտ:

Վերոգրյալ ներմերով կարելի է մոտավորապես հաշվել այն եկամուտը, որ ստացվում էր վանքապատկան կալվածներից: Բա-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 6104, էջ 235ա:

ցի աշյո, վանքն ուներ այգիներ ու հնձաններ, որոնցից մի քանիսը Մեղրում և Եվանիձորում, ձիթհանքեր, դոմեր և բազմաթիվ խոտարբի վայրեր: Երեմիա վարդապետի նշումները սրտ զազապար են տալիս նաև վանքատարական հողերի մշակման կղանակների մասին: Գոյուվյուն ուներ ցանքաշրջանառություն սրտ սիսակամ: Մի տեղ ասված է. «Տաթևու հուլալարն ասարին կիօրայ է. գորն թէ վարն լինի և թէ ոչ՝ կուտան. և գորն թէ վար լինի տան և վար շինի չեն տալ: Եթև այս գիւղորայքս վար անեն մեր ալ ինչպէս վերի գիւղորայքն այնպէս վարեմք և հնձեմք»: Նկատելի են նաև համայնքալին հողամշակման հետքեր. այսպես, Տաթևի մերձակա հողամասերի մշակման մասին կարգում ենք հետագա փոքր-փինչ մուժ տողերը. «Սոցա խուրձերն կու հանին որք են հողերն վանքին և հնկերվանցու ամեն հողերի խուրձն կու հանեն 10-ն են 2-ան կուլազանաց (=վանական) հողերին»: «Հնկերվանց՝ 4 մարզան», ասված է մի այլ տեղ, որից պարզ է, որ բոլոր գեղքերում չէ, որ հունձը տեղի էր ունենում «հնկերվանց»: Ընկերավի հողամշակումը իշխող սիսակամ չէր անշուշտ, այլ, ինչպես և համայնքային հողատիրությունը՝ անցյալի վերադրուկ: Այդ ակներև է նրանից, որ վանքը մշակություն էր տալիս իր հողերը ոչ միայն առանձին գյուղերի, կամ, որ միեկնուչն է՝ գյուղական համայնքների, այլև առանձին «տների»: Համայնքներից անկախ դործող մասնավոր մարդիկ էին ցուցակներում նըշված Ղալամանց աները, Արբահամանց աները, Մուլբունց աները և ուրիշները, ինչպես նաև սրանց շարքում նշված Մատթևու Իրիցանց «սոգր/րա/ինքը» և Ավարանց «տղերը»:

Մի տեղ ասված է. «Այնպես տեղ կա, որ խուրձ կու հանեն 10-ն են 2. վասն այն որ 10-ն են այն հողերու վանքս տալքս հարիմի են»: Հարիմի օգտին հանելիքի հաշվառումով էլ երեկ պիտի բացատրել «հնդորդ» կոչված տուրքը<sup>1</sup>:

Իրանական գավթիչները ձեռք էին կարկառում նաև Տաթևի կալվածներին: Սակայն հատկանշական է, որ այդ բանում նրանք օժանդակագներ են գտնում նույնիսկ Տաթևի վանականների շարքերում: XVII դարի երկրորդ կեսում Տաթևի վիճակավոր Հովհաննես Եսայանօղլու մասին 1678 և 1691 թվականներին նվիրած բահանալի Աղվերձում գրած հիշատակարաններում ասված է, թև

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, Զանազան հեղինակների արխիվ, թղթագ. 44, վավ. 15, հմմտ., նաև Մատենագարան, ձեռագիր № 1488, էջ 213ա և հտ., որը թևկույզ ավելի հիւ ձեռագիր է, բայց տալիս է բնագրի նվազ լավ օրինակ, քան նախընթացը:

«բազում նեղութիւնս և ջանս կրեաց ի վերայ սուրբ աթոռոյս, անպատմելի և անասելի շարչարանօք բազում անգամ ի մահ մատնեցաւ և ի ձեռն թշնամեաց իւրոց այլ Աստուած փրկեաց ի մահուան՝ և ի ձեռաց թշնամեացն: Քանզի և էառ բազում գեղորէից մուլքս ի ձեռաց տաճկաց ի ձեռն հրովարտակաց/կաց/ թագաւորաց և բռնաւորաց: Զոր բազում անգամ դնացեալ եղև ի գուն շահին և յայտնեալ զիրս ազէտիցն, սակս վանից մլքերոյն, զոր այլազգիքն բռնութեամբ առեալ էին ի տմարդի և արծաթասէր և յորովայնամուլ անմիաբան առաջնորդացն մերոց: Եւ զառ սուրբ վարդապետս մեր յօժանդակ գոլով իւրն զԶաքարիա վարդապետս, որ բազում ծախիւք և շարչարանօք և յաջողութեամբ ամենազօրին ստտուծոյ կորզեալ իւլեցին ի տաճկացն զմլքերն զամենայն, զոր պրեալ և եղեալ էին նախնիքն մեր ի մէջ կոնսակի, ալսինքն ի դեղն Տաթև և Աղանց, ի Շնհեր, ի Խոտ և Հալիձոր և այլ բազում տեղիս այսպիսի աշխատանօք էառ զամենայն...»):

Հասկանալի է, որ XVII—XVIII դարերում Տաթևի վանական հասույթներն անհամեմատ պակաս էին, քան ամբարում կամ գանձում էր այդ վանքը նախընթաց դարերում: Եթե XVII—XVIII դարերում վանքի վարչութեան տակ գտնվում էին 263 դյուղ, որոնցից նա ստանում էր եկեղեցական տուրքեր, մի քանի դար առաջ, փնչպես նշված է Ստ. Օրբելյանի տպագիր հրատարակութեան մեջ, այդ կարգի դյուղերի քանակը հասնում էր 677-ի<sup>1</sup>: Կամ եթե XVII—XVIII դարերում վանքը կալվածատիրական իրավունքներ էր բանեցնում հազիվ մի տասնյակ դյուղերի նկատմամբ, X դարում նման դյուղերի քանակը երեք տասնյակից ավելի էր<sup>2</sup>: Սրա գլխավոր պատճառը պիտի սրոնենք, անշուշտ, Այսույաց աշխարհի գլխով անցած քաղաքական իրադարձութեանների մեջ: Չնայած իր կորուստներին՝ Տաթևի վանքը էր և շարունակում էր մնալ հայ ֆեոդալական խոշորագույն կազմակերպություններից մեկը:

Մեզ ծանոթ են դաժան այն միջոցառումները, որոնց դիմում էր վանքը X դարում էր գեմ կոթած դյուղացիական շարժումները ճնշելու համար: XIV—XV դարերում Տաթևի վանքը գարձավ հայ աշխարհի կուլտուր-լուսավորական խոշոր կենտրոններից մեկը, իսկ նրա նշանավոր վարդապետներից ոմանք հանդես եկան նաև

<sup>1</sup> Հայկական ՍՍՏ Մատենադարան, ձև. № 9355, էջ 7աբ:

<sup>2</sup> Ստ. Օրբելյան, նույն տեղում, էջ 523:

<sup>3</sup> Հ. Ութմազյան, Այսուիքը IX—X դարերում, Երևան, 1958.

որպէս Հայաստանի քաղաքական ազատագրման միտված արտ-  
մադրութեաններէն յարտահայտիչներ: Սակայն ոչ այդ վարդապետ-  
ները և ոչ էլ XVII—XVIII դարերի նրանց հոգևոր շառավիղները  
հանդէս չէին գալիս որպէս օտարաաւիրութեան դեմ ակախիվ դի-  
մադրութեան ցույց տալու գազափարի խրախուսողներ: Սրա պատ-  
ճառը ևս գուցէ այն էր, որ Սյունիքը հանդիսանում էր Հայաստանի  
այն երկրամասը, ուր օտարաաւիրութեան դեմ ուղղված քաղաքական  
մարտերը վերածուած էին ֆեոդալական կարգերին սպառնացող սո-  
ցիալական մարտերի:

Վեհօր, ուր խոսք եղավ XVII դարի 80—90-ական թվականների  
իրանական պատժարշաւների մասին, տեսանք, որ Սյունիքը Հա-  
յաստանի այն երկրամասն էր, ուր այդ պահին ստեղծված էր նաև  
ներքին բախումների իրադրութեան: Թվում է, թէ հենց այդ բախում-  
ներից ծայր առան սոցիալական արյունալի այն հակամարտութեան-  
ները, որոնք արժարժիցին Սյունյաց աշխարհում շուրջ մի քառա-  
յար անց՝ Դավիթ բեկի զլխավորած ապստամբութեան ժամանակ:

Ըստ երևույթին գասակարգային ու քաղաքական այս իրադրու-  
թեան մեջ պիտի որոնենք նաև այն հարցի պատասխանը, թէ ինչու  
ո՛չ Անկեղակոթի խորհրդածուգովի ժամանակ և ո՛չ էլ հետագայում  
Տաթևի վանքը մասնակցութեան չունեցաւ հայ ազատագրական  
շարժման նշանավոր ձևոնարկումների մեջ<sup>1</sup>: Հարցն այն չէ, իհարկէ,  
որ Տաթևի վանականները մասնակից չեղան հայ ազատագրական  
շարժման արևմտակարգական արագիցիան կողմնորոշմանը, որից  
բնա էութեան ոչինչ չպիտի շահեր ո՛չ հայ ժողովուրդը, ո՛չ էլ նրա  
ազատագրական պայքարը, այլ այն, որ Տաթևի վանականները  
հեռու մնացին ազատագրական շարժումից նաև հետագայում, երբ  
լքելով արևմտակարգական կողմնորոշման հին սպիները և ընդ-  
ատաջելով Մոսկովյան պետութեան արեւելյան քաղաքականութեանը,  
այն մտաւ զարգացման նոր ու արգասաւոր շրջանի մեջ:

Իր զեկուցագրում Օրին պատմում է այն հանդիպման մասին, որ

<sup>1</sup> XVII դարի վերջերս Տաթևի վանահայրութեան էր անում Նով-  
հաննէս Ծաղանոցիս Լորդշորդին՝ Ջարարիս վարդապետը: Անհնարին չէ,  
որ սա եղած լինէր հենց այն սիսիանցի Ջարարիս վարդապետը, որը 1683  
թվականին Մահառի Ծահմարտի զլխավորութեամբ ունեցրութեան էր  
ստացել վերաջլի արքայի քրտմ: Նովհաննէս Ծաղանոցիս մասին վերը հի-  
շատակված հիշատակարանը, ուր նշված է Ջարարիս վարդապետի անունը,  
հիմք է տալիս ենթադրելու, թէ ժամանակով Ֆրանսիս, Ջարարիս վարդա-  
պետը նորառակ էր ունեցել խնդրելու ֆրանսիական արքայի միջնոր-  
դութեանը Իրանի կառավարութեան առաջ՝ Տաթևի վանքի հալիչակով  
կալվածները ևս ստանալու համար: Սակայն ինչպէս Ֆրանսիսում իր անց-  
կացրած տարիների մասին խոսելիս, այնպէս և Անկեղակոթի խորհրդածուգ-  
ովի մասին պատմելիս Օրին լուում է այդ վարդապետի մասին:

իրբ ունեցել են ինքը և մեկիքները Գանձասարի կաթողիկոսի և սրա շորս եպիսկոպոսաների հետ: Նույն հանդիպման մասին տեղեկութուններ կան նաև մեկիքների ամուսնից դրված թղթերում, որոնց թեկադրողը, ինչպես պիտի տեսնենք, Օրին էր դարձյալ: Կարելի էր կարծել, որ հանդիպումը նպատակ էր ունեցել հազվաճարել վերը մատնանշված դժվարությունը և լուծել կրոնական խնդիրը՝ ձևական հպատակության թուղթ ստանալով Հռոմի անուսնով գեթ Ազվանից կաթողիկոսության կողմից: Բայց անգամ եթե հավատանք Գանձասարի հանդիպման վերսիացին, որի քննության վրա դեռ պիտի ծանրանանք առանձնապես, պիտի արձանագրենք այնուամենայնիվ, որ Օրինի իսկ ասելով Գանձասարի բանակիցություններից շատացվեց իրական որևէ արդյունք: Ոչ մեկը Ազվանից հակաթու կաթողիկոսներից մասնակիցություն չունեի Անկեղակոյթի խորհրդաժողովին կամ սրա անուսնից արված հայաստանություններին<sup>1</sup>:

Չկարողանալով լուծել պապին իրավապես դոհացուցիչ պատասխան գրելու հարցը, մեկիքները հարկադրված եղան հնազանդության թաղթ հղել Հռոմի պապին սոսկ իրենց անուսնից: Վատիկանի դիվանում պահվել է այդ գրության հայերեն բնագիրը<sup>2</sup>: Այդտեղ նրանք պատմում են վերջին բան տարիներին իրենց գլխով անցածները, «այ կաթողիկոսների ու բարձր կղերի կողմից իրենց ճաշակած դառնությունները և աղերսում՝ սահմանափակվել Հռոմի գերիշխանությունը ճանաչելու համետ այս աղբյուր և իրենց պարանոցը ազատել ճնշողների դաժան լծից: Ներկա գեպրում խոսքն, ըստ երևույթին, օտարադավան իրանյիների մասին չէ միայն, այլև՝ հալաղավան կղերի մասին: Մեկիքները հավաստիացնում են, որ եթե Հայաստանի ազատագրումից հետո կաթողիկոսները շարունակեն համատել հայազավանության «հերձվածի» մեջ, իրենք երես պիտի դարձնեն նրանցից ընդմիշտ և էջմիածնի կաթողիկոս Ջանաչևն միայն Հռոմից նշվածին: Մինչ այդ երկյուղ են կրում, չլինի թե նկեղեցականներն իրազեկ դառնան թուղթը ստորագրողների խոհերին և սրի բերան հանձնեն նրանց: Ուստի և խնդրում են իրենց հողևոր պես նշանակել Վիեննայի արքունիքի կապլան Ներսես

<sup>1</sup> Հմմտ. ՅՅՕՅ, նույն տեղում, ԱՆ 2, 5 և 11:

<sup>2</sup> Այդ գրության վատիկանի արխիվում պահված հայերեն բնագիրը հրատարակվել է Լիբանանի հայ կաթողիկոսների «Ավետիք» պարբերականի 1918 թվականի մայիս-հունիս ամսվա համարում (№ 5 6): Առվետական Հայաստանի ֆունդիում չգտանք այդ պարբերականը: Օգտվում ենք բնագրի Մեն-Մարտենի կառարած ֆրանսերեն հին թարգմանությունից, որ գե-տեղված է ՅՅՕՅ-ի ժողովածուի Ա 2-ի ներքո:



եպիսկոպոսին, որի մասին հայտնում են, թե տեղյակ է իրենց նպատակին<sup>1</sup>: Հեռագրում Կրուշինսկին, Ստ. Ռոշքսյի վկայությանը հեցած, ասում էր, թե մելիքները ցանկություն էին հայանեյ, որ այդ նույն Ներսեսը «կաթողիկոս դավի» էջմիածնում<sup>2</sup>: Պարզ է, որ Ներսեսին վերաբերող առաջարկները ելնում էին միայն նրան հանաչող և նրան հանձնարարող Օրիից:

Մելիքների անունից Պֆալցի կուրֆյուրստին հղած դրության մեջ ուշադրություն է դրավում այն տեղեկանքը, թե 1680 թվականից սկսած վրացիները բացահայտ կովի մեջ են իրանցիների հետ և որ դրա հետևանքով այդ ժամանակից ի վեր իրանական զորքերը գեղերելով Հայաստանում՝ հանդիսա շին ձգել հայերին: «Միայն երկու տարի է ինչ խաղաղություն է քնկել և մենք ի վիճակի ենք աշխատել՝ սարկությունից դուրս գալու նպատակի իրագործման համար», — գրում են մելիքները<sup>3</sup>: Խուլ այս տեղեկանքը արժեքավորելու համար մտաբերենք այն սեպրեսիաները, որոնք, ինչպես փոքր-ինչ առաջ տեսանք, Հաճի Ալիխանի գլխավորությամբ 1680 թվականից ի վեր իրանական կառավարությունը ձեռնարկել էր երկրի մի շարք հայաբնակ գավառներում և մամուլանդ՝ Սյունիքում:

Մելիքների ակնաբեկից դժվար չէ հետեցնել, որ հակաիրանական նրանց արամագրությունները միայն արդյունք չէին իրանական կեղերումների, այլև արդյունք 1680—1697 թթ. ընթացքում եղած ուսումնասիրական այն սեպրեսիաների, որ դործ էր զնում Իրանը Հայաստանում և հատկապես Սյունիքում՝ ի պատասխան այն դիրքավորման կամ այն համագործակցության, որ ունեցել էին հայերը և մասնավորապես «գավառացիները» վրաց ապստամբության ժամանակ<sup>4</sup>:

<sup>1</sup> Յ 3 0 Ե, նույն տեղում, № 2:

<sup>2</sup> Տե՛ս մեր Israel Ory, Anhang, № 17.

<sup>3</sup> Յ 3 0 Ե, նույն տեղում, №№ 2, 5, էջ 12:

<sup>4</sup> Պատին հղված այս գրության մեջ, խոսելով Օրիի մասին, ասված է, որ 19 տարուց ի վեր նա գնացած է եղել «բրիտանից երկիրը»: Որչափ թուղթը գրված է 1699 թ., պատմաբան Լ. Քյուրայանը եզրակացրել է, որ դրա մեջ արված վկայությունը հակասում է մյուս թղթերում մասնանշված այն փաստին, որ Օրին Հայաստանից եվրոպա է մեկնել էջմիածնի խորհրդաժողովից, այսինքն՝ 1677 թվականից հետո: Այս գիտագրությունը, սրով հիշատակված հեղինակը կամեցել է կասկածի սակ առնել Օրիի ներկայացրած թղթերի վավերականությունը, ակզին չէ: Պատին հղված թղթում նշված է ոչ թե Օրիի Հայաստանից մեկնելու, այլ 1680 թվականից մասմեղական աշխարհից, ներկա գեպում Կ. Պոլսից «բրիտանից երկիրը» ուղևորվելու տարեթիվը:

Նկեղեցական խնդրում գիրքսրտշվելուց հետո Անկեղակոթի խորհրդաժողովը պիտի նշեր նաև քաղաքական իր ուղեգիծը: Մեկիքների անունից կուրֆյուրստին ուղղված պատասխանի մեջ խոսքը նախ և առաջ «ստրկությունից» և «հերձվածից» ազատվելու մասին է: Մեր փրկության միջոցն այն է, — ասված է այդ պատասխանի մեջ, — որ սղատվենք անհավատների լծից և մտնենք ճշմարիտ եկեղեցու իշխանության տակ<sup>1</sup>: Այս գործի կատարումը մեկիքները վերադաճում են կուրֆյուրստին, որին զրա փոխարեն խոստանում են աղատագրվելիք Հայաստանի թագը: Հավաստիացնում են, թե իրենց հերթին պատրաստ են ամեն զոհաբերության, կարող են տրամադրել և՛ զրամ, և՛ մարդ. իրենց պակասում է միայն զեկավար մեկը, և այդպիսին պիտի հանդիսանա կուրֆյուրստը: Ցանկանում են, որ զործը սկզբնավորելու համար պֆալցյան գործասների հետ նա Հայաստան ուղարկի իր եղբորը, Կարէ Ֆիլիպին: Ինքը կուրֆյուրստը կարող է ժամանել ավելի ուշ, ևրր ամեն ինչ պատրաստ կլինի և կմնա, որ հագնի իրեն հրամցվելիք հայոց արքայական ծիրանին: Հույս ունին նույնիսկ Ֆավաճեկ թուրքաց Հայաստանն ու հիմք դնել երկրորդ մի թագավորության, ուր կարող կլինի գահակալել Կարլ Ֆիլիպը, կուրֆյուրստի եղբայրը: Թագակիր եղբայրները ձեռք-ձեռքի տված պատվար կկազմեն բոլոր թշնամիների դեմ<sup>2</sup>:

Մեկիքների անուններից կազմված հատուկ գրություններ պիտի եղած լինին նաև Լեոպոլդ կայսրի<sup>3</sup> և հավանորեն նաև Թոսկանացի մեծ դուքսի հասցեններով: Սակայն նման գրություններ տակավին հայտնված չեն:

Առանձին թուղթ պիտի ուղղեին մեկիքները նաև Մոսկովայի ցարին: Քանի որ Հայաստանի թագավորությունը վերականգնելու գազափարը գրվում էր կոնկրետ շրջանակի մեջ, Օրին և մեկիքները պիտի մտորեին զրա իրացման ուղիների մասին և ամենից առաջ գծելին եվրոպական արշավանքի մարշրուտը, որի հետ, ինչպես պիտի տեսնենք, նա լծորդում էր Հայաստանի ազատության հեռանկարը: Որչափ առաջին հերթին գրվում էր Իրանահայաստանի ազատագրման խնդիրը՝ կարող է թվալ, թե նվրոպայից լինելիք օգնությունը հասնելու էր Մուսթիայի ուղիներով և զույցն նույնիսկ Թուրքիայի օժանդակությամբ: Սակայն իր հաշիվները Արևմուտքի ռազ-

<sup>1</sup> Չ 30 Ն, նույն տեղում, № 5:

<sup>2</sup> նույն տեղում:

<sup>3</sup> Այս ակնհեր է Չ 30 Յ, նույն տեղում, № 9, § 1-ից և § 21-ից:

մական ճակատներում դեռ չփակած, այս պահին Ռուսքիան շահ չունենալով թշնամական հարաբերությունների մեջ մտնելու Իրանի հետ, թող որ նա չէր կարող շահագրգռված լինել իրանահայերի ազատագրման խնդրով: Ինչպես պիտի տեսնենք, Իրանահայաստանի ազատագրումը պատկերանում էր Օրիին սոսկ որպես Հայաստանի թագավորության վերականգնման սկիզբը, և ի վերջո անխուսափելիորեն պիտի զինաբախության հանգեր Ռուսքիայի հետ: Քանի դեռ Հայաստանի ազատագրման համար հաշվի առնվող դրոշի ուժերը պատերազմում էին Ռուսքիայի դեմ՝ Հայաստանի ազատագրման համար ծրագրվելիք արշավանքը չէր կարող զլուխ գալ Ռուսքիայի, այսինքն՝ Միջերկրականի կամ Բալկանների վրայով: Արշավադները պիտի մոտենային Իրանի սահմաններին միայն բարչացակամ կրկրների վրայով:

Բարչացակամ այդ երկրներից հիմնականը և գլխավորը Ռուսաստանն էր: Վրացիներն ու հայերը, ինչպես զիտենք, օգնություն էին տակնկալում Ռուսաստանից Գուրգին խանի և Արշիլի ապստամբության ժամանակ: Քանի որ Օրին Հայաստանի ազատագրման հեռանկարները պատկերացնում էր 1677 թվականին մշակված սխեմաներով, ալսինքն՝ կապված Հայաստանի և Վրաստանի զինակցության, հակաթուրքական կռալիցիայի և մտանավորապես Մոսկովյան պետության կողմից սպասվող աջակցության հետ, ինչպես նրա, այնպես և Անկեղակոթի խորհրդածողովի համար պարզ պիտի եղած լիներ, որ եվրոպական զինված ուժերը կարող են Հայաստան հասնել միայն Մոսկովյան պետության հովերով և որ նրանց արշավանքը պիտի ձեռնարկվի ցարի համաձայնությամբ:

Մոսկովյան պետությունը հանդիսանում էր Ռուսքիայի դեմ կազմակերպված սազմական նոր կռալիցիայի անդամներից մեկը, Մոսկովյան պետությունը միացել էր այդ կռալիցիային տակավին 1687 թվականին և Անկեղակոթի խորհրդածողովի ժամանակ նա դեռ գտնվում էր Ռուսքիայի հետ պատերազմական դրության մեջ: Հաշվի առնելով Ռուսքիայի դեմ արեւմտակողմական գաշնակիցների բազմական դարձողությունները՝ Մոսկովյան պետությունը կենտրոնացրել էր իր ուշագրությունը Սև ծովի հյուսիսային ափերը գրավելու խնդրի վրա: 1695—1696 թվականներին Պետրոս ցարը երկու արշավանք կազմակերպեց Ազովը գրավելու համար, որոնցից վերջինը պսակվեց փալլուն հաջողությամբ, հայտնի գարձնելով աշխարհին երիտասարդ ցարի անունը:

Բնորոշ այս փաստերն ու նկատառումները հասկանալի են գարձնում, թե ինչու Անկեղակոթի խորհրդածողովի անունից հատուկ գրություն պիտի ուղղվեր Մասկվայի ցարին՝ տրանզիտի իրավունք խնդրելով Հայաստան ուղևորվելիք եվրոպական գործերի համար<sup>1</sup>:

Կային սակայն սրտշ գժվարություններ: Ինչպե՞ս պիտի հիմնավորվեր մելիքների գիմումը ցարին: Նրանց պապական կողմնորոշումը ուրախառիթ փաստ լինել հոճադավան ցարի համար կարող չէր: Գերմանական իշխաններից մեկի կամ մյուսի Հայաստանում թագավորելը սկստել ցարին նույնպես կարող չէր: Այս է պատճառը, որ իրենց գրության մեջ մելիքները լուծյան տվին Հայաստանի ազատագրման հետ կապված այդ հեռանկարները: Ինչ վերաբերում է ցարին վարձահատույց լինելու խնդրին, նրանք չուրովի լուծեցին նաև գժվարին այդ խնդիրը: Եթե անհնարին էր վարձահատույց լինել ցարին երկրավոր բարիքներով, ազատ էր մնում նրա համար երկնային անմահության թաղը: Յարին ուղղած գրության մեջ մելիքները հավանորեն այդպես էլ պատկերացնում էին հարցի լուծումը: Դրա հետքերը գտնում ենք նաև ցարի անունով կազմված թղթի հայերեն և լատիներեն այն վերսիաների մեջ, որոնք վեռելված են Նոյանի ժողովածուի մեջ<sup>2</sup>:

Օրիի հետ Անկեղակոթում հավաքված մելիքները պիտի որ մտքեր փոխանակած լինեին նաև ապագա արշավանքի կազմակերպության մյուս խնդիրների շուրջը և մանավանդ պիտի սրտազրեհին իրենց անելիքը արշավանքի պահին: Իրենց գրությունների մեջ շարադրել այդ ամենը դուրին չէր: Ուստի և հոնձնարարեցին Օրիին՝ շարադրել և ներկայացնել կուրֆյուրստին Անկեղակոթում առ այդ կցած իրենց կշռադատումներն ու խոստումները<sup>3</sup>:

Իր առաքելությունը լիակատար չափով կատարած լինելու համար Օրին պիտի որ հանդիպում ունենար նաև վրաց ղեկավարներին հետ: Մի ակնարկից կարելի է եզրակացնել, թե իր ճանապարհորդության միջոցին նա հեռու չի եղել Վրաստանի սահմաններից<sup>4</sup>: Բաց թե մտե՞լ է Վրաստան, կամ հանդիպե՞լ վրաց ղեկավարների հետ՝ այդ հավանական չէ: Հակառակ դեպքում այդ մասին խոսք կլիներ հետագայում: Հիրավի Գուրգին խանի կապիտուլյացիայից

<sup>1</sup> Հմմտ. Յ 30 Յ, նույն տեղում, № 9, §§ 15—16:

<sup>2</sup> Յ30Յ, նույն տեղում, № 6 և 7:

<sup>3</sup> Նույն տեղում, № 3 և 5:

<sup>4</sup> Նույն տեղում, § 10:

հետո Օրին հնարավորություն չունի նրա ձեռքը տալու կուրֆյուրստի թուղթը: Մեկիքների անունից կուրֆյուրստին ուղղած պատասխանի մեջ ասված է, թե Գուրգին խանին զաշինք պիտի առաջարկվի միայն հետագայում: Իր վերագարձին Օրին զեկուցում էր կուրֆյուրստին, որ թեև Գուրգին խանը մեկնել է անհավատների երկիրը և նշանակվել Սպասան քաղաքի կառավարիչ, իսկ նրա եղբայր Արշիլը անցել Մոսկվա և ապավինել ցարի հովանուն, սրանց մյուս եղբայրը, Ախալցխայում նստող Շահնազար խանը, տակավին գտնվում է ապստամբության հին դիրքերի վրա: Եռամյա պատերազմից հետո, 1698 թվականին, Ռուսթիան խազաղություն էր կնքել նրա հետ: Իրանցիները երկու-երեք անգամ զորք են հղել Ախալցխան գրավելու համար, բայց ձախողել են: Մեկիքները խոստանում են կապ հառաստել Շահնազար խանի հետ և իրազեկ դարձնել նրան կուրֆյուրստի մտադրության մասին: Օրին հուշատուներ մեծ օգնություն ստանալ վրաց այդ իշխանից<sup>2</sup>:

Օրիի աշխատանքը Եվրոպայում դյուրացնելու համար մեկիքներն ընկերացրին նրան իրենց «խոստովանահայր», այսինքն՝ իրենց խոհերին տեղակի, Մինաս վարդապետին, որը հանձնառու եղավ Օրիի հետ մեկնել Արևմուտք և աջակցություն ցույց տալ նրա բանակցություններին: Հետագայում այդ եկեղեցականին վիճակված էր ստանձնել Օրիի տարած աշխատանքի ծանրության մի մասը: Անկեղակոթի ժողովում նա կատարել էր, ըստ երևույթին, «եզիչի» — քարտուղարի — դեր: Նույն դերը պիտի կատարեր մասամբ նաև առաջիկայում, գործակցելով Օրիին. հիրավի, նրա ձեռքով է գրված Օրիի հայերեն թղթերի խոշոր մասը:

Մեկիքների թղթում Մինաս վարդապետը նշված է որպես ս. Հակոբա վանքի «վանահայր» և ասված, որ Անկեղակոթ ընկել էր նա «անհավատների» կողմից նրա վանքը թալանվելուց հետո: Հավանորեն այդ կողմերը նա եկել էր ժողովարարության նպատակով: Ստ. Ռոշքայի վարը բերված մի ցուցմունքի մեջ Մինաս վարդապետը նշված է «խարբերոցի»: Հետագայում վարդապետն ասում էր, թե ինքը ծնվել է «Ասորեստանի Տիգրան քաղաքում», այլ խոսքով՝ Տիգրանակերտ կամ Ամիդ քաղաքում: Այստեղից էլ ծագում է նրա «Տիգրանակերտցի» կամ «Տիգրանյան» ազգանունը: Նրա ձեռքով գրված թղթերի մեջ նկատելի է արևմտահայ բարբառի հետքը: Հակառակ Եղյանի ենթադրության, նա ըստ երևույթին վանահայր էր

<sup>1</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 5, էջ 14 և հտ.:

<sup>2</sup> նույն տեղում, № 9, § 33

եղել ոչ թե Խաչենի, այլ համանուն արևմտահայ որևէ վանքում: Աչքի առաջ ունենալով մեզ հասած ավյալները՝ վարդապետը ծնված պիտի լինի 1658 թվականին, այսինքն՝ զրեթե հասակակից էր Օրբիին: Վանք էր մտել 1680 թվականին, արեղա ձեռնագրվել 1684 և վանահայր դարձել 1694 թվականին<sup>1</sup>:

Այն հանգամանքը, որ մեկիքները վստահեցին այդ մարդուն իրենց գաղտնի խորհուրդները և Տրան մասնակից դարձրին կաթոլիկ Արևմուտքի հետ կապված այնքան ծանրակշիռ մի գործի, նշան է, որ Մինաս վարդապետը մեկն էր հայադավան այն եկեղեցականներից, սրոնք անհաշտ աչքով շէին մերձենում եկեղեցիների միավորման հարցին: Այս մասին վկայում են նաև հետագա նրա գործակցությունը Օրբիին և Հուսի պապին ու Պֆալցի կուրֆյուրստին՝ մեկիքների անունից շարագրված թղթերը, որոնց հայերեն սկզբագրերի. էթե ոչ բուն հեղինակը, գեթ զրի առնուղը պիտի եղած լինի նա: Հետագայում էջմիածնականներից ոմանք այդ վարդապետին ուղղակի մեղադրում էին կաթոլիկության մեջ և այն բանում, որ Մոսկվայի հայ եկեղեցում եկեղեցական արարողությունները նա կատարում է կաթոլիկ ծեսով, պատարագին հիշատակում և՛ պապի, և՛ կաթոլիկոսի անունները և այլն<sup>2</sup>:

Պատահական չէ, դուցե, որ 1701 թվականին Օրբի հետ Մինաս վարդապետի Մոսկվա ժամանելու կապակցությամբ Սմոլենսկի վոյեվոդան ճրան նշում էր որպես «հումեական եկեղեցու կսենդ»<sup>3</sup>:

Իրողությունն այն է, սակայն, որ լինելով աստվածաբանական խոր գիտելիքից ու դավանաբանական հաստատամտությունից թափուր անձնավորություն, Մինաս վարդապետը եկեղեցին բոլոր իր ասպեկտներով համարում էր սոսկ քաղաքական նպատակների իրագործման միջոց: Հատկանշական է, որ տարիների ընթացքում, օրորվելով կաթոլիկ և հայադավան եկեղեցականների արանքում, զառամած հասակում նա ավարտեց իր կյանքը մեկից և մյուսից դուրս՝ պրավոսլավ եկեղեցու հարկի տակ:



Քիչ թե շատ պարզաբանած լինելով Անկեղակոթի խորհրդաժողովի հանդամանքներն ու ընթացքը, այլև այդ պահին գրված

<sup>1</sup> Տե՛ս մեր «Հայ-ուսու օրինոսացիայի ծագման խնդիրը», հավելված, էջ 11—12, ծանոթություն:

<sup>2</sup> Տե՛ս Եռչն տեղում, էջ 33 և հա.:

<sup>3</sup> Ц 3 0 В, նույն տեղում № 27:

Թղթերի բովանդակությունը, ժամանակն ու տեղն է, որ անդրադառնանք վերջիններիս մեզ հասած խմբագրությունների արժանահավատությունն ինդրին:

Մեր տրամադրության տակ շիան առհասարակ XVII դարի Սիսիանի և հարևան մյուս մհայների քաղաքական կյանքը լուստրանող կողմնակի աղբյուրներ, և ստիպված ենք վերապատկերել Անկեղակոթի ժողովը՝ հենված բացառապես Օրիի իսկ ներկայացրած Թղթերի «ներքին քննության» վրա:

Կողմնակի աղբյուրներից անհայտ են Թղթերի տակ գրված միլիոնների անունները: Եղև՛լ են իրոք այդպիսիները, ե՞րբ են ապրել կամ կոնկրետ ս՛ր մշակներում կամ գյուղերում իշխել: Նախընթաց շարագրության ընթացքում մենք կարողացանք քիչ թե շատ ճշակ միայն դրանցից մի-երկուսի գոյությունը: Մյուսների նկատմամբ որեէ տեղեկություն գտնելու համար համառ մեր որոնումները ապարդյուն անցան: Բայց սրչափ անհայտ են XVII դարի վերջերին ապրած Սյունյաց մելիքների աչլ անուններ, շիա որեէ հիմք բացարկել կամ ժխտել Օրիի Թղթերում նշվածների պատմականությունը:

Քանիցս հարկադրված եղանք էական վերապահումներ անել Օրիի Թղթերում նշված այս կամ այն փաստի նկատմամբ, այնուամենայնիվ ընդհանուր կոնտուրներով Թղթերում վերապատկերած իրագրությունն ու արամագրությունները պատմական պիտի համարենք, որչափ դրանք ոչ միայն շեն հակասում նրա ժամանակաշրջանին վերաբերող ստույգ տվյալներին, այլև, ինչպես տեսանք, շատ դեպքերում համընկնում են ու համապատասխանում այլ աղբյուրներից քաղած մեր նյութերին: Մասամբ հենց դրանց արժանահավատությունը ստուգելու և հավաստելու համար է, որ հարկ համարեցինք կանգ առնել Հայաստանի պատմությանը դրանց ժամանակակից անցքերի ու մի շարք մանրամասնությունների վրա: Այլապես կոմաններ մի ուղևորի, որ ճանապարհորդում է անծանոթ երկրում տուսնց մարշրուտի կամ կողմնացույցի: Չենք հավանում ասել, թե կիրառելով պատմության կողմնացույցը կամ վերականգնելով մեզ հետաքրքրող մարշրուտը՝ հնարավոր է ընդգրկել Թղթերի վերլուծության հետ կապված բոլոր խնդիրները կամ հաղթահարել դրանց լուծման հետ կապված բոլոր գժվարությունները: Բոլոր պարագաներում անում ենք Օրիի անվան հետ կապված վավերագրերի քննական հետազոտության առաջին քայլափոխերը:

Անցողակի նշեցինք Օրիի թղթերում հանդիպող «Ղափանի աթոռանիստ Գանձասարի Փիլիպոս պատրիարքի» մասին<sup>1</sup>: Որ Օրիի ժամանակ Գանձասարը կարող էր մտցվել «Ղափանի» մեջ, մեր օրերին տարօրինակ երևացող այդ փաստի բացատրությունը ավելի ենք արդեն: Սակայն զբանով չի վերանում այն թերմուսանքը, որ առաջացնում է «Փիլիպոս պատրիարքի» անունը: Ենդիրն այն է, որ XVII դարի վերջերին այդ անունը կրող պատրիարք կամ կաթողիկոս չի եղել ոչ Գանձասարում, ոչ նրան հակաթոռ Երեց Մանկունքում: Պաշտոնական մի գրությունից մեկ ծանոթ են 1690-ական թվականներին Ազվանից երկրի եպիսկոպոսների անուններն անգամ: Սրանց մեջ ևս չկա Փիլիպոս անունով մեկը<sup>2</sup>: Եթե ենթադրենք, թե էջմիածնի աթոռի վրա Հակոբ Զուղայեցուն նախորդած Փիլիպոս Ազրակեցու անունը Օրին կարող էր շփոթած լինել Հակոբ Զուղայեցուն ժամանակակից Գանձասարի կամ Երեց Մանկանց կաթողիկոսներից մեկի՝ Սիմեոնի կամ Երեմիայի, անվան հետ, հասկանալի կդառնար, որ խմբագրելով Հայաստան ուղղած իր գրությունները Օրիից ստացած ավյալների համաձայն, նույն շփոթությունը կարող էր մտած լինել նաև կուրֆյուրստի թղթի մեջ<sup>3</sup>: Սակայն խընդիրը բարդանում է, երբ աչքի առաջ ենք առնում, որ «Փիլիպոս պատրիարքի» անունը հանդիպում է նաև 1699 թվականին մելիքների անունից հղված գրությունների մեջ: Եվ նկատենք, մելիքները չեն արձանագրում սոսկ այն փաստը, թե կուրֆյուրստի ստորագրությամբ համակ է ստացված «Ղափանի աթոռանիստ (sic) Գանձասարի Փիլիպոս պատրիարքի» հասցեով<sup>4</sup>: Դրանից անկախ, նրանք պատմում են այն հանդիպման մասին, որ իրենք իրր թե ունեցել են Գանձասարում նույն այդ... Փիլիպոս կաթողիկոսի հետ: «Մենք,— ասում են նրանք պապին ուղղած իրենց գրության մեջ,— Փիլիպոս պատրիարքի և նրան շրջապատող եպիսկոպոսների հետ նստեցինք և վիճարանություն բացինք ուղղափառ կրոնի հարցերի մասին»<sup>5</sup>:

Ենթադրենք մի պահ, թե մելիքների անունից պապին ու կուրֆյուրստին գրված թղթերը կազմող Մինաս վարդապետը որպես զբանակ Երեցից կարող էր խմբագրած շլեկներ կամ մոռացած լինել Գանձասարի կաթողիկոսի անունը: Այնուամենայնիվ զբանով ևս չի

<sup>1</sup> ՅՅՅՅ, նույն տեղում, ԱՅՅ 2 և 5:

<sup>2</sup> Տե՛ս «Արարատ», 1900, էջ 319 և հա.:

<sup>3</sup> Հմմտ. ՅՅՅՅ, նույն տեղում, ԱՅՅ 1 և 5:

<sup>4</sup> Նույն տեղում, ԱՅ 5:

<sup>5</sup> Նույն տեղում, ԱՅ 2:



վերանա ֓իլիպոս անվան հետ կապված գծվարությունը, մանա-  
վանդ եթև քնդունենը, թև մեկիքների ստորագրությունը կրող թղթերը  
գրվել էին հենց Անկեղակոթում, Գանձասարի կաթողիկոսի հետ  
ունեցած հանդիպումից հետո: Դրանից քիչ բան կարող է շահել  
նաև Գանձասարում տեղի ունեցած այդ հանդիպման մասին Օրթի  
թեղագրած զեկուցման արժանահավատությունը: Բոլոր պարագա-  
ներում նման մի անվան տակալությունը մեզ հարկադրում է մտա-  
ցածին համարել նաև 1699 թվականին Օրթի և մեկիքների Գանձա-  
սար այցելելու հետ կապված ամբողջ պատմությունը: Նույն կրա-  
կացության են բերում մեզ նաև Գանձասարի հանդիպման մյուս  
մանրամասնությունները:

Հայրենիքից ելքուղա վերագտնալուց հետո կուրֆյուրստին  
ներկայացրած զեկուցադրում շարադրելով կաթողիկ գիրքերից  
Գանձասարում ունեցած իր գովանարանական վեճը՝ Օրին կամե-  
նում էր ցույց տալ, թև Գանձասարի կաթողիկոսը գաղափար շու-  
ներ Հռոմի մասին և թև նա ի մի էր շփոթում կալվթնականությունը,  
լյութերականությունը և կաթողիկությունը՝ լիակատար անտեղյա-  
կություն մասնելով գովանարանական խնդիրների նկատմամբ<sup>1</sup>:

Ուրքա՞ն վստահելի է այս հաղորդումը: Գանձասարի եկեղե-  
ցական իրավասության տակ էին գտնվում փաստապես Շամախին,  
ուր այդ պահին եռանդուն աշխատանք էին տանում կղուխները,  
ջանալով տարածել իրենց ազդեցությունը նաև Աղվանից եկեղեցու  
վրա: Կատինագովաններ կային նաև Աղվանից կաթողիկոսության  
մեջ մտնող Գանձակում: XVIII դարի սկզբներին այդ բաղաքում  
երկու եկեղեցի ունեին լատին կրոնավորները՝ կղուխները և կա-  
պուչինյանները<sup>2</sup>: Արդևն իսկ 1695 թվականին Երից Մանկունքի Սի-  
մոն կաթողիկոսը գիմում էր ուղղում Ինոկենասիոս XII պապին,  
խնդրելով միջնորդել իր օգտին շահի առաջ և պաշտպանել իր իրա-  
վունքները Գանձասարի երևիա կաթողիկոսի դեմ<sup>3</sup>: Կաթողիկ աղ-  
բյուրների հավասարացումով 1695 թվականին հնագանդության և  
գովանության լուսլի գրեց պապին նաև Շամախու հայ վիճակավոր  
Վլատ կաթողիկոսը<sup>4</sup>: «Սիմոն կաթողիկոսը և Եսայի կաթողիկո-  
սը, — գրում էր 1702 թվականի մայիսի 18-ին Շամախում սպրող  
մի կղուխ, — մեզ շատ են սիրում և արգահատանքով չեն նայում

<sup>1</sup> Հմմտ. Յ 30 Յ, № 11, էջ 54:

<sup>2</sup> Հ. Ոսկյան, Եղիա Մուշեղյան, նույն տեղում, էջ 9:

<sup>3</sup> Ալիշան, Կամենից, էջ 146:

<sup>4</sup> Տաշյան, Յուցակ հայերեն ձեռագրաց, էջ 680:

կաթոլիկ կրոնի վրա. նրանցից մեկը նույնիսկ անձնապես կաթոլիկ է, բայց ծածկում է այդ հրեաձևերի և փարիսեյցիների ահից»<sup>1</sup>: Կրուշինսկու ասելով, Նասայի կաթողիկոսը, կամենալով տապալել իրեն հակաթոռ Ներսեսին, պիտի որ հպատակություն թուղթ ուղարկած լինի Կղեմես XI պապին և ինչ-որ հարցում օժանդակություն խնդրած Լեհաստանի Ավգուստ II կաթոլիկ թագավորից<sup>2</sup>: Պարզ է այս ամենից, որ ինչքան նեղ եղած լիներ դանձասարցիների մասհորիզոնը և ինչքան էլ հեռու լինեին կաթոլիկությունից Աղվանից կաթողիկոսները, նրանք միանգամայն կտրված չէին կաթոլիկ աշխարհից և այնպես անգեղ զավանթանական տարածաշրջաններին, ինչպես այդ նշվում է քննարկվող թղթերի մեջ:

Դեղերած լինելով հայրենիքում ընդամենը միայն երկու շաբաթ, Օրին անկարող պիտի լիներ կաղմակերպել երկու խորհրդաժողով, մեկը Անկեղակոթում, մյուսը Գանձասարում: Անկեղակոթի և Գանձասարի անմիջական շփումն այս ժամանակաշրջանում քիչ հավանական է: Սյունյաց մեկիքները ենթարկված չէին Աղվանից կաթողիկոսներին և այս վերջինները իրավասություն չունեին նրանց եկեղեցական գործերում: Բ՛վելով XVII—XVIII դարերում Աղվանից կաթողիկոսության մեջ մանուշ վայրերը, Սիմեոն Երևանցին նշում է Գանձակը, Շամախին, Շիրվանը, Բաքուն, Գերբենարը, Նուխիճ, Խաչենի երկիրը և «բոլոր տունն Աղվանից», այսինքն՝ Ղարաբաղի հինգ մելիքությունները<sup>3</sup>: Ինչպես եկեղեցական-վարչական իր իրավասություններով Աղվանից կաթողիկոսությունն էր անկախ էջմիածնի կաթողիկոսներից, այնպես նաև Ղարաբաղի մելիքություններն էին անկախ Նախիջևանի կամ Երևանի խաներից: Ղարաբաղի մելիքությունները ենթարկված էին Գանջայում նստող բեկյարբեկներին:

Իրանական և ադրբեջանական ադրյուրներից հայտնի է XVI դարի կեսերից մինչև 1664 թվականը Ջիադլու այժմահին պատկանած Ղարաբաղի ժառանգական բեկյարբեկների ցուցակը: Հայտնի է նաև, որ XVII դարի կեսերին իշխած զաջար Մուրթուզա-դուլի խանից հետո խաների փառալուսով նրա ժառանգները բեկյարբեկություն էին անում մինչև 1737 թվականը, երբ Նազիրը, խլելով զաջարների

<sup>1</sup> Письма и донесения иезуитов о России, конца XVII и начала XVIII века, СПб. 1901. 5-й том., նույն տեղում, էջ 291:

<sup>2</sup> Krusinski, Prodrum ad Tragicam belli Persici historiam, Leopoli. 1740, էջ 174:

<sup>3</sup> Սիմեոն Կաթողիկոս, Ջամբու, էջ 51:

ձեռքից Ղարաբաղը, թողեց նրանց միայն Գանջալյի շրջանում իշխելու իրավունքը<sup>1</sup>: Աղվանից Պեարոս կաթողիկոսի ժամանակվա Փիփ գյուղի մի արձանագրության մեջ կարդում ենք. «յիշխանութեան Մուրթուզա զուլի խանի» անունը<sup>2</sup>: Սա Գանջալում նստող կաթնթի խանն էր, որի իշխանությունը տարածվում էր նաև Ղարաբաղի վրա: Հայ անթվակիր մի աղբյուրից տեղեկանում ենք Մուրթուզա-զուլի խանի հաջորդների՝ Յուզուրլու խանի (1663—1677), Աբաս-զուլի խանի (1677—1694) և Քալբալի խանի (1694—1705) անունները<sup>3</sup>: 1681 թվականին Նդիշե առաքելս վանքում մի գրիչ հիշատակում է՝ «Իշխող ամենայն գաւառացս՝ որք Ղարաբաղ ասի՝ Աբաս-զուլի խանն, նստողն Գանջս քաղաքի՝ հրամանաւ վերոյ գրեցեալ (շահ՝ Սուլեյման) արբային»<sup>4</sup>:

Ղարաբաղի խանություն մասին խոսում են նաև XVII դարի 80—90-ական թվականների ուղեգրերից ոմանք<sup>5</sup>: Պիտի կարծել, որ խոսքն ամենուրեք այն բեկլարբեկության մասին է, որ հաստատվել էր XVI դարի կեսին, շահ Ռահմալի ժամանակ, և որին մի պահ ենթարկվում էր նաև արևելյան Վրաստանը: Ըստ երևույթին, վարչական այդ միավորին էին ենթարկվում նաև Ղարաբաղի տափարակարենակ «Օթուզիբի» կոչված ցեղախմբի ժառանգական հաբիմները՝ Ջիվանշիր քոչվոր ցեղից, և «իգիրմիդորդ» կոչված ցեղախմբերի հաբիմները, որոնք նստում էին Բարդալում<sup>6</sup>: Հավանորեն նույն հաբիմներից էին Ղարաբաղում հիշվող սուլթանները, որոնց մասին խոսք կա դեռ XV դարի կեսերին<sup>7</sup>:

Շահ Սուլեյմանի, Պեարոս կաթողիկոսի և Վարանդալի մեկիք Բաղու օրոք հիշվում է սրանց ժամանակակից «պարոնի»՝ Միրզա Ղուլի բեկի անունը<sup>8</sup>, որ ցույց է տալիս, թե խանական իշխանության ցանցը տարածվում էր Ղարաբաղի հայ մեկիքների վրա տեղական մուսուլման վասալների միջոցով:

Հակառակ նախիջևանի խանության մեջ ստեղծված իրադրություն՝ Ղարաբաղում բիշ թե շատ կայուն վիճակ ունեին ոչ միայն տե-

<sup>1</sup> И. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв., I, էջ 250:

<sup>2</sup> Կոստանյան, Վիճական տարեգիր, էջ 191:

<sup>3</sup> Տես՝ Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 713, էջ 137ր—138ր:

<sup>4</sup> Նույն տեղում, ձեռ. № 8125, էջ 281ր:

<sup>5</sup> Kaempfer, Նույն տեղում, էջ 138, և հա., Gemelli Careri, Voyage autour du monde, Թարգմ. Խաչերենից, 1719, II, էջ 194 և հա.:

<sup>6</sup> И. П. Петрушевский, Очерки, I, էջ 248:

<sup>7</sup> Հոփսեփյան, Խաղրակյանք կամ Պոսոյանք, III, էջ 148:

<sup>8</sup> Մ. Վ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 106:

զական խաների, ալլե մելիքների և եկեղեցական վիճակները զլիսավորող «սյարտնակերի» ժառանգական իրավունքները:

Այս շի նշանակում, թե Գանձասարի կաթողիկոսները կամ նրանց հետ կապված «խումսայի մելիքությունները» ազատ էին իրանական խաների ու հաքիմների ճնշումներից և հարստահարումներից: Այն հանդամանքը, որ վրաց ասպտամբուլյան ժամանակ Ղարաբաղի հայաշատ մհալները նույնպես ենթարկված էին իրանական զորախմբերի վայրագություններին՝ ցույց է տալիս, որ նրանք այս կամ այն շափով կապ էին ունեցել վրացական ասպտամբուլյան հետ:

Գանձասարի և վրաստանի քաղաքական համագործակցության գաղափարը ցայտուն արտահայտություն է դտնում այն փաստի մեջ, որ Շահ-Աեֆիի ժամանակ Գանձասարի կաթողիկոսը Քարթլիի և Կախեթի Ռեյմուրազ թագավորին (որին իրանցիները համարում էին Մոսկովյան պետության հավատարիմ վասալ) առաջարկում էր, օգտվելով իրանա-թուրքական պատերազմից, 40-հազարանոց բանակով հարձակվելով Ռավրիզի վրա, գրավել ողջ Ադրբեջանը: Բավական է յոթ օրվա արշավանք, ասում էր նա, որպեսզի վրացիներն իրենց ձեռքը ձգեն թե՛ այդ երկիրը և թե՛ յոթ տարվա նրա եկամուտը: Իր հերթին նա խոստանում էր օգնության դալ թագավորին իրեն ենթակա մելիքներով («je vous y aiderai avec mes vassaux»): Գրում էր, որ հայերը Ռեյմուրազին պիտի ճանաչեն գերագույն միապետ և ամենալիրարար ծառայեն նրան որպես բրիտանիկություն վրկչի<sup>1</sup>: 1631 թվականին, օգտվելով թուրք-իրանական թշնամանքից, Ռեյմուրազը Գանձասարի Դավութ խանի հետ միացած պատերազմ սկսեց Իրանի դեմ և կարճ ժամանակով գրավեց Գանջան, Ղարաբաղն ու Երևանը<sup>2</sup>:

Այս պատերազմի ժամանակ վրաց թագավորի կողմը պիտի եղած լինեն Ղարաբաղի հայ ֆեոդալները: Հին մի ավետարանի էջերում 1633 թվականին դրվել են հետևյալ տողերը. «Դարձեալ յիշեցէք... սղատորգիքն պարոն Վասակն, պարոն՝ Ասլանն, պարոն Ասլամազն, որ գերի էր անկեալ սուրբ Աւետարանս ի ձեռն այլազգաց, այս սղատորգիքն փնացին այլազգաց ձեռաց սղատեցին ս. Աւետարանն... Չորս գլուխ Աւետարանն... բարեխաւս լինին ի Քրիստոս... զպարոն Վասակ և զհայրն պարոն Էլումն, զպարոն Ասլան և զհայրն պարոն Ղարայխան, և պարոն Զուրապն և զհայրն/ իւր Այսպէկն, և

<sup>1</sup> Brosset, Hist. de la George, t. II, liv. I, էջ 64:

<sup>2</sup> Մանր ժամանակագրություններ, 1, 145 և հտ. II, 272 և 519:

զպարոն Քուրդ բէկն և /զ/հայրին/ իւր պարոն Ուլուխանն, և զպարոն Ասլալմազն և զհայրին/ իւր պարոն Ամիրն, որ բազում պատերազմեցաք և ազատեցաք այլազգաց ձեռէ. յիշեցէք ի Քրիստոս. և Աստուած ողորմի ասացէք նոցա: Թվին ՌՁԲ (1633), այն տարին, որ Թամուրազն Գանջայ յաւերկաց»<sup>1</sup>:

Այստեղ հիշատակված ազատորդիները հավանորեն պատկանում էին Ղարաբաղի հայ մելիքական տոհմերին: Զինակցելով Թեյմուրազ թագավորին, նրա հետ մեկտեղ նրանք ոտքի էին ելել Իրանի տիրապետության դեմ: Գանջայի և Ղարաբաղի իրանական խանությունների դեմ իր ավերիչ արշավանքը Թեյմուրազը ձեռնարկել էր օժանդակ զորք ստանալով Ռուսաստանից<sup>2</sup>: Ակներե է, որ Թեյմուրազի հայազգի զաշնակիցները հանդես էին գալիս ոչ միայն վրաց թագավորին, այլև միջնորդապես նրան սատարող ռուսներին բնդառաջողների դերում: Հիշեցնենք, որ քաղաքական նման իրադրությունն առկա էր նաև այս անցքերից մի քանի տասնամյակներ անց, Գուրգին խանի գլխավորած վրաց սպստամբություն ժամանակ: Դժբախտաբար մեզ անհայտ են մնում Թեյմուրազին զինակցող Գավութ խանի, Ղարաբաղի հայ այս «պարոնների» ու «ազատորդիների» շարժման մանրամասնությունները:

XVII դարի վերջին, վրաց սպստամբության պարտությունից հետո, Աղվանից մելիքներն ու կաթողիկոսները միառժամանակ հարկադրված եղան հաշտվողական ուղեգիծ բռնել Իրանի հանդեպ: Մեզ հասել է Շահ Սուլեյմանի հիշրիի 1104 թվականի (մ. թ. 1692 թվականի) հրամանագիրը, որով նա իր զինվորական հազարատկտին — հավանորեն արդեն նշված Հաջի Ալիխանին — պատվիրում է բռնություններից ու հարստահարություններից պաշտպանել իրենց հարկ ու հասույթով ու բերքի արդյունքով սրպես սոճիկ (=մուլք) հայոց եկեղեցուն պատկաճող Դիզակի Հաքարի գյուղի ձմեռաճոցները: Շամլուի քոչվորները, դրավելով այդ գյուղերի ինչ-ինչ հերկատեղիներն ու ագարակները, նեղում էին գյուղացիներին, պատճառ դառնալով բնակչության ցրման և պետական եկամուտների նվազման: Շահը հրամայում է Ղարաբաղի բեկլարբեկին և Կախեթի վալիին (իմա՝ վրաց թագավորին) վերահասու լինել ու վերջ տալ նաև այս դրությունը<sup>3</sup>: 1699 թվականին շահ Սուլթան Հուսեյինը

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 6367, էջ 271 ր:

<sup>2</sup> Бердзенишвили и др, նույն տեղում, էջ 367:

<sup>3</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարանի արխիվ, թղթաղանակ № 240—241, գավերագիր № 108:

Գանձասարի կաթողիկոսի անունով ավելց նոր ռազամ, որով հրամայում էր՝ թույլ չտալ, որ «ի պատճառս հաւատոյ» և ընդդեմ օրինաց խախտվեն Գանջալի, Ղարաբաղի, Զարդիբիլի և Շամախու (այսինքն՝ Աղվանից կաթողիկոսներին ենթակա հայաբնակ դավառներին) հայ քաղանթարներին, հարկահաններին, մելիքներին, յուզբաշիններին և ուսյաթներին պատկանող մուլքերի իրավունքը և արտոնել նրանց կառավարել ըստ հայկական կարգի, օրենքների և ձևերի<sup>1</sup>։

Այս ամենից հետո կարծում ենք պատահական չէ, որ Անկեղակոթի խորհրդաժողովին մեանակցած մելիքների շարքում չենք գրանում Ղարաբաղի մելիքներից որևէ մեկի անունը։ Պիտլցյան իր հանձնարարություններով Օրին ոչ միայն չէր կարող արձագանք գտնել Գանձասարի կաթողիկոսի կամ Ղարաբաղի մելիքների մոտ, այլև, ինչպես ակներև է մեր գիտողություններից, նա 1699 թվականին չէր էլ եղել Գանձասարում և չէր էլ վարել այդտեղ բանակցություններ։ Նշանակում է, փաստապես տեղի չէր ունեցել նաև դավանարանական այն վեճը, որի մասին Օրին մանրամասնորեն հարգրելու էր կուրֆյուրստին ներկայացրած դեկուցագրում։

Անկեղակոթից Դյուսելդորֆ վերադառնալուց հետո կուրֆյուրստին ներկայացրած իր դեկուցագրի մեջ՝ Օրին նշում է այն նախադրուշությունները, որոնց դիմած է եղել ինքը՝ «անհավատների» կասկածները վանելու համար։ Երկարորեն պատմում է առանձին գիպվածներ և կանոց է առնում իրեն հանդիպած շարակրուձյունների վրա։ Թվարկում է Թուրքիայում և Իրանում իր կողմից գործադրած ծպտումների և վերազգեստավորումների դեպքեր։ Տեղեկանում ենք, որ կոնսպիրացիայի համար շատ անգամ խուսափել է նույնիսկ հացերից։ Հայանում է, որ թուրքական Ռումինիայում հանգիպել է հորեղբոր օրդիններից երկուսին, սակայն չի բացահայտել նրանց իր ինքնուձյունը։ Հասնելով Սյունիք՝ Նյուրբնկալվել է հարսպատ քրոջ հարկի տակ և անգամ գիշերել հայրական տանը, եղբայրների մոտ, հարցուփորձ արել ու լսել յուրաջինների գլխով անցած ախուր սբամուձյունները, բայց դարձյալ ծածկել իր անձնավորությունը։ Պատմում է անգամ, որ հարազատների հարցումներին պատասխանելով հայտնել է, թե հետո Խոանկստանում հան-

<sup>1</sup> Ձ ա լ ա լ յ ա ն, նույն տեղում, 11, էջ 491: Այստեղ հիշված վավերագրի բնագիրը պահված է Մատենադարանի արխիվի 240—241 թղթապանակում, 183 համարի ներքո։

<sup>2</sup> Յ 3 0 Ե, նույն տեղում, № 11:

գիտել է «Իսրայել ազգանունով» նրանց եղբորը, որից այնքան տարիներ լուր ու գիր չէին առել նրանք, բայց ցույց չի տվել, թե հենց ինքն է օտարութեան մեջ կորած այդ եղբայրը: Հետագայում, մուսաստանում, հայտնում էր, թե մի գիշեր անց է կացրել հայրական տանը՝ մոր մոտ, ապա երկու գիշեր՝ Վարդան եղբոր մոտ, դարձյալ տռանց վար իշեցնելու նրանց առաջ իր գիմակը<sup>1</sup>: Ի վերջո, պատմում է, թե հետանալով եղբոր անից, անկողնում թողել է մի ժամացույց և թղթի մեջ փաթաթած ինչ որ մեղալիներ: Միայն Սիսիանի Անկեղակոթ գյուղում վազածանոթ մելիք Սաֆրազի մոտ է, որ բացվել է ի վերջո և սկսել իր բանավարությունները հարևան, մհալները գլխավորող մելիքների հետ<sup>2</sup>:

Իհարկե, առանց սրտ չստատակի չէր ծանրանում Օրին անհավատալի թվացող կամ հնարած այս պատմությունների վրա: Այս ամենը սիսի ազգացույցի նրա անհավատելի և դադարեցուցիչ լինելը, ճարտարամտություն և հնարագիտությունը, անվերապահ նրա նվիրվածությունը սչ միայն կուրֆյուրստին, այլև Հայաստանի ազատագրման գործին և պապավարին: «Նս, — ասում էր Օրին կուրֆյուրստին, — ձեռնարկեյի իմ ուղեգնացությունն այնքան համարձակ և սրտապնդված, ասես թե հենց նոր էի գուրս եկել ձեր կուրֆյուրստական տանձնասենյակից: Ամեն անգամ մտաբերելով Ձեր սղորմածությունը՝ կարծես վերգանում էի ամուր այն կայանը, որ արևմտյան էր ներշնչում ինձ»<sup>3</sup>:

Իր մասին Օրին ներկայացրեց կուրֆյուրստին նաև մելիքների գրավոր հանձնարարականը, այն լիազորագիրը, որի տակ գրված էին Անկեղակոթում հավաքված մելիքների կնիքներն և ստորագրությունները:

Մեր ձեռքը հասել է միայն այդ լիազորագրի լատիներեն թարգմանությունը: Անկեղակոթ գյուղավանը կոչված է այդտեղ քաղաք («urbs»), իսկ մելիքները նշված սրպես Հայաստանի «իշխաններ և պաշտոնակալներ» («principis et magistratus»): Մրանց կողմից Օրին հանձնարարված է սրպես Պոսչյան սերնդի ծնունդ, սրպես զրիստոնեություն համար նահատակված մելիքների ժառանգ, սրպես արժանավորագույն մի անձ, որին մելիքները նշանակում են իրենց ազատություն համար ձեռնարկված բանակցությունների

<sup>1</sup> Յ Յ Օ Յ. Ն. յն տեղում, № 44:

<sup>2</sup> Նույն տեղում, № 11:

<sup>3</sup> Նույն տեղում:

«գլուխ» («caput»), միաժամանակ տալով նրա ձեռքը ճերմակ թուղթ («carte blanche») եվրոպական իշխանների հետ «ուխտագրության գաշինք կնքելու համար»<sup>1</sup>:

Եղև է Լեթագրություն, թե Անկեղակոթի խորհրդաժողովի անունից Եվրոպայում Օրիի ներկայացրած այս և մյուս օտարալեզու թղթերը չէին կարող գրված լինել առանց միախոններների աջակցության և որ համենայն դեպս այդ գրությունները չեն գրվել Այունյաց լեռնաշխարհի հետընկած մի վայրում՝ Անկեղակոթում: Բայց Անկեղակոթի խորհրդաժողովի անունից կազմված բուն թղթերը օտարալեզու այն թարգմանությունները չեն, որոնք մտել են Եղևանի ժողովածուի մեջ, այլ գրանց հայերեն քնազերքը, որոնց մեծ մասը պժբախտաբար պահված կամ հայտնագործված չէ, ուստի և Եղևանի հրատարակած վավերագրերի շարքում տեղ գտնել կարող չէր: Անշուշտ, հայերեն այդ րնագրերը կարող էին առանց միախոնների օգնության իսկ գրված լինել նաև Անկեղակոթում: Դրանց մեջ ամփոփված մտքերի պիտավոր թելագրողը կարող էր եղած լինել հենց ինքը՝ Օրին, իսկ գրողը՝ Մինաս վարդապետը: Հնարավոր է, որ արտասահմանում պատրաստված լինեին ոչ թե սրանց կազմած սկզբնագրերը, այլ գրանց օտարալեզու քարգմանարյունները: Բոլոր պարագաներում, ինչպես պիտի տեսնենք, արտասահմանում է կատարվել Անկեղակոթի մելիքների անունից կազմված հայերեն վավերագրերից մեկի վերախմբագրումը և գրան համապատասխանող մեր ձեռքը հասած լատիներեն խմբագրությունը:

Առանց հեռագնաց Լեթագրությունների հեանից ընկնելու, հնարավոր է միառմի ճշտել Անկեղակոթի խորհրդաժողովի անունից գրեթե բոլոր մեզ հայտնի վավերագրերի թարգմանության հանգամանքները:

Հուռում հանգիպած լինելով Օրիի հետ, լատինահայ մի եկեղեցական, մեծավաստակ բառարանագրող Ստ. Ռոշքան, իր ձեռագիր տարեգրության մեջ 1700 թվականի ներքո ի միջի այլոց նշում էր. «Խարայել Օրին, Պերոշ իշխանի որդին, ընդ իւր բերեալ զՄինաս վարդապետան Խարբերդցի, եկն ի Հոսոմ, և մատոյց Իննօչնետիոս ԺԲ-ին զթուղթն ի տասն Մելիքաց Հայոց գրեալն Ընկեղակոթ, յամի 1699, ապրիլի 19, զորոց անունսն վասն պատճառի ուրուք լռեմ: Զթուղթն ևս ինքն թարգմանեցի, որով զհնազանդութիւն տալով

<sup>1</sup> Յ 3 0 Ե, նույն տեղում, Ա.Ն 3, 5, հմտ., Ա.Ն 6, 11 և 97:



սուրբ Աթոռոյն Հումայ, խնդրէին օգնութիւն ազատելոյ ի լծոյն անհաւատից: Ուներ և զայլ թուղթս առ կայսր Լեոբուտոս, առ բալատին էլեբորն և առ ձարն Մոսկովաց»<sup>1</sup>: Այս վկայութեանից ակներև է, որ 1700 թվականին Ռոշքային հայտնի էին Անկեղակոթի մելիքների անուանից զրված հայերէն գրութեաները, որոնցից մեկը ինքն իսկ անձամբ թարգմանել էր պապի համար: Ինչպես պիտի տեսնենք, Ռոշքան հավաստում էր այս նաև մի այլ ասիթով՝ ավելացնելով, որ Օրին Հում էր բերել իր հետ նաև մելիքներից ստացած մի լիազորագիր, որի թարգմանիչը ինքն է և զի զարձայլ<sup>2</sup>:

Հայտնի են նաև մելիքների անուանից կուրֆյուրստին զրված թղթի մեկ հասած ֆրանսերեն թարգմանութեան հանգամանքները: Բավարիայի պետական արխիվում պահված գործից պարզվում է, որ կուրֆյուրստին հասցեագրված այդ թղթի բնագիրը Մինաս վարդապետի և Օրին օգնութեամբ ֆրանսերեն թարգմանել է և զուգորդաբար Պոտյեն<sup>3</sup>, Ինչ վերաբերում է գերմանական կայսրին ուղղված թղթին՝ տակավին հայտնագործված չեն ոչ զրա հայերեն բնագիրը, ոչ էլ որևէ թարգմանությունը<sup>4</sup>:

Ավելի բարդ է մելիքների անուանից ցարին ուղղված հայերեն և լատիներեն այն գրութեաների պատմությունը, որոնք զետեղված են Եվլանի ժողովածվի № № 6 և 7-ի ներքո:

Ինչպես գիտեցինք, ցարին զիմելու անհրաժեշտությունը զգայվել էր տակավին Անկեղակոթի խորհրդաժողովի ժամանակ: Ռոշքայի վկայութեանից երևաց, որ այդպիսի մի զիմում կար հիրավի Օրին ձեռքին տակավին 1700 թվականին: Այդ վկայութեան վրա հիմնված, ժամանակին առարկում էինք այն զիտողութեան գեմ, թե Օրին կողմից ցարին ներկայացված թուղթը զրվել էր միայն նրա Մոսկվա ժամանելուց հետո: «Պետրոս Մեծին ուղղած թուղթը գոյություն ունեւր նախան հայ պատվիրակները Մոսկվա կանցնելին»,

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՄՈՒ Գիտ. ակադ. Պատմութեան ինստիտուտի արխիվ, Լեոյի թղթերը, № 424, էջ 24, հմտ. նաև «Հանդես ամսօրյա», 1898, էջ 26 և Յ 30 B. Введенне, նույն տեղում. էջ LXXVI և հա:

<sup>2</sup> Տե՛ս մեր Israel Orv, Ahhang. № 17.

<sup>3</sup> Տե՛ս նախկին Kgl. Bayr. Geheimes staatsarchiv in München, Kasten-Blau, 45/6, թերթ 26:

<sup>4</sup> 1912 թվականին վիեննայի նախկին կայսերական արխիվին մեր արած զրաժուր հարցումի պատասխանից տեղեկացանք, թե որևէ գործ չկա վիեննայի արխիվում: Չնայած զրան, թվում է մեզ, որ հատուկ հետախուզութեանը կարող է հայտնագործել այդ արխիվում նոր նյութեր ինչպես Օրին, այնպես և նրա նախորդների մասին:

դրել էինք մենք<sup>1</sup>։ Մակաչն աշտակ անհրաժեշտ է մտցնել մի հշտում։ Ռուսացի վիայությունը, որի վրա հենվում էինք, ապացուցում է միայն այն, որ նախան Մասկովա մեկնելը Օրիի ձեռքիս կար հիբավի մեկիքների անունից ցարին ուղղած ինչ-որ մի գրույթուն։ Բայց այդ վիայությունից չի հնաեում, թե այդ գրությունը մեկիքների այն դիմումն էր հենց, որը 1701 թվականին Օրին ներկայացրեց ցարին և որը հետագայում մասով Եղյանի հրատարակության մեջ<sup>2</sup>։

Հիբավի, վերջինիս բովանդակությունը հակառում է այն իրագրությունը, որ առկա էր Անկեղակոթի խորհրդածոգովի Ժամանակ։ Անկեղակոթի խորհրդածոգոելի Ժամանակ մեկիքները հույսեր էին կապում արևմտակիրոսական պետությունների հետ. նրանք Պֆայցի կուրֆյուրստին էին ուղղում որպես Հայաստանի ապագա ազատարարին և նրան հրամցնում Հայաստանի թագավորության գահը։ Մակաչն այլ բան է ասում մեզ Անկեղակոթի մեկիքների անունից ցարին ուղղված այս գրությունը։ Այդ գրության մեջ, դիմելով ցարին, մեկիքները գրում են թե՛ «չունինք այլուսակէլ ումուտ ունիք ի վերուստ դաստուած և յերկրի վրեզ»։ Այստեղ զարն է հենց, որից հայ մեկիքները սպասում են իրենց ազատությունը։ «Ենդրեմք ի քո ինքնակալութենէդ, — կարգում ենք այդ գրության բնագրում, — որ ձրդես սէր այս բանիս վրա և լինիս պարծանք ազգիս մերոյ, որ մենք վաղեմէ ունեաք ումուտ մեր սուրբ գրոցն և նախնեացն որ բեզանոց պիտի լինի մեզ իմաստ (= օգնություն), աշխարհի և ամենայն քրիստոնէից հաւատոցն արձակութիւն. մինչև այսօր սնէսք կարծիք և ումուտ»<sup>3</sup>։ Ակնհերև է, որ գրության այս տողերը և, ինչպես պիտի տեսնենք հետագայում, նաև այդ գրությունն ամբողջովին չեն հանդավորվում այն տրամադրությունների հետ, որոնք, Օրիի հարակից թղթերից դատելով, իշխում էին Անկեղակոթում։ Մեկիքների թղթում նշված «սուրբ գրոց և նախնեաց ումուտը» փաստապես հայ ազատագրական լեզենդի նոր մի վարիանտ էր, որ անհրաժեշտ էր գառնալու միայն 1700 թվականից հետո, երբ. Օրին, ինչպես պիտի տեսնենք, լրելով հայ քաղաքական ակնկալությունների կողմնորոշման հին, արևմտակիրոսական ուղիները, վճռականապես դիմաշրջվեց զեպի Ռուսաստան։ Մեկիքների անունից կազմված նոր մի գրություն էր այդ, որ անհրաժեշտ էր դարձել 1700 թվականին փոխված իրագրության հանդամանքներում։ Նոր

<sup>1</sup> Տե՛ս մեր Հայ-ուստ օրիննապիտի ծագման խնդիրը, էջ 39։

<sup>2</sup> Հմմտ. Չ. Յ. Յ. նույն տեղում, № 6 և 7։

<sup>3</sup> Նույն տեղում, № 6, էջ 18 և հտ.։

զրույթունը անդրադարձնում էր իր մեջ ոչ թե Անկեղակոթի խորհրդաժողովի, այլ Օրիի 1700 թվականին կատարած քաղաքական շրջադարձի հեռանկարն ու գրա անհրաժեշտության զազափարարանական հիմնավորումը: Այդ ակներև է նույնիսկ ցարին ուղղված թղթի (իմա՝ Եղյանի № 6 և 7-ի) բովանդակության ուշադիր քննությունից: Մինչդեռ ընդհակառակը, զրանից առաջ, ինչպես ակներև է, Անկեղակոթի խորհրդաժողովի անունից Օրիի թելադրած մյուս թղթերից իշխում էր հայ ազառագրական մտքի արագիցիտն այն կոպմնորոշումը, որ նույն այդ պահին ցայտուն արտահայտություն էր գտնում նաև Բրեկնների կամ Կիրակոս գրչի վկայությունների մեջ:

Ակնբախ այս հակասությունից անխուսափելի է գառնում այն եզրակացությունը, որ խորհրդաժողովի անունից ցարին ուղղված և մեր ձեռքը հասած հայերեն գրությունը<sup>1</sup> Անկեղակոթում 1699 թվականին կազմված այն թուղթը չէ, որ 1700 թվականին Համում ակտեղ էր Ռոշբան, այլ դրա նոր մի խմբագրույթյունը, որ անհրաժեշտ էր դարձել 1700 թ. վերջերին կամ 1701 թ. սկզբներին վիեննայում՝ Օրիի Մոսկվա մեկնելու և ցարի կառավարության հետ բանակցություններ սկսելու կապակցությամբ:

Հիբավի: Օրիի 1699 թվականին կազմված մյուս թղթերի մեջ սուս ցարը ախաղոսավորված է «մեծ դուքս», մինչդեռ ցարի անունով մեկ հասած թուղթը (իմա՝ Եղյանի № 6-ը) պահպանել է ցարի լիակատար ու ճիշտ այն ախաղոսավորումը, որը հանդիպում ենք նաև Օրիի հետագա գրությունների մեջ: Յարին ուղղած հայերեն և լատիներեն օրինակների ախաղոսավորումների համեմատությունից պարզվում է միաժամանակ, որ ոչ թե լատիներեն օրինակն է թարգմանված հայերենից (ինչպես պիտի լիներ, եթե վերջինս գրված լիներ Անկեղակոթում), այլ հայերեն օրինակը լատիներենից: Այսպես, լատիներեն ախաղոսավորման մեջ հանդիպող «Alba Russia»-ին հայերենում համապատասխանում է ոչ թե «Բելլուուսիա» կամ «Ճերմակ Ռուսաստան», այլ «Ալպն Ուուսի», որ լատիներեն բնույթի ազդեցության նշան է հարկավ: Ակներև է, որ լատիներենից հայերեն թարգմանելիս օգնության է եկել նաև ֆրանսերենը: Այսպես, գրության հայերենը մի շարք դեպքերում առանց թարգմանության պահպանել է ֆրանսերեն du և de մասնիկների հետքը: Ուշագրավ է նաև, որ լատիներեն cesar բառի փոխարեն հանդիպում ենք ֆրանսերեն tsar ձևը: XVII դարում Սիսիանի Անկեղակոթում, պիտի

<sup>1</sup> Տե՛ս Յ 3 0 8, նույն տեղում, № 6:

Այս գիտողութուններից հետևում է ընդհանուր այն կղբակա-  
ցությունը, որ մեր ձեռքը հասած 1699 թվականի ապրիլի 29 թվա-  
կիր ցարին ուղղված թղթերը ևս Անկեղակոթում կազմված հայերեն  
սկզբնագիրը կամ արտասահմանում գրանից կատարված լատինե-  
րեն թարգմանությունը չեն: Յարի անունով Անկեղակոթում գրված և  
Ռոշքայի տեսած հայերեն թուղթը կամ գրանից կատարված որևէ  
թարգմանություն չեն հասել մեզ: Այն, ինչ հասել է մեզ՝ դա Ան-  
կեղակոթի խորհրդածոյովից հետո քաղաքական փոխված իրա-  
գրության մեջ ցարի անունով արտասահմանում կազմված լատի-  
ներեն մի սկզբնագիր է, և գրան համապատասխանող հայերեն  
խմբագրությունը՝ գրված մեկիքների կնիքները կրող քարթ բլանշի  
վրա:

Հավանական է, որ ցարին ուղղված գիմումի մեր ձեռքը հասած  
լատիներեն բնագիրը և գրա հայերեն թարգմանությունը կատար-  
վել էր դեռ 1700 թվականի վերջերին կամ 1701 թվականի սկզբնե-  
րին Վիեննայում, ուր Օրին սկսել էր արդեն գիտակցել իր կատարե-  
լիք քաղաքական շրջադարձի անհրաժեշտությունը և ուր գիմումի  
խմբագրմանը նրան կարող էր մեծապես օժանդակած լինել Կապ-  
լան Ներսեսը: Այս ենթադրության օգտին է վկայում նաև գիմումի  
թվագրությունը Արևմուտքում գործածված գրիգորյան տոմարի հա-  
մաձայն:

կում Ռոշքան նույն նամակը նշում է ոչ թե հայկական, այլ եվրոպա-  
կան ամսաթիվով, այսինքն՝ ավելացնելով 10 վերագիրը, «ապրիլի 19»-ը վե-  
րածում ապրիլի 29-ի: Այդ նկատառումով ժամանելի ենք համարում «ապրիլի  
19-ը» թիվը այնպեղ, որ խոսքը հայերեն բնագրի մասին է:

Մտանանշելով պապին ուղղված գրության ՌՌԳԹ (= 1699) թիվորու-  
թյունը՝ Քյուրաթյանը գիտում է, որ հայաստան, սակայն ոչ հայկական այգ-  
տարեթիվը ճշիվ մը պարմանայի է «Ընկեղակոթ», այսինքն՝ լեոնային Հա-  
յաստանի մեջ գրված վավերագրության համար» («Հայերենիք» ամսագիր,  
1955, № 11, էջ 50—51): Ելնելով հայկական ձեռագիրների վրա մեր արած  
բազմաթիվ գիտողություններից, եվրոպական տարեթվի գործածությունը կապ  
ունի ոչ թե գրության աշխատհան, այլ հասարակական միջա-  
վայրի հետ: XVII դարի հայկական գրությունների մեջ ոչ-հայկական տարե-  
թվի առկայությունը նշան է այն բանի, որ գրությունը գրվել կամ խմբա-  
գրվել է հայ-կաթ ու լի կ մի ջա վ ա յ ր ու մ:

Այս գիտողութուններից նեակում է քնդհանուր այն եզրակացությունը, որ մեր ձեռքը հասած 1699 թվականի ապրիլի 29 թվականի ցարին ուղղված թղթերը ևս Անկեղակոթում կազմված հայերեն սկզբնագիրը կամ արտասահմանում գրանից կատարված լատիներեն թարգմանությունը չեն: Յարի անունով Անկեղակոթում գրված և Ռոշրաչի անսած հայերեն թուղթը կամ գրանից կատարված որևէ թարգմանություն չեն հասել մեզ: Այն, ինչ հասել է մեզ՝ դա Անկեղակոթի խորհրդածուցովից հետո քաղաքական փոխված իրադրության մեջ ցարի անունով արտասահմանում կազմված լատիներեն մի սկզբնագիր է, և գրան համապատասխանող հայերեն խմբագրությունը՝ գրված մելիքների կնիքները կրող քարթ բլանշի վրա:

Հափանական է, որ ցարին ուղղված զիմումի մեր ձեռքը հասած լատիներեն բնագիրը և գրա հայերեն թարգմանությունը կատարվել էր դեռ 1700 թվականի վերջերին կամ 1701 թվականի սկզբներին Վիեննայում, ուր Օրին սկսել էր արդեն գիտակցել իր կատարելիք քաղաքական շրջադարձի անհրաժեշտությունը և ուր զիմումի խմբագրմանը նրան կարող էր մեծապես օժանդակած լինել Կապլան Ներսեսը: Այս ենթադրության օգտին է վկայում նաև զիմումի թվագրությունը Արևմուտքում գործածված գրիգորյան տոմարի համաձայն:

---

կում Ռոշրան նույն նամակը նշում է ոչ թե հայկական, այլ եվրոպական մասնավոր, այսինքն՝ ավելացնելով 10 վերագիրք, «ապրիլի 19»-ը վերածում ապրիլի 29-ի: Այդ նկատառումով ժամահեյի ենք համարում «ապրիլի 19»-ը թիվը այնուհետ, որ խոսքը հայերեն բնագրի մասին է:

Մասնանշելով պապին ուղղված գրության ՌՌԳԹ(—1699) թվագրությունը՝ Քյոթայանը գիտում է, որ հայաստան, սակայն ոչ հայկական այդ տարեթիվը «բիշ մը զարմանալի է «Անկեղակոթ», այսինքն՝ լեռնային Հայաստանի մեջ՝ գրված վավերագրության համար» («Հայերենիք» տմասգիրք, 1955, № 11, էջ 50—51): Ելնելով հայկական ձևապիրների վրա մեր արած բազմաթիվ գիտողություններից, եվրոպական տարեթվի գործածությունը կապ ունի ոչ թե գրության աշխարհագրական, այլ հասարակական միջավայրի հետ: Մի և մի ցարի հայկական գրությունների մեջ ոչ-հայկական տարեթվի առկայությունը նշան է այն բանի, որ գրությունը գրվել կամ խմբագրվել է հայկական թուղթի միջավայրում:

#### 4. ՕՐԻԻ ՊՅԱԼՅՅԱՆ ՆՐԱԳԻՐԸ

Պֆալցյան ռազմաբաժնի ծրագիրը: Աբշափի Բազաֆական նպատակը: Մասնակից պետությունները: Աբշափի մարշալուքը: Օրիի հարձակողական և պաշտպանողական ծրագիրը: Աբշափի նյութական նախադրյալները: Աբեկյան: Եյասատանի տեսնական ռեսուրսները: Ապստամբների մարտական ուժերը:

Պֆալցի ծրագրի բնօրինակը գնահատականը: Բուտաֆորիկ քվանդանները և ռեալ հաշվառման: Աբեմուսնայերի վիճակը XVII դարի վերջերին:

Կուրֆյուրստի վերաբերմունքը Օրիի ծրագրին: Օրին Ֆյուրենտիայում և Հոսմում: Երջափոխված իրադրությունը Վիեննայում: Դիմադրումը դեպի Ռուսաստան:

*Վերադառնալով Դյուսելդորֆ, 1699 թվականի սեպտեմբերին Օրիին թելադրեց կատարած ուղևորության մասին ընդարձակ զեկուցագիր<sup>1</sup>: Կուրֆյուրստին ներկայացնելու համար նա նախադժեց նաև մանրամասն այն ծրագիրը, ուր, հայրենիքից քերած լիազորություններ և Մինաս վարդապետի անմիջական վկայություններ պաշտպանված, նշում էր Հայաստանի ազատագրման նախապայմաններն ու առաջիկա սազմաբաժնի մարշալուքը<sup>2</sup>:*

Ուշագրավ է Օրիի այդ ծրագիրը: Ոչ միայն այն տեսակետից, որ այդտեղ նա արժարժում ու լուսարանում էր մեղիքների դիմումներում շոշափված խնդիրները, այլ մանավանդ նրա համար, որ անմիջական և ամփոփ դադարափար է տալիս Հայաստանի ազատագրման հեռանկարների շուրջը Օրիի ունեցած նախնական այն մտքերի մասին, որոնք հետագայում ենթարկվելու էին էական փոփոխության:

Փորձենք կես առ կես քննել և լուսարանել հայ ազատագրական մտքի պատմության հետաքրքրական վավերագիր հանդիսացող Օրիի նախնական այդ ծրագիրը:

<sup>1</sup> ՅՅՅՅ, նույն տեղում, № 11:

<sup>2</sup> Նույն տեղում, № 9:

Ապագա արշավանքի առաջ Օրին այդ ծրագրում գնում էր քաղաքական նույն նպատակը, որ նշված էր նաև մեյիքների կողմից կուրֆյուրստին ներկայացված դրուվյան մեջ. Հայաստանի, և առաջին հերթին Իրանահայաստանի, ազատագրումը և հայ-կաթոլիկ թողաժողովյան հիմնումը պիտույան դայիսանի առկ: Արշավանքի նախաձեռնողը լինելու էր Պիտայի կուրֆյուրստը. նա է, որ անուն և բնիկացի էր, ապա արշավանքին ու հաջողության գեղքում տեր գտնալու Հայաստանի թագավորությանը: Նրա միջոցով պիտի հաստատուած ստանան արշավանքին մասնակցողները<sup>1</sup>: Աչքի առաջ ունենալով այս ամենը, Օրին մշակած այս ծրագրին տալիս ենք պիտույան ծրագրի անունը:

Հայաստանի ազատագրման համար ձեռնարկվելիք արշավանքը, այս ծրագրի համաձայն, ունենալու է արևմտակուրսակա խաշակութայն բնույթի: Հայաստան արշավող զորքերի զորաների վրա պիտի նկարված լինեն Քրիստոսի խաչը և Գրիգոր Լուսավորչի պատկերը: Հատկանշական է Լուսավորչի պատկերի հիշատակումը: Ավանդությամբ Լուսավորչի հետ է կապում քրիստոսնություն մուսրը Հայաստան և հայագավան եկեղեցու հիմնադրումը: Աչքի առաջ ունենալով այդ անվան անհամեմատելի ժողովրդականությունը<sup>2</sup> կաթոլիկ միաբնակները ևս մեծարում էին Լուսավորչին, նրան համարելով ընդհանրական եկեղեցու հայրերից մեկը և պնդելով, թե իբր եկեղեցիների միությունից հրաժարվող հայագավան եկեղեցին շեղվել է Լուսավորչի ուղղափառ ուղեգծից:

Եկեղեցիների վերամիավորում քարոզող միաբնակներին ու միաբանողներին պես Օրին ևս շահարկում է Լուսավորչի անունը: Լուսավորչի գինացրոշով նա ևս կամենում էր գրավել հայ ժողովրդի սիրտը: «Այս խեղճ ժողովուրդը, — հավաստիացնում է Օրին, — միշտ էլ հուսացել է ազատվել սարկությունից՝ խաչի և Լուսավորչի շնորհիվ»<sup>3</sup>:

Ձեռնարկվող զորքի հաջողության համար, զրում է Օրին, անհրաժեշտ է ոչ թե մեկ, այլ մի քանի պետությունների մասնակցությունը: Առաջին հերթին նկատի ունենալու է կաթոլիկ կայսրին, Հռոմի պապին և Բոսիանայի մեծ դուքսին: Սրանք նյութական և բարոյական օժանդակություն պիտի բերեն արշավանքին որպես կուրֆյուրստի գաշնակիցներ: Կազմակերպվելիք թողաժողովյանը կառ

<sup>1</sup> Չ 3 0 B. նույն տեղում, № 9, §§ 8 և 10:

<sup>2</sup> Նույն տեղում, № 9, § 5:

կայսրին այն օգուտը, որ ամուր հենարան կստեղծի Հաբսբուրգյան տան պատմական թշնամիների՝ թուրքերի և հերձվածողների, այսինքն՝ կաթոլիկության հակառակորդների դեմ<sup>1</sup>։ Տեսնելով գործը ղյուրուվյամբ գլուխ բերելու հնարավորությունը՝ Հռոմի պապը շի գլանա իր օժանդակությունը, քանի որ դրանով պիտի ամրանա առաքելական և հոռոմեական հավատքը, որի համար նա պարտավորված պիտի զգա իրեն իբրև Քրիստոսի տեղակալ և ընդհանրական եկեղեցու պետ<sup>2</sup>։ Եթե համաձայն իր սված խոստման այս ձևոնարկությունը մասնակցելու լինի նաև Ռոսկանայի մեծ դուքսը, ավելի լավ<sup>3</sup>։ Վեհապետների օժանդակությունը ապահովելու համար անհրաժեշտ է միայն, որ մեյլիքների նրանց ուղղած գրություններից զատ, լինեն նաև կուրֆյուրստի գրավոր դիմումները, որ տեղ կհասցընի ինքը՝ Օրին<sup>4</sup>։ Շեշտելով կալվինականների, լութերականների, Ֆրանսիայի և Թուրքիայի կողմից Ավստրիական տան և պապական Հռոմի դեմ ուղղված համատեղ գործողությունների վտանգը՝ Օրին հասկանում էր, որ գերմանական կայսրությունն ու պապական Հռոմը կարող են մասնակցել իր ծրագրի իրագործմանը ոչ թե հայ ժողովրդին ազատություն պարգևելու ցանկությունից դրդված, այլ նրա հաշվին թուրքերի թիկունքում ռազմական ճակատ ստեղծելու նպատակից սղեղնչված։

Անուղղակի մասնակցելու են արշավանքին նաև Լեհաստանի թագավորն ու Մոսկվայի «մեծ դուքսը», քանի որ սրանց երկրներով պիտի անցնեն արևմտյան զորքերը։ Գործը շահավետ է այդ դահակալներին, ուստի և նրանք շեն առարկի դրա դեմ, եթե միայն այդ մասին կուրֆյուրստն ու կայսրը թույլտվություն խնդրեն նրանցից<sup>5</sup>։ Ընդամին նրանք ոչինչ չպիտի իմանան Պֆալցի կուրֆյուրստին Հայաստանի թագ մատուցելու մտադրության մասին, նրանց մեջ այդ առաջ կրեեր սոսկալի նախանձ ու խանդ։

Տասնհինգ տարի առաջ, — հարում էր Օրին, — Լեհաստանի ներկա թագավորի նախորդը (իմա՝ Յան Սոբեսկին) առաջարկած է եղել Ղափանի մեյլիքներին՝ երեսունհազարանոց իր բանակով նվաճել Հաբստոանն ու տեր դառնալ նրան։ Մեյլիքները մերժել են այդ առաջարկը, որչափ հին փորձով խրատված, մեծ վստահություն

<sup>1</sup> Յ 308. Նույն տեղում, ԱՁ 9, §§ 1, 32, 31:

<sup>2</sup> Նույն տեղում, ԱՁ 9, § 2:

<sup>3</sup> Նույն տեղում, ԱՁ 9, § 3:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում, ԱՁ 9, § 4:



շունին լեհերի նկատմամբ: Հարյուր տարի առաջ լեհերը հայերից կազմված և մեծ հազվաթիվներով պատկված 30-հազարանոց մի զորքաբանակ ունեին: Երկչուզ կրելով, թե այդ բանակը կարող է տեղ գտնալ իրենց երկրին, թաթարների դեմ վարած մի կովի ժամանակ լեհերը ոչնչացրին հայ մարտիկներին, ղեռնզելով նրանց լեհ և թաթար բանակների արանքում և ենթարկելով երկծայրի հարձակման: Ազատվեցին հազիվ միայն երկու հազար մարդ<sup>1</sup>:

Որ հայ զորամասերը նշանակալի վեր էին կտատարում Լեհաստանում, հայտնի է նաև այլուստ: Նշանավոր էր մանավանդ հայկական ջոկատների մասնակցությունը Գրյունշվալդի ճակատամարտում: Կասկած չկա նաև, որ մասնակցելով լեհերի վարած պատերազմներին և հատկապես թուրքերի դեմ կազմակերպվող արշավանքներին, հայ զորքաբանակները ունենում էին մեծամեծ կորուստներ: Այլ խնդիր է սակայն Օրիի հաղորդածը. նա խոսում է հայ բանակը դավադրաբար կործանելու մասին:

Օրիի պատմածը նրա հնարանքը չէր, այգպիսի ավանդություն, ըստ երեույթին, գոյություն է ունեցել: Սխալ թե ճիշտ, այլ խնդիր է, նման մի բան Լեհաստանում ճամփորդելիս XIX դարի առաջին քառորդում լսել էր նաև Մ. Վ. Բժշկյանը: Ավանդությամբ պատմեցին մեզ, — գրում է այդ հեղինակը, — թե անցիր այնքան էին բազմացել Լեհաստանի քաղաքներում, որ լեհերը նրանցից շատերին խաբուրեցին կտորերի տվին, երկչուզ կրելով, թե չինի հայերը բռնանան ու տիրանան նրանց քաղաքներին<sup>2</sup>:

Անկեղծ լինելու պայքում, Օրին ավելի շուտ պիտի մտանոնշեր, որ Լեհաստանը անվտանգություն էր ներշնչել հայերին՝ նրանց կաթոլիկության բռնադատելու պատճառով: Բավական կլիներ հիշել թեկուզ Նիկոլի և գործակիցների մոտյլ պատմությունը:

Սակայն Օրինն հետաքրքրողը այն միտքն էր, թե Լեհաստանը սկսվել քաղաքականություն էր վարում նույնիսկ հայ բնաշխարհի նկատմամբ: Այդ միտքը սխալ չէր ինքյան: Տակավին XVI դարում Ստեֆան Բատորի թագավորը (1576—1586) երազում էր նվաճել Մոսկովիան և թուրքերի կողմից զավթված Անդրկովկասը, այստեղից Փոքր Ասիա և Պոլիս դուրս գալու համար<sup>3</sup>: Մեկ դար անց, մաս-

<sup>1</sup> ЭЗОВ, նույն տեղում, № 9, § 14:

<sup>2</sup> Մ. Վ. Բժշկյան, Ճանապարհորդություն ի Լեհաստան, Վենետիկ, 1835, էջ 85: Այս ավանդությունը բերված է նաև Դ. Ճանկեցու «Գրախոս գանկալի» Կ. Պոլիս, 1735, էջ 633:

<sup>3</sup> Հմմտ. „Против антмаркенистской концепции М. Н. Покровского“ ժողովածուի, II, էջ 115, Վ. Պիշետայի հոդվածը:

նակցելով հակախուրբակա՞ն կոալիցիային, և նաստանք հետամուտ էր թուրքերի դեմ պայքարի լծելու Երանը և մտանալորապես՝ իրանահայերին<sup>1</sup>։

Կաթուղիկ կղերք կամենում էր հավատացնել և հաստատան ապաստանած հայերին, թե պապական եկեղեցին կոչում ունի ազատել հայերին ոչ միայն Ռուրբիայի, այլև Երանի բոնոսթյունից։ Կլովի հայ եկեղեցու դոան բարև ճակատին կա սիմվոլիկ մի բարձրաքանդակ, ամբողջ հասակով փորագրված է երկրագնդի վրա կանգնած աւավածածինը, ձևոներին մանուկ Հիսուսը. վերջինս երկար նիզակով խոցում է Ռուրբիան պատկերող օձը։ Նույն տեղում թավալված է ատամ կրճատացնող սուլուձը, խորհրդանշելով Երանը։ Բարձրաքանդակի տակ նշված է 1664 թվականը։ Ինչպես ճիշտ գիտել է հուշարձանը նկարագրող Գ. Գոյանը, բարձրաքանդակի նպատակն է եղել ներշնչել տեղական հայերին, թե կաթուղիկ տիեզերական եկեղեցին երկխառաք այն ուժն է, որ կոչված է տապալելու իրանական աւլուծին և խորտակելու տաճկական վիշապին՝ զրանով իսկ ազատություն բերելով թուրք-իրանական լծի տակ տառապող հայ ժողովրդին<sup>2</sup>։

Փատապես՝ Ռուրբիայի դեմ պայքարելով, ալզ պահին Հոռոձը և և հաստաձը նպատակ չունենին գժավելու Երանի հետ։ Բնդհակառակը, նրանք հետամուտ էին ներգրավել պայքարի մեջ նույնիսկ Երանի ռազմական ուժերը, քաղաքականությունձ, որ շարունակվեց նաև հետագայում։ Այսպես, 1690 թվականին Յան Սոբեսկին կղուիտների միջոցով թղթեր հղեց Երան, հրահրելով Շահ-Սուլեյմանին և վրաց Շահնապարադիխանին (խոսքը երևի Ախալցխայում նստող Շահնապար խանի մասին է — Ա. Հ.)՝ պատերազմ սկսել թուրքերի դեմ։ Մասնավորապես Շահնապարադիխանը պիտի պահանջ գներ «Կոլխիզան» (իմա՝ արևմտյան Վրաստանը) թուրքերի բոնաաիրությունից ազատելու մասին<sup>3</sup>։

Այս լույսի տակ ուշադրավ է նաև լեհ գետպանների ու միսիոներինների աշխատանքը Երանում և իրանահայերի մեջ։ Բնորոշ է, որ 1669 թվականին Մաաթևոս Հովաննիսենյը ներկայացրավ Շահ-Արթաս II-ին Յան Կաղիմիր թագավորի գետպան հալազդի (ըստ երևույթին՝ վրահայ — Ա. Հ.) Բուզգան բեկի հետ միասին<sup>4</sup>։ Բուզ-

<sup>1</sup> Lettres édiffiantes. IV, էջ 452։

<sup>2</sup> Տե՛ս երևանի «КОММУНИСТ» թերթի 1951 թ. հունիսի 3-ի համարը։

<sup>3</sup> Krusinski, Prodrumus, էջ 223.

<sup>4</sup> «Արարատ», 1916, էջ 66։

դան բեկը, անշուշտ, լեհ գեապան Ռուզգան Գուրգին էր (իմա՝ Գուրգին = Գուրջի, այսինքն՝ «վրացի» կամ «վրաստանցի» — Ս. Հ.): Նշենք, որ 1672 թվականին նա հայանվեց Ռուսաստանում և Սպահանի հայ առևտրական ընկերության ներկայացուցիչ Գր. Լուսիկինցի հետ միասեղ ձգտում էր Ռուրբիայի գեմ ուղղված քաղաքական համադործակցություն ստեղծել Ռուսաստանի, Իրանի և Լեհաստանի միջև<sup>1</sup>:

Յան Սուրեակու (1674—1696) ժամանակ Նիկոլի մուլեանդ աշակերտ և ապագա նրա հաջորդ Վարդան Հունանյանը ժամանեց Էջմիածին, «առ ի միաբանել գնոսա ընդ Հոսովմա». զարձի զալու փոխարեն, Էջմիածնի միաբանները «բռնատուն» (իմա՝ կալանքի տուն) բռնեցին Նիկոլի գործակալին: Միայն լեհ թագավորի միջամտությունը կարողացավ ազատել նրան վանականների սատարից<sup>2</sup>: Ինչ-որ աղբյուրից քաղելով Ս. Ալպոյաճյանը հաղորդում է, թե Սուրեակին ծրարել էր թուրքերի կռնակում ստեղծել հայ մի պետություն և իբր այդ խնդրի շուրջը հատուկ պատվիրակություն էր ուղարկել Հակոբ Զուղալեցու մոտ վերջինիս Պոլսում գտնված ժամանակ: Կաթողիկոսի մահից հետո, գրում է նույն հեղինակը, Սուրեակին նդիազար Այնթապցուն հղած նամակում, հարգանքով լի գեպի Զուղալեցին, հարում էր, թե վերջինից ստացած նամակները պահում է իր գիվանում: Հայկական պետություն ստեղծելու առաջադրության և հայ-լատին եկեղեցիների վերամիավորության շուրջն էին պտտում նաև Սուրեակու կողմից Էջմիածին հղված գրությունները: Նույն այս խնդիրների հետ է կապում Ալպոյաճյանը Հովհաննես Թյուքյունճիի գեպի Լեհաստան և Հարեշտան ու Սիմեոն Պետրովիչ հայազգի կրոնավորի գեպի Հայաստան կատարած ուղևորությունները<sup>3</sup>: Հոռմի գպրոցում քարոզչության գասընթաց ավարտելուց հետո, վերջինս Սուրեակու կողմից հիրավի մի շարք հանձնարարություններ ուներ կատարելու Իրանում: «Այս քարոզչի հայրենասիրությունն ու իր հայրենակիցների փրկության մտտին ունեցած հոգատարությունը, — գրում էր եզուխ մի միսիոներ, — նրա մեջ ցանկություն առաջացրեց փրադանալ Հայաստան՝ իր ազգը համեական եկեղեցու հետ վերամիավորելու համար»<sup>4</sup>: Ընդառա

<sup>1</sup> Տե՛ս «Армяно-русские отношения в XVII в.», Сборник документов. под редакцией В. А. Парсамяна, Ереван, 1953, I, էջ 78 և հա.:

<sup>2</sup> Մ. Վ. Բ Չ Կ Յ ան, ճանապարհորդություն ի Լեհաստան, էջ 108:

<sup>3</sup> Ա Ղ Կ Ո Յ Ժ Կ ան, նույն տեղում, էջ 63 և հա.:

<sup>4</sup> Lettres édiffiantes, III, էջ 448 և հա.:

չեւով Պետրովիչին՝ 1696 թվականին Սորեսկին հասուկ նամակով նրան ուղարկեց շահի և էջմիածնի նահապետ կաթողիկոսի մոտ: Նամակում նա հորդորում էր կաթողիկոսին՝ միանալ կաթողիկ եկեղեցուն և խոստանում զրա համար պապի, կայսրի և իր օգնությունը. նույն իմաստով զրել էին հայերին նաև Լեհաստանի: առաջին կարգինալն ու նշանավոր զորավարներից երկուսը: Մահը վրա հասավ Պետրովիչին Իրանի ճանապարհին և նրա ձեռնարկության շարունակությունը վերապահված մնաց լեհ միսիոներներին<sup>1</sup>: Լեհական ազդյութներից տեղեկություն է հասել, թե Սորեսկին առաջարկած է եղել նահապետ կաթողիկոսին ցույց տալ իրեն այն ուղին, որով ինքը կարող կլիներ աջակցել հայ ազնվականներից մեկին վերականգնելու հայերի անկախությունը և նստելու հայ թագավորների դահին<sup>2</sup>:

Հայերի նկատմամբ Սորեսկու վարած արտաքին քաղաքականությունը համադատասխանում էր նրա ներքին քաղաքականությանը: Հայ և լեհ կուլտուրական մակարդակների և իրավական առանձնահատկությունների համահարթման հետամուտ՝ Սորեսկին մեծապես նպաստեց լեհահայերի ասիմիլյացիային: Նրա օրոք կաթողիկ կղերը Լեհաստանում աջակցում էր հայ դպրոցների և նույնիսկ հայկական թատրոնի հիմնադրմանը: Ծաղկում էր լեհահայ արվեստը, համըարությունների մեջ թագավորի ղեկրեաով իրավահավասարություն է հատկացվում հայերին, հատկապես խրախուսելով աչքի ընկնող հայ գինադործներին ու սակերիչներին<sup>3</sup>:

Սորեսկուց հետո՝ Լեհաստանից ժամանեց հայազգի մի այլ դեսպան, Զուրար-բեկ անունով մի շամախեցի, որը Ավդուստ II թագավորի հանձնարարությամբ հետապնդելու էր Իրանում նույն խնդիրների լուծումը<sup>4</sup>: Հիշատակում են նաև 1699 թվականին Ավդուստ II-ի կողմից Իրան հղված լեհահայ մի այլ դեսպանի, Սեֆեր (իմա՝ Սաֆար) Նուրկեիչի անունը<sup>5</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 45 և 52:

<sup>2</sup> Baronz, Storia armenia Tarnopoli 1869 u Messagero di S. Gregorio, Leopoli, I-33: Այս ազդյութները անձամբ տեսած չենք, տեղեկանքը առնում ենք Հ. Քյուրտյանի հոգվածից:

<sup>3</sup> Պ. Էտտինգեր, Հայերը Արևմտյան Ուկրաինայի և նախկին Լեհաստանի արվեստում, ՎՊորհրդային արվեստ, Երևան, 1940, № 2-3, էջ 69:

<sup>4</sup> Lettres édifiantes, IV, էջ 55:

<sup>5</sup> Fr. Macler, Rapport sur une mission scientifique en Bukovine (REA, VII, 1927, էջ 53):

Այլ կապակցութեամբ տոբիթ պիտի ունենանք հազարգելու, որ Նուրիկեի շքախմբի մեջ Օրին իբր մտցրած է եղել իր մարդկանցից մեկին՝ ախրացու Հարությունին, նպատակ ունենալով նրա միջոցով կապ հաստատել էջմիածնի կաթողիկոսի հետ:

Այս ամենը իրավունք է տալիս ասելու, թե խոսելով Լեհաստանի քաղաքականութեան ու նպատակադրումների մասին, իր տրամադրութեան տակ Օրին ուներ որոշ փաստական հիմք:

Քիչ վատահույն ունեն հայերը, — շարունակում է Օրին, — նաև մոսկովցիների վերաբերմամբ: Իրանի և Վրաստանի վերջին կռիւների ժամանակ մոսկովցիները իբր թե մտադրութեան են ցույց տվել զրավելու Հայաստանը և իբրև թե հայ իշխանները շեն համաձայնվել զրան՝ երկյուզ կրելով, թե զրանով իրենց կարող է բռնադատվել «հունազավանութեան հերձվածք»: Հայերը ավելի շուտ պատրաստ են ստրուկ մնալ անհավասաներին, քան հպատակվել հունազավաններին, հավաստիացնում է Օրին<sup>1</sup>:

Հունազավան եկեղեցու վերաբերմամբ հայերի մեջ եղած այդ մտայնութեանը, որի մասին ակնարկում է Օրին, պիտի հեռավոր արձագանք համարել այն անվստահութեան, որ տածում էին նրանք գեպի բյուզանդական կայսրերի միարարողական քաղաքականութեանը: Այսուհետև Օրին արտահայտում է հունազավանութեան մասին նույն խոսքերով, որոնք մեկ ծանոթ են գեւ XIII դարի Այսուցաց եպիսկոպոսների սպարաբարութեանից: Օրինից անմիջապես առաջ մեկ նախածանոթ Միշել Ֆերուրը թուրքահայերի մասին գրում էր. «Դեպի հույներն ունեցած նրանց ատելութեանն այնքան մեծ է, որ, ինչպես ասում են իրենք, ավելի շուտ կիամենային մնալ թուրքերի բռնակալութեան տակ, քան թե նորից ենթարկվել հույների իշխանութեանը»<sup>2</sup>: Այնուամենայնիվ հիմք չկա պնդելու, թե պաշարելով բյուզանդացիների եկեղեցական սպրեխաչի դեմ՝ հայերը նույնացնում էին ուս եկեղեցին բյուզանդականի հետ: Հայտնի է, որ Արևելյան Հալաստանի հեղինակավոր եկեղեցականներից մեկը, XII դարում ապրող Գր. Տուտեորդին, հույ-բյուզանդական եկեղեցիների սուր բախման շրջանում Գալատիա հարմար էր գտնում բյուզանդացիներից պոշտպանվելու համար ապավինել ուս «մեծափառ եկեղեցու» միջամտութեանը. Տուտեորդին առաջարկում էր գրիմել ուս եկեղեցականներին, հայցելով «պատշաճս ի նոցանէ»:

Ընդհատ է, որ հույն ուղղափառութեանը հալածում էր հայազավանութեանը որպես «աղանդ» և որ այդ տեսակետը նախապետորո-

<sup>1</sup> Յ 3 Օ B, նույն տեղում. № 9, § 14:

<sup>2</sup> Michel Febure, Teatre de la Turquie, էջ 408:

յան Ուեստտանում նկատելի էր նաև սուս աստվածաբաններից սմանց, օրինակ, միարտագլիա Կիպրիանիի (XIV դար) և Մաքսիմ Գրեկի (XVI դ.) մաս: Վերջինս գրած ունի նույնիսկ մի երկ «Слово на армянское зловерие» վերնագրով: Սակայն նման գնահատականները մեծ արգելք չէին հայ-սուս Բաղաևական մերձեցմանը, զեթ XVII դարում:

«Մոսկովիտները, — գիտում էր XVII դարի երեսնական թվականներին Ադամ Օլեարիուսը, — հանդուրժամիա վերաբերմունք ունեն բոլոր ազգերի ու կրօնների նկատմամբ և հարաբերություններ են ստահպանում նրանց ներկայացուցիչների հետ, ինչպես, օրինակ, լութերականների, կաթոլիկականների, հայերի, թաթարների, սարսիկների և թուրքերի հետ»<sup>1</sup>: Հայ-սուսական հարաբերությունների բազմադարյան անցյալը, ինչպես ասիք պիտի ունենանք տեսնելու, հավաստում է այս վիպյության ճշտությունը:

Ուշագրավ է Օրիի այն հայտարարությունը, թե իրը վրացական ապոստամբության ժամանակ սուսները մտադրություն են ունեցած եղել գրավելու Հայաստանը և որ հայ իշխանների կողմից սա հանգիպել է դիմադրության: Օրիի հաղորդածը հիշեցնում է Մովսես Երեցի 1692 թվականին գրի առած մեկ նախածանոթ հիշատակարանի այն ավյալները, որոնցից պարզվում է, որ վրաց ապոստամբները օգնություն էին սպասում Մոսկովի թագավորի «Եսայուզի» (Էլբրուսի) ստորստամ համախմբված ուժերից: Թերևս այդ ժամանակ կարծիք կար, թե սուսները միջամտելու են ապոստամբությանը, մտադիր լինելով գրավելու Վրաստանն ու Հայաստանը: Օրիի ցուցմունքն այն մասին, թե հայ իշխանները դեմ էին Հայաստանի սուսական օկուպացմանը, հիմք է տալիս ենթադրելու, թե նրա խոսքը Այունլայց մեյիքների գիրքավորման մասին է հատկապես: Այս ենթադրության մասին սրտը հիմք տալիս է մեկ գարձյալ ապոստամբությանը համակիր Մովսես Երեցի հիշատակարանը, ուր ասված է, թե հայերի մեջ կան «բաղում սուս քրիստոնեայք», որոնք Քրիստոսի հավատար Մահմեդի օրինաց հետ փոխանակելով, միաբանեցին սարսիկների հետ՝ վնասելով ապոստամբության գործին: Հիշատակարանը շեշտում է մանավանդ զափանցիների գավաճանությունը: Վերհիշենք նրա խոսքերը. «Եւ մանաւանդ որդիք անիծելոյն Վասակա՝ Սիւնեցիք, որ բաղում սուս կարգաւորք և օրինազանց աշխարհականք, որք սնոււումք միայն են քրիստոնեայք և դործով վատթարքան զայլազգի»:

<sup>1</sup> Olearius, նույն տեղում, III, էջ 32:

Ակնհերե է, որ վրացական սոցաւամբուձջան ժամանակ «Մոսկովի թագաւորի» միջամտության նկատմամբ իրանահայ գաւառներում բախվում էին երկու հոսանք. դրանցից մեկը կողմնակից էր ռուսական ինտերվենցիային ընդատաշող սոցաւամբուձջանը, մյուսները, ընդհակառակը, գեմ էին դրան: Հետագա մեր շարագրանքի ընթացքում առիթ պիտի ունենանք համոզվելու, որ Օրին սխալ շէր բնութագրում մեկիքների դիրքն այս հարցում: Պիտի տեսնենք նաև, որ վաճառականների մեջ իսկ ռուսական միջամտության նկատմամբ կային իրարամարտ արամագրություններ:

Հայաստանի ազատության գեմ, հալատարացնում էր այնուամենայնիվ Յրին, ցարը սշինչ ունենալ կարող չէ: Պետրոս ցարը արտանություններ է շնորհում հայ աւտարականներին, արամագրելով նրանց իր գանձարանի աշակցությունը: Որչափ Հայաստանի ազատությունը ձեռնտու է ցարին գաւառնակից ու նրանից հովանաւորված վրաց իշխաններին, պիտի հուսալ, թե նա ըստ ամենայնի պիտի նպատար գրան: Վաղուց է, ինչ մոսկուէյիները ցանկանում են սաղմական օգնության գալ թուրքերի գեմ կովսղ վրացիներին: Մյուս կողմից՝ ռուսներն անընդհատ նավերի պատրաստություն են տեսնում Կասպից ծովի վրա և ինչպես ինքն իսկ Հայաստանում դանված ժամանակ, այսինքն՝ 1699 թ., լսել է՝ սղում են պատերազմ հայասարսեյ իրանին<sup>1</sup>: Համոզված է, որ ցարը նավեր կարամագրի կութիցութատին փր զորքը Հայաստանի սահմանագրութիւր հասցնելու համար: Կարծում է, թե վրացիներին օգնած լինելու համար ցարը կարող է նաչնիսկ մասնակցել ծրագրված արշավանքին, արամագրելով նրանց մոտ 20—30000 կաւոլ<sup>2</sup>: Խանգի տեղիք շաւու համար հարկավոր չէ, սակայն, որ նա խմանա հայ մեկիքների կողմից կութիցութատին աւաջարկված թագի մասին<sup>3</sup>:

Օրին պիտիցյան ծրագրում խտովում է նաև արշավանքին մասնակցողներից սպասվելիք սաղմական ներդրումների մասին: Կութիցութատը, աւում է նա, արամագրելու է արշավանքին հաղարական ձիավոր ու գրազուն, հարյուր գրէնագեր և քսանհինգական թագանութաձիգ ու տմբաձիգ: Սրանց գինման համար կբավի վեց թնդանութ հարյուր սումբով, մի հրասանդ՝ հիսուն սումբով, հինգ հարյուր պատրուչդավոր հրացան և հարյուր գրոշակ: Կայսրից պիտի խնդրել երկու հազար հուսար և քսանհինգ թնդանութաձիգ: Խոսքը ավրս-

<sup>1</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 9, § 16:

<sup>2</sup> նույն տեղում, № 9, § 15:

<sup>3</sup> նույն տեղում, № 9, §§ 14 և 15 և մեր Israel Ory, Anhang, № 10.

տրիական այն հուսարների մասին է, որոնց Օրին տեսած է եղել Հունգարիայում: Եվրոպական պատերազմների ժամանակ, ասում է Օրին, նրանք ալեկի վնասարեր են, քան օգտարեր, որչափ տիրում են սչ միայն գենքի, այլև գողութեան ու թալանի արհեստին: Մինչգեւ Իրանում կարող են դրական դեր խաղալ իրենց առգմական ճարտարությունը ու արագաշարժությունը և կարելի կլինի նույնիսկ ասպարեզ թողնել նրանց՝ նաև իրենց մյուս արհեստը գործադրելու համար<sup>1</sup>:

Պապից և Բոսկանայի գրքից ստանալիք առգմական նպատար սրտչ չէ: Հաս երևույթին առգմական տեսակետից դա այնքան էլ կարևոր չէր: Գործը գլուխ կզա նաև ասանց այդ երկուսի նյութական նպատաների, միայն թե լինի կայսրի ու կարֆյուրատի համագործակցությունը<sup>2</sup>:

Շրագրվող արշավանքը սկսվելու է 1700 թվականի մայիսին: Եվրոպական դորամասերն անցնելու են Բոհեմիայի, Հեհաստանի և Մոսկովիայի վրայով: Մոսկովիայում նրանք պիտի ապահովվեն ուտեստով ու ձիերի անհրաժեշտ կերով: Զորքերն ու գրաստագումակը մոսկովյան աստարանավերով պիտի փոխադրվեն Աստրախան և աչգակցից նույն նավերով անցնեն Կասպից ծովը: Կայն ու երկար այս նավերից չուրաքանչյուրը բաց ամստակամածի վրա կարող է կրել հարար հինգհարյուրական այրուձի<sup>3</sup>: Պիտի խնդրել, ասում է Օրին, որ Կասպից ծովի վրա ցարն արգելի Իրան գնացող նավերի ուղևորությունը, մինչև որ ատաշիկա հուլիս ամսին Վոլգայի ափերը հասնեն եվրոպական դորամասերը: Այդ պահին Իրան մեկնելու համար դեռավիճ հավաքված կլինի մոտ 2000 հայ մարդ (այսինքն՝ գլխավորապես հայ աստորականներ կամ նրանց գործակալները — Ա. Հ.), որոնք կօժանդակեն արշավանքին: Ինչպես էր Օրին կամենում օգտագործել վերջիններին, սլարզ չէ:

Հնկտեմբերի սկզբներին արշավող դորամասերը մոտենալով Շիրվանի ծովկրին, առափնեքու են ամայի մի վայրում: Տեղ հասնելուն պես նրանք ձևոնարկելու են առգմական գործողությունների: Պիտի գործ գրվի ամեն մի միջոց թշնամուն հանկարծակիի բերելու և գիշերային արշավով Շամախին գրավելու համար<sup>4</sup>:

<sup>1</sup> Յ 3 0 Յ, նույն տեղում, № 9, § 7:

<sup>2</sup> Նույն տեղում, № 9, § 8 և մեր Israel Ory, Anhang. № 10.

<sup>3</sup> Յ 3 0 Յ, նույն տեղում, № 9, § 12:

<sup>4</sup> Նույն տեղում, № 9, § 17: Ճանապարհը կենտրոնական Եվրոպայից մինչև աստինման կեար Օրին հաշվում է 4—5 ամիս: Հաշիվը համապատասխանում է ժամանակի տեխնիկական հնարավորություններին: Այսպես, ժամանակամերձ Պեախը նույնպես գրում էր, թե պատահարների չհանդիպելու



Վերապահելով կուրֆյուրստին արշավանքի քաղաքական ղեկավարութեանը, Օրին ենթադրում էր, թե պիտույցան գործի հրամանատարութեանը Հայաստան մտնելու պահին, դեթ մի առժամանակ պիտի հանձնվի իրեն՝ Օրինին: Թեև կուրֆյուրստն ունի իրենից հազար անգամ ավելի ընդունակ զորավարներ ու սպաներ, բայց ինքը՝ Օրին, ունի այն առավելութեանը, որ ծանոթ է երկրին ու բնակիչներին: Ճիշտ է, ոմանք դժկամութեամբ պիտի ենթարկվեն մի մարտու, որը Գուսեղգործում գրադվում էր վաճառականութեամբ, բայց փոքր-ինչ հետո այդպիսիներն իրենք իսկ պիտի համոզվեն, որ ինքը ծնված չի եղել վաճառական լինելու համար<sup>1</sup>:

Շամախու գրավումը լինելու է գործի հաջողութեան սկիզբը: Օրին համարում էր Շամախին այն վայրը, ուսկից ազատարար գործերի առաջ բացվելու են Հայաստանի թագավորութեան դռները: Առևտրական ընդարձակ մի քաղաք է Շամախին, որ ունի Քյոչնի մեծութեանը, ասում է նա: Քաղաքն ամրութեան չունի. անդական խանի տրամադրութեան տակ այդտեղ հազիվ քսան մարդուց բազկացած մի կաշաղար կա միայն: Այս վիճակով քաղաքը մի ժամկա դիմադրութեան իսկ ընդունակ չէ: Հայերը կազմում են Շամախում յոթ եկեղեցահամայնք: Նրանց ձևաբան է քաղաքի թե՛ խոշոր և թե՛ մանր առևտուրը: Արշավադիր խաչակիր դրոշները երևալուն պես՝ նրանց անհապաղ պիտի ընդառաջեն տասը հազար սպառուղեն հայ կովաղներ: Պատերազմելու համար սրանք ունին ամեն ինչ. երկիրը չի է ձիերով ու զինամթերքով<sup>2</sup>:

Խոսքն այստեղ հին Շամախու մասին է: Նագիրի կողմից հետազոտում ավերված այդ քաղաքը գտնվում էր ներկա Շամախուց 10 կիլոմետր հեռավորութեան վրա: Աեֆյանների դեմ այնքան հաճախ բմբոսաացած այդ քաղաքում Օրինի ժամանակ մնացել էր Շահ-Աբբաս I-ի ձևաբով ավերված բերդի հետքը միայն, այնպես խորխուր և այնքան վառ պաշտպանված, որ դյուրութեամբ կարելի էր խուժել քաղաք, շնայած որ վերջինս ուներ հինգ դոց դարպաս<sup>3</sup>

գեղջում կարելի է Մոսկովայի վրայով 1—5 ամսում հասնել Վիեննայից իրան (Bedik, նույն տեղում, էջ 325 և հա.): Ճիշտ չէր Օրին, երբ Շիրվանի առաջնման վայրից (Նիգարադր—Նիգոմալա ծանծաղուտից) կամ Բարվից մինչև Շամախի ընկնող տարածությունը համարում էր մի գիշերաբարձի հանադար: Հեադայում, Ռուսաստանում, նա ուղղելու էր այդ սխալը, երեք օրվա ճանապարհ հաշվելով կղամ հեռավորությունը (հմտ. ՅՅՅՅ, նույն տեղում, № 44):

<sup>1</sup> Տես մեր Israel Ory, Anhang, № 4.

<sup>2</sup> ՅՅՅՅ, նույն տեղում, № 9, § 17:

<sup>3</sup> հմտ. V. Struys, նույն տեղում, էջ 235:

XVII դարի 90-ական թվականներին եվրոպական մի այցելու բազարում 50—60 հազար բնակիչ էր հաշվում, որոնցից 30 հազարը հայեր էին, մնացածները՝ թուրքեր (ազրբեջանցիներ), սուսներ, վրացիներ, մոլմանիներ (հնդկաստանցիներ), շերքեզներ և դաղըստանցիներ<sup>1</sup>: Շիրվանի (Շամախու) խանության մասին նույն կաթողիկոսը գրում էր. «Եւ երկիրն էր բարեւի և շէն և մարդաշատ, թէ հայ ազգօք, որ ի Ղարաբաղու երկրէն ժողովուրդք յուրք անցեալ էին յերկիրն այն ավելի քան տեղականն. և թէ այլ ազգօք, որ բնիկ ի յերկրէն են»<sup>2</sup>: Շամախի քաղաքի մասին նույն հեղինակը հարում էր. «Էր պանտար Կասպիական ծովուն և յամենայն կողմանց վաճառականացն տեղիք բնակութեան և վաճառքի և շահավետութեան ի հնդկաց, ի հասոմոց, ի Ջուղայու, ի քուռաց և յամենայն երկրէ, և այսպէս լի էր ամենայն ստացուածովք և զանձիւք»<sup>3</sup>:

Ռուս դեսպան Վոյննակու ասելով, Շամախին բնում էր մտա մի քառակուսի տարածութեան: Քաղաքը, զեկուցում էր նա, խիտ բնակչութեան ունի, բայց ամբողջութեանը չունի. միայն նրա կենտրոնում կա հին մի ամբողջ՝ մի քանի սշաարակներով: Քաղաքի կազմը բաղկացած է 2—3 հազար հեծյալ և հետևակ զորքից: Հարկ լինելու զեպքում զենքի տակ կոչվում է մտա 10 հազար մարդ<sup>4</sup>: Այս վկայութեան համաձայն Շամախին ավելի լավ էր պաշտպանված, քան այդ թույլ են տալիս ասելու Օրբի ավյալները: Չպիտի մոռանանք, սակայն, որ Վոյննակին ասել էր այդ քաղաքը ոչ խաղաղ մի ժամանակաշրջանում: Օրբի ժամանակ, ընդհակառակը, Շամախին սուզված էր անգործութեան մեջ:

Անշուշտ չափազանցնում էր Օրբին, երբ հայերի ձեռքում էր պառակերացնում Շամախու ամբողջ առևտուրը: Նույնպես չափազանցություն է Շամախու հայ վաճառականների զինական միջամտության մասին արած նրա հայտարարությունը: Բայց և զակի չէ այդ լավատեսությունը: 1725 թվականին Դերբենդից գրած մի թղթում հայտնելով, որ Կուր գետից զեպի արևելք բնկնող ամբողջ տարածության վրա սպրոզ հայերի մեծ մասը կկամենար զենք վերցնել սուսներին ընդառաջելու համար՝ Մեյսարու վանահայր Մարտիրոսը

<sup>1</sup> P. Avril, Voyage en divers états d'Europe et d'Asie, 1692, էջ 82 և հա.:

<sup>2</sup> Ե ս ա յ ի կ ա թ ո գ ի կ ո ս, նույն տեղում, էջ 32 և հա.:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>4</sup> ЦГАДА, фонд Сношения России с Персией 1715—1718, дело № 2, էջ 73—74:

վրաց թագավորին առում էր թե՛ «մինչև որ Շամախի գնամբ, Քար գետից գետ 5—6 հազար մարդ հագին, ետրագով կու լինի»<sup>1</sup>: Պիտի կարծել, որ Վեդգինների ահից այս շրջանի հայերը, և մասնավորապես ասևարականները, լավ գինված էին:

Շամախում արշավող զորքը տրոհվելու է շրտ մասի: Ջարքի մի մասը պիտի արշավի Գանջալի վրա, որը շունի ամբուխուն և պաշտպանվում է միայն խանի երեսուն զինվորով, իսկ շուրջը բրիտանեյաններ են սպրում: Մյուս մասը պիտի արշավի Բորչալու՝ Լուվա բերդի վրա, որի բեյը կայազոր չունի:

Կանգ առնենք Յրի ծրագրի այս կետի վրա:

Ինչպես ասիք ունեցանք նշելու, արշավանքի համար նախատեսված ժամանակ Գանջալում նստում էր Ղարաբաղի բեկյարբեկ Բալբալի խանը: Հայտնի է, որ 1695 թվականին սա ռազմական մեծ ուժերով միջամտել և ճնշել էր Իրանի գեմ Վրաստանում բարձրացած ապստամբական գործողությունները: Նորերս տարագրված ժամանակագրական հիշատակագրությունների մեջ այս մասին կարգում ենք. «Քարպալի խանն, որ էր Գանջու բեկյարբեկի /և/ սպանալար Վրաստանայ ճի (100 հազար) մարդով մտաւ Վրաստուն, առաւ լավ պահպանութիւն, Լուռու պարսն Թամաղուզի խան արաւ. սուտուն, որ գնաց Թիրալէթ, դապ էլավ, Թամաղուզի խանին պուրմիշ արաւ վերայ Յիցու բեռդին, Ռ ու ԲՃ (1200) մարդով գնաց ժԱ. (11) ուրումն առաւ բ/և/սգն, կամին աստուծոյ, թվ. ՌՃԽԳ (1695)-ումն էր, սեկդ/եմ/բերի ամսումն. ամէն»:

Պահաջուր խանն որ է պարսն Լուռու, Աղջալզալու էսայ խանին թտոն, Քալպալի խանին սրդի, Շահ սուլթանն Ուտէինն, որ նազար արաւ, տաւ պաննութիւն նսրայ թվին ՌՃԾԵ (1706)-ին, գեկդեմ/բերի ամսին. ամէն»<sup>2</sup>:

Այս նշումներից սկներև է դառնում, որ արշավանքի համար նախատեսված ժամանակաշրջանում Լուռու իշխողները ևս սերտ համագործակցություն ունեին Գանջալում նստող բեկյարբեկի հետ:

XVII դարի կեսերին Լոռին կազմում էր սուլթանություն: Հիշվում են այդ ժամանակվա Լոռու մելիքներ և դարուզաներ<sup>3</sup>, 1663 թվականին Գուկում ընդօրինակված ժամագրքի հիշատակարանում կարգում ենք. «Իշխանութեան տանա Լոռու Իսալզանի որդի Սեփի խանին, մելիք և քալանխար Քարա խոսրով բեկին և էլիզար բեկին»<sup>4</sup>, 1684

<sup>1</sup> Յ 30 B, նույն տեղում, № 273:

<sup>2</sup> «Մանր ժամանակագրություններ», 11, էջ 523:

<sup>3</sup> Հմմտ. Ջ ա յ ա լ յ ա ն, 1, էջ 47 և հտ.:

<sup>4</sup> Ն. Մ ա ու, Յոցակ համառոտ ձևագրաց Սևանայ, էջ 431:

Թվականին զարձյալ նշվում են Լոռու Թահմազ զուլի խանը, այլև տեղի քաղանթարների, բեկերի և յուզբաշինների անուններ<sup>1</sup>: Արշավանքի համար նախատեսված տարում Լոռում իշխում էր նույն այն Թահմազզուլի խանը, որը, Քալբալի խանի հրամանով, 1695 թվականին, ինչպես տեսանք, 1200 մարդով մասնակցել էր Վրաստանի ապստամբության ճնշմանը:

Թե ո՞ւմ աչքի առաջ ուներ Օրին, երբ խոսում էր Լոռու բեյի մասին՝ պարզ չէ: Բուրբ պարագաներում թվում է, թե նա թերագնահատում էր Լոռու բեյի և մանավանդ նրա հեա կապված Գանջաչի բեկլարբեկի ուղղմական ուժերը կամ դրանց մոբիլիզացման հնարավորությունը: Նշենք, որ «Թագկիրաթ ալ-մուլյուր»-ի մեջ բերված ցուցակի համաձայն Գանջալում նստող բեկլարբեկի հրամանի տակ խաղաղ ժամանակ կար 1430 մարդ, իսկ Լոռի-Փամբակի սուլթանի հրամանի տակ՝ 550 մարդ<sup>2</sup>:

Նրբորդ զորախումբը պիտի շարժվի Ղափանի ուղղությամբ, սրի բեյը չունի ոչ ամբողջուն, ոչ կայազոր<sup>3</sup>: Վերջին զորախումբը պիտի հարվածի Հայաստանի զլխավոր իշնամուն՝ Նախիջևանի խանին, որն ոճի հարչուր մարդուց կազմված կայազոր, բայց, հանկարծակիի բերված՝ պիտի անձնատուր լինի մյուսների պես<sup>4</sup>: Պիտի կարծել, որ ծրագրված արշավի պահին խանությունն ուղղմական կայանը միայն նախիջևան քաղաքը չէր, այլև Աստապատը, որ 1709 թվականին, ինչպես նշել ենք անցողակի, հատուկ զորահրամանատար էր նստում:

Մինչ այդ, հատուկ մարդկանց ձևքով Արևմուտքից բերված զրոշակների մի մասը պիտի ուղարկվի մեկիք էմիրբեկին: Սբա միջոցով եվրոպական արշավախմբերի ժամանման մասին նախազգու-

<sup>1</sup> Ջ ա լ ա լ յ ա ն, ն ու յ ն տեղում:

<sup>2</sup> M i n o r s k y, Tadhkirat al-muluk, էջ 101 և հտ.:

<sup>3</sup> Դափթ Բեկի ապստամբության ժամանակ պարսից ուղղմական ուժերն ամբողջով էին Ղափանի Զեֆու բերդում և Սխիանի Որոտնա բերդում: Սակայն հնարավոր է, որ Ղափանի բեյ տեղով Օրին նկատի ուներ Բարգալում նստող Ղարաբաղի խանին, որչափ, ինչպես նշել ենք, Ղափան անգանուներ նա երբեմն կիրառում էր լայն իմաստով:

<sup>4</sup> Յ Յ Օ Յ, ն ու յ ն տեղում, № 9, § 17, հմտ. № 44:

Դիտենք, որ Նախիջևանի բերդն ու ամբողջունները ավերվել էին տակավին Շահ-Աբրահի կողմից: Շարդենի ժամանակ քաղաքն ուներ 2000 տուն բնակչություն և խիստ սղորմելի տեսք, չնայած որ հանդիսանում էր տրանզիտային առևտրի հանգույցներից մեկը: Ըստ «Թագկիրաթ ալ-մուլյուր»-ի Նախիջևանի խանի հրամանի տակ խաղաղ ժամանակ պիտի լինեի 800 մարդ: V M i n o r s k y, Tadhkirat al-muluk, էջ 101:

շացված՝ Ղափանի մելիքները անհապաղ զորահավաք պիտի կազմակերպեն և հինգ հազար մարդով պաշարեն (կամ զուցե նույնիսկ անմիջապես զբաղեն) Հայաստանի միակ բերդաքաղաքը՝ Երևանը:

Օրին տարբերանշում է Երևանի բերդն ու բուն քաղաքը: Վերջինիս բնակիչները բացառապես հայեր են, բերդում՝ հիմնականում՝ մուսուլմաններ»<sup>1</sup>։ հայերից լինում են այդտեղ միայն փողերանոցի և զինանոցի արհեստավարները, որոնց թիվը երեք հարյուր մարդուց շատ չէ: Բերդում նստող խանն ունի միայն 200 զինվոր<sup>2</sup>:

Օրագրի այս կետը կարոտ է որոշ պարզաբանութեան:

XVIII դարի սկզբին Լեյտիա սելեկիրները հաշվում էին Երևանում մոտ 40000 բնակիչ, որոնցից հայերը իբր թե այդ թվի մի քատորդից ավելի չպիտի եղած լինին<sup>3</sup>: Այդ տեղեկանքին հակասում է թեևուզ հենց Երևանի հին հայ եկեղեցիների քանակը: 1670-ական թվականներին Սահան վարդապետի տեղեկութեան համաձայն Երևանի քաղաքի բնակչությունը հաշված է 4000 առձև<sup>4</sup>: Շարդենը բերդի բնակչությունը հաշվում էր միայն 800 մահմեդական տուն: Բերդում հայերն ունեին խանութներ և արհեստանոցներ, ուր աշխատում և առևտուր էին անում ցերեկվա ժամերին՝ իրիկնադեմին վերադառնալով բերդապարսպից զուրս գտնված իրենց տները: Բերդը պաշտպանված էր 2000 մարդով<sup>5</sup>: Տուրքերից բերդապահների թիվը հասցնում է 2500-ի<sup>6</sup>, Լուկան՝ 5000-ի<sup>6</sup>: «Թաղկիրաթ ալ-մուլյուք»-ի մեջ բերված ցուցակը Երևանի բեկլարբեկի տրամադրութեան տակ եղած մարդկանց թիվը հաշվում է 2660 հոգի<sup>7</sup>:

Օրիի և մեր բերած աղբյուրների ավյալները բերդը պաշտպանող մարդկանց քանակի մասին չեն համընկնում: Սակայն առերևույթ է այս հակասությունը: Այդ աղբյուրներում նշված է բերդապահների պաշտանական թիվը կամ պատերազմի ժամանակ բերդը պաշտպանող զինվորների մասավոր քանակը: Օրին, ընդհակառակը, ճկատի ունի խաղաղ ժամանակ բերդում առկա զինվորների փաստական թիվը:

Կուզովիկոս XIV-ի տեղեկատուներից մեկը այսպես էր նկարագրում Երևանի բերդի վիճակը. «Բերդը շրջափակված է կրկնակի պարիսպներով. պարիսպները կավակերտ են, ունեն երեք-չորս ու-

<sup>1</sup> ЭЗОВ, նույն տեղում, № 9, § 17, հմտ. № 44:

<sup>2</sup> Lettres édififiantes, III, էջ 25:

<sup>3</sup> De Moni, Histoire critique de la creance etc., էջ 220:

<sup>4</sup> Chardin, II, էջ 162:

<sup>5</sup> Tournafort, նույն տեղում, II, էջ 142:

<sup>6</sup> Lukas, Paul, Voyage au Levant, Paris, 1731, II, էջ 254:

<sup>7</sup> V. Minorsky, Tadhkirat al-muluk, էջ 101:

նուչտօյի հաստութիւնն և մի քանի բարձր աշտարակ: Սակայն բերդը շունի ոչ մի հարմարանք, որ կարողանար մտտենալ ժամանակակից մեր ամբուլթյուններին... Պատերազմի ժամանակ խանը կարող է ստրի վրա դնել այդտեղ 12 հազար մարդ, խաղաղ ժամանակ՝ 3 հազար մարդ, թեև ոչ մի ջանք չի անում պահել բերդում մարդկանց այդ կոմպլեկտը: Զորքի մեծ մասն ապրում է քաղաքից դուրս՝ գյուղերում, զրնթև ամբողջ տարին գլուխ պահելով ուձիկով կամ բանեցնելով որևէ արհեստ»<sup>1</sup>:

Երևանի բերդը, — շարժանակում է Օրին, — ունի 30 թնդանոթ, սուանց հրասանդի, սուամբրի և հրանյութի, սրանց մասին գաղափար իսկ շունին իրանցիները<sup>2</sup>: Բերդապարիսպների առաջ չկան խրամատներ, այնպես որ թնդանոթները կարելի է ընդհուպ մտտեցնել բերդի պատերին<sup>3</sup>: Բերդը կարելի է գրավել նույնիսկ առանց թնդանոթի, քանի որ նրա վառողապահեստն ու զինապահեստը գտնվում են հայերի ձեռքին. նրանց ձեռքի տակ են նաև քաղաքի փողերանոցը և հայ արհեստավորները, որոնք բանում են այդտեղ<sup>4</sup>: Քաղաքի զույգ զոնների մոտ կանգնած է մի-մի պահապան, բայց ոչ մի պահակ մարտկոցներում կամ պարիսպների վրա: Կարելի է կապվել ուղղմապահեստի հայազգի ինժեներ կապիտան Նավասարդի ու սաղմապահեստի հայ կառավարչի և սրանց միջոցով նաև բերդում բանող հայ արհեստավորների հետ. հանկարծակիի բերելով՝ կարելի է զինաթափ անել քաղաքագտան պահապաններին ու զինվորներին, սրանց թիվը հիսուներից ավելի չէ<sup>5</sup>: Անգամ եթե գլուխ չգա այդ՝ փոքր ուժերով կարելի կլինի պաշարել քաղաքը, նախքան վրա կհասնեն կուրֆյուրստի թնդանոթները: Քաղաքի մոտ կա մի բարձունք, որն իշխում է շրջակայքի վրա: Օրին նկատի ունեն անշուշտ քաղաքից դեպի հյուսիս մզոնաչափ տարածությամբ վրա գտնված

<sup>1</sup> Du Mans, նույն տեղում, Appendice, XLV, էջ 301 և հա.:

<sup>2</sup> ՅՅՕՅ նույն տեղում, № 9, § 18. նույնը հաստատում է նաև Դյու-Մանը. ...de jeter des bombes et de grenades, et le contraindre, les «assieges de s'enterrer tout vis l'on ne scait ce que sest», Du Mans, նույն տեղում, էջ 157 և հա.:

<sup>3</sup> Ֆորտիֆիկացիայի բոլոր տերմինները բացակայում են պարսկերենում, գրում է Դյու-Մանը՝ Երևանի բերդի կապակցությամբ: Տավերնյեն ղիտում էր սրամտորեն, թե այդ բերդի կափն պատերը անձրեից ավելի են վախենում, քան թնդանոթից (Tavernier, նույն տեղում, էջ 38): Ասում են, Երևանի բերդը Նիկոլայ 1-ը կախնոթի է նմանեցրել:

<sup>4</sup> Որ XVII դարի կեսերից ի վեր Երևանի փողերանոցը գտնվում էր հայ մարդկանց ձեռքերում, այդ մասին բազմաթիվ վկայություններ կան նաև Զաքարիա Աղուլեցու մոտ:

<sup>5</sup> ՅՅՕՅ, նույն տեղում, № 9, § 18:

Վշտալի-Ղարան, որը, ինչպես նշում էր Շարգենը, պաշտպանված էր կրկնակի պարիսպներով ու հրամանախնդրով: Բազմապիսի կլինի աշխարհից Զ՝ սուր նետեր, առում է Օրին, սրպետի հրի ճարակ պատնա քաղաքը և սպառվի պարենապահատից զուրկ բերդի դեմադրություն<sup>1</sup>: Օրիի հիշատակած Երևանի բերդում ծառայող հայ խմբիներ նավասարդը և բերդապահատը կապիտանը քաղաքի պաշարման ժամանակ խուսապեցել են իրենց օժանդակությունը<sup>2</sup>: Պիտի կարծել, որ էջմիրածնից Այունիք անցնելիս կամ Այունիքից վերադառնալիս նա երևանում հանդիպում էր ունեցել այս մարդկանց հետ:

Ռազմական գործողությունները պիտի գյուրանան մանավանդ շնորհիվ այն բանի, որ Երևանի խանությունը բնակիչների ճնշող մեծամտանությունը կազմում են հայերը, բոլոր մեծ ավանները և գյուղերը բնակեցված են հալերով: Խանությունն ունի երեք խոշոր մարդ, գրեթե ամբողջովին հայ բնակչությամբ: Մուսուլմանների իրանցիների և թուրքերի (ազրբեջանցիների) թիվը մեծ չէ<sup>3</sup> և իրանցիները շին վստահում նրանց: Համեմատաբար ավելի մեծ վստահություն անեն իրանցիները հայերի նկատմամբ: Ինչ վերաբերում է Օրդուբադի թուրքերին (ազրբեջանցիներին), սրանք բռնում են «չեղար» գիրք<sup>4</sup>:

Ընդունված էր սուել, թե Երևանի բերդը Իրանի հյուսիսային բանալին է: Օրե՛ն բաժանում էր այդ կարծիքը: Գրավելով Երևանը, ստում էր նա, ուղիղ ճանապարհ կրացվի դեպի Նախիջևան, որի գրավումով ավարտված կլինի Հայաստանի նվաճումը: Հետաքրքրական է, որ 1722 թ. Մինաս վարդապետ Փերվազյանը, ըստ էության կրկնելով Օրիի միտքը, հայտնում էր, որ Հայաստանի ազատագրման գործին ծառայող Ղարաբադի սպանական ամբույությունների — սղեախների — «մտթլարը» Երևանի գրավումն է և որ Երևանի բերդը նրանք համարում են «Իրանու երկրի բանալին»<sup>5</sup>:

<sup>1</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 9, § 19:

<sup>2</sup> Նույն տեղում, № 9, § 18:

<sup>3</sup> Օրիի այս մտանաշուժը կարող ենք հաճապել Տավերնյի վկայությամբ. XVII դարի կեսերին կարելով Անիի վրայով կարսից Երևան տանող ճանապարհը՝ ֆրանսիացի այս ուղեգիրն ասում էր, թե այդ կողմերի քաղաքներում և գյուղերում մի մահմեդականի գիմաց կարելի է հաշվել հիսուն հայ: Պիտի կարծել, որ Երևանի գաղաաններում մուսուլման բնակչությունը սովորապես պիտի լինի ավելի ուշ՝ XVIII դարում:

<sup>4</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 9, §§ 18, 19: Օրդուբադի չեղարությունը պիտի բացատրել երևի նրանով, որ Շահ-Աբրահիմ օրերից ի վեր այդ քաղաքը վայելում էր արտակարգ արտանույություններ (սե՛ս Վ. Ս. Սեդրուսեվսկիի. Очерки, էջ 118):

<sup>5</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 231:

Բուրբ այս ավյառները հիմք են տալիս եզրակացնելու, որ Օրին համարում էր Երևանի խանութները Հայաստանի ապագա պետականութեան ոչ միայն էթնիկական ու քաղաքական կենտրոնը, այլև իր ծրագրի իրականացման սաղմավարական հիմքը: Պատմական հետազոտանքները լիովին արդարացնելու էին Օրինի նախատեսությունը:

Արշավուղ զորքերը Երևանից կշարժվեն շարս օրվա հեռավորություն վրա գտնված Թավրիզ շահաստանը: Այդ կողմերում հայեր չկան: Թավրիզում նստող փոխարքան (Ազրբեջանի բեկլարբեկը) ունի մեծ զինադահլու, թնդանոթներ ու հրացաններ: Ծիշտ է, այս վայրերում ևս չկան ամբուխներ ու զորակայաններ, այնուամենայնիվ Թավրիզն աննելու համար հարկավոր է արդեն ունենալ մեծ զորարանակ: Թավրիզի դրավումից հետո կարելի է ձմեռել Սոփիան քաղաքում, երկյուղ չկրելով հարձակումից:

Փոխադրելով սաղմական գործողությունները Արաքսի մյուս ափը, Օրին կարծես կամենում էր մոտենալ հայ ազատագրական լեզենդի վազեմի նպատակակետին՝ ֆրանկների օժանդակությամբ հասնել հայ քաղաքական բաղձանքների հեռակետին՝ դրավել «Դավլեթ շահաստանը»: Երա մոտ այդ խնդրի լուծումը հետամուտ էր պաշտպանողական նպատակի: Դրանով կամենում էր ասպատակել ու ավարի տալ թշնամու պարենավորման շտեմարանը և միաժամանակ ազատարար բանակի դիրքերն ամրացնել հայկական լեռնաշխարհի հարձակողական ու պաշտպանողական բնագծերի վրա<sup>2</sup>: Ուշագրավ է, որ 1828 թվականին Թավրիզի և շրջակա գավառների ժամանակավոր գրավումով ավարավեց ուս-պարսկական սլատերազմը: Այդ ժամանակ ևս Թավրիզի դրավումը անհրաժեշտ կզավ սոսկ Երևանի նվաճումը սաղմականորեն և քաղաքականապես ամրապնդելու համար:

Նկարագրելով Թավրիզը՝ Օրին նշում էր, որ դեղանիստ ու ընդարձակ այդ քաղաքը առևտրական կայան է իրանցիների, թուրքերի, հնդկաստանցիների և մոսկովցիների համար: Այս քաղաքի

<sup>1</sup> Հաս Շարգենի, XAVI դարի երկրորդ կեսին Թավրիզն ունեցած պիտի լինի մոտ կես միլիոն բնակիչ: Քաղաքը զուբի էր ամբուխներից ու շրջապարիսպներից: Բեկլարբեկը պահում էր 3000 մարդուց բաղկացած հեծելազոր. բացի այդ, նրան ենթարկվում էին Չորսի, Ուրմիայի, Մալաղայի և Արզարիլի խաներն ու քառն սուլթան, որով նա իր արամազրութեան տակ ուներ 11 հազարի չափ զինվոր: Տե՛ս Chardin, նույն տեղում, II, էջ 320, 327 և հտ. և 344:

<sup>2</sup> Э 3 0 В, նույն տեղում, № 9, §§ 21, 22 և 29:



միևերքներն ու տպրանքները բավական են հարչուր հազարանոց բանակ հազդանելու և զինելու համար: Գալթակղիչ իր նկարագրութիւններով Օրին կամենում էր վասն ըրարեպաշտ խաչակիրքներ ընշարագոյության բնազդները<sup>1</sup>:

Օրին պֆալցյան ծրագրի տակտիկական գլխավոր խնդիրն էր նախազգուշական միջոցառումներով և արագ զորաշարժերով հանկարծակիի բերել թշնամուն, զրկել նրան ինքնապաշտպանութեան և հարձակման միջոցներէ: Ռազմավարութեան այդ եղանակը դժուրանում էր այս ժամանակաշրջանում, երբ երկրի կենտրոնը չէր կարող անմիջապէս խմանալ այն, ինչ կատարվում էր երկրի ծայրամասում: Ելնելով սրանից, Օրին 20—25 օրվա գործ էր համարում իրանական Հայաստանի զրավումը և այդ՝ ստանց լուրջ զինաբախութեան, առանց մարդկային ուժերի նշանակալի զոհաբերութեան<sup>2</sup>: Անվանապէս թշնամու գորքը փոքր չէ, հազարովում էր նա: Պատերազմի ժամանակ միայն հենց «Հայաստանի թագավորութեան» սահմաններում գտնված խանութեանները պարտավոր են տալ 48 հազար մարդ. Երևանի խանութեանը՝ 15 հազար, Բորչալուինը՝ 5000, Գանդալինը՝ 5000, Շամախունը՝ 10000, Նախիջևանինը՝ 10000 և Crisuan-ը՝ 3000<sup>3</sup>: Սակայն սրանք կովի պատրաստ զինվորներ չեն: Երեք ամիս է հարկավոր, սրպեսզի թշնամին ի վիճակի լինի հրապարակ հանել զեթ հինգ հազար մարդ: Իրանական գորքը, պարզաբանում է Օրին, չի բաժանված կանոնավոր ռեգիմենտների: Իրենց ընտանիքներով ու տնտեսութեաններով զինապարտները բանակում են Հայաստանի և հարեան խանութեանների լեռնաստաններում: Ամեն տարի ամառվա ամիսներին լեռներ են քոչում երկու հարչուր հազարի հասնող տնտեսութեաններ՝ իրենց ձիերով և ուղտերով, ջորիներով ու սլխարներով: Սեպտեմբեր ամսում զինապարտ քոչվորքները վերցնում են իրենց վրանները և չվում Մոսկովիայի, Վրաստանի և Հայաստանի սահմանագծերի վրա գտնված տար տափաստանը — Մուղանի գաշար — ուր մնում են մինչև մայիս. պֆալցյան զորքերը Շամախին լքելու պահին քոչվորները կման արշավողների աջ կողմում հարչուր մղոն հեռավորութեան վրա: Աշնան կեսերից ձյունապատ լեռնաստանը անանցանելի ամբարտակ է կազմում Հայաստանի և Մուղանի միջև. այդ պահին ոչ մի մարդ անցնել ալգոտեղից դեպի մեր կողմերը կարող չէ, իսկ մա-

<sup>1</sup> Յ 3 Օ Յ, նույն տեղում, № 9, §§ 18, 20 և 21:

<sup>2</sup> Նույն տեղում, № 9, § 23:

<sup>3</sup> Վերջինս եղծված անուն է անշուշտ. կեն կարդում է «Գորիսուն», որ անհավանական է թվում մեզ, քանի որ այդպիսի խանութեան կամ վարչական կենտրոն չկար:

նաև բանակի նստակցաց հատվածի, Յիֆանիչիների (Երացանա-վոլգների) մասին<sup>1</sup>: Յոթանասուն տարուց ավելի է, նշում է Օրին, իրանցիները շին անել ո՛չ պատերազմ, ո՛չ պաշարում: Վրաց սպասամբուլյան ժամանակ կովոլ կողմերը շարժվեցին իրենց գիրքերից, խուսափելով բացձուկաա բախումներից: Մի քանի տարի ասոջ Սուլեյման բեկ կամ Սուլեյման բարա անունով մի սգորե-ջանցի երկրի հին տիրողների բարունակ հռչակելով իրեն, հինգ հազար մարդով երեք անգամ ջարդեց իրանցիներին և քիչ էր մնում գրավեր Քավրիզը: Հասցնելով իր բանակը երեսուն հազարի՝ մի սրահ Սուլեյման բարան սպանում էր անը դասնալ Իրանի թագա-փորովյանը: Սարսափած, որ ալղբան վասնգավոր մի շալալի կա-րոյ է ի վերջո գարծնել իր գնդերը նաև սուլթանի դեմ, 1698 թվա-կանին Ռուբրիան վեց փաշաների ղեկավարությամբ կազմեց երեսուն և հինգ հազարանոց մի բանակ և վերջ ավելց սպանալիքին<sup>2</sup>:

Սուլեյման բեկի մասին, որ «ասէր գանձն գոլ յազդէ աւաջուց թագաւորացն որք նստէին ի Դավրեժ շահաստանի Ջահանշահ և Եագուլ անուանեալք», ասել է նրա թուրքմենական ծագման մա-սին, — նշում է նաև Ազվանից Եսալի կաթողիկոսը<sup>3</sup>: Վանի մի ժամանակագրության մեջ, ուր խոսվում է Ռուբրիայից փախած Իս-մայի փաշայի մասին, ասված է. «սա յաղթեալ էր գրաբայն յան-ցեալ ամին (ուրեմն՝ 1700 թվականին — Ա. Հ.), այն որ ներհակէր քնդլեմ Պարսիցն, յորոյ պատճառէ կղեալ էր երախտաւոր Պար-սիցն, որք սիրով ընկալան զնա...»<sup>4</sup>:

Պիտի կարծել, որ Քավրիզը գրավելու գործում Սուլեյման բա-րայի ունեցած հաջողության պատճառներից մեկը հանդիսացել էր հենց իրանական գանձաբանի ու բանակի քայքայված վիճակը: Օրից դոքր-ինչ հետո, Պեարոս ցարին հղած իր ղեկուցագրի մեջ, գետգան Վոլինակին հաղորդում էր, թե քանի որ ներկայիս (Իրանի) գանձարկողը դատարկվել է և դորերին վճարելու միջոց չկա, ամեն անգամ Քավրիզի սպետարարի (իմա՝ Աղրբեջանի բեկլարբեկի) հավասրած դորերը նորից ցրիվ են գալիս, քանի որ սաճիկ չեն տալիս<sup>5</sup>:

Հանգուզն ջալալիի մասին շրջադ պատմությունները տարած-

<sup>1</sup> Հմմտ. Tavernier, նույն տեղում, էջ 660, Chardin, նույն տեղում, V, էջ 305 և հտ.:

<sup>2</sup> Эзов, նույն տեղում, № 9, § 28:

<sup>3</sup> Եսալի կաթողիկոս, նույն տեղում, էջ 36:

<sup>4</sup> «Մանր ժամանակագրություններ», II, էջ 421:

<sup>5</sup> E. C. Зевакин, Азербайджан в начале XVIII века, журнал Вольнского, էջ 18 և հտ.:

ված պիտի լինէր մանավանդ Նախիջևանի խանութջան մէջ, բանի որ նրա գործունեութեան վայր էր հանդիսացել հենց, ինչպես վկայում էր Նաաչի կաթողիկոսը, «Աստասպատա երկիրը»<sup>1</sup> և պիտի որ մեծ տարավորութիւն արած լինէին Օրիի վրա ու ազդած նրա ստրատեղիական ծրագրին: Մենք դեռ առիթ պիտի ունենանք նշելու նույնիսկ Օրիի և Սուրեյմանի համդիպումն ու նրանց մեջ հաստատված բարեկամութիւնը:

Ռազմական տեսակետից խիզախ մտահղացում էր թերևս, երբ Օրին երեք-չորս շարաթիւս գործ էր գործնում Հայաստանի նվաճումը: Սակայն պատահական չէ այդ մտահղացումը: Մեր հիշատակած Նաաչի կաթողիկոսը, Ղարաբաղի մելիքների ռազմա-քաղաքական ղեկավարը, փոքր-ինչ հետո համարելու էր իրանցիներին «խուլածորթ և կանացի»։ «Ի գիշերի մինչև ցառաւօտուն ընդ խոր րնովք անկանին», — ասում էր նա պատմութեան իր գրքում՝ նրանց մտախն:

XVIII դարի երկրորդ տասնամյակի վերջերին հետախուզական նպատակով սղեւորութիւններ կատարելով Հյուսիսային Իրանում (Շամախուց՝ Սպահան և Սպահանից՝ Գիլան)՝ ռուս ղեսպան Վոլինսկին նույնպէս ստացել էր այն տպավորութիւնը, թե Իրանի այդ երկրամասը անսպաշտպան է և անապահով, շիան իսկական բերգեր, հրետանին տկար է, հեծյալներն աներիվար, բանակն անգին ու անհամակերճանք<sup>2</sup>:

Եթե իսկապէս արամազրվելու լինէին Օրիի պահանջած զրախ ուժերը, նրա ծրագիրը կարող էր զլուխ գալ գյուրութեամբ: Ինչ կարող էր անմիջորեն հակադրել Իրանը եվրոպական հրետանուն և թեկուզ հենց մի քանի հազար կովոզների և նրանց միացած հայ և վրաց ապստամբների անակնկալ հարձակմանը: Հավանորեն շատ քիչ բան, որ հնարավոր չլինէր հտ մղել:

Բայց միայն այս չէ, որ պիտի որոշեր արշավանքի ելքը: Կարելի է հաղթական շինել ճակատամարտում, բայց և այնպէս հաղթանակով ելնել պատերազմից: Երկու գարսանընդհատ Իրանը դիմադրում էր Թուրքիային՝ զրեթե միշտ խուսափելով բացճակատ բախումներից: Մանր կռիւլների հեռանկարը չէր անտեսում նաև Օրին: Եվ այս է հենց պատճառը, որ կամենում էր Հայաստանը գրավելուց հետո մճռական պայքարի հարկադրել թշնամուն: Նրա ասելով՝ իր գորբերի նշանավոր մասը Իրանը հավաքագրում է Անդրկովկասում: Պատերազմի ժամանակ վրացիները պարտավոր են տալ պետու-

<sup>1</sup> Ն ս ա յ ի կ ա թ ո ղ ի կ ո ս, ն ու չ ն ս ե ղ ու մ:

<sup>2</sup> В. П. А н с ц о в, Персидский поход Петра I-го, էջ 166 և հտ.:

թշանք 40 հազար մարդ. հենց որ կազմակերպվի Հայաստանի թագավորությունը՝ վրացիները չեն կատարի այդ պարտավորությունը<sup>1</sup>: Կորցնելով Վրաստանն ու Հայաստանը՝ իրանցիները պետության մյուս մասերից բաժն հազար մարդուց ավելի նոր դորք հրապարակ հանել կարող չեն, բանի որ առկա նրանց զորքը զբաղված է պետության սահմանները Մեծ Մոզուլի գեմ պաշտպանելու գործով և հենց այդ սահմանների վրա կախվ է գնում ներկայիս<sup>2</sup>: Մնում է այսպիսով «Հայաստանի թագավորության» սահմաններում թափառող բաշխարների կենդանի ուժը, որը Օրին ենթադրում էր ոչնչացնել կամ գինաթափել Կուր գետի ափերին 1701 թվականի գարնանը և այդպիսով Պֆալցի կուրֆյուրստի առաջ քնդմիշտ ծնկի բերել Իրանը: Մնացած ստեղծավթիվ ու վատարակ զորքերը հույս ուներ կաշկանդել երկրի մյուս կողմերում: Կուրֆյուրստը կարող է հայտնություն հասնել, ենթադրում էր նա, գործ գնելով իր կապերն ու սղեղեցությունը և սղանական ու պորտուգալական մի բանի սղամանավեր կենտրոնացնել Պարսից ծոցում, Բենդեր-Արասի նավահանգիստը գրավելու համար: Մինչ այդ, կուրֆյուրստի զորքերը կհասնեն Իրանի խորքերը, առանց գծվարություն առաջ շարժվելով Ռավրիդից Շիրազ<sup>3</sup>:

Թագմական այս ծրագրերը հանդում են Մուղանի ձմեռանոցներից գեղի Հայաստանի արտատվայրերը չվող գինված վրանաբնակներին մեկեն ջնջելու հեռանկարի վրա: Սակայն որքա՞ն հիշա է այն պնդումը, թե Սեֆյանների սղմական ամբողջ ուժը մասնատված էր բացառապես Հայկական բարձրավանդակի և Մուղանի տափաստանի սահմաններում: Ղզլրաշ կոմսինդկենտները չէին հավաքագրվում բացառապես Անդրկավկասում թափառող ցեղերից, ինչպես և իրանական զորքը չէր կենտրոնացած բացառապես երկրի այդ ծայրամասում: Օրին ժամանակակից սղջյուրներում չենք գտնում փաստեր, որոնք հավաստել կարողանային այդ: Առկա փաստերը պարզում են դրան ներհակող իրադրություն: Այսպես, Լը-Բրյունը, որը ձանապարհորդում էր Իրանում՝ 1701 թվականին, այսինքն՝ հենց նույն այն տարում, երբ ենթադրվում էր գլուխ բերել Օրինի ծրագրերը, որոշակի ասում է, թե Ղզլրաշներն իրենց վրաններով և անսղգններով հանդիպում են ամբողջ Իրանում<sup>4</sup>: Եվ Գեղտեցեթ, որ սա հենց այն սղեղորդն է, որ վկայում էր, թե Կուրի և Արասի ավազաններում իրանցիները վատ են ամբացած և գինա-

<sup>1</sup> Эзов, *нույն տեղում*, № 9, § 30:

<sup>2</sup> *նույն տեղում*:

<sup>3</sup> *նույն տեղում*:

<sup>4</sup> Le Brun, *նույն տեղում*, էջ 208:

դրութեան անընդունակ<sup>1</sup>: Կարող կլինե՞ր նա ասել այդ, եթե քաղաքացու հենց երկրի այս կողմերում լինեին կենտրոնացած պետութեան մարտական ուժերը: Ուրիշ մի ժամանակակից, Սանտոնը, նազարգում է երկրի բաժանադրութիւններում պահվելիք զգրաշնորհի թիվը: Պարզվում է, որ հյուսիսային Իրանի այն մասում, որն Օրիխ մոտ նշված է «Հայաստանի թագաւորութեան» անունով, միայն 24 նազար մարդ պիտի պահվէր, մինչդեռ մյուս ծալրամարդերում զորքերի ընդհանուր թիվը հասնելու էր 106 հազարի<sup>2</sup>: Շարդենի ժամանակ Թավրիզի բեկլարբեկի և նրան Լնթակա խաների ու սուլթանների հոգաւարութեան տակ գանձած հեծյալների թիվը հասնում էր 14 հազարի, իսկ XVIII դարի սկզբին՝ շուրջ 11 հազարի<sup>3</sup>:

Օրիչից փոքր-ինչ հետո, խոսելով Մուղանի դաշտի «շահականների» մասին, ուսա դեպքում Վոլինսկին գրում էր. «Թեպետև և ինձ ասում էին, որ դրանք մեծ թիվ են կազմում և կարող են 30 հազարանոց զորաբանակ կազմել, այնուամենայնիվ ևս այդքան մարդ չտեսա, թեպետև տեսել եմ նրանց քոչակայաններից շատերը»<sup>4</sup>:

1725 թվականին կազմված և Սեֆյան Իրանի պատմութեան համար խիստ կարևոր «Թագկիրաթ ալ-մուլյուք» տեղեկագիրք իրանական բանակում հաշվում էր 112 հազար մարտիկ<sup>5</sup>: Իհարկե, այդ չի նշանակում, թէ յուրաքանչյուր վայրկյան այդքան կույս կար գննքի տակ: Հատկանշական է 1684 թվականին Իրանում գեղերած նշանավոր գիտնական Էնգելբերտ Կեմպֆերի վկայութունը. իրանական կալոզների թիվը հաշվելով 90 հազար մարդ, նա անում էր բնորոշ վերապահում՝ „qui, si in armis non prostant in chartis et catalogis rationum inveniuntur“, այսինքն՝ «որոնք, եթե առկա չեն իրենց գննքերով, գեթ նշանակված են պարենավորման մատչաններում ու ցուցակներում»<sup>6</sup>:

Այսպիսով պիտի գանք այն եզրակացութեան, որ այնքան դուրութեամբ «Հայաստանի թագաւորութեանը» նվաճելուց հետո, այնուամենայնիվ դեռ հարկ պիտի լինէր կտարել թշնամու կենդանի ուժը նրա բուն երկրում, համառ ու տեսական կռիվներ մղելով կենտրոնական Իրանում,՝ երբ թշնամին միջոց կատանար վերականգնելու եր ասպմական պոտենցիալը: Հարկավ այդ շէր լինելու մասնավրա-

<sup>1</sup> ЭЗОВ, նույն տեղում, էջ 154:

<sup>2</sup> Sanson, նույն տեղում, էջ 105 և հտ.:

<sup>3</sup> И. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв., I, էջ 293:

<sup>4</sup> ЦГАДА, фонд Сношения России с Персией, 1715—1718, էջ 594:

<sup>5</sup> V. Minor sky, Tadhkirat al-muluk, էջ 35:

<sup>6</sup> E. Kaempfer, նույն տեղում, էջ 73:

չին մի պատերազմ՝ Իրանի երեսակալված Կարսառնությունները գրավելու կամ նրա գինական ուժերի մնացորդները գինախափելու նպատակով ձեռնամխոված մի գրոսանք, այլ գիրքացին կոխիվների նա կապված մի պատերազմ, ստանց որի անհարիմ պիտի լիներ պաշտպանել Պֆալցի կուրֆյուրստի սպարաշը: Երկու տասնամյակ հետո նման մի իրավիճակի ասոջ գրվեցին Իրանի գեմ ապստամբում աֆղանները՝ հարկազրված լինելով Սպահանը գրավելուց հետո իսկ շարունակել պատերազմը: Սակայն աֆղանները վարեցին իրենց սագմարչավը շատ ավելի նպատաավոր պայմաններում: Նրանց բեմերը մեկն էր այն ապստամբություններից, որոնք այդ պահին բռնակ էին Իրանի այլևայլ ծայրամասերում: Վճռական գերխաղաց նաև այն օժանդակությունը, որ ստացան նրանք Քուրքիայից: Նման օժանդակություն ստանալ Քուրքիայից հայերը հարկավ կարող չէին: Բնդհակառակը, հայանի է այն թշնամանքը, որ նույն այդ ժամանակ ցույց տվեց Քուրքիան Ղարաբաղի և Ղափանի սպրտամբության նկատմամբ: Քուրք հրամանատարությունը հասցրեց իր բանակը մինչև երևան և ներթափանցեց անգամ լեռնաչին Հաստատան: Ճիշտ է նրանք անգիպեցին հալ գլուխացիների և արհեստավորների հերոսական դիմադրությունը, անգամանք, որ առաջուցում է, թե լուրջ հիմքեր անեցամ պիտի լինեին նաև հայաբնակ այդ բերդաքաղաքը գրավելու մասին Օրիի հայտարարությունները: Այնուամենայնիվ, ինչքան էլ հատկանշիչ լինեի պֆալցյան ծրագիրը հետագա անցքերի պատմական հասունացման առակետից՝ ուշագրավ այդ վավերագրի խմբագրման պահին նրա հեղինակի առաջաշտում բացակայում էր քաղաքական այն գործոնի հաշվառումը, որը քառորդ դար անց հար հակակշիռ պիտի կազմեր Իրանում ծագած քաղաքացիական կոխիվներին միջամտած թուրք բանակների գրոհը շափավորելու և հայկական շարժման հետագա բնթացքը հաստատուն հունի մեջ մտցնելու նամար: Մեր խոսքը նուստատանի մասին է հարկավ:

Հետագայում Օրիի մտանանշելու էր նոր այդ գործոնը, որ մուծվելով սագմական իր հետանկարների մեջ, դարձնելու էր դրանք առավել սեռը մի ծրագիր: Սակայն նոր այդ գործոնի միջամտությունը վերացնելու էր չին ծրագրի արևմտակլրոպական կողմնորոշումը, հաղորդելով հալ սպատազրակական ակնկալություններին քաղաքական նոր ուղղություն, էական ուղղումներ մացնելով նաև Օրիի ռազմական հետանկարների մեջ:

Եթե անգամ ենթագրենք, թե պիտի հաջողվեր Իրանի գեմ ապ-

պարեզ հանել Սպանիայի և Պորտուգալիայի առևտրանավերը, եթե հաշվի առնենք այդ պետությունների նվազած առևտրական շահախորնդրություններն Իրանում և, այսպես կոչված, սպանական ժառանգության շուրջը հասունացող բախումն Արևմուտքում—ի՞նչ պիտի նակագրեին արևմտակրողական արշավողները Թուրքիային, որը հրճվանքով չէր դիտելու «Հայաստանի թագավորության» վերականգնումը: Այդ հարցը մտահոգում էր Օրիին, և սա, հարկավ, նշան էր դարձյալ նրա քաղաքական շրջահայեցության: Առժամանակ նա սնվում էր այն պատրանքով, թե կայսրը, և հաստանի թագավորը և դարը կհասկացնեն սուլթանին, որ կուրֆյուրստի թշնամանքը չի վերաբերում Թուրքիային, այլ բացառապես Իրանին: Եթե, այնուամենայնիվ, թուրքերը կռիվ հայտարարեն «Հայաստանի թագավորությանը», այդ դեպքում, ակնկալում էր նա, Հայաստանի վերահիշյալ բարեկամները նույնք՝ կանեն Թուրքիայի նկատմամբ:

Այս ամենից հետո պատահական չէ, անշուշտ, որ կուրֆյուրստին ուղղած իրենց գրություն մեջ մելիքներն առայժմ խնդրում էին միայն «սուաչին օգնություն»: Պատահական չէր նաև, երբ, հիմնելիք թագավորությունից գառ, նրանք նախատեսում էին նաև երկրորդ մի թագավորություն կազմակերպելու հնարավորությունը: Ըստ երևույթին, XVII դարում ևս եվրոպական խաչակիրները քրիստոնեական մի պետություն չէ միայն, որ հարկադրված պիտի լինեին կազմակերպել Արևելքում՝ իրենց գոյությունը երկարաձգելու համար: Փուլք չէ, որ փաստորեն սրանք պիտի պայքարի մեջ մրտնեին միմյանց հետ, կավի դաշար դարձյալ ընդհանուր թշնամուն գիջելու համար:

Եվ այսպես, եթե Հայաստանի նվաճումը նկատվում էր թեթև ու հաճելի մի գրոսանք, ապա նվաճված այդ երկիրը պաշտպանելու համար վերջիվերջո ծիր էր բացվելու մեծ պատերազմի, որի հաղթանակն սպահովելու համար Պֆալցի ծրագրում չկար հաստատարեալ կովան:



Լուկայան այդ գիտակցում էր ըստ երևույթին նաև ինքը՝ հայ մելիքների հանձնակատարը՝ Իսրայել Օրին: Բայց առայժմ այլ էյր շուներ նա, քան շլացնել իրեն հովանավորողի աչքը «Հայաստանի թագավորության» միրաժով: Ժամանակով Հայաստան, Օրին հայտնել էր մելիքներին, թե ինքը հղված է Ֆրանկստանի ամենամեծ և ամենագորեզ իշխաններից մեկի կողմից, որը ի փառս քրիս-

տանեական ուղղափառութեան ու մարդասիրութեան, կամենում է հայ երկրի կարիքների շափով գումարներ փոխադրել եկեղեցիների, վանքերի, մենաստանների, հիվանդանոցների և ստավաճաճաճ ալլ հիմնարկների օգտին<sup>1</sup>: Մեկիքների կամ իր անունից կուրֆյուրստին ուղղված թղթերի մեջ նա, ընդհակառակն, հայտնում էր, թե պատերազմի նախաձեռնելուց զտա, ստալժմ հայերը չեն սպասում ֆրանկներից ալլ օգնություն, բանի որ թշնամուն հաղթելու համար ունեն ըստ մյուս անհրաժեշտ պայմանները: «Մենք,— ստված է մեկիքների անունից խմբադրված թղթում,— ունենք և՛ բավականաչափ փող, և՛ կալվածք, և՛ կալույց ուժ, և՛ մյուս բոլորը, ինչ անհրաժեշտ է մեր ձեռնարկությունը պալս բերելու համար. մենք կարիք ունինք միայն մեկին, որը ղեկավարեր մեզ մեր երկիրը կառավարելու համար»<sup>2</sup>: Նույն ալլ խմաստով էլ կուրֆյուրստի առաջ նա դժագրում էր «Հայաստանի թագավորություն» շքեղ պատկերը:

Ալլ մի երկիր է, պատմում էր Օրին, որի բնութեանը և որի անասությունը կտան ալլն ամենը, ինչի պատքը կղզան կուրֆյուրստի գորքերը: Անհավատները պահում են ալլ երկրում ալլնքան անասուն, որ դրանց մատակարարած մթերքն իսկ կրավի տասը տարի բանակ կերակրելու համար: Նրանց ձիերը փոխադրության միջոց կծառայեն: Ղափանի ու Լոսու պղնձահանքերը՝ ամբողջովին հայերի ձեռքին կենարժնացած՝ անհրաժեշտ հումուլլ կմատակարարեն թնդանութներ պատրաստելու համար<sup>3</sup>: Չի պակաս նույնիսկ հնչուն գրամը: Մեկիքները հավաստիացրել էին Օրինին, թե իրենց երկրից — երկի ոչ միայն Ալլմիքից, ալլև ամբողջ Իրանահայաստանից — Ռուբրիալում կա սուկարով գրաղված 80 հազար հայ մարդ, և նշել էին միաժամանակ, թե իրենց երկրում շրջանառություն մեջ նույնքան փող կա, որքան և ալլ մարդկանց ձեռքին: Օրին հաշվում է ալլ գումարը 60 միլիոն լիվր (=ֆրանկ—Ա. Հ.)<sup>4</sup>: Անբավ է նաև Իրանի հարստությունը: Երկիրը պողպար, յի մետաքսով, բրնձով, մրդերով: Շամախու և Գանձակի խանությունները նույնչափ մետաքս են արտադրում, որչափ Գիլանի երկիրը<sup>5</sup>:

Ասուկարական բազարների մեջ Օրին առանձնապես շեշտում է Օրդուբադի հարստությունն ու ստղմամթերքը<sup>6</sup>: Պարսից ծոցի կող-

<sup>1</sup> Հմմտ. Յ 3 0 8, նույն տեղում, № 5, էջ 10:

<sup>2</sup> Յ 3 0 8, նույն տեղում, № 5:

<sup>3</sup> Նույն տեղում, № 9, § 10:

<sup>4</sup> Նույն տեղում, № 9, §§ 25 և 26:

<sup>5</sup> Նույն տեղում, № 9, § 28:

<sup>6</sup> Նույն տեղում, № 9, § 18:



մերում կա մեծ քանակությամբ մարզարիտ ու զորք համապար, Հնդկաստանին սահմանամերձ վայրերում՝ զմրուխտ ու մուշկ: Ի դեպ բոլոր այս հանրերը պատկանում էին իրանշահին կամ պետություններ և կապարով շահագործվում մասնավորների կողմից<sup>1</sup>: Արանյ թիվում կալին նաև հայեր, որոնք մասնակցություն ունեին թանկարժեք քարերի ասեարի մեջ: Ազամանդը, կարմիր հակինթը, շափյուղան և մյուս թանկարժեք քարերը գալիս են Հնդկաստանից, բայց իրանահայերի ձեռքին է գտնվում հարստության ազդյուր ծառայող այդ հանքերի շահագործումը<sup>2</sup>:

Օրին հայանում էր, թե եվրոպական գորադնողերը պիտի հսկայգվեն հայ մեծահարուստ խոջաների միջոցներով, և որ արշավանքի բոլոր ծախսերը կհատուցվեն եվրոպացիներին ևոսպատիկ ու ավելի. հարկ եղած դեպքում նույնիսկ մի տարվա ընթացքում, հնաշխմ մյուս օգուտները, որոնք պիտի ծլեն կուրֆյուրստի նախաձեռնությունից՝ բերելով մեկին հազար<sup>3</sup>:

Երկրի հարստությանը համապատասխանում է նրա ռազմունակությունը: Օրին պատկերացնում է Հայաստանը, որպես խիտ բնակեցված մի երկիր<sup>4</sup>: Կա ներկայացնում է հայասրնակ գավառների (provinces) և գրանց կովոյների այսպիսի մի ցանկ. 1) Դիզակ (Dezack) 10000 մարդ, 2) Վարանդա — 6000, 3) Քշտաղ — 10000, 4) ՄԼճ Ղափան — 60000, 5) Միսիան — 6000, 6) Գանձակ — 15000, 7) Լուսի — 6000, 8) Գեղարքունիք — 15000, 9) Զագյամ (Zaguiann) — 5000<sup>5</sup>, 10) Երևան — 15000, 11) Դարալա-

<sup>1</sup> Հմմտ. D u M a n s, նույն տեղում, էջ 187 և հտ., Chardin, նույն տեղում, V, էջ 398, Sanson, նույն տեղում, էջ 97 և հտ.:

<sup>2</sup> Չ Յ Օ Յ, նույն տեղում, № 9, § 27:

<sup>3</sup> Չ Յ Օ Յ, նույն տեղում, № 9, § 9:

<sup>4</sup> նույն տեղում, № 9, § 24:

<sup>5</sup> Օրիկ ժամանակ Զագյամ կամ Զագամ անունով նշվում էր Շամշազինի շրջանը: 1699 թվականին «Գանձայի երկիր» Քարզման գյուղում գրված մի հիշատակարանում կարգում ենք. «Ի թագաւորութեան կարմիր գլխոյ և իշխանութեան Զահամայ յերկրին Նիսիայի կոչեցեալ, որ յայտ ամի ևտան իշխանութիւն ի ձեռն նորին: Աստուած սորա խնամք ասած է սիրա սորա կակզացուցէ ի վերայ տառապեալ և թարանեալ ժողովրդեանն, զոր Քրիստոս տատուած ձեր սուրբ ազօթիւք փրկեցէ զմեզ ի յանօրինաց չարէն ամեն» (Հայկական ՄՄՌՒ Մատենագարան, ձեռ. № 3814, էջ 474ր): Մի այլ հիշատակարանում կարգում ենք՝ «Յերկրին Զագամայ (որ ի Շամշազին), ի զեղջս՝ որ կոչի Սուլթանեցիք, ի տեսչութեան... տեսան Եսայեայ... հայրապետի և քաջ հետարի, յախոս սուրբ Գանձասարի: Եւ ի վերտեսչութեան

պլաստ — 10000, 12) Նախիչևան — 5000. 13) Շամբ — 5000, 14) Երնջակ — 10000, 15) Ագուլիս — 6000, 16) Մեղրի — 3000 և 17) Guetatache (բնագրում գուցե եղած լինի Garatache — Ղարապաղ) — 5000:

Պատերազմի զեպում Հայաստանի այս գավառները կարող են առանց զժվարութեան սարի ելնել բտան և շորս ժամվա ընթացքում և կազմել շորջ 200-հազարանոց մի բանակ, այսինքն՝ շորս անգամ ավելի, բան կարող էր մի քանի ամսվա ընթացքում անել սղջ իրանական պետութեանը: Բացի այդ, Օրին մելիքների անունից հայտնում էր, թե ելյապական գործերի երևալուն պես նրանք պիտի կոչ անեն, որպեսզի հայրենիք վերադառնան բազմահազար այն իրանահայերը, որոնք առևտրով են գրազված Թուրքիայում: Գործի համար սա պիտի լինի խիստ նպաստավոր, մանավանդ որ բոլոր այդ վաճառականները ձիավոր են և լավ զինված: Հաշվի առնելով այս ուժերը՝ իրանահայ բանակի մեծութունը հասնելու էր 220 հազարի: Բացի այդ, շմոտանանք 80-հազարանոց օժանդակ այն բանակը, որ սպասվում էր Վրաստանից: Ուրեմն՝ ընդամենը 300 հազար: Սրանից դատ մելիքներն աչքախող չեն անում նաև բրիտանյա այն վիրաչեթները, — Արևելյան Անատոլիայից դատ Օրին աչքի առաջ անելու նաև Բալկանները — որոնց երիտասարդութունը չի ուզում ոչինչ: ավելի, բան պատերազմ հավատարի համար<sup>1</sup>:

Հետաքրքրականն այն է, որ Օրին հիշատակում է հայ մարտիկ ուժերի ֆանտաստիկ թվանշաններ, բայց չի կատարում գրանցով ֆանտաստիկ որևէ գործողություն: Ի՞նչ պիտի անել ավելի բան երկու-երեք հարյուր հազարանոց հայ-վրացական այդ բանակը: Գուցե այդ ս՛ւժն է, որ պիտի գրավեր Իրանի կենտրոնը կամ հակալիզիս կազմեր Թուրքիային: Օրին լուս է այդ մասին: Ըստ երևույթի, սպասվում էր զինվորական զորքի կազմավորումը նույնքան քիչ հավատ էր բնծայում զեկորատիվ զեր կատարող իր թվանշաններին, որքան և այսօրվա նրա ընթերցողը:

Նահանգին վերին Զաղամայ. Ղարապաղու կամ Ղրղու ձորիս... տեան Գաթի յաթսո սուրբ Գօշին Միթիարայ: Ի ժամանակս թագաւորին Պարսից սուլթան Նուսրէյինի Իմիրզայ շահին և տէրութենէ Թուրքանլարու Նահանգիս Աղիզույի խանին և Շահբար Աղարարին, որգոյ քալանթար Իսկանդարին, որգոյ Նախագարին, որգոյ Աղարարայ քալանթարին, և մելիքութեան Թահիր բագին» (Ս. Կ. Ն. Ս. Յ. Յուրակ ձեռագրաց Ներսիսյան զգրոցի, Երեւան, 1893, էջ 46):

Յ Յ Օ Յ. նույն տեղում, Աճ 9, §§ 24, 25, 26:

Հիրավի, կարող էին իրանահայերը լիակատար համերաշխու-  
թյան և միահամուտ ցանկության գեղբուհիսկ հավաքագրել, գինեկ  
կամ պարենավորել սագմական այն ուժը, որի մասին գեկուցում էր  
Ալանյաց հայ մեկիքների պատգամախոսը:

Օրիի թղթերից մեկում իրանահայերի թիվը հաշված է միլիոն-  
ներով: Մի այլ գրություն մեջ Օրին օգնություն էր խնդրում անօրեն-  
ների լծի տակ ատուպող միլիոնավոր հոգիների համար<sup>1</sup>: Այս  
կարգի հայտարարությունները պիտի ընդունել հարկավ *cum grano  
salis*.

Մարդազրահան ստույգ թվանշաններ մեր արամադրության  
տակ չկան, իհարկե: Այս մի բնագավառ է, ուր սոսկ խարխափելով  
կարելի է մոտենալ ճշմարտությանը: Սակայն ակններև են Օրիի շա-  
փազանցումները:

XVI դարի վերջին գրված իր գեկուցադրերում Սիդոնի Անոնարդ  
Աբել կոչվող սուր Մեծ Հայաստանի կաթողիկոսի իրավասության  
տակ գտնված հայ բնաանիքների թիվը հաշվում էր 260 հազարից  
ավելի, Սսի կաթողիկոսին ենթարկվածների թիվը՝ 20 հազար  
բնաանիք<sup>2</sup>: XVII դարի սկզբին Հայաստան այցելած ու այն գի-  
տած սպանացի Անտուան Գուուվեան գրում է, թե Երևանի և Նախիջե-  
վանի խանությունները ընդգրկող երկրի (province) խոշոր բնակա-  
վաչրերի թիվը հասնում էր 1500-ի, յուրաքանչյուրը 4—5 հարյուր  
բնակիչներով: Նույն տերիտորիայի վրա նա հաշվում է շուրջ քսան  
բազաք, որոնցից ամենախոշորները համարում էր Երևանը, Նախի-  
ջևանը, Շարուրը (sic!) և Գլխը (=Ագուլիսը) և բազմաթիվ ավան-  
ներ՝ յուրաքանչյուրը ավելի քան 2000 բնակչությամբ<sup>3</sup>:

Ագրյուրները շեն նշում «բնաանիք» կազմող մարդկանց միջին  
թիվը: Պիտի ընդունել սակայն, որ տակավին գերակշռող քանակ  
էին կազմում բազմանդամ «տները» (բնաանիքները): Անգամ XIX  
դարի 80-ական թվականներին, գարգաղող կապիտալիզմի պայ-  
մաններում, Հայաստանի մի շարք վաչրերում բնակչության ընտա-  
նեկան միջին կազմը հասնում էր 7,9 հոգու: 1897 թ. համառու-  
սաստանյան մարդահամարի համաձայն քաղաքավաչրերում բն-  
տանիքները կազմում էին միջին հաշվով 6,5 հոգի, գյուղավաչրե-

<sup>1</sup> „Вы знаете сколько миллионов наших здесь“ — ասված է այդ  
թղթում. ՅՅՕՅ, նույն տեղում, № 93:

<sup>2</sup> նույն տեղում, № 108:

<sup>3</sup> Revue d'Orient chretien. Paris. 1892, էջ 333 և հա.:

<sup>4</sup> ՅՅՕՅ, նույն տեղում, էջ 467 և հա.:

բում՝ 9,5 հոգի<sup>1</sup>: Հասկանալի է, որ երկու դար տասը իշխամ ֆեոդալիզմի շրջանում համապատասխան միջին թվանշաններն ավելի բարձր պիտի եղած լինեին: Այս մասին են վկայում այս ու նախընթաց դարերի ձեռագրաց հիշատակարանները, ուր գիրք ստացոյներն ու «գծոցները» թվարկում են իրենց հարազատների երկար շարանը: Նման թվարկումները սրտը հիմք են տալիս կարծելու, որ առկալին վերացած չէր արչունակցական ծավալուն կապերի գերը և որ հաճախ դեռ հարատևում էր հայ գյուղի հին գերզատանալին համաչնքը, ուր միևնույն ծնողներից սերված երկու կամ երեք սերունդ ապրում էին նույն հարկի տակ, կազմելով մի «տուն», մի «ընտանիք» կամ մի «ծուխ»: XVII դարի սկզբում Սիմեոն գալիբ Լեհացին Խարբերցի և Սեբաստիայի շրջաններում նկարագրում էր հայկական մեծ բնտանիքը: Նա հանդիպել էր մեծ մի տուն, «քառասուն օրորոցքով»: այդ տան բոլոր եղբայրներն ու հարսները հնազանդվում էին տան նահապետին<sup>2</sup>: Այդ նույն ժամանակ Հայաստան այցելած մի այլ ուղեգրող, անգլիացի Ջոն Քարթրայչար, այսպես էր նկարագրում հարավային Հայաստանի գյուղաշխարհը: «Առաջին անգամ այդ երկիրը մտնելով, — գրում է Քարթրայչար, — մենք ուղեփորվեցինք ընդարձակ գաշտերով շրջանցված բարձրաբերձ լեռներ, ուր կալին շատ գյուղեր, բոլորն էլ լի հայ բնակչությամբ, ամեն մշակույթի մեջ խիստ հարատարալիստ մի ժողովուրդ («very industrious in all kind in labour»): Նրանց կանայք շափաղանց հարպիկ ու ջանադիր են ամեն տեսակի գործի մեջ: Շատախի լեռներում այսօր բնակվող կանայք պինավարժության մեջ նման են հին աշխարհի կառավարի մամուկուհիներին: Նրանց ընտանիքները շատ մեծ են. սրովհետև որդիներն իրենց եղբոր և քրոջ զավակների հետ միասին. բոլորն էլ ապրում են միևնույն հարկի տակ ընդհանուր անտեսությամբ (fore, both sons, nephews and neeces doe dwell under one rooffe. having all their supstance in common): Երբ մեռնում է հայրը, տան կառավարությանը ստանձնում է անդրանիկ որդին: Իսկ երբ մահանում է անդրանիկ որդին, կառավարությունն անցնում է անդրանիկ եղբոր անդրանիկ որդուն, և այսպես՝ մեկից մյուսին: Նրանց հագուստ-կապուստը միօրինակ է. սնվում են միատեսակ, ապրելով խաղաղության ու հանդատության մեջ, մեծանում ճշմարիտ սիրտ և պարզության մեջ»: Հաջորդով հե-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Բ ա գ ա լ յ ա ն ի հոգվածը, Հայկական ՍՍՍԻ Գիտ. ակադ. Տեղեկագիր (հաս. գիտ.), 1953, էջ 65 և հա.:

<sup>2</sup> «Հանդես ամսօրյա», 1934, էջ 157:

զինակը նկարագրում է, թե ինչպես պատերազմոց զորքերի միջամասնությունը վերջ է դնում գլուղացիների աչք ազատությունն ու ապահովությունը<sup>1</sup>:

Գոտովեայից և Քարթրայայից վեց-յոթ տասնամյակ անց խոսելով իրանահայերի մասին, Շարդենը նազորում էր, թե նրանք կազմում են 80 նազար բեաամիր<sup>2</sup>: Շարդենին ժամանակակից Պեհլիկը նախնիական գավառի Աբարաններ ավանի մասին գրում էր. «Մոսերեր նարչուրի են հասնում այս ավանում կաթուղի աները, որոնցից յարաբանչուրի մեջ 20, 15 կամ 10, իսկ ամենաքիչը 5 հոգի են բնակվում<sup>3</sup>: Արան համեմատ է գալիս, երբ XVII դարի սկզբների համար նույն գավառի Երնջակի և Ջահուկի հայ կաթուղիների թիվը Ալիշանը նշում է 1830 տուն, որոնք կազմում էին 19 հազար շունչ, որով յարաբանչուր տանը կընկնի մոտավորապես 10 շունչ<sup>4</sup>: Մինաս վարդապետը, Օրիի գործակիցը, 1717 թվականին իր մի գեղուցման մեջ էջմիածնի և Գանձասարի կաթուղիկոսություն վարչության տակ գտնված իրանահայ գլուղացիների և վաճառականների թիվը նաշվում է մոտ 260 հազար մարդ<sup>5</sup>: Եթե ընդունենք, թե այստեղ խոսքը վերաբերում է իրանահայ գլուղերի ու քաղաքների բոլոր ծխականներին, առանց հասակի ու սեռի խարսխան, խիստ գամը պիտի համարենք վարդապետի հազորգած թվանշանը: Հավանական է, սակայն, որ նա աչքի առաջ ուներ միայն չափահաս ազամարդկանց քանակը: Այդ դեպքում կատանանք մի թվանշան, որը մոտենում է Շարդենի ավյալին և միաժամանակ հավանական գարձեում, որ, խոսելով իրանահայ 200-հազարանոց բանակի մասին, Օրին նա աչքի առաջ ուներ գենք կրելու բնույնակ հասակի իրանահայ ազամարդկանց կոնսիդերանք: Գանձասարի իրավասություն տակ գտնված գլուղերի թիվը Մինաս վարդապետը 900 է նաշվում, ամեն մի գլուղ, փոքրերը 100, մեծերը 400 և ավելի տուն: էջմիածնի կաթուղիկոսի իրավասության տակ եղած գլուղերի թիվը, ի նարկե, ավելի բարձր պիտի եղած լիներ<sup>6</sup>: Ազվանից Նասի և Ներսես կաթուղիկոսները նաշվում են Գանձակի, Ղարաբաղի (նկատի

<sup>1</sup> John Cartwright. Observations in his voyage from Aleppo to Hispahan. Purchas, II, էջ 1424, և հաս:

<sup>2</sup> Chardin, նույն տեղում, VII, էջ 152:

<sup>3</sup> Bedik, նույն տեղում էջ 379:

<sup>4</sup> Ալիշան, Միտակոն, էջ 387:

<sup>5</sup> Эзов, նույն տեղում, № 209, էջ 325:

<sup>6</sup> նույն տեղում, էջ 321:

առնելով միայն 6 մ'նով), Կեղարքունյաց, Քուրանու, Ղափանի և Մխարանի մ'հաճներում 30-ական, 40-ական կամ 50-ական գյուղ, յուրաքանչյուր գյուղում 50-ից մինչև 500, փոքր գյուղերում՝ 30—40 առնել: Այս թվերը, չարկավ, թույլ չեն տալիս մեզ ճշակույթ իրանահաշերի ստույգ քանակը, սակայն որոշ կովածն տալիս են Համոցվելու, որ, իրոք, Օրին սուեցնում էր իրանահայ գավառների սաղմահան կարողությունը:

XVIII դարի քսանական թվականներին, Կրուշինսկու ասելով, իրանահայերը մուծում են տարեկան 120 հազար թուման գլխահարկ: Եթե, հենվելով Արքայամ Կրեստացու ավյայնների վրա, հաշվենք, որ ամեն մի թումանը շոքս շափահաս մարդու գլխահարկ էր, կստանգվի, որ Կրուշինսկու նշած դումարը գանձվում էր 480 հազար իրանահայ շափահաս ազամարդկանցից՝ կստանանք վերջիններիս ընդհանուր քանակը: Այս հաշվով գլխահարկ վճարող շափահաս իրանահայ ազամարդկանց թիվը ավելի քան կրկնակի շափավ բարձր պիտի եղած լինի, քան սաղմունակ համարված իրանահայ ազամարդկանց թիվը: Տարբերությունը մասամբ երևի առաջ է գալիս նրանից, որ գլխահարկ գանձելիս «շափահասութլան» այլ նորմ է ընդունվում, քան այն տարիքը, որ աչքի առաջ ունեւ Միճաս վարդապետը գյուղացիների ու փաճառականների ընդհանուր թվի մասին խոսելիս:

Սակայն հավանական է կարծել, որ գլխահարկ վճարող իրանահայերի քանակը անհամեմատ ավելի ցածր պիտի եղած լինեւ, քան կարելի է եզրակացնել Կրուշինսկու վկայությունից: Վերհիշենք, որ դրանից մի դար առաջ Օլեարիուսը գլխահարկ վճարողների թիվը 100 հազար մարդ էր հաշվում:

Հասկանալի է, որ շափահաս ազամարդկանց քանակը ինքյան չի կարող համընկնել սաղմունակների թվի հետ, առաջացած տարիքի անձինք կամ ծերություն հասածները, ինչպես և Ֆիզիկապետ տկարները, որպես կանոն, պիտի դուրս բնկնեն սաղմունակների թվից: Մաքսիկների թիվը պիտի շափաղանց սեղմվի, մանավանդ ազամամիերի, հանդերձանրի, պարենավորման և հաղորդակցութլան ու փոխադրութլան միջոցների պակասութլան պատճառով: Հասկանալի պիտի շեշտենք զենրի սահմանափակութլան հանգամանքը,

1) Յ. Օ. Յ. Նույն տեղում, Մ 276, էջ 421:

2) K r u s i n s k i. Tragicca vertentis belli Persici historia. էջ 200:

մտարերելով, որ կարի սուղ էին XVI—XVII դարերի իրանահայ աղ-  
տիվ ինքնապաշտպանութեան զինամիջոցները:

XVI դարի մի ուղեգիր իրանահայերի մասին թուղեւ է հեռեկայ  
տեղեկանքը. «նրանք կոչում են մեծ մասով հեռիտան: Հանդիպե-  
լով թշնամուն՝ փորում են խրամասների երկար շարք և զբանով  
պատանեշավորված՝ կոչում զրոհող ձիերի վեմ բավականին սուր և  
կարճ իրենց զենքերով»<sup>1</sup>: XVII դարում սառը զենքերից դատ Իրա-  
նում կաշին պատրուցված չբացաններ: Բոլոր պարազաներում՝  
խիստ սոսճամանավակ էր զենք կրողների քաճակը, այդ պատճառով  
էլ իրիստ սոսճական՝ «հայ կոխողներ» կոչված հասկացութեանը:  
Անգամ XVIII դարի 20-ական թվականներին, երբ լեոնաշին Հա-  
յաստանը սարի էր ելել Քուրբխաշի վեմ, քչերն է, որ զենք, փամ-  
փուշտ ու փասուղ սճեկին: Խոսվում էր, օրինակ, «20 հազար հայ  
կոխողների» մասին, սակայն ավելացվում՝ «զբանց կեսը առանց  
զենքի», և կամ նուշինակ՝ «500 մարդ զենքով, 6500 մարդ առանց  
զենքի»<sup>2</sup>: Զուր չէր Օրին անհրաժեշտ համարում շեշտելու, որ Քուր-  
բխաշում առևտուր անող իրանահայերի օժանդակությունը կարևոր  
է մամուլանդ աջն ակասկետից, որ նրանք լավ զինված են: Այս հա-  
վաստիացումն սճեկ իր ստատոր, սրի մասին նա, հասկանալի  
պատճառով, լուծ էր կուրֆյուրստի մաս: Հաճախ համեմատարար  
լավ պաշտպանված լեոնաշին Ղարաբաղն իսկ անկարող էր լինում  
կասեցնել լեզգիների հարձակումները, որչափ լեզգիները և շատ  
ավելի լավ ձիավորված էին և իրեն հմուտ մեծազագործներ ու  
զինագործներ՝ լավ զինված: 1720-ական թվականներին, զուրկ  
հարձակվան զենքերից և միաժամանակ «անվարժ զինվորական  
սպասավորութեանց»<sup>3</sup>, հայ զինված ու անզեն զլուրպցիները, չուղ-  
բաշինների գլխավորութեամբ, ցարուցրիվ ռազմախմբերի արսճ-  
ված և Մուսվի ու Քիրսի լանչերի ամբուլյուններին ապավինած՝  
աչք էին հատում սուսների օղնութեան, տեղական ուժերով վա-  
րկելով պարսիզանակաճ-ինքնապաշտպանողական կոխիներ միայն:  
Բնական ամբուլյուններով — «սղնախներով» — պաշտպանվելու  
սխտեմն իշխում էր այս ժամանակ նաև վրացիների մաս և զար-  
ձյալ՝ զենքի պակասութեան պատճառով: 1703 թվականին Արշիլ  
թագավորը թուրքերի վեմ պաշտպանվող վրացիների մասին Պեւ-

<sup>1</sup> Nicolas de Nicolay, Les navigations, peregrinationis et  
voyages, Anvers, 1576, էջ 215:

<sup>2</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 253:

<sup>3</sup> Ե ս ս չ ի կ ա թ ս գ ի կ ս ս, նույն տեղում, էջ 58:

բոս ցարին գրում էր. «Կրակելու գեներ ըիչ են նրանց մոտ և ոչ սովորական, թեկուզև շունին բարաշեն ամբուլյուններ, բայց ամեն մի բնասնիք ամբանում է բնական պատնեշների վրա, մի աեսակ բերդեր զարձնում գրանք մանավանդ հիմա, երբ թուրքերի երկյուզից իրենց համար սպաստան են դարձրել այդ պատնեշները»<sup>1</sup>: Հալ գինվորները գժվար էին ենթարկվում հավաքագրման. հեշտ չէր լինում սրտել կալոզների բնդհանուր բանակը, կալոզներին մտցնել սագմական կայուն բաժանումների մեջ, կամ կատարել ախաիվ ու համակենարոնացած գործուսուլյուններ: 1724 թվականին հայկական սղնախները գրում էին Պետրոս Մեծին, թե նախքան կմտանա առեսաց օգնությունը, «այժմն ոչ արկաք ի թիւ գհամար զօրաց մերոց, զի յոյժ ցիր ու ցան են աստ և անդ, այժմ ոչ եղև ձեանահատ»: Նրանք շեշտում էին հատկապես, որ իրենց զորքերը «սպակասութիւն գինուց պատերազմականաց յոյով ունին»<sup>2</sup>: Բացի այդ, վասոյ պատրաստելու համար շեշտում են ծծումբի պակասությունը<sup>3</sup>: 1727 թվականին Ռեշտում գանված գեներալ Դուգորուկովը, խոսելով հայկական սղնախների գինվորութեան մասին, նշում է զարձայով մարտական ուժերի թույլ սագմասպատրաստությունը. մենք ունենք այդ գինվորներից 5000 մարդ, բայց մեր հետեակ կամ գրագունակամ մի գնդին անգամ չարժեն գրանք, ասում է նա<sup>4</sup>: Գրությունը բարդանում էր մանավանդ նրանով, որ գյուղացիության բազումներով սաշապանված սղնախների գեկավարները, մելիքներն ու յուզբաշինները ներքին համերաշխությունը միացած չէին, այլ արտօված գեղասպետական ու ֆեոդալական իրարամերձ խմբավորումների ու արտարին բազարականության հակամարտ կողմնորոշումներին:

Այնուամենայնիվ, XVIII դարի 20-ական թվականներն այն տարիներն էին հեծնց, երբ համեմատաբար համերաշխությունն էր իշխում մելիքների անձուկ միջավայրում, և հայ կալոզների թիվը հասած պիտի լիներ 30—40 հազարի<sup>5</sup>: Գրագրությունները պատճառ ունեին սուեցնել թվերը, բայց կային ժամանակակիցներ, որոնք վիճարկում էին այդ թվանշանը, շափազանց համարելով գրանք<sup>6</sup>: Ընդամին պիտի կարծել, որ բերված թվանշաններն ընդգրկում էին նաև գեներ շունեցոյ «կալոզներին»: Եսայի կաթողիկոսը,

<sup>1</sup> ИГЛА. Дела грузинские по реестру, II, թերթ 1 և 2:

<sup>2</sup> ЭЗОВ. նույն տեղում, № 236:

<sup>3</sup> նույն տեղում, № 299, § 3:

<sup>4</sup> նույն տեղում, № 292:

<sup>5</sup> նույն տեղում, №№ 213, 215—218—221, 231, 252, 298:

<sup>6</sup> նույն տեղում, № 301:



Նաչ մարտիկների պիտակետը և իրեն ժամանակակից կացության ճշմարտախոս փաստագրողը, պատմական իր աշխատության և պաշտանական իր գրությունների մեջ խոսում է մերձ 10—12 հազար «բնախր ու սպառնալեն» կախողների մասին միայն: Նա օրարնջում է գենքի պակասության մասին, նկատի ունենալով երևի վերը նշված 30—40-հազարանոց զինվարության մեծ մասին<sup>1</sup>: Նկատենք, որ 10—12 հազար կախողների մեջ չէին մտնում Զրարերդ—Գյուլիստանի, Ղափանի և Երևանի բերդի բազարի պաշտպանները, որոնց բնդհանուր քանակը հասնում էր 25—30 հազարի:

Քե ինչ հարարերությունների մեջ էին Օրբի թվանշանները սազմական սեպ աչն ուժի հեա, որից նա փաստացիս էլնում էր. ակներև կդաննա Մեծ Ղափանի օրինակից: Մեծ Ղափանի սազմական կոնտինգենտը նա նշում էր. ինչպես տեսանք, 60 հազար: Մինչդեռ հայտնի է, որ Դավիթ Բեկի ապստամբության ժամանակ այդ երկրում հազիվ միայն 6—7 հազար կախող կար և ընդամին սրանց մի մասը՝ գրեկի<sup>2</sup>: Բայց սրանով մոտենում ենք հենց աչն 5000 սեպ թվանշանին, որով ըստ Օրբի հաչ մեկիքները մասնակցելու էին 1700—1701 թվականների համար նախագծվող սազմարշավին: Ուշագրավ է, որ տասնամյակներ անց, 1780-ական թվականներին Ղարարազի մեկիքները նույնպես պատրաստակամություն էին հայտնում միանալ Անդրկովկաս մացվելիք սուս գորբերին միայն 5000 հետևակ և ձիավոր կախողներով: Այս օրինակը ցույց է աւելիս, որ չի կարելի Օրբի փքած թվարանությունը վերագրել սոսկ նրա սոմանախի հայրենասիրության, ոտմանախի հալոնեախրուրչունից զատ, նրա մեջ խոսում էր նաև ուսպ Բաղաբազխուրչուներ: Իրականության զգացումը չէ, որ լրում էս նրան, այլ բազասայտ ճշմարտախոսության պահանջը, ամեն անգամ, երբ կարծում էր. թե իր վարած քանակցությունների հաջողությանը չէր կարող նպաստել իրականության անշարք ցուցահանումը:

Հիրավի, շուսչ խոստումներից հետո Օրբին նախատեսում էր փաստորեն միայն Երևանի պաշարումը հաչ մեկիքների վերը նշված հինգ հազար մարդով: Եվ հավանորեն նույն հինգ հազարանոց այդ ուժն է, որ պիտի բռներ Կուրի անցրերը՝ զգլրաչներին զինաթափե-

<sup>1</sup> Ե ս ս յ ի կ ա թ ս գ ի կ ս ս, նույն տեղում, էջ 58 և Ծ 30 Ե, նույն տեղում, №№ 213, 221, 236 և 252:

<sup>2</sup> «Պատմութիւն Դավիթ Բեկին», գլ. II:

<sup>3</sup> ԵՄՍ А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение 80-х годов XVIII столетия, Ереван, 1947, էջ 108 և 115:

յու նամար: Օրին անկեղծ ցանկութեան սննդ իրագործել այդ խոստումը: Ըստ երեսօցիին գրանից ավելին չէին խոստացել նրան նաև Անկեղակոթում նամարված մելիքները: Պֆալցյան ծրագրում նա գործի էր գնում Ֆինդհագարանոց այդ բանակը խնայողաբար ու շքահալեցօրեն: Հայ գինիօրների ելույթը չէր կանխելու ինտերվենտներին, այլ միանայու և ռմանգակելու նրանց:

Համանման եղանակով Օրին հարդարում էր նաև սպաղա արշավանքի նյութական սպասարկումը: Հայաստանի վարկունակութեանը տառտարանորեն բազմապատկելուց հետո նա առաջադրում էր առաջիմ միայն ձերմակ մի թուղթ, որի վրա կուրֆյուրստը ինքն ծախսերի գիմաց գնելու էր մելիքներից ստամայր գումարը<sup>1</sup>: Նրա թղթերում հանդիպող այս կարգի այլ մուրհակագրերից դատելով, պիտի կարծել, որ կուրֆյուրստի պահանջագրը սեպ արժեքի պիտի վերածվեր հաղթանակով պատկված ռազմարշավից հետո, երբ պատերազմական ավարտ միջոց կտար մելիքներին վարձատրել «ազատարարների» թափած ջանքերը, հույս չկողակելով սոսկ երկնային հասուցման հետ: Կուրֆյուրստի ծախսերը ծածկելու նամար Օրինի տրամադրությունն առկա այլ ազդյուններ չկային առաջիմ:

Եվ հասկանալի է: Օրինն լիազորող մելիքները նստած չէին լիբր սակեղարկերի վրա, իսկ գրամատեր այն առևտրականներից, որոնց հարստությունների մասին խոսում էր նա, ստորադրված մուրհակներ չէին ավել նրա ձեռքը: Հայ առևտրականների հարստությունն մասին ընդհանուր գաղափար տալու համար նա հիշատակում է 7 միլիոն լիրայի իր հարստությամբ Քուրֆիալից Իտալիա փախած Անտոն Չելեպի անունը: Օրին կարծում է, որ եթե ոչ անձնապես կուրֆյուրստին, դեթ նրա իտալուհի ախկնոջը, Ֆլուրենտիայի մեծ գուբսի ազգականը, կարող է ծանոթ լինել այդ մարդը: Չգիտեր կամ թե գիտենալով լուծ էր, որ Չելեպին անվանի էր ոչ միայն անբավ իր հարստությամբ, այլև անլուր իր ժլատությամբ: Չեստգիր մի հուշագրի մեջ սրա մասին ասված է, թե «էր ի գործ սպասու ֆրանկաց... օգնութեամբ երբոր իւրոյ Հասան աղային պանձեալ մթերեաց բազում փնջա. բայց հայոց սչինչ օգտեաց, և ոչ մի ինչ արար արժանի յիշատակի: Այլ փախուցեալ յետոյ ի Ախվոսնայ, կորեաւ և անհետ եղև»<sup>2</sup>: Սա նույն այն «կյավուր Անտոնն» էր, որի մասին Նրեմիա Քեոմյուրհյանը գրում էր.

<sup>1</sup> Յ Յ Օ Ր. նույն տեղում, № 11, էջ 56:

<sup>2</sup> Ե Ր Ե Մ Ի Ս Չ Ե Լ Ե Ս Ի Ք Ե Ս Մ Ե Ս Ե Յ Մ Ա Ն, Պատմ. Ստամբ., էջ 707:

Սա տան Անտոն կեալուրին՝  
 որ փախա լերկիր Լիվոնան,  
 Սա օգնաթեամբ Հասանին՝  
 Գանձեաց ՚ւ մա՛տն ցիր ու ցան,  
 Հայց սչ ինչ մին չ՝ օգնեաց  
 յիշելոյ շարար մին նշան:  
 Ապրօն չ՛էր սորա մին մասն  
 նամ և համ բա իր ազա՛նաթեան»<sup>1</sup>:

Օրին հիշատակում է նաև Իբանից վեճեալիկ ապավինած ուրիշ մի միլիոնատիրոջ — խոսքը Շեհրիմանյանի մասին է անշուշտ — որը սուրբ Մարկոսի բանկն էր մուծել 700 հազար զուկատ, դրսության ախոյոս ստացել Լեոպոլդ կայսրից և զեռ ուզում էր դատով ետ ստանալ մի կալված, որը կեռ միլիոն ֆլորին արժեք<sup>2</sup>: Կաթուղիկ միսիոններին Շեհրիմանյանները նյութական սրտչ օգնություն էին ցույց տալիս հայ «հերձվածույներին» պապին հնազանդագրելու համար: Բայց հայտնի չէ դարձյալ, որ հայկական այս կրեւոր սուր իր միլիոններից բաժին հանած լինի հայց ազգի բազարական ազատագրման նպատակով:



Օրիի պֆայցյան ծրագիրը վերին աստիճանի ուշագրավ վավերագիր է հայ ազատագրական մտքի պատմության համար:

Գրա մեջ զեռ հարատեւում են հայ ազատագրական հուանցումների անցյալից եկող խարուսիկ վերապրուկները: Այդպիսիների շարքին ենք դատում ծրագրի կողմնորոշումը զեպի պապական Հոմն ու արեւմտակրոնական պետութունները: Կամ այն, որ ծրագիրը կազմելու պահին՝ անտեսելով Եվրոպայում և Ասիայում ստեղծված բազարական իրադրութունը՝ Օրին պաշտպանում էր հայացքներ, սրտնր, ըստ երևույթին, իշխող էին 1677 թվականին՝ էջմիածնի խորհրդածուղովի ժամանակ: Գուցե մասամբ նույն ժամանակի ապավորութուններով էր առաջնորդվում նա, երբ Իրանն ու Հայաստանը նկարագրում էր սրբեռ բարերեր ու հարուստ մի երկիր: Մտաբերենք, հիբավի, որ պատանի Օրին մայրենի երկրից հեռացել էր մի ժամանակ, երբ զեռ չէր սպառվել 1638 թվականի խաղաղությանը հաջորդած անտեսական աշխույժը: Այդ տեսակետից մի

<sup>1</sup> Երեմիա Չեղեպի Բեռմյուր ճյառն, նույն տեղում, էջ 77 և ծան., էջ 574 և հա.:

<sup>2</sup> Յ 30 B, նույն տեղում, № 9, § 26:

հայտնի չափով գուցե և հասկանալի թվան Պֆալցի ծրագրում բերված թվանշանների ու փաստական մշուս տվյալների չափազանցումները: Կարծում ենք, սակայն, որ այդ կարող է ճիշտ լինել միայն խիստ աննշան չափով: Հիմնականում Օրիի չափազանցումները արդյունք չեն սխալ տպավորության կամ սխալ իրադեկոնության: Նա գիտում էր չափազանցումների զիտակցարար, կամենալով կուրֆյուրատին և նրա շրջապատին մատնանշել իր առաջարկների իրագործման հնարավորությունն ու դյուրությունը: Բայց եթե նա այդ անում էր կուրֆյուրատի աչքն ու միտքը պատրելու համար, անձնապես չէր ենթարկվում չափազանցումների բժժամբին:

Բեկպեռե քաղաքական իմաստով իր գրությունն իսկ պահին Պֆալցի ծրագիրն ամբողջությամբ վերցված անիրական ու անիրագործելի մտահղացում էր, նրա մեջ կան բազմաթիվ փաստեր, որոնք համապատասխանում են իրականությանը: Երագրի մեջ արված են մի շարք գիտողություններ կամ հայտնված մտքեր, որոնք հանդես են բերում XVII դարի վերջում իշխած իրադրության հիմնականում ճիշտ ու շրջահայաց բնույթում, որ հնարավոր էր դարձել մասամբ հենց երկրի ու նրա գործիչների հետ անմիջական շփման մեջ մըտնելու շնորհիվ:

Պֆալցի ծրագիրն ուրվագծելու համար Օրիին փաստական որոշ նյութ կարող էին մատակարարել հենց Անկեղակոթում հավաքված մեղիքները, մասնավորապես մեկիք Սաֆրազն ու էմիրբեկը, որոնց քաղաքական և ռազմական արժանիքները նա գրվառում է հատկապես: Ինչպես այդ վավերագրի, այնպես նաև Անկեղակոթի խորհրդաժողովի անոմից ներկայացված թղթերի մեջ բերված փաստարկումների ճշտումը հանդիսանում է խորհրդաժողովի պատմականության անուղղակի հավաստում: Օրիի պֆալցյան ծրագիրը պիտի դիտել որպես հայ ազատագրական մտքի պատմության այդ ժամանակաշրջանը հատկանշող փաստերի ու իրողությունների արտացոլում և միաժամանակ Օրիի ու նրա գործակիցների այդ պահին ունեցած մտահղացումների ու նպատակագրումների ուսումնասիրության ուշագրավ սկզբնադրյուր:

Օրիի գիտակցությունը գործում էր հայ կղերի ու մեղիքների պառակտվածությունը, նրանց դասային սահմանափակությունը, նրանց շահագրգռությունների ու ձգտումների տեղայնությունը հաղթահարելու ուղղությամբ: Հայաստանի ազատագրումը նրան պատկերանում էր հայերի քաղաքական համախմբման հետնախորքի վրա: Հատկանշելի է նրա ձգտումը՝ մասնակից անել Հայաստա-

նի ազատագրման գործին հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածները, հայ մելիքներից ու եկեղեցականներից զատ ընդգրկել ապստամբական շարժման մեջ նաև հայ առևտրականներին (վերհիշենք սրանց վերապահված գերը Մոսկվայից Իրան մեկնելու պահին, Շամախում և այլն), և հայ արհեստավորութեանը (վերհիշենք սրանց վերապահված գերը Երևանի գրավման կամ վինամթերք արտադրելու գործում) ու հայ գյուղացիութեանը (վերհիշենք հայ մելիքների հինգհազարանոց բանակը, որ հիմնականում գյուղացիներից պիտի հավաքադրվեր անշուշտ): Հայ քաղաքական մտքի պատմության մեջ ազատագրական առաջին ծրագիրն է այս, ուր ակնրախ է հայ ազգային-Մաղաբական գիտակցության սկզբնավորումը: Այս առումով Օրիի ծրագիրը արժարժում էր հայացքներ, որոնք հազիվ միայն սաղմնավորվում էին Արդար Թոխատեցու ժամանակաշրջանում:

Շուրջ երկու տասնամյակ կապված լինելով քաղաքակրթութեան ավելի բարձր շրջան թևակոխած երկրների ու նրանց բնակչության այլևայլ շերտերի հետ՝ իր կուտակած կենսական փորձով Օրին կարողացավ մշակել հայացքներ, որոնցով ոչ միայն արասահայտում էր Ղափանի իր դասակիցների շահախնդրություններն ու ձգտումները, այլև ընդառաջում բնաշխարհի ու սփյուռքի հայ առևտրական բուրժուազիայի միջավայրում սկզբնավորվող ազգային-քաղաքական որոշ արամագրություններին: Պֆալցյան ծրագիրը մի հայանի չափով արտահայտում էր հենց սոցիալական այդ միջավայրում խմորվող նրա նոր հայացքները: Եվ դեռ ավելին. մի հայանի չափով այդ ծրագիրը արձագանքում էր նաև հայկական բնաշխարհի ճնշված ու հարստահարված հայ մասսաների՝ տիրող կարգերի դեմ կուտակված արտունջներին ու դրանցից ազատվելու բռուն բաղձանքին: Փուլջ չէ, որ այդ բաղձանքների իրագործումը Պֆալցի ծրագրում լծորդվում էր ընդհանուր-քաղաքական անիրական ու շիլ հեռանկարների հետ:

Թե որ չափով էին Օրիի ձևակերպած քաղաքական արամագրությունները համապատասխանում իրանահայ ժողովրդի մեջ կուտակված արտունջներին՝ գժվար չէ նկատել, եթե վերհիշենք XVII դարի վերջերին Հայաստանի արևելյան հատվածում տիրած իրագրությունը, որի նկարագրության վրա կանգ առանք նախընթաց դրվագի սկզբում: Դրանից նվազ ծանր գրություն մեջ չէր Հայաստանի արևմտյան հատվածը, որ դեղերում էր թուրք բռնատիրության լծի տակ: Պատահական չէ, երբ, գժագրելով եվրոպական արշավի

հեռանկարները՝ Օրին հաշվի է առնում ոչ միայն թուրք առևտրական ճանապարհների հետ կապված իրանահայ վաճառականների, այլև Հայաստանի արևմտյան մասսաների տրամադրությունը, որ հայ երիտասարդությունը, նրա սակելով, ոչինչ ավելի չի տենչում, քան չպատերազմ հավատքի համար»։ Հայաստանի արևմտյան հատվածի նկատմամբ ես նշելով ազատագրական սրուշ հեռանկար՝ Օրին ելնում էր դարձյալ այն գիտակցությունից, որ Բուրքիայի լծի տակ գտնված հայ ժողովուրդը․ սնում է իր կրթքի տակ քաղաքական-ազատագրական ձգտումներ։

Թերթիկում XVІI դարի պատմական հիշատակարանները՝ մենք հանդիպում ենք բավմաթիվ վկայությունների, որոնք բացահայտում են արևմտահայ մասսաների հետ կապված գրիչների ու հեղինակների ազատագրական տրամադրություններն ու սոցիալ-քաղաքական մտայնությունը։ Հին հիշատակարանները կասկած չեն թողնում, որ արևմտահայ մասսաների տրտուռներն առաջ էին գալիս ֆեոդալական ճնշումների և հարստահարումների այն սիստեմից, որ կիրառվում էր Բուրքիայում հպատակների նկատմամբ ընդհանրապես և քրիստոնյա հպատակների վերաբերմամբ առանձնապես։

Արդեն ծանոթ են մեզ նյութական և բարոյական վայրագ այն հարստահարումներն ու ճնշումները, որոնց ենթակա էին թուրքահպատակ հայերը XV—XVI դարերում։ Հաջորդ դարի ընթացքում նրանց դրությունը ոչ միայն չբարեշրջվեց, այլև գնալով վատթարացավ։ Վերհիշենք թուրք-իրանական պատերազմները, կամ ջալալիների ասպատակությունները, որոնք ավերածությունների ու գաղթագնացությունների դուռ էին բացում նախ և առաջ հենց երկրի հայաբնակ վայրերի առաջ, գեթ մինչև 1635 թվականը։

1611 թվականին գեղերեկով Պուտում Սիմեոն դպիր Լեհացին գրում էր. «Եւ ութսուն տուն՝ տեղացի հազիւ գտանէր. բայց եկն և դարիպն սակելի քան զքառասուն հազար տուն ի Ստամպոլ, Ղալաթա և Սկուտարնո։ Քանզի յօթնախլան ճալալիքն սակել էին և ամենեքեան հալածեալք և փախուցեալք անդ էին հանդուցեալք։ Եւ թէ հաշուես ի Պուղտանայ մինչև Ստամպոլ, պութուն Ուռումէլին մինչև մեծն Վանատիկ, նա շկա քաղաք, գեղ կամ շփուլիկ, որ հայ շկենայ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս փոշի»<sup>1</sup>։

Ավելի լավ վիճակում չէին իրենց բնակավայրերում մնացած-

<sup>1</sup> «Հանդես ամսօրյա», 1932, էջ 168—169։

ները: Պոլսից գեալի Մուշ, հարրերդ ու Ամիդ կատարած իր ուղևորությունը նկարագրելով՝ նույն հեղինակը այսպես էր պատկերացնում երկրի բնագծանուր կացությունը. «Տներն ախոսի նման և շալուսվյաձ, իսկ ի քաղաքսն քարբիշով, դավին փոքր և խորափախո, խաւարաշին... Եւ այսպիսի տաւապանք և նեղութիւն էին ի ձեռս տաճկաց, վասն որոյ յոյժ աղքատ և չբաւոր են, զի միշտ զրկեն, զզվեն, տուգնեն, զբոյարանն և առաւել հարկս պահանջեն. և թէ տասն որդի ունիցի սք, ամէնէն խարաճ տւնուն, և թէ հեռանայ, զարձեալ առնուն: Եւ Ստամպուլայ գաւառօք ձի, ջորի հեծնուր. և անտի Սեասա մինչ յԱմիթ էշ և ուղտ. իսկ Սեբաստուին տան էշ ալ տէկմա շէրեի, ամէնն եղ կու բանեցնեն, ազ և բեռն բառնան, այլև հեծնան: Վասն որոյ ես ամէն քաղաք, ամէն տեղ յսլով վնաս և տուգանք տայի վասն ձիուս, այլև մութ տեղիս, օտանին և սրահոց տուն տայի պահել, ամէնին զբամ տայի, որ ուլախ շառնուին. և ի ճահապարհին ևս քանիցս անգամ տպին ուլախ, զոր արօք հազիւ կարացի թափել ի ձեռաց նոցա զեղկելի ձիակս և այսպէս ահիւ և դողութեամբ շրջէի տարակուսանօք, թէպէտ մեծ քարվանսով շրջէի զի ամէն տեղ հարամիք էին, սօխթանի, ամէն տեղ թալան և հաղմայ և զուլում...»<sup>1</sup>:

«Եւ այնպէս շար էին եանշարիքն,— ասում է մեր հեղինակը,— որ քրիստոնէից չի տային ձի հեծնալ, ոչ ջորի, ոչ լաւ շուխայ ազանիլ, ոչ այդի, ոչ տուն մեծ, այլ գամենայն յափշտակէին ի ձեռաց»<sup>2</sup>: Թուրքերը միայն նյութապէս չէին հարստահարում հայ հպատակներին, այլև միջամտում էին նրանց հոգևոր գործերին: Շարժանակելով իր սուղերը Սիմեոն Լեհացին հազարգում է. «Նաև առաջնորդաց շտային քննել հաս շհաս կամ օրէնք պահել. զի թէ ոք կամէր կին առնուլ և շհասութք լինէր, շերթայթն առ հովիվ կամ առաջնորդ, այլ (երթային առ) ենշարի մի և տային կաշառ, և նա գայր իրիցուն թօփուզով պսակ տայր առնել և նա ախամա պիտէր խօսիցն շէնէր. ապա թէ ոչ՝ բազում շարիս անցուցանէր ի զուլան և վնաս և տուգանք ձդէր զնոսա. այլ և կեկղեցեաց և վանօրէից: Եւ թուրքաց աշխարհն ամենայն այդպէս են, ապա հարրերթու առաւել քան գամենայն...»<sup>3</sup>:

Մեր տրամադրության տակ եղած աղբյուրները հետաքրքիր նյութեր են պարունակում մասնաւորապէս թուրքահայ հպատակներից խարաճ դանձելու պրակտիկայի մասին:

<sup>1</sup> «Շանդես ամսօրյա», 1934, էջ 159:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 158:

<sup>3</sup> Նույն տեղում:

Այսպէս, 1621 թվականի մի հիշատակարանում նկարագրված է ամդեցի ռայայի բողոքը. «Մերկ ու բոկ ոտամբ» ամդեցիները գնում են Մալաթիա Ալի փաշայի մոտ և դանդաղում խարաճի ժանրութեան մասին: Հարցը վճռելու համար փաշան դալիս է Ամիդ, գիվան նստում, ուր հրավիրում է ոչ միայն գանդատավորներին, այլև նրանց դեմ վկայող «հազարացիներին», իմա՝ մուսուլմաններին: Գանդատավորները հայտնում են, թե ի վիճակի չեն վճարել իրենցից պահանջվող երեք ֆառանա ու կես «հավատի դինը»՝ խարաճը<sup>1</sup>: «Կարողութեան շունինք, խիստ դատուն, նիհար ինք», — ասում են նրանք: «Հազարացի» վկաները, ընդհակառակը, հայտարարում են, թե հարկվածներն ի վիճակի են տալ պահանջված խարաճը: Ի վերջո փաշան ոչ միայն մերժում է գանդատը, այլև տուգանում գանդատավորներին. «Կնացեր, տվեցեր, շահի մի այլ արվելի», — հրամայում է նա<sup>2</sup>:

Բերենք այլ վկայութուններ:

1637 թվականին Ղարահիսարում տեր-Գրիգոր գրիչը նշում է. «Ի դառնութեան ժամանակ էր, որ կու նեղէին զմեզ այլասեւքն, որ խելքս մուլար է և միտս շուար... աշս ի լուսոյ պակասեալ և անձս ի յուժոյ և շար թագաւորին հարճն (=խարջը կամ՝ խարաճը—Ս. Հ.) ի վերա մեր»<sup>3</sup>:

Երեսնական թվականների նկատմամբ Հակոբ Կարնեցին նշում ու հավաստում է հարկերի ծանրութունը: Կուսակից չլինելով հայերի քաղաքական ըմբոստացմանը, նա այնուամենայնիվ շի թաքցընում իշխող կեղեքումներն ու կամայականութեաները: «Զի որչափ զազիր և անօրէն գործ կայ, որ քրիստոնէից խոտելի է և պարսաւելի, զայն սոցս (իմա՝ թուրքերի) օրէնք է՝ զի և գործելի է, զի ցեղ ու ցեղ և ազգի-ազգի սուտ պատճառաւս հարկապահանջութիան և կեղեքելն անասելի է և անպատմելի և անողորմ տուգան առնուլն ի քրիստոնէից... և այշափ տարիք ուտեն և զազա քրիստոնէից սուտն կոխեն ամենայն կողմանց»<sup>4</sup>:

<sup>1</sup> Ըստ երեսնյթին Ամիդում խարաճն այս պահին հաշված է պարսկական գրամով, մարդազուլու 3 ու կես ֆարանա (=3 ու կես արասի): 1592 թվականին, Վանի մոտ, Բելու գյուղում խարաճը հաշվված է մարդազուլու քսան շահի, ասել է՝ հինգ արասի (հմտ. Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 6273, էջ 307ա և հա.):

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 8104, էջ 219բ:

<sup>3</sup> Նույն տեղում, ձեռ. № 1544, էջ 301ա:

<sup>4</sup> Տե՛ս «Մանր ժամանակագրութուններ», 11, էջ 563:



Մեր արամադրութեան տակ եղած նյութերը օգնում են պարզելու արևմտահայերի ծանր կացութեանը նաև հետագա տասնամյակներում: Այսպէս, 1667 թվականին Սամվէլ զպիրը էրզրումում տիրող սեփմը բնութագրելով՝ ասում է, «որ անբուժելի կողոպտեն զմեզ սրպես աւագակ ի լեռնի»<sup>1</sup>: 1692 թվականին խոյեցի տեր-Կիրակոսը «հագարացիներին» էրզրումի հարկապահանջութեան մասին ասում էր. «Հանին հալածանս ի վերա քրիստոնէից և Գ (3) կերպիւ զխաբաջն պահանջէին... հանապազ կեղէին և կողոպտէին և զմեզ կերպիւ-կերպիւ կու շաղչարէին»<sup>2</sup>: Այս վկայութեանը հավաստվում և պարզարանվում է մի այլ հիշատակագրութեամբ: 1691 թվականին Վանում խարաձ էին տոնում մարդազուլս մեկ ու կես ոսկի (=2,5 դուռուշ)<sup>3</sup>: Բայց կային արդեն նաև խարաձի տարբերակումներ, որ նշված են «ալայ, սուսա և ասնայ»<sup>4</sup>: Մի հիշատակարանում կարգում ենք. «Ի Թեմն Ռճն (1691) ճատավ սմն վեղիր որ մականուամբ կոչիւր Քորբիլի օղլու Մուսղաֆայ փաշայ. սա քակեց զքրիստոնէից խառաջն. քանզի առաջին դութուք էր կապած Իմ դմին կու տայինք և սայ յաւելուց էլա Դ ոսկի, աւսաթ՝ Բ ոսկի. էթնա՝ Ա ոսկի ամենայն տեղի տկութեան օսմանցոց»<sup>5</sup>:

1694 թվականին Բաբերդում մի գրիչ գանդատվում էր, թե արդեն երեք տարի է, ինչ նախկին խարաձի փոխարեն, որ «հաստատուել էր հայրենեաց մերում ի վերայ նաֆարի և մեր կուտայաք սմիտիլ», թուրքերը վերցնում են խարաձն ըստ եկամտի, այն է՝ «ալա» = 4 ոսկի = 9 դուռուշ = 48 գրամ արծաթ, «աւսաթ», այն է՝ 2 ոսկի = 4 և կես դուռուշ = 24 գրամ արծաթ, և «յայտնան» այն է՝ 1 ոսկի = 2 և կես դուռուշ = 12 գրամ արծաթ: «Սև է ալայն ծանոր խօճա մարդոցն, — ասում է գրիչը, — և աւսաթն միջնասահման մարդոցն և յայտնան էր հետնացեալ մարդուն, որ էր վերջին աղքատն: Սև նոքա յարեան ի վերա քրիստոնէից և եկեալ թալանեցին անողորմարար մեծատունքն, և միջնասահմանքն և աղքատն հաւասար իւրեանց պիտութեան»<sup>6</sup>:

Որ խարաձի հիմնական նորմայից զատ սահմանված էր հավելյալ տուրք, երևում է նաև մի այլ վկայութեանից: 1698 թվականին Վանում «Ըոէս Միրարն զասնաֆի աւելորդ գլխահարկն

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 4649, էջ 302ա:

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. № 7786, էջ 249բ:

<sup>3</sup> «Մանր ժամանակագրութեաններ», 11, էջ 417 և հտ.:

<sup>4</sup> Նույն տեղում, 11, էջ 483:

<sup>5</sup> «Հանդես ամսօրյա», 1953, էջ 250:

<sup>6</sup> «Ազգագրական հանդես», 1897, 11 դիրք, էջ 290 և հտ.:

դաւթարով սահմանեալ հաստատեաց, որ ամենայն ոք թէ՛ Ղաթա-  
քար և թէ՛ Դամիկ տացէ՛ զխարաջն ըստ գիւղմանն աւուր և ժամանա-  
կին»<sup>1</sup>, Վանում «մարդազուլուխ մեկ մեկ ուռայ խառաջի կոտոր ժողովե-  
ցին»<sup>2</sup>։

Խարաճից զատ հպատակ քրիստոնյաները վճարում էին նաև  
այլ տուրքեր, օրինակ՝ աշար կոչված տասանորդը, հասլ կոչված  
եկամտային տուրքը, հողային տուրք և բազմաթիւ ուրիշներ։

Քրիստոնյաների համար սահմանված զլխահարկից զատ այս  
շրջանում շարունակվում էին նաև ազգային խտրականութեան մյուս  
տեսակները։ Այսպես՝ 1672 թվականին Բաղեշում գրված մի հիշա-  
տակարանում նշվում է, թե քրիստոնյաներին արգելվում է գոտի  
կապել կամ փակել զնել. «Եւ ամենեքեան... ընկեցին զբառնա իւ-  
րեանց և եղին քօլօզ զաւլիախ և ոմն թաղիս, ոմն զլուխ ի բաց  
շրջէին»<sup>3</sup>։ Մի բանի տարի անց Վանի փաշան հրամայում էր հայկե-  
րին մորուս թողնել և զլխի փաթեթի տեղ՝ զգակ զնել»<sup>4</sup>։

Մանր հետևանքներ էին ունենում մանավանդ պատերազմա-  
կան գործողութիւնների հետ կապված հարստահարումները։ 1677  
թվականին Արևելյան Սնատուրխայի հայաբնակ Հալմալավա դյու-  
զում գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Այս երեք գա-  
րուն է, որ եմք ի մէջ նեղութեանց և հեծելոց, որ յարուցեալ են ի  
վերա միմեանց։ Եւ երեք անգամ առաքեցան երկու կողմէն դանդատ  
ի Կոստանդնուպօլիս, որ է Ստամբօլ, առ խողբարն և ոչ օգտեցան  
ինչ։ Եւ երկիրն աւերաւ և ամենեքեանքն փախստական և հալածա-  
կան և շրջին գիւղէ գիւղ և երկրէ երկիր և երերամբ կան»<sup>5</sup>։ 1697  
թվականին Զմյուռնիայում գրված մի հիշատակարանում կարդում  
ենք. «Որ և մեք ևս ունիմք նեղութիւն բազում ի հարկապահանջու-  
թենէ և ասպատակաւորէ ի հենից և աւագակաբար զրկողէ ոչ միայն  
ի ճանապարհս, որ վնասեն վաճառականաց, նաև մեր շրջողաց  
այլևայլ քաղաքս և ի դիւղորայս բռնութեամբ վարին այլազգիք՝

<sup>1</sup> Վանր ժամանակագրութիւններ, 11, էջ 417 և հտ.։

<sup>2</sup> Նույն տեղում, 11, էջ 420, հմտ. նույն տեղում, 11, էջ 484։ «Ռուզձ  
տերմինի նշանակութեան և խարաճի մասին ընդհանրապես տե՛ս Պատմա-  
բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 176 և հտ. հայ նշանավոր բանա-  
սեր և տնտեսագետ Թ. Ա. Վրայրեկյանի, Գլխահարկը Թուրքիայում  
XVII—XVIII դարերում հետմահու տղազրութեամբ լույս տեսած հոդվածը։

<sup>3</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձև. № 4904, էջ 284ր։

<sup>4</sup> Վանր ժամանակագրութիւններ, 11, էջ 382, 394, 414, 417։

<sup>5</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձև. № 5806, էջ 184ր։

կողոպտելով, զրկելով, զկին և զտղայս քաշելով, յայտնի կողոպտելով և ոչ յուճեքէ երկնշնելով»<sup>1</sup>: Զմյուսմիայում գրված այս հիշատակարանը արձանագրում է ոչ միայն գյուղական մասսայի, այլև առևտրական բուրժուազիայի տրտունջները:

Տիրող ռեժիմի դեմ բարձրացող տրտունջները սկսում են հորդանալ մանավանդ XVII դարի վերջերից, երբ կրկնակի զգալի դարձան արտաքին ճակատներում պարտվող Ռուսքիայի բռնութուններն ու հարստահարումները:

1682 թվականին Վարագում գրված մի հիշատակարանում ասված է՝ «Ե՛ր յամի տէրութեան այլատեսից սուլթան Մահմադին, որ բռնացեալ էր ի վերա միջոց աշխարհիս, այսինքն Յունաց, Ասորոց, Հայոց և Մարաց, Հրէից և բազում գաւառաց և զմբրիկ դառնութեան իւրոյ... օր ըստ աւար սաստկացուցանէր ի վերայ քրիստոնէից մինչ զի զբազում տեղիս անմարդարնակ արար, յորոց և մինն ի մասնաւոր նահանգաց գաւառս Վասպուրականի հարկաւար հանջութեամբ ի գրունս մահու հասեալ եղև, մինչ ի Վարագա աւաք սուրբ Նշանին որչափ անօթ որ կայր, թէ խաշ, թէ Աւետարան ի վաղ ժամանակէ գրաւեալ էր ի տոճս այլազգաց...»<sup>2</sup>:

Հալածանքի ու թալանի ենթակա էին նաև հարավային Վասպուրականի լեռնագավառները: Մոկաց երկրի Բոլենց գյուղում 1692 թվականի մի հիշատակարանում Միքայել գրիշը հաղորդում է. «ՌՃԽ (1691) թուին եղև շարժ. բազում տեղիք բլան. բազում մարդիկք մեռան և նղև հեծելչարժութիւն: Մոկաց պարոնց գնաց Յովմայ (=Օղմի — Ա. Հ.) և զոշխարն թալան եբեր. յետոյ յանկարծակի եկաւ Բոհտան՝ ի վերա Մոկաց: Ի յայտնութեան բուրն զՅիզիձոր այրեցին և բազում աւար հարին: Յետոյ Մոկաց Զինալ պէկ գնաց ի Բոհտանից, դեղօրէք աւերեց, զՍեպկպոց զեկեղեցին քակեց, զԱգըլուան թալանեց, զԿճաւ ու զՅաուջան ու զՄակնի հարկատու արար: Յետոյ եկաւ աղէ մի Յակարոյ, Խանապալ անուն, ի Մոկա առ ի հաշտեցուցանել զնոսա. բազում հարկ և տուգանս էառ մինչև ըՍպարկերտ և Խարխոց»...<sup>3</sup>:

1687 թվականին Ռոսիատում գրված մի հիշատակարանում, որին հեղինակ ենք կարծում Մփնաս Համդեցուն, կարդում ենք. «Քաղաքք ամենայն, աւանք, դաւառք և զեղորայք, որ ընդ իշխա-

<sup>1</sup> Հայկական ՍՍԽ Մասննադարան, ձեռ. № 3280, էջ 224բ:

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. № 5212, էջ 305բ—306ա:

<sup>3</sup> Նույն տեղում, ձեռ. № 5582, էջ 230բ:

նութեամբ հազարացոց են կան ի մէջ դառն վշտաց, ի ժողովումն զօրաց պատերազմողաց, կոխումն տանց և բռամբ քարշումն մեծամեծաց (=մեծահասակաց — Ա. 2.) և տղայոց, մանաւանդ քրիստոնէից, որք կան ի մէջ շարաշար պահանջողաց, որ անպատմելի է և անընդորով արկանելի»<sup>1</sup>: Նույն թվականի մի այլ հիշատակարանում Համդեցին ավելի հանդամանորեն է անդրադառնում վերը ակնարկված անցքերին: Արևմտյան քրիստոնյաների դեմ վարած իր պատերազմների կապակցութեամբ սուլթան Մահմեդը ծանրաբեռնում է հպատակներին այլևայլ տուրքերով, ստրկութեան և շրջափոխութեան հասցնելով նրանց: Մեծահասակ հպատակներից դանձում է «էքիսպուռ արղչասի» և «իշթիրա» կոչված նորատեսակ հարկեր: Հարկահանութունը ստանում էր ռազմական ավարատութեան բնույթի Տուրքերի երեսից արքատութեան դուռը հասած շատերը փախշում են օտար աշխարհ: «Աշխարհ ամենայն, — կարդում ենք մի տեղ, — դատարկեցաւ ի զօրաց արքունականաց հաստարմաց և բազմազան բոյլք աշխարհաւէր զօրաց կողոպտողաց, որ շրջեալ և իջաւանեալ ի գեղորայսն արդի արդի պատճառանօք խնդրեն դրամս և առաւել ևս արգն թուրքմանաց խորանաշրջաց, որոց շարութեանցն ոչ տեկալ աւերեցան բազում գեօղքն և ամայացաւ երկիր նոցա ի բնակչաց, աւուրքք յառաջ: Եւ առաւել ևս յայսմ ամի զօրացան այս արդքս թուրքմանաց և աւար հարին զանասունս գեղօրէից ամենայն երկրի և ի տեղիս տեղիս զբնաւին ինչք գիւղից յաւար հարին... Եւ դատարկեցան ճանապարհորդք և կարաւանք և ամայացան ճանապարհք ամենայն, զի բազումս կողոպտեցին ի վաճառականաց և սպանին... Զի և ի կոյրս մուրացիկս մերկացուցանէին, յորոյ բանիցս զառաւելութիւն շարութեան իմասցիս: Եւ գեօղք առ զմիմեամբք փախուցեալ ի քաղաք անկանէին: Որ և ի ժամանակի հնձոց ոչ կարացին համարձակ գնալ ի գեօղս փերեանց ի հունձ և ի մանգաղ: Զի նոքա կերակուր իւրեանց արարին զարտորայսն հասկակոտոր առնելով և արածելով զանասունս իւրեանց... Յորոյ պատճառէ եղև սղութիւն ցորենոյ և թանկութիւն հացի և աւերման պատճառ: Եւ աւելի իմն ևս այս, որ ԴՃ (=400) ըստակն ի մին մառչիլ եղև, և արքատք և մշակք և արուեստաւորք, որք աւուրքք սակաւ գործին յոյժ նեղեալ լինէին, զի զգրամն, որ ինքեանք յամեքէ առնուին, միւսն ի նոցանէ ոչ առնոյր, թէ կերակրավաճառքն և թէ այլք, որ և յոյժ վշտացեալ լինէին...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 1370, էջ 391ա:

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. № 1149, էջ 295բ—296ա:

Ի վերջո քաղում ենք նաև նման մի վկայությունն նորերս հրապարակված Կուսինուհայ ժամանակագրությունից: «Ով ընդերցող եղպայր նայեաց մտաց աջօք և տես թէ ինչպեա վրդովմունք է եղեր զի ՌՃԼԲ (1683) թվին մինչև ՌՃԽԳ (1695) թի ի սովեն թի ճեւալոց թէ մանգրոսն (պղնձե ստակեն — Ա. Հ.). քանզի ինքեանք կու տային պղինձ մեզանէ պահանջէին արծաթ. և զի երկարեցից՝ շատ մեծատունք ախկատացան և եղեն պարտատէրք. աշխարս բովանդակ աւերեցաւ, ձմուան ժամանակն պարոնայք և հարկապահանջողք և սէֆերցիք ըրայէն կոխած առնելով գնային խկ ամառն օսմանցիք գասք գասք կողութիւն կանէին. մինչ զի ճանապարհք խարանէին: Եւ այսու պատճառաւ զայս հնարեցան թվին ՌՃԼԶ (1687). Եկէն անուն զօրպայի միոյ պարոնութիւն տուին, Գ. թուլով վասն այս պատճառի զի անցուցէ զօսմանցիքն ի պատերազմ. և ժողովեալ բազումք ի գլուխ սորա զաշխարհս կոխան ատնելով եկին մինչև ի ծովն: Եւ նա անցեալ գնաց սակաւ արամբք. և հոլովք դարձան և սկսան յայանի և համարձակ գողութիւն առնելոյ. վասն որոյ ել հրաման թագաւորէն շարթել զնոսա. և քանի մի սատկեցուցին. և բազումք գումարեցան ի մի տեղ վասն ահէ սատակման և սկսան զիւզ կամ քաղաք կոխել և շատ վնաս արարին. ետոյ հնարս իմացան, քանի մի անուանի զօրպայից թող ետուն և այսու հնարիւք պատեցին և սատկեցուցին ի տեղիս տեղիս. և բարձաւ շարն ի միջոյ: Բայց այսն ամենայն ի հինկ ամին մէջն կատարեցաւ. զի ատենով ցան չկարեցին ցանել զի գեղացիք ի բախտտեան և թաքստեան կային. ահա այսու պատճառաւ եղև սով մեծ ու կեղացոց անօթիքն և այլ վերին քաղերեն թափեցան և յուլովք ի կեղացոյն. Ժ կամ ԺՅ տարուն տղայս կամ աղջիկան բերեալ ի քաղաքամեջի ձգէին և բազէին և նոքա անտէրունք լեալ շրջէին զոնէ ի դուռն և բազումք մեռանէին. զի էյին ամառային արեակէս և ձմեռային անձրագաց և ցրտասարոյց: Այլև մատղաշ կանայք և կատարեալ աղջկունք իրենց իրիչայովն ի ծառայութեան մտեալ անձնածախք եղեն և անցան Եգիպտոս»<sup>1</sup>:

Այս ամենից հետո հասկանալի է, որք բնութագրելով թուրքահայերի ընդհանուր վիճակը, ժամանակագրողը ասում էր, թե «ե՞մք ի միջի սոցա (թուրքաց — Ա. Հ.) իբրև զճորտ և ծառայ. և այլ վատդարագոյն քան զծառայ, քանզի տեսարք ծառայից ընչիւք ստա-

<sup>1</sup> «Հանդես ամսօրյա», 1953, էջ 249 և հ.ս.

Նալով քաղցրութեամբ և խնամով սպահեն զծառայան իւրեանց, իսկ մեք առանց ստ'ալիկի ծառայեմք սոցա»<sup>1</sup>:

Կուտինայի ժամանակագրությունից պարզվում է դարձյալ այն իրողությունը, որ անմիջական արտագրողների մասսաներից զատ թուրքական ուժի մի ծանրությունը զգալի էր նաև հայ առևտրական դասի համար: Հայ առևտրականների զլխին եւ շարունակ դողում էր ենիչերիների յախազանք և Ֆրանց հարստության վրա հաճախ աչք էին տնկում ենիչերիների ուժին կառչած մերթ զազանարարո, մերթ հիմարամիտ թուրք սուլթանները: Հայտնի է նաև էնզելսի այն դիտողությունը, որ կարավաններ կողոպտելը առևտուր անելու եղանակ է հանդիսանում Թուրքիայում, և որ դաժան այդ սիտեմը անհամատեղելի է կապիտալիստական հանրակարգի հետ: «Ստացված հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ սատրապների ու փաշաների պիշատիչ միջամտությունից, բացակայում է բուրժուական շահույթի առաջին հիմնական պայմանը՝ առևտրականի անձի և նրա սեփականության ապահովությունը»<sup>2</sup>:

Վերը բերված բազմաթիվ փաստական նշումներից զժվար չէ տեսնել, որ եթե մի կողմից Թուրքիայի և հակաթուրքական կոալիցիայի բախման ժամանակ սաստկանում էր հպատակ հայերի ճնշումն ու հարստահարումը, մյուս կողմից ռազմաճակատներում թուրքերի կրած պարտությունները իշխող օտարաախրության լծից ազատագրվելու հույսեր պիտի ներշնչեին ոչ միայն թուրքահայ մասսաներին, այլև թուրքահայ առևտրական դասի ներկայացուցիչներից շատերին:

Ծեծք, բանասարգելությունը, զուլքի բռնագրավումը սովորական պատիժներ էին մանավանդ անվճարունակ հարկատուների համար: 1652 թվականին մի գրիչ նշում է. «Ի բռնակալութեան Բաղիշու Ավդալ բեկին. ի յայսմ տարի Գ (3) ոգի կախուսց ի քրիստոնէից ի մէջ շուկային վասն հարկապահանջութեան»: Հիշատակագրողը ընդօրինակում էր իր առաջ գրած ձեռագիրը «կենօք տառապանօք և դառնութեամբ լի, յամենայն կողմանց ցնորիւք պաշարեալ»<sup>3</sup>:

Համատարած ու մասսայական արտունջի արտահայտությունն էր, երբ այս դարերի հիշատակարաններն ընդհանրապես և Թուրքիայում գրվածները մասնավորապես՝ այնքան հաճախ նշում էին

<sup>1</sup> «Հանդես մասթրյա» 1952, էջ 242:

<sup>2</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, XVI, т. 11, էջ 22:

<sup>3</sup> Հայկական ՄՍԹ Մասենադարան, ձեռ. № 835, էջ 243ա:

իրենց «գառն և դաժան» ժամանակը, որում նեղվում էին «ի հարկապահանջութենէ անօրինաց» և ավելացնում, թե «ևս քան զևս սաստկանա բոնութիւն և նեղութիւն ի վերա ազգիս հայոց»:

Մեքենայորեն կրկնվող կամ ընդօրինակվող տողեր չէին սրանք, այլ նորանոր ձևեր ընդունող ճնշումների և կեղեքումների դեմ հարատուրեն բարձրացող բազմաթի արտահայտություններ: Ներքին վիճակների և հատկապես հայ աշխատավոր ժողովրդի ծանր կացութեանը աչքի առաջ ունենալով՝ հասկանալի է դառնում, երբ գրիչները շարունակ պաշտատում էին կրկնելից՝ «ազատություն» և «փրկություն»:

Երբեմն, տեղի տալով ժողովրդի բողոքներին, սուլթանի կառավարությունը հարկադրված է լինում այս կամ այն վայրում իջեցնել սովորական հարկերի չափերը կամ վերացնել «զուլմ» (այստեղից հանրածանոթ «զուլում» բառը) կոչված արտականոն տուրքերը: 1671 թվականին, արձանագրելով նման մի դեպք Վանում, Նալֆա գրիչը հաղորդում է. «Այսմ ամի Ալխասս [և] Նաշատուր անուն քրիստոնեայք գնացին թագաւոր/էն/ ամբ դափաւջի հանին բերին տեղսինչ դողար կարդ, սահմանք կեր՝ ամէն թեթեացցին. ոչխարին ե (=40)-էն Ա. (=1) արին, հաց է (=7)-էն Ա. (=1), այգեստանաց ծառին՝ չկայ, թփին (հավանորեն խաղողի մասին է խոսքը — Ա. 2.) Ռ. (=1000) ին՝ կես զուռուշ, ծառի տակի խոտից ուշուր (=աշար) չկա, փանջ կէս (5 ու կես զուռուշ) եղաւ գլխախոտ, կշախ (=ձմեռանոց) վէրուցին, բոխաթից զուլմ վէրուցին: Բայց միայն խարաջն է մնացել. Աստուած աջողէ էն էլ կու լինի»<sup>1</sup>: Գոհունակութեան և լավատեսութեան նման զեպքեր հիշատակարաններում բացասիկ են: Հատկանշական է, այնուամենայնիվ, որ անգամ այս Նալֆա գրիչը «գառն և նեղ» էր համարում իր ժամանակը:

Լեանայան առևտրի ճանապարհին ընկած քաղաքներում եվրոպական մխարեններն այս ժամանակ ևս օգտագործում էին մասսայական անբավականությունները, հավատացնելու համար, թե հայերի ազատությունը կրկնելից չէ, որ պիտի գա, այլ «Ֆրանկներից», որոնք իբր քրիստոնյաների ազատության համար է հենց, որ զենք առած պատերազմում են Ռուբրիայի դեմ: Արդեն առիթ ունեցանք կանգ առնելու այն փաստերի վրա, որոնցից ակներև է դառնում, թե թուրքահայ տիրող հասարակաշէրտերի մեջ ևս մասնակի արձագանք էր գտնում միսիոներների այս պրոպագանդը: Թուրքա-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մտանադարան, ձեռ. № 5835, էջ 253ա—բ:

Նայ քաղաքներում միախոններին պրոսպագանդը XVII դարի վերջերին նպաստում էր կաթոլիկության տարածմանը: Էրզրումում, Ռոսատում և Կ. Պոլսում սաստկանում են հայադավան ու նորադարձ հայերի բախումները<sup>1</sup>:

Դավանաբանական այս բախումների ժամանակ պայքարի ղենք էր դառնում դարձյալ հին ազատագրական լեզուդը: XVII դարի վերջերին և XVIII-ի սկզբներին ուղեգիր Դը Լա Մոթոնը գրում էր, թե կաթոլիկ պրոսպագանդիստները հիշեցնում էին Ներսեսին վերադրված հին մարգարեությունը, որով «կղուշակվեր թե պատերազմասեր հոռմեական ժողովուրդ մը օր մը պիտի վտարե մահմետական աիրապետողները և վերահաստատե հայերը իրենց նախկին ուժին և ազատություն մեջ: Այս մարգարեությունը, — հարում է ուղեգիրը, — քիչ ազդեցություն չունեցավ իրենց (հայոց) մտքին վրա և բավական օգնեց քարոզիչներու հոգեկան (իմա՝ հոգևոր — Ա. Հ.) հաղթանակներուն»: Վերը հիշատակված քաղաքներում մասամբ հենց այս պատճառով թուրք կառավարությունը մի պահ հալածանք սկսեց կաթոլիկադավան հայերի դեմ: 1705 թվականի մայիսի 24-ին Կ. Պոլսում հրապարակվեց կառավարական հրամանագիր, որի ուժով պաշտպանության տակ էին առնվում սուլթանին հավատարիմ հայադավանները և ընդհակառակը, թիարանի դատապարտվում հայ ֆրանկադավան «սպասամբները», ընդամին մահվան դատավճիռ սպառնալով նրանց, ովքեր համառելով պապականության մեջ, հրաժարվում են վերադառնալ իրենց նախկին դավանանքին<sup>2</sup>:

Որ այս պայքարը տեղի ուներ ոչ թե կրոնական, այլ քաղաքական հողի վրա՝ ահներև է XVIII դարի սկզբում Պոլսում ապրող Մխլեիմյան Գևորգ վարդապետի (1681—1758)՝ «Գիրք վիճաբանությունեան ընդդէմ երկաբնակաց» գրվածքից, որ առատ լույս է սրբիտում այն խավերի գիրքորոշման վրա, որոնք պայքարում էին հայերի արևմտանվորոպական կողմնորոշման դեմ:

Բնիկ պոլսեցի էր Մխլեիմյանը կամ, ինչպես ինքն էր անվանում իրեն՝ Մխլեիմ-օղլին: Պատանի հասակում սրպես հայ եկեղեցու ղապիբ ուղարկվել էր Փարիզ, ուր հմտանալով ֆրանսերենին, լատիներենին և հունարենին, վեց տարի աստվածաբանություն էր

<sup>1</sup> Հ. Քյուրտյան, Ա. Տը Լա Մոթոնի ուղեգրութենեն հայոց մասին, առանձնատիպ, էջ 8:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 24:



սովորել Սորբոնում: 1707 թվականին զսիր Մխլերիմյանը գրում է՝ «Մեկնութիւն կաթողիկէ եկեղեցոյն» աստվածաբանական երկը, ուր աշխատում էր հաշտութեան կամուրջ ձգել երկաբնակիների ու միաբնակիների միջև<sup>1</sup>: Ավարտելով ստումը, երկար ձանադարհորդում է Եվրոպայում և Արևելքում, գիտելով ու համեմատելով ժողովուրդների կյանքն ու կաթողիկէ եկեղեցականների կենցաղը: Այստեղ նա նկատում է այն խտրը, որ գոյութեան ունեւ գինի կոնծող ու ջուր քարուղոյ կաթողիկէ կղերի խոսքի ու գործի միջև: Վերագառնալով Պոլիս մի ժամանակ, երբ սուր պայքար էր գնում կաթողիկէների և հայադավանների միջև — Աղեքսանդր Զուլալացի կաթողիկոսի ժամանակ էր այս — Մխլերիմյանը անցնում է վերջիններիս բանակը և հանդես գալիս այնուհետև որպէս պապականութեան կատաղի հակառակորդ: Կաթողիկէները բանա են գնում նրան Հստմում: Այստեղ էլ հենց գրի է առնում նա իր գիրքը՝ դարձնելով ախտաբորբոք խոսքը «մխիթարութիւն և սփոփումն ի մէջ խաւարային բանտի»<sup>2</sup>:

«Գիտացիր և ծանիր», — ասում էր հեղինակը, — զի այլ այսուհետև կատարած աշխարհի է և վախճան աշխարհիս օրըստօրէ մերձենայ. և որդի մարդոյ եկեալ արդեօք գտանիցէ՞ հաւատս յերկրի»<sup>3</sup>: Այնուամենայնիվ հեղինակը զիւ հավատի նեղ կայան է գըտնում արևելքում և դրանով էլ հենց բացատրում իր դարձը՝ այդ կապելով ներսեսի մարգարեութեան հետ, «որ նախագուշակեալ է հագով սրբով, որ աէրն մեր Քրիստոս ի միւս անգամ գալստեանն իւրում յայլ ոչ ուրեք զքրիստոնէական հաւատս գտանելոց է, բայց միայն յարեւելս»<sup>4</sup>: Մարգարեների և ավետարանիչների նախատեսած

<sup>1</sup> Հայկական ՍՍՏ Մատենագարան, ձև. № 1461:

<sup>2</sup> Տե՛ս Գեւորգ վարդապետ Մխլէիմ - Օղլի, Գիրք վիճարանութեան ընդգէմ երկարնակաց, Կ. Պոլիս, 1734, էջ 250: Վենետիկի Մայրցուցակը 137-ի ներքև նշում է նաև Մխլերիմյանի «Յատկածարանութեան յազազս բրիտանոնէութեան» վերնագրով մի այլ աշխատութիւն՝ զբոված շի բանտին Ֆրանսիատանայ յամի 1713», Բ. Սարգիսյան, Մայրցուցակ, 137: Այստեղ ավելորդ չէ Կ. Պոլսի Բերայի գերեզմանատան Մխլերիմյանի տապանաքարից բերել այս տողերը.

Որ ճշմարիտ գոլոյն սակի  
էր ջատագով յամենայնի  
Չորիք ամօք ի մէջ բանտի  
Երեսուն ամ ի յաքսորի.  
Վասն մերոյս սուրբ կրօնի  
Ի լատինաց արգէն տանջի:

(Հայկական ՍՍՏ Մատենագարան, ձև. № 6273. Թ. 509բ):

<sup>3</sup> «Գիրք վիճարանութեան», էջ 132:

<sup>4</sup> Նույն տեղում:

Նեոք, — ասում է Մխլեիմյանը, — տիեզերական առաջին երեք եկեղեցիների սահմանած ուղղափառությունը ոտնահարող քաղկեդոնական հերձվածն է հենց և ամենից առաջ ընդհանրական եկեղեցի լինելու հավակնություն ունեցող կաթոլիկությունը: Նույն այդ հերձվածի մասին է կուսավորչի տեսիլը — սև այն այժերը, որոնք մըտնելով սրբություն ջուրը, դարձել էին լուսեղեն գասներ, մինչդեռ սմանք, անցնելով ջրի մյուս կողմը՝ չարափոխվելով սև գայլերի պիշատում ու պատառոտում են Քրիստոսի լուսեղեն գառներին:

Թափանցելով հայ գյուղաշխարհը՝ ֆրանկացած քաղաքացիները գայթակղության օրինակ են դառնում գյուղացիների համար: «Եւ որչափ բովանդակ գեղօրեր տեսեալ զֆրանկականալն քաղաքացւոց իւրեանց, և գայթակղեալք ի նոցանէ ուրացան ամենքն (sic) զհաւատս Քրիստոսի»<sup>1</sup> և այս այն հուսով թե «ֆրանկը գան և թագաւորութիւն հաստատեն մեզ»: Ճշմարիտ քրիստոնյաները, առարկում է մեր հեղինակը, պարտավոր են ցանկանալ երկնային, բայց ոչ երկրավոր թագավորություն: Ֆրանկները ապստամբեցնում են հայերին թուրքերի «աստվածատուր սրի դեմ» և նրանց քարոզում «բարեկամութիւն և միարանութիւն առնել ընդ թշնամեաց թագաւորացն մերոց»<sup>2</sup>, այսինքն՝ «բարեխնամ» թուրք սուլթանների թշնամիների հետ: Չլինի թե, ասում էր նա, հայերը հրապուրվեն ֆրանկների քարոզներով, ապստամբեն իրենց տերերի դեմ «և յեսոյ ի յայտ եկեալ տաճկաց, ապա բովանդակ ազգին և եկեղեցւոյն և հաւատոցն Քրիստոսի վնաս ինչ եկեացէ»<sup>3</sup>: Հայերի դուռնուները, գրում էր Մխլեիմյանը, ավելի վատ չէ իսլամական Արևելքում, քան ֆրանկների դուռնուները քրիստոնյա Արևմուտքում: Եթե ֆրանկ արհեստավորը կամ ոտնչապար օրական 20 ստակ է շահում, դրանից 16-ը տալիս է թագավորին: Եթե վաճառական է նա և ունի հազար դուռուշ, դրանից 200-ը պարտավոր է վճարել նույն թագավորին: Մինչդեռ տարեկան 5—10 դուռուշ գլխահարկ տալով մուսուլման իշխողին՝ հայ ուսան շրջում է երկրում ազատ ու համարձակ... Արդարացնելով մուսուլման կրնկի տակ ապրող սաղախիցների իրավագուրկ կացությունը՝ մեր հեղինակը գրում էր նույնիսկ, թե աստված վերացրել է հայերի թագավորությունը ոչ թե նրանց պատժելու համար, այլ, ընդհակառակը, նրանց շատ սիրելուց: Նահատակվելով

<sup>1</sup> «Ֆիրք վիճարանութեան», էջ 81:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 110:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 111:

հանուն Քրիստոսի, նրանք պիտի փառավորեն աստծու անունը՝ արժանանալով երկնից անասնց թագավորութեանը<sup>1</sup>։

Միլեիոյանի տեսակեալը բավականաչափ պաշտպաններ ուներ հայադավան եկեղեցու զաղափարախոսների միջավայրում։ Նրանից շատ հեռու չէր, օրինակ, մեզ նախածանոթ Հակոբ Կարնեցին։ XVII դարի կեսերին եվրոպական հեղինակներից ոմանք ուղղակի վկայում էին նման հայացքների ազդեցութեան մասին։ Այսպէս անանուն մի հեղինակ գրում էր, թե արեւմտահայերն ավելի շուտ վերագատում են հպատակ լինել Թուրքիային, քան քրիստոնյա որեւէ պետութեան, քանի որ միանգամ խարաճ վճարելուց հետո քրիստոնեական դավանանքին հետեւելու համար նրանցից ոչինչ չէր պահանջվում այլևս<sup>2</sup>։

Տարօրինակ չպիտի թվա, երբ մեզ մոտ ժամանակներում իսկ հայ եկեղեցասեր ու ազգասեր աշնպիսի մի պատմաբան, ինչպէս Ստ. Պալասանյանը, գրում էր, թե «իրանք քրիստոնյաները կարող էին վկայել, թե թուրքերի կրոնական ատելութունը ավելի սաստիկ էր ծանրանում իրանց սեպհական հերետիկոսների (շիաների), քան քրիստոնյաների վրա, այնպէս, ինչպէս որ հայոց և հունաց ատելութունը դեպի իրանց ցեղակից կաթոլիկները մահմեդականների դեմ ունեցած ատելութունից սաստիկ էր»։ «Ձարմանալի չէ ուրեմբն, — դիտում էր Պալասանյանը, — որ XV դարում սերբիացիք կամեցած լինեին հունադավան մնալ թուրքերի ձեռքը, քան կաթոլիկ հունաբարացիների իշխանութեան ներքո, որ XV դարում կրեոացիք, վենետիկյան իշխանութեան ներքո եղած ժամանակները, ցավելով հիշելին օսմանցոց անունը, որ XVIII դարում Մորեայի հույները խոստովանած լինեին արեւմտյան ճանապարհորդներին, թե որքան անտանելի էին նոցա իրանց կաթոլիկական կրոնամուլութեամբ, համեմատելով թուրքերի հետ, «որ ամեն տեսակ իրավունքներ էին տալիս նոցա»։ Նույն պատմաբանը հիշատակում է հունական աֆնասածը, թե ժողովրդի երեք պատահասների մեջ թուրքերը վերջին տեղն են բռնում՝ հոգևորականներից և խոշարաշիններից հետո<sup>3</sup>։

Հետաքրքրական է, որ այսպէս գրում էր հայ ներհուն մի պատմաբան, որ բնավ աչք չէր գոցում թուրքական տիրապետութեան հարստահարումների ու ճնշումների առաջ և ոչ էլ անգիտանում

<sup>1</sup> «Արարատ», 1871, էջ 138 և հտ.։

<sup>2</sup> Du Mans, նույն տեղում, Appendice XLV.

<sup>3</sup> Ստ. Պալասանյան, Հունաստանի անկախութեանը (տե՛ս «Փորձ» ամսագիր, 2-րդ տարի, էջ 171 և հտ.)։

Թուրք բռնակալութեանը ցույց տրվելիք դիմադրութեան անհրաժեշտութիւնը:

Հարկ կա այնուամենայնիվ փոքր-ինչ կանգ առնել Թուրքական խարաճի մասին Մխլեիմյանի և նմանների արտահայտած կարծիքի վրա:

Ճիշտ է, որ Թուրքահպատակ քրիստոնյաների խարաճը ավելի փոքր գումար էր, բան զրամական այն տուրքերը, որ վճարում էին քրիստոնյա Եվրոպայի հպատակները:

Համեմատելով այն գլխահարկը, որ բողոքական հունգարները ժամանակին վճարում էին Թուրքերին. այն տուրքերի հետ, որ տալիս էին նրանք կաթոլիկ Ավստրիային՝ Օրին ևս վկայում էր, թե առաջ հունգարական բոլոր խոշոր տնտեսութեանները վճարում էին ամենաշատը 2—3 էքլու, որից հետո նրանք ազատ էին հետևելու իրենց դավանութեանը, իսկ հիմա, ենթարկվելով ավստրիական եղութաների հսկողութեանը, յուրաքանչյուր հունգարական տնտեսութեան վճարում է 50—60 էքլուից ոչ պակաս<sup>1</sup>:

Այնուամենայնիվ շոյիաի անդիտանալ, որ խարաճը քրիստոնյաների միակ տուրքը չէր: Անկախ զրանից խարաճը, որպէս ազդային-կրօնական խտրականութեան նշաններից մեկը, նվաստացուցիչ էր քրիստոնյա հպատակների համար: Հայ մասսաները միշտ էլ արանջացել ու բողոքել են խարաճի մասին: Իրողութուն է այս, որ անընդհատ գրսետրվել է և՛ Իրանում, և՛ Թուրքիայում: Դաժան հարկապահանջութեան դեմ հայ մասսաները դժգոհութեան ցույցեր էին տնում նաև Մխլեիմյանի օրոք: Այսպէս, 1706 թվականին Վանի «ոխաթից» (= ուսլաթից) ավելի քան 500 մարդ բողոքի համար ոտքի ելած՝ կամենում են գնալ «ի դուան թագավորին», սակայն քաղաքի ծերունի ազաները նրանց վերադարձրել են իրենց տեղերը<sup>2</sup>:

Եթե Մխլեիմյանը հայտնում էր մտքեր, որոնք XVII դարի հայ եկեղեցական գասի իշխող մտքերն էին, այդ դեռ աղացուցյ չէ, թե նրա հայացքները համապատասխանում էին իրականութեան: Ճշմարտասիրութեանը չէ միշտ, որ լեզու էր առնում նրա ելույթների մեջ: Կ. Պոլսից գրած մի նամակում Մխլեիմյանի մասին հաղորդում են. «Մխլայիմ օղլին այժմ ի դրունս մեծամեծաց տաճկաց շրջի, ընդ աստղադիտանոցին վիճի և յաղթող դտանի...»<sup>3</sup>:

<sup>1</sup> Յ Յ Օ Ր, նույն տեղում, էջ 41:

<sup>2</sup> «Մանր ժամանակագրութեաններ», 1, էջ 364:

<sup>3</sup> Դ, և ո ն դ Տ ա յ ա ն, Մայր գիվան Մխլեիմյանց Վենետիկո, Վենետիկ, 1930, էջ 114:

Թուրք մեծամեծների մոտ ելումուտ ունեցած և նրանց բարեկամացած հայ վարդապետը հայրենի իրականությանն իսկ նայում էր ըստ երևույթին աստղագետի դիտակով, թյուրեկով անշպար այն իրականությունը, որ անգին աչքով այնքան ճշմարտացի դիտում էին մեր վկայակոչած հայ պատմական հիշատակարանների շարքային հեղինակները:

Օրիի ներկայացրած ծրագիրը մանրախուշվ հարցասիրության առարկա չդարձավ կուրֆյուրստի արքունիքում: Գոնե այդ շի երկվում նրա բանավարության պաշտոնական ընթացքից: Կարդալով ներկայացրած ղեկուցագիրը՝ Օրիի «բարձր հովանավորողը» կամեցավ միայն իմանալ, արդյոք Հայաստանի կլիման աննպաստ ներգործություն չի՞ ունենա իր կամ իտալական արևի տակ մեծացած իր ամուսնու թանկագին առողջության վրա, կամ արդյոք Հայաստանի թագալիր զույգը, պալատական գվարձանքներին ու հարմարանքներին սովոր, ձանձրույթ չպիտի՞ վզա մեկիք Սաֆրազների ու էմիրբեկների պարզաբարո շրջադրության մեջ: Հարկ եղավ հավաստիացնել կուրֆյուրստին ու նրա պատվարժան տիկնոջը, թե Հայաստանը ևս ունի վերին աստիճանի ազնիվ իր «բոմոնդը»<sup>1</sup> և գլբովատել Հայաստանի կլիման, որ կազդուրիչ է թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց համար: Հարյուր տարին բոլորած մարդիկ սովորական երևույթ են այդ երկրում, ասում էր Օրին: Ինքը հանդիպել է 128 տարեկան հայ մի արքեպիսկոպոսի, որն ութ տարի առաջ ճանապարհորդություն էր կատարել Սպանիայում, Ֆրանսիայում և Վիեննայով անցնելիս, երկու անգամ խոսել գերմանական կայսրի հետ: Վրաստանի մոտերքում հանդիպել է 134 տարեկան մի տիկնոջ, որն ավելի ծեր տեսք չուներ, քան 60 տարեկան տիկիները Եվրոպայում: Սրանց համապատասխանում է նաև այդ կողմերի կանանց բեղմնավորությունը: Մեկիք Սաֆրազը ծնվել է, երբ մայրը վաթսո՞մ տարեկան էր: Առողջարար ու կենսաբեր կլիմայի շնորհիվ շատ քիչ բժիշկներ կան այնտեղ և եղածներն էլ, անգործության մատնված, հազիվ են գլուխ պահում<sup>2</sup>:

Միայն մի տարակուսանք ունեցավ հայկական թագի պիպոցյան թեկնածուն: Օտարոտի երևաց նրան, որ ընայած Հայաստանի հա-

<sup>1</sup> „Il y a aussy en Armenieen du très beau monde“.

<sup>2</sup> Յ 3 0 8, նույն տեղում, № 10:

ըրատության ու լիաւատության մասին արվող իր պատմություններին՝ Օրին վերադարձել էր Եվրոպա առանց նվերների: Սակայն հայ բանագնացը աճապարեց փարատել նաև այդ տարակուսանքը: Հայտնեց, որ դժվար էր որևէ բան հասցնել Հայաստանից Եվրոպա, մասամբ ճանապարհին ուշանալու և մասամբ Անատոլիայի ապստամբական շարժումների ու ավազակային հարձակումների պատճառով: Այնուամենայնիվ մեկիք Սաֆրազը և մյուս իշխանները նվեր են հղել կուրֆյուրստին ութ հազվագյուտ նժույգ ու մի շարք թանկարժեք իրեր: Ինքը ընդունել է նրանցից այդ նվերները և հանձնարարել համշիրակ բարեկամներից մեկին, հայ առևտրական Թարգուլին, Թրանսիլվանիա հասցնել զբանք: Գեկանաբեր ամսվա սկզբներին այդ «ապրանքները» դուրս կրելով են Հայաստանից: Պֆալցի սահմանազլխից այդ ամենն առանց մաքսովճարումի տեղ հասցնելու համար հարկավոր է, որ համապատասխան հրաման լինի կուրֆյուրստի կողմից<sup>1</sup>: Օրին խոստացաւ կուրֆյուրստին նաև շորս ձի իր կողմից:

Ձիերի ստացումը խիստ ձգձգվեց: Ի վերջո պարզվեց, որ ձիերից շորսը մնացել է Թուրքիայում, Վալաքիայում և Հունգարիայում: Չորսը իր տրամադրության տակ Օրին պահել էր՝ ձեռնարկված «մեծ գործին» — Հայաստանի ազատագրմանը — նպաստողների օգտագործման համար և ավելի ուշ՝ վաճառել նույն գործի հետ կապված ծախսերը հողալու նպատակով: Փաստապես կուրֆյուրստի ախուր մտան խոստացված ձիերից միայն մնացած շորսը<sup>2</sup>:

Ծանոթանալով Օրիի ներկայացրած գրություններին, Հայաստանի մեկիքներին ուղղած կարճ պատասխանի մեջ կուրֆյուրստը հայտնում էր, որ նրանց կողմից լիազորված Օրիի և Մինաս վարդապետի հետ միասին ինքը «մանրամասն քննարկել է այն ընթացքը, նախազգուշացումներն ու գործելակերպը, որոնց հարկ պիտի լինի դիմել այս մեծ ձեռնարկության համար»<sup>3</sup>: Թե ի՞նչ վճիռներ էին զբանք՝ Օրիին ու նրա ընկերոջը հանձնարարվեց հազարդել մեկիքներին բերանացի՝ անձնական հետադա հանդիպման ժամանակ: Մեղ հասած գրագրություններից պարզ է, համենայն դեպս, որ կուրֆյուրստը նորից խոստացաւ մեկիքներին թե՛ իր և թե՛ իր դաշնակիցների աջակցությունը: Թե նրա խոստումը համապատասխանում էր այն բանին, ինչի որ ակն ունեին մեկիքները, երևում է այն

<sup>1</sup> Տե՛ս մեր Israel Ory, Anhang, № 3.

<sup>2</sup> Յ 3 0 B, նույն տեղում, № 78:

<sup>3</sup> Նույն տեղում, № 14, հմմտ. №№ 15 և 16:

խոսքերից, որոնցով մեկիք Ասֆրազին և մյուսներին ուղղած իր սխառասխանի մեջ կուրֆյուրստը բնութագրում աւ դրվատում էր Օրիի անձնավորութիւնը. «Ամենահավատարիմ և ամենաընդունակ մարդը, — այսպէս է հատկանշում նա վերջինիս, — որը կոչված է աշտածու օգնութեամբ ի կատար ածելու մեծ այս ձեռնարկութեանը, և ըստ ամենայնի արժանի է, որ նուշնչափ մեծ վստահութեան տածվի դեպի նրա անձնավորութեանը, որչափ և դեպի նրա խելքը, նրա կարողութեանը և նրա ամեն համեմատութեան գերազանցող գործելակերպը: Անտված ինքն է ընտրել նրան այս ձեռնարկութեան համար, որի իրադրութեամբ փառավորելու է ախրոջ անոճը, արգասավոր հանդիսանալով հոգիների փրկութեան, քրիստոնեական կրօնի և ամբողջ Հայաստանի բարեկեցութեան համար»<sup>1</sup>:

Այն փաստը, որ նախքան կուրֆյուրստի դրած պատասխանի թղթով ու բերանացի հաղորդելիք պատգամներով Օրին և Մինաս վարդապետը կվերագառնային հայրենիք, նրանք կուրֆյուրստի հանձնարարականներով պիտի ներկայանային ծրագրված արշավանքի ապագա մասնակիցներին, հավաստում է դարձյալ, որ Հովհանն Վիլհելմն ընդհանուր առմամբ համամիտ էր Օրիի առաջարկած գործողութեանների ծրագրին:

1699 թվականի հոկտեմբերին արդեն որոշ էր, որ Օրին Մինաս վարդապետի հետ մեկնելու է Ֆլորենտիա, Հռոմ, Վիեննա և Մոսկվա, առաջիկա արշավանքի կազմակերպման խնդիրները վերձուցելու համար: Այդ հանձնարարութեանը կատարելու պատրաստ Օրին գիմում է ինչ-որ «մոնսեյնյորի», — բարձրագիր իտալական եկեղեցականի, — խնդրելով, որ Հռոմ զնալու համար իրեն ու վարդապետին միանա նաև կաթոլիկ մի կրօնավոր, որին կարելի լինէր վստահել ամեն ինչ և որի միջոցով դուրսին լինէր կապվել Վատիկանի հետ: Երկյուղ ունէր, թե առանց այդ միջնորդութեան՝ Հռոմում և Իտալիայում դեգերող հայ եկեղեցականները կարող էին իրազեկ դառնալ և հայադավան եկեղեցու մյուս բարձրագիր ներկայացուցիչների ականջներին հասցնել տարվող բանակցութեանների լուրը<sup>2</sup>:

Նույն այս մտահոգութեանը Օրին արտահայտում էր նաև կուրֆյուրստին ներկայացրած ընդարձակ իր ղեկուցման մեջ: Հայ մե-

<sup>1</sup> Յ 3 0 8, նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս մեր Israel Ory, Anhang, № 7.

լիքները պիտի մեռնեն որպէս կաթուղի՝ անգամ եթէ ազատագրուելու շինեն կորֆյուրտի՝ ձեռքով, գրում էր նա: Սակայն, ավելացնում էր նաև, թէ առկա պայմաններում մեկիքներն անկարող են բացահայտել իրենց հումեակիան դավանությունը ժողովրդի կամ կղերի առաջ: Դրանով նրանք կարող են մատնուել անհավատների ձեռքը, որով հայտնի կդառնար, թէ հայերը միացել են ֆրանկներին, նպատակ ունենալով նրանց ձեռքը հանձնել Հայաստանի թագավորությունը<sup>1</sup>:

Այս նախազգուշացումը բավական է համարվել, որպեսզի ուսումնասիրողներից ոմանք աճապարհն կասկածելու Օրիի կաթուղի ուղղամտությունը<sup>2</sup> կամ կարծելու, թէ նա նախազգուշանում էր հենց ֆանատիկոս հայ ունիտորներից, որոնց կրոնամտությունը հայերին տանում հասցնում էր գլխովին լատինացման<sup>3</sup>:

Նկատենք, որ նույն այդ նախազգուշացումների անհրաժեշտությունը շեշտված է նաև հայ մեկիքների անուսից ներկայացված թղթովում: Ճիշտ է, մեկիքներին վերագրված կաթուղիությունը ավելի շուտ հանդիսանում էր հայ եկեղեցու մեջ բնակալած շարաշահունների դեմ բարձրացած մի բողոք, քան հումեակիան դոգմերի ու հումեակիան հիերարխիայի խղճմիտ ընկալում: Այնուամենայնիվ պիտի համաձայնենք, որ սլավոլի գերիշխանության բացահայտ ճանաչումը կարող էր իրոք առիթ տալ դաժան հալածանքների: Հայտնի է, որ սլաջքարելով միսիոներների դեմ՝ հայ եկեղեցականները հասկացնել էին տալիս թուրքերին, թէ միսիոներների նպատակն է հայկական ապստամբություն բարձրացնել Թուրքիայի դեմ, կամ նույնիսկ՝ հարթել մոսկովյիների առաջ Հայաստանը դրավելու ճանապարհը: Այդ նպատակով, ասում էին նրանք, միսիոներները զենք են մատակարարում նորադարձ հայերին<sup>4</sup>: Մոլեռանդ «հերձվածողները», — գրում էր իրանահայ լուսավորչադավանների մասին Տուրնըֆորը, — սրելով պետության ուշադրությունը միսիոներների դործոմնության վրա, նշում էին նրանց ուժեղանալու վտանգը: Պատյին ու քրիստոն-

<sup>1</sup> Э 3 0 В, նույն տեղում, № 9, § 39:

<sup>2</sup> Հմմտ. նույն տեղում, Введение, LXXXVI.

<sup>3</sup> Լեո, Հայոց պատմություն, Երևան, 1946, III, էջ 554:

<sup>4</sup> Նման երևույթ տեղի էր ունեցել Էրզրումում և կարսում: Դրա մասին հիշում են թե՛ Օրին, իր ղեկուցման մեջ, և թե՛ կաթուղի հեղինակները: Տե՛ս Lettres édifiantes, III, էջ 457, 463: Villote, Voyage en Turquie, en Perse, en Arménie, en Arabie et en Barbarie, Paris, 1730, էջ 213 և Flauriau, նույն տեղում, էջ 51, 67 և հա., 183 և 200:



յա պետերին նվիրված այդ մարդիկ, ասում էին հայազավանները, պիտի ավելի շուտ դիտվեն որպէս լրտեսներ, որոնք կրօնական քղամիդի տակ հետախուզում են երկիրը և ցանում պառակաման ու ապստամբութեան սերմեր: Եվրոպական հզոր իշխանները չէին հետաքրքրվի այդ մարդկանցով, ավելացնում էին նրանք, և թե որ դրանք ավելի շուտ շահանդիսանային այդ իշխանների էմիսարներ, որոնք հող են պատարտում նրանց ապագա նվաճումների համար: Իրանական կառավարութեանը հրեմն ընդառաջում էր այս կարգի — ըստ Լուսթյան հիմնավոր ու դիտուկ — հուշարկումներին և աշխատում սանձել միախոններնրի պրոպագանդը: «Ինչո՞ւ պիտի մենք նորանուլթուններ տանք ձեր կրօնակիցներին մեր սեփական հպատակներին հաշվին, — ասում էր շահի մեծ վեզիրը Ֆրանսիացիներին: — Ի՞նչ իրավունքով ի սեր մի բունն թշվառների, որոնց դուք դավանակից եք համարում ձեզ (խոսքը Նախիջևանի ունիտորների մասին է — Ա. Հ.) և որոնցից մեզ չկա ոչինչ օգուտ, պիտի աճբաժակահանութեան առիթ տանք բազմաթիվ հայ առևտրականների, որոնք իրենց մշանջենական հոգաւարութեամբ և մեծ առևտրով հարստացնում են մեր երկիրը, բազմապատկում շահի և կամուտները և հոժարակամ կերպով մեզ օգնում դժարութեանների ժամանակ»<sup>2</sup>:

Նման հանգամանքներում նախորդ բանադնացները նույնպէս հարկ էին համարել գործել կանխահոգ վզուշութեամբ: Այսպէս, տակավին Միքայել Սեբաստացի կաթողիկոսն էր 1563 թվականին Համ հղած իր թղթում գրում, թե «մեր ձեռները կաշկանդված են և մեր լեզուները այլադևների մեջ կարկամած. ուստի ոչ նամակ կարող ենք ուղարկել ձեզ և ոչ էլ ձեր սրբութեանը վայել ընծաներ: Մեզ պաշարում է երկյուզ ոչ միայն դրսեցիներից, այլև շար քրիստոնյաներից»<sup>3</sup>: Հարյուր տարի անց, 1662 թվականին Առաքել Բոբիկը, առաջարկելով իր ծառայութեանները վենետիկի և Իրանի միջև դաշինք կնքելու համար, խնդրում էր, որ առաջարկը դադարնի մնա, քանի որ վենետիկում ապրող հայերը (խոսքը հավանորեն թուրքական կողմնորոշում ունեցող հայ առևտրականների մասին էր) թշնամանքով են վերարերվում կաթողիկադավան ազգակիցնե-

<sup>1</sup> Tournetori, նույն տեղում, II, էջ 166 և հտ.:

<sup>2</sup> Du Mans, նույն տեղում, էջ 370:

<sup>3</sup> Raynaldus, նույն տեղում, XV, 1564, § 51, հմտ. նաև Չամ-չյա ն, նույն տեղում, III, էջ 520:

րին ու հատկապես իրեն և կարող են վտանգել իր կյանքը<sup>1</sup>։ Նման նկատառումներով Նախիջևանի դավառի հայ կաթողիկոսների առաջնորդ Մատթեոս Հովհաննիսենցը ևս գիմում էր եվրոպական արքունիքներին՝ պաշտպանություն խնդրելով ոչ միայն «անօրեններից», այլև «հերձվածողներից»<sup>2</sup>։

Այս իրողությունները հատկանալի են դարձնում Օրիի ու մեկիքների նախազգուշացումները, առիթ չտալով կասկածելու նրանց անկեղծությունը։ Նշված փաստերով հավաստվում է, որ մինչև XVII դարի վերջերը արևմտակլորոպական ինտերվենցիայի կուսակիցները կամա թե ակամա պիտի կողմնորոշված լինեին հօգուտ կաթողիկ պրոպագանդի և ընդհակառակը՝ այդ պրոպագանդի հակառակորդները ոչ միայն պիտի կասկածամիտ լինեին Հայաստանի ազատագրման պատրվակով ձեռնարկված արևմտակլորոպական ինտերվենցիայի նկատմամբ, այլև կանգ շառնեին նրանց հալածելու համար ձեռնարկվող միջոցառումների առաջ։

Հայտնի չէ Օրիի հիշած «մոնսենյորի» պատասխանը։ Որչափ Հուժում հայ բանադնացիներին օժանդակություն էր ցույց տալիս Ստեփանոս Ռոշքան, հնարավոր է, որ հայ-կաթողիկ այդ եկեղեցականը այն անձնավորությունն էր հենց, որի օժանդակությունն ու գործակցությունը հեռևանք էր «մոնսենյորի» կողմից եղած հանձնարարությունը։ Նշանակություն պիտի ունենային նաև այն հանձնարարականները, որ տվել էր Օրիի ձեռքը կուրֆյուրստը՝ Թոսկանայի մեծ դուքսի և Հուժի պֆալցյան ներկայացուցիչ բարոն Ֆեդեի անուններով։ Կուրֆյուրստը խնդրում էր աջակցություն ցույց տալ Օրիին և միասնամանակ նախազգուշացնում հայադավանների հնարավոր բանսարկությունների մասին<sup>3</sup>։

Կրոյցնախ քաղաքում ունեցած առևտրական իր գործերի լուծարքով զբաղված<sup>4</sup>, Օրին հնարավորություն ստացավ Մինաս վարդապետի հետ միասին ճանապարհվել Ֆլորենտիա և Հուժ միայն 1700 թվականի սկզբներին։

Ֆլորենտիայի նրա բանակցությունների հետևանքները անհայտ են։ Սակայն այն ամենից հետո, ինչ մեկ արդեն հայտնի է Կողմաս դուքսի մասին, պիտի կարծել, թե նա մերժակամ պատասխան

<sup>1</sup> Berchet, նույն տեղում, էջ 230։

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 232 և հու.։

<sup>3</sup> Sh' u մեր Israel Ory, Anhang, №№ 8 և 9։

<sup>4</sup> Նույն տեղում, № 10։

չէր տա հայ բանագնացներին: Չէ՞ որ շատ բան շէր էլ խնդրվում նրանից:

Օրիի Հում հասնելու մասին արժեքավոր տեղեկանք է հասել մեզ, ինչպես տեսանք, Ստ. Ռոշբայի տարեգրութեան միջոցով, ուր ի միջի այլոց ասված է, թե պապին հանձնելիք թղթից զատ Օրին «ունէր և զայլ թուղթն առ կայսր Լէօբոլտոս, առ բալարդին էլէբօրն և առ Չարն Մոսկովաց: Ընկալեալ զյանձնարարութիւն ի Փափէն առ կայսրն, ևրթայ առ Չարն»<sup>1</sup>:

Ստ. Ռոշբայի մի այլ վկայութեան համաձայն, Ինոկենաիոս XII պապից զատ՝ Օրիի վարած բանակցութեանը շնորհիւ Հումում տեղյակ էին կարդինալ դե Սպազան, հավատաստիչուս պրոպագանդայի քարտուղար Ֆարրոնիուսը, եղբիւսների գեներալ Թ. Կոնզալեզը, եղբիւս Գալլուսը և իմքը՝ Ստ. Ռոշբան<sup>2</sup>: Եզուիտ Շամպիտը, որը Օրիի հետ 1708 թվականին հանդիպում էր ոմեցեյ Շամախում, հենվելով նրա պատմածների վրա, հաղորդում է, թե 1700 թվականին Հումում Օրին գաղտնի գրուցներ էր ունեցել նաև պապի քարտուղար կարդինալ Ալբանիի հետ<sup>3</sup>:

Օրիի և Մինաս վարդապետի հումեակաւն առաքելութեան մասին Ֆեդեի 1700 թվականի հունիսի 26-ին գրած մի նամակից տեղեկանում ենք, որ պապը բնդունելութուն էր շնորհել հայ բանագնացներին և աջակցութուն խոստացել կուրֆյուրստի մտադրութուններին:

Ինչքան էլ առատ եղած լինելին պապի խոստումները, հիմք կա պնդելու, որ 1700 թվականին Օրին և Մինաս վարդապետը չէին

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Գիտ. ակադ. Պատմ. ինստիտուտի արխիվ, Լեոյի թղթեր, № 424, էջ 24: Ստ. Ռոշբայի վերջին տողերը շիթութեան մեջ են դրել Հ. Քյուրթյանին, ենթադրել տալով նրան, թե մինչև 1700 թվականի կեսերը Օրին դեռ չէր կարողացել տեղ հասցնել Անկեղակոթի մելիքների անունից կուրֆյուրստի հասցեով գրված թուղթը, ինչպես և նրա համար Օրիի պատրաստած բնդարձակ գեղուցադիրը, որի վրա կանգ առանք վերը (տե՛ս «Վարդեր» ամսագիր, 1956, հունվար, էջ 76): Առ այս դիտենք, որ ժամանակին հրատարակել ենք 1699 թվականի հոկտեմբեր ամսին Նեյշտատում գրված կուրֆյուրստի այն հանձնարարականները, որոնք Օրինն հնարավորութուն տվին բանակցութուններ սկսելու: Ֆլորենտիայում և Հումում (տե՛ս մեր Israel Ory und die armenische Befreiungsidee, Anhang, №№ 8 և 9): Այդ գրութունների առկայութունը աղացույց է, որ Օրինն ախ քան այդ հանդիպած պիտի լիներ կուրֆյուրստին և նրան հանձնած և՛ մելիքների անունից գրված թուղթը, և՛ իր պատրաստած գեղուցադիրը:

<sup>2</sup> Տե՛ս մեր Israel Ory, էջ 165:

<sup>3</sup> Տե՛ս A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 566:

կարող ստացած լինել նրանից շոշափելի հավաստիացումներ: Այդ ժամանակ պապական աթոռը շահագրգռված էր ոչ քե Իրանի, այլ Թուրքիայի դեմ կռալիցիա ստեղծելու խնդրով և այդ նպատակով բանակցութուններ էր վարում հենց Իրանի կառավարության հետ: Վատիկանի նորերս հրապարակված վավերագրերից տեղեկանում ենք, որ իր կողմից Իրանի կառավարութունը ևս այդ ժամանակ ահաիվ հետաքրքրութուն էր ցույց տալիս դեպի այն առաջարկները, որոնք 1699 թվականին այդ ուղղությամբ Գրան անում էր Սպահան ժամանած պապի նվիրակը՝ Անկյուրայի արքեպիսկոպոս Պալման: Ե՛վ շահ՝ Սուլթան Ղուսեյինը, և՛ նրա վարչապետը այդ բանակցութունների ժամանակ տրամադրութուն էին ցույց տալիս մասնակցելու եվրոպական կռալիցիային, որի մասին, ինչպես նրանք հավաստիացնում էին, տարիներ շարունակ թախանձալից դիմումներ էին արել Վենետիկի հանրապետությանը: Այդ նույն իմաստով Իրանի կառավարութունը հիմա ևս ընդառաջող խոստումներ էր անում ոչ միայն պապին ու Վենետիկի հանրապետությանը, այլև գերմանական կայսրին, Լեհաստանի թագավորին ու Մոսկվայի ցարին՝ իրեն հայտարարելով եվրոպական այդ պետութունների «թշնամիներին թշնամի և բարեկամներին բարեկամ»<sup>1</sup>: Զինակցութունը գլուխ բերելու համար իրանցիները խնդրում էին միայն, որ եվրոպական պետութունների կողմից տրամադրվեն ինժեներներ, թնդանոթաձիգներ և այնպիսի արհեստավորներ, որոնք կարողանային Իրանում պատրաստել թնդանոթներ, կառուցել բերդեր և այլն<sup>2</sup>:

Այս ամենից հետո անարժանահավատ պիսի համարել, երբ, հենվելով 1708 թվականին Օրիից ստացած տեղեկանքի վրա, եղուխո Շամպիոնը հայտնում է, թե 1700 թվականին Օրին շահի անունով նամակ է ստացած եղել պապից՝ Իրանի կաթոլիկների օգտին միջամտելու համար<sup>3</sup>: 1700 թվականին Օրին շէր պատրաստվում ներկայանալ շահին և հավիլ թե նրան կարող էր արված լինել նման հանձնարարութուն: Սուավիլ հավանական է, որ պապը որևէ հանձնարարական աված լիներ նրան միայն կայսրի անունով:

<sup>1</sup> *St'as* A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 495:

<sup>2</sup> *Նույն տեղում*, I, էջ 496: Վենետիկ հղած իր դիմումի մեջ կարմխիտ պատեր էլիսը հաղորդում է, որ իբր Իրանի կառավարության կողմից այս իմաստով եվրոպական կառավարութուններին արված դրավոր առաջարկութունները Մոսկվայում իր ձևքից խլել ու ոչնչացրել է ցարական վարչապետ Բ. Ա. Գոլիցինը: *Տե՛ս նույն տեղում*:

<sup>3</sup> *A Chronicle of the Carmelites in Persia*, I, էջ 566:

Հարկալ բոլոր պարագաներում պատի նման օժանդակութիւնը Օրիի համար կարող էր միայն «բարոյական» նշանակութիւնն ունենալ, շեշտելով Հռոմի շահագրգռվածութիւնը նրա ծրագրի դավա-  
նարանական կողմի նկատմամբ: Այդ ծրագրի իրագործումը կարող էր ապահովված լինել միայն Օրիի ենթագրած գլխավոր պարտնյորի՝ գերմանական կայսրի՝ ակտիվ մասնակցութեան պայմանով: Բայց որքա՞ն էր իրական այդ պայմանը:

Ավարտելով Հռոմում իրենց բանակցութիւնները, Օրին և իր ուղեկիցները մեկնեցին Վիեննա, ուր այդ ժամանակ գտնվում էր նաև կուրֆյուրստը:

Երեւի ընթերցողը մտաբերում է սառն այն ընդունելութիւնը, որ գտան Օրին և իր ուղեկիցը Վիեննայում 1698 թվականին: Արդյոք ավելի նպաստավո՞ր էր գրութիւնը հիմա, 1700 թվականի վերջերին, երբ հայ բանագնացները ժամանել էին Վիեննա կայսերական արքունիքին հայ մելիքների ղիմումը ներկայացնելու համար:

Մեզ հասել է Լեոպոլդ կայսրի 1701 թվականի փետրվարի 9-ի պատասխանն այդ ղիմումին: Այդտեղ նա հայտնում էր մելիքներին, որ խնքն ունկնդրութիւն է շնորհել նրանց ներկայացուցիչներին և վստահել սրանց իր «սիրալիր մտատրամադրութիւնը»<sup>1</sup>: Նույն օրվանից թվագրված է նաև կայսրի մի նամակը Պետրոս ցարին, ուր նա լավազուցնս հանձնարարում էր Օրիին<sup>2</sup>: Բայց այս ամենից դեռ պարզ չէ կայսերական արքունիքի կոնկրետ վերաբերմունքը դեպի Հայաստանի ազատագրման պֆալցյան ծրագիրը:

Որոշ լույս տնւում է հարցի վրա այն բացատրութիւնը, որ մի քանի ամիս անց ավեց Մոսկվայում Օրին: Պարզվում է, որ 1700 թվականին հայ պատվիրակների առաջ Լեոպոլդ կայսրի հայտ բերած «սիրալիր մտատրամադրութիւնն» ավելի հուսաատու չէր եղել, քան 1698 թվականին ցուցարեւած նրա սառնութիւնը:

Արդեն սուրբ Լնք ունեցել նշելու, որ նույն այն տարում, երբ նախապատրաստվում էր Կարլովիցի հաշտութիւնը, թուրքերի դեմ կռիւղ վրացիները հարկադրված եղան վայր դնելու իրենց զենքերը, որչափ Կարլովիցի հաշտութիւնը անխուսափելի պիտի դարձներ նրանց մեկուսացումը: Օրիի համար հիմա ակնհեռ պիտի դառնար, որ գերմանական կայսրը նրա համար չէր երեսի վրա ձգել վրաստանը, որպեսզի փոխարեն դաշինք կնքի Հայաստանի հետ: Անդ-

<sup>1</sup> Յ 3 0 B, նույն տեղում, № 21, հմտ. № 22:

<sup>2</sup> Նույն տեղում, № 24, հմտ. № 25:

քաղաքանալով կուրֆյուրբաթի այն խնդրին, որ կայսրը ևս դիմում գրի ցարին եվրոպական զորքերը Հայաստան փոխադրելու մասին, հայ պատվիրակներին հատկացված ունկնդրության ժամանակ կայսրը ավելց բացասական պատասխան: Կայսրը «ամօթաբեր և կասկածահարույց մի բան» համարեց կուրֆյուրբաթի այդ դիմումը և հասկանալ ավելց, թե ավստրիական կամ պֆայցյառն զորքերի արանդիտի մասին խոսելուց առաջ պիտի խոսք լիներ այն մասին, թե չէ՞ր կամենա արդյոք ինքը ցարը ստանձնել Իրանահայաստանի ազատագրման գործը և արդյոք ցարը ի վիճակի չէ՞ր լինի անձամբ միջամտել այդ գործին, որչափ Իրանահայաստանը մոտ է ու սահմանակից ոչ թե Ավստրիային, այլ Մոսկովյան պետությանը: Կայսրը հայանեց, որ անգամ եթե արևմտյան արանդիտի մասին ցարը տալու լիներ իր հաճությունը՝ առանց ուսս զորքերի մասնակցության, անհնարին պիտի լիներ, որ գերմանական կայսրը սկսեր Իրանի դեմ Օրիի ծրագրում նախատեսված գործողությունները: Միայն այն դեպքում, եթե ցարը ստանձնելու լինի այս գործը. և եթե ընդամին բարեհաճի դիմել իրեն, գերմանական կայսրին, այս ձեռնարկությանը պիտի լորնկերով ու զրամով, ազգամթերքով կամ ճարտարագետներով, սպաններով ու մասնագետներով օգնության գալու խնդրով, այդ դեպքում միայն ինքը պատրաստ կլիներ մասնակցելու Հայաստանի ազատագրման գործին և ընդառաջելու ցարի դիմումին<sup>1</sup>:

Վիեննայի արքունիքի այս դիրքավորումը միանգամայն համապատասխանում է այն իրադրությունը, որ ստեղծվել էր Բալկաններում XVII դարի վերջերին: Հայերի հուզած խնդիրը լավագույն դեպքում կարող էր զբաղեցնել գերմանական կայսրին սոսկ թուրքական հարցի կապակցությամբ: Որչափ հարստորդյան քաղաքականության խնդիրների միջից հանվում էր «թուրքական վտանգի» մտահոգությունը, գերմանական կայսրի համար Հայաստանի ազատագրման խնդիրը պիտի կորցնեիր իր նշանակությունն ու այժմեականությունը: Սպանական ժառանգության հարցը լուծելու համար Թուրքիայի դեմ հանած իր պնդքը դարձնելով Ֆրանսիայի դեմ, հարստորդյան Ավստրիան առժամանակ Պետրոս ցարին էր թողնում Թուրքիայի հետ կապված արևելյան բոլոր խնդիրների լուծումը:

<sup>1</sup> Յ 3 0 B, նույն տեղում, № 42, հմտ. №№ 119 և 107:

Տակավիին երկու տարի առաջ էր ավղանշում քաղաքական այս շրջադարձը ավստրիական արքունիքում քաղաքական կամերաոնի գեր ստանձնած եղուխտ Վոլֆը, այն մարդը, որի միջոցով Օրին կապ էր պահպանում Վիեննայի արքունիքի հետ: «Կայսրի խոստովանահայրը չէր նա, շնայած որ հաճախ է սովել այդ, — գրում է Վոլֆի մասին գերմանական հայտնի պատմաբան Վ. Օնկենը, — բայց, ավելի քան որևէ միևնառ, նրա հավատարմատարը, նրա ուղեկիցը ճանապարհորդությունների ժամանակ, նրա պատգամախոսը աշխարհիկ և հոգևոր բոլոր գարծերում, միակ այն անձը, որի տրամադրության տակ էր կայսրի սկանչը, ամեն անգամ, երբ կամենար»<sup>1</sup>: Հավատացած, թե Պետրոս ցարը և մոսկովցիները. պիտի մտնեն կախույիկ եկեղեցու թևի տակ, պատեր Վոլֆը դեռ 1698 թվականին (այսինքն՝ 1699 թվականի հունվարին Կարլովիցում կնքված հաշտության նախօրին) էր վերապահում նրան օսմանյան ժառանգությունը: Հայտնի է Վիեննայում ցարի առաջ արտասանած նրա մի քարոզի ավարտաբանությունը. «Եվ թող որ ամենակալը, որ Պետրոս առաքյալի ձեռքը ավեց իր բանալին, տա նաև Պետրոս ցարին այն բանալին, սրով նա բացել կարողանա թուրքական կայսրությունը և տիրանա նրան»<sup>2</sup>:

Իհարկե, խոսք չի կարող լինել այն մասին, թե ավստրիական արքունիքը լրջորեն մտահոգված էր հայերի ավատադրման հարցով կամ թե նա անկեղծ ցանկություն ուներ Մոսկովյան պետությանը միացած տեսնել Իրանի կամ Ռուսթիայի մեջ մտած հայաբնակ գավառները: Հայտնի է, որ երբ Պետրոս Մեծը գրավեց Իրանի մերձկասպյան շրջանները, Ֆրանսիական, անգլիական և վենետիկյան դեսպանների հետ միտակց ավստրիական ռեզիդենտը ջանում էր ստաֆի կանգնեցնել Ռուսթիան Ռուսաստանի դեմ՝ հուշարկելով Բարձրը դուանը, թե Պետրոսի արշավանքը սպառնում է գրավել Հայաստանը և Վրաստանը, ծայր քաղաքայման հասցնելով թուրքական կայսրությունը<sup>3</sup>:

Սակայն կարևորն այն չէ, թե ինչ վերաբերմունք ուներ Վիեննայի արքունիքը Օրինի շահագրգռող հարցերի նկատմամբ, այլ այն, որ XVII դարի վերջերին Լեոպոլդ կայսրը ի վիճակի չէր նույնիսկ

<sup>1</sup> Ulstein, Weltgeschichte, Berlin, 1903, Neuzeit, II, էջ 266 և հա.:

<sup>2</sup> Fr. Dunkmeyer, Korbs Diarum itineris in Moscoviam und die Quellen die es ergänzen, Berlin, 1909, I, էջ 170:

<sup>3</sup> Հմտ. С. М. Соловьев, История России с древнейших времен, XVIII, էջ 691:

միջամտել այդ հարցերի լուծմանը: Այդ պահին Վիեննայում գտնված Պֆալցի կուրֆյուրստը ևս պիտի հասկացրած լիներ Օրիին, թի ստեղծված պայմաններում իրենից ևս շատ բան կախված չէ այլևս, և որ ինքը ի վիճակի կլինի օժանդակել Հայաստանի ազատագրմանը՝ միայն ցարի կողմից լինելիք առաջադրությունների սահմաններում:

Օրին ուշ իմացավ 1699 թվականի հունվարին Կարլովիցում կնքված հաշտության մասին<sup>1</sup>: Սակայն նրա հիշողությունից չէր կարող սրբված լինել սառն այն վերաբերմո՞ւմբը, որ ամեն անգամ ցույց էր տալիս Վիեննայի արքունիքը Հայաստանի ազատագրման խնդրին: Երկու տարի անց, նորից այցելելով կայսերական մայրաքաղաքը, Օրիի համար պիտի միանգամայն պարզվեր ավստրիական բազաբականության աննպաստ ընթացքը: Ավստրիան այդ պահին երես էր դարձնում Արևելքից Արևմուտք, ուր արդեն կուտակված էին սպանական ժառանգության համար մղվելիք պատերազմի ամպերը: Ֆրանսիայի եվրոպական հեղեմոնիան իր դեմ հուզել էր Արևմուտքի ծովակալ պետություններին՝ Անգլիային և Հոլանդիային: Իր հերթին կայսր Լեոպոլդը միջազգային իրադրությունը նպաստավոր էր դռնում բուրբոնյան աշխարհատիրության հավակնություններին վերջ տալու համար:

Տիրանալով սպանական ժառանգությանը՝ բուրբոնները սպանում էին խախտել եվրոպական «հավասարակշռությունը»: Այլևս անիմաստ էր դառնում թուրքերի դեմ գնացող պատերազմը: Ուստի խաղաղություն կնքելով թուրքերի հետ և Անգլիայի ու Հոլանդիայի հետ միասին մտնելով եվրոպական «Մեծ ալիանսի» մեջ, Ավստրիան և արևմտաեվրոպական նրա զինակիցները շտապում էին իրենց ռազմական ուժերը Թուրքիայի ճակատից շարտել Արևմուտք՝ Լուդովիկոս XIV-ի և նրա սատելիտների դեմ: Ստեղծված կացությունը հասկանչելու համար բավական է հիշատակել, որ մինչդեռ 1699 թվականի հունվարին Կարլովիցում կնքված դաշնագրության ուժով Ավստրիան տիրանում էր ամբողջ Հունգարիային, Սլավոնիային և Զիրենբուրգիային, իսկ Լեհաստանը ստանում Պոդոլիան և Կամենից բերդաքաղաքը՝ դաշնակիցների կողմից մեկուսացված Ռուսաստանը համաձայնեց Թուրքիայի հետ կնքել միայն երկամյա զինադադար:

Կարևոր հանգամանք է այս, որ պիտի աչքի առաջ ունենանք, եթե կամենում ենք բացատրել այն հեղաբեկումը, որ տեղի էր ունե-

<sup>1</sup> Տե՛ս այդ մասին ՅՅՈՅ, նույն տեղում, № 120:



նում Օրիի մեջ Էիեննայում: Հարցն այն չէ, հարկավ, որ թեքելով Օրիի միտքը դեպի Արևելք՝ ավատրիական արքունիքը նոր ուղղութիւն էր տալիս Հայաստանի սպասադրման հարցին, այլ որ ավատրիական պատասխանից ուշաբերված՝ Օրիի համար սկսում էր պարզվել նոր այն իրադրությունը, որ ակներև էր դարձնում այդ հարցին նոր ուղղություն տալու անհրաժեշտությունը: Պարզվեց նրա համար, որ Կարլովիցում հաշտութուն կնքվելուց հետո Քուրքիայի և արևմտահվտոպական պետութունների միջև ստեղծվելու էր տեական խաղաղութուն: Ասպարեզի վրա մնում էր միայն Ռուսաստանը, որ բազմաթիվ չլուծված հարցեր ուներ ինչպես Քուրքիայի, այնպես և Իրանի հետ: Ընդհանուր բաղաձայն այս նոր իրադրությունից հաշի մեկններից լիազորված դիվանագետը Հայաստանի ազատագրման հեռանկարների համար պիտի աներ նոր հետևություններ:

Հաջորդ գրվազը պիտի համարի մեզ, որ միջազգային նոր իրադրությունից բխող նոր հետևություններ անելու համար այդ ժամանակ իրոք կային օրյեկտիվ նախադրյալներ քե՛ր՝ Ռուսաստանում և քե՛ր՝ Անդրկովկասում: Նկատի ունենք Ռուսաստանի աճող ձգտումը դեպի Աև և Կասպից ծովերի եզրերը, որոնք կարևոր էին նախ և առաջ որպես սարատեղիական հենակետեր Քուրքիայի դեմ, Իրանի աճող ճգնաժամը և իրանահայ ժողովրդի տարբեր խավերի համար ստեղծված ծանր տաղնապը, որից ելնելու նրանց հույսը կարող էր լինել միայն Ռուսաստանը:

Կարո՞ղ էր հիրավի կասկած լինել այն մասին, որ հասունացող նոր իրադրության մեջ հօգս պիտի ցնդեր Օրիի պիալցյան ծրագիրը: Պարզ չէ՞ր միթե, որ նոր հանդամանքներում միանգամայն ակնբախ պիտի դառնար «անհավատների» դեմ կազմակերպվելիք եվրոպական նոր խաչակրութւյան անհնարինութւյունը: Պարզ չպիտի՞ դառնար, մասնավորապես, որ ինչպես ամբողջ XVI և XVII դարերի բնթացքում, հիմա ևս եվրոպական «ազատարարները» շահագրգռված չէին թշնամական գործողութւյուններ սկսելու Իրանի դեմ, որչափ թուրքական էքսպանսիան սաստելու համար՝ Իրանն ավելի շուտ գաշնակից, քան թշնամի կարող էր լինել նրանց: Եվ չէ՞ր նշանակում այս, թե Մոսկվայում հայ բանագնացները պիտի գնեն իրենց առաջ այլ հարցեր, քան պիալցյան տրանզիտի խնդիրը: Զպե՞տք էր արդոք դեն նետել անցյալի ավելորդ բեռը և ոտք դնել նոր ճանապարհի վրա:

Այս ու նման հարցեր էին, անշուշտ, պաշարում այն մարդու միտքը, որ հայ արևմտակա վրոպական ապարդյուն բանավարութիւններից հետո դարձնում էր իր ձիու սանձը Վիեննայից դեպի Արևելք ոչ թէ ձեռնոճայն հայրենիք վերադառնալու, այլ հայ հինավուրց ազատարագծութեան առաջ նոր ուղի հարթելու համար:

Հասունանում էր մեծ շրջադարձ Օրբի կյանքում և սկսվում նոր շրջան նաև հայ ազատագրական մտքի սլատմութեան մեջ: Գոցվում էր հին մի դար և բացվում նորը:



III

Ն Ո Ր  
Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ի Վ Ր Ա



## 1. ՀԱՅԵՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՆՍԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայերը և Ռուսաստանը: Վոլգյան մազիստրալը: Ռուս-իւրանական առևտուրը: Պայմանագիր Նու-Ջուզայի հայ առևտրական ընկերության հետ: Հայ խոջաները և Ռուսաստանը: Ստեփանոս Գաշտեցի: Հայ-ռուս ֆազանական մերձեցման նախա-նշաններ: Ռուս-իւրանական շահախնդրությունների զուգադիպումը Թուրքիայի հանդեպ: Հայերի մասնակցությունը ռուս-վրացական բանավաճարություններին: Նրանց ակնկալությունները Ռուսաստանից XV—XVII դարերում: Լուսիկենցի բա-նակցությունները: Հայօր Ջուզայեցու աղերսագիրը ռուս արհմեյթին: Ամփոփում-ներ:

*Հայ քաղաքական մտքի պատմության մեջ XVIII դարի սկզբ-րում Օրբի կատարած շրջադարձը միայն միջազգային կացության մեջ տեղի ունեցած իրադարձությունների հետևանքը չէր, այլև հայ և ռուս ժողովուրդների կյանքում և մասնավորապես հայ-ռուսական հարաբերությունների մեջ կատարվող տեղաշարժերի արդյունքը:*

*Հետագա էջերում մեր դիտողությունները մասնավորելով վեր-ջիններիս վրա՝ պիտի ջանանք անտղել և որոշադրել հայ ռուսական հարաբերությունների դարգացման այն փաստերը, որոնք XVIII դարի շեմքին դրական նախադրյալներ էին ստեղծում հայ ազատա-դրական մտքի քաղաքական այս վերադիրքավորման համար: Ընդ-ամին պիտի փորձենք մատնանշել նաև այն խոթերն ու խոռոչները, որոնք պիտի համահարթվեին հայ ազատագրական մտքի առաջ՝ արևմտասլավոնական կողմնորոշման ուղիներից հրաժարվելու և քաղաքականության նոր, ռուսական, ճանապարհներով քայլելու համար:*

\* \* \*

*Հայերին Ռուսաստան տանող կուլտուր-պատմական շափիղջի-րը շատ ավելի առաջ էին բացվել, քան քաղաքական հարաբերու-թյունների լայն այն ճանապարհը, որի վրա նրանք ուք էին դնելու XVIII դարում:*

Տակավին ուրարտյան և սկյուժա-սարմատյան ժամանակակիցներից մեզ հասած կուլտուր-պատմական նստվածքներն են բացահայտում Կովկասի և Սև ծովից հյուսիս ընկած երկրների առընչությունները: Սարաբոնի վիպուծյամբ Հյուսիսային Կովկասի նախալեռնային գոտում ապրող և իրենց տիրապետությունը մինչև Կասպից ծովի գրեթե ամբողջ արևելյան ափը տարածած աորսները ուղտերի վրա փոխադրում էին ապրանքներ, որպիսիք նրանք ստանում էին հայերից և մարերից: Մեր թվականության առաջին դարի վերջերից հայերը շարունակում են ապրանքներ փոխադրել Առաջավոր, Միջին և Հեռավոր Ասիայից դեպի Հյուսիսային Կովկաս և սևծովյան երկրները՝ աորսներին հաջորդած արևների միջոցով<sup>1</sup>: Հայտնի է, որ հյուսիսային ժողովուրդների հետ հայերն ու վրացիները ուղմա-քաղաքական հանդիպումներ էին ունենում նաև ավելի ուշ՝ հինգերորդ դարի ընթացքում: Վրաց Փարսման թագավորը պայքարում էր Բյուզանդիայի դեմ, ունենալով հոների օժանդակությունը: Վասիլանգ Գորգասարը դիմադրում էր իրանցիներին՝ հոների հետ դաշնակցած: Հայտնի է, որ վարդանանց ասպետամբության ժամանակ հայերը և աղվանցիները օժանդակություն և դաշինք էին որոնում դարձյալ հոների մոտ:

Միայն նյութական շահախնդրությունների ուժով չէ, որ Անդրկովկասի ֆեոդալները կամ սրանց միջոցով բյուզանդացիները ձեռք էին բերում հյուսիսային հարևանների վինակցությունը. նրանք այդ անում էին նաև միսիոներական պրոպագանդի միջոցով: Միջինասիական աղբյուրների համաձայն, ավետարանական ուսմունքից դատ, աղվանից եպիսկոպոս Կարդոստը և հայ եկեղեցական Մակարը VI դարում հոների մեջ տարածում էին հարավի բուսականությունն ու ծառատունկերը և իրենց շինարարական բարձր տեխնիկան ու մասնավորապես աղյուսի գործադրությունը: Հայ և աղվան միսիոներները սովորում էին հոների լեզուն և փորձում եկեղեցական գրքեր թարգմանելով հիմք դնել հոնական գրի և գրականությանը: Միսիոներական նույն դերը VII դարի երկրորդ կեսում հոների մոտ կատարում էր աղվանից Իսրայել եպիսկոպոսը<sup>3</sup>:

<sup>1</sup> Б. С к и т с к и й, Очерки по истории осетинского народа, Дзаулжикау, 1947, էջ 38:

<sup>2</sup> „Хроника Элиария Ритора“ (տե՛ս Н. П и г у л е в с к а я, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1911, էջ 166):

<sup>3</sup> Մ. Կ ա դ ա ն կ ա տ ու ա ջ ի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 270 և հտ., 280 և հտ., 298 և հտ.:

Հետազոտում հաշերը, վրացիները և աղվաճները պատերազմում էին խալիֆաթի դեմ՝ հենվելով խազիրների վրա: 825 թվականին հաշերն օգնություն էին խնդրում ոչ միայն բյուզանդական կայսրից, այլև խազիրների խաբանից և բուլղարների թագավորից<sup>1</sup>:

Քաղաքական շփումները համապատասխանում էին դարձյալ հարավի և հյուսիսի առևտրական կապերին: Հայտնի են Կամայի ափերին պտնված Սասանյան դրամների ու արծաթե սկուտեղների գանձերը: Դրանց մեջ հայտ բերված «սասանյան» կոշված արվեստի նմուշներն արտահանվում էին ոչ միայն սասանյան Ֆարսից, այլև Սասանյաններին ենթակա Հայաստանից, Վրաստանից ու Աղվանքից: Այդ հուշարձանները կապված են ոչ միայն Սասանյանների քառադարյան տիրապետության, այլև հետսասանյան այն դարերի հետ, երբ տակավին հարատևում էր «սասանյան» համարված արվեստի արագիցիան: Իրև ցայտուն օրինակ պիտի նշել Կուբաչի բրոնզը կամ Աղթամարի վիմաքանդակները, որոնք շարունակելով այդ արագիցիան, հիմնականում դիտվում են որպես տեղական վարպետության հետսասանյան ժամանակաշրջանի արդյունք<sup>2</sup>: Բալթիկ ծովից դեպի հարավ և արևելք ընկած տարածությունների վրա իշխող ուսաները Սև ծովի և Բյուզանդիայի հետ կապվելուց առաջ անտեսապես շփումներ էին ունենում Կասպից ծովափի և Արևելքի հետ<sup>3</sup>:

Դնեպրի գետաբերանից ուսաներն անցնում էին Աղովյան ծովը և Դոնի վրայով վեր բարձրանում մինչև գետի այն ծովածքը, ուսկից իրենց նավակները քարշ էին տալիս Վոլգայի մերձակա ափը կամ նավում դեպի Իթիլ և Կասպից ծով: IX դարում ապրած Իրն-խորդարդեի վկայությունը, ուսաները, որոնց ի դեպ այս հեղինակը, հակառակ նորմանիստների տեսության, համարում է սլավոնական ցեղ, նավարկում էին մինչև Կասպից ծովի ափերը և հասնում Ռեյչ, Խազիրների Իթիլ մայրաքաղաքը առևտրական խոշոր կենտրոն էր Վոլգայի գետաբերանի մոտ: Որչափ VIII—IX դարերի ընթացքում արաբներն ու բյուզանդացիները թշնամական փոխհարաբերու-

<sup>1</sup> Б. Скитский, *նույն տեղում*, էջ 34: Նույնը նաև В. Бартольд, *Арабские известия о русах* («Советское востоковедение», I, էջ 18):

<sup>2</sup> Հմտ. И. А. Орбели и К. В. Тревер, *Сасанидский металл*, М.—Л., 1935, էջ XI և հտ.:

<sup>3</sup> *նույն տեղում*, ծան. 8 և С. П. Толстов, *По следам древне-хорезмийской цивилизации*, М.—Л., 1948, էջ 250 և հտ.:

<sup>4</sup> В. Бартольд, *նույն հոդվածում* («Советское востоков. I, էջ 23):



թյունների մեջ էին Եվրոպական և հյուսիսային երկրների հետ. Արասյանների արքայատոհմյան մեջ մանող ժողովուրդների առևտուրը տարվում էր Կասպից ծովի և Վոլգայի վրայով: Կովկասից եկող ապրանքատերերի հեաքերով հյուսիս էին շարժվում Վոլգայի ափերում քրիստոնեության կրողներն ու տարածողները<sup>1</sup>:

Կիևում կատարված պեղումների ժամանակ գտնվել են որոշ քանակությամբ IX դարի արաբական դրամներ<sup>2</sup>: Կիևյան երկրի և Հայաստանի առևտրական կապերի մասին են վկայում նաև Կիևում և Դվինում հայտ բերված համատիպ ոսկե ակամեջողերը<sup>3</sup>: Պարզվում է, որ Առաջավոր Ասիան առևտրական կապեր ունեւ այդ կողմերի հետ: Արաբական աղբյուրներից հայտնի է, որ ոսււները առևտրական գործերով Կասպից ծովի վրայով հայտնվում էին նույնիսկ Բաղդադում: Իրն-խորդարդեն գրււմ է, որ ոսււները նաւ էին նըստում խաղիւրների մայրաքաղաք Իթիլում և իջնում Կասպից ծովի հարավային եզրին՝ Ջուրջանում և հաճախ՝ Ջուրջանից Բաղդադ հասցնում ուղտարարձ ապրանքներ<sup>4</sup>:

Արևելյան Եվրոպայի տերիտորիայում հայտնված արծաթագրամներ պարունակող դանձերի քանակը հասնում է 500-ի: Սրանց խոշորագույն մասը կազմում են X դարի Սամանիդյան (միջինասիական) դիրհեմները<sup>5</sup>: Պիտի կարծել, սակայն, որ անհշան քանակ չէին կազմում նաև Անդրկովկասի վրայով հյուսիս հասած արծաթագրամները:

Անդրկովկասի դրամագիտական հետազոտումը նշում է այն ուղիները, որ IX—X դարերից ի վեր և մինչև մոնղոլների ժամանակներն անցնում էին Առաջավոր Ասիայից դեպի հյուսիս: Վրաստանում, Հայաստանում կամ Առանում կտրված արաբական դրամները հյուսիսային ուղիներով հասնում էին մինչև Բալթիկ ծովի Գոտլանդ կղզին, որ մինչև Յ8 հազար հատ արաբական դրամ է գտնված, զխավորապես X և մասամբ IX և XI դարերից: XI—XII

<sup>1</sup> В. Бартольд, Кавказ, Туркестан, Волга («Известия Кавказск. историко-археол. института», IV, էջ 4):

<sup>2</sup> А. В. Арцыховский, Введение в археологию, М., 1917, էջ 178:

<sup>3</sup> Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 176:

<sup>4</sup> «История народов Узбекистана», I, էջ 229:

<sup>5</sup> В. Л. Янин, Нумизматика и проблемы товарно-денежного обращения в древней Руси («Вопросы истории», 1955, № 8, էջ 136 և հտ.):

դարերում արծաթի դրամների արտահանումը հարավից դեպի Ռուսաստան, Սկանդինավյան երկրները ու Գերմանիա ընդունել էր այնպիսի ծավալ, որ մասամբ զբաղեցրել էր հենց բացատրում են մուսուլմանական երկրներում և Անդրկովկասում այդ ժամանակ արծարծված արծաթադրամի ճգնաժամը<sup>1</sup>։ Արծաթադրամը վոլգյան ճանապարհով շվում էր հարավից հյուսիս՝ ապրանք գնելու համար։ Հետագայում խալիֆաթի աստիճանական անկման պատճառով մեծ նշանակություն է ստանում Գնեպրի վրայով Կ. Պոլսի հետ եղած առևտուրը։ Արաբների առևտուրը թուլացավ մասնավորապես այն պատճառով, որ ուսա իշխան Սվլատոսլավի արշավից հետո (965 թ.) խաղիրների առևտրական պետությունը տեղի տվեց Ղվիչաղներին, որոնք խոչընդոտ հանդիսացան վոլգյան առևտրին։ Հարավի և հյուսիսի առևտրական կապերի համար արգելք էր դառնում մանավանդ Վոլգայի ստորին հոսանքներում և Կասպիականի վրա ծավալվող ծովահենությունը։ X դարում հարավից հյուսիս ընկած հարողակցության զիծը խաչաձևվում էր ռազմական այն արշավագծի հետ, որ ռուսների առաջ ուղի էր բացում դեպի մերձվոլգյան երկրները և այդտեղից՝ դեպի Կովկաս։

Արաբ և հայ աղբյուրներից ծանոթ են 913—914 և 943 թվականների «ուղեգրերի» արշավանքները դեպի Պարտավ քաղաքը, որի տեղագրությունն ու հարստությունները նրանց ըստ երևույթին ծանոթ էին առաջուց<sup>2</sup>։ Նորերս ենթադրություն հայտնվեց, թե այդ արշավանքները ռազմաքաղաքական բնույթ են կրել և նպատակ ունեցել օգնության գալու հարավային Կովկասում կազմավորվող ֆեոդալական թագավորություններին և նրանց ազատելու խալիֆաթի ճնշումներից ու բյուզանդացիների միջամտությունից։ Փորձ եղավ անգամ Սմբատ I թագավորի սղրերգական վախճանը դիտել որպես խալիֆաթի կողմից ձեռնարկված մի հակահարված հյուսիսի արշավողների այդ օգնության համար<sup>3</sup>։ Կարծում ենք, որ հեռու անցյալը արդիականացնող հիմնադրուկ նման ենթադրությունները չեն նպաստում պատմական ուսմանտիզմի հաղթահարմանը։

<sup>1</sup> Е. А. Пахомов, Монеты Грузии, I, էջ 51 և հտ., 56 և 80, հմտ. նաև Б. Д. Греков, Киевская Русь, М., 1949, էջ 434։

<sup>2</sup> В. Бартольд, Место Прикасп. области в истории мусульманского мира, էջ 24 և հտ., 32 և հտ. 49։

<sup>3</sup> Л. Меликсет-Бек, Из истории русско-армянских отношений. Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1954, № 4, էջ 22 և հտ.։

Արաբական ազդրություններից հայտնի դարձավ, որ իրենց նավակների վրա ուսաները Առանի ուղղությամբ արշավանքներ են կազմակերպել նաև 1030 և 1032 թվականներին<sup>1</sup>: Ծովահենության նշաններ կրող հյուսիսային նման արշավանքներ կրկնվում են նաև ավելի ուշ. 1175 (կամ 1173) թվականին շիրվանշահ Ահաթյանը Բաքվի մոտերքում բաց ծովի վրա պարտության մատնեց 70 նավերով արշավող հյուսիսային ծովահեններին: Պետք է կարծել, որ խաղաղ տարիներին վոլգյան քաղաքների և վենետիկցիների համար նույն Ահաթյանի նավերը փոխադրում էին Շիրվանի մետաքսը: Ծովահենությունն իսկ կառվածներ երևի մետաքսի արտահանության հետ:

Սակայն հյուսիսի արշավողները Կովկաս շեն գալիս միաժամ որպես ծովահեններ: Խաղիքների դեմ ձեռնարկած իր հարձակման ժամանակ X դարում Կիևի մեծ իշխան Սվյատոսլավը շարժվել էր նաև դեպի Հյուսիսային Կովկաս՝ հաղթություն տանելով «կասոգների» (չերքեզների) և «չասերի» (օսերի) վրա: Այդ արշավի մարշրուտը հիմք է տալիս կարծելու, թե Դարբյալի ճանապարհը Սվյատոսլավին ծանոթ էր ուս առևտրականների նախընթաց երթևեկների միջոցով<sup>2</sup>: Ավելի ուշ՝ Բագրատ թագավորի (1027—1072) բաճակում վրաց ազդրությունը հիշատակում են «վուանդ», իսկ Դավիթ Շինարարի բանակում՝ «փուանդ» վարձկաններ. ինչպես կռահել է Ս. Երեմյանը, այստեղ «փուանդ» անունը ստացվել է «վուանդ» անվան եղծումից, որի տակ հասկացվելու են վարյագ կոչված ուս ղինվորները<sup>3</sup>:

Տասներորդ դարի վկայություններից գիտենք, որ առևտրական շփումների հանդուս էր այդ պահին Վոլգայի ստորին հոսանքում գտնված Իթիլ քաղաքը (որի արևմտյան մասում ապրում էին գլխավորապես օտարերկրյա առևտրականներ) և ավելի հյուսիս տեղադրված բուլղարների կենտրոն Սուվար քաղաքը: Բուլղարների հետ կապված էին ուս առևտրականները, որոնք նրանց երկրում վաճառքի էին հանում ստրուկներ, մեղրամոմ և մանավանդ թանկար-

<sup>1</sup> Տե՛ս այս մասին V. Minorsky, Studies in Caucasian History. London, 1953, էջ 17, 76 և հտ.:

<sup>2</sup> В. Бартольд նույն տեղում, էջ 27 և հտ. և 113:

<sup>3</sup> Ս. Երեմյանի առաջարկած շտկման անհրաժեշտությունը հիմնավորվում է այն փաստով, որ նույն այդ իմաստով Ար. Լաստիվերոցու ձեռագիր տարրընթերցվածքների մեջ ևս հանդիպում է «վուանդ» ձևը, որը, իր հերթին, գալիս է հունական ազդրությունների «varangos» վարյագ անունից: Տե՛ս С. Т. Еремян. Юрий Боголюбский в армянских и грузинских источниках (Երևանի Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», XXIII, էջ 390) և Կ. Յուզբաշյանի «Ա. Լաստիվերոցու «Պատմության» մեկ տարրընթերցվածքի մասին» հոդվածը, «Բանբեր Մատենադարանի», № 4, էջ 77 և հտ.:

ժեք մորթեղեններ<sup>1</sup>: Այտեղից ուսակաճ վուշը և մոմեղենները հասնում էին Արեւելք, ուր դրանք շատ սիրված էին<sup>2</sup>: Իրենց ձեռքն առնելով Վոլգա-կասպիական առևտուրը, բուլղարները դարձրին իրենց երկիրը Չինաստանից, Անդրկովկասից, Բյուզանդիայից և Արևմուտքից եկած առևտրականների ժամադրավայր:

Բուլղար թագավորի ապարանքը նկարագրող X դարի արաբ ուղեգիր Իբն-Ֆադլանն ասում է, թե արքայական վրանի ընդարձակ հատակը մեծ մասամբ ծածկված էր հայկական գորգերով<sup>3</sup>: Հայ առևտրականները ոչ միայն բուլղար շահաստանների այցելուների թվում էին, այլև ունեին բուլղարների երկրում ծաղկած գաղութներ: Այդ մասին են վկայում նաև հայերեն արձանագրված այն գերեզմանաքարերը, որ X դարից ի վեր ցաքուցրիվ ընկած են Բուլղար և Կազան քաղաքների շրջանում<sup>4</sup>:

Միայն առևտուրը չէ, որ հասցրել էր հայերին այդ վայրերը: Ինչպես դիտել են դեռ XVI դարի ուղեգրողները, հայկական այդ տասպանագիրները պիտի որ պատկանած լինեն մասամբ հայ զորականներին. գերեզմանաքարերից մեկի վրա փորված է ձիու պատկեր. հեծյալն աղևզ ունի ձեռին, իսկ մեջքին՝ նետակալ գոտի. մի այլ գերեզմանաքարի վրա նկատելի է վահանի բեկոր<sup>5</sup>:

XI դարում սելջուկներից խուսափած հայ գաղթականները մասսայաբար բնակություն էին հաստատում Վոլգայի ափերին՝ Ախսայում (Սարայ), Սսորախանում և Կազանի կողմերում: Կարևորություն են ստանում մանավանդ Ղրիմի, Ուկրաինայի և Լեհաստանի նույն ժամանակներում հիմնված հայ գաղութները:

Հայ ռազմական ուժերի և առևտրական գաղութների հանդիպում ենք Ղրիմում տակավին X—XIII դարերում: Առաջին գաղթականները պիտի որ եկած լինեն Փոքր-Ասիայի «սարակինոսներից» նեղված<sup>6</sup>: X դարում ուսները բռնում էին Սև ծովի հյուսիսային

<sup>1</sup> В. Бартольд, Место Прикасп. области, էջ 35 և հտ.:

<sup>2</sup> В. А. Гордлевский, Государство сельджукидов, էջ 115:

<sup>3</sup> Ибн-Фадлан, Путешествие на Волгу, перев. под ред. И. А. Краковского, М.—Л., էջ 73:

<sup>4</sup> А. П. Смирнов, Армянская колония города Болгара (Материалы и исследования по археологии СССР, № 61, էջ 330 և հտ.) և Б. Миллер, Об армянских надписях на Болгарах и Казани (Изв. Росс. Академии ист. матер. культуры, Ленинград, 1925, էջ 66 և հտ.):

<sup>5</sup> Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Ա, էջ 437:

<sup>6</sup> Տե՛ս Ք. Բուշնեբյան, Պատմ. գաղթ. Խրիմու հայոց, Վենետիկ, 1895, էջ 96 և հտ.:

ափի բայրը գետաբերանները և Քամանի թերակղզում կազմակերպեցին Տմուտարահանի տիրույթը<sup>1</sup>: Կան տվյալներ, որ XIII դարում Սուզահի և Սիճուպի վրայով ռուսական մորթիներն ու վուշք վաճառքի էին հանվում անգամ Սիրիայում և Կիլիկիայում: Իր հերթին կիլիկյան արտադրանքը նույն ճանապարհով հասնում էր Ղրիմ<sup>2</sup>:

Հայկական հնագույն արձանագրությունը Ղրիմում (Կաֆայում) ունի 1027 թվականը<sup>3</sup>: Կրեում հայերի առկայությունը վկայող փաստեր կան XI դարից<sup>4</sup>: Ղրիմի, Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի և Հեհաստանի հետ հայերի առևտրական և կուլտուրական շփումները մեծ դարկ ստացան մանավանդ Կիլիկիայի հայկական թագավորության և Վրաստանի վերելքի շրջանում (XII—XIII դարերում), իսկ ավելի ուշ՝ Տրապիզոնի կայսրության գոյություն ընթացքում (XIII—XV դարերում)<sup>5</sup>՝ սեծովյան երթևեկությունների շնորհիվ: Տրապիզոնի վրայով այդ երկրների հայ գաղութները առևտրական և կուլտուրական շփումների մեջ էին գերազանցորեն Արևմտյան Հայաստանի հետ: Ավելի ուշ՝ XVI դարի վերջերին և XVII սկզբներին՝ չալալիների ապստամբությունների հետևանքով Արևմտյան Հայաստանից էլ դարձյալ, որ հայերի մասսայական նոր գաղթ եղավ դեպի Ղրիմ, Ուկրաինա և Հեհաստան: Հյուսիսային այս երկրների հայ առևտրականները, ինչպես պիտի տեսնենք, սերտ կապ էին պահպանում Իրանի և մանավանդ Թուրքիայի — Տրապիզոնի, Թոխատի, էրզրումի և Պոլսի հետ, օդակ կազմելով աշևեյյան-եվրոպական երկրների և ասիական շուկաների միջև:

Հայ երթևեկները հանդիսանում էին անտեսական և կուլտուրական շփումների կենդանի միջնորդներ և ասիական ու եվրոպական երկրները հանդուցավորող կարևոր գործոններ: Իբրև հայ-ռուսական կուլտուրական աճող կապերի նստվածք մատնանշում են հայ ճարտարապետական ոճի արդեցությունը Ռոստով-Սուզդալյան հուշարձանների վրա, եկեղեցական խորանների կառուցումները Գր. Լուսավորչի անունով, Լուսավորչի վարքի թարգմանությունը ռուսերեն և Բորիսի ու Գլեբի վարքի թարգմանությունը հայերեն:

<sup>1</sup> Տե՛ս Խ. Ա. Փորքշեյանի հոդվածը «Պատմ. բան. հանդես», 1959, № 2—3, էջ 160:

<sup>2</sup> Г. Микаелян, նույն տեղում, էջ 197 և 368, В. А. Гордлевский, նույն տեղում, էջ 115:

<sup>3</sup> Ք. Վ. Քոչևեբյան, նույն տեղում, էջ 103:

<sup>4</sup> «Великая дружба». (Сборник), Ереван, 1954, Լ. Խաչիկյանի հոդվածը, էջ 195 և հո.:

Թափանցելով ուստական կենտրոնները, արդեն իսկ XI դարի սկզբներին հայերն օգտագործվում էին որպես սաղմական ուժ լեհերի, զվաղների և երբեմն նույնիսկ ցեղակից հակառակորդների դեմ<sup>1</sup>: Կա տեղեկանք այն մասին, որ տակավին 1009 թվականին հայ զաղթականները շոշակցում էին Կիևի մեծ իշխանին (իմա՝ Վլադիմիրին) լեհ թագավոր Բոլեսլավ Խրոխաի դեմ մղած պատերազմում<sup>2</sup>:

Մատթևոս Ուստայեցու մոտ նկարագրված է խոշոր այն պարտությունը, որ 1065 թվականին բյուզանդական զորքերը կրեցին «ուղներից» (իմա՝ օղուղներից կամ կոմաններից՝ զվաղներից) Տոնավիս (= Դոն) մեծ դեպի ավերին: Ինչպես տեղեկացնում է պատմիչը՝ այդ պատերազմի ժամանակ բյուզանդական բանակի մեջ մասնակցում էին նաև Հայաստանում հավաքագրված զորամասեր<sup>3</sup>:

Հայերի նոր հոսանք սկսվեց դեպի հյուսիս մոնղոլական արշավանքների սկզբնաշրջանում: Մեծ քանակությամբ հայ սաղմագրիներ քշվեցին հյուսիս, մանավանդ Բերկեի արշավանքից հնտո (1262 թ.): Մերձվոլգյան քաղաքներում և Ղրիմում այդ պահից հանդիպում ենք հայկական ավելի մեծ դադուքներին: Արձանագրություններով հավաստվում է, որ Սարայ-Բերկեյում, Ոսկե Հորդայի արհեստագործություն խոշոր կենտրոնում, աշխատում էին հայ արհեստավորներ<sup>4</sup>: XIV դարից կան նույնիսկ Սարայում գրված հայերեն գրչագրեր: Ա. Թալև, 1319 թվականին աստանդական մի քահանա ընդօրինակելով նոր կտակարանը, գանգատվում էր՝ «բնակոն կայանք շունէի, ապա փ տեղւոջ է ի տեղի կու դեգերէ/ի/ և այլ զի սիրոս վշաաղեայ էր: Եւ այս աշխարհիս ձմեռն խիստ է ու հաւայն

<sup>1</sup> E. K., Колонизация армян в Юго-западной России, Каменен-Подоольск, 1903, էջ 1 և հա., Բ. Բուշնեբյան, նույն տեղում, էջ 187 և հա., Մ. Բժշկյան, նույն տեղում, էջ 83:

<sup>2</sup> Սառգման կարոտ է այն տվյալը, թե 1062 թվականին հայերը մասնակցել են զվաղների դեմ Կիևի մղած պատերազմին և որ իրր այդ տարում նրանք թուղթ են ստացել մեծ իշխան Ֆեոդոր Դմիտրիևիչից: Այդ անունով մեծ իշխան չկար կրկուս: Տե՛ս A. И. Липниценко, Черты из истории сословий в Юго-западной Галиции (Руси) XIV—XV вв. (տե՛ս «Ученые записки Имп. Москов. Университета», вып. XX, Москва, 1894, էջ 221, ծան. 2):

<sup>3</sup> Մ. Ուստայեցի, նույն տեղում, էջ 151 և հա.: Ըստ բյուզանդական աղբյուրների պատերազմը պիտի տեղի ունեցած լինի ոչ թե Դոնի, այլ Դանուբի ավազանում:

<sup>4</sup> Б. Д. Греков и А. Ю. Якубовский, Золотая Орда и ее падение. էջ 17:

չէ գրազրու լայնիւ: Բայց գրեցաւ սա ի մայրաքաղաքիս Սարայ, որ է ի հիւսիսոյ կողմ մերձ առ ծովուն Կասպիականի, ընդ որում շուրջ պատէ զՊոլսաւ մեծ և հզօր գետն էթրի»<sup>1</sup>: Ձեռագիրը գրված է «ընդ հովանեաւ» Աստվածածնի ի խնորո «արթուն հովիւ» տէր Պողոս արքեպիսկոպոսի, ուսկից հավանական է, որ Սարայ-Բերկեսում ոչ միայն հայ եկեղեցի կար, այլև հայ վիճակավոր: Հայտնի են ահագին թվով ոչ միայն գրչագրերի ընդօրինակումներ, այլ ուրույն գրական գործեր ու հիշատակարաններ, գրված մանավանդ Ղրիմում, զեպի ուր, ըստ ավանդութեան, գաղթեցին Սարայի հայերը 1330 թվականին՝ զԼեթր ձեռին խուլս տալով մոնղոլների ճնշումներից և սպառնալով Ղրիմի իտալացի գաղութարարների հովանավորութեան:

Այս ժամանակ է, որ Ղարասուկից մինչև Սուրխաթ և Կաֆա ծածկվում են հայկական մատուռներով ու եկեղեցիներով. «շինեցաք տոճք հարիւր հազար և զեկեղեցիս հազար. և ի ահէ հոնականաց (= թաթարաց) պարսպեցին քաղաքն Ֆեօզօսիա (= Կաֆա)», — վկայում է Ղրիմում գրված Հայամավուրբի հայտնի հիշատակարանը, անշուշտ ոչ առանց էպիկական շափազանցման<sup>2</sup>: Կաֆայում գրված մի այլ հիշատակարանում 1365 թվականին Կարապետ գրիչը պատմում է, թե «երևեցան յայսմ ամի Իսմայէլեան ազգէն նեռն ու սպականիչն... Չանիբեկ որ և զամենայն աշխարհ, որ մերձակա էր ահիւ և դողովեամբ պահէր զցայդ և զցերեկ, որ և աստուածային նախախնամութեամբն հոռմայական և արիական ազգէն, ըստ հրամանի տեառն ներսէսի: Յայսմ ամի հրամանակատար եկեալ ի քաղաք Գանձաւլաւ ըստ հրամանին հոռմայեցոց, ըստ աստուածային աջողութեանցն զՍուղդա (= Սուրխաթ) քաղաքն առեալ, և զամենայն ինչ, որ ի նմա գտեալ ձերբակալեալ, և զինչ իսմայէլեան և երրայեցիք, որ են թշնամի խաչին Քրիստոսի և քրիստոնէից, զամենեսեան սպառիսպուս կոտորեալ և զինչս դաւաճանեալ»<sup>3</sup>: Պիտի կարծել, որ Կաֆա տաճող ճանապարհը Սարայի հայերին ծանոթ էր դեռ մինչ այդ: Առևտրական նշանավոր մագիստրալ էր այդ, որ անցնում էր Տանայից (Ալովից) Աստրախան և աչդտեղից՝ Բավրիզ կամ Սարայ-Ուրգենչ: Մյուս կողմից հայտնի է, որ XIII դարի կեսերից Ղրիմում հաստատված իտալացի առևտրա-

<sup>1</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 155 և հտ.:

<sup>2</sup> Հմմտ. «Արարատ», 1888, էջ 88 և Բ ու շ ն եր յ ա ն, նույն տեղում, էջ 103 և 115:

<sup>3</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 408 և հտ.:

կանները ապրանքափոխանակություն էին կատարում Սև և Միջերկրական ծովերի եզրերին գտնված նավահանգիստներում: XIV—XV դարերում Ղրիմի հայ առևտրականները ևս սերտ կապ ունեին միջազգային ապրանքաշրջանառության ցամաքային և ծովային այս մագիստրալների հետ:

Առևտրականներից ավելի մեծ թիվ էին կազմում հարավից հյուսիս փոխադրված արհեստավորները: 1347 թվականին Սուրխաթում գրիչ Նատերը հիշատակում է բազմաթիվ հայ արհեստավորների անուններ: Թազազի և գինեծափի կողքին հիշված են՝ կոշկակար, ճոն, ջուլհակ, ոսկերիչ, ներկարար, դարբին, դերձակ, հյուան՝ Նատերը գրչարվեստի շնորհալի վարպետ էր. նույն արհեստն ունեցող որդիների հետ նա Սև ծովի վրայով Սուրխաթ էր գաղթել Բաբերդից: Նատերի և նրա որդիների գրչության դպրոցի հռչակն ու տրադիցիան այնքան հեռամեծ եղավ, որ դարեր անցնելուց հետո իսկ, 1718 թվականին Ղրիմի Դոսպի (Թոփտի — Ա. Ն.) գյուղում գրված մի հիշատակարանում նշվում էր. «Ի յերկիրս Ղրիմու՞ որ է բնակարան հինն նատերաց և իմաստնացեալ գրչաց»<sup>2</sup>: Գրչի անունն անցել էր իր բանեցրած արհեստին:

Ղրիմում հայ գաղթական մասսաները անմիջական շփում ունեին ուսուների և ուկրաինացիների հետ: Կաֆայում և Սուրխաթում ռուս բնակչություն կար դեռ մոնղոլական արշավանքներից առաջ: Բացի այդ, ռուսներն առևտրական երթևեկ ունեին Ղրիմում ինչպես մոնղոլների ժամանակ, այնպես և հետագայում՝ XIII—XV դարերում<sup>3</sup>: Ռուսների և ուկրաինացիների պես հայերը ևս բազմադարյան բախման մեջ էին թերակղզում տիրապետած թաթարների և օսմանցիների հետ:

Գրավելով Ղրիմը կանկ-Քամուրը հրաման էր տվել սրի ածել «օտարազավաններին»՝ ուսուներին, հայերին, հույներին, հրեաներին, ջենովացիներին, որոնք կենտրոնացած էին մանավանդ քաղաքներում<sup>4</sup>:

<sup>1</sup> Հայերեն ձևազրկերի հիշատակարաններ, Ժ. Գ. դար, էջ 359 և հու.:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 3343, էջ 338ա:

<sup>3</sup> М. К. Старокадомская, Русское торговое население Генуезской Каффы, տե՛ս «История и археология средневекового Крыма» ժողովածուն, М., 1958, էջ 149 և հու.: Հմմտ. նաև В. Г. Тизенгаузен, նույն տեղում, էջ 25, 27 և 63:

<sup>4</sup> Б. Д. Греков и А. Ю. Якубовский, նույն տեղում, էջ 375 և 388:



Հարավից հյուսիս յաղավիճած հայերից պիտի զատորոշել նրանց, որոնք դուրս էին քշվում իրենց բնակավայրերից իբրև ռազմազերիններ կամ զինապարտության ու պարենահարկման կարգով սգտագործվում որպես մոնղոլ բանակին սպասարկող մարտիկներ կամ արհեստավորներ: Հայտնի է, որ Կուլիկովյան ճակատամարտի ժամանակ Մամայի բանակում կային նույնիսկ հայեր<sup>1</sup>: Անշուշտ սրանք պարտազիր կերպով հավաքագրված էին Ոսկե Հորդայի հայ հպատակներից. այսպես, Ղրիմում 1377 թվականին նշվում են հայեր, ենթարկված «աշխարհակալութեանն Մամայ պարոնաց պարոնիան»<sup>2</sup>: Հայ զինվորներին հանդիպում ենք թաթարական զորքերի մեջ նաև Նիժնիում և Կլովում<sup>3</sup>: Թաթարների տիրապետության վերջում, Իվան Ահեղի պաշարած Կազանում, գտնվում էին հինգ հազարի շափ բուխարացիներ, շամախեցիներ և հայեր: Պարզված է, որ վերջիններս Կազան էին գաղթել ավերված Բուլղարից և կազմում էին իրենց նոր բնակավայրում առանձին գաղութ<sup>4</sup>: Հայերի՞ն՝ որպես վարժ թնդած թաձիգների՝ թաթարները շղթայում էին թնդանոթներին և մերկ սրերով նրանց զլխավերևը կանգնած՝ հարկազրում էին կրակ բացել ուսաների վրա<sup>5</sup>:

Մեծ թիվ էին կազմում հայերը նաև Ուկրաինայում: 1280 թվականին հայ զինվորականները մասնակցում էին Գալիցիայի իշխանի մղած կռիվներին: Կես դար անց, 1331 թվականին նրանք գեներալ ձևին թաթարներին քշում են Կամենեցից: Հետզհետե զինվորական զենքերը առևտրական մատչանների փոխելով՝ նրանք միջամտում են ոչ միայն Կամենեցի, այլև ամբողջ Պոդոլիայի տնտեսական կյանքին: Նրանց գործունեությունը ընդառաջում են Գալիցիայի իշխաններից ստացած արտոնագրերը: Կլով, Լուցկ և Կամենեց-Պոդոլսկ քաղաքները իրենց հարստությամբ ու նշանակությամբ մասամբ պարտական են Արևմուտքի և Արևելքի ցամաքային ուղիների միջև առևտրական միջնորդների դեր կատարած հայ վաճառականներին: Հետագայում, Ղրիմի իտալական գաղութների անկումից հետո նրանք նույն զերը կատարում էին նաև Սև ծովի նավագնացության միջոցով<sup>6</sup>:

<sup>1</sup> Летопись Авраамки (П.С.Р.Л., XVI).

<sup>2</sup> Հայերեն ձևագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 524:

<sup>3</sup> Н. М. Карамзин, Ист. госуд. Росс., III, гл. 9, V, гл. 1.

<sup>4</sup> Б. Миллер, *Нолын տեղում*, էջ 76 և հու.:

<sup>5</sup> Казанский летописец, П.С.Р.Л., XIX, էջ 130:

<sup>6</sup> И. А. Линниченко, *Нолын տեղում*, էջ 221:

Հայերի կյանքը Ուկրաինայում շէր սահմանափակվում տնտեսական գործունեությունը: Գործոն մասնակցություն ունեին նրանք նաև երկրի քաղաքական կյանքում: Այսպես, 1374 թվականին նրանք Կամենեց-Պոդոլսկում ուկրաինացիների հետ համատեղ գիմադրություն էին ցույց տալիս այսպես կոչված մագդեբուրգյան քաղաքային սաաաուտի ներմուծմանը: Մագդեբուրգյան սաաաուտի մուտք գործելուց հետո իսկ հայերը և ուկրաինացիները համառորեն շարունակում էին օգտվել քաղաքային ինքնավարության իրենց ազդային արտոնությունից: XV դարում նրանք կարողացան նույնիսկ ձևական վավերականություն հաղորդել փաստապես իշխող այս իրադրությունը: 1496 թվականին Կամենեցի հայերը Կալիմիր III լեհ թագավորից արտոնություն ստացան ընտրելու հայազգի վոյսեր, որոնք ունենալու էին ոչ միայն վարչական, այլև դատաստանական գործառնություններ՝ հիմնված «հայկական իրավունքի» վրա<sup>1</sup>:

XIII—XV դարում հայ առևտրականները մեծ կշիռ էին ստացել նաև Ղրիմում: Հիմնվելով իտալական նոր աղբյուրների վրա, սովետական հեաադոտողները հանգում են այն եզրակացության, որ եթե XIII—XV դարերում այդ թերակղզում քաղաքականապես գերիշխող ազդեցություն ունեին ջենովացիները, տնտեսական առաջնություն ունեին հայերը: Կաֆայի ջենովական հյուպատոսին աւընթեր գործող խորհրդի 1455 թվականի մի արձանագրության մեջ նշված է, որ Ղրիմը «մեծ մասով բնակեցված է հայերով, որոնք հանդիսանում են մեր (իմա՝ ջենովացիների) հավատարիմ վաճառականները»<sup>2</sup>:

XV դարում նոր ուղղություն է ստանում Ղրիմի բնակչության պատմությունը: Եթե XIV դարից ի վեր Կաֆայի և Ղրիմի հայ բնակչությունը պատվար էր հանդիսանում թուրքերի դեմ պայքարող ջենովացիների տիրապետության համար, XV դարի վերջերից հայերը հարկազրկված եղան հպատակվել թուրքերին: Երբ 1475 թվականին ջենովացիները լքեցին Կաֆան՝ քաղաքի հայ մեծատուններն ու ազնուները ստիպված եղան որոշ համաձայնագրով քաղաքը հանձնել թուրքերին<sup>3</sup>:

<sup>1</sup> В. Д. О тамановский, Развитие городского строя на Украине в XIV—XVIII вв. и Магдебургское право («Вопросы истории», 1958, № 3, էջ 125):

<sup>2</sup> Е. С. Зевакин и Н. А. Пивченко, Очерки по истории генуезских колоний на Западном Кавказе в XIII—XV вв. («Исторические записки», 1938, № 3, էջ 127):

<sup>3</sup> Մ. Բ. Չ կ յ ա ն, ն ու յ ն տ եղ ու մ, էջ 83 և հ.ա.:

Հետազայում Ղրիմի հայերը առևտրական կապեր էին պահպանում Կ. Պոլսի և փոքրասիական նահանգների հայ ամիրաների հետ: Կաֆայում գրված մի տաղում ասված է.

Նաև ի ծովուն մէջն, խոջայ,  
Պազրկաններն շատ կուգայ,  
Հայ ու տաճիկ ամիրայլ:

Արևմտահայերի կապը Ղրիմի և Ղրիմի վրայով Ուկրաինայի և Ռուսաստանի հետ շարունակվում էր նաև հետագա դարերում: Այսպես՝ Ստեփանոս Թոխատեցին ունի 1619 թվականին գրված շափածո մի ողբերգություն, ուր պատկերում էր Երզնկայի խոջա Պալիի որդի Ախիջանի մահը, որ տեղի էր ունեցել Սև ծովում, երբ թանկագին ապրանքներ էր փոխադրում նավով «Ուռումներից» դեպի Կաֆա<sup>2</sup>:

Առևտրական այս կապերի ամրացմանը մեծապես նպաստավոր եղավ այն հանդամանքը, որ XIV—XVI դարերի ընթացքում Ղրիմի հայ գաղթավայրում խոշոր աղղեցություն էր նվաճել թաթարական լեզուն և կուլտուրան: XVI—XVII դարերում Սև և Ազովյան ծովերի վրա թուրք դրոշի տակ նավարկում էին ոչ անբախ թուրք առևտրականները, որքան հուլները, հայերը, վրացիները և Ղրիմի թաթարները<sup>3</sup>:

Կ. Պոլսի անկումից հետո ընկնում էր Միջերկրական ծովի և Թուրքիայի ցամաքային ճանապարհների բացառիկ նշանակությունը: Սկիզբ է առնում ու աճում օվկիանոսային հաղորդակցությունն ու առևտուրը: Արևելքի հետ կապվելու համար նշանակություն են ձեռք բերում Բալթիկ և Սպիտակ ծովերը:

Հայերի մասսայական գաղթը դեպի Մոլդավիա և Հեհաստան պիտի կատարված լինի դարձյալ թաթարների օրոք: Հեհաստանի և Մոլդավիայի հայերի մեջ պահված «ինչ կի վաղես, թաթրները չին եկի» ասացվածքը պատմաբան Ս. Պալասանյանը ապացույց էր համարում, որ այդ կողմերում հաստատված հայերը անեցին էր էին, որոնք թաթարներից խուսափած, օտար երկրների տակ պաշտամունք էին դարձրել այն հայացքը, թե «հիմարները հայրենիք են ուզում,

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7709, էջ 167ա:

<sup>2</sup> Բ. Ս ա ռ գ ի ս ե ա ն, Յուդայի հայերեն ձեռ. վեներիկի, էջ 913, 953 և հտ.:

<sup>3</sup> Н. А. Смирнов, Россия и Турция, I, էջ 9:

իմաստունները՝ հանդիսատ»<sup>1</sup>: Պիտի խորհել, թե այդ հայացքը գա-  
լիս էր ոչ թե իր հոգին ու հայրենիքին կապված հայ աշխատավոր  
ժողովրդից, այլ անգործ ու բախտ բրտացող հայ այն «գործատե-  
րերից», որոնց ղեկավարում էր ուր հաց, անդ կաց շահաբեր իմաս-  
տավյունը:

Մոնղոլական արշավանքները մի պահ խցել էին Վոյգայի գե-  
տաբերանը: Առևտրական հարաբերությունների արգելք էին նաև  
Ռսկե Հորդայի և էլխանների զինաբախտումները և մանավանդ՝ Բեր-  
կեի և Հուլազուի պատերազմները: Այնուամենայնիվ մոնղոլական  
արշավանքներն ու ներքին կոռիվները քնդերկար շարգելափակեցին  
Արևելքի և Արևմուտքի շփման այս ուղին: Զուչյանների և Հուլավ-  
յանների պատերազմներն իսկ ակոխ ունեին ոչ միայն Մուղանի  
արտավայրերի, այլև Ազրբեջանի միջով անցնող առևտրական մեծ  
ճանապարհի համար: «Առանի մարզը, — գրում էր իրանական պատ-  
միչ Վասսաֆը XIII դարի վերջերի մասին, — ալեկոծվում էր կառ-  
քերի, ստրուկների, ձիերի և ոչխարների շատությունից: Այդ երկըր-  
ների ապրանքներն ու հազվագյուտ իրերը, այգրան տարի պաղար  
առնելուց հետո, քնպարձակ շրջանառության մեջ էին մտնում նորից»<sup>2</sup>:

Վենետիկյան և ջենովյան վաճառականները Ղրիմից անցնում  
էին Վոյգայի և Կամայի գետավայրանները միացնող շրջանը, մորթի-  
ներ և ստրուկներ զնելու համար, կամ ուղևորվում Միջին Ասիա մե-  
տաքս և բամբակե դործվածքներ, ղեներք, համեմներ, ակնեղեն և  
այլ ապրանքներ ձևւք բերելու նպատակով: Ապրանքներն արտա-  
հանվում էին հարավային Ռուսաստանի շուկաները նաև Բուխա-  
րայի, Հայաստանի կամ Իրանի վաճառականների ձևւքով: XII—XIV  
դարերում շինական կերպասներն ու խեցեղենները սիրված էին ոչ  
միայն Առաջավոր Ասիայում և Անդրկովկասում: Այս երկրներով  
այդ ապրանքներն արտահանվում էին նաև գեպի Արևմուտք և Ռու-  
սաստան<sup>3</sup>: XIII դարի կեսերին հարավային Ռուսաստանից Արևելք  
ուղևորվեցին Մարկո Պոլո, Պլանո Կարպինի և Ռուբրոուկ ճանապար-  
հորդները: Միջին Ասիայից գեպի Չինաստան և վոլդյան շըր-  
ջանից գեպի Խորեզմ, Բուխարա և Իրան էին ուղևորվում ապ-  
րանքաբարձ կարավաններ: Իր ուղևորության մեջ Մարկո Պոլոն

<sup>1</sup> Ստ. Պալասանյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆ-  
լիզ, 1863, էջ 211 և հտ.:

<sup>2</sup> Тизенгаузен, *Належи толеում*, II, էջ 82:

<sup>3</sup> «Памятники эпохи Руставели» Ленинград, 1938, էջ 188 և հտ.:

նշում է, որ Կասպից ծովի վրայով ջենովացիները «նորերս» սկսել են մեռաբա արտահանել Գիլանից: Լանկ-Քամուրի ձեռքով ավերվելուց տուաշ, Աստրախանի վրայով արևելյան համեմներն ու մեռաբաբ հասցվում էին Տանա (= Աղով) և այդտեղից վենետիկյան գաղերներով փոխադրվում Իտալիա<sup>1</sup>:

Հայերի հեռաքերը երևում են Բալթիկ-Լեվանոյան ճանապարհի արևմտյան հեռաղծի՝ Բալթյան ծովափի վրա՝ տակավին XIII դարում<sup>2</sup>: XIV դարում նրանց հանդիպում ենք Եսվրորդում<sup>3</sup>: Հայ գաղթականները դանում ենք այս ժամանակ նաև Վոլգայից դեպի Արևելք ընկած ուղիների վրա. այդ մասին է վկայում, օրինակ, Պիշպեկում (Ֆրունզե) հայտնված հայ մի գերեզմանաքար 1323 թվականի արձանագրությամբ<sup>4</sup>:

Լանկ-Քամուրի արշավանքների պատճառով Աստրախանը դարձյալ մի պահ կորցրեց հանգուցավորողի դերը: 1400 թվականի մի հիշատակարանում արձանագրվում է, թե «Ալանաց դուռն... փակեալ էր վաղեմի»<sup>5</sup>: Իտալացի ուղեգիրները՝ Բարբարո (1436) և Կոնտարինի (1476), վկայում էին, որ Լանկ-Քամուրի ավերումներից հետո վոլգյան քաղաքները երկար ժամանակ չէին կարողանում ստբի կանգնել: Սակայն հետագայում նորից բարձրացավ նրանց նշանակությունը: XV դարում նույն Կոնտարինին նշում է Աստրախանը արպես վենետիկի և Արևելքի առևտրական հանգուց<sup>6</sup>: Իտալական ուրիշ մի վկայությունից, գրված 1514 թվականին, նույնպես հայտնվում է, որ Աստրախանը Շամախու և Բաքվի վրայով կապված է արևելյան շուկաների հետ:

Թուրք-իրանական պատերազմների ժամանակ Իրան հասնելու համար եվրոպական դեսպաններն ու առևտրականները նախընտրում էին Տանա-Աստրախանի ճանապարհը: Զենովացիները տակավին XV դարում էին նավեր կառուցում շիրվանշահի համար<sup>7</sup>:

<sup>1</sup> «Библиотека иностранных писателей о России», СПб, 1836, I, էջ 56:

<sup>2</sup> Heister, Geschichtliches über Bernstein, München, 185<sup>2</sup>, էջ 146:

<sup>3</sup> Н. М. Карамзин, *нույն տեղում*, V, գլ. 6:

<sup>4</sup> Н. Я. Марр, Надгробный камень из Семиречья, ЗВОИРАО, VIII, էջ 334 և հտ.:

<sup>5</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 630:

<sup>6</sup> «Библиотека иностр. писателей о России» I, էջ 90:

<sup>7</sup> «История Азербайджана», Баку, 1941, էջ 129: Հմտ. նաև Фехнер, Торговля русского государства со странами Востока, М., 1956, էջ 17 և հտ., 19 և հտ.:

Գրավելով Աստրախանը Մոսկովյան պետությունը Կովկասի և Իրանի վաճառականների առաջ բացեց իր լայն զոնները: XVI դարում իրանական առևտուրը կենտրոնացած էր Մոսկովայի Իլլինկա կոչված թաղում, ուր գտնվում էր իրանցիների քարվանսարան. ուսական ազդեցությունում այդ քարվանսարան նշվում է նաև որպես հայոց քարվանսարա («Армянский двор»): Առևտրա-արդյունաբերական այդ թաղամասում հայ բնակչությունը կար արդեն իսկ XV դարի սկզբներին<sup>2</sup>: Հայ առևտրականները Մոսկվա էին թափանցել և բնակություն հաստատել դեռ ավելի առաջ: Կարամզինի վկայությամբ XIV դարում Մոսկովյան հաստատված հայ առևտրականները վաճառում էին մարգարիտ, ամուշահոտ խնկեղեն, համեմներ, սարսկական և հնդկական ապրանքներ, իսկ Ռուսաստանից գնում էին թանկարժեք մուշտակներ ու մետաղներ ուրիշ երկրներում ծախելու համար: 1557 թվականին վենետիկյան դեսպան Ֆր. Դիերոլոն Մոսկովիայի մասին գրած իր ղեկուցազրույթում հաղորդում էր, որ սարսիկներն ու հայերը մետաքսից զատ, բերում են ակնեղեններ, համեմներ, ընտիր զենքեր ու Կասպից ծովի ընտիր ձկներ<sup>3</sup>:

1576 թվականին ջենովացի Պ. Իսվին նշում է, որ Աստրախանում լինում է մեծ տոնավաճառ, ուր երթեկեկում էին մեղացի (իմա՝ շամախեցի կամ ազրբեջանցի), հայ և սարսիկ առևտրականներ<sup>4</sup>:

XV դարում խաղացիները, իսկ XVI դարում անգլիացիները Ռուսաստանի վրայով դեսպանություններ և էքսպեդիցիաներ էին հղում Իրան, նպատակ ունենալով իրենց ձեռքն առնել Շիրվանի և Գիլանի մետաքսի արտահանությունը: Այս ուղղությամբ կարի մեծ աշխուժություն էր երևան բերում XVI դարի երկրորդ կեսում անգլիացիների մոսկովյան առևտրական ընկերությունը: Սկզբնապես այդ ընկերությունը արոշ հաջողություն ուներ: Մինչդեռ պորտուգալյան նավերը երկու տարին մի անգամ էին առևտրական էքսպեդիցիա հղում Հնդկաստան, վոլգյան ճանապարհով անգլիացիները անընդհատ կտպ էին հաստատել Արևելքի հետ և շատ շահավետ էին համարում իրենց այդ հասումը: Նրանք հասուկ արտո-

<sup>1</sup> «Акты исторические», II, էջ 91: Հմմտ. նաև Фехнер, նույն տեղում, էջ 48:

<sup>2</sup> М. Н. Тихомиров, Древняя Москва, М., 1917, էջ 142:

<sup>3</sup> Տե՛ս Ալիշան, Միտակառ, էջ 461:

<sup>4</sup> «Библиотека иностранных писателей о России», I, էջ 351:

նություններ էին ստացել իրանշահից, սրանցով հաջողապես մըր-  
ցում էին թուրքական ճանապարհների հետ կապված առևտրա-  
կանների հետ<sup>1</sup>:

Ռուսաստանը սոսկ երթևեկի ճանապարհ չէր գրեկ վաճառա-  
կանների համար: Իրենք ռուսներն իսկ առևտրական կապեր էին ըս-  
տեղծում ասիական երկրների հետ:

Նորագույն հեաազատությունները բերում են այն համազ-  
ման, որ Արևմուտքի հետ ռուսների ունեցած առևտրական կապե-  
րից Արևելքի հետ ունեցած նրանց առևտրական հարաբերություն-  
ներն ավելի նշանակալից պիտի եղած լինեն: Արևելքի հետ այդ  
հարաբերությունները, սրանք սկիզբ էին առել արդեն XIV—XV դա-  
րերում երկրի արտաքին ապրանքաշրջանառության մեջ ընդհանուր  
առումով սկսում են սաանալ խոշոր նշանակություն<sup>2</sup>: Մեծ կարե-  
վորություն են ստանում գրանք մանավանդ XV դարի երկրորդ կես-  
ում<sup>3</sup>, երբ Նվրոպայի և Ասիայի միջև կատարվող առևտրական  
տրանզիտի մի մասը սկսում է անցնել Ռուսաստանի վրայով և  
կատարվել ռուսական ապրանքների արտահանության միջոցով<sup>3</sup>:  
Այդ պահից ի վեր ռուս առևտրականները սխտեմատիկորեն այ-  
ցելում էին Ազովը, Կաֆան, Թոխատը, Բրուսան և Կ. Պոլիսը, կապ-  
վելով ինչպես այդ վայրերի հայ և հույն, այնպես նաև իրանական  
առևտրականների հետ. վերջիններիս մեջ նշանավոր տեղ էին  
բռնում դարձյալ հայ առևտրականները. «պարսիկներ» և «ղզլրաշ-  
ներ» անունները ռուսական հին աղբյուրների մեջ ընդգրկում էին  
բոլոր իրանահպատակներին: Առավել կարևոր նշանակություն  
ունեին Ռուսաստանի առևտրական կապերը անմիջապես Իրանի  
հետ: Հատկանշական է, որ XVI դարի երկրորդ կեսում Կաս-  
պից ծովի վրա սկսում է նորից գործել ռուսական նավատոր-  
միղը<sup>4</sup>:

Առևտրի և հաղորդակցության վտվյան ճանապարհը երթևե-  
կերի էր ռուսների համար նույնիսկ մտնողների ժամանակ: Մոսկ-  
վայի վրա արշավելուց առաջ Թոխթամիշը առաջապահ ջոկատներ

<sup>1</sup> Н. А. Смирнов, *Նույն տեղում*, էջ 102:

<sup>2</sup> Фехнер, *Նույն տեղում*, էջ 5:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 6 և հտ. և 14:

1. հղում բուլղարների երկիրը՝ հանձնարարելով կոտորել ուսա  
 առևտրականներին և բռնագրավել բոլոր նրանց նավերն ու ապ-  
 րանքները: Այս փաստը հիմք է ապրիս նույնիսկ կարծելու, թե  
 վրդյան առևտուրը և առևտրական նավագնացությունն այդ պա-  
 հին գտնվում էր ոչ թե մոնղոլների, այլ ուսաների ձեռքում: Ռու-  
 սական արտաքին առևտուրը զարգանում էր անընդհատ, սկսած  
 այն պահից, երբ Ռսկե Հորդան, Կուլիկովյան պարտությունից և  
 Լանկ-Քամուրի հարվածներից թուլացած, մտավ օրհասի իր շրջա-  
 նը: Շամախում նստող շիրվանշահի կողմից հատուկ դեսպանու-  
 թյուն է գնում Տվեր, որն առևտրով ու հարստությամբ կարևոր  
 դիրք էր նվաճել նախքան Մոսկվան<sup>2</sup>: Հայտնի է իր հերթին այն  
 ուղեգնացությունը, որ ձեռնարկեց Տվերի վաճառական Աֆանասի  
 Նիկիտինը Վրդայի վրայով դեպի Շամախի ու Իրանի<sup>3</sup>: Ռուս նշա-  
 նավոր այս ուղեգրի նպատակն էր առևտրական ամփոփական կա-  
 պեր հաստատել Շիրվանի և Իրանի հետ և հետադարձել Հնդկաս-  
 տանի ուղիները: Սակայն հատկանշական է, որ Աֆանասի Նիկի-  
 տինի ժամանակ շիրվանշահ Ֆարուխ Յասարի գեսպանն ուղևոր-  
 վում էր արդեն Մոսկվա: Իր հերթին ուս վաճառականի հետ Շա-  
 մախի էր մեկնում Մոսկվայի գեսպան Պավելը:

Աֆանասի Նիկիտինից մեկուկես դար անց ճամփորդական նո-  
 թեր է թողել նաև մի այլ ուսա առևտրական, 1623—24 թվական-  
 ներին Իրան մեկնած Ֆեոդոր Կոտովը, որի ուղեգրքում գտնում ենք  
 «քարաշեն Երևանի» և «սակավաջուր Զանդիշայի» հիշատակու-  
 թյունը: Կամենայով կարծես հավաստել Աուսքել պատմագրի  
 պատկերավոր վիպությունները՝ սուս ուղեգիրը նշում է նաև Շահ-  
 Աբբասի արշավանքի հետևանքով էջմիածնի ամայացած վանքերն  
 ու անզարդ մայր տաճարը՝ խորանի մի խաչով, տիրամոր մի  
 պատկերով և «բուսուրմանների երկյուղից» մնջություն մատնված  
 փոքրիկ զանգակաձուլ: Ռուս ուղևորին զբաղեցնում էին ուսա-  
 իրանական առևտրի վայրերը: Հատկապես ուշադրավ է Շամախու  
 նկարագրությունը: «Շամախում, — ասում է Կոտովը, — կա յոթ  
 վիմակերտ քարվանսարա — սեղիկներինը (տաջիկա տանցյունե-

<sup>1</sup> Б. Д. Греков и А. Ю. Якубовский, *Устюжские летописи*, էջ 326:

<sup>2</sup> В. Е. Сыроечковский, Гостин-сурожаке, М.—Л., 1935, էջ 19, 42 և հտ.:

<sup>3</sup> Հմմտ. «Хождение за три моря Афанасия Никитина 1466—1472 гг.», М.—Л., 1958.



շինը), լեզգիներինը, գիլանցիներինը, հայերինը և այլն»: Հետաքրքրական է նրա վկայությունն այն մասին, որ Շամսխում ուսուները առևտուր են անում հայկական քարվանսարայում: Ուղեգրողը հետաքրքրվել էր նույնիսկ հայ գրչության վիճակով: Նրա նոթերի մի տարբերակում պահվել է ուսերեն տառագարձության մը հաղորդված հայերեն այբուբենը, այն, за асвас «Այբ, ծա՝ ստաված» վերջվածքով<sup>1</sup>: Կոտովի հետ գրեթե միաժամանակ Անգլերիովկա է գալիս առևտրական Վասիլի Գազարը, որը նշում է իր հանդիպած Թբիլիսի, Երևան, Արզահան, Կարս, Էրզրում, Սևրաստիա, Կեսարիա, Հալեպ և այլ քաղաքները<sup>2</sup>: Գարամիջին Երուսաղեմից Հայաստանի վրայով էր հայրենիք վերադառնում Արսենի Սուխանովը. վերջինս միանում է մի կարավանի ու դիտում թուրք մաքսավորների հայերի նկատմամբ ցուցաբերած դաժան վերաբերմունքը: Էրզրումից դառ՝ Սուխանովը նշում է հայաբնակ «СХИНА» (Ցղնա՞) և շատ հայ բնակիչ ունեցող «Дригана» (Երեվա՞ն) քաղաքները<sup>3</sup>: Հայերը առևտրական կայան ունեին Բաքվում: Երբ 1723 թվականին սուա զորքերը մուտք գործեցին այդ քաղաքը, տեղավորվեցին Լրիու քարաշեն քարվանսարաներում, որոնցից մեկը «հայկական» էր կոչվում, մյուսը՝ «հնդկական»<sup>4</sup>:

Առևտրական հաղորդակցության հետևանքով Իրանի և իրանահայերի մյա իրենց ուշադրությունը սեռում են նաև ուսա գիվանագետները: Երբ Կազանի գրավումից հետո Իվան Ահեղը վերագարձավ Մոսկվա՝ նրան դիմավորողների մեջ կաշին նաև օտարերկրյա վաճառականներ՝ գերմանացիներ և լիտվացիներ, թուրքեր և հայեր<sup>5</sup>: Վոլգայի և Օկայի ավազանների կապերն Արևելքի և հատկապես մերձկասպյան երկրների հետ աշխուժացան մանավանդ XVI դարի երկրորդ կեսում՝ Կազանի և Աստրախանի նվա-

<sup>1</sup> „Хожденне купца Федота Котова в Персию“, М., 1958, էջ 36, 56 և 59:

<sup>2</sup> Հմմտ. С. Арешян, Заметки русских путешественников об Армении, *հայկական ՍՍՌ Գիտ. տիպ. Տեղեկագիր (հաս. դիտ.)*, 1951, № 3, էջ 48 և հտ.:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>4</sup> Ф. П. Самойлов, Описание Каспийского моря и учиненных в оном российских завоеваниях. СПб, 1763, էջ 417 և հտ.:

<sup>5</sup> ПРСЛ, հատոր XIX, էջ 176:

ձուձից հետո: Կա տեղեկութիւն, որ Կազանի անկումից հետո, 1554 թվականին, Շիրվանի և Շեվքալի տերերը զնստանան էին ուղարկել ցարի մոտ՝ խնդրելով վերականգնել Աստրախանի և Մոսկվայի հետ հայերի վաղեմի առևտուրը<sup>1</sup>:

Իր հաղթանակը նշանավորելու համար կառուցած Վասիլի երտնելու հուշակալնոր տաճարի խորաններից մեկը ցարը հատկացրեց Գրիգոր Լուսավորչին: Անշուշտ, այդ արվեսց հայ վաճառականների՞ն Մոսկվայի հետ ամուր շաղկապելու նպատակով:

XVI դարից ունենր պատահական հիշատակութիւն տմն Հակոբ հայի մասին, որը Կասպից ծովի վրա 35 տոննա տարողութեան նալ էր բանեցնում: Կասպից ծովի նիւզբաղ նավահանգստի մոտ նույն ժամանակ հիշատակվում է հայկական մի գյուղ, որն բոտ երևույթին զբաղվում էր ապրանքափոխադրման գործով<sup>2</sup>:

XVII դարի սկզբներին Աստրախանում գոյութիւն ունեին արեւելյան տիպի քարաշէն քարվանսարաններ՝ Գիլանի, հնդկական, հայկական և բուխարական: Տակաւին XVII դարում այդ քաղաքն ուներ էթնիկորեն խաչաբղետ կազմ: Հայերն այդտեղ ոչ միայն երթնեկողներ էին, այլև վերաբնակիչներ: Այդ մասին վկայում են Հին Աստրախանի հայկական գերեզմանաքարերը: Մինչև XVIII դարը այդտեղ հայերի և մասամբ պարսիկների ձեռքն կային մետաքս և բամբակ մշակող մանվածագործարաններ: Ալեքսեյ ցարը Աստրախանից հրավիրում է իրեն հարկավարված ջուհակներ<sup>3</sup>:

Աստրախանը XVI դարում Կասպից ծովի նավագնացութեան համար կառնուրում էր նույն գերը, որպիսին կատարում էր Տրապիզոնը արարների ժամանակ՝ Սև ծովի նավագնացութեան համար. այդտեղ միանում էին հարավի և հյուսիսի միջազգային ապրանքաշրջանառութեան ճանապարհները: Շամախու, Աստրախանի, Կազանի, Արխանգելսկի, Տվերի և Նովոգորոդի վրայով Սև,

<sup>1</sup> «Историческое описание древнего Российского Музея, 1807 էջ 23: Արխիվային աղբյուրները նուաթեր են մատակարարում հայ-առևտրական առևտրական հարաբերութեանների պատմութեան համար միայն 1626 թվականի սկսած: Նախընթաց շրջանի բոլոր նյութերը այրվել են 1626 թվականի սկզբներին բռնկած հրդեհի ժամանակ:

<sup>2</sup> Ն. Հակոբյան, Ուղեգրութեաններ, Ա, էջ 442 և հա.:

<sup>3</sup> П. Г. Любимров, История русской промышленности, М., 1947, էջ 600 և 630:

Սպիտակ և Բալթիկ ծովերի հանգուցավորման համար մեծ կարևորություն էին ստանում հայ առևտրականները:

Վոլգայի վրայով դեպի Արխանգելսկ տանող ուղին, այսինքն՝ Հյուսիսային Գոլինա և Սպիտակ ծովը ընկնող ճանապարհը յուրացվել էր միայն XVI դարի երկրորդ կեսում: Թուրքերի անդրկովկասյան տիրակալության և իրանաթուրքական պատերազմների տատանումյակները, ինչպես և նույն այդ ժամանակ Ռուսաստանում ծայր առած ներքին և արտաքին պատերազմները նպաստավոր չէին ուս-իրանական և հայ-ուսական առևտրական կապերի ամրացման համար:

Կային նաև այլ խոչընդոտներ:

Ռուսական ճանապարհը քիչ շատ հարմար էր միայն ամառվա ամիսներին, քանի որ ձմռանը սառչում էին գետերը: Ապրանքատերերի համար անվտանգ չէր Կասպից ծովի նավաղնացությունը, ուր անդամ XVII դարում հաղորդակցությունը կտարվում էր հաճախ միայն միակայմ ձկնորսանավերի կամ տափակահատակ եզերանավերի միջոցով: Պետրոս ցարի կողմից նոր տիպի նավեր կառուցելու համար հրավիրված կապիտան Պետին գրում էր. «Ես առիթ եմ ունեցել խոսելու շատ նավաստիների հետ, որոնք իրենց կյանքն անց են կացրել Կասպից ծովի վրա, լողալով Աստրախանից Իրան և Հայաստան, և լսել եմ նրանցից, որ իրենց նավերը ռելզ անելու ընդունակ չեն և կառուցված են այնպես, որ կարող են կտրել-անցնել լիճը (իմա՝ Կասպից ծովը — Ա. Հ.) միայն քամու ուժով, որով հաճախ նրանք մոտենում են այնպիսի տեղերի, ուր ուղևորվել մտադրված չէին բնավ»<sup>1</sup>: Առևտրական պրիմիտիվ բուսերը հաճախ դոճ էին դառնում ծովային մրրկի կամ նոզայների ու կողակների հարձակումներին և նվազվում Վոլգայի ստորին հոսանքում: Կարավանները հաճախ միայն սարելեցյաների և մանր թնդանոթների ուղեկցությամբ էին ապահովվում պատահարներից: Այս ճանապարհի վտանգավորությունը նշում էր նաև հայտնի Պետիկը, շեշտելով պորսիկ նավաստիների անձարակությունը: Պետիկի տվյալներից հայտնվում է նաև, որ եթե Թուրքիայի վրայով Իրանից նվազագույն հասնելու համար

<sup>1</sup> Джон Перри, Состояние России при нынешнем царе (Чтение в Имп. общ. истории и древн. российск. при Моск. университете, М., 1871, II, էջ 65):

պահանջվում էր մոտ երեք ամսվա ուղեգնացություն, Իրանից Մոսկվա հասնելու համար հարկավորվում էր շորս-հինգ ամիս<sup>1</sup>։

Իրանական արտահանության գլխավոր օբյեկտը հում մետաքսը գնելու և արտահանելու մենաշնորհը վերապահված էր ցարական պանծարանին։ Այս հանգամանքը պիտի իր հերթին սահմանափակեր ուս-իրանական առևտրի ծավալը։ Թե սրբան աննշան էր մետաքսի այն քանակը, որ արտահանվում էր Արխանգելսկի վրայով՝ երևում է Ռոզեսի վկայությունից, սրի համաձայն XVII դարի կեսերին այդ ճանապարհով երեք տարին մի անգամ հազիվ միայն 40 հազար սուրբու ապրանք էր արտահանվում, իսկ 1648—51 թվականներին իրանական մետաքսը, ընդամենը 138 հակ, ընկած էր Արխանգելսկի նավահանգստում, չգտնելով որևէ գնորդ<sup>2</sup>։

Ռուս արխիվային նյութերից միանգամայն ակնհայտ է, որ մինչև 1670-ական թվականները իրանական առևտրականները Արխանգելսկի կամ Նովոբորոդի վրայով ապրանք արտահանելու արտոնություններ չունեին Ռուսաստանում։

1666 թվականին Մոսկվա ժամանեց Նոր-Ջուղայի (կամ Սպահանի) հայ առևտրական ընկերության ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկենյը (ուսերեն՝ ЛУСИКОВ), որը, բանակցության մեջ մշտնելով դեսպանական պրիկազի հետ, իրանական ապրանքների համար արանքիտի իրավունք է խնդրում Արխանգելսկի, Նովոբորոդի և Սմոլենսկի վրայով գեպի Հոլանդիա, Շվեդիա, Գերմանիա և Լեհաստան։ Լուսիկենյը հայանում էր, որ իրանահայ առևտրական ընկերությունը արտոնություն ունի մետաքս արտահանելու Թուրքիայի վրայով, բայց խոստանում էր, որ համապատասխան արտոնություններ ու գույրություններ ստանալու դեպքում ընկերությունը իրանական մետաքսի ամբողջ արտահանությունը կուղղի գեպի ուսական ճանապարհները, որով մտքսային եկամտի մեծ աղբյուր կտեղծվի ուսական պետության համար։ Պարզաբանում է ի վերջո, որ իրանական արտահանության այն մասը, որ հնարավոր չէր լինի վաճառել Ստորախանի, Մոսկվայի, Արխանգելսկի կամ մյուս շուկաներում, պիտի արտասահման (Արևմուտք) արտածվի անարգել<sup>3</sup>։

<sup>1</sup> Bedik, Cehil Suttur, էջ 325 և հտ.։

<sup>2</sup> Б. Т. Курц, «Состояние России в 1650—1655 гг. по донесениям Родеса», М., 1915, էջ 55 և 151։

<sup>3</sup> «Армяно-русские отношения в XVII в», I, էջ 34 և հտ.։

Ռուս կառավարութեանը աշխատեց ընդառաջել հայ առևտրական ընկերութեան առաջարկին:

1667 թվականին Ալեքսեյ ցարը հատուկ պայմանագիր կնքեց հայ առևտրական այդ ընկերութեան հետ: Պայմանագրի նպատակն էր բարձրացնել Ռուսաստանի վրայով հում մետաքսի արտահանությունը Իրանից և եվրոպական ապրանքների ներմուծումը Իրան: Ցարը խոստանում էր ընկերութեանը այլևայլ արտոնություններ ու ապահովություններ, պայմանով, որ մուծվեն նախատեսվող մաքսային հասույթները:

Պայմանագրի իրացման համար ռուսները կառուցեցին Վոլգայի վրա անգամ հատուկ նավատորմ: Հայտնի է, որ Ալեքսեյ ցարի ժամանակ Վոլգայի վրայով անգլիացիների և Իրանի միջև հաստատված առևտրական կապերը խզվեցին՝ հանդիպելով ռուս վաճառականների դիմադրությանը: Ընդառաջելով ներքին շուկայի և արտաքին առևտրի պահանջներին՝ XVII դարի կեսերում ցարական կառավարությունը ետ առավ անգլիացիներին տրված արտոնությունները: Այս հանգամանքը նպաստավոր էր իրանահայ առևտրականների համար և որոշ նախադրյալներ էր ստեղծում ոչ միայն ռուս-իրանական, այլև հայ-ռուսական առևտրական հարաբերությունների աշխուժացման համար: Հայ առևտրականները միջնորդի դեր էին կատարում ոչ միայն Իրանի և Ռուսաստանի, այլև Ռուսաստանի և Հնդկաստանի միջև: Իրենց հերթին նրանց հետ մրցում էին հնդկաստանցի առևտրականները որպես ոչ միայն ռուս-հնդկական, այլև ռուս-իրանական առևտրի միջնորդներ<sup>1</sup>:

Այնտամեկնայնիվ 1667 թվականին կնքված պայմանագիրը մեծ արդյունք չտվեց: Հայ խոջաներին երկչուղ ներշնչեց Ստեփան Ռադինի ապստամբությունը, որի ժամանակ ավարի ենթարկվեցին Ռեշադ և Կասպից ծովի վրա երթևեկող իրանական ապրանքանավերը: Մյուս կողմից, այդ պայմանագրի դեմ ևս բողոք բարձրացրին ռուս մեծավաճառ առևտրականները (ГОСТИ)- արտահանություն իրավունք տալով իրանցիներին, ասում էին նրանք, միջնորդի շահույթից զրկվելու են թե՛ իրենք և թե՛ դանձարանը: Միաժամանակ նրանք պահանջում էին, որ իրանցիներին արգելվի ոսկի ու արծաթ արտահանել Ռուսաստանից: Այս բողոքից հետո, 1673 թվականին շուկայեցիների հետ կնքվեց նոր, խուզված պայ-

<sup>1</sup> «Русско-индийские отношения в XVII в., Сборник документов. М., 1958, էջ 13 և հտ.:

մանագիր, որով իրանական ասրանքների ազատ արանդիտը դրվում էր որոշ սահմանափակումների տակ<sup>1</sup>: Նման դիմագրությունն ուստ առևտրականները ցույց էին առելիս ոչ միայն հայ, այլև Ռուսաստանում առևտրով զբաղվող հնդկաստանցի առևտրականներին<sup>2</sup>:

Արված սահմանափակումները արգելք էին ստեղծում հայու առևտրական առևտրի զարգացմանը: Ռուս առևտրականներն իսկ տրանշում էին հիմա, թե իրանական մետաքսի ներմուծումը 1674 թվականին 100 փթից չի անցել<sup>3</sup>: Այս պայմաններում կառավարությունը անհրաժեշտ դտավ փաստորեն վերականգնել 1667 թվականին իրանահայ առևտրականներին տրված արտոնությունները: 1675 թվականից իրանական մետաքսի ներմուծումը սկսեց հեռզհեռե բարձրանալ:

1688 թվականին իրանահայերը առևտրական պայմանագիր են կնքում Շվեդիայի հետ, որով Արխանգելսկի վրայով կատարվող իրանական արտահանության դիմաց աճում է Նովգորոդի վրայով տեղի ունեցող արտահանությունը: Այսպես, 1696 թվականին մի խումբ առևտրականներ Շվեդիա հասցրին 1794 փութ մետաքս<sup>4</sup>: Հաջորդ 1697 թվականին առևտրականների մի այլ խումբ բերեց 873 փութ մետաքս<sup>5</sup>: Համապատասխան կերպով աճում էր նաև իրանական մյուս ասրանքների ներմուծումը, ինչպես նաև Ռուսաստանի վրայով կամ Ռուսաստանի շուկաներում փնված ասրանքների արտահանումը Իրան:

XV—XVI դարերից ի վեր և մինչև 1639 թվականը հայ առևտրականների ցամաքային կարավանադնացությունը վտանգված էր թուրք-իրանական պատերազմների և ջալալիների գործած հարձակումների պատճառով: Յամաքային կարավանադնացության հետ կտրված էին նաև բազմաթիվ ու բազմատեսակ վերադիր վճարումներ, որոնք աճում էին թուրք և իրանական հզորության անկման զուգընթաց: XVII դարի ուղեգրող Ջաֆարիա Ագուլչեյու

<sup>1</sup> „Собрание государств. грамот и договоров“ IV, էջ 201 և հտ., 277 և հտ., 280 և հտ., 338 և հտ., С. М. Соловьев, История России, XII, էջ 273 և Н. И. Костомаров, Очерк торговли Моск. государства в XVI и XVII ст., СПб, 1852, էջ 47 և հտ.:

<sup>2</sup> „Русско-индийские отношения в XVII веке“, էջ 12 և հտ.:

<sup>3</sup> „Армяно-русские отношения в XVII в.“, I, էջ 139:

<sup>4</sup> Նույն տեղում, I, էջ 221:

<sup>5</sup> Նույն տեղում, I, էջ 237 և հտ.:

տվյալների համաձայն Ազուլխից Թոխատ ապրանք հասցնելու համար առևտրական կարավանները պիտի գոմբուկ ու բաջ վճարեն Ազատ-Գեոտում, Նախիջևանում, Շարուբում, Երևանում, Էջմիածնում, Կաղզվանում, Աղջաղալայում, Չորան-Քուսիում, Հասանղալայում, Իլիջայում և Թոխատում<sup>1</sup>: Ազուլխյուն ժամանակակից նոր-ջուղայեցի դպրապետ Կոստանդի, «Աշխարհաժողով» կոչված առևտրական ձեռագիր ուղեցույցի համաձայն Հալեպից Թավրիզ հասնելու համար ապրանքատերերը վճարելու էին այլևայլ «խալջ ու բալջեր»՝ Հալեպում, Այնթապում, Զաֆարապունեն գյուղում, Ուրֆայում, Բիթլիսում, Վանում, Դատվանում, Ադիլջեվապում Բանդիմահիում, Նուշարում, Չորսում, Մարանդում: «Աշխարհաժողով»-ում նշված են նաև անցնող կարավանների ծախսերը՝ Հալեպում, Այնթապում, Մալաթիայում, Կամախում, Երզնկայում, Իլիջայում, Էրզրումում, Հասանղալայում, Չորան-Քուսիում, Կաղզվանում, Երևանում, Նախիջևանում, Մարանդում և Թավրիզում: Միառմի նշված մաքսային տուրքերից դատ ապրանքատերերը հարկադրված էին լինում «փեշքաշներ» անել մաքսատան կամ քաղաքային մեծ ու պստիկ պաշտոնատերերին ու ծառայողներին, որոնց անունները և արվելիք գումարները դարձյալ միառմի նշված են «Աշխարհաժողովում»<sup>2</sup>: Այս ամենի դիմաց Աստրախան—Արխանգելսկ ճանապարհի վրայով ապրանք փոխադրողները վճարումներ էին անում միայն մի կամ երկու անգամ — Մոսկվայում ապրանքի 5 տոկոսի և Արխանգելսկում մոտ 10 տոկոսի շափ<sup>3</sup>: Ակներև է այն առավելությունը, որ ընձեռում էր այս կողմից Մոսկվայի ճանապարհը:

Նկատենք փակագծում, որ այս գյուղությունը ստեղծվեց միայն 1667 թ. առևտրական պայմանագրից հետո: Մինչ այդ սահմանային որևէ քաղաքից Ռուսաստան ներմուծվող ապրանքների համար ճանապարհին հանդիպող տմեռ խոշոր քաղաքում պետք է մաքս վճարվեր: Այսպես, XVI դարի վերջերին Աստրախանից Յարոսլավ ապրանք հասցնելու համար պիտի մաքս վճարվեր Յարիցինում, Սարատովում, Սամարայում, Կազանում, Սվիյաժսկում, Չերոկսարիում, Վասիլ-քաղաքում, Նիժնիյում, Վոլգյան Յուրեվկյում, Կինեշ-մում, Պլլոսում և Կոստրոմայում<sup>4</sup>:

<sup>1</sup> Զ ա ք ա ր ի ա Ա զ ու լ ի ե յ ի, Օրագրութիւն, էջ 7 և հտ.:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձև. № 8443, էջ 241ա—247բ:

<sup>3</sup> Տե՛ս Դուկաս Վանանյեցի, նույն տեղում, էջ 38 և հտ.:

<sup>4</sup> Ф е х н е р, նույն տեղում, էջ 104:

1689 թվականի մի հիշատակարանը գանգատվում է այն տար-  
քերի մասին, որ գտնաձևվում էին թուրք քարվաճառարանների գրանկ  
իջևանողներից: «Այս տարովս, — կարգում ենք այգանեղ, — ժողո-  
վեցին խանէգլուխ 300-ական դուռուշ այլազգիցն ու քրիստո-  
նէիցն, որ բազում վիշաք և նեղութիւն եղև ի վերս աշխարհի»<sup>1</sup>:  
Վերջապես մտաբերենք XVII դարի վերջերին թուրքիայում սաստ-  
կացող կեղևբումներն ու ճնշումները:

Այս պայմաններում հասկանալի է դառնում, որ եթե մի կող-  
մից աճում էր հայ առևտրականների քաղաքական տրամադրու-  
թյունն ընդդեմ թուրքիայի և թևավում հօգուտ թուրքերի դեմ պայ-  
քարող եվրոպական պետությունների, սրանց թվում նաև հօգուտ  
Ռուսաստանի, մյուս կողմից՝ իրենց սուլթանքների արտահանու-  
թյան համար նրանք սկսում են բռնել և տվելի մեծ շափով օգտա-  
գործել առևտրի վոլգյան ուղին: Այնուամենայնիվ չի կարելի դե-  
րագնահատել վոլգյան ճանապարհի XVII դարում կատարած դերը:

1636—1638 թվականներին Իրանում դեղերած Օլեարիուսի  
համաձայն, Գիլանը տարեկան արտադրում էր ութ հազար «թայ»  
(=հակ), Մազանդարանը՝ 2000, Շիրվանը՝ 3000, Ղարաբաղը՝  
2000, Հայաստանն ու Վրաստանը՝ 5000, բոլոր այս երկրները միա-  
սին՝ 20 հազար «թայ» մետաքս: Մոտ 1000 «թայը» մնում էր երկրում,  
մնացածը արտահանվում:

Սպահանի հայ առևտրական ընկերության ներկայացուցիչների  
1666 և 1670-ական թվականներին Մոսկովայում արած հավաստիա-  
ցումներով Իրանն արտադրում էր տարեկան 4000 բևռ (=8000  
հակ) հում մետաքս: Ըստ այդմ նրանք հաշվում էին յուրաքանչյուր  
հակը 6 փութ, այսպիսով հում մետաքսի տարեկան ամբողջ ար-  
տադրանքը համարվում է 48 հազար փութ<sup>2</sup>:

Ըստ Շարդենի, ամբողջ Իրանը XVII դարի 70-ական թվա-  
կաններին արտադրում էր 22 հազար բևռ մետաքս, յուրաքանչյուր  
բևռը 260 լիփր արժեքով, իրանից 12 հազար բևռը մատակարար-  
ում էր Գիլանը, 3-հազարական՝ Բակարիան (=Խորասանը) և  
Մարաստանը (=Շիրվանը), 2-հազարական՝ Ղարաբաղը և Վրաս-  
տանը<sup>3</sup>: Մեր ունեցած բոլոր մյուս տեղեկություններն աչքի առաջ  
ունենալով, Շարդենի տվյալները շափազանցված են: Միանգամա-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձև. № 2448, էջ 88ր:

<sup>2</sup> Армяно-русские отношения в XVII в., I, էջ 37, 39, 71 և 158:

<sup>3</sup> Charadin, նույն տեղում, IV, էջ 112:



մայն շափաղանցված էին նաև Սրբի տեղեկությունները, ըստ որոնց Գիլլանը տարեկան իբր թե արտադրում էր 30 հազար «թայ» մետաքս և որպես թե նույնչափ էլ արտադրում էին անդրկովկասյան երկրները<sup>1</sup>:

1687 թվականին Նոր-Ջուղայի վաճառականներին հարցսփորձ անելով կազմված «Աշխարհածողով» գրքի հեղինակը, մեր հիշատակած վարպետ Կոստանդր, նշում է այն ապրանքները, որոնք այդ պահին ստացվում էին Ռուսաստանից. հիշատակված են՝ սամուր, սև աղվես, գոշան (=կղաքիս), սընճեֆ (=սկյուռ), թլաթին (=ТЕЛЯТНА քառից՝ հորթի կաշի), թուլքն (=թալիա), զունդուզ շարէ (=կուլք), ձկան սաամ (=ծովափղի ժանիք) և ժիպակ<sup>2</sup>: XVII դարի վերջին երկու-երեք տասնամյակում իրանական արտահանության գլխավոր օբյեկտը՝ հում մետաքսը, Ռուսաստան էր բերվում սահմանափակ քանակով՝ շկաղմեկով իրանական արտահանության տուվել նշանակալից մասը: XVIII դարի սկզբներին իրանցի վաճառականները արանջում էին, թե անկարող են վաճառել Ռուսաստանում իրենց ապրանքների տասներորդ մասն անգամ<sup>3</sup>:

Բազմաթիվ խոչընդոտների էր ենթարկվում նաև ուսւ պետական ապրանքների — մորթեղենների և կաշվեղենների — վաճառքը Իրանում: Դրանց մի մասը սովորաբար ետ էր ստացվում: Մոսկովյան կառավարությունը այդ ապրանքների վաճառքը պարտադիր կերպով հանձնարարում էր ուսւ առևտրականներին, որոնցից հետո պահանջում էր դրանց արժեքը<sup>4</sup>:

Իրանի հումուլթը երկրի ներսում սպառելու համար հին Մոսկվան բավականաչափ պահանջ չուներ: Մետաքսե գործվածքների գնորդները բարձր գասի ներկայացուցիչներն էին միայն: Չկար պետական կամ մասնավոր մանուֆակտուրա, որ կարիք սնանար այդ հումուլթին: Մետաքսարդյունարերությունը Ռուսաստանում սկսվել էր Ալեքսեյ ցարի ժամանակ: Սակայն իրանական հումուլթը ծառայում էր գոտիներ, ժապավեններ և նման տեսակի այլ «մանրուք» գործելու համար միայն:

Դարավերջի տասնամյակներին, Իրանի անտեսական վայրէջքի հետ, պիտի ընկած լինեն նաև մետաքսի արտադրությունն ու

<sup>1</sup> Эзов, *նույն տեղում*, № 9, § 30:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձև. № 8443, էջ 157ա:

<sup>3</sup> В. П. Лысов, *Персидский поход Петра I*, էջ 59:

<sup>4</sup> К. Базилевич-ի *հոդվածը* «Против исторической концепции М. Н. Покровского» *ժողովածուում*, 1, էջ 179:

արտահանությունը: Այսպէս, Պարսից ծոցի մաքսատների կկամուտները դարամիջի համեմատությամբ 80-ական թվականներին ընկած էին ավելի քան կիսով չափ<sup>1</sup>:

Քե այդ ժամանակ որքան մետաքս էր վաճառում Իրանը օվկիանոսային ճանապարհով հայանի չէ մեզ: Հայանի է, սակայն, որ XVII դարի 70-ական թվականներին Իրանը միայն հենց հոլանդացիներին հանձնում էր մոտ 2000 թայ մետաքս և որ XVIII դարի սկզբին Իրանի պետութունը Ինդոնեզիա էր հղում տարեկան 100 թայ մետաքս, յուրաքանչյուր թայը հոլանդական 408 ֆունտ կշռով: Անկասկած Հնդկաստանի վրայով անգլիացիներին վաճառելու մետաքսի համապատասխան քանակը ավելի բարձր պիտի եղած լիներ: Ռուս արխիվային ավյալների համաձայն, XVIII դարի սկզբներին Գիլանից տարեկան 9000 թայ մետաքս էր արտահանվում Քուրքիա (թայը 7—9 փութ կշռով, ուրեմն տարեկան 63—81 հազար փութ), փութը 70, 90 ուրլի արժողությամբ: Գիլանն այդ ժամանակ տարեկան 3 միլիոն կկամուտ էր տալիս մաքսավճարումներից ու կապալավճարումներից: Միայն հենց մաքսավճարումներից գանձարանը տարեկան 1 միլիոն ուրլի մուտք ուներ (100 հազար Շամախում, 900 հազար Գիլանում): Հարկավ, կային մետաքսարտադրության այլ, թեպետե նվազ կարևոր, շրջաններ: Այսպէս, նույն պահին հայ մի ընկերութուն Գանջայից Հալեպ արտահանում էր տարեկան 900—1000 հակ մետաքս<sup>2</sup>: Պիտի կարծել, որ առևտրական այս գործարքների մեծ մասը կատարվում էր հայ առևտրական ընկերութունների միջոցով: Քե ինչ ծավալ ունեին այդ ընկերութունները՝ դրա մասին որոշ գաղափար է տալիս այն տեղեկանքը, որ 1699 թվականին Սպահանում միայն հենց Շեհրիմանյանների առևտրական տան ձեռնարկության մեջ կային 50 ծառա և 100 պաշտոնյա<sup>3</sup>:

Հայ-ուռտական առևտրական հարաբերութունների վարքացման ընթացքը բնութագրող այս փաստերը չեն հավաստում նորերս հայանված այն կարծիքը, թե «1680—1690-ական թվականներին Աստրախան—Մոսկովա—Նովգորոդ ուղին դարձավ հայ առևտրա-

<sup>1</sup> М. С. Иванов, *նույն տեղում*, էջ 77:

<sup>2</sup> V. Minor sky, *Tadhkirat al-muluk*, էջ 20:

<sup>3</sup> В. П. Лысцов, *նույն տեղում*, էջ 46, 51 և հո.:

<sup>4</sup> A. Chronicle of the Carmelites in Persia, 1, էջ 485:

կանների ամենաբանուկ ճանապարհը Արևմտյան Եվրոպայի հետ կապվելու համար» կամ որ իբր «Թուրքիայի վրայով... ջուղայեցի հայ վաճառականներից քչերն էին զնում Եվրոպա»<sup>1</sup>:

Ի՞նչ ճանապարհով էր, հիրավի, XVII դարի ընթացքում և մասնավորապես այդ դարի վերջերին տեղի ունենում իրանական գլխավոր ապրանքի՝ հում մետաքսի արտահանությունը:

Ինչպես 1667 թվականի պայմանագրից առաջ, այնպես և դրանից հետո Իրանը ամենաշատը տարեկան մի Բանի հարյուր փութ, իսկ բացառիկ դեպքերում մի Բանի հազար փուր հում մետաքս էր արտահանում Ռուսաստանի ճանապարհներով, մինչդեռ Թուրքիայի վրայով նա արտահանում էր տարեկան մի Բանի տասնչափ հազար փուր: Իրանահայ առևտրականների խոստումը թերեւ Իրանի առևտուրը Թուրքիայից դեպի Ռուսաստան՝ այսպիսով չէր իրագործվում:

Իրանահայ առևտրական ընկերությունը մասնակցող խոջաները շուկա չէ, որ սրոնում էին Մոսկովյան պետություն մեջ, այլ տրանզիտի ձևնառու ճանապարհ: Այս ակներև է գեթ XVII դարի հայ-ուռա հարաբերություններն ընդգրկող վավերագրերի ընդհանուր բովանդակությունից:

Չնայած նրան, որ ուռա-իրանական առևտրական հարաբերությունները XVII դարի վերջին տասնամյակներում զգալապես աշխուժացել էին, այնուամենայնիվ այդ դարի ընթացքում ուռական տրանզիտը բացառիկ նշանակություն չստացավ իրանահայ առևտրականների համար: Եթե սրանց ուղու մեկնասկիզբը Իրանն էր, վախճանակետը սովորաբար Մոսկվան չէր, այլ Արխանգելսկը, հաճախ Հոլանդիան, Լրբեմն Եվեդիան և Անգլիան<sup>2</sup>: Դրությունը շփոթվեց նույնիսկ XVIII դարի սկզբներին:

XVIII դարի առաջին քառորդում ուռական աղբյուրները միաբերան վկայում էին, որ Մերձկասպյան երկրների արտագրած մետաքսի մեծագույն մասը Արևմուտք էր արտահանվում Թուրքիայի վրայով<sup>3</sup>: Նոր-Ջուղայի վաճառականները փաստապես չէին կատարում Ռուսաստանի հետ կնքած իրենց պայմանագրերը նաև այս պահին: Տակուվին 1695 թվականին դեսպանական պրի-

<sup>1</sup> Տե՛ս Վ. Պարսամյան, Հայ-ուռա հարաբերությունների պատմությունից հոդվածը, տպված Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի Տեղեկագրում (հաս. դիտ.), 1932, № 7, էջ 78:

<sup>2</sup> Հմմտ. S t r u y s, նույն տեղում, էջ 210 և հտ., F[leuriau] նույն տեղում, էջ 278, Tournafort, նույն տեղում, II, էջ 160:

<sup>3</sup> В. П. Лысов, նույն տեղում, էջ 51 և հտ.:

կազմը Իրանի դեսպան Հուսեյին-խան բեկի միջոցով պահանջում էր, որ Նոր-Ջուղայի վաճառականները կատարեն թուրքական ճանապարհից հրաժարվելու մասին տված խոստումը<sup>1</sup>։

Ցարը շարունակում էր հետամտել հայ առևտրականներին խրախուսելու քաղաքականությունը։ Զարկ տալով ուս առևտրականների եվրոպական կապերին՝ 1689 թ. Մոսկվայի պետությունը արևելյան բոլոր ազդու թյունների առևտրականներին արգելեց Ռուսաստանի վրայով առևտուր անել Արևմտյան եվրոպայի հետ։ Բացառություն էր արվում միայն Սպահանի հայ առևտրական ընկերության նկատմամբ, որի հետ Մոսկվայի պետությունը կնքած պայմանագիր ուներ<sup>2</sup>։ Հայ առևտրականներին հատկացված այս շնորհը, կարծում ենք, պիտի բացատրել նրանով, որ ի տարբերություն մասնավոր առևտրով զբաղված մյուս արևելցիներից, հայ առևտրականները հանդիսանում էին իրանական պետության առևտրական ներկայացուցիչները։ 1711 թվականին հատուկ ուղևորով վերանորոգվեցին նոր-ջուղայեցիներին արված հին արտոնությունները, այլև նրանց թուլլատրվեց թանկագին քարեր ներմուծել Ռուսաստան։ Այնուամենայնիվ նոր-ջուղայեցիները շարունակում էին օգտվել այս շնորհներից սահմանափակ չափերով միայն։ Մի քանի տարի անց ուս դեսպան Վոլինսկին գանդատվում էր, թե հայ վաճառականները շարունակում են դերադասել Հալեպի և Զմյուռնիայի ճանապարհները<sup>3</sup>։ Դեսպանը գանդատվում էր միաժամանակ, թե Իրանի սահմաններում իսկ Նոր-Ջուղայի վաճառականները խոչընդոտ են ստեղծում ուս-իրանական առևտրի աշխուժացման առաջ<sup>4</sup>։ Նոր-ջուղայեցիների վրա դայքացած՝ 1719 թվականին ցարական կառավարությունը նրանց զրկեց հայ առևտրականներին տրված արտոնություններից<sup>5</sup>։

Իրանահայ խոջաների դիրքավորումը հասկանալու համար պիտի աչքի առաջ ունենալ, որ մետաքսի արտադրությունը սոսկ նրանց բարի կամեցողությունից կախված չէր։ Մեծավաճառ հայ խոջաներն ու ընկերությունները իրանական պետության առևտրական գործակալներին էին։ Նրանք կախված էին ինչպես Իրա-

<sup>1</sup> „Армяно-русские отношения в XVII в“, I, էջ 213 և հտ.։

<sup>2</sup> „Русско-индийские отношения в XVII в.“, վավ. № 242։

<sup>3</sup> В. П. Лысов, նույն տեղում, էջ 56։

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 66։

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 57 և հտ.։

նի առևտրական քաղաքականությունից, այնպես նաև արևմտաեվրոպական պետությունների՝ Իրանում ունեցած շահախնդրություններից: Չմոռանանք ճնշող աչք ազդեցությունը, որ արևմտաեվրոպական այգ պետությունները, Պորտուգալիան և Իսպանիան, հետագայում Անգլիան և Հոլանդիան, իսկ ավելի ուշ Ֆրանսիան, գործադրում էին Իրանում XVII դարի ընթացքում: 1667 թվականի պայմանագրից հետո իսկ և մինչև Սեֆյանների անկումը Իրանի առևտրական քաղաքականությունը առավել նպաստավոր եղավ առևտրական մենաշնորհներ ստանալու հետամտող արևմտաեվրոպական պետությունների՝ գլխավորապես Անգլիայի և Հոլանդիայի, իսկ հետագայում նաև Ֆրանսիայի համար: Պարզ է, թե ինչու 1667 թվականի պայմանագիրը կնքվելուց հետո իսկ իրանահայ խոջաները, շնայած բազում դժվարություններին, մեծապես դամված մնացին առևտրական այն ուղիներին, որոնք նրանց հաղորդակցության մեջ էին դնում Իրանի արևմտաեվրոպական կոնտրադենտների հետ:

Բնութագրելով ուսև առևտրականների ընդհանուր դրությունն Իրանում, դեռ պահանջում էր. «Ինչքան որ առևտրականներ կամ տեսել Պարսկաստանում, ոչ մի ազգի վաճառականներ այնքան ճնշված չեն, որքան ուսևականը...»<sup>1</sup>: Արևմտաեվրոպական պետությունները մասնավորապես հետամուտ էին իրենց ազդեցություն տակ պահելու իրանահայ առևտրի մագնատներին և վերին աստիճանի խանդուղ վերաբերմունք էին ցուցաբերում ուսևական ազդեցությունն ամեն մի նշանի նկատմամբ: Ուշագրավ է հատկապես Անգլիայի քաղաքականությունը:

XVI դարից ի վեր իրանահայ առևտրականները հաղորդակցության մեջ էին Հնդկաստանի հետ, ուր նրանք ծաղկած դադրվներ ունեին Ակրայում, Սոլերաթում, Բոմբեում, Դելիում, Սեյդաբադում, Կալկաթայում, Մադրասում և այլուր: XVII դարի երկրորդ կեսում Բենդեր-Սբասիում և Հնդկաստանի նավահանգիստներում բանում էին անգամ հայ խոջաներին պատկանող առևտրական նավեր<sup>2</sup>: 1658 թվականին Արևելյան Հնդկաստանի անգլիական ընկերությունը պայմանագիր է կնքում Սուրաթում բնակություն հաստատած նոր-ջուղայեցի մեծահարուստ խոջա Փանոս Քալանթարի հետ, որով հայ վաճառականների վրա պարտավորություն է դր-

<sup>1</sup> E. C. Зевакин, Азербайджан в начале XVIII в., էջ 9:

<sup>2</sup> M. Seth, Armenians in India. 1937, էջ 290, 293 և հո.:

վում հրաժարվել ցամաքային տրանզիտից և Եվրոպա փոխադրել Հնդկաստանի և Իրանի ապրանքները ընկերություն նավերի վրա՝ օվկիանոսային ճանապարհով: Անգլիացիների հետ համահավասար իրավունքով նրանց ազատ առևտրի իրավունք է շնորհում անգլիական գաղութարարների իրավասությունը ևնիխակա քաղաքներում ու զինվորական ամրացված կայաններում<sup>1</sup>: Պաշտոնական գրությունների մեջ ընկերության գործակալները բնութագրում են հայերին որպես «աշխարհիս ամենափորձված առևտրականների»<sup>2</sup>: Ընկերությունը միջոցներ էր ձևեր առնում, որպեսզի անգլիական առևտրի գործակալները սովորեն ոչ միայն պարսկերեն, այլև հայերեն, որպես միջոց հայ խոջաների առևտրական մեթոդներն ուսումնասիրելու<sup>3</sup>: Խոստանալով հայ խոջաներին բազմաթիվ արտոնություններ, ընկերությունը կամենում էր նրանց ձևերով ոչ միայն ընդարձակել իրանական մետաքսի արտահանությունը, այլև անգլիական մահուղի վաճառքը Իրանում: Իրենց զեկուցագրերի մեջ անգլիական ընկերության գործակալները հավաստիացնում էին Հոնդոնի իրենց զեկավարներին, թե քանի որ անգլիական նավերով փոխադրած ապրանքների համար իրենք մաքս չեն վճարում՝ ծովային ճանապարհով մուծված մահուղեղենն անհամեմատ ավելի էժան պիտի լինի Իրանում, քան Թուրքիայից ստացված կամ Հալեպի վրայով Եվրոպայից մուծվող մահուղեղենները<sup>4</sup>:

1688 թ. այս պայմանագիրը ցույց է տալիս, որ Ռուսաստանի առևտրական ուղիներով հայերի վարելիք միջազգային առևտուրը զարեղ դիմադրություն պիտի հանդիպեր ոչ միայն թուրք առևտրական ուղիների վրա զերիշխող ֆրանսիական կապիտալի, այլև օվկիանոսային ճանապարհների վրա զերիշխող անգլիական կապիտալի կողմից:

XVI—XVII դարերի հնդկահայ վաճառականական կապիտալի ծաղկման աղբյուրը հանդիսանում էր Հնդկաստանի նախակապիտալիստական տնտեսությունը<sup>5</sup>: Հասկանալի է, որ հնդկահայ վաճառականության ծաղկմանը հաջորդեց նրա քայքայումն ու ան-

<sup>1</sup> M. Setl, Armenians in India, 1937. էջ 237 և հա.:

<sup>2</sup> „The most expert merchants will know in untvers“, նույն տեղում, էջ 266:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 285:

<sup>5</sup> Տե՛ս Ա. ր. Կ ա Ր ի ն յ ա ն, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1956, 1, էջ 133 և 138:

կումը, երբ XVIII դարում Պարսկաստանում զլուխ բարձրացրեց Ֆեոդալական անարխիան և երբ անգլիական մետրոպոլիտայի անտեսությունը մտավ արդյունաբերական ռեուլյուցիայի շրջանը: Անգլիական արդյունաբերական կապիտալը քայքայեց և կաղմալուծեց Պարսկաստանի և Հնդկաստանի նախակապիտալիստական էկոնոմիկան, դրա հետ մեկտեղ շորացնելով նաև հնդկահայ և սլաւոնահայ վաճառականական կապիտալի զարգացման աղբյուրը:

1688 թվականի պայմանագրով ուժեղացան նոր-ջուղայեցիները առևտրական կապերը Հնդկաստանի և Հնդկաստանի վրայով՝ Եվրոպայի հետ: Անգլիացիները գրանով հարվածում էին մի կողմից Հալեպում հաստաալած ֆրանսիացիներին, մյուս կողմից՝ ռուս-իրանական առևտրին: Պայմանագիրն իրեն արդարացրեց մանավանդ 1689 թվականից հետո, երբ Անգլիան միացավ հակաֆարսիական կողմից իրանական առևտրին, և առավել ևս 1693 թվականից հետո, երբ ֆրանսիացիները խորասկեցին անգլիացիների և հոլանդացիների Բուրքիա ուղևորվող նավերը: Իրանահայ խոջաների միջոցով անգլիացիները կարողացան դեպի Բենդեր-Աբասի ուղևել իրանական հում մետաքսը և թուրքական (Խարամանի) աղնիվ բուրգը, միաժամանակ՝ իրենց մահուղեղենով նեղը լծելով հայ այն առևտրականներին, որոնք մինչև այդ վաճառքի էին հանում Իրանում թուրքական ընկերությունը պատկանող մահուղեղենը<sup>1</sup>:

Անգլիացիներից և ֆրանսիացիներից պակաս նշանակալից չէր հոլանդական առևտրականների գերը: Վոլինսկու ասելով Իրանում XVIII դարի սկզբներին հոլանդացիների առևտուրը գերազանցում էր անգլիացիներինը: «Գիլանցիները, — գրում էր նա, — ընդարձակել են Պարսկաստանի առևտուրը Բատավիայի ընկերություն հետ. ներկայիս ապրանքների մեծ մասը Արևելյան Հնդկաստանի և Եվրոպայի միջև շրջանառություն է գործում նրանց ձեռքով, չհանդիպելով պարսիկների կողմից որևէ խոջընդոտի, քանի որ շահի արքունիքը, ինչպես ներքինիները, նույնպես և մինիստրները, միշտ մեծ կաշառքներ են ստանում նրանցից և այս եղանակով ոչ միայն որոշ ապրանքներ, այլև հում մետաքս և մետաքսե մանվածքներ են անարգել գնում և ուղարկում Հոլանդիա՝ Հալեպի և Զմյուռնիայի վրայով: Բատավիայի նրանց առևտուրը

<sup>1</sup> M. Seth, նույն ակղում, էջ 290 և հա.:

գնում է Բենդեր-Աբասիով, ուր, ինչպես և այլուր, նրանք ունեն իրենց գրասենյակներ ի կապիտանները, որոնք գործում են հյուպատոսների աեղ»<sup>1</sup>։

Այսպիսով, շնայած, որ Նոր-Ջուղայի հայ առևտրականների հետ կնքված պայմանագրից հետո Ռուսաստանում որոշ գյուղություններ էին ստեղծվել հայ առևտրականների համար, տակավին ուժի մեջ էր մնում սովետական պատմագրության կողմից արձանագրված այն փաստը, որ թուրքական ճանապարհով կատարվող արտահանությունը շարունակում էր գերակշռող լինել<sup>2</sup>։ Մինչև XVIII դարի վերջերը Եվրոպայից Արևելք մեկնող առևտրականների, միսիոներների, դիվանագետների և ճանապարհորդների, ինչպես և Արևելքից Եվրոպա հղվող ապրանքների միջոցով հայ առևտրականները առաջվա պես շարունակում էին մերձավոր շրջան մեջ գտնվել Արևմուտքի հետ։ Հայ-ռուսական տնտեսական կապերը շոշափելի թափ և նշանակություն էին ստանալու միայն XVIII դարի վերջին տասնամյակներից սկսած։

1667 թվականի դաշնագրով արտոնություններ շնորհելով իրանահայ առևտրական ընկերությունը, ցարական կառավարությունը կամենում էր խորացնել Իրանի և Թուրքիայի միջև եղած քաղաքական տնջրպետը։ Դրանով միաժամանակ նպատակ էր դրվում սեպ խրել իրանահայ խոջանների և արևմտաեվրոպական պետությունների արանքը։ Այս քաղաքականությունը որոշ արձագանք գտավ իրանահայ խոջանների շրջանում, սակայն շունեցավ վճռական նշանակություն։ Որչափ Իրանի արտաքին առևտուրը շարունակում էր դեռ մեծապես կապված լինել Թուրքիայի տրանզիտային ուղիների հետ, իրանահայ խոջանների խոշոր մասը շահուկեց հայ քաղաքական այն խմբավորումներին, որոնք Հայաստանի ազատագրման հեռանկարները կապում էին թուրք-իրանական, թուրք-արևմտաեվրոպական կամ ռուս-թուրքական պատերազմի հաղթական ավարտի հետ։ Ավելին։ Կարավանային առևտրի հետ կապված խոջանների դիրքավորումը նույնիսկ վերաճեց Ռուսաստանի հետ կնքված պայմանագրերին ցույց տրվող դիմադրություն։

Քանիցս առիթ ունեցանք մասնանշելու բացասական այն վերաբերմունքը, որ մինչև XVII դարի վերջերը հայտ էին բերում հայ առևտրական կապիտալի մագնատները և հատկապես Նոր-

<sup>1</sup> ЦГАДА, фонд Сношения России с Персией, 1715—1718, էջ 580ա։

<sup>2</sup> Հմմտ. Ե. Շ. Зевакин-ի վերը հիշատակված հոդվածը, «Исторические записки» № 8, էջ 16։



Ջուղայի մեծահարուստ խոջաները գեպի հայերի ազատագրական մտորումները: Նման դիտողություն կարելի է անել նաև Շամախու կամ Ագուլխի հայ կարավանատերերի քաղաքական արամագրությունների նկատմամբ: Ենթակա շահի կամ խանի անմիջական հսկողության և կապված նրանց հետ առևտրական-ֆինանսական իրենց ձեռնարկություններով՝ մինչև XVII դարի վերջերը նրանք ազատ էին իրանական ֆեոդալների և պաշտոնյաների սանձարձակ քմայքներին ու կեղեքումներին ենթարկված գավառահայերի կրած զրկանքներից: Գաղի և բաթմանի հետ կապված Ջուղայի, Շամախու կամ Ագուլխի հայ կարավանատերերին անհամեմատ ավելի նվազ շահերով կարող էին նեղել պետական այն հարկերն ու տուրքերը, որոնք խիստ զգալի էին գաշտի և այգու հետ կապված գավառահայ գյուղարճակիչների համար: Մասնավորապես շամախեցի և նոր-ջուղայեցի հայ վաճառականները, սրպես շահի կամ խանի առևտրական հանձնակատարներ, ապրում էին մետաքս արտադրող գյուղացիների կամ մետաքսագործ արհեստավորների հավելյալ աշխատանքի հաշվին: Քանի դեռ գործում էր հարկային ու առևտրական այն մեքենան, որ իրացնում էր արտատնտեսական հարկադրանքի միջոցներով գանձվող հավելյալ այդ աշխատանքը, Իրանի շահը կամ Շիրվանի խանը կարող էին վստահ լինել իրենց սպասարկող խոջանների հավատարմությանը: Աչքի բնկնող փաստ է, որ անգամ 1721 թվականին, երբ Թուրքիայի զինված աղենամները — Գավութ խանն ու Սուրխայը — գրավեցին Շամախին, թալանի ենթարկեցին ամբողջ քաղաքը և մանավանդ, ուսս վաճառականներին, նրանք ձեռք չտվեցին քաղաքարճակ հայերին և մտածավորապես հայ վաճառականներին: Մինչդեռ, ընդհակառակը, լեռնցի այդ տսպատակողները կողոպտում ու ջարդում էին Ղարաբաղի հայ այն գյուղացիներին, որոնք իրենց սղնախների շուրջը համախմբված՝ ազատության հույսեր էին կապում ուսս զորքերի մերձեցմանը: Ավելի ևս լոյալ արամագրություն պիտի ունենային Շամախու և նոր-Ջուղայի այն առևտրականները, որոնց հարստության սղբյուրը տեղական արտադրությունը կամ արդյունագործությունը չէր, այլ Իրանի տարանցիկ առևտուրը: Նոր-Ջուղայի քալանթարը շահի հայ մտերիմներից էր, հաճախ նույնիսկ ոչ միայն նրա սեղանավորը, այլև նրա սեղանակիցը: «Ժողովրդական տրիբունը»<sup>1</sup>, ինչպես կոչում էին քա-

<sup>1</sup> Հմմտ. Thevendt, նույն տեղում, էջ 195 և հտ.:

չանթարներին ոմանք, հաճախ մեծահարուստ խոջաների գլխապետն էր սոսկ և ժողովրդի գլխին նրանց թելադրանքով ընկույզ ջարդող մուրճերից մեկը: Շահին սիրաշահելու համար քալանթարներից ոմանք կանդ չառան նույնիսկ մարգարեի կրոնն ընդունելու թելադրանքի առաջ<sup>1</sup>:

Մինչև XVII դարի վերջին տասնամյակները իրանահայ մեծատուն առևտրականների արտաքին առևտուրը հիմնականում սպասարկում էր Իրանի իշխող ֆեոդալներին. հայ առևտրականները արտահանում էին և վաճառում արդյունավճար ունետայի, հարկերի և տուրքերի ձևով ֆեոդալների ամբարներում կուտակված հավելյալ արդյունքը և մատակարարում նրանց արտասահմանյան շուկաներում դնված (գլխավորապես շրջուլթյան) ապրանքներ<sup>2</sup>: Մոսկովյան պետության հետ առևտրական դաշինք ստորագրող Նոր-Ջուղայի հայ առևտրականները տնտեսական սերտ կապեր ունենալով Իրանում իշխող վերնախավերի հետ, շոճեին նրանց ներհակող քաղաքական կողմնորոշում:

Մյուս կողմից, Նոր-Ջուղայի, Շամախու և Աղուլիսի առևտրականները միջնորդի դեր էին կատարում Գիլանի, Շիրվանի կամ Իրանի արդյունադրածական կենտրոնների (Քավրիզի, Քաշանի, Սպահանի և այլն) և օտարերկրյա շուկաների միջև: Նրանք չէին միազոգում հայկական բնաշխարհի ներքին շուկաները, չէին վերածում դրանք համազգային շուկայի:

Անմիջապես հայ գյուղացիների և արհեստավորների հետ տնտեսական շփում նրանք չոճեին դրեթև. նրանց խոշոր մասը սերտ կապ ուներ միայն հայ իշխող խավերի և առավելապես բարձր եկեղեցականների հետ: Հաճախ դրեթև միայն եկեղեցու միջոցով էլ նրանք կատարում էին իրենց ալդային պարտավորությունը իբրև հայ ընդհանրություն պատկանող հասարակախավ:

Որչափ XVII դարի հայ խոջաները միջնորդի դեր էին կատարում իրանական շուկայի և կապիտալիստական Արևմուտքի միջև, մասամբ հենց նրանց միջոցով էլ կապիտալիստական Արևմուտքը նպաստում էր երկրում իշխող ֆեոդալական հին հարաբերությունների լծացմանը: Ինքյան հայ «խոջայական կապիտալը» նոր արտադրական հարաբերությունների արդյունք չէր: Հայ խոջան իր

<sup>1</sup> Ջ ա ք ա թ ի ա Ս ա ռ կ ա վ ա գ, նույն տեղում, II, էջ 137, Խ ա չ ա տ ու ը ր ա բ ե դ ա Ջ ու ղ ա յ ե ց ի, Պատմութիւն պարսից, էջ 153, Chiron, նույն տեղում, էջ 266 և Chardin, նույն տեղում, III, էջ 145 և հտ.:

<sup>2</sup> Հ մ մ տ. Tavernier, նույն տեղում, I, էջ 460 և հտ., Pouillet, նույն տեղում, II, էջ 296 և հտ.:

հարստությունը կուտակում էր ֆեոդալիզմի հետ միազոդված առևտրական և վաշխառուական կապիտալի շրջանառության ճանապարհով և հասկանալի է, որ նա հանդես չէր գալիս ֆեոդալական իշխող կարգերի անտագոնիստի դերում: Սրանով էլ պայմանավորված էր ոչ միայն նրա անտեսական պրակտիկան, այլև նրա ազգային-քաղաքական ծայրահեղ շափավորությունը: XVIII—XIX դարերի ընթացքում է միայն, որ հայ առևտրական կապիտալի ազգային քաղաքական մտքի հորիզոններն սկսում են ընդարձակվել այն շափով, որչափով խղվում էին նրա նյութական կապերը թուրք-իրանական ֆեոդալիզմի հետ և տակավ առ տակավ թևակոխում կապիտալիզմի զարգացման առևտրա-արդյունաբերական ոլորտը:

Հասկանալի է թե ինչու մինչև XVII դարի վերջերը գաղութահայ խոջաները մտահոգված չէին դավառահայ ազգակիցների վիճակով, նրանց սոցիալական և քաղաքական դրությունը բարելավելու հարցով: Զուր չէր իր տակերից մեկում Նազաշ Հովնաթանը տրտնջում.

Ո՞ր է հանց խօճոյ, որ զայրաթ քաշի,  
Ընկած փէշաքրին գարդերն տաշի,  
Ամէնքն այլ կօսիտ են, սուր և նաշի,  
Կու թողեն, որ մարդ հալի ու մաշի  
Մանաւանդ հայոց ազգն է հար նըկուն,  
Որ չունի իշխան, թագաւորութիւն,  
Պատուական մարդուն կուտան նեղութիւն,  
Խօճայքն խմեն միմեանց ողջութիւնս:

Երկյուզած և տիրապաշտ՝ գաղթավայրերի մեծափարթամ խոջաները չհամակվեցին հայ բնաշխարհի ազատագրական տրամադրություններով: Առևտրական նրանց հաշվեկշիռը չէր համատեղվում մայր երկրում արժարժվող ազատագրական ակնկալությունների հետ: Թո՛ղ որ նրանք ամենայն իրավունքով «աշխարհային մտախիլներ» էին կուսում նման ակնկալությունների օտարալեզու խրախուսողների մոտ: «Հայկական ժընեկը» — ինչպես կոչվում էր Նոր-Ջուղան միսիոներների մոտ — զուգահեռը տարվում է կալվինական «հերձվածի» կենտրոն ժընեկի և հայկական «հերձվածի» կենտրոն Նոր-Ջուղայի միջև — Հայաստանի ազատագրման հարցը հիմք ուներ համարելու եվրոպական առևտրականների և

<sup>1</sup> Ն. Հ ո վ ն ա թ ա ն, Բանաստեղծություններ, էջ 80:

սրանց ծառայող կաթողիկ միսիոներները կարթին ամրացրած խայծ<sup>1</sup>, Անդամ XVIII դարի սկզբին, երբ իրանական բռնությունների և կեղեքումների պրակտիկան մոլեգնում էր նույնիսկ Նոր-Ջուղայում, արվարձանի խոջաներից շատերը չէին ուզում լսել Հոռմի մասին, որի ներկայացուցիչ արքեպիսկոպոս Պ. Պալման քրիստոնյա իշխանների անունից «ազատություն» էր խոստանում նրանց դավանադարձ ազգակիցներին<sup>2</sup>:

Գլխապահությունն ու քաղաքական օրինապաշտությունը մշակել էր Նոր-Ջուղայի խոջաններից մի տիպար, որի կենդանի պատկերը Սկրոզերը նկարագծել է եվրոպացի Ֆրանչիսկոսի և Սպահանից Ամստերդամ ժամանած հայազգի խոջա Սաֆարի միջև տեղի ունեցած հետապա դիալոգի ձևով.

«Ֆրանչիսկոս — Ի՞նչ խաբար ունիս ձեր աշխարհէն:

Սաֆար — Փառք աստուծոյ, աժանութիւն և խաղաղութիւն:

Ֆրանչիսկոս — Կուլէ իսկի խաբար չունի՞ս:

Սաֆար — Մեզ փնչ պէտք այ թագաւորաց կուլի վերա խօսիլ, ասացի մեր երկիրն խաղաղութիւն այ:

Ֆրանչիսկոս — Հէնց այ թէ ձեր թագաւորն խաղաղասէր լինի, դարայ շատ տարի այ կուլի չունի ինչպէս ձեր (իմա՝ հայոց — Ա. Հ.) թագաւորքն որ համիշա կուլի միջում էին, և երկիրն անհանգիստ:

Սաֆար — Ուղորդ այ մեր ազգն էսօր էլ դինչ այ քանց մեր թագաւորաց վախտին. գարա կուի չի դնալ, ու ամէն ազգի հետ ազատ ելումուտ ունի:

Ֆրանչիսկոս — Գլխաւոր (իմա՝ գլխահարկ — Ա. Հ.) և ծանր խարջ էլ ունի՞ք դուք:

Սաֆար — Այօ խարջ ունինք բարաթ բարաթ ամմա շատ ծանդր ոչ<sup>3</sup>:

Իր տեսակետից խոջա Սաֆարն արդարացի էր միանգամայն: Եթե անգամ համեմատաբար բարձր հարկ ու տուրք իսկ վճարելու լինեք ճա պետությունը, հազիվ թե առիթ տնննար հրաժարվելու իրեն համակած քաղաքական բարեհոգությունից: Գոհ էր, որ

<sup>1</sup> Հմմտ. Du Mans, նույն տեղում, Appendice, XLIX, էջ 367 և հտ., Chardin, նույն տեղում, VI, էջ 154 և հտ., 213:

<sup>2</sup> Relation d'une mission faite nouvellement par monseigneur d'archevesque d'Anqyre, Paris, 1702, էջ 61 և հտ. հմմտ. նաև Villote, նույն տեղում, էջ 146, 439 և հտ.:

<sup>3</sup> Schroederus, նույն տեղում, էջ 338 և հտ.:

Իրանահայ կարավաճաններն ունեին իրենց քարվանքաշին, շավու-  
 շը, Թֆանքշին, «ամեն փուրսատովն», այսինքն՝ զինված ամեն  
 տեսակի զենքերով և համոզված էր, թե «կարվան որ թուրքն  
 քեարվան կասէ հայոց լեզուաւ ասելն սարի, կարօղ վանելոյ, ար  
 աշխարհօրէն կասեն. զարշու կենալոյ կարօղ»<sup>1</sup>: Զուղայեցի քար-  
 վանատերերը տրամադիր չէին «կարվան» կամ «քարվան» բառի  
 միամիտ այդ ստուգաբանությունը ամրապնդել անձնական սխրա-  
 գործությունների օրինակներով: Միսիսներ կրուշիմսկին պատ-  
 մոմ է, որ 1718 թվականին, երբ ինքը ճանապարհորդում էր երկու  
 հարյուր մարդուց բաղկացած լավ զինված ու ընտիր ձիեր ունեցող  
 հայ մի կարավանի հետ, իրենց վրա հարձակվեցին ութ ավազակ:  
 Ղափանցի մի քանի հայեր խիզախորեն զենքի դիմեցին, փորձե-  
 լով բռնել նրանց և մերձակա դավառապետի դատաստանին  
 հանձնել շղթայակապ: Սակայն նոր-ջուղայեցիները, որոնք կա-  
 րավանի մեծագույն մասն էին կազմում, սկանչ շարին խիզա-  
 խողներին՝ գերադասելով յուրաքանչյուր ձիավորից մեծ մի գու-  
 մար վճարել բաշիրուզուկներին, քան թե կովի բռնվել նրանց հետ:  
 Այս օրինակը ցույց է տալիս, ի դեպ, որ մեր հիշատակած խոջա  
 Սաֆարի քաղաքական հեղուկները նրա անձնական խոհեմության  
 արդյունք չէր պարզապես, այլ պետական առևտրի մեջ ներդրավ-  
 ված ջուղայահայ խոջաների ընդհանուր մտայնության ցուցանիշը:  
 Նոր-Զուղայի խոջաները նման չէին այն փողատերերին, որոնք գի-  
 նովանում էին ոսկու զրնգոցից, կամ այն մեծատներին, որոնք ոս-  
 կու զորութեամբ որսում էին իշխանություն ու փառք: Քաղքենի ար-  
 տոնված մի դաս էր այդ, որի հասարակական մորալը սրտշվում էր  
 համրիչի ցուցանիշներով, մարդիկ, որոնք զուլխ խոնարհելով տի-  
 րողների առաջ՝ ջանում էին ճանապարհ հարթել դեպի իրենց բարե-  
 կեցությունը, անտարբեր դեպի ազգակիցների շարքաշ ու նեղ օրը:  
 Այս կարգի առևտրականները լիակատար հիմք ունեին խուսափելու  
 հատկապես ազգային քաղաքականության ստորջրյա ժայռերից և  
 պահանջված դեպքում փողի օգնութեամբ նվաճել անձնական հան-  
 զըստություն: Հայտնի է, թե վիթխարի ինչ գումարներ վճարեցին  
 նոր-ջուղայեցիները Սպահան ներխուժած աֆղաններին, իրենց  
 կյանքն ու գույքը փրկելու պատրանքով:

Նման տրամադրություններ դիտում ենք նաև Ագուլիսի հայ  
 վաճառականության շրջանում: Հավանորեն հենց նրանց մասին

<sup>1</sup> Schroederus, նույն տեղում, էջ 343 և հ.ա.:

էր Հովնաթանյանի արտունջը: Թուրք-իրանական առևտրական հա-  
նապարհների հետ կապված Ազուլիսի մեծահարուստ խոջաները  
1720-ական թվականներին, թիկոճար դարձնելով Ռուսաստանի  
օժանդակութանը ապավինող Դավիթ Բեկի ազատամբույժանը,  
ձեռք էին մեկնում Հայաստանի թուրք զավթիչներին:

Զի կարելի, հարկավ, այս տիպի առևտրականների տրամա-  
դրությունները հատկանշական համարել իրանահայ բոլոր խոջա-  
ների համար: Այսպես՝ Կրուչինսկուց առած մեր օրինակում զա-  
փանցիները ևս առևտրականներ էին, բայց այդ օրինակը ցույց է  
տալիս հենց, թե որքան մուսորված էր Տուրնբորը, երբ խաղաղա-  
սիրությունն ու զինախուսությունը համարում էր առևտրական գոր-  
ծին հարած հայ մարդկանց ընդհանուր հատկանիշ կամ երբ գրում  
էր, թե «հայերը ուրիշ ոչ մի բանի չեն խառնվում, բացի առևտը-  
րից»<sup>1</sup>: Չրանսիացի այդ գիտնականը սխալվում էր շարաշար ոչ  
միայն այն դեպքում, երբ հայ առևտրականների հատկանիշները  
վերագրում էր հայ ժողովրդին, այլև երբ նոր-ջուղայեցի խոջաների  
հատկութունները վերագրում էր բոլոր հայ առևտրականներին:  
Նոր-ջուղայեցի խոջաների «խաղաղասիրությունը» մի հատկու-  
թյուն էր, որից ազատ էին անգամ նրանց մերձավոր նախնիները:  
Հին-Ջուղայի գերեզմանատան մեջ կա զինվոր Մանուկի հիշատա-  
կին 1573 թվականին գրված գերեզմանաքարը, որի արձանագրու-  
թյունը ցույց է տալիս, թե քաջարի այդ զինվորը հեռաստանից  
վերադառնալիս զինված հարձակման դեմ պաշտպանվելու համար  
«նետաձիգ արար դօրքն և յոյժ յաղթեաց զինվոր թշնամին»<sup>2</sup>: Հե-  
տաքրքրական այստեղ Մանուկի սխրագործությունը չէ, այլ որ  
դրա համար նա արժանացել էր յուրայինների մեծարանքին: Արդեն  
առիթ ենք ունեցել ասելու, որ իրենց գույքն ու ապրանքը զննքով  
պաշտպանում էին նաև Շամախու հայ խոջաները:

Կասկած չկա, որ հայ առևտրականների թե՛ «առաքինի», թե՛  
«ախտաւոր» հատկութունները գիտելիս սրիտի աչքի առաջ ունենալ  
ոչ միայն ժամանակի արտաքին հանդամանքները, այլև դրանց  
գասաւթորման փոփոխուն ընթացքը:

Քաղաքական տրամադրությունների որոշ բեկում տեղի տնե-  
ցավ նույնիսկ Նոր-Ջուղայի առևտրական վերնախավերի մեջ: XVII  
դարի վերջերին էր այս, երբ սաստկացավ Սեֆյան Իրանի նեխումը

<sup>1</sup> Tournefort, նույն տեղում, II, էջ 158:

<sup>2</sup> С. В. Тер-Аветисян, Город Джуга, էջ 191:

և Պրա քայքայվող ուժերը սկսեց խոշոր հարվածներ հասցնել անգամ իր հետ կապված հայ խոջաներին: Գիտենք, մյուս կողմից, թե որքան վատթարացել էին այս ժամանակ նաև առևտրի ու հաղարդակցության սլայմանները Թուրքիայում: Այս հանդամանքներում հատկանշական է, որ XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբներին Նոր-Ջուղայում հրապարակ եկավ հայ մի մատենագիր ու տաղասաց, որը, ատենությունը լի դեպի Թուրքիան. և միաժամանակ իրանական պետությունից դիմադարձ, այլ գործադրության արժանի եռանդով քաղաքական ազատության հեռանկար էր որոնում հայերի համար դարձյալ հին, տրտրված սուլիններում, կաթուղիկ պետությունների միջամտության մեջ: Մեր խոսքը Որիի կրթասեր ժամանակակից Ստեփանոս Գաշտեցու մասին է:

Գաշտեցու ճախնիքը պատկանում էին այն հայերի՝ թվին, որոնք XVII դարի սկզբներին գաղթելով Գողթանի Գաշա (Ներքին Ագուլիս) գյուղից, բնակություն էին հաստատել Նոր-Ջուղայի՝ «գաշտեցոյ» թաղամասում:

Ինքն իրեն Գաշտեցին կոչում էր «կրտսեր պաշտօնեայ, բանասիրաց ապիրատ Ստեփաննոս Բասիլիոս՝ Շիր Փալանկեան ի Գաշտէն Գողթնեաց՝ սերունդ յԱսպահանայ»<sup>1</sup>: Կամ ավելի մանրամասն՝ «Սա եմ այր ազգու հայ և ծննդոց Հայկայ, որդի տէր տէր Բարսղի սրբացեալ և հոգիընկալ քահանայի, որդու խոջա Մելքումի՝ մականուն Շիր Փալանդ կոչեցելոյ, որդու տէր Ոսկանայ քահանայի, որդոյ Սենեքերիմայ առն նշանաւորի ի Գաշտէն Գողթնեաց, և դաստիարակեալ և սնեալ ի յեկեղեցուջ հայոց»<sup>2</sup>:

Մի տեղ դիմելով Աղեքսանդր Ջուղայեցի արքեպիսկոպոսին (հետագայում կաթողիկոս), Գաշտեցին ասում էր իր մասին. «Սա հոգևոր զաւակ ձերին պետականութեան և ի հօրէ կուսաւորչին սրբոյն և ի կրտսեր մանկանց եկեղեցույն հայոց»<sup>3</sup>: Պատրաստվելով հոգևոր կոչման, պատանի Ստեփանոսը Նոր-Ջուղայի դպրոցում անցել էր փիլիսոփայական և աստվածաբանական դիտելիքների լիակատար դասընթացը: Սակայն ուսումը նրա միտքը դեպի Հոսմ ծոնց: Գաշտեցին լքում է հայ եկեղեցին, երկար լափառում Ասիայում և Եվրոպայում: «Սա տրուպ աշխարհական և ոչ վարդապետ, սակայն ուսանիմ», — ասում է հետագայում իր մասին Գաշ-

<sup>1</sup> Հայկական ՍՍՏ Մատենագարան, ձեռ. № 8111, էջ 194ա:

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. N 9019, էջ 180բ:

<sup>3</sup> Նույն տեղում, ձեռ. № 8746, էջ 2ա:

տեցին<sup>1</sup>։ Այս անգամ ուսումնառութեան աղբյուրը դպրոցն ու գրականութիւնը չէր միայն, այլև տեւական դիտողութիւնները կյանքի փորձադաշտում։

«Վաճառականութեան աղտոգամ» կատարած շրջագայութիւնների ժամանակ Դաշտեցին պանդխտել էր բազմիցս գեպի հեռավար երկրներ։ «Միշտ նշդեհ և պանդուխտ շրջագայելով, երբեմն ի տանն Յունաց (իմա՝ Ռուրքիայում — Ս. Հ.) և ի յԱզիայ, երբեմն ի տանն Ֆռանկաց ի յԵւրոպեայ, մանաւանդ թէ և ի բոլոր երկրին շնորհաց, զոր և միայն մտածելն լսողացն է տալտակալի»<sup>2</sup>, գրում է նա։ Այցելել էր մասնավորապես Հռոմը, Վենետիկը և Լիվոռնոն, ուղեորութիւններ կատարել ոչ միայն կաթողիկէ, այլև բողոքական երկրներում։ «Ի մէջ բոլոր ազգի քրիստոնէից շրջեցաք, — հարում է Դաշտեցին, — Գաւ բազում անգամ հանդիպեցաք լութեռականաց և բալվինականացն, որք են ազգ անգլէացոց, շուեռաց, դենամարքից։ Մանաւանդ թէ և սնեալ եղէ ի մէջ հօլանդացոց, որք ամենեքեանն են արտաքո կաթողիկէ եկեղեցոյն և հակառակ փափին և ուղղափառացն»<sup>3</sup>։

Այցելած վայրերում Դաշտեցին հանդես էր գալիս հաճախ հայազավան եկեղեցու դեմ որպէս պոլեմիստ. հայտնում է, թե ինքը ամենուրեք սաստել ու լսեցրել է հակառակորդներին, «թէ ի Կոստանդնուպօլիս, թէ ի Իզմիւռն, թէ ի կողմն Եւրոպիոյ, ի Վնեժ, ի Լիվօռնին, և ևս ի մեծ Հոսմա կամ յայլ ուրեք...»<sup>4</sup>։ Բանավոր ելույթներից զատ նա ասպարեղ էր գալիս կաթողիկէ դավանանքի շատագործութեան համար ոչ միայն կտրուկ իր լեզվով, այլև սուր իր գրչով։

Դաշտեցու դավանաբանական գլխավոր աշխատութեանը կոչվում է «Համառօտ ընձեռումն վիճարանութեան ընդդէմ հերձուածողաց ազգին հայոց» և ամփոփված է տարբեր ժամանակներում գրված երեք գրքերում. 1) «Մաղախ փշրանաց» (1700), 2) «Կոչնակ ճմարտութեան» (1706) և 3) «Խնդիր ուղղութեան» (1714—15) վերնադիրներով։ Գրվածքը հիմնականում ուղղված էր նոր-Ջուղայի «տիեզերալույս» աստվածաբան և «գերհուշակ փիլիսոփա» հուշակ-

<sup>1</sup> Տ ա շ յ ա ն, Մ ա յ ր ց ու ղ ա կ, էջ 132։

<sup>2</sup> Հ ա յ կ ա կ ա ն Ս Ս Ռ Մ ա տ հ ն ա ղ ա ր ա ն, ձ ե ո. № 8111, էջ 3ա և բ։ Հ մ մ ա. ն ա լ ձ ե ո. № 8746, էջ 1 ր։

<sup>3</sup> Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 157ա։

<sup>4</sup> Ն ու յ ն տ ե ղ ու մ, ձ ե ո. № 781, էջ 29։



ված Հովհաննես Մրքուզ արքեպիսկոպոսի «Գիրք վիճաբանութեան՝ ընդդէմ լատինացի և յունաց երկաբնակաց» (Նոր-Ջուղա, 1687) աշխատութեան դեմ: Ըստ երևույթին, «Հակաճառութիւնից» առաջ էր գրվել հեղինակի մի այլ գործը՝ վերնագրված «Գիրք հակաճառութեան զոր արարեալ տեսոն Աղեքսանդրի արքեպիսկոպոսի Զուղայեցոյ և զպատասխան նորին Ստեփաննոսի Դաշտեցոյ առ հայրն իւր սրբազան», որի օրինակը պահւած է Հայկական ՍՍՌ Մատենադարանում<sup>1</sup>: Հայտնի է նաև Երեմիա Քեոմզուրճեանի օսման լատն պատմութեան համառոտագրութիւնը, որ խմբագրել և հավելումներով օժտել է Ստ. Դաշտեցին:

Դաշտեցին պաշտպանում էր կաթոլիկ դավանանքը և եկեղեցին, համոզված, թե հայադաւան վարդապետները խորշեցնում են պարզամիտ հայ ազգը «ի սիրոյ և միաբանութենէ մօրն լուսոյ կաթողիկէ եկեղեցոյն Քրիստոսի առ իսպառ կործանումն ազգիս»<sup>2</sup>: Իր այդ աշխատութիւնը նա գրում է «առ ի խելամտութիւն համալնեացն» և նվիրում «հարազատաց մանկանց հայոց»<sup>3</sup>: «Մաղախ փշրանաց» գրվածքի «Յառաջաբանութեան» մեջ հեղինակն ուղղակի ասում է, թե «իւրաքանչիւր ոք զիսէ բաւականապէս զորպիսութենէ դիպվածոց և անցիցն, զորս հանդիպեցաւ տառապեալ ազգիս Հայոց, թէ ի յոր աստիճանի սուզեալք անկան ի ստրկութիւն և ի ծառայութիւն այլոց ազգաց, այսքան ժամանակ կորուսանելով զթաղն ականակուռ և զնիզակն յաղթութեան»<sup>4</sup>: Դաշտեցին վեր է հանում հատկապես այն հալածանքները, որ ծավալվել էին Իրանում մանաւանդ դարավերջին. «Երբեմն ի բաց մերկանալով ի հայրենի ընչից և ազարակաց, յապարանաց և ստացածոց: Մանաւանդ բազումք զրկեցան յարենակից որդեկաց և ի դստերաց և կանանց»<sup>5</sup>: Բնութագրելով հայերի կացութիւնը, Դաշտեցին նշում է նրանց նկատմամբ կիրառվող ազգային խտրականութիւնը:

«Ազգն մեր սակս ոչ ունելոյ զհանգիստ կամ զտեղի ո՞ւր դիցեն զգլուխս իւրեանց, և այս ի կողմանէ զերչաց և ընդ իշխանութեամբ գրաւօղացն մերոց. որոց ազագաւ ոչ կարելով ի գործ արկանել զգինուրութիւն, զնօտարութիւն կամ յայլ իմն ծառայութիւն ի դրու-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 8746:

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. № 8111, էջ 41ա:

<sup>3</sup> Նույն տեղում, Յառաջաբանութիւն, էջ 194ա:

<sup>4</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 781, էջ 1:

<sup>5</sup> Նույն տեղում:

նրա արժունեաց, նաև ոչ տալով նոցա զզազար առ ի նեղելոյ և յաշիշտակելոյ, կամելով ևս խանգարել զարուեստ ամենայն խորհելով ի մէնջ յայլոց ազազաւ անճարակս եղեալք յոչ ուստեքէ գտանել զհնարս կեցութեան՝ հետեւեցան արհեստի վաճառականութեան, և այսպէս ցիր և ցամբ եղեալ շրջիմք ընդ երեսօք բոլորակի գնդի աշխարհիս»<sup>1</sup>:

Հեղինակը տրտնջում է, որ մյուս ազգերը կարողանում են պարտադիր դարձնել ճշմարիտ հավատը (իմա՝ կաթոլիկ դավանանքը) հենվելով քաղաքական ուժի վրա. հայերը չունին այն հնարավորությունը, քանի որ «մեր ազգքն իշխիմք դաւազանաւ քան թէ իշխեմք»<sup>2</sup>:

Ստեղծված դրությունից կա միայն մի ելք: Հայերը պիտի ազատագրվեն «անօրենների» հպատակությունից և ենթարկվեն համադավանների իշխանությանը: «Կարէր և նարդեանս վերստին հաստատել եկեղեցիս մեր, — ասում է նա, — եթէ ընդ իշխանութեամբ համադաւանից էամք հնազանդեալք յաստուածուստ»<sup>3</sup>:

Խոսելով համադավանների իշխանությանը ենթարկվելու մասին՝ Դաշտեցին նկատի ուներ կաթոլիկ եվրոպան: Նա համոզված էր, թե հայ եկեղեցին լքել է ընդհանրական եկեղեցու ճշմարիտ ուղին. «անճարակ լեալք, յերկիւղէ յիշխանաց օայլազգեաց թաղեացեալք... վասն զի և յաւուրս յայսոսիկ սակս փոքր ինչ նշանաց սիրոյ, զոր կամեցաւ ցուցանել ազգս մեր ընդ եկեղեցոյն Հոսոմ բազումս մատնեաց ի տառասպանս թէ ի քաղաքն Թեոդոսովիս և թէ ի մեծն Կ. Պոլիս, որ և աշօք մերովք տեսաք»: Այս կապակցութեամբ Դաշտեցին ևս բազմանք է հայտնում, որպէսզի վերահաստատվի հայ և լատին եկեղեցիների «Դաշանց թղթով» սահմանված միությունը<sup>4</sup>:

Դաշտեցին պատկանում էր XVII դարի վերջերում և XVIII-ի սկզբներին Նոր-Ջուղայում հանդես եկած լատինադավան նորատիպ այն առևտրականների թվին, որոնք բռնելով կաթոլիկ եկեղեցու փեշը, ակնկալում էին նրանից հայ ազգի փրկումը, թերևս նույնիսկ՝ ազգի կորցրած «սկանակուռ թագի» և «յաղթութեան նիզակի» դյուտը: Իդեալականացնելով եվրոպական կարգերը, հայ ազգի փրկությունից ոչ պակաս Դաշտեցին հրազում էր հայրենի երկրի ապագա մի իրակարգի մասին, որն անհամատեղելի էր իրանական և թուրքական բռնատիրության հետ:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 781, էջ 2 և հ.ա.:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 2:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 45: Նույն միտքը կրկնված է նաև էջ 29:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 45:

Դաշտեցիմ շէր իդեալականացնում հայերի տարանցիկ առե-տուրը: Նրա իդեալը ազգային արվեստագործությունն է և ազգային-քաղաքական կարգերը, որոնք հնարավորություն պիտի տային հայ մտավորականներին՝ «ի գործ արկանել զգինտորութիմ, զնօտա-րութիւն կամ այլ իմն ծառայութիւն ի դրունս արքունի»:

Հատկանշական են հրապարակախոսական տրամադրություն-ներով ու քաղաքական երգիծանքով հագեցած Դաշտեցու քառյակ-ները<sup>1</sup>: Նթե դավանարանական իր գործերը նա գրում էր խրթին զրարար, քառյակներում բանեցնում է հասարակ մարդկանց հաս-կանալի աշխարհաբար, և երբեմն նույնիսկ անդրադարձնում Նոր-Ջուղայի առևտրական և եկեղեցական վերնախավերի դեմ ժողո-վրդական մասսաների ընդերքում կուտակված զայրույթը: Նա շէր դառնում մասսաների գաղափարախոս ոչ սոցիալական իր դիրքով, ոչ էլ իդեական և քաղաքական իր կողմնորոշումով: Կեղեքելով մասսաների լսողությունն ու միտքը՝ նա հարվածում էր միայն Նոր-Ջուղայի այն հասարակախավերին, որոնք կապված էին իրա-նական պետութան հետ և դրական օրեէ սպասելիք չունեին հոռ-մեական եկեղեցու և արևմտյան պետությունների նկատմամբ ունեցած իր պատրանքից: Հետաքրքրական է այնուամենայնիւ Դաշտեցու «Ոտնաշարութիմս Կեղջուկ ի վերայ Նոր-Ջուղայեցոց» ոտանավորը. այդտեղ երգիծանքն ուղղված է հայազգի եկեղեցական և աշխարհական այն ջոջերի դեմ, որոնց սրտովը շէին Դաշտեցու մեծարած «օտարները», իմա՝ եվրոպացիները: Հարվածելով Նոր-Ջուղայի իր հակառակորդներին՝ Դաշտեցին գրում էր.

Շինիս դաստորն ու ծեսն էս այ,  
Որ օտարի տնաղ կանեն,  
Ինչ կու խօսին՝ շատ կէսն էս այ  
Որ օտարի տնաղ կանեն:

Թշնամորեն տրամադրված դեպի Նոր-Ջուղայի խոջայական վերնախավը, լատինամուլ հեղինակը ակամայորեն մերկացնում է մեծահարուստ խոջաների հարստահարումները, նրանց մտերիմ գործարքները «բրդերի», այսինքն՝ «մահմեդականների»<sup>2</sup> հետ, հան-

<sup>1</sup> Տե՛ս «Անահիտ», 1939, № 3:

<sup>2</sup> «Բուրդ» հասկացության նույն իմաստավորումը հանդիպում ենք նաև հեղինակի համերկրացու՝ Ջաբարխա Ազուլեցու մոտ: Տե՛ս Ա գ ու լ է-ց ի, նույն տեղում, էջ 103, 140, 147:

դամանք, որ պատճառ էր դառնում նրանց ազգային-քաղաքական  
գիմահեղման:

Քուրդի փող տան, կեռիք սրեն.  
Տափիկ-տափիկ հըմքեր բրեն.  
Ինչ տեսիլ չին սուտ կու գրեն,  
Դեռ օտարի տնազ կանեն...

Քուրդին սիրում, կզրորն ատում,  
Ոխն սրտում պիրկ պատատում.  
Դատմունքն ողջ մեղքով դատում,  
Դեռ օտարի տնազ կանեն:

Քանի հայ այ՛ տան պատե պատ,  
Ով բուրդացաւ՝ աղաթն է շատ,  
Սօլին հեռ սէր, պատրուն հեռ վատ,  
Դեռ ուրիշի տնազ կանեն:

Ում խեղճ տեսնեն՝ կը տան մահւամ,  
Էն էլ կանչէ գլխիդ զուլամ,  
Չուր դարգակին շինեն զուլամ  
Դեռ ուրիշի տնազ կանեն...

Ամեն սրտում լաք հազար քէն,  
Մինն դէ՛ս բաշէ, մինն դէ՛ն,  
Ամեն ծակից թուղու ձէն...  
Դեռ ուրիշի տնազ կանեն:

Ո՛ւմ կայ կարգալ, կամ ո՛ւմ կայ ջանք,  
Մեծ ու պոտիկ աստուածարանք,  
Վանքն է բուրդի արծաթահանք,  
Դեռ ուրիշի տնազ կանեն:

Աշրար պար են, շատ կէտն ծում,  
Մարդի միտն ուտում հում-հում,  
Մոծակ դարձել, արուն ծրծում,  
Դեռ ուրիշի տնազ կանեն...

Քալանթարին սուտ սերն զցեն,  
Բաներ կապ տան մէջն զցեն,  
Դեռ չին դրել՝ շուտ վէր զցեն,  
Դեռ ուրիշի տնազ կանեն...

Քայանթարն են գրել դէնն,  
Քուրդ դարուղի հետն այ ձէնն,  
Դափօվ զուռնով բերեն շէնն,  
Դեռ ուրիշի տնազ կանեն:

<sup>1</sup> «Էջմիածին», 1947, հունվար-փետրվար, էջ 52 և հտ., քաղված  
պրոֆ. Աշոտ Արքաճամյանի հրատարակութունից: Եւսյն քառյակները որոշ  
տարբերություններով ազգվել են նախապես «Անահիտ», 1939, № 1—3 հում:  
Քառյակները բերում ենք որոշ ընտրությամբ:

Գաղութնաճայ միջավայրում Դաշտեցու երկերը մի հայտնի շա-  
փով արտացոլում էին իրանական բանասիրությանը սպասարկող  
ճայ եկեղեցական և խոշաչական տարրերի դեմ քաղաքի ներքնախա-  
վերում կուտակված արամադրությունները: Այնուամենայնիվ քա-  
ղաքական իր դիրքավորումով Դաշտեցին դեռ շարունակում էր հա-  
ծել հայ բանավարությունների հին՝ արևմտակարողական շավիղ-  
ներում: Նա երազում էր տեսնել հայրենի երկիրը եթե ոչ սեփական  
իշխանության, դեթ արևմտակարողական կաթոլիկ դինաստիանե-  
րից մեկի տիրապետության ներքո: Իրանահայ ժողովրդի տրիրունը  
չէ նա իր հակաճառություններով ու քառչակներով, այլ պապական  
միսիոներներին ևս կանգնած պետությունների և սրանց հայ մեծա-  
րողների մոլորաշավիղ տեսարանն ու դեմագոգ հրապարակագիրը:

Ըստ էության հանդիսանալով Օրբի հին կողմնորոշման ուշա-  
ցած կուսակիցներից մեկը, — հանդամանք, որ ցույց է տալիս, թե  
եզակի երեույթ չէր բնավ Օրբի այդ կողմնորոշումը, — մի տեղ  
նա նույնիսկ մեծարում էր թուսկանական նուշն այն դքսի «հա-  
յասիրությունը», որի վրա մի ժամանակ որոշ հուշակեր էր դնում նաև  
Օրբին<sup>1</sup>: Նա շնչմարեց նոր այն հեռամեկարը, որի կոնսուլները գծա-  
գրվում էին Օրբի գիտակցության մեջ՝ սկսած այն օրից, երբ վերջի-  
նըս հրաժեշտ տվեց Արևմտյան Եվրոպային՝ հայերի քաղաքական  
բախար հյուսիսի մեծ պետության հետ կապելու համար:

Սպահանի հայ հռչակավոր արվարձանի վրա ծանրանալիս  
չպետք է անտեսել նաև սուղ այն տեղեկանքները, որ հասել են մեզ  
ճրա բնակչության վարի խավերի արամադրությունների մասին:

Տակավին Դարանաղցին էր վկայում, թե Մեխլուսի քարոզու-  
թյանը աջակցություն էին ցույց տալիս նոր-ջուղացի վաճառա-  
կաններից ոմանք: Հավասարի է, որ Նոր-Ջուղան էր հենց այն վայրը,  
ուր XVII դարի կեսերին երևան եկավ դերձակ Թումիկի անվան հետ  
կապված հայկական այն աղանդը, որը սուր լեզու բանեցնելով կղե-  
րի դեմ, մերժում էր եկեղեցու բոլոր յոթ խորհուրդները: Թումիկի  
հետևորդները ժխտում էին Քրիստոսի աստվածությունը, մեռելնե-  
րի հարությունն ու վերջին դատաստանը. նրանք պախարակում և  
խաբեբա էին հռչակում բոլոր կարգի եկեղեցականներին:

Այս շարժման ժողովրդական բնույթը երևում է նրանից, որ  
1642 թվականին Նոր-Ջուղայի առաջնորդ Խաչատուրը դումարեց  
եկեղեցականների և աշխարհականների «սյունհողոս մեծ», նախա-

<sup>1</sup> Հմմտ. Ա. Լիշան, Այրարատ, էջ 494:

սկես փակելով եկեղեցիների դռները և ի վերջս բանադրելով «ժանդ և դժնաբարս» աղանդապետին, որը համարձակություն էր սննդեղ մեծ աչք «սյունհողոսի» առաջ խսկ պաշտպանելու իր հաշտցիները, վատահ, որ իր կողմն է ժողովրդական խավերի համակրանքը<sup>1</sup>: Չե-  
 ոազիր մի ժամանակագրության մեջ Թումիկի աղանդը կապվում է  
 1642 թվականին Նոր-Ջուղայի առաջնորդ Խաչատուր վարդապետի  
 հրավիրած «սյունհողոսի» կողմից դատապարտված Սև Պետրոսի ան-  
 վան հետ: Ըստ սրում շեշտվում է, թե աղանդավորը «հերձուած խո-  
 սեցաւ իւր համախոհիւքն, իրրև զԱրիոս և Նեստոր և ստացաւ իւրն  
 համախոհ բազում»: Ի վերջս ասվում է, թե իրր Խաչատուր վարդա-  
 պետն «ի մէջ սիւնհողոսին հերքեաց զհերձուածս նոցին շար և ուղ-  
 դեաց զբազումս»<sup>2</sup>: Այն հանգամանքը, որ ձեռագիր տեղեկանքը դեր-  
 ձակ Թումիկի փոխարեն տալիս է մի այլ դատապարտվածի՝ Սև  
 Պետրոսի անունը, ցույց է տալիս, որ Թումիկի աղանդը չէր կապված  
 սուսկ մի անձի հետ, այլ հանդիսանում էր մի շարժում, որը համա-  
 կիրներ էր գտել Նոր-Ջուղայի քաղրենի մասսաների մեջ և ունեցել  
 մեկից ավելի դեկավարներ:

Մեր ձեռքի տակ չկան փաստեր Նոր-Ջուղայի այս շարժման  
 քաղաքական արձագանքների մասին: Այնուամենայնիվ իրանական  
 պեժիմի վատթարացումը դարավերջում առաջ բերեց ջուղայեցիների  
 մեջ նաև քաղաքական-ազատագրական նորորակ արամադրություն-  
 ներ: 1696 թվականին, Իվան Ալեքսեևիչ թագավորի մահվան  
 առիթով, Նոր-Ջուղայի մի ձեռագրում արձանագրվում է՝ «Ի թվին  
 փոքր սոմարի Չ Օվղան Մե օրն շորեքշաբաթ երեք ժամ անցեալ  
 էր աւուրն որ Մօսկօվին մեծ թագաւորն հանգեաւ ի քրիստոս բարի  
 վարուք և բարի արդեամբք: Նւ փոքր եղբարն որ էր ևս թագաւոր, քան-  
 գի երկու թագաւոր միասին թագաւորէին ի միում դահի հօրն իւ-  
 բեանց ...տիրէ ի վերայ տէրութեան հիւսիսականաց, որոյ տէր աս-  
 տուած երկայն աւուր տայցէ և բարի հաղթութիւն, ամէն: Եւ վերոյ  
 գրեցեալ երկու թագաւորաց անւանքն են երեց եղբօրն Յոհանն  
 Էլեքսեիշ և կրտսեր եղբօրն Պետար Էլեքսեիշ, այսինքն Յովհաննէս և  
 Պետրոս Էլեքսանի սրգի»<sup>3</sup>:

<sup>1</sup> Խաչատուր Արևիցա, նույն տեղում, էջ 115 և հա., և Ջաբար-  
 րիա Սարկավագ, II, էջ 69:

<sup>2</sup> «Մանր ժամանակագրություններ», XI—XVIII դարերի, I, էջ 302  
 և հա.:

<sup>3</sup> Ս. Տեր-Ավետիսյան, Յուլյակ Նոր-Ջուղայի հայերեն ձեռագիր-  
 ներ, էջ 1680 և հա.:



կան հարաձուն ազրեսիայից պաշտպանվելու գիտումով սրանք ի վերջո ջանք էին անում ձեռք բերել սլավոնական պետությունների և առաջին հերթին Ահհաստանի ու Մոսկովայի գլխակցությունը: Այս կարգի ձեռնարկությունների մեջ Մոսկովայի մասնակցությունը կարևորություն պիտի ստանար մանավանդ XV դարի վերջերից, երբ, թոխափելով Ռսկե Հորդայի լուծը, ռուսները հնարավորություն ստացան միջամտելու համակարգական գործերին՝ և մասնավորապես կենարոնացնելու իրենց սլաղորությունը հարավից սպառնացող օսմանյան ազրեսիայի վրա:

Հարավային սահմանագծերի համար Մոսկովյան պետության մղած այս պայքարի շարժառիթները նոր չէին: Տակավին XIII—XIV դարերում Ռսկե Հորդայի իշխողները պատերազմում էին Իրանում տիրող էլիսանների դեմ՝ վիճարկելով Անդրկովկասում գերիշխելու սրանց իրավունքը: Նվաճելով Ռսկե Հորդայի տիրույթները՝ Մոսկովայի իշխողները ժառանգեցին նրա հավակնությունները, հակամարտության մեջ մտնելով էլիսանների ժառանգությանը տիրացած սեֆեյիդների ու օսմանցիների հետ:

XV—XVI դարերի ընթացքում գրավելով Արմըր, թուրքերը ձրգտում էին ռաք դնել Հյուսիսային Կովկաս և տարածել իրենց տիրապետությունը Կազանի և Աստրախանի շրջանների «հավատակից» ժողովուրդների վրա: Իվան Ահեղը կանխեց նրանց: 1569 թվականին Աելիմ II-ը անհաջող փորձ արեց Աստրախան խուժելու, իրեն նպատակ դնելով ետ մղել ռուսներին Վոլգայի դեպարտանից և Հարավային Ռուսաստանի ու Հյուսիսային Կովկասի վասալական խանությունների վրա հենված՝ անջրպետ ստեղծել մի կողմից Մոսկովիայի, մյուս կողմից Իրանի և Անդրկովկասի միջև<sup>1</sup>: Որչափ XVI դարի կեսերին բացված էր Արխանգելսկի ծովուզին և որչափ առևտրական համաձայնության գալով անվիացիների հետ ռուսները Կասպի-Վոլգյան գիծը գարձնում էին միջազգային առևտրի այնպիսի մի ուղի, որ կարող էր ընդարմացնել թուրքական տրանզիտի ճանապարհը՝ Աելիմ II-ի ձախողումից հետո սուլթան Մուրադ III-ի կազմակերպած արշավանքը հանդիսանում էր Կասպի-Վոլգյան ուղին գոցելու և ռուսների առաջխաղացումը կանխելու նոր փորձ: Նոր այդ փորձի հաջողությանը օժանդակում էին ոչ միայն Արմըրի խաները, այլև Գաղստանի, Շիրվանի և Շաքիի այն ֆեոդալներն ու առևտրականները, որոնք սլաւննիդմի դադափարների մեջ

<sup>1</sup> Н. А. Смирнов, *История Азербайджана*, I, էջ 93, 103, 127:



պարտութիւնը շահախնդրութիւնները շահկապում էին թուրքական գերիշխանութեան ու թուրքական արանդիտի պաշտպանութեան հետ<sup>1</sup>:

XVI դարի երկրորդ կեսից ի վեր թուրք հրամանատարութիւնը և նրա կովկասյան դործակալները ջանում էին հրով, սրով և դերեվարութեամբ մարդաթափ անել Հայաստանի այն մարզերը, որոնք կարող էին հենարան դառնալ իր հայացքը դեպի Աև և Կասպից ծովերի ափերը դարձրած Ռուսաստանի տուռխտաղացման համար:

Քաղաքական որոշ հենարան ունենին ռուսները, տակաւի՛ն XV դարից, Վրաստանում, որի հետ ձգտում էին պայքարի ճակատներ հարդարել Թուրքիայի կողմը թերված Հյուսիսային Կովկասի ֆեոդալների և գլխավորապէս Թարքաւի շամխալների և ուլմիների դեմ: Վրաց իշխողների դիմաշրջումը դեպի հյուսիսի իշխողները գալիս էր շատ հնուց: Վրաց թագավորները զինակիցներ էին սրանում հյուսիսում տակաւի՛ն XII դարում՝ Դավիթ Շինարարի ժամանակ: Պայքար մղելով էլխանների դեմ՝ XIII դարում վրաց թագավորներից երեքը հետամուտ էին հովանի որոնելու Ռսկե Հորդայի տիրող Բերկե խանի ու նրա հաջորդների մոտ<sup>2</sup>: Հետագայում նման ակնկալութիւններով վրաց թագավորները դիմում էին Սարայի թաթար խաների ժառանգութեանը տիրացած մոսկովյան ցարերին:

Ռուս-վրացական հարաբերութիւնները սկսում են աշխուժանալ մանաւանդ XVI դարում՝ Կախեթի Լեւան ու Ալեքսանդր և Քարթլիի Սիմեոն թագավորների ժամանակ, երբ, հուսալով Մոսկովայի աջակցութեան վրա, նոր ուժ էր առնում Անդրկովկասի ֆեոդալական վերամիավորման ձգտումը՝ ուղղված Իրանի և Թուրքիայի օտարատիրութեան դեմ: Եթէ նեղված Իրանի և Թուրքիայի հարձակումներից վրաց թագավորները երբեմն հովանի ու օժանդակութիւն էին սրանում Արեւմուտքում, ալեկի հաճախ նույն նպատակով նրանք դիմում էին Մոսկովյան պետութեանը: XV—XVII դարերում վրաց այս դիմումներին Մոսկովյան ընդառաջում էր, ելնելով Մերձավոր Արեւելքում իր տարած քաղաքականութեան թելադրանքներից: Սակայն Մոսկովայի հակաթուրքական քաղաքականութեանը նախադրյալներ էր ստեղծում նաև ռուս-իրանական բարեկամութեան համար. այդ էին թելադրում ոչ միայն Իրանի և Թուրքիայի դարավոր

<sup>1</sup> Հմմտ. Н. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв. I, էջ 262 և հտ.:

<sup>2</sup> В. Spuler, նույն տեղում, էջ 61 և 97:

հակամարտը, այլև Իրանի և Ռուսաստանի միջև հաստատվող առևտրական կապերը<sup>1</sup>: Այս մի իրողություն էր, որ գաղտնիք չէր նաև օտարազգի դիտողների համար: Վկայակոչում ենք ավստրիական դեսպան Ռինդհուբերի «Ուղեգրությունը»: 1660-ական թվականներին գրված այդ գործի մեջ հեղինակը նշում էր. «Մոսկովցիները մեծ բարեկամություն ունին պարսիկների հետ, մասամբ պարսկական գեղեցիկ ապրանքների համար, մասամբ ի հեճուկս Ռուրքիայի, որի մեծ թշնամիներն են նրանք»<sup>2</sup>: Այստեղից մասնավորապես հետևում էր այն իրողությունը, որ Մոսկվան կարող էր պաշտպանել Վրաստանի շահերը միայն այն չափով, որչափով դա ստանություն չէր առաջացնի շահի և ցարի միջև: Միջամտելով Վրաստանի օգտին՝ ռուս դիվանագիտությունը կարող էր միայն ձրգտել այն բանին, որ պարսիկները չանհանգստացնեն Մոսկովյան պետությունը «հավատակից» վրացիներին<sup>3</sup>: Հասկանալի է, որ XV—XVII դարերում նույն այս սահմաններում կարող էին պաշտպանություն ակնկալել Մոսկովյան դիվանագիտությունից նաև քրիստոնյա հայերը:

Քաղաքականապես Ռուսաստանին մերձենալու տեսակետից ուշադրով է այն դերը, որ կատարում էին հայերը վրացիների և ռուսների միջև հանդուցավորվող քաղաքական կապերը ամրացնելու համար: Արդեն հայանի է մեզ, որ Արևմուտքի հետ վարած բանակցությունների ժամանակ վրաց թագավորները երբեմն օգտվում էին հայ բանագնացներից: Ըստ երևույթին նույնը կատարվում էր երբեմն նաև ռուսների հետ ունեցած բանակցությունների ժամանակ: Վրաց ազդյուրներին հայտնի է, որ Բամար թագուհու ամուսնությունը Յուրի Բոգոլյուբսկի իշխանի հետ գլուխ եկավ առևտրական գործերով այլևայլ երկրներում դեգերող մեծափարթամ հայ վաճառական Աբու Հասանի միջնորդությամբ, որին երիտասարդ ռուս իշխանը հանդիպել էր Ղրիշաղների կայանում<sup>4</sup>: Հետագայում նշվում են Վրաստանից Մոսկովիա մեկնող հայ դեսպանների և բանագնացների անուններ: Ռուս տարեգրությունները նշում են, որ 1492 թվականին (ըստ նորագույն պարզաբանությունների՝ 1483 թ.) Կախեթիայի Ալեքսանդր թագավորը Իվան III ցարի մոտ հղել էր մի

<sup>1</sup> «История дипломатии», I, էջ 330:

<sup>2</sup> Voyage de Laurent Ringhuber, էջ 13 (Առանձնատիպ):

<sup>3</sup> Հմտ. Вл. Татишвили. Грузины в Москве. Тбилиси, 1950, էջ 11:

<sup>4</sup> SL'a «Братская помощь армянам», 1898, էջ 551, պրոֆ. Սախա-նովի հոդվածը:

դեպքան՝ Մուրադ անունով: Թագավորի ստորագրած հանձնարարականի մեջ բացակայում է Մուրադ անունը. այդտեղ հիշվում է երեք այլ անուն, որոնցից մեկը կոչվում է «Хоземарт, шекинец»<sup>1</sup>: Կարծում ենք, որ վերջին անունը եղծված է պարսկապես. պիտի կարդալ «Хозе Марат, шекинец», այսինքն՝ խոջա Մուրադ, շաքեցի: Հավանորեն դեպքանը Շաքիի հայ խոջաներից էր:

Անգլիացի ուղեգիր Ջենկինսոնը հաղորդում է, որ երբ ինքը գտնվում էր Շամախում — 1569 թվականին էր այդ — վրաստանի թագավորի կողմից իրեն ներկայացրած հայ մի մարդ, որի պատմելով վրաց թագավորը, Թուրքիայի և Իրանի արանքում նեղված, պատերազմում էր այդ պետությունների դեմ, սուսի և խորհուրդ էր հարցնում՝ օգնության աղերսանքով Մոսկվայի ցարի մոտ դեպքան ուղարկելու մասին<sup>2</sup>: Վրաց ս ր թագավորի մասին է այստեղ խոսքը, Քարթլիի թագավոր Սիմեոնի<sup>3</sup>, որն իրոք պատերազմի մեջ էր Իրանի և Թուրքիայի հետ, թե՛ Կախեթի թագավոր Լեանի, որը 1564 թվականին հարաբերության մեջ էր Մոսկովյան պետության հետ, բայց խուսափում էր բացահայտ պատերազմ սկսել հիշված պետությունների դեմ: Դժվար է պատասխանել այդ հարցին, թեպես և պատմագրության մեջ առանց բավարար հիմնավորման ենթադրվում է Լեանը<sup>3</sup>:

Ավելի ուշ, 1592 թվականին Կախեթի թագավոր Ալեքսանդր II-ը Ֆեոդոր Իվանովիչ ցարի մոտ հղում է երկու բանագնաց՝ Խուրշիդ և Արամ անուններով: Այս անունները մտանում են դարձյալ բանագնացների հայկական ծագումը<sup>4</sup>: Մի քանի տարի անց, 1598 թվականին Ալեքսանդր թագավորը դեպքանի լիազորություններով Մոսկվա է ուղարկում դարձյալ մի հայի՝ «հայադավան» Մուղալ բեկի սրդի Լեոնին<sup>5</sup>:

Այս բանագնացների դերը լիովին արժեքավորելու համար մտաբերենք այն հանձնարարությունները, որ վրաց Ալեքսանդր և Սիմեոն թագավորների կողմից ստանում էին հայ բանագնացները ոչ միայն Ռուսաստանում, այլև Իտալիայում ու Սպանիայում հակաթուրքական լիզա սաեղծելու ուղղությամբ:

<sup>1</sup> С. Белокуров, Сношение России с Кавказом, М., 1889, I, էջ XIII և XXII և հա.: Հմմտ. К. В. Базилевич, Внешняя политика русского централизованного государства, М., 1952, էջ 410 և հա.:

<sup>2</sup> Հ. հ ա կ ո թ յ ա ն, Ուղեգրություններ, Ա., էջ 390:

<sup>3</sup> С. Белокуров, Նույն տեղում, Введение, L. XXXII և հա.:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ X, XIII և CIV, նաև 262 և հա.:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 321, 323:

Թուրքիայի դեմ պաշտպանվող Մոսկովիայի և Իրանի շահերը օբյեկտիվորեն համընկնում էին: Շահ Մուհամմեդ Խուզարանդան (1578—1587) դիմում էր Մոսկվա և ազգմական դաշինք խնդրում ընդհանուր թշնամու դեմ. իբրև հատուցում առաջարկում էր ուսաներին Գերբենտը և Բաբուն: Փոքր-ինչ հետո, 1588 և 1593 թվականներին նույն առաջարկը կրկնեց Շահ-Աբրաա I-ը: 1594 թվականին ուսաները գրավեցին Թարբուն և բերդ կառուցեցին Սուլայի դեմ: XVI դարի վերջերին և XVII սկզբներին նրանք մի շարք ամբույթյուններ հիմնեցին նաև Սունժա և Թերեք գետերի վրա: Այդ ժամանակներում շամխալների և ուլմիսների երկիրը հանդիսանում էր իրանական տերերի և թուրք ու ոսլա մրցակիցների ազդեցություններին ենթակա պլացգարմ:

Թուրքերի գրաված Արևելյան Անդրկովկասում հայերի և աղբրեջանցիների արամադրությունները հակված էին ուսաների կողմը: Օգտագործելով այս հանգամանքը, նրանք 1604 թվականին Բուսիլինի և Պլեշչեկի գլխավորությամբ արշավանք կազմակերպեցին դեպի Անդրկովկաս՝ կամենալով բոս Երևույթին ընդառաջել հարավից արշավող Շահ-Աբրաասին և իրագործել Գերբենտի, Բաքվի և Շամխաու շրջանների միակցումը Մոսկովիային: Ռուսների արշավանքը պարտություն կրեց: Կենտրոնական Ռուսաստանում արծարծված գյուղացիական պատերազմները և լեհական ինտերվենցիան միջոց չավին դուրս բերելու կասպյան եզրի միակցումը:

Թուրքական ազդեցության դեմ մի պահ ազգմական պատվար էր ստեղծված նաև Սև ծովի հարավ-արևելյան անկյունում: Գիորգի Սահակաձեի ապստամբության վերջում էր այդ: Ուշադրավ է այդ տեսակետից ժամանակակից հայ ազբյուրներից մեկի նշումը. «Թվ. ՌՉԳ (1625), ուսուզն առավ Տրապիզոն Մե (=240) գայեղներով, և ի սոյն ամ/ի/ վրացի Մովր/ովն/ ամ/ենայն/ շարդեայ»<sup>2</sup>:

Սակայն ուսաներին չհաջողվեց ամբանալ Անդրկովկասում նաև այդ անգամ: XVII դարի ընթացքում, մտահոգված գլխավորապես արևմտյան սահմանազծերի ամրացմամբ՝ ուսաներն ի վիճակի չեղան լրջորեն զբաղվելու հարավային ծովազրեքի հարցերով: Այնուամենայնիվ Մոսկովյան պետության ընդհանուր հաջողությունները, ինչպես ամենուրեք, այնպես նաև Անդրկովկասում, խոր տպավորություն էին գործում ժամանակակիցների վրա:

<sup>1</sup> Н. А. Смирнов, *Ученые и писатели*, т. 1, с. 138 և հ. և 151:

<sup>2</sup> Հայկական ՍՍԽ Մասենագարան, ձև. № 1040, էջ 31ր:

Երբ XVIII դարի սկզբին Օրին 250 տարվա անցյալ էր տալիս հայերի մոսկովյան ակնկալություններին, թվում է, թե հայերի այդ ակնկալությունները նա կապում էր համաշխարհային-պատմական մի անցքի — Կ. Պոլսի 1453 թվականին սեղի ունեցած կապիտուլյացիայի հետ:

Հիրավի, XV—XVII դարերում Արևմուտքի նկատմամբ հայերի ունեցած ազատագրական ակնկալությունները սկսում էին համատեղվել Մոսկովյան պետութեանը վերագրված պատմական դերի հետ: Դարերի ընթացքում հայ միջավայրում մշակվել էր այն պատկերացումը, թե «Հոռոմից» է լինելու Հայաստանի ազատագրումը: Եթե հաշվի առնենք, որ Կ. Պոլսի անկումից հետո թուրքական լծի տակ տառապող քրիստոնյաների մոտ արմատ էր ձգում այն հայացքը, թե Մոսկովյան հանդիսանում է «երրորդ Հոռոմը» և որպես այդպիսին Բյուզանդիայի ժառանգը, այլ խոսքով՝ Բյուզանդիան նվաճած թուրքերի լծի տակ բռնութեանից տառապող քրիստոնյաների ազատարարը, դժվար չէր հանդել ի վերջո այն հայացքին, թե Մոսկովյան է դարձյալ, որ պիտի հանդիսանա Հայաստանի ազատութեան հղոր ապավենը:

«Ձարմացած Եվրոպան,—գրում է Մարքսը,—որ Իվան III-ի իշխանութեան սկզբում նույնիսկ հազիվ էր նշմարում Լիտվայի և թաթարների արանքում սեղմված Մոսկովիայի գոյութունը, ապշահար դիտում էր իր արևելյան ծայրերում դրոպա բարձրացրած հսկայական խմպերիայի անակնկալ երևումը և ինքը՝ թուրք սուլթան Բայազետը, որի առաջ զոդում էր նա [Եվրոպան]՝ առաջին անգամ մոսկովյաններից լսեց հանդուզն ճառեր»<sup>1</sup>:

Հանդուզն այդ ճառերի հեռավոր արձագանքները հասնում էին նաև սուլթանների լծի տակ հեծող հայ մարդկանց ականջներին: Հայ ժողովուրդը չէր կարող անանդյակ լինել վճռական այն դերին, որ կատարեց Մոսկովյան պետության առաջացումն ու ամրացումը Ռսկե Հորդայի կործանման և էլիսանների պետության նվազման համար: Նրանք տեղյակ պիտի լինեին անշուշտ, որ առաջին անգամ ուսաները շոքեցին թաթար «նետողների» կրծքին:

Մերձվուրդյան շրջանները՝ Ղրիմ և հարավ-արևմտյան Ռուսաստանի գաղթած հայ մասսաները սերտ շփման մեջ էին այդ վայրերի ռուս բնակչության հետ: Մոնղոլ-թաթարական նվաճողների հարրատահարումներին ենթարկված ուսաների և այլ ժողովուրդների պես

<sup>1</sup> K. Marx, Secret diplomatic historie of the XVIII century, էջ 81:

նրանք ևս ատելութեամբ էին լցված ինչպէս դեպի Ռսկե Հորդան,  
 այնպէս նաև դեպի սրա «ժողովրդային» նկատմամբ հավակնու-  
 թյուններ առաջադրող թուրք բռնատերերը: Ծիշա է, հայկական  
 բնաշխարհից պոկված, գերազանցօրէն ակնկալութեան շահախնդրութեան-  
 ներով սահմանափակված հայ դադթապայերը ոչ ի վիճակի էին, ոչ  
 էլ իրավազոր քաղաքական ակնկալութեաններ կապելու: Մոսկվայի  
 հետ: Հայկական բնաշխարհի հետ գլխավորապէս ազգային-եկեղե-  
 ցական շահախնդրութեաններով միացած՝ հյուսիսային գաղութներից  
 ավելի շուտ, քաղաքական բնույթ կարող էին ստանալ Ռուսաստանի  
 և հայկական բնաշխարհի անմիջական շփումները: Ուշագրութեան  
 արժանի է, որ XIV—XV դարերի ընթացքում «ուսու» կամ «ըսուզ»  
 անունը «Բուզ», «ըմուզ-խաթուն» կամ «ըմուզ-բէկ» անձնանուն-  
 ների ձևով թափանցել էր մինչև իսկ Վասպուրականի կողմերը<sup>1</sup>:  
 Արևմտյան Հայաստանում գրված մի այլ հիշատակարանում, որին,  
 որքան հիշում ենք, հանդիպել ենք Կյուլեսերյանի կազմած Անկյու-  
 րիայի Կարմիր վանուց ձեռագրաց ցուցակում, նշված է նույնիսկ  
 «Մոսկով» անձնանունը:

Հայ ժողովրդի՝ ուսններից ունեցած քաղաքական ակնկալու-  
 թյան ցայտոն վկայութեան է հանդիսանում «Մագուհի մի ևս ան-  
 սայ ի քաղաքն յԱնդունիայ» պոեմը, որ գրված պիտի լինի հենց  
 Իվան III-ի ժամանակ՝ Կ. Պոլսի վերջինիս ձեռքով ազատելու այն  
 վառ հույսերի կապակցութեամբ, որ առաջացել էին թուրք-հպատակ  
 քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում նաև հայերի մոտ: Ինչպէս  
 վերջերս ցույց ավելի բանասեր Աս. Մնացականյանը, մի քանի վա-  
 րիանտներով մեզ հասած այդ պոեմի հերոսը Իվան III ցարն է, որից  
 նրա հույն հարսնացուն, Սոփիա Պալեոլոգը, իբրև սիրո հատուցում  
 պահանջում է բյուզանդական մայրաքաղաքի ազատագրումը: Բնու-  
 րոշ է սակայն, որ պոեմի հեղինակները միայն ցարից կամ Մոսկ-  
 վայից չէին սպասում Արևելքի, այդ թվում նաև Հայաստան աշխար-  
 հի, ազատագրումը: Մոսկվայի ցարից գաա իբրև ազատարարներ  
 պոեմում հանդես են բերված նաև ֆրանկները և Հռոմի պապը.  
 բանը հասնում է նույնիսկ նրան, որ պոեմի վարիանտներում Մոս-  
 կով քաղաքը գետնազրկված է «Ճորթուղալում», իսկ Հռոմի պապի նըս-  
 տոցը՝ փոխադրված Մոսկով: Պոեմի վերջվածքում ակնբախ են  
 ժողովրդական դիտակցութեանը ազգած մեզ նախածանոթ ազա-  
 տագրական լեզուների հետքերը:

<sup>1</sup> Ն. Ա. Տ ա ո յ ա ն, «Անձնանունների բառարան», Գ, էջ 330:

Տրդատ և սուրբ Գրիգոր  
 Եկան, չիւր եղան Հոսմայ,  
 Չորս Հարիւր մարդ սնդ թողին,  
 Ալամանր կռչեցան նորայ:  
 Ֆաանկն այն գալին վերայ  
 Հարկ կու տայ, ծովուն գուրս կու գայ,  
 Թ՛.— Երթամք, զերուսազլմ աւնումք,  
 Ալլազգաց ձեան շի մնայ:  
 Ոսկի գունն սուրբ Յարութեան  
 Մեր ձեռքն զեկմք ի վերայ,  
 Շինեմք գաւերեալ տեղերն,  
 Որ ցնծան ամեն քրիստոնեայ,  
 Շրջիմք Շաշատան բազար,  
 Մինչ Ռաւրէզ, այլ տեղ շի մնայ,  
 Խորասան բազար մանումք,  
 Ուր մարմինն է սուրբ Սարգսայ,  
 Գաւնամք, գամք էջմիածին  
 Տէրն Էրէր զկամարն ի վերայ,  
 Աջովն սուրբ Լուսաւորչին  
 Ասանց կրակ մեռն կեփվի ի նմայ:

Հայերի՝ Մոսկվայից ունեցած ակնկալութչունները արտահայտ-  
 ասությաւն են գտել ճատե Վաչորդ գարում գրված չափական մի ալ  
 երկում:

Եստ թափառած ու աշխարհ՝ տեսած Կարապետ Բաղիշեցին՝  
 գրում էր.

Ի սաւնամանիք չիւխան  
 Է Ուսուս սզգն բրնական  
 Աշխարհն է նոցա Մոսկով  
 Մինչ ի ծովն Կազրիական,  
 Եւ սզգին նոցա գերի է  
 Թախարբն նեաողական.  
 Լայն ՚ւ արձակ սնկեալ է նա,  
 Որ հասնի մինչև ի Կաֆաջն<sup>2</sup>:

Բաղիշեցու այս ստղերը գրվել են

Ի թվին հալոց սզգին  
 Ինն հարիւր և նրսուն ինն թվին՝

որ նշանակում է մ. թ. 1550 թվականը<sup>3</sup>:

<sup>1</sup> Աս. Մ ն ա յ ա կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարւան ժողովրդական  
 երգեր, Երևան, 1956, էջ 272 և հա.: Հմմտ. նաև էջ 565:

<sup>2</sup> Բազմափեղ, 1880, էջ 99, հմմտ. «Հանդես ամսօրյա», 1937, էջ 330  
 և հա.:

<sup>3</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 33, էջ 139ր: Սա Բա-  
 ղիշեցու «Արարածոց տաղն» է, վերնագրված «Մտանաւոր ի վերայ սրդոցն  
 Եւջի, որ բաժանեցին աշխարհս»:

Քաղիշեցիին մեծարում էր Մոսկվան որպէս մի պետութեան, որ կոչված է ազատագրելու Ռուսքիայի գրաված երկրամասերը: Կանխերով պատմական դեպքերը՝ տաղասացն ընդարձակում է Մոսկովյան պետութեան սահմանները մինչև Կասպիական ու Ազովյան ծովերը:

Հայերը կարող էին խմացած լինել, որ հաճախ «Հոսմայեցիներն» ու «Քոսանկներն» իսկ ձգտում էին իրենց «խաշակրութուններն» մեջ ներգրավել Մոսկովայի գահակալներին: Ֆլորենտայան ունիայի օրերից ի վեր պապական Հոսմը ձգտում էր կաթոլիկութեան գիրկն առնել ուսական եկեղեցին: Հոսմի գլխավորութեամբ կաթոլիկ պետութունները ձգտում էին Մոսկովյան պետութեանը մասնակից դարձնել օսմանցիների դեմ ձեռնարկած իրենց արշավանքներին: XVI դարի սկզբներին Մաքսիմիլյան կայսրի գեսպանը ուսմերին էր վերադասում Անդրկովկասի և Հայաստանի օրուպացման խնդիրը: Մեծապէս աճած պիտի լինեին ուսմների նկատմամբ հայերի ակնկալութունները մանավանդ հաջորդ, XVII դարում, երբ ակտիվացան ուս գիմանագիտութեան, հետախույզների և վերջապէս նաև ուս հատուկ գործասների գործողութունները Կովկասում: Վերհիշենք, ի վերջո, հայ այն գործիչների ընթացքը, որոնք վրաց Թեյմուրազ I և Գիորգի XI թագավորների հետ ստորի էին ելնում Իրանի կամ Ռուսքիայի դեմ, միաժամանակ հանդես գալով Անդրկովկասում ուս մարտական ուժերին ընդառաջողների դերում:

Բնական է, որ Մոսկովայի նկատմամբ հայ ժողովրդի ունեցած ակնածութունը մեծապէս աճած լիներ մանավանդ XVII դարի երկրորդ կեսից սկսած՝ Ուկրաինան Ռուսաստանի հետ միավորվելուց հետո: Այս շրջանում Մոսկվա պիտի ուղղեին իրենց քաղաքական հայացքը նաև բազմաթիվ հայ այն գաղթականութունները, որոնք հաստատվել էին Լեհաստանում, Ղրիմում և Ուկրաինայում:

Մասնակցելով հակաթուրքական կողիցիայի կազմակերպմանը՝ հայ բանադնացիները ալեկի պիտի հավաստիանային Մոսկվայի պետութեան նկատմամբ Արեւմուտքում եղած ակնկալութուններին, մանավանդ 1670 թվականից հետո, երբ Մոսկվան պատերազմական ակտիվ գործողութուններ սկսեց Ռուսքիայի դեմ: Հայ բնաշխարհի ու գաղթաշխարհի համակրանքն այդ պատերազմի ընթացքում օսմանցիների դեմ կովոյ գաշնակիցների կողմն էր: Նշանակալից է, թե ինչպէս էր ներկայացնում այդ պատերազմի արդյունքները Զաքարիա Ազուլեցին. «Թէ Մօսկօվ, թէ Լեհ, Թէ Տրիջան (?) այստեղ կոխվ տվին, օսմանցանէ 185 հազար



մարդ քապանեցաւ: Մին դարդակ բէրթ առին (օսմանցիք), դարձան, եկին Ատրանայ թէ թագաւոր, թէ զօրք: Օսմանցիք ալապէս մնացին խաչատառակ»<sup>1</sup>:

Պատմական մի հիշատակարանից տեղեկանում ենք 1677—1678 թվականների ուսու-թարքական պատերազմի հետ կապված մի լեզենդի մասին, որը, պետի կարծել, թափանցել էր Մեծ Սյունիք կամ Ագուլիս՝ Ռուսաստանի հետ շփման մեջ գտնված առևարականների հետքերով: Հիշատակարանը պատկանում է Ագուլիսի սուրբ Մինաս եկեղեցու Հայտնավորքին, գրված 1679 թվականին—«Ի հայրապետութեան սուրբ էջմիածնայ տան Յակօբ սրբազան կաթողիկոսի... և յառաջնորդութեան Տաթևու սուրբ վանիցն Յովհաննէս քաջ ուրունապետի, որ մակածուն Շապանի ազալ տաի — և ի թագաւորութեան պարսից շահ Սուլէյմանի՝ աչք կնատ և տկար բնաւորութեամբ և ի թագաւորութեան օսմանցւոց սուլթան Մահմուդի՝ աչք հզօր և գոռոզի, որ տիրեաց ամենայն տանն Արևմտեան և Մովսն Ուկիտանոս յայս կոչս և յայսմ ժամանակի տիրեաց Կրիտոս կղզոյն ամենայն թումանօվն և սահմանօվն, 28 ամ կոտորումն առնելով անմեղ քրիստոնէից: Եւ անտի դարձաւ Էսոս գլխամենես բուն քաղաքն լեհաց կաւրեն թումանօվն և սահմանուն. և անտի դարձեալ գոռոզացեալ հպարտութեամբ նման սագալէլի՝ որ կանգնեաց ընդ դասն ասելով՝ իմ է աշխարհս՝ ում կամիմ տամ՝ ել ի վերա թագաւորին Մոսկովա, աչք երկիւղած և բարեպաշտի: Եւ նա ի մտադրութեան կղեալ յազագս աջողումն բախտին գոռոզիս: Եւ յեա որոյ յիշեաց զբան մարգարէին՝ որ ասէ անկցին ի կողմանէ քումմէ հազարք և բիւրք ընդ աջմէ քումմէ և սոս քեզ ինչ ոչ մերձեսցին: Ապա արկեալ վիճակ տչսու կերպիւ. առեալ զպատկեր խաշելութեան տեառն մերոյ փրկչին պարզեաց ի վերալ գեանի աչսու խորհուրդով՝ եթէ կանգնիցի ի վերա ոտին առանց ուրուք ձեռնառութեան՝ ապա յաջողումն իցէ ընդդէմ ճակատի ունել գոռոզին. ապա թէ ոչ՝ համոզեսցէ ի խաղաղութիւն և կամ հարկատու լիցի. և տչսու պայմանովս կացեալ յազօթն պաշտամամբ և պատարագօք եօթն օր: Եւ ապա եկեալ թագաւորն առ ընթեր պատկերին. և եղև զարմացումն մեծ. զի առանց ուրուք ձեռնառութեան կանգնեալ պատկեր փրկչին, և դարձուցեալ զերեսս իւր բարկութեամբ՝ դէմ հազարացոցն, և ուրախացեալ թագաւորին՝ փառս ևս աստուծոյն զօրացեալ ի շնորհաց հոգւոյն, ապա վառեցաւ ի պատերազմ, և հարեալ կոտորեաց և

<sup>1</sup> Զ ա ք ա թ ի ա Ա գ ու լ ե ց ի, նույն տեղում, էջ 106:

արար փախստական զօսմանցիսն, և ամօթալից դուռդն սուլթան Մուհամատ դարձաւ ի Կոստանդնուպօլիս»<sup>1</sup>։

Հայերի ակնկալությունները Ռուսաստանից պիտի աճելն մանավանդ 1687 թվականից հետո, երբ Մոսկովյան պետութիւնը մըտաւ հակաթուրքական կռաւիցիայի մեջ։ Ժամանակակից հայ հիշատակարանները արձանագրում են թուրքերի դեմ ելած ֆրանկներու և ռուսներու համատեղ գործողութիւնները, դրա մեջ որոնելով «քրիստոնեաների» ու բնականաբար նաև հայերի ազատութիւնը։ 1689 թվականին Նորագաւթնոմ Սուրիաս Գառնեցու գրած և մեր կողմից քանիցս վկայակոչված հիշատակարանը, պատմելով «Ֆրանկներ» դեմ սուլթան Մահմուդի դաժանութիւնները՝ նշում է, թե սուլթանը «կամէր զլուսաբուխ աթոռն առաքելոց, որ է մեծն Հաոմ, զայն ևս առնուլ և ի սրբոց առաքելոց Պետրոսի և Պօղոսի եկեղեցոյ մէջն ազան տալ»։ «Բայց նախախնամութիւն ամենազօրին աստուծոյ,— հարում է հիշատակարանը,— ոչ անտես արար զհաւատացեալքս անուան իւրոյ և զթացեալ զարեամբն իւրով փրկեալ զնորս Իսրայէլ։ Եւ ետ միաբանութիւն, զօրութիւն և յազթութիւն թագաւորացն քրիստոնէից, որք միաբանեալք ի միասին, հանդերձ թագաւորան Հիւսիսոյ և զօրութեամբ սուրբ խաչին Քրիստոսի ամենեքեան ի դիմի հարան երկրորդին Գողիազու և հալածական արարին զնա զօրօք իւրովք ազատեալ ի նոցանէ զերկիրն ամենայն հանդերձ երկրան Իլովայոց։ Առին և զմայր քաղաքն Ընկուզաց (=հունգարացոց—Ս. Հ.) զՊուտում՝ զայլ քաղաքս և զկղզիս յոլովս և տիրեցին մինչ ցՄակեդոնիա և մինչև ցԱդրիանուպօլիս և այժմ խնդրեն ի յօսմանցոց զմայրն ամենայն քաղաքաց՝ զՄեծ Կոստանդնուպօլիս։ Իսկ թագաւորքն օսմանցոց կամին խաղաղութիւն արկանել, ուխտ և դաշինք ի միջի հաստատել։ Բայց թագաւորքն ֆրանկաց քրիստոնէից ոչ կամին։ Այլ և կատարած սոցա Աստուծոյ է գիտելի, եթէ ուր հասանիցէ»<sup>2</sup>։

Չարտի կարծել սակայն, թե հայերը սահմանափակվում էին սոսկ Թուրքիայի դեմ ձեռնարկված հակահարձակումների բարչացակամ նկարագրութիւններով։ Հակաթուրքական կռաւիցիայի պետութիւններին նրանք բերում էին ոչ միայն իրենց համակրանքը, այլև նրանց ընդառաջելու իրենց պատրաստակամութիւնը։

<sup>1</sup> Տե՛ս՝ «Տետրակ ճանապարհորդութեան Յովհաննէս եպ. Շահխաթունեանի», Հայկական ՍՍՒՄ Մատենադարանի արխիւ, Ջանազան անձանց արխիւ, թղթ. 55, վազ. № 17, թթ. 28ա—29ա։

<sup>2</sup> Հայկական ՍՍՒՄ Մատենադարան, ձեռ. № 1512, էջ 557բ—558ա։

Մոսկովյան պետության և նրա արևմտակարգական պինակիցների հակաթուրքական քաղաքականությունը օժանդակում էին անգամ իրանական պետությունն ու սրա հանձնարարություններով Ռուսաստան ժամանող հայ առևտրական ընկերության ներկայացուցիչները:

Տակավին 1660 թվականին առևտրական իր ուղեկիցների հետ Երանից Մոսկվա է ժամանում խոջա Ջաքար Սահրատյանը իր հետ բերելով ազամանդակուռ այն գահճը, որ ցուցադրված է Կրեմլի Ջինապարառում: Վավերագրերում խոջա Ջաքարը նշված է որպես իրանական վարչապետի (էհթմադովլայի) «գործակատար»: Նրա հայրը, Սահրատ Շեհրիմանյանը, Սպահանի նշանավոր այն առևտրականներից էր, «որի գործակալները երթևեկում էին բոլոր պետությունները» և մասնավորապես ինքը խոջա Ջաքարը ուսա արքունիքից մեծարժեք փրեզեններ ներմուծելու պատվեր էր ստացել: Հարկ եղավ, որ իրանական վարչապետի թուլյովությունը հասուկ մարդիկ հղվեին Հնդկաստան՝ ցարի պատվիրած ապրանքները գնելու: Ներկայացնելով ուսա արքունիքին գնված ապրանքները՝ Ջաքարը խնդրում էր ընդունել դրանք իրրև «նվեր», քանի որ «ջանադիր ծառայության համար իրեն շահագրգռողը շահույթը չէ, այլ հայերի և ուսաների քրիստոնեական կրոնակցությունը և ուսա միապետի կողմից քրիստոնյաներին ցույց տված հովանավորությունը»: «Ձիջելով» արքունիքի պահանջներին՝ Ջաքարը հայանում է ի վերջո «նվերների» գինը, որը և սակարկումից հետո ստանում է արքունիքից<sup>1</sup>:

Նկատենք այստեղ, որ նվիրատվությունները (ПОМНИКИ) հանդիսանում էին ապրանքափոխանակության տեսակներից մեկը. այդ պահերև է դառնում նրանից, որ ինչպես ստացված, այնպես նաև հղված նվերները ենթարկվում էին սակարկման<sup>2</sup>:

Ջաքար Սահրատյանը կամ ավելի որոշ՝ Սահրատ Շեհրիմանյանի որդի Ջաքարը<sup>3</sup>, պատկանում է արևմտամուլ Շեհրիմանյանների, մեղ նախածանոթ մեծահարուստ խոջաների այն գերդաստանին, որի անդամները 1646 թվականին հարել էին կաթոլիկ եկեղեցուն և դարեվերջին բնակություն հաստատեցին Արևմտյան Եվրոպայում՝ Վենետիկում և Լիվոռնոյում<sup>4</sup>: Հաբսբուրգյան կայսրերի և թոսկանյան

<sup>1</sup> «Армяно-русские отношения в XVII в.», I, էջ 21 և հա.:

<sup>2</sup> Հմմտ. Фехнер, նույն տեղում, էջ 102:

<sup>3</sup> Հմմտ. Ալիշան, Սխական, էջ 146:

<sup>4</sup> A Chronicle of the Carmelites in Perisa, I, էջ 376:

գրանդուկների կողմից հովանավորված՝ նրանք անուն հանեցին իրենց առևտրական ձեռնարկություններով և աչքի բնական հայ-կաթոլիկ տպագրությունները ֆինանսավորելու մարզում: Ուշագրավ է, որ 1671 թվականին Իրանից խոջա Ջաքարը գրավոր դիմում էր անում ցարին լատիներեն լեզվով<sup>1</sup>: Այս կարծել է տալիս, թե ցարին ուղղած նրա թուղթն իսկ զրի էին առել Սպահանում դեղերող լատին միսիոներները: Ըստ երևույթին, խոջայի մերձեցումը Մոսկվային չէր հակադրվում հակաթուրքական տրամադրություններով սոգորված միսիոներների ձգտումներին, որոնց գլխավոր հովանավորողն ու նյութապես օժանդակողներն էին Շեհրիմանյանները<sup>2</sup>:

Աչքի առաջ օճենանք միաժամանակ, որ խոջա Ջաքարը Մոսկվա էր ժամանել որպես իրանական վարչապետի գործակալտար: Նրա բերած «նվերը»՝ ականակուռ դահր, կառուցվել էր իրանական վարչապետի առաջարկով և իրանշահի իսկ արհեստաճնոցում, թեև մեծագին այդ ավրանքը թանկ նաղղելու մտայնությամբ խոջան սուլում էր հավատացնել, թե Մոսկվա է թուրքի դահր շահից գաղտնի<sup>3</sup>: Անհավանական չէ, որ առևտրական բանակցություններից զատ խոջան հատուկ հանձնարարություններ էր ստացել նաև իրանական վարչապետի, լատին միսիոներների կամ կաթոլիկ հայերի կողմից, և որ խոջա Ջաքարի առաջ խնդիր էր դրված՝ մասնավոր ներպով շոշափելու ռուս կառավարության տրամադրությունը Թուրքիայի դեմ իրանա-եվրոպական ճակատ հարդարելու հարցի նկատմամբ: Բոլոր պարագաներում առայժմ չկա որևէ դրական փաստ, որ ցույց տար, թե Իրանի կամ կաթոլիկների կողմից փրեն արված հանձնարարությունները կատարելիս խոջա Ջաքարը, թիկունք դարձնելով Արևմտյան Եվրոպային, քաղաքականապես դիմաշըրջվում էր դեպի Մոսկովյան պետությունը, բացառապես նրա մեջ տեսնելով հայերի կամ դեթ հայ խոջայական դասի ազդային քաղաքական ակնկալությունների ապավինը: Առկա բոլոր ավյալներից ելնելով, հիմք կա, ընդհակառակը, ենթադրելու, թե նա շարունակում էր քայլել տրորված այն ուղիով, որի վրա տակավին երկու դար նրանից առաջ ոտք էր դրել հակաթուրքական տրամադրություններով սոգորված թավրիղեցի խոջա Միրաբը:

<sup>1</sup> Տե՛ս Վ. Ռոկանյանի հոդվածը, Հայկական ՍՍԻԻ Գիտ. ակադ. Տեղեկագիր (հաս. դիտ.), 1948, № 1, էջ 63:

<sup>2</sup> A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 376:

<sup>3</sup> „Армяно-русские отношения в XVII в“. I, էջ 24 և հտ.:

Հակաթուրքական լիզա ստեղծելու կամ նրա գործունեության շրջաններն ընդարձակելու օգտին 1666 թվականին Մոսկվայում բանակցություններ սկսեց նաև ուրիշ մի ջտղաչեցի՝ իրանական պետության և իրանահայ առևտրական ընկերության բանագնաց, մեզ նախածանոթ Գրիգոր Լուսիկենցը: Իր ներքին՝ Իրանի հետ հակաթուրքական համերաշխություն կնքելու նպատակով 1668 թվականին ցարի հանձնարարություններով Մոսկվայից Սպահան մեկնեց իրանական ղեկավար և հալիական ընկերության Մոսկվայի ներկայացուցիչ անգլիացի Ռոմաս Բրաչնը:

Երկրորդ անգամ Լուսիկենցը Մոսկվա եկավ 1671 թվականին: Սպահանի հայ առևտրական ընկերության հանձնարարություններից դատ՝ Մոսկվայում նա այս անգամ հետամուտ կը նաև այլ խրնդիրներին: Յարին ուղղած իր զիմումի մեջ նա գրում էր. «Գարձեալ 2(6) տարի աչ, որ մեժ թագաւորին զուլուղէն ջոկվել աչմ՝ գնացել զամրում, Բ(2) տարի թամաչմ շաչ Արլեմանի զրրուցքն կացել աչմ, զլիսօվս, ապրանքօվս, խուզօվս քե մեժ թագաւոր զուլուղ աչմ՝ արարել վասն քրբխատոչնութեն խաթեր համաչր. աստուած սաղ թուղութ անի կենդան մնամ էլ զուլուղ կառեմ քե մեժ թագաւոր»<sup>1</sup>:

Դեպքանական պրիկազին Լուսիկենցը հայտնում էր, թե առևտրական պայմանագրի շուրջը անելիք առաջարկներից դատ ինքը, որպես «քրիստոնեական հավատքի մարդ», ունի նաև զազանի սակելիք («ժածուկ արդ»): Դեպքանական պրիկազի առաջարկին՝ գրքավոր հագորդել իր սակելիքը՝ նա հայտնում էր, թե գրավոր հագորդումը կարող է հայտնի դառնալ շահին և սոխի սալ, որ իրեն մեժ պատիժ հասնի:

Ակներև է, որ Լուսիկենցի «քրիստոնեական» շահախնդրությունները Ռուսաստանում կրում էին քաղաքական բնույթ և պիտի զազանի մնաչին շահից:

«Ծածուկ արդի» բովանդակությունը անհայտ է մեզ: Հիմնվելով Լուսիկենցի մի քանի ասույթների վրա՝ այս մասին կարող են արվել միայն քիչ թե շատ հավանական ենթադրություններ: Տակավին 1667 թվականին կնքված առևտրական պայմանագիրը նախապատրաստելու ժամանակ Լուսիկենցը հայտնում էր, թե պայմանագիրը կնքվելու է ի վնաս Ռուրքիայի և փ մեժ շահ ցարի և Շահ-Աբրաս երկրորդի բարեկամության<sup>2</sup>:

<sup>1</sup> „Армяно-русские отношения в XVII в“, 1, էջ 71:

<sup>2</sup> Նույն տեղում, 1, էջ 40:

Աչքի առաջ ունենալով Լուսիկենցի կողմից 1671 թվականին ցարին ուղղված գրույթունը՝ պիտի կարծել, որ 1667 թվականին նա «անձնարարություն է ստացած եղև ցարից՝ «ի վնաս Ռուսրբիացի» ներդրավել Իրանի շահին քրիստոնյա պետությունների կառուցիչի մեջ, այս ենթադրությունը համապատասխանում է այն իրողությունը, որ նույն ուղղությամբ Մոսկվայի կառավարությունը այդ ժամանակ ջանքեր էր անում նաև Արևմուտքում, եվ իրոք, 60-ական թվականների վերջերին և 70-ականի սկզբներին Իրանում գեղերոյ լեհական դեսպան Բողդան Գուրգիի հետ ելումուտ սնունդով շահի արքունիքում՝ Լուսիկենցը աշխատում էր ցույց տալ շահ Սուլեյմանի կառավարությանը հակաՌուսրբական կառուցիչի մեջ մտնելու օգուտները: Մասնավորապես նա պաշտպանում էր Իրանի, Ռուսաստանի և Լեհաստանի քաղաքական համագործակցության պայմանները<sup>1</sup>: Նա ցանկանում էր, որ ցարի և շահի միջև կալանա տեղական ու լիակատար համաձայնություն, որ նրանց գլխավորած պետությունների միջև լինի «չուրի աշխարքիս վերջս սևր միայրան»: Խնդրում էր բնդամին, որ «ծածուկ արզը» լսելուց հետո ցարը դրի շահ Սուլեյմանին ինչ հարկն է, որպեսզի իր (Լուսիկենցի) թափած աշխատանքը դուր շիրշի<sup>2</sup>: Ըստ երևույթին Լուսիկենցը խուսափում էր գրավոր անել այդ «արզը», քանի որ դրա համար շուներ պաշտոնական լիազորություն: Այս կապակցությամբ տեղին էր նրա երկյուղը, թե եթե Իրանի շահը տեղեկանալու լինի իր ասելիքի մասին՝ իրեն, Լուսիկենցին մեծ վնաս կհասնի դրանից:

Հայ-ուստական հարաբերությունների պատմության ուսումնասիրող Վ. Ռսկանյանը, որը Լուսիկենցի մասին առաջինն է հրատարակ հանել վերը հիշատակված նյութերը, արամադիր էր հանդելու այն եզրակացություն, թե նրա «ծածուկ արզը» ուղղված է հենց Իրանի դեմ կամ անմիջորեն վերաբերում էր հայ ժողովրդի քաղաքական ազատագրմանը: Նմանեզրակացության համար դրական հիմք չկա առայժմ: Առկա նյութերը արամադրում են անելու միայն այն շեղությունը, թե օտար մի պետության հետ առանց հատուկ լիազորության նման բանակցություն վարելը ինքյան հիմք կարող է տալ քաղաքական կասկածի կամ մեղադրանքի: Բոլոր պարագաներում առկա տվյալներից պիտի հանել այն եզրակացությունը, որ Լուսիկենցի «ծածուկ արզը» վերաբերում էր հենց Իրանի, Ռուսաս-

<sup>1</sup> «Армяно-русские отношения в XVII в», 1, էջ 78 և հա.:

<sup>2</sup> Նույն տեղում, 1, էջ 71 և 84:

տանի և Լեհաստանի քաղաքական և սազմական այն համադորժակ-  
ցությանը, որը այս ժամանակ կարող էր հանդիպել իրանշահի ինչ-  
որ երկմտանքի կամ առարկություն:

Ինչպես արդեն մասնաճշեց ենք, հակաթուրքական կռաւիցիա ստեղծելու շուրջը շահի արքունիքի հետ բանակցելիս Բողոքան Գուր-  
դին համադորժակցության մեջ էր հայ կաթողիկոսներին զլիսավորած Մատթեոս Հովանիսենց արքեպիսկոպոսի հետ: Պիտի ենթադրել,  
սր հայ սմիաորների հետ քաղաքական համադորժակցության մեջ  
էր նաև Գր. Լուսիկենցը: Բավական է ասել, որ Պետրոս Պետիկը հի-  
շատակում է նրան որպես իրեն «այլուստ ծանոթ» մարդու և բնորո-  
շում նրան որպես «կաթողիկ գավանության բարեկամի»<sup>1</sup>: Պարզվում  
է, բացի այդ, որ ցարական արքունիքին նրա մասնավոր ասելիքը ի-  
րոք վերաբերում էր իրանի և քրիստոնեական պետությունների միջև  
ստեղծվելիք հակաթուրքական այն դաշինքին, որին հետամտւո էր  
Պետիկը և որով այնքան շահագրգռված էին մանավանդ հայերը:  
Մոսկվայում 1672 թվականին Լուսիկենցն իսկ պատմում էր, թե «շա-  
հի հպատակ ֆրանկադավան մի հայ երեք տարի առաջ Հռոմից Պարս-  
կաստան է վերադարձել՝ բերելով իր հետ պապի, հռոմեական կայս-  
րի, ֆրանսիական թագավորի և վեց այլ իշխողների գրությունները,  
որոնցով նրանք դիմում էին շահին՝ Թուրքիայի դեմ կոխվ սկսելու  
խնդրով, խոստանալով իրենց օգնությունը: Շահը սիրով ընդունեււմ  
է պապի, կայսրի, Լուզովիկոսի և մյուսների գրությունները և նույն

<sup>1</sup> „...mihī aliunde notus, fideique catholicae amator“ (B e d i k), նույն  
տեղում, էջ 437): Պետիկի մոտ Լուսիկենցը կոչվում է ոչ թե Գրիգոր, այլ  
Գեորգի Տպաղբական սխալ է աս. թե՞ գրչի կամ հիշողության գրիպում,  
չենք կարող ասել: Այնուամենայնիվ, խոսելով Georgius Lusigh-ի մա-  
սին, նա աչքի առաջ ունենր նույն անձին, որը պարսից շահի կողմից ու-  
ղարկված էր Ռուսաստան («persarmenum, quitune regis Persarum nomine  
in Moscovia erat») և ուր նրա միջոցով վրաց թագավորացն Հերակլը, կա-  
խեթի Թեյմուրազ 1 թագավորի թոռ, բանակցություններ սկսեց պարսից  
արքունիքի հետ՝ հայրենիք վերադառնալու իրավունք ու երաշխիք ստանա-  
լու համար: Սա նույն այն Հերակլն է, որ նստելու էր Իրանի դեմ ապստամ-  
բած Գուրգին խանի տեղը՝ Նազար Ալի-խան անունով (1688—1703): Հույս  
չունենալով վերադարձվել կախեթի դահր ցարի սազմական օգնության միջո-  
ցով, Հերակլը ի վերջո բանակցություններ սկսեց իրանական արքունիքի  
հետ: Պիտի կարծել, որ, առաջին անգամ Մոսկվա եղած ժամանակ, Լուսի-  
կենցն այդ բանում աջակցություն էր խոստացել վրաց զահախառնդին: Հե-  
րակլի վերադարձը համազոր էր նրա (Հերակլի) և Մոսկվայի միջև մինչ  
այդ եղած կապերի խզմանը (Հմմտ. ԵՃ. Г а г и н в и л а н, նույն տեղում, էջ 57 և  
հա. և 62):

Ֆրանկագազալան հային համապատասխան հանձնարարականներով Մոսկվայի ճանապարհով հղում դարձյալ Հում: Լուսիկենցի ասելով այդ սուրհանդակը շատ կարևոր դործեր ունի նաև ցարի հետ<sup>1</sup>:

Լուսիկենցի ակնարկած «իրանա-հոմեական» բանակցությունները մեզ ծանոթ են արդեն: Այստեղ անշուշտ խոսքը Նախիջևանի հայ կաթողիկոսների առաջնորդ Մատթեոս Հովանիսեցու մասին է դարձյալ: Գիտենք, սակայն, որ անձնապես Մատթեոսը չէ, որ տեղ հասցրեց շահի կողմից Արևմուտք հղված գրությունները, այլ մեզ նախածանոթ Աղարիա Ջահկեցի և Անտոն Ապրակունիսեցի դոմինիկյան հայ կրոնավորները: Նրանք մեկնեցին Իրանից 1670 թվականին և Ստ. Ռազինի հարձակումների պատճառով 22 ամիս ուսիրանական սահմանադրված դեպերելուց հետո Ռուսաստանի, Լեհաստանի և Գերմանիայի վրայով հասան Իտալիա միայն 1673 թվականին: Ներկայացնելով Վենետիկի սենատին իրենց բերած գրությունները՝ գրաբերները տվեցին մի շարք բացատրություններ, ուր կարևոր տեղ էր վերապահվում այն դերին, որ կատարելու էին հակաթուրքական եվրոպական կոալիցիայի մեջ առանձնը: Նրանց «ասելով՝ իրանցիները կամենում են չափել իրենց ուժերը Թուրքիայի հետ և իբր թե արդեն սկսել են համապատասխան գործողություններ: Լեհաստանում գտնված ժամանակ իրենք լսել են 60-հազարանոց իրանական հեծելարշավի մասին, որին միանալու են հետևակներ և երկրի հեռավոր մասերում գտնված հեծյալներ: Զեկուցում էին, թե կողակներն իրենց շայկաներով (նավակներ, որոնցից յուրաքանչյուրի վրա տեղավորվում են 70—80 կովոդներ) խուժել են Տանայի (= Ադուլի) ուղղությամբ: Ռուսների և լեհերի միջև թուրքերի դեմ կնքված դաշինքը հզի էր Սև ծովի վրա սկավելիք սազմական գործողություններով: Այս պարագաներում վտանգավոր գրություն պիտի ստեղծվի Կ. Պոլսի համար, քանի որ այդ քաղաքը պարենավորվում է Սև ծովի հյուսիսային ափերից: Որչափ ծովի վրա Վենետիկի ուժերը գերազանցում են մյուս քրիստոնյա պետությունների ուժերից՝ ձեռք մեկնելով իրանցիներին, վենետիկցիները կաթվածահար կանեն Թուրքիայի սիրտը, անխուսափելի դարձնելով անկումը մի պետության, որը «բռնակալորեն իշխում է այնքան երկրների վրա», շարունակ զավթելով ուրիշների տիրույթները: Քանի որ Թուրքիայի դեմ սկավելիք գործողությունների պատճառով դադարելու է

<sup>1</sup> «а с ними де есть многие великому государю годные дела»  
տե՛ս «Армяно-русские отношения в XVII в.», 1, էջ 80:



նրա ուղիներով կատարվող առևտուրը՝ Իրանի շահն առաջարկում է ներկահան ապրանքների փոխադրությունը կատարել Մոսկվայի վրայով: Մոսկվայից այդ ապրանքները կհասնան և Գերմանիայի միջոցով կփոխադրվեն Վենետիկ՝ Նարկարեկով, որ Նոլանդացիներն ու անլիթացիներն ապագայում միայն վենետիկցիներից ձեռքերեն իրանական մետաքսը<sup>1</sup>:

Ունեցել են արդյոք այդ սուբճանդակները որևէ կապ սուս կամ լե: կատավարությունների հետ: Այդ հայտնի չէ, սակավին: Կարևոր է սակայն, որ վենետիկյան իրենց բացատրությունների մեջ նրանք պակաս վերաբերմունք են ցուցաբերում դեպի Ռուսաստանի և Լեհաստանի Նախարարական գործառնությունները: Այս հանգամանքը վկայում է գարձալ այն ենթադրության օգտին, որ նրանց առաքելությունը հետ անմիջական անընթացում պիտի սնեցած լինի նաև Լուսիկենցի «գաղանի արդը»: Ռուսական արքունիքի հետ Լուսիկենցի սենեակիք «ծածուկ արդը» համընկնում էր այն հեռանկարներին, որանք արժարժվում էին Ազարիա Ջահեցու և Անտոն Ազարակունիսեցու Վենետիկի սենատին ավամ իրենց բացատրությունների մեջ:

Լուսիկենցի քաղաքական ընդհանուր բնավագրի համար հասկանչական է 1671 թվականի մարտին ստորագրված պարսկագիր այն ուղերձը, որը իրեն լիազորող Սպահանի հայ առևտրական մագնաանների անունից նա ներկայացրեց Ալեքսեյ Միխայլովիչ ցարին: Ուղերձ ստորագրողները ցարի քաջությունը համեմատում էին Իրանի լեգենդար Ֆերիդունի քաջության, նրա արդարագատությունը Անուշիրվանի արգարագատության, նրա մեծությունը՝ Գարեհի մեծության հետ<sup>2</sup>: Այս համեմատությունները անուղղակիորեն հասկանչում են և՛ պարսկագիր ուղերձը ստորագրողների, և՛ այն Մոսկվա հասցնողների Իրանի նկատմամբ ունեցած հավատարմությունը:

Սակայն վեր հանելով այն ընդհանուրը, ինչ կապում էր Լուսիկենցին նրան լիազորողների հետ, շարժի անդիտանանք այն, ինչ բնորոշում է նրան որպես քաղաքական գործչի և վերագրենք նրան այնպիսի գործունեություն, որի համար նա բառ երևույթին ոչ մի լիազորագիր չէր բերել Մոսկվա ոչ իրանական կատավարությունից և ոչ էլ նոր-Ջուղայի կամ Սպահանի հայ առևտրական ընկերությունից:

<sup>1</sup> Berchet, նույն տեղում, էջ 336 և հա.:

<sup>2</sup> „Армяно-русские отношения в XVII в.“, էջ 90:

Լուսիկենցը մեկն էր այն գործիչներից, որոնք հակաթուրքական կոալիցիայի մեջ նշմարում էին ինչպես Իրանի, նույնպես նաև բուլղարիստոնեական աշխարհի» բարեկեցության երաշխիքը: Այս տեսանկյունից ելնելով՝ նա ջանում էր ապահովել Իրանի, Ռուսաստանի և Լեհաստանի քաղաքական համագործակցությունը: Սակայն սրբան էլ կարևոր լինեն այդ մարդում Լուսիկենցի թափած ջանքերը, քան թե անհատական մտքի պատմության մեջ նա հաճողես շէր գալիս որպես նոր ուղի հարթող: Նա շարունակում էր Բաղախական այն ուղեգիծը, որի կենսագործման համար նրանից առաջ կամ նրանից հետո ջանվեալ էին բափում նաև ուրիշներ:

Առաջին անգամը չէ, որ ասիական կամ եվրոպական պետությունների կողմից լիազորված հայ գործիչները հանդես էին գալիս պետությունների կոալիցիա կազմակերպելու համար: Նման նախընթացներ կարելի է հիշատակել տակավին էլիսանների և թուրքմենների ժամանակներից և ավելի ուշ՝ Սեֆելիանների օրերից: Վերջինքնք կիլիկյան հայ իշխողների և ապա խոջա Սահմաղինի հանձնառությունները XIII—XIV դարերում կամ Մաթթևոս Հովանիսեցու և Պետրիկի, Աղարիա Ջահեկեցու և Անտոն Ապրակունիսեցու առաքելությունը XVII դարում: Հայ գործիչները նման հանձնառություններ ստանձնում էին երբեմն նաև հայ այլևայլ հասարակախորհրդերից լիազորված, փրենց առաջ խնդիր դնելով օժանդակություն ստանալ եվրոպական այս կամ այն խմբավորումից ի նպաստ հայ ժողովրդի ազատագրման: Հիշենք Սասունի հայ բանագնացների առաքելությունը Արևմուտք XV դարում, հայ կաթողիկոսների բանակցությունները XVI դարում, մահաթեալի Շահմուրադի և Հովհաննես Բյուրջունցիի առաքելությունը կամ Հակոբ Ջուղայեցու գլխավորած պատգամավորությունը XVII դարում: Բուլղար այս դեպքերում հայ գործիչները կողմնորոշվում էին դեպի եվրոպական պետությունների այս կամ այն խմբավորումը, բայց որում մի քանի դեպքերում չէր բացարկված նաև Ռուսաստանի մասնակցությունը ծրագրվող կոալիցիաներից մեկի կամ մյուսի մեջ:

Աչքի առաջ սեննալով այս նախադեպերը՝ դժվար չէ Լուսիկենցի գործունեության մեջ ևս նշմարել սոսկ նույն ուղղությամբ ձեռնարկված առաքելություններից մեկի կամ մյուսի տարատեսակությունը: Բուլղար պարագաներում ոչ մի հիմք չկա նրան նախակարգապետ համարելու հետագա այն մարդկանց, որոնք փաստապես միայն Ռուսաստանի մեջ տեսան հայ ժողովրդի փրկության ապավենը:

Կանգ առնելով Լուսիկենցի գործունեության վրա՝ շենք կարող չհիշատակել Աղվանից Պետրոս կաթողիկոսի 1672 թ. դեկտ. 2-ին Ալեքսեյ Միխայլովիչ ցարի ամուսնով գրած թուղթը, որ հրատարակվեց վերջերս<sup>1</sup>: Իր գրության մեջ Պետրոս կաթողիկոսը հաղորդում է, որ շահ Սուլեյմանը սիրով է ընկալել Լուսիկենցի և մյուս հայ յոթանյակի անունով ցարի շնորհած գիրը (իմա՝ 1667 թ. Սպահանի հայ առևտրական ընկերությանը արված արտոնագիրը — Ա. Հ.): Հայտնում է նաև, որ շահի կողմից Լուսիկենցը նորից մեկնեամ է Մոսկվա Սպահանի հայ «լավագույն մարդկանց» (իմա՝ հայ խոջաների — Ա. Հ.) կողմից բանակցելու համար: Աղվանից կաթողիկոսը միջնորդում է ցարի առաջ՝ ապահովել Ռուսաստանում Սպահանի հայ խոջաների երթևեկը: Թղթի վերջում նա բարեկեցություն է մաղթում ցարին, նրան հաղթանակ ցանկանում թշնամիների վրա և աղերսում նրանից պաշտպանություն հայ ժողովրդին:

Պետրոս կաթողիկոսի գրությունը ավելին չէր, քան Սպահանի հայ խոջաների օգտին արված բարեխոսություն. հայերից «լավագույն» համարված այդ խոջաներին սեներ նկատի կաթողիկոսը, երբ պաշտպանություն էր աղերսում «հայ ժողովրդի» օգտին:

Անշուշտ, ավելի մեծ նշանակություն պիտի տանք մեզ ծանոթ լատինագիր այն թղթին, որ գրել էր ուսուցարի՞ն էջմիածնի կաթողիկոս Հակոբ Զուղայեցին: Այդ թուղթը հավանորեն գրվել էր յոթանասնական թվականների սկզբներին և ուրեմն ուղղվել դարձյալ Ալեքսեյ Միխայլովիչ ցարին: Դժվարանում ենք, սակայն, կապել Հակոբի նամակը Լուսիկենցի Մոսկվայում հետամտած առաքելության հետ, որչափ էջմիածնի կաթողիկոսը հանդես էր գալիս այդ նամակում ոչ թե Սպահանի կամ Նոր-Զուղայի հայ խոջաների շահերը պաշտպանողի կամ հակաթուրքական կողմիցիայի օգտին միջնորդողի, այլ հակախրանակա՞ն տրամադրություններ արտահայտողի դերում<sup>2</sup>:

Նվաղ նշանակալից չէ այն փաստը, որ մի քանի տարի հետո, ապավինելով Վրաստան, Հակոբ կաթողիկոսը բանակցություններ էր վարում վրաց իշխանների հետ, որոնք զենք բարձրացնելով իրանական պետության դեմ, օգնություն էին ստանում ինչպես Արևմուտքից, այնպես նաև Մոսկվայից: Վրաց իշխանները չստա-

<sup>1</sup> „Армяно-русские отношения в XVII в.“, I, էջ 91 և հտ.:

<sup>2</sup> Տե՛ս «Արարատ», 1951, էջ 775 և հտ., նույնը նաև „Армяно-русские отношения в XVII в.“, I, էջ 98:

ցան սպասված օգնութիւնը: Անգամ հետադայում, 1688 թվականին, երբ Մոսկվա ապառիսած Արշիլ թագավորը ուսական զորքերի հետ արշավեց Հյուսիսային Կովկաս, էլբրուսի մոտերքում իր հակառակորդների դեմ ուղղմական գործողութիւնների ձեռնարկելու և վրաց անկախութիւնը վերականգնելու նպատակով, նա պաշտոնապես ճանաչվում էր սոսկ սրպես Թուրքիային ենթարկված Իմերեթի թագավոր և նրան օգնութիւն էր մատակարարվում միայն թուրքերի և սրանց հարող վրաց վասալների դեմ պատերազմելու համար: Իրանին ենթարկված Քարթլիի թագավոր Գիորգիին ցույց տրվելիք օգնութիւնը Մոսկվան նկատում էր Արշիլի մասնավոր գործը: Արշիլի ուղղմական կոչվելը Մոսկվան համարում էր և վրոպական դաշնակիցների հետ միասին թուրքերի դեմ ձեռնարկված գործողութիւններից մեկը<sup>1</sup>:

Կապվելով Ռուսաստանի հետ, վրաց իշխանները շարունակում էին բանակցութիւններ վարել նաև հակաթուրքական դաշնակցութեան մեջ մտնող և վրոպական պետութիւնների հետ, նույն վաճառքին էր հետևում նաև Հակոբ Ջուղայեցին: Այս ժամանակամիջոցին նա, ինչպես դիտենք, դիմումներ էր ուղղում նաև Կենտրոնական Եվրոպայում կազմակերպվող հակաթուրքական կոալիցիայի անդամներին: Արդեն ծանոթ է մեկ Յան Սուրեսկու Հակոբի հետ ունեցած գրադրութեան փաստը: Տեսանք նաև, որ կաթողիկոսն այդ պահին պատրաստութիւն էր տեսնում Արևմուտք մեկնելու համար:

Այսպիսով, շնայած որ իրանական կառավարութեան վրա ճընշում գործելու համար Ջուղայեցին լատինագիր իր նամակում խնդրում էր Ռուսաստանի միջամտութիւնը, նա ևս երես չէր շուտ տալիս Արևմուտքից և չէր կապում հայերի բախար բացառապես հյուսիսային մեծ պետութեան հետ: Ջուղայեցու գործունեութիւնը ևս օբյեկտիվորեն հող էր պատրաստում հայ ժողովրդի ազատագրական շարժման ուսական կողմնորոշման համար, սակայն ինքյան դեռ չէր հանդիսանում հայ ազատագրական մտքի փառաբանական վերադիրձավորման արտահայտութիւն:

Առայժմ պատճառ չկա պնդելու, թե Հակոբ Ջուղայեցու և նրանից առաջ Պետրոս կաթողիկոսի կամ Գրիգոր Լուսինեցի՝ ուսարքունիքին արած քաղաքական դիմումները հիմք էին դնում հայառուսական դիվանագիտական հարաբերութիւններին: Նման դիմումների առկայութիւնը դեռ առիթ չի տալիս խոսելու հայ-ռուս-

<sup>1</sup> Вл Тагинский. Указ. 'տեղում, էջ 96:

կան դիվանագիտական բանավարությունների սկզբնավորման մասին, որչափ շկան փաստական ավյալներ ասելու, քե այդ դիմումներն արժանացան Մոսկվայում ուրեկ ուշադրության: Հետագայում, երբ ծայր առան Նայ-ուտտական քաղաքական բանավարությունները, որքան մեզ հայտնի է, ոչ որ շէր որակում կամ վիպակոչում Նայ-ուտտական դիվանագիտական հարաբերությունների նախընթացներ: Հայտնի է, որ Յրիի թղթերում հակառական ակնարկներ կան Հակօր կախողիկոսի՝ Ռուսաստան մեկնելու դիաավորության մասին: Սակայն այդտեղ եւ հիշատակություն շկա Ռուսաստանի հետ հրա կամ որեկ որիշի ունեցած բանավարությունների մասին:

Զուգապէս, ինչպէս ե նրա հետ կապված Նայ խոջաների ու արեմատակիրուպական միսիոներներէի քաղաքական ընդհանուր վարքագիծը զնահատելու համար պիտի հաշվի առնել, որ բացառապէս Ռուսաստանի օգնությունը, Հայաստանի, այսինքն՝ ե՝ իրանահայերի, ե՝ թուրքահայերի ազատագրման խնդիրն առաջ քաշելու համար մինչև XVII դարի վերջերը հասուն իրադրություն շկար տակաւին: Ռուսաստանը, ինչպէս ե եվրոպական մշտա պետությունները, Իրանի հետ բախվելու ոչ մի շահ կամ մտադրություն չունեին այդ պահին: Մտահոգված զլիաավորապէս թուրքերի ազրեխիան եւ մղելու կամ նրանց զրաված հոգերը եւ՝ խլելու հոգսով, Ռուսաստանը ե նրա արեմտյան դաշնակիցները կարող էին հետաքրքրվել Նայ կամ վրաց քաղաքական ակնկալությունների խնդրով միայն այնչափ, որչափ այդ անհրաժեշտ էր Նայ ե վրաց մարտական ուժերը թուրքի, բայց ոչ Իրանի դեմ հավաքագրելու համար:

Այլ դրություն ստեղծվեց XVII դարի վերջերից: Այդ պահին Ռուսաստանում սկսում էր հասուկ շահագրգռություն առաջանալ ոչ միայն թուրքիայի, այլե Իրանի դեմ: Ներքին ապստամբությունների հասցրած հարվածների ե պատերազմի արտաքին ճակատներում թուրքերի կրած պարտությունների, ինչպէս ե Սեֆյանս ուժիմի ակնհայտ նեխման իրադրությունը այդ երկրների ճնշված ժողովուրդների մեջ փստում էին ազատագրական հուշեր: Իրենց հերթին ե Իրանում, ե՝ թուրքիայում սաստկացող ճնշումներն ու հարստահարումներն ուժ էին աւալիս Ռուսաստանի նկատմամբ Նայ ժողովրդի ունեցած գրական ակնկալություններին:

Պատահական չէ, երբ Բամբարակի անունով հրապարակված «Իան յազգս ե յազինս» վերնագրով XVIII. դարի շափաղի մի երկում, որ հաճախ դիպուկ հատկանշումներով թվարկված են հայեր-

սին ծանոթ ժողովուրդները, սուսների մասին կարգում ենք՝ «Լուսու  
ոք սսն Մսակովն է, սրոյ ձնն յամենեհին»<sup>1</sup>։

Հայ ազատագրական շարժման և հայ ազատագրական մտքի  
վճռական շրջագործը գեպի Ռուսաստան տեղի ունեցավ միջազգա-  
յին Բաղաձական նոր այն իրագործւոյան մեջ, որ ստեղծվեց Կարբու-  
վիցի դաշնագրութւոյնից նետ։ Ակտում էր պատմական նոր մի  
ըջան, երբ Ռուսաստանը հանդես էր գալիս որպէս միակ այն եր-  
կիրը, որի նա կարող էին ազատագրական սեպ նետանկարներ  
կապել ոչ միայն հայ իշխող հասարակախավերը, այլև հայ ժո-  
ղովրդական մտտասները։ Ն՛մ Իրանում, և՛ Ռուսրբիայում այդ  
շրջանում ստեղծված էր մի վիճակ, որը նորից այժմեական էր  
դարձնում հայերի բաղաբական սկիւրի ինքնապաշտպանութւան  
խնդիրը։

Ազատագրական պայքարի օջախներ էին բռնկվում այս պահին  
Քուրբ-իրանական գեներով նվաճված և ֆեոդալ ստարապների  
լծի տակ ձնշված հայկական բնաշխարհի ներսում, առաջին հեր-  
թին՝ Անդրկովկասում։ Ազատութւան համար մղվելիք պայքարի  
և հլուսիսային մեծ պետութւան օգտին է կողմնորոշվում նաև հայ  
գյուղացիութւանը։ Ժողովրդական ապստամբութւան բնույթ ստա-  
ցող այդ շարժման մեջ հայարնակ մի շարք վայրերում գեկալարող  
դեր էին ստանձնում հայ իշխող տարրերը՝ օտարերկրյա գավթիչների  
նա բախմոց պատասհայ մեկթիներն ու յուզբաշիները, եկեղեցա-  
կաններն ու առեարականները և նույնիսկ հայկական բնաշխարհից  
գորս սպրող հայ խոշաներից ու եկեղեցականներից ոմանք։ Հասա-  
բակական իշխող խավերի նա էր կապված նաև Իսրայել Օրին,  
քաղաբական նշանավոր այն գործիչը, որը XVIII դարի սկզբներին  
բանակցութւոյններ սկսելով Մոսկովյան պետութւան հետ՝ սուսա-  
կան կողմնորոշման հունի մեջ մտցրեց հայ ժողովրդի ազատագրա-  
կան սկնկալութւոյնները։

Հայ ազատագրական շարժման նոր կողմնորոշման առաջ գալու  
համար XVIII դարի սկզբներին ստեղծված նպաստավոր իրագրու-  
թեանից կամ այն փաստից, որ այդ ժամանակից ի վեր հայ ազա-  
տագրական մտքի սուսական կողմնորոշումը ցնալով ոչ միայն ար-  
ծարծվում, այլև խոր արմատներ էր ձգում հայ միջավայրում, չենք  
անում այն նետութւոյնը, թև սուսական կողմնորոշումը անխախ  
ընկալվում էր բոլոր հայերի կողմից կամ միապէս արտացոլվում

<sup>1</sup> «Բագմավեպ», 1886, էջ 287 և հա.։

նրանց գիտակցութեան մեջ: Օրիի կատարած շրջադարձից ամբի-  
ջսպես հետո իսկ հայ իշխող հասարակախաւերի միջից հանդես  
էին գալու նրա նոր ծրագրին հակառակ տարբեր: Ճիշտ է, ինչպես  
այդ պահին, այնպես և հետագայում վերջիններս փ վիճակի չէին  
տեսպես գերիշխող և տեսակարար մեծ կշիռ ունեցող գործունեւեր  
հանդիսանալ հայ կյանքում: Այնուամենայնիվ ռուսական կողմնո-  
րոշման կուսակիցները հայ կյանքում անխուսափելիորեն բախվում  
էին առանին հակառակորդների հետ: Իրողութուն է այս, որ պատ-  
մական զարգացման տարբեր էտապներում ստանում էր սոցիալա-  
կան տարբեր բովանդակություն և ընդունում զաղափարական տար-  
բեր երանգ: Պատմական զարգացման համընթաց փոփոխվելու էր  
նաև ինքը՝ հայ ազատագրական մտքի ռուսական կողմնորոշման  
կոնկրետ պարտնակութունն ու իմաստը:

Սույն գրվագում ջանացինք պարզել այն ակնկալութունները,  
որոնք Մոսկովյան պետութեան նկատմամբ հաստանում էին հայ  
ժողովրդի գիտակցութեան մեջ արդեն իսկ XV—XVI դարերում և այն  
ակնկալութեանները, որոնցով հայերը հարաբերութունների մեջ  
մասն հշուսիսի մեծ պետութեան հետ XVII դարում: Հայաստանի  
ազատագրման գործում Ռուսաստանի մասնակցութեան նկատմամբ  
կոնկրետ ակնկալութուններ ունեին արդեն 1677 թվականին էջ-  
միածնի և 1699 թվականին Անկեղակոթի խորհրդածողովների կող-  
մից ընտրված պատգամավորութունները: Այդ պատվիրակութուն-  
ների առաջ խնդիր էր գրված դիվանագիտական ուղիներ հարթել  
Հայաստանի ազատագրման համար նաև Մոսկովչի պետութեան  
օժանդակութունը ապահովելու համար:

Այնուամենայնիվ XVII դարում Հայաստանի ազատագրման  
զաղափարը դեռ չէր լքել դիվանագիտական կողմնորոշման արագի-  
ցիոն ընթացքը: Չկար տակաւին այն գիտակցութունը, թե Ռուսաս-  
տանը միակ պետութունն է, որից կարելի է իրական օժանդա-  
կութուն սպասել Հայաստանի ազատագրման համար: Ոչ Հայաս-  
տանի XV—XVI դարերի դիվանագիտական բանակցութունները, ոչ  
էլ դրանց ընթացակից հայ-ռուսական հարաբերութունների բնույթը  
չեն վկայում այն մասին, թե այդ ժամանակաշրջանում հայերի ա-  
զատագրական ակնկալութունները կարող էին կապված լինել բա-  
ցառուպես Ռուսաստանի հետ: Հայերի ազատագրական հեռանկար-  
ները տակաւին չէին լծորդված միայն կամ դեթ գերազանցապես  
Ռուսաստանի քաղաքական հորիզոնների հետ:

Միայն XVIII դարի սկզբներից է, որ սկսվում է փոխվել դրությունը: Մոսկովյան պետությունը միակն էր այդ պահին, որ Մերձավոր Արևելքի նկատմամբ շէր լքել սկսիվ քաղաքականության ուղին և պատրաստ էր օգտագործել առաջին պատեհ հնարավորությունը Աև և Կասպից ծովերի նկատմամբ իր հետամտած նպատակները զենքի միջոցով իրականացնելու համար:

Այս հանգամանքը սկսեց պարզվել մասնավորապես Օրիի համար դեռ 1700 թվականի վերջերիև կամ 1701 թվականի սկզբներին Վինննայում, տակից նա պիտի անցներ Լեհաստան ու Մոսկով՝ կուրթյուրստից ստացած հանձնարարությունները կատարելու համար: Ըմբռնելով քաղաքական փոխված իրադրությունը՝ նա դեռ այդ պահին պիտի զգացած լիներ հայերի վերադիրքավորման անհրաժեշտությունը: Հիրավի, միայն այդ պահին կարող էր հասունանալ նրա մեջ այն միտքը, թե պետք է լքել բանակցությունների հին արահետը և շոշափել գործողությունների նոր ուղի՝ բացառապես Ռուսաստանի մեջ որոնելով Հայաստանի ազատագրման ռեալ հեռանկարը: Եվ հասկանալի է, որ միայն նման հեռանկարի նըշմարումով կարող էր սկիզբ առնել հայկական շարժման և հայկական բանակցությունների նոր էտապը, դրանց ռուսական կողմնորոշման էտապը:



## 2. ՕՐԻԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ԵՐԵՂԻՐԸ

Օրին և Մինաս վարդապետը Մոսկվայում: Բանակցությունների ընթացիչ Արամատական բեկում Օրիի հաջողությունների մեջ: Հայ ազատագրական լեզենդի վերջին վերստին: Օրիի Մոսկովյան ծրագիրը: Համեմատություն պֆալցյան ծրագրի հետ: Օրիի և Արշիլի համագործակցությունը: Պետրոս ԱՆԺի դիտավորությունը Կասպյան ծովի նկատմամբ: Նրա վերաբերմունքը դեպի Օրիի ծրագիրը: Օրիի գործնական առաջարկությունները: Պատասխան Լեհոպական արևունիքների Կուրֆյուրստի դիմելը: Միտոն Վասիլևի առաջարկը Հայաստան: Ազատագրական շարժման նոր կողմնորոշման բեր և դեմ դիտավորումների դրսևորումը: Մինաս վարդապետի վարանունները: Մի գրքի առիթով:

1701 թվականի սպրիլին Օրին և Մինաս վարդապետը ժամանեցին Վարշավա: Այստեղ նրանք դիմեցին լեհ արքունիքին՝ Մոսկվա ուղևորվելու թուղտվություն ստանալու համար միայն: Որևէ խոսք Լվյուպական գործերի արանդիտի մասին չենք լսում այդ պահին: Ինչպես պետք էր սպասել, եթե Օրիի մեզ ծանոթ պֆալցյան ծրագիրը կորցրած չլիներ արդեն իր այժմեությունը:

Նույն տարվա հուլիսին Օրին և ուղեկիցները — ընդամենը վեց մարդ, այդ թվում նրանց թարգմանն ու երկու քարաուղարները — հասան Մոսկվա: Դեսպանական պրիկազը ընդունեց Օրիին որպես պֆալցյան բանապնացի. հատկացնելով նրան ի նրա ուղեկիցներին համապատասխան պահակ, բնակարան ու օրապահիկ: Իր բերած գրությունների հետ կուրֆյուրստի բանապնացը ներկայացրեց դեսպանական պրիկազին 1700 թվականի հոկտեմբերին թվադրված և Պետրոս ցարին ուղղված կուրֆյուրստի այն հանձնարարականը, ու ձևական մեկնակետ պիտի հանդիսանար վարելիք բանակցությունների համար: Հայաստանի պետերն ու առաջին պաշտոնակալները, — ասված է այդ գրության մեջ, — դիմել են իրեն, կուրֆյուրստին, խնդրելով ռազմական օգնություն Հայաստանի վրա ծանրա-

ցած իրանական լուծը թափափելու և իրենց ազատութեանը վերականգնելու համար: Հնարավոր չհամարելով էրես դորձնել այդքան մեծ ու բարենպաստ մի գործից, կուրֆյուրստը կամենում է նախ հավաստիանալ, արդյոք ցածը ևս արգարացի և իրագործելի է համարում հայերի խնդիրը, և եթե այո, արդյոք հնարավոր կհամարեր նա թույլ տալ Մոսկովիայի վրայով իր (կուրֆյուրստի) դաշնակիցների ռազմական տրաճեցիտը այդ գործը զլուխ բերելու համար<sup>1</sup>:

Մակայն առաջին իսկ բացառություններին Օրինն զուրս եկավ իր վրա դրված հանձնարարութեան շրջանակից:

Արդեն իսկ բանավոր այն բացատրությունը, որը նա տվեց իր ժամանումից անմիջապես հետո կանցյւր Գոլովինին, ներհակում էր կուրֆյուրստի դիմումին: Համաձայն այդ բացատրության՝ Օրինն եկել էր Մոսկվա Հայաստանի ազատութեան նպատակի համար սոսկ գերմանական օժանդակ ուժեր տրամադրելու ցարին և խնդրելու, որ վերջինս իր ձեռքն աննի այդ նպատակի իրագործման նախաձեռնությունը<sup>2</sup>:

Ավելի պարզ ձևակերպեց Օրինն իր առաքելութեան նպատակը դրավոր այն բացատրության մեջ, որ հանձնեց Գոլովինին իր դալուց մի շարաթ անց: Գրավոր այդ բացատրությունը սրտը պատկերացում է տալիս մեզ դիվանագիտական յուրակերպ այն ձևովութեան մասին, որ հայտ էր բերում Օրինն ամեն անգամ, երբ անհրաժեշտ էր լինում նոր լույսի տակ գնել իր բաղձանքները, համապատասխան կերպով «շակելով» իրողութեաններն ու փաստերը:

Բազմաթիվ տարիներ ֆրանսիական ու գերմանական ժողովրդական մեջ գանվելուց հետո, — դրում էր նա իր բացատրության մեջ, — օրերից մեկում ինքը համերկրացիներից ստացել էր մի գրություն, և սրա մեջ արված պահանջի համաձայն՝ վերադարձել հայրենիք, ուր հայ մեղիքները տվել ևն իր ձեռքը երեք թուղթ — ցարի գերմանական կայսրի և կուրֆյուրստի անուճններով: Այդ թղթերում, պարզում է Օրինն, մեղիքները դնում էին Հայաստանի ազատագրման խնդիրը: Ընդառաջելով հայ իշխանների բաղձանքին, հայտնում է իր բացատրության մեջ Օրինն, կուրֆյուրստը պատրաստակամութուն է հայտնել օգնութեան դալու հայերին, «եթե որ ցարը ստանձնի այդ գործը և հայտնի իրեն այդ մասին իր կամքը»: «Միևնույն իմաստով», հարում է Օրինն, հայերին խոստանում է իր օժան-

<sup>1</sup> Э 30 В, նույն տեղում, № 17, հմտ. նաև № 18:

<sup>2</sup> Նույն տեղում, № 32:

դակուձիւնը նաև հոռմեական կայսրը. սակայն կայսրը ևս հտժար կլինի մասնակցելու Հայաստան տւղղվելիք արշավանքին, եթև դրան կարիք ունենա ցարը: Հայ իշխանները, շարունակում է Օրին, տուրքերից և բռնութիւններից նեղված, խոստանում են ի սպաս դնելու ցարին իրենց բոլոր ուժերը, հնազանդելով նրան և հտւյս ունենալով ազատութիւն ստանալ նրա միջոցով<sup>1</sup>: Այդ նպատակով էլ հենց մեկիքները տասը հոգու ստորագրութեամբ քարտ բլանշ են տվել իրեն, Օրին, լիազորելով իրենց ամուսնից համաձայնագիր կնքել ցարի հետ:

Օրին կատարած քաղաքական և դիվանագիտական շրջադարձը նրա այս բացատրութիւնների մեջ աչք ծակելու շափ ակնբախ է: Այստեղ նա հանդես է դալիս նոր այն վերախալով, թև ինքը համերկրացիների գրավոր հրավերով էր վերագարձել հայրենիք, մինչդեռ մինչև հիմա պատմում էր, թև հայրենակիցների համար անակնկալ էր իր վերագարձը, քանի որ նրանք կորցրել էին իսպառ իր հետքը: Մի կողմ ենք թողնում այն, որ Օրին խոհեմորեն լռում է Անկեղակոթի խորհրդածողովի իր իսկ արած պատմութիւններից մեղ հայանի ընթացքի ու արդշունքների մասին, ինչպես նաև այն առաջարկները, որ արել էին խորհրդածողովին մասնակցած մեկիքները Հոռմի պապին, որի մասին Օրին բնորոշ կերպով լռում է իսպառ և այն հարաբերութիւնների մասին, որ ունեին նրանք Պֆալցի կուրֆյուրստի հետ, որի դերը ակնբախորեն նվազեցված է հիմա:

Փաստապես Օրին դեսպանական պրիկաղի հետ բանակցութիւններ էր սկսում ոչ թև իր արևմտակորոպական հովանավորողների, այլ հայ մեկիքների ամուսնից: Փոքր-ինչ հետո նա հայտնելու էր, թև Անկեղակոթի մեկիքները «անօրենների» երկյուղից չէին ուղում նույնիսկ որևէ գրութիւն տալ իրեն և ի վերջս բավականացան իրեն ձեռքը տալու միայն կնիքներով և ստորագրութիւններով վավերացրած երեք գրութիւններ, դրանցից մեկը բոլոր Բրիտոնյա իշխանների անուռով (sic!) իրենց ազատութիւն մասին, և երկուսը՝ մեկիքների ստորագրութիւնները և կնիքները կրող Բարս բլանշ, որ հանձնել էին Օրին և Մինաս վարդապետին հարկ լինելու դեպքում եվրոպական պետութիւնների հետ համաձայնութիւն տերտեր գրելու գրանց վրա՝ ըստ իրենց բարեհայեցութիւն<sup>2</sup>: Հարկավ այս բացատրութիւնը հակասում էր ոչ միայն վերը հաղորդածին, այլև այն

<sup>1</sup> Յ 30 B. նույն տեղում, ԱՅ 37:

<sup>2</sup> նույն տեղում, ԱՅ 44:

իրողութեանը, որ Օրիի թղթերում պահպանվել են պետություններին ուղղված ոչ թե ընդհանուր մի գրույթուն, այլ առանձին պետություններին ուղղված առանձին դիմումներ:

Օրիի կատարած «շտկումների» դիվանագիտության նպատակը պարզ է միանգամայն: Օգտագործելով իր ստացած լիազորությունները և կայսրի ու կուրֆյուրստի կողմից բերած հանձնարարականները՝ նա կամենում էր Հայաստանի ազատագրության խնդրի լուծումը հիմնականում առաջադրել միայն ցարի կառավարությանը: Այս նպատակով նա հնարավոր համարեց նույնիսկ պնդել, թե իբր արդեն էջմիածնի խորհրդածողովի ժամանակ է հայ պատվիրակների առաջ խնդիր դրված եղել Հայաստանի բախտի տնօրինումը հանձնել բացառապես ռուս քաղաքներին և միայն վերջինից մեծում ստանալու դեպքում՝ դիմել հոռմենական կայսրին: Պատմական իրողությունների մասին Օրիի տված սպակոզմոնորոշող այս բացատրության մեջ ուղղում մտցրեց Մինաս վարդապետը տարիներ. անց, 1725 թվականին, Եկատերինա I կայսրուհուն հասցեագրած իր գրություն մեջ, ուր ասված է, թե՛ «I (30) ամ է, որ մեր ազգն մեծ իմփեռայթօղի ուխտին և հրամանին հնազանդեալ նեղութիւն բաշում են և յոյս ունին, որ մեծ թագաւորէն սղորմութիւն լինի իւրեանց»<sup>2</sup>: Հայերի՝ բացառապես ռուս ցարի «ուխտին» և «հրամանին հնազանդելու» համար հայերի կատարած շրջագարծը վարդապետն այստեղ կասում է Պետրոսի միանձնյա թագավորության սկզբնավորման (1696 թվականի) հետ: Անշուշտ ավելի ստույգ կլիներ կլոր «30» տարվա տեղ դնել «24» տարի: Այդ դեպքում կստանայինք 1701 թվականը, այսինքն՝ այն տարին, երբ իրոք պատմական հեղաբեկում կատարվեց հայ քաղաքական բանավարությունների ուղղության մեջ:

Նախնական իր պարզաբանումներից հետո Օրին հարկ տեսավ նաև հիմնիվեր վերախմբագրել ազատագրական իր նախկին ծրագիրը: Հայաստանի ազատագրման համար կազմակերպելիք արշավանքի նախաձեռնությունն ու ղեկավարությունը նա վերապահում է հիմա ոչ թե կուրֆյուրստին, այլ ցարին: Այնուամենայնիվ նա լուրջ էր տակավին արշավանքի քաղաքական հետևանքների մասին:

Ճիշտ է, Օրին ներկայացրեց ցարին ուղղած մեզ ծանոթ 29-րդ ապրիլի 1699 թվականի գրությունը, ուր մեկիքների անունից ասվում

<sup>1</sup> Յ 3 0 B, նույն տեղում, № 44:

<sup>2</sup> Տե՛ս մեր՝ Պետրոս դե Սարգիս Գիլանենց, էջմիածին, 1916, էջ 24:

էր, թե «մենք մեր իշխանքով պարօնորս ամենեքեանքս ՚նազանդ լինինք քո մեծ թագաւորութեանդ որպէս ՚նազանդ են բազում իշխանքն քո հրամանին»<sup>1</sup>: Սակայն նրան արված լիազօրացրի լատիներեն և սուտերեն թարգմանություններից տեղեկանում ենք, թե Անկեղտիթում հավաքված մելիքները պարտավորութիւն չէին ստանձնել Հայաստանի ազատագրման գործը զլուխ բերելու ՚ամար «մեծից ցփորը ևնխարկվել Օրբի բոլոր կարգադրություններին և ըստամենայնի զիմացրել նրա ձեռնարկումներին ներհակոզներին՝ առ այս չլինաչելով իրենց բոլոր կարողութեանը, հարստութեանը, արջունն ու կշանքը»<sup>2</sup>: Մելիքների անտօնից ցարին ուղղված զիմումի մեջ արքայազարմ Պուշչան առհմից սերված Օրին ՚անձնարարվում է արպես մի մարդ, որ «ընդօճելի է, որ զլիսավոր լինի ի վերա մեր Հայաստանեայց երկրին»<sup>3</sup>:

Հոտ երեսչթին մելիքների անտօնից ցարին ներկայացվելիք հաչերեն գրութեան տերաւը խմբադրելիս Օրին մի պակ հենց իրեն էր պատկերացնում Ռուսաստանի ձեռնով ազատված և ցարի կողմից հովանավորված ապագա Հայաստանը զլիսավորողի դերում: Օրբի նման արամագրութեանը կարող էր անտօնը ստանալ հայ ազատագրական շարժման անցյալում հաճախակի կրկնված մտայնութեանից. հաճախ շարժման ղեկավարը հանդես էր գալիս նույնիսկ հաչկական թագի հավակնորդի դերում: Վարը, կանգ առնելով Օրբի իրանական առաքելութեան հետ կապված միջադեպերի վրա՝ պիտի առիթ ունենանք տեսնելու, որ նրան ևս վերադրվում էր նման հավակնութեան:

Սակայն շտապենք դիտել, որ Մոսկվայի կառավարութեանը ներկայացրած Օրբի հետագա գրութեանների մեջ լիովին բացակայում է աչդ հավակնութեան նստվածքը: Այս հանգամանքը գալիս է նորից հաստատելու, որ 1701 թվականին մելիքների անտօնից ցարին ներկայացված հաչերեն գրութեանը պատրաստվել էր մի ժա-

<sup>1</sup> Լատիներեն տեքստում ավելի որոշ է ստված՝ «ut nos et omnes populi nostri, magni et parvi subieciamur potestati et administrationi M. V. prout toi principes et Bojarini» qui sunt sud obedientia V. M., հմտմ. Յ 3 0 8, նույն տեղում, ԱՅՁ 6 և 7:

<sup>2</sup> Նույն տեղում, ԱՅՁ 3 և 4:

<sup>3</sup> Նույն տեղում, ԱՅ 6: Լատիներեն տեքստը շտա ավելի համեատ դեր է տալիս Օրբին: Այստեղ ստված է միայն, թե նա արժանի է, որ մելիքների կողմից պատգամավոր լինի ցարի տաջ՝ «judicavimus illum esse capax, ut fierat deputatus ad Vestram Majestatem», նույն տեղում, ԱՅ 7:

մանակ, երբ Օրին արդեն մի կողմ էր գրել Պֆաւլյի կուրֆյուրստի դահակաւոթյան խնդիրը, բայց դեռ չէր կանգել Պետրոս Մեծին Հայաստանի տիրակալ դարձնելու հետանկարին: Ըստ երևույթին ցարին ներկայացված հայերեն գրութունը խմբագրվել էր գեռ վելեննալում, ալսինքն՝ ռուսների հետ բանակցություններ սկսելուց անմիջապես առաջ:

Մոսկվայում սկսված բանակցութունները և գրանց հետ կապված ծրագրային հեռանկարների վերախմբագրումը կանգ շտան աչս կետի վրա: Հայաստանի սպագոյլի անորոշ հեռանկարը չէր կարող գոհացնել ստուգութուն սիրող ցարական կանցլեր Գուսովինին: Օրիի հետ ունեցած իր առաջին խսկ հանդիպումից հետո վերջինս մի հարցապուցակ հանձնեց նրան, խնդրելով կուրֆյուրստի և դաշնակիցների սեննալիք մասնակցության մտնրամտնությունները ճշտելուց զատ, պատասխանել նաև աչն հարցին, թե ո՞ւմ են պատկանելու նվաճվելիք երկրները<sup>1</sup>: Հարցը գրված էր շտա որոշ և պետական կանցլերը բերանացի ևս հասկանալ պիտի տված լինելը հալ զիվանագետին, թե ինչ պատասխան էր սպասվում նրանից: Անգամ եթե չէր հուշվել սպասված պատասխանը, առկա հանգամանքների արամագրությունը պիտի հուշարկեր Օրին իրերի նոր կացությանը համապատասխանող միակ եզրակացութունը:

Ե՛վ աչն զեկուցման մեջ, ուր պատասխաններ տրվեցին կանցլերի հարցաթերթին<sup>2</sup>, և՛ ընդարձակ աչն լրացումների մեջ, որոնք կցվեցին ալզ զեկուցմանը<sup>3</sup>, և՛ վերջապես, ցարի անունով ներկայացրած հատուկ գրության մեջ<sup>4</sup> Օրին ալլևս տարակուլսի տեղ չկուղեց աչն մասին, թե ո՞վ էր լինելու Հայաստանի գերագույն տերը: Բացորոշ նա նշում էր հիմա, որ Հայաստանը գրավելու է և Հայաստանում իշխելու է միաչն ցարը<sup>5</sup>:

Եվրոպական օգնությանը անհույս՝ Օրին հրամարվում է Հայաստանի ազատագրման պֆաւլյան ծրագրից և գրա փոխարեն թեյադրում իր քարտուղարին տպագա արշավանքի և նրա հեռանկարների մասին նոր ծրագիր: Աչն զրոշակները, որոնք առաջնորդելու են Հայաստանի ազատարարներին Իրան, կրելու են իրենց վրա ոչ թե

<sup>1</sup> Չ 3 0 B. նույն տեղում, ԱՆ 33:

<sup>2</sup> նույն տեղում, ԱՆ 40, 41:

<sup>3</sup> նույն տեղում, ԱՆ 42, 43:

<sup>4</sup> նույն տեղում, ԱՆ 35, 36:

<sup>5</sup> նույն տեղում, ԱՆ 40, 33, §§ 4 և 5:

Բրիտտոսի խաչքը կամ Լուսավորչի պատկերը, այլ, ինչպես ասում է հիմա Օրին, ոուս պետական զինանշանը: Արշավանքը գիտվելու է որպես ոուսական նախաձեռնություն: Առաջին տարում հարկ չի լինի արևմտանվրոպական իշխանների և անգամ Պֆալցի կուրֆյուրստի մասնակցությունը: Հայաստանի նվաճման համար հաջերը կուրֆյուրստից օգնություն իսկ չէին խնդրել, հավատացնում է հիմա Օրին, այլ միայն նրա դաշնակիցների օժանդակությունն այն դեպքում, եթե Բուրքիան պատերազմ հայտարարելու լինի ոուս ազատարարներին, և այսպիսով ցամաքի և ջրի վրա կարիք լինի եվրոպական ուժերի միջամտության<sup>1</sup>: Եվ քանի որ կուրֆյուրստը չէր կամեցել հեռու մնալ բարենպաստակ այդ դործից, օգնություն էր խոստացել հաչիրին, պայմանով, որ ցարը համաձայն լինի դրան<sup>2</sup>: Եթե ցարը կամենա ընդունել նրա և կայսրի օժանդակությունը, արևմտանվրոպական այդ իշխողները կհսկան տարանցիկ դորամասերի ծախսը՝ դնելով իրենց ուժերը նրա դրոշի տակ և հանդերձավորելով դրանք որպես ցարական դորամասեր<sup>3</sup>:

Նահանջելով նախկին ծրագրի առաջադրություններից, Օրին ներկա դեպքում ելնում էր գուցե նաև այն հայտարարություններից, որ վերջին պահին Վիեննայում նրան կարող էին արած լինել գերմանական կայսրն ու Պֆալցի կուրֆյուրստը:

Օրիի նոր ծրագիրը նախկինում ուրվագծված խաչակրության հետ չունի այլևս որևէ նմանություն: Խոսք չկա ոչ հռոմեական եկեղեցու օժանդակության, ոչ էլ եկեղեցական կամ դավանաբանական սրևէ դործարքի մասին:

Զի՞ նշանակում այս, թե հիրավի անկեղծ չէին Օրիի նախընթաց հավաստիացումները փր և մեկիքների կաթոլիկ դավանանքի մասին: Չենք կարծում: Նոր ծրագիրն ապացուցում է ընդհակառակը, որ չէր կեղծում Օրին, երբ ասում էր, թե «հունական հերձվածը» այն ուրվականն է, որը հայ մեկիքներին ետ էր վանել ցարական կառավարությունից: Խաչակրաց մի արշավանք հոնագավանությունը դրոշի տակ կամ ոուսական եկեղեցու հետ կնքած մի գործարք այդ արշավանքի կապակցությամբ, ավելի շուտ հենց դա կլիներ Օրիի և մեկիքների դավանաբանական ըմբռնումներին դեմքն ընթաց մի մտահղացում: Տակավին այն դիմումի մեջ, որ մեկիքնե-

<sup>1</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 40, հմմտ. № 120:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, № 40, § 2:

րի անունից Օրին հանձնել էր ցարին, ակնկալություն էր հայտնել-  
վում, թե ցարը բերելու է «ամենայն քրիստոնէից հաւատոցն առձա-  
կութիւն»<sup>1</sup>: Իր կողմից Օրին հարկ էր տեսնում, որ ռուս զորքերն  
Իրան ուղարկվելու ժամանակ հատուկ հուսադրական գրություննե-  
րով նախազգուշացվի տեղի ամբողջ ազգաբնակչութիւնը: Հայտ-  
նում էր, որ հայերեն այգալիսի գրություններ կարող է պատրաստել  
իր ընկեր Մինաս վարդապետը: Պահանջում էր նույնիսկ, որ ցարը  
խոստանա մելիքներին՝ Հայաստանի նվաճումից հետո «անո՛ւ շտալ  
նրանց ազատությանը և նախ և առաջ՝ շղիպշիլ նրանց կրօնին»<sup>2</sup>:

Մոսկովյան իր ծրագրում Օրին շժանրացավ Հայաստանի պե-  
տության ապագա ստատուտի ու հեռանկարների շարադրանքի վրա:  
Նրա նոր առաջարկների մեջ «Հայաստանի թագավորութեան» դա-  
ղափարը նահանջում էր «հայկական երկիր» աշխարհագրական  
պարզ հասկացութեան տուաջ<sup>3</sup>: Նա չգրեց Ռուսաստանի օդնութեամբ  
«Հայաստանի թագավորութեանը», այսինքն՝ հայ խնքնուրույն պե-  
տականութեանը վերականգնելու այն խնդիրը, որը ոչ միայն Օրինից  
առաջ, այլև նրա ժամանակ և ավելի քան մի դար նրանից հետո իսկ  
դեռ կենդանի էր հայ ժողովրդի տարբեր ծաւրերում, հանդիսանա-  
լով հայ քաղաքական մտքաուղմների հիմնական խնդիրներից մեկը:

Անշուշտ, Օրին կամովին չէ, որ լուսնյան էր տալիս «Հայաս-  
տանի թագավորութեան» այն պահանջը, որ պաշտպանել էր պիտլայ-  
յան ծրագրում: Սխալ կլիաներ մտածել, թե նա կամովին լքել էր  
տրադիցիոն այդ պահանջը կամ որ նա հիմա հայ ազատագրական  
շարժման բուն նպատակը անվերապահօրեն նշմարում էր Իրանի  
հայաբնակ դավառները Ռուսաստանին միակցելու հեռանկարի մեջ:  
Հատկանշական չէ՞, որ նոր իր ծրագրում նա պահանջում էր ասպ-  
հովել ոչ միայն հայ մելիքների կրօնական անկախութեանը, այլև  
նրանց «ազատութեանը», պահանջ, որի կրօնկրեւ իմաստը նա այլևս  
նպատակահարմար չհամարեց պարզաբանել: Պիտի կարծել, որ  
Հայաստանի քաղաքական ապագան նա նախ և առաջ լծորդում էր  
տեղական մելիքներին հատկացվելիք ոչ միայն դասային, այլև քա-  
ղաքական հին իրավունքների կամ նոր հավակնութեանների հետ:  
Պիտի կարծել, որ ներկա դեպքում նա միայն հարկադրված էր ա-  
կանջ դնելու դեսպանական պրիկազում իրեն արված հուշարկումին:

<sup>1</sup> Չ 3 0 8. Նույն տեղում, № 6, էջ 18 և հա.:

<sup>2</sup> Նույն տեղում, № 54:

<sup>3</sup> Նույն տեղում, №№ 35 և 43:



նչէնք, որ Օրիից շատ հետո, XVIII դարի 80—90-ական թվականներին, Հայաստանի ստատուտի խնդրում քաղաքական առնարկի նախնից կատարեցին նույնիսկ Հ. Արղաթյանն ու Հ. Կազարյանը<sup>1</sup>:

Թե որչափով Օրիի գործունեություն մոսկովյան ժամանակաշրջանում բանուկ էր տակավին «Հայաստանի թագավորությունը վերականգնելու դադափարը՝ այդ մենք զեռ առիթ պիտի ունենանք տեսնելու: Իր կամքից իսկ անկախ՝ Օրին չէր կարող անդիտանայ այդ դադափարի այժմեականությունը, որչափ Հայաստանի ազատագրման հեռանկարը պիտի լծորդեր ոչ միայն ցարական Ռուսաստանի քաղաքական ուղեգծի, այլև հայ ժողովրդի կամ զեթ հայ իշխող շրջանների քաղաքական ձգտումների հետ:

Հայերի ազատություն կամ, որ միևնույն է, «Հայաստանի թագավորությունը» վերականգնելու արագիցիտն հեռանկարը հայ մելիքների բանադնացը զրեց նոր այն շավղի վրա, որով հայ ժողովրդի այլեպէլ խափերը և մասնավորապէս հայ մելիքները քայլելու էին մինչև այն ժամանակները, երբ ցարական Ռուսաստանը սկսեց իրագործել Արևելյան Հայաստանի ազատագրումը Իրանի և Թուրքիայի լծից, թողնելով: որ «Հայաստանի թագավորությունը» վերականգնելու դադափարը մնա սոսկ հայ ազատասերների բարեպաշտ բաղձանք: Չնայած որ այդ բաղձանքի իրագործումը երբեք էլ չէր մտել ցարիզմի հետամտած բուն կամ իրական խնդիրների շարքը, այդ շխտնդարեց, որ XVIII դարի ընթացքում ցարական կառավարությունն իսկ այս կամ այն չափով հայ իշխող գառակարգերին մերթ ընդ մերթ հուսադրեր այդ ուղղությունը: Չմոտանանք, որ երբեմն հենց «Հայաստանի թագավորությունը» վերականգնելու շուրջն էին դառնում ցարիզմի և հայ գործիչների քաղաքական բանակցությունները, թեպետև չհանդուրժում արտավարիչ հանձնառումների:

Այդ կարգի բանակցությունների ընթացքում անմիջապէս գրադեցնողը Արևելյան Հայաստանի աննեքսուման կամ գաղութացման խնդիրը չէր, այլ նրա «պաշտպանություն» կամ «հովանափորման» հարցը: Յարական դիվանագիտության հեռանկարների մեջ Հայաստանը երբեմն պատկերանում էր որպէս Ռուսաստանի կողմից ստեղծվելիք քաղաքական ուրույն միավոր: Այսպէս, զեռ 1720-ական թվականների սկզբներին Պետրոս ցարը դիտում էր Արևելյան

<sup>1</sup> Այս մասին տե՛ս Առ. Մնացականյանի՝ «XVIII դարում գրված հայաուսական գաղնագրի հարցի շուրջը» ուսումնասիրությունը («Քննարկը Ստանդարտի», № 4, էջ 139—160):

Հայաստանն ու Արևելյան Վրաստանը որպես դաշնակից երկրներ, որոնց օգնությամբ Ռուսաստանը պիտի տիրապետեր Կասպից ծովի արևմտյան և հարավային նեղ եզրաշերտին: Այդ նպատակի իրագործումը դյուրացնելու համար մի ժամանակ ինքը՝ Պետրոսն իսկ ծրագրում էր հայ-վրացական միացյալ թագավորության կազմակերպումը Ռուսաստանի հովանու տակ<sup>1</sup>:

Եթե 1720-ական թվականներին հայ-վրացական միացյալ թագավորության հեռանկարը վերականգնանում էր անգամ Պետրոսի նեոամտած քաղաքական ուղեգծի մեջ, անհնարին չէ, որ այդ գաղափարը սեալ հիմքեր ունեցած լիներ նաև հայ-վրացական մարտական համերաշխության սլորատում: Ըստ երևույթին ցարը երբեմն ձգտում էր ցույց տալիս հաշվի առնել Ռուսաստանի հետ բանակցող չալ և վրաց զործիչների իշխող բաղձանքներն ու արամազրությունները:

Նորոթյուններ ենք գտնում Օրբի մոսկովյան ծրագրում նաև ապագա արշավանքի ուղղմական հեռանկարների նկատմամբ: 1701 թվականի հոկտեմբերի սկզբներին տեղի ունենալիք արշավանքի համար, ստում է Օրբն, ցարը տալու է 25 հազար մարդ՝ 15 հազար հեծյալներ և 10 հազար հեռակալ զորք, բաղկացած պարսկական սահմանագծի կողակներից և չերքեղներից, սրով հնար կլինի արագ ու անսպասելիորեն ներխուժել Իրան: Այս բանակի համար պիտի հարկավորվի վեց թնդանոթ, երկու հրասանդ, հարյուր սումբ և այլ ուղղմաուղար: Տասնադարանոց մի զորամաս, հավասարապես բաղկացած հեռակալներից և ձիավորներից, պիտի առափնի նիզաբազի նավահանգստում, որպեսզի շարժվի դեպի Շամախու և Հայաստանի շորս աչն ամրությունները, որոնց անունները նշված էին նաև Օրբի պֆալցյան ծրագրում<sup>2</sup>: Թշնամու այդ ամրությունները ավելի լավ են պաշտպանված, քան այդ պատկերացվում էր առաջ<sup>3</sup>: Ամրու-

<sup>1</sup> В. П. ІВЕРОВ, *Начини тегում*, էջ 190 և հտ., 216 և հտ.:

Իր պարզաբանությամբ թշնամիների մեջ Օրբն ստում էր, որ արշավանքը կտրելի է սեղել նույնիսկ ավելի փոքրաքանակ ուժերով, բավական կլինի նույնիսկ 15—20-հազարանոց մի բանակ և անգամ 5-հազարանոց զործու-նակ մի զորամաս, որպեսզի թշնամուն հանկարծակի բերելու պայմանով սպասովից լինի սուսների սկզբնական հաջողությունը (Յ 3 Օ В, *Начини տեգում*, № 42):

<sup>3</sup> Այսպես, Շամախու կայսրը ստաջիա 20 մարդու տեղ ունի հիմա 150 մարդ: Այստարար զորամասերի կողմն անցնող այդ բաղաբի ձիավորները բաղկացած են ոչ թե 10 հազար «հայերից», այլ 10 հազար «բրիտանո-»

Սյունները գրավելուց հետո բոլոր զորքերը միանալու են Նախիջևանում՝ աշտուղից Օրդուբադ արշավելու համար: Այս քաղաքի «պարսիկ» բնակիչները հարուստ են և արհեստագետ, որպիսիք չեն գտնի ողջ աշխարհում: Այստեղ պատրաստում են այնքան դենք, որ կտրելի կլինի գինեկ հարյուրհազարանոց մի բանակ<sup>1</sup>:

Ռազմական գործողություններին մասնակցելու են 5000 հայ գինեվոր, որոնք պիտի գնան Նրևանի բերդի վրա. վերջինս ունի 200 մարդու պաշտպանություն և, բացի այդ, հենվում է շրջակայքում տարտղնված ռազմական ուժերի վրա (նախընթաց ծրագրում այս մասին չէր ասված ոչինչ): Բերդը պիտի դրավվի նրա մեջ դրոնված հայերի ձեռքով կամ, հակառակ դեպքում, օժանդակ ուս զորամասերի հարձակումով<sup>2</sup>: Վերջիններիս օգնության պիտի գան Հյուսիսային Կովկասում (Բեշասու լեռան մոտերքում) թողած զորքերը, որոնց խնդիրն է լինելու ցամաքային ճանապարհով (հավանաբար՝ Գարիալի կիրճով) մուտք գործել Վրաստան, միացնելով ռուսական զրոշի տակ վրաց իշխաններին ու տեղական ավագանուն<sup>3</sup>: Եթե մինչ այդ շահը կարողանա ղեկի տակ կանչել և ցարի գեմ շարժել իր ուժերը, — այս անգամ արդեն Օրին Իրանի ռազմական բոլոր ուժերը կենարտնացած չի համարում Անդրկովկասում — ռուսները չպիտի թողնեն, որ նա Անդրկովկաս շարժվի Արաքսի վրայով: Եթե, ընդհակառակը, շահը շարունակի դեղերել երկրի խորքում, ռուսները պիտի անցնեն Արաքսը և արշավեն Ռավրիզի վրա: Այս քաղաքի անբավ հարստությունները գրավելու համար. պետք է ըստ կարելու չն ավելացնել զորքի թիվը, քանի որ Ռավրիզն ու նրա շրջակայքը բնակեցված է մուսուլմաններով, իսկ մինչ այդ ռազմական գործողությունները կատարվելու էին գերազանցորեն՝ քրիստոնյա ազգաբնակչություն ունեցող երկրամասերում: Թեկուզև Ռավրիզը

սյաներից»: Այդ բազաթի շրջակայքում «անհավատներին» մի գյուղի գլխաց կա տասը «քրիստոնյա» գյուղ. այս վայրերից ավելի շուտ կարելի է սպասել օգնություն քրիստոնյաների կողմից, քան թե գիմադրությունն անհավատների կողմից: Գանձակի կայսրոն առաջվա 30 մարդու փոխարեն պաշտպանված է 100 մարդով: Լուտու և Ղափանի բերդերը, ուր առաջ չկար ոչ մի պահակ, հիմա պաշտպանված են 20-ական մարդով: Նախիջևանի կայսրոն ունի ոչ թե հարյուր մարդ, այլ զրա կրկնակին (հմտ. նույն տեղում, №№ 42 և 43, §§ 2 և 3): Մի տեղ ասված է, թե յուրաքանչյուր իրանական խան իր տրամադրության տակ ունի 150 գինեվոր (նույն տեղում, № 27):

<sup>1</sup> Յ 30 B, նույն տեղում, № 43, § 5:

<sup>2</sup> Նույն տեղում, № 43, §§ 5—8:

<sup>3</sup> Նույն տեղում, № 43, § 9:

պաշտպանվում է ութ թնգանոթով, այնուամենայնիվ շունի ո՛չ ամբողջուն, ո՛չ էլ ուժեղ կայազոր: Քաղաքը դրավելուց հետո կարելի է նրա հաշվին հարստացնել և զինել հարյուրհազարանոց մի բանակ՝ ավարի ենթարկելով նրա շուրջը փոված հարուստ դշուղորայքը: Կողակները այդ կանեն նույն հաճույքով և հաջողությամբ, ինչպես իր ժամանակին ատաման Ստեփան Ռադինը, որը 3000 մարդով կողոսուտի էր ենթարկել մերձկասպյան շրջանի հարուստ քաղաքներն ու մանավանդ Գիլանի երկիրը և զլխակորույս շահը ի վիճակի չէր եղել խանդարելու քաղաքի ավարառումը: Ինչպես այն ժամանակ, նույնպես և հիմա բավական է միայն հարուստ ավար խոստանալ կողակներին, որպեսզի նրանք շահագրգռված լինեն առանց դժվարության դրավելու Գիլանի երկիրը<sup>1</sup>: Այսպիսով, երկու շաբաթվա ընթացքում Հայաստանը և դրանից դուրս՝ Ռավրիզն ու Գիլանը կլինեն ռուսների ձեռքում: Հարկ եղած նախազգուշացումով ու ռազմապատրաստությամբ այս երկրները հնարավոր կլինի դրավել անգամ հինգ հազար մարդով<sup>2</sup>:

Քանի որ վերահաս ցրտերի պատճառով շահը շարտի կարողանա զորք հավաքել և առաջ խողալ ռուսների դեմ՝ ձմեռը պիտի անցկացնել Ռավրիզի և Գիլանի կողմերում և մասամբ էլ տեղավորվելով Հայաստանի կողմերում<sup>3</sup>: Կարիքից նեղվելու վտանգ չի լինի: Հայաստանի 17 գավառներից յուրաքանչյուրը ի վիճակի է առանց դժվարության տարեկան 100 հազար մարդ կերակրել: Նրանց հարստությունը անչափ է, ինչպես նաև նրանց ռազմական ունակությունը: Պատերազմի դեպքում այս գավառները կարող են տալ 116 հազար կովոզ: Բացի այդ, այս կողմերից շուրջ վաթսուն հազար առևտրականներ ապրում են Քուրքիայում: Հայ մելիքների կարգադրությամբ սրանք իրենց հարստությամբ և զենքով տուն կվերագանան և իրենց կզենեն ցարի տրամադրության տակ, Բացի այդ, վրացիները մոտ 30 հազար կովոզ կտան անմիջապես<sup>4</sup>: Շահը կարող է հույս դնել հազիվ իր 38 հազար կովոզների վրա, որոնցից հազիվ միայն 5000 մարդ պիտի կարողանա զորահավաքի ենթարկել: Քանի որ իրանական զորքերը ձմեռը դռնվում են «Հայաստանի տաք կողմերում», ամառվա մոտերքը պիտի նեղը լծվեն և դրվեն անձնատուր լինելու անհրաժեշտության առաջ: Օրին հավանորեն նկատի

<sup>1</sup> Э. З. О. В., *Նույն տեղում*, № 43, §§ 10—12:

<sup>2</sup> *Նույն տեղում* №№ 42 և 43, § 14:

<sup>3</sup> *Նույն տեղում*, № 43, §§ 13 և 15:

<sup>4</sup> *Նույն տեղում*, № 40, § 5, № 43, § 15:

աններ Մուղանի գաշտում գեղերոց զգլրաշներին, որանց սար բարձրանալուն Իրանի գեմ սկսված սաղմական գործողությունները արգելք պիտի ստեղծեն: Իրանական գորքի մնացորդը, շուրջ 200 հազար մարդ, անկարող պիտի լինի սրիկ բան անել, որչափ տերութեան արեւելյան սահմաններին գամված, անընդհատ կոխվներ են վարում թաթարների (իմա՝ ուղրեկների) գեմ: Այս պայմաններում զժվար չպիտի լինի հաղթանակով պսակել սկսված արշավանքը:

Եթե վերջերս և սուսգրենր այս ամենի հետ Պֆալցի ծրագրի սաղմական կետերը, կանոններ, իրոք, որ Օրին հիմա ավելի շատ է պիջումներ անում Հալատասանի սեալ իրադրությունը, քան արամագիր էր անել սուս: Որոշ կետերում նրա բուսափորիկ թվանշանները չաղում են, ձգտում ցուլց ասյով մանկ իրական կոնսուրաների մեջ: Հիմա նա չի հեմխում սասկ կիրտոպական գորքերի գերազանց տեխնիկայի կամ արագաշարժության վրա: Կրանց փոխարեն վրձնական նշանակություն է ստանում Իրանին սահմանամերձ կողակների ու շերքեղներն ուժն ու սաղմական տարերքը: Օրին կիսով չափ նվազեցնում էր նաև հալ սաղմական ուժերի քանակը. փաստապես գործողության մեջ պահելով միայն այլ ուժերի վաղեմի սեալ էքզիվալենտը՝ սոսկ 5000-անոց հալ սաղմական ուժը: Վրացական գորքի քանակը ևս 80 հազարից իջնելով, հասնում էր 30 հազարի, թվանշան, որ հավանորեն համապատասխանում էր կամ մերձենում վրացիների: հնարավորություններին:

Սաղմական նոր ծրագիր մշակելիս Օրին հաշվի է անում մտախի անցյալում եղած սպասամբական շարժումների փորձը: Եթե պֆալցյան ծրագիրը շարագրելիս նա հիշատակում էր Գուրգին խանի և Մուլեյման բաբայի սպասամբությունները, հիմա նա կնում էր Ստ. Ռազինի փրանական սաղմարշավի փորձից: Ռազինի ժամանակ, խորհում էր նա, կողակները ձաշակել էին Շիրվանի և Գիլանի լիովնոնը: Նրանց հերթական հարվածին ավար կորող է դառնալ ողջ Իրանը:

Որչափ ծրագրվող գործողությունների սաղմական հենարանն ավելի մոտ էր քաշված սպագա սաղմարեմին և որչափ սուս գիվանագեաներն անհամեմատ ավելի լավ պիտեին Իրանը, քան Պֆալցի իշխողները, Օրին պիտի աշխատեր ավելի սասագախոս լինել հիմա: Բայց կար նաև մի այլ սպասմտ:

Պաշտպանելով իր գործը, Օրին վկայակոչում էր Մոսկվայում գեղերոզ վրաց թագավոր Արչիլին, մի մարդու, որ զինակցել էր իր կորսր՝ Գուրգին խանի ապստամբությանը, այլև հայանի է նաև որպես վրաց առաջամիտ մատենագիր: 1661—1669 թվականների բնօրացրած այս իշխանը հինգ անգամ Իմերեթի և մի անգամ Կախեթի գահն էր բարձրացել և յուրաքանչյուր անգամ զահրճեկեց եղել մեկական տարի թագավորություն անելուց հետո: Ժամանակավոր հաջողություններով բնգմիջվող տեական այս անհաջողությունների պատճառներից մեկին այն էր անշուշտ, որ օսմանցիների և սեֆյանների մոտ համառ ապստամբի հուշակ էր վաստակել հա: Բայց հենց այն փաստը, որ քաղաքական նշանավոր այդ գործիչը այդքան հաճախ կարող էր ելեկջ անել վրաց արքայական գահերից մեկի սանգուզքով, ապացույց էր, թե նրա հալածիչների գորությունը ևս չանգչում էր հրարուխների վրա, որանք ամեն վայրկյան կարող էին ժայթքել ու խորտակել նրանց:

Կորցրած իր իշխանությունը վերականգնելու հուսով Արչիլը ըստ երևույթին զրական ակնկալություններ ուներ նաև հայերից: 1677 թվականից շփման մեջ լինելով հայկական շարժման ցեկավարների հետ՝ հետագայում նա նպաստում էր Օրիի մոսկովյան ծրագրի մշակմանը: Պատահական չէ, որ Օրին իր ծրագրում հատուկ տեղ էր հատկացնում նաև սաղմական այնպիսի գործողությունների, որոնց թատերարեմը հանդիսանալու էր ապստամբ Վրաստանը: Հավանորեն նա այդ անում էր ունենալով Արչիլի հավանությունը: Օրին հետագայում առիթ ունեցավ խոստովանելու, թե ջանք չի խնայել գրավելու Պետրոս ցարի միաքր ոչ միայն հուշադրերի, այլև Արչիլի միջոցով<sup>1</sup>:

Ինքն՝ Արչիլն իսկ պաշտպանում էր այն միաքրը, թե անհնարին է ապահովել անգրկովկասյան ժողովուրդների ազատությունն ու բարօրությունը՝ առանց վրաց և հայ իշխողների զինակցության: Սակայն հրա միարն ավելի հեռուն էր թափանցում: Գաղափարապես հազեցված չափական իր գործերի մեջ, օտարերկրյա նվաճողների հանդեպ թշնամաբար ու անհաշտորեն արամադրված վրաց այս թագավորը, բնեկով իր երկրում բռնկած ապստամբությունների պարտության պատճառները՝ նշում էր նաև այդտեղ իշխած կարգերի արասները: Նա նշավակում էր վրաց սանձարձակ թափաղներին ու անիմաստուն թագավորներին<sup>2</sup>:

<sup>1</sup> Չ Յ Օ Վ. Նույն տեղում, № 120:

<sup>2</sup> Бердзенишвили և այլք. Նույն տեղում, էջ 382:

1703 թվականին Պետրոս Մեծին ուզղած իր մի նամակում, սկարագրելով Թուրքիայի և Իրանի լծի տակ խոնարհած վրաց ֆեոդալների կացութունը, Արշիլն ասում էր, թե բավական կլինի թեկուզ միայն Ռուսաստանի բարոյական աջակցությունը, որպեսզի վրացիները ոտքի կանգնեն մուսուլման տիրապետությունների դեմ: Ընթե քրիստոնյա մեր միապետի կողմից օգի բարակ մի հոսանք իսկ օգնություն հասնի նրանց, հայտնի է ամենքին, որ կմիանան տարանջատված վրաց երկրները, մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանելով իրենց հայրենիքը երկուսի (իմա՝ Թուրքիայի և Իրանի — Ա. Հ.) դեմ: Իսկ հիմա ակամա ծառայում են ոտքերին, քանի որ զուրկ են գլխից»<sup>1</sup>:

Կրկնելով գրեթե նույն միտքը, բոյարին Գուլովինին ուղղած մի նամակում Արշիլը հայտարարում էր, թե Վրաստանի ժողովուրդը — աղնվականներ, առևտրականներ, արհեստավորներ — ապահովված է ղենքով և պատերազմի դեպքում միահամուռ հանդես կգա հարյուր հազար և էլ ավելի մարդով՝ պաշտպանելու սուլթանի ու շահի դեմ իր կրոնն ու հայրենիքը<sup>2</sup>: Այստեղ Արշիլը ինքը ևս գնում է կովոզնների փքված թվանշան. սակայն հավանորեն նկատի ունի ոչ միայն վրաց, այլև հայ մելիքների, առևտրականների ու արհեստավորների գինակցությունը:

Ռազմական հնարավոր հեռանկարից զատ Օրբի ծրագիրն ունի նաև զիվանդարտական նպատակալացություն: Եթե ծրագրի հեղինակը հավատացած լինի իր զծաղրածի լրակատար հավաստիությունը, հազիվ թե հարկ ունենար հիշեցնելու, որ Հայաստանը և հարևան երկրամասերը դրավելու համար պահանջված 15—25 հազար կովոզները բավական են միայն պատերազմի առաջին տարվա համար<sup>3</sup>: Ըստ երևույթին նա կարծում էր, որ պատերազմի երկրորդ տարում իրերի դրությունը կարող էր փոխվել հակառակորդի օգտին: Զուր չէ, որ այս էտապի համար նախատեսում էր նույնիսկ կուրֆյուրացի և դաշնակիցների օժանդակության կարիքը: Գիտենք, հիբավի, որ Օրբն շէր բացարկում ցամաքի և ջրի վրա տեղի ունենալիք երկարատև պատերազմների հնարավորությունը, որի ժամանակ զրսեկ զորքերը գործ պիտի ունենալին ոչ միայն Իրանի, այլև

<sup>1</sup> ЦГАДА, Дела грузинские по реестру II, № 2:

<sup>2</sup> „Переписка на иностранных языках Грузинских царей с Российскими государями“, СПб, 1861, № LXXV:

<sup>3</sup> Эзюв, նույն տեղում, № 40, § 5:

նրա թուրք հարեանի հետ: Այսպիսով Օրբի մոսկովյան ծրագրի իրագործումը ևս շէր անտեսում տեական պատերազմի հեռանկարը. որի համար պահանջ պիտի լիներ ռազմական լրացուցիչ ուժերի միջամտության:

Բոլոր այս առանձնահատկություններով հանդերձ Օրբի ռազմական նոր ծրագիրը հանդիսանում է պատմական ուշագրտով վազմաթուրք, որ վկայում էր, թե որքան լավ էր քննարկել նրա հեղինակը Իրանի և Հայաստանի փրական վիճակը և որքան շատ մտաեցել զրանից ելնելու ուղիներին: Երբ Օրբն գրի էր առնում պֆալցյան և մոսկովյան իր ծրագիրները, տակավին կանգուն էր ու անխախտ Անֆյանների բռնատիրությունը: Պարտված էին Իրանի ծայրամասերում բռնկած ապստամբությունները, և շահնշահերի երկիրը տակավին շարունակում էր մի հայտնի շախմատ վայելել 1639 թվականին սահմանված խաղաղության պայմանները: Օրբի սուր աչքը նկատեց սահայն, թե որքան խաբուսիկ էր Իրանի ու նրա իշխողների աչք բարեբախտությունը: Ժամանակակիցների մեջ առաջիններից մեկն էր նա, որ արձանագրեց Անֆյանների պետության նեխումը և իր գործունեությունամբ ազդանշեց նրա վերահաս անկումը: Սուր նախատեսության վրա էր կատուցում նա քաղաքական և ռազմական իր ծրագիրները: Չէր սխալվում, նշելով Իրանի ռազմական տկարությունը, ինչպես նաև այն, թե որքան դյուրին կարող էր լինել Պետրոս Մեծի համար զբաղել Անդրկովկասն ու Հայաստանը, եթե ընդառաջելու լինի անդրկովկասյան ժողովուրդների ապստամբությունը: Հիրավի, Պետրոսի իրանական արշավին ի պատասխան ոտքի ելան Վրաստանի ռազմական ուժերը և ծայր առան Ղարաբաղի և Սյունիքի ժողովրդական զինված ապստամբությունները: Չէր անգիտացել Օրբն նաև այն հանգամանքը, որ սուրհանգիտների զլխավոր խմբիրը ոչ թե իրանական խառնությունների զբաղումն էր և կամ անդրկովկասյան ժողովուրդների մասնակցության ապահովումը, այլ ունենալիք հաջողությունների ամբողջացումը: Ընդամին նա նախատեսել էր նաև հաջողության զլխավոր արդեքը՝ Թուրքիայի և նրան օժանդակող արևմտաեվրոպական պետությունների հնարավոր միջամտությունը:



Գրի առնելով Հայաստանի ազատագրման իր նոր, մոսկովյան ծրագիրը՝ Օրբն ևս հարկ համարեց իր մտքերն ու առաջադրությունները մտցնել ազատագրական շարժման տրագիգիան կազմապարի՝



Նաչ ազատագրական լեզենդի մեջ: Չենք կարող պնդել, թե Նաչերի ազատությունը Մոսկովյան պետությունից ակնկալող այդ վերսիսի Նեյդինսկը հանդիսանում էր Նենց Օրին ինքր: Անճարին չէ, որ Նաչախաչին մեծ պետությունից առաջացած ակնկալություններն արդեն XV—XVI դարերում էին սրտ առձաղանք գտել Նաչ ազատագրական լեզենդի մեջ: Սակայն Օրին էր առաջինը, որ բացարական բացատիկ կշռույթ հաղորդելով լեզենդի մոսկովյան վերսիսին՝ այն դարձրեց պաղատարարանական կոման, Նաչ ազատագրական մտքի վերագիրքավորումը հիմնավորելու համար:

Հնարավոր է նաև, որ լեզենդի «սուսական» վերսիսի ձևավորմանը նպաստել էր տակավին միջնադարում խմբված այն Նաչացրը, թե հանուրց հյուսիսականաց վեհագույն» հաչ կամ քրիստոնյա այլ իշխանություններն են հանդիսանում հաչ ժողովրդի փրկություն ապավենը: Որ այդ հաչացրը չէր մարել սնդամ Որինն մոտ ժամանակներում՝ կզրակազնում ենք ներսես Մոկացու 1621 թվականին գրած նշանավոր ներբողից, որ հրապարակված է Ալիշանի «Հաչապատում»-ում և որի ավելի լրիվ ու հարազատ մի օրինակը պահում ենք նաև ձեռագիրներում: Նկատի ունենք Մոկացու այս տողերը.

Ի նորց և պապանց ուսոյ, յուսաջէն սրոցն ասացան,  
Հիսիսու հաւէն ասնուն մէր ծագկունքս և խիստ դորանան  
Եւ տապն խորշակա՞նար ծագկրնէկց ասնէ, սոժամաչն:  
Ահա ձեզ ձայն աւետեաց սփոփանաց և յուսազրական՝:

Օրին առաջինն էր, որ սուս արբանիքին ներկայացրած իր թրդթկում գրավոր ձևակերպում էր լեզենդի նոր վերսիսան, որ ազատարարի դերում հանդես էր գալիս Մոսկովայի թագավորը: Նոր վերսիսի ձևավորման համար Օրինի ժամանակ ավելի շատ հիմքեր կաշին, քան երբեք մինչ այդ:

Տրագիցիոն լեզենդը հաչերի ազատագրումը լծարդում էր «Ֆրանկ» թագավորի միջամտություն հետ: Նոր դարի սեմին Պեարտս Մեծը «պատուհան» էր բացում դեպի Արևմուտք, սերտ կապ ստեղծելով Մոսկովիայի և Արևմտյան Եվրոպայի միջև: Դրանով Մոսկովիան դառնում էր հաչկական լեզենդում մեծարված «Ֆրանկստանի» (Եվրոպայի) օրգանական մի մասը: Հաչ ազատագրական լեզենդի մեջ Մոսկովիայի ցարը ևս կարող էր հիմա լիակատար իրավունքով

<sup>1</sup> Հայկական ՍՍԽ Մատենադարան, ձև. № 7104, էջ 332ա-բ:

հանդես դալ որպես հերթական «ֆրանկ» (իմա՝ եվրոպական) այն թագավորը, որից հայերը ակնկալում էին իրենց ազատագրումը:

Հիրավի, միայն մեկիքների անունից ցարին ուղղված դիմումի մեջ չէ, որ Մոսկովիան ևս ընկալվում էր այս պահին որպես «Ֆրանկըստան»: Նման ըմբռնման հանդիպում ենք նաև մեկիքների դիմումին ժամանակամերձ հայ այլ գրությունների մեջ: Այսպես, 1699 թվականին տպագրված «Գանձ չափոյ՝ կշոոյ՝ թույ և դրամից» հայտնի ժողովածուի մեջ կարդում ենք. «Ի Ֆրանկստան երեք զլիսուոր լեզու կու խօսին. լաթինի, թևոսնի կամ դօշի և ըսկալվօնի: Կաթինի լեզուէն փէյտահ ելաւ ֆրանցիլի, իտալիանի, սպանօլի և փորթուգեղի լեզուէն: Դօշի լեզուէն առաջ եկաւ ալլեմանի, ինգլիլի, ֆիամէնգի, դանիմարքեղի, շուէթի և նօրվէլի լեզուէն: Ըսկալվօնի լեզուէն ծնաւ բօշնալի (=բոսնիացիների — Ս. Հ.), ռուսի, լեհի և բօհէմի լեզու»<sup>1</sup>: Նույն այս դրքում նշված է, որ «Եւրօպայ՝ որ է Ֆրանկստան... ի Հիւսիսոյ յունի Դանիմարքն, նօրվէջն՝ Շուէթն՝ Լէհն, և Մօսկովն»<sup>2</sup>:

Բայց եթե ակներև է, որ Օրիի ժամանակ Ֆրանկստան = Եվրոպա հասկացությունը ընկալում էր իր մեջ նաև Ռուսաստանը, ակներև է նույնպես, որ նույն այդ դարում «ֆրանկ» հասկացությունը կորցնում էր արդեն իր վաղեմի իմաստը: Միջնադարյան հայ մատածությունը «ֆրանկ» բառի մեջ դնում էր «ֆրանկների» դավանակցության գաղափարը: Բայց արդեն անցել էին այն ժամանակները, երբ ֆրանկներին միացնում էր դավանանքի ընդհանրությունը: Ռեֆորմացիայից հետո արևմտաեվրոպական ժողովուրդները կորցրել էին արդեն դավանանքի միակերպությունը: Ինչ վերաբերում է ռուսներին՝ իբրև հունադավան եկեղեցու հետևորդներ՝ նրանք միշտ էլ գուրս են գտնվել ֆրանկների դավանաբանական ընդհանրությունից: Այդ է պատճառը, որ, որքան մեղ հայտնի է, մինչև XVII դարի վերջերը հայ աղբյուրների մեջ նրանց նկատմամբ չէր էլ կիրառվել «ֆրանկ» անունը:

Լեզենդի նոր վերսիսն գուցե և դյուրացնում էր նոր կողմնորոշման ընկալումը շարժման հին կուսակիցների կողմից: Սակայն շարժման նոր կողմնորոշման համար գաղափարակամ հին տարազը պատմական մի վերապրուկ էր սոսկ, որ պիտի դեն նետվեր ի վերջո:

<sup>1</sup> Ղ ու կ ա ս Վ ա ն ա ն դ ե ճ ի, Գանձ չափոյ՝ կշոոյ՝ թույ և դրամից բոլոր աշխարհի, էջ 50:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 52:

Հնարավոր և հավանական է, որ ազատագրական լեզենդի նոր վերախմբագրման ժամանակ Օրին ներշնչումներ էր ստանում նաև կողմնակի մի աղբյուրից: Մոսկովիայում նա շփվում էր Մերձավոր Արևելքի ժողովուրդների կյանքին ու լեզուներին ծանոթ և ղեկավարական պրիկազում թարգմանի զեր կատարող Նիկոլաոս Սպարի հետ: Հուլյն նշանավոր այդ մատենագիրն ու քաղաքական գործիչը, ինչպես ակներև է նրա գրական հարուստ ժառանգությունից, լավ տեղյակ էր սիրիլյան հին գրքերին և կարող էր ազդած լինել Օրինի մտքերի համապատասխան ձևավորմանը: Երանից կամ այլ աղբյուրներից Օրին կարող էր իմացած լինել թերևս նաև մի լեզենդ, որ տարածված էր հուլյների մեջ: Ոմն Ադաթանդեղոսի մի «մարդարևություն» էր դա, թե «հյուսիսից պիտի գա շիկահեր մի ժողովուրդ («русый народ»), տապալի մուսուլմանների լուծը և խաչ բարձրացնի մահիկի վրա»<sup>1</sup>: Մշակոն առաջավոր մտածողները լուրջ բանի տեղ չէին դնում այդ «մարգարևությունը»: Այսպես՝ Յուրի Կրիժանիչը «Պատմական մարգարևությունների մեկնաբանություն» վերնագիրը կրող իր աշխատության մեջ «կասկածելի» ու անարժանահավատ մի բան էր համարում այն: Այնուամենայնիվ Ադաթանդեղոսի մարգարևությունը հատկանշական էր իր ժամանակաշրջանի համար: Հետագայում նա արձագանք էր դանելու նույնիսկ XVIII դարի հայ մատենագրության մեջ:

Ադաթանդեղոսի կամ ուրիշների «մարգարևություններն» ուներ նկատի անշուշտ XVII դարի ֆրանսիացի մատենագիր Ռաչկոտը, երբ գրում էր, թե «հուլյները առանձին սեր են տաժում դեպի մոսկովյիները, որոնք, համաձայն մի քանի հիմն մարգարևությունների, կոչված են ազատագրելու այս ժողովրդին այն բռնակալության լծից, որի ներքո նա գտնվում է»<sup>2</sup>:

Թուրքահայաստակ քրիստոնյաների հոծ բաղմունքյան մեջ իշխող նման արամագրությունների առկայությունը կարելի է արձանագրել նաև այլ տվյալներով: Այսպես, լեհ միսիոներ Կրուշինսկին, որը 1704—1729 թվականների ընթացքում քանիցս եղել էր Թուրքիայում, ասում է, թե թուրքերի ձնշումներին ենթարկված արևելյան քրիստոնյաները զիմում են ուռա ցարին որպես ապագայի համար

<sup>1</sup> Татишвили, Внешняя политика Николая I, 1887, էջ 228 և Karl Mendelsohn Bartholdy, Geschichte griechenlands, Leipzig, 1870, I, էջ 64: Հմտ. նաև А. С. Орлов, Древняя русская литература (XI—XVII вв.), М. - Л., 1915, էջ 237:

<sup>2</sup> Chev. Ricaut, նույն տեղում, էջ 93:

կանխանշված իրենց իշխողին: Նրանք մեծարում են ցարերին, հարգալիք խոսում նրանց մասին և հիշատակում նրանց անուններն իրենց սպատարափների մեջ: Դավանաբանորեն հերձված լինելով Արևմուտյան Եվրոպայից, նրանք կգերազանցին մնալ թուրք բռնապետության տակ, քան թե ենթարկվել քրիստոնազավան Արևմուտքի տիրակալությանը<sup>1</sup>:

Ձգտելով քաղաքական մերձեցում հաստատել հայ և հուլյն ժողովուրդների միջև՝ Օրին և Սպաթարը վերահաստատում էին նաև հայ և հուլյն ազատագրական լեզվագիտության կապը: Թուրքերի դեմ Օրին և Սպաթարը հեռամուտ էին ապահովել ոչ միայն հայերի և հուլյների, այլև սրանց և վրացիների համագործակցությունը: Հավանական պիտի համարել Սպաթարի գաղափարական կապը ոչ միայն Օրինի, այլև Արշիլի հետ: Ուշագրավ չէ՞, որ ցարին յուզած լատինագիր այն թղթում, ուր յուրովի շարադրվում է հայկական լեզվագիտության վարկանալը, ասված է, թե իրագործելով նախնի «մարգարեություն» ակնկալությունը, «մեզ հետ միասին մի քանի միլիոն հուլյն, վրացի, հայ և տերիշ քրիստոնյաներ կան, որ պիտի ազդեցն աստծուն, թե՛ այս և թե՛ այն կյանքում Ձերդ մեծության ողջության և բարեկեցության համար»<sup>2</sup>: Հարկավ հուլյն Սպաթարին զբաղեցնողը Իրանը չէր, այլ Թուրքիան: Գործակցելով Օրինին, նա, ըստ երևույթին, փառափայլում էր հայերի, վրացիների և հուլյների համատեղ ջանքերով և ուսանների միջամտությամբ՝ արևելյան քրիստոնյաների վրա ծանրացած օսմանյան լուծը խորտակելու միտքը: Այս հայացքը պիտի որ ջերմ արձագանք գտած լինի Օրինի կողմից, որչափ, ինչպես տեսանք, թուրքական լծի տակ տառապող քրիստոնյաների համագործակցության գաղափարը նրան զբաղեցրել էր տակավին Պֆալցի ծրագրի շարադրման ժամանակ: Բոլոր սլարապաներում՝ հայ ազատագրական շարժման *fable convenue*-ն Օրինի բանակցությունների ժամանակ ստանում էր նոր կերպարանք: Հայերի նոր քաղաքական կողմնորոշումը Օրինի մոտ մտնում է գաղափարախոսական հին, նվիրագործված կեղևի մեջ:



Օրին առաջադրությունները սկզբունքային ընդունելություն գտան Մոսկվայի դեսպանական պրիկազում, ի վերջո նվաճելով նաև

<sup>1</sup> Տե՛ս J. Th. Krusinski, Prodrumus etc., էջ 201 և հմ.:

<sup>2</sup> Э 30 В, նույն տեղում, № 35, հմմտ. № 36:

ցարի ուշադրութիւնը: Հայերի բաղձանքն ու ծրագիրը ընդառաջում էին Ռուսաստանի հաղորդակցութեան և առևտրի ճանապարհները Կասպից ծովի և այդ ուղիով Հնդկաստանի հետ կապելու մասին Պետրոս ցարի փառաբանութեամբ մտքին: Մերձբլթյան և մերձկասպյան մարզերի գրավումը Պետրոսը դիտելու էր որպէս միեւնոյն ստրատեգիական պլանի տակադիական երկու կարևոր մոմենտներ<sup>1</sup>:

Տեսանք, որ Կասպից ծովի նկատմամբ ուս կառավարութիւնը արդեն Ալեքսեյ ցարի ժամանակ էր ոտք դրել ակտիվ քաղաքականութեան ճանապարհի վրա: Իրաւործիւում էին այն սկզբունքները, որ հանձին Յուրի Կրիժանիչի արծարծում էր սլավոնական աշխարհի քաղաքական հրապարակախոսութիւնը: Կասպից ծովի նկատմամբ վարելիք ակտիվ քաղաքականութիւնը, համոզում էր Ալեքսեյ ցարին Կրիժանիչը, պիտի դարձնի Մոսկովյան պետութիւնը առևտրական միջնորդ Արևելքի և Արևմուտքի միջև. թերելով համաշխարհային առևտրի սուղին Թուրքիայի ճանապարհից դեպի հյուսիս՝ ուսաները հնարավորութիւն կստանան մատակարարելու Արևմուտքին Իրանի և Հնդկաստանի ապրանքները: Սրանով պիտի ստեղծվէր առևտրի հովանավորողական մի սխեմա, որի նպատակը լինելու էր Մոսկովյան պետութեան արտադրական ուժերի զարգացումը<sup>2</sup>:

Ըստ էութեան Պետրոսի քաղաքականութիւնը խոշոր շափերով ընդառաջում էր Կրիժանիչի արծարծած մտքերին: «Այդ իսկապէս մեծ մարդը, — ասում է Պետրոսի մասին էնդելսը, — առաջինն էր, որ լիովին գնահատեց Ռուսաստանի համար զարմանալիորեն նպատավոր իրադրութիւնը Նվրոպայում. նա պարզ նշմարեց, նշեց և իրադրծել սկսեց ուս քաղաքականութեան հիմնական դժերը ինչպէս Շվեդիայի, Թուրքիայի, Պարսկաստանի, Լեհաստանի... այնպէս և Գերմանիայի նկատմամբ»<sup>3</sup>:

Պետրոսի ժամանակ պատմական նոր շրջան մտավ Մոսկովյան պետութեան քաղաքականութիւնը նաև Իրանի նկատմամբ: Ինդիան այն շէք հիմա, որ հովանավորվէր ուս-իրանական հաղորդակցութիւնն ու առևտուրը, այլ որ ուժեղացվէր Իրանում Ռուսաստանի քաղաքական ազդեցութիւնը և որ Կասպից ծովի իրանական եզրամասում ձեռք բերվէին ուս առևտրի և արդյունաբերութեան

<sup>1</sup> „Материалы по истории Грузии и Кавказа“, вып. IV, Тбилиси, 1937, М. А. Полневктов-ի հոդվածը, էջ 249:

<sup>2</sup> Հմտ. В. Н. Пичета, Юрий Крижаннич и его отношение к русскому государству (տե՛ս „Славянский сборник“, Москва, 1947, էջ 230):

<sup>3</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, XVI, ч. 2, էջ 12:

համար կարևոր հենակետեր: Գիլանն ու Շիրվանը, իրանական մետաքսարտադրության հիմնական այդ կայանները, իրենց ամբողջ արտահանությունը դիտվում են հիմա որպես Ռուսաստանի տնտեսական և քաղաքական ազդեցության սրբաբան մեջ մտնող շրջաններ: Իրանական այդ եզրամասերում դանված ուսու առևարականների ու նրանց ձեռնարկությունների պաշտպանությունը դարձավ Պետրոսի առաջնահերթ այն խնդիրներից մեկը, որի արմատական լուծումը կարող էր հնարավոր դառնալ, եթե մինչև Կասպից այդ ափերը ձգվեին ուս պետության սահմանները: 1699 թվականին, իր արտասահմանյան ուղևորությունից վերադառնալուց հետո, ցարը կազմակերպեց հատուկ արշավախումբ, որի առաջ դրվել էր Կասպից ծովեզերքը հետազոտելու խնդիրը: Սույն այդ տարում կուրֆյուրաուին ներկայացրած իր վեկուցման մեջ Օրին տեղեկացնում էր, թե ցարը անընդհատ նախք է կառուցում Կասպից ծովի վրա: Պատմում էր, որ Հայաստանում լուր է տարածված, թե ցարը պատերազմ է հայտարարում Իրանին: Վերհիշելով Ռադինի արշավանքը, Օրին հիշեցնում էր, որ կազակները ժամանակին խլել էին Գիլանը, ուր շկա ոչ մի ամբույնություն<sup>1</sup>: Արդեն իսկ Պֆալցի ծրագիրը մրշակելիս, Օրին դիտեր, որ իրանական մետաքսի այդ ծննդավայրը գտնվում էր ցարի ուշադրության կենտրոնում և կարծում էր, որ պետք էր այդ հանգամանքը օգտագործել Հայաստանի ազատագրման ծրագրին ցարի աջակցությունը ապահովելու համար: Մոսկովյան իր ծրագրում Օրին, ինչպես տեսանք, մտցնում էր Գիլանը ցարական զորքերի օկուպացման օբյեկտների մեջ, հանգամանք, որ վկայում է նրա քաղաքական սուր հոռատություն մասին Փոքր-ինչ հետո, 1701 թվականին, լուր տարածվեց, թե ցարը պահանջել է Իրանից Գիլանը, քանի որ կարիք ունի նրա նավահանգիստներին և նավաշինարարական առխտակով հարուստ նրա անտառներին<sup>2</sup>: 1710 թվականին դանիական ռեզիդենտ Գեորգ Գրունզը, հենվելով Պետրոսի հայտարարությունների վրա, իր կառավարությանը հաղորդելու էր, թե ցարը գիտում է Գիլանը որպես հարուստ մի աղբյուր, որով հույս ունի ավելցուցիկով ծածկել շվեդների դեմ մղվող պատերազմի բոլոր ծախսերը<sup>3</sup>: Լր Բրյունը, որ այցելել էր Շիրվանը հենց այն ժամանակ, երբ Օրին արժարծում էր իր նոր ծրագիրը, գիտում էր, որ

<sup>1</sup> Эзов, *Укази императора*, № 9, § 16:

<sup>2</sup> Усгоялов, *История царствования Петра Великого*, СПб, 1858, IV, ч. 2, էջ 538:

<sup>3</sup> Материалы по истории Грузии и Кавказа, вып. IV, էջ 249:

այդ երկրամասը «շատ ձևոնտու է, ցարին, սրչափ սահմանամերձ է նրա պետությունը և նրա հպատակները վաղուց արդեն գաղութ են կազմել այդտեղ: Ցարի համար շատ դյուրին կլինեք պահել իր ձևութամ այդ երկիրը, եթե, նվաճելուց հետո, մի քանի բերդ կառուցի այդտեղ»<sup>1</sup>:

Իրանում ցարի քաղաքականությունը հենակետեր էր սրոնում տեղական բնակչության այն տարրերի մեջ, որոնք ազգային և կրոնական իրենց առանձնահատկություններով կարող էին պատվար ծառայել իրանական պետության դեմ: Մասնավորապես հայերի և առանձնապես հայ առևտրականների օժանդակությունը Պետրոսը նկատում էր իրանական ծովերի նվաճման ու պահպանման էական նախադրյալներից մեկը: Նրա վաղեմի քաղաքականության արտահայտություններից մեկն էր անշուշտ, երբ Իրան մեկնող ղեկավար Վոլինսկուն ցարը հրահանգում էր հետադառնվել. «Տեղեկանալ հայերի մասին, արդյոք շատ և ն սրտեղ են աչքում նրանք: Կա՞ն արդյոք նրանց աղնվականների և վաճառականների մեջ տկանավոր մարդիկ: Ինչպե՞ս են նրանք վերաբերվում ցարական մեծությանը: Սիրալիք լինել նրանց նկատմամբ և ձևք բերել նրանց բարեկամությունը: Նմանապես տեղեկանալ, կա՞ն արդյոք այդտեղ քրիստոնյա կամ պարսիկներից տարբեր կրոնական հավատք սննեցող ժողովուրդներ և, եթե այո, տեղեկանալ՝ ի՞նչ վիճակի մեջ են գտնվում նրանք»<sup>2</sup>: Հիմնականում ցարին հետաքրքրողը հայերի քրիստոնեությունը չէր ինքյան, ինչպես շեշտել են երբեմն<sup>3</sup>, այլ նրանց վերապահված տնտեսական և քաղաքական դերը: Հայ ժողովրդական մասսաներից առավել նա ենթադրում էր հենվել անմիջորեն հայ «ականավոր» աղնվականների ու առևտրականների վրա:

Հանգամանքներ էին սրանք, որոնք նախորդում էին նաև ցարի վերաբերմունքը ղեկի հայ պատվիրակների առաջարկները: Ցարը ոչ միայն ծանոթացավ Ռբիի ղեկուցազրին, այլև 1701 թ. հոկտեմբերի 7-ին կանցլեր Գուլովինի տանը սնկնդրություն շնորհեց Ռբիին և Մինաս վարդապետին<sup>4</sup>:

Լսելով հայ պատվիրակներին, Պետրոսը հայտնեց, թե ինքը «տրամադրված է» նրանց առաջարկի օգտին: Բայց հարելով, որ Թուրաստանը զբաղված է հիմա շվեդական պատերազմով և որ

<sup>1</sup> Le Brun, նույն տեղում, էջ 403:

<sup>2</sup> С. М. Соловьев, նույն տեղում, XVIII, էջ 32:

<sup>3</sup> Տե՛ս Эзов, նույն տեղում, Введение, LXXIII և այլուր:

<sup>4</sup> Հիմա. նույն տեղում, № 190:

դժվար կլինեք միայնակ կռվել երկու ճակատի վրա, նա սուաջար-կում էր Օրիին՝ գրել կուրֆյուրստին և խնդրել նրանից, որ, համա-ձայն խոստման, օժանդակ զորքեր ուղարկի իրանական արշավանքի համար, գեթ 3—4 գունդ զինվոր, իրենց սպաներով, ինժեներներով և ուսումնապաշարով: Առաջին հերթին ցարը անհրաժեշտ էր համարում, որ կուրֆյուրստը արամագրի փորձված մի ինժեներ՝ Իրանի տեղա-դրություններն ու բերդերը դիտելու և նկարագրելու համար:

Փոքր-ինչ հետո ցարը կարգադրեց հայտնել Օրիին, թե ինքը Իրանի դրություն մասին մանրամասն տեղեկություններ է ստացել սեղիդենտ Վասիլի Կուչուկովից, որը նոր էր վերադարձել աչքտե-ղից: Բայց քանի որ ստացված տեղեկությունները բավականաչափ ստույգ չեն, որոշված է այդ կողմերը վաճառականի անվան տակ փորձված մի մարդ ուղարկել շուտափույթ կերպով, ավելի լավ ու ստույգ լուր բերելու համար<sup>1</sup>:

Յարի հայտարարություններին հաջորդեցին դործնական քայ-լեր: Չնայած որ Պետրոսի ուշադրությունը կլանված էր շվեդական պատերազմով (որը, ինչպես հայտնի է, այդ պահին անբարեհա-ջող ընթացք ուներ սուսնեթի համար), ցարն այնուամենայնիվ աչ-քաթող շարեց Կասպիականի վրա տարվելիք աշխատանքները: Նա կարգադրեց արագացնել Վոլգայի գետեզրին տարվող նավաշինա-րարությունը: Մի տարվա ընթացքում կառուցվեց մոտ 350 տրանս-պորաային նավ, որոնցից չորսարանչուրը համապատասխան ռազ-մապաշարով կրելու էր իր վրա 400 մարդ<sup>2</sup>: Բուսական ծառայության մեջ մտած անգլիական կապիտան Պեռիի վկայության համաձայն<sup>3</sup> 1702 թվականին ցարը հրամայել էր կառուցել 120 առագաստանավ՝ 12-ական և 16-ական թնդանոթ կրելու համար: Սակայն, հարում է Պեռին, 1703—1705 թվականներին Աստրախանի, Կազանի և Դոնի շրջաններում ծագած Բուլավինի ապստամբական շարժումները և միաժամանակ շվեդների դեմ վերսկսված պատերազմը խոչընդոտ եղան կառուցված նավերի գործադրությանը<sup>3</sup>:

Նավաշինարարության մասին ցարի ստորագրած հրամանը Պեռին կապակցում է վրաց դահլենկեց թագավոր Արշիլի օրհանգե-

<sup>1</sup> Эзов, *նույն տեղում*, Введение, LXXIII, № 53:

<sup>2</sup> *նույն տեղում*, №№ 120, 126, 141, 145, մեր Israel Org, Anhang, № 15, հմտ. Устрялов, История царствования Петра Великого, СПб, 1863, IV, ч. 2, էջ 556:

<sup>3</sup> Чтение в Имп. обществе истории и древностей российских, 1871, II, էջ 64:



առնելու վերականգնելու խոստման հետ<sup>1</sup>։ Իր հերթին, 1704 թվականին Լեոպոլդ կայսրին և Պֆալցի կուրֆյուրստին դրած նամակներում Արշիլը ցարի հրամանը լծորդում էր անմիջապես Օրբի առաքելության հետ<sup>2</sup>։ Մոսկվայի հայ պատվիրակության գործունեության անմիջական արձագանք էր համարում ցարի կարգադրությունները նաև Օրբին նույն 1704 թվականին կուրֆյուրստին ուղղած իր մի հազարադրության մեջ<sup>3</sup>։

Ցարի բարեհաճ վերաբերմունքի համար հայ բանագնացները հայտնեցին իրենց գահունակությունը՝ առկավիմ ցարի կողմից շնորհված ունկնդրության ժամանակ։

Այնուամենայնիվ ցարի տված պատասխանից Օրբին չէր հետևիլեցնում, թե սկտք է նստել ծովափին և սպասել բարենպաստ եղանակի։ Նման մի կացություն անհարիր պիտի լիներ հորանջ շհանգուրծող նրա բնավորությանը։ 1701 թվականի գարնանը սկսվել էր սպանական ժառանգության համար ձեռնարկված եվրոպական պատերազմը։ Դժվար էր ենթադրել, թե հաբսբուրգներին զինակցած կուրֆյուրստը այս հանգամանքներում կարող պիտի լիներ օժանդակ իր ուժերով մասնակցել իրանական արշավանքին։ Մանավանդ անպատեհ էր համարում Օրբին պիմել նրան՝ հետախուզող ինժեների խնդրով։ Այսպիսի մի դիմում, մտածում էր նա, կարող էր անպատվաբեր լինել կուրֆյուրստի համար։ Ուստի հարկ տեսավ հայտնել, թե Իրանն ուսումնասիրելու գործը կուրֆյուրստն ավելի շուտ կվերստահեր իրեն, Օրբին, քան որևէ ուրիշին։ Առևտրականի տարազ կրող հետախուզողը պիտի թե կարողանա հաջողություն ունենալ։ Նա շտիտի կարողանա ազատ ելումուտք ունենալ ամենուրեք, ոչ էլ վտահունչում անընդհանր կեպի իր անձը։ Ավելի շուտ նպատակահարմար է Իրան հղել հատուկ մի դեսպանություն, որի շքախմբին, ձիերի և այլ ապրանքների գնումներ կատարելու պատրվակով, ծառայել կերպով կմիանար նաև ինքը՝ Alcides Franciscus առևտրական եվրոպացու անցադրով։ Այս կերպ ինքը հնարավորություն կունենա միջոց առնել դեսպանության անդամներին, քանի ղեկ սրանք Սպահան մեկնելու համար կղեկերին Շամախում, ծանոթանալ հայկական և իրանական գործերին։ Իրանցիների ահից Հայաստանում և

<sup>1</sup> Чтение в Имп. обществе пегорин и древностей российских, 1871, II, 12 64:

<sup>2</sup> ЭЗОВ, նույն տեղում, № 126 և 127:

<sup>3</sup> Նույն տեղում, № 120:

Վրաստանում հազիվ թե գտնվեն մարդիկ, շեշտում է Օրին, որոնք առանց իր աջակցություն համաձայնեին բաց անել իրենց իսկական տրամադրությունները մի օտարականի առաջ, անգամ եթե երկնքից հղված հրեշտակ լինի սա: Հայաստանից զատ, Օրին նշում է նույնը նաև Վրաստանի մասին, որով ախներե էր դառնում նորից Արշիլի հետ հաստատած նրա կապը, քանի որ միայն Արշիլից ստանալիք հանձնարարականներով կարող էր վստահություն գրավել վրաց կողմից: Եթե, հարում է Օրին, իր ձեռքը արվի մեկիքների գրած թղթի պատասխանը, հայտնելով, որ ցարը իր հովանու տակ է ընդունում նրանց, ապահովում նրանց արտոնությունները և մանավանդ կրոնի անձեռնմխելիությունը և եթե միաժամանակ նույն իմաստով հուսադրվելու լինի նաև մեկիքների կողմից հղված Մինաս վարդապետը, առիթ տալով սրան թղթեր ուղարկել Հայաստանի ազգաբնակչությանն ու վանքերին, խրախուսելով և ոգևորելով սրանց: Այս ամենը կատարվելու դեպքում ամենքը կհավատան ու կընդառաջեն սկսված գործին և իրենց կողմից ուսաներին հավաստիացումներ անելու ունրանց հետ կապ հաստատելու նպատակով ազդեցիկ մեկիքներից ու տեղի ռազմական գործին իրազեկ մարդկանցից հատուկ ներկայացուցիչներ կուղարկեն Մոսկվա: Օրին այս կապակցությամբ անհրաժեշտ էր համարում, որ մուսուլմանների լծից իրանահայերին ազատագրելու իր տրամադրության մասին ցարը ազդարարություն անի Հայաստանի բնակիչներին, սրպեսզի մոտսկովյան զորքերի ժամանումը առիթ չտա երկյուղի կամ խուճապի, փախուստի հարկազրի նրանց, այլ, ընդհակառակը, ոգեշնչի ու հուսազրի նրանց ռազմական և մթերային նախապատրաստություններ տեսնելու դալիք արշավանքի համար: Ցանկալի է, որ հուսադրական նման գրությունն ուղարկի նաև Արշիլ թագավորը վրացիներին<sup>1</sup>:

Առկա իրադրության մեջ ցարի անոճից հալ մեկիքներին անմիջորեն պատասխանելու կամ Հայաստանի և Վրաստանի բնակչությանն ազդարարություններ անելու մասին Օրին արած առաջարկները համարվեցին անդեպ ու վաղաժամ: Անմիջորեն միայն Օրին և Մինաս վարդապետին է, որ հայտնվեց որոշակի (1702 թվականի մարտին էր այդ), թե ցարը վճռել է արշավանք ձեռնարկել դեպի Իրան, և որ սակայն նա չի կարող անել այդ, նախքան կավարտվի Հյուսիսային պատերազմը: Թողնվեց, որ այդ մասին Օրին ինքը անմիջորեն տեղեկագրի ինչպես գերմանական իր հովանավորողներին,

<sup>1</sup> ՅՅՕԵ, նույն տեղում, № 51, § 4:

ալնուկես նաև հայ մեղիքներին: Իր կողմից ցարն անհրաժեշտ էր համարել առայժմ սահմանափակվել միայն կայսրին և Պֆալցի կուրֆյուրստին ուղղած ուղջունի գրությամբ, որչափ մանավանդ նրանցից ստացած նամակներում էլ կոնկրետ սրեկ բան չկար ենթադրված արշավանքի կամ դրա նպատակի մասին:

Նրանք առաջարկի համաձայն, Օրիճ հատուկ տեղեկագրեր հղեց Դյուսելդորֆ՝ կուրֆյուրստին և Վիեննա՝ պատեր Վոլֆին<sup>1</sup>: Տեղեկագրերը հղվեցին Օրիճ հետ Ռուսաստան ժամանած թարգման Գուլնազար Աուխենց երիտասարդ իրանահայի ձեռքով. վերջինս սպայի աստիճան էր ստացել Ահաջտանում, ուր օգրնտեղացման ենթարկված, զարձեկ էր նազար Արեխտովիչ: Նրան հանձնվեցին նաև ցարի նամակները՝ ուղղված գերմանական կայսրին և Պֆալցի կուրֆյուրստին:

Ցարի նամակները, ըստ կուրֆյան, արձանագրում էին սուկ, թե նա «սողորմածաբար» ընդունել է Օրիճին և ուշադրություն չնորհել նրա զեկուլցին<sup>2</sup>: Բայ անկողի փախազծերը, Օրիճ տեղեկագրում էր կուրֆյուրստին հայ պատվիրակության ցուլց աված ընդունելության մասին և հայտնում, թե ցարը որոշել է արշավել Իրան, հենց որ վերջունա Հյուսիսային պատերազմը:

Հովհան Վիլհելմ կուրֆյուրստը պատճառ չունեի դժգոհելու իրեն վերապահված աննշան դերից: 1702 թվականի սեպտեմբերի 14-ին նա ինքն էր հազարգում Օրիճին, թե զբաղված Ֆրանսիայի դեմ տարվող պատերազմով<sup>3</sup>, կարող է օգտակար լինել հայերի գործին միայն «լավագույն ցանկություններով և անկեղծ մտադրությամբ, քանի մի լավ ծառայություններով ու միջնորդություններով»: Տաստված, հարում է Պֆալցի իշխանը, որ վրա հասնի «ֆրանսիական մամեղեկների և նրանց կցորդի» պատմությունը, որպեսզի ինքն ի վիճակի լինի կարելին անել այդ գործի համար<sup>4</sup>: Պարզ է, որ ի վերջո Հովհան Վիլհելմը ինքն իսկ չէր առարկում, որ իրանական արշավանքի նախաձեռնությունն անցնի ուսանքի ձեռքը: Նույն տարվա

<sup>1</sup> Յ 3 Օ Յ, նույն տեղում, ԱՆՆ 77 և 78: Վոլֆին գրված տեղեկագիրը հրատարակված չէ, բայց դրա մասին հիշատակություն կա նույն տեղում, ԱՆՆ 60 և 62 գրությունների մեջ:

<sup>2</sup> Նույն տեղում, ԱՆՆ 67—70:

<sup>3</sup> Այս մասին հմտ. Ad. Hilsenbeck, Johann Wilhelm, Kurfürst von der Pfalz von Ryswicker Frieden bis zum spanischen Erbfolgekriege („Forschungen zur Geschichte Bayerns“, XIII, էջ 137 և հա., 272 և հա.):

<sup>4</sup> Յ 3 Օ Յ, նույն տեղում, ԱՆՆ 81:

սեպտեմբերի 21-ի գրութեան մեջ նա հայտնում էր, թե նկատի ունենալով Ռուսաստանի նպաստավոր տերիտորիալ դիրքը, Հայաստանի ազատագրումը դյուրին ու փառահեղ մի գործ պիտի լինի ցարի համար<sup>1</sup>:



Դեսպանական պրիկազի առաջարկութեան համաձայն<sup>2</sup>, Օրին և իր ընկերակիցը ցարի բարչացակամութեան ու մտադրութեան մասին պիտի տեղեկագրեին նաև հայ մելիքներին: Հանձնարարութեան կատարումը դժվարանում էր նրանով, որ հայ պատվիրակների ձեռքի տակ չկար ցարի պաշտոնական հավաստիացումը, որի վրա հենված, դյուրին լիներ նվաճելու մելիքների վստահութունը դեպի գործի նոր ընթացքը: Բանակցութունը առաջ տանելու համար անհրաժեշտ էր, այնուամենայնիվ, որ ի պատասխան ցարի բարեհաճ արամադրութեան, հայ ժողովրդի հողերը և աշխարհիկ պետերը շնորհապարտութեան հավաստիացումներ անեին թե՛ անձնապես ցարին և թե՛ հայերի ազատագրման գործի օգտին տրամադրված ցարական պաշտոնակալներին:

Դեսպանական պրիկազից ստացած հանձնարարութունների համաձայն 1702 թվականի մայիսի 10-ին Օրին և Մինաս վարդապետը մելիքներից զատ գրութուններ էին ուղարկել նաև էջմիածնի և Աղվանից կաթողիկոսներին<sup>3</sup>: Այդ գրութունների պատճենները չկան գործում: Կան միայն դրանց պատասխանները: Խոսքը վերաբերում է Եղյանի ժողովածուի №№ 85, 98, 100, 102 և մեր «Հայ-ոռու օրինետացիայի ծագման խնդիրը» գրքի հավելվածում հրատարակված № 1 գրութուններին:

Իր և Մինաս վարդապետի գրութունները էջմիածնի և Աղվանից կաթողիկոսներին հասցնելու համար Օրին կանգ էր առել Միրոն Վասիլև կամ Մուստաֆին կողմած հայ մի մարդու վրա: Սա եղև էր ոռու դիմվորական ծառայութեան մեջ և հասել կապիտանի աստիճանի: 30 տարուց ի վեր ապրում էր Մոսկվայում, ուր ուներ տուն ու ընտանիք: Չի կարելի կարծել, թե մեկնելով Հայաստան, Միրոնը ստանձնելու էր առակ սուրհանդակի դեր: Օրինի կողմից նա նկատ-

<sup>1</sup> Յ 30 B, նույն տեղում, № 82

<sup>2</sup> Հմմտ. նույն տեղում, №№ 59 և 60:

<sup>3</sup> Նույն տեղում, № 104:

վել էր որպէս շատ գործունեյա մի մարդ, որին կարելի էր բան վրստահել, թեպէս հաղորդակից շղարձներով նրան գործի այն մանրամասնութիւններին, որոնք գաղանի պիտի մնային տակավին<sup>1</sup>:

1704 թվականի սկզբներին վրաց Արշիլ թագավորի՝ գերմանական կառուցարին ուղղած գրութիւններից տեղեկանում ենք, որ արձագանքելով Օրբի առաջարկներին, Պետրոս Մեծը հատուկ մարդ է ուղարկել Անդրկովկաս ուսակաճ արշավի ապագա ռազմաբեմը հետախուզելու համար և որ այդ մարդը, կատարելով իր գործը, վերադարձել է նամակներով<sup>2</sup>: Մի սպայի ձեռքով Հայաստանում կատարված այդ հետախուզութեան մասին հաղորդում է նաև Օրբին՝ կուրֆյուրստին ուղղած մի նամակում<sup>3</sup>: Կասկած չկա, որ Արշիլի և Օրբի հաղորդածը կարող էր վերաբերվել միայն Միրոնի առաքելութեանը: Այնուամենայնիվ Միրոնը ոչ միայն սոսկ թղթատար չէր, այլև նույնիսկ սոսկ հետախուզող չէր: Նա ուներ նաև Օրբից ստացած հատուկ հանձնարարութիւն՝ թեքել հայ եկեղեցական և աշխարհիկ գեղավորների հայացքը դեպի հյուսիս: Հենց այդ նպատակով էլ Օրբին ու Մինաս վարդապետը նրա միջոցով նամակներ էին հղել Հայաստան: Նրանք հույս ունեին Միրոնի իսկ ջանքերով ստանալ այն պատասխանները, որոնք պիտի ամբաստնեին իրենց դիրքը Մոսկվայում և նպատակին բանակցութիւնների հետագա ընթացքին:

Թե ինչ արդունք տվեց Միրոնի հետախուզական աշխատանքը, անհայտ է մեզ: Սակայն բոլոր նշաններից ակնհայտ է, որ նրա առաքելութեան քաղաքական նպատակը ձախողել էր մեծ չափով: Դրա պերձախոս մի ապացույցը պիտի նշմարել արդեն այն փաստի մեջ, որ վերադառնալով Մոսկվա և հարցումների ենթարկվելով դեսպանական պրիկազի կողմից, Միրոնը հարկ համարեց լռել հայ դեղավորների հետ ունեցած իր հանդիպումների մասին: Հայանեց, թե մեկնելով Մոսկվայից, ինքը բանավոր հանձնարարութիւններ չի ունեցել Օրբի կողմից հայ կաթողիկոսներին կամ իշխաններին և ոչ էլ սրանց կողմից Օրբին կամ Մինաս վարդապետին: Իր գործն է եղել միայն տեղ հասցնել նամակները և որ իբր դրանց բովանդակութիւնը հայտնի չէ իրեն<sup>4</sup>: Այս հայտարարութիւնը ձիշտ չէր:

Մինաս վարդապետը 1714 թվականին դրոճ էր, թե Օրբին հանձնարարված է եղել ազդեցութեան գործ դնել Ազվանից կաթողի-

<sup>1</sup> Հմմտ. Յ 30 B, նույն տեղում, №№ 75 և 76:

<sup>2</sup> Նույն տեղում, № 127. Հմմտ. նաև № 126:

<sup>3</sup> Տե՛ս մեր Israel Ory, Anhang, № 15.

<sup>4</sup> Յ 30 B, նույն տեղում, № 104:

կոսի վրա՝ մերձկասպյան երկրների և Շամախու շրջանի հայերին ուսանների հովանու տակ մտցնելու համար: Օրին, հարում է վարդապետը, կարողացել էր թեթև պատրիարքի միտքը, սակայն չէր հասել նպատակին՝ պատրիարքի վերահաս մահվան պատճառով: Մինաս վարդապետը նկատի ուներ հենց Միրոնի ապարդյուն առաքելությունը: Հիրավի, վերագանալով Մոսկվա՝ Միրոնը բերել էր միայն նորահաստատ նսալի կաթողիկոսի կողմից Բուսաստանի հայերին ուղղված օրհնություն մի գիր միայն, որը, ըստ էության, չէր անդրադառնում Օրբի նամակին<sup>1</sup>:

Այլ բնույթ էր ունեցել այն ձախողումը, որին հանդիպել էր Միրոնը էջմիածնում:

Մոսկվայի պետականական պրիկազին հանձնված գրություն մեջ նահապետ կաթողիկոսի փոխարեն լեզու առած նրա աթոռակալ Մինաս վարդապետի ու 1677 թվականի էջմիածնի դաղանի ժողովին մասնակցած Յավրիի որդի Աղաջանի և արդեն վախճանված Կոստան-բեյի որդու՝ Գրիգորի անունից հայտարարվում է, թե «վասն երկխոյի գաղանաց» անկարող են բացահայտել իրենց սրտի խորհուրդը և պատասխանել Օրբից և նրա ընկերոջից ստացած նամակին, կամ որ այդ պատասխանը կուզարկեն հետո՝ «մին հավատարիմ» մարդով<sup>2</sup>:

Մանրախույզ բնույթյան ենթարկելով փնչախա այս, այնպես նաև Օրբի ձեռքով ուստական արբունիքին ներկայացրած մի քանի այլ թղթերը, տարիներ առաջ հերքել ենը դրանց վավերականությունը<sup>3</sup>:

<sup>1</sup> Հմմտ. ՅՅՕՅ, նույն տեղում, ԱՄ 86, 202, § 1 և մեր Հայ-սուս օրիննաացիայի ծագման խնդիրը, էջ 60 և հո.:

<sup>2</sup> Նույն տեղում, ԱՄ 85:

<sup>3</sup> Տե՛ս մեր «Հայ-սուս օրիննաացիայի ծագման խնդիրը» ուսումնասիրությունը. էջմիածին, 1921: Մեր այս ուսումնասիրության մեջ արված գիտողությունների գեմ մինչ այժմ հանդիպել ենք միայն բանաբնական մի առարկություն: Մեր այն պնդումի գեմ, թե նշված թղթերը գրվել են ոչ թե էջմիածնում, Ղափանում կամ Աղվանքում, այլ Մոսկվայում՝ Օրբի գործակից Մինաս վարդապետի ձեռքով, մասնանշովել է, թե վերջինիս բուն մի գրություն մեջ (որի նմանատիպը հրատարակված էր մեր իսկ գրքում), «Իսրայել» անունը սղված է «Իսել» ձևով, մինչդեռ մեր կողմից նրա գրչին վերագրված գրություններից մեկում (տե՛ս ՅՅՕՅ, նույն տեղում, ԱՄ 98-ում) նույն այդ անունը սղված է «Իէլ» ձևով (Տե՛ս Գ. Հոփսեփյան, Խոզրակեանք կամ Պոռեկանք, Ա. էջ 272, ծան. 1): Այս առարկությունը ուշագրավ է, բայց և խոցելի: «Իսրայել» անվան համար Մինաս վարդապետը կա-

Մեր քննարկման մեջ մասնանշել էինք նաև, որ էջմիածնի անունից գրված «զգուշավոր» և միաժամանակ «հուսադրական» այս տողերը շեն գրվել էջմիածնի կաթողիկոսի աթուռակալ Մինաս վարդապետի գրչով, այլ Մոսկվայում Օրբի գործակից Մինաս վարդապետի ձեռքով<sup>1</sup>: Միրոնի առաքելությունը անհաջողության մատնվելով էջմիածնում, Օրբին և նրա գործակիցին հարկադրել էր Մոսկվայում կազմված այդ գրույթամբ ղեկավարական պրիկապի առաջ ձևական կամուրջ ձգել իրենց ձեռնարկության և էջմիածնի 1677 թվականի խորհրդածոցովի մասնակիցների միջև և միաժամանակ՝ վարագուրել բացասական կամ գեթ ձեռնպահ այն վերաբերմունքը, որ գրահարվել էր էջմիածնում Օրբի և Մինաս վարդապետի կողմից արված հանձնարարությունների նկատմամբ:

Իր սեղում՝ ծանոթացանք տարրեր այն պատումներին, որոնցով Օրբին վերապատկերում էր 1677 թվականին նվրուպա մեկնած հայ պատվիրակության սղիսականը: Բոլոր պարագաներում նա ուներ մի ձգտում՝ էջմիածնի ժողովի հեղինակությամբ նվիրագործել իրեն պատկանող ծրագիրները և պատմա-բազաբական հիմնավորում տալ այդ ծրագիրների իրագործման շուրջը վարած իր բանակցություններին:

Այդ նույն նպատակով է, որ 1701 թվականի հուլիսի 29-ին Օրբին հաղորդում էր Մոսկվայի ղեկավարական պրիկապում, թև 23

յուն սղադրություն չունենք: Այնպես, նրա ստորագրած մի այլ թղթում այդ անունը սղված է հենց մեր նշած «Իսրէյ» ձևով (Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 207): Քննարկվող թղթերի մեջ հանդիպում ենք նաև «Իսէյ», «Իսրէյ» սղումներին (նույն տեղում, №№ 85 և 98): «Իսէյ», «Իսր» ձևով սղումներ կան նաև մելիքների անունից ցարին հասցեագրված առաջին թղթում (նույն տեղում, № 6), որի գրչությունը համընկնում է նույն հասցեագրված երկրորդ թղթի գրչության հետ, և երկու դեպքում էլ գործ ունինք Մինաս վարդապետի գրչի հետ:

<sup>1</sup> Նշված մեր աշխատության մեջ արված դիտողություններին ավելացնենք նաև մի փաստ. Յ Յ Օ Յ-ի հրատարակած № 98 ժամկերպքում Ղափանի մելիքների անունից գրված է՝ «Մեր երկրներուն ամէն սղգի քրաթի. թուքթի, աբապի, ամէն ցեղի մուսն ու կին», իսկ № 100-ում մելիքները գրում են, որ անօրենների գրած հարկերի ծանրությունից տառապում են «թև Հ ո ս ս մ բ և թե ս ր ի ե ա ն, թև կուսճի և կամ հայ»: Անդրձված ժողովուրդների անունները հայաստանի մասին խոսելիս կարող էր թվարկել միայն արևմտահայ մեղք, ներկա դեպքում՝ խ ա ր բ ե ր գ ղ ի Մինաս վարդապետը, որն որպես իր ծննդավայր էր նշում «Ասորեստանի Տիգրան (ակերտ) քաղաքը» (տե՛ս մեր «Հայ-ուսու օրիննասցիայի ծագման խնդիրը», հավելված № 3, ծան.):

տարի առաջ հայոց պատրիարքը և Երևան քաղաքի ու զանազան ուրիշ հայ քաղաքների հայ իշխաններ, դրանց թվում իր հայր Իսրայելը, Կոստանբելը և Աղաջան Ավրին (որը հիմա իսկ կենդանի է, իսկ մնացածները, որոնց թվում նաև պատրիարքը և իր հայրը՝ մեռած), տեսնելով հայ ժողովրդի նկատմամբ պարսիկների ճշնշումն ու հալածանքները, խորհուրդ տեսան իրենց ազատության խնդրով խոնարհ ազերս ուղղելու մեծ թագավորին, նորին ցարական մեծությանը, իրենց ձեռքով ստորագրած և կնքված թղթով:

1702 թվականին, փորձելով կապ հաստատել էջմիածնի և Աղվանից կաթողիկոսների հետ, Օրին դրված էր համանման խնդրի առաջ: Անհրաժեշտ էր, որ Հայաստանի ազատագրման համար իր մշակած մոսկովյան ծրագիրն ստանար ազգը ներկայացնող կաթողիկոսի կամ, ավելի ձիշտ՝ կաթողիկոսի զխաւսրությամբ գումարված խորհրդատուով հավանությունը: Ըստ էության այդ նպատակով էլ հենց Միրոնի ձեռքով Օրին և Մինաս վարդապետը պիտի գրություններ ուղարկած լինեին ազգի պետերին Մոսկովայի բանակցությունների մասին:

Պիտի կարծել, որ Միրոն Վասիլևի միջոցով կապ հաստատելով էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների, ինչպես նաև մեզ նախածանոթ Ղափանի մելիքներից մի քանիսի հետ՝ Օրին և Մինաս վարդապետը չստացան նրանցից ակնկալված պատասխանները:

Ինչպե՞ս բացատրել այս անկախությունը:

Հայ իրականության մեջ այս պահին բախվում էին ռուսական օրինատացիային լիք և դեմ արամադրություններ: Ե՞վ կզերի, և՛ մելիքների, և՛ վաճառականության միջավայրում այդ պահին հայերի ռուսական կողմնորոշման նկատմամբ կային և՛ բարեկամներ, և՛ հակառակորդներ: Որչափ Մոսկովայի արքունիքի հետ Օրին խոսում էր Այունչայց մելիքների անունից, հասկանալի է, որ իր կատարած շրջադարձի մասին վերջիններիս բացասական դիրքավորումը

<sup>1</sup> ЭЗОВ, նույն տեղում, № 44: Իր այս գրության մեջ Օրին փոքր-ինչ այլ կերպ է ներկայացնում էջմիածնի խորհրդատուի կազմը և նրա ընդունած սրտչունների բնույթը, քան այդ հայանի է մեզ նրա այլ թղթերից: Այս գրության մեջ նա հետամուտ էր հասակ նպատակի. շեշտել, թե խորհրդատուները որոշում է ընդունում եղել առաջին հերթին Մոսկովա և միայն այստեղ ձախողելու գեղքում ներկայանալ գերմանական կայսրին: Այլ խոսքով՝ նա միանգամայն լուսթյան էր տալիս Հոռմի հետ բանակցելու մասին եղած գիտավորությունները: Ավելորդ է սասել, որ Օրին իր բացատրությունը բեռնավոր էր ստում գործի հաջողությանը արդարև կողմնորոշմանը:



ծանր կացութիւնն պիտի ստեղծեր Մոսկվայում ձեռնարկած իր բանակցութիւններին համար:

Բնկրկել Ղափանի մելիքների բացասական դիրքավորման առաջ, կնշանակէր հրաժարվել այն նպատակակէտից, որին հետամուտ և որով ներշնչված էր Օրին: Բայց կարո՞ղ էր նա ցարական կառավարութեան առաջ բացահայտել մելիքների դիրքավորումը, առանց վնասած լինելու Մոսկվայում տարվող բանակցութիւններին ընթացքին: Անել վիճակից ելնելու և տկնկալված պատասխանը շարադրելու համար Օրին և Մինաս վարդապետը հնարավոր գտան օգտագործել մելիքների ստորագրած և նրանց կնիքներով պաշտպանված «ձերմակ թուղթը»: Փայթ չէ, որ օգտագործելով «ձերմակ թուղթը» Ղափանի մելիքների կողմնորոշմանը ներհակող նպատակով՝ պիտի ոչ թե կիրառվէին, այլ խախտվէին «ձերմակ թղթով» տրված լիազորութիւնները:

Նրանց վարմունքը դնահասակուց առաջ հարկավոր է հասկանալ կատարված խախտումի «բարի նպատակը»: Անշուշտ, նրանք ելնում էին ոչ թե անձնական, այլ հանրային շահախնդրութիւնից՝ հայ ժողովրդի ազատագրման գործին բարեհաջող ընթացք հաղորդելու մտահոգութիւնից: Նրանք մեղանշում էին Ղափանի մելիքների հանդեպ, բայց արդարացի էին հայ ժողովրդի առաջ: Հայ ժողովրդի պատմութեան պրոգրեսիվ ընթացքին համաբայլ էին շարժվում նրանք, անգամ իրենց գործունեութեան «տավերոտ» մանրամասնութիւններով: 1703 թվականին խմբադրած նրանց դիմումներն անմիջորեն համընկնում էին եթե ոչ Ղափանի մելիքների, գեթ Պարաբաղի մելիքների և մանավանդ սրանց քաղաքական ղեկավարի՝ Գանձասարի Նոայի Հոստան-Ջալալյան կաթողիկոսի արամադրութիւններին:

Ինչպէս տեսանք, Գանձասարի կաթողիկոսութեանը ենթարկված ամենակամտաբեր ու հարուստ հայաբնակ վայրերը Պարաբաղի հայաշատ մհալների, Գանձախի և Շամախու շերամապահական շրջաններն էին: Այդ վայրերը և մանավանդ դրանցից ամենահարուստը՝ Շամախին, XVII դարի ընթացքում միշտ ավելի և ավելի էին կապվել Մոսկովյան պետութեան հետ, մտնելով նրա ազդեցութեան սրբոտի մեջ<sup>1</sup>: Մեծ չափով հենց այս վայրերից էլած առևտրական-

<sup>1</sup> «Աշխարհաժողով» կոչված վաճառականական դասագրքի հեղինակ վարպետ Կոստանդը, զիտելով Գանձան ու Պարաբաղը, Շամախին ու Շիրվանը որպէս տնտեսական այն շրջաններից մեկը, որի հետ դործ են ունենում հայ առևտրականները՝ նշում է այդ շրջանի տնտեսական կապը

ների ու արհեստավորների հաշվին էին սովորանում Աստրախանի, Մոսկվայի, Հյուսիսային Կովկասի և Հարավային Ռուսաստանի հայ դպրութիւնները: XVIII դարի սկզբին Գանձասարի Եսայի կաթողիկոսը գրում էր Պետրոս Մեծին, թե Լուսավորչի օրերից ի վեր հաստատված օրենքով «ամենայն կողմանս Հիւսիսոյ, աչսինքն յայսկոյս և յայնկոյս Կասբիական ծովունս որքան ազգս հալոց որ լինին ընդ իշխանութեամբ քրիստոսասէր և մեծազօր թագաւորիդ» ենթակա են Գանձասարի իրավասութեանը և պարտական «նիւլ և նուէրք» հասցնել նրա աթոռին ու կաթողիկոսին<sup>1</sup>:

Ճիշտ չէ Եսայի կաթողիկոսի հավաստիացումը, թե Ռուսաստանի հայերը միշտ էլ ենթարկված են եղել Գանձասարի եկեղեցական իշխանութեանը: Հայտնի է, որ «Ամենայն հյուսիսային կողմանց» վիճակավորները, ինչպես կոչվում էին Կաֆայում նստող հայ եպիսկոպոսները նախընթաց դարերում, ենթարկված էին հնրում Սաի, իսկ հետագայում էջմիածնի կաթողիկոսներին: Սակայն XVII դարի ընթացքում Աղվանից երկրից ելած հայերի թիվն այնքան էր շատացել Ռուսաստանում և նրանց երթևեկը հյուսիսային կողմերում այնքան հաճախակի դարձել, որ Գանձասարի կաթողիկոսը հնարավոր ու անհրաժեշտ էր համարում իր դավադանի տակ առնել «Ամենայն հյուսիսային կողմանց» թեմը: Այս կապակցութեամբ հասկանալի է դառնում նաև այն իրողութեանը, որ Եսայի կաթողիկոսի ժամանակ Աղվանից կաթողիկոսութեանը սկսում էր դառնալ հայերի ուսական կողմնորոշման ղեկավարը:

Եսայի կաթողիկոսի քաղաքական կողմնորոշումը չէր բխում միայն եկեղեցական-վարչական շահախնդրութեաններից, XVII դարի Աղվանից կաթողիկոսները անդրադարձնում էին միաժամանակ քաղաքական այն արամադրութեանները, որոնք այս պահին, ինչպես տեսանք, կային ոչ միայն Ղարաբաղի մելիքների, այլև նրա բնակչութեան արամադրութեանների մեջ: Այս նկատառումներից

---

նստվածարարոց Բաբբի և սպա՝ Մոսկվայի հետ: Այս աննշուխտք էլ հենց հեղինակը տեղեկութեաններ էր տալիս վերջինիս մասին: «Գանձա և Ղարաբաղ, Շիրվան ու Շամախի,— գրում է նա,— թողիք ու նաւթն տեղն սուս զկոյ և զեհի կու զնան Մոսկովի»: Աջամատանից Մոսկվա հզովոզ դործվածքների ու փեկրի տեսակները թվելիս՝ հեղինակը հասկապես նշում է «Շամախուս ներկած թեյն՝ կէսն զոմի և կէսն ճերմակ, զեղին, կանաչ և արի» (Սուսակ ձեւագրաց Օքսֆորդի Բողկեյան գրատան, ձեւ. № 104, հմմտ. Հայկական ՄՍԹ Մատենագարան, ձեւ. № 8183, էջ 156):

<sup>1</sup> Հմմտ. մեր Հայ-ուս օրինադրութեան ծագման խնդիրը, հավելված, № 11, նաև Յ 30 Յ, նույն տեղում, № 86:

հետո պիտի արժանահավատ համարենք նաև Մինաս վարդապետի հաղորդած այն տեղեկությունը, թե (Միրոնի միջոցով) Օրին կարողացել էր Աղվանից (Երեմիա) կաթողիկոսի միաբեր թեքել դեպի Ռուսաստան և որ Յրին չէր կարողացել այդ փրոզությունը հավաստող պաշտոնական գրություն ստանալ վերջինից միայն Աղվանից կաթողիկոսի (իմա՝ Երեմիայի) վերահաս մահվան պատճառով:

Այս ամենը հասկանալի են դարձնում փոքր-ինչ տարօրինակ այն փաստը, որ Ղափանի մելիքների անունից խմբագրված պատասխանների տակ որպես գրություն վայր նշված է ոչ թե Ղափանը, այլ «Աղվանքը»:

Չի կարելի կույր վստահություններ վերաբերվել դեպի պատմական վավերագրերը: Պատմական վավերագրերը կարող են ստել, խնչպես և գրանք կազմող պատմական գործիչները: Պիտի միմյանցից արոհել վավերագրերի ճշմարիտն ու սուտը, փաստականն ու մտացածինը: Պիտի գիտենալ սակայն, որ իբրև պատմություն ազդելու որոշ դեպքերում կարող են պիտանի լինել ոչ միայն վավերական, այլև անվավեր գրությունները, գրությունների անվավերականությունը չի վերացնում նրանց հարաբերական արժեքը կամ բացառում նրանց օգտագործման բոլոր հնարավորությունները: Վերհիշենք թուղթ մեր հիշատակած միջնադարյան տնտիկները կամ «Դաշանց թուղթը»: Խնդիրն այն է միայն, որ գրանց նախ ընկալումը տեղի տա բնական ընկալման: Հակառակ դեպքում կանգիտացվեն գրանց պարունակած բուն փաստերն ու բնականորեն կողորշիանա նաև գրանց իմացողական արժեքը:

Ջրագեցնող վավերագրերի քննական օգտագործումը բացահայտում է նորից այն փաստը, որ հայ ազատագրական շարժումը դարձանում էր հասարակական-քաղաքական ներքին բախումների ճանապարհով և նորից հավաստում այն իրողությունը, որ ինչպես Օրինից առաջ, այնպես և նրա ժամանակ հայ քաղաքական միաբեր չէր հոսում մեկ հունով: Այն փաստը, որ հարկ եղավ նման թղթեր խմբագրել Մոսկվայում, ցույց է տալիս, որ XVIII դարի սկզբին հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման կուսակիցները հարկադրված էին պայմարել և՛ ազատագրական շարժման հայ հակառակորդների և՛ շարժման արևմտակալական կողմնորոշման հայ կուսակիցների դեմ: Կասկած չկա, որ հայ իրականության մեջ հեղափոխական սկսում էին գերիշխող մեծամասնություն կազմել ռուսական կողմնորոշման կուսակիցները, հանդամանք, որ գրեկորվելու էր մասնավանդ հետադայում, դաժան հրափորձության ենթարկվելով

Ռուսաստանի վարած բոլոր պատերազմների ժամանակ: Չի կարելի այնուամենայնիվ ժխտել, որ ռուսական կողմնորոշումը սկզբնապես դրված էր հակառակորդների ներազդային գիմադրությունն ու երկմտանքը հաղթահարելու անհրաժեշտության առաջ:

Իմացողական արժեքից զուրկ չեն, հարկավ, նաև Մինաս վարդապետի ձեռքով Մոսկվայում դրի առնված մյուս գրությունները. այսպես՝ մելիքների անունից կանցլեր Գուլովինին և Օրիին մեծապես օժանդակող Սպարթարին ուղղված այն թղթերը, ուր նշանակված է այն գումարը, որով, իրենց ազատությունը ստանալուց հետո, հայ մելիքները պիտի վարձահատույց լինեն նրանց<sup>1</sup>: Կաշառքը խոշոր անելիք ոճներ այս ժամանակաշրջանում: Սովորական մի բան էր այդ, որի համար պատասխանավորության չէին ենթարկվում ոչ կաշառատուները, ոչ կաշառատուները<sup>2</sup>: Մանավանդ որ ներկա դեպքում կաշառքը կանխիկ գումար չէր, այլ շնորհապարտության, պայմանական պարտավորություն. Հայաստանի ազատագրման դեպքում Օրին հայ մելիքների անունից 20 հազար ոսկի է խոստանում կանցլեր Գուլովինին, որից հայ պատվիրակների կարծիքով շատ բան էր կախված դործի հաջողության տեսակետից: Թե ինչքան մեծ սպասելիքներ ունեն Պետրոս Մեծի կանցլերից Օրին և Մինաս վարդապետը՝ երևում է վերջինիս 1704 թվականին Օրինի հղած նամակից. «Կու խնդրեմ ի քեզանից որ ինչ ասացեր ես այս տեղս վեզիրին (իմա՝ կանցլերին) ջանք դնես որ սուտ չեմուս, ամեն ինչ մեծ հրաման, մեզ պիտանի, ի ձեռինս նորա է. աստուծով ինչպես որ կամի էարող է առնել. այս մեծին (իմա՝ ցարին) մեծ բանալիքն ի ձեռինս է, եփուր կամի շուտով կու բանս դմեր գուռն, այլ ամեննքեանքն սչինչ, ուտելոյ բարեկամք են»<sup>3</sup>:

Նշանակալից է մանավանդ մելիքների անունից ցարին ներկայացված 1703 թվականի մայիսի 7-ի գրությունը: Գրառելով դրա բովանդակությունից՝ Օրին և Մինաս վարդապետին *carte blanche*

<sup>1</sup> Հմմտ. Յ 30 Յ, նույն տեղում, №№ 100, 102 և մեր «Հայ-սուս օրիենտալոգիայի ծագման խնդիրը», հավելված № 1:

<sup>2</sup> Հմմտ. «История дипломатии», I, էջ 180:

<sup>3</sup> Տե՛ս մեր «Հայ-սուս օրիենտալոգիայի ծագման խնդիրը», հավելված, էջ X: Մինաս վարդապետի նամակից քաղված աղբյուր չպիտի վերագրվեն Օրին տված մուրհակներին: Վարդապետի ակնարկը վերաբերում է ինչ-որ թղթերի, որ ստացվել էին Մոսկվայում Օրին անունով, նրա Մոսկվայից վերեննա մեկնելուց հետո (տե՛ս այդ մասին նաև Յ 30 Յ, նույն տեղում, № 136), մինչդեռ մեզ գրադեցնող թղթերը կազմվել էին Մոսկվայում դրանից առաջ:

հանձնող մեկիքները հիմա Պետրոսին ևն տրամադրում իրենց բախտի բանալին: Այստեղ ևս ակնարկված է, թե իբր, թողնելով Եվրոպայում իր պաշտոնն ու տեղը, Օրին վերադարձած է եղել հայրենիք մեկիքների հրավերով և նրանց հանձնարարությունյամբ հիմա ժամանել է Մոսկվա ու ապավինել ցարին: Ասված է դարձյալ, թե այն ամենը, ինչ խոստանում են հայերին արևմտակիրոպական նրանց բարեկամները, հենց ցարի թագափորություն համար է:

Ըստ երևույթին այս տողերը գրվում էին Մոսկվայի հնարավոր տարակուսանքները փարատելու նպատակով. «ԲՃ (= 200) ամ այլ ավելի է, որ մեր գերի եմք. և այլ թագաւորաց այսպիսի առատ սրտիւ շաք դիմեր», ասված է այդ գրություն մեջ: Գրության հեղինակները շեն թաքցնում, որ նախապես դիմած են եղել գերմանական կայսրին և կուրֆյուրստին, բայց այդ արել են, որպեսզի նրանք ևս հայերի օգտին միջամտեն ու ազաշեն ցարին: Դիմումն ապարդյուն չի անցել: «Նոքա ևս,—գրում են մեկիքները ցարին,—մեր ազաշանաց լսած է(ն) և քո թագաւորութեանդ գրած է(ն)՝ եթէ նոցա և եթէ մեր ազաշանացն լսեր ևս և առեր ևս յանձդ որ ազատես զմեզ որ լինինք մեծ ուխտիք հաւատարիմ ծառայք քո բարի հրամանին ներքև»: «Մեր,—ավելացնում են նրանք,— յառաջագոյն ճշմարիտ ըստ գրոց հրամանան հաւատալիք ունիմք այդ կողմէն և քո օրհնեալ տանդ, որ վերուստէն է շնորհեալքո պատուական թագդ... վաղեմի դրոց լսեր եմք և այսօր երևելի աշօք բացօք կուհաւատամք, որ քեզանով պիտի լինի ամենայն քրիստոնէից արձակումն, և լինիս ամենից ծով ու ցամաքի հրամայող մեծ թագաւոր»: Տիեզերքի ապագա հրամանատարի առաջ շեն կարող գոց լինել նաև Արարատյան աշխարհի դռները: Արարատյան աշխարհի բանալիով է հենց, որ բացվելու են ցարի տիեզերապետության լայն դռները: Հայաստանից է սկիզբ առել մարդկության ճակատագրի պատմությունը երանելի Նոյի օրերից ի վեր: Մեկիքների անունից գրված թղթում այս մասին ասված է. «Այս մեր յԱրարատէ աշխարհս սփռեցաւ, և բազում թագաւորութեան ըսկիզբն այս յերկրէս հաստատեցաւ, որ քան զամենայն յերկիրս հինն է, և ամենայն աշխարհի բանալիքն առ ինքն ունի եթէ ծովով և եթէ ցամաքով, կարողութեամբն աստուծոյ, դիւրին է ժամանակաւ տիրել զպիտանիսն»<sup>1</sup>: Ակնարկը, հարկավ, Թուրքիայի մասին է: Նույն այս թղթի կապակցությամբ Օրին հիշեցնում էր հատկապես, որ Հայաստանի ճանապարհը տանում է ուղղակի

<sup>1</sup> Ծ 3 0 Ե, նույն տեղում, № 98:

4. Պուլիս, որչափ Անատոլիան խիտ բնակեցված է հայերով ու հույներով և վատ ամրացված, Վրացիներն ու հայերը շատ հեշտությամբ կարող են «դաժան ապստամբություն բարձրացնել»<sup>1</sup>:

Ամեն ինչ հաստունացած է արդեն, — գրված է մեկիքների անունից կազմված այս թղթում, — որպեսզի ցարի զենքով խորտակվի անօրենների բռնակալությունը և զլուխ բերվի հայերի և մյուս քրիստոնյաների ազատությունը: «Հազարամիցն մէջ, հազարէն մին որ թէ պատահի այսպիսի շնորհալի մեծ հարկ, զոր աստուած քո ժամանական քեզ պատրաստեաց...»: Չպիտի թուչլ տալ, որ թուլացած թշնամին նորից զլուխ բարձրացնի, հավաքի և վերանորոգի իր ուժերը<sup>2</sup>:

Մեկիքների անունից պատրաստակամություն է հայտնվում զինված սեփերով ընդառաջել Պետրոսի գորաբանակին, «քո շնորհալի արմն (բանակը — Ա. Հ.), — գրված է նույն թղթում, — մեր աշխարհըն մտնելն մեք այն վաղթին ամենայն ինչ պիտանի ընչիւք պատրաստ եմք քո էզիզ թագաւորութեանդ օղորումն. Աստուած տայ այն օրն ամեն ինչ պակասութիւն չի լինիր էսքերին»: Անհրաժեշտ է միայն գործ դնել գաղտնապահություն և հանկարծակիի բերել թըշնամուն: «Լինի Աստուծով որ յանկարծակի առանց սոցին փմանալն արմա առ մեզ մտանելն, մեր ուժն անվնաս ի մեզ կու մնայ, և անօրէնքն կու խալքալուին միջակտուր կու լինին. ի մեր մէջն յոչով մնան որ մինչև ՅՌ (300,000) էսքերի պէտս կու լցուցանէ յօլով ժամանակս»: Ի վերջո մեկիքները խնդրում են այնպես անել, որ իրենք զերծ մնան թշնամու կասկածամտությունից, քանի դեռ չի սկսված ռուսների արշավանքը ազերսում են ամեն ինչ այնպես կատարել, «որ մին տեղաց մեզի վնաս չի հասնի մինչև առ մեզ մտանելն»<sup>3</sup>:

Ինչի՞ մասին է վկայում այս թուղթը: Հասկանալի է, թե որքան դժվար պիտի լիներ անտես ու անճանաչ մի բանագնացի, որ պիտին Միլոտն էր, թեքել Ղափանի մեկիքների միտքը դեպի Օրիի նոր դիրքորոշումը: Սակայն եթե իրոք դժվար է հավատալ, թե մեկիքները փոխել էին Անկեղակոթի խորհրդաժողովի ժամանակ մշակված ուղեգիրքը և որդեգրել Օրիի նոր ծրագիրը՝ նրանց անունից կազմված անվավեր գրության առկայությունը այնուամենայնիվ հնարավորություն է ընձևուում մեզ անելու որոշ հետևություններ:

<sup>1</sup> Յ 3 0 B, նույն տեղում, № 106, հմտ. նաև № 141:

<sup>2</sup> Նույն տեղում, № 98:

<sup>3</sup> Նույն տեղում:

Տարի հասցենով կազմված այս թուղթը հիմք է տալիս կոստանտնու-  
 թի անգամ եթե տեղի էր ունեցել Միրոնի ու Ղափանի մելիքների  
 հանդիպումը, ապա այդ հանդիպումը չէր պսակվել հաջողությամբ:  
 Նկատենք ի դեպ, որ Ղափանի մելիքների մեջ ամենից ազդեցիկ  
 անձնավորությունը—մելիք Սաֆրազը—որ զլխավոր գերակատար-  
 ներից էր Անկեղակոթի խորհրդակցության ժամանակ, այս պա-  
 հին մեռած էր արդեն: Ձեռքի տակ ունենալով Անկեղակոթի խոր-  
 հրդաժողովին մասնակցած մելիքների քարթի բնանշը և նրանց  
 անուններով պատրաստած կնիքները՝ 1703 թվականին խմբադրած  
 նամակների տակ Օրին և Մինաս վարդապետը չէին գնում մեռած  
 մելիքների կնիքներն ու ստորագրությունները: Այդ նույն պատճառով  
 դրանց տակ նրանք չորին նաև մելիք Սաֆրազի կնիքն ու անունը:  
 Նրա մահվան մասին էր տկնարկում նաև Օրին, երբ հենվելով Հա-  
 յաստանից նոր վերադարձած Միրոնի ինֆորմացիայի վրա, հաղոր-  
 դում էր Գուլովինին, թե Հայաստանում վախճանվել է նշանավոր  
 իշխաններից մեկը<sup>1</sup>:

Մահը չէ միայն, որ փոխում էր մելիքների անձնակազմը: Եր-  
 բեմն հին մելիքների տեղը առաջ էին քաշվում նորերը — Իրանի կա-  
 ռավարություն կողմից նշանակված մելիքները: Ասպարեզ էր գալիս  
 «շահ-ղուլի» (=շահին հաժատարիմ) կոչված մելիքների այն սե-  
 րունդը, որի նկարագիրը լավ հայտնի է Դավիթ Բեկի ապստամբու-  
 թյան գրվագներից: Ինչպես Դավիթ Բեկի ապստամբության ժամա-  
 նակ, այնպես նաև XVIII դարի սկզբին, ռուսների հետ սկսված  
 բանավարությունների ժամանակ, Ղափանում բախվում էին ազա-  
 տագրական շարժմանը քեռ ու դեմ այն հուսանքները, որոնց առ-  
 կայությունը առիք ունեցանք մատնանշելու XVII դարի վերջին՝  
 իրանական պատժարշավի մասին պատմելիս: Այս պատճառով է  
 հենց, որ Օրին և Մինաս վարդապետը հարկադրված եղան օգտագոր-  
 ծել իրենց հին ճերմակ թղթերն ու կնիքները, շունենալով ձեռքի տակ  
 Ղափանի մելիքներից ստացած նոր լիազորություններ, նրանց  
 ստորագրած ու կնքած նոր գրություններ:

Օրիի կազմած թղթից տկնարկ է, որ մելիքները նրա ժամանակ  
 ևս ոչ միայն իրանցիներից էին երկյուղ կրում, այլև իրենց միջից  
 իրանցիների առաջ քաշած հայազգի իշխանավորներից, քանի որ  
 ռուսների հետ տարվելիք բանակցություններից վերջիններս միայն

<sup>1</sup> Յ 3 0 Յ, նույն տեղում, № 106:

կարող էին վնաս սպասել իրենց դիրքի և պաշտոնի համար: Պարզվում է նաև, որ հայերի մեջ այդ պահին ևս կային երկդիմի մարդիկ, որոնք ատակ էին մատնելու ուսանների հետ բանակցող ազգակիցներին: Մոլթ մի ակնարկից տեղեկանում ենք, որ ինչպես հայերին հայտնել էր ազդեցիկ ջալալի Սուլեյման բաբան, խանը (հավանորեն Նախիջևանի կամ Գանջայի խանի մասին է խոսքը) մտադիր էր դավթել հայերի տիրույթները<sup>1</sup>:

1703 թվականին ուստարբունիքին Օրիի ներկայացրած թղթերի մեջ փաստապես ամփոփվում էին ոչ թե Ղափանի մելիքների բաղձանքները, այլ սոսկ այն խոհերն ու տարակուսանքները, որոնք այդ պահին պաշարում էին Օրիի միտքը, կամ պարզարանում այն խընդիրները, որոնք շահագրգռում էին նրան շրջապատողներին: Դրանց մեջ գրեթե բառացիորեն կրկնված են նրա այն առաջարկներն ու բաղձանքները, որոնք մեզ ծանոթ են արդեն Օրիի մոսկովյան բանակցությունների ընթացքից: Այստեղ հանդիպում են մանրամասնություններ, որոնք բացահայտում են դարձյալ Օրիի մերձավոր կապերը Արշիլի և Սալաթարիի հետ: Այստեղ ևս ակնարկ կա հայ-վրաց ապստամբության, ինչպես նաև հայերի և հույների ուժերով Անատոլիան գրավելու մասին: Թղթեր կազմողը շատ լավ գիտեր, որ ցարն այս պահին հետաքրքրված է ոչ այնքան Իրանի, որքան սրա թիկունքում ցցված Թուրքիայի գեմ պատերազմելու հեռանկարով:

Ի վերջո ուշագրավ է, որ մելիքների անունից ցարին գրված թուղթը կրկնում էր նաև հայ ազատագրական լեգենդի նոր այն վերսիան, որի մեզ հասած խմբագրությունը պատկանում է Օրիին ու նրա գործակիցներին:

Մոսկովյան բանակցությունների սկզբից իսկ Օրին երկչուղ ունենր, թե իրենց «ազատությունների» ու կրոնական անձեռնմխելիության համար մելիքները կարող են վտանգավոր համարել հայկական շարժման և հայկական բանակցությունների իր նոր, մոսկովյան դիմաշրջումը: Զուր չէր նա նպատակահարմար գտնում, որ առ այդ ցարի կողմից հանգստացուցիչ հավաստիացումներ արվեն մելիքներին: Եվ դեռ ավելին. նա խնդրում էր, որ համապատասխան ազդարարություն ուղղվեր նույնիսկ հայ եկեղեցականների և հայ ժողովրդի հասցեով:

Անսպասելի և բոլոր պարագաներում վաղաժամ այս պահանջը կարող է ունենալ միայն մի բացատրություն: Ըստ երևույթին Օրին լուրջ երկչուղ ունենր, թե քաղաքական իր նոր ծրագիրը կարող էր

<sup>1</sup> Յ 30 B, նույն տեղում, № 98:



դիմադրութեան հանդիպել հաշկական բանավարութեանները արագիցիոն կողմնորոշման կուսակիցների կամ թե դեպի Իրանը թեքված «շահ-դուլինների» կողմից: Պարզ է, թե դեռ որքան նոր էր և խնամքի ու հատուկ պաշտպանութեան կարոտ քաղաքական այն ուղեգիծը, որի արամադրութեաններն արտահայտում էր Օրիի մտկոլյան ծրագիրը:

Ակներև է համենայն դեպս, որ ձեռնարկելով Մոսկվայի բանակցութեաններին, Օրին վստահ չէր, որ իր նոր ուղեգիծը կարող է անվերապահ հավանութեան գտնել Սյունյաց մելիքների կողմից: Նա ելնում էր երևի Սյունյաց մելիքների մոտ առկա հակամոսկոլյան արամադրութեաններից, երբ տակավին 1699 թվականին, կուրֆյուրստի հետ բանակցելիս հայտնում էր, թե նրանք անվստահութեամբ են արամադրված ցարի հանդեպ, մտրակված այն երկյուղից, թե ոտք դնելով Հայաստանում՝ նա կարող է մղել իրենց հունադավան եկեղեցու դիրկը<sup>1</sup>:

Տեսանք, որ սուսների կողմից լինելիք հավաստիացումների կարիք տներ անգամ Օրիի մերձավոր գործակիցը՝ Մինաս վարդապետը: Այդ հավաստիացումները շարվեցին վարդապետին և, այս կապակցությամբ, մի պահ տարածայնութեաններ ծագեցին նույնիսկ նրա և Օրիի միջև: 1702 թվականի ապրիլի 26-ին Օրին հաղորդում էր կուրֆյուրստին, որ վարդապետը նամակ է գրել Հոնդարիա և հայտնել այնտեղի հայ համախոհներին, թե ամենը, փնչ ասած է եղել մելիքներին Օրին, մինչ այժմ դեռ չի արգարացվել ոչ Ղյուսել-գորֆում և ոչ էլ այլուր, թե հնարովի են նրա հավաստիացումները և կուրֆյուրստը չի էլ մտածում հայերի մասին, և ինքը Օրիից օձիք թափելու համար է միայն հուսադրող նամակ գրել հայերին: Ի վերջո, հարում է Օրին, վարդապետը գրել էր նաև, թե քանի որ ոչ մի հույս չկա եվրոպական թագավորներից ու իշխաններից, լավ է, որ հայերը տեսնեն իրենց գլխի ճարը<sup>2</sup>:

Հետագայում (1704 թվականին) Մինաս վարդապետը մոտացութեան տալով, որ ինքն իսկ մեղսակից է եղել Հոնդարիայում գտնված հայ համախոհների բարյացակամութեան ալեքովելուն, գրում էր. «Աստված մեծ իսաֆ աա Պեշու եղևալ մեր յազգ անգուլ սուա փարիսեցի բրիսսօնէից... ցաւակից մարդ բարեկամ շունիմք...»<sup>3</sup>:

<sup>1</sup> Չ 3 0 8, նույն տեղում, № 9, § 14:

<sup>2</sup> Նույն տեղում, № 78:

<sup>3</sup> Տե՛ս մեր «Հայ-սուա օրինոտացիայի ծագման խնդիրը», հավելված,

Կասկած չկա, որ եթե Օրիի անմիջական ներշնչումներին ենթարկվելով մի-երկու տարում վարդապետն այնքան կերպարանափոխվեց, որ հայերի ռուսական կողմնորոշման օգտին չվարանեց մեղիքների անտենից թղթեր կաղմել ցարին կամ դեսպանական պրիկազին հանձնելու համար, դժվար էր, ինչպես պիտի տեսնենք, կոտրել Օրիի այն գործակիցների դիմադրությունը, որոնք ավելի անկախ դիրքի տեր էին, քան խարբերդցի վարդապետը:

XVIII դարի առաջին քառորդի հայ ազատագրական շարժմանը նվիրված իր գրքում հանգուցյալ Պ. Հարությունյանը փորձել է Օրիի գործունեության սկզբնավորումն ու ընթացքը լուսաբանել 1699 թվականին Իրանում ծայր առած հարկային նոր քաղաքականության և այդ կապակցությամբ Հայաստանում կատարված անցքերի հետ: Գրքի հեղինակը ելնում է այն մտքից, թե իբր այդ անցքերի մասին Հայաստանից տեղեկություններ ստանալուց հետո է, որ Օրին շտապեց հայրենիք վերադառնալ Գերմանիայից, ուր նա, իր ունեցած արևմտանկրոնական կողմնորոշման հակառակ, Անկեղակոթում հավաքված մելիքներից հրահանգ ստացավ հայ ժողովրդի ազատագրական շարժումը կապել Ռուսաստանին միանալու գաղափարի հետ: Հեղինակի կարծիքով որպես թե Անկեղակոթի մելիքներից ընդունած ցուցմունքներն էին պատճառը, որ 1701 թվականին Օրին «միանգամայն անսպասելի կերպով» փոխեց հետագա իր գործունեության ընթացքը՝ արևմտյան պետությունների փոխարեն ուղղելով իր հայացքը դեպի Ռուսաստան<sup>1</sup>:

Այս միտքը ոչ միայն հիմնավոր չէ, այլև առիթ է տվել հեղինակին ներկայացնելու XVIII դարի սկզբներին հայ ժողովրդի պատմության մեջ կատարված իրողությունները գլխավայր շրջված վիճակում:

Մտաբերենք, որ Օրին Եվրոպայից Հայաստան ուղևորվեց ոչ թե 1699, այլ 1698 թվականին, երբ դեռ խոտք չկար Իրանի հարկային նոր քաղաքականության մասին: Նշենք միաժամանակ, որ հարկային նոր այդ քաղաքականության ամբողջ ծանրությունը երևաց ոչ թե 1699 թվականին, այլ երեք տարի հետո, երբ, ինչպես պիտի ցույց տանք հաջորդ գրվագում, եռապատկվեցին հարկերի հին նորմերը: Մելիքների պահանջով հայրենիք վերադառնալու և նրանց ցուցմունքով Ռուսաստան մեկնելու վերսիան Օրին պատմում էր Մոսկվայում՝ հակասելով Արևմտյան Եվրոպայում մելիքների անու-

<sup>1</sup> П. Т. А р у т ю н я н, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века\*. М., 1954, էջ 142 և հո., 148 և հո.:

նից իր ներկայացրած թղթերին և այն ամենին, ինչ նա պատմել էր այդ մասին նախքան Ռուսաստան գալը կազմված իր մի շարք գրությունների մեջ: Հարուժյունյանը զանց է առել Օրիի մոտ հանդիպող այդ և մյուս հակասությունների քննարկումը, մինչդեռ մասամբ հենց այդ միջոցով է հնարավոր հասկանալ նրա բանավարությունների հետադալում ստացած «միանդամայն անսպասելի ընթացքը»:

1698 թվականին Նվրոպայից Հայաստան մեկնելու պահին Օրին ոչ միայն հաղորդակցության մեջ չէր գտնվել հայրենի երկրի հետ, այլև շունիք նրա ընթացիկ վիճակի մասին ստույգ պատկերացում: Սխալ է, թե Անկեղակոթի խորհրդաժողովը շրջեց Օրիի միտքը դեպի Ռուսաստան: Աղբյուրների հանրակողմանի հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանից Նվրոպա վերադառնալուց հետո ընդհանուր իրադրության մեջ կատարված փոփոխություններն է, որ հարկադրեցին Օրիին լքել իր բանավարությունների նախնական ընթացքը և պիսիլյան ծրագրի փոխարեն մշակել մոսկովյան ծրագիրը: 1699 թվականին Անկեղակոթում հավաքված մեկիքները ոչ միայն չէին հուշարկել նրան այդ ծրագիրը, այլև, ինչպես պնդում էր ինքը, նրանք սկզբից ևեթ դիմադրում էին Հայաստանը Ռուսաստանի ձեռքով ազատագրելու մտքին<sup>1</sup>: Ըստ երևույթին հենց այդ պատճառով էլ, ինչպես տեսանք, անհաջողության հանդիպեց Միրոնի առաքելությունը, որից հետո խզվեցին Օրիի և Սյունյաց մեկիքների կապերը: Փաստերը ցույց են տալիս, որ հայկական շարժման ուսասական կողմնորոշմանը, կամ, ինչպես պատկերացնում է Պ. Հարությունյանը, հայկական գավառները Ռուսաստանին միացնելու ծրագրին Սյունյաց մեկիքներից ոմանք դիմադրում էին նույնիսկ Դավիթ Բեկի ժամանակ:

XVIII դարի առաջին քառորդի ընթացքում հայ ազատագրական շարժումը գնաց ոչ թե Անկեղակոթի խորհրդաժողովի որդեկրած գծով, այլ շուռ եկավ այդ գծի դեմ: 1720-ական թվականներին և Դավիթ Բեկի ուսական կողմնորոշմանը արձագանքում էին ոչ թե տեղական մեկիքները, այլ սրանց դեմ զենք բարձրացրած գյուղացիական մասսաները: Իր ուսումնասիրության մեջ քննական դիպուկ ու սրամիտ ճշտումներ մտցնելով Դավիթ Բեկի ապրած ժամանակաշրջանի, ինչպես և նրա գլխավորած շարժման պատմա-ոմանատիկական պատկերացման մեջ, Օրիի նկատմամբ Հարուժյունյանը սահել է սկզբնաղբյուրներում ակնբախ հակասությունների վրա-

<sup>1</sup> ՅՅՕՅ, նույն տեղում, № 9, § 4:

յով, շկամենալով գիտակցել, որ միայն դրանց բացահայտման ու  
աներկյուղ լուսաբանության ճանապարհով կարելի է նշմարել XVIII  
դարի սկզբներին հայ ազատագրական շարժման մեջ կատարված  
հեղաբեկումը և հայ ժողովրդի համար դրա ունեցած դարակազմիկ  
նշանակությունը:

### 3. ԴԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ

Իրանական աշխարհագիրը: Տրամադրությունների բեկում խոչալական միջա-  
վայրում: Առիթ դիվանագիտական միջամտության համար: Օրիի առաջարկները:  
Օրիի ուղեորությունը Վիեննա և Գյուսելդորֆ: Նրա դրամական տաղանապր: Բա-  
խում Թարդուլիի հետ:

XVIII դարի սկզբներին, շահ Սուլթան Հուսեյնի ժամանակ, արևելյան Հայաստանում լիակատար սանձարձակության հասավ իրանական հարստահարումների ու թալանի, հալածանքների ու դա-  
ժանությունների առօրյան:

Ղազար Ջահկեցու 1726 թվականի հիշատակարանում տրված է պատմական ամբողջ այդ շրջանի դատական և ոստիկանական մար-  
մինների գործունեության մուսյլ պատկերը: Խոսելով արյունարբու և կոլոպտիչ «պարսից երկդիմի դազանաց» մասին՝ Ջահկեցին գրում էր. «Չարաչար և զանազան տառապանօք ջանիւ, կեղեքամբ և զա-  
նազան տառապանօք անբարշտացան ընդ ազգս հայոց, թարց ամ-  
բաստանութեան և լիկայի ըմբռնէր զանմեղս և կապէր զարդարս պըր-  
կեցուցանելով ի վերայ յերկրի, ակցի և բռնցի: Խոշոր և ստուար փայտօք կբռնէին և հարկահանէին, զոմանս զընկունս ոտիցն հա-  
նէին և զոմանս մատունս և զթաթս ի գարշապարաց թափէին. զոմանց զսրունքս և զբարձս խորտակէին և զայնպիսի անողորմ և դառն ջա-  
նիւ տանջանօք կիսամահ արարեալ եղեալ ի բանդի, առնէին զինչս և վաճառէին զտունս և զամենայն կարասիս տանն ի վաճառանոցս յղեցուցանէին: Ի խանութս և ի շուկայս կիսապին ծախամամբ զգինս վաճառելոցն առնէին և ապա արձակէին զբանտարկեալսն: Քանզի զարդարն ընդ ամբարըշտին կորուսանէին և զանմեղան ընդ մեղան-  
չականքն պատժէին: Ձի ոչ գոյ քննութիւն ի մէջ նոցին: Եւ զայսպիսի գործս անօրէնութեան սրով գործեցին ի յորբս և յայրիս, ի վանս և ի

յանապատս, ի կարգաւորս և ի ճգնակիր կրօնաւորան Աստուծոյ, և ո՞ կարողասցի բաւել զանշափութիւն շարեաց շանց կատաղելոց»<sup>1</sup>:

Նախիջեանի գավառի Քարկապ գյուղում գրված մի հիշատակարանից անդեկանում ենք. «ՌԾԲ-ումն (= 1703 թվականին) խիստ հիւանդութիւն անկաւ, որ մեր գեղումն ՃԾ (150) հոգի մեռան... դարձեալ այս ամի երկու միմէլ (= մումայից = հարկահան) եկաւ Նախաշափան, շատ նեղութիւն տվին այս տառապեալ քրիստոնէից, որ միայն մեր գեղին ԴՃ (400) թուման գնաց: Դարձեալ Երեանա (և) Նախաշափանա խաներն երկու տարէն մին կամ շորս անգամ փոխվեցան, գեղօրէից շատ խասարաթ տվին, որ գրեյու նման չէ»<sup>2</sup>:

Գրելով իր ժամանակի պատմութեանը, Աղվանից Եսայի կաթողիկոսը նշել է այդ պահին տեղի ունեցած հարկային կեղեքումները: Եսային նկարագրել է հատկապէս 1699—1702 թվականներին տեղի ունեցած մարդահամարը: Կանխահոգ մի միջոցառում էր այդ, ձեռնարկված ամբողջ Իրանում՝ նախկին հարկերի քանակը բազմապատկող եկամտային բազմազան հարկեր և նորատեսակ այլ տուրքեր սահմանելու նպատակով: Կաթողիկոսը թվարկում է արտատրնտեսական այն հարկադրանքները, որոնք հաշտրդեցին քաղաքական գույրումի տեսք առած մարդահամարին: Թավրիզում նստող Միրզա Թահիրը 1100 զինվորով մտնում է Գանձակի և Ղարաբաղի գավառները և սկսում տուրքահավաքի առատ հոծնձը՝ «չոյժ աւելորդօք քան զգրեալն», գրում է պատմիչ կաթողիկոսը: Մեծ գյուղերից վերցնում էին 50—150, փոքրերից՝ 30—40 թուման: Ռազմական ուժերի վրա հենված՝ հարկեր էին դանձվում նաև մյուս գավառներում: Ավելի շուտ կաղմակերպված թաւան էր այս, քան սովորական հարկահանութուն: Պետութունը ձեռք էր կարկառում ոչ միայն աշխատավոր ժողովրդի հավիւլալ արդյունքին, այլև նրա դոյության համար անհրաժեշտ արդյունքին: Կեղեքման մի սխաւեմ էր այս, որ ոչնչացնում էր իրանահայատակ բոլոր ժողովուրդների արտադրական կենդանի ուժերը: Սովորական հարկերից գատ ժողովում էին նաև հատուկ տուրքեր՝ ապիրտւրան (չրահարկ — Ա. Հ.), շահզաղի ախրաջաթ (հօգուտ շահզաղի գանձվող տուրք — Ա. Հ.), շեշգինար կոշված ինչ որ տուրք և այն էլ՝ մեկին երեք: Վերջում էին շունետրների գույքը, նախկինների համեմատությամբ անօրինակ ծանրաբեւեռում

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենագարան, ձեւ. № 2121, էջ 367ա: —

<sup>2</sup> Նույն տեղում, ձեւ. № 604, էջ 199բ:

խաշնարածի, երկրագործի և արհեստավորի վաստակը: Խնայված չէին նաև վաճառականները և անգամ մինչ այդ տուրքերից ազատ եկեղեցականները: Իբրև եկեղեցու իշխան՝ Նսային հատուկ մանրամասնություններ է նկարագրում եկեղեցականների հարկումը: «Ընդամենը, — գրում է նա, — կաշառս յուլվա, և տասանորդս, և վարդեալ վարձս զինուորացն առաւել քան զշափն առնուին և ապա զգրեալն կրկնէին. ապա յեա այսորիկ՝ գրեցին և զվանորայս, դանապատս և զգիւղօրէից եկեղեցիսն. քնդ նմին և գեպխկոպոսունս և զարեղայս և զերիցոնս առ հասարակ ի թիւ արկին և աւարտելով զնոսա սկսան գրել և զվաճառականն և ճանապարհորդսն և զորս սուղ ինչ առևարոյ տեարքն էին, զամենեսեան ի համարաթիւն գրելով ... գրլխոցն երեքստիկ յաւելմամբ ի վերայ առաջնոյ սահմանին. ի վերայ եկեղեցական պաշտոնէից որ յառաջումն ոչ երևէր բնաւ տասնապատիկ առաւել քան աշխարհականաց ծանր բեռնս եզին և զսոյն աշխարհագրութիւն հազիւ մինչև յերիս ամս աւարտեցին, զի ի ՌՃՆԸ (1699) թուին սկսան և ք ՌՃԾԱ (1702) թուին հրաման արարին զերեք տարուոյ զգլխահարկ ժողովրդեանն, զոր նոր եզին, նաև վասն եկեղեցականաց և կրօնաւորաց կարգեալն քնդ նմին միահաղոյն առնուլ...»<sup>1</sup>: Նույն տեսակի վկայություն կարելի է բերել նաև ժամանակակից մի այլ աղբյուրից: 1700 թվականի մի հիշատակարանում, գրված Երնջակի գավառի նորաշենիկ գյուղում, կարդում ենք. «Մատենալ կամք ի ձեռն ժանդարարոյ ազգին պարսից, զոր իբրև անաստելի ալիք ծովու յարուցեալք են ի վերայ սրբոյ եկեղեցոյ և յորոցոց նորին, և կամին կլանել: Զոր և ի սոյն ամի հրաման գառնութեան ել ի դրանէ թագաւորին, զի զվանք, զանապատ և զեկեղեցիք հանդերձ բնակչօք իրեանց ի ներքոյ ծանր հարկի դնել, զի դեռ նոր է բորբոքեալ հուրս այս»<sup>2</sup>:

Նսայի կաթողիկոսը տալիս է նաև այս ժամանակվա վարչական շահատակությունների պատկերը: Երկրի շար ստիկանները — խաները, սուլթանները զուլիբեկները, վեզիրները, դարուղամերը և թիուղարներն — առաջները տեսպես էին վարում իրենց պաշտոնները. միայն հանցանքի կամ թերացման համար է, որ հեռացնում էին նրանց, և այն էլ հազվադեպ, — հավաստիացնում է Նսային: Սակայն շահ Սուլթան Հուսեյնի օրոք, ասում է նա, այսպես չէ:

<sup>1</sup> Նսայի կաթողիկոս, նույն տեղում, էջ 17 և հա.:

<sup>2</sup> Ֆ. Ն. Ֆիշկ, Յուզակ Արգար Հովհաննիսյանի հայերեն ձեռագրերի, Լայպցիգ և Մարբուրգ, 1903, էջ 159, և հա., հմտ. Հայկական ՄԱՌ Մատենագարան, ձեռ. № 3841, էջ 309—310:

Ե՛վ թագավորը, ե՛ նրա նախարարները կաշառակուր լինելով՝ հաճախակի փոփոխում էին պաշտոնյաներին, այնպես որ մի տարում միեւնույն պաշտոնի մեջ հերթափոխ էին լինում երկու-երեք մարդ: Եվ ինչպես որ կաշառքով էին տիրանում բարձր պաշտոնների, այնպես նաև, մի կողմ թողնելով ժողովրդի գառն ու իրավունքը, կեղեքում, կողոպտում էին իրենց ստորադրյալներին. նույնն անում էին նաև «օրինապահ՝ դպիրները»՝ գառավորները, շեյխ-ուլ-խալամները, շեյխերը և կազիները»: Մուլքադարները ևս («որք միանգամ տեսաք էին գիւղից և ագարակաց») և ոռճիկակերները («գոնլուզ հատեալ զօրապետք և զօրք») իրենց հասանելիք տասանորդների շարքով զրամական տուրք պիտի տային թագավորին: Անփական գրպանից չէ, որ անում էին նրանք հավելումներով փրված այդ վճարումները, այլ ուսյաճների ու ունչպարների, արհեստավորների ու խանութպանների գրպաններից: Բացի այս, շարունակում էին աղջիկ քաշել, նրանց բռնի ուրացման հարկադրել, նորոգել իմաս Զաֆարի անթեղված օրերը և այլն. «որքան դովլաթավորս և մեծատոնս աշօք մերովք տեսաք ի Զուղայ և յՅրեան որ ի վերջին աղքատութիւնն և թշվառութիւնն հասեալ էին. և հարցեալ զպատճառս տեղեկացարք, որ վասն ուրացողացն և յափշտակութեան ընչից իւրեանց եղեալք այնպէս»<sup>1</sup>:

Նույն այս ժամանակաշրջանում Երևանի տնտեսական ու քաղաքական դրության մասին ելունդավոր պատկերացում է տալիս Նազաշ Հովնաթանը: Ժողովրդական այդ երգիչը նշում է քաղաքի արտադրության անկումն ու զրամաշրջանառության վիճակը.

Զարուն չուխն պօրկոց շալակ,  
Գրտակ կարեն ձրգեն թալակ,  
Մայրն երկայն սրպէս սալակ  
Մեջքն պատի հատ քոշտակ...  
Շերեփ գրգայ խիտ խրտորոն,  
Ամենն ամես մեկ վառ թորոն...  
Բագաստանըն փրնթի մուտտա  
Կու ծախեն խիտ խաշար ստատա,  
Թորփա քեշա աթառ-փաթառ...  
Փողով հաց շրենկնիլ մարդո ճանկ  
Աշխարհս Լժան, Երեան՝ թանկ,  
Հավուզի փող տաս մեկ բուարն,  
Հարկիլ մեկըն շառնիլ ձեռն...  
Ախշվերիշըն է խիտ փօշ  
Տալոյ՝ նամարդ, առնելոյ՝ զօշ:

<sup>1</sup> Ե ս ա յ ի կ ա թ ո ղ ի կ ո ս, նույն տեղում, էջ 19 և հո.:



«Առնելոյ զօշ» էին դառնում մանավանդ քաղաքի զալումները, որոնց մասին այդ երգիչը տրանջում էր, թե «մարդու գլխին կտարեն գերան» և որոնց աճից շատերը կուշ էին գալիս աներում՝ «դռները փակ»:

Հայ ազդրուրները հավաստող հետաքրքիր տեղեկություններ են հազորդում նաև այդ ժամանակ Իրանում գործող միսիոներներն ու դեսպաններն անգամ: «Անհավատները», պատմում է եզուխո մի միսիոներ, գործադրում են հայերի նկատմամբ դաժան իշխանություն: Մանրաբեռնում են նրանց տուրքերով և հավաքում այդ տուրքերը բռնի եղանակով. այդ պատճառով ամբողջ այդ ազգը հեռւմ է ահարեկ: Դրությունը բարդանում է մանավանդ նրանով, որ դրսևորելով «անհավատների» առաջ իրենց ներքին տարաձայնությունները, նրանք առիթ են տալիս մեծամեծ գումարներ կորզելու իրենցից<sup>1</sup>: Հայերի մեջ այս պահին արծարծված ներքին տարաձայնությունների մասին այստեղ հազորդած տեղեկանքը արժեքավոր է: Դա մի վկայություն է, որ հավաստում է Եսայի կաթողիկոսի և Օրիս պատմածներն այն պայքարի մասին, որ այս պահին զենւմ էր՝ անդրադարձնելով հայ կյանքում քաղաքական իրարամարտ հոսանքների—իրանական, արևմտակրոնական և մոսկովյան կողմնորոշումների—առկայությունը:

Ուրիշ մի եզուխո — Իոհանն լա Մայ — գրում է Եամախոյ Մտտիվայի իր ընկերակցին. «Վերջին ամսվա ընթացքում մեզ մոտ այստեղ տեղի էր ունենում բավականին ուժեղ երկրաշարժ, որը չուրաքանչյուր զիշեր երեք-չորս անգամ ցնցում էր աները: Քանի որ հայերն այդ կապակցությունը հանդիսավոր կերպով բարձրացել էին սարի գագաթը, որպեսզի քաղաքն աղետից ազատելու համար աղոթեն աստծուն, հարկադրված եղան դրա համար մոտ 200 թուման տուգանք վճարել»<sup>2</sup>: Մի այլ նամակում նույն լա Մայը հազորդում է. «Թավրիզի հայ քրիստոնյաները խիստ ձնշումների են ևնթարկվում. հայերին մյուսներից լավ տարբերելու համար հրամայված է, որ իրենց մահուդե գլխարկներին մանիշակագույն կտոր կարեն, և արգելում են նրանց դուրս գալ տներից անձրևի ժամանակ կամ երբ ցեխ է լինում փողոցներում: Ե՛վ Սղահանում, և՛ Իրանի մյուս կողմերում ըստ ամենայնի ջանք են թափում, որպեսզի մարդիկ հրաժարվեն քրիստոնեական կրոնից: Մի քանի միսիոներներ գրել են

<sup>1</sup> Lettres édiffiantes, III, էջ 34:

<sup>2</sup> „Письма и донесения незуитов о России“, էջ 104:

ինձ, թե թուրքաբնակ մարզերում գտնված բոլոր միսիոներները վա-  
րանումի մեջ են, քանի որ դժբախտ անօրենները ոչ ոքից արդեն  
չեն վախենում: Անդամ Շամախում հայերին կործանելու զարմա-  
նալի միջոցների են դիմում նրանք: Անհիմն տուգանքներ են բար-  
դում նրանց վրա, իսկ դյուղացիներն այն աստիճան են ճնշված, որ  
զրեթե բոլորն էլ մտածում են փրենց երկրից հեռանալու մասին և  
եթե ունենային ապահով ապաստան՝ այստեղ չէր մնա ոչ ոք<sup>1</sup>:

Փոքր-ինչ ավելի ուշ, Պետրոս Մեծի կողմից հետախուզական  
նպատակներով Իրան հղված դեսպան Վոլինսկին կանգ է առնում  
Շիրվանի խանության վիճակի նկարագրության վրա և թվարկելով  
տեղական բեկլարեկին ենթարկված քաղաքները՝ Շամախին, Բա-  
քուն, Դերբենդը, Դուբան և Աղղաշը, հայերի մասին դիտում է.  
«Թվաեսե մահմեդականները նրանց կրոնին մեծ խռչընդոտներ  
չեն ստեղծում, այնուամենայնիվ այդ քրիստոնյաները մեծ հարկերի  
ու տուրքերի հետևանքով նեղվում են նրանց կողմից և այդ պատ-  
ճառով շատերը ստիպված են մահմեդական կրոնը ընդունել կա-  
մովին»<sup>2</sup>:

Մեր հիշատակած աղբյուրներում վկայված կրոնադարձության  
փաստերը հաճախակի էին մանավանդ հայկական աշխարհի պերի-  
ֆերիաներում: Այս կապակցությամբ վերհիշենք Թադեոս Առաքելո  
վանքի վանահայր Արդար կոչված Իսահակ վարդապետի 1691 թվա-  
կանի վկայությունը, որը, ինչպես կարծում ենք, գլխավորապես վե-  
րաբերում է Մակվի շրջանի հայերին. «Եւ քան զկարն աւելի հարկա-  
պահանջութեամբ նեղեն զազգն մեր և յոչ կարելն հատուցանել, յու-  
րացութիւն անկանին, հարկրով և այլ աւելորդով, դիւրով և գա-  
ւառով»<sup>3</sup>: Առհարկի կրոնադարձության դեպքեր լինում էին նաև  
Իրանի կենտրոնում, Սպահանում և Նոր-Ջուղայում, ուր քիչ չէին  
դեպքերը, երբ հալածանքների ու կեղեքումների ճնշման տակ մար-  
դիկ փոխում էին իրենց կրոնը կամ բռնում արտագաղթի ուղին<sup>4</sup>:

Այսպիսով XVII դարի վերջին տասնամյակներից ի վեր սկսում  
են ճարձատվել ու փլվել անգամ իրանական պետության հետ կապ-  
ված մեծահարուստ խոջաների ապարանքները: Դովաթալորների մի-

<sup>1</sup> „Письма и донесения изуитов о России“, էջ 106 և 107:

<sup>2</sup> „Дела персидские“, 1715—1718, № 2, էջ 592—593:

<sup>3</sup> Հայկական ՍՍԹ Մատենադարան, ձեռ. № 3912, էջ 344ա:

<sup>4</sup> Տ ե ր չ ո վ ն ա ն յ ա ն, հ. 1, էջ 200, հ. 11, էջ 30 և հտ., 264 և հտ.,

մասը կորցնում էր իր բարեկեցությունը՝ առևտրական գործերի հաճախակի ձախողման ու սնանկացման հետևանքով:

Շահ Սուլթան Հուսեյնի հրամաններով սահմանվում էին կրոնական խտրականություն վայրագ կանոններ: Քրիստոնյաներին իսլամացնելու համար Սպահանում և Զուղայում մեծապես կեղեքվում էր իմամ Զաֆարի օրենքը: Իսլամ մեծամասնություն ունեցող մի շարք գավառներում քրիստոնեական կրոնը դրվում է արգելքի տակ. այդպիսի վայրերը նշվում էին «զուրուզ» անունով. զուրուզ համարված գավառներից չհեռացող քրիստոնյաներին բռնի կերպով «տաճկացնում» էին: 1697—1706 թվականների ընթացքում գրված մի ձեռագրում կարդում ենք. «Թիվն ՌՃԽՆ (1696) մարտի 14 դայս ըշտապ գրեցի, որ եմ գիւղէն մշաբցի, զրա զուրուզ էր, դնացի զի միշար ինչ բան դիպեցի»: Եվ ապա՝ «Թիվը ՌՃԽԶ (1697) մարտի 9 Շահ-Սուլթան Հուսեն թագաւորիցն խստագոյն հրաման եղև բովանդակ գաւառներն բռնութեամբ տաճկացուցին»<sup>1</sup>:

Նույն գրիչը արձանագրած ունի ձեռագրում նաև այսպիսի տողեր. «Գրեցաւ ապրիլի 8 զատիկ շաբաթ օրն որ կասէին թև Մսկոֆու թագաւորն զՃԽ (140) նաւ է ձգել ծովն անթիւ բազմութիւն մարդկամբ, որ դայ Սպահանայ վերա կուիւ. ճշմարիտն ճշմարտին է գիտօղ թէ որպէս կամ զիարդ լինի այս անհնարինս հնարաւոր, եթէ ոչ աստուծոյ ամենակալին կամօքն լինի: Որ տառապեցոյցն նոյն ուղորմեացի: Աստուած մերձ է, մի ինչ հոգայք, ճշմարտան թէ՛ որ եղև աւետաւոր բանս, բարձեալ կու լինի շարն ի միջոյ մերոց, ամէն»<sup>2</sup>:

XVII դարի վերջերին և XVIII-ի սկզբներին տնդամ կենտրոնական Իրանում ապրող հայերի մեջ կային մարդիկ, որոնք գիտում էին Ռուսաստանի միջամտությունը որպես փրկություն հուսատու խարխալ:

Մոսկվայի և Իրանի միջև տեղի ունեցող մշտական երթևեկությունը Օրբին հնարավորություն է տալիս իրազեկ գառնալու հայրենի երկրի վիճակին<sup>3</sup>: Հանգամանորեն ծանոթացած պիտի լինեն նա երկրի դրությունը ի վերջո մանավանդ Միրոն Վասիլևի միջոցով:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ- Մատենադարան, ձեռ. № 2272, էջ 66ա և 84բ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 178բ: Ե՛րբ է գրվել այս թերված տողերից երևում է, որ զբանց զբուժյան տարում գատիկը ընկնում էր ապրիլի 9-ին: Տոմարագիտական հաշվով 1696—1709 թվականների արանքում այդպես եղել է միայն 1699 թվականին: Նշանակում է վերի տողերը գրվել են 1699 թվականի ապրիլի 8-ին:

<sup>3</sup> Յ 3 0 Յ, նույն տեղում, № 88:

Միրոնը ևղև էր Աղվանքում և էջմիածնում 1702—1703 թվականներին, երբ տեղի էին ունեցել Նսալի կաթողիկոսի և ուրիշների զորչափ նկարագրված այն անցքերը, որոնց վրա ծանրացանք վերը: 1703 թվականին Պետրոս Մեծին Օրին հայանում էր ուղղակի թե՛ «Մեր ազգի վաճառականների միջոցով միշտ ավելի և ավելի եմ տեղեկանում, որ անհավասանն անընդհատ հալածում են մեր թշվառ քրիստոնյաներին, մեծամեծ տուրքերով և հարկազրանքներով իրենց կրոնին դարձնելով նրանց»<sup>1</sup>: Կուրֆյուրստին գրած մի նամակում նա հատկապես շեշտում էր կրոնադարձության և մասսայական դադթագնացության այն փաստերը, որոնք իմամ Ջաֆարի օրենքի նվիրագործված հարստահարումների հետևանք էին ուղղակի<sup>2</sup>:

Ռուս կառավարությանն ուղղած իր գիմումների մեջ Օրին առաջ էր քաշում այն միտքը, որ այսանդակ կերպարանք ստացած այս հալածանքները դասկերև համար ամհրաժեշտ է համապատասխան գիմում տնել շահին՝ հատուկ գեսպանի միջոցով<sup>3</sup>: Ասկայն գեսպան ուղարկելու մասին Օրիի նշած մոտիվն ավելի շուտ առիթ էր, քան պատճառ:

Հյուսիսային պատերազմը շարունակվում էր, և նրա վախճանը դժվար էր նախատեսել: Արդեն 1702 թվականի դարնանը Օրին, անդործությունից հոգնած, խնդրում էր կանցլերին հնարավորություն տալ իրեն որևէ ծառայություն մատուցելու ցարին գեթ շվեդների գեմ մղվող պատերազմում: Ինքը գենքի մարդ է, մեծացել է դիվիզիոնական կոնվնների և ծառայությունների մեջ և որչափ ցարից թուշակ է տրվում իրեն, շի ուղում ձրի վայելել այդ շնորհը, այլ գործել և ցույց տալ, որ պատերազմի մեջ կարող է հայտ բերել զինվորական ոգի ու հնարամտություն «у потребляти ... военные вымысли», կամ, ինչպես փասված է մի այլ տեղ, «спирита [и] хитрость военную»<sup>4</sup>: Հատկապես խնդրում էր, որ թուշ տրվի իրեն ամենուրեք իրենց արդարացրած ֆրանսիական կարբինայիր հեծելագնդերի օրինակով զորամաս կազմակերպել Ռուսաստանում: Կարող է ստանձնել այդ

<sup>1</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, Ա՛ 107:

<sup>2</sup> Տե՛ս մեր Israel Ory, Anhang, Ա՛ 15:

<sup>3</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, Ա՛ 120: Իրանում գեսպան (էլչի) էր համարվում ամեն մի բանազնաց և անգամ ամեն մի սուրհանդակ, որ օտար պետությունից որևէ նամակ էր հասցնում շահին (հմմտ. Lucas, նույն տեղում, էջ 312 և հտ., Gemelli Careri, նույն տեղում, II, էջ 52):

<sup>4</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, Ա՛ 60, § 3 և Ա՛ 62:

գործը, եթե իրեն տրամադրվեն թուրքերեն իմացող Դոնի կողակներ կամ շերքեզներ<sup>1</sup>: Խնդրում էր նաև թույլ տալ գրել Պֆալցի կուրֆյուրաֆին՝ Նազար Արեխովիչի միջոցով համապատասխան առըրձանակների հետ միասին հազար կարաբինա ուղարկել Ռուսաստան: Բացատրում էր, որ կարաբինաները ակոսավոր հրացաններ են, խրփում են չորս հարյուրից ավել քայլի վրա. համոզված էր, որ գրանք շատ պիտի դուր գան ցարին<sup>2</sup>: Վերջապես, կամենում էր, որ կարգադրություն լինի, որպեսպի Արեխովիչը բերի իր հետ զինագործ վարպետներ և այլևայլ զենքերի նմուշներ՝ հարկ եղած դեպքում այդպիսիները Եվրոպայում ձեռք բերելու համար<sup>3</sup>:

Տեղեկանալով Օրիի վերջին առաջարկությունների մասին՝ ցարը նրան հրահանգեց այդ մասին գրել կուրֆյուրաֆին<sup>4</sup>: Ինչ վերաբերում է Օրիի զինվորական ծառայության խնդրին, այդ մասին ցարը ավելի խուսափողական պատասխան<sup>5</sup>: Հայտնի է, որ Ռուսաստանում կարաբինակիրների զորամասեր կազմակերպվեցին շատ ավելի ուշ՝ առաջին անգամ Եկատերինա Երկրորդի ժամանակ:

Այս շխանդարեց, որ Օրիի մաքերը շարունակեին աշխատել նույն սուղությունը: Արդեն իսկ մեկիքների անունից ցարին ներկայացված վերջին գրություն մեջ, շեշտելով Օրիի բարձր ծագումը, նրա շարչարանքները, նրա զինվորական փորձը, միջնորդություն էր հարուցվում, որ նա ընդունվի առևս զինվորական ծառայության մեջ և որ նրան հասկացվի համապատասխան զինվորական կոչում:

Հանգելով կարաբինակիր զորամասեր կազմակերպելու առաջարկին, Օրին գիտեր անշուշտ, որ ինքը չի կարող կաշեղ նման մի-

<sup>1</sup> Յ 3 0 8, նույն տեղում:

<sup>2</sup> նույն տեղում, № 63:

<sup>3</sup> նույն տեղում, №№ 57, 61, 63: Ալիշանի աված մի տեղեկության համաձայն՝ Պետրոս Մեծի ժամանակ Նազար Արեխովիչը Սյունյաց և Արցախի երկրներից Ռուսաստան էր բերել բազմաթիվ հայ արհեստավորներ, որոնք հրանոթ պատրաստելու մասնագիտություն ունեին (Ալիշան, Սիսական, էջ 464): Դժբախտաբար հայտնի չէ Ալիշանի ազբուրը և ոչ էլ այն, թե և՞րբ էր Արեխովիչը մատուցել Պետրոսին այդ ծառայությունները— Օրիի Ռուսաստան դառնաց առաջ, թե՞ հետո: Շատ հնարավոր է, որ Ալիշանի հաղորդածի մեջ կա փաստերի աղավաղում, որչափ հավանական է, որ նրա հաղորդածը վերաբերում է այն վարպետներին, որ Արեխովիչի հետ պիտի գային կամ իրոք եկել էին Ռուսաստան ոչ թե Սյունիքից կամ Արցախից. այլ Եվրոպայից: Հայ մեկիքներն ու յուրաքանչյուրը դանդաղում էին, որ իրենք չունին ոչ թնդանոթ, ոչ թնդանոթագործ:

<sup>4</sup> Յ 3 0 8, նույն տեղում, № 77:

<sup>5</sup> նույն տեղում, № 59:

գործի, եթե չունենա զինվորական համապատասխան կոչում: Մե-  
լիքների անունից գրված դիմումը, որի վրա կանգ առանք վերը,  
հարմար միջոց էր նաև կոչումի խնդրին: Ընթացք տարա համար:  
Տեղ հասցնելով այդ դիմումը, Օրին խնդրում էր, որ իրեն թույլ արվի  
մեկնել Գերմանիա, զինագործներ և զինանմուշներ բերելու և որ  
գրա համար կարաքին:սկիրների զնդապետի աստիճան տրվի  
իրեն: Այս, ինչպես ասում էր Սա, թե՛ հայ մելիքների և թե՛ արտա-  
սահմանյան իր հավանավորողների առաջ կլինելու ցարական շնորհի  
նշան, զնդապետի աստիճանը, թեկուզ և սոսկ որպես տիտղոս, շատ  
կհեշտացներ իր գործը, քանի որ, որպես ցարական սպայի, իրեն  
ավելի գյուրին կլինի հավաքել եվրոպայում և բերել իր հետ զինվո-  
րական գործին հմուտ ամեն տեսակի մասնագետներ ու վարպետ-  
ներ<sup>1</sup>:

Ցարի մոտ զինվորական ծառայության մանելու միաքը հետըզ-  
հետև նոր ընթացք էր ստանում: Օրիի առաջարկը բանադնաց  
ուղարկելու մասին հավանություն գտավ: Ցարը նպատակահարմար  
համարեց, որ Օրին ստանձնի այդ առաքելությունը: Բանագնացի  
անվան տակ նա պիտի ուղևորվի Իրան և իրեն ուղեկից ինժեների ու  
սպանների օգնությամբ հետախուզի ապագա ռազմաքեմի ճանա-  
պարհները: Ուղևորությունը պիտի հետամտի նաև քաղաքական նը-  
պատակներ: Երևանի և Վրաստանի վրայով Իրանից վերադառնա-  
լիս, Օրին պիտի հանդիպում ունենա<sup>2</sup> «Մեծ Հայաստանի» իշխան-  
ների հետ, նրանց ծանոթացնի իր ծրագրերներին և նրանց հետ  
միասին մշակի համապատասխան գործելակերպ<sup>3</sup>, կամ, ինչպես նա  
գրում էր կուրֆյուրստին, հայ մելիքների ու եկեղեցականների ժո-  
ղով գումարի և հարթի ընթացիկ տարաձայնություններ<sup>4</sup>, Դեսոպա-  
նական պաշտոնի հեղինակությունը, հարում էր Օրին, միջոց կտա  
իրեն զբավել մելիքներին, բեխել նրանց միտն իր կողմը և նյութա-  
կան միջոց ստանալ նրանցից գործը շարունակելու համար<sup>5</sup>:

<sup>1</sup> Э 3 0 В, նույն տեղում, № 110:

<sup>2</sup> Նույն տեղում, №№ 11 և 141:

<sup>3</sup> „umb mit ihnen von unseren Affairen auff eine gute Weise zu handeln“, նույն տեղում, № 111:

<sup>4</sup> „J'espere faire une assemblée entre les gens pour regler les differents dans ce temps-là“, նույն տեղում, № 120:

<sup>5</sup> Նույն տեղում: կուրֆյուրստին ուղղած այս նամակը չի գրվել 1704 թվականի սկզբին Մոսկվայում, ինչպես կարծել է Եղյանը, այլ 1705 թվականի գարնանը, Դյուռնեյից, ինչպես այդ ակներև է նամակի բովանդակությունից:

Ուշագրավ այս գրութեան մեջ, ինչպիս տեսնում ենք, Օրին ուղ-  
ղակիւրեն մատանշում է իր գործի շուրջը հայերի մեջ արդեն իսկ  
այս պահին եղած տարածայնորշունները, այսինքն՝ հայկական  
շարժման քեր և դեմ հոսանքների ու կողմնորշումների հակա-  
մարտը:

Օրին շարժանակում էր արժարժել ծրագրված արշավանքի նա-  
մար զորամասեր կազմակերպելու միտքը: Հուշս ունեք, թե կկարո-  
ղանա փոքր խմբերով ձիեր ու մարդիկ փոխադրել Հայաստանից  
Ասարախան և մելիքների միջոցներով վարժեցնել կարարինակիր-  
ների իր զորամասերը, սրտնք, կազմված երկրի լեզուներին տեղակ  
մարդկանցից, իրենց ֆլամուդային գործսղութշուններով լավագուշն  
ժառայութշուններ պիտի մատուցեն աղագա արշավանքի ժամա-  
նակի: Ակզբնապես նա կարծում էր, ին կովողների թիվը անցնելու  
է 2000-ից. ավելի ուշ գոհանում էր 3—4 հարշուր մարդով: Բացի  
այդ, ինչգրում էր, որ հզվելիք դեպսղմութշան միջոցով ցարը պա-  
հանջ գնի շահի առաջ՝ վերականգնելու Արշիլ թագափորի իրավունք-  
ները, սրով արշավանքի ժամանակ ապահովված կլինել գորեղ մի  
հենակեա: Ենթաղում էր, որ սուտական զորքերը Իրան մուանելու ժա-  
մանակ Արշիլը և ինքը պիտի փակեն Արաքսի անցքերը, միջոց շտա-  
լով իրանցիներին՝ Ծահ-Արրասի օրինակով հահանջից առաջ ավե-  
րել Հայաստանը և գրիել սուաներին անհրամեշա կենսամթերք-  
ներից: Գնղապեա Օրին այս պիտի կատարեր, անշուշտ, իրեն նայ  
կարարինակիր հեծելագնղի հրամանատար:

Օրիի աաաշարկների մեջ անղրաղանում էին. անշուշտ, հաև  
Արշիլի բաղձանքներն ու կարծիքները: «Վրաց իշխանը,— գրում էր  
Օրին կուրֆյուրասին,— շատ վաղուց նամաշում է իմ ծնողներին  
(mes parents) և բարեհաճութեն սիրում է ինձ, ամեն ինչ վստահում  
ինձ և հավաստիացնում, որ համերաշխ է բուր իմ արածներին.  
Արշիլը,— ասում է Օրին,— կամենում է մշտական դաշինք կնքել  
(գերմանական) կայարի հեա... և վստահ է, որ կայարի կողմը կըր-  
րավի ոշ միայն վրացիներին, այլև թուրքմեններին (իմա՝ աղրբե-  
ջանցիներին), բրղերին, արխաղներին և մշուաներին, սրտնք կսիվ  
կակեն թուրքերի դեմ, ևթև սրանք պատերաղմ հայարարեն նարին  
մեծութշանը»<sup>3</sup>: Օրիի այս գրութշունը հիմք է տալիս եղրակացնելու,  
թե նրա և Արշիլի գործակցութշունը նպատակ ուներ գրավելու Իրանի

<sup>1</sup> Հմմտ. նուշն տեղում, Ա՛ 115, 117 և 141:

<sup>2</sup> Նուշն տեղում, Ա՛ 120, 141, 145:

<sup>3</sup> Նուշն տեղում, Ա՛ 120:

կամ Թուրքիայի դեմ ոչ միայն հայ և վրաց ժողովուրդներին, այլև ապահովելու ադրբեջանցիների, Բրիտի, արխաղների և առհասարակ Իրանի և Թուրքիայի մյուս ննշված ժողովուրդների գինահեցուքյունը հայերի ու վրացիների հետ:

Ահմեթը է, որ Հայաստանի և Վրաստանի ազատագրումը Օրին և Արշիլը լծորդում էին ոչ միայն սուսական ինտերվենցիայի, այլև Անգրիկովկասի, Իրանի և Ռուրքիայի հարստահարված ժողովուրդների միահամուռ ապստամբության հեռանկարի հետ:

Արշիլի սիրտը Օրին գրավել էր ի դեպ նաև նրանով, որ խոստացել էր գերմանական կայսրի և Պիսալցի կուրթյուրատի միջնորդութամբ ազատել տալ Նարվայի ճակատամարտի ժամանակ գերի ընկած նրա սրգուն, իշխան Ալեքսանդրին, որը զինվորական կրթություն էր ստացել Ռուսաստանում և Պետրոս ցարի կողմից նշանակվել հրետանու գեներալ-ֆելդցեյմեյստեր: Ըստ սրում Օրին չէր լքել նաև Գերմանիա անցնելու միտքը: Հուշ սուներ ստանալ գերմանական իր հովանավորներից զինագործներ, ինչպես նաև Իրանի հեռախոսություն համար անհրաժեշտ մի քանի սպա և ինժեներ: Բացի այդ, նրանցից պիտի հավատարմագրեր ձեռք բերել Իրան մեկնելու համար:

Իրանական առաքելությունը, բացատրում էր նա սուս կառավարությունը, կամրապնդի հայերի հուշերը արտաբին օգնություն Գերմանում և կրարծրացնի ցարին ծառայելու նրանց տրամադրությունը: Բայց այս առաքելությունը, հիշեցնում էր նա, կպսակվի հաջողությամբ, եթե ցարը շնորհ անի զնգապետի կոչում տալ իրեն: Այլ կերպ գերմանական իր թեարկողներն իսկ կարող են ապարդյուն կարծել Ռուսաստանի իր դործունեությունը, մերժել մասնապետների և արհեստավորների առաքումը և կհրաժարվեն նույնիսկ հավատարմագիր տալ Իրան ուղևորվելու համար: Հուշ սուս, թե աչքի առաջ տանելով ռազմական իր փորձը, կարաբինակիրների զնգապետի աստիճան շնորհելով, բազմաթիվ ուրիշ արտասահմանցիների պես, ցարը իրեն ևս հնարավորություն կտա աչքի ընկնել սուսական ծառայություն մեջ<sup>1</sup>:

Ծայրահեղ սխալ կլիներ Օրին այս զիմումների հիման վրա անձնական անափառություն կասկածել նրա մոտ: Գնգապետի տարազը փառասիրություն սլատումձան չէր, այլ գործնական տարբուտ գեսպանության հանձնառությունը հաջողությամբ սլակե-

<sup>1</sup> „J'espere faire une assemblée entre les gens pour regler les differents d'ars ce ten je-là“, նույն տեղում, ԱՅ 108, 117, 141, 144:



չու համար: Մտաբերենք, որ զեսպանություն ուղարկելու միտքը Օրիֆինը չէր բնավ, այլ ցարխնը: Օրին ինքը սկզբնապես սահմանափակվում էր ծպտված հետախուզողի համետ և միաժամանակ նաև վտանգավոր գերով: Սակայն Միրոնի ուղևորությունից հետո, հավաստիանալով իր նոր ծրագրի նկատմամբ Հայաստանում եղած բացասական տրամադրությունների մասին, նա պիտի ամեն հնար ու միջոց դարձադրեր փոխելու այդ տրամադրությունների ընթացքը: Դրա համար է հենց, որ ջանք էր անում հանդիպում ունենալ հայրենի ղեկավարների հետ և իր գործի նկատմամբ բարենպաստ ուղղություն տալ նրանց զիրքավորմանը:

Հայաստանի ազատության ուղիների նոր կողմնորոշման շուրջը բախվող հոսանքապայքարին խելամուտ լինելու տեսակետից խիստ հետաքրքրական է, որ իր զեսպանագնացությունը Օրին գիտում էր որպես կարևոր միջոց հայերի քաղաքական տարածայնությունները հարթելու համար: Գեսպանի հնչուն անունը, կարծում էր նա, պիտի ազդեր հայ հոգևոր և աշխարհիկ պետերին, նրանց տրամադրելով մոսկովյան իր ծրագրի օգտին: Նույն այդ խնդրի բարեհաջող լուծմանը կարող էր նպաստել նաև սուս վնդապետի իր տարազը, որ պիտի հարկավորվեր մանավանդ զեսպանությունից վերադառնալուց հետո՝ սպառա արշավանքի համար Աստրախա-տում զինվորական ջոկատներ կազմակերպելու: Զինվորական կոչումը անհրաժեշտ պիտի լիներ իր ունակությունների ու գիտելիքների նպատակահարմար օգտագործման համար: Գեռ այն ժամանակ, երբ Օրին ծառայում էր կուրֆյուրստին՝ առաջարկում էր հնարավորություն տալ իրեն փոքր-ինչ վարժեցնել 1700 իվականին Հայաստան արշավելիք գործամասերը և հաղորդել սրանց իր գիտեցածը: Եթե Պֆալցի ծրագիրը գլուխ բերելու համար նա պատկերացնում էր իրեն կասպից ծովագրին այն իջնելիք գերմանական զորքի ընդհանուր հրամանատարի գերում, հիմա նախապատրաստվում էր հայկական հատուկ զորամաս ղեկավարելու համար: Գնդապետի կոչումը հարկավոր էր ոչ միայն նրա իրանական զեսպանագնացու-թյունը և Հայաստանում ունենալիք հանդիպումները հաջողությամբ պատկելու, այլև սուսական ապագա արշավանքի ժամանակ իր ունենալիք մասնակցությունը դուրացնելու նպատակով:

Ռուսական բանակի զնդապետի կոչումը նրա համար նրպատակ չէր, այլ միջոց: «Պետք է փնտրել բոլոր այն միջոցները, որոնք կարող են նպաստել մեզ՝ հասնել մեր նպատակին», — գրում

էր Օրին<sup>1</sup>: Հատկանշական է Օրիի համար այս միտքը առհասարակ  
և վերին աստիճանի կարևոր՝ նրա վարքագիծը ճիշտ բմբունելու տև-  
սակետից:



Այն գրութեան վրա, ուր Օրին արծարծում էր դեպի Իրան  
ուղղվելիք իր առաքելութեան ծրագիրը, Պետրոս ցարը սեփական  
ձեռքով մտկադրեց. «Տալ գնդապետի կոչում՝ համաձայն իր ցան-  
կութեան»<sup>2</sup>: Այդ նշանակում էր, թե ցարը հավանություն էր տալիս  
նաև Օրիի իրանական առաքելութեան մտքին, որի իրագործման հա-  
մար այլևս չպետք է ժամանակ կորցվեր:

1704 թվականի մայիսին ցարի հանձնարարական նամակով  
Օրին ժամանեց Վիեննա: Իր հետ նա բերել էր նաև Արշիլ թագա-  
վորի երկու գրութիւնները, մեկն ուղղված Լեոպոլդ կայսրին, մյուսը՝  
Պֆալցի կուրֆյուրստին: Տեսանք, որ Արշիլը, ինչպես և նրա եղ-  
բայրը, կապված էին եվրոպական կոալիցիայի հետ տակավին  
Անդրկովկասում կռիվներ վարելիս: Լիակատար համերաշխություն  
հայանելով Օրիի հետապնդած նպատակներին նկատմամբ՝ իր գրու-  
թիւններին մեջ Արշիլը նրան բնութագրում էր որպես հավատարիմ  
և անկեղծ մի բարեկամի, որը բոլոր եռանդով առաջ է տանում հայ  
և վրաց ժողովուրդների ազատագրման դատը և գիտե լավապես, թե  
ինչ է անհրաժեշտ անել դրա հաղթական ելքի համար<sup>3</sup>:

Օրին ժամանեց Վիեննա մի ժամանակ, երբ թուրքերի ձեռքից  
խլված հունդարական մարզերի գյուղացիները իշխան Ռակոցիի  
զեկավարությամբ ապստամբել էին Հարսուրթների դեմ: Նախկին  
թուրքական հողամասերը ծախուռ էին արվել ավստրիական ազնվա-  
կաններին ու գորականներին, սրտճք, հենված հունգար մտղնատ-  
ների վրա, դեռ այն ժամանակ էին թալանի բաղադրականություն  
վարում հունգար գյուղացիներին նկատմամբ:

Սպանական ժառանգության համար մղվող պատերազմի իրա-  
դրություն մեջ ապստամբ գյուղացիների ազնվական զեկավարների  
և կայսրի արանքում՝ միջնորդ-«խաղարարի» դեր էր կատարում

<sup>1</sup> Յ 3 0 8, նույն տեղում, № 110:

<sup>2</sup> նույն տեղում, № 118:

<sup>3</sup> նույն տեղում, №№ 126 և 127:

այդ պահին վիեննա ժամանած Պֆալցի Հովհանն վիլհելմ կուրֆյուրստը, միաժամանակ մասնակցելով Բուրբոնների կողմն անցած բավարական և անգլիական զորքերի օգնությամբ «դավաճաններին» ստատելու համար վիեննայում գումարված պետական խորհրդակցությանը<sup>1</sup>: Այս կապակցությամբ Օրիի առաջարկների քննությունը ձգձգվեց: Ճիշտ է, պատասխանի նախադեկը պատրաստվեցին թե՛ շահի, թե՛ ցարի և թե՛ Արչիլի համար<sup>2</sup>: Բայց այդ գրությունները չէին ստորագրվում, պատճառաբանելով, թե միտի համբերել մինչև որ համաձայնություն կնքվի հունդարմների հետ: Ի վերջո, ավելի հարմար գտնվեց, որ Օրին ուղևորվի Իրան՝ պապական դեսպանի հավատարմագրով: Հոսի պապին վստահ չէր սպանում Կենտրոնական եվրոպա խուժած շվեդական զորքերի կողմից, և մանավանդ Պֆալցի կուրֆյուրստը կարող էր այդ մասին դիմում հղել Հոսի իր խոստովանաճոր միջոցով: Մինչ այդ, կայսր Լեոպոլդը մահվան մահիճ ընկավ: Կուրֆյուրստը ստիպված եղավ անկատար ձգել ամեն ինչ և մեկնել Գյուտենգորֆ: Օրին հեռակեց Երան:

Այս վարանումը բնորոշ է ինքյան: Շվեդական բանակի առաջխաղացումն ու «ձեռքին թշնամիների» ելույթները ուժեղացնելով «ֆրանսիական մամուլներին» դիրքերը՝ շրջահալեցություն էին թելադրում պերմանական սրագոյած մագնատներին և միաժամանակ կարի իջեցնում նրանց «հայասիրության» թափը<sup>3</sup>: Այնուամենայնիվ Օրիի իրանական դեսպանության համար կուրֆյուրստի խոստովանաճայրը կարողացավ ձեռք բերել Կղեմես XI պապի հավատարմագիրը, ստորագրված 1705 թվականի հուլիսի 15-ին:

Շահին ուղղած այդ թղթում պապը իր և քրիստոնյա մյուս պետերի անունից գանդատվում է այն մասին, որ իրանական պաշտոնյաները վատ վերաբերմունք ունեն դեպի Իրանի «քրիստոնյա բնիկները»: Սրանց «ոչ սակավ մասը, զրպարտությունների և խարդավանանքների ենթարկված», փախչում է Իրանից՝ «ազատություն, հանգստություն և երջանկություն» սրտնելով հայրենիքից դուրս: Հավանական համարելով, որ նրանց նկատմամբ գործադրված խըս-

<sup>1</sup> Israel Ory, Anhang, № 139:

<sup>2</sup> Հմտ. ՅՅՕՅ, նույն տեղում, №№ 129 և 131. այլև բավարական Պետարիով, Kastenblau 16/15 և Sitzungsberichte der philphilologischen und historischen Klasse der Bayr. Akad. d. Wissenschaften zu München, 1893, II, Heft III, Anhang VI.

<sup>3</sup> Հմտ. ՅՅՕՅ, նույն տեղում, № 139:

առեթյունները վերաբերում են միայն «կեղծ քրիստոնյաների ոճիրներին», պապը հուշս է հայտնում, որ Իրանի վիճապետը հանդուրժող վերաբերմամբ կցուցաբերի զուր հալածվողներին, հատկացնելով նրանց արքայական արդար և մեղմ իր շնորհը և նրանց նկատմամբ զսպելով իրանական պաշտոնյաների սանձարձակութունը<sup>1</sup>։

Իր հանձնարարականում Կղեմես XI պապը խոսում էր Իրանի «քրիստոնյա բնիկներին» օգտին, Հեռագրայում նույն պապը պարզաբանելու էր, որ իր հանձնարարականով նպատակ էր ունեցած եղել պաշտպանութան ցույց տալու միայն իրանահայ... «կաթոլիկներին»<sup>2</sup>։ Պարզվում է, այսպիսով, որ իր հանձնարարականում արդարացնելով «կեղծ քրիստոնյաներին» ղեմ խաների կողմից գործադրված շարաշար խտուրթյունները՝ Քրիստոսի անդակալը նկատի էր ունեցել հենց հայազավան քրիստոնյաներին։ Ավելի մերկ ցինիզմ, բան եռհարկ գլխարկ կրող խրատիլակի երկդիմի վարքագիծը, զրմվար է պատկերացնել։

Քանի որ սպանական պատերազմը Հոխշետաի կոռիլներից հետո նպատավոր բնթացք էր բնդունել Պֆալցի համար, կուրֆյուրստը հնարավոր համարեց իր անունից ևս Իրանի շահին թուղթ գրել հայերի օգտին։ Այդ գրություն մեջ նա պաշտպանության խոսք էր ասում կրոնական հալածանքի երեսից Իրանից փախչող քրիստոնյաների մասին և միաժամանակ հովանու տակ առնում երկրում մնացածների կրոնն ու եկեղեցին<sup>3</sup>։ Պատասխանելով ցարին և Արշիլին, այլ թղթերով կուրֆյուրստն ուրախությունն էր հայտնում առաջինին հայերի մասին ստանձնած հոգացողության առթիվ և իրազեկ գարձնում երկրորդին՝ նրա սրղու օգտին Կարլ XII-ի առաջ փր հարուցած միջնորդության նկատմամբ<sup>4</sup>։

Հեռաբրքի է, որ կուրֆյուրստը կազմում էր իր գրությունները գարձյալ Օրիի առաջարկած նախադժերի համաձայն<sup>5</sup>։ Խոստանում էր պատերազմը վերջանալուց հետո օգնության հասնել ցարին՝ հայերի համար դնելիք նրա ջանքերի մեջ<sup>6</sup>։ Սակայն առայժմ, ինչ-

<sup>1</sup> P. T h. K r u s i n s k i, Tragica vertentis belli persici historia, Leopoli, 1740. էջ 524 և հտ.։

<sup>2</sup> Հմմտ. նույն տեղում, էջ 527 և հտ.։

<sup>3</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում. № 135։

<sup>4</sup> Նույն տեղում, №№ 133, 134 և Մեր Israel Ory, Anhang, № 16։

<sup>5</sup> Հմմտ. նույն տեղում, № 15։

<sup>6</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 139։

պէս և 1698 թվականին, զլանում էր սուղեկիցներ տրամադրել Օրբին՝ հետախուզական աշխատանքների համար: Գործնական տեսակետից դա կունենար զույգ ավելի մեծ նշանակութիւն, քան շահին սուղած նրա կամ նույնիսկ ավստրիական արքունիքի նամակը: Հետագայում Օրին հերքում էր միսիոներների տարածած այն լուրը, թէ իբր ինքը հանդես է եկած եղել Իրանում ավստրիական դեսպանորդի հանդամանքով: Ռուսական ակտերում նա նշվում էր Իրան հղված պատգական բանադնաց: Որպէս այդպիսին էլ նա մուտք էր գործելու Իրան:

Այնուամենայնիվ հետագա իր գործունեության ընթացքում Օրին հարկ չէր տեսնում ծանրանալ պատգական իր հանձնարարականի կամ պիտույցան ու ավստրիական խոստումների վրա: Ըստ կաթոլիկ նրան ոչինչ այլևս չէր կապում նախկին հովանավորողների հետ: Ինչպէս գրում էր ցարին, ասպագայում չէր ենթադրում այլևս վերագառնալ Արեմուտք. ցանկանում էր նույնիսկ Քլոլնում թողած իր երկու սրբիներին բերել Ռուսաստան, հնարավորութիւն տալով նրանց յուրացնելու սուսերեն լեզուն և ենթարկվելու բնագմիշտ ցարի «հրամանին»<sup>2</sup>:

1699 թվականին, Հայաստան մեկնելուց առաջ, Հոննոսյան երկրում Օրին ուներ առևտրական մի շարք գործեր: Քաղաքական աշխատանքի անցնելուց հետո, նա լուծարքի էր ենթարկել զրանք և համել զրանց միջից զրամական իր ներգրումները: 1700 թվականին Ռուսաստան մեկնելիս ուներ այդ հանապարհով «սաղացրած» 9500 դուկատ: Ոչ միայն իր անձնական ծախսերը, այլև իր առաքելութիւն գործակիցների (Մինաս վարդապետի, Թարգմանի, քարտուղարների, սուրհանդակների և ծառաների) պետքերը հոգում էր այդ միջոցներից<sup>3</sup>: Մոսկովայի դեսպանական պրիկազից ստացած նրա անձնական թոշակը 15 կոպեկ օրապահիկից չէր անցնում<sup>4</sup>: Ընդամենին, սփառ ստանձներ նաև այլևս չ «ճերկայացուցչական» ծախսեր, հոգար կաշառքի ու նվերների մասին և այլն:

Զարմանալի չէ, որ մի պահ Օրին բնկել էր խոշոր պարտքերի տակ: Մինաս վարդապետը գրում էր, թէ 12 տարուց ի վեր աշխատելով Օրբի հետ՝ Օրին և ինքը հանգիստ չեն տեսել պարտատերերի

<sup>1</sup> ЦГАДА, Дела армянские, 1711 янв., 1714 ноябрь, № 1.

<sup>2</sup> ЭЗОВ, նույն տեղում, №№ 108, 141, 144:

<sup>3</sup> Հմմտ. նույն տեղում, №№ 5, 95, 120, 170 և 305: Այլև մեր Israel Ory, Anhang, №№ 2, 3, 10, 14 և 17:

<sup>4</sup> ЭЗОВ, նույն տեղում, №№ 20 և 145:

երևոյց<sup>1</sup>: 1704 թվականին Օրին ուղղած իր նամակում վարդապետը գրում էր՝ «Քի առ տեղն (այսինքն՝ Արևմտյան նվրոսայում) բարեկամօք կարևա կատարել օգնականութեամբ, խիստ բարի է, թե չէ այն իշխանին (կուրֆյուրստի) առած քուրն ծախէ քո պակասութիւնը տես, որ մեր աշխատանքն չկօրի»<sup>2</sup>: Նույն տարում կուրֆյուրստին ուղղած մի գրութեան մեջ Օրին հաղորդում էր, որ յոթ տարվա ընթացքում աշխատել է և ճանապարհորդել, կրելով ամեն տեսակի վնասներ, ծախսելով ինչ որ տնեցել է, երևա վրա թողնելով երեխաներին և խրվելով պարտքերի մեջ, և այդ բոլորը փր քաղաքական նպատակները իրագործելու համար: Հուլիս ունի իրանական սուրբաբնիկյան կապակցութեամբ վերադառնալով հայրենիք՝ հավաքել հայրական կալվածքներից իրեն հասնող ապուսիկները կամ, արտահայտելով ժամանակի լեզվով՝ «հայրենիք մուքը», որ շէր ստացել 26 տարվա ընթացքում<sup>3</sup>: Ինչ խոսք, որ Օրին անկարող պիտի եղած լիներ որևէ բան գանձել 26 տարվա ստանալիքներից: Ի վերջո տեսանք, որ նա շէր հրաժարվում նաև աջ մտքից, թե մեկիքնների հետ ունենալիք հանդիպումը կարող է լուծել նաև գործն առաջ տանելու համար պահանջված ֆինանսական հատկացումների խընդիրը: Հավանորեն մեկիքների գրամական միջոցներով էր ենթադրում 15—20 հազար ուղղու ապրանք փոխադրել Ռուսաստանից Ամստերդամ և այդտեղ գրանց վաճառքից ստանալիք գումարներով դնել հայկական հեծելազորի համար զենքեր և անհրաժեշտ այլ պարագաներ<sup>4</sup>:

Սակայն այս ամենը դեռ աստղայի երաժշտություն էր: Փաստն այն էր, որ առայժմ, մեծ պարտքերի մեջ խրված, Օրին չարաչար նեղվում էր անողոք պարտատերերի ձեռքից:

Մեզ հայանի է գեթ անողոք այդ պարտատերերից մեկը — ազարակցի Քարզուլին: Դա նույն այն անձնավորությունն է, հենց, որին Օրին հանձնարարած է եղել Քրանսիլվանիայից Դուսելգորֆ հասցնել կուրֆյուրստին նվիրարեքելիք ձիերը: Ժամանակին այդ մարդը Օրին վարկատուն կամ կատարածուն չէր եղել սոսկ, այլև նրա նուսնուուն գործակիցներից մեկը:

Որչափ Քարզուլի վարբաղիծը կալան է հանդիսանում Օրին գործունեության մի շարք մանրամասնությունները լուսաբանելու համար, հարկ է ըստ կարելույն պարզել այդ մարդու դեմքը:

<sup>1</sup> Յ 30 Յ, նույն տեղում, № 188:

<sup>2</sup> Տե՛ս մեր Հայ-ուսու օրինասացիայի ծագման խնդիրը, հավելված X:

<sup>3</sup> Յ 30 Յ, նույն տեղում, № 120:

<sup>4</sup> Նույն տեղում, № 111:

Գաղթան դավառի Ազարակ գյուղից շորս եզրայրներ՝ Թարգուլի (եղծված Թաճարիգուլի անունից — Ա. Հ.), Բաղդասար, Հարությանն և Մելքում՝ համերկրացիներից շատերի օրինակով տարիներ առաջ մեկնել էին Ֆրանկասաճ, ընկել բախտի և հարստության հուսից: Իրանից դուրս բերած իրենց մայր գումարը հասցնելով Կենտրոնական Եվրոպա՝ ազարակցի եզրայրները կառվելին հաշ առևարական մի ընկերության հետ, որի անդամները Գերմանիայում, Հունգարիայում և Լեհաստանում մատակարարումներ էին անում հակա-Պուրքական լիգայի մեջ մասած սկառվյուններից մի քանիսի բանակներին և մասնավորապես գրաղվում ձիրք հայկայնելու գործով: Տեսանք, որ Արևմուտքում մի ժամանակ նման գործերի մեջ մխրթված էր նաև Օրին: Այն հանգամանքը, որ սլաշտոնական մի գրության մեջ Օրին նշում է Թարգուլին և նրա ութ գործակիցներին իր մարդկանց թվում, ինչպես և այն, որ նա կարգադրում էր սրանց անելիքները<sup>1</sup>, հիմք է ապխ կարծելու, թե ոչ միայն ինքը ևս կառված է եղել այդ ընկերության հետ, այլև հանդիսացել ընկերության առևարական գործարքնէրի ղեկավարներից մեկը: Օրին ձեռնարկել էր իր սղևարությանը դեպի Հայաստան՝ ծախելով ոչ միայն իր սեփական միջոցները, այլև օգտագործելով գողթանցի եզրայրներից վերքրած սրոշ պարտագումար: Զուր չէ, որ Պֆալցի կուրֆյուրստի արքունիքում Թարգուլին նա հանձնարարում էր սրպես վառահէլի մի անձնավարության և սրպես մի մարդու, որը իրատացել էր Հայաստանի սղատարքման գործին անփոփոխ հավատարմություն և սղղամխ օղնություն: ամեն ինչով՝ մինչև իսկ էր անձի գոհարբությունը<sup>2</sup>:

Հիրավի, անգամ փոքր-ինչ հետո, մեկնելով Ռուսաստան, Օրին շարունակում էր կառված մնալ օաղնիվ Թարգուլի և նրա ընկերների հետ, սրոնք սղի-սղով սղատում էին իր վերադարձին: Ե վերջո, իր մարդկանցից շարսի սղեկցությունը, Թարգուլին անձամբ իսկ ժամանեց Ռուսաստան: Նա էր, որ իրաղեկ սրեց Օրին կուրֆյուրստի և Լեոպոլդ կայսրի սղատերաղմական հաշտությունների մտախն<sup>3</sup>:

Բուր սղս փաստերից դատելով՝ ազարակցի ձեռներից առևարականը եղել էր ոչ միայն Օրին առևարական գործակիցը, այլև նրա քաղաքական մերձաղոր համախոհը:

<sup>1</sup> Հմմտ. Չ 3 0 Ե, նույն տեղում, ԱՆ 87

<sup>2</sup> Տե՛ս մեր Israel Ory, Anhang, ԱՆ 14:

<sup>3</sup> Չ 3 0 Ե, նույն տեղում, ԱՆ 87 և 88:

Հայտնի չեն Ռարդուլիի և երբայրների գալամարանական հաշարքները, սակայն քաղաքական իր գիրքավորումով Ռարդուլին անգրագարձնում էր ըստ երևույթին սիյուսթահայ վաճառականութեան այն խավերի արամադրութեանները, որոնց արտահայտիչ էր հանգիստանում արեւմտյան կողմնորոշում սնեցած մեզ նախածանոթ Ստեփանոս Կաշտեցին:

Ռարդուլիի և Օրիի հետագա շարված փոխհարաբերութեանների մեջ չարովի արտացոլվում էր աճն հակամարտը, որ արժարժվում էր հայ ազատագրական շարժման հակագործ կողմնորոշումների միջև: Օրիի նկատմամբ ազգայնացի բարեկամի հավատարմութեանն ու նվիրվածութեանը բացառապես վերաբերում էր շարժման հին ուղեգծին, այսինքն՝ Օրիի պֆալցյան ծրագրին: Բարչացականութեան փոխարեն Օրիին հնձեց Ռարդուլիի բուն թշնամանքը, հենց որ հայտնի դարձավ հայ բանագնացի վերագիրքավորումը, նրա գիմաշրջումը դեպի Ռուսաստան:

Անշուշտ Ռարդուլին և նրա ընկերներն էին այն անձնավորութեանները, որոնց նամակ էր գրել Միմաս վարդապետը Հոնգարիա, գանգատվելով Օրիի մոսկովյան գործունեության մասին: Վարդապետի արտահայտած արտունջների ազդեցության տակ է երևի, որ խոր գալույթը շրթներին Ռարդուլին սկսել էր բանասրկել Օրիին կուրֆյուրստի առաջ: 1702 թվականի սեպտեմբերի 14-ին Օրիին հղած իր նամակում այս մասին էր ակնարկում ըստ երևույթին կուրֆյուրստը, երբ գրում էր թե՛ «Կարող եք ապահով լինել, որ միանգամայն համոզված ձեզ գործողութեանների անկեղծութեանը, մենք ականջ չենք կախի և հավատ չենք բնծայի նրանց, ովքեր բարչացական չեն դեպի Չեզ և կկամենային կասկած առաջացնել մեր մեջ Ձեր վարքագծի նկատմամբ»<sup>1</sup>:

1702 թվականի սկզբներին Մոսկվա ժամանելով՝ Ռարդուլին պահանջում էր Օրիից իր ստորագրած մուրհակների վճարումը: Օրին ի վիճակի չեղավ կատարելու այդ պահանջը: Կավադուլն դեպքում նա կարող էր միայն «մխիթարել» իր պարտախրոջը մեկիքների սնունդից կազմված մի նամակով, սւր նրանք երախտագիտական զգացմունքներ էին արտահայտում Օրիի վարկատուներին և մանավանդ՝ Ռարդուլիին: Սրա մասին էր հավանորեն մեկիքների նամակում հանդիսող այն ակնարկը, թե «լսել ենք, որ մեր երկրից մի մարդ հոժարակամ շատ բարիք է արել ձեզ: Թող որ աստված ամեն

<sup>1</sup> Յ 3 0 B, նույն տեղում, № 82, հմտ. նաև № 78:



բարիք շնորհն նրան... Սեպեռն նա վնասների տակ է բնկել ձեր պատճառով, աստված հարցուրապառիկ կվճարի նրան, իսկ մենք այդ մարդուն, որը մեր գործերում օգնության է հասել ձեզ, պիտի պաշտենք ձեզ հավասար և այլն»<sup>1</sup>: Կարծում ենք, որ այստեղ պարզվում է մեր առաջ մեկիքների անունից Մոսկվայում պատրաստված գրությունների բովանդակությունը նախորոշող նոր մի շարժառիթ՝ պարտատեր Քարղուլիին հանդատացնելու կարիքը:

Քվում է, թե անվավեր այդ գրության մեջ Քարղուլիի և ընկերների հանդատության համար էին ասված այն խոսքերը, թե Նահապեա կաթողիկոսը ոչ միայն բարեկամ չէ հայերի ազատագրմանը, այլև իրանցիների հետ ունեցած իր կապերով թշնամի ու վնասաբեր գրան: Վերհիշենք, որ Նահապեաի դեմ մղված պայքարը գլխավորում էին հենց Քարղուլիի համերկրացիները՝ Գողթանի և Նախիջևանի հայերը: Ըստ երևույթի՜ն կաթողիկոսի նշավակումը, նպատակ ուներ շափավորելու ազարակցի եղբայրների պահանջկատությունը: Ավելի ուշ, 1704 թվականին, երբ Օրին ժամանել էր Դյուսելդորֆ, Մինաս վարդապետը նամակ գրեց նրան ու Քարղուլիին՝ քրիստոնեական եղբայրասիրություն: քարոզ կարգալուծվ թշնամացած բարեկամներին: Խնդրում էր թախանձագին, որ Քարղուլիին տարակետի մուրհակների վճարումը, շվտահանա «հայոց թե ֆուսկայ կամ այլ ինչ ազգաց շարախոս մարդկանց»<sup>2</sup>: Սակայն հուսախարված վարկատուն հորդորների բժժանքով պատրոզ մեկը չէր: Մոսկվայում նա շփում ունեցավ Օրիի գլխավորած գործի այն թշնամիների հետ, որոնց մասին իր նամակում նշում էր Մինաս վարդապետը և որոնց նկատմամբ հիշատակություն ենք գտնում նաև Օրիի մի այլ գրության մեջ<sup>3</sup>: Վերադառնալով Դյուսելդորֆ, Քարղուլին շարամիտ ամբաստանապիր ներկայացրեց կուրֆյուրստին՝ նշավակելով Օրիի ընթացքն ու նկարագիրը<sup>4</sup>:

Օրիին և նրա հանձնարարությունները կատարող իր մի եղբորը Քարղուլին մեղադրում էր ի վնաս կուրֆյուրստի և նրա բարոնների ունեցած առևտրական ինչ որ շարաշահումների մեջ: Ինչպես այս կապակցությունը պատմում է Օրիին՝ Քարղուլին կալանքի էր ենթարկել ավել անգամ իր այդ եղբորը<sup>5</sup>: Վերջինիս մի գրությունից

<sup>1</sup> Յ 3 0 8, նույն տեղում, № 95:

<sup>2</sup> Տե՛ս մեր Հայ-ուսու օրինաացիայի ծագման խնդիրը, հավելված № 9:

<sup>3</sup> Օրինակ՝ Յ 3 0 8, նույն տեղում, № 120:

<sup>4</sup> Հմտ. մեր Israel Ory, Anhang, № 14.

<sup>5</sup> Նույն տեղում:

անդեկաճում ենք, որ Դյուսելզորֆում գանձված ժամանակ այս նույն մեղադրանքների պատճառով մի պահ ձերբակալվել էր նույնիսկ Օրին: «Թարղուլին իսկան աղա Անդրիասին հետ Դիսզորֆ (= Դյուսելզորֆ) յՆորայէլի ձեռնէն արդ էին ավել յՆորայէլին բռնել ավել, դավի ընկել փարայի կէս յիքմին պարակիցն յինքէն առել»<sup>1</sup>, — կարգում ենք Օրիի պարագրի մասին կազմված հին արձանագրութեան մեր հրատարակած սեպրի մեջ: Ինչպես պիտի տեսնենք հետագա դրվագում, Թարղուլին էր հանդիսացել անմիջական այն աղբյուրներից մեկը, որից Օրիի «շարաշահումների» ու «խարերայութեանների» մասին անդեկութեաններ էր քաղել Սանտիանոս Ռոշքան. վարը որս վկայութեաններին մենք դեռ առիթ պիտի ունենանք անդրադառնալու:

Մեր արամագրութեան առկ շկան բավականաչափ ավյալներ<sup>1</sup> Օրիի մասին եղած մեղադրանքները հանդամանորեն շարադրելու կամ քննարկելու համար: Կարծում ենք, որ հայ ժողովրդի խոշորագույն ու արգասավոր քաղաքական գործիչներից մեկը համարվելու համար անհրաժեշտ չէ, որ Օրին միանգամայն ազատ լիներ անձնական տրեք թերութեանից կամ նույնիսկ ունեցած չլիներ բնավորութեան մասնը կամ խոշոր այս կամ այն արատը: Բոլոր պարագաներում պատմաբանի համար էականն ու հետաքրքրականը մարդկանց անձնական մեղանշումները չեն, այլ նրանց գործունեության հասարակական արդյունքները: Ներկա առումով Թարղուլիի մեղադրանքներն իսկ կարևոր են սոսկ Օրիի և նրա գծաութեան քաղաքական կողմը հետադրաեղու տեսակետից միայն: Արանով հարցի այդ կողմը հիմնականում բացահայտված կարող ենք համարել արդեն, իսկ «քրեականին» կանդրադառնանք փոքր-ինչ ուշ՝ Ռոշքայի հարուցած ամբաստանութեանները քննարկելու կապակցութեամբ:

Պիտի, ի դեպ, ասենք, որ իր դեմ հարուցված մեղադրանքների կապակցութեամբ Օրին ներկայացրեց կուրֆյուրստին իր բացատրականը<sup>2</sup>, որի բովանդակութեանը վկայում է նորից նրա աշխույժ մտքի և ճարտար պատրաստարձութեան մասին: Օրին ոչ միայն կարողացավ արդարանալ կուրֆյուրստի առաջ, այլև, ինչպես նշեցինք, ստանալ նրա աջակցութեանը առաջիկա իր սեպրութեանը կատարելու համար<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս մեր Հայ-ուսու օրիննոսցիայի ծագման խնդիրը, հավելված № 6:

<sup>2</sup> Տե՛ս մեր Israel Ory, Anhang, № 14.

<sup>3</sup> Նույն տեղում, № 15:

#### 4. ՕՐԻԻ ԻՐԱՆԱԿԱՆ ԳԵՍՊԱՆԱԳՆՅՈՒԹՅՈՒՆԸ

Օրին ցարական զեղապետ և պապական բանագնաց: Նրա ժամանումը Շա-  
մախի: Կուչինսկին Օրիի և նրա առաքելության մասին: Քննական դիտողություն-  
ներ: Միս Վեյսի նախագգուշացումները Օրիի մասին: Գեապանոզ Միշելը և ազա-  
տագրական լեզենդը: Ռուչնայի հակասական վայությունները և նրա վերջին գնա-  
հատականը Օրիի օգտին:

Օրիի մուտքը Ապահան: Շահի գրությունը ցարին: Օրիի զեկուցագրերն իր  
առաքելության մասին: Նրա հանդիպումը Արեխանդր Զուպայեցի և Եսայի Հա-  
սան-Ջալալյան կարողիկոսների հետ: Հանդիպում ապրիլեշանցի գործիչների հետ:  
Օրի և Սուլեյման-բարա: Սուրեռոտիպ մեկապրանքներ: Վերադարձ և մահ:

1706 թվականի հոկտեմբերին Օրին Արխանգելսկի վրայով վե-  
րադարձավ Մոսկվա: Հիմա նա ոչ միայն ցարական զեղապետ էր,  
այլև պապական բանագնաց: Մոսկվա ժամանելուց անմիջապես  
առաջ նա եղել էր Ամստերդամում, ուր—հայտնի չէ թե ի՞նչ մի-  
ջոցներով—զենքերի, հանգերձանքի, արծաթե սպասների և մի  
շարք այլ իրերի զնումներ էր արել Իրան մեկնելից իր շքախմբի հա-  
մար: Գրում էր, թե արտաքին այդ շուրք հարկավոր է ցարական մե-  
ծության պատվի համար. կամ ինչպես ասված է Օրիի մի թղթում.

„umb desto besser ihro czarische Majestät respect zu obser-  
vieren“<sup>1</sup>.

Իրան մեկնելուց առաջ ցարական կանցլերին ուղղած իր դի-  
մումների մեջ Օրին խնդրում է, որ իրեն ցարի կողմից հատուկ դրու-  
թյուն արվի շահի հասցեով, ուր լինեք քրիստոնյաների դեմ հանված  
հալածանքների առիթով «քաղաքավարի բողոք», այլև հատուկ միջ-  
նորդություն՝ Արշիլի իրավունքները վերականգնելու մասին: Ցան-  
կանում էր նաև, որ բացի այդ, սպաներ ու բանիմաց մար-  
դիկ արամազրվեն իրեն՝ Իրանում հեռախոսողական աշխատանք կա-  
տարելու համար<sup>2</sup>:

<sup>1</sup> ՅՅՅՅ, նույն տեղում, №№ 136, 140 և 158:

<sup>2</sup> Նույն տեղում, №№ 141 և 144:

Կասկած չկա, որ ցարի միջամտությունն անհրաժեշտ էր Օրիին՝ ամենից առաջ հայրենակիցների միտքը Մոսկովյան պետութեանը դամեչու համար: Սակայն ցարը անդեպ նկատեց նրա խնդիրը: Օրիին Իրանի հետ Ռուսաստանի անունից բանակցելու իրավունք տալ, կնշանակեր ընդհատել իրանշահի մրափը և թեքել նրա հայացքը դեպի հյուսիսի արթուն հարևանը: Չէ՞ որ Օրին ինքն էր հենց զեկուցում այն մասին, թե Կասպից ծովի վրա ձեռնարկված նախապատրաստությունները երկյուզ են նետել շահ Սուլթան Հուսեյնի սիրտը և որ Իրանում այդ ամենի մեջ մեղադրում էին մասամբ հենց նույն այն Արշիլին, որին ինքը կամենում էր ծիրանի հագցնել յոթնորդ անգամ և այդ էլ հենց իր վարելիք բանակցությունների միջոցով: Օրին վկայում էր նույնիսկ, թե իրանցիները կասկածանքով էին վերաբերվում Արշիլի եղբորը, Գուրգին խանին, որին անվնաս դարձնելու համար պատվավոր աքսորանքի մեջ էին պահում հեռու Ղանդահարում<sup>1</sup>:

Միայն անհանդատություն չէ, որ այս ամենը առաջ էր բերել Իրանում: Արդեն մի քանի տարի է, որ միջոցներ էին ձեռք առնվում պետութեան հյուսիսային սահմաններն ամրացնելու համար: Երբ այս պահին ռուս մի կապիտան Բաքվի նավահանգստում առափնելու համար թույլտվություն խնդրեց, մի բան, որ առաջ տրվում էր ռուսներին առանց այլևայլի, դա այնպիսի անվստահություն անբշնչեց իրանցիներին, որ սկսեցին նույնիսկ ամրացնել Բաքուն: «Մինչ այդ,— դրում է ուղեգիր Լը Բրյունը,— իսկապես դյուրին կլիներ աննշան ուժերով տիրանալ այդ քաղաքին ու հարակից երկրամասին՝ մինչև Կուր և Արաքս գետերը և ամրանալ այդտեղ, քանի որ այդ կողմերի բնակչությունը անընդունակ է դիմադրության»<sup>2</sup>: Օրին իսկ վկայում էր, թե ռուսների երկյուզից Իրանը հիմա նույնիսկ Թուրքիային մերձենալու ձգտում էր ցույց տալիս: Հյուսիսային պատերազմի սկզբում իրանցիները փորձեր էին արել ընդհանուր թշնամու դեմ կապ հաստատել նույնիսկ շվեդների հետ. այդ փորձերը վիժել էին նաև այն պատճառով, որ Շվեդիա ուղարկված իրանական դեսպանը արգելքի էր հանդիպել Ռուսաստանում և ևս դարձեյ ձեռնունայն: Այս փաստը ավելի ևս պիտի ուժեղացներ Իրանի կասկածն ու անհանդատությունը<sup>3</sup>:

<sup>1</sup> Э. З. О. В., նույն տեղում, №№ 141 և 145:

<sup>2</sup> Le Brun, նույն տեղում, էջ 154:

<sup>3</sup> Э. З. О. В., նույն տեղում, №№ 54, 145, 146 և 166, հմմտ. У. Стрелов, նույն տեղում, т. IV, ч. 2, էջ 583, հմմտ. նույն տեղում, էջ 556 և 558:

Այս կարգի նկատառումներով էր անշուշտ, որ գիջելով Օրիի «ամենահպատակ խնդրին», ցարը տվեց նրան միայն «պաշտպանողական մի գրություն», հասցեագրված իր «եղբորը», «հատուկ բարեկամին ու հարեանին», նորին մեծություն իրանշահին: Հայտնելով, թե ուսական ծառայության մեջ եղած դնդապետ Իսրայել Օրի՞ն որպես պապական հանձնարարաբեր ուղևորվում է Իրան մի շարք գործերի և մանավանդ շահի հպատակության տակ գտնված քրիստոնյաների մասին բարեխոսելու, իր գրության մեջ ցարը խնդրում էր շնորհ անել ընդունելու և ի սեր Ռուսաստանի ու Իրանի բարեկամության՝ հարգել նրա խնդիրքը<sup>1</sup>:

Այս հանձնարարության գիվանագիտական նպատակը պարզ է: Պաշտպանության տակ առնելով գնդապետ Օրիին՝ ցարը կամենում էր բարձրացնել նրա հեղինակությունը հայերի աչքում և բարի հարաբերությունների հարթել սրանց հետ: Բայց և միաժամանակ, կուպելով նրա առաքելությունը պապական աթոռի հետ, կամենում էր բթացնել իրանցիների զգոնությունը և Օրիի նկատմամբ վանել շահի կառավարության հնարավոր կասկածամտությունը:

Հասկանալի է, որ այդպիսի մի գրության մեջ չէին կարող ուղղակի պահանջներ դրվել քրիստոնյաների դրությունը բարվոքելու կամ էլ Արշլի թագավորի իրավունքները վերականգնելու մասին: Այսպես, նաև պատահական չէ, որ Օրիի շքախմբի մեջ ոչ միայն ուսսպայի անուն չենք դառնում, այլև չենք հանդիպում առհասարակ ուսսանվան: Մոսկվայից մեկնելիս — 1707 թվականի հուլիսին — Օրիի շքախումբը բաղկացած էր մոտ հիստեն վարձկաններից, հավաքագրված այլևայլ զբաղմունքի օտարահպատակներից, գլխավորապես գիրմանացիներից, հուլանդացիներից և հայերից: Մոսկվայում գրանցվելիս, սրանք բոլորը, ընդունված կարգի համաձայն, պարտավոր էին տեղեկություններ տալ իրենց ծագման և զբաղմունքի մասին<sup>2</sup>: Ուղեկցողներից 30 հոգի կազմում էին զինվորական պահակախումբ, որը կապիտան Վիգշտոկի գլխավորությամբ ենթարկվում էր անմիջապես Օրիին: Իր տրամադրության տակ պահակախումբն ուներ 12 փոքր թնդանոթ՝ հնարավոր հարձակումներից պաշտպանվելու համար<sup>3</sup>:

<sup>1</sup> Յ 30 В, նույն տեղում, № 143, հմտ. Հ. Ա. Տ ա յ ա ն, Վաղերագրեր հայ-պարսկական հարարերությունների մասին, էջ 89 և հտ.:

<sup>2</sup> Յ 30 В, նույն տեղում, № 149—152:

<sup>3</sup> Ն ու յ ն տեղում, № № 163 և 171, § 12:

Ճանապարհ՝ ընկնելով Մոսկվայից 1707 թվականի հուլիսի կեսերին՝ Օրին Շամախի հասավ 1708 թվականի փետրվարի 5-ին<sup>1</sup>։ Շամախում նա պիտի սպասեր մինչև որ, սահմանված կարգի համաձայն, խանը նրա մասին կաեղեկադրեր Սպահան և Ճանապարհը շարունակելու համար թուլլովություն ու ցուցմունք կստանար կառավարությունից։ Սակայն որչափ Օրին առաքելությունը կասկածների առիթ էր տվել մայրաքաղաքում, հարկ եղավ, որ նա միտժամանակ դեղերեր Շամախում։

«Ռուսական դեսպանին» Իրանում ցույց տված ընդունելության մասին զլխավոր աղբյուր են ծառայում այդ պահին Սպահանում գտնված լեհ եզուիտ Կրուշինսկու (1675—1756) մեմուարները։ Այդ մեմուարները կարևոր են, որչափ զրանց հեղինակը ոչ միայն Օրինի ժամանակակիցն էր, այլև, ինչպես պիտի տեսնենք, անձնապես ծանոթ էր նրա հետ. նա նույնիսկ ուղեկցել էր Օրինին, երբ վերջինս Ռուսաստան էր վերադառնում Իրանից։

Իրանի մայրաքաղաքում 1704—1725 թվականներին Կրուշինսկին զեղերում էր որպես եզուիտների պես և մատիկ շփում ուներ արքունիքի հետ։ Քսանամլա իր գործունեության ընթացքում նա հանգստանորեն ծանոթացել էր երկրի այն իրադրութիւնը, որ անխուսափելի էր դարձնում Սեֆյան դինաստիայի խորասկումբը։ Հետանալով Իրանից, նա գրի առավ աֆղանների սպասամբության ամբողջ ժամանակաշրջանի մեմուարային նշանավոր իր պատմությունը, որը, ըստ մատենագրական ավյալների, նախապես պիտի սպված լինի 1727 թվականին, Հոտում «Relatio de mutationibus memorabilis Regni Persarum» վերնագրով։ Այդ հրատարակությունը մեզ ծանոթ է արդեն հիշատակված Stöcklin-ի 1732 թ. սպագրված «Nachrichten von den letzten Unruhen in Persien» հին գերմանական թարգմանության, ինչպես նաև Du Cerceau-ի ձևաքով կատարված ֆրանսերեն «Histoire de la derniere revolution de Perse», t. I, Paris, 1728 և «The History of the Revolution of Persia, taken from the memoirs of Father Krusinski», v. I, London, 1728, անդլերեն մշակմամբ։ Գրքի անգրանիկ խմբագրության մեջ Օրինին վերաբերող էջերը

<sup>1</sup> Օրին Շամախի հասնելու ստույգ օրը նշված է 1708 թվականի սուրբի 4-ի թվակիր մի նամակում, որ գրել է Շամախուց եզուիտ պատեր Շամախունը։ Տե՛ս A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 566։

օգտագործվել են նաև անգլիացի Jones Hanway-ի «An historical account of the British Trade of the Caspian Sea with the Revolutions of Persia, 1753, vol. III և խառլացի Leandro-ի 1753—57 թվականների Հռոմում լույս տեսած «Viaggio in Palestina, Persia et Mesopotamia» գրքերի մեջ: Կրուշինսկին հրատարակել է նաև իր գրքի անգրանիկ խմբագրություն թուրքերեն վերսիան «Tariki Saiyahat» վերնագրով: Հատուկ ուշագրություն արժանի այս հրատարակությունը մեզ ծանոթ է լատիներեն թարգմանություններ, որ կատարել է Christ. Clodius-ը և լույս ընծայել Լայպցիգում 1731 թվականին՝ «Chronicon Peregrinatis seu Historia ultima belli Persarum cum Agwanis gesti»: 1734 թվականին տպագրվել է նաև հեղինակի «Prodromus ad Tragicam vertentis belli Persici historiam» աշխատությունը, ուր արված են Գուռի էֆենդիի իրանական գեոպոլիտիկականության և լեհ-իրանական գեոլոգիայի իրանական գեոպոլիտիկական հարաբերությունների նկարագրությունները:

Ծանոթ է մեզ նաև մեմուարները՝ հեղինակի ձեռքով բարեփոխված լատիներեն երկրորդ հրատարակությունը, որը լույս տեսավ Լյուդով 1740 թվականին՝ «Tragica vertentis belli Persici historia per repetitis clades, ab anno 1711 aod annum 1728», վերատպություն:

Կրուշինսկու մեմուարներն առաջնակարգ տեղ են բռնում Սեֆեվիդների անկումն ու աֆղանների ապստամբությունը նկարագրող պատմական արժանահավատ սկզբնաղբյուրների մեջ: Կրուշինսկուց են ելնում այդ ժամանակաշրջանը նկարագրող եվրոպական գրեթե բոլոր հեղինակները: Բազմաթիվ լեզուներով թարգմանվում էին մեմուարները հեղինակի անունով և ավելի հաճախ՝ այլևայլ կոմպիլյացիաների ձևով: Գծբախտաբար ոչ մեկը այդ հրատարակություններից հաշվի չի առել արժեքավոր այն ուղղումներն ու լրացումները, որ արել է հեղինակը մեմուարների 1740 թվականի հրատարակության մեջ: Այդ հրատարակության մեջ Օրիի մասին մտցված ուղղումներն ու վկայությունները առաջին անգամ օգտագործվել են միայն 1914 թվականին տպագրված մեր գերմաներեն ուսումնասիրության մեջ, որի հավելվածում հարկ էինք համարել նույնիսկ արտատպել հաղվագյուտ այդ գրքից քաղված ընդարձակ մի էջը<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս մեր Israel Ory, Anhang, № 17:

Իսրայէլ Օրին լեճ այս ժամանակակցի կողմից հանձնարար-վում է որպէս Ղափանում ծնւած հայ: Մի քանի տարի,— դրում է Կրուշինսկին,— Իտալիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում նա հոգացել է իր ապրուստը՝ սուրճ մատակարարելով բանակներին և ի վերջո՝ ծառայութեան է մտել դերմանակամ կայսրի բանակը, որպէս սպա: Գերազանցորեն յուրացրած լինելով աշխարհի հզորներին սիրաշահելու արվեստը, նա կարողացել էր ելումուտ ունենալ Լեոպոլդ կայսրի մինիստրների մոտ և քանի որ բավականաչափ տիրապետում էր արևելյան լեզուներին, ուղարկվել է Կ. Պոլիս՝ հետադայում Կարլովիցում կնքվելիք հաշտութեան պայմանների նկատմամբ Բ. Դոան բռնելիք դիրքը շոշափելու համար: Իրեն տրված հանձնարարութեան բարեհաջող լուծումից հետո Օրին մտել է ռուսական ծառայութեան մեջ: Յարից դնդապետի աստիճան ստանալով, հզվել է դարձյալ Կ. Պոլիս և համաձայնութեան գլուխ բերել Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որով ցարը հնարավորութեան ստացաւ կենտրոնացնել իր ուշադրութեանը շվեդական ռազմաճակատի վրա: Գոճ և՛ ճրա բանակցութեանների արդյունքից, և՛ հետագա նրա ծառայութեաններից, ցարն առաջարկեց Օրինը՝ շահավետ որևէ շնորհ խնդրել իրենից: Օգտվելով արված առաջարկից՝ Օրին ցանկութեան հայտնեց Իրան հզվել որպէս դեսպան, որչափ այդ պաշտոնը հարստանալու լավագույն աղբյուր էր հինց. դեսպաններն Իրանում ազատ են մաքսերից և հնարավորութեան ունեն ազատ կերպով ներմուծել և վաճառել մեծ քանակութեամբ ապրանք:

Նշանակում ստանալով ցարից՝ իր անձնավորութեանն Իրանում ավելի մեծ շուք հաղորդելու համար Օրին ուղևորվեց Վիեննա և Հռոմ՝ կայսրից ու պապից ևս հանձնարարութեաններ ստանալու իրանշահի անունով: Լեոպոլդ կայսրն ընդառաջեց Օրինը՝ աչքի առաջ ունենալով նրա նախկին ծառայութեանները:

Ապա նա ներկայանում է Կղեմես XI պապին, վեր հանում հայ հերձախոյնների վրա ունեցած իր ազդեցութեանը և խոստանում հոռմեական եկեղեցու ծոցը վերադարձնել նրանց: Իր խոստումն ի կատար ածելու համար պապը հանձնում է նրան շահին ուղղած հատուկ նամակ:

Ունենալով բոլոր այս թղթերը՝ Օրին փայլուն շքախմբով հասնում է Շամախի և մեծ պատվով ընդունվում տեղի խանի կողմից: Քանի որ նա բերել էր նաև եզուիտների գեներալ գե Սանտալայի հանձնարարականները, նրան համապատասխան ընդունելութեան ցույց տվեցին նաև քաղաքի եզուիտ միաբնակները:



Մինչ Շամախի կհասնենք Օրիի շքախումբը, որը հիմնականում բաղկացած էր ուսաններից, որոնք փաստապես պահակի դեր էին կատարում Բաբու մեկնող նավերի վրա, ինչպես գրում է Կրուշինսկին, դեսպանին միացել էին նաև հայ վաճառականներ. փրենց ապրանքներով հայրենիք վերադառնալիս սրանք հոգացել էին նրա ծախքը, որչափ նրանք Օրիից ոչ միայն իրենց դրուձյան բարելավումն էին ակնկալում, այլև իրենց վաղեմի թագավորության վերականգնումը: Իրանական միմիստներին տեղեկացրել էին, թե իբր Օրի՞ն ակնարկած է եղել, որ ծագում է (Պոռշ ճախնիից առաջացած) հայ թագավորների ցեղից, և որ իբր նա հասկացնել է ավել, թե հեռու է իր ժառանգական իրավունքներից հրաժարվելու մտքից<sup>1</sup>: Այսբանը բավական էր, հարում է Կրուշինսկին, որպեսզի «սուսական դեսպանը» իր վրա բեռներ ամենքի ուշադրությունը<sup>2</sup>:

Այստեղ մենք կտրում ենք Կրուշինսկու պատմության թելը, հարկավոր համարելով մի քանի դիտողություններ անել հեղինակի հաղորդած վայրիվերո ու տարօրինակ այս տեղեկանքների մասին:

Այն ամենից հետո, ինչ ստույգ հայտնի է մեզ այսօր Օրիի գործունեության մասին և ի՞նչ հաջողվեց հավաստել մեր ուսումնասիրության ընթացքում նրա կյանքի և մտորումների քննական պատկերը վերականգնելու համար, անհնարին է հալած յուզի տեղ ընդունել այն, ինչ հաղորդում է այստեղ նշանավոր եղուխտ հուշագրողը: Կրուշինսկու պատմածը նույնչափ հեռու է իրականից, որչափ որևէ մեկի կենդանի կերպարը ծուռ հայելու մեջ մատակարարված պատկերից: Հարկավ դյուրին կլիներ շարամիտ խեղաթյուրում նկատել Կրուշինսկու գրածները և այդ պատճառաբանության մեջ վանց առնել գրանք կամ մեջ բերել գրանց միջից միայն այն, ինչ կարող է անառարկելի կամ նպաստավոր համարվել հայ դիվանագետի համար: Այդպես վարվել կարելի կլիներ միայն ռոմանտիկ պատմագրության էջերում կամ եթե ղեկավարվելու լինենք այն սկզբունքով, թե «պատմության երախտավոր գործիչների» մասին պիտի ասել aut bene,

<sup>1</sup> Insinuatum aliunde Aulae Ministris, quasi in publico Szamachi consessu, praetensus Legatus jactaverit, se Armeniae Regum sanguine natum esse... Indinuando pariter, quod abstititio hoc nomine (cum ante Szuchry (? Ս. Հ.) Barysz, ut pro comperto, habitum in suo pogo vocaretur) sub aenigmate declararet, quid intenderat<sup>a</sup> Krusinski, *Tragica historia*, § 262).

<sup>2</sup> Վերոգրյալի մասին տե՛ս Stöcklin, նույն տեղում, էջ 71 և հտ. այլև *Tragica historia*, §§ 260—262: Հմմտ. նաև Du Cerceau, նույն տեղում, էջ 198 և հտ.:

aut nihil. Սակայն քննական պատմագրությունը չի կարող արհամարհել Կրուշինսկու մեմուարները, որը, բոլոր իր ակներև անհեթեթություններով հանդերձ, Օրիի գործունեությանն անդրադարձող նրան ժամանակակից գրեթե միակ պատմողական աղբյուրն է:

Ընդամին ելնում ենք այն համոզմունքից, որ պիտանի կամ անպիտան կարող է լինել ոչ միայն պատմական աղբյուրը, այլև նրա վերծանման ու օգտագործման եղանակը: Քննաբար վերծանել աղբյուրի մատակարարած նյութը և ըստ կարելույն վեր հանել նրա միջից այն, ինչ կարող է նպաստել ուսումնասիրվող թեմայի օբյեկտիվ լուսաբանությանը՝ այս պիտի լինի մեր հետազոտության ուղին նաև ներկա դեպքում:

Իր գրքի առաջին տպագրության մեջ Կրուշինսկին պատմում էր Օրիի մասին նրա դեսպանությունից մոտ 15 տարի անցնելուց հետո: Նա հիշողությամբ վերարտադրում է ոչ այնքան այն, ինչ դիտած է եղել անձամբ, որքան այն, ինչ լսած է եղել Օրիի և նրա դեսպանության մասին: Ինչպես պիտի տեսնենք շտաոմ, մասամբ նա կրկնում էր կանխակալ այն կարծիքը, որ միսիոներների շրջանում տիրում էր իրան ժամանող «էլչիների» մասին առհասարակ:

Բայց միայն այդ չէր Կրուշինսկու գրքի առաջին հրատարակության եղծումների աղբյուրը: Անդրադառնալով հուշագրողի պատմածին, դժվար չէ նկատել, որ նա ամենից շատ հետևում է ճշմարտությունից այնտեղ, ուր ամենից շատ է մեծացնում Օրիի դերը. այսպես, երբ թվարկում է նրա կատարած հանձնարարությունները թուրքիայում: Եվ ընդհակառակը, նա առավել մոտ է ճշմարտությանն այնտեղ, ուր ներկայացնում է Օրիին անհրապույր դերում, այսպես, երբ ներկայացնում է նրան գինվորական մատակարարի պաշտոնում: Հարկ է պարզարանել այս առեղծվածը:

1740 թվականին լույս տեսած իր «Tragica vertentis belli Persici historia» գրքում, վերստուգելով իր հաղորդածը, Կրուշինսկին հայտնում է, որ Օրիի մասին վերը բերված իր տեղեկությունները քաղած է եղել մասամբ Օրիի «բերնի խոստովանություններից», մասամբ ուրիշների արած դիտողություններից:

Իհարկե, Օրին չէր կարող պատմած լինել իր մասին հիմար այն վերսիան, թե ցարը դեսպանության վստահագիր էր սվել իր ձեռքը՝ իրեն վարձատրած լինելու համար: Օրին նման վստահագիր չուներ ցարից և չուներ ո՛չ պատճառ և ո՛չ էլ շահ կասկածելի դարձնելու իրեն՝ պնդելով հակառակը: Այն, ինչ պատմում է այս մասին Կրուշինսկին, ծագել էր, ինչպես պիտի տեսնենք, Օրիի իրանական

բանագնացութեան ժամանակ կողմնակի աղբյուրներից: Այդ վերստիան մեկն էր Օրիի մասին այդ պահին խմորված և նրա դիմապատկերն ազարտող զրույցներից: Ներկա դեպքում լեհ միսիոները կատարում էր սոսկ շրջուն զրույցներին արձագանքողի դեր:

Ինչ խոսք, որ Օրին անձնապես շահագրգռված էր. որպեսզի դրական կարծիք տարածվեր դիպլոմատիական իր անցյալի ու նպատակադրումների մասին: Քանիցս դիակ էնք արդեն, որ հաշվի առնելով հանգամանքների հոլովույթը, նա չէր վարանում ամեն անգամ համապատասխան լույսի տակ ներկայացնել իր անցյալը: Այսպես նաև ներկա դեպքում ոչ միայն շի բացառված, այլև հավանական է, որ «տպավորութուն գործելու» նպատակով Օրին ինքն իսկ կարող էր հնարած ու տարածած լինել Թուրքիայում ունեցած իր դիպլոմատիական հաջողությունների վերախան: XVII—XVIII դարի դիպլոմատը և մասնավորապես Օրին ատակ էր նման պրիտմների: Հաճախ նա ընդդժում էր, թե շատ լավ ծանոթ է իրանական բարքերին ու էթիկետներին: Անշուշտ իմացած պիտի լիներ նաև, որ Սեֆյանների պետության մեջ նախանձ էր շարժում կամ նմուշ ծառայում ընդօրինակման ոչ թե ֆրանկ թագավորի Վերսալը, այլ թուրք սուլթանի սերայը: 1699 թվականին Պֆալցի կուրֆյուրստին ներկայացրած ընդարձակ իր տեղեկագրի մեջ Օրին պատմում էր, թե հայրենիք ուղևորվելիս Պոլսում հանդիպում է տնեցեկ ֆրանսիական դեսպանի և անգամ մեծ վեզիրի ու սրա գործակիցների հետ: Ասում էր, թե սրանց հետ ունեցած խոսակցությունների պահին շոշափվում էին Կարլովիցի բանակցությունների ժամանակ առաջ քաշված քաղաքական խնդիրները: Նրա ասելով, այդ հանդիպումների ժամանակ ինքը հանդես էր եկել քաղաքական-դիպլոմատիական պատրաստարանության լիակատար փայլով: Անհնարին չէ, հիրավի, որ Պֆալցի արքունիքի միջոցով կամ որևէ այլ ճանապարհով Օրին տեղեկություններ հասցրած լինի նաև Վիեննա՝ Թուրքիայում արած իր դիտողությունների կամ այնտեղ ունեցած իր հանդիպումների մասին: Այս կարգի զրույցներ ու պատմություններ Օրին կարող էր համապատասխան խմբագրություններ օգտագործած լինել ավելի ևս Իրանում:

Դյուսելդորֆում թեկադրած իր զեկուցագրում Օրին հանդես է գալիս Թուրքիայի դեմ պայքարող եվրոպական կոալիցիան պաշտպանողի դերում: Այլ պարագաներում նա կարող էր մատնանշած լինել ուսանների օգտին թափած իր ջանքերի մասին. այս ենթադրու-

<sup>1</sup> ՅՅՕՅ, նույն տեղում, № 11:

Թյամբ Թերևս կարելի է նաև բացատրել Ռոշբայի «Փամանակագրության» մեջ Օրիի մասին սարգաճ մութ մի ակնարկ, թե իբր նա էր պատճառ եղել «ունեկոյ Մոսկայ զԿիրչան» (ղժվար է հավատար, թե ակնարկը Կերչի մասին է, տրը այդ ժամանակ դեռ չէր անցել ռուսների ձեռքը):

Չի կարելի նաև միանգամայն անհիմն համարել Օրիի արքայական ծագման հետ կապված զրույցները: Օրիի Պոռչյան ծագման վերսիսան հայ մարդկանց կարող էր առիթ տալ նման հետևությունների, որչափ Պոռչ իշխանը սերված էր Խաչենի Թագավորացեղից: Քննելով մեկիքնների անունից ցարին ներկայացված առաջին զրույցունը, տեսանք, որ մի պահ Օրիին կամ նրա գործակիցներին ազատագրված Հայաստանի ապագան նույնպես պատկերանում էր Պոռչյանների թագով պատկված: Անհավանական չէ, որ Օրիի գեսպանության արտակարգ շուքը կարող էր դարձյալ առիթ տված լինել նման պատրանքի: Մոտ կես դար անց Օրիի քաղաքական հաջորդներից մեկը, համագանցի հայ պղբեկ Հովսեփ Էմինը, հանձնարարում էր իրեն կամ ընդունելություն գտնում ազգակիցների կողմից, որպես «հայ Թագավորներից սերված դահաժտուանդ», ամենայն հայտից իշխան և այլն<sup>1</sup>: Աստրախանի հայերը, պատմում է Էմինը, զմամլորում էին իրեն որպես Հայաստանի փրկիչի, «որի երևումը նախագուշակված է եղել 600 տարի առաջ»: Նրանք ծնրադրում էին Էմինի առաջ, ընծայաբերություններ անում նրան և այլն<sup>2</sup>: Ավելի ուշ, 1829 թվականին, նույն Աստրախանում ինքն իրեն որպես Պոռչյան շառավիղ հանձնարարող հայ մի հեղինակ իննամյա քրտնաջան աշխատանքից հետո ավարտեց Նիկողայոս I կայսրին ձոնված սովար մի դիրք, ուր Պոռչ իշխանն ու նրա ժառանգները համառորին ներկայացված են որպես Արշակունի թագավորների սերվածք<sup>3</sup>:

<sup>1</sup> The life and adventures of Joseph Emin, an Armenian, London, 1792, էջ 214 և 226:

<sup>2</sup> Մի այլ տեղ, ճշտելով իր հետ կապվող այդ գուշակությունը, Էմինը խոսք է տալիս գյուղական մի տերտերի, որը հավաստում է, թե Ներսես Մհիծի նախատեսությունը հայերի ազատագրումը տեղի է ունենալու 666 տարի հետո, որչափ այդ ժամկետից 638 տարին արդեն անցել է, — հարում է Ներսեսի գուշակությունը մեկնարանող տերտերը, — մնում է միայն 28 տարի, որպեսզի զուրկ դա հայերի ազատագրումը (տե՛ս նույն տեղում, էջ 162): Ըստ երևույթին գյուղական տերտերը գուշակությունը վերագրել էր ոչ թե Ներսես Պարթևին, այլ Ներսես Շնորհալու:

<sup>3</sup> Հայկական ՍՍԹ Մատենագարան, Մտերյանների արխիվ, Բղթասպ. № 197, փավ. № 363, թ. 116ր. և 117ր: Այդ գիրքը հայ ազնվական տոհմերի

Օրիի անձի գործունեության շուրջը սկսում էր խմորվել և ուճանալ հասարակական թեր ու դեմ կարծիք: Արդեն 1703—1704 թվականներին Օրիև և Մինաս վարդապետը սկսում են խոսել իրենց գործի թշնամիների մասին. ակնարկը Թարղուլիի և ընկ. մասին չէր միայն, այլև Իրանում և Ռուսաստանում եղած մի շարք մարդկանց մասին: Սրանց թշնամական վերաբերմունքը բնորոշված է նույնիսկ Օրիի այն թղթերի մեջ, որ տրտունջ է հայտնվում իրանահայ հարուստների «չարամտության»<sup>1</sup>, կամ նրանց լրտեսների մասին, «որ կան մեզ հակառակ շաշուտք (=«լրտեսներ»—Ս. Հ.), որ ի հետ վաճառականաց կու շրջին մարդկանց խօսօքն ամենայն ինչ բարի և սրախլաքն չար»<sup>2</sup>: Բայց երևում է նաև, որ Օրիի գործը որոշ համակրանք էր գտնում նույնիսկ իրանահայ հարուստ վաճառականների ու նրանց առևտրական գործակալների շրջանում:

1709 թվականին Շամախուց հղած մի նամակում Օրին հաղորդում էր, թե կրոնական հայաժանրներից նեղված, Շամախու հայ մեծամեծ խոջաները («les principaux marchands Armeniens») խնդրում են ցարին իրենց հատուկ թաղամաս շնորհել Մոսկվայում, այդտեղ հաստատվելու ու առևտրով զբաղվելու համար<sup>3</sup>: XVII դարի վերջերին, սաստկացած հալածանքների պայմաններում Շամախու մեծահարուստ խոջաների մեջ իսկ համակրանք էր ստեղծվել և նկատելի թեքում կատարվել դեպի Ռուսաստանը: Թե ինչ մթնոլորտ էր ստեղծված այս պահին Օրիի շուրջը՝ ակներև է նաև նույն այդ ժամանակ նրան Շամախում դիմավորած լատինադավան առևտրական Եղիա Մուշեղյանի վկայությունից: «Թեպետ վաղուց դիտեի,— գրում է վերջինս,— թե Պետրոս թագաւորն պալոց է փրկել

ընդարձակ և մանրագատում «գալազանդիրք» է շարադրված հայերեն և ռուսերեն, որի վերջում հեղինակն իրեն հանձնարարում է որպես Պոռչյան տոհմի վերջին ներկայացուցիչ և ինքն իրեն հորջորջում «Գեորգ Մելիքսեղեկյան Խուրով Խոզրակյան Արշակունի» (նույն տեղում, թ. 121ր), բայց որում «Խուրով» ազգանունը ավանցված է «Պոռչ»= «ГѸѠ» անունից: Արդյոք Օրիի առաքելության հեռավոր արձագանքներից մեկը չէ՞ Խուրովի ինքնամեծարանքը՝ Խուրովը չի հիշատակում Օրիին: Բայց հավանական է, որ XVIII դարի սկզբներին Շամախում հայտնված Պոռչյան էյչին ժամանակակիցների գիտակցության մեջ կարող էր աշխուժացրած լինել հայ Արշակունիների մասին եղած պատրանքը, և բացարկված չէ, որ Աստրախանում մահացած Օրիի մասին պահված հիշողությունը կարող էր նպաստած լինել այդ կարգի տրամադրությունների հարատեմանը:

<sup>1</sup> Չ Յ Օ Յ, նույն տեղում, ԱՆՆ 25 և 152:

<sup>2</sup> Նույն տեղում, ԱՆ 98:

<sup>3</sup> Նույն տեղում, ԱՆ 162:

զազգն մեր, բայց առաջի անգամն որ գնացի Շամախի և հաստատապէս լսեցի թէ ամենեսին ուստ թագաւորն դալոց է առնուլ չերկիրն պարսից վասն փրկելոյ զմեզ, առ ժամայն ուխտ եղի յանձին իմոյ ասել յամենայն աւուր հինգ հայր մեր և հինգ ողջոյն Մարիամ («Ave, Maria» — Ա. Հ.) յիշատակաւ սրբազանից հնկից վիրացն Յիսուսի այսու դիտաւորութեամբ թէ Տէր Աստուած զմի ի տասանց կենաց իմոց հաս յինն և զիր ի վերայ կենացն Պետրոս թագաւորին, Տէր, տուր նմա առաւել կարողութիւն, զօրութիւն, որ յամենայն յաշողութեամբ դա և ազատէ զմեր ազգն»: «Եթէ Աստուած, — հարում է Մուշեղյանը, — այժմոյս առաքեր վասն իմ հրեշտակ և ասէր ինձ թէ տուր ինձ զքոյ յանձն ի մահ վասն ազգին քոյ, ես շնորհեմ քո ազգին ազատութիւն և թագաւորութիւն՝ առժամայն... մատուցանեմ զանձն իմ»<sup>1</sup>: Եղիա Մուշեղյանի մեջ խոսում էին այն տրամադրությունները, սրտնց Պետրոսի գահակալութեան առիթով հանդիպեցինք 1696 թվականին Նոր-Ջուղայում գրված հիշատակարանի էջերում: Կասկած չկա նաև, որ «հաստատապէս լսած» կարող էր լինել Մուշեղյանը Պետրոս թագաւորի հայանպաստ տրամադրութեան մասին հենց Օրբիից: Հանգամանք, որ վկայում է ուղղակի Օրբի դեպքանութեան իրանահայերի մեջ գետած այն արձագանքի մասին, որ արտացոլված է նաև Կրուշինսկու մեմուարներում:

Նկատենք առանձնապէս, որ Մուշեղյանը Պետրոս ցարից ակընկալում էր ոչ միայն հայերի ազատագրումը պարսից լծից, այլև նրանց պետական անկախութեան — «թագաւորութեան» — վերականգնումը: Որ իրանահայ վաճառականական միջավայրում հայերի ազատագրումը պատկերանում էր որպէս հայկական թագաւորութեան վերականգնում, այդ բազմադարեան ասպրուն մի գաղափար էր, որի պատմութեանը արդեն ծանոթ է ընթերցողին: Հասկանալի է, երբ այս կապակցութեամբ հրապարակ էր հանվում նաև հայ ազատագրութեան շարժման ղեկավարի, ներկա դեպքում Օրբի, արքայական ծագումը: Արտաքին այն փայլը, որ հաղորդել էր Օրբին իր ուղեւորութեանը, կարող էր նպաստել այն բանին, որ հայ հասարակական այլևայլ շերտերի մեջ ազգային-քաղաքական ակնկալություններ ու զրույցներ հյուսվեին նրա անձի ու նպատակադրումների շուրջը: Նշանակալից չէ՞ թեկուզ հենց ակներևաբար շափաղանցված այն վերսիան, թե, ինչպէս վկայում է Կրուշինսկին, Օրբին Ապահան ուղեկցող ձիավորների թիւը հասել էր երկու հարյուր հոգու, ըստ

<sup>1</sup> Հ. Ոսկյան, նույն անգում, էջ 74 և հա.:

որում Մոսկվայից կամ Աստրախանից նրան ուղեկցած նույնչափ մարդ էլ դեռ մնացել էր Շամախում:

Բնական է, որ ուսա և եվրոպական հովանավորների հանձնարարությունները Իրան ժամանած մի իրանահպատակ հայ, արքայական ծագումով և իրանահայ քրիստոնյաների պաշտպանի դերում, անհանգստություն առաջացնելը Սպահանում: Դիտենք արդեն, որ Իրանի արքունիքում բարյացակամ վերաբերմունք չկար դեպի նվաճված ժողովուրդների «սոհմային տրադիցիաները»: Կասկածոտ վերաբերմունք պիտի լիներ մանավանդ դեպի դրսեկ այն ուժերը, որոնք կարող էին վերակենդանացնել կամ աշխուժացնել այդ տրադիցիաները: Ներկա դեպքում կասկածն ու թերմտանքը սաստկացան մանավանդ մի շարք կողմնակի հանդամանքների ազդեցություն տակ:

Նույն այդ ժամանակ, երբ Շամախի էր ժամանել Օրին, Սպահանում որպես արտորական դեգերում էր Իրանի դեմ թշնամորեն տրամադրված աֆղանների պարազուլսի Միր-Վեիդը: 1690-ական թվականների սկզբներին աֆղանները ապստամբության դրոշ էին բարձրացրել իրանական օկուպանտների դեմ: Շահը քանիցս զորք հղեց նրանց ըմբոստությունը պատժելու համար: Բայց ամեն անգամ ապստամբները պարտության էին մատնում իրանցիներին և նոր ուժ ստանում պարտված թշնամուց խլված զենքերի հաշվին: Ի վերջս նրանց դեմ ուղարկվեց պարսիկներից և մասամբ վրացիներից կազմված մի բանակ, մեզ նախածանոթ Գուրգին խանի հրամանատարությամբ: Գուրգին խանը մեծ ջարդ տվեց աֆղաններին և գրավեց Քիրմանն ու Ղանդահարը, ձերբակալեց ապստամբությունը նյութելու մեջ կասկածված Միր-Վեիդին՝ Ղանդահարի քաղանթարին և նրան հղեց Սպահան՝ «շահի ղուլուղին»: Մի քանի տարի դեգերելով Սպահանում Միր-Վեիդը «բարեկամանում է» արքունիքի բարձր շրջանների հետ: Շողոքորթ լեզվով նա կարողանում է վստահություն նվաճել Իրանի արքունիքում և նույնիսկ ներշնչել նրան կասկած դեպի Ղանդահարում նստող լիազորի՝ Գուրգին խանի հավատարմությունը: Ինչպես պատմում է Կրուշինսկին՝ առ այս, Միր-Վեիդը մեծապես շահարկեց նաև Օրիի դեսպանության շուրջը արքունիքում ծագած շփոթությունը: Արքունիքի ուղադրությունը նա

<sup>1</sup> Կրուշինսկուց գատ Միր-Վեիդի մասին հոմատ. նաև մեր կողմից հիշատակված La Mamyé—Clairac-ի Histoire de Perse, depuis le commencement de siecle, La Haye, 1750, աշխատության I հատորը՝ նաև՝ «Մանր ժամանակագրություններ», II, էջ 429 և Հայկական ՍՍՏ Մասնաճարան, ձեռ. № 0648 թ., 15 և հա.:

դարձրեց ներքին այն կապերի վրա, որոնք, նրա ասելով, գոյություն ունեին Օրիի առաքելության և Ղանդահարի կուսակալ նշանակված Գուրդին խանի միջև: Այն մարդը, որ ժամանակին պայքարել էր վրաց ժողովրդի ազատագրման համար, հիմա լիազորություններ էս ստացել աֆղան ժողովրդի ազատագրական շարժումը խեղդելու և պատճառ եղել Միր-Վեհիզի տարագրման: Բայց որչափ Գուրդին խանի ձեռքի տակ կենտրոնացվել էին ռազմական մեծ ուժեր, սանձարձակ նրա գործունեությունը սկստմ էր արդեն անհանգստացնել Սպահանի արքունիքին: Առիթ բռնելով Օրիի ժամանումը՝ Միր-Վեհիզն օգտագործեց այս հանգամանքը իր հակառակորդին վնասելու համար:

Արքունիքում կային արդեն մարզիկ, որոնք հետամուտ էին Գուրդին խանի տապալման: Միանալով սրանց և սրտացավ ձևանալով Իրանին, Միր-Վեհիզը ջանք չինաչեց ներշնչել շահին, թե Ղանդահարի սատրապը օրերից մեկում Աֆղանստանի անկախ տեր կարող է դառնալ կամ Մեծ Մուղալի ձեռքը տալ իրեն վստահված երկիրը: Մի՞թե պարզ չէ, ասում էր նա, որ նախկին այդ ապստամբի դավերը պաշտպանություն պիտի գանհն նաև ցարի կողմից: Կարո՞ղ է ցարը իրագործել Հայաստանի թագավորության վերականգնումը, եթե վրացիները արդեն նրան թևանցելու էլբրուսը և անցնելու Կուր գետը, իրենց վրանները Արաքսի ափերին հաստատելու համար: Կարո՞ղ է կասկած լինել, որ դավանակից դրացիներին քանիցս արդեն հովանավորած սուսները կամենում են հայերի միջոցով տեր դառնալ ողջ Իրանին: Արդյոք ցարի օգնությունը չի՞ ապավինում Արշիլը, ձգտելով վերջ տալ Վրաստանում Իրանի ախրապետությունը: Եվ ապա՝ հայերը և նրանց այս գահաժառանգը — Օրին: Արդյոք հայերն իրենց անբավ հարստություններով ի վիճակի չե՞ն ցարի ձեռքով ետ գնել նորից իրենց ազգի կորցրած անկախությունը<sup>1</sup>:

Ըստ երևույթին սուսների օժանդակությամբ հայկական թագավորություն ստեղծելու հեռանկարներն այնքան շոշափելի էին դարձել այս պահին, որ առիթ էին տալիս անգամ այս կարգի խոսք ու զրույցներին:

Եթե աֆղանների պարագլուխը միայն անուղղակի շահ ուներ անդրադառնալու «հայ գահաժառանգի» մասին պատող ստահող

<sup>1</sup> Krusinski (Stöcklin), նույն տեղում, էջ 73 և հա., Tragica historia, էջ 267 հմտ. Clonica Peregremitatis, էջ 23 և հա. և Du Cerceau, նույն տեղում, էջ 206 և հա.:



զրույցներին, կային ուրիշներ, որոնք ուղղակի պատճառներ ունեին հերյուրելու ու տարածելու այդ զրույցները:

Կրուշինսկու ասելով, հայերի համակրանքն իր կողմը գրավելու մտայնությունը, Շամախի հասնելուց հետո, Օրին որպես թե հակացնել էր ավել, թե քշելու է Իրանից կաթոլիկ միսիոներներին, քանի որ այն հանձնարարականները, որոնց հիման վրա սրանք քարոզչություն իրավունք էին ստեղծել այդ երկրում, կեղծ են:

Տարբեր վարիանտներով նման շշուկներ տարածված էին հիրավի: Այսպես՝ 1709 թվականի ապրիլի 4-ին Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանությունն սուլթանի փառերին մի նամակում Վրաստանի միսիոներներից մեկը հաղորդում էր, թե խաբույթով հավատարմագիր ստանալով պապից Իրանի կաթոլիկներին պաշտպանելու համար՝ Օրին, էջմիածնի կաթողիկոսի հետ միացած, ձգտում է ոչընչացնել կաթոլիկ կրոնը, հալածել կաթոլիկներին Իրանից և մասնավորապես Վրաստանից<sup>1</sup>:

Կաթոլիկ միսիոներներին Իրանից քշել տալու մասին բարձրացրած ազմուխը սկսել էր զեռ նախահաջ Օրինի Շամախի ժամանելը: Հայադավանների և լատինադավանների փոխհարաբերությունները շափաղանց սրված էին տակավին դարասկզբին, ինչպես Կ. Պոլսում և երկրումում, այնպես նաև Սպահանում. Թավրիզում, Թրիխսիում և Շամախում: Պայքարին միջամտում էին լատին և հայ կղերի ղլխապետները, ֆրանսիական դեսպանները և վերջապես թուրք և իրանական կառավարության կաշառված պաշտոնատարները, որոնք բռնում էին պայքարողներից մերթ մեկի, մերթ մյուսի կողմը:

Հայտնի է, որ Պոլսի ֆրանսիական դեսպան Ֆերիոլն ու եզուիտները թուրք կառավարության ձեռքով երկիցս (1703 և 1706 թվականներին) արսորեցին Կ. Պոլսից Ավեսիք պատրիարքին և ապա կալանքի ենթարկեցին նրան նախ Մարսելի մի վանքում (1707—1709 թվականներին), իսկ հետո՝ Բաստիլի տիրահաշտակ բերդում, ուր նրան հարկադրաբար նույնիսկ կաթոլիկ դարձրին:

1708 թվականի մայիսին կարմելիտները դիմում են Հռոմ՝ խնդրելով նամակ հղել շահի անունով և պահանջել, որ հայերը հպատակվեն պապի հոգևոր իշխանությունը (asking that the Armenians schold be subject to the Popes spiritual authority)<sup>2</sup>.

Ուրիշ մի միսիոներ, ավելի «ոհալիստորեն» մերձենալով խընդրին՝ հասկացնել էր առիտս պապին, թե հայերին կաթոլիկ եկեղեցու.

<sup>1</sup> Tamarati, նույն տեղում, էջ 610 և հա.:

<sup>2</sup> A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 522।

ծոցը ներգրավելու համար անհրաժեշտ է, որ Ֆրանսիայի թագավորը առևարի ազատություն տա... Շեհրիմանյաններին ու լատինահայ մեծահարուստ մյուս խոջաներին: Եթե մանավանդ Ֆրանսիայի թագավորը համաձայնի Պարսից ծովածոցում գրավել Մասկատ նավահանգիստը, որն այնքան կարևոր է Իրանի համար և ներկայիս գտնվում է արաբների ձեռքում, կարելի կլինի իրավունք ստանալ տնօրինելու հայ եկեղեցու բախտը և լատինադավան դարձնել Իրանի հայերին...<sup>1</sup>:

Հայ եկեղեցականները հաշտ աչքով շէին նայում միսիոներների հնարանքներին և ըստ ամենայնի պայքար էին ծավալում եվրոպական դեսպանությունների կողմից հովանավորված նրանց մեքենայությունների դեմ: Աղեքսանդր Զուլայեցի կաթողիկոսի մասին պապականները գրում էին, թե կաշառում է պարսից պաշտոնյաներին և նրանց ձեռքով ծեծել տալիս միսիոներներին կամ հրաման ստանում շահից՝ նրանց Իրանից քշելու համար<sup>2</sup>, Իր մի գրվածքում եղուիս Վիլլտոր Աղեքսանդր կաթողիկոսին էր համարում 1707—1709 թրվականներին Կ. Պոլսում, Թավրիզում, Շամախում և Գանջայում միսիոներների դեմ հանված հալածանքների բուն նյութողը: Դիմելով կաթողիկոսին նա ասում էր. «Եսուր փակել վանքն քափուշինաց, որ ի Թավրէզ քաղաքի, զի մի բարձրացի սուրբ խաչն Քրիստոսի ի մէջ անհաւատից, և զի մի կրթիցին մանկունք տաւապեալ և աղքատ ժողովրդեանն այնմիկ: Որպէս ի սկզբան ամի կաթողիկոսութեանդ յորժամ հասիր ի Սպահանայ Թավրէզ և երկրորդում աւուր երեկոյեան ժամուն ի մէջ եկեղեցոյ սկսար հայհոյութեամբք քարոզդ ընդդէմ կաթողիկէ եկեղեցոյ Քրիստոսի, և գարձուցանելով բանդ առ ժողովուրդս վասն նոյն պատրի քափուշինացն, թէ լուեալ եմ զի անմեղ գառինս ձեր տանիք և տայք ի ծրծել զստինս շանց (այսինքն՝ մանկունս ձեր տայք ի կրթութիւն պատրեացն) ըսպառնալով քո մահ սրօք պարսկաւ եթէ այլ ևս առնիցեն... որպէս և արարեր նոյն ամի, զի գրեցեր ի նոյն թիւն հայոց ՌՃՆԶ (1707) կամ ՌՃԾԸ (1709) ի Կ. Պոլիս առ մեծ վազիրն Օսմանցոց, թէ ևս Հայոց ազգին ֆթվայ տուողն եմ և դոքա իմ ժողովուրդք հնազանդիլ ոչ կամին ինձ, և ելեալ են ի կրօնից մերոց, ահա ետու ֆթվայ, զի պատժիցէք այս անուն թուով իբրև 175 կամ 200 անձինս, որք ֆռանդ են եղեալ հայքդ, որ և եղև կատարումն ֆթվայիդ, քանզի սուրն Հերովդէի կոտորեաց բազում մանկունս եկեղեցոյ, և ոմանս ետուն

<sup>1</sup> A. Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 526:

<sup>2</sup> Նույն տեղում, I, էջ 523:

չարդրաց զի ի սալբու և զի տանջանաց մեռցին նեղութեամբ: Թող զայլ բազումս և հազարաց անձինս արք փախստականք եղեն հալածանաց և մնացին զուրկ ի տանէ և ի հայրենեաց: Այլ և կրկին սկսար աղմուկել և ի հիմանց շրջել տունս հայոց եթէ ի Թարսկէզ և ի Շամախի, եթէ ի Գանջազ և ի Թիփլիզ, և այլ գաւառս և քաղաքս որոչ սկանատեսս ես ինքնին իսկ եղէ բազմաց... որ դեռ ես եմ ի սլաւածառս նոյն հալածանաց, շրջելոյ սլանդութս և օտար երկրի...»<sup>1</sup>:

Իր գրքերով ու քարտզներով Ազեքսանդր Զուլալեցին անուն էր հանել տակալին Սպահանում առաջնորդ եղած տարիներին, ուր նա և իր ուսուցիչը՝ «տիեղերալոյս» համարված Հովհաննես Մրքուզ վարդապետը, հաճախ գրավոր և բանավոր ահեղ դավանակոխի էին բռնվում մուսուլման և կաթոլիկ աստվածաբանների հետ: 1687—1688 թվականներին վերականգնելով Ամենափրկչի խանդարված տպարանը՝ լույս են բնծայվում նրա և Հովհաննես Մրքուզ վարդապետի աստվածաբանական գրվածքները: Հայտնի է 1687 թվականին Նոր-Ջուղալում տպված նրա «Գիրք ատենական» վիճաբանական գրվածքը, սուղված բնագրեմ «աղզին Գուանկաց» և բնագրեմ նրանց, «որ ասեն՝ թէ եկեղեցին Հոռմայ գլուխ է ամենայն եկեղեցեաց»: Մասնավորապես այդ գիրքը ուղղված էր հայ ազատագրական միտքը դեպի Արևմուտք թեքող մուսուլման քարտզիչ Գալանտսի դեմ: Զուլալեցին քննադատում էր կաթոլիկներին, ելնելով Իրանում իշխող քաղաքական իշխանությունից և հատկապես Նոր-Ջուղալի կղերի ու խոջաների տեսանկյունից: Նոր-Ջուղալի Ստեփանոս վարդապետի բողոքի հիման վրա շահ Սուլեյմանը հրաման է արձակում եզուխ վիլլետին և ուրիշ միախոններններին երկրից արտաքսելու մասին:

Այս ամենի դիմաց ոչ միախոններն, ոչ էլ նրանց հովանավորող Շեհրիմանյանները լուռ չմնացին: Կաթոլիկ պետություններից թեարկված՝ նրանք հակահարձակման անցան և կարողացան ծանր տուգանքի տակ ճնշել Նոր-Ջուղալի վանքի տպարանը<sup>2</sup>: Ավելի ուշ, 1706 թվականին, կաթոլիկ դավանաբանության գիրքերից Մրքուզի և Զուլալեցու դեմ հրապարակ եկավ նաև Նոր-Ջուղալի հայ կղերական և խոջայական վերնախավը քննափետող լատինահայ հեղինակը՝ մեկ նախածանոթ Ստեփանոս Գաշտեցին:

Բազմելով էջմիածնի կաթոլիկոսական գահին (1706—1714 թվականներին), Ազեքսանդր Զուլալեցին հատուկ «արդալոյ» դիմեց

<sup>1</sup> Տե՛ս Գ ա լ ե մ ք ա Ր յ ա ն, նույն տեղում, էջ 192 և հո.:

<sup>2</sup> Խ ա չ. Զ ու լ ա յ ե յ ի, նույն տեղում, էջ 120, Տ ե Ր-Ն ո Վ հ ա ն յ ա ն, նույն տեղում, 11, էջ 266 և հո.:

շահին՝ հրաման խնդրելով նրանից՝ սահմանափակելու ֆրանկ միսիոներն իրավունքները: Հիրավի երկիցս՝ 1710 և 1712 թվականներին՝ շահ Սուլթան Հուսեյնը սաղամ ուղարկեց կաթողիկոսին, որով կարգադրում էր հայաշատ վայրերի իրանական խաներին ու մյուս իշխանավորներին՝ արգելել միսիոներների մերձավոր շփումը հայազավանների հետ և նրանց միջամտությունը սրանց կրոնական գործերին, թույլ չտալ նրանց ամուսնաճախարհ հայազավան ազգիկներին հետ, ուսուցանելու հայազավան մանուկներին, աղփատուն կառուցելու հայ եկեղեցու մերձավորությամբ և այլն<sup>1</sup>:

Ըստ երեսույթին այն հանգամանքը, որ, ժամանելով Իրան, Օրին սկզբից եկի հասկացնել էր տվել, թե ինքը մտադրություն չունի խորախուսակու և հրահրելու կաթողիկ պատերների ազդեխան կամ պայից ստացած հավատարմագրի հիման վրա գործելու իրեն միսիոներների պաշտպան, վերջիններիս առիթ էր տվել կատկածելու կամ ժրխտելու «պատական դեսպանի» ուղղամտությունը: 1708 թվականի ապրիլի 4-ին Շամախուց հզամ իր նամակում եզուխա Շամպիսնը գրում էր ուղղակի, թե «խոսակցության ժամանակ ես նկատեցի, որ հայազգի պարսն Խարաչել Օրին իսկական հերետիկոս է և իր ժամանման պահին թույլ է տվել, որ հերետիկոս հայերն իրենց եկեղեցում բանադրեն պապի միսիոներներին, հավաստիացնելով, թե բանադրված անձերը սրիկաներ ու խաբեբաներ են, ուստի և արգելել է, որ հայերը շփում ունենան նրանց հետ»<sup>2</sup>:

Բոլոր ավյալներից պատելով եզուխա Շամպիսնի ամբաստանագիրն է հենց, որ Օրին մասին տարածված հերջուրանքների սկզբնաղբյուր է ծառայել:

Գնալով սուճանում էին հերջուրանքները: 1709 թվականի ապրիլի 2-ին Նոր-Ջուլայի կարմելիտների փոխանորդ պատեր Ուկունին Պրոպագանդայի Հումի կենտրոնին հզամ թյուրիմացություններով լի մի նամակում հայտնում էր, թե Օրին, հաշվի առնելով, որ ինքը չի վայելում կաթողիկների վստահությունը, հայազավանների տոնական օրերից մեկում իր շքախմբով ֆրանկ զգեստով և պապական գրոշով գնաց Նոր-Ջուլայի «արքեպիսկոպոսական եկեղեցին» և հաղորդվեց<sup>3</sup>: Այստեղ ակներև է հերջուրանքի ու ճշմարտության

<sup>1</sup> Տե՛ս «Ջամբու», էջ 220:

<sup>2</sup> A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 566:

<sup>3</sup> Նույն տեղում:

ստամանագիրք: Որ հայերի (և ոչ սոսկ լատինացիների) պաշտպանությունը գործով մտահոգված Օրին կարող էր աչցելված լինել հայ եկեղեցին, այդ ինքյան հասկանալի է և բնական: Բայց որ, «պապական կրոնը» պաշտպանված, նա կարող էր նույնիսկ հազարավայրեն բնգունամ լինել հայազավան եկեղեցում, գրան արդեն գյուրին չէ համատ ընծայել:

Կրուշինսկին, որ չէր կասկածում Օրինի կաթոլիկ ուղղամտությանը, հետագայում գրում էր, թե նա արտահայտված պիտի լինի միախոներների գեմ բացատարես զիսկումատիկական նկատառումով՝ կամենալով խուսանավել բախվող հայ և «ֆրանկ» նոսանքների արանքում<sup>1</sup>: Հիրավի, իբրև պապական բանբեր Օրին ոչ մի կերպ չէր կարող հակադրվել պապի կամ կաթոլիկ պետությունների հանձնագրերով գործող բարոգիշներին: Բայց ժամանամ լինելով Երան հայերին պաշտպանելու համար՝ նա չէր կարող նաև հակադրվել հայազավաններին: Նրա մոսկովյան ծրագիրը միանգամայն ազատ էր հայերի գավառափոխություններից. նա ոչ միայն չէր հակադրվում հայազավան եկեղեցուն, այլև պահանջում էր, որ ցարական կառավարության կողմից կրոնական հանգուրժամությունների Երաշխիք արվի հայ մեկիքներին ու կղերին: Նրա անվան շուրջը ծագամ թյուրիմացությունների մի ազդեցութ պիտի որոնել հենց այն կարևոր փաստի մեջ, որ, ժամանելով Երան, նա հատուկ նպատակ չէր գրել իրեն՝ պաշտպանելու միայն կարոլիկներին կամ կարոլիկ հայերին, ինչպես մինչ այդ անում էին բոլոր միախոներները: Եզակի դեպք էր այս, երբ պապական մի համեմատարար իրեն առաջադրում էր հայերի պաշտպանության խնդիրը, անկախ նրանց զավանարանական խառուրյուններից: Ըստ Երեույթին եզակի այս փաստից էլ Օրին շարախոսողները հանում էին այն հետևությունը, թե նա խարել է Հոմի պապին, գավառանել կաթոլիկությանը, միացել «հերձվածողներին» և սրանց հետ մեկտեղ հաղածում է միախոներներին... Միախոներները կատարի թշնամանքով զիմավորեցին Օրինի հանգուրժամությունը:

Հիմնվելով միախոներական ստահուր հազարգազությունների վրա՝ Կղեմես XI պապը 1709 թվականի մարտի 2-ին Երանի շահին ուղղած իր նամակում Օրինի մեղադրեց նույնիսկ անհեթեթ այն բանում, թե նա կաթոլիկներին... հայազավան է դարձնում:

<sup>1</sup> Tragica historia, էջ 263, Krusinski (Stöcklin) նույն տեղում, էջ 73:

Ի մոտա քննելով Օրբիին դատապարտող պատգամներն զբարբ-  
րությունները<sup>1</sup>, պարզվում է, որ իրանական իր առաքելութեամբ  
Օրբին, հիրավի, ջանք էր արել նեղել հայկական շարժման դավա-  
նաբանական փակուղին և դնել այդ շարժումը բացառապես կրոնից  
սահմանազատված հայաբնական զաղափարաբանության հոսնի մեջ:

Բայց միայն դավանաբանական անձկամտությունը չէ, որ ծա-  
ռանում էր Օրբիի դեմ, կային նաև նրա առաքելությունից խոցված այլ  
շահախնդրություններ: Արդևն առիթ ենք սննեցել դիտելու, որ Սպա-  
հանում ու նրա արվարձան Նոր-Ջուղայում հայերի և ֆրանսիացիներ  
ի ներհակությունները, առևտրական շահերի հակադրությունից  
առաջացած, անդրադառնում էին անգամ հայ-արևմտաեվրոպական  
բանակցությունների ընթացքին: Ֆրանսիական կապիտալի դորձա-  
կալները ջանում էին օգտագործել հայ առևտրական մտղնատներին,  
ծառայեցնել իրենց նպատակներին՝ նրանց սնակություններն ու  
փորձը: Քչել սապարեկից մամալանդ իրանական պետության հե-  
կապված հայ խոջաներին կամ արձամարհել նրանց առևտրական ըն-  
կերությունների և ձեռնարկությունների լայնատարած ցանցը,  
ֆրանսիացիները չէին մտածում իհարկե: Դրսեկների հանդեպ տե-  
ղացիներն ունեին այնպիսի առավելություններ, որ շնայած իրենց  
ստացած արտոնություններին, ֆրանսիացիները չէին կարող միան-  
գամայն իրենց ձեռքն առնել Իրանի կարավանային ամբողջ առև-  
տուրը: Թեպետև վերջիններս սրույն ֆակտորիաներ էին ստեղ-  
ծել Հաղեպում ու Ջմյունիսյում՝ Իրանում և Թուրքիայում  
դրութեան տեր էին տեղացիները, մասնավորապես հայերը և հույնե-  
րը: Ֆրանսիացիները թափած ջանքերը սպարդյուն էին անցնում հա-  
ճախ: Առևտրականների մրցությունը գուղընթաց ծավալվում են  
ֆրանսիական հյուպատոսների ու միսիոներների գավերը: Միսիո-  
ներներն ու հյուպատոսները ջանում էին սրել տեղական ժողովուրդ-  
ների ներհակությունները և մասնավորապես հայերի դավանաբա-  
նական պառակառնները Կ. Պոլսում և Նոր-Ջուղայում, էրզրումում  
և Թրիխսիում, Գանձակում և Շամախում<sup>2</sup>:

<sup>1</sup> *St' n Bullarium pontif S. Congregat, de Propaganda fide, Appendix, Romae, 1841, էջ 366—367 և 375—376 և A Chronicle of the Carmelites in Persia, 1, էջ 566 և հո.:*

<sup>2</sup> *Հմմտ. նույն տեղում, էջ 152 և հո., Villote, նույն տեղում, էջ 152 և հո. և Relation d'une mission faite... d Archevesque d'Ancyre etc, հմմտ. Preface, էջ 61 և հո.:*

Ֆրանսիական կապիտալի և նրա քաղաքական գործակալներին ջանքերը հանդիպում են հայ առևտրականների համառ դիմադրու-  
 վյանը: Թուրքիայի կարավանային ճանապարհը միակը չէր, որով  
 հայ առևտրականները կապվում էին արասասանների հետ. XVII  
 դարի վերջին տասնամյակների ընթացքում իրանահայ առևտրա-  
 կանները կարող էին կապվել նաև Ռուսաստանի և Հնդկաստանի  
 հետ: Անգլիական և ռուսական ազդեցությունն Իրանում աճում էր  
 այն շափով, ինչ շափով բնկնում էր ֆրանսիականը: Եվ դեռ ավելին:  
 Պետրոսի քաղաքականախոյանը սպառնում էր ոչ միայն ֆրանսիա-  
 կան, այլև անգլիական ապրանքատար ուղիներին:

Ֆրանսիացի ուղեգրողները վաղուց էին նախապես ցարի  
 քաղաքականությունը: Այսպես, Պ. Ավրիլը 1692 թվականին լույս  
 առնած իր գրքում դիտում էր, որ Աստրախանի վոյեպոլին ցուցմունք  
 է արված ուշադիր լինելի դեպի հայերը, քանի որ չկա մի ժողովուրդ,  
 որ կարողանար ավելի նպաստել առևտրի ծաղկմանը, քան սրանք<sup>1</sup>:  
 Պետրոսի հետագա քաղաքականությունը պիտի դար ցույց տալու  
 որ առանց պատճառի չէր ֆրանսիացիների վաղահաս անհանգրս-  
 ւությունը:

Ինչպես տեսանք, 1710 թվականին Պետրոս ցարը պայմանագիր  
 էր կնքել Նոր-Ջուլդայի վաճառականների հետ, որով սրանք նորից  
 էին պարտավորեցվում դեպի Ռուսաստան ծուկ մեծաքաղաքաբձ կա-  
 րավանների երթը: 1711 թվականին արված սենատական մի ուկա-  
 ցի մեջ կարգում ենք ցարի հրահանգը. «Իրանական առևտուրն ըստ  
 կարելույն բարձրացնել, հայերին սիրաշահել և արանություններ  
 տալ սրքան հնարավոր է, որպեսզի նրանք շահադրդություն ունե-  
 նան երեւալու Ռուսաստանում»<sup>2</sup>: Թե ո՞ւմ դեմ էր ուղղված XVII դարի  
 երկրորդ կեսից ակնբախ դարձող այս քաղաքականությունը՝ երե-  
 վում է այն հրահանգից, որ տալիս էր ցարը 1715 թվականին Իրան  
 ուղևորվող դեսպան Վալիևսկուն. «Տրամադրել շահին, որպեսզի նա  
 հրամայե հայերին մեծաքահանութի ամբողջ իրենց առևտուրը  
 վարել Ռուսաստանի արանդիտային ճանապարհով», իսկ ելին շահա-  
 քողի այս՝ «Զմյուռնիայի և Հալեպի ճանապարհին խոչընդոտներ  
 ստեղծել, ինչպես և ուր որ այդ հնարավոր է»<sup>3</sup>: Այս կապակցու-  
 թյամբ ուշադրություն պիտի դարձնել այն արտահայտությունների վրա.

<sup>1</sup> P. Avril, նույն տեղում, էջ 114:

<sup>2</sup> „Полное собрание законов“, XI, 2349:

<sup>3</sup> С. М. Соловьев, նույն տեղում, XVII, էջ 32:

որ 1717 թվականին. ցարը ավելց դժշուանիացի Ապրտ Չելեպիին — երեխ մեզ նախածանոթ Չելեպիի համանուն թուանը—որին նա ճանաչում էր դեռ արտասահմանից: Զմշուանիայի առևտրականներին ցարը խոստանում էր նույն առավելությունները, որպիսիք հատկացվել էին Ռուսաստանում շուղաչեցիներին<sup>1</sup>:

Ֆրանսիական դիվանագետների և միսիոներներին քննադրը պիտի ելներ ցարի հայանպաստ դիպլոմատիային հակազդող պիրքերից: Ուրիշ ի՞նչ վերաբերմունք կարող էին ասեննալ նրանք մաճավանդ «ուսական պետական» համարված հայազգի Իսրայել Օրբի նկատմամբ, որը հայանվել էր Իրանում նույնիսկ պապի նամակով և որի մասին նրանք, բացի այդ, լսել էին նաև, թե վաչկուժ է Ռուսաստանի հետ կապված և իրեն Շամախի ու Սպահան ուղեկցող հաջ առևտրականներին հատուկ բարչապահամությունը:

Հալեպի ֆրանսիական նախկին հյուպատոս Միշելը, որը երբի Շամախում ղեկերելու պահին, ֆրանսիական արտակարգ պետանորդի հանգամանքով դանվում էր Սպահանում, զբաղված էր հենց ֆրանսիական վաճառականների Իրանում ձևք բերած հին արտոնադրությանների վերանորոգման և միաժամանակ նաև Իրանի և ֆրանսիական լիանտինյան գաղութների առևտրական կապերի կարգավորման խնդիրներով:

Միշելի և նրան հաջորդած Ֆելք դը Ֆոնտանեի ջանքերով 1709 և 1715 թվականներին հաջողվեց շահին ստորագրել առաջ կու ֆերման. զրանց համաձայն ֆրանսիական առևտրականներն ու հպատակները բացառիկ լաչն իրավունքներ ու արտոնություններ ստացան Իրանում: Ֆրանսիացիներն ազատվում էին մաքսային խաղաղիումներից ու տուրքավճարումներից: Իրանցիները պարտավորվում էին ձրի պահեստներ արամազրել նրանց ապրանքների համար և հողալ նրանց գույքերի անձեռնմխելիության մասին: Ֆրանսիական պետանին իրավունք էր սրվում լուծելու իրանաբնակ ֆրանսիացիների ներքին վեճերը, ինչպես նաև ներկա գտնվելու իրանցիների և ֆրանսիացիների մեջ ծագող վեճերի լուծմանը<sup>2</sup>:

Իրրև Լուզովիկոս XIV-ի գործակալ՝ Միշելը միջամտեց նաև միսիոներներին և իրանահայ եկեղեցականների բախումներին:

Մտարերևնք, որ այս ժամանակ Լուզովիկոս XIV-ը պերակրչուող ազդեցություն ուներ Քուրբիայում և ջանում էր իր ազդեցու-

<sup>1</sup> Հմմտ. „Собрание актов“, 1, էջ 158 և հտ.:

<sup>2</sup> Հմմտ. М. С. Иванов, նույն տեղում, էջ 77:



Ֆլյանը Ենթարկել մասնավորապես Իրանը: «Ամենակաթողիկ թագա-  
 վորը» հատուկ հոգ էր տանում պղաղ տալու Ֆրանսիայի կշռույթը  
 նաև Մերձավոր Արևելքի եկեղեցական գործերում: Պատահական չէ,  
 ուրևհն, որ Միշելը խառնվեց նաև Իրանի միախոններին գործերին  
 և 1708 թվականին սաղամներ ձևար բերեց շահից «միախոններին  
 նեղացնողներին պատժելու համար: Թագամներից մեկը հասցեա-  
 գրված էր Վրաստանի Վախիվանդ միրզային՝ (զա հաժառանգ Վախ-  
 վանդին), մյուսը, Թավրիզի բեկլարբեկին՝: Շահից նա ստացավ  
 նաև Շամախու խանին ուղղված մի նամակ, ուր ստված էր. «Իմացած  
 եղեր, որ ներկայիս ֆրանսիական կայսրի (sic!) դեսպանը... գեկու-  
 ցել է մեզ, որ Շամախու հայ վարդապետները և ուրիշ հայեր նե-  
 ղացնում և անհանդուստացնում են կաթողիկ հայերին, բարեպետ նը-  
 բանց դեմ և բղավում նրանց վրա, և որ նա խնդրել է մեզ շափավո-  
 բել և սանձել, պատժել և անգամ վտարել այդ երկրամասերից վերո-  
 հիշյալ հայերին»<sup>2</sup>:

Միշելն ուշադրավ դեր խաղաց նաև Սրբի իրանական առարկու-  
 թյան ժամանակ, առ այս շահարկելով հայ ազատագրական լեզենդի  
 նորահնար վերսիաներից մեկը: Իրբև ֆրանսիական կապիտալի գոր-  
 ծակալ՝ նա ըստ ամենայնի սաստկացնում էր «առասական դեսպանի»  
 առաջացրած շփոթությունը: Նա գործ դրեց բոլոր միջոցները՝ հա-

<sup>1</sup> A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 523 և 527:

<sup>2</sup> Fevre de Fonteney, Journal historique du voyage et des  
 aventures singulieres de l'Ambassadeur du Perse en France, 1715, էջ 37 և  
 հա., հմտա. նույն տեղում, էջ 593 և հա.: Միշելի մասին հմտա. նաև Le  
 Brun, նույն տեղում, էջ 386 և հա., 397 և հա. և էջ 400: Villote, նույն  
 տեղում, էջ 580 և հա.: M. Brosset jeune, Documentes originaux, գեանդ-  
 ված «Nouveau Journal d'Asiatique» serie I, t. IX, էջ 293 և «Nouvelle  
 Biographie Generale», «Maria Petit» հոդվածը: Փարիզի Ազգային մատենա-  
 գարանում ֆրանսիական ձևագրերի ֆոնդի 7200-ի սակ պահվում է ձևա-  
 գիր մի գործ. «Memoire de sieur Michel sur le voyage qu'il a fait en Perse  
 en qualite d'Envoye extraordinaire de Sa Majesté dans les années 1706—  
 1709»: Միշելի օրագրություն մեջ Օրբի մասին պահվել է ուշագրավ մի հատ-  
 ված (տե՛ս վարր, էջ 598), որը մեր խնդրանքով սրանել է և սիրալիք կեր-  
 պով ընդօրինակել փարիզարնակ բանասեր Հայկ Պերպերյանը: Նշենք, ի  
 գեպ, որ Վասիկանի արխիվում կան Օրբի գործունեությունն այս շրջանին  
 վերաբերող մասամբ դեռ անտիպ մնացած նյութեր, որոնք անմատչելի են  
 մեզ: Այդ նյութերի մասին հիշատակություններ կան համաֆրանսիական  
 Գլխավոր յուզների տիպոգրաֆիայի Պատմական հանձնաժողովի հրատարակած  
 «Памятники культуры и дипломатических сношений России с Ираном»  
 վերնագրով լույս տեսած չորսհատորյակի մեջ:

մոպեյու Իրանի կառավարութեանը, թե անհրաժեշտ է մերժել Օրբի ընդունելությունը Սպահանում և ետ դարձնել նրան Իրանի սահմանադրւից: Միշեղը և նրա համերկրացիները տարածում էին նոր այն տեղեկանքը, թե հայկական «արխիվներում» (իմա՝ ձեռագրերում) կան մտրդարեութուններ, որոնք կանխադուշակում են Հայաստանի թագավորությունը Մոսկվայի թիարկությունը վերականգնելու մասին: Միշեղը և նրա քաղաքական ձայնատարները նույն կտանգով նշավակում էին հայերի հյուսիսային տեղակայությունների թարգման դարձող ազատագրական նոր լեզունը, որպիսի կտանգով նրանք մինչ այդ սնել էին և խրախուսել լեզենդի հին, հայերի արեւմտյան տեղակայությունները հրահրող վերսիաները: Եւհի գյուրոհավատ արքունիքում նրանք օգտագործում էին նոր լեզունը, որպես խըրտվիլակ: Մանաւանդ ուշադրություն էին հրովիրում այն հանգամանքի վրա, որ «ոռւսական դեսպանի» անվան մեջ իսկ պարունակված է շարագուշակ իմաստ: «Ժորայել Օրբի» անվան մեջ, ասում էին նրանք, պարունակված է «il sera roy» («նա կլինի թագավոր») ֆրանսերեն անագրամ<sup>2</sup>: Կրուշինսկու գրի առած մեմուարների թուրքական վերսիայի մեջ այս մասին ասված է. «Յրանսիական դեսպանորդը իրագեկ դառնալով այդ բանին՝ հայտնեց շահին, թե հայ գիտնականները համարձակվում են պնդել, որ այդ մարդն է հենց գրքերի գուշակած թագավորը, և որ իբր Խորայել անունը ասորերեն «իշխան» է նշանակում: Ասպարեկ եկած այդ մարդը,—հայտնում էր ֆրանսիական դեսպանորդը,—աշխատում է մոլորության մեջ ձգել ժողովրդին, պատճառ դառնալով ահավոր շարիքի: Վեր հանելով սպաս-

<sup>1</sup> Ուշադրով է, որ Կրուշինսկին գրական վերաբերմունք չունի գեպի նոր վերսիայով հրատարակ եկած այդ լեզունը, պարզապես «աղոհրիֆ» համարելով այն (cum jam ex apocriphis Armenorum Dyplichis sparsum fuerit, quasi hisce temporibus, destructa aut perssum data Monarchia Persica, Armenia Regnum restaurandum esset<sup>1</sup>, „Tragica historia“, § 262).

<sup>2</sup> Ad majorem igitur animis Aulicorum faciendam impressionem, et quasi ad confirmandum male persuasae plebis rumorem, Monsieur Michel primo Ministro ex praesenti Legati nomine Israel Ory, Gallicum anagramma obtulit il sera Roy id est Ille erit Rex<sup>2</sup>, նույն տեղում:

Եկատենք, ի զեպ, որ 1618 թ. գրված հայերեն մի հիշատակարանում հանդիպում է տարօրինակ մատնանշում այն մասին, որ հայոց թագավորութունը վերականգնվելու է 1711 թվականին. «Հայոց կն թվին եկավ Մահմեան աշխարհիս, թվն Ռ՝Պ տարի է որ Մահմեան եկել է և անցել: Երբ թիւն Ռ՝Ֆ (այսինքն 1711 թվականը) Հասանի՝ թագաւորութիւն հայոց լինի» (տե՛ս «Յուզակ ձեռագրաց Դատյան Խաշիկ վարդապետի», Ա, էջ 12):

նացող վտանգը՝ նա ազգու խոտրերով հաղորդում էր շաշին՝ արագ ու արտակարգ միջոցներ ձեռնարկել՝ կանխելու շարիքը»<sup>1</sup>։

«Միուսական դեպքանի» դեմ դարձ դրված ֆրանսիական մերենա-լուծյուններն ունեին հարկավ ոչ միայն առևտրա-միախոններական, այլև բնդհանուր-քաղաքական շարժախիլներ։ Որչափ Լուզովիոս XIV-ը Պետրոս ցարի զլխավոր հակառակորդների՝ շվեդների և թուրքերի, քաղաքական բարեկամն էր, ֆրանսիացիները պիտի խոչընդոտ ստեղծեին ինչպես հակաբուրբոնյան լիդայի, այնպես և հյուսիսա-փին դաշնակցության մեջ մանող պետությունների կողմից հովանա-փորած ամեն մի ձեռնարկության։

\* \* \*

Եզուիտ Կրուշինսկին բարեխղճությամբ ստեղծելով ազատել Օրիին այն պարսավանքից, որ հեռնորդների ակամօջն էր մտնելու մասամբ հենց իր գրքի աստիճին հրատարակության կոմպլիցատորների միջոցով։ Գրքի վերջին հրատարակության մեջ նա ոչ միայն պաշտպանեց Օրիին ուրիշների անակղի հարձակումներից, այլև հրաժարվեց իր իսկ ամիրավ մի շնորք մեղադրանքներից։

Վերարտագրելով նախընթաց հրատարակության բնագիրը, Կրուշինսկին դրան կցեց մի հատված, ուր հերքում էր աննպաստ ունե ստեղծելությունները, որ ստացել էր Պրոսպարանդի սան, Ստանիսլավ բաղաքի հայ լատինադավան եկեղեցու ավագերից Ստեփանոս Ռոշրայից, նույն այն անձնավորությունից, որը, փնչպես անստանք, 1700 թվականին Հոտմում աջակցություն էր ցույց տվել Օրիի բանակցություններին։ Սակայն տարիներ անց Կրուշինսկուն ուզում մի նամակում Օրիի մասին պատող աննպաստ կարծիքներից աղբված, Ռոշքան ասում էր, թե հայ մելիքների անունից հրապարակ եկած այդ բանադնացը մի «խտրերա» էր պարզուպես։ «Իսրայել Օրին, — հայտնում էր Ռոշքան, — աստը մելիքների անունից Ինոկենտիոս XII-ին, Լեոպոլդ կայսրին, Հոնոտյան Պիպլցի կուրֆյուրստին և Մոսկովայի ցարին 1699 թվականի ապրիլի 29-ին թվադրված նամակներով հաջորդ՝ 1700 թվականի մայիսին եկավ Հոտմ։ Ս. քահանայապետին ուղղած նամակը և վերոհիշյալ մելիքների լիազորադրերը ևս ինքս թարգմանեցի։ Այդ գրությունների մեջ Իսրայել Օրին անվանված է Պոռոշ իշխանի որդի (filius)։ Վերը նշված կուրֆյուրստի եղբորը նրանք կամենում էին դարձնել Հայաստանի թագավոր, Լեո-

<sup>1</sup> Chronicon Peregrinitatis, էջ 23։

պողգ կայսրի կապլան Տ. Ներսես կանոնիկոսին՝ էջմիածնի պատ-  
 րիարք և, բացի այդ, խնդրում էին սուղարկել մի կարգի՛նալ՝ Հայաս-  
 տանում նստելու համար: Մի կողմ և՛ թողնում մյուս ցնդարանու-  
 թյունները (cetera commenta): Ս. քահանայապետի հանձնարարա-  
 կաններով Հռոմից նա մեկնեց կայսրի մոտ, որից հետո անգեկաց-  
 րեց, թե իր գործը ընթացքի մեջ է արդեն: Իր հետ բերել էր մոտ 15  
 բովակածին լավ սարքված տաճկական ձիեր, որոնցից վեցը մելիք-  
 ների անունից նվիրաբերեց կայսրին, վեցը՝ վերահիշյալ կարֆյուրս-  
 տին, ընդամին շարաշար խաբելով զափանցի ձիատերերին («Karap-  
 nensibus equorum dominus»). այս մասին հինց սրանք պատմեցին  
 ինձ: Կայսրի կողմից Օրին փոխադարձաբար նվեր ստացավ սեկե մի  
 շղթա, իսկ Մինաս վարդապետը, նրա ընկերը՝ մի սկիհ: Կարֆյուրս-  
 տի կողմից թանկարժեք պատվանշան արվեց նրան (սր անսա նրա  
 մոտ): Նշեմ, որ այս գործին Հռոմում անգլյակ էին միայն ս. քահանա-  
 յապետը, կարգի՛նալ դե Սպադան, ս. Հավաթի Պրոպագանդայի քար-  
 տուղար հարգոյապատիվ Ֆարրոնիոսը, մեր կոնգրեսի տեր Տեսու-  
 չը, եզոտիսների գեներալ պատեր Ռիբասս Կոնսալեզը, եզուխ պա-  
 տեր Գալլոսը և ես: Պատեր գեներալը կազմեց ի նպատա այս գործի  
 հասուկ վեկուց, որի օրինակը շեմ կարող գտնել իմ թղթակույտե-  
 րում: Վիեննայից մեկնելով ցարի մոտ՝ Օրին կատարյալ հաջողու-  
 թյամբ ընթացք տվեց իր գիտավորություններին, 1707 թվականին  
 նա Կղեմես XI-ից և կայսրից նամակ ստացավ պարսից շահի անու-  
 նով: Երբ Օրին այգանդից (իմա՝ պարսից շահի մոտից—Ս. Հ.) Շա-  
 մախուս վրայով Ռուսաստան էր վերադառնում, ստացա վերը նշված  
 հարգոյապատիվ Ֆարրոնիոս քարտուղարի նամակը: Այդտեղ վեր-  
 ջինս ինձ խնդրում էր՝ չզլանալ այդքան լավ մարդուն (իմա՝ Օրին  
 — Ս. Հ.) իմ ծառայությունն ու օժանդակությունը: Չնայած որ  
 ես երկիցս բացահայտել էի այդ խաբերայի արարքը, աֆնուամենայ-  
 նիվ իմ խոսքը բանի անզ շամցավ ոչ վերահիշյալ քարտուղարի և ոչ  
 էլ մյուսների մոտ: Իհարկե, ավելի հարգի պիտի լինեին նրանց  
 հանձնարարականները: Այնուամենայնիվ ես ստացա նշանա-  
 վոր մի եկեղեցականի այս տողերը. «Թող խրատ լինի նրանց, որոնց  
 զլուխներն ստաջին հերթին էր յուզել» («sufficit ipsi, quod prima de-  
 ceperit capita»): Անձամբ Խորայեկ Օրին այդ պահին Շամախուց

<sup>1</sup> Թուրքան շփոթում է ժամանակը. Օրին Մոսկովայից Արեմուտք էր վե-  
 րադարձել 1704 թվականին: Պատի ստորագրությունը շահին ուղղված դրու-  
 թյունը, իսչպես նշել ենք, թվագրված է 1705 թվականի հուլիսի 15-ով, իսկ  
 կայսրից ակնկալված նամակը շէր ստացել:

զրուած էր ինձ, որ ինքր, ի նարկե, երկրորդ անգամ (այսինքն՝ Մոսկվայից Իրան մեկնելուց առաջ — Ա. Շ.) չի եղել Հոսամում Կղեմես XI-ի մոտ, այլ իր խնդրած նամակը ստացել է երկրորդ մարզու միջոցով: Թե ինչ եղավ այնուհետև՝ Ձեր արժանապատիւութեանը բավականին պարզ նկարագրել է արդեն»<sup>1</sup>:

Նախքան կանցնենք Ռոշքայի նամակի բնութայանը, անհրաժեշտ է ծանոթանալ այն գրութեանը, որ ուղղել էր Ռոշքան Պրոսպարանդանդալի քարտուղար Ֆարրոսխոսին, ի պատասխան վերջինիս կողմից իրեն արված խնդրին՝ աջակցութեան ցույց տալու Սրիին: Գրութեան բնագիրը Վատիկանի արխիվում նայտնարեցել է վերջերս Շ. Քյուրտյանը և Սրիին «մերկայցնելու» մտայնութեամբ հրատարակել իր թարգմանութեամբ: Ռոշքայի այդ գրութեանը հանդիսանում է մի վկայութեան, որը պարզաբանում է Ռոշքայի կողմից Կրուշինսկուն ուղղած նամակի վերջում Սրիի «խտրդախտութեաննեդին» վերաբերող մտքի ակնարկի բովանդակութեանը, թող ներքի մեկ այդ վկայութեանը ևս մեջ բերել այստեղ ամբողջութեամբ.

«Կարդինալ Ֆապրոնի Մեծավոր փրօփականաա Ֆիզիկ.

...Ստացա ձեր պատվական նամակը 21 յուլիս 1705 նաև 10 սպրիլ (1707) մյուս նամակը՝ Իսրայէլ Սրիի վերաբերող: Ձեր նամակով Ձեր վեմուքութեանը ինձի կը հրամայե, որպեսզի Իսրայէլ Սրիին աջակցութեան և դյուրութեան տամ իր խնդիրներուն համար: Բայց Իսրայէլ Սրիի այս տարվան փետրվար 13-ին ինձի կը գրեր (առանց գրելու տեղը հիշելու) թե ի՞նչպէս Հիսուսյան հար.մը միջոցով Քահանայապետեն (Պապեն) խնդրեց, որ ևս իրեն հետ երթամ Պարսկաստանի թագավորին և, հետևաբար, ժամ առաջ Մոսկվա գանվիմ: Բայց ևս չգիտենալով անոր (Իսրայէլ Սրիի) ներկայիս ուր գտնվիլը, մանավանդ Սուրբ ժողովեն նման հրաման մը ստացած չըլլալով, որմե կախյալ եմ, չեմ կարող օգնել կամ թե զինքը ետ պահել իր վատ նպատակեն, վասն զի բազմաթիվ պատճառներով ևս զինքը իբր արտակարգ երազատես ճանչցա: Ան Փարիզի մեջ (ըստ շատերու հավաստման և մանավանդ հայ վարդապետի մը, որ հիմա Վենետիկ Շիրմանյան պարոններուն քով կը գտնվի) ինք զինքը իբր հայ իշխանի մը որդին ներկայացնելով՝ շատ դրամ կորզած է հայ երեւելիներեն, որոնք իր վրա կը խզճահարեին իբր երկինքեն ինկած (շնորհազուրկ) Ադամ մը: Սակայն հայերու միջոցով իր այս

<sup>1</sup> Tragica historia, § 264: Ռոշքայի վերջին նշումից ակներև է, որ նա իր այս բնութագիրը ուղղել էր Կրուշինսկու մեմուարների առջին հրատարակութեանը լույս տեսնելուց հետո:

խարդախությունը բացահայտվելով (Օրի) ստիպվեցավ Փարիզի մեկնել և էլեքտորին Բալագինաար երթալ, ուր շարունակած է իր դատապարտելի ծրագիրները: Սուրբ Տարին, երբ Վիեննա վերադարձավ, ան խաբեց հայերը, սրտնք Հուզանրիայեն 15 ֆրբակածն ձի բերած էին վաճառելու համար: (Օրին) մեկ կողմեն զիրենք (ձիտակը հայերը) համոզեց, որ ինքը շատ ծանոթ ըլլալով կայսեր արքունեաց և էլեքտորին, շատ գլուբությամբ և բարձր գնով պիտի կարենար այդ ձիերը ծախել, մինչ մյուս կողմն (Օրի) ձիերեն վեց հասար կայսեր ներկայացուց իբր բնծայ այդ (Անգեղակոթի) մեկքներուն կամ հայ իշխաններուն կողմեն, սրտնք իրմն ստեղծված էին նամակներուն մեջ: Ուրիշ վեց ձի ալ էլեքտորին բնծայ ըրավ, և մնացած երեք հատն ալ իր հետ Մոսկվայի մեծ դուքսին տարավ:

Այս խեղճ վաճառականները, ենթադրելով որ ձիերը ծախված էին, երբ սրտշված տանն փոխարժեքը շտապան, աղաչեցին արքունեաց նախարարներուն, բայց պատասխան ստացան, որ եթե ստուգվի այդ բնծաներու նուիրվելուն սուտ ըլլալը, իրենց արդարություն պիտի ըլլա: Այս բոլորը ինծի կը պատմեն լալագին այդ վաճառականները, երբ ես Վիեննա կը գանովի, և այնքա՞ն հուսահատ էին, որ Իսրայել (Օրի) ետենն Մոսկվա գացին: Սակայն վախճանը ինծի անծանոթ կը մնա: Այս բաներու մասին երկու անգամ ես գրեցի մեր Ռերդուին:

Կամենեց, 16 սպրիլ, 1707

Խոնարհ ծառայ

Ստեփան Ստեփանովիչ (Ռոշքա)

Ավագերէց Ազանխուլավպոլսոյ Հայ

Եկեղեցւոյ՝:

Ծանոթանալով Օրիի հասցեին Ռոշքայի նամակներում սուաջ բաշված մեղադրանքներին, դժվար չէ նկատել զրանց անտեղությունը:

Որ ընկնելով Արևմտյան Եվրոպա՝ Օրին սկզբնական տարիներին կարող էր նյութական կարիքի մեջ եղած լինել և խնդրած հայ երևելիների օգնությունը, այդ, իհարկե, անհավանական չէ: Բացարկված չէ նաև, որ հայ «երևելիները» կարող էին օգնության հասած լինել նրան՝ աչքի տուաջ սննեակալով նրա մեկլիբական ծագումը: Սակայն հիմք չկա հավատալու Ռոշքայի կողմից արվող այն պնդու-

<sup>1</sup> «Հայրենիք», ամսագիր, 1936, հունվար, էջ 73 և հա.:

մին, ին Օրին ինքն իրեն նշահել էր «Նայ իշխանի մը կամ, ինչպես  
Կրուշչինսկու ուղղամ նամակում էր ասում ավելի որոշ՝ «Պուշ իշխանի  
որդի»: Հետագայում բնդդովում էր Օրինի Պուշչյան ծագումը, առանց  
սակայն ասելու, ին նա (գարեր ասաջ սպրամ) Պուշ իշխանի որ-  
դին է: Եթե անդամ բնդունենք, թե սխալ էր կամ մտացածին Օրինի  
Պուշչյան ծագումը, դժվար է այնուամենայնիվ հավատալ, ին Օրին  
նարկագրված էր եղել լքել Փարիզը կամ Ֆրանսիան իշխանական իր  
ծագումը հերքված լինելու պատճառով: Այդպես եղած լինելու գեղ-  
քում, Օրին գեթ հետագայում կխուսափեր նշել իր Պուշչյան ծագու-  
մը, երկյուղ կրելով, ին կզանձին նորից մարդիկ, սրանք կբացահայ-  
տեն ճշմարտությունը:

Ավելի հիմնավոր չէ Ռուշքայի երկրորդ մեղադրանքը, որ կապ-  
ված է ձիերի շարաբախտ պատմության հետ: Այս կապակցությամբ  
նորից հանդես է գալիս նույն հարցը, որ շոշափել ենք Օրին և Թար-  
գուլիի տարածայնությունների մասին խոսելիս: Անշուշտ, Թարգու-  
լիին և նրա եզրաչրներին ուներ աչքի առաջ Ռուշքա, երբ հիշատա-  
կում է գալիս ձիերի ձիատերերի գանգամները, որով, ի գեղ, ակներև է  
գտնում Թարգուլիի կապը կաթիլիկ շրջանների հետ: Ռուշքայի կոպ-  
մից Օրինին վերագրված երկրորդ «խարդախությունը» հանդում է  
այն իրողության, որ նա ի վիճակի չէր գտնվել վճարելու իր հովա-  
նավորողներին բնծայարելու նպատակով Թարգուլիից գնած ձիե-  
րի արժեքը կամ, ավելի ճիշտ՝ մարելու դրա գիմաց առևտրական  
զարմակիցներին իր ավամ մուհակը:

Սակայն փնչպես Թարգուլիի, այնպես և Ռուշքայի հրապարակ  
հանած մեղադրանքների ուշադրավ կողմը նրանց հարուցած մեղադ-  
րանքների քրեական երևույթ չէ, այլ դրանց քաղաքական աստուղը:  
Ռուշքան հաշտում է, ին ինքը «անկարող է ետ պահել Օրինի իր  
վատ նպատակներ, վասն զի բազմաթիվ պատճառներով զինքը իրեն  
արտակարգ երազատես ճանչցա»: Գրում է, ին չվելով  
Ֆրանսիայից Գերմանիա և ապավինելով կուրթյուրտաի հովանուն՝  
Օրին «շարունակած է իր դատապարտելի ծրագրերը»: Ռուշքան  
«ցնդարանություն» է համարում Անկեղակոթի ժողովի անունից Հու-  
մի պապին հասցեագրված գիմումի բովանդակությունը: Եվ գեղ  
ավելին: Նա գրում է ուղղակի, ին Օրին հանդես էր գալիս Եվրո-  
պայում Անկեղակոթի «ավելիքներուն կամ հայ իշխաններուն կողմեն,  
որոնք իրմ է ստեղծված էին նամակներու մեջ»:

Ակներև է, որ իր այս բնութագրումներով Ռուշքան հանդես է  
գալիս արդեն ոչ միայն Օրինի քրեական հանցագործությունների

մեջ ամբաստանողի, այլև նրա Բաղաճական գործունեությունը դատապարտողի գերում: Կարող է ստացվել այն տպավորությունը, թե նա կրկնում էր մեզ ծանոթ այն հայ եկեղեցականների հայացքը, որոնք երազ ու ցնդարանություն էին համարում հայ ազատագրական գաղափարի բոլոր տարատեսակությունները:

Մակաչն այդ տպավորությունը գեմ է տոնում տարակուսանքներով: Ինչպես ակներև է, Ռոշբաչի՝ Ֆարբոնիոսին դրած նամակից, Մոսկվայից Իրան մեկնելուց առաջ Յեֆն առաջարկած է եղել Ռոշբաչին մասնակցություն սեննալ իր գետաճանապարհությունը և այդ նպատակով՝ օր առաջ մեկնել աւ սպասել Մոսկվայում իր ժամանումին: Նույն առաջարկը, ինչպես երևում է, Ռոշբաչին արած է եղել նաև Ֆարբոնիոսը: Պարզ է, որ ոչ Օրիի, ոչ Ֆարբոնիոսը Ռոշբաչին չէին անի այդպիսի դիմում, եթե իրանական գետաճանապարհություն հետ կապված քաղաքական ակնկալությունների ու հետանկարների հակառակորդ համարած լինեին նրան:

Ակներև է, որ սկզբնապես Ռոշբաչն բացասական վերաբերմունք չէր ունեցել գեղի Օրիի «երազաստությունները» և փոխել էր իր վերաբերմունքը միայն նրա մոսկովյան «շրջադարձից» հետո ու հակառակորդների կողմից Օրիի մասին տարածած աննպաստ ակնկանքների ազդեցության տակ:

Այնուամենայնիվ հիմք կա պնդելու, թե Օրիի նկատմամբ Ռոշբաչն մինչև վերջը գերի չմնաց նրա հակառակորդների հյուսած հերյուրանքներին:

Այս եզրակացությունն ենք հանդում հիրավի, երբ վերհիշում ենք Ռոշբաչի անտիպ «ժամանակագրություն» այն հատվածը, որ նա Օրիի և նրա ձեռնարկության մասին ասում է այլ բան, քան այն, ինչ գրում է իր մասնավոր նամակներում: Այստեղ հարկադրված ենք նորից վկայախոչելու Ռոշբաչի՝ ընթերցողին մասամբ արդեն ծանոթ տողերը, այս անգամ մեջ բերելով հեղինակի մեզ հետաքրքրող հատվածը առանց որևէ հաղավման: Իր «ժամանակագրություն» մեջ հասնելով 1700 թվականին՝ Ռոշբաչն նշում է.

«1700—Իսրայէլ Օրիի Պերոշ իշխանի որդին, ընդ իւր բերեալ զՄիճաս վարդապետն Խարբերդցին, եկն ի Հոսմ, և մատուց ինօշկնատիոս ԺԲ-ին զթուղթն ի տասն մայիսի (sic) Մելիքաց Հայոց գրեալն յԸնկեղակութ յամի 1699, ապրիլի 19. զորոց անուանան վասն պատճառի որուր լռեմ: Զթուղթն ևս ինքնին թարգմանեցի: Որով զհնազանդութիւն տալով սուրբ Աթուոյն Հոսմայ, խնդրէին զօգնութիւն ազատելոյ ի լծոյն անհաւատից: Ոմէր և զայլ թուղթս առ կայսր



կէօրսլտտս, առ Բաղասին էլէրդօրն և առ Չարն Մոսկովաց: Բնկա-  
լեալ գլանձնարարութիւն ի Փափէն առ Կալարն, երթալ առ Չարն,  
և այնքան խորագիտութեամբ շրջի, և ի սմանէ դեպքան լինի առ  
Պարտիցն արքայն, մինչ զի պատճառ եղև անելոյ Մոսկովաց  
գլխիւն և ի գտանալն ի Պարտից մեռանի յԱսարախան»<sup>1</sup>:

Ռուշրայի «ժամանակագրութիւնը» ազատ չ' անձշտութիւնից-  
այսպէս, սխալ է այն միտքը, ին Յրին է, որ պատճառ է եղել Կերչը  
մոսկովցիների ձեռքն անցնելուն: Եթէ դրանով այստեղ կրկնված է  
Կրուշինսկու մտա ևս հանգիպող այն տեղեկանքը, թէ սուսների կող-  
մից Յրին հղված է եղել Կ. Պոլիս շամաձայնութիւն գլուխ բերելու  
Ռուսաստանի և Ռուրբրայի միջև, ապա սխալի դիտենք, որ թուրքերի  
հետ բանակցելու շամար Պետրոս ցարը Կ. Պոլիս էր ուղարկել ոչ թէ  
Սրբին, այլ սուս զիմանաղեա Ռեյսախնցիին և ապա թուրքերի հետ  
կնքված պայմանագրի շիման վրա Ռուսաստանը տիրացավ ոչ թէ  
Կերչին, ինչպէս սխալաբար գրում է Ռուշրան, այլ Ազովին:

Աջուսամենայնիվ, ինչպէս տեսանք, Ռուշրայի այն տեղեկու-  
թիւնը արժեքավոր է այն տեսակետից, որ Սրին դրա մեջ բնու-  
թագրված է միանգամայն դրական գիմաղձերով: Այստեղ նա չի  
բնութագրված որպէս «երկիւնէն ինկած (այսինքն՝ ապաշնորհ) Աղամ  
մը», այլ որպէս մեծաշնորհ և արգասավոր մի դիվանագետ, որ «խո-  
րագիտութեամբ շրջի» արժանանալով աշխարհի նգրոնների վատախո-  
րյանը և մեծ ծառայություններ մատուցելով նրանց: Բերված տո-  
ղերի մեջ Ռոշլան հանդէս է գալիս որպէս Օրիի վատախորյունը վա-  
շկված և նրան համալսոն մի անձնավորություն, որ լիակատար  
վատախորյուն է, ցուցաբերում քե՛ Օրիի անձնավորության  
և քե՛ Անկիզակորի մեկիմների անունից գրված քղերի նկատ-  
մամբ: Ռոշլան ոչ միայն չի կասկածում Օրիի քղերի վավերակա-  
նութեանը, այլև նախագոյուշանում է տալ դրանց ստուգագրոյների  
անունները՝ ակներեաբար երկուսը կրելով, քե՛ դրանով կարող է  
խախտած լինել Օրիի գլխավորած գործի հաջողութեան համար ան-

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ՍՍԹ Գիտ. տիկոյ. Պատմութեան Ինստիտուտ, Լեւոյի  
արխիւի, № 424, Վիեննայի Մխիթ. Մատենադարանի № 266 ձեռագրից կա-  
տարված բնագործնակութիւնը, թ. 24ա: Հմմտ. նաև «Հանդէս ամսօրյա», 1928,  
էջ 26: Հարկ է նկատել, որ «Հանդէս ամսօրյաի» մեջ «տասն մայիսի» բա-  
ւերի փոխարեն ստված է «տասն մեկիւրայ»: Հմմտ. նաև ЭЗОВ, նույն տեղում,  
Введение, էջ XXVI և հա., ծան. 2:

հրաժեշտ կոնսպիրացիան և վնասած ոչ միայն Օրիին, այլև նրան լիազորագրեր հանձնած մելիֆներին:

Օրիի այս բնութագրերը արժեքավորելու տեսակետից շատ կարևոր է այն հարցը, թե ե՞րբ էր գրվել այն և ե՞րբ մուտք գործել Ռոշքայի «ժամանակագրություն» մեջ: «ժամանակագրության» մեջ հասվածը տեղադրված է 1700 թվականի ներքո, երբ Օրին ժամանել էր Հոռմ՝ Անկեղակոթի մելիքների անունից գրված թուղթը Խնովենախոս XII պապին հանձնելու համար: Սակայն, ինչպես ակնհայտ է հասվածի իսկ բովանդակությունից, Ռոշքայի ասպետը, ուր խոսք կա նաև Օրիի 1700 թվականից հետո ծավալված գործունեության և մինչև իսկ նրա մահվան մասին, չի կարող գրված կամ խմբագրված լինել ավելի վաղ, քան Օրիի վախճանը, այսինքն՝ 1711 թվականը:

Եթե նկատենք, մյուս կողմից, որ Ռոշքան, ինչպես ակնհայտ է կրոշինսկուն ուղղված նրա մի նամակից, անգամ վերջինիս աշխատության առաջին տպագրությունից հետո, այսինքն՝ 1727 թվականից հետո էր բացասական կարծիք հայտնում Օրիի մասին, պարզ է, որ նա չէր կարող «ժամանակագրության» մեջ մտցրած լինել վերը բերված դրական իր գնահատականները 1727 թվականից առաջ:

Կազմելով իր «ժամանակագրությունը»՝ Ռոշքան պիտի որ ձևերի տակ ունեցած լիներ նախապես կուտակված նյութեր և մասնավորապես՝ Օրիի մասին դրած իր նամակների կամ Անկեղակոթի ժողովի անունից կազմված թղթերի կամ դրանց իր իսկ ձևերով կատարած թարգմանությունների սևագրությունները կամ պատճենները: Ուշագիր բննարկումը պարզում է, որ Ռոշքայի երկը ավարտված չէր ոչ միայն 1711 կամ 1727, այլև նույնիսկ 1736 թվականից առաջ: 1736 թվականի մարտի 10-ին Էջմիածնի Աբրահամ Կրեատցի կաթողիկոսին ուղղած իր մի նամակում Ռոշքան հաղորդում էր, թե ձևնարկել է շարագրել իր «ժամանակագրությունը», ավելացնելով, թե «համառոտաբար շարագրեմ, դի երկարաձգել և ոչ գողցուչուն մատուցա և ոչ տարիքս թողուն»<sup>1</sup>: Նույն տարում Թրակիոն վերատեսուչ Հովհաննես Լոյիսկոպոսին նկարագրելով իր սկսած «ժամանակագրությունը», նա հայտնում է՝ «իսկ եթէ գիտել կամեսչիք, թէ գիտարդ կարացից զայսքան գիրս շարագրել, գուրով ալժմ ԿՁ (=66) ամաց»<sup>2</sup>:

Այս ամենից հայտնվում է կարևոր այն իրողությունը, որ Ռոշ-

<sup>1</sup> Տ ա շ յ ա ն, Մ ա յ ր ց ու ց ա կ, է ջ 683:

<sup>2</sup> Ն ա յ ն տ ե ղ ու մ :

յայի «ժամանակագրություն» մեջ Օրիին վերաբերող հատվածը գե-տեղվել է ոչ ավելի վաղ, քան 1736 թվականը և որ, ուրեմն, այդ հատվածն է հենց, որ Օրիի նկատմամբ արտահայտում է հեղինակի վերջին կարծիքը:

Հարց է առաջանում. ի՞նչ փաստեր կարող էր ունեցած լինել Ռոշքան՝ Օրիի դեսպանագնացություն ժամանակ ձևակերպած իր հո-տի գնահատականները շեշտակիորեն փոխելու համար: Թվում է, թե լիարված չենք լինի, եթե պնդելու լինեինք, որ նրա «ժամանակա-գրություն» մեջ մտած վերջնական հայեցակետի վրա ազդած պիտի լինի Կրուշինսկին:

Էր մեծուարների նոր հրատարակության մեջ, հրատարակ հա-նելով Օրիի մասին Ռոշքայից ստացած աննպաստ տեղեկություն-ները, Կրուշինսկին հայտնում է, որ վաղեմի ծանոթություն ունենալով Օրիի հետ, նրան հիմնականում ազատ է համարում «խաբերա լինելու անարդանքից»<sup>1</sup>: Կրուշինսկին նախ չի ենթադրում, թե տառջին ան-գամ Օրին 1699 թվականին էր երևացել եվրոպայում. «Ուսկի՞ց կա-րող էր այդ գեղբուն՝ առաջացած լինել, — հարցնում է նա, — բար-բարոսների մեջ սնված այդ օտարերկրացու բարեկիրթ այն նիստու-կացը, դրանիկ կյանքի այն ծանոթությունը, մտավոր այն մշա-կույթը, որ հնարավորություն էր ավել նրան լավ հասկանալու իտա-լերեն, ֆրանսերեն, դերմաներեն (և մասամբ լատիներեն) լեզու-ները»<sup>2</sup>:

Դրանից դատ, հարում է Կրուշինսկին, պիտի հաշվի առնել, որ գինյօրական ծառայության մեջ մանկուց շատ առաջ նա արդեն սովորանացած էր Բելգիայում: Անձամբ տեսել եմ Աստրախանում մի նսամակ, որ Բրյուսելից գրել էր նրա որդին... Այն ամենից հետո դյու-լին է կարծել, որ տառը մեղիքների լիազորագիրը նա ստացել էր կամ վաճառականների ձեռքով կամ իր քարտուղար տիրացու Հարու-թյունի ջանքերով: Վերջինս կալսերականների կողմից Բելգրադում գերի վերցված և իր մի պատրոնի հոգատարությունը դաստիարակ-ված՝ առաջ դնաց, յուրացնելով ինչպես արևելյան լեզուներ, այնպես

<sup>1</sup> Jam quod Israel Ory attinet, datae mihi scripto informationi, ita defero, ut tamen pro veteri cum culissimo eundem ad impostoris infamia salt in majori parte liberem.

<sup>2</sup> Նկատենք, ի դեպ, որ Կրուշինսկու այս ցուցմունքով հերքվում են Նոր-Ջուզայի կարմելիտների փոխանորդ պատեթ Ուկոնիի 1709 թվականի ապրիլի 3-ին Օրիի մասին գրած շարժիտ այն տողերը, ուր նա բնութա-գրվում էր որպես «անուս ու աննշան մեկը» («an uneducated man of no position»): *St'u A Chronicle of the Carmelites in Persia*, I, էջ 566:

և ֆրանսերեն, իտալերեն ու գերմաներեն: Իր առաջին պատրոնի մահից հետո նա մշտապես կապվեց Օրիին: Կրուշինսկին հայտնում է, որ ինքը գեո. Իրանում գանվելիս էր անգլեկոլթյան ստացել, որ 1699 թվականին Օրին առևտրական ինչ-որ գործով լեհահայ նուրկեիչի շքախմբի հետ Հարուժյունին հղած է եղել Նահապետ կաթողիկոսի մոտ: Անհավանական չէ, որ, հարում է Կրուշինսկին, հենց Հարուժյունի միջոցով էլ նա այդ ժամանակ ստացած լինի տասը մեդիթեների լիազորագրերը<sup>1</sup>:

Իրրե Լոյոլայի աշակերտ՝ Կրուշինսկին նշավակում է պատահան անձկամտությունից ճողոպրված այն դիրքը, որ Իրանում միսիոներների հանդեպ գրավել էր Օրին: Սակայն նա չի արդարացնում Օրիի շուրջը միսիոներների բարձրացրած ազմուկը: Բերված ասույթներից պարզվում է, որ ի վերջո պապի կողմից Սպահան հրված կողոպտ լիազորն անդամ արգահասակի ու վտանգավոր ոչինչ չգտնելով Օրիի ընթացքի մեջ՝ խոհեմարար հրաժարվեց նրա դեմ ուղղված անհիմն ամբաստանություններից: Ճիշտ է, ասում է Կրուշինսկին, անհանդատացած Օրիի վարքագծից, Կղեմես XI պապը 1709 թվականին կոլոնո Իոզեֆ Մարիայի ձեռքով հատուկ նամակ ուղարկեց Իրանի շահին, որով ես էր վերցնում Օրիին աված իր հանձնարարականը: Սակայն, հայտնում էր Կրուշինսկին, տեղ հասնելով, վերոնիշյալ եզուխը հավաստիացավ, որ միսիոներների նկատմամբ Օրիի գործելակերպը արգահատելի ու վտանգավոր հանգամանք չէր ունեցել, ուստի և գրվածի տակ դրվեց պապի գրությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Հերքելով այն միտքը, թե առաջին անգամ 1699 թվականին էր Օրին ընկել Եփրատ, Կրուշինսկին այնուամենայնիվ չի համոզում մեզ, թե նա ուրիշի ձեռքով էր ստացել մեդիթեների լիազորագրերը: Ինչ վերաբերում է Օրիի բարտառչար տիրացու Հարուժյունին, դա կրեի նույն այն անձնավորությունն է, որի մասին 1701 թվականին ուղղած իր նամակում Մինաս վարդապետը գրում էր Օրիին, թե «Գրեք էիր թե Յարուժինին Եփրատի հրամանաւն առ շահատայ իմիրգային մտն վասն ազատութեան կամ այլ ինչ խաղարկերի համար կուղարկեմ. և եթէ ճշմարիտ է խիտ բարի կառնես, ապա խիտ առանձին առնես որ այս վեհագուհից կամ այլ ոչ որանցմէն մեր բանին վաստ չի հասնի: Կու խնդրեմ որ խիտ լաւ մուղաթ լինես ինչ նշանով մարդ գնալն մեզ յայանես» (տե՛ս մեր Հայ ուսու օրինումացիայի ծագման խնդիրը, հավելված, № 3, էջ 7): Այստեղ շահատայ իմիրգային մասին գրվածը վերաբերում է շվեդների մոտ գերված վրաց արքայազն Ալեքսանդրին:

<sup>2</sup> «Coacto tamen Missionarium consilio ubi animadversarum nullum periculum ex negotiatione Israel Ory ininere illud Breve suppressum».

Կրուշինսկին Օրբի անկեղծ կաթողիկոսյան ապացույց էր համարում Ազեքսանդր Զուգայեցու հետ վարած նրա բանակցութիւնը, — որա վրա պիտի կանգ առնենք փոքր-ինչ հետո, — որի հետեանքով իրր թե վերջինս «հնազանդութեան թուղթ» էր սուղարկել Հոռոմ: Հարկավ, նկատում է Կրուշինսկին, ինչպէս այդ գրութեան ստորագրելուց առաջ, աջնպէս և զբանից հետո այդ կաթողիկոսը թշնամի էր հանդիսացել կաթողիկոսյան: Բայց ներկա դեպքում մեզավորը Օրին չէ, այլ կաթողիկոսի փոփոխամիտ բնավորութեանը<sup>1</sup>:

Եվ այսպիսով, Օրբի գործունեության մասին Ռոշքայի հայանամ կարծիքների բնական տեսութիւնը մեզ բերում է այն եզրակացութեան, որ Ռոշքայի ցուցարեւրած վերաբերմունքը սենեցել է զարգացման երեք էտապ: Սկզբնապէս Ռոշքան ոչ միայն բնդառաջել է Օրբին, այլև մոտ գործակցութեան ցույց տվել 1700 թվականին Հոռոմում պապական ամուսի հետ նրա վարած բանակցութեանը: Օրբի և Ռոշքայի միջև այդ պահին ստեղծված էր բարեկամական կապ ու փոխադարձ վստահութեան: Այդ ակնհայտ է այն փաստից, որ 1707 թվականին Օրին ցանկալի էր համարել Ռոշքայի մասնակցութեանը իրանական իր դեսպանապետացութեանը:

Սակայն այն փաստը, որ Ռոշքան չկամեցավ բնդառաջել Օրբի ցանկութեանը, ցույց է տալիս, թե այդ պահին արդեն իսկ իր մեջ բեկում էր առաջացել նրա դեմ: Ինչպէս Ֆարբոնիոսին, այնպէս և ամէլի ուշ Կրուշինսկուն գրած Ռոշքայի նամակներից ակնհայտ է, որ Օրբի կատարած քաղաքական շրջադարձը, նրա և Ռարդուլիի միջև տեղի սենեցած զժտութեանը, իսկ ամէլի ուշ նաև Օրբի գեսպանապետացութեան շուրջը միտիոններների բարձրացրած ազմուկը հետագայում ազդել էին նաև Ռոշքայի վրա: Օրբի անվան շուրջը հերյուրված բամբասանքներին Ռոշքան ավելացրեց իր նամակներում ձեռակերպված մեղադրանքները: Բայց հետաքննութեանը պարզում է

<sup>1</sup> Կաթողիկոսի «փոփոխամտութեան» մասին Կրուշինսկին այստեղ կրկնում էր եղուխաների ընդհանուր կարծիքը: Նրան միաբանակից Վիլլտը, որը հայերենից լատիներեն էր փոխադրել կաթողիկոսի կարծեցալ «հնազանդութեան թուղթը», գիտում էր զառնութեամբ. «Երանի Տեառն Ազեքսանդրու. եթէ որպէս գրով էր գաւանակալ, նոյնպէս ցուցեալ էր յետոյ զգործս գաւանութեան իւրում համեմատ» (Գալի մքարյան, նույն տեղում, էջ 186): Մի ուրիշ եղուխո նույն կաթողիկոսի մասին գրում էր, թե՛ «նա զաղտնի պատերազմ էր վարում կաթողիկոսի դեմ, զառան մորթու տակ թաքցնելով կատաղի գայլի շարութեան» (Lettres édifiantes, II, էջ 91):

նակ այն, որ իւր կյանքի վերջում Ռոշէան հրաժարվեց այդ մեղադրաբաններէրից: Այդ մասին է վկայում այն փաստը, որ 1736 թվականից հետո կազմված կամ խմբագրված իր «ժամանակագրութեան» մեջ նա վերագրածով նախկինում ունեցած իր կարծիքին, որը միամտապաշտան սուլտանի դուքանը էր Օրիի և նրա գործունեութեան նկատմամբ:

Աչքի առաջ ունենալով, որ Կրուշինսկու մեծուարների էջերում ևս տեղի էր ունեցել Օրիի գործունեութեան նկատմամբ դնահատականների նույն մեծամորֆոզը, կարծում ենք սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Ռոշէայի «ժամանակագրութեան» վրա մեծապես ազդել էր հենց Կրուշինսկին: Իր «ժամանակագրութեան» վերջին էջերում Ռոշէան նշում է XVIII դարի առաջին տասնամյակի անցքերը գլխավորապես Կրուշինսկու մեծուարների վերջին հրատարակութեանը համապատասխանող քաղվածքներով և որպէս աղբյուր նշում Կրուշինսկու անունը: Կնքած լինելով իր մահկանացուն 1739 թվականին, աչսինքն՝ Կրուշինսկու մեծուարների երկրորդ հրատարակութեանը լույս տեսնելուց մի տարի առաջ, Ռոշէան չէր կարող տեսած լինել այդ հրատարակութեան ապագիւր օրինակը: Սակայն նրա վրա Կրուշինսկին կարող էր ազդած լինել անձնական հանդիպման ժամանակ կամ դարձյալ նամակագրութեան ճանապարհով:

Հարկ չէր լինի այսքան հանգամանորեն ծանրանալ Կրուշինսկու և Ռոշէայի գրած էջերի լուսարանութեան վրա, եթե վերջերս Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրում, էլսակեա դարձնելով սոսկ նրանց աննպատակ ասույթները, Հ. Քյուրտյանը փորձած չլիներ բնութագրել Օրիին որպէս քաղաքական բախտախնդրի: Մենք ճանաչում ենք Քյուրտյանին որպէս մի հեղինակի, որի հետևութեանները հաճախ հիմնված են լինում աղբյուրների բծախնդիր քննութեան վրա: Դժբախտաբար, ներկա գեղքում նրա գրած էջերը թափուր են նման բծախնդրութեանից: Լքելով աղբյուրագետի լրջմտութեանը՝ Քյուրտյանը հնարավոր է համարել զիտելու Օրիի գործունեութեանը գրոսաշրջիկ կոմպիլյատորի աշրջով: Ինքզան նոր չէ Օրիին բախտախնդրի զերում հանդես բերելու փորձը: Դրան

<sup>1</sup> Հ. Տաշյանի «Մայր ցուցակ»-ի եր. 682-ում նշված է Ռոշէայի կողմից 1733 թվականի մարտի 23-ին Կրուշինսկու և ուղղված ինչ-որ մի «երկար նամակի» ձեռագիր բնագործնակութեանը: Արդյոք այդ նամակը չունի՞ որեէ կապ մեզ գրողիցնող հարցի հետ: Այս մասին Վիեննայի Միլիթարյան մտանոագրանին մեր կողմից կրկիցս ուղղված հարցումը անպատասխան մնաց:

սկզբնադրչուր են ծառայել հենց պապական քարոզիչների աֆն նա-  
մակներն ու մեմուարները, որոնց քննութեամբ զբաղվեցինք վերը:

Վկայակոչելով Կրուշինսկու մեմուարների առաջին վարիանտը,  
բախտախնդրի կերպարանքով Օրին բնութագրել էր տակավին  
պրոֆ. Հայզելը: 1913 թվականին պաշտպանված մեր գերմաներեն  
գիտերաօցիայում բացահայտել էինք Հայզելի անծանօթութեանը  
Կրուշինսկու մեմուարների վերջին հրատարակութեանը և Հայզելը,  
բր մեր պաշտոնական օպոնիտան էր, ունեցավ իր սխալ հետաու-  
թյուններից հրաժարվելու խոհեմութեանը. անվերապահ հավանու-  
թյան առջով մեր դրուլթներին՝ նա սպառված համարեց իր հին մե-  
ղադրանքները:

Քյուրաչանը կրկնում է և յուրովի «հիմնավորում» Հայզելի հին  
մեղադրանքները՝ առանց լիովին ծանոթ լինելու ոչ միայն մեր  
բերած առաքելութեաններին, այլև Օրինի գլխավորած շարժման  
իրեն անմատչելի եղած ազդրչուրներին: Նա չի տեսել անգամ  
եղանի ժողովածուն և հշուտում է իր թերմտանքների ցանցը՝ քննա-  
դատութեան նշավակ դարձնելով սոսկ Լեոյի վերապատումները:

Քյուրաչանի նպատակադրումներից անկախ՝ նրա ուշացած հայտ-  
նութեանները մեր օրերին ստանում են քաղաքական երանգ:  
Պատահական չէ, որ դաշնակցական էմիգրանտների ծանծաղամիտ  
օրդանը հաճույքով հշուրնկալել է Քյուրաչանի մակերեսային հող-  
վածաշարը: Օրին առաջինն էր, որ հայ ժողովրդի փրկութեանը  
նշմարեց սուսական կողմնորոշման ուղիներում: Այս է հենց, որ  
ներկաչիս արամադրում է նրա գեմ իրենց ամերիկյան տերերի  
առատաձեռն հովանուսն ապավինեամ հայ էմիգրանտներին: Այսօր  
նրանք պատրաստ են բամբասելու հայ ազատագրական շարժման  
նշանավոր այդ գործչին նույն բանի համար, ինչի համար քառորդ  
հազարամյակ առաջ նրան բամբասում էին Հռոմի եղուխոները:  
Տարբերութեանն այն է, սակայն, որ Հռոմի եղուխոներն ունեցան  
զեթ իրենց ծուռ գնահատականների մեջ ճշտումներ մտցնելու  
ուղղամտութեան, մինչդեռ նրանց բամբասանքների Բոստոնի ար-  
ձագանքողները զուրկ են նույնիսկ եղուխոների տարրական ուղղա-  
մտութեանից և քաղաքական շարակրատանքը սանձող բարոյական  
նորմերից:



Մոսկվա ուղարկած իր պաշտոնական գեկուցագրերից մեկում  
Օրին գրում էր, թե Սպահանում մեծ առելութեամբ էին վերաբերվում  
զեպի իր գործունեութեանը, ենթադրելով, որ ինքը հետախուզական

նպատակով է ուղարկված Իրան և մտահոգված այն հարցով, թե շոմնի՞ արդյոք ցարը որևէ դիտավորություն շահի դեմ: Օրին հասկապես նշում է Ֆրանսիական դեսպանության մարզկանց անբարյացակամությունը. նրանք, ասում է, շատ անպետք խոսքեր էին հասցրել շահի ականջը, աշխատելով անդամ «սուտ» դուրս բերել իր բերած հանձնարարականները<sup>1</sup>: «Ինչ բան ու խօսք ու Իրանի երկրում անց է կացել,—հաղորդում է Օրին ռուս կանցլերին ուղղած մի նամակում,— ամենեցուն պատճառ ունի, առանց պատճառի բան չեմ արեալ: Թագաւորին և քո հրամանոցդ յայնմի է, թե ինչ պատճառէ եմ այս երկրումս: Բան և խօսք շատ ունիմ յամենայն կողմանէ, չեմ կարող գրել, յերբ որ Աստուծով ծառայութիւնդ հասնայ, բերանով պիտի արդ անեմ...»<sup>2</sup>:

Նամակի ինքնա՛վստահ տոնը նշան է, թե Օրին զգում էր իր վարքագծի ճշտությունն ու կատարածի արդյունավետությունը:

Հիրավի, Օրիի հակառակորդների բանասարկություններն իսկ ունեցան գրական արդյունք: Մերժել «վտանգավոր դեսպանի» մուտքը Սպահան, կնշանակեր բացարձակ թշնամանք ցուցաբերել ճրագ հոդր հովանավորողի՝ ռուս ցարի հանդեպ: Ետ՛ Սուլթան Հասեինը նպատակահարմար գտավ շատպեցնելու Օրիի ընդունելությունը: մտածելով, թե ավելի երկար պահել նրան Հայաստանի սահմաններին այնքան մոտ Շամախում, կնշանակեր միջոց տալ նրան ավելին անել... ապստամբական իր ծրագիրը զուխ բերելու համար<sup>3</sup>:

<sup>1</sup> Յ 3 0 Յ, նույն տեղում, № 171, § 6:

<sup>2</sup> Նույն տեղում, № 169:

<sup>3</sup> Սխալ է այն ենթադրությունը, թե Սպահան մեկնելու հրավերը Օրին ստացել էր Պոլսապալի ճակատամարտի հետո, ինչպես կրոջինսկու ավյալներին համադրությունը հարձել էր Եղյանը (տե՛ս Յ 3 0 Յ, № 160, ծան.): Եղյանին հայանի էր, որ Պոլսապալի ճակատամարտը տեղի էր ունեցել 1709 թվականի հունիսի 27-ին մինչդեռ արդեն 1709 թվականի հուլիսի 7-ին Աղերսանդր կաթողիկոսի ցարին ուղղած օրհնության թղթից երևում է, որ Օրին արդեն Սպահան էր մեկնել էջմիածնի վրայով (հմտա նույն տեղում, № 159 և այդ գրություն մեր հրատարակած բնագիրը, Հայ-սուս օրիննապիտայի ծագման ինդիրը, հավելված № 3, ուր կաթողիկոսը նշում է Օրիի «գնալն և գալն ի Պարսկաստան»): Անգամ կթե ընդունենք, որ կաթողիկոսի թուղթը գրվել էր հենց Օրիի էջմիածնից Սպահան մեկնելու օրը, չի կարելի ենթադրել, թե տասը օրվա ընթացքում Պոլսապալի հաղթության լուրը կարող էր հասած լինել Սպահան, ազգած Օրին ընդունելու որոշման վրա, այդ որոշմանը հաջորդած հրավերը՝ հասած Շամախի և այդ ամենից հետո նույն տարվա հուլիսի սկզբներից էջմիածին հասցրած նրանը Չմուսանսար, որ այդ ժամանակ չկար ոչ հասածել և ոչ էլ ինքնաթիս: Պարզ է, որ կրոջինսկու նշումը:



Որ Օրիին Սպահան հզելու մասին Եամախում հրաման էր ստացվել արքունիքից տակավին 1703 թվականին, որից հետո նա Սպահան սխտի հասած լինի նույն աշնանը, այդ հավաստվում է Միշելի ամնախոյ օրագրից: 1708 թվականի դեկտեմբերի 1-ին, նշելով, որ ինքն այդ օրը Սպահանից Ռավրիզ հասավ, Միշելը արձանագրում է ուղարկավ մի մանրամասնություն: «Սպահանից չորս օրվա ճանապարհ Քորվու (COURVOU) կոչված վայրում, — կարդում ենք նրա օրագրում, — ահա Իսրայել Սրի կոչվող մի հաչի, որը ուղևորվում էր արքունիք և փնքն իրեն ներկայացնում իրրև պտպի, կայսրի և ցարի գեսպան: Նա ինձ սուսում էր այդպեղ, հուշս ունենալով քաղաքավարական իր խոսքերով (par ses civilites) հասնել այն բանին, որ դիմումներ կատարեմ իր օգտին: Այս նպատակով ինձ բնդառնաչ դրկից 50 գերմանացի և սուս ձիավոր, որոնք ինձ սղչունեցին, խոհարհեցնելով իրենց սրերը. նույնն արավ նաև նրանց առաջնորդող սպան: Այս վերջինը մոտենալով սոսաց, թև նորին վսեմությունն Օրին, իմանալով, որ սխտի ժամանեի այս ավանը, սր գանվում է ինքը, իրեն հրամայել է մի մղոն հեռավորության վրա դիմառվորել ինձ և խնդրել, որ հանդիպեմ իր բնակարանը սուրձ խմելու: Այս սպային, որ գերմանացի էր, պատասխանեցի, որ առև իր գեսպանին, թև, Պարսկաստանի մեջ ընդսեմված սովորության համաձայն, որեկ գեսպան շի կարող ուրիշ գեսպանի հետ հարարերություն հաստատել, մինչև որ թագավորը ճանաչած չլինի նրա գեսպան լինելու հան-

միտի բանը, որին արժեք է ավել այդ հեղինակի մոտ եղյանը, սխալ է միանգամայն: Կրուշինսկու սխալը տարբեր հիմերով նկատել է արդեն լեհ հեղինակի Քրանսիացի կոմպլիլյասորներից մեկը՝ La Mamye — Clairac, նույն տեղում, և էջ 72 և հու: Հետագայում ինքը՝ Կրուշինսկին, ինչպես սխտի տեսնենք, Օրիի ժամանումը Սպահան դնում էր 1708 թվականին: Անկախ օրանից նկատենք, որ կաթողիկոսի կողմից ցարին հղված թուղթը սխտի գրված լինի Օրիի Սպահան մեկնելուց բավական հետո: Դա ակներև է թեկուզ այն փաստից, որ Օրիի դեմ ուղղված այն ամբաստանագիրքը, ուր ասված է, թև նա հաղորդություն է բնդունել Ջուզպի չարքեպիսկոպոսական եկեղեցում, ստորագրված է 1709 թվականի ապրիլի 2-ին: Հիշատակենք նաև 1709 թվականի ապրիլի 4-ին թվագրված խոսիբրեն այն նամակը, որի հեղինակը գանդատվում էր, թև Լջմիածնի Վերծվածոյներին և կաթողիկոսի հետ միացած Օրին ջանում է վերացնել Իրանի կաթոլիկ կրոնը: Նշանակում է դեռ 1709 թվականի ապրիլի սկզբներից շատ առաջ սխտի սեղի ունեցած լինելը Օրիի և կաթողիկոսի միջև կաթոլիկ միտիոներների մեջ խուճապ առաջացրած այդ Վաշինքը: Այս ամենից ակներև է, որ Պուտովայի հաղթությունից շատ առաջ էր վճռվել Օրիին Սպահան հրավիրելու խնդիրը:

դամանքը: Այս կերպ վերագործրի նրան (սպալին), մի բան, որ, ինչպես իմացա, շատ դաշտացրել էր գնասպանին: Բայց ինչպե՞ս կարող էի ընդունել քաղաքավարական արտահայտությունները մի մարդու, որի գեմ արքունիքին հուշագրեր էի տված, զգուշացնելով նրա մտադրությունների գեմ, տեղեկացած լինելով, որ նա հերետիկոս էր և հոռի վարմունք էր ունեցել Շամախում մեր միսիոներների հանդեպ: Հնդհակառակը, գրեցի էհմադովլեին, թե Օրին գիմել էր թնձ և ես մերժել էի, խորհելով, որ կեղծ գեսպան է և նկատելով, որ եթե պապը, կայսրը և ցարը, որոնց ներկայացուցիչը լինելու հավակնություն ունի նա, կարևոր գործեր ունենային պարսիկ արքունիքի հետ, դրանք չախտի հանձնելի՞ն թագավորին ստրուկ մի հայի: Իմ նամակի հետևանքով է, որ արգելեցին նրա մուտքը Սպահան, թինչև որ ստուգվեր նրա գեսպանության ճշտությունը<sup>1</sup>: Այս վկայությունը հետաքրքրական է ոչ միայն նրանով, որ հավաստում է Միշելի դերի մասին մեր հիշատակած կողմնակի վկայությունները, այլև նրանով, որ բացահայտում է ֆրանսիական գեսպանորդի բարձրահոն արհամարհանքը իրանշահի հայ հպատակների նկատմամբ: Ձեռքի ուժով նվաճված հայ հպատակների մասին եվրոպացի դադութարարների ունեցած հայացքը ոչնչով չէր տարբերանշվում ասիացի զավթիչների հայացքից:

Հասնելով Իրանի մայրաքաղաքը, Օրին ընդունվեց շահ Սուլթան Հուսեյնի կողմից ուռաական գեսպաններին հատկացվող պատիվներով: Այն ամենից հետո, ինչ տեղի էր ունեցել մինչ ալդ, միանգամայն հասկանալի է դարձնում այս: Կրուչինսկին հազորդում է հետաքրքրական մի մանրամասնություն: Օրին, գրում է նա, Իրանի կառավարությունը 1708 թվականին հատկացրեց 15 ուրբլի օրապահիկ. ալդքան էլ հատկացվեց 1715 թվականին մսակովյան գեսպան Վոլինսկուն<sup>2</sup>: Այսպիսով հայտնվում է, որ Օրին և Վոլինսկու գեսպանությունները Իրանի աչքում հավասար արժեք էին ունեցել:

<sup>1</sup> „J'écrivis à l'attamadaulat les avances que cet homme m'avait faites, et que je les avais refusées le croyant un faux ambassadeur, attendu que le pape, l'empereur et le czar dont se disait ministre avait eu des affaires de conséquences à traiter à la Cour de Perse, ils ne les auraient pas confiées à un Arménien esclave du Roi, et c'est sur ma lettre qu'on lui défendit d'entrer dans Hispahan jusques à ce qu'on eût bien vérifié la vérité de sa légation“. (Mémoire du sieur Michel sur son voyage en Perse. Paris, Bibliothèque Nationale. Fonds français. N 7200, pp. 210—211).

<sup>2</sup> Krusinski, Prodromus etc., էջ 126:

Իրանում ուշադրության արժանիցին Օրբի բերած գրությունները: Մեր արամեագրության տակ կա նրա առաքելության մասին շահի կազմից Պեարոս ցարին գրված նամակը: Թեպետև, ասված է այդտեղ, Իրանի քրիստոնյա հպատակներն իրենց «անկայունության և ինքնազուխ արարքների համար» ենթակա են արդար դատաստանի, այնուամենայնիվ, նկատի առնելով ցարի բարեկամական գրությունը, ինքը հպատակների նկատմամբ ունեցած իր գնասրտությունը ներման կարժանացնի նրանց<sup>1</sup>:

Արքայական բազմաբառ ու խրթին այս գրությունից չի կարելի հասկանալ, թե ի՞նչ անկայունության և ինքնազուխ ի՞նչ արարքների համար էին մեծահոգի ներման արժանանում Իրանի պատժաւարաքրիստոնյաները: Կարելի է միայն գլխի ընկնել, թե շահնշահը նրկատի ուներ քրիստոնյա իր հպատակների ազատագրական այն ձգտումները, սրտնց սատաման համար կառավարությունը պատժիչ գործառուսեր էր հղում Վրաստանի և Հայաստանի գովաւաները և քրտանց ծանրաբեռնում տուրքերով ու տուգանքներով:

Օրբի առաքելության մյուս արդյունքների և մանաւանդ հայ ղեկավար շրջանների հետ նրա ծրագրած հանդիպումների մասին (որոնք անշուշտ ավելի պիտի շահագրգռեին մեզ, քան շահնշահի սուղ ու անհաստատ ողորմածությունը) մեզ միայն կցկտուր տեղեկություններ են հասել ղժրախտաբար: Ինչպես տեսանք, Օրին խոստանում էր Իրանում ունեցած իր գործածությունների մասին անձամբ ղեկուցել Մոսկւա հասնելուց հետո:

Այնուամենայնիվ նրա ուղարկած գրությունների մեջ գտնում ենք որոշ գիտողություններ ու մտքեր Իրանի քաղաքական կացության և մանաւանդ Պոլտավայից հետո Պեարոս ցարի նկատմամբ արեւելյան և եւրոպական պետությունների պալապես փոխված վերաբերմունքի մասին: Ինչպես հաղորդում էր Օրին, Պոլտավայի հաղթանակը ուժեղացրել էր հյուսիսային հարեանի նկատմամբ իրանական արքունիքի երկյուզը՝ հավասարաշափ առիթ տալով Սեֆյան պալատականների առերես բարեկամության ու շարված թշնամանքի գրեւորմանը:

Պոլտավայի հաղթությունը մեծ ներգործություն էր ունեցել նախ և առաջ հենց Օրբի վրա: Եթե ղեռ մինչ այդ նա նշում էր Պեարոսի կազմակերպչական տաղանդը և նրա վերանորոգչական ու շինա-

<sup>1</sup> ЭЗОВ, նույն տեղում, №№ 160 և 161, հմտ. նույն տեղում, Введение, էջ XLV և Ա Տ ա յ ա ն, Վափերագրեր, էջ 89 և հտ.:

բարական գործերը<sup>1</sup>, զրանից հետո ցարը աճեց նրա աչքում որպէս մեծ զորավար և որպէս եվրոպական մեծ պետութեաների շարքն անցած հզոր երկրի առաջնորդ: Հայերի խնդրարկուն ավելի մեծ վստահութեամբ էր փարում հիմա «անհավատների» լծի տակ տառապող արևելեան քրիստոնյաների, և առաջին հերթին հայերի և վրացիների, ազատագրման գաղտփորին: Համոզված էր, որ շվեդները կրած վճռական պարտութեանը պիտի արագացնի այդ ժողովուրդներին Ռուսաստանի օգնութեանը՝ առաջ քաշելով պարսկական արշավանքի հետանկարը: Իրանից ուղարկված նրա նամակները դրիթե ամբողջովին նվիրված են Ռուսաստանի մերձարևելեան քաղաքականութեան հարցերին և զրանց մասին իր հավաքած տեղեկութեաների շարադրանքին: «Նորին ցարական մեծութեանը, — գրում էր Օրին, — բոլոր ուղղագիտական քրիստոնյաների մեծ ցարն է: Նրան 1 միայն իշխանութուն շնորհված երկրից, և մենք, համաձայն մեր պաշտօնի, պիտի հաղորդենք նրան, ինչ պիտանի է, որպէսզի նա օգտագործե այդ ամենը ըստ իր բարեհաջեցութեան»<sup>2</sup>:

Ուշադրութեան արժանի են մանավանդ Օրիի հավաքած տեղեկութեանները Քուրքիայի մասին, նրա դիտողութեանները ցամաքային ուղիներով Քուրքիան նվաճելու հնարավորութեանների մասին և այլն: Նրան շատ լավ հայանի էին ըստ երևույթին «Քուրքիայի ավերակների վրա ամրանալու» այն հեռանկարները<sup>3</sup>, սրտնցից մի պահ ստիպված եղաւ հրաժարվել Պետրոս ցարը Պրուտի ձախողած արշավանքից հետո:

Սակայն Իրանում Օրին սոսկ դիտողի ու հետախուզողի դերում չէր: Նրա դեպքնազնացութեան մասին մեզ հասած սուղ տեղեկութեանները ցույց են տալիս, որ այս միջոցին նա զբաղված էր նաև այլ աշխատանքով:

Դեսպանութեան երթին և դարձին տեսակցելով էջմիածնի կաթողիկոսի հետ, Օրին, ինչպէս դիտեցինք, հակառակ եզրութեաների չարախոսութեան, ջանք էր թափել ոչ թէ հրահրել, այլ հարթել հա-

<sup>1</sup> Հմմտ. օրինակ, Յ 30 Յ, նույն տեղում, № 77:

<sup>2</sup> Նույն տեղում, № 166: Օրիի թերագրած այս կարգի նամակները կանխում են Մինաս վարդապետի հասցեով 1722—23 թվականներին Պետրոս զի Սարգիս Գիլանեցիի գլխավորապէս պետերի համար Իրանից ուղարկված այն գրութեաններին, որոնց մեջ ժամանակագրական ձևով արձանագրուում էին Իրանում տեղի ունեցող անցքերը: Տե՛ս «Կուսնիկ հայոց աշխարհի», 1863, էջ 92 և հտ., 181 և հտ., և մեր Պետրոս զի Սարգիս Գիլանեցի, էջմիածին, 1916:

<sup>3</sup> Հմմտ. К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, IX, էջ 101:

լազաւականների և կաթողիկոսների շարժում հարարերությունները: Եթե անգամ չընդունենք, թե հենց նրա խորհրդով էր կաթողիկոսը գրի տակ Կղեմես XI պապին 1709 թվականի փետրվարի 25-ին ուղղած իր թուղթը, ուր քննադատելով միսիոներների գործունեությունը, աշխատում էր բնորոշանուր լեզու գտնել Հռոմի հետ, ապա անշուշտ նրա ներշնչումով է միայն, որ կաթողիկոսը կրկին այդ գրությունը երկու տարի անց՝ 1711 թվականի ապրիլի 16-ին<sup>1</sup>:

Եթե առաջին իր գրության մեջ կաթողիկոսը գանգատվում էր ֆրանկ դեսպանների հայավնաս բնթացքի մասին, վերջինում վեր էր հանում Օրբի խաղաղարար գերը:

«Եւ ի վախճանի բանիս, — գրում է կաթողիկոսը առաջին իր թղթում, — և գալստ ևս գիտասցէ մեծապատիւ գիտութիւնդ, յերկրէն Հնդկաց և յերկրէն Օսմանցուց և յՕզրէգաց գեսպանք յոլովք գոն յաշխարհս մեր, ոչ միտմ յումեքէ կրեմք վնաս և նեղութիւն, բայց յամենայն եկեւոց ֆրանկաց գեսպանոց նեղութիւն և վնաս յորովս կրեմք. յոլոք անկեալ խնդրեմք և գալստ, ոչ թողացուցանել լինել այնպէս»<sup>2</sup>:

«Գարձեալ, — գրում է կաթողիկոսը երկրորդ իր թղթում, — որովհետեւ յաջողութեամբն Աստուծոյ միջնորդն խաղաղութեան և սիրոյ՝ բարեպաշտ և աստուածասէր առաքեալդ ի մեծութենէդ Իսրայէլ անուամբ գեսպանս եկն եհաս ի քրիստոսաէջ ամիսս. պատշաճ վարկաք կրկնակի զբւլ զնամակս, և ծանուցանել սուրբ հօրդ զաղէտս տարակուսանաց մերոց, զի թերևս զացուք ի սրբութենէդ և ի փառաւոր մեծութենէդ սփոխանս միսիթարութեանց վտանգեալ սրտից մերոց»<sup>3</sup>:

Բե՛ մի, թե՛ մյուս գրության մեջ, շարագրելով հայ եկեղեցու աննահանջ գաւախանքը, կաթողիկոսը կամեւում էր շեշտել, որ հայերը ևս քրիստոնյա ժողովուրդ են և վաչկել չէ, որ միսիոներները հերձվածողներ կամ հերետիկոսներ անվանեն նրանց: Անգամ պարսից իշխողներն ավելի համբերատար են դեպի մեզ, — գրում էր իր թղթում Ջուղայեցին, — քան պապական Հռոմի ներկայացուցիչները. «Իսկ առ մեզ եկեալ պատրիքն՝ ոչ աչսպէս, այլ ներհակութեամբ վարին ընդ մեզ՝ խոչընդակն լինելով. և յորժամ ներհակիմք անկարգ արարմանց նոցին, զուր և ունայն բանիւք ամբաստան լինէն առ

<sup>1</sup> Մի և մյուս թղթի հրատարակությունը տե՛ս Գ ա լ է մ ը ա ը յ ա ն, նույն տեղում, էջ 196—215:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 214:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 215:

մեծութիւնն ձեր և դու՛մ անփորձ գոյով՝ նոցին բանիցն հաւատաւք. բանդի ի մէջ այլասեռից զհայս հերձուածօզս և հերեաթիկոսս անուանեն»։ Թղթի վերջում կաթողիկոսը խնդրում է իր միջոցով ուղարկել հայերի մեջ գործող քարոզիչներին հատուկ գրութեան, որպիսին «ընկալեալ մեր իբրև դԱստուածատուր պատգամս Մախիսի, ցուցցուք պատրոցն թերես սակաւ մի կասեցին յատելութենէ քրիստոնէից»<sup>1</sup>։

Այս հարկով, այլ լեզու է, քան աճ, ինչ որ բանեցնում էին այս կաթողիկոսի հախորդներից ոմանք Հոսմի հետ բանակցելիս։ Եվ եթե ընդունենք, որ սրանով կաթողիկոսը մասամբ ընդառաջում էր հենց Օրթի հանձնարարած քաղաքականութեանը, պիտի դարձյալ կարծել, որ լքելով եզոտիտական դիպլոմատիայի նեղ արահետը, վերջինս բռնում էր ազգային-քաղաքական հանդուրժամութեան լայն պողոտան։

Օրթի խորհրդով էր երևի, որ 1709 թվականին էջմիածնից Արեմուտք ուղևորվեց Հովակիմ Զուղայեցի արքեպիսկոպոսը՝ միջնորդելու պապի առաջ, որպեսզի վերաբացվի Լիվոնոյի գոցված հայ եկեղեցին, որը, հազիվ կառուցված, կովախնձոր էր դարձել քաղաքի «կաթողիկե» և «չուսավորչածես» հայերի միջև, ուստի և խափանվել էր Հոսմի հրամանով<sup>2</sup>։ Օրթի հանցանքը չէր, հարկով, եթե Լիվոնոյում անկարելի եղավ բարեկամութեան միջնորդա սակզծել հայ և հոսմեական եկեղեցիների միջև։ Էջմիածնից եկած արքեպիսկոպոսին հարկադրեցին կաթողիկոսին ընդունել, և ի վերջս դավանադարձ այդ արքեպիսկոպոսը միայն փախուստով աղատեց իր դուխը պապական որսկանների ձեռքից<sup>3</sup>։

Կաթողիկոսի հետ Օրին բանակցում էր որպես ուս քաղաքական շահախնդրութեանների և հայերի սուսական կողմնորոշման արտահայտիչ։ Զարմանալի չէ, որ նրա այցելութեան մասին կաթողիկոսը հարկ համարեց գրել նաև Պետրոս ցարին։

«Բայց մեր սիրելի որդի և եղբայր Իսրայէլիս զնալն և զալն ի Պարսկաստան, — գրում էր կաթողիկոսը ցարին, — յոյժ զարմացոյց ամենեքեան»։ «Բան զշափն աւելի սէր և ընդունելութիւն արաք և քս հրամանոցդ որպիսութիւնն և կատարեալ սէրն, որ ունիս առ յազգս

<sup>1</sup> Մի և մյուս թղթի հրատարակութեանը տե՛ս Գ ա լ և մ ք ա ը յ ա ն, նույն անգում, էջ 213 և հ.։

<sup>2</sup> Հմմտ. Գ ա լ և մ ք ա ը յ ա ն, նույն անգում, էջ 225, Ուղուր ը յ ա ն, էջ 74 և հ.։, 84, և հ.։, 128, և մեր Հայ-ուսու օրինատացիայի ծագման խնդրը, հովելված № 13։

<sup>3</sup> Հայ-ուսու օրինատացիայի ծագման խնդիրը, հովելված № 13։

մեր, ամենն մի ըստ միտջէ պտամհաց մեզ՝ և մեք ուրախացեալ  
ցնծացար»<sup>1</sup>։

Այն հանգամանքը, որ կաթողիկոսը հարկ էր համարել օրհնու-  
թյան գիր հղել ցարին և հազարդել նրան Օրիի ուրախառիթ ալցելու-  
թյան մասին՝ հիմք է տալիս Լեթագրելու, թե վերջինս էջմիածին  
էր ժամանել ցարի հատուկ հանձնարարություններով։ Սակայն կա-  
թողիկոսի գրութեան սովորական դարձվածքների մէջ գծվար է  
գտնել որեէ հայտարարութեան, որը հիմք տար տեսլու, թե Օրիի  
ալցելութեանից հետո էջմիածինը կողմնորոշվում էր գեղի հետա-  
տան։ Հետագայում ևս Իրանի հանդեպ էջմիածնի այս և հաջորդ մի  
շարք կաթողիկոսների քաղաքական գիրքը շքեց լսյալ հպատակա-  
թյան շրջանակները։ Աղեքսանդր Զուղայեցին հնարավոր էր դանում  
նուրբիակ հայտնել, որ իրանական դաշխոսի ներքո հայ հպատակ-  
ներն ավելի բարեբախտիկ կյանք ունեն, քան ունենին հայրենի թա-  
ղավորների օրոք։ *Մղեմես XI* պապին ուղղած թղթում իրանշահի մա-  
սին նա գրում էր. «Այլև թաղաւորին մեր որոյ իշխանութեամբն մա-  
կաղիմք մեր, ասցէ ամենաթագաւորն Աստուած հաստատութիւն  
թագաւորութեանն իւրոյ. և մեր ալօթն ձեօք մատուցանեմք ըստ  
խրատու մեծին Պողոսի, զի այսպէս հանդարտութեամբ վարիմք  
զկեանս մեր, որպէս և ոչ չաւուրս թագաւորաց մերոց միմչ իշխանու-  
թիւնն մեր էր, և սա այլ ազգ է և ոչ պաշտօնեայ քրիստոնէութեան  
խորհրդոյս՝ այսպիսի գթով գթայ և նախախնամեալ պահպանէ մեզ  
թարց զզուանաց»<sup>2</sup>։

Այս խոսքերով էջմիածնի կաթողիկոսն անդրադարձնում էր Նոր-  
Զուղայի կղերա-խոջայական միջավայրում իշխած Խրատաշտա-  
կան հին տրամադրութեանը։ Եվ եթե աչքի առաջ ունենանք, որ Զու-  
ղայեցու տողերը գրվում էին Օրիի հետ ոճեցած հանդիպումից հե-  
տո՝ գծվար շպիտի լինի համոզվել, որ հայ ազատագրական հե-  
ռանկարների նկատմամբ վերջինիս և կաթողիկոսի հայացքների մի-  
ջև տակավին ընկնում էր խոր մի անջրպետ։

Ի դեպ է տեսլ, որ 1712 թվականին Աղեքսանդր կաթողիկոսը  
մեկնեց Սպահան, ուր հատուկ ուշադրութեան արժանացավ արքու-  
նիքի կողմից։ Այս մասին տեղեկանում ենք կաթողիկոսի պատվերով  
1713 թվականին էջմիածնի համար գրված Հայսմավուրքի հիշատա-  
կարանից. այդտեղ մեծ դոհունակութեամբ նշված է, որ անգամ ինքը՝

<sup>1</sup> Հայ-ուռս օրիննապիտայի ծագման խնդիրը, հավելված № 51

<sup>2</sup> Գ ա լ է մ ք ա ը յ ա ն, նույն տեղում, էջ 212, հմմտ. նույն տեղում,  
էջ 213։

Իրանի «մեծ արքան», «մեծապատիվ և խաղաղասեր» շահ՝ Սուլթան Հուսեյնը արտակարգ սիրալիր է եղել Սպահան ժամանած հայոց կաթողիկոսի նկատմամբ, «զոր բազում անգամ տարեալ էր ի սեղան և ըստ արժանացն պատուելալ և մեծարեալ ի հացիկերութեան արբաճ և ըստ իւր հայրապետական ըսգեսախր նստեալ էր ի սեղանի անդ տէր Աղեքսանդրը կաթողիկոսն, զոր ոչ էր լուեալ մեր և տեսեալ թէ ի հնոց հայրապետաց և թէ ի նորոց»<sup>1</sup>։ Գժրախտարար հիշատակադրողը չի հաղորդում որեէ փաստ գրական այն հեռանքներն մասին, որ ունեցան այս հացիկերութիւնները եթե ոչ հայ ժողովրդի, զեթ հայ եկեղեցու համար։ Արքայական հանդիսավոր ընդունելութուններն ու առատ ճաշատեղանները լավագոյն դեպքում կարող էին միայն ամբողջով էջմիածնի կաթողիկոսի իրանական հավատարմութիւնը, որ հարկավոր էր միայն որպէս քաղաքական պատվար հայերի ազատագրական աճող այն արամադրութիւններին, որոնք ընդառաջում էին Պետրոս Մեծի իրանական քաղաքականութեանը։

Ժամանելով Անդրկովկաս, Օրին հանդիպում ունեցավ նաև «հայոց երկրի» մշուս ղեկավարների հետ։ Հալանորեն այդ տեղի էր ունեցել այն պահին, երբ վերադառնալով Սպահանից Եամախի՝ նա պատրաստութիւն էր տեսնում Ռուսաստան մեկնելու համար։ 1709 թվականի սեպտեմբերին Եամախուց գրած մի նամակի և նույն վայրից 1710 թվականի հունիսին ուղարկված մի այլ գրութեան արանքում, ուր Օրին կանցլեր Գուլովինին հաղորդում էր, թե «մեր երկրի մեծն ու փոքրը ողջուն են ուղարկում մեծ թագավորին», կատարյալ լուսթիւն է տիրում մեզ հասած թղթերի մեջ։ Ըստ երևութիւն անխոս այդ ընդմիջման պահին նա հանդիպումներ էր ունենում հայ գործիչների հետ և կամ հենց այցելել էր «հայոց երկիրը», որի անունից ի վերջո ողջուն էր հղում ցարին։

Մասնավորապէս Օրին հանդիպած պիտի լինէր Երևանում ծառայող ինժեներ-կապիտան Նավասարդին, որի անունը տալիս էր տակաւին Պֆալցի կուրֆյուրստի հետ բանակցելիս՝ Երևանի բերդի գրավման հեռանկարների կապակցութեամբ։ Հետագայում Հովսեփ արքեպիսկոպոս Արղութեանը նկատելինա II-ին ներկայացրած իր հիշատակագրութեան մեջ վկայում էր, թե Իրանի գրութեան մասին հատուկ օրագրերով ժամանակին տեղեկութիւններ էր հասցնում Պետրոս Մեծին հայազգի ոմն Նավասարդ։ Եթե ճիշտ է Արղութեանի

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձև. № 3786։



Հաղորդածը, ապա նախնական է, որ այստեղ խոսքը 1699 թվականին ներհանի բերդում ծառայող հայազգի ինժեներ-կապիտան Նավասարդի մասին է: Անճնարին չէ, որ ուսսական հետախուզության հետ նրան կապողը եղել էր Իսրայել Օրին: Այդ կապը Օրին կարող էր հաստատած լինել նաև իրանական առաքելության ժամանակ: Գուցե ուսսական արխիվներում երևան գան նավասարդի մասին վավերագրեր, որոնք նոր լույս կարողանան տարածել նրա անձի և դարձի վրա: Մերձկասպյան երկրները գրավելուց հետո շնորհապարտ ցարը կամեցել է ըստ արժանվույն վարձատրել հայ այդ պինդորականին, սակայն վերջինս կենդանի չէր արդեն: Մեռած նավասարդի փոխարեն Պետրոսը բարերարեց նրա ժառանգներից մեկին, կազար Խրիստոֆորովին, որին գեներալ-մալորի կոչում արվեց նախակ հրամանով<sup>1</sup>:

Հնարավոր է, որ Օրին այցելել էր հայարնակ այն վայրերը, որոնք ամենից ավելի անմիջորեն էին կապված Ռուսաստանի հետ: Նկատի ունենք «Ազգանից երկիրը», որի սահմանները գրեթե համընկնում էին Ղարաբաղի այսպես կոչված «խամսաչի մելիքությունների» ընդգրկած սահմանների հետ: Իր հետապնդած նոր նպատակների տեսակետից Ղարաբաղում առավել նպաստավոր քաղաքական արամադրությունների տեղաշարժումն այնքան ակնհայտ էր Օրինի համար, որ 1703 թվականին Ղափանի մելիքների անունից կազմած թղթերի տակ իսկ անհրաժեշտ էր համարվել որպես գրություն վայր գնել «Ազգանք»: Որոշ հիմք կա ենթադրելու, թե Օրին եղել էր «Ազգանքի» (Ղարաբաղի) վարչական կենտրոն Գանձակում: Այդ ենթադրությունն օգտին է վկայում 1721 թվականին «Ազգանքի» հայ հոգևոր և աշխարհական մի բանի իշխանների գրությունը Պետրոս Մեծին, որ նշվում էր դարձյալ Օրին իրենց կողմերն անցնելու և իրենց «խորհուրդներին» իրազեկ դատնալու մասին: Եսաչի կաթողիկոսի և Ազգանից Եղիշե առաքելու, սուրբ Հակոբա, Խոֆա վանքի և Ամարասի վանահայրերից և Զրաբերդի ու Գանձակի երկու մելիքների ստորագրություններից դատ այս գրությունն առկա գտնում ենք նաև շորս Բաղաբացիներևի անուններ, որոնցից երկուսը հատկանշված են «Գանջու քաղաքացի» և «գանջուցի» բառերով: Ահմեդ է, որ այստեղ եկեղեցականների կողքին հանդես են գալիս դարաբաղցի ազգային խոջաներ, որոնք ժամանակին հավանորեն հանդիպում էին անհայտ Օրինի հետ հենց իրենց երկրում<sup>2</sup>:

<sup>1</sup> Собрание актов, II, էջ 51:

<sup>2</sup> Հմմտ. մեր հայ-ուսու օրիննուսցիայի ծագման խնդիրը, հավելված № 14:

Քաղոր պարագաներում Ղարաբաղի հայաբնակ վայրերում Օրբի-իրանական առաքելությունը առաջ էր բերել խանդավառ վերարեր-մունք: Այս մասին թանկարժեք անդեկություն է հազարդում Կրու-շինսկու մեմուարների թուրքերեն չրատարակությունը: «Պատահեց այդ ժամանակ տարօրինակ այն բանը, — գրում է այդտեղ Կրուշինս-կին, — որ Ղարաբաղյի հայ իշխանավորները ժողովրդի հետ միա-սին հայտարարեցին, թե, ինչպես ասված է իրենց գրքերում, հայ-ազգի այն թագավորը (խոսքը լեզենգի խոստացած ազատարար թագավորի մասին է) գալու է Իրան, որպեսզի գրավելով Ղարաբաղի երկիրը և իշխանություն հաստատելով այդտեղ, վերականգնի Հա-յաստանի նախկին վիճակը, այս բանը հայտնի է լինելու նաև իրեն, այդ թագավորին: Երբ որ հաղիսավոր կերպով Շամսի մտավ դես-պանը (քանի որ 300 հայ ուղևոր ուներ և 100 մարդ էլ նոր միացավ դրանց), հայտարարելով, թե ինքը ծագում է հայ թագավորների սե-րունդից, հռչակվեց թե նա է հենց իրենց գրքերի նախադաշակած թագավորը. ուստի, ասացին, սա է մեր թագավորը, եկել է իր եր-կիրը և պիտի պաշտպանություն գտնի մեր կողմից»<sup>1</sup>:

Անդրկովկասում գործող թուրքասերների ասելով, մոտավորապես հենց այս ժամանակներում էլ պիտի սկսված լինի Ղարաբաղի «սրղ-նախների» Իրանի դեմ բարձրացրած ապստամբությունը: Թուրքերի կողմից Շիրվանում առաջ քաշված պապստանյի Հաջի Դավութ խա-նը 1725 թվականին հայտնում էր, թե սղնախների հայերը «15 տա-րուց ի վեր» (այսինքն՝ մոտավորապես հենց 1710 թվականից սկսած—Ա. Հ.) գտնվում են «ապստամբության վիճակում» և ավե-րում են «իրենց շրջաններում գտնվող զվլբաշական, զյուզերը»<sup>2</sup>: Հնարավոր է և անդամ հավանական, որ լեզգի հրոսակախմբերի առաջնորդ շեյխ Դավութ խանը իր կողմակերպած ազգաբազմները փորձում էր արգարացնել Օրբի գետաբանագնացության ժամանակ Ղարաբաղում սկիզբ առած սղնախների ակտիվացմամբ<sup>3</sup>:

<sup>1</sup> Chronicon Percgenitatis, էջ 23:

<sup>2</sup> Թարխիթի Ռաշիդի, Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի Պատմության-ինստիտուտի արխիվ, Քաղվածներ XVII—XVIII դարերի թուրք պատմագիր-ներից, ձեռագիր թարգմանություն Ա. Սաֆրազյանի, էջ 139 և հա.:

<sup>3</sup> Գրոֆ. Պետրուշևսկու կաթմեքով, Հաջի Դավութի գլխավորած շար-ժուժը—շարժում, որ ակնհայտորեն իբրախուսվում և հրահրվում էր Անդր-կովկաս խուժած թուրք զավթիչների կողմից—հիմնական իր հոսանքով, գեթ սկզբնապես եղել է դյուզդապիական շարժում և ունեցել հակաֆեոդալական

Լեզգի ֆեոդալները 1712 թվականին ստպատակում էին դաշտային Ղարաբաղը: Նրանց հարվածներից ճողպարած գյուղացիները սպալվինում են «ի լերինս և ի քարանցաւս Արցախու և իւրաքանչիւր նանդիւլ ամուր տեղիսն զերծեալք ասրուսա իւրեանց հողային», — գրում է Սաաչի կաթողիկոսը<sup>1</sup>: Երկրի մասսայական տրտունջը Ղարաբաղի լեռնային այս գոտիները խուսափած գյուղացիութեան մեջ պարարտ հող էին ստեղծում պարտիզանական կոիւնների համար, որոնք սկզբնապես ուղղված էին ֆեոդալական հարստահարութեան վախճարագուշն եղանակի՝ լեզգիների արշավանքների ձևով պարբերաբար կրկնվող «շափղունի» (սաղմական ավարառումների) դեմ: «Յեւի շափղունն ան զնամանն, տասը-քսան հազար մարդ ան զնամանն շափղուն», — գրում էր 1720-ական թվականներին Պետրոս Մեծի կողմից Ղարաբաղ հղված էլչի Իվան Կարապետը<sup>2</sup>: Չափղուններ կազմակերպում էին նաև հայկական սղնախները, երբեմն ավարի ենթարկելով ոչ միայն «զղլբաշներին», այլև սրանց համերաշխող մեղիքների գյուղերը: «Պաս չօրեքշարբիի օգր, — գրում էր նույն էլչին, — Սարքիսն, Արրահամն մին զեղ շափմիշ արին, հայի գեղ»<sup>3</sup>:

Պատմաբան-բանասեր Մ. Հասրաթյանի ենթադրությամբ Մեծ կամ Ծոշի սղնախի հիմնադիր Ավան յուզբաշին պիտի որ Ղարաբաղ փոխադրված լինի հենց Ծիրվանի երկրից՝ Որիի ցուցմունքի համաձայն Հայաստանի ազատագրման համար ռազմական նախապատրաստություն տեսնելու նպատակով: Այս ենթադրության օգտին խոսում է վերոհիշյալ էլչու 1724 թվականի մի գրությունը, ուր Ղարաբաղի սղնախների ռազմական ղեկավարների մի մասը նշվում է «շիրվանցի» անունով: Իվան Կարապետի գրածի համաձայն XVIIII դարի 20-ական թվականներին Ղարաբաղի սղնախները մի պահ տրոհված էին «շիրվանցիներին» թեր և գեմ հաավածների: Ծիրվան-

դունավորում, «Колониальная политика российского царизма в Азербайджане», М.—Л., 1936, I, էջ 6, պրոֆ. Պետրուշակուսու ներածական հոդվածը և նույն հեղինակի «Очерки», էջ 332 և հա.: Դժվար է ընդունել չհիմնավորված այդ կարծիքը:

<sup>1</sup> Ե ս ա յ ի կ ա թ ո ղ ի կ ո ս, նույն տեղում, էջ 29 և հա.:

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի Տեղեկագիր (հաս. գիտ.), 1951, № 12, էջ 48, Ա. Արրահամյանի հոդվածը:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Ս. Տ. Երեմյան, Մ. Ս. Հասրաթյան և ուրիշներ, Հայ ժողովրդի պատմություն, 1-ին մաս, Երևան, 1956, էջ 358:

յինները» կողմնակիցները համոզված էին, թե «էս Շիրվանայ աղերբըն ան էս երկիրս... ազատէլ... և թէ շիրվանցին էս երկրէս թէ էսօր զուս գնայ, յէքսըն անհաստան զէ գալ էս երկիրսս. գէ զաֆթի և եսիր կանի»<sup>1</sup>։ Իման Կարապետի վկայությունը հիմք է տալիս ասելու, թե Մվան յուզբաշին Ղարաբաղ էր անցել իր հետ բերելով սղնախների լավագույն զինվորական զործիչներին։

Հին մի ժամանակագիր հաղորդում է, թե «Մվան ուզբաշին որ եկավ Շօշվալ քարքն մտավ սահբ խուրուշ իլավ ՌՃԿԶ (1717)» թվականն էր<sup>2</sup>։ Խոսքը այն մասին է, որ այդ տարում ամրանալով «Շօշվալ գալայում», որ սկզբնապես Քարի գլուխ էր կոչվում— Մվան յուզբաշին, «խուրուշի» (հռչակի) տեր դարձավ։ Անշուշտ Մվանը կարող էր Շիրվանից Ղարաբաղ անցած լինել այդ թվականից ավելի առաջ։

Այս ամենից շենք Եզրակացնում, թե Ղարաբաղի սղնախները սկիզբ էին առել հենց Օրբի ժամանակ կամ որ նրա ցուցմունքով հենց Մվան յուզբաշին էր հիմք դրել զրանց կազմակերպությանը։

Քննելով ժամանակաշրջանի աղբյուրները, դժվար չէ նկատել, որ XVIII դարի սկզբին Ղարաբաղի հաշարնակ վայրերը գլխավոր հինգ խոշոր վարչական միավորներին՝ մելիքություններին համապատասխանում էին նույն քանակի սղնախ կոչված ռազմական խոշոր կազմակերպություններ։ Այստեղից դժվար չէ հետևյալն, որ հինգ սղնախները նույն հինգ մելիքություններն են, զիտված որպես ռազմական կազմակերպություններ։ Յուրաքանչյուր սղնախ ուներ իր պաշտպանություն հենակը՝ բերդը։ «Սղնախ անել»—նշանակում էր բնական կամ արհեստական հանգրվանում կամ բերդում ամրանալ։ 1720-ական թվականներին Ղարաբաղում հիշատակվում են սղնախների երեք-չորս մերթ իրարամարտ, մերթ համերաշխ միավորություններ, որոնք ուստաֆիր վավերագրերում նշվում են «Армянское собрание» անունով։

Սղնախների շարժման հետագա զարգացման համար նշանակալից պիտի համարենք մանավանդ այն հանդիպումը, որ ունեցել էր Օրին «հայոց երկրում» Գանձասարի Եսայի կաթողիկոսի հետ։

Արդեն ծանոթ է մեզ XVIII դարի սկզբներին սաստկացած իրանական կեղեքումների այն պատկերը, որ նկարել էր իր պատմու-

<sup>1</sup> Ա. Գ. Արա հ ա մ յ ա ն, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ուսական հաշարերությունների պատմությունից, գրքի մեր կողմից մի անգամ արդեն մատնանշված 210 էջը։

<sup>2</sup> «Յուզբաղ ձեռագրաց Դաղյան Խաչիկ վարդապետի», Ա, էջ 35։

Սյան գրքում երեւելի այդ գործիչը: Եսային պատճառ ուներ արարն-  
ջալու իրանական կարգերից և կեղերված ու ճնշված այն ժողովրդի  
անունից, որի գտան վիճակը նկարագրել է նա և՛ որպէս կրօնական  
հետապնդումների ենթակա եկեղեցու պէս, և՛ որպէս Ղարաբաղի  
մեղիքների ոսպմա-քաղաքական սղեշնչող ու խորհրդատու: Եսային  
չի զլացել հիշատակելու նույնիսկ միջնադարւան աջն կանխապո-  
շակությունները, որոնց վկայակոչումը բնորոշ էր հատկապէս հայ  
աշխարհիկ խավերի համար: «Քանզի ես այսպէս գիտեմ,—գրում  
է Եսային իր գրքի առաջարանում,— թէ ի հնումն և թէ ի նորումս  
սուրբ հարքն սրբան սղբը և սուղ զոր տասցեալ և գրեալ են զայն  
նախադիտութեամբ՝ վասն այսմ ժամանակիս է, և վասն մեր և ոչ  
իւրեանց»:

Մինտս վարդապետի 1714 թվականի մի զեկուցագրից երևում  
է, որ ուղևորվելով Իրան, Օրին, ինչպէս նրանից առաջ Միրանը, մաս-  
նավոր հանձնարարութեան է ունեցել օգտագործելու Ազվանից կաթո-  
ղիկոսի ազգեցութեանը Իրանի մերձկառայան տիրապետութեաննե-  
րի և մասնավորապէս Շամախու երկիրը ցարի թեաքութեան տակ  
մտցնելու համար:

Բայց հազիվ թէ միայն սուս կառավարութեանը շահագրգռող  
այդ դիտավորութեանն իրագործելու համար է, որ Օրին կապ ու շա-  
րեկամութեան հաստատեց Եսայի կաթողիկոսի հետ: Անշուշտ նաև  
զրա համար չէ, որ Ազվանից կաթողիկոսը պատրաստակամութեան  
հայտնեց Ռուսաստանի իր թեմն այցելելու պատրվակով մի քանի  
եկեղեցականների հետ Օրին ուղեկցութեամբ մեկնել Մոսկվա<sup>1</sup>: Հե-  
տագայում այս մասին Եսային գրում էր ցարին. «Ժարայել Օրի դես-  
պանն եկն երկիրս Հայոց և զհամբաւ բարեմաղթութեանդ սիրեալ  
տարածեաց ի լսելիս մեր ամենեցուն. և այնքան յարգօրեցաք ի սէր  
քո մինչ ևս իմովք միարանիւք ելեալ ընդ նմա հանդերձ եկինք մին-  
չև ի Յաշխարաքան քաղաք առ ի տեսութիւն և երկրպագութիւն մեծ և  
բարձր թողաւորութեանդ»<sup>2</sup>:

Հավանորեն Օրին չէր բացահայտել կաթողիկոսին Մոսկվայի  
իր ծրագրի բոլոր մանրամասնութեանները: Ինքը՝ Եսային, հայտնում  
էր զեթ, թէ՛ «ես ուղորմամ հոգի էլլի Իսրայէլ Օսին (sic!) գործառ-  
նութեան և խորհրդոցն և արարմանցն շեմ տեղեակ»: Բայց կաթողի-  
կոսի այլ գրութեանից գիտենք, որ Օրին չէր թաքցրել նրանից մոս-  
կովյան իր կողմնորոշումը: Փոքր-ինչ հետո պիտի տեսնենք, որ Եսա-

<sup>1</sup> Э С О В, նույն տեղում, № 202, § 1:

<sup>2</sup> Նույն տեղում, № 205, հմտա. նաև № 167:

չին իրազեկ էր նույնիսկ Իրանում կատարած Յրա հետախուզական աշխատանքին: Հանդիպում ունենալով Նասայի կաթողիկոսի հետ մի ժամանակ, երբ Ղարաբաղի մելիքությունները ենթարկվում էին լեզգիներին ասպատակություններին, Օրին կարող էր Յրան կամ նրա հետ կապված հայ մելիքներին ու յուզբաշիններին նույնիսկ հատուկ խորհուրդներ կամ հրահանգներ աված լինել սղնախների ինքնապաշտպանության մասին:

Բոլոր պարագաներում հայանի է, որ Օրինի գործունեության մանրամասներին Նասային իրազեկ դարձավ ավելի ուշ, Մինաս վարդապետի միջոցով: 1716 թվականին վերջինիս հետ ունեցած հանդիպումից հետո ցարին գրած իր սզերձում նա ամբողջովին ապավինում է Ռուսաստանի հովանոճն և պատրաստակամություն հայտնում ամեն կերպ աջակցելու ապագա արշավանքի հաջողությանը: «Նւ յօժար սրտիւ կամիմք բնդ հովանեալ թեց քոց լինել», — գրում էր Նասային. «մեր պատրաստ եմք ընդ առաջ քո ըստ իմում կարեղութեանս, և մեր նահանգիս մէլիքովք մեծամեծովք և փոքրումքք և յորժամ կամեսցի հզօր և մեծ թագաւորութիւնդ յաջապարել աչար կամօքն աստուծոյ, յաչնժամ զնշան գործոյն խնդրեմք ցոյցանել մեզ, զի առաւել հաստատ լիցուք ի վերայ խորհրդեանս, և ապա դամենայն հանգամանք երկրիս, ծանուցուք առաջի քոյ...»<sup>1</sup>: 1718 թվականին Մինաս վարդապետին հասցեակցրած նրա մի թղթովում, որի հայերեն բնագիրը ղժրախտաբար գեռ շի գանված, Նասային բացահայտում է Ռուսաստանի գինական միջամտության հետ իր լծորդված քաղաքական բողձանքը. «Օ» եթե իրականանար այն գործը մեր ցանկություն և գիտավորության համաձայն, — գրում էր նա այդտեղ, — որպեսզի բռնակալների ձեռքերից ազատվեր մեր ժողովուրդը... Քանի որ բոլոր հայ խեղճ քրիստոնյաները, սրանց մասին մենք այստեղ հոգում ենք, ինչպես մեծերը, այնպես և փոքրերը, ցանկանում են ազատություն. և նրանք բոլորը կազմ ու պատրաստ են և ամբողջ սրտով սպասում են այն օրվան, երբ կստանան իրենց նոր և վաղուց ակնկալված ազատությունը»<sup>2</sup>: Ակներև է, որ Ռուսաստանի գինական միջամտությունը և բաղաձայն հովանավորությունը Նասային այս տարիներին դիտում էր որպես միջոց հայ ժողովրդի բաղաձայն ազատությունը վերականգնելու համար: Նա

<sup>1</sup> Տե՛ս մեր Հայ-սուս օրիննապիայի ծագման խնդիրը, հավելված № 15:

<sup>2</sup> Յ 3 0 B, նույն տեղում, № 210:

արտահայտում էր արամագրություններ, որոնք Օրբի առաքելութունից հետո սկսում էին տիրող դառնալ ոչ միայն Իրանի հայ իշխող հասարակաշերտերի, այլև իրանահայ լայն մասսաների մեջ:

Հետաքրքրական է, ի վերջո, նսայի կաթողիկոսի գործունեությունը բնորոշող մի փաստ է: Իր «Ժամանակագրություն» մեջ Սա. Ռոշքան 1712 թվականի ներքո նշում էր. «Նսայի Գանձասարալ, Ղարարաղի և Շիրուանայ կաթողիկոսն չայսմ ամի առ թագավորն մեր էհհայ Օգոստոսն գրեաց, առաքելով ընդ Յուզայի Քրուշինսքիյին եզուսիդային զվուզին, ցուցանելով զինքն հավատարիմ ս. Աթոռոյն և որդուց նորին թագաւորացն քրիստոնէից»<sup>1</sup>: Այս փաստը վկայում է այն մասին, որ կողմնորոշվելով զեպի Ռուսաստանը, նսայի կաթողիկոսը ձգտում էր բարեկամական հատկեր պահպանել արեւմտակրոնական այն պետությունների հետ, որոնցից այս կամ այն օժանդակությամբ կարելի էր սկսկալել Օրբի հետամուտ ծրագրի իրագործման համար:

Օրբի իրանական բանադնացությունը մեծապես ազդած սլտի լինելը նաև հայ առևտրականների քաղաքական գիրքավորման վրա՝ ուժեղացնելով նրանց մեջ Ռուսաստանի հետ կապվող ակնկալությունները: Դրա ցայտուն օրինակը տալիս է, ինչպես տեսանք, նվիրա Մուշեղյանը: Թեպետև վերջինս կանխավ արդեն ծանոթ էր Պետրոս ցարի հայանպաստ քաղաքականությանը, դրա մեջ նա առավել շարժվել հավատարիացած սլտի լինելը Օրբի հետ ունեցած հանդիպումից հետո<sup>2</sup>:

Միայն հայ մարդկանց հետ չէ, որ շփման մեջ մտավ Օրբին Իրանում: Իրանական տճող կեղեքումների ու ճնշումների պայմաններում այս պահին Շիրվանի ադրբեջանական բնակչության մեջ

<sup>1</sup> Տե՛ս 1726 թ., Ռոշքայի «Ժամանակագրությունը» (ձեռ.), Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմ. ինստ., Լեռնի արխիվ, գործ № 424, էջ 26բ:

<sup>2</sup> Ռուսաստանի արտաքին գործոց արխիվում պահվել են Մուշեղյանի մոտ մինչև 1720-ական թվականների սկզբները կուսակից գրադրությունները, որոնք պարունակում են վոթորկահույզ այդ ժամանակվա Իրանի տընտեսական ու քաղաքական պատմությունը լուսաբանող հարուստ և անգնահատելի նյութեր: Քացի այդ, Վիեննայի Մխիթարյանների արխիվում Մուշեղյանը թողել է մի ձեռագիր, որի հետաքրքրական բովանդակության մասին միայն հետավոր ու աղոտ զաղափար է տալիս Ոսկյանի ուսումնասիրությունը:

Մուշեղյանը հանդիսանում է XVIII դարի հայ գրական և քաղաքական հետաքրքրական այն դեմքերից մեկը, որի զիմապատկերի լուսարանություն համար կարելի է հատուկ մենագրություն:

ևս նկատելի էր մեծ թեքում դեպի Ռուսաստանը: XVIII դարի սկզբում այդ վիպյուն է Շամախին այցելած Կորնել Լը Բրյտոնը, նա նշում է, որ այդ քաղաքի «մահմեդական բնակիչները Ռուսաստանի մեջ էին տեսնում իրենց փրկությունը»<sup>1</sup>: Օրին հաշվի էր առնում աղբրեջանական ժողովրդի մեջ ծայր առած այդ տրամադրությունը:

Օրին Կոստիվայում հանդիպում էր ունեցել ռուսական ծառայության մեջ դանված աղբրեջանցի իշխան Նոխալիցի հետ: Ռուս կառավարությունը տված իր բացատրությունների մեջ գրում էր, որ այդ իշխանի եղբայրը Շամախում խանություն է անում և լավ վերաբերմունք ունի դեպի հայերը և հույս ունեւր, թե ուղեկցելով Պարսկաստան հղվելիք դեսպանին՝ Շամախում ինքը կարող կլինի օգտվել խանի վերաբերմունքից ու ձիրք գնելու պատրվակով ուղևորություններ կատարել հայ մեծամեծների հետ հանդիպում ունենալու համար: Իրան մեկնելուց անմիջապես առաջ նա տեղեկանում է Շամախու այդ խանի մահանալու մասին<sup>2</sup>: Հետագայում, հավանաբար նաչի կաթողիկոսից ստացած տեղեկություններից քաղելով՝ Մինաս վարդապետը հայտնում էր, թե Նիզաբադում Օրին բարեկամություն էր հաստատել Ղուբայի խանի հետ, աշխատել էր նրան թեքել Ռուսաստանի կողմը՝ կամենալով դրանով կանխել լեզգիների հնարավոր դիմադրությունն ապագա արշավանքի ժամանակ<sup>3</sup>: Ղուբայի խանի հաճությամբ Օրին երեք կամորջ կառուցեց Նիզաբադի մոտ դանված երեք գետերի վրա: Նույն վայրում նա հիմք դրեց մի վանքի, սրպեսզի, ինչպես գրում էր, այդտեղ աղոթեն՝ ջրերի վրա տանելիք ցարի ապագա հաղթությունների համար: Կազանն ու Աստրախանը գրավելուց հետո ուսաներն աշխատում էին Ռեյսք գետի ավազանում հիմնել քաղաքներ (ամրություններ)՝ խորքական աղբրխայի հանդեպ Հյուսիսային Կովկասում պաշտպանություն հենակետ ունենալու

<sup>1</sup> Le Brun, նույն տեղում, I, էջ 104 և հա.:

<sup>2</sup> Эзов, նույն տեղում, № 54 և 140:

<sup>3</sup> Նույն տեղում, № 306, § 2: Այլուստ հայտնի է խանի Սուլթան Ահմադ անունը: Հմմտ. II. П. Петрушевский, Очерки, էջ 252: Բելլրիթ կամ Բելրեթ գետի վրա, Կասպից ծովեզրից 10 վերստ հեռավորությամբ դանված գառիթափի վերևում 1720 թվականին շեյխ Դավաթ բեկը կառուցել է Թենդե կամ Թենդի անունով անառիկ համարված բերդը: 1724 թվականից հետո ուսաները այդ բերդում կաթողը ստեղծեցին «как для воспрепятствования дагестанцам чинить набеги, так и для содержания населения в послушании». Бутков, նույն տեղում, I, էջ 70, ծան. 1, և էջ 82:



նպատակով: Չեանարկիկով վանքի հիմնադրման, Օրին ևս չէր առաջ-հարգվում կրոնական նպատակներով: Այդ ակներև է թեկուզ հենց նրանից, որ խոստանում էր կառուցվելիք վանքի նշանակություն մասին առանձնապես զեկուցել ցարին<sup>1</sup>: Օրիի միտքն էր բացահայտում Մինաս վարդապետը, երբ 1714 թվականին գրում էր ցարին, թե անհրաժեշտ է, որ Նիզարադից ոչ հեռու Բիլբիլա և Մարագովա գետերի արանքում շահի թուլլավություն կառուցվի հայ կաթողիկ մի վանք, որը փաստորեն բերդի դեր պիտի կատարի առափնուղ սուս ցորեքի համար: Հնարավոր կատկածները փարատելու համար վարդապետը նպատակահարմար էր գտնում, որ վանքը կառուցվի կաթողիկ Արեմուտքի նախաձեռնությունով: գրա համար հարկավոր է համապատասխան միջնորդություն շահի առաջ՝ գերմանական կայսրի և Պֆալցի կուրֆյուրստի կողմից<sup>2</sup>:

Նիզարադից Օրին հազորդում էր այն այցելություն մտախն, որ արել էր իրեն Սուլեյման-բարան, մեզ նախաձեռնով հաշակավոր այն Սուլեյման-բեյը, որ XVII դարի 90-ական թվականների վերջերին ապստամբական իր բանակով սպառնացել էր Ռավրիզին և ի վերջս նահանջել՝ տեղի տալով իրանական զեբազանց ուժին: Օրին բնական համակրանք պիտի ունենար Իրանի և Ռուրֆիայի դեմ ծառայած ազրբեջանցի այս շալալիի հանդեպ, որի զլիափութած շարժումը Ռավրիզը նվաճելու իր ծրագիրը խրախուսող մոմենտներից մեկն էր եղել զույց: Թե ինչ գործունեություն էր ունեցել Սուլեյմանը Ռավրիզը գրավելու խիզախ փորձը՝ ձախողելուց հետո, հայանի չէ ստուգապես: Ենթադրում ենք, թե նրա մասին է ժամանակագրական այս նշումը. «Թվին ՌՃԾԴ (1705)-ին Սուլեյման պէկն զփոքր Մահմուտ պէկն վերի բերդն սպանեց և ինքն զափանմիշ եղև (=բերդում փակվեց, ամբարցավ—Ա. Հ.) Զ(6)ամիս է (30) մարգով»<sup>3</sup>: Ժամանակագրության ընկալքից դատելով՝ խոսքն այստեղ կարող է լինել կամ Մակվա, կամ Բաշաղետի բերդի մասին:

Բոլոր պարագաներում Օրիի միջոցով Սուլեյմանը հիմա արամազրում էր իրեն Պետրոս Մեծին, և Օրին, հավատարմության ուխտ աննելով նրանից, թուլլություն էր խնդրում ցարից՝ Մոսկվա ուղարկել նրան<sup>4</sup>: Նա կամենում էր, որ ցարը օգտագործի ժո-

<sup>1</sup> Ձ 308, նույն տեղում, № 171, § 11:

<sup>2</sup> նույն տեղում, № 202, §§ 2, 3, 4:

<sup>3</sup> «Մանր ժամանակագրություններ», 1, էջ 304:

<sup>4</sup> Ձ 308, նույն տեղում, № 171:

չուվրդականությունն վայելող այդ մարդու ուղղմա-քաղաքական փորձը, որ կարող էր պետք զալ նաև ասպաղա ուղղմարշավի ժամանակ<sup>1</sup> :

Ազդեցանցի ղեկավարների հետ Օրիի հանդիպումներն ու բանակցությունները վերին աստիճանի կարևոր են սղնախների շարժման հետագա ընթացքի համար: Խնչպես վրաց, այնպես էլ ադրբեջանական ղեկավարների նկատմամբ զբաղված իր գիրքով Օրին հիմք էր դնում քաղաքական մի վարքագծի, որի նպատակն էր հաճել հայ Բաղախական շարժումը ազգային մեկուսացման օղակից, դնել Հայաստանի ազատագրման խնդիրը անդրկովկասյան ժողովուրդների համատեղ գործողության շավիղների վրա: Մի վարքագիծ էր այս, որով Օրիից մի տասնամյակ հետո ընթացան նաև Ղարաբաղի սղնախների ղեկավարները: Որդեգրելով այդ ուղին, նրանք ջանացին համերաշխության ընդհանուր ճակատ քաղաքացիական ղեկավարների ու նրանց գլխավորած ժողովուրդների հետ: Ազդեցանցիների նկատմամբ հայկական սղնախների 1720-ական թվականներին տարած այդ քաղաքականության մասին հետաքրքրական նյութեր են մատակարարում Մոսկվայի Պետարխիվում մեր հայտնաբերած պարսկադիր նյութերը, որոնք պրոֆ. Հ. Աճառյանի վերծանությունները ու թարգմանություններով լույս տեսան 1927 թվականին, Երևանի Պետհամալսարանի ապակետիպ հրատարակությամբ<sup>2</sup>: Անդրկովկասի ազդեցանական ղեկավարների հետ Օրիի վարած բանակցությունները կանխում էին 1720 թվականին Պետրոս Մեծի կողմից Անդրկովկաս հղված էլչի Իվան Կարապետի վարած բանակցությունների ուղեգիծը: Տարբերությունն այն է միայն, որ Իվան Կարապետը ձգտում էր ստեղծել անդրկովկասյան հայ, վրացի և ադրբեջանական ժողովուրդների ու զրանց ղեկավարների ընդհանուր ճակատ անմիջորեն ուղղված Քուրքիայի վեմ, Օրին՝ անմիջորեն ուղղված Իրանի դեմ:

Աչքի առաջ ունենալով Օրիի կատարած գործերը, պարզ է, թե

<sup>1</sup> Ուշադրության արժանի է Մուլեյման-բեյի «բարա» կյանուշը: Այդ հիմք է տալիս ենթադրելու, թե նրա գլխավորած շարժումը արժարժիկ էր զույգ ղեկավարների կամ մյուսիցիցի զրոշի տակ. կրեույթ, որ մուսուլման գյուղացիության պատմության մեջ հանդիպում ենք տակավին XIII դարից: Հմտ. В. А. Гордлевский, Государство сельджуков Малой Азии, էջ 97 և հա., 168, 172 և 182:

<sup>2</sup> Տե՛ս «Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությունների մասին», ընդօրինակեց, տառադարձեց և թարգմանեց Հ. Աճառյանը, 1927, Երևան: Պարսկադիր այդ վավերագրերը վերաբերում են ոչ միայն հայ-պարսկական, այլև հայ-ադրբեջանական հարաբերությունների պատմությանը:

որքան անարդարացի էր Կրուշինսկու ճախնական այն ոլնդումը, թե Իրանում նա ավելի շուտ վաճառական էր, քան դեսպան<sup>1</sup>։ Այդ մեղադրամբը առաջին անգամ հանդիպում ենք տակավին 1709 թվականի ապրիլի 22-ին Նոր-Ջուղայի կարմելիտների փոխանորդ Հոսե ուղարկած մի գրուվյան մեջ, ուր Օրին բնութագրված է որպես «պարսկահայտասկ մի հայ, ծնված Գիլանում (sic), որը մաքսային տուրքից ազատվելու համար Իրան է ժամանել պապի դրոշի տակ որպես դեսպան, իրր թե հայերին կաթոլիկ եկեղեցու հետ միաբանելու համար»<sup>2</sup>։ Արաստվոր չէին այդ կարգի գրույցները։ Հայ մի շարք ուրիշ զիվանապետների մասին ևս շրջում էին ճաման գրույցներ։ Կիսկատար հիմքով, դրանք հաճախ բարդվում էին մանավանդ Լեհաստանից ժամանած հայ «էլշիների» վրա։ Օրից անմիջապես առաջ բաղմացել էր սրանց թիվը։ Ավգուստ II-ի նամակով Իրան ժամանած Ջուրաբ բեկի մասին պատմում էին, թե նա օգտվում էր այն հանգամանքից, որ, ընդունված կարգի համաձայն, շահը նրան ու նրա ուղեկիցներին 60 աբասի օբապահիկ էր վճարում և բացի այդ, ճանապարհորդության ժամանակ հանդիպած քաղաքներն ու գյուղերը պարտավոր էին վճարել նրա ծախսերը։ Էլշին շքախումբը բաղկացած էր 30 ձիավորից, սահայն փաստապես նրան ուղեկցողների թիվը հասավ 200-ի, քանի որ սրոշ նվեր տալով էլշինն, նրան միանում էին բաղմաթիվ վաճառականներ, որոնք այդ եղանակով ապաստվում էին պարսագիր ճանապարհահարկերից<sup>3</sup>։

Ուրիշ մի հեղինակ, Պ. Ավրիլը, իրանական էլշինության շահավետությունն մասին գրում էր. «Այն ինչ մեծապես շահավետ է դարձնում այդ կարգի հանձնակատարությունները՝ դա եվրոպացիներին շլացրած լեանայան առևտուրն է։ Ամենամեծ աղաճություններ կարելի է դբադվել այդպիսի առևտրով միանալով որևէ էլշինի, քանի որ վերջինս ազատ է ամեն սեսակի վճարումներից այն թագավորի երկրում, որի հետ բանակցելու է կկել, մինչև որ կլքի այդ երկիրը։ Այս է պատճառը, որ վաճառականները, լինեն դրանք մոսկովիտներ թե հայեր, ամեն կերպ աշխատում են օգտվել այդպիսի առիթից, հետագայում համապատասխան կերպով վարձահատույց լինելով իրենց ստացած շահույթի համար»<sup>4</sup>։ Նույնը վկա-

<sup>1</sup> Krusinski (Stöcklin), նույն տեղում, էջ 73 և „Tragica historia § 263.

<sup>2</sup> A Chronicle of the Carmelites in Persia, I, էջ 566:

<sup>3</sup> Lettres édiffiantes, IV, էջ 56 և հա.:

<sup>4</sup> P. Avril, նույն տեղում, էջ 263:

յում էր ուղեգիր Պ. Լուկան, որն այցելել էր Իրան XVII դարի վերջերին. «Մի քանի հայ վաճառականներ միանում են եվրոպական էլշիներին, որպես նրանց շքախմբի մարդիկ: Մաքսերից ազատվելու համար նրանք հայտնում են, թե իրենց մոտ եղած ապրանքները էլշիի կողմից թաղավորին մատուցելիք նվերներ են»<sup>1</sup>: Վերջապես XVIII դարի սկզբին այս կարգի էլշիներ<sup>2</sup> մասին էր Բրյունը գրում էր ավելի սյուրբ. «...Նրանց ուղևորության նպատակը այլ ինչ չէ, քան խուսափել իրենց հետ վերցրած ապրանքների մաքսավճարներից, մի արտոնություն, որ հասկացվում էր ամեն մեկին, որ հանձնարարություն ունի Իրանի թաղավորի անոճով... ի դեպ, չի կարելի չզարմանալ, որ քրիստոնյա իշխանները թաղավորին այդ տեսակ նամակ հասցնելու համար շատ անգամ օգործվում են հայերի ծառայությունից, և որ այս վերջիններս կարողանում են վաստակել նրանց «խառհույսով»<sup>3</sup>: Վերջապես ինքր՝ Կրուշինսկին, ևս նշելու էր շատերի կողմից դիտված այս երևույթը, որպես սովորական մի բան<sup>4</sup>:

Բերված բոլոր փաստերից հետո չէ աճն Եղրակացությունը, որ էլիս Կրուշինսկին հուշն բանում մեղադրում էր նաև Օրխին, դա համապատասխանում էր քնդհանրացած այն կարծիքին, որ տարածում էին եվրոպացիները հայ գեստանների կամ հանձնակատարների մասին: Օրխն զոհ էր դարձել ստեբետիպ մի մեղադրության, որ գրոշմվում էր հայազգի էլշիների ձակաարին: Ընդամին հատկապես Օրին Իրանում գործ ունեւ իր դեմ կանխառաճմադրված մարդկանց հետ, որոնք չարամտորեն կեղեքում էին ստեբետիպ այդ մեղադրանքը:

Կային նաև կողմնակի հանգամանքներ, որոնք կարող էին նրպատառած լինել սովորական դարձած այդ մեղադրանքը հրապարակ հանելու համար: Այսպես, նախ աճն փաստը, որ Օրին վաճառական ուղեկիցներ ունեւ իր հետ: Հարկավ այդ վաճառականները չէին միացել Օրին շքախմբին որպես նրա գործակիցներ, այլ իրենց ապրանքներն անվաճառ ու առանց մաքսատուրքերի տեղ հասցնելու նպատակով: Մի շարք վիայություններից պարզվում է, որ Իրան մեկնելիս Օրին բարձել էր իր նավերի վրա Սպահանի հայ վաճառականական ընկերությանը պատկանած 40 հակ ապրանք<sup>5</sup>:

<sup>1</sup> P. Lucas, նույն տեղում, էջ 313:

<sup>2</sup> Le Brun, նույն տեղում, էջ 239:

<sup>3</sup> Krusinski, Prodromus etc., էջ 154:

<sup>4</sup> ЦАДА, фонд Персидских дел, 1710—12 гг, д. 6/и № 20—21:

Դրա համար նրանք երևի վարձահատուց կին լինելու Օրինն, թե-  
թեհացնելով նրա ուղեորություն հետ կապված ծախսերը:

Բայց պիտի կշռադատել նաև ուրիշ հանգամանքներ: Իրանում  
Օրինն զբաղված էր այնպիսի գործերով, որ կողմնակի գիտողը, նրա  
նպատակներին անդհա, կարող էր վաճառականական շահագրասու-  
թյուն կասկածել նրա վարքագծի մեջ: Գիտենք նրա գիտավորու-  
թյունը Աստրախանում հայկական ջոկատներ կազմակերպելու մա-  
տին: Իրան մեկնելիս Օրինն գիմում էր ցարին՝ թույլ տալ, որ ինքը  
Իրանից 15—20 հազար ուսրլու ապրանք փոխադրի Ամստերդամ և  
զրանց վաճառքից գանձվելիք գումարով զենքեր և այլ պարագաներ  
ձեռք բերի Աստրախանում կազմակերպելիք իր հեծելազնդի համար<sup>1</sup>:  
Հավանական է, որ Օրինն համաձայնություն էր ստացել այս մասին և  
Իրանից վերադառնալիս համապատասխան գումարի ապրանք էր  
գուրս բերում, առիթ տալով վերը հիշատակված մեղադրանքների  
ստաշացմանը:

Նման ապավորություն կարող էին առաջացնել նաև Օրինի մի-  
շարք ձեռնարկումները: 1709 թվականին վերադառնալով Սպահա-  
նից Ծամախի՝ նա հաղորդում էր, թե Գիլանի և Մազանդարանի  
քսան ընտանիք, որոնց մեջ 76 հոգի մեռաքսապործներ, կրոնա-  
կան հալածանքներից նեղված, ցանկանում են Ռուսաստան տեղա-  
փոխվել: Սրանց համար նա Ռուսաստան է փոխադրում 26 հակ-  
րոժոժ և մեռաքսապործության համար հարկ եղած գործիքներ ու  
սարքավորում: Օրինն սրանով միայն ընդառաջում էր ցարի ցանկու-  
թյանը. հետագայում Պետրոսը հայ մեռաքսապործներ էր հրավի-  
րում Ռուսաստան:

Դիտելով իրեն ոչ միայն պապի, այլև ցարի կողմից Իրան  
հղված էլշի<sup>2</sup>, Օրինն իրեն իրավունք էր համարել զբաղվելու ուսս  
վաճառական Միխայիլ Պոպովի գույքերը հայտ բերելու և պահան-  
ջելու խնդրով: Նրան հաջողվում է այդ վաճառականի հաշվին  
ստանալ 2000 ուսրլու ապրանք և 6000 ուսրլի փող: Վերադառ-  
նալով Իրանից Աստրախան, Օրինն հայանեց, որ ստացած 6000

<sup>1</sup> Эзов, *հույն տեղում*, №№ 141 և 144:

<sup>2</sup> Հետագայում Օրինն այս խոսքերով էր հիմնավորում իր այդ հայացքը.  
«И приехав в Низовой пристани в Шемахе посланником он назывался  
для того, что от царского величества и паписты». *Տե՛ս* ЦГАДА, фонд  
Персидские дела 6/и, л. 8р:

ուրբլին ծախսել է՝ զնկելով այլևայլ ապրանքներ, ձիեր և մասամբ էլ այդ փողերով հոգացել զհասպանություն կարիքները<sup>1</sup>։

Այլուստ ևս հայտնի է, որ ցարին և Մոսկվայի հովանավորողներին նվերներ անելու համար Օրին զնկել էր Իրանում «խաս» ձիեր, իրանական և հնդկական զորքեր ու մետաքսազորվածքներ, ազնիվ զիններ՝ Շիրազի և այլ տեղերի՝ «թէ շուշայով և թէ սոշկով», վազրի և լուսանի մորթիներ, սուրճ, մրգեղեն, բաղցրեղեններ (շաքարլամա) և այլն<sup>2</sup>։ Նվերների մի մասը ձեռք էր բերված հավանորեն համակիր հայ առևտրականների, Ղարաբաղի մելիքների և Օրիի հետ Ռուսաստան մեկնելու համար պատրաստված Սուլթի կաթողիկոսի և յուրայինների միջոցներով։ Սրանից զատ Իրանից Մոսկվա տանելու համար Օրին տրամադրված նավի վրա բարձվում էին նաև պարսից բարձր պաշտոնատերերի կողմից Պետրոս Մեծին նվաճած նվերները<sup>3</sup>։ Սակայն բոլոր այս կարգի գործառնությունները շարամիտ պրուցների աթիթներ մատակարարելով Օրիի հակառակորդներին, պատճառ չեն տալիս անձնական գոհարերություններով չի նրա գործունեության մեջ նշմարել շահագիւտական նպատակներ։ «Գլուխս և ապրանքս թագավորին է. չես այնորիկ ինչպէս հրաման է և ամբ կանէ՝ կամք իւրն է», — թելադրում էր անկեղծութեն Օրին 1711 թվականին Նիզարաղից ցարին ուղղած իր մի զբոսիցան մեջ<sup>4</sup>։



Օրիի իրանական առարկությունը հանդիսանում է նրա գործունեության վերջին էտապը և միաժամանակ զոցում նրա կյանքի վերջին արարը։

Տեսանք. որ տակավին 1709 թվականի սեպտեմբերին էր նա պատրաստվում Ռուսաստան վերադառնալու Բացի շքեխոմբի մարդկանցից և մետաքսազորք ընտանիքներից, պիտի նավ բարձվեր նրա «ապրանքը»։ Ուստի և զիմում գրեց Մոսկվա՝ կարգադրել Ղազանի և Աստրախանի վոյեյոզա Ապրաքսինին՝ հաջորդ տարվա գարնանը շորս փոխադրանով ուղարկել Նիզարաղ։ Պահանջվածի տեղ ստացվեցին մի «շմաք» (ШНЯКА) և երկու փոքրիկ տոպաստանավ։ Օրին

<sup>1</sup> ЦГАДА, Фонд Персидских дел, б/н, л. 9р:

<sup>2</sup> ЭЗОВ, նույն տեղում, № 169:

<sup>3</sup> Տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1950, նոյեմբեր-դեկտեմբեր համաթում, Ա. Արբահամյանի հրատարակած վավերագրերը:

<sup>4</sup> ЭЗОВ, նույն տեղում, № 167:

ստիպված եղավ ձիերն Աստրախան ուղարկել ցամաքով: Էրա-  
 ժարվելով բոլոր արևոստափոյններին հետապահելն փոխադրելու  
 մարից, նա բացասություն արեց միայն 12 սևաքաղցրձ, վար-  
 պեանների համար, որոնց տեղավորեց ուղարկված նավախների վրա՝  
 ապրանքների մնացած մասի հետ: Օրին և կախողիկոսը տեղ արա-  
 վեցին «շամարում», որը սակայն տեղնուտեղը փուլ եկավ՝ ծովա-  
 մուշն անելով բարձրած ապրանքը: Քանի որ փոխադրելու ալլ  
 միջոց չկար, ուղեորները ափ դուրս եկան՝ հեռաձգելով մեկնումը  
 մինչև նավարկության հաջորդ տարվա սեզոնը: Տուրպեր մի ճաչոցի  
 վերջում պառկել են 1711 թվականի հունվարի 25-ին եռաչի կախ-  
 ցիկոսի ձևերով գրված և նրա կարճատեղ կնիքով վավերացված  
 աչս տուգերը. «Յիսուս Քրիստոսի ծառայ Եռաչի կախցիկոս  
 Ազուանից սրբոյ Աթոսայն Գանձատարայ ի հիճկ (1711) թուխ հա-  
 յոց չունվարի ԻՆ (25) հանդիպեցա չի գեօղս Ղարազուրիլու բան-  
 ցի կամէի նաւել չեքիբրն ըսուսաց, և բա խնդրոյ ըմամնոս քի-  
 խաչին զայս սուղ ինչ յիշատակարանս զժաղբեցի ձեռամբ իմով  
 ի փառս Աստուծոյ որ է օրհնեալ չախեան, Ամէն»<sup>1</sup>:

Միայն 1711 թվականի օգոստոսին է, որ Օրին և կախցիկոսը  
 ժամանեցին Աստրախան: Բայց այստեղ նույն օգոստոս ամսվա  
 վերջին վրա հասավ Օրին հեղափարձ մահը:

Կրուշինսկին, որը Նիդարադից միացել էր Օրին և եռաչի կա-  
 քիկոսի ուղեկցացույթյանը և աչս պահին զանվում էր Աստրա-  
 խանում, հաղորդում է. «Ինձ հետ միասին վերադարձած լինելով

<sup>1</sup> Հայկական ՍՍԽ Մտեկնագրան, Գուր. Տ. Մկրտչյանի արխիվ. թղթ.  
 № 18, գաղ. № 13: Փորք-ինչ եզձված ձեռով նա չն փկայա թյանը հրատարակ-  
 ված է Մ. Վ. Բարխուդարյանի «Ազգանից երկիր և գրաչիր» աշխատու-  
 թյան մեջ Թիֆլիս, 1893, էջ 265 և հա.:

<sup>2</sup> Կրուշինսկու՝ Աստրախանում լինելու մասին, առանց նրա անունը առ-  
 րու, հաղորդում է նաև Մինաս վարդապետը, որը գրում է, թե եռաչի սրա-  
 բխարից և իր վարչապետներից զատ Աստրախան ուղեորներու համար Օրին  
 հետ Նիդարազում զանվ) էր նաև մի «կախցիկ մանքեր ժեղգիտ» (Յ Յ Օ Յ,  
 նույն տեղում, № 192): Մեկնելով Աստրախանից Մոսկվա՝ Կրուշինսկին աչ-  
 ցելի և մասիկ ծանոթություն էր հաստատել Մինաս վարդապետի հետ: Վեր-  
 չինիս մասին նա գրում էր. «Մինաս վարդապետը ինձ հետ լավամանով  
 Մոսկվայից և լավ կախցիկ («apprime catholicus» և Օրին մահից հետո նրա  
 գլխավոր կատակատարը, հանգուցյայ Պետր Ալեքսեևիչի շնորհիվ կարողացավ  
 ետ ստանալ Օրին գովաղի օպան նրա անձնական իրերը, որոնք բանագրա-  
 վել էին՝ համարելով պետական գանձարանի սեփականություն» (Tragica  
 historica, § 166), Կրուշինսկու և Մինաս վարդապետի շրջով ծանոթություն»  
 հանգամանքը առիթ է առնիս կարծելու, թե Օրին մասին նրա հետագայում  
 կատարած ուղղումների ու լրացումների մի աղբյուրը կարող էր եղած լինել  
 նաև Օրին մերձավոր գործակիցը:

Աստրախան՝ Օրին ավարտեց այդպեղ իր կյանքի վերջին արարը և մերժելով հայ եպիսկոպոսին (խոսքը վերջին հազարյուցյան մասին է, անշուշտ), մեռավ սրպես անհուզող կաթոլիկ, 1711 թվականին: Այսպիսով, այն մարդը, որ քաղաքական շարժառիթներով կյանքում նախապատիվ էր համարել պահել իրեն կամ ձևանալ սրպես հերետիկոս, կամեցավ մեռնել սրպես բարեպաշտ մի «անձ»:

Օրիֆի «հերետիկոսություն» մասին արված ակնարկը վերաբերում է գեապանադնացության ժամանակ կրոնական նեղմտություններ ու բացառություններ մերժող նրա վարքադժին, որ այնքան մեծ հուզում էր առաջացրել մոլեռանդ միսիոներների շրջաններում:

Ռուս պաշտոնական գրությունների համաձայն, Օրիֆի թաղումը անելի էր սենեկ՝ Աստրախանի հայ եկեղեցու բակում, յուսավորչադավան եկեղեցու ձևով: Պիտի ենթադրել, որ Սասյի կաթողիկոսը և նրա հետ ժամանած Աղվանից եկեղեցականները թաղման կարգ կատարելով, հարդանքի ատրք էին մատուցել տնօրենների մեռած հայ քաղաքական այս գործչին, որը՝ անձնապես լինելով հավատացյալ կաթոլիկ՝ ի վերջո խախտել էր դարերի տրադիցիան՝ ղնելով հայ ազատագրական շարժումը գաղանարանական բացառությունների հաղթահարման շավիղի վրա: Այնուամենայնիվ Օրիֆի և Մինաս վարդապետի անձնական կրեդոն ակներև է դառնում ոչ միայն Կրուշինսկու վկայություններից, այլև վերը բերված ոչնի փաստից, որ անգամ իրենց գործունեության այս ժամանակամիջոցում մրանք ձեռնարկում էին հայ-կաթոլիկ վանք հիմնել Թերեք գետի վրա:

Ինչպես Օրիֆի ծնունդը, այնպես էլ նրա մահը ծածկված է մրթություն քողով: Կրուշինսկին չի բացահայտում նրա մահվան պատճառը, իսկ Ղազանի և Աստրախանի փոչևողա Ապրաքսինը պաշտոնական իր հազարյուցյանների մեջ հնարավոր է համարել

<sup>1</sup> „... Astrachanum demum una mecum rediens, ibidem ultimam scenam vitae peregit, reiectus Armenorum Episcopis, Catholice mortuus anno 1711. Scilicet qui, vel vivere, vel simulare haereticum in vita, ex politiciis motivis praeferebat, sanctius mori voluit“. „Tragica historia“ § 263.

Եթե այսպեղ ակնարկված հայադավան «եպիսկոպոսը», որի ձեռքից Օրին չկամեցավ հազարյուցյունը բնդունել, Սասյի կաթողիկոսը չէր, թերևս եղած լինի սրան Ռուսաստան ուղեկցած Եղիշե առաքել Վանքի վանահայր Հոհան վարդապետը, որի մասին հիշատակություն կա Ա. Աբրահամյանի հրատարակած և մեր կողմից փոքր-ինչ առաջ նշված վավերագրում:

<sup>2</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, №№ 180 և 181:



արձանագրել սոսկ «պատական զեպանորդի» վախճանը<sup>1</sup>: Տարիներին տոհարկի լուսվյունից հետո, 1736 թվականին, Մինաս վարդապետը իր մի զեկուցադրի մեջ նշում էր, որ նշանավոր իր ընկերը զեզակուր էր արվել<sup>2</sup>:

Օրիի մասվան ժամանակ Աստրախանում գանված նսայի կաթողիկոսի՝ 1721 թվականին Պետրոս Մեծին ուղղած մի գրությունից պարզ է գրեթե, որ վարդապետի վկայությունը նամատատասխանում էր իրողությունը: «Մեր մեծազգի և մեղիք զտատ և ձեր մեծություն էլ չի կարգեալ Խորալէլ Օսին, — գրում է նսային, — չորժամ եկն այս կողմս ամենայն խորհրդեան մերոյ նախ և զև և այս կողման ամենայն զիմաց էլ ու մուան իմացաւ, թէ ծովեղերաց և թէ ցամաքայնոց, թէ զօրաց և թէ հեծելոց և թէ ամեն կողմանց, որ մի միտջէ չի գրուիլ, ոչ ժամանեաց ի գուան արքունի, որ ազգ ամեւէր մի բստ միտջէ, այլ կանապարհիմ շառ նախանձառու մարդիկ այլ կերպիւ մահացուցին զնա: Այլ ընկեր նորին Տիկրածուակցի (sic) Մինաս կաթողիկոսն, զոր բազում ժամանակ է ի գրան արքայի, նա չառնեալի տեղեակ է այս բանից անշեւոց...»: Պիտի կարծել, որ Մինաս վարդապետը կարող էր «տեղյակ» գործած լինել Օրիի մասվան մասին ոչ միայն կրոնականաց, որի հետ հանդիպել էր Մոսկվայում, այլ նսայի կաթողիկոսից, որին այցելել է 1716 թվականին Գանձասարում:

Իր գրություններից մեկում Օրին նազարդում էր, որ տակավին Շամախում գանված պահին չորս անգամ զգուսվյուն էր տեղի անեցել իր կայարանում: «Յորժամ կիրակի օրերն պատարագ զնայի. եկած ժամանակն տեանի, որ թագաւորական տպրանքն շատ իքմին (է) վեր առած: Այս պատճառես Ղամպար անուն արեալն բանեցի, հափս արի (—ձերբակալեցի), երկու անգամ գամչի տալ առի, երեք անգամ սրտին կրակ տալ: Նա էլ վախուն և ցառի կսկծուն շատ թորքեր մատնեց: Զնսքա էլ բերին զնճիլն արի»<sup>3</sup>:

Սակայն զեպանի գուցը միայն արտը Ղամբարին և նրա ընկերներին չէր գալթակղեցրել: Նիզարաղից ուղարկած իր զեկուցադրերում Օրին գանգատվում էր նաև իր հետ միասին Իրան ուղևորված կապիտան Զախարիաս Վիշտակի ու նրա կնոջ զիշտախչ վարքի մասին: «Գուսվյունը, — նազարդում է Օրին, — Շամախի աշքար շարի

<sup>1</sup> Յ Յ Օ Յ, նույն տեղում, № 305, § 4:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Մեր Հայ-ուս օրեկնատացի ծագման խնդիրը, հաղելված № 14:

<sup>4</sup> «Էջմիածին» (ամսագիր), 1950, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 73:

պատճառն այն է, որ չլինի թե փախչեն թուրքաց խմամն մանուկն և կամ հաւատն ուրանան, թագաւորական ապրանքն կորչի և հաւատոյ պակասութիւն լինի»<sup>1</sup>: Հասնելով Նիզարադ, Օրին խուզարկում է Վիշտոկի իրերը և հայտնաբերելով կողոպտվածի մի մասը, ձերբակալում է և Աստրախան հղում կապիտանին ու նրա կնոջը<sup>2</sup>: Սակայն հասնելով Աստրախան, կապիտանը հովանավորութեան է դրանում վոյսոգա Ապրաքսինի կողմից, վերջինս ոչ միայն ազատ է արձակում կապիտանին, այլև յուրացնում դեսպանի տեղ հասած ապրանքի մի մասը:

Դեռևս կուսիկենցն էր դանդաղվում, թե ցարական վոյսկոզաները մեծ նվերներ ((ГОСТИНЦЫ) են պահանջում Իրանից եկող ապրանքատերերից և այդ պատճառով առևտրականներին նեղութեան տալիս ու նրանց ետ պահում ճանապարհից<sup>3</sup>: Վոյսկոզաների իշխանութեան չարարիւմը հարատևում էր նաև Օրիի ժամանակ: Ապրաքսինը ոչ միայն բացել ու մաքսել էր դեսպանի ապրանքը, այլև յուրացրել Իրանից բերված «բրաս» ձիերից շորսը<sup>4</sup>: «Մեր քարտուղար Սիմոները և ուրիշները Աստրախանից գրել են ինձ, — հաղորդում էր Օրին, — թե շատերը կամենում են շարքի ու փորձանք պատճառել քեզ, հետևելով Պետր Մատվեկիչի (իմա՝ Ապրաքսինի) խոսքին, ցարական մեծութեան ուկազին շեն էլ նայում և այդ ամենը՝ գոյ կապիտանի պատճառով»<sup>5</sup>: Այս ամենը Օրիին անհարմար կացութեան մեջ էին դնում նաչի կաթողիկոսի առաջ: «Ազգանից երկրի պատրիարքն մեզ հետ էր, — հաղորդում էր Օրին ցարին, — պիտի որ գա չերկրպագութիւն մեծի թագաւորութեանդ, սա մեզ մօտ, մեք հալաչ Հայոց երկրումս, այս խօսքերս որ եկաւ մեզ մեծ ամօթանք եղաւ տեղս»<sup>6</sup>:

Հետագայում Մինաս վարդապետը մեղադրում էր ընչաքաղց Վիշտոկին՝ Օրիի փողերն ու թանկարժեք իրերը թալանելու մեջ<sup>7</sup>, հարելով նաև, որ Օրիի ապրանքների մի մասն էլ զավթել է Ապրաքսինը<sup>8</sup>: Պատահական չէ, անշուշտ, որ Օրիի մահից հետո վերջինս լավ լեզու չէր բանեցնում «պապական դեսպանի» մասին, ըստ որում

<sup>1</sup> «Էջմիածին» (ամսագիր), 1930, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 74:

<sup>2</sup> Նույն տեղում, այլև Ձ 3 0 B, նույն տեղում, № 171, § 12:

<sup>3</sup> „Армяно-русские отношения“, I, էջ 40, 47, 66, հմտա. նաև էջ 127, 204 և հա.՝

<sup>4</sup> Ձ 3 0 B, նույն տեղում, №№ 67, 169, 171, §§ 12, 13 և № 169:

<sup>5</sup> Նույն տեղում, № 171, § 13:

<sup>6</sup> Նույն տեղում, № 167:

<sup>7</sup> Նույն տեղում, № 192:

<sup>8</sup> Նույն տեղում, №№ 194 և № 305, § 4:

իր հերթին վկայակոչում էր Վիշտոկին, որն իր հասիշտակութունները ծածկելու համար շփամնավորված մեղադրանքներ էր շարաում Օրիին և Աստրախանի նավերի կապիտան Ռենդելին, նրան, որի մասին Օրին ինքն իսկ գրում էր թե՛ «ոչ ծովու բան գիտէ, ոչ նաւի. մէկ հին փառած շմար է ուղարկել, այնչափ ապրանսց կորչիին պատճառն նա է... Թէ թագաւորական և մեր թաւուց կորած ապրանքն պիտի որ ևս նորանից ուզեմ»<sup>1</sup>:

Պետրոս ցարին ուղարկած իր մի այլ գրութեան մեջ նստչի կաթողիկոսը Օրիի մահվան պատճառ հանդիսացած այս մարդկանց կողմն է ուղղում գործյալ հետաքննողի ուշադրութունը: Հայտնելով, որ ինքը 1711 թվականին Օրիի հետ եկած է եղել Աստրախան Մոսկվա ուղևորվելու նպատակով, նստչին շարունակում է՝ «գիտաւանն անդ մեռաւ և դամենացն ինչս նորա և մեր ցիր ու ցան արարին. և ոչ սք շունէաք ասպնջական և ծանոթ, գարձեալ գարձաք յետս և եկաք յերկիրս մեր»<sup>2</sup>: Նույնիմաստ վկայութիւն է պարունակում իր մեջ նաև սեպտիբ այն արձանագրութիւնը, որ կազմել էր Օրիի պարտքերի մասին նրան Աստրախան ուղևկցած ազարակցի Գասպարի որդի Մեկքումը. սրա վկայութեամբ Օրիի ապրանքների կեսը (կապիտան Ռենդելի պատճառով) ծովումն էր կորել-փչացել. իսկ մնացածը «ըռուսի յերկրումն մեծամեծ փչացուցին և որն թագաւորական՝ քաշեցին յինք առին՝ գերայ թագաւորական էլ փող կայր Իսրայէլին հետ»<sup>3</sup>:

Կասկած չի մնում գրեթե, որ Օրին զո՛հ էր գարձել իր փսկ կողմից ամբաստանված այն մարդկանց, որոնք կամենալով խուսափել պատասխանատվութիւնից իրենց գործած մի հանցագործութեան համար, նրան լուսնեւու համար շէին բնկրկել մի այլ, ավելի ծանր հանցագործութեան առաջ:

<sup>1</sup> Յ 3 0 8, նույն տեղում, № 169:

<sup>2</sup> Նույն տեղում, № 205:

<sup>3</sup> Տէ՛ս մեր Հայ-ուսու օրիննապիտայի ծագման խնդիրը, հավելված № 7:

## Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Օրիկ բնութագիրը: Նրա տեղը հայ ազատագրական մտքի և հայ ազատագրական շարժումների պատմության մեջ: Օրիկ և նրա ժամանակը: Գաղափարական առեղծում հետևողների հետ: Օրիկ գործունեությանը այսօրվա գիտակեանքը:

XVII—XVIII դարերի արանքում հանձին Օրիկի աստղարկի իջադ հայ նշանավոր մի գործիչ, որի համար Հայաստանի ազատագրման հարցը դարձավ համասու ու եռանդուն պայքարի խնդիր:

Փամանակակիցները շէին ժխտում Օրիկի խորագիրտույթունը, նրատուկացի նրա բարեկրթութունն ու զիվածագիրտական գործունեութուն համար ունեցած նրա ունակութունը: Պիտուցի կուրֆյուրատը զրվատում է նրա անձնվիրութունն ու խելքը, նրա ճարտկութունն ու «անհամեմատելի գործունակութունը»: Ասպետական բնավորության և կիրթ մտքի տեր մի մարդ, ինչպես վրաց թագավոր Արշիլը, համակիր էր նրա նպատակներին և հանձնարարում էր նրան որպէս հայ և վրաց ժողովուրդների ազատագրման գործին ծառայող անկեղծ ու հավատարիմ իր բարեկամի: Օրիկ անձնական հաջողութունն անգամ մարդագետ ու սրատես Պետրոս Մեծի մոտ ասպարուց է, որ նրա պահվածքը համոզիչ էր, վարքագիծը՝ նպատակաղեկ:

Բնկալուն և արագամիտ՝ նա ուներ փորձված բանավարի ու ճարտրիկ կոնսպիրատորի ավյալներ: Տարակուսելի է նրա գրագիրտության շափը, բայց ակներե բաղմակիցմանի նրա փորձը, կենդանի և գործնական խելքը, բանուկ և շրջահայաց միտքը: Լուսկայ էր, երբ անհրաժեշտ էր, պերճախոս՝ երբ պահանջվում էր այդ: Եռաքի ջերմությամբ և գատունների ճկունությամբ կարողանում էր համակել նրանց, սրունց գործակցությանը կարիր ուներ:

Օրիկն գործում էր մի ժամանակ, երբ լավ էր համարվում այն գիպլումարը, որը կարողանում էր «չեղածը ձեռացնել որպէս կգած

և, քնդհակառակը, իրօք եղածը վարագուրել որպես շեղած» («Simulantur, quae non sunt, quae sunt vero dissimulantur»): Օրբի երբեմն տարօրինակ թվացող վարքագծի բացատրությունը պիտի որոնենք նրա ժամանակակից դիվանագիտության իշխող նորմերի և անելիքի նպատակահարմարության մասին ունեցած համապատասխան նրա բմբոնման մեջ: Բոլոր պարագաներում նրա վարձագծի մեջ բացակայում է անձնական շահախնդրության արատը, որի անկայությունը բախտախնդրության երանգ կարող էր հազուդեպ նրա դիվանագիտական դիմափոխություններին:

Նրա նախաձեռնությունների ու բանավարությունների մեջ անձնականը ստորագրված է հանրաշինին և երեսակայականը՝ իրականին: Մի գործիչ էր նա, որի հորդ եռանդն ու աշխույժ խառնվածքը տողորված էր հայրենի երկրի բարօրության նկատմամբ ունեցած անկեղծ ձգտումով և ազատարարչության բուն նպատակասլացություններ: Իրեն ոգեշնչած գաղափարների կենսագործման համար Օրբին գոհ բերեց իր ունեցվածքը:

Օրբի դիվանագիտական պրակտիկան հիմնականում կենում էր հայրենի երկրի և միջազգային հարաբերությունների իրական վիճակից: Երկարամյա թափառումներից հանած դիտողությունները և վառ երեսակայությանը զուգակցված ամուր գործնականությունը միջոց էին տալիս նրան՝ քաղաքական իր հետանկարների շենքը կառուցել փաստերի ատաղձով և միաժամանակ հարգարել նրա ճակատը ֆանտաստիկ դարդարանդակներով: Ֆանտաստիկան այսպիսի պայմանակաճն այն սուտն էր, որի մեջ ծրարված էր նրա քաղաքական ճշմարտությունը՝ Հայաստանի ազատագրման անշեղ ձգտումը:

Առաջին մարդը չէր Օրբին, որ տարվել էր Հայաստանի ազատագրման խնդրով: Նրա մտահոգությունների գաղափարաբանական հանդույցը ջանացինք լուծել՝ բննելով կանխագուշակությունների երանգ ստացած ազատագրական հին մի լեգենդ, որի սկզբնավորությունը գալիս է բյուզանդա-արարական պատերազմների ու դրանց հաջորդած խաչակրաց արշավանքների ժամանակներից: Հայ ժողովրդի պատմությանը համընթաց դարից դար և հորիզոնից հորիզոն հարատևել ու հաժել էր այդ լեգենդը՝ հասնելով Օրբի ժամանակաշրջանին: Հետաքրքրականը ինքյան լեգենդը չէ, որի վարգացման ապրուն օղակները փորձեցինք հայտ բերել ու միակցել մեր հետազոտած պատմության ամբողջ ընթացքի հետ: Հետաքրքրականը լեգենդի վարգացման հարաճուն պատկերն է, նրա «միջանցիկ գործողությունը», դիտված միջնադարյան Հայաստանի

պատմութեան հետախորրի վրա և միահշուտված հատկապէս հայ ազատագրական շարժման միջնագարւոյան բոլոր ելեկէջների հետ:

Միայն շոշափելի իրողութեանը չէ, որ կարող է ստանալ պատմական փաստի ուժ. լինում են նույնիսկ առասպելներ, որոնք պատմական գիտութեան համար հանդիսանում են նշանակալից փաստեր: «Ամեն մի դարաշրջանի տեսական մտածութեանը... — գրում է Պր. Էնգելսը, — պատմական արգաւելք է, որ տարրեր ժամանակներում ստանում է տարրեր ձեւեր և ընդ մինն նաև՝ տարբեր բովանդակութեանը»: Եթէ տեսական մտածութեանը պատմական զարգացման հարափոփոխ ընթացքի արդշունք է, ապա ավելի ևս մշտնջողակն մտածութեան մշտա տեսակները և զբանց թվում նաև դրա մի նստվածքը՝ լեզենդների, առասպելների ու տեսիլների ձև ընդունած պատմական ավանդութեանը:

Ահա թէ ինչու լեզենդի զարգացման թելն անցնում է հայ ազատագրական մտքի միջնագարւոյան էտապին նվիրված այս հետազոտութեան միջով՝ սկզբից մինչև վերջ: Լեզենդի լայամտութիւնը ներթափանցում է «Պրվագների» բոլոր մասերը, ամեն անգամ բացահայտելով ազատագրական մտքի պատմութեան սրել: Տնոր ինտոնացիա կամ սրէէ նոր սրակ:

Հետեւելով մեր շարագրանքին, դժվար չէ դիտել, որ ազատագրական լեզենդի յուրաքանչյուր օղակը պարունակում է իր մեջ Հայաստանի կացութեան ըմբռնելու կամ նրանից ելք գտնելու համար պատմական կոնկրետ հանգամանքներում դործ դրված ջանքերի այս կամ այն դրսեորումը: Լեզենդի բազմագարւոյան վերսիաները չեն հանդիսանում դրիչների ձևերով կատարված ազարտումներ, այլ հայ պատմական կյանքի յուրօրինակ արտացոլումներ, որոնք պիտի ուսումնասիրվեն և լուսարանվեն թէ՛ ընդհանուր-պատմական իրողութեան և թէ՛ սոցիալ-բազարական անմիջական իր շրջադրութեան հետ լծորդված:

Հասարակական տարբեր խմբավորումները միապէս չէին ընկալում իշխող իրադրութեանն ու այն պաշտպանելու կամ հաղթահարելու հնարավորութեանը: Միապէս չէին անդրադառնում յիսկական կյանքն ու նրա հեռանկարները նաև ազատագրական լեզենդի մեջ: Զարգացման առանձին էտապներում կամ հասարակական հատուկ շրջադրութեան մեջ դիտված՝ ազատագրական լեզենդը բազմազան իր վերսիաներով հայտնվում է որպէս պատմական կոնկրետ

1 Ф. Энгельс. Литт.-ѳилос. М., 1952, էջ 311:

իրադրության և հասարակական որոշ արամադրության կողմնացույց: Լեզենդի բովանդակության ու փոփոխուն պատկերացումների մեջ նշմարելի են ժամանակի պատմական հոլովույթը, հասարակական բաղձանքներն ու հուսացումները, դրանց բեկբեկումները, հաճախ հակադարձ ու իրարամերձ:

Ծայր անելով հայ ֆեոդալների միջավայրում, համակերպվելով հայ քաղքեմի վերնախավերին կամ ծառայելով աշխարհիկ կամ վանական շրջադրության մեջ արժարժված եկեղեցական և քաղաքական նպատակների՝ հայ ազատագրական լեզենդը կամ, ավելի ճիշտ՝ մասսաների պահանջներին համակերպված նրա տարատեսակությունները երբեմն օգտագործվում էին նույնիսկ ժողովրդական վարի խավերի ձգտումներն արտահայտելու համար:

Վերջին հաշվով, հայ ազատագրական լեզենդի բազմադարյան էվոլյուցիան հավաստում է Ֆր. Էնդելսի մի այլ գրույթը. «Ընդհանրապես, — ասում էր գիտական սոցիալիզմի այդ ուսվիրան, — իդեոլոգիայի բոլոր բնագավառներում ավանդությունը հանդիսանում է կոնսերվատիվ մեծ ուժ: Սակայն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում պատկերացումների այդ պաշարի մեջ, որոշվում են դրանք առաջ բերող մարդկանց գաղափարգալին, այսինքն՝ անտեսական հարաբերություններով»: Արտացոլելով իր մեջ հայ ազատագրական շարժման միջնադարյան կառավր, լեզենդի մեջ կուտակված «պատկերացումների պաշարը» ենթարկվում էր վերախմբագրումների ու խմատափոխումների, վերջին հաշվով արտացոլելով շարժման մեջ մասնակցող գաղափարգրի կամ խմբավորումների նյութական կամ քաղաքական այլևայլ շահախնդրություններն ու արամադրությունները:

Միջնադարյան Հայաստանի և Անդրկովկասի անտեսական դարպացումն ու երկրի ուղմա-քաղաքական պաշտպանության կարիքը հայ ժողովրդի տարրեր խավերի մեջ հաճախ առաջացնում էր այն գիտակցությունը, որ հնարավոր չէ ապահովել հայկական տարածքաա երկրամասերի գոյությունն ու զարգացումը, եթե իրենք չմիավորվեն վրաց կամ աղվանից ժողովուրդների համապատասխան հատարակախավերի հետ: Եթե, ելնելով այս գիտակցությունից, այդ ժողովուրդների վերնախավերը հետամուտ էին իրենց զենքին հպատակեցնելու բոլոր տեղական ֆեոդալներին, հայ ժողովրդի վարի

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс. Избранные произведения, М., 1918, էջ 380:

խավերի կողմից լինում էին ջանքեր հարևան ժողովուրդների հետ միացած պայքարի ելնելու թե՛ տեղական ֆեոդալների և թե՛ սպառնացող կամ փշխող օտարատիրություն դեմ: Գասակարգային պայքարի դրոշմը առկա է հայ ազատագրական մտքի ոչ միայն ներքին, այլև արտաքին կողմնորոշումների մեջ: Ինչպես հայ ֆեոդալական տիրույթների կազմավորումը, այնպես և, հետագայում, դրանց կազմալուծումը հաճախ պայմանավորված էին քաղաքական շրջադրությունների փոփոխություններով կամ կատաղի այն բախումներով, որ տեղի էին տենճում հայ իշխող վերնախավերի և հայ ժողովրդի «ռեյտլուցիոն օպոզիցիայի» միջև: Վերջիններիս դեմ տեղական և օտար իշխողները երբեմն հարդարում էին պայքարի ընդհանուր ճակատ: Նվաճողական ընդարձակ ծրագիրներ իրագործող աշխարհակալությունների բախման հանգամանքներում հայ ֆեոդալները պաշտպանության նեցուկներ էին սրճում իրարամարտ արարների և հույների, սելջուկների և ֆրանկների արանքում: Իրենց հերթին հայ ժողովրդական մասսաների ազատագրական ջանքերը երբեմն արձագանքում էին Արևելքի կամ Արևմուտքի ժողովրդական շարժումներին, երբեմնակի ստանալով ժողովրդա-ազանդավորական սարածուն բնգվումների բնույթ:

Ֆեոդալական կամ ժողովրդական ուժերի ազգամիջյան համագործակցության միաված այս տեղեկեցները հաճախ ստանում էին իրարամերժ ուղղություններ: Օտար իշխողների դեմ ուղղված ֆեոդալական ուժերի համախմբումն ու միավորումը երբեմն շուտ էին գալիս «սեփական» ժողովրդի դեմ, որ հանդիսանում էր դրսեկ նվաճողների կամ առանհին իշխողների դեմ ծավալվող ազատագրական մաքառումների առավել զորեղ և-առավել տոկուն զսպանակը:

Միջնադարյան Հայաստանի ազատագրական զաղափարախոսության ստեղծումը և մասնավորապես հայ ազատագրական լեզունդի կազմավորումն ու զարգացումը կրում են հակասական այս իրադրության կնիքը: Հաճախ արժարժվում է մի մտայնություն, որի առանցքը Հայաստանի քաղաքական ինքնորոշման հոգան է, «Հայաստանի թագավորությունը» վերականգնելու այս կամ այն կոնկրետ տեղեկեցը: Այդ մի մտայնություն է, որ դրսևորում էր հայ ազատագրական շարժման այս կամ այն հասարակախմբի յուրահատուկ դիմապատկերն ու սոցիալ-քաղաքական կողմնորոշումը:

Լեզունդի հիմնական վարիանտներն անդրադարձնում էին հայ վերնախավերի միջավայրի այն մտայնությունը, որը Հայաստանի ազատագրման հեռանկարը տեսնում էր հասկապես հույների կամ



Ֆրանկների օգնության մեջ: Նման մտայնության օրյեկտիվ հիմքը հանդիսանում էր հույների ու ֆրանկների շահագրգռությունը՝ օգտագործելու արաբների դեմ ըմբոստացող կամ սելջուկներին ուժադրող հայ ֆեոդալական ուժերը:

Հայ ազատագրական լեգենդի նախնական վերսիսները ավելի հին են, քան Հայաստանի ազատագրման ակնկալությունների այն ձևակերպումները, որ հանդիպում ենք խաչակրաց արշավանքների վերադրուկներով և միսիոներական պրոպագանդի ակնզենյուներով տոգորված ազբյուրների մեջ: Նորանոթ վերսիսներով ազատագրական լեգենդը հանդես էլ գալիս նաև Հայաստանի ազատագրման խնդրի շուրջը տեղի ունեցած հայ-արևմտաեվրոպական բանավարությունների ընթացքում: Լեգենդն, ի վերջո, երևան եկավ նույնիսկ այն բուճակցությունների ընթացքում, որ վարեց Օրին Ռուսաստանի հետ: Վերջին դեպքում լեգենդը հանդիսացավ պատմական այն օղակը, որ ձևական կապ էր հաստատում Օրին կատարած քաղաքական շրջադարձի և միջնադարյան Հայաստանի իշխող գաղափարաբանության հետ:

Օրինց հետո ազատագրական լեգենդի հին, նախամոսկովյան վարիանտները կորցրել էին իսպառ իրենց երբեմնի վարկը: Այսպես, 1761 թվականից մեզ է հասել «Յաղագս ճշմարտապատում բանից և կարգաւ իջումն սակս վեհապետութեան Հայաստանեայցս սըրբոյ եկեղեցւոյ» վերնագրված ձեռագիր մի աշխատություն, որի հեղինակը, Հովսեփ քահանա Զուղայեցին, ոչ միայն ծաղրում էր «Դաշանց թղթի» ստարանությունները, այլև հերքում Ներսես Պարթևին վերագրված տեսիլքը: Վերջինիս մասին նա գրում էր ուշուսկի. «Իսկ ոմն Մեսրոպ երեց ի շորս հարիւր թուականին հայոց ինքնարուս ստակասպաս բանիւք պատմութիւն գրէ վասն սրբոյն Ներսէսի, զոր ինչ ի ժամանակ իւր տեսեալ էր ի հենից պարսից, և զգալն փոսնդաց ի կողմանս Անախոքոյ և յերուսաղէմի: Առեալն զայն նպաստ և օգնական ստութեան իւրոյ զճէ ի վերայ սրբոյն Ներսէսի...»<sup>1</sup>:

Միջնադարյան Հայաստանի իշխող այդ գաղափարաբանությունը արտահայտում էր այն սուր դժգոհությունը, որ հայ իրականություն մեջ դարեր շարունակ բարձրանում էր: Առաջավոր Ասիայի ժողովուրդներին սարկացնող օտարակալությունների դեմ: Սակայն երբեմն նույն այդ գաղափարաբանությունը համատեղվում էր գործողությունների հետ, որոնք ոչ մի կերպ չէին բխում ժողովրդի ազա-

<sup>1</sup> Հայրիկան ՍՍԻ Մատենագարան, ձեռ. № 1793, էջ 61ր:

տադրման պահանջներից, այսպես, երբ Հայաստանի ազատագրման ակնկալությամբ հայ գործիչները ստորագրում էին հոռմեական դավանագրերը: Հարկավ նման դավանագրերով հայ բանադնացիները դեռ չէին դառնում պապի անսխալակամությանը համոզված կաթոլիկներ: Իրենց հերթին՝ Արևմուտքի շուկաներն իրենց հակոլության տակ առնելու կամ հայերին «ֆրանկ» դավանության վերաբերու հապցնելու համար Հայաստանին ազատություն խոստացող դիվանագետներն ու միսիոներները Արևելքի ազատարար & ժողովուրդների անկեղծ բարեկամներ չէին դառնում երբևէ:

Դիվանագիտության մեջ փաստերն ավելի կարևոր են, քան դիտավորությամբները: Խնդիրն այն է սակայն, որ հայերի հոգեփրկության կամ, ավելի ճիշտ՝ նրանց հոգեորսության նպատակով ձեռնարկվող դավանաբանական գործարքներին չէին հաջորդում նրանց ազատագրումը երաշխավորող քաղաքական ուսուցիչները: Այս է պատճառը, որ եթե, մի կողմից, հայ ժողովրդական մասսաները ազատություն էին սրտնում սրբելով գոտեպնդված արևելյան նվաճողների դեմ, նրանք, մյուս կողմից, թերահավատությամբ էին դրահավում խաչերով վահանավորված արևմտյան «ազատարարների» դեմ:

Հոռմեի եկեղեցուն մի անգամ հնապանդության թուղթ հասցեագրելուց հետո հայ իշխող դասերի բանադնացիները նորից և նորից էին հավաստում իրենց հավատարմությունը և ամեն անգամ տուն վերադառնում սնավաստակ: Կոսմոպոլիտ Հոռմեի օրգենները ոչ միայն անկարող էին, այլև անտրամադիր կենսագործելու արևելյան բրիտանոյանների քաղաքական փրկումը: Պատրանքի ոսկե շղթայով դամվելով պապական եկեղեցու կամ եվրոպական պետությունների սին խոստումներին՝ հայ գործիչները ի վիճակի չեղան փշրելու հայ ժողովրդին կաշկանդող քաղաքական ստրկության շղթաները:

Օրիի քաղաքական բեմելի պահին հայ ազատագրական շարժումը բնթանում էր քաղաքական-դավանաբանական նույն հունով, որը XV—XVI դարերից ի վեր ձև և ուղղություն էր հաղորդել հայ դիվանագիտական բանավարություններին: Նրա սփալցյան ծրագիրը սկիզբ էր առել հուսադատի ակնկալությունների նույն սղբյուրից, որից ջուր էին խմել նաև նրա դադափարական նախորդները: Նոր էր թերևս միայն այն, որ այս անգամ Հայաստանի ազատագրման շուրջը տարված բանավարությունների դադափարախոսական հիմնավորումը ստանում էր ավելի ներդաշնակ ձևավորում: Օրին անկեղծ էր և՛ որպես հայ-ազատասեր, և՛ որպես հայ-կաթոլիկ:

Բայց անցյալի հետքերից առավել ճշանակալից է Օրիի վերաբերմունքը դեպի իր ժամանակի պրոպրետարի պահանջները: Նրա նը պատակադրումների մեջ անդրադառնում էր իրանական ֆեոդալիզմի այն տաղանապը, որը, ծայր առնելով Շահ-Աբրահի ժամանակներից, վերջին Սեֆյանների օրերին կազմալուծման էր հասցրել Իրանի պետականությունը՝ դուռ բացելով ներքին ապստամբությունների և արտարին միջամտությունների առաջ: Օրին մերկացնում էր Իրանում իշխող քաղաքական ուժի մի ալլանդակությունը և մասնավորապես դրա անդրադարձումը հայ եկեղեցական վարչության մեջ: Այսույնաց մեղիքների ժառանգը նախանձախնդիր էր իր գասի իրավունքների ու ազատությունների վերահաստատման: Մեկիքական այդ գասը շփման որոշ կետեր ունեւ Իրանի և Թուրքիայի ուղիները շարժող հայ առեւտրականների հետ: Պակվելով հայրենիքից՝ Օրին ինքն իսկ մխրձվել էր առեւտրական գործերի մեջ և հետամուտ համագործակցություն կարեր գտել համերկրացի վաճառականության հետ: Սակայն փարելով Հայաստանի թողալորությունը վերականգնելու արագիցիսն մտաչնությունը, քաղաքականապես փոշիացած մեղիքություն և ինքնապատան վաճառականություն ձգտումներից առավել նա ի վերջո բնդատաչեց հայ ժողովրդի ինքնորոշման նորադարչան հեռանկարին: Նա գծադրեց Հայաստանի ազատագրման իրական աջն նախաշավիղը, որով քայլելու էր հայ ժողովուրդը մի ամբողջ դար՝ մինչև Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

Օրին առաչինն էր, որ մոսկովյան իր ծրագրով դուրս բերեց հայ ազատագրական շարժումն ու հայ դիվանագիտական բաժնադնացությունները կրոնադավանարանական հին փակուղուց: Նվե պֆալցյան ծրագիրը առաջ տանելու նպատակով Օրիի թղթերում հանդիպում ենք տողերի, որոնք առիթ էին տալիս կարծելու, թե հայ ազատագրական շարժումը նա ի սպաս էր դնում հայ ժողովրդին խորթ միսիոններական նպատակների և հանդես գալիս ad majorem Dei gloriam. այսինքն՝ ի փաստ պապական եկեղեցու, մոսկովյան իր ծրագրով հայերի ազատագրական սպասումները նա մոցրեց դուռ քաղաքական շրջանակների մեջ: Նրա գործածնություն այդ էտապում եկեղեցական շուրջառը կատարում էր սոսկ քաղաքական առադատի դեր: Ճիշտ է, մոսկովյան ծրագրի իրագործման համար իսկ հարկ եղավ, որ Օրին զգեստավորվեր սրպես պապական դեսպան: Սակայն այս անգամ եկեղեցու վարագույրը ծառայում էր սոսկ քաղաքական բողարկման: Մենք, — ասում է Մինաս վարդապետը, — տարածում

ենք այն կարծիքը, իբր քն ի սեր պապի է հովանավորում մեզ  
ցարը կամ՝ արտոնում հովվելու Ռուսաստանում հայ հավատացյալ-  
ներին ազգալին-եկեղեցական օրենքների ու կանոնների համաձայն  
«Սակայն, — հարում է վարդապետը, — մենք այդ անում ենք հետին  
մտքով, առաջինը այն նպատակով, որպեսզի լսելով այս մասին մեր  
ժողովուրդն ամեն տեղից հավաքվի ու գա նորին մեծության, երկիրը,  
և երկրորդ, որպեսզի մյուս թագավորները խոշընդոտ չհարուցեն նո-  
րին մեծությանը»<sup>1</sup>։

Եթե, հիրավի, քնենք Օրբի գործունեությունը միջնադարյան  
անցյալի դիտակետից, դժվար չէ համարել նրան սոսկ հայ ազատա-  
գրական շարժման արագիցիաների հերթական էպիզոն։ Սակայն  
դիտելով նրա գործունեությունը հայ նորադարյան պատմության  
սկզբնակետից, նա կպատկերաճա մեզ արպես քաղաքական մի  
ուսուցիչ, որի գործունեությունը լծորդվում է XVIII դարի հայ նշա-  
նավոր այն գործիչների հետ, որոնք բացառապես Ռուսաստանի մեջ  
էին որոնում Հայաստանի ազատագրման հենարանը։ Եթե պիտույ-  
ցան իր ծրագրով նա ուղղում էր իր հայացքը դեպի հայկական շարժ-  
ման երեկը, մտակովյան իր ծրագրով դիմաշրջվում էր դեպի շարժ-  
ման զալիք օրը։ Մի դեպքում նա կատարում էր Հայաստանի ազա-  
տագրման խնդրի լուծման միջնադարյան վերջին ապարդյուն փոր-  
ձը։ Մյուս դեպքում՝ անում այդ խնդրի առաջադրման նորադարյան  
առաջին արդասավոր բայը։ Երես գործնելով խաշակիր ասպետների  
մտապատրանքներից, հայ քաղաքական մտքի պատմություն մեջ նա  
կատարում էր լիակատար հեղաբեկում, հանդիսանալով հայ այն  
գործիչների նախահայրը, որոնք մշակեցին ու կենսագործեցին հայ  
ազգային քաղաքականության ուսական կողմնորոշման ուղեգիծը։  
XVIII դարից ի վեր դա միակ պրոգրեսիվ ուղեգիծն էր իրանա-  
կան և թուրքական բռնատիրության դեմ հայ ժողովրդի մզած ազա-  
տագրական պայքարի համար։

Առաջին հայ մարդը չէր Օրին, որը քաղաքական ակնկալու-  
թյուններ էր լծորդում Ռուսաստանի հետ։ Հայ-եվրոպական բանա-  
վարությունների շրջանակներում նման ակնկալություններ մերթ  
ընդ մերթ առաջանում էին դեռ XV—XVI դարերում։ Սակայն առա-  
ջին հայ քաղաքական գործիչն էր նա, որ XVIII դարի սկզբներին,  
վերանայելով և ճշտելով հայ ազատագրական շարժման քաղաքա-  
կան ուղեգիծը՝ բացառապես Ռուսաստանի հետ կապեց Հայաստանի  
ազատագրման հեռանկարը։

<sup>1</sup> Չ 3 0 8. նա յն տեղում, № 212, § 8:

Օրիի ձեռնկերպած քաղաքական նոր ծրագիրը և հայ-ուսու հարարերությունների պատմութեան բնթայցում այդ ծրագրի գրեւորած մեծ կենսունակութեանը նախապատրաստված էր ու պայմանավորված հայ և ուսու ժողովուրդների կուլտուրական, տնտեսական և քաղաքական նախընթաց բազմաթիւ հանդիպումներով և այդ ժողովուրդների շահերի զուգադիպման կամ ընդհանրութեան բազմաթիւ հին և նոր փաստերով: Օրին կատարեց մի շրջագարձ, որի համար նրա ժամանակ կաշին արդեն նպատատւոր նախապայմաններ: Բայց դիտե՞ք նաև, որ հայ իրականութեան ներսում իսկ այդ շրջագարձը պիտի լծորդվիր դիմադիր ուժերի ու խոչընդոտների հաղթահարման պայքարի հետ: Օրին ձեռնարկեց այդ պայքարին՝ հանդես բերելով գրա համար անսպառ եռանդ ու հնարամտութեան: Եվ կարեւորն այն չէ, ինչ նա անում էր, այլ այն, ինչ նա արեց: Նրա ուղեգիծը սկսում էր համակիրներ գտնել ոչ միայն հայ իշխող դասերի ներսում, այլև հայ ժողովրդական խավերի կողմից: Սրա խոստումն արտահայտութեանն ենք համարում ազատագրական լեզուի նոր, Օրիի սովան հետ միացող այն վարիանտը, որի ժողովրդականութեան մասին վկայում են նրա դեպքնազնայութեան մասին մեզ հասած հուշագրերը: Օրիի մահից հազիւ մի տասնամյակ անց, Պետրոսի փրանսկան արշավի ժամանակ, Ղարաբաղում և Ղախանում, ինչպես և Անդրկովկասի վրաց և ադրբեջանական մարզերում ուսական գեներալ աշակցութեան հեռանկարով թե առած ժողովրդական շարժումները պատմականորեն հավաստեցին Օրիի ուղեգծի ձեռք բերող ժողովրդականութեանը:

Շարունակելով հայ ազատագրական շարժման պրոգրեսիւ արագիցիաները, Օրին իր նպատակադրումները շահմանափակեց հայերի ազատագրման մեկուսացած հեռանկարով: Իրանական և Բուրքական օտարաախրութեանների դեմ նա ջանում էր սուքի կանգնեցնել ոչ միայն հայ և վրաց ժողովուրդներին, այլև ադրբեջանցիներին: Համարձակ ու լայնախոհ մի մտահոգացում էր այս, որով նա յարտվի արձագանքում էր հայ ազատագրական շարժման նախընթաց դարերի առավել պրոգրեսիւ քաղաքական մղումներին:

Հայ ժողովրդի պատմութեան հետագայի դաժան դասերը լիովին պիտի արդարացնեն Օրիի գործունեութեան այս կողմը, երևան հանելով նրա ուղեգծի ճշտութեանն ու կենսունակութեանը:

«Կովկասյան լեռները, — գրում էր Մարքսը, — բաժանում են հարավային Ռուսաստանը մոսկովիաների ձեռքով մուսուլմաններից խլված Վրաստանի, Անդրելիայի, Իմերեթի, Գուրիայի գեղանի նա-

հանդներին: Դրանով վիժվածի կայսրության ստները կորված են նրա իրանից»<sup>1</sup>:

Անդրկովկասյան երկրների աստիճանական միացումը Ռուսաստանին հնարավորություն տվեց վերջինիս ոչ միայն ամուր կանգնել իր ստների վրա, այլև կական քայլեր անել կովկասյան ժողովուրդների և ուսումնական ժողովրդի տնտեսական և կուլտուրական կապերն ու քաղաքական համագործակցունը ծավալելու համար: Պոկվեղով Իրանից և Ռուրքիայից՝ Անդրկովկասն ազատվում էր անգլո-ամերիկյան կիսազաղույթ դառնալու հեռանկարից, վիճակ, որին դատապարտվեցին Ռուրքիան և Իրանը, այն պետությունները, որոնց լծի տակից դուրս էին եկել անդրկովկասյան ժողովուրդները:

Տիրանալով «սեփական ստքերին», Ռուսաստանը վերջ գրեց Անդրկովկասում իշխած ֆեոդալական անարխիային, տեղական ժողովուրդներին ընձեռեց անձի, գույքի, տնտեսական և կուլտուրային զարգանալու տարրական հնարավորություն և ստեղծելով նախապայմաններ երկրի կապիտալիստական զարգացման համար: Անդրկովկասի հաշկական գավառները Ռուսաստանի հետ միացան երկաթուղիներով ու խճուղիներով: Նոսր բնակչություն ունեցող, տնտեսապես հետամնաց, մեծ մասով դեռ ֆեոդալ-նահապետական կենցաղի մեջ սուղված՝ նրանք ներգրավվեցին ապրանքաշրջանառության ու հեղափոխական զարգացող բուրժուական հարաբերությունների սլորտի մեջ: Ռուսական տիրապետությունը նախադրյալներ ստեղծեց կովկասահայերի ազգային-քաղաքական կոնսոլիդացման համար: Ռուս առաջավոր կուլտուրան բարեբար ներգործություն ունեցավ նրանց ազգային կուլտուրական կյանքի զարգացման վրա:

Այնուամենայնիվ՝ առաջ ժողովրդի և ուսումնական կուլտուրայի առաջատար դերը և Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորելու դրանով պայմանավորված դրական հետևանքները չի կարելի համարել ցարիզմի գլխավոր նպատակադրման, նրա «ազատարար միսիայի» կենսագործման արդյունք: Ցարական Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը մեծարելու նման ջանքերը ընդհանուր առմամբ չունեն պատմության քննական ընկալման հետ:

Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին օրյեկտիվորեն դիմադրած նախապայմաններ էր ստեղծում արևելահայ ժողովրդի ազգային-քաղաքական ազատագրման համար, բայց դրանով դեռ

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, IX, 42 533:

չէր նպատակադրում և չէր կենսագործում արևելահայ ժողովրդի այդ ազատագրումը: Ինչպես Անդրկովկասի մյուս ժողովուրդները, այնպես նաև արևելահայ ժողովուրդը դեռ պիտի նվաճեւ իր ազատուրջունը՝ կապելով իր բախար Թուսաստանում արժարժվող համա-ժողովրդական սեւուրցիոն պայւարի հետ: Ընդհանուր-պատմական հեռանկարների մեջ դիտված՝ հենց այս էր Արևելյան Հայաստանը Թուսաստանի հետ միացվելու ակտով սանկզմած իրադրութեան ամենագրական արդունքը:

«Այլազգիներին» ճնշելու ազգային-գաղութային իր քաղաքականութեամբ ցարիզմը հանդիսանում էր Անդրկովկասի և Թուսաստանի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև ուս և հայ ժողովրդի, ազատութեան սխերիմ թշնամին: Անդրկովկասյան ժողովուրդները ինքնորոշվեցին որպէս ազգութուններ միայն մասնակցելով ուս ժողովրդի գլխավորած ազատագրական մեծ այն պայքարին, որը վերջ դրեց ոչ միայն ցարական բռնակալութեանը, այլև երկրում իշխած կալվածատիրական և կապիտալիստական ստրկութեանը: Միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ սեւուրցիան հանդիսացավ ինչպէս Թուսաստանի բոլոր ժողովուրդների, այնպէս նաև հայ ժողովրդի բռն ազատարարը:

Եթէ միջնագործյան իրադրութեան պայմաններում խոսք է լինում հայ ժողովրդի ազատագրման շարժիչ ուժերի մասին, դրանք առաջին հերթին պիտի որոնենք երկրի գյուղական և քաղաքական մասսաների մեջ: Գերազանցորեն օտարաաւիրութեան դեմ բմբոստացած գյուղարնակչութեան կամ քաղաքներում հանդուցավորվող միջերկրային և ցեղամիջյան անտեսական հարաբերութեանների վրա էին հենվում և դրանց հետագա զարգացման քաղաքական պահանջներին ընդառաջում անգամ հայ ֆեոդալական այն աները, որոնք հետամուտ էին Հայաստանի և Անդրկովկասի միավորմանը: Երկրի պետական միավորման այդ քաղաքականութունն իսկ չէր կարող այս կամ այն շափով և թեկուզ հենց ժամանակավոր հաջողութուն ունենալ, եթէ իր կողմը չունենար գյուղական և քաղաքական հոծ մասսաների օժանդակութունը: Մասնավորապէս քաղաքները՝ որպէս սրտագրական կենտրոններ՝ աճեցնում էին իրենց մեջ հասարակական-անտեսական նախապայմաններ, որոնք մեծապէս նպաստում էին երկրի քաղաքական միավորման այն զաղափարին, որով հասկանալի էր հայ և վրաց Բաղրատունիների պետական քաղաքականութունը:

Հետագայում հայ և վրացի Բաղրատունիների Անդրկովկասի և

Հայաստանի ազատագրման ֆեոդալական իդեալին հակադրվելու էր երկրի ազատագրման բուրժուական իդեալը: XVIII դարում այդ հակադրությունը գաղափարապես արտահայտվեց Հովսեփ Էմինի մոտ. այդ մասին է վկայում վերջինիս համոզումը, թե վրաստանը կարող է դառնալ «ազատ» պետություն, եթե Հերակլը ոչ միայն համաձայնի գլխավորել անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական շարժումը, այլև համաձայնի մտցնել երկրում այն սեփորմենները, որ առաջարկում էր ինքը՝ իր դարի բուրժուական լուսավորչության գաղափարներով ներշնչված Էմինը: Օրիից և Էմինից մի քայլ առաջ անցնելով՝ նույն այդ դարում Շահամիրյանները հրաժարվում էին հին ֆեոդալական կարգերն ու դինաստիաները վերականգնելու մտքից և փայտաշուկայի հայկական նոր, կոնստիտուցիոնալ կամ սեպուբրիական պետություն ստեղծելու գաղափարներ: Հարկավ քաղաքական մտքի սահմանափակությունը հատուկ էր անգամ XVIII դարի հայ բուրժուազիայի առաջին պրոգրեսիվ ներկայացուցիչներին: Ակնհերձաբար՝ հայ բուրժուազիան բավականաչափ ուժ ու ազդեցություն չունեւր, քաղաքական շարժման համար հասունացող մյուս հասարակաշերտերը՝ քաղքենի պլեբսը, մանր ազնվականությունը և գյուղացիությունը, միավորելու ու ղեկավարելու համար: Իրենց ծրագիրներն իրագործելու համար նրանք վերջին հաշվով ապավինում էին ոչ այնքան հայ մտտանների քաղաքական հասունությունը, որքան ցարիզմի, Հերակլ Բագրատունու, հայ կղերի ու մանր ազնվականության օժանդակությանը: Նրանց զինակցում էին հայ կղերի ու ազնվականության ներկայացուցիչներից ոմանք: Ավելի ուշ, հրաժարվելով անգամ բուրժուական թերատ ծրագիրներից, Արզուիցյանն ու Լազարյանները ուստ արքունիքին ներկայացրած իրենց Դաշնագրության նախագծի մեջ հարկադրված եղան ընդգծելու նորից այն բաղձանքը, որ Հայաստանի անկախ պետականությունը կառուցված լինի մուլթոգարական հիմքերի վրա՝ «որպէս յառաջ եղևալ են ի ժամանակս թագաւորաց մերոց և Օսմանցոց և Պարսից»: Նախագծի հեղինակները նկարագրեցին անգամ ապագա հայ թագավորի կնիքը, որի վրա, ինչպէս երբեմն Արշակունյաց կնիքների վրա, «քանդակվելու էին միգլխանի արծիւլ, գառ և առչուծ...»<sup>1</sup>:

Դեպի անցյալը միաված նման տրամադրությունները խամբած չէին նույնիսկ 1827 թվականին՝ Երևանի գրավման ժամանակ: Նկա-

<sup>1</sup> Դիվան հայոց պատմություն, Դ. էջ 733 և հաւ.



րագրելով 1828 թվականի պարսկահայ ներգաղթը, կիսապաշտօնական մի տեղեկագիր, խոշոր այդ ձեռնարկության նպատակը մատնանշելուց հետո, ազդարարում էր. «Յայսմ հին խանձարուրս ամենայն մարդկության մանաւանդ ազգիս հայոց՝ խմբեցին ցրուելալք Ընդ երեսս երկրի տահմիր հայոց, և բնդ բարերար իշխանութեամբ Նիկոպալոսի առաջնոյ, յարիցէ թագաւորութիւն հայոց փառօք և ամենայն յիշատակօք իւրովք»<sup>1</sup>: Տեղեկագիրը կազմված է Հազարյաններին մոտ կանգնած մարդկանց ձեռքով: Հայկական մարդ կոչված երկրամասի սահմաններում այդ ծրագիրը կամենում էր վերակենդանացած տեսնել Հայաստանի ֆեոդալական ինքնավարությունը:

XVIII դարում հայ կղերի շարքերում երևան եկան մարդիկ, որոնք չմնացատում էին հայ ազատագրական շարժումը և նրա դասակարգախոսությունը՝ ելնելով տեսական կամ գործնական-քաղաքական գիրքերից: Ոմանք, հարելով Հայաստանի հողերը ռուսական զինքով նվաճելու բազմաթիվ կուսակից չէին շարժման ապրտամարական տակախկալին: Մյուսները, մերժելով այդ տակախկան, մերժում էին նաև ռուսական զենքի միջամտության հեռանկարը: Եթե կային եկեղեցականներ, որոնք փարելով Հայաստանի ազատագրման գաղափարին, կանգ չէին առնում նույնիսկ զինված ապստամբության մտքի առաջ, կային նաև մարդիկ, որոնք պայքարում էին ազատագրական շարժման դեմ և ուշապա կանգնում իշխող պետականության: Սակայն այս գետնի վրա հայ եկեղեցու գմբեթի տակ միայն արտացոլվում էր հայ կյանքում պայքարող գաղափարների ու խմբավորումների հակամարտը:

Ակներև է, որ սկսվել էր նոր մի դարաշրջան, ուր աշխարհանյման հին բանդագուշանքները և փրկագործման միջնադարյան լեզենդները կարգրել էին արդեն իրենց վաղեմի ձողական ուժը: Եթե դեռ պահվել էին միամիտներ, որոնք հավատում էին հին մարգարեություններին, նրանք ևս չէին սպասում դրանց մոտալուտ կատարմանը: Անցյալ դարի 40-ական թվականներին Մաղարթա վանքի մոտ հայ մի ճգնավոր, լսելով Ռուսաց Հայաստանի ազատագրման մասին, ասում էր.

«Ուրեմն մեր ծերերն մարգարեացան, որք կասեին թե, մին ռուս անուն ազգ դալոց է փրկե մեր հայրենիքը... Բայց էս ևս կը

<sup>1</sup> Եկարայիր գաղթականութեան հայոց Պարսկաստանէ ի Ռուսաստան, 1832, Մոսկով, էջ 66:

կցեին թե նոցա հետազոտութիւնը մեզանից և ճանապարհաց դժուարութիւնները, հարչուրավոր տարիք կբաշե...»<sup>1</sup>։

Նույն դարի հիւսունական-վաթսունական թվականներին սուսահայ բուրժուապիայի գաղափարախոսները հրաժարվում էին ոչ միայն ֆրանկների միջամտութեան միջնադարյան տեսիլներից, այլև Ռոմանովների և Արշակունցաց արժիւնները նույնացնելու պատրանքից։ Նրանք ընկալում են հայ իրականութիւնը որպէս յարական ինքնավար գաղութ։ Վերհիշելով միջնադարյան լեզենդը՝ «Հյուսիսափայլի» լիբերալները կամենում էին համոզել նույնիսկ, թե «վերագրույն սուրբ վարդապետը անեծք է գրել, որ հային թաղավոր չլինի, իրան կուտե, եթե իշխանութեան թագ ստացավ»<sup>2</sup>։ Չի կարելի ասել, թե, զլուխ խոնարհելով ցարական թագի առաջ, հայ բուրժուապիան մահացնում էր ազատագրական լեզենդը։ Պարզապէս նա միայն գերեզմանում էր նրա հնադարյան կմախքը։

Երևանի նվաճումից անմիջապէս հետո՝ Ներսէս Աշտարակեցուն ուղղած անտիպ մի նամակում, վերհիշելով Սահակ Պարթևի կանխագուշակութիւնը, Թաղիադյանն ասում էր. Արշակունցան միզլխանի արժիւր, որպէս մոխիրների միջից հառնող փշունիկ՝ վերակենդանացել է ահա Մոսկովյան կայսրութեան երկզլխյան արծփի համասփշու թևերի տակ։ «Երկրպագուք աշխարհասասան զրօշակին Արշակունեաց, որ ննջեացն և յարեաւ, և այլ ևս ոչ մեռանի»։ Երևանի բերդի գրավումից հետո համաքաղաքացիներին հղած նամակում Թաղիադյանը գրում էր իր հայանի սողերը. «Իմ լավ քաղաքացիք, էսպէս երջանիկ բախտի որ դուք էք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն ևս Արշակունի թագաւորութեան ժամանակումն էլ չէին պատահել, գերա թեպետև թագաւորութիւնն իւրեանցն էր, սակայն բարբարոսութիւնն և զուլումն պակաս չէր»։ Թաղիադյանից շատ տարրեր չէր մի ժամանակ նույնիսկ Արովյանի ազգային-քաղաքական իդեալը։ Նկարագրելով Երևանի գրավման ժամանակ հայերին համակած տրամադրութիւնը՝ Արովյանը ասում էր, թե Հայաստանի գետերը խառնում են իրենց արտասուքը Քուռի հետ, որ ընդհանուր հոսանքով դնան թափվեն Կասպից ծովի աղի ջրերը, որ լողում են Ռուսաստանի նավերը. Արովյանի բաղձանքն այն էր, որ Ռուսաստանը «իր բարի սար մեր աշխարհից չկտրի, որ բալրի մեր հայրենիքը նրանց արծփի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա ու էլ հոգ իր առաջի փառքին հասնի»։ Ինչ կատկած, որ և՛ Թա-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Շիրմազանյանի ճամբորդական հիշատակարանը, «Կուռնիկ հայոց աշխարհին», 1863, էջ 492։

<sup>2</sup> «Հյուսիսափայլ», 1861, տետր 6, էջ 493։

դիտողյանը, և՛ Արտվյանը խորապես ազդորված էին հայ ժողովրդի ազատագրման վրա հույսերով, Սեպեաե այդ վառ հույսերը նրանք դեռ լծորդում էին ցարիզմի «ազատարար միախաչի» հետ:

Մինչև XIX դարի 60-ական թվականները հայ ժողովրդի առաջավոր մասնադնեքն անգամ հասակորեն չէին բնկալում ուսուցումը և ուսու կառավարութան տարրերանքը: Անգամ նրանք, սվերեր բննափետում էին ցարիզմի ազգային քաղաքականութունը, դեռ չէին կապում հայ ժողովրդի քաղաքական հեռանկարները ուսու ժողովրդի ազատագրական սղորումների հետ: Նրանք աակալին շունեին այն գիտակցությունը, թե ինչպես Ռուսաստանի մյուս հպատակ ժողովուրդների, այնպես նաև հայ ժողովրդի համար քաղաքական ազատագրման խնդիրը պիտի մնար բարեպաշա բաղձանք, քանի դեռ իշխանության դեկը գանվում է մակարույժ դասակարգերի՝ ազնվականների և կապիտալիստների ձեռքում: Յարիզմի հանդեպ հայ հրապարակախոսության մեջ գաղափարական ձեղք սակեծվեց միայն 60-ական թվականներին, երբ. դիմաշքջվելով դեպի ուսու ժողովրդի սեույուցիան շարժումը, հայ սեույուցիոն-դեմոկրատիայի գործիչները հայերի ազատագրման երաշխիքը տեսան միայն ուսու դյուղացիական սեույուցիայի հաղթության մեջ:

Առաջին անգամ 60-ական թվականների հայ դեմոկրատիայի սեույուցիոն դեկավար Մ. Նալբանդյանն է, որ հայ ժողովրդի սուցիալական ու քաղաքական ազատագրման գլխավոր երաշխիքը նըմարեց ցարիզմի տապալման հեռանկարի մեջ: Ճորտերի ազատագրման, կապիտալիզմի գարգացման, բանվորական շարժման արժարժման, բանվորական սեույուցիոն պարաիայի կազմավորմանը գուզընթաց պայմաններ սակեծվեցին Անդրկովկասի և Ռուսաստանի ժողովուրդների սեույուցիոն համագործակցության համար: Անդրկովկասի տնտեսական գարգացումը ոչ միայն նոր թափ հաղորդեց հայերի ազգային կոնսուլիդացման պրոցեսին, այլև սուաջ քաշեց սուցիալական նոր այն ուժը — հայ բանվոր դասակարգը — որը ուսու պրուեաարիատի գլխավորած սեույուցիոն շարժման հետ լծորդեց նաև հայ ժողովրդի ազգային ազատագրման հեռանկարը:

Հայ և ուսու ժողովուրդների բարեկամութունը գալիս է հեռու անցյալից: Բայց նախառեույուցիոն ժամանակաշրջանում այդ բարեկամութունը չէր հանգչում ազատ ու իրավահավասար կողմերի հարաբերակցության վրա: Հայ և ուսու ժողովուրդների բարեկամութունը դարձավ ազատ և իրավահավասար կողմերի բարեկամութուն միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ սեույուցիայի շնորհիվ:

Այդ *ուսուցիչաց հետ է, որ մեր երկրում պայմաններ ստեղծվեցին ժողովուրդների լիակատար ազատագրման և նրանց համակեցութեան սոցիալիստական վերակառուցման համար: Միայն այդ ուսուցիչացի շնորհիվ պետականութեան տիրացած ժողովուրդներ, որոնք երբևէ չէին ունեցել այդպիսին կամ վերականգնեցին իրենց պետականութունը ժողովուրդներ, որոնք վաղուց կորցրել էին այն: Ռուս մեծ ժողովրդի յղնութեամբ հայ ժողովուրդը ոչ միայն ստացավ քաղաքական ինքնորոշման լիակատար իրավունք, այլև դարձավ Սովետական Սոցիալիստական քաղմազդ Միութեան մեջ կոմունիստական հանրակարգ կառուցող ազգերից մեկը:*

*Իսրայել Օրին չէր կարող, հարկավ, թափանցել պատմական գալիբի հեռու հորիզոնները: Սակայն հրաժարվելով ազատագրական շարժման և քաղաքական բանավարությունների մոլար ուղիներից, նա կատարեց առաջին վնասկան Լայլափոխը դեպի պատմութեան այն կայանը, ուսկից հեռանկար էր բացվելու հայ ժողովրդի ուսուցիչին ինքնորոշման համար: Առաջին հայ դործիչն էր նա, որի մտանանշած ճանապարհը օրչեկափորին պատմական նախաշափիլ պիտի դառնար այն մեծ գարաշրջանի համար, երբ հայ ժողովրդի արեւելեան հատվածը պայքարի մտնելով ֆեոդալական և բուրժուական կարգերի դեմ, ոչ միայն տիրացավ իրական իր ազատութեանը, այլև կոմունիզմի լուսատու փարոս վառեց աշխարհով մեկ սփռված հայրենարագձ հայ մասսաների համար:*

## Լ Ր Ա Յ Ո Ի Մ Ե Ն Ե Ր

Էջ 144-ի վերջին պարբերության մեջ. — Այս գրքի սպազարությունը ավարտվելու պահին յույս անուով «Մասնակազարանի սպարակերեն հրովարտակները» մեծարժեք ոչխառություն երկրորդ պրակը, որ, հրատարակվող վավերագրերի վրա հիմնված, Հ. Փափազյանը պարզում է, որ ինչպես Արևելյան Հայաստանի մյուս վանքերը, այնպես նաև էջմիածնի վանքը լիակատար հարկային արտանույնացան (ամուսնու-  
նություն) չէր վայելում և չուրարանջշուր տարի հարկազրկված էր որոշ գումարներ մուծել մի շարք հարկերի, այդ թվում նաև բրիտանացիներից գանձվող գլխահարկի գիմաց (ակ'ս հիշատակված պրակին կցված սուսազարանի 64-րդ էջը և աջգանդ նշված վավերագրերը): Հնարավոր է, որ գլխահարկի գիմաց վանքի կատարած վճարումներն ունեին աչրի առաջ օտարերկրյա ուղևորները, երբ գրում էին, թե ինչ էջմիածնի վանքը որոշ գումար էր մուծում իրանական գանձարկը, անվճարահույժ ծխակահնների փոխարեն:

Էջ 379-ի առաջին պարբերությունից առաջ. — 1724 թվականին սուս կառավարությունը արած պաշտանական հայտարարություն մեջ հայկական սղնախների նուկայացուցիչները ամբողջ Ղարաբաղի հայ բնակչությունը հաշվում էին հազար տուն և պնդում, որ լեռնային Հայաստանի մյուս ճեռհանդը», Ղափանը (իմ'ս Զանգեզուրը), ունի ավելի բազմամարդ հայ բնակչություն, քան Ղարաբաղը: Մի տարի անց, 1725 թվականին, Ղարաբաղի հայ գյուղատերերը կանոնահայտատանի հայ բնակչության բողոսանում թիվը հաշվում էին «հազար հազար», այսինքն՝ մեկ միլիոն (ակ'ս Զ30Յ, նույն տեղում, N № 252 և 276): Պաշտանական այս թվերը խիստ չափազանցված էին անշուշտ: XVII—XVIII դարերի իրադրություն մեջ լեռնային Իրանահայաստանը անկարող էր կերակրել այդքան մարդ: Այնուամենայնիվ նույնիսկ բնակչության այդ թիվը չի կարող արդարացնել Օրբի հազարգածը երկրի բնակչության ոսպմունակ կանոնիզենտի մասին:

Առաջին հայացրից կարող է անսուղասելի թվալ, որ XVIII դարի հայ գյուղացիները Արարատյան գաղախի հայ բնակչության մարդաթիվը «անհամեմատ ավելի փոքր» էին հաշվում Ղարաբաղի հայ բնակչության թվից (Զ30Յ, նույն տեղում, N 252): Սակայն ներկա դեպքում արա՛մաղիր ենք վստահելի ու արժեքավոր համարել այդ վկայությունը: Թեպետև գաշտավայրում էր գեանդված ին հայ թագավորությունների և հաճախ նույնիսկ մի շարք նախարարությունների սիրտը, այնուամենայնիվ չմոռանանք, որ հետագայում գաշտային Հայաստանում էին արշավում օտարերկրյա նվաճողները, ավերելով իրենց ճանապարհին փոխված քաղաքներն ու պետուրը, բնաջնջելով կամ գերեզմարելով նրանց բնակիչներին: Միայն սուսական տիրապետության ժամանակաշրջանում է, որ երևանի նահանգը դարձավ նորից Արևելյան Հայաստանի կենտրոնական կենտրոնը: Բայց մյուս պայմաններից անկախ՝ պարզ է, թե ինչու XVII—XVIII դարերում իրենց լեռների պաշտպանությունն սպառված Ղարաբաղի և Ղափանի հայ գյուղացիներն էին կազմում իրանահայ ժողովրդի էթնիկական մասավոր և հանդիսանում հայ սպասարական շարժման առավել ակտիվ ու կարգի շարժիչ ուժերը:

Յ Ա Ն Կ Ե Ր



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ\*

Ա. ՁԵՌԱԳԻՐ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԱՐՆԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Ց Ա Ն Կ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՊԵՏ. ՄԱՏԵՆԱԴՄՐԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

(Համառական հերթականությամբ)

20,	33,	72,	77,	83,	201,	240,	273,
303,	319,	335,	360,	435,	519,	549,	569,
573,	583,	585,	604,	605,	614,	648,	706,
713,	740,	754,	781,	835,	981,	982,	996,
999,	1012,	1024,	1082,	1086,	1130,	1149,	1199,
1230,	1237,	1261,	1363,	1366,	1370,	1382,	1402,
1401,	1424,	1464,	1473,	1488,	1492,	1512,	1544,
1591,	1591,	1626,	1636,	1653,	1661,	1760,	1775,
1788,	1793,	1880,	1912,	2020,	2037,	2067,	2083,
2097,	2119,	2121,	2152,	2157,	2165,	2150,	2189,
2220,	2263,	2270,	2271,	2381,	2398,	2445,	2492,
2672,	2776,	2839,	2845,	3031,	3108,	3159,	3239,
3276,	3313,	3452,	3480,	3506,	3519,	3637,	3720,
3786,	3814,	3817,	3841,	3861,	3881,	3912,	3913,
4040,	4074,	4170,	4173,	4228,	4331,	4346,	4375,
4470,	4618,	4648,	4649,	4669,	4681,	4654,	4692,
4904,	4969,	4997,	5128,	5180,	5234,	5242,	5303,
5345,	5382,	5451,	5495,	5582,	5614,	5765,	5782,
5787,	5793,	5806,	5835,	5917,	5967,	5971,	6020,
6146,	6272,	6273,	6282,	6287,	6367,	6401,	6403,
6404,	6451,	6607,	6668,	6785,	7104,	7211,	7436,
7472,	7581,	7584,	7620,	7705,	7707,	7709,	7714,
7726,	7786,	7840,	7930,	7948,	8061,	5075,	8104,
8111,	8125,	8130,	8133,	8184,	8233,	5356,	8443,
8483,	8505,	8746,	9013,	9049,	9100,	9120,	9222,
9223,	9254,	9323,	9355,	9356,	9555,	0648,	1720,
							1488,

Թվարկված ձեռագրերից զատ օգտագործված են Մատենադարանի, ինչ-պես նաև Պատմական թանգարանի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվային ֆոնդերում պահված ձե-

\* Ցանկը վերաբերում է աշխատության առաջին և երկրորդ զրբերին:



ազդիւր նշուիւերը, որոնց թղթապանակները և վավերագրերը համարները նշված են աշխատութեան համապատասխան էջերում:

Արխիվային հիշատակված ֆոնդերից դատ, օգտագործված են նաև «Հին վավերագրերի Մոսկվայի կենտրոնական պետարխիվի» (ИГАДА) նշուիւերը, որոնց ֆոնդերը և թղթապանակները դարձյալ նշված են համապատասխան տեղերում:

## Բ. ՏՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

### Ա. ՀԱՅԵՐԵՆ

- «Երբահամ կաթողիկոսի Կրեապոլց Պատմագրութիւն անցիցն իւրոց և նատր-Շա-  
հին պարսից», Վաղարշապատ, 1870:
- Արեւմամյան Ա. Գ., Սի Լջ մեղրկովկասի ժողովուրդների և հայ-սուտական հարա-  
բերութեանների պատմութեանից, Երևան, 1953:
- Արեւմամյան Ա. Գ., Ստեփանոս Գաշակցու հանելուկները («Էջմիածին», 1947,  
Հունվար-փետրվար):
- Ագարանգեղոս, Գիրք վիպասանութեան, Կ. Պոլիս, 1709:
- Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890:
- Ալիշան Ղ., Արշալոյս բրիտաննէութեան հայոց, Վենետիկ, 1901:
- Ալիշան Ղ., Կամենից, Վենետիկ, 1896:
- Ալիշան Ղ., Հայտոյսում, Վենետիկ, 1901:
- Ալիշան Ղ., Հայ-Վենետ, Վենետիկ, 1896:
- Ալիշան Ղ., Յուշիկր հայրենեաց հայոց, Վենետիկ, 1869:
- Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881:
- Ալիշան Ղ., Շնորհալի և պարագայր իւր, Վենետիկ, 1873:
- Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893:
- Ալիշան Ղ., Սիսուտան, Վենետիկ, 1885:
- Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, Ս. Ղազար, 1855:
- Ալիլյան Ն., Յուցակ հայերեն ձևագրաց Համալսարանի Մատենագրարանին ի  
Լվով («Հանդես ամսօրյա», 1936, ըիվ 10—12):
- Անադյան Հ., Յուցակ հայերեն ձևագրաց Թավրիզի, Վիեննա, 1910:
- Անանիա կարողիկոս, Յաղագս ստորամբութեան ստանն Ազուանից, «Արարատ»,  
1897:
- Առակր Միսիթարայ Գոշի, Վենետիկ, 1854:
- Առաւել Գալիթիմեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896:
- Ատողիկ, Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885:
- Բարգևէ կարողիկոս (Կյուլխստայան), Յուցակ ձևագրաց Կարմիր Վանուց Անկիւ-  
րիոյ, Անթիլիաս, 1956:
- «Բան յաղգս և յաղինս ստացեալ ի Բարսրակէն որ էր ընկեր Ամիրտովլաթին»,  
(«Բազմավեց», 1886, հոկա.հոյեմբ.դեկտ.):
- Բժշկյան Մ., Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830:
- «Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոսովմայ», հրատ. Կ. Եղյանի,  
Պետերբուրգ, 1884:
- «Գիրք ըղթոց», Թիֆլիս, 1901:
- Գիրք, որ կոչի Այսմուտուրք, Կ. Պոլիս, 1730:

- Գրիգոր Գարանաղյի, *Ժամանակագրություն*, Երուսաղեմ, 1915:
- Գրիգոր Մագիստրոս, *Թղթեր*, Ալեքսանդրապոլ, 1910:
- Գրիգոր Խարեկացի, *Մատենագրություն*, Վենետիկ, 1840:
- Գրիգոր Տաբևացի, *Գիրք Հարցմանց*, Կ. Պոլիս, 1729:
- Գրիգոր Տաբևացի, *Գիրք բարոզության, Չմերան հատոր*, Կ. Պոլիս, 1740:
- Գրիգոր Տաբևացի, *Գիրք բարոզության, Ամարան հատոր*, Կ. Պոլիս, 1741:
- Գրիգոր Տղա, *Նամականի*, Վենետիկ, 1865:
- Գևորգ Վարդապետ Մխլիմ-օղլի, *Գիրք վիճարանության բնոցեմ Լրկարնակաց*, Կ. Պոլիս, 1734:
- «Դամիթ Քորպրեցու հիշատակարանը» (հրատ. Վ. Հակոբյանի, Հայկական ՍՍԽ Գրա. ակադ. «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 8):
- «Դիւան հայոց պատմութեան», հհ. Գ, Գ և Ժ:
- «Դիւան Ս. Յագրայ», հրատարակեց Մ. Կ. Ն. («Սիւն», 1933, № 5):
- Ե. Լ. (Կալայան Ե.), *Զավար. Հայ գրչագիրներ* («Ազգագրական հանդես», գիրք Բ):
- Եղիշ, *Պատմություն վասն Վարդանայ և հայոց պատերազմին*, Վենետիկ, 1893:
- Եսայի կարողիկոս, *Պատմություն կամ յիշատակ ինչ ինչ անցից գրպետց յաշխարհին Ազունից, Շուշի, 1839*:
- «Երեմիա Չելեպոյ գանձ և ողբ ի վերայ Յակոբ կաթողիկոսի» («Հանդես ամսօրյա», 1933, թիվ 9—10):
- «Երկու վավերագրեր ա. Խաչիկ վարդապետի ձեռագրերի ժողովածուից» («Արարատ», 1900, հունիս):
- Զարբհաճայան Գ., *Մատենագարան հայկական թարգմանութեանց նախնեաց*, Վենետիկ, 1889:
- Զարարեայ Սարգսյանցի Պատմագրություն, Վաղարշապատ, 1870:
- Զախարիա Ազուլեյի, *Օրագրություն*, Երևան, 1938:
- «Հնարի պատմություն Գալիթ-Բեգին», Վաղարշապատ, 1871:
- Թադիսայան Մ. Գ., *Ճանապարհորդություն ի Հայս, I*, Կալկաթա, 1847:
- Թովմա Արծրունի, *Պատմություն տանն Արծրունեաց*, ՍՊՊ, 1887:
- Թովմա Մեծոփեցի, *Պատմություն Լանկ-Քամուրայ և յաջորդաց իւրոց*, Փարիզ, 1860:
- Թովմա Մեծոփեցու հիշատակարանը, Թիֆլիս, 1892:
- Թովիշյան Հ., *Յուրակ ժողովածուաց Գաղյան Խաչիկ վարդապետի, II*, Վաղարշապատ, 1900:
- «Թուղթ Եսայեայ վարդապետի առ Խր Մատթևոս» («Ճարտադ», 1860, II):
- «Թուղթ Աստ Սիմեոն կաթ. առ Փիլիպոս Էջմ. կաթ.», Վաղարշապատ, 1904:
- «Ժամանակագրություն Պետրոս գի Սարգիս Գիլանենցի» («Կուսնիկ Հայոց աշխարհին», 1863, թիվ Կ):
- «ԺԳ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950:
- «ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, մասն Ա, Երևան, 1957:
- «Ի պատմութենէ Զարարիայի և այլ մեծահասակ ձեռնագրաց» («Արարատ», 1905, հունվար):
- Իննիկյան Վ., *Աշխարհագրություն շորից մասանց աշխարհի*, Վենետիկ, 1806:
- Լալայան Ե., *Յուրակ հայերեն ձեռագրաց վաստարականի*, պրակ I, Թիֆլիս, 1915:

- Խ. Վ., Մովսես Կողանկատապետ Ազգանից պատմ. երկաթագիր օրինակից մի պահաս հատված («Արարատ», 1897, ապրիլ):
- Խաչատուր արեղա Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905. «Մագունն Գալիթ-Քեհիլ» (հատված Մովսես քահանա Մելիք Ասեփանյանցի հիշատակարանից («Քրտնասեր», Գ, Փարիզ):
- «Կալվածագրեր» (կազմեց Հար. Արքահամյան), պրակ 1, Երևան, 1911:
- «Կանոնդիրք հայոց» (հրատ. Ա. Ղևոնդյանի), Թիֆլիս, 1913:
- Կարապետ Ասեմեցի, Երրորդեան ս. Մեսրոպայ, Վաղարշապատ, 1897:
- Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909:
- «Կոնդակ կատարանաց սեռան Ազերսանդրի Ջուղայեցոյ կաթողիկոսի ամենայն հայոց» («Ազգասեր», Կալկաթա, 1849):
- Կոստանյան Կ., Վրմական տարեգիր, Պետերբուրգ, 1913:
- «Կուտինահայ ժամանակագրութիւն» («Հանդես ամսօրյա», 1952, № 4—60):
- Հակոբյան Հ., Ուղեգրութիւններ, հ. Ա, Երևան, 1932:
- «Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862:
- «Հեթում պատմիչ թաթարաց», Վենետիկ, 1842:
- Հովնանէս Գարեղի, Ժամանակագրութիւն հայոց, ՍՊՔ, 1891:
- Հովսեփյան Գ. (Գարեղին Ա. կաթողիկոս), Յիշատակարանք ձեռագրաց, հ. I, Անթիպիս, 1951:
- Հուսիկ Լայնիպոս. Անցյալ դարերի հիշատակ. («Արարատ», 1901, № ԺԱ):
- Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907:
- Պանոսյան Ա. Տ., Հալկական առածանի, Երևան, 1951:
- Պոլիս Վանանդեցի, Գանձ շափոյ, կշտոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699:
- Ճանկեցի Ղ., Գրախոս ցանկալի, Կ. Պոլիս, 1735:
- Պաղտիա արեղա (Գրիգոր Ակնեցցի), Պատմութիւն վասն ազգին նետուաց, ՍՊՔ, 1870:
- Պանանդյան Հ. և Անույան Հ., Հայոց նոր վկաներ, գիտական հրատ., Վաղարշապատ, 1903:
- «Սանր ժամանակագրութիւններ 13—18-րդ դարերի» (կազմեց Վ. Ա. Հակոբյան), հ. I, Երևան, 1951, հ. II, Երևան, 1956:
- Սառ Ն., Յուցակ համառոտ ձեռագրաց վանից Սեանայ, Մոսկվա, 1892:
- Մատթեոս Ունուցեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:
- Մախուդյան Ա., Յուցակ ձեռագրաց Ազուլիսի, («Արարատ», 1915):
- Մելիքսեթ-Քեղ Լ. Մ., Վրաց ազգայութեանը Հայաստանի և հայերի մասին, հ. I, Երևան, 1934, հ. II, Երևան, 1936, հ. III, Երևան, 1955:
- «Մեկնութիւն միութեան կաթող. եկեղեցոյ, արարեալ ի Գէորգ վարդապետ Արթուրիմեան» («Արարատ», 1871, № 3):
- Մեսրոպ Լայնիպոս, Ջարարիա նկարչի ձեռագիրք և Գալիթ բեկի հիշատակարանք («Քրտնասեր Էջմիածնի գիտական ինստիտուտի», 1921—1922, գիրք Ա.—Բ):
- Միխայէլ Ասուրի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871:
- Մինաս Համեցեցի, Ազգարանութիւն հայոց, Վաղարշապատ, 1870:
- Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860:
- Մխիթար Գոշ, Առակք, Վենետիկ, 1854:
- Մխիթար Գոշ, Դատաստանդիրք, Վաղարշապատ, 1880:

- Մխիթարայ Անկեոյ պատմութիւն, ՍՊԲ, 1879:
- Մովսէս Խոռենացի, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:
- Մովսէս Կաղանկատլացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912:
- «Յիշատակարան գրոցս պատմագրարար...» («Արարատ», 1898, հունվար):
- «Յիշատակարանք» («Արարատ», 1876, նոյեմբ.):
- Յովհաննէս Իմաստասէր Օձնեցի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:
- Յովհաննէս կարողիկոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
- Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951:
- Ներսէս Լամբրոնացի, Ատենաբանութիւն եւ թուղթր եւ ճտոր, Վենետիկ, 1835 եւ 1865:
- Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւն ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847:
- Ներսէս Ծնորհալի (Ն. Կրայեցի), Բանք շափու, Վենետիկ, 1830:
- Ներսէս Ծնորհալի, Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865:
- Ներսէս Ծնորհալի, Ողբ Եղեռնոյ, Տփլիս, 1829 եւ Փարիզ, 1827:
- «Նկարագիր գաղթականութեան հայոց Պարսկաստանի ի Ռուսստան», Մոսկով, 1832:
- Շապուր Բագրատունի, Պատմութիւն, Էջմիածին, 1921:
- «Ողբ մայրքաղաքին Ստրմաջու, Առաքել վարդապետէ սասցեայ» («Անահիտ», 1901, № 9):
- «Պատմութիւն Արիստակէայ վարդապետի Լատիվերացոյց», Թիֆլիս, 1912:
- «Պատմութիւն Աւետիբ վարդապետին Թոխաթեցոյ...» («Արարատ», 1874, փետրվար):
- «Պատմութիւն երջանիկ վարուց եւ մահուան երանելի առն Աստուծոյ սուրբ Մեծին Ներսէսի», Կ. Պոլիս, 1737:
- «Պատմութիւն Հայունեաց խաչին» («Արարատ», 1888):
- «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբուրգ, 1887:
- «Պատմութիւն մնացորդայ հայոց եւ վրաց արարեալ յովմեմել Մկարդայ բահանայէ ի Հոլոց դեղջէ ի Վասոյ-Չորոյ յաշխարհէ ի Սիւնեաց», Մագրաս, 1775:
- «Պատմութիւն Պետրոս ավագ զոնսուլին հայոց, եւ երկու բնկերացն Քիսեղնեց Դեղորոսին եւ Խանեկեց Ստեփանին» («Հանդես ամսօրյա», 1887, թիվ 11):
- «Պատմութիւն ֆրա Աւգոստինոսի» («Բանասեր», 1889, դիրք 9):
- Պողարյան Խաչար, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յանդերանց, Երուսաղեմ, հատոր II եւ III:
- Պողոս Տարոնեցի, Թուղթ ընդդէմ Թէօփիստեայ հոռոմ փիլիսոփային, Կ. Պոլիս, 1752:
- Ջալալյան Սարգիս եպ., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. II, Տփլիս, 1858:
- Ս. Էջմիածնի գրագարան (հիշատակարաններ չրատարակություն) («Արարատ», 1888, № 2, 5 եւ 8):
- Սամուէլ Անեցի, Հաւարմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
- Սարգիսյան Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր I, Վենետիկ, 1914 եւ հատոր II, Վենետիկ, 1924:
- Սէրեւս Եպիսկոպոս, Պատմութիւն ի Հերակլին, Թիֆլիս, 1913:

- «Միմեն գայրի Լեհացոյ ուղեգրութիւն» («Հանդես ամսօրյա», 1934, թիվ 3—4 և 1935, թիվ 7—9):
- Մյամեն կարողիւս. Ջամբու, Վաղարշապատ, 1875:
- «Միմեն վարդապետի Ապարանցոյ վիպասանութիւն», Վաղարշապատ, 1870:
- Ամբաս Սարտապլա (Գունդատալ), Տարեկիրք, Փարիզ, 1859:
- Ամբասյանց Մ. արբեւ., Եկարպիր ս. Կարապետի ժանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփլիս, 1904:
- Ամբասյանց Մ. արբեւիտ., Տեղագիր Գեղարբունի Մովսէսի գովառի, Վաղարշապատ, 1895:
- Այուսմեյան Առաւովազդ. Պատմութիւն Հալեպի ազգային գերեզմանատանաց և արձանագիր հայերեն տապանաբարերու, Հալեպ, 1935:
- Այուսմեյան Առաւովազդ. Մալք ցուցակ հայերեն ձեռագրաց երեսագեմի, հ. I: «Սոփերր հայկականը», Վենետիկ, 1853, Զ:
- «Ստեփանոս Գաշակեցոյ ոտք շարագրեալ ի վերաջ ալլ և ալլ իրաց» («Անահիտ», 1939, Ա.Ն: 1—2):
- Ստեփանոս Օրբելյան (կարծեցալ), Ժամանակագրութիւն, Երևան, 1942:
- Ստեփանոս Օրբելյան. Ողբ ի ս. Կաթողիկէն, Թիֆլիս, 1885:
- Ստեփանոս Օրբելյան. Պատմութիւն նահանգին Սրտական, Թիֆլիս, 1910:
- Սեփանձաջան Գ. Գրոց-բրոց. Կ. Պոլիս, 1874:
- Սեփանձաջան Գ., Թորոս Ագարար, հ. II, Կ. Պոլիս, 1888:
- Սուրենյան Վ., Հանս Շիլլերերգերի կյանքի և ճանապարհորդութեան մասին, («Հանդես գրականական և պատմական», Էրբրդ գիրք, Մոսկվա, 1890):
- «Վավերագրեր հայ-պարսկական հարաբերութեանների մասին», ընդօրինակեց, տասագարձեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Երևան, 1927:
- Վարդան Բարձրբեզցի. Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861:
- «Վարք և վկայարանութիւնը սրբոց», հ. Ա, Վենետիկ, 1874:
- «Վենետիկ հայոց վրա տեղեկութիւն» («Բազմավեպ», 1847, Ա: 1):
- Տալան Վառդ. Մալք գրվան Միխիթրեանց Վենետիկոյ, Վենետիկ, 1930:
- Տաշյան Հ., Յուշակ հայերեն ձեռագրաց կաշտնրտան Մասենագարանին ի Վիեննա, 1891:
- Տաշյան Հ., Յուշակ հայերեն ձեռագրաց Մասենագարանին Միխիթրեանց ի Վիեննա, Վիեննա, 1895:
- «Տեանն Ստեփաննոսի նախագահ Արքեպիսկոպոսի Հակաճատութիւն ընդդեմ Երկաշտակաց շարագրեալ ի թաին Հայոց ՉԾԱ», Կ. Պոլիս, 1756:
- Տեր-Հովնաթյան Հաւ., Պատմութեան նոր-Ջուղայի, նոր-Ջուղա, 1880, I, II:
- «Յուշակ հայերեն ձեռագրաց ազգային մասենագարանին Պարիսի» («Բանասեր», 1899, գիրք Գ):
- Յուշակ մալք աթու Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի («Էջմիածին», 1950, նոյեմբեր-դեկտեմբեր):
- Փավասոս Բյուզանդացի. Պատմութեան Հայոց, Վենետիկ, 1832:
- Փավազյան Հ., Մասենագարանի պարսկերեն հրովաբատիկները, Երևան, պրակ I, 1956 և պրակ II, 1959:
- Փիւրղալեյան Ղ., նոտարք հայոց, Կ. Պոլիս:
- Քեոմյուրեյան Երեմիա Ջիկալի, Օրագրութիւն, Երեսագեմ, 1939:
- Քեոմյուրեյան, Ստամբուլի պատմութիւն, Վենետիկ, 1913:

Ախաւանս եպիսկոպոս. Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871:  
Ֆիւկ Յ. Ն., Յուցակ Արգար Հովհաննիսյանի հայերէն ձեռագրերի, Լալագիդ և  
Մարտոզ, 1903:  
Ֆիւկ, Գիւլան, Նյու-Յորք, 1952:

#### Բ. ՈՌԻՍԵՐՆ

- «Армяно-русские отношения в XVII в.», сборник документов под редакцией В. А. Парсамяна, т. I, Ереван, 1953.  
Баладзори, Книга завоевания стран, пер. П. К. Жузе, Баку, 1927.  
Басили, Жизнь царицы Тамары («Памятники эпохи Руставели», Ленинград, 1938).  
Бернье Франсуа, История последних политических событий и переворотов в государстве Великого Могола, М—Л, 1936.  
«Библиотека иностранных писателей о России», т. I, СПб, 1836.  
Г[ригорьев], В., Статистическое описание Нахичеванской провинции. 1833  
Зевакин Е. С., Азербайджан в начале XVIII века (журнал Воынского), Баку, 1929.  
Ибн-ал-Асир, Тарих-ал-Камиль, Баку, 1940.  
Ибн-Фадлан, Путешествие на Волгу, перев. под ред. И. А. Крачковского. М—Л. 1935.  
Ибн-Хаукал, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, т. XXXVIII.  
«Извлечение из летописи Яхьи Антиохийского» (мб'и В. Р. Розен, Император Василий Болгаробойца, СПб, 1883).  
«Историческое описание древнего Российского Музея», 1807.  
«Казанский летописец», (П. С. Р. Л., XIX).  
Куриц Б. Т., Состояние России в 1650—1655 гг. по донесениям Родеса, М., 1915.  
«Летопись Авраамики» (П. С. Р. Л., XVI).  
Марко Поло, Путешествие, Л., 1940.  
Март Н. Я., Сборники притч Вардана, ч. I, СПб, 1899.  
«Материалы по истории Азербайджана», вып. IV. Из сочинений Якуби. «История», Баку, 1927.  
Мерчул Георгий, Житие Григория Хандзтайского, СПб, 1911.  
Никита Хонната, История со времен царствования Иоанна Комнина, СПб, 1862.  
«Описание Версаля в армянской записи 1683 г.» (Изв. Российской акад. материальной культуры, т. I, Петербург, 1921).  
«Переписка на иностранных языках грузинских царей с российскими государями», СПб, 1861.  
Перри, Джон, Состояние России при нынешнем царе (Чтение в Имп. общ. истории и древностей российских при Московском университете, т. II, М., 1871).  
Пигулевская Н. В., Сирийские источники по истории народов СССР, М—Л, 1941.

- «Письма и донесения иезуитов о России конца XVII и начала XVIII века», СПб, 1904.
- «Полное собрание законов Российской Империи», XI.
- Рашид-ад-Дин, Сборник летописей, М—Л, 1946.
- «Русско-индийские отношения в XVII в., Сборник документов, М, 1958.
- «Сборник материалов по социально-экономической истории Византии», Москва, 1951.
- «Собрание актов, относящихся к обзор. истории Арм. народа», М-1833—38.
- Собрание государственных актов и грамот. ч. IV. М. 1828.
- т. I—III, М., 1839.
- Такайшвили Е., Три хроники, Тифлис, 1900.
- Такайшвили Е., Хроника Эриванского Акафиста, Тифлис, 1901.
- Тизенгаузен В. Г., Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, т. II, СПб, 1941.
- «Хождение за три моря Афанасия Никитина 1466—1472 гг.» М—Л, 1958 г.
- «Хождение купца Федота Котова в Персию», М, 1958.
- Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898.

#### Գ. ՄՅԼ ԼԵՁՈՒՆԵՐՈՎ

- Assemanus, Stephanus, Bibliotheca Mediceae Laurentinae et Palathinae codicum MSS, Florentiae, 1742.
- Avril P., Voyage en divers états d'Europe et d'Asie, 1692.
- „A chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII centuries“, vol. I, London, 1939.
- Baronnius C., Annales ecclesiastici, t. XIV.
- Bedik P., Cehil Sutun, Vienna, 1678.
- Berchet G., La Republica di Venezia e la Persia, Torino, 1865.
- Brennerus, Henricus, Epitomae commentariorum Moysis Armeni, de origine et regibus armenorum et parthorum etc., Stockholmiae, 1723.
- Brosset M., Documentes originaux („Nouveau journal d'Asiatique“, serie I, t. IX).
- Brosset M., Histoire de la Géorgie, depuis l'antiquité jusqu'au XIX siècle S. Petersburg 1849—1855.
- Brosset M., Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, 1-re livraison, St. Petersburg, 1849.
- Bullarium pontif. S. Congregat. de Propaganda fide, Appendix, Romae, 1841.
- Cartwright John, Voyage from Alleppo in Hispahan and back again, „Hakluytus Posthumus or Purchase his Pilgrimes“, vol. VIII, Glasgow, 1905.
- Chardin, Jean de, Voyage en Perse, éd. Langles, Paris, 1811, tt. I—IX.
- „Chêref-Nameh“, par Cheref-ouddine, ed. I, B. Charmoy, S. Peterbourg, 1873, t. II, pte. I.

- Chevalier Ricaut, M. le. Histoire de l'Etat présent de l'Eglise Grèque et de l'Eglise Arménienne, Middelbourg, 1692.
- Chinon, Gabr., Relation nouvelle de Levant, Lyon, 1671.
- Constantinus Porphyrogenitus, De thematibus et de administrando imperio, Bonnae, 1840.
- Conybeare Fr. C., A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1913.
- Correspondance administrative sous le règne de Louis XIV, IV, Paris, 1855.
- Dapper, Olfert, Asia, oder ausführliche Beschreibung des Reiches des Grossen Mogols, nebst einer vollkommenen Vorstellung des Königreich Persiens, etc. Nürnberg, 1681.
- De la Croix, Etat présent des nations et églises Grèque, Arménienne et Maronite en Turquie, Paris, 1715.
- Della Valle, Piedro, Reiss-Beschreibung in unterschiedlichen Theilen der Welt, II, III, Genf, 1674.
- Dulaurier E., Recueil des historiens des Croisades, Paris, 1869.
- „Extrait de voyage Petit de la Croix publié par M. Langlès dans la suite du Relation de Dourry Eifendy“, Paris, 1810.
- Febure, Michel, Estat présent de la Turquie, Paris, 1675.
- Febure, Michel, Théâtre de la Turquie, Paris, 1682.
- F[euriau] P. Th. Ch., Estat présent de l'Arménie, Paris, 1694.
- Fonteney, Fevre de, Journal historique du voyage et des aventures singulieres de l'Ambassadeur du Perse en France, Paris, 1715.
- Freising, Otto von, Die Weltchronik, Teubner-Ausgabe, B. VII.
- Galanus, Clemens, Conciliatio Ecclesiae Armeniae cum Romana etc., Romae, 1650, t. I.
- Gemelli Careri, Voyage autour du monde (*Թարգմ. իտալերենից*), 1719, II.
- Georgius Cedrenus, Historiarum compendium Bonnae, 1839, II.
- Gouvea, Antoine Fr. de, Relation de grandes guerres et victoires obtenus par le roi de Perse de Cha-Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Achmet a son fils, Trad. de l'org. portugais, Rouen, 1646.
- Hanway, Jonas, Zuverlässige Beschreibung seiner Reise von London durch Russland und Persien von 1742. bis 1750 (*Թարգմ. անգլերենից*), I, Hamburg und Leipzig, 1754.
- Hubert, Thomas, Relation du voyage de Perse et des Indes orientales (*Թարգմ. անգլերենից*), Paris, 1663.
- „Histoire critique de la creance et des coutumes des nations du Levant, publiée par le Sr. de Moni“, Francfort, 1684.
- „Histoire de Perse depuis le commencement de ce siècle“, Paris, 1750, I.
- Kaempferus, Engelbertus, Amoenitatum exoticum, Lemgoviae, 1712.
- Kakash, Staphanus, Iter Persarum, Altenburg, 1609.
- Karst, Josef, Sempadischer Kodex aus dem 13 Jahrhundert, Strassburg, 1905.
- Kraelitz-Greifenhorst Friedrich, Ein Brief an den armenischen Hofkaplan Wardapet Nerses in Wien aus dem Jahre 1697.



- Krusinski, Jud. Thad., *Tragica vertentis belli persici historia*. Leopoli, 1740.
- Krusinski, Jud. Thad., *Prodromus ad Tragicam vertentis belli Persici Historiam*, Leopoli, 1740.
- Krusinski, Jud. Thad., *Nachrichten von den letzten Unruhen in Persien, verteutscht von P. Jos. Stoecklein*, Augsburg, 1732.
- [Krusinski, J. Th.], *Chronicon Peregrinantis seu Historia ultimi belli Persarum cum Aghwanis gesti*, Lipsiae, 1731.
- „L'ambassade de D. Garcias de Silva Figveroa en Perse“, Paris, 1667.
- La Mamys—Clairac, *Histoire de Perse, depuis le commencement de siècle*. La Haye, 1750, I.
- Le Brun Cornelle, *Voyage par la Moscovic en Perse et aux Indes orientales*, Amsterdam, 1718.
- „L'entrée solennelle faite a Rome aux Ambassadeurs du roy de Perse“, Paris, 1601.
- „Lettres édifiantes et curieuses concernant l'Asie, l'Afrique etc.“, Paris, 1780.
- Lukas, Paul, *Voyage au Levant*, Paris, 1731.
- Mans R. du, *Estat de la Perse en 1660*, Paris, 1890.
- Mathei Parisensis, *Chronica Majora (Monumenta Germaniae Historica. Scriptorum, XXVIII)*.
- Minorsky V., *Tadhkirat al-muluk, a manual of Safavid administration*, London, 1943.
- Nikolas de Nikolay, *Les navigations, pèrègrinations et voyages*, Anvers 1576.
- Odoric de Pordenone, *Les voyages en Asie au XIV siècle*, Paris, 1881.
- Olearius, Adam, *Offt begehrtte Beschreibung der neuen orientalischen Reiss*, Schleswig, 1647.
- Pacifique P., *Relation du voyage en Perse*, Lille, 1632.
- Petrus Siculus (Migne, *Patrologia Graeca* t. 104).
- Philippe P., *Voyage d'Orient*, Lyon, 1669.
- Poser H., *Leben und Tagesgeschichte, worinen das Tagebuch seiner Reise von Constandinopol aus durch Bulgarien, Armenien, Persien und Indien*, Jena, 1675.
- Pouillet, *Nouvelles relations du Levant*, Paris, 1668.
- Raynaldus, *Annales Ecclesiastici*, t. XIV.
- „Recueil des historiens des Croisades“, t. II, Paris, 1905.
- Reguaglio del viaggio fatto el Padri del Ordini Predicatori, Napoli, 1695.
- „Relation l'èvêque de Sidon“ („Revue de l'Orient chrétien“, Paris, 1898).
- „Relation d'une mission faite nouvellement par monseigneur d'Archevesque d'Anqyre“, Paris, 1702.
- Reponse générale au nouvelle livre de M. Claude, Paris, 1671.
- Rubruk, *De gestis sive de moribus Tartarorum*, Recueil de voyage et de memoires, publié par la société de géographie, t. IV, Paris, 1839.
- Sackur, Ernst, „Sybyllinische Texte und Forschungen „Pseudomethodius. Adso und die tiburtinische Sibylle“, Halle a. S. 1898.

- Saint-Martin, Mémoires historique et géographique sur l'Arménie, Paris, 1819, t. p. 11.
- Sanson, Voyage ou Relation de l'état présent du royaume de Perse, Paris, 1694 et 1695.
- Schroederus J., Thesaurus linguae Armeniacae, Amsterdami, 1710.
- Struys, Jean, Les voyages en Moscovie en Tatarie, en Perse, aux Indes etc. (Amsterdam, 1681).
- Tavernier, F. B., Les six voyages en Turquie, en Perse et aux Indes, Paris, 1679.
- The life and adventures of Joseph Emin, an Armenian, London, 1792.
- Thevenot, Jean de, Suite du voyage en Levant, Paris, 1674.
- Tournefort, Pitton, de, Relation d'un voyage du Levant, Paris, 1718.
- Villote, Dictionarium novum latino-armeniorum, Romae.
- Villote, Voyage en Turquie, en Perse, en Arménie, en Arabie, et en Barbarie, Paris, 1730.
- Voyage de Laurent Ringhuber (*Աստիճանախոյ*).
- Voyage et Mission du P. Alexander de Rhodes, compagnie de Jesus, Paris, 1854.

#### Գ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

##### Ա. ՀԱՅԵՐԵՆ

- Արեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 11, Երևան, 1946:
- Աբրահամյան Վ., Արհեստները Հայաստանում 4—18-րդ դդ., Երևան, 1956:
- Ադոնց Ն., Բազրատունյաց փառքը («Հայրենիք», Բուստան, 1927—28):
- Ադոնց Ն., Քաղաքական հոսանքները հին Հայաստանում («Հայրենիք», Բուստան, 1927—28):
- «Ազարիա Ջուզայեցի» («Տափա», Հալեպ, 1928):
- Ալպոլյանյան Ա., Ճանապարհորդությունի ի Հաղաշխատան փե դարում, Կահիրե, 1946:
- Ակիբյան Ն., Ազատության շարժումը փե—ժՁ դարում հայոց մեջ («Հանդես ամսօրյա», 1917/18):
- Ակիբյան Ն., Գառազանդիրը կաթողիկոսաց Ազատարայ, Վիեննա, 1920:
- Ակիբյան Ն., Թոսեիլանց ճյուղադրությունը, «Հանդես ամսօրյա», 1931:
- Ակիբյան Ն., Հալ կյանքը Հայելիի մեջ («Հանդես ամսօրյա», 1933, թիվ 3—6):
- Ակիբյան Ն., Մատենադրական հետազոտություններ, հ. 1, Վիեննա, 1922:
- Ակիբյան Ն., Մովսես Գ. Տափաեցի կաթողիկոս. կյանքը և գործունեությունը («Հանդես ամսօրյա», 1934, թիվ 5—7, 11—12):
- Ակիբյան Ն., Վարդան Վ. Բաղիշեցի («Հանդես ամսօրյա», 1952, թիվ 1—3):
- Ակիբյան Ն., Քննություն տեպեան ս. Սահակայ («Հանդես ամսօրյա», 1936, թիվ 10—12):
- Անատյան Հ., Հայերեն արձատեսիան բառարան, Երևան, հհ. 1—VII, 1926—1935:
- Անատյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հհ. 1—IV, Երևան, 1942—1948:

- Ավդալբեկյան Ք., Գլխահարկը Թուրքիայում 17—18-րդ դարերում («Պատմա-  
բանասիրական հանդես», 1959, N 1):
- Բ. Ե. (Բ. Այուբևալյան), Կիլիկիա կաթողիկոսները. ԺԸ, Ազարիա Ջուզայեցի  
(«Մխռն», 1929):
- Բաւսմաշյան Կ., Հայկական բնդահուսր դրամադիտութուն և Հայաստանի վերա-  
բերյալ դրամներ, Վենետիկ, 1936:
- Բարխուդարյան Մ., Ազվանից Երկիր և գրացիր, Քիֆլիս, 1893:
- Բարխուդարյանց Մ., Արցախ, Բարու, 1895:
- Բարխուդարյան Ս. Գ., Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հու-  
շարձանները, Երևան, 1935:
- Բարխուդարյան Ս. Գ., Մի քանի գիտագոթյուններ Երևանի կաթողիկէ Եկեղեցու  
արձանագրութունների վերաբերյալ (Հայկական ՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկ-  
կագիր» (հաս. գիտ.), 1947, N 5):
- Գալեմբյարյան Գ., Արգար՝ դպիր և սպագրամ Մաշտոցը («Հանդես ամսօրյա»,  
1912, թիվ 7):
- Գալեմբյարյան Գ., Կենսագրութուններ, Վիեննա, 1915:
- Գալեմբյարյան Գ., Հայ Աստվածաշնչի սպագրության ջանքեր Ոսկանեն հառաջ,  
(«Հանդես ամսօրյա», 1914, թիվ 1):
- Գալեմբյարյան Գ., Ո՛վ է Ջուզայեցի Հակոբ Գ. կաթողիկոսի հոջորդը («Հանդես  
ամսօրյա», 1912, թիվ 7):
- Գուսզան Հ. Ե., Փլորենտիոյ տիեզերական ժողովը («Բազմավեպ», 1910, օգոս-  
տոս—ցեկտեմբեր):
- Երեմյան Ս. Տ., Լիպարիա գորավարի հոջորդները և Գանիշմանյան առձմի ծագ-  
ման խնդիրը (Հայկական ՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հաս. գիտ.),  
1947, N 8):
- Երեմյան Ս. Տ., Հասարկան Մ. Ա. և ալլը, Հայ ժողովրդի պատմութուն, 1-ին  
մաս, Երևան, 1956:
- Ջարբխանդյան Գ. Վ., Հայկական հին գլորության պատմութուն, Գ—Ժ գրք,  
Վենետիկ, 1886:
- Էտաիեզեր Պ., Հայերը Արեմայան Ուկրաինայի և նախկին Ահաստանի արվես-  
տում («Խորհրդային արվեստ», 1940, N 2—3):
- ճՂնդարձակ տարեցույց սղղային հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1901:
- Թեոդիկ, Ամենուն տարեցույց, 1926:
- Թեոդիկ, Տառ և տիպ, Կ. Պոլիս, 1912:
- Թորամանյան Ք., Հայկական ճարտարապետութուն, հ. II, Երևան, 1948:
- Թորոսյան Հ., Վարը Միսիթար Արբայի, Վենետիկ, 1901:
- Ժամկոչյան Հ. Գ., Ֆրիկի Երևր սաղերի մասին («Առվեստական գրականութուն»,  
1956, N 12):
- Ժամկոչյան Հ. Գ., Անի քաղաքի 13-րդ դարի Երկու արձանագրութունների մա-  
սին (Երևանի համալսարանի գիտական աշխատութուններ, 1955, հ. 47):
- Կալայան Ե., Ջանդեղուրի գավառ, Քիֆլիս, 1898:
- Կալայան Ե., Սիսիան (Պատմական տեսութուն) («Աղգագրական հանդես», գիրք  
Գ, N 1):
- Լեւին Վ. Ի., Երկեր, հհ. I—XXXV:
- Լեո, Խոջայական կապիտալ, հ. I, Երևան, 1934:
- Լեո, Հայոց պատմութուն, հ. III, Երևան, 1916:

- Լեո. Սահմանավեճեր, Թիֆլիս, 1919:
- Լեոնյան Գ., Հայ գիրքը և սպաղարության արվեստը, Երևան, 1946:
- Խ. Վ. Առան երկիր կամ աշխարհ («Արարատ», 1896, մայիս):
- Խ. Վ. «Արցախ, երկասիրեց Մակար Լպ. Բարխուդարեանց, Բարու, 1895» (գրա-  
խոսութ.) («Արարատ», 1896, փետրվար):
- Կարապետ Եպիսկոպոս (Տեր-Մկրտչյան), Նյութեր հայ մեկրություն մասին, Գո-  
փյանք և Մելիք-Շահնազարյանք, Էջմիածին, 1914:
- Կարապետ վարդապետ (Տեր-Մկրտչյան), Մահմեդական լուծը և նրա բնութան  
նկերք ծագող հայ վարդապետարանները (Արտասպություն, 1913 թ.,  
«Արարատից»):
- Կաբիճյան Արտ., Ահնարկներ հայ պարերական մամուլի պատմության, հ. I,  
Երևան, 1956:
- Կոստանյան Կ., Գովիք վարդապետ Ալավկա որդի («Ազգագրական հանդես»,  
1907, գիրք 15, սկիզբը 1906, դ. 14):
- Կոստանյան Կ., Համամ Արեւելյի, Վաղարշապատ, 1896:
- Կոստանյան Կ., Մ. Նաղաշի տաղերը, Վաղարշապատ, 1898:
- Կոստանյան Կ., Նոր ժողովածու, Ա և Բ պրակ, Թիֆլիս, 1892:
- Կոստանյան Կ., Տեր Պետրոս Ա Գևորգարձ, Վաղարշապատ, 1897:
- Հ. Ս. Վ. Ն., Նորագույն լուսավորություններ Արգար գյուղի մասին («Հանգես  
ամսօրյա», 1906, թիվ 11):
- Հակոբյան Թ., Չորք կամ Կապան (Հայկազան ՍՍԹ Գիտ. ակադ. «Տեղեկագիր»  
(հաս. գիտ.), 1950, № 4):
- Հագունի Վ. Ճաշեր և խնջույրներ Հին Հայաստանի մեջ, Վենետիկ, 1912:
- Հովհաննիսյան Աշ., Հակոբ Գ Ջուղայեցի կաթողիկոսի և տաճկահայ նվիրակու-  
թյան խնդիրը («Արարատ», 1915, № 2—3):
- Հովհաննիսյան Աշ., Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին («Արա-  
րատ», 1915):
- Հովհաննիսյան Աշ., «Հայ-ուսու օրինատացիայի ծագման խնդիրը», Էջմիածին,  
1921:
- Հովհաննիսյան Աշ., Նոր նյութեր հայ-ուսուսական պատմությունից, Մատ-  
թևոս Յովանիսեցու լիշատակարանը («Արարատ», 1915, № Ա.):
- Հովհաննիսյան Աշ., Պետրոս գի Սարգիս Գեյրանեցի, Էջմիածին, 1916:
- Հովհաննիսյան Աշ., Ֆրիկը պատմաբնական լույսի տակ, Երևան, 1955:
- Հովսեփյան Գ., Խաղրակյանք կամ Պոռչյանք, հ. I, Վաղարշապատ, 1928, հ.  
II, III:
- Հովսեփյան Գ., Հավուց Բառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ  
արվեստի մեջ, Երուսաղեմ, 1937:
- Հովսեփյան Գ., Ջագավանից ժողովր («Շողակաթ», դ. Ա, Վաղարշապատ, 1913):
- Հովսեփյան Գ., Մխիթար Այրիվանեցի. Նորագյուտ արձանագրություն և երկեր,  
Երուսաղեմ, 1931:
- Հովսեփյան Գ., Մկրտիչ Նաղաշի թուղթը Ֆլորենտիոյ ժողովի առթիվ («Արա-  
րատ», 1946):
- Հովսեփյան Գ., Հովասափ Սնրասացի («Արարատ», 1918, Գ—ԺԲ):
- Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի  
պատմության, պրակ 1, 1935:
- Ղաֆաղարյան Կ. Գ., Ավանի երկրիկյան ծածկագիր արձանագրությունը, Երևան,  
1945:

- Ղափաղաբայան Կ. Գ., *Ղվին բազարը և նրա պեղումները*, Երևան, 1952:
- Ղափաղաբայան Կ. Գ., *Երևանի Կաթուղիների և նորահայտ հուշարձանի զիմահան արձանագրությունները* («Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Պատմության և գրականության ինստիտուտի, գ. 1, Երևան, 1938):
- Ղափաղաբայան Կ. Գ., *Հովհաննիսյանը և նրա արձանագրությունները*, Երևան, 1948:
- Մանանդյան Հ., *Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները* («Հանդես ամսօրյա», 1928, թիվ 1—2):
- Մանանդյան Հ., *Քննական սեռայնություն հայ ժողովրդի պատմության*, հ. III, Երև-  
զան, 1952:
- Մարտիրոսյան Ա., *Մարտիրոս Ղրիմեցի*, Երևան, 1958:
- Մելիքսեր-Քելկ Լ. Մ., *Վարդապետը հայոց հյուսիսային կղզեաց* (գրադեղին),  
Թբիլիսի, 1928:
- Մելիքսեր-Քելկ Լ. Մ., *16-րդ դարու Ասորանի սրբի՝ Սարգսի բուսաշնչության հազվա-  
գյուտ արձանագրության մասին* (Հայկական ՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկա-  
գիր» (հաս. գիտ.), 1946, N 7):
- Մխիթար (րմ. Բ. Սեանյան), *Թարախյ Սրու անվան շուրջը*, Հորիզոն, 1912,  
N 35:
- Մլեյան Մ., *Գրիգոր Նարեկացի*, Երևան, 1955:
- Մնացականյան Աս., *Քոնդրակյան շարժման մի բանի գլխավոր հարցերի մասին*  
(Հայկական ՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1951, N 3):
- Մնացականյան Աս., *Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր*, Երևան,  
1956:
- Մնացականյան Աս., *18-րդ դարում գրված հայ-սուսական գաղնադրի հարցի  
շուրջը* («Թանրեր Մատենադարանի», N 4):
- Մուրբյան Հ. Գ., *Հին օրեր և այդ օրերուն հայ մեծատունները*, Վենետիկ, 1901:
- Նուրբաջյան Կ., Ա. Կասախկերտցու «Պատմության» մեկ ասորենթերցվածքի մասին:  
(«Թանրեր Մատենադարանի», N 4):
- Նուրբաջյան Վ., «151 թ. ազատագրական շարժման հետ կապված մի հարցի շուր-  
ջը» (Հայկական ՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953,  
N 12):
- Նշանյան Մեսրոպ վրդ., *Սրապուխյուն Երևմիս Չելեպի Քեամյուրճյանի* («Շուշա-  
կաթի», գ. Ա, Վաղարշապատ, 1913):
- Նշանյան Մ., *Ո՛ր է Ջուղայեցի Հակոբ Գ կաթողիկոսին հաջորդը* («Տաճար»,  
1912):
- Նուբայր Բյուզանդացի, *Տեղեկություն ի գիրս Տարօնագույ Աստղիկ կոչեցիցու*,  
Մոսկվա, 1889:
- Շանխարունյանց Հ. եղ., *Ստորագրություն կաթողիկե կջմիածնի և նինդ պատասպն*  
*Արարատայ, կջմիածին*, 1842, հ. II:
- Շանեապաբայան Կ. Վ., *Գաշանց թղթի քննությունն ու ներքուքը*, Պարիզ, 1862:
- Շանեապաբայանց Աս., *Ջարաբյան (երկայնարագուի) ասճմի ծագումը*, գաղթը գե-  
պի Ջորաղեա և նախորդները (Ճե-ՃԹԳ) («Շուշակաթի», գիրք աստղին-  
Վաղարշապատ, 1913):
- Շեւմազանյան Գ., *Ճամբորդական հիշատակարան* («Կուսունի հայոց աշխարհին»  
1863):

- Ոսկանյան Վ., *Հայ-ուստական հարաբերությունները 17-րդ դ. (Հայկական Սև Ռ. Գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1948, № 1*);
- Ոսկանյան Հ., *Նդիա Աստուածատրյան Մուշեղյան և իր գրական արտադրությունը, Վիեննա, 1927 (Հայկական ՍՍՌ Մասկնագարան)*;
- Չամչյան Մ., *Պատմություն Հայոց, հ. 11, III*;
- Պալասանյան Առ., *Հունաստանի անկախությունը («Փորձ» ամսագիր, 2-րդ տարի)*;
- Պալասանյան Առ., *Պատմություն Հայոց գրականության, Թիֆլիս, 1865*;
- Պալեյան Ալ., *Պատմություն կաթողիկե վարդապետության ի Հայաստան, Վիեննա, 1878*;
- Սավալանյանց Տ., *Պատմություն երուսաղեմի, հ. Ա, Բ, երուսաղեմ, 1931*;
- Պարսամյան Վ., *Հայ-ուստ հարաբերությունների պատմությունից (Հայկական ՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 7*);
- Պեղոսյան Ս. Պ., *Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—15-րդ դարերում, Երևան, 1956*;
- Պողոսյան Ս. Պ., *Նկեղեցական հաղատիրությունը Երևանի խնամությունում 17—18-րդ դդ. (Երևանի նամուսարանի գիտ. աշխատություններ, հ. 13)*;
- Չամբուրյան Հ., *Մ. Գոշր և նոր Գեորգի վանքը («Աշխատություններ Հայաստանի Պետ. պատմության թանգարանի», հ. 1)*;
- Ոսկանյան Մ., *Նիզամի Գյանջևին և նրա ստեղծագործությունը, Բարսու, 1947*;
- «Ս. Էջմիածինը հայ երգիչների տաղերում» («Արարատ», 1895, հունիս)
- Սահիբյան Ալ., *Քասախի բաղիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955*;
- Սամուելյան Խ., *Հին Հայ իրավունքի պատմությունը, հ. 1, Երևան, 1939*;
- Սարգսյան Ք., *Մեծին Ներսիսի քննաչված մտղարություն հուն քննարկի և անոր վերա եղած կրկին խմբագրությունը («Բազմավեպ», 1893, գեկտեմբեր և նոյնը, «Բազմավեպ», 1894, հունվար)*;
- Սարգսյան Բ., *Ազաթոն կամ Ազադորոն («Բազմավեպ», 1913, սեպտ.-հոկտ.)*;
- Սարգսյան Ք., *Ուսումնասիրություն հին կատարանի անվան գրոց վրա. Վենետիկ, 1893*;
- Սարգսյան Բ., *Ուսումնասիրություն մանրեկ-պալիկյան թանգարանիցիների պահպան, Վենետիկ, 1893*;
- Սարուխան Ա., *Բեզիա և հայերը («Հանդես ամսօրյա», 1935, թիվ 3—4)*;
- Տեր-Հովհաննեսյան Աստվածատուր, *Ժամանակագրական պատմություն ս. երուսաղեմի, Երուսաղեմ, 1890*;
- Տեր-Մինասյան Ն., *Նեստորականությունը Հայաստանում (Մ. Արեղյանի անվան գրակ. ինստ. «Գրական-բանասիրական հետախույզումներ», գ. 1, Երևան, 1946)*;
- Տումաշևի Վ., *Սասուն, Վիեննա, 1896*;
- Փափազյան Հ., *Մի Լջ Արևելյան Հայաստանի բազարական կյանքի պատմությունից (Հայկ. ՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, № 8)*;
- Փափազյան Հ., *Սևիյան Իրանի ախմիլյատարական բազարականության հարցի շուրջը («Բանբեր նաստանագարանի», Երևան, 1958, № 3)*;
- Փեշիկյան Ն., *Լիվոնայի ասաչին տղագրիչը հայ բահանա մրն կը («Բազմավեպ», 1937, հոկտեմբեր-նոյեմբեր)*;
- Փորթեղյան Բ. Ա., *Երբ և որտեղից են հայերը գաղթել Չերքեսիա («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3)*;
- Ուրմազյան Հ., *Մյունխեն 9—10-րդ դարերում, Երևան, 1958*;

- Ուրուբյան Մ. Վ., Պատմության հայտնի գաղթականության և շինության եկեղեցու նպաստը Լիբիանոյ բաղաբի, Վենետիկ, 1891:
- Ք. Պ. (Քերովի Պատանյան), Նշխարք մատենագրության հայտնի, ՍՊԲ, 1884:
- Քյուրայան Հ., Ա. Տր լա Մոսկի ուղեգրությունն հայտնի մասին (Առանձնատիպ):
- Քյուրայան Հ., Եսրայել Օրի (հոգվածաչար) («Հայրենիք», 1955—1957):
- Քյուրայան Հ., Կղևեն սպար և Եսրայել Օրին («Անահիտ», 1947, № 2):
- Բուշմեյան Ք., Պատմության գաղթականության երիմու հայտնի, Վենետիկ, 1895:

#### Բ. ՈՌՒՍԵՐՆԵՆ

- Адонц Н., Армения в эпоху Юстиниана, СПб, 1908.
- Али-Заде А., К вопросу об институте «инджу» в Азербайджане («Сборник статей по истории Азербайджана», т. I, Баку, 1949).
- Аракелян Б. Н., Гарин, т. I, Ереван, 1951.
- Арешян С., Заметки русских путешественников об Армении, (Հայկական ՍՍՐ Գիտ. տիպ. «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1951, № 3).
- Арутюнян Б. М., Крестьянские волнения в Сюни в X веке, Ереван, 1950 (Оттиск).
- Арутюнян П. Т., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М, 1954.
- Архив К. Маркса и Фр. Энгельса, тт. I, V, VI.
- Арцыховский А. В. Введение в археологию, М, 1947.
- Ахундов М. Ф., Избранные философские произведения, Баку, 1953.
- Бадалян А. Л., Население Армении со времени присоединения ее к России и до наших дней (Հայկական ՍՍՐ Գիտ. տիպ. «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 5).
- Базилевич К. В., Внешняя политика русского централизованного государства, М, 1952.
- Базилевич К. В., «Торговый капитализм» и генезис московского самодержавия в работах М. Н. Покровского («Против исторической концепции М. И. Покровского» (сборник I), М—Л, 1939).
- Бартикян Р. М., К вопросу о павликянском движении в первой половине VIII века («Византийский временник», т. VIII).
- Бартольд В., Арабские известия о русах («Советское востоковедение», т. I).
- Бартольд В., Историко-географический обзор Ирана, СПб, 1903.
- Бартольд В., История культурной жизни Туркестана, Л. 1927.
- Бартольд В., Кавказ, Туркестан, Волга («Известия Кавказского историко-археологического института», т. IV, Тифлис, 1926).
- Бартольд В., Место Прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925.
- Бартольд В., Персидская надпись на стене Анийской мечети «Мануче», СПб, 1911.
- Беленецкий А. М., К вопросу о социальных отношениях в Иране («Советское востоковедение», т. V).

- Белокуров С., Сношение России с Кавказом, М., 1889, т. 1
- Бердзенишвили Н., Джавахишвили И., Джанишия С., История Грузии, ч. 1, Тбилиси, 1946.
- Бонч-Бруевич В. Д., В. И. Ленин об устном народном творчестве («Советская этнография», 1954, № 4).
- Боровков А. К., К истории братства «ахи» в Средней Азии («Академику В. А. Гордлевскому к его 75-летию», Сборник статей, М, 1953).
- Васильев А. А., Византия и арабы, СПб, 1900.
- Васильев В., Труды, т. VI, Л., 1930.
- Веселовский А. Н., Опыты по истории развития христианских легенд, (ЖМНП, 1875—1877).
- Голубцова Н. И., Идеологическая борьба в Риме на рубеже IV и V вв. («Из истории соц. полит. идей», т. 1, М., 1955).
- Гордлевский Вл., Государство сельджукидов Малой Азии, М—Л, 1941
- Греков Б. Д., Якубовский А. Ю., Золотая орда и ее падение, М—Л, 1950
- Грен А. Н., Династия Багратидов в Армении (ЖМНП, 1893, т. 230).
- Гюзальян Л., Персидская надпись Кей Султана Шеддади в Ани («Сборник АН СССР», М—Л, 1935).
- Диль Ш., Основные вопросы византийской истории, Москва, 1947.
- Дондуа В., К социально-экономической жизни средневековой Грузии по анийской надписи Епифанния («Сборник АН СССР», М—Л, 1935)
- Егназаров С., Городские цехи, Казань, 1891.
- Е[пископ] К[иррион], Колонизация армян в Юго-западной России, Каменец-Подольск. 1903.
- Еремян С. Т., Джавахетские Захариды-Мхаргрдзели (Тмогвели) (*Ճիւղիւս-ժիր*).
- Еремян С. Т., Юрий Боголюбский в армянских и грузинских источниках (*Երևանի Պետական Համալսարանի Գիտական տղթատույթյաննր. հ. XXIII, Երևան*).
- Жузе П. К., Мутагалибы в Закавказье в IX—X вв. («Материалы по истории Грузии и Кавказа», вып. III, Тбилиси, 1931).
- Заходер Б. Н., История восточного средневековья, М., 1944.
- Заходер Б. Н., Хорасан и образование государства сельджуков («Вопросы истории», 1945, № 5—6).
- Зевакин Е. С., Пинчко Н. А., Очерки по истории генуезских колоний на Западном Кавказе в XIII—XV вв («Исторические записки», 1938, № 3).
- Ибрагимов Г. И., Крестьянские восстания в Турции в XV—XVII вв («Византийский временник, VII).
- Иванов М. С., Очерки истории Ирана, М., 1952.
- Иоанин Крымский, архим., Описание монастырей Ахпатского и Сананского, СПб, 1863.
- Иоаннисян А. Г., Движение тондракитов в Армении («Вопросы истории», 1954, № 4).
- Иоаннисян А. Р., Россия и армянское освободительное движение 80-х годов XVIII столетия, Ереван, 1947.



- «История Азербайджана», Баку, 1941.
- «История дипломатии», под ред. В. П. Потемкина, т. I, М., 1941.
- «История СССР с древнейших времен до образования древнерусского государства», изд. ГАНМК, т. I, ч. III—IV, М—Л, 1939.
- Карамзин Н. М., История государства Российского, тт. III, V, X, СПб., 1816—1824.
- Кирион, Культурная роль Иверии в истории Руси, Тифлис, 1910.
- «Колониальная политика российского царизма в Азербайджане», т. I, М—Л, 1936.
- Костомаров Н. И., Очерк торговли Московского государства в XVI и XVII ст., СПб., 1862.
- Ленин В. И. «Сочинения», тт. I—XXXVI, изд. 4-ое.
- Линниченко А. И., Черты из истории сословий в Юго-западной Галлицкой (Руси) XIV—XV вв. («Ученые записки Имп. моск. университета», вып. XX, Москва, 1894).
- Липшиц Е. Э., Византийское крестьянство и славянская колонизация («Византийский сборник», I, М—Л, 1945).
- Любомиров П. Г., История русской промышленности, М., 1947.
- Манандян Я. А., Краткий обзор истории древней Армении, М—Л, 1943.
- Манандян Я. А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954.
- Маркс К. и Энгельс Ф., Избранные произведения, тт. I, II, М., 1948.
- Маркс К. и Энгельс Фр., Сочинения, тт. I—XIV (издание второе) и тт. XV—XXIX (издание первое).
- Март Н. Я., Ани, Ереван, 1939.
- Март Н. Я., Аркаун, СПб., 1905.
- Март Н. Я., Грузинская поэма «Витязь в барсовой шкуре» Шоты из Руставы и новая культурно-историческая проблема (Изв. Акад. наук, 1917, т. II, сер. 6, № 7—8).
- Март Н. Я., Из поездки на Афон, 1899.
- Март Н. Я., Надгробный камень из Семиречья, ЗВОИРАО, VIII.
- Март Н. Я., Сборники притч Вардана, ч. III, СПб. 1894.
- Март Н. Я., Новые материалы по армянской эпиграфике (Записки Вост. отд. Импер. русск. археолог. общества, т. VIII, вып. I, II).
- Март Н. Я., Сказание о католикосе Петре и ученом Иване Козерне («Восточные записки», СПб., 1905).
- Машкин, Эсхатология и мессанизм в Римской республике («Известия Академии Наук СССР», 1946, № 5).
- Меликсет-Бек Л. М., Из истории русско-армянских отношений (*Հայկական ՍՍՏ գրտ. տղայ. «Տեղեկագիր» (Հտտ. գրտ.), 1954, № 4*)
- Микаелян Г., История Киликийского армянского государства, Ереван, 1953.
- Миллер Б., Об армянских надписях в Болгарах и Казани («Известия Российской академии истории материальной культуры, Ленинград, 1925).

- Муравьев К. А., Грузия и Армения, II, СПб, 1848.
- Насонов А. Н., Монголы и Русь, М—Л, 1940.
- Овсепян Г., Потомство Тарсанча Орбеляна и Минна Хатуна («Христианский Восток», т. II, вып. II).
- Оганесян К. Л., Зодчий Трдат, Ереван, 1951.
- Орбели И. А., Армянский героический эпос, Ереван, 1956.
- Орбели И. А., Проблема сельджукского искусства (Доклады III международного конгресса по иранскому искусству и археологии, Ленинград, 1935).
- Орбели И. А., Развалины Ани, СПб, 1911.
- Орбели И. А., Тревер К. В., Сасанидский металл, М—Л, 1935.
- Орлов А. С., Древняя русская литература (XI—XVII вв.), М—Л, 1945.
- Отамановский В. Д., Развитие городского строя на Украине в XIV—XVIII вв. и Магдебургское право («Вопросы истории» 1958, № 3), «Очерки истории СССР», IX—XIII вв., М., 1953.
- Папазян А. Д., Аграрные отношения в Ереванском ханстве в XVIII в., Автореферат, Ереван, 1954.
- Патканов К., Драгоценные камни, их названия и свойства, по понятиям армян в XVII в., СПб, 1873.
- Пахомов Е. А., Монеты Грузии, т. I, СПб, 1910.
- Пахомов Е. А., О монете Корике Куропалата («Известия Кавказского историко-археологического института», т. III, Тифлис, 1925).
- Петрушевский И. П., Азербайджан в XVI—XVII вв., т. I.
- Петрушевский И. П. Из истории героической борьбы азербайджанского народа в XIII—XIV вв., Баку, 1941.
- Петрушевский И. П., К вопросу о прикреплении крестьян к земле в Иране в эпоху монгольского владычества («Вопросы истории», 1947, № 4).
- Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX в., Ленинград, 1949.
- Петрушевский И. П., Хамдаллах Казвини как источник по социально-экономической истории Восточного Закавказья (ИАН СССР, 1937).
- Пигулевская Н. В., Иран на рубеже VI и VII вв., М—Л, 1946.
- Пирцхалайшвили А. Г., К истории выступления тбилисских эмаров в 1865 г. («Исторические записки» № 8, 1940).
- Пичета В. И., Крестьянская война и борьба с иностранной интервенцией в начале XVII века («Против антимарксистской концепции М. Н. Покровского», II (сборник статей), М—Л, 1940).
- Пичета В. И., Юрий Крижанич и его отношение к русскому государству («Славянский сборник», Москва, 1947).
- Полневков М. А., Проект хозяйственной эксплуатации оккупированных в XVIII в. Россией прикаспийских областей Кавказа («Материалы по истории Грузии и Кавказа», вып. IV, Тбилиси, 1937).
- Самойлов Ф. И., Описание Каспийского моря и окружающих в оном российских завоеваний, СПб, 1763.
- Скитский Б., Очерки по истории осетинского народа, Дзауджикау, 1947.

- Смирнов А. П., Армянская колония города Болгара («Материалы и исследования по археологии СССР», № 61).
- Смирнов Н. А., Россия и Турция в XVI и XVII вв., М., 1946.
- Соболев Н. П., Очерки по истории украшения тканей, М.—Л., 1934.
- Соловьев С. М., История России с древнейших времен, тт. XII, XVII, XVIII, изд. II-ое.
- Старокадамская М. К., Русское торговое население Генуезской Каффы («История и археология средневекового Крыма», М., 1958).
- Сыроечковский В. Е., Гости сурожане, М.—Л., 1935.
- Татишвили Вл., Грузины в Москве, Тбилиси, 1950.
- Татищев С. С., Внешняя политика императора Николая I, СПб., 1887.
- Тверитинова А., Восстание Кара Язычи и Дели Хасана в Турции, М., 1946.
- Тер-Аветисян С. В., Город Джуга, Тифлис, 1937.
- Тихомиров М. Н., Древняя Москва, М., 1947.
- Токарский Н. М., История армянской архитектуры, Ереван, 1946.
- Токарский Н. М., О местонахождении Даран-Дашта («Известия», Арм. филнала АН СССР, 1941, № 9 (14)).
- Толстов С. П., По следам древнехорезмийской цивилизации, М.—Л., 1948.
- Томара М., Бабек, Москва, 1936.
- Тревер К. В., Надпись о построении армянской крепости в Гарни, Ленинград, 1949.
- Тревер К. В., Якубовский А. Ю., Воронец М. Э., История народов Узбекистана, т. I, Ташкент, 1950.
- Успенский Ф. И., Морское и сухопутное движение из Центральной Азии в Европу и обратно в XIII—XIV вв. «Византийский временник», II (XXVII).
- Успенский К. Н., Очерки по истории Византии, ч. I, 1917.
- Устрялов Н. С., История царствования Петра I, т. IV, ч. 2, СПб., 1864.
- Фехнер, Торговля русского государства со странами Востока, М., 1956.
- Хаханов А. С., Положение армян в Грузинском царстве («Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1898).
- Хачикян Л. С., Армянские колонии на Украине в XVI—XVII вв. («Великая дружба» (сборник), Ереван, 1954).
- Цагарели А., Сношение России с Кавказом в XVI—XVII столетиях, СПб., 1891.
- Шелковников Б. А., Художественная промышленность средневековой Армении («Известия», Арм. фил. АН СССР, 1942, № 3—4).
- Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к России, СПб., 1852.
- Эйкен Г., История и система средневекового мировоззрения, СПб., 1907.
- Энгельс Фр., Анти-Дюринг, М., 1952.
- Энгельс Фр., Крестьянская война в Германии, М., 1952.
- Юзбашян К. Н., Тондракитское движение в Армении и павликяне (Հայկական ՍՍՌ Գրիտ. ակադ. «Տեղեկագիրք» (Հաս. գրտ.), 1956, № 9).

- Якобсон А. Л., Рецензия на книгу «Архитектура древней Армении» Н. М. Токарского («Византийский временник», 1950, III.).
- Якубовский А. Ю., Восстание Мукашны — восстание людей в белых одеждах («Советское востоковедение», М—Л, 1948, т. V).
- Якубовский А. Ю., Иран на грани VIII—IX вв. («Труды первой сессии арабистов»), Ленинград, 1937.
- Якубовский А. Ю., Мухмуд Газневи («Сборник в честь Фирдуси», Л., 1934).
- Янин В. Л., Нумизматика и проблемы товарно-денежного, обращения в древней Руси («Вопросы истории», 1955, № 8).

#### Գ. ԱՅԼ ԼԵՁՈՒՆԵՐՈՎ

- Adonz N., L'âge et l'origine de l'empereur Basile I. („Byzantion“, 1934).
- Adonz N., Notes Armeno-Byzantines („Byzantion“, 1934).
- Akulian A., Einverleibung armenischer Territorien durch Byzanz im XI Jahrhunderte, Grüningen, 1912.
- Bousset Wilhelm, Der Antichrist in der Überlieferung des Judentums des Neuen Testaments und der alten Kirche, Göttingen, 1895.
- Cahun L., Introduction a l'histoire de l'Asie, Paris, 1896.
- Chahan de Cirbied, Notice de deux manuscrits Arméniens, Paris, 1812.
- Daghbaschean H., Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Berlin, 1893.
- Dunkmeyer Fr., Korbs Diarum itineris in Moscoviam und die Quellen die es ergänzen, I, Berlin, 1909.
- Hammer-Purgstal, Geschichte der Ilchanen, I, Darmstadt, 1842—43.
- Häusser Ludvig, Geschichte der Rheinischen Pfalz, Heidelberg, 1845.
- Heigel, K. Th., Ueber den Plan des Kurfürsten Johann Wilhelm, von der Pfalz die Armenische Königs-krone zu gewinnen (1698—1705) (Sitzungsberichte der philos. philol. und der hist. klasse der Bayr. Akad. der Wissenschaften zu München, 1893, Bd. II, Heft III, München, 1894).
- Heyd W., Histoire du commerce du Levant, t. I—II, Leipzig, 1923.
- Heister, Geschichtliches über Bernstein, München, 1853.
- Hilsenbeck Ab., Johann Wilhelm, Kurfürst von der Pfalz von Ryswicker Frieden bis zum spanischen Erbfolgekriege („Forschungen zur Geschichte Bayerns“, XIII).
- Honigmann E., Die Ostgrenzen des Byzantinischen Reiches von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, Bruxelles, 1935.
- Johannissjan A., Israel Ory und die armenische Befreiungsidee, München, 1914.
- Konling, La question orientale et le slavisme transdanubien telle que se la représentait le tsar Michel Feodorovitch, Q. M. N., 1878.
- Kremer Al., Kulturgeschichte des Orients unter den Chalifen, I, Wien, 1875.

- Langlois V., Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie sous les rois de la Dynastie Roupénienne, S. Pétersbourg, 1860.
- Langlois V., La Tresor des Chartes d'Armenie. Venise, 1863.
- Laurent F., L'Alliance et filiation des premiers Taronites („Echos d'Orient“, 37/1939).
- Laurent F., L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'à 887. Paris, 1919.
- Lehmann-Haupt G. F., Materialien zur älteren Geschichte Armeniens, Berlin, 1902.
- Macler Fr., Mosaiques orientales, Paris, 1907.
- Macler Fr., Notes de manuscrits arméniens, REA, II, Paris, 1922.
- Macler Fr., Rapport sur une mission scientifique en Bukovine (REA VII, 1927).
- Marx K., Secret Diplomatic History of Eighteenth Century, London, 1899.
- Masse H., Le sultan seljoukide Keykubad I et l'Arménie, REA, 1929.
- Mendelson Bartholdy, Karl, Geschichte Griechenlands, I, Leipzig, 1870.
- Minorsky V., Studies in Caucasian History, London, 1953.
- Minorsky V., Transcaucasica, Paris, 1930.
- Ohsson d', Histoire des Mongoles, IV, La Haye et Amsterdam, 1835.
- „Revue des Etudes Arméniens“, II, Paris, 1922.
- Seth M., Armenians in India, Calcutta, 1937.
- Spuler, Bertold, Die Mongolen in Iran, Berlin, 1955.
- Tamarati M., Histoire du catholicisme en Géorgie, Tiflis, 1902.
- Tamarati M., L'église géorgienne des origines jusqu'à nos jours, Rome, 1910.
- Ter-Mkrtschian, Die Paulikianer im Byzantinischen Reiche, Leipzig, 1893.
- Thoptschian H., Die inneren Zustände von Armenien unter Aschot I, Halle a/s, 1904.
- Ulstein, Weltgeschichte, Berlin, 1908, Neuzeit, II.

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Արասյաններ — 422  
 Արաս-դուլի, Գանձակի խան — 335  
 Արաս-դուլի, Բարդուխան — 307  
 Արաս-Միրզա — 140  
 Արզար Գուլբ, Թոխատեցի — 7, 39—46, 49—51, 54, 58—60, 161, 386  
 Արովյան Խ. — 21, 204, 639—640  
 Արբաճաժ Կրեւացի — 141, 203, 231—232, 292, 379, 591  
 Արբաճաժյան Ա. Գ. — 465, 468, 608—609, 619, 621  
 Արբաճաժյան Վ. — 126  
 Արու Հասան — 471  
 Աղաթանգեղոս (ոմն, հույն) — 512  
 Աղաթանկ — 53  
 Աղաթոն — 14, 53—54  
 Աղարիա Ադուլեցի — 300  
 Աղարիա Ավազ (Ավազյան), Լրեանցի — 200—201, 242  
 Աղարիա գրիչ — 302  
 Աղարիա Ջահկեցի — 187, 279, 485—487  
 Աղարիա Ջուղայեցի — 7, 47—49, 78, 190  
 Արահվերդի խան — 73, 83, 96  
 Ալբանի (Կարդինալ) — 408  
 Ալեքսանդրի Վիլենցո, դ' — 25, 57, 71, 101, 135  
 Ալեքսանդր՝ իշխան (Ալշիլի որդին) — 549, 593  
 Ալեքսանդր II (Կաթսեթի թագավոր) — 16, 75, 77—78, 470—472  
 Ալեքսանդր VI (պապ) — 56  
 Ալեքսանդր VII (պապ) — 172—173  
 Ալեքսեյ Միխայլովիչ (ցար) — 439, 442, 446, 486, 488, 514  
 Ալմիրի (Կարդինալ) — 193  
 Ալի խան (Հաճի). — տե՛ս Հաճի Ալիխան  
 Ալիխան րեկ — 253  
 Ալի փաշա — 389  
 Ալիզուլի խան — 249, 255, 375  
 Ալիշան Ղ. — 12, 28—29, 32—34, 39, 43—44, 46, 50, 59—60, 64—65, 67, 70, 79, 108, 155, 176—177, 201, 213, 219, 230, 233—234, 236, 252, 269, 272, 281, 308, 312, 333, 378, 435, 466, 480, 510, 546  
 Ալխազ-Միրզա — 23  
 Ալխազ (ոմն) — 396  
 Alcides, Franciscus (Օրիլի ծածկանունը) — 518  
 Ալլարսյաճյան Ա. — 35, 180, 183, 279, 351  
 Ալիշան՝ Երզնկայի խոջա Պալիլի որդին — 432  
 Ախունդով Մ. Ֆ. — 287  
 Ակինյան Ն. — 40, 49, 189  
 Ահմեդ Քյոփրյուլլու փաշա — 151  
 Ահսիթան (շիրվանշահ) — 424  
 Աղաջան (Օրիլի ազգականը) — 239  
 Աղաջան՝ Փանարեուի տանուտեր — 255  
 Աղաջան րեկ — 313

- Աղաջան Ավրի կամ Նավրիի սրգի Աղա-  
ջան — 523—525
- Աղանյան, Գլուս բաճանա — 24
- Աղափիր՝ Նոր-Ջուղայի բալանթար — 192
- Աղերսանդր Ջուղայեցի (կաթողիկոս) —  
220, 302, 304, 398, 460, 575—576,  
594, 597, 604—605
- Աճառյան Հ. — 12—13, 57, 270, 273,  
475, 562, 600, 615
- Ամիր (սպարս) — 337
- Ամիրզումա խան — 86, 118—119, 133,  
136
- Ամիրխան — 312
- Այպեկ — 336
- Անանուն Աերաստացի — 67
- Անասյան Հ. — 181
- Անդրեաս Երեց — 140
- Անդրեաս պատրիարք — 44
- Անդրիաս (Բարդուղի աղան) — 559
- Անտոն Ապրակունիսեցի — 187, 190, 279,  
485—487
- Անտոն Չեղեղի — 383—384
- Անտոնիո զի-Սան-Նազարո — 190
- Անտոնիոս զի Ֆրանդոլի — 191
- Անտոնիոս Սուլթանշահ — 44
- Անուշիրվան — 186
- Ապրարսին Պլյար Մատվեյիչ՝ վոյեդա —  
619, 621, 623
- Ապրո Չեղեղի — 151, 160, 581
- Առարկ Բաղիշեցի — 10
- Առարկ Գավրիժեցի — 18, 28, 67, 72—  
73, 81—86, 90, 97, 99, 102, 104, 121,  
135, 140, 147, 164, 171, 231, 234,  
247, 250, 299
- Առարկ վարդապետ (մեծ) [Առ Գավրի-  
ժեցի] — 153
- Առարկ (արքեպ. Երևանի) — 201
- Առարկ Բորիկ Շոտթեցի — 150, 163,  
172—174, 218—219
- Առարկ կաթող. (Էջմիածնի) — 46
- Առարկ պատմագիր — 137
- Առարկ տաղասաց — 31
- Ասլամազ (ոմն) — 336
- Ասլան-բեկ (Հարկահան) — 136
- Ասլան (ոմն) — 336
- Աստվածատուր — 245
- Աստվածատուր Երեց — 150
- Աստվածատուր (խոջա) — 159
- Ավան չուգրաշի — 608—609
- Ավգուստ II (թագ. Լեհաստանի) — 334,  
352, 616
- Ավգուստինոս Բաջեցի կամ Բաջեկց —  
85, 177
- Ավգուլ բեկ — 395
- Ավգուրեղյան Թ. — 391
- Ավետիք պատրիարք (Պոլսի) — 296, 574
- Ավետիք Տիգրանակերտցի — 68
- Ավետիք (ժամանակագիր) — 88
- Ավետիս (Նոր-Ջուղայի բալանթար) —  
300
- Аврѣл. Р. — 358, 580, 616
- Արամ (բանագեաց) — 472
- Արդար վրդպ. — տե՛ս Բասաճակ Մակվեցի
- Արևիկոս — 29—30
- Արեշյան Ս. Գ. — 438
- Արխատեկո Լատտիվերոցի — 424
- Արխատեկո վարդապետ (ժամանակա-  
գիր) — 154
- Արզումբյան Հ. — 502, 637
- Արզումբյաններ — 79
- Արշիլ. վրդպ թագավոր — 202, 205—206,  
211, 213—214, 258—259, 305, 307,  
327, 329, 380, 439, 494, 507—508,  
513, 517—519, 522, 533, 548—549,  
551—553, 560—560—562, 573, 625
- Արշակունիներ — 188, 570, 639
- Արցիխովսկի Ա. Վ. — 422
- Բագրատ VI (վրդպ թագավոր) — 9, 424
- Բագրատունիներ — 201, 636
- Բաղալյան Ա. — 377
- Բաղիլիիչ Կ. Վ. — 446, 472
- Բախտամ-բեկ — 313
- Բաղդասար — 556
- Բամբարակ — 490
- Բարբարո (խաղաղի սուլթան) — 13, 57,  
434
- Բարդուղիմեոս Արգար բաճանա — 49—  
50
- Բարխուդյար (Աղաջան բեկի սրգի) — 313

- Բարխուղարյանց Մ. Վ. — 85, 306, 335, 620  
 Բարսեղ կաթողիկոս — 32, 34, 52  
 Բարսեղ Վարազեցի — 64  
 Բարսող Վ. — 421—425  
 Baronz — 352  
 Բաղդար Սուլթան — 306  
 Բելիոսիով Ս. — 472  
 Բերբերյան Շ. — 142  
 Berchet G.— 57, 121, 174, 189, 191, 197, 407, 486  
 Բերդի բեկ — 9  
 Բերկե խան — 470  
 Բերձենիշվիլի Ն. — 10, 206, 337, 507  
 Բերնյե, Ֆրանսուա — 128  
 Բժշկյան Մ. — 349, 351, 427, 431  
 Բոգոլյուբսկի Յուրի — 471  
 Բոլխալով Խորխա — 427  
 Բողզան Գուրգի — 351, 483—484  
 Բրայն Թոմաս — 482  
 Բրեններ Շ. — 315—316, 343  
 Բրտաս Մ. — 162, 205, 283, 286, 336, 582  
 Բուլավին — 517  
 Բուզղան բեկ — 350  
 Բուտիրլին — 473  
 Բուտկով — 613  
 Բուրբոններ — 261, 532  
 Գաբրիել (ժամանակագիր) — 282  
 Գաղար Վասիլի — 438  
 Գաղիկ Բագրատունի — 40, 45  
 Գալանոս Կղեմես — 48, 273, 576  
 Գալեմբյարյան, Գ. Վ. — 41, 109, 145—146, 159—160, 173, 219, 576, 594, 602—604  
 Գալուս (կղզիս պատեր) — 408, 585  
 Գասպար բեկ — 313  
 Գերմանոս (կալիսի.) — 231  
 Գիորգի XI (Շահ-Նավազ II Քարթլիի թագավոր) — տե՛ս Գուրգին խան  
 Գիորգի Սահակաձե — 473  
 Գյոթ-Վուլար — 81  
 Գուլիցին Բ. Ա. — 409  
 Գուլովին Ֆեոդոր Ալեքսևիչ, ռուս կանց-  
 լեր — 258—259, 269, 495, 499, 508, 516, 529, 532, 605  
 Գոչան Գ. — 350  
 Գոսվին Նիկկել — 274  
 Գորդլեսկի Վ. Ա. — 425—426, 615  
 Գորկի խան — տե՛ս Գուրգին խան  
 Գոտվես Անտուան — 83, 85, 100—101, 106—107, 112, 137, 376, 378  
 Գրեկ Մարսիմ — 354  
 Գրեկով Բ. Գ. — 423, 427, 429, 437  
 Գրիգոր (արքեպիսկոպոս Զովհաննեսի որդին) — 182  
 Գրիգոր (կաթողիկոս Էջմիածնի) — 26, 32, 34, 46, 52  
 Գրիգոր (Կոստան-բեյի որդին) — 523  
 Գրիգոր IX (պապ) — 56  
 Գրիգոր XIII (պապ) — 45—47  
 Գրիգոր Արճիշեցի — 13  
 Գրիգոր Գերեր (Գերար, Գերարյան) — 201  
 Գրիգոր (Գերար) Միրիման — 278  
 Գրիգոր գրիչ — 21  
 Գրիգոր Դարանաղցի (Կամախեցի) — 47, 84, 197, 116, 466  
 Գրիգոր Երևանցի — 286  
 Գրիգոր Լուավորիչ — 41, 43, 54, 106, 175, 347, 399, 426, 439, 460, 476, 500, 527  
 Գրիգոր Լուսիկենց (Լուսիկով) — 351, 419, 441, 482—489, 623  
 Գրիգոր Կեսարացի (պատրիարք) — 109  
 Գրիգոր Ղափանցի — 231  
 Գրիգոր Մուսարեկյան — 8  
 Գրիգոր Պարոնտեր — 231  
 Գրիգոր Վարազեցի — 33—34  
 Գրիգոր վրդալ. — 301  
 Գրիգոր Տաթևացի — 168  
 Գրիգոր Տուտուրի — 353  
 Грнгоубел К. — 20  
 Գրիգորիս կաթողիկոս Ալթամարի (Գրիգոր Փոքր) — 21, 53  
 Գրունդ Գերդ — 515  
 Գուլնաղար Առուխենց (Նաղար Արևխու-վիչ՝ Թարգման) — 520, 546  
 Գուտենբերգ — 56



Կարգին խան վրաց Գեորգի XI թագա-  
 վոր — 5, 16, 202, 205—206, 210—  
 213, 227, 265, 276—277, 280, 283,  
 305, 307, 309, 327—329, 337, 477,  
 484, 489, 506—507, 561, 572

Պանդուս — 121

Պաննոմ (խա Պաննան) — տե՛ս շահ  
 Պաննոպ (1)

Պապուկեր — 140

Պավրիթ — 57

Պավրիթ (մի եկեղեցական) — 307

Պավրիթ Անշաղիթ — 165—166

Պավրիթ արքեպ. (Սպանանի առաջնորդ) —  
 192

Պավրիթ Բաղիշեցի — 154, 161

Պավրիթ Բեկ — 236, 238, 255, 323, 360,  
 382, 459, 532, 536

Պավրիթ կաթող. — 61, 105, 107

Պավրիթ կալսեր Տրապիզոնի — 9

Պավրիթ Շինորար — 424, 470

Պավրիթ վարդապետ — 247

Պավրիթ խան — 336—337, 454, 613

Պարեհ — 486

Պերանո — 274

Պերերսո ֆր. — 435

Պրանիսիոս Արեոպոլիտացի — 166

Պոպոստկով — 381

Dankmeyer Fr. — 412.

Պեկա Վալե, Պիեզրո — 90—91, 101,  
 103—104, 112, 176, 188

Պուսի Լֆենցի — 564

Ելև Բովամ — 313

Ե. Կ. — տե՛ս Կիրիան

Եղչան Կ. Ա. (Эгов. Г. А.) — 35, 115, 207,  
 210, 213—214, 216, 218, 228, 230,  
 232, 238—239, 242, 244, 250—251,  
 255—257, 259, 261, 264—273, 277,  
 280—282, 291, 295—296, 298—299,  
 301, 311—313, 317, 324—326, 328—  
 330, 332, 338—340, 342—344, 346—  
 348, 353, 355—357, 359—360, 362—  
 367, 369—379, 373—376, 378—381,  
 383—384, 401—405, 410—411, 113,  
 446, 495—501, 503—508, 513, 515—

525, 527, 529—534, 536, 544—547,  
 551—558, 560—562, 568, 570, 596—  
 598, 600—601, 610—611, 613—614,  
 618—619, 621—624, 633

Ե. Նովա — 315

Եդիա — 53

Եդիա Բերկրեցի (Եդիսկոպոս) — 35

Եդիապար Այնթապցի — 111, 148—149,  
 151—155, 157, 160, 174, 217—218,  
 283, 294—299, 351

Եկատերինա I — 497

Եկատերինա II — 546, 605

Ենավր — 53

Եսալի՝ կաթողիկոս Գանձասարի — տե՛ս  
 Եսալի Հասան-Ջալալյան

Եսալի Հասան-Ջալալյան՝ Ազվանից կա-  
 թողիկոս — 122, 133, 259, 286, 293,  
 333—334, 358, 367—368, 378, 380—  
 382, 523, 526—527, 539—542, 545,  
 560, 606, 608—613, 619—624

Եսալի վարդապետ — 257

Եսալի Նշեցի — 168

Եվգենիոս Սավուպի — 273

Երեմիա կաթողիկոս Ազվանից — 209,  
 292—293, 332—333, 528

Երեմիա Չեկալի — 152

Երեմիա վրդպ. — 278, 319, 321

Երեմյան Ս. Տ. — 424, 698

Եփրեմ պատրիարք — 301

Եփրեմ բահանո — 321

Զարսուկեր Բ. Ն. — 93

Զալ խան — 204

Զարրանալյան Գ. — 49, 308

Զարար՝ խոջա — 481

Զարարիա Ազուկեցի — 94, 123, 127,  
 137—138, 141, 155—158, 161—162,  
 170, 175, 203, 207—209, 211, 217,  
 232, 235, 248, 290, 292, 309, 362,  
 443—444, 464, 477—478

Զարարիա կաթողիկոս — 11

Զարարիա Սարկալազ — 70, 118, 122,  
 129—131, 132, 136, 138, 144, 147—  
 149, 152, 156, 158, 161—162, 165,  
 168, 175, 202—208, 210, 217, 216,

248, 255, 286, 291, 295, 299—301,  
455, 467

Չարարիա Վաղարշապատցի — 102

Չարարիա Վարդապետի — 21

Չարարիա վարդապետ (սխիանցի) —  
109, 132, 264, 322—323

Չենո — 57

Չեփակիրն Ե. Ս. — 367, 431, 450, 453

Չուրար-բեկ — 352, 616

Չուրապ՝ Ալպեկի սրբի — 336

Էզփարզս — 28

Էզով — տե՛ս Եղյան

Էլիսա՝ պատեր — 409

Էլիզարար-բեկ — 359

Էլում (պարոն) — 336

Էլեկեն, Գ. — 55

Էնգելս Գ. — 20, 117, 128—129, 136—  
139, 395, 514, 601, 627—628, 635

Էտահնգեր Պ. — 352

Թսպետո՝ կաթողիկոս Էջմիածնի — 45—  
46, 74—75, 80

Թաղետո Աերաստացի — 36

Թաշիր բեգ — 375

Թահմազ-գուլի խան — 359—360

Թաղիազյան Մ. Գ. — 145, 639

Թամար թագուհի — 471

Թամուրյանկ — տե՛ս Լանկ-Թամուր

Թարգուլի (աղարակցի հայ առևտր.) —  
403, 538, 555—559, 570, 588, 594

Թեյմուրազ Բ Քարթլիի և Կախեթի թա-  
գավոր — 211, 336—337, 484, 477

Թեյմուրազ խան — տե՛ս Թեյմուրազ Ի  
Թեոփիկ — 44, 301

Թրլլրլյան(ներ) — 150, 152

Թիրտոս Կանգալեզ (Էդուարդի գեներալ,  
պատեր) — 408, 585

Թյուրկենցի (չալալի) — 81

Թոխիմաթ — 436

Թումա Մեծոփեցի — 8

Թումաս՝ Օվանեսի սրբի — 259

Թովմա Վանանդեցի — 168, 171—172

Թորոսյան Հ. — 159, 303

Թոփչյան Հ. — 251

Թումիկ՝ գերձակ — 466—467

Թորմար խան (Մահմեդ Թոխմախ) — 63

ժերարդեն փ. — 222

Իրն-Խարպարկ — 421—422

Իբն-Ֆաղան — 425

Իբրահիմ աղա — 251

Իբրահիմ խան — 231

Իգնատիոս (նվիրակ) — 145

Իլիաս — 313

Ինժոմ Ղուլի-խան Գանձակի — 74

Իմամ Ջաֆար — 248—249, 541, 544—  
545

Իմամ Թիզև — 287

Իմիրզա — 152

Ինսկենարիս IV — 56

Ինսկենարիս VIII — 56

Ինսկենարիս X — 213, 244

Ինսկենարիս XI — 297

Ինսկենարիս XII (Կան՝ Իննուշենարիս) —  
340, 408, 584, 589, 591

Իսղեֆ Մարիա (Եգուիա) — 593

Իսհանն լա Մաց — 542

Իսովի Պ. — 435

Իսահակ Մակվեցի (կամ՝ Արզար վար-  
դապետ) — 192, 293—294, 300, 311,  
543

Իսկանդեր Մունչի, պատմագիր — 71, 81,  
91, 97

Իսմայիլ փաշա — 367

Իսմայիլ բեկ (Սինոպոլիսյի տեր) — 9  
Իսրայիլ Երեց — 62

Իսրայիլ Եպիսկ. (Ազգանից) — 420

Իսրայիլ Որի — 199, 207, 223, 227—231,  
237—244, 246, 250, 253, 255—261,  
264—277, 280—286, 291, 295, 298—  
299, 305, 311—312, 316—318, 323—  
325, 327—334, 338—349, 353—376,  
378—380, 382—387, 401—405, 407—  
410, 412—415, 419, 446, 460, 466,  
474, 490—513, 515—522, 524—526,  
528—536, 538, 542, 544—574, 577—  
579, 581—626, 630—634, 637, 641,  
642.

Իսրայիլ՝ Օրիի հայրը — 525

- Խոֆենդոր — 9  
 Իվան Ահեղ, ցար — 430, 438, 467, 469  
 Իվան III, ցար — 471, 474—475  
 Իվան Կարապետ (Լիլի) — 608—609, 615  
 Իվանով Մ. Ս. — 90, 96, 447, 581  
  
 La Mamyre-Clairac — 309, 572, 598  
 Լազարյան Հ. — 502  
 Լազարյաններ — 637—638  
 Լալա (գեղջուկ) — 90  
 Լալա փաշա — 62  
 Լալալան Եր. — 35, 53, 65, 83, 85, 119, 235, 252, 270, 312  
  
 Լարև. գր — 177  
 Լահրուտ, գր — 155  
 Լանկ-Քամուր — 67, 310, 429, 434, 437  
 Լազար Խրիստոֆորով՝ Նավասարդի ժառանգներից — 606  
 Լեանդրո (Խաղացի) — 564  
 Լեո — 238, 240, 251, 311, 365, 405, 596  
 Լեոնարդ Արևի (Լալիակ.) — 376  
 Լեոպոլդ I (գերմանական կայսր) — 194, 198, 213, 289, 326, 347, 384, 408, 410, 412—413, 518, 551—552, 556, 565, 584, 590  
 Լեան (Թագ. Կախեթի) — 470—472  
 Լեոն (բանագնաց) — 472  
 Լեոն Ռուբինյան — 50  
 Լեոնյան Գ. — 50  
 Լը Բրյուն, Կոսենկ — 134, 366, 369, 515—516, 561, 582, 613, 617  
 Լիննիշենկու Ա. Ի. — 427, 430  
 Լիսցով Վ. Պ. — 285, 368, 446—449, 503  
 Լյուբոմիրով Պ. Գ. — 439  
 Լոյսլա — 593  
 Լուսրասր II (Քարթլիի թագավոր) — 24, 74  
 Լուդովիկոս (Կարլ VII Թագ. որդի) — 10  
 Լուդովիկոս Բուրնացի — 9, 10  
 Լուդովիկոս XIII — 108  
 Լուդովիկոս XIV — 163, 174—178, 180, 183—184, 186, 189, 191, 214, 222, 249, 261, 263—264, 296, 361, 413, 484, 581, 584  
 Լուկա Պ. — 361, 617  
  
 Լուլֆա գրիչ — 396  
 Լախանով Ա. Ս. — 471  
 Լանավլալ աղա — 392  
 Լաչատուր (ումն) — 396  
 Լաչատուր արևդա Ջուղայեցի — 455, 467  
 Լաչատուր Արզրուսցի — 278, 303  
 Լաչատուր Եթովպացի (Եվրոպացի, Երեց) — 59—60  
 Լաչատուր կաթով. (Սսի) — 46—47  
 Լաչատուր Կեսարացի — 166—168  
 Լաչատուր՝ Հովհաննես Տերղնցու որդին — 47  
  
 Լաչատուր Չարիկ՝ կաթողիկոս Աղթա-մարի — 52—53  
 Լաչատուր Ջուղայեցի — 166, 576  
 Լաչատուր վրդպ. (Նոր-Ջ. առաջնորդ) — 466—467  
 Լաչատուր քահանա (ումն) — 106  
 Լաչատուր քահանա (Վանից) — 245  
 Լաշիկյան Լ. Ս. — 8, 426  
 Լարսանդա խան — 68  
 Լոխովից (ազրբիջանցի իշխան) — 613  
 Լոռա Ախիջան Ղարսառաֆարի — 245—246  
  
 Լոռա (Աղ)այլիբ — 247  
 Լոռա Ամիրաղա — 245  
 Լոռա Անտոն — 23  
 Լոռա Աստվածատուր — 189  
 Լոռա Ավետիս — 189  
 Լոռա Աստված — 245  
 Լոռա Արամ — 245  
 Լոռա Ջիրար — 245  
 Լոռա Խրդր — 37—38  
 Լոռա Խոսրով — 159  
 Լոռա ՄԼրում — 460  
 Լոռա Միրար — 7—13, 481  
 Լոռա Մուրազ շաբեցի, գեապան — տե՛ս Մուրազ  
 Լոռա-Մուրազ — 107  
 Լոռա Նազար — 102—103, 108—109  
 Լոռա Շմավոն (Երևանի դառաֆխանայի պետ) — 156, 158  
 Լոռա Պալի (Երզնկացի) — 432  
 Լոռա Սափար — 102—103

Խոչա Սաֆար (վանկեր) — 246  
 Խոչա Սաֆար (սպահանկեր) — 457  
 Խոչա Սաֆրազ — 103  
 Խոչա Սեթ — 170  
 Խոչա Սուրիաս — 170  
 Խոսրով՝ սեղանավոր (չահեկեր) — 151—  
 152, 217  
 Խոսրով փաղիշահ (վանի) — 21  
 Խոսրով Գևորգ — 570  
 Խուզարանդա — տես Մահմեդ Խուզա-  
 րանդա  
 Խոնդրար (բռնավոր) — 68  
 Խորշիկ (բանադնաց) — 472  
  
 Ծատուր — 247  
  
 Կապիմիր III — 431  
 Կալիքստոս (պապ) — 9  
 Kakasch, Stephanus. — 83, 105  
 Կազանկաավացի Մ. — 420  
 Կաննայան Սա. — 375  
 Կառաֆա (եզուրիտ, գենեբ.) — 274  
 Կարամզին Ն. Մ. — 60, 430, 434—435  
 Կարապետ Բաղիշկեր — 31, 60, 476—  
 477  
 Կարապետ Բերկերկեր — 16  
 Կարապետ գրիչ — 428  
 Կարապետ եպիսկոպոս (վարդապետ)  
 [Տեր Մկրտչյան] — 19, 64, 251  
 Կարապետ Սասնեցի — 78  
 Կարպոստ (ազվ. եպիսկ.) — 420  
 Կարինյան Աբու. — 451  
 Կարլ V — 30—31, 58  
 Կարլ XII — 553  
 Կարլ Ֆրիդրիխ (Հովհ. Վիլհելմի Լեյբալթ) —  
 326  
 Կարլոս II — 280  
 Կարլոս VII — 10  
 Կարկուտ Օնոփրիոս (վարդապետ) — 153,  
 158, 161—162, 178—179  
 Կեմպեր, Էնգելերբա — 131—132, 288,  
 335, 370  
 Կիպրիանի (միտրոպոլիտ) — 354  
 Կիրակոս գրիչ — 343  
 Կիրակոս դպիր (ոմն) — 316

Կիրակոս Վիրապեկեր [Կաթողիկոս] — 145  
 Կիրիոն — 9, 427  
 Կլոդիուս Քրիստ (Clodius Christ) — 564  
 Կղեմես VIII — 49, 78, 104, 106, 112  
 Կղեմես IX — 173, 186, 189  
 Կղեմես X — 192—193  
 Կղեմես XI — 334, 552—553, 565, 585—  
 586, 593, 602, 604  
 Կղեմես XVI — 578  
 Կյուլենսերյան Բարկին — 47, 164, 475  
 Կոլրեր — 175—176, 181, 183—184  
 Կոլլա Ֆրանցիսկ, դե — 30  
 Կոլումբոս — 284  
 Կոզմաս III Մեղիշի — 277—280, 407  
 Կոնիբեր (Conybeare) — 106  
 Conling — 181  
 Կոնտարինի (խալացի ուղեգիր) — 57,  
 434  
 Կոստան-բեյ — 523, 525  
 Կոստանդ (Ռամազի որդին) — 113, 121,  
 444, 446, 526  
 Կոստանտին Կաթողիկոս (Սոխ) — 8  
 Կոստանդինոս Մեծ (կայսր) — 14, 41,  
 43, 198  
 Կոստանյան Կ. — 57, 335  
 Կոստամարով Ն. Ի. — 443  
 Կոստով Ֆեոդոր — 437—438  
 Կրեմեր — 139  
 Կրիժանիչ Յուրի — 512, 514  
 Կրուշինսկի, Բ. Թ. (Krusinski, J. Th.),  
 (Եղուխ տատեր) — 112, 134, 203,  
 248, 267, 283, 288—290, 325, 334  
 344, 350, 379, 458—459, 512—513,  
 553, 560, 563—567, 571—574, 578,  
 583—584, 586, 588, 590—599, 607,  
 612, 616—617, 620—622  
 Կուչուկով Վասիլի — 517  
 Կուրց Բ. Տ. — 441  
  
 Հարսուրգներ, Հարսուրգյան տուն —  
 30, 194, 198, 348, 551  
 Հախնազար — 252  
 Հակոբ պատրիարք — 192  
 Հակոբ Կարնեցի — 87, 94, 119—120,  
 155, 389—400

- Հակոբ Համգեցի (տեր Հակոբ) — 78  
 Հակոբ (IV) Զուգայեցի, էջմիածնի կա-  
 թողիկոս — 74, 111, 142, 144, 149—  
 151, 153—155, 158—159, 162—  
 164, 168—174, 178—179, 185—188,  
 191—196, 200, 202, 206—212, 214—  
 229, 222—223, 227, 230, 240, 254,  
 259—260, 262, 268, 276—277, 292—  
 295, 297, 306, 332, 351, 419, 487—  
 490  
 Հակոբյան Ռ. — 234  
 Հակոբյան Հ. — 13, 26, 28, 425, 439,  
 472  
 Հակոբջան (վարդապետ) — 167  
 Համթա փաշա — 94  
 Հայդել Կ. Ռ. (պրոֆեսոր) — 596  
 Հայրապետ Լրեց — 203  
 Հանգիյ Զոնս (Hanway Jonas) — 288,  
 564  
 Հաջի Գավուլ խան (գաղսաանցի) — 607  
 Հաջի Ալիխան — 306, 310, 325, 337  
 Հասան աղա — 383—384  
 Հասան բեկ (Ուզուն Հասան) — տե՛ս  
 Ուզուն Հասան  
 Հասրաթյան Մ. Ս. — 608  
 Häusser, Ludwig — 274  
 Հավթանդիլ\* Բախամբ բեկի սրդին — 318  
 Հարություն (աիրացու), Օրբի բարաու-  
 գարր — 353, 592—593  
 Հարություն (աղարակցի) — 556  
 Հարություն քահանա — 298  
 Հարությունյան Պ. Տ. — 535—536  
 Հեթում — 9  
 Հերակլ I Բագրատունի — 205, 211, 213,  
 484, 637  
 Հերերբա, Քոմաու — 100, 112  
 Hilsenbeck A. — 520  
 Հյուսիսին-խան բեկ (Իրանի գեսպան) —  
 449  
 Հյուսիսին փաշա — 21, 69  
 Հովակիմ (Կախուկոսոս) — 7  
 Հովակիմ Զուգայեցի (արքեպիսկոպ.) —  
 602, 603  
 Հովասափ գրիչ Ազվերձցի — 310  
 Հովասափ տաղասաց — 36, 38  
 Հովասափ վարդապետ Տաթևի — 251  
 Հովան Որոտնեցի — 166, 168, 172  
 Հովան Վիլնևմ. Պֆալցի կուրֆյուրաա  
 — 227, 261, 273—275, 280, 404, 520,  
 552  
 Հովան վրդպ. (վանահայր) — 621  
 Հովաննես (ոմն) — 64  
 Հովաննես Այնթապցի (Կախուկոսոս) —  
 48  
 Հովաննես Արձիշեցի — 18, 23  
 Հովաննես Կախուկոսոս (Քրակիս վերա-  
 տեսուչ) — 591  
 Հովաննես Երզնկացի — 168  
 Հովաննես Քյուբլյունսի — 152, 182—  
 183, 279, 351, 487  
 Հովաննես Մարեցի — 71  
 Հովաննես Կոզևոն — 178, 222  
 Հովաննես Մոզնեցի — 152—153  
 Հովաննես Մբրուզ (արքեպիսկոպոս) —  
 462, 576  
 Հովաննես Շապանոզի (Տաթևի վանա-  
 հայր) — 253, 321, 323, 478  
 Հովաննես Պալեոպ — 7  
 Հովաննես Զուգայեցի (վրդպ.) — 167  
 Հովաննես Տերզնցի — 44, 47, 59—60,  
 104—105  
 Հովաննես վրդպ. (Մաղկունոց ձորի) —  
 301  
 Հովաննեսյան Ա. Ռ. — 382  
 Հովնաթան Նազառ — 123, 130, 456, 541  
 Հովսեփ Աբրամյան (արքեպիսկ.) — 605  
 Հովսեփ Էմին — 569—637  
 Հովսեփ ք.Ն. Զուգալեցի — 630  
 Հովսեփյան Գարեգին, — 8, 13, 238—  
 239, 335, 523  
 Հուլազու խան — 243, 433  
 Հուլավյաններ — 433  
 Հունանյան վարդան — 351  
 Ղազար գրիչ — 236  
 Ղազար Կախուկոսոս — 47  
 Ղազար Զահեցի — 349, 538  
 Ղազար Սերգասացի — 152  
 Ղազար վարդապետ — 257  
 Ղազար քահանա — 72

- Ղազի խան — 81  
 Ղամբար (արար) — 622  
 Ղարախան — 256, 336  
 Ղարչխա խան — 96  
 Ղաֆագարյան Կ. — 422  
 Ղուբայի խան — 613  
 Ղուկաս Վանանդեցի — 169, 171, 319, 444, 511  
 Ճեառհրճյան Մաղարիա — 39  
 Մալա Պետրոս — 73  
 Մալխազ (տանուտեր) — 255  
 Մակար (հայ եկեղեցական) — 420  
 Մակելր Ֆր. — 32, 76, 183—185, 278, 352  
 Մահթի (Մահդի)-շահ — 26  
 Մահամազ (սուլթան) — 82  
 Մահմազ խան Թոխմախ — 62, 74  
 Մահմազ-զուլի խան — 130  
 Մահմատ Ռըզա խան — 256  
 Մահմեզ (մարզպան) — 55  
 Մահմեզ Խուդարանդա (շահ) — 61, 63, 70, 72, 83, 96, 473  
 Մահմուզ բեկ — 614  
 Մահմուտանր — 35  
 Մահմուտի Շահմուրազ — 179—183, 264, 323, 487  
 Մահֆարի՝ Մելիք Հախնազարի կինը — 313  
 Մամայ — 430  
 Ման, Ռաֆայել դյու — 57, 80, 104, 112, 114, 121, 128, 131, 140—141, 143—144, 175—176, 178, 183, 185—186, 191, 248—249, 362, 374, 400, 406, 457  
 Մանանդյան Հ. — 13  
 Մառ Ն. Յա. — 359, 434  
 Մանուկ (զինվոր) — 459  
 Մատթեոս (արքեպ.) նախիջհանի — 187, 190  
 Մատթեոս Մարեցի — 168  
 Մատթեոս Կարբեցի — 300  
 Մատթեոս Հովհաննիսեցի — 173, 177, 189—191, 197, 279, 350, 407, 484—485, 487  
 Մատթեոս Վանանդեցի — 169  
 Մատթեոս Ուսհայեցի — 427  
 Մարգարե գրիչ — 22  
 Մարզանտան — տե՛ս Մարի Անտան  
 Մարիա-դի-Սան-Ջովաննի — 190  
 Մարի Անտան (=Սուլթանշահ Թոխմա-տեցի) — 43, 45, 47, 49  
 Մարկո Պոլո — 433  
 Մարկոս — 297—298  
 Մարտիրոս կաթող. Աղթամարի — 148  
 Մարտիրոս՝ Օրբի ազգականը — 239  
 Մարտիրոս (վանահայր Մեյսարոս) — 358  
 Մարտիրոս Կաֆայեցի — 150, 152, 159, 172  
 Մարտիրոսյան Ա. — 172  
 Մարտ Կ. — 20, 117, 128—129, 133—139, 395, 474, 514, 601, 628, 634—635  
 Մարտիրիլյան 1 (կայսր) — 30, 477  
 Մեղիչիներ — 278  
 Մելիք Աղաջան — 256  
 Մելիք Ամիրխան — 251  
 Մելիք Բադի — 335  
 Մելիք Էմիրբեկ — 312—313, 360, 385, 402  
 Մելիք Իսրայել (Օրբի հայր) — 239, 256—257, 259  
 Մելիք Հախնազար — 313  
 Մելիք Հայկազ (Քշառադի) — 72—73, 109, 252—253, 313  
 Մելիք Մարտիրոս — 256  
 Մելիք Յավրի (Մելիք Շահնազարի որդին) — 117—118  
 Մելիք Յավրի (Աղաջանի որդի) — 523  
 Մելիք նարին — 312  
 Մելիք Շահնազար (Գեղամա) — 72, 117  
 Մելիք Շաֆրազ — տե՛ս Մելիք Սաֆրազ  
 Մելիք Սաֆրազ — 312—313, 339, 385, 402—404, 532  
 Մելիքսեղեկ եպիսկոպոս — 43  
 Մելիքսեթ-Քեկ Լ. Մ. — 423  
 Մելիքսեթ կաթող. (Էջմիածնի) — 61, 104—105, 109, 143, 146  
 Մելրոն նազար — 184  
 Մելրում (ազարակցի) — 556

Մեկրում՝ Գասպարի որդին (աշարակցի) — 624  
 Մեկուս — 165, 466  
 Մենդեկսոն Բարտոլդի, Կարլ — 512  
 Մենեկատի (պատեր) — 281  
 Մեսրոպ Կաթոլիկ — 320  
 Մեսրոպ Երեց — 630  
 Միլլեր Բ. — 425, 430  
 Մինաս գրիչ (սեբաստացի) — 20  
 Մինաս գրիչ — 119  
 Մինաս Համդեցի — 296, 298, 300, 392 — 393  
 Մինաս՝ վարդան — 103  
 Մինաս վրդպ. (Կաթողիկոս ամուսնակալ) — 523—524  
 Մինաս վրդպ. Տիգրանյան — 241, 285, 329—330, 332, 340—341, 346, 378—379, 403—404, 407—408, 494, 496—497, 501, 516, 519, 521, 524, 525—526, 528—529, 532, 534, 554, 557—558, 570, 585, 589, 593, 601, 610—611, 613—614, 620—623, 632  
 Մինորսկի Վ. — 91, 96—97, 140, 237—238, 360—361, 370, 424, 447  
 Միշկ (Ֆրանս. դեսպանորդ) — 560, 581—583, 598—599  
 Միր Վեկո (աֆղանների պարագլուխ) — 560, 572—573  
 Միրաբ (ոսո) — 390  
 Միրզա Բահիր — 539  
 Միրզա Իբրահիմ — 127  
 Միրզա Ղուլի բեկ — 335  
 Միրզա՝ խոջա — 151, 159  
 Միրզայեկ գրիչ — 392  
 Միրզայեկ Սերաստացի (Էջմիածնի կաթողիկոս) — 21, 26—27, 32, 33—35, 39, 40—41, 43, 50—51, 51—52, 406  
 Միրզայեկ Վանանդեցի — 169  
 Միրզայեկ վարդապետ (Շամբեցի) — 153, 156, 293  
 Միրզայեկյան Գ. — 428  
 Մխիթար Գոշ — 168, 375  
 Մխիթար վարդապետ — 153  
 Մխիթարյաններ — 46  
 Մխչիխյան Գևորգ վրդպ. (Մխչիխյան) — 397—401

Մկրտիչ Եղաշ — 8  
 Մնացականյան Աս. — 475—476, 502  
 Մոթոս գր Լա — 18, 397  
 Մոնի դե (de Moni) — 361  
 Մոնտեհիուսի (ղորահրամանատար) — 199  
 Մովսես Արծևեցի — 12  
 Մովսես բանասեր — 169  
 Մովսես Երեց — 235, 302, 308—309 354  
 Մովսես Խորենացի — 171, 278, 315  
 Մովսես վարդապետ — 119  
 Մովսես վրդպ. (Տաթևի) — 320  
 Մովսես Տաթևացի կաթողիկոս — 157, 164—166, 172  
 Մրմրյան Հ. Գ. — 147, 149  
 Մուղալ բեկ — 472  
 Մուհամմեդ Գիրեյ — 65  
 Մուհամմեդ Խուզարանդա — տե՛ս Մահմեդ Խուզարանդա  
 Մուշեղ — 37  
 Մուշեղյան Եղյա — 238, 570—571, 612  
 Մուրադ (սուլթան) — 82  
 Մուրադ (ղազանդեցի) — 182, 264  
 Մուրադ (շաբեցի խոջա, դեսպան) — 472  
 Մուրթուղա-ղուլի խան — 256, 291, 333 — 335  
 Մուսարևկենց տոհմ — 255  
 Մուստաֆա, վեզիր — 120  
  
 Յակուբովսկի Ա. Յու. — 93, 139, 427, 429, 437  
 Յաղուր — 13  
 Յաղուր — 367  
 Յան Կաղիմիր (Սաղ.) — 350  
 Յան Սորեակի — 222, 348, 350—352 489  
 Յանին Վ. Լ. — 422  
 Յուզբաշյան Կ. — 424  
 Յուզբուր՝ խան Գանձակի — 335  
 Յուսուֆ խան (Շիրվանի բեկլարբեկ) — 96  
  
 Նազիր շահ — 139, 334, 357  
 Նազար Ալի-խան — տե՛ս Հերակլ I

Նազար Արեխովիչ — տե՛ս Գուլնազար Ա-  
ուսխանց

Նալբանդյան Մ.— 610

Նահապետ Նղեսացի — 297

Նահապետ կաթողիկոս — 283, 289—304  
311, 352, 523, 558, 593

Նաջաֆ Ղուլի խան — 122

Նալիմի (Քուրբ ժամանակագիր) — 81

Նավասարդ (Ինժեներ-կապիտան) — 362  
— 363, 605—606

Նասեր՝ գրիչ — 429

Ներսես Աշտարակեցի — 639

Ներսես ՄԼԺ, Պարթև — 10, 15, 54, 106,  
175, 194, 198, 263, 397—398, 569,  
639

Ներսես (կաթողիկոս) — 293

Ներսես կաթող. (Աղվանից) — 293, 378

Ներսես Երևանցի՝ կապույտ — 281, 282,  
325, 334, 345

Ներսես Մոկացի — 510

Ներսես Շնորհալի — 263, 569

Նիկիտին Աֆանասի — 437

Նիկոլ Թորոսովիչ — 281, 349, 351

Նիկոլայ I — 362, 569

Նիկոլոս գալիբ — 34

Նիկոլայոս V պապ — 9

Nicolas de Nicolay — 380

Նյուանթևի, զը — 173, 191

Նշանյան Մ. Վ.— 145

Նուրիկիչ (Իհնահայ) — 353, 593

Շահ-Աբրահամ I — 61, 72—73, 75, 78—  
84, 86, 89—92, 94—104, 107—113,  
116—117, 120, 131, 133, 176—  
177, 188, 246—250, 357, 360, 363,  
437, 473, 548, 632

Շահ-Աբրահամ II — 103, 122, 247, 350,  
482

Թահմազ (Դահման) — 22—26, 35—36,  
38, 51, 54, 57, 61, 70—73, 84,  
89—101, 112, 237, 335

Շահ-Իսմայիլ Աեֆեի (Խաթայի) — 16,  
31, 54, 57, 61, 89, 116, 176

Շահ Նավազ խան (Վախթանգ V թագ.) —  
204

Շահ Նավազ II — տե՛ս Գուրգին խան

Շահ Սեֆի — 97, 129, 336

Շահ Սուլեյման — 95, 112, 176, 190,  
201, 247, 249, 286, 297, 306, 310,  
315, 335, 337, 350, 468, 478, 482—  
483, 488, 576

Շահ Սուլթան Հուսեյին — 133—134, 205,  
249, 285, 287, 337, 359, 375, 409,  
538, 540, 544, 561, 577, 597, 599, 605

Շահամիրյաններ — 637

Շահխասանց խոջա Խաչիկ — 102

Շահմուրազ — տե՛ս մահաբի Շահմու-  
րազ

Շահնազար խան — տե՛ս Արշիլ

Շահնազար Ալի խան (Շահնազար խան  
Ախալցխայի) — 350

Շահնավազ խան (Գիորգի X, թագ.) —  
231

Շահրիար Աղարար — 375

Շահրուբ — 23

Շահումյաններ — 236

Շամպլոն (Եղուխա) — 408—409, 562,  
577

Շարաֆ՝ իշխան — 118

Շարդեն — 90—91, 93, 113, 116, 121,  
129, 131—132, 134, 137—139, 144,  
147, 155—157, 161, 175, 179, 185—  
186, 201, 249, 268, 289, 299, 360—  
361, 363—364, 367, 370, 374, 378,  
445, 457

Շեյխ Ալի խան — 198

Շեյխ Սեֆի — 17

Շեհրիմանյան Մարգար — 213, 384

Շեհրիմանյան Սահրատ — 480

Շեհրիմանյաններ — 384, 447, 480—481,  
575—576, 586

Շերեֆ-էդ-դին, բուրդ պատմիչ — 12

Շիրվինդեր — 123

Շիրարեբդեր — 144

Շինոն, Գարրիել — 100, 116, 132, 134,  
201, 249, 254, 366, 455

Շիր Փալանդ — 460

Շիրլի Լորայններ — 80, 99, 111, 177

Շիրմազանյան Գ.— 639

Շիրմանյան (պարոններ) — տե՛ս Շեհրի-  
մանյաններ



- Շմափոն (Զարարիա Ազուլեցու եղ-  
բայրը) — 157
- Շմափոն վրդպ. — 315
- Շոպեն Ի. — 115
- Spuler, B. — 470
- Պական երևանցի — 29, 168, 171—172,  
182, 184, 234, 361
- Պականյան Վ. — 481, 483
- Պակյան Լ. — 238, 333, 571, 612
- Չամչյան Մ. — 25, 29, 32, 35—36, 42,  
51, 146, 149—150, 155, 160, 218—  
219, 231, 295, 302—303, 406
- Չելիպի Ազարիա—տե՛ս Ազարիա Ավագ
- Չրազ-Սուլթան — 81
- Պալասանյան Սա. — 100, 132, 133
- Պալևորդ — 179—181
- Պարմա Պևարոս Պատուրս՝ արքեպ. Ան-  
կյուրիայի — 304, 409, 457
- Պայճյան Ա. Վ. — 47—48, 219
- Պախտով Ե. Ա. — 423
- Պաշայզար խան — 359
- Պապ — 252
- Պավլի (Մոսկվայի դեպան) — 437
- Պատկանով Ք. (Ք. Պ.) — 28, 86, 177, 189
- Պարսամյան Վ. — 448
- Պացիֆիկ (կրոնավոր) — 108
- Պեոբ Զոն (կապիտան) — 440, 517
- Պեարիկ, Աստվածապով (խոջա «Արև-  
զիկ») — 188
- Պեարիկ, Մուրադ — 188
- Պեարիկ շելպի — 189
- Պետրիկ, Պետրոս (P. Bedik) — 102, 141,  
145, 161, 163, 173, 176, 187—  
189, 191—202, 206, 208, 211—212,  
216, 240, 242—243, 262, 278—279,  
282, 289—290, 356—357, 378, 440—  
441, 484, 487
- Պետրոս (հարեշահայ կրոնավոր) — 32
- Պետրոս (ղափանցի հայ) — 278
- Պետրոս վրդպ. Վաչոյ-ձորի — 301
- Պետրոս Մեծ — 259, 287, 327, 341, 355,  
367, 380—381, 410—412, 440, 467—  
468, 494, 497, 499, 502—503, 507—  
510, 514—517, 522, 527, 529—531,  
543, 545—546, 549, 551, 570—571,  
580, 584, 590, 600—601, 603, 605—  
606, 608, 612, 614—615, 618—619,  
622, 624—625, 634
- Պևարոս կաթող. (Ազվանից) — 122, 335,  
488—489
- Պևարոս II (Սազ. Պորտուգալիայի) —  
280
- Պևարոս զի Սարգիս Գլխանկնց — 601
- Պևարուշեակի Ի. Պ. — 72, 81—82, 91—  
92, 97, 112, 132—133, 237—238,  
251, 335, 363, 370, 470, 607—608,  
613
- Պերպերյան Հայկ — 582
- Պիգուլիսկայա Ն. Վ. — 420
- Պիկեր Ֆրանսուա — 297
- Պինչո Ն. Ա. — 431
- Պիոս (պապ) — 43—44
- Պիշետա Վ. Ի. — 349, 514
- Պիսկոպ Ֆրանցիսկոս — 163, 173, 187—  
188, 191—195, 197—199, 202, 212—  
213, 262
- Պիրոմալի — 172
- Պյանո Կարպինի — 433
- Պլեշեն — 473
- Պհաթուր — 313
- Պնեաթ (խոջա) — 159
- Պոլ Սիմոն — 106
- Պոլիվկատով Մ. Ա. — 514
- Պոզեր Հայնրիխ — 107—108
- Պոզարյան Նորայր — 68, 155, 217—218,  
231, 298
- Պոզոս արքեպ. — 428
- Պոզոս IV — 105
- Պոզոս V — 80
- Պոզոսյան Ս. — 143, 170
- Պոպով Միխայիլ (առևտրական) — 618
- Պոտիև — 273, 281, 341
- Պոսշ իշխան — 566, 569, 584, 588
- Պոսշ Խաղրակյան — 243
- Պոսշյան (տոհմ) — 238—240, 243—244,  
266, 339, 498, 569—570, 588
- Պրոկլ — 166
- Պուլյե (Poulllet) — 101, 113, 183, 249 —  
250, 455

Զալալյան — 293, 338, 359, 360  
 Զաղաթյաններ — 14  
 Զահուկյան, Զահուկյանք — 151—152  
 Զելայիրյաններ — 14  
 Զենկինսոն — 17, 472  
 Gemelli Careri — 335  
 Զղալ օղլի Սինան փաշա — 84  
 Զհանշահ — 11, 12, 367  
 Զուզեփ (հարկացի Ղազարոսի որդին) — 182  
 Զուշյաններ — 433  
  
 Ռադին Ստեփան — 442, 485, 505—506, 515  
 Ռակոցի (իշխան) — 551  
 Ռալֆոնդո (պատեր) — 192  
 Ռայկոս — 218, 512  
 Ռաչնալդուս — 29, 40—41, 406  
 Ռենդել (Ասորայսանի նավերի կապիտան) — 624  
 Ռըդա խան — 161, 290  
 Ռինգհուրեր — 471  
 Ռիշելիս (կարդինալ) — 108, 183  
 Ռոգես Ալերսանդր, դքս — 142, 441  
 Ռոմանովներ — 639  
 Romilié — 184  
 Ռոստոմ խան — 119, 133, 210—211  
 Ռովիդո Մինանդոցի, դե — 70  
 Ռուբեն, Սասունի իշխան — 9  
 Ռուբինյաններ — 39  
 Ռուբրուկ (ճանապարհորդ) — 433  
 Ռուզուֆ II — 30, 75, 81  
  
 Սահակ (տանուտեր) — 255  
 Սահակ Պարթև — 54, 223, 315, 639  
 Սահմադին՝ խոջա — 487  
 Սահրատյան Զարար (խոջա) — 480  
 Սամոյլով Ֆ. Ի. — 438  
 Սամվել Անեցի — 71  
 Սամվել դպիր — 390  
 Սանսոն — 113—114, 131—132, 134, 249, 254, 266, 370, 374  
 Սանտա-Սեկերինա (կարդինալ) — 49, 78—79  
 Սանտալա, դե (Լեուրտներ գեներալ) — 565

Ասանյաններ — 421  
 Սավալանյան Տ. — 149, 151  
 Սատաղ-բեկ — 251  
 Սարգիս դրիշ (Գորիս գյուղացի) — 235  
 Սարգիս (համբ. պետ) — 147  
 Սարգիս Երեց — 65  
 Սարգիս Բեքիրզադցի — 152  
 Cerceau Du — 563  
 Սարգիս Քոխտալցի — 160  
 Սարգիս վանահայր (Հովհանավանքի) — 310  
 Սարգիսյան Բ. — 16—17, 23, 59, 63, 65, 150—151, 174, 186, 398, 432  
 Սարուխան Ա. — 169, 233  
 Սաֆրազյան Ա. — 607  
 Սաֆրազյաններ — 312  
 Սերաստիան Քնապ — 272  
 Սեթ Մ. (Seth) — 450—452  
 Սեղբեստրոս (պապ) — 41, 43  
 Սեն-Մարտեն — 324, 344  
 Սենեբերիմ Արծրունի — 40, 45  
 Սենեբերիմ (գողթնեցի) — 460  
 Stocklein — 563, 566, 573  
 Սե Պետրոս (ազանդավոր) — 467  
 Սեփի խան (Բսալյանի որդին) — 359  
 Սեֆեր (Սաֆար) նուրհիկի — 352  
 Սեֆի-զուլի խան — 161, 202—204, 207, 254, 256, 290  
 Սեֆյան զվարաշներ — 13  
 Սեֆյան գինաստիա — 15, 563  
 Սեֆյաններ, Սեֆևիդներ — 7, 16, 18, 56, 80, 90—92, 94—95, 98, 107, 110, 112, 131, 133—134, 141—142, 153, 176, 198, 202, 205, 247—250, 268, 285, 287, 317, 357, 369, 450, 487, 509, 564, 568, 632  
 Սիմեոն (Թագավոր Քարթլիի) — 30, 61, 73—79, 470, 472  
 Սիմեոն Ապարանցի — 68—69  
 Սիմեոն դպիր Լեհացի — 49, 86, 189, 279, 377, 387—388  
 Սիմեոն Զուզայեցի — 166  
 Սիմեոն կաթող. (Երկրց Մանկունքի) — 293, 332—333  
 Սիմեոն Երևանցի — 300, 334

- Սիմեոն կաթող.— 51—52, 148, 153, 169,  
 208—209, 211, 334  
 Սիմեոն Պետրովիչ՝ կրօնավոր—351—352  
 Սիրոյնշկովսկի Վ. Ն.—437  
 Սիմոներ (Օրբի բարատուգարը) — 623  
 Սկանդար շահ—12  
 Սկանդար Միրզա — 313  
 Սկիտակի Բ.— 420—421  
 Սկրոդեր, Յոհան (=Շրոդեր)—234, 236,  
 557—558  
 Սմբատ I—423  
 Սմբատ Սեֆեդինյան—11  
 Սմբատյանց Մեսրոպ—38, 95, 106, 118,  
 247, 251, 257, 270  
 Սմիրնով Ա. Պ.—425  
 Սմիրնով Ի. Ա.—80  
 Սմիրնով Ն. Ա.— 262, 432, 436, 469,  
 473  
 Սյուրմեյան Արտավազդ արքեպ.— 231,  
 233, 235  
 Սորոկ Ն. Ն.—114  
 Սուլովյով Ս. Մ.— 287, 412, 443, 516,  
 580  
 Սողոմոն — 182  
 Սողոմոն Լեոնյան (Ոսկան Երևանցու  
 ընկերը)—184  
 Սոֆիա Պալուցոզ—475  
 Սոֆի (զղրբաշ ցեղապետ) — 16, 57, 64  
 Սպադա, դե (կարգիճալ) — 408, 585  
 Սպախար, Նիկիտաս (հուն)—512—513,  
 529, 533  
 Սվլատտուրով — 423—424  
 Ստարոկազոմսկայա Մ. Կ.—429  
 Ստեփանոս Առընջեցի (կաթողիկոս)—  
 34—35, 52  
 Ստեփանոս Չփրալ (Առնջեցի) — 35  
 Ստեփանոս Բասիլիոս—460  
 Ստեփանոս Գեղարդեցի եպ.—153  
 Ստեփանոս Գաշտեցի—294, 419, 460—  
 464, 466, 557, 576  
 Ստեփանոս Թոխատեցի—67, 432  
 Ստեփանոս Լեհացի (Իլլովցի)—153, 164  
 Ստեփանոս Նախավկայեցի— 85  
 Ստեփանոս (արքեպ.) (Ամենափրկիչ  
 վանքի վանահայր)—192  
 Ստեփանոս Ռոշրա— 173, 325, 329,  
 340—345, 407—408, 559—560, 569,  
 584—592, 594—595, 612  
 Ստեփանոս Սալմասեցի, կաթողիկոս —  
 7, 26—35, 39, 51  
 Ստեփանոս բաճահա (Սպահանից)—106  
 Ստեփանոս՝ Փոքր Շիկ Մանուկի աղա —  
 247  
 Ստեփանոս, վրդպ. (Նոր-Ջուղայի առաջ-  
 նորդ) — 298, 300—303  
 Ստեֆան Բատտրի—349  
 Ստեֆանուս Ասեմանուս — 29  
 Ստրարոն — 420  
 Struys, Jean — 114, 357, 448  
 Stoeklein (Ստոկլեյն) — 566  
 Սրապիոն (կաթ.)—297  
 Սրվանձոյան Գ.—11, 31, 109, 301  
 Սուլեյման բարա (բեյ)—367—368, 506,  
 533, 560, 614—615  
 Սուլեյման սուլթան — 117  
 Սուլթան՝ Արզարի որդի—41  
 Սուլթան Ալիբեկ (բուրդ ցեղապետ)—237  
 Սուլթան Ահմադ — 613  
 Սուլթան Բայազեթ—474  
 Սուլթան Իբրահիմ—188  
 Սուլթան Մահմուդ (II) — 10, 117  
 Սուլթան Մահմուդ (Մուհամմեդ) (III)—  
 72, 88, 168  
 Սուլթան Մահմուդ (IV) (Մուհամմեդ  
 Մահմեդ) (IV) — 148, 392—393, 478  
 — 479  
 Սուլթան Մուրադ (III) — 61, 65, 68,  
 92, 120, 469  
 Սուլթան Մուրադ (IV) — 181, 188—189  
 Սուլթան Սելիմ II — 469  
 Սուլթան աղա (մելիք Հախնազարի  
 մայրը) — 313  
 Սուլթանշահ Թոխատեցի (=Մարկ Ան-  
 տոն) — 7, 39—40, 42—47, 49—50,  
 54—59, 78, 105  
 Սուխանով, Արսենի — 438  
 Սուրխա Գառնեցի—286, 295, 307, 479  
 Սուրխայ — 454  
 Վախթանգ Գորգասար—420  
 Վախթանգ (Գուրգին խանի եղբորոր-  
 դին)— 206

Վախճանդ VI — 211, 214, 582  
 Վահան Գողթնեցի—124  
 Վասակ—336  
 Վասակ (Սյունեցի) — 308, 354  
 Վասիլ III (ցար)—30  
 Վասիլև Միրոն (կամ Մուստաֆին)—494,  
 521—525, 528, 531—532, 536, 544—  
 545, 550, 610  
 Վարդան Օձնեցի — 292  
 Վարդան (Օրիի եղբայրը)— 257, 339  
 Վարդան Բաղիշեցի— 87—88  
 Վասսաֆ (իրան. պատմիչ)—433  
 Վարվառն կույս (գրիչ)—306—307, 309  
 Վիդշտոկ Զախարիաս (կապիտան)—562,  
 622—624  
 Վիլլոտ (Լգուրիա)—296, 303, 405, 457,  
 575—576, 579, 582, 594  
 Վիլհելմ Օրանցի — 267  
 Վլադիմիր (Կիևի մեծ իշխան)—427  
 Վլաս Լպիսկ.—333  
 Վոլինսկի—128, 285, 287, 289, 358,  
 367—368, 370, 449—450, 452, 516  
 543, 580, 599  
 Վոլֆ (Լգուրիտ) պատեր—281, 412, 520  
  
 Տակայշվիլի Ն.—77  
 Տամարատի Մ.—10, 74, 212—213, 574  
 Տայան Ղևոնդ—401  
 Տաշյան Հ.—24, 34, 84, 282, 333, 461,  
 591, 595  
 Տավերնիս—101, 104, 114, 123, 138,  
 143—144, 167, 249, 254, 362—363,  
 366—367, 455  
 Տատիշվիլի Վլ.—471, 484, 489  
 Տատիշչև Ս. Ս.— 512  
 Տարբերունի — 35  
 Տեկտանդեր—105, 111  
 Thevenot, Jean—116, 132, 249, 454  
 Տեր-Ավետիսյան Ս.—14, 25, 70, 72—73,  
 83, 233, 302, 459, 467  
 Տեր-Հովհաննիսյան Աստ. Լպ.— 146—  
 148  
 Տեր-Հովհաննիսյան Հար.— 102, 246, 249,  
 299, 301—302, 543, 576  
 Տիզնհատուղեն Վ. Գ.—429, 433  
 Տիստմիրով Մ. Ն.— 435

Տիրայր վարդապետ — 34, 76, 247  
 Տոլստոյ Ս. Պ.—421  
 Տոմաշևի Վ.—9  
 Տվերետինովա Ա.— 81  
 Տրդատ Մեծ (Արշակունի)— 31, 40—41,  
 43, 45, 69, 106, 476  
 Տրեվեր Կ. Վ.—421  
 Տուրնրֆոր—28, 131, 140, 143—144,  
 247, 290, 295, 298, 304—305, 361,  
 405—406, 448, 459  
 Տեր Անտոն—232—233  
 Տեր-Գրիգոր՝ գրիչ—389  
 Տեր Բադևոս—44  
 Տեր-Խաչատուր—246  
 Տեր Ներսես (Բորիկ)— 294  
 Տեր Ներսես (կանոնիկոս)—585  
 Տեր Կիրակոս (խոյեցի)—390  
 Տեր Կրպո (բահանա) — 147  
 Տեր Հակոբ — 79  
 Տեր Հովհաննես (բահանա)— 167  
 Տեր Հովսեփ— 167  
 Տեր Ոսկան (բահանա)—460  
 Տեր Ոհան — 252  
 Տեր Ովաննես — 252  
 Տեր Պետրոս — 232  
 Տեր Միքայել — 167  
 Տեր Սարգիս վրդպ.— 294  
 Տեր Սարգիս — 302  
 Տեր Ֆրանցես Սիճիլ — 219  
  
 Բաֆֆի — 255  
  
 Յազարեիլ Ա.— 30  
  
 Ուզուն Հասան—7, 9—13, 57, 80  
 Ուլմադյան Հ.— 322  
 Ուլամա (Բավրիզի բեկլարբեկ)—22  
 Ulstein — 412  
 Ուլուխան—337  
 Ուկոնին — 577, 592  
 Ուլուրլյան Մ. Վ.— 44, 278, 603  
 Ուսարլյալով — 361, 515, 517  
 Ուրբանոս (պապ)— 189  
  
 Փափաղյան Հ.— 27, 51, 71, 142, 313,  
 642

Փանոս Քալանթար — 450  
Փարսադանյաններ — 312  
Փարսման թագ. (վրաց) — 420  
Փեշեխ — 38, 63  
Փերվազյան Մինաս վրդպ. — 363  
Փիլիպոս կաթող. (Ազվանից) — 283  
Փիլիպոս կաթող. Էջմիածնի — 122, 150,  
164, 166, 244—245, 332  
Փիրզադա — 76—78  
Փիրզախմյան — 52  
Փորբշիկյան Խ. Ա. — 426  
Փորբ Շիլ Մանուկ — 247

Քալբալի բեկ — 95  
Քալբալի խան — 335, 359—360  
Քալանդար-օղլու Մուհամմեդ փաշա —  
81  
Քաջբերունի — 35  
Քարա Խոսրով բեկ — 359  
Քարտրայա Ջոն — 66, 377—378  
Քեոմյուրճյան Երեմիա (Չեխայի) — 111,  
145—146, 152, 159—161, 172, 202,  
218—223, 383—384, 462  
Քյոփրուլու Ահմեդ փաշա — 149  
Քյոփրուլու-Մուսաֆա փաշա — 390  
Քյուրայան Հ. — 19, 325, 345, 352, 397,  
408, 586, 595—596  
Քյոսովա Չալարի — 232  
Ք. Պ. — աև'ս Պատկանով Ք.  
Քուչներյան Ք. — 425—428  
Քուրդ բեկ — 337

Օդոստոս (ԵՎ. թագ.) — 612  
Օլեարիուս Ադամ — 104, 133, 140, 247,  
379, 445

Օլջերա — 140  
Օղլանբեշիշյան Մասթեոս — 279  
Օնկեն վ. — 412  
Օսման փաշա — 62, 68  
Օտամանովսկի վ. Գ. — 431  
Օրբելի Հ. Ա. — 180, 421  
Օրբելյան Սա. — 322  
Օրբելյաններ — 253  
Օրի — աև'ս Իսրայել Օրի  
Օրլով Ա. Ս. — 512  
Օրմանյան — 47, 219

Ֆարրոնիուս (Հավաստափյուն պրոպա-  
գանդայի բարտուղարը) — 408, 585—  
586, 594

Ֆաթալի բեկ — 202—203  
Ֆահրատ փաշա — 64  
Ֆարզալի խան — 291  
Ֆարուխ Յասար (շիրվանշահ) — 23, 437  
Ֆերուբ, Միշել — 263, 353  
Ֆեդե (բարոն) — 407—408  
Ֆեյնել — 434—436, 444, 480  
Ֆեոդոր Գմիարիևիչ (մեծ իշխան) — 427  
Ֆեոդոր Իվանովիչ (ցար) — 472  
Ֆերիզուս — 486  
Figuroa — 103

Ֆիլիպ (Բուրգունդ. իշխ.) — 10  
Ֆիլիպ 11 — 75, 77  
Ֆինկ Ֆ. Ն. — 510  
F[leariau], P. Th. Ch. — 218, 294, 405  
448

Ֆոնտանե Ֆելք, դը — 581—582  
Ֆրանչիսկոս (մի Լվրոպացի) — 457  
Ֆրանչիսկոս աեր Գասպար Գասպանի-  
նի — 219

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԱՆԿ

- Աբխազիա — 9—11
- Ադարակ (գյուղ) — 232—556
- Ագլուա — 392
- Ագուլիս, Գլիս, Ագուլիսի շրջան — 72—73, 94, 123—125, 127, 130, 137, 140, 157, 211, 231—232, 236—237, 255, 375—376, 444, 454—455, 458—459, 478
- Ագիլջեվազ — 444
- Ագրբեջան — 12—70, 137, 237, 336—337, 433
- Ագրիանապոլիս — 479
- Աղատակ — 236
- Աղատ-Գեո — 444
- Աղով — 62—327, 436, 590
- Աղովի ծով — 421, 432, 477
- Աթենք — 10
- Ալանաց Գուս — 70, 434
- Ալաշկերտ — 84, 96, 119
- Ալբանիա — 30
- Ալդիսի ձոր — 237
- Ալեքսանդրիա (նաև Ալեքսանդրիա) — 115, 179, 180—181
- Ալուանդ — 13
- Ախալցխա — 70, 329
- Ախսա — տե՛ս Սարաջ
- Ածուղ (=Օծուղ) — 236
- Ակրա — 450
- Ակառաղ (=Աղստաֆա) — 237
- Աղանդ (գյուղ) — 329
- Աղբակ — 35
- Աղգամ — 232
- Աղղաշ — 543
- Ալլամար — 52, 146, 421
- Ալթամարի վանք — 148
- Ալմաղան — 38
- Աղջողալա — 444
- Աղստաֆա — 51
- Աղվանից երկիր (նաև Աղվանք) — 275, 306—308, 332, 421, 523, 527—528, 545
- Աղվերձ (=Ըղվերձ) — 72, 235, 314, 321
- Աճանանի դավառ — 314
- Ամերիկա — 55, 128
- Ամիդ (=Գիրարբերք) — 51, 84, 148, 329, 388—389
- Ամիրի գյուղ — 170
- Ամսաերգամ — 116, 123, 168, 282, 457, 555, 560, 618
- Այդեստան — 119
- Այնթապ — 444
- Անատոլիա — 403, 531
- Անգլիա — 76, 79, 183, 262, 413, 448, 450, 452
- Անդրեովկաս, Արևմտյան Անդրեովկաս — 7, 17—18, 24, 61—62, 65—68, 72—74, 82, 84, 98, 109, 117, 202, 212, 231, 258, 284, 290, 305, 309, 316, 349, 368—369, 382, 414, 420, 422, 423, 425, 433, 438, 469, 470, 473, 477, 491, 504, 509, 522, 549, 551, 605, 607, 615, 628, 634—636, 640

- Անի — 24, 119, 188, 363  
 Անկեղտորթի — 238, 242, 285, 311, 313—  
 314, 317—319, 328—329, 333—334,  
 338—340, 342—345, 383, 385, 498,  
 532, 535—536  
 Անտիրոբ — 180, 630  
 Ապարաններ (Աբարաններ գյուղ) — 187,  
 257, 378  
 Աջամուտան — 527  
 Աջանան — 237  
 Ասան — 70, 237, 422, 424, 433  
 Ասաջափոր Ասիա — 9, 17, 79, 420, 422,  
 433, 630  
 Ասիա — 11, 175, 384, 420, 436, 460—  
 461  
 Ասորեստան — 329  
 Աստիանակ գյուղ — 13  
 Աստապատ, Աստապատի երկիր — 28,  
 73, 123, 124, 130, 232, 236, 256, 360,  
 368  
 Աստապատի վանք — 123  
 Աստրախան, Աստրախանի խանություն —  
 62, 356, 425, 428, 434—435, 438—  
 441, 444, 447, 469, 517, 527, 548,  
 550, 569, 570, 572, 590, 592, 613,  
 618—624  
 Ավան — 252  
 Ավարբա — 11, 197, 200, 262, 401,  
 411, 413  
 Արատաղ (=Արարս) — 85  
 Արարատ (Այրարատ), Արարատյան եր-  
 կիր (նաև գավառ), Արարատյան  
 դաշտ — 26, 28, 38, 52, 64—65, 73,  
 83, 84—86, 118, 122, 126, 136—137,  
 234, 530, 642  
 Արարբ — 236  
 Արարս, Նրասա — 83, 85, 101, 126, 230,  
 233, 237, 285, 364, 369, 504, 548,  
 561, 573  
 Արզարիլ (=Արատաղիլ) — 15—17  
 Արզահան — 73, 438  
 Արզվին — 73  
 Արևշ — 67  
 Արզրում — տե՛ս Երզրում  
 Արխանդելսկ — 439—441, 443—444,  
 448, 469, 560  
 Արծիկ — 16, 25, 84  
 Արձևշ — 21, 24, 51, 53, 69, 84, 148  
 Արցախ — 231, 546, 608  
 Արցախի անառ — 15  
 Աբեհանա երկիր — տե՛ս Նրեան  
 Արևելյան Անատոլիա — 117, 375, 391  
 Արևելյան Անդրկովկաս — 9, 473  
 Արևելյան Եվրոպա — 422  
 Արևելյան Հայաստան — 23, 52, 135,  
 152, 207, 353, 502, 632, 635—636, 642  
 Արևելյան Հնդկաստան — 450, 452  
 Արևելյան Վրաստան — 24, 335, 503  
 Արևիր — 236  
 Աարանա — 478  
 Աֆգանստան — 573  
 Բարերդ, Բարերդի շրջան — 10, 84, 237,  
 390, 429  
 Բաղրևանդ — 119  
 Բազարչայ — 314  
 Բախնոցա երկիր (Ապահունիր — 119  
 Բալթիկ ծով, Բալթյան ծովափ — 422,  
 432, 434, 440  
 Բալադինաղ (=Պֆալց) — 587  
 Բալխաններ — 262, 275, 327, 375, 411  
 Բալու — 94  
 Բաղարիա (=Խորասան) — 445  
 Բաղայ Բազափորություն — 234  
 Բազդաղ — 120, 188, 243, 422  
 Բազևշ — 35, 51—53, 84, 148, 246, 391  
 Բալազետ, Բալազետի բերդ — 96, 120,  
 237, 614  
 Բանդիմահի — 444  
 Բաշբենդ — տե՛ս Մարտիրոս  
 Բասեն — 25, 64, 84  
 Բասախ, Բասախի բերդ — 296, 574  
 Բատավիա — 452  
 Բարդուշատ — 232, 234, 237, 308, 319  
 Բարդա — 65, 232, 237, 292, 335  
 Բարեհուտ հրվանդան — 115  
 Բարևիս գյուղ — 25, 235  
 Բարձր Հայք — 24, 25  
 Բարու — 334, 357, 424, 434, 438, 473,  
 527, 543, 561, 566  
 Բելգիա — 592  
 Բելլորազ (Բելլորալ) — 273, 314, 592

Բելուռուսիա — 343  
 Բելու(գյուղ) — 69, 389  
 Բենդեր-Արաս — 112, 115, 128, 369,  
 450, 452—453  
 Բենեվենա — 242  
 Բերկրի — 83—84, 148  
 Բզնունիք — 35  
 Բիթլիս — 444  
 Բիբրիլա կամ Բելրեկա (գետ) — 613, 614  
 Բիսս — 232  
 Բյուզանդիա — 207, 420—421, 425, 474  
 Բնունիք — 320  
 Բուկնյ (գյուղ) — 392  
 Բուհնմիա — 356  
 Բուհուան — 392  
 Բոմբեյ — 450  
 Բոսնիա — 10  
 Բոսսոն — 595, 596  
 Բոսֆոր — 8  
 Բորչալու, Բորչալուի խանութուն — 359,  
 365  
 Բանակոթ — 251, 312—314  
 Բրչուսել — 592  
 Բրուսս — 436  
 Բուդապեշտ — 281  
 Բուդլար — 425, 430  
 Բուխարա — 433  
 Բուդղանիա (նաև Պուզտանիա) (Մուղա-  
 վիա) — 71, 387  
 Բուաուժ — 314, 479  
 Բուրգունդիա — 10  
 Գաղ — 123, 236  
 Գանձակ, Գանձակի մարզ, Գանձակի  
 խանութուն — 17, 24, 51, 62, 65, 67,  
 70, 132, 205, 230—231, 237, 252,  
 292, 305—309, 333—338, 359—360,  
 365, 373—374, 378, 447, 526—527,  
 539, 575—576, 579, 606  
 Գանձասար — 122, 145, 230—231, 236,  
 283, 285, 311, 324, 332—334, 336,  
 338, 378, 622  
 Գանջա, Գանջայի խանութուն — տե՛ս  
 Գանձակ  
 Գեղամա ձովակ — 117

Գեղարդ — 85  
 Գեղարդա ձոր — 86  
 Գեղարբունիք, Գեղարբունյաց Երկիր, Գե-  
 ղամա Երկիր — 51, 62, 117, 235, 308,  
 374, 379  
 Գեղվաձոր — 237, 305  
 Գեորջայ — 118  
 Գետաթաղ — 76, 251  
 Գերմանիա — 9, 58, 76, 80, 267, 423,  
 441, 455—486, 514, 535, 547, 549,  
 556, 565, 588  
 Գիլան — 16—17, 72, 98—101, 113, 123,  
 368, 373, 434—435, 439, 445—447,  
 455, 505—506, 515, 616, 618  
 Գլուխտան — 305, 307  
 Գողթան (Երկիր), Գողթան գավառ —  
 122, 125, 157, 303, 308—309, 406,  
 556, 558  
 Գոմբուն — 128  
 Գոսլանդ — 422  
 Գորի, Գորո-բերդ — 70, 77, 79  
 Գորիս — 232, 235, 258, 314  
 Գրչունվալդ — 349  
 Գուլարբերդ — 237  
 Գունե — 237  
 Գուրիս — 9, 11, 634  
 Գուրջխտան (Գուռճի) — 36, 69, 97  
 Դաղեվանք — 306  
 Դամասկոս — 263  
 Դամուրղապ — 62  
 Դանեմարքա — 511  
 Դանիա — 71  
 Դանուբ — 427  
 Դադստան — 469  
 Դաշա — տե՛ս Աղուլիս  
 Դաստակ — 123  
 Դաստակերտ — 320  
 Դատվան — 444  
 Դարարաս — 235  
 Դարալագյաղ — 237, 374—375, տե՛ս նաև  
 Եղեգաց ձոր  
 Դարաշամբ — 28, 130  
 Դարիալ, Դարիալի կիրճ — 424, 504  
 Դավրեժ — տե՛ս Թավրիզ



Դերի — 450  
 Դերբենա — 17, 62, 334, 358, 473, 543  
 Դերջան — 84  
 Դիասնու գաշա — 119  
 Դիարբերի — 53, 83  
 Դիզակ, Դիզակա Երկիր. Դիզազ — 62, 73, 234, 258, 337, 374  
 Դյուսեղսորձ — 265, 271, 274, 317, 338, 346, 357, 520, 534, 538, 547, 552, 555, 558—559, 568  
 Դնկար, Դնկարի գետարերան — 421, 423  
 Դոն — 421, 427, 517  
 Դոսյարի (Թոփոի) — 429  
 Դսեղ — 359  
 Դվին — 422  
 Դրախտիկ (գյուղ) — 26

Եղիպատս — 65, 221, 274, 394  
 Եղնադամեր — 314  
 Եթովպիա — 182, 183  
 Եկղատան (գյուղ) — 236  
 Եղեղաց (Եղեղիսի) ձոր, Եղեղնաձոր, տե՛ս նաև Գարադազյազ — 62, 236—237  
 Եզվարդ — 170  
 Եմեն — 128  
 Երևան, Երևանի բերդ — 17, 21, 24, 38, 62—65, 70, 81, 83, 85, 105, 111, 119, 120, 122, 128, 138, 153, 158, 161, 172, 177—179, 188, 200—202, 204—205, 207—208, 242, 254—255, 291, 296, 336, 361—364, 371, 374, 376, 382, 386, 437—438, 444, 504, 525, 541, 547, 605—606, 615, 637, 639  
 Երևանի գավառ, Երևանի մարզ — 20, 96, 133, 138, 237  
 Երևանի խանություն — 24, 162, 170, 238, 289, 363, 365, 376  
 Երզնկա — 84, 217, 444  
 Երնջակ — 123, 232, 257, 308, 375, 378, 540  
 Երուտակեմ — 44, 46, 53, 75, 147—149, 153, 155, 178—180, 263, 296, 438, 476, 630

Զագամ — 51, 237, 374  
 Զանդեկրուտ — 101  
 Զանդեկուր (Զագեձոր) — 98, 233—235, 237, 257  
 Զանդիջա — 437  
 Զարդիրի — 237, 338  
 Զեյթուն — 48  
 Զեփու բերդ — 360  
 Զիրենրսուրդիա — 413  
 Զմյուտնիա — 115, 296, 391—392, 449, 452, 579—580

Էսմիածին — 8, 21, 26—27, 29—30, 32—33, 35, 40—41, 44—46, 50—55, 57, 79—80, 85, 121—122, 143—149, 153—156, 164, 167—170, 187, 192, 198, 206—210, 212, 216, 228, 231, 247, 259, 262, 293—296, 300—302, 304—305, 307, 311, 317, 325, 351, 363, 437, 444, 476, 523, 524, 545, 597, 603—604, 642  
 Էթի (գետ) — 428  
 Էբդրամ — 17, 25, 35, 53, 83—85, 118, 120, 153, 217, 296, 390, 397, 405, 426, 438, 444, 574, 579

Թաթարխառան — 30  
 Թամանի բերակղզի — 426  
 Թավրիզ — 16—18, 22, 28, 62—63, 68, 70—72, 81, 83, 85, 95, 116, 123, 126, 128, 130, 136—137, 238, 263, 300, 336, 364, 367, 369, 428, 444, 455, 476, 504—505, 539, 574—576, 598, 614  
 Թարթուս գետ — 306  
 Թարրուս — 470, 473  
 Թրիլիսի (նաև Թիֆլիս, Տիֆլիս) — 17, 24, 62, 79, 116, 205, 207, 210—211, 231, 234, 306, 438, 574, 576, 579  
 Թենդե կամ Թենդի (բերդ) — 613  
 Թեղսուրդիա — 463  
 Թեքեր — 62, 473, 613, 621  
 Թիրպակի — 359  
 Թոխառ (նաև Թորան և Թոխաթ) — 17, 41, 153, 217, 392, 397, 426, 436, 444  
 Թսիկանա — 81, 123, 279  
 Թրամսիլվանիա — 403, 555

Թումանյան — 70

Թուրքաստան — 36

Թուրքիա — 9, 11, 13, 17—18, 20, 22, 25, 30, 35—36, 38, 51, 56—57, 62, 65—67, 73—74, 76, 78—83, 88—89, 92, 100—102, 105, 111, 115, 117, 120—121, 126, 128—129, 135, 140—141, 146—147, 149, 151—153, 156—157, 161, 173—174, 176, 179—181, 183, 189—190, 197—199, 206, 213—214, 216—217, 221—222, 245—246, 248, 262—263, 271—272, 279, 281, 299, 315, 326—327, 338, 348, 350—351, 367—368, 371—373, 375, 380, 383, 387, 392, 395—396, 400—401, 403, 405, 409, 411—414, 419, 426, 432, 440—441, 445, 447—448, 451—454, 460—461, 470—473, 477, 479, 481—485, 489—491, 500, 502, 505, 508—509, 512—514, 530, 533, 549, 561, 565, 567—568, 579—581, 590, 601, 614—615, 632, 635

ժրնեհ — 456

Իբերիա (նահ Իվերիա) — 9, 30

Իշմիր — 273, 461

Իթիլ — 42—422, 424

Իլիզա — 444

Իլով — տե՛ս Լվով

Իմերեթ — 11, 73, 205, 634

Ինդոնեզիա — 447

Իսպանիա — 60, 450

Իսրայել — 286

Իտալիա — 43, 58, 76—77, 80, 168, 242, 263, 267—268, 383, 404, 434, 472, 485

Իրան — 11, 13, 16—18, 20, 23, 30, 38, 50—51, 56—57, 61, 72—74, 80—81, 84—85, 88—89, 91—95, 97, 100—103, 105—117, 120—121, 126, 128—131, 133—135, 138—140, 142, 147, 151, 156—157, 167, 173—174, 177, 179, 183, 185, 187, 189—191, 195, 197—199, 202, 205—206, 210, 212, 214—216, 227—228, 244—249, 251,

253, 262, 268—269, 279, 281, 287, 289, 299, 302, 305—309, 317, 323, 325, 327, 336—338, 350—353, 355—357, 359, 363, 366—372, 375, 380, 384, 386, 401, 406, 409, 411—412, 414, 426, 433—438, 440—443, 445—453, 455, 459, 462, 469—473, 477, 480—487, 489—491, 499, 501—504, 506, 508—509, 513—520, 532—535, 539, 542—549, 551—554, 556, 560—563, 565, 567—568, 570, 572—583, 586, 589, 593, 597—601, 604—605, 607, 610—619, 622—623, 632, 635

Իրանահայաստան — 305, 326—327, 347, 373, 411, 642

Իրիցաթումբ — 252

Իրաք — 12

Լայպցիգ — 564

Լեվանտ — 115

Լեհաստան — 11, 28, 32, 34—35, 71, 76, 81, 114, 116, 182, 197, 200, 348—353, 356, 413, 425—426, 432, 441, 469, 477, 483—487, 493, 514, 520, 556, 616

Լեհրամ — 73

Լիբանան — 324

Լիճք — 236

Լիոն — 163, 178

Լիվոնիո — 60, 116, 167, 278—279, 383—384, 461, 480, 603

Լիտվա — 474

Լոսի, Լոտվա բերդ — 24, 51; 62, 77, 83, 95, 98, 119, 237, 359—360, 373—374, 504

Լով — տե՛ս Լվով

Լոր — 235, 314

Լվով — 33—34, 46, 430, 564

Լուցիկ — 430

Խաղաղաց դավառ — 10

Խամուրա դաշա — 119

Խանածախ — 313—314

Խաչեն, Խաչենի երկիր — 62, 234, 330, 334

Խաչին — տե՛ս Խաչեն

Խարբերոյ — 377, 388  
 Խարթոց — 392  
 Խարման — 452  
 Խլաթ — 25, 35, 39, 51, 53, 148  
 Խնձորեակ — 98  
 Խնուս — 35, 119  
 Խոթաւանք — 236  
 Խոյ — 28, 51, 62, 84  
 Խոչար — 148  
 Խոչկաշին — 233  
 Խոտ — 320, 322  
 Խորասան — 25, 287, 476  
 Խորեղմ — 433  
 Խորմացտուն (=Թուրքիա) — 208  
 Խոր Վիրապ — 85, 158, 301  
 Խուլթ — 9, 10, 15  
 Խումար — 236  
  
 Մաղկունաց ձոր — 62, 301  
 Մոսս — 64  
 Մարա Երկիր — 35  
  
 Կագան — 425, 430, 438—439, 444,  
 469, 517, 613  
 Կագանի խանութուն — 62  
 Կախեթ — 11, 16, 73—74, 97—98, 205—  
 205  
 Կալեր — 232  
 Կալիաթա — 450  
 Կազվան — 84, 444  
 Կամա — 421, 433  
 Կամախ — 444  
 Կամենեց — տե՛ս Կամենեց-Պոդոլսկ  
 Կամենեց-Պոդոլսկ — 34—35, 413, 430  
 —431, 587  
 Կամենից — տե՛ս Կամենեց-Պոդոլսկ  
 Կանդիա — 181, 197  
 Կասպանի թագավորութուն — 234  
 Կասպիական ծով — տե՛ս Կասպից ծով  
 Կասպից ծով — 17, 61, 117, 355—356,  
 358, 414, 421—423, 428, 434—436,  
 439—440, 442, 470, 476—477, 493—  
 494, 503, 514—515, 517, 527, 550,  
 561, 613, 618, 639  
 Կարին, Կարնո Երկիր — 25, 63, 65  
 Կարլովից — 213, 412—414, 565, 568

Կարմիր ծով — 128  
 Կարս, Կարսա Երկիր, Կարսի բերդ — 18,  
 20, 63, 70, 83, 119, 137, 363, 405,  
 438  
 Կարավարերդ — 237, 314  
 Կաֆա — 8, 34, 63, 65, 146, 428—429,  
 431—432, 436, 476, 527  
 Կեչառիս — 203  
 Կեսարիա — 438  
 Կերշ — 569, 590  
 Կիև — 422, 426—427  
 Կիլիկիա — 8, 46, 426  
 Կինեշաֆ — 444  
 Կիպրոս — 11, 58  
 Կից — 305  
 Կճաւլ — 392  
 Կոլիսիցա — 30, 350  
 Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս, տե՛ս նաև՝  
 Ստամբուլ — 7—8, 10, 19, 28, 44,  
 53, 56—57, 71, 86, 115—116, 147,  
 149—150, 152, 154—156, 159, 161,  
 174, 191, 202, 217, 219—220, 223,  
 230, 240, 260, 263—264, 267, 271,  
 293, 304, 325, 349, 351, 387—388,  
 391, 397—398, 401, 423, 426, 432,  
 436, 461, 463, 468, 474—475, 479,  
 485, 531, 565, 568, 574—575, 579,  
 590  
 Կոստարմա — 444  
 Կովկաս — 9, 62, 420, 422—424, 426,  
 435, 469—470, 489, 504, 527, 613  
 Կորիաձոր — 257  
 Կրետե, Կրիտոս — 197, 478  
 Կրոյցնախ — 407  
 Կուրաշի — 421  
 Կուր գետ — 230, 237, 358—359, 366,  
 369, 382, 561, 573, 639  
  
 Հարեշտտան — 351  
 Հալեպ — 48, 66—67, 71, 77, 79, 115—  
 116, 188—189, 200, 217, 233, 235,  
 438, 444, 447, 449, 452, 579—580  
 Հալիձոր — 235, 320, 322  
 Հաւալաւախ — 391  
 Համիզ (Ամիզ) — 217  
 Հալիւրերդ — 261

- Հայրավանք — 236  
 Հառչան — 392  
 Հասանդալա — 444  
 Հավուց թառ — 26  
 Հարանց անապատ — 318  
 Հարավային Ադրբեջան — 18, 61, 81, 90  
 Հարարի դեռ — 312  
 Հարարի (գյուղ) — 337  
 Հեռավոր Արևելք — 114  
 Հիգարի — 234  
 Հիդիծոր — 392  
 Հին Արևելք — 20  
 Հին Ջուղա — 140, 233, 459  
 Հյուսիսային Գվինա — 440  
 Հյուսիսային Իրան — 368, 370  
 Հնդկական օվկիանոս — 112  
 Հնդկաշին — 55  
 Հնդկատան (Կակ Հնդատան) — 17, 32, 55, 114—115, 128, 130, 141, 156, 183, 374, 435, 442, 447, 450—452, 514, 580  
 Հոլանդիա — 168, 183, 262, 413, 441, 448, 450, 452  
 Հոխլանա — 553  
 Հոռոմոս — 286  
 Հորմուզ (Օրմուզ, Որմուզ) — 7, 105, 111—112  
 Հռենոս, Հռենոսյան Լրկիր — 285, 554  
 Հոռոմ — 9, 12, 27—33, 40—50, 55—56, 58, 61, 74, 78—81, 104, 107, 109, 172—176, 180—181, 185—187, 189, 191, 193, 198—201, 212—213, 216, 218—220, 249, 242, 262—263, 272—273, 276, 296—297, 303—305, 316, 324, 333, 340—341, 343, 346, 348, 350—351, 384, 398, 404, 406—408, 410, 457, 460—461, 477, 479, 484—485, 525, 563—565, 574, 577, 584—586, 589, 591, 594, 602—603, 631  
 Հոռոմստան — 149  
 Հունաց աշխարհ — 65  
 Հունդարիա — 9, 11, 356, 403, 413, 534, 556—557, 587  
 Զագաձոր — ան՝ս Զանգեզուր  
 Ղաղանչի — 123, 232, 236  
 Ղաղվին — 18, 95, 101, 187, 191, 198, 207  
 Ղալաթիա — 222, 387  
 Ղանդահար — 561, 572—573  
 Ղարա-Աղաջ — 237  
 Ղարաբաղ, Ղարաբաղի մարզ, Լեռնային Ղարաբաղ — 15, 24, 62, 64—65, 70, 73, 97—98, 122, 210, 230—234, 237, 306, 309, 334—338, 358, 363, 371, 378, 380, 445, 454, 509, 526, 539, 606—611, 615, 634, 642  
 Ղարադագ — 232, 237, 375  
 Ղարաճիսար — 389  
 Ղարադաշտ-ձոր (Ղրզու) — 375  
 Ղարադոյունյու (գյուղ) — 170  
 Ղարամանիա — 9, 11  
 Ղարասու — 428  
 Ղարարիլիս — 320  
 Ղարս — ան՝ս Կարս  
 Ղափան — 51, 227, 230—238, 240, 303, 310—312, 314, 319, 332, 360, 371, 373—374, 379, 382, 386, 523, 528, 532, 565, 642  
 Ղափանի բերդ — 504  
 Ղրիմ — 8, 11, 30, 34, 62, 425—433, 469, 474, 477  
 Ղուրա — 543  
 Մադրաս — 450  
 Մադրից — 79  
 Մադանդարան — 97—100, 104, 123, 445, 618  
 Մալաթիա — 389, 444  
 Մալտա — 81, 181  
 Մալտաջ (գյուղ) — 320  
 Մակեդոնիա — 146, 479  
 Մակու, Մակվա բերդ — 28, 84, 237, 314, 543, 614  
 Մակնի — 392  
 Մաղաջ բերդ — 237  
 Մաղանջուղ, Մուղանջուղ — 237  
 Մոնանաղիի (Մանանիտ) ձոր — 15, 54  
 Մանչև — 123  
 Մանհայմ — 261

- Մասկատ (նավահանգիստ) — 575  
 Մարանդ — 444  
 Մարաստան — 87, 445  
 Մարաց Էրկիր (=Շիրվան) — տե՛ս Մարաստան  
 Մասիս — 85, 152  
 Մարկու — 137  
 Մարսել — 59, 108, 116, 183—184, 574  
 Մարտիրոս (գյուղ) — 238—239  
 Մացրա — 237  
 Մարինյաց վանք — 236  
 Մեղրեկիա — 634  
 Մեծ Հայաստան — տե՛ս Մեծ Հայք  
 Մեծ Հայք — 30, 149, 213  
 Մեծ Սյունիք — 230, 247, 310, 478  
 Մեղրի — 73, 123, 232—233, 235—237, 321, 375  
 Մենև — 261  
 Մեսինա — 60  
 Մերձավոր Արևելք — 56—57, 176, 183—184, 216, 470, 493, 512, 582  
 Մերձկասպյան Երկրներ — 99, 448, 606  
 Միջագետք — 12  
 Միջերկրական — տե՛ս Միջերկրական ծով  
 Միջերկրական ծով — 55, 57, 76, 79, 181, 327, 429, 432  
 Միջին Ասիա — 17, 420, 433  
 Մյունխեն — 228, 261  
 Մուղավիա — 432  
 Մոկաց Էրկիր — 392  
 Մոկս — 65  
 Մոսկովյա, Մոսկովյան պետություն — 61—62, 78, 80, 97, 114, 181, 197, 323, 327, 336, 349, 356, 365—366, 411—412, 435, 448—449, 455, 469—470, 472—474, 477, 479—481, 491—493, 495, 510—512, 514, 526, 561, 639  
 Մոսկվա — 32, 190, 214, 216, 231, 258, 261, 265—266, 269, 329—330, 241—343, 357, 386, 404, 409—410, 414, 435—439, 441, 444—448, 469—478, 480—486, 488—491, 493—495, 498—499, 507, 511, 519, 521—530, 534—535, 542, 544, 547, 557—558, 560, 562—563, 570, 572, 583, 585—587, 589, 596, 600, 610, 613—615, 619—620, 622, 624  
 Մորեա — 400  
 Մուավ լեռ — 306, 380  
 Մուղան, Մուղանի գաշա — 231, 365, 369—370, 506  
 Մուշ, Մշո գաշա — 39, 51, 53, 84, 118—119, 148, 388  
 Յայջի — 170  
 Յարոսլավլ — 444  
 նախավկայի վանք — 24, 28, 83, 157, 304  
 նախեղուս — 211  
 նախիջևան, նախիջևանի գավառ, նախիջևանի խանություն — 28, 38, 51, 62, 64, 122—125, 137, 140, 173, 176—177, 187—189, 191, 200, 203, 205, 230, 232—234, 236—238, 242, 252, 254—257, 272, 279, 303, 335, 360, 363, 365, 368, 375—376, 378, 407, 444, 504, 539, 558  
 նամյուր, նամյուր բերդ — 260, 267  
 նեապոլ — 11, 66, 193, 213, 242, 316  
 նեկոս — 182  
 նեյշտառ — 408  
 նիզարադ (նիզարադ, նիզովայա) — 357, 439, 503, 613—614, 619—620, 622—623  
 նիմնի — 430, 444  
 նովոբորոդ — 434, 439, 441, 443, 447  
 նորագավիթ — 286, 307, 479  
 նորագեղ — 170  
 նորաշեն — 308, 540  
 նորաշենիկ — 236  
 նոր Զուղա — 61, 86, 99, 101—103, 107, 109, 113, 129, 155, 166—167, 185—186, 188—189, 191—192, 294, 298, 301—302, 304, 419, 441, 446, 454—457, 459—460, 462—464, 466—468, 486, 543, 571, 576—577, 579, 604, 616  
 նորվեգիա (նորվեջ) — 511

նորը — 170

նուխի — 334

նուշար — 444

Շահաստան — 12, 20, 63, 65, 234, 276

Շահիկերտ — 232, 236

Շահպոնր, Շահպոնր բերդ — 238, 240—242

Շամ — 67

Շամախի, Շամախու խանություն — 16—17, 62, 67, 70, 116, 247, 255, 305, 312, 316, 333—334, 338, 356—359, 365, 368, 373, 386, 408, 434, 437—439, 447, 454—455, 468, 472—473, 503, 518, 523, 526—527, 542—543, 560, 563, 565—566, 570—572, 574—577, 579, 581, 585, 597—599, 605, 607, 610, 613, 618, 622

Շամբ — 236, 375

Շամլու — 337

Շամշադին — 374

Շապան — 313

Շատիկո վանք — 315

Շարուր — 62, 237, 376, 444

Շարի — 24, 305, 469

Շելվրազ — 439

Շրխմահմուզ — 236

Շիվանաձոր — 237

Շիրազ — 100, 104, 369, 619

Շիրակ — 83—84

Շիրվան, Շիրվանի խանություն — 16—17, 62—63, 65—67, 70, 73, 81, 97, 132, 157, 334, 356—358, 424, 435, 437, 439, 445, 455, 468—469, 506, 515, 526—527, 513, 607—609, 612

Շնաթաղ — 235

Շնհեր — 235—236, 314, 320, 322

Շոշ — տե՛ս Սպահան

Շոռոթ, Շոռոթի վանք — 73, 123, 232, 236

Շորափյալ — 23

Շվանիձոր — 321

Շվեդիա — 71, 441, 443, 448, 511, 514, 561

Շրվանշեն — 16

Շուշավեր — 208

Շուշի, Շուշա — 24, 609

Սատան — 13

Սրտան Էրկիր, Սրտանա բերդ — 235—236, 252, 360

Չավնդուր, Չավնդուրի գավառ — 237, 314

Չարաբերդ (Ջրարբերդ) — 234

Չերոխարի — 444

Չինաստան — 125, 133

Չորան Քոուփի — 444

Չորան Քեոփուուսի — 157

Չոբս — 119, 444

Չուխուր-Սաազ, Չուխուր-Սաազի մարզ (Երևանի բեկլարբեկություն) — 132—237 (տե՛ս նաև Երևանի գավառ, Երևանի խանություն)

Պալախոր — 10

Պալերմս — 60

Պայանդուր (Քայանդուր) — 313

Պարզայու Էրկիր — 145

Պարսից ծոց — 99, 105, 112, 128, 369, 373, 447, 575

Պարսկաստան — 12—13, 66, 86, 91, 102, 115, 128—129, 142, 169, 213, 450, 452, 484, 514, 597—598, 613

Պարսք — տե՛ս Պարսկաստան

Պարսավ — 51, 423

Պեաերբուրդ — 228

Պրշպեկ (Ֆրունզեկ) — 434

Պլյոս — 444

Պոդոլիա — 413, 430

Պոլիս — տե՛ս Կոստանդնուպոլիս

Պոլտավա — 597—598, 600

Պեղոզհիսար — 279

Պոնտոս — 19, 221

Պորտուգալիա — 372, 450

Պրուս — 601

Պուսա — 282

Պուստում — տե՛ս Քուստում

Պուրսա — 314

Պֆայլց — 260—261, 267, 272—273, 275, 282, 317, 553, 568

Ջահուկ — 123, 232, 238, 378  
Ջաղացուկ — 236  
Ջասկ — 112  
Ջաֆարաղունև — 444  
Ջենոփա — 7, 60  
Ջիվանշիր — 237  
Ջրարերդ — 38, 69  
Ջրարերդ-Գյուլիստան — 382  
Ջուզո — 28, 73, 81, 83, 100—102, 104,  
247, 249, 358, 454, 541, 544, 598  
Ջուրջան — 422

Ռեշա — 381, 442  
Ռշտունիր — 35  
Ռումելի — 221  
Ռումիլիա — 76, 338  
Ռուսաստան — 9, 28, 62, 181, 188, 200,  
213, 216, 227—228, 271, 283, 327,  
337, 339, 342, 346, 351, 354, 371,  
412—414, 419, 423, 432—433, 435—  
436, 440—446, 448—449, 451, 453,  
459, 468—472, 474, 475, 477—480,  
482—493, 498, 501—503, 508, 511,  
514—516, 520—521, 529, 527—529,  
535—536, 544—546, 549, 554—557,  
561—563, 565, 570, 580—581, 585,  
590, 601, 604—606, 610—613, 618—  
621, 630, 632—636, 639—640

Պաղարակ — 237  
Պալաձոր — 63  
Պարմաստ — 28, 51—52, 62, 84  
Պաղմոսավանք — 119  
Պաղրսի կղզի — 273  
Սաժարա — 444  
Սամեգրելո — 9, 11  
Սամցխե — 9, 24, 73  
Սամցխե-Սաաթարազո — 11  
Սանահին — 32—33  
Սասուն — 9, 10, 15, 54, 487  
Սարալ — 425, 427—428, 470  
Սարալ-Քերկև — 427—428  
Սարալ-Ուրգենչ — 428  
Սարասով — 444  
Սեբաստիա — 7, 33, 36, 38—39, 41,  
48, 217, 377, 438

Սեյդարազ — 450  
Սե ծով — 17, 61, 327, 414, 420—421,  
425, 429—430, 432, 439—440, 470,  
473, 485, 493  
Սեան — 236  
Սեանա լիճ — 83  
Սեանի կղզի — 162  
Սեաստ — 388  
Սերրիա — 10  
Սինոպ — 426  
Սինոպիա — 9  
Սիոն — 46, 55, 58  
Սիս — 7—8, 25, 40, 48, 55, 147  
Սիսական դավառ — 234  
Սիսիան — 232, 235, 237—238, 251—  
253, 257, 312—314, 331, 339 343,  
360, 374, 379  
Սիրիա — 426  
Սիրուբարբի անապատ — 11  
Սլավոնիա — 413  
Սկանդինավյան երկրներ — 423  
Սկյուֆիա (Ղրիմ) — 39  
Սշաթ (Երևան?) — 38  
Սցղուներ — 239  
Սմոլենսկ — 441  
Սյունիք, Սյունյաց աշխարհ, Սյունյաց  
երկիր, Սյունյաց նահանգ — 227, 231,  
233—234, 236, 250, 255, 285, 308,  
313—314, 322—323, 325, 338, 363,  
373, 509, 546  
Սյունյաց լեռնաշխարհ — 232, 340  
Սյունյաց մեծ անապատ — 310  
Սոմխեթ — 77  
Սոս (Սպահան) — 84  
Սովետական Հայաստան — 247  
Սոֆիան (բաղար) — 364  
Սպահան նահճ Եոշ — 83—86, 95, 99—  
101, 103, 105—108, 126, 158, 161, 172,  
174—175, 186, 188—200, 215, 231,  
234, 247, 279, 283, 288—289, 291—  
293, 298, 300—301, 304, 329, 351,  
368, 371, 409, 441, 445, 447, 449,  
455, 457—458, 460, 468, 480—482,  
486, 488, 518, 542—544, 560, 563,  
571—576, 579, 581, 583, 593, 597—  
599, 604—605, 617—618

Սպանիա — 76, 81, 372, 402, 472

Սպարկերոս — 392

Սպեր — 84

Սպիրտակ ծով — 432, 440

Սպիտակաշին — 231

Սվանսկի — 11

Սվիյատոսի — 444

Տաամբուլ, Ստամբուլ (Ըստամբուլ, տե՛ս  
և Կոստանդնուպոլիս) — 19, 22, 38, 53,  
67, 87, 121, 220, 252, 275, 387—388

Ստանիսլավ — 584

Սուրակ — 426

Սուլակ — 473

Սուլիանյի — 116

Սունժա — 473

Սուլար — 424

Սուրաբի — 128, 450

Սուրբաթ — 428—429

Վալարիա — 403

Վալոց ձոր, տե՛ս նաև Գարալագյազ —  
233, 237—239, 243, 252

Վան, Վանա լիճ — 13, 16, 21—22,  
24—25, 51, 53, 69, 79, 83—84, 118—  
119, 126, 148, 245—246, 301, 389—  
391, 396, 444

Վանա ծով — 118—119

Վանանդ — 123, 232

Վանաց քար — 257

Վանք — 235

Վասիլ-բազար — 444

Վասպուրական — 13, 23, 25, 35, 51—  
52, 119, 392, 475

Վասիլիան — 48, 186, 212, 324, 404,  
409

Վարդաղ — 54, 392

Վարանդ, Վարանդա դավառ — 24, 62,  
234, 374

Վարշավա — 494

Վենետիկ — 9, 11—12, 27, 29, 40, 43—  
44, 46, 56—59, 66, 71, 79, 81, 111,  
116, 121, 123, 174, 181, 189—191,  
197, 200, 213, 233, 236, 260, 266—  
269, 271—272, 278, 384, 387, 406,  
434, 461, 480, 485—486

Վենետիկի հանրապետություն — 80, 173,  
180, 190, 409

Վերսալլ — 182, 186, 264, 323, 568

Վիեննա — 117, 188, 194—195, 198—  
199, 269, 262, 280—281, 317, 324,  
341, 343, 346, 357, 402, 404, 410—  
415, 493, 499—500, 520, 529, 538,  
551—552, 565, 568, 585, 587

Վեյժ (Վենետիկ) — 461

Վոլգա — 356, 421—425, 433—434, 437  
—438, 440, 442, 444, 469, 517

Վրաստան — 9, 11, 16, 23—24, 67, 74,  
77, 79, 97—98, 134, 140, 153, 157,  
200, 202, 204, 206—212, 214, 217,  
230, 258—259, 272, 279, 283, 295,  
305, 309, 327—328, 336, 353—354,  
359—360, 365—366, 369, 375, 402,  
410, 412, 421—422, 426, 445, 479—  
472, 488, 504, 507—509, 519, 547,  
549, 573—574, 600, 634, 637

Տաթև — 97—98, 235—237, 253, 303,  
314, 318—323

Տամուրդափ — 63

Տանա (=Աղով) — 428, 434, 485

Տանձատափ — 319—320

Տաշտուն — 234, 236

Տարոն — 35

Տիգրանակերտ Տիգրան — 88, 329

Տիգակ — տե՛ս Գիգակ

Տիսա — 273

Տմուտարական — 426

Տոնավիս (=Դոն) — 427

Տվեր — 437, 439

Տրապիզոն — 9, 10, 19, 72, 182—183,  
217, 426, 473

Տուրքերան — 25

Տփլիս — տե՛ս Թբիլիսի

Ճարգրագ (= Կ. Պոլիս) — 258

Յարիցին — 444

Յիցու լիճ — 359

Յդես — 232, 236, 438



Ուլընկատան — 315

Ուկրաինա — 425—426, 430—432, 477

Ուրմիա — 84

Ուրֆա — 444

Փամբակ — 23, 237

Փամբակածոր — 119

Փարիզ — 179—181, 191, 212, 262—  
263, 267, 397, 586—588

Փիլի — 335

Փոստ նահանգ (Չուխուր-Սադի կամ  
Երևանի նահանգ) — 24, տե՛ս նաև  
Երևանի գավառ, խանություն

Փորը Ասիա — 81, 83, 117, 146, 319,  
425

Փորը Հայք — 9—10, 149

Փորը Սյունիք — 230

Փոսնդատան — 33—34

Փաշերունյաց գավառ — 13

Փանարևո — 136

Փաշախաղ — 237

Փաշան — 85, 455

Փարդման (զյուղ) — 374

Փարսիլի — 10, 73—74, 205—206

Փարկապ — 539

Փիլման — 572

Փիրս — 380

Քյոլն — 273, 357, 554

Քշտաղ, Քշտաղի մհալ — 312—313, 374

Քուլան — 379

Քոստադարա ձոր — 86

Քորվու — 598

Քուլթալիս — 205

Քուլթալի — 236

Քրգստան — 36, 118, 235

Օզմի (=Ոզմի) — 392

Օկա — 438

Օրդուրաղ — 123, 230, 232, 363, 373,  
504

Օրդուվար — 237

Օրսֆորդ — 235

Ֆահրարաղ — 97, 100, 173

Ֆարս, Ֆարսիստան — 12, 421

Ֆեոդոսիա — տե՛ս Կաֆա

Ֆիլիպսբուրգ — 260

Ֆլորենտիա — 7—8, 50, 60, 191, 212,  
242, 277—280, 346, 404, 407—408

Ֆրա[ն]կենթալ — 261

Ֆրանկստան — 27, 32, 43, 57, 156, 305,  
338, 372, 510—511, 556

Ֆրանսիա — 10, 60, 76, 81, 173, 178,  
182—184, 197, 260—264, 266—267,  
269, 271, 323, 348, 402,  
450, 520, 565, 582, 588

Բ ՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒԹ Յ ՈՒՆ

էջ

I Հայ ազատագրական մարտի ղեկերումները XV—XVII դարերում

1. Հայ-արևմտաեվրոպական բանավարությունները XV—XVI դարերում	7
2. Հայերը և Շահ-Աբրահամ	67
3. Իրանական ճգնաժամը և հայ հարկատուները	111
4. Հայաստանի ազատագրման հարցը 1660—1670-ական թվականներին	163
5. 1677 թվականի Էջմիածնի խորհրդածրոյիլը և հայ վրացական համագործակցությունը	202

II Տրորված ուղիներով


1. Նախատվյալներ Իսրայել Օրբի մասին	227
2. Օրբին և 1677 թվականի առաքելությունը	260
3. Անկեղակոթի լիազորագրերը	285
4. Օրբի պֆայցյան ծրագիրը	346

III Նոր ճանապարհի վրա

1. Հայերի ուստական կողմնորոշման նախապատմությունը	410
2. Օրբի Մոսկովյան ծրագիրը	494
3. Նախապատրաստություն իրանական առաքելության	538
4. Օրբի իրանական ղեկավարողնացությունը	500
Վ և ր ջ ա բ ա ն	625
Լ ր ա ց ու մ ն ե ր	642

IV Ցանկեր

Օդտաղործված աղբյուրների և զրահանության ցանկ	645
Անձնանունների ցանկ	667
Տեղանունների ցանկ	683



ԱՇՈՏ ԳՕՐԵԳԻՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍԱՆ  
ԳՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ ԱԶՍԱՏԱԳՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Խմբագիրներ՝ Լ. Ս. ԽԱԶԻԿՅԱՆ, Է.Մ. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ

Նկարչական ձևավորումը՝ Հ. Կ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ

Տեխն. խմբագիր՝ Լ. Ա. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

Վերստուգող սրբագրիչներ՝ Ի. Ս. ՔՐՈՒՏՅԱՆ, Ա. Հ. ԱԼԱՆՅԱՆ

---

ՎՖ 00832      Հրատ. 1568      Պատվեր 159      ԽՀԽ 469      Տիրաժ 3000

---

Հանձնված է արտագրության 27/11 1959 թ., ստորագրված է տպագրության  
22/1 1960 թ., տպագր. 43,5 մամ., հրատ. 41,3 մամ., թուղթ 60×92<sup>1</sup>/<sub>16</sub>:

Գինը կազմով 26 ռ. 70 կ.:

---

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչության տպարան  
Երևան, Արովյան 124:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0026715

ЦЕНА

1	11
3535	